Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

VANIK VIRABYAN

THE ARMENIAN-GEORGIAN MILITARY-POLITICAL RELATIONS (1918-1921)

YEREVAN
YEREVAN STATE UNIVERSITY PRESS
2016

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИНСТИТУТ АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

ВАНИК ВИРАБЯН

АРМЯНО-ГРУЗИНСКИЕ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ В 1918-1921 ГГ.

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
2016

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918-1921 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Վ 680

Հրատարակության է երաշխավորել
Երևանի պետական համալսարանի
Հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագրական խորհուրդ՝ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ՝ Ա. Հ. Սիմոնյան (նախագահ), պ.գ.թ. Մ. Ս. Հովհաննիսյան, պ.գ.դ. Վ. Ա. Պողոսյան, պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Գ. Ավետիսյան, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ս. Եղիազարյան, պ.գ.թ. Վ. Գ. Մխիթարյան, պ.գ.թ., դոցենտ Վ. Ս. Պետրոսյան, բ.գ.թ., դոցենտ Հ. Ս. Բայրամյան, բ.գ.թ., դոցենտ Լ. Ս. Սահակյան

Վիրաբյան Վ. Հ.

Վ 680 Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918 -1921 թթ.: / Վ. Հ. Վիրաբյան. Մենագրություն. – Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016. - 830 էջ + 12 էջ ներդիր:

Մենագրությունում պատմաքննական հանգամանալից հետազոտման է ենթարկվել 1918 թ. վրաց-հայկական պատերազմը, դրան հաջորդող 1919 թ. հունվարյան հաշտության համաձայնագիրը, որն ամփոփեց վրաց-հայկական պատերազմի ռազմաքաղաքական արդյունքները, Չեզոք գոտու առաջացման պատճառները և հետևանքները, հայ-վրացական սահմանավեճի ողջ ընթացքը 1918-1921 թվականներին: Մենագրությունում լուսաբանվել են հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների մի շարք կարևոր հարցեր, և մասնավորապես վերլուծության են ենթարկվել Հայաստանի Առաջին Հանրապետության հակամարտության առանցքային հիմնախնդիրները սահմանային-տարածքային հարցերում, որոնք արդիական են և լիովին համահունչ ներկայումս ընթացող պետաքաղաքական գործընթացներին:

Մենագրությունը նախատեսված է պատմաբանների, կովկասագետների, միջազգայնագետների, ինչպես նաև Հայոց պատմությամբ հետաքրքրվող ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8084-2135-6

© Վիրաբյան Վանիկ, 2016
© ԵՊՀ հրատարակչություն, 2016

ԱՌԱՋԱԲԱՆ

Առաջին աշխարհամարտի ավարտը արմատական հեղաբեկումներ մտցրեց Անդրկովկասյան տարածաշրջանում: Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությամբ առաջացած ցնցումները տևական բնույթ ունեցան և իրենց ոլորտի մեջ առան նաև անդրկովկասյան տարածաշրջանը և առաջին հերթին Հայաստանը: Հայկական հարցի և մասնավորապես Արևմտահայաստանի, հետևաբար նաև Արևելահայաստանի հիմնախնդրի լուծման բոլոր հնարավոր տարբերակները մեկը մյուսի ետևից փլուզվեցին, նախկին պայմանավորվածությունները կորցրեցին իրենց երբեմնի ուժը և փոքր ժողովուրդներին կանգնեցրին ցավագին երկընտրանքների և ձախողումների առաջ: Հայ հասարակական-քաղաքական միտքը չէր համապատասխանում դարամակարդակ պահանջներին և չուներ ճկունություն, ապագայի հնարավոր զարգացումներին միտվածություն և անհրաժեշտ ներքին կոահողականություն ընկալելու նոր գործընթացները և միջազգային-քաղաքական գործառույթները, դրանց խորքային աշխարհաքաղաքական միտումները, արդյունքում՝ փակուղի կամ հեռանկար չունեցող ընտրություններ և ռազմավարական ոչ տեղին կողմնորոշումներ: Ասենք, որ ստեղծված իրավիճակում կողմնորոշվելու համար անհրաժեշտ էր ունենալ քաղաքական մտքի մեծ ճկունություն և ապագայի հեռանկարի հնարավոր միտումների զգացողություն և ռազմավարություն: Եվ ո՛չ միայն դա: Այդ իսկ պատճառով տեղի ունեցող ռազմաքաղաքական բնույթի իրադարձությունները և տարաբնույթ անցուդարձերը երբեմն ցայտնոտի մեջ էին գցում կամ նորաստեղծ Արևելահայաստանի փոքրիկ հողակտորի վրա պատմաքաղաքական անկանխատեսելի զարգացումների արդյունքում քառասային իրավիճակում հառնած Հայաստանի Հանրապետությանը կանգնեցնում ծանր փորձությունների և վտանգավոր շրջադարձերի առաջ: Այդ փորձություններից մեկն էլ 1918 թ. դեկտեմբերին հանդիսացավ վրաց-հայկական երկշաբաթյա պատերազմը, որի արդյունքում ծնվեցին Լոռու Չեզոք գոտու, Ջավախք-Ախալքալաքի և այլ կենսական հիմնախնդիրներ, որոնք իրենց հետագա ինքնատիպ և հակասական, սակայն

շատ դեպքերում փակուղային զարգացումներն ունեցան 1919 թ. և մասնավորապես 1920 թ. առաջին կեսի ընթացքում՝ մինչև Անտանտի երկրների փարիզյան վճիռները՝ Սևրի իրավարար որոշումների կայացումը: Այն պատմաքաղաքական և ռազմադիվանագիտական հետազոտության հրատապ մի թեմա է գիտահետազոտական-պատմաքննական նորովի մոտեցումների համար, որոնք դեռ իրենց ուսումնասիրողներին են սպասում: Հայ-վրացական ռազմաքաղաքական-դիվանագիտական առնչություններըը 1918 թ. և հետագա տարիներին կարևոր նշանակություն են ունեցել երկու պետությունների թե՛ բախումնալիցք, թե՛ խաղաղ-դաշնակցային հարաբերման եզրերը անաչառորեն պարզելու, ինչպես նաև անհրաժեշտ պատմաքաղաքական դասեր քաղելու տեսանկյունից: Կամա թե ակամա ո՛չ Վրաստանն է կարողացել շրջանցել հայկական գործոնը, ո՛չ էլ Հայաստանը՝ վրացական սինդրոմը, առավել ևս, որ հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների կարծրատիպերը և հիմնադրույթները, քաղաքական համաձայնագրերի տարբերակների իրենց առաջադրումները ունեցել են Անդրկովկասում մեծ տերությունների ոչ պասսիվ առաքելության պայմաններում:

Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները անցան մեծ փորձությունների միջով, երկու դրկից ժողովուրդների կանգնեցնելով ճակատագրական երկընտրանքների առաջ, երբեմն էլ պարտադրելով հետադարձ հայացք նետել դեպի իրենց պատմական անցյալը: Այդ առումով դիտարժան եզրահանգումներ կան Իլյա Ճավճավաձեի մոտ. «…Մենք լավ գիտենք, որ անցյալում Վրաստանի անհաջողությունն սկսվեց այն դժբախտ օրերից, երբ ընկավ ու տապալվեց Հայաստանը՝ մեր այդ պատնեշը հարավից: Մենք հյուսիսի կողմից էինք պաշտպանում Հայաստանը, իսկ հայերը մեզ պաշտպանում էին հարավից: Այն օրվանից, ինչ Վախթանգ Գորգասալը վտանգից ապահովեց այն ժամանակվա Վրաստանը հյուսիսի կողմից, մեր ամբողջ պատմությունն ընթացավ այն ուղղությամբ, որ հարավի կողմից ամրապնդենք մեզ: Երբ Հայաստանը գոյություն ուներ որպես անկախ պետություն, թաթարները նախ Հայաստանով պետք է անցնեին…Այդ պատճառով, մեր հզոր թագավորները ու թագավորականները ոչինչ չէին խնայում Հայաստանին օգնելու, երբ նա նեղության մեջ էր լինում և օգնության կարիք էր զգում: Դժբախտաբար, մեր թագավորներից շատերն էլ չէին

հասկանում, թե ինչ մեծ նշանակություն ուներ Հայաստանի գոյությունը Վրաստանի համար»[1]:

Սակայն 1918 թ. մայիսին անկախության հռչակումից հետո անդրկովկասյան ժողովուրդները կանգնեցին անկախության և սեփական պետականությունների կերտման պատմաքաղաքական հրամայականողության անբեկանելի փաստի առաջ, որի հետևանքով ձևավորված անդրկովկասյան հանրապետությունների միջև հարաբերություններում առաջացավ ռազմաքաղաքական մեծ լարվածություն սահմանատարածքային վիճարկելի հիմնախնդիրների շուրջ, որը վերջ ի վերջո հանգեցրեց պատերազմական բախումների և նախկին կարծեցյալ կամ ոչ կարծեցյալ բարեկամության փոխարեն սերմանվեց ազգամիջյան թշնամանք ու անվստահություն: Այս պատմաքաղաքական կարևոր իրադարձություններն ու ռազմական բախումնալից իրավիճակները, նաև մեծ տերությունների քաղաքական մեծ շահերի տիրույթում գտնվող աշխարհաքաղաքական տարաբնույթ ռազմավարությունների իրականացման արդյունքում 1918 թ. դեկտեմբերին բռնկված վրաց-հայկական պատերազմը, ինչպես նաև այլ բախումնալից ռազմաքաղաքական իրավիճակները Հայաստանի և Վրաստանի միջև անհրաժեշտաբար այսօր իրենց վրա են բևեռել պատմաբանների, քաղաքագետների, միջազգայնագետների ու այլ բնագավառների հետազոտողների քննախույզ և համակ ուշադրությունը:

1918 թ. դեկտեմբերին բռնկված վրաց-հայկական պատերազմի ռազմաքաղաքական հետևանքների հենքի վրա առաջացած Լոռու Չեզոք գոտու, Ախալքալաքի, Կարս-Արդահանի և այլ հիմնախնդիրներին վերաբերող հարցերը, և համեմատաբար խաղաղ ժամանակահատվածի, այսինքն՝ մինչև Սևրի իրավարար վճռի ընդունումը Անտանտի երկրների կողմից՝ 1919-1920 թթ. առաջին կեսին առնչվող պատմաքաղաքական իրողությունները ոչ ամբողջական և մասնակի անդրադարձ են գտել ու քննարկվել մի շարք հեղինակների կողմից, իսկ որոշ աշխարհաքաղաքական պահեր և իրողություններ ամենևին էլ չեն լուսաբանվել պատմաբանների, միջազգայնագետների և այլ հարակից գիտու-

[1] Տե՛ս Ճավճավաձե Ի., Հայ գիտնականներն ու քարերի աղաղակումը, Թիֆլիս, 1897, էջ 200-201, Տե՛ս Ալեքսանյան Վ. Խ., Հայ-վրացական հասարակական-քաղաքական և մշակութային կապերի պատմությունից, Եր., «Գիտելիք» հրատ., 1986, էջ 5-6:

թյունների ներկայացուցիչների կողմից, սակայն դրանով հանդերձ այն լիովին չի ամբողջացել, մնացել են հարցականներ ու սպիտակ էջեր, որոնք դեռ իրենց համակողմանի լուսաբանման կարիքն ունեն, այդ թվում 1918 թ. վրաց-հայկական պատերազմի ավարտամասում՝ 1919-1920 թթ. սահմանագծային տիրույթում գտնվող Լոռու Չեզոք գոտուն, Բորչալուի գավառին, և մասնավորապես Ջավախք-Ախալքալաքին, Արդահանի գավառին և այլ տարածամասերին վերաբերող հարցերը:

Խորհրդահայ մի շարք պատմաբանների, հասարակական-քաղաքական հայտնի գործիչների կողմից հայ-վրացական սահմանակռիվներին, և հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների համատեքստում տեղավորվող Լոռու Չեզոք գոտու, Լոռի-Ախալքալաքի, Արդահանի գավառների 1919-1920 թթ. ռազմաքաղաքական զարգացումները ներկայացվել են որպես անդրկովկասյան ազգայնականության և ազգերի համերաշխության սկզբունքներից հեռացման անմիջական հետևանք և ինքնին հասկանալի առումով, նրանք անդրադարձել են այդ կարևոր հիմնախնդրին սուբյեկտիվ դիրքերից, միակողմանիորեն, թեկուզև խորհրդահայ պատմաբաններից ոմանք ներքուստ չեն թաքցրել իրենց համակրանքը Լոռու Չեզոք գոտու, Ախալքալաք-Ջավախքի հիմնախնդիրների հայանպաստ լուծման առումով[2]: Այս առումով, բոլոր վերապահումներով հանդերձ, իրենց դիտարժան և արժեքա-

[2] Տե՛ս Կարապետյան Ս. Խ., Զինված ապստամբությունը Լոռում 1921 թվականին, Եր., Հայպետհրատ, 1955: Ալիխանյան Ս. Տ., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921 թթ.), Եր., «Հայաստան» հրատ., 1966, էջ 274-295: Ալիխանյան Ս. Տ., Գ. Կ. Օրջոնիկիձեն և սովետական իշխանության հաստատումը, Եր., «Հայաստան» հրատ., 1974, էջ 68-72, 78-99 և այլն: Վարդապետյան Ա. Վ., Հայաստանի Կարմիր բանակը քաղաքացիական կռիվներում, 1920-1921 թվականներ, Եր.,1960: Եսայան Ա., Հայաստանի միջազգային-իրավական դրությունը.1920-1922 թթ., Եր., «Միտք» հրատ.,1967: Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920 թվականներին: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Եր., «Զանգակ-97» հրատ., 2003: Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. II, М.-Л., Гос. изд-во, 1929: Харландарян С. В., Ленин и становление Закавказской Федерации. 1921-1923, Ереван, 1969: Օրջոնիկիձե Գ. Կ., Ընտիր հոդվածներ և ճառեր. 1918-1937, Եր., Հայպետհրատ, 1950, էջ 40-49, 58-61 և այլն: Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 52, Եր., «Հայաստան» հրատ., 1983, էջ 80-81, 124-125, 424-425: Տե՛ս նաև Լենին Վ. Ի., Երկեր, հ. 32, Եր., «Հայպետհրատ», 1952, էջ 174-175:

վոր դիտարկումներով առանձնանում են պատմաբաններ Հր. Ավետիսյանը և Գ. Գալոյանը[3]:

Սույն աշխատության մեջ նպատակ է դրվել համակողմանիորեն ուսումնասիրել և լիարժեքորեն ներկայացնել Առաջին Հանրապետության առաջին իսկ լուրջ պատերազմի՝ վրաց-հայկական պատերազմի հետևանքով առաջացած Լոռու Չեզոք գոտու, և սահմանատարածքային սահմանազատման հիմնախնդիրների հետ առհասարակ սերտորեն առնչվող Լոռի-Ախալքալաքի, Արդահանի գավառների շուրջ ռազմաքաղաքական իրադարձությունների, բախումնային իրավիճակների պատմությունը 1919-1920 թթ. սահմանագծին՝ ընդհուպ մինչև Փարիզի վեհաժողովի կողմից սևրյան վճռի ընդունումը Հայաստանի մասին:

Սույն աշխատության մեջ նպատակ է դրվել համակողմանիորեն ուսումնասիրել և լիարժեքորեն ներկայացնել Առաջին Հանրապետության առաջին իսկ ծանր փորձություններից մեկի՝ 1918 թ. վրաց-հայկական պատերազմի պատմությունը, հայկական ձևավորվող բանակի մասնակցությունը ռազմական գործողություններին, ինչպես նաև հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացումները 1918-1921 թվականներին:

1. Հեղինակի խնդիրն է եղել օգտագործելով արխիվային նորահայտ նյութերը, հուշագրային բնույթի և պատմագիտական առկա գրականությունը և այլ վավերագրեր՝ ներկայացնել Հայաստանի Առաջին և Երկրորդ՝ Խորհրդային հանրապետությունների կառավարությունների ողջ գործունեությունը այդ բարդ և խճճված ժամանակահատվածում, հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների ողջ բարդույթը 1918-1921 թվականներին և համալիր հիմնախնդիրները՝ կապված տարածքային սահմանազատման հետ Լոռի-Ախալքալաքի, Արդահանի և այլ վիճարկելի դարձած տարածքների նկատմամբ:

2. Բացահայտել կուսակցությունների դիրքորոշումը վրաց-հայկական ռազմաքաղաքական և դիվանագիտական հարաբերություններում լարվածության առաջացման և այդ ընթացքում բռնկված առճակատման

[3] Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999: Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Եր., Բարձրագույն դպրոց, 1997:

ընթացքում՝ հայկական Ախալքալաքի և Բորչալուի, ինչպես նաև Արդահանի և այլ գավառների համար:

3. Բացահայտել հայկական բանակի դերը հայ ժողովրդի համար չափազանց լարված աշխարհաքաղաքական իրավիճակում մղվող պատերազմում, դրա արդյունքները:

4. Հանգամանորեն լուսաբանել ՀՀ կառավարության, ռազմաքաղաքական շրջանների ջանքերը 1920 թ. երկրորդ կեսին, թուրք-հայկական պատերազմի ընթացքում հայ-վրացական ռազմաքաղաքական հնարավոր համագործակցության ձևավորման խնդրում և դրանց ձախողման պատճառները, զուգահեռաբար վերհանելով վրացական հավակնությունները Լոռի-Ախալքալաքի խնդրում, ինչը նոր լարվածության օջախներ ստեղծեց հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների ոլորտում՝ կանգնեցնելով նոր առճակատման վտանգի առաջ, ինչն էլ մասնավորապես հանգեցրեց Լոռու խնդրի հանգուցալուծման խորհրդային տարբերակին 1921 թ. սկզբին, սակայն ամենևին էլ դրականորեն չլուծելով հայկական Ախալքալաքի խնդիրը:

Սույն աշխատանքում նպատակ է դրվել մի ամբողջի մեջ ներգրավել ուսումնասիրվող հիմնախնդրի հնարավորին չափով բոլոր տեսանկյունները, բացահայտելով վրաց-հայկական ռազմաքաղաքական հարաբերությունների ողջ բարդույթը 1918 թ. դեկտեմբերյան երկշաբաթյա պատերազմի նախօրեին և հետո: Ուսումնասիրությունը գլխավորապես հիմնված է արխիվային վավերագրերի վրա: Աղբյուրագիտական հիմքը կազմում են Հայաստանի Ազգային Արխիվի (ՀԱԱ) բազմաբնույթ փաստաթղթերը և տարբեր հրապարակումները[4]:

Բացի արխիվային բազմաբնույթ նյութերից և փաստաթղթերից, զանազան վավերագրերից, սույն մենագրության համար կարևոր հիմք են հանդիսացել նաև ժամանակի պարբերական մամուլում հրապարակված փաստերը, կուսակցական-պետական, հասարակական-քաղաքական, ռազմական գործիչներ Ս. Վրացյանի, Ալ. Խատիսյանի, Արտ. Բաբալյանի, Հովհ. Քաջազնունու, Ա. Ջամալյանի, Վ. Փափազյանի, Մ.

[4] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ./ գլխ. խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան, Եր., Հայ. Ազգ. արխիվ, 2009:

Թումանյանի, Հ. Սառիկյանի, Ավ. Շահխաթունյանի, Գ. Չալխուշյանի և այլոց աշխատությունները[5]:

Հիմնահարցը ի սկզբանե իր վրա է բեևեռել նաև պատմաբանների ուշադրությունը: Այս առումով ինքնատիպ գնահատումներ և պատմաքաղաքական իրադարձությունների արժեքավորումներ կան հանրահայտ պատմաբան, հասարակական-մշակութային գործիչ Լեոյի (Առաքել Բաբախանյան)[6] դիտարժան, փաստերով և եզրահանգումներով ինքնատիպ և հարուստ աշխատություններում, որոնցում առաջադրված մի շարք հարցադրումների հետ գուցե և պարտադիր չէ բոլոր մանրամասներով համակարծիք լինել, սակայն դրանք մեծ արժեք են նրկայացնում խնդրի համակողմանի պատմաքննական ներկայացման տեսանկյունից, քանզի իրատեսական փաստարկումների հիման վրա Լեոն յու-

---

[5] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետություն, Բէյրութ, տպ. «Մշակ», 1958: Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան» հրատ., 1993, էջ 214-251: Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով. Դէպքեր. Դէմքեր. Ապրումներ. հատոր Ա, Պէյրութ, տպ. Համազգային, 1967: Կեանքի ուղիներով, Դէպքեր. Դէմքեր. Ապրումներ. հատոր Դ, Պէյրութ, տպ. «Մշակ», 1965: Տե՛ս նույնի Կեանքի ուղիներով. Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ. հատոր Ե, Պէյրութ, տպարան «Համազգային», 1966: Նույնի՝ Հին թղթեր նոր պատմութեան համար, տպ. «Մշակ», Պէյրութ, 1962: Տե՛ս նաև Քաջազնունի Հովհ., Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ ևս. Վիեննա, Մխիթարեան տպարան, 1923; Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք», (ամսագիր), 1928: Տե՛ս նույնի Հայ-վրացական կնճիռը, Եր., «Միտք» վերլ. Կենտրոն, 2011: Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 2 /երկրորդ/, Պէյրութ, տպ. Համազգային, 1952: Նույնի՝ Իմ յուշերը, հատոր երրորդ, Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1957: Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, հատոր Է. Գ հրատարակութիւն, Թեհրան, 1982: Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը. Բ տպագրութիւն, Բէյրութ, տպարան Համազգային, 1968: Բաբալեան Արտաշես, Հայաստանի անկախութեան պատմութիւնը եւ այլ յիշատակներ, Գլենդել, «Նավասարդ» հրատ., 1997, էջ 44-47, 69-71, 74-75, 88-89, 110-115, 180-183: Սառիկյան Հակոբ, Հիշողություններ. 1878-1924, հրատ. են պատ.՝ Ա. Վիրաբյանը, Էդգ. Հովհաննիսյանը, Եր., Հայ. Ազգային արխիվ, 2015: Ա-Դո, Իմ հիշողությունները, Եր., 2015: Ա-Դո (Հ. Տեր-Մարտիրոսյան), Հայութեան երկունքը, Եր., Հայաստանի պատմ. թանգարան, 2014: Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., Ереван, Нац. Архив Армении, 2012: Տե՛ս Шахатунян Ав., Административный переделъ Закавказского края. Тифлисъ, типография «Ашхатаворъ», 1918: Чальхушян Г. , Красная книга, Ростов-на-Дону, 1919 (Воспроиз. изд. 1919 г.), Ер., 2015 և այլն:

[6] Տե՛ս Լէո, Անցյալից: Հուշեր, թղթեր, դատումներ Թիֆլիս, «Խորհրդ. Կովկաս», 1925: Լէո, Անցյալից: Հուշագրություն, Եր., «Շեմ» հրատ., 2009: Լէո, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատոր Ա, Բ, Փարիզ, տպ. Պահրի եղբարց, 1934-1935: Լէո, Սահմանավեճեր. Լօռի. Ախալքալաք. Ղարաբաղ, հրատ. Հայ Հայրենակց. Միութիւնների Կենտ. խորհրդի, Թիֆլիս, տպ. «Աշխատաւոր», 1919:

բահատուկ գնահատականներ է տվել այդ ժամանակաշրջանի իրադարձություններին և քաղաքական գլխավոր ուժերի գործունեությանը, նրանց իրականացրած ռազմավարությանը, արժևորել դրանք և կատարել իրատեսական գնահատումներ՝ առանց գունազարդելու պատմաքաղաքական իրողությունները, թեկուզև տեղ-տեղ դրանք բավականին խստաբարո ձև, հակասականություն ունեն:

1919 թ. Վրաստանի ռազմական մինիստրի հրամանով ստեղծվեց Գլխավոր շտաբի հանձնաժողով՝ գեներալ Գ. Կվինիտաձեի գլխավորությամբ, որը պետք է զբաղվեր վրաց-հայկական պատերազմի պատմությամբ: Զուգահեռաբար կազմվեց Վրաստանի ռազմական դատարանի հանձնաժողով, որը պետք է զբաղվեր պատերազմի ժամանակ Բորչալուի գավառի բնակչության հակավրացական, ապստամբական գործողությունների պատճառների անաչառ ուսումնասիրմամբ: Արդյունքում, 1919 թ. Թիֆլիսում լույս տեսավ «Из истории армяно-грузинских отношений. 1918 год» գիրքը, որում հավաքված էին զգալի թվով փաստաթղթեր՝ նվիրված Վրաստանի և Հայաստանի Հանրապետությունների միջև տեղի ունեցած պատերազմին[7]: Դրան ի հակաշիռ Բաքվում Հայոց Ազգային խորհրդի կողմից հրատարակվեց «Армяно-грузинский вооруженный конфликт» գիրքը[8], որում վերհանվել էին վրաց-հայկական պատերազմի հանգուցային իրադարձությունները: Հարցի հանգամանալից և առավել ամբողջական լուսաբանման տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում նաև մի շարք փաստաթղթերի ժողովածուներ[9]:

Վրաց-հայկական ռազմաքաղաքական հարաբերությունների մի էջ՝ 1918 թ. վրաց-հայկական պատերազմի մի շարք հարցերի ընդհանուր պարզաբանումը տեղ է գտել Մ. Կարապետյանի աշխատանքում,

[7] Տե՛ս Изь истории армяно-грузинскихь отношений. 1918 годь. (пограничные конфликты: переговоры: война: соглашение), Тифлись, Государственная типография, 1919:

[8] Տե՛ս Армяно-грузинский вооруженный конфликть. На оснований фактическийь данныхь и подлинныхь документов, Баку, Изд.-во Бакинского Национального совьета, Типогр. «Урардия», 1919:

[9] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлись, Типография Прав. Груз. Республ., 1919: Տե՛ս նաև Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы (1917-1921 гг.). Сост. Беридзе С. Д., Тбилиси, Гос. изд-во «Сабчота Сакартвело», 1958: Տե՛ս նաև Германские оккупанты в Грузии в 1918 году. Сборник документов и материалов. Составил и подготовил к печати Габричидзе М. М., Тбилиси, Госиздат Груз. ССР, 1942:

որը նվիրված է ՀՀ բանակի ստեղծմանն ու գործունեությանը[10]: Հարկ է այդ առումով առանձնացնել նաև Հ. Գևորգյանի «Դրո» աշխատանքը, որում բարձր գեղարվեստականությամբ և պատմական ամփոփիչ մակարդակով բացահայտված է Դրոյի (Դրաստամատ Կանայան) դերը վրաց-հայկական 1918 թ. պատերազմում, հայոց բանակի հերոսականությունն ու ավանդը այդ իրադարձություններում[11]:

Ուսումնասիրվող հիմնահարցի որոշ կարևոր կողմեր լուսաբանվել են Ա. Մելքոնյանի մի շարք աշխատություններում[12], որոնցում փաստական հարուստ հիմքի վրա հետազոտվել են հայկական Ջավախքի հիմնախնդիրները, արդյունքում՝ հայ-վրացական հարաբերությունները, դրանց զարգացումները 1918-1921 թթ. և կուտակված կնճիռները, բախումնալից իրավիճակները գտնվել են հեղինակի մշտական ուշադրության դիտակետում և արվել են անհրաժեշտ եզրահանգումներ ու գնահատումներ:

Միանգամայն արժեքավոր են Գ. Պետրոսյանի աշխատությունները քննարկվող հիմնահարցի մի շարք կարևոր կողմերի, այդ թվում վրաց-հայկական պատերազմի, հայ-վրացական դիվանագիտական-քաղաքական հարաբերությունների և Այսրկովկասում կուտակված հիմնախնդիրների նկատմամբ Ա. Դենիկինի Կամավորական բանակի որդեգրած ռազմավարության այս կամ այն ելևէջումների վերաբերյալ[13]:

Հարկ է նաև նշել, որ հետազոտված հարցի մի շարք տեսանկյուններ, և մասնավորապես ռազմաքաղաքական հարաբերությունների ազգամիջյան զարգացումների որոշ ուշագրավ կողմեր իրենց արտացոլումն են գտել Սփյուռքի, և առհասարակ, արտերկրի որոշ այլազգի հե-

---

[10] Տե՛ս Կարապետյան Մ., Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920 թթ), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996:

[11] Տե՛ս Գևորգյան Հ., Դրո, Եր., «Զանգակ-97» հրատ., 1999: Տե՛ս նույնի Դրո, Եր., Հեղ. հրատ., 2007, Տե՛ս նույնի Դրո, Եր., Հեղ. հրատ., 2014:

[12] Տե՛ս Մելքոնյան Ա. Ա., Ջավախք: Պատմության ուրվագծեր, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999: Տե՛ս նաև Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., «Զանգակ-97» հրատ., 2003:

[13] Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի Հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ., հունիս-նոյեմբեր), Եր., ԵՊՀ հրատ., 2004: Տե՛ս նույնի Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Եր., ԵՊՀ հրատ., 2011:

ղինակների կողմից հրապարակված մի շարք գործերում՝ իրենց երբեմն սուբյեկտիվ և միակողմանի գնահատումներով և եզրահանգումներով[14]:

Անշուշտ, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև պատմաբան Կ. Սարդարյանի մենագրությունը, որում կան ուշադրության արժանի ինքնատիպ դիտարկումներ, արժևորումներ և տեղ-տեղ հակասական, ինչպես նաև որոշակի տեսանկյունից, անշուշտ, վիճարկելի տեսաքաղաքական մոտեցումներ, որոնք վերաբերվում են 1918-1921 թվականներին հայ-վրացական միջպետական հարաբերությունների բարդույթին, այդ թվում Լոռու Չեզոք գոտու և այլ հիմնախնդիրներին վերաբերող, ինչը հարկ է հաշվի առնել նշված հիմնահարցը առավել համակողմանի քննարկելու տեսանկյունից[15]:

Հարկ է սակայն նշել, որ հայ-վրացական հարաբերությունների բարդույթը, կապված Լոռի-Ախալքալաքի, Արդահանի և այլ հիմնախնդիրների շուրջ առաջացած ռազմաքաղաքական լարվածության հետ, և մասնավորապես 1920-1921 թթ. վերաբերող, այդուհանդերձ, պարտադրում է առաջադրված հիմնախնդիրը ենթարկել ավելի խորքային և վերկուսակցական պատմաքննական հետազոտման:

Ընդհանուր բնույթի մի շարք աշխատանքներ ևս իրենց վրա են բևեռում պատմաբանների ուշադրությունը, քանզի դրանցում կան հետաքրքիր դիտարկումներ՝ կապված անդրկովկասյան Սեյմի փլուզման և անկախ հանրապետությունների հռչակման ժամանակահատվածում առկա ռազմաքաղաքական մոտեցումների և զարգացումների, 1918 թ. հայ-վրացական պատերազմի, հետպատերազմյան ժամանակաշրջանի հայ-վրացական ռազմական և քաղաքական-դիվանագիտական, տնտե-

[14] Տե՛ս Նասիպեան Ագապի, Բրիտանիա եւ Հայկական հարցը. 1915-1923, Պէյրութ, Հրատ. Հ. Բ. Ը. Միութեան Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադրամի,1994; Jones Stephen F., Georgian-Armenian Relations in 1918-20 and 1991-94: A Comparison, «Armenian review». 1993. vol. 46. no 1-4 (181-184), pp. 57-77: Aspaturian Vernon V., Armenia in the World Arena, 1914-1921. - Armenian Review. spring-winter, 1993, volume 46, number 1-4 (181-184), pp. 119-142: Kazemzadeh F., The Struggle for Transcaucasia (1917-1921), New York: Oxford University Press, 1951: Каземзаде Фируз, Борьба за Закавказье (1917–1921), Институт стратегических исследований Кавказа, Серия «История Кавказа«, Стокгольм, CA&CC Press®, 2010: The making of modern Georgia. 1918-2010: The First Georgian republic and its successors, Edited by Stephen F. Jones, Routledge, London-New York, 2014:

[15] Տե՛ս Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Եր.: «Նաիրի» հրատ., 2003:

սամշակութային հարաբերությունների, 1919 թ. հայ-վրացական հունվարյան համաձայնագրի, Լոռու Չեզոք գոտու, Ախալքալաքի, Կարս-Արդահանի հիմնախնդիրների հետ, որոնք հնարավորություն են տալիս ներկայացնել ռազմաքաղաքական-դիվանագիտական հակամարտության մի շարք մանրամասներ 1918-1921 թվականներին, դրանք առաջ բերած գործոնները և խթանող հանգամանքները, որոնք առաջ բերեցին քաղաքական քարտեզի նոր վերաձևումներ Անդրկովկասում[16]:

[16] Տե՛ս Մելիքյան Վ., Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում: Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր -1918 թ. փետրվար), Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ին-տ, 2010: Հայոց պատմություն. Հ. IV, Գիրք առաջին (1918-1945 թթ.), Եր., ԳԱԱ Պատմ. ինստ-տ, 2012, էջ 18-26, 116-125, 313-324 և այլն: Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 79-96: Խաչատրյան Կ. Հ., Սուքիասյան Հ. Կ., Բադալյան Գ. Մ., Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930–ական թվականներին, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստ., 2015: Սարդարյան Կ., Հայաստանի Հանրապետության պատմություն, Եր., Ա.տ., Ա.խ., 1992, էջ 48-53 և այլն: Դավթյան Ա. Խ., Ջավախք (պատմական ակնարկ), Եր.,1994, էջ 5-9, 44-59: Հայոց պատմություն. 1900-1939 թթ.: Նյութեր, խմբ. Ավետիսյան Հր., Ղազախեցյան Վ., Եր., 1993, էջ 189-193: Հակոբյան Ար., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1921 թթ.,), Եր., ՀՅԴ հրատ., 2005, նույնի՝ Հայաստանի Հանրապետություն (1918-1920 թթ.), Եր., «Հայաստան» հրատ., 1992: Ղազախեցյան Վլ., Հայաստանը 1920-1940 թթ., Եր., ԳԱԱ պատմ. ին-տ, 2006, էջ 118-137: Հարությունյան Կլ. Ա., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Եր., «Զանգակ-97» հրատ., 2002: Քառյան Ս., Հայաստանի միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1923 թվականներին. Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005, էջ 69-82: Ազատյան Հ., Հայերը միջազգային դիվանագիտական խաչմերուկներում, Եր., «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ, 2009: Աբրահամյան Վ. Ս., 1918-1921 թթ. հայ-վրացական վիճելի տարածքների հարցի շուրջ// Գիտական տեղեկագիր, Գյումրի, Մ. Նալբանդյանի անվան պետ. մանկ. ինստ-տ, 2013, N 2, էջ 62-73: Ներսիսյան Ա., Թորոսյան Ջ., Բաթումի կոնֆերանսը: Հայաստանի Հանրապետության սահմանների հարցը Բաթումի պայմանագրում// «Ակունք». Գիտական հոդվածների ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 3-18: Խաչատրյան Կ., Բադալյան Գ., ՀԽՍՀ տարածքի և սահմանների ձևավորումը (1920 թ. դեկտեմբեր-1922 թ. սկիզբ) //Հայոց պատմության հարցեր: Հ. 14. Գիտական հոդվածների ժողովածու (խմբ. խորհուրդ՝ Ա. Մելքոնյան, Ա. Խառատյան և ուրիշ.), Եր., Պատմ. ինստ., 2013, էջ 172-195: Խառատյան Վ., Լոռու և Ախալքալաքի հարցը 1919 թ. հայ-վրացական խորհրդաժողովում, Հայոց պատմության հարցեր. Գիտական հոդվածների ժողովածու, հատոր 2, Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001, էջ 98-104: Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Հայ-վրացական տարածքային-սահմանային խնդիրների կարգավորման գործընթացը 1920-1930–ական թվականներին// «Պատմություն և մշակույթ». Հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 75-98: Թորոսյան Շ. Ա., Արդահանի խնդիրը հայ-վրացական հարաբերություններում (1920 թ. հունվար-օգոստոս), «Բանբեր Երևանի համալսարանի», 2014, N 2, էջ 3-15: Սուքիասյան Հ., Հայաստանի և Վրաստանի միջև դիվանագի-

Վերջին շրջանում գիտական շրջանառության մեջ են դրվել մի շարք արխիվային հրապարակումներ, որոնցում 1920-1921 թթ. սահմանագծում Լոռու Չեզոք գոտու, առհասարակ Բորչալուի գավառի, Ախալքալաքի և այլ հիմնախնդիրներին և ընդհանուր առմամբ՝ հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում առկա լարվածության և դիվանագիտական հակամարտությանը վերաբերող արխիվային վկայություններ են զետեղվել, որոնք հարցի բազմակողմանի վերհանման տեսանկյունից որոշակի պատմագիտական հետաքրքրություն են ներկայացնում[17]:

տական կապերի վերականգնման հարցը 1918 թ. վրաց-հայկական պատերազմին հաջորդող շրջանում// Մերձավոր Արևելք. Պատմություն. Քաղաքականություն. Մշակույթ. Հոդվածների ժողովածու, հ. IX-X, Եր., ՀՀ ԳԱԱ արևելագիտ. ին-տ, 2014, էջ 543-555: Բալասանյան Գր., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ.// Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու: Գիտական հոդվածների պարբերական ժողովածու: Եր., «Լիմուշ» հրատ., 2015, էջ 42-52: Ղազարյան Ա., Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը հայ-վրացական պատերազմի նախօրյակին (1918 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին) // «Պատմություն և մշակույթ». Հայագիտական հանդես): Գիտական հոդվածների ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 199-209: Նույնի՝ Ախալքալաքի գաղթականության դրությունը 1918 թ. վերջերին և Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը// Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու: Գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Եր., «Լիմուշ» հրատ., 2015, էջ 115-125: Նույնի՝ Հայ-վրացական քաղաքական հարաբերությունների կարգավորումը 1918 թ. դեկտեմբերյան պատերազմից հետո և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության վերաբացումը //«Պատմություն և մշակույթ». Հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 239-253: Մայիլյան Բ., Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի գործունեության պատմությունից (1918 թ. օգոստոս –1921 թ. փետրվար), 2011, Պատմաբանասիրական հանդես, N 1, էջ 61-83: Маилян Б. В., Краткий очерк изгнания армян из Джавахка в 1918 году, Седьмая годичная научная конференция (3-7 декабря 2012 г.), часть 2. Сборник научных статей. Социально-гуманитарные науки, Ер., Изд-во РАУ, 2013, стр. 72-84: Тунян В. Г., Карабахский конфликт, Ереван, 1999: Асоян Т. М., Территориальные проблемы Республики Армения и британская политика (1918-1920 гг.), М.: РИЦ «Альфа» МГОПУ им. М. А. Шолохова, 2005: Ованнисян Ричард Г., Международные отношения Республики Армения, 1918-1920 гг./ Институт истории НАН Армении, Ер., Изд-во «Тигран Мец», 2007: Кадишев А. Б., Интервенция и гражданская война в Закавказье. М.: Военное изд-во МО СССР, 1960: Махмурян Г. Г., Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг.: Бремя белиго человека, Ер., Изд-во «Лусакн», 2002: Armenian-Georgian Relations: Challenges and Opportunities for the Bilateral Cooperation. Yer.: Political Science Association of Armenia, 2014, pp. 7-11:

[17] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., (Քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, (Կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան (ղեկավար), Վ. Մելիքյան և ուրիշներ), Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000: Ասրյան

Թեմայի մի շարք կարևոր մանրամասների ամբողջացման և հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների առավել լիարժեք բացահայտման, իրարամերժ ոտեցումները համադրելու և պատմաքննական արժևորման ենթարկելու տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում մի շարք վրաց հեղինակների՝ Վ. Ի. Ադամիայի, Գ. Վ. Խաչապուրիձեի, Ա. Ի. Չոխելու, Գ. Դեվդարիանու, ինչպես նաև վրաց հայտնի պատմաբան Իվանե Ջավախիշվիլու և այլոց աշխատությունները[18]: Որոշակի հետաքրքիր դիտարկումներ են պարունակվում

Ա., Հայ-վրացական հարաբերությունների պատմությունից (1918 թ.)// «Բանբեր Հայաստանի արխիվների», 2009, N 2, էջ 66-71: Документы об армяно-грузинском пограничном споре в Лори (декабрь 1920 г. - январь 1921 г.), կազմող՝ Հ. Սուքիասյան // տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 2010, N 1, էջ 253-262: Տե՛ս Հայ-վրացական սահմանավեճը փաստաթղթերի լեզվով // կազմեց Համո Կ. Սուքիասյանը, «ՎԷՄ», համահայկական հանդես, Դ (Ժ) տարի, 2012, թիվ 4 (40), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 194-216: Տե՛ս Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի հայկական պատվիրակության հաշվետվությունը (1918թ. դեկտեմբեր - 1919 թ. մարտ). կազմող՝ Հ. Սուքիասյան // տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 2009, N 1, էջ 185-206: Մախմուրյան Գ., ՀՀ արտաքին քաղաքականության հարցերի արծարծումը Ավետիս Ահարոնյանի Փարիզից ու Սան-Ռեմոյից ուղարկված նամակներում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2010, N 1(115), էջ 56-72: Հարությունյան Վլ., Հայ-վրացական պատերազմը (1918 թ.). Նյութեր և փաստաթղթեր/ Վ. Հարությունյան, Եր., «Անտարես» հրատ., 2014. -Հետգրություն. Վլ. Հարությունյանի նյութերի և փաստաթղթերի ժողովածուի հետ կապված նշենք, որ բացի այն բանից, որ վերընշյալ հեղինակը ըստ էության շրջանցել է ավելի վաղ մի շարք պատմաբանների, այդ թվում առաջին հերթին Գ. Պետրոսյանի, Ա. Մելքոնյանի, Վ. Վիրաբյանի և այլոց կողմից առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված մի շարք նորահայտ արխիվային վավերագրերի գիտական շրջանառման մեջ դրված լինելու ակնհայտ փաստը, որը Վլ. Հարությունյանը անտեսում է և իր կողմից հրապարակված արխիվային նյութերը դիտարկում է որպես առաջին անգամ գիտական ու գործնական շրջանառության մեջ դրվող նյութեր և փաստաթղթեր, ինչը կարծում ենք, միանգամայն անցանկալի և անընդունելի փաստ է:

[18] Տե՛ս Адамия В. И., Из истории английской интервенции в Грузии (1918-1921 гг.), Сухуми, Абгосиздат, 1961: Տե՛ս Хачапуридзе Г. В., Борьба за пролетарскую революцию в Грузии. Очерки. 1917-1921, Тбилиси, Изд-во ЦК КП(б) Грузии «Заря востока», 1937: Տե՛ս նաև Хачапуридзе Г. В., Борьба грузинского народа за установление Советской власти, Москва, Гос. изд-во полит. лит., 1956: Чохели А. И., Политика Франции в отношении Грузии в 1917-1921 годах, Тбилиси, «Мецниереба», 1980: Девдариани Г., Дни господства меньшевиков в Грузии (документы и материалы), Тифлис, Госиздат Грузии, 1931: Ментешашвили А. М., Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии. 1917-1921, Тбилиси, Изд-во «Ганатлеба», 1987: Ментешашвили А. М., «Грузинская Демократическая Республика и Парижская мирная конференция». В журн. «Мацне», серия истории. Тб., 1992, № 2, стр. 162: Сеф С. Е., Революция 1917 года в Закавказье. Документы и материалы. Тифлис, Заккнига, 1927: Տե՛ս Стуруа Н. Н., Вопросы новой и новейшей истории Гру-

վրաց-հայկական պատերազմի ժամանակվա իրադարձությունների ժամանակակիցներ Գերոնտի Քիքոձեի և Ալեքսանդր Մուշիրիի հուշագրային բնույթի գրառումներում[19]:

Մասնավորապես կարևորել ենք անդրադարձը Գ. Ռ. Մարխուլիայի աշխատանքին[20], որը հայտնի է իր հակահայկական ուղղվածությամբ և հակագիտական մոտեցումներով: Պատմաքննական որոշակի գնահատումներ են տրվել Է. Անդերսենի և Գ. Էգգեի [21] աշխատանքին՝ նվիրված հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններին, որը աչքի է ընկնում հայ-վրացական սահմանային-տարածքային առճակատման, և մասնավորապես 1918 թ. դեկտեմբերյան վրաց-հայկական պատերազմի և ձեռքբերված արդյունքների վերաբերյալ աղճատված

зии, т. II, Тб., 1987: Уратадзе Г. А., Образование и консолидация Грузинской Демократической республики. Мюнхен, Исследования и материалы (серия 1-я, выпуск 29). Институт по изучению СССР, 1956: Манджгаладзе Г., Военный конфликт между Грузией и Арменией в 1918 году // Dirçəliş XXI əsr», 2008, № 120-121, стр. 85-90// elibrary.az/docs/jurnal-08/148j.htm: Տե՛ս Тетвадзе Ш., Тетвадзе О., Армяне в Грузии (с древних времен до сегодняшнего дня), Тбилиси, «Универсал», 2008: Տե՛ս Гогитидзе М., Грузинский генералитет (1699-1921 гг.). Биографический справочник НАН Украины. Инс-т археографии и источниковедения им. М. Грушевского, Укр. Центр биографической некрополистики. Сост. Гогитидзе М., отв. ред. Иван Дивный, Киев, 2001: Гогитидзе Мамука, Бежиташвили Георгий, Военная элита Армении (Армяне–генералы, уроженцы Грузии). Биографический справочник, Тбилиси, Изд-во «Свети», 2014: Mamatsashvili Gocha, Georgian-Armenian relations in 1918-1920 and Georgia's Constituent Assembly/bulletin of the Georgian National academy of sciences, vol. 6, N 1, 2012, pp. 158-162: Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1990). Նյութերի ժողովածու. Պրակ առաջին, կազմեց, առաջաբանը գրեց և վրացերենից թարգմանեց Հրաչյա Բայրամյանը, Եր., «Զանգակ- 97» հրատ., 2001:

[19] Տե՛ս Քիքոձե Գերոնտի, Ժամանակակցի գրառումներ//«Մնաթոբի», Թիֆլիս, 1989, թիվ 7, էջ 106-107: Մուշիրի Ալեքսանդր, Հարյուր տասնյոթ տարի անց /վրաց պետականության վերականգնումը //«Մնաթոբի», Թիֆլիս, 1989, թիվ 1, էջ 14-15 (վրաց. թարգմ. Հր. Բայրամյանը): Վրաց այս հեղինակների հուշագրային բնույթի գրառումները մեզ է տրամադրել բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ վրացագետ Հրաչիկ Բայրամյանը:

[20] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах (с сокращениями), Тбилиси, Тб. гос. ун-т им. И. Джавахишвили, 2007: Տե՛ս նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[21] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

տեսակետներով: Խնդրո առարկայի վերաբերյալ հետաքրքիր, սակայն միանգամայն վիճահարույց, ոչ հազվադեպ հանդիպող աղճատված փաստեր կան գեներալ Գ. Ի. Կվինիտաձեի հուշագրային բնույթի աշխատանքում[22], որում ներկայացված մի շարք փաստարկումների նկատմամբ ցուցաբերվել է համադրական-քննական մոտեցում:

Եվ առհասարակ, ժամանակաշրջանը և անդրկովկասյան հանրապետությունների միջև առկա միջպետական ռազմաքաղաքական և դիվանագիտական հարաբերությունները, ինչպես նաև դրանց հետ սերտորեն առնչվող սահմանատարածքային վեճերն արտացոլող աշխատանքներից պետք է առանձնացնել վրաց հասարակական և պետաքաղաքական գործիչ, սենատոր և պետական իրավունքի պրոֆեսոր, Փարիզի վեհաժողովում Վրաստանի պատվիրակության իրավական հարցերով խորհրդական Զուրաբ Դ. Ավալովի (Ավալաշվիլու) ուշագրավ գործը[23], որը բոլոր վերապահումներով հանդերձ կարևորվում է միջազգային գործառույթներում Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների ունեցած տեղի ու դերի, փոխառնչությունների բացահայտման տեսանկյունից:

Անկասկած, հետազոտված հիմնախնդրի առավել ամբողջական լուսաբանման տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում Ռիչարդ Հովհաննիսյանի աշխատանքները Առաջին Հանրապետության պատմության վերաբերյալ, որում որոշ իրարամերժ և վիճահարույց մոտեցումների հետ մեկտեղ, կան մի շարք ինքնատիպ եզրահանգումներ, որոնք պատմաքննական տեսանկյունից առնչվում են հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններին և դրանցում առկա լուրջ բարդույթներին[24]:

---

[22] Տե՛ս Квинитадзе Г. И., Мои воспоминания в годы независимости Грузии. 1917-1921, YMCA-PRESS 11, rue de la Montagne-Ste-Geneviève 75005, Paris, 1985 (на рус. языке):

[23] Տե՛ս Авалов З. Д., Независимость Грузии в международной политике. 1918-1921 гг. Воспоминания. Очерки, Париж, 1924:

[24] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I. Առաջին Տարին, 1918-1919, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2005: Տե՛ս նույնի Հայաստանի Հանրապետություն: Հատոր II. Վերսալից-Լոնդոն, 1919-1920, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2014: Տե՛ս Նույնի Հայաստանի Հանրապետություն: ՀՀ ԳԱԱ, Հատոր III. Լոնդոնից Սևր, փետրվար-օգոստոս, 1920, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2015: Տե՛ս նույնի Հայաստանի Հանրապետություն: ՀՀ ԳԱԱ, Հատոր IV. Սալի և մանգաղի միջև. Մասնատում և խորհրդայնացում, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2016: Hovannisian Richard G., The Republic of Armenia, vol. 1.-

Անկասկած, 1918-1921 թթ. Կովկասյան տարածաշրջանում ընթացած իրադարձությունների առավել ամբողջական լուսաբանման տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում Բ. Մայիլյանի[25] աշխատությունը, որում ուշագրավ դիտարկումներ կան Վրաստանի Առաջին Հանրապետության ձևավորման, նրա վարած ներքին քաղաքականության հիմնական սկզբունքների և Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի, հայ քաղաքական կուսակցությունների գործունեության մասին:

Եվ վերջապես, տողերիս հեղինակի աշխատանքը, որում մանրազնին հետազոտման են ենթարկվել հայ-վրացական դիվանագիտական և ռազմաքաղաքական առճակատման հնարավորինս բոլոր կարևոր դրվագները, այդ թվում անդրադարձ կատարելով հետպատերազմյան ժամանակահատվածի իրավիճակի ռազմաքաղաքական զարգացումներին և կողմերի քայլերին՝ կարգավորելու հայ-վրացական հարաբերությունները 1919 թ. հունվարյան հաշտության կոնֆերանսում[26]:

Սույն մենագրությունում նպատակ է դրվել պատմաքննական հետազոտման տեսանկյունից մի ամբողջի մեջ ներգրավել ուսումնասիրվող հիմնախնդրի հնարավորինս բոլոր տեսանկյունները, հանգամանալից և լիարժեք, վերկուսակցական դիրքերից բացահայտելով վրաց-հայկական ռազմաքաղաքական և դիվանագիտական հարաբերությունների ողջ լարվածության և տարածքային սահմանազատման բարդույթը 1918-1921 թվականներին:

Barkeley, Los Angelos, London: Univers. of California Press 1971, vol. 2, 1982, vol. 3, 1996, vol. 4:

[25] Տե՛ս Մայիլյան Բ. Վ., Ազգային հարցը և հայերի կացությունը Վրաստանի Հանրապետությունում 1918-1920 թթ., Եր., «Գիտություն» հրատ., 2016 թ.:

[26] Տե՛ս Վիրաբյան Վ. Հ., 1918 թ. վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կատավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Եր., «Ասողիկ» հրատ., 2003:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ: ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ: ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ: ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ: ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԿԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ: ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայաստանի և հայ ժողովրդի վիճակը օրհասական դարձավ թուրքական զավթիչների նոր հարձակման պատճառով, որոնք 1918 թ. հունվարին հարձակման անցնելով Կովկասյան ռազմաճակատում, ապրիլին գրավեցին Բաթումը, Կարսը և շարժվեցին դեպի Անդրկովկասի կենտրոնական շրջանները: Թուրքական զորքերի առաջխաղացումը ուղեկցվում էր հայ խաղաղ բնակչության մասսայական կոտորածներով: Թուրքերը մտադրվել էին սրի քաշել նաև Արևելյան Հայաստանի հայությանն և այնտեղ ապաստանած արևմտահայ խեղճ ու թշվառ գաղթականությանը:

Այդ ժամանակ Անդրկովկասի և Հայաստանի «փրկությունը», գուցե և խորհրդային կարգերի հաստատման մեջ էր, որն աստիճանաբար աշխարհաքաղաքական օրակարգի պարտադիր մասն էր դարձել, սակայն իրադարձությունների անկանխատեսելի շրջապտույտի ընթացքը իր սցենարով էր զարգանում և պարզ չէր, թե երբ այն մոսկովյան բոլշևիկների համար հրամայական ռազմավարություն կդառնար և կիրագործվեր, որին զոգահեռաբար մեկը մյուսի ետևից Անդրկովկասը լքում էին ինչպես գերմանա-թուրքական ռազմական ստորաբաժանումները, այնպես էլ դաշնակիցները: Անդրկովկասյան Սեյմը, առանց բանակի ու տնտեսական լուրջ բազայի պատերազմի մեջ մտավ Թուրքիայի դեմ և էլ ավելի խորացրեց ստեղծված արհավիրքային իրավիճակը: Հայ ժողովրդի կենդանի մնացած հատվածը նույնպես կանգնեց ֆիզիկական բնաջնջման վտանգի առաջ: Առավել անցանկալի հետևանքներ ունեցան

Կարսի հանձնման հետ կապված իրողությունները՝ կապված վրաց մենշևիկների ազգայնամետ-վրացամետ գործողությունների հետ, այդ ընթացքում հայ քաղաքական ուժերի՝ մասնավորապես ՀՅԴ կողմից ձեռնարկած անորոշ և անհասկանալի, շփոթահար և ոչ իրատեսական, առկա իրավիճակից չբխող ռազմավարությունը՝ իրադրությունից անվնաս և առանց կորուստների դուրս գալու առումով: Պատմափաստերը վկայում են, թե ինչպիսի խառնաշփոթ էր իշխում հայ քաղաքական շրջանակներում, որում դրության տերը ՀՅԴ դաշնակցությունն էր, որը չէր կարողանում անցկացնել զինվորագրությունը և զորակոչերը, թույլ էր տալիս խոշոր վրիպումներ և ձախողումներ, քաղաքական-ռազմական ժամանակավրեպ վճիռներ, իսկ պարտադրվող զորակոչերին անգամ դաշնակցական տեռորը չէր օգնում, և արդյունքում՝ հայկական ռազմաճակատի դրությունը սաստիկ վատթար վիճակում էր: Դա ավելի էր սաստկանում «դաշնակից» վրաց մենշևիկների և նացիոնալիստների ազգայնամոլության հետևանքով: Վերջիններս օգտվելով իշխանության մեջ իշխող դիրքերից, համառորեն աշխատում էին Կարսից և այլ բերդերից սրբել-տանել ողջ ռազմամթերքը, փամփուշտները և զենքի ու զինամթերքի այլ տեսակներ և դրանք ամբարել Թիֆլիսի իրենց պահեստներում՝ հայերին բաժին չհանելով, առավել ևս, երբ իրենք հայ քաղաքական և ռազմական գործիչներն անհեռատեսորեն իրենց հասանելիք զենքն ու ռազմամթերքն ամբարում էին «եղբայրական» Վրաստանի մայրաքաղաքում՝ հայ մեծահարուստ Արամյանցի և այլոց առանձնատների պահեստներում, որոնք հետագայում բռնկված վրաց-հայկական ռազմական առճակատման ժամանակ պարզապես կնքվեցին և արգելափակվեցին: Առավել բացասական էր հայկական ճակատի հրամանատար հանդիսացող հայատյաց գեներալ Իլյա Զ. Օդիշելիձեի վարքը[27],

[27] Օդիշելիձե Իլյա Զուրաբի [25.03.1868 (1865) թ. -1924 թ.հետո] - Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ: 1917 թ. հոկտեմբերից նա Կովկասյան բանակի հրամանատարն էր: 1918 թ. փետրվարին անվճռական և ոչ նպատակային, դավաճանական բնույթի քայլով «փորձեր կատարեց» դիմադրություն ցույց տալու թուրքերին: Եղել է Անդրկովկասյան հանրապետության Ռազմական մինիստրի օգնական, 1918 թ. ազգայնամոլ և հակահայկական բնույթի ելույթների համար անդրկովկասյան կառավարության հայ ներկայացուցիչների և քաղաքական ուժերի պահանջով հեռացվեց իր զբաղեցրած պաշտոնից: Վրաց պատվիրակության կազմում մասնակցել է Բաթումիի բանակցություններին: 1919 թ.-ից բարձր պաշտոններ է զբաղեցրել վրացական բանակում: 1920 թ. եղել է Վրաստանի Ռազ-

որը հայտնի էր իր մութ և կասկածելի կապերով թուրքական իշխանությունների, և մասնավորապես թուրքական բանակի հայատյաց հրամանատար Մեհմեդ Վեհիբ փաշայի հետ: Ուստի ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում, վրաց մենշևիկների ակնհայտ ճնշման պայմաններում, երբ վերջիններս սեպարատ բանակցությունների մեջ մտան թուրքերի հետ և իրենց հարցերը վճռեցին առանց հայերի մասնակցության: Սեյմի հայկական անճարակ ներկայացուցիչներին ոչինչ չէր մնում անել, քան պարզել իրենց հնարավոր մոտեցումները ստեղծված բարդ և տագնապալից իրավիճակում, խուսափել Թուրքիայի հետ անխուսափելի բախումից, և ի դեմս Հովի. Քաջազնունու՝ հայտարարել Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրից բխող պահանջները ընդունելու մասին և հաշտություն կնքել Թուրքիայի հետ: Արդյունքում, ՀՅ Դաշնակցության հրապարակավ կատարած որոշ ցուցադրական, ոչ խորքային քաղաքական վարժանքներից հետո, երբ կրքերը Սեյմում խաղաղվեցին, վրաց մենշևիկների և մուսավաթականների բացահայտ ճնշման ներքո արտաքուստ «խաղաղվեց», Ազգային խորհրդի անդամները բավարարվեցին բառախաղով ու բառակռվով, և չկատարեցին իրենց խոստումները՝ մեկնել Կարս և ոգևորել ազգաբնակչությանը պատերազմը շարունակելու: Անհրաժեշտ վճռականությունը հայերի մեջ այդ պահին մարեց, իսկ Անդրկովկասյան Սեյմի ձևի տեսանկյունից ռազմատենչ տրամադրություններն էլ մեկ շաբաթից ավելի չտևեցին, նորից վերսկսվեցին Տրապիզոնում ընդհատված բանակցությունները: Դաշնակցական գործիչները գործնականում պարտվողական դիրքերում էին, և արդյունքում՝ թուրքերի առաջարկի և Անդրկովկասը Ռուսաստանից կտրելու պնդման առումով և այնուհետև սկսած զինադադարի կնքումից մինչև անկախության հռչակումը ընկած ժամանակահատվածը իրենց վարքագծով և բռնած դիրքորոշմամբ հայ քաղաքական-կուսակցական այրերը համակերպվողական էին, և դա կապված էր հայ ժողովրդի գլխին դամոկլյան սրի նման կախված թուրքական վտանգի հետ, առավել ևս, երբ հայ քաղաքական շրջանների մոտ լուրջ մտավախություն կար, որ իրենք անդրկովկասյան տարածաշրջանում մենակ կմնան,

---

մական նախարարի երկրորդ օգնական, իսկ այնուհետև՝ վրացական զորքերի Գլխավոր հրամանատար: Վրաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո տարագրվել է Թուրքիա: -Տե՛ս Гогитидзе М., Грузинский генералитет (1699-1921 гг.), стр. 122-123:

քանզի ակնհայտ էր նաև կովկասյան մահմեդականների ընդգծված հակահայկական դիրքորոշումը հայ ժողովրդի և Հայաստանի նկատմամբ, ավելացրած դրան Վրաստանի կողմնորոշումը դեպի Գերմանիան և քողածածկված եզրերը թուրքերի հետ, որի պայմաններում հայերը մեկուսացվել էին և Թուրքիայի հետ իրենց հարաբերություններում կանգնել անխուսափելի առճակատման խնդրի առաջ, որին հոգեբանորեն և գործնականում պատրաստ չէին: Այդ հանգամանքի մասին իր ժամանակին դիպուկ ընդգծել է ՀՅԴ հայտնի գործիչ Ա. Ջամալյանը. «Թուրքիայի առաջարկը [Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու մասին- Վ. Վ.] լուրջ քաղաքական մտահոգութիւուն էր պատճառում հայ ժողովրդին, որը զգում էր թշնամու հետ առանձին յարաբերութիւնների մէջ մտնելու վտանգը: Սակայն Անդրկովկասեան Կոմիսարիատը որոշեց զինադադար կնքել [1917 թ. նոյեմբեր 21] եւ մենք [հեշտութեամբ] համակերպվեցինք նրան այն մտածումով, թէ անհրաժեշտ է հարեւան ժողովուրդների հետ ընթանալ»[28], ինչը վրաց գործիչները յուրովի էին հասկանում: Ըստ այդմ, ելնելով սեփական եսասիրական մոտեցումներից և առաջնային համարելով վրացական ազգային-քաղաքական շահերը անդրկովկասյան տանը, նրանք Թուրքիայի հետ զինադադարի և հաշտության միջոցով որդեգրեցին նոր ռազմաքաղաքական կողմնորոշում, և շտապեցին այն կենսագործել կյանքում, քանզի ի դեմս կովկասյան թուրքերի ունեցան համախոհներ, որոնց հետ տարածքային սահմանազատման և այլ հարցերում ունեցան ընդհանուր շահեր և նպատակներ:

Այս առումով Անդրկովկասյան կոմիսարիատի և Սեյմի Թուրքիայի հետ անջատ հաշտության համաձայնագրի կնքման խնդրում կոշտ ընդդիմադիր կեցվածք ընդունեց ՀԺԿ-ն, որի պատճառը ոչ միայն ժողովրդական կուսակցության անհաշտվողական դիրքորոշումն էր դաշնակցության հանդեպ, այլև ՀԺԿ-ի ավելի հավասարակշռված, սթափ և համազգային շահով մտահոգվելու հանգամանքը: Ժողովրդականների օրգան «Մշակը» հանդես գալով ՀՅԴ քննադատությամբ, եզրահանգելով, որ բոլշևիկյան կառավարության և Անդրկովկասյան կոմիսարիատի դիրքորոշումները անջատ հաշտության կնքման խնդրում նույնական են ռազմավարության առումով, և այստեղ գլխավորապես իշխում են

[28] Տե՛ս Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք», Բոստոն, 1928, N 8, էջ 124:

անդրկովկասյան մենշևիկները և դաշնակցականները, ասել է թե՝ նաև կոմիսարիատը պաշտոնապես de jure չէր ճանաչում բոլշևիկների իշխանությունը, բայց իրապես de-facto իրագործում էր նրանց ծրագրերը: Հայ ժողովրդի երկու հատվածների՝ Արևմտահայաստանի և Արևելահայաստանի համար անջատ հաշտությունը համարվում էր հայ ազգի, «Հայաստան» աշխարհահասկացողության և Հայկական հարցի կործանում, որի գործընթացի սկիզբը դրվեց ոչ թե Թուրքիայի, այլ վրաց մենշևիկների գործնական նախաձեռնությամբ՝ բոլշևիկյան հեղաշրջման հետևանքով: Այդ պայմաններում ՀՅԴ-ն ընդամենը նախաձեռնողական վրաց մենշևիկներին անհեռատեսորեն և անկամ ձայնակցողների դերում էր[29]: Արդյունքում՝ 1918 թ. գարնանը վրացական զորքերը բացահայտորեն խուսափեցին թուրքերին դիմադրություն ցույց տալուց, իսկ հայկական զորամասերը մնացին մենակ՝ թուրքերին դեմ առ դեմ, միայնակ իրականացնելով ռազմաճակատի պաշտպանությունը, որն ի վերջո, հանգեցրեց թե՛ վրաց մենշևիկների և թե՛ դաշնակցականների միջև տարակարծությունների խորացմանը և Անդրկովկասի փլուզմանը և արդյունքում՝ հայերը հայտնվեցին մեկուսացման մեջ:

Շուտով Եվգ. Գեգեչկորին[30] հրաժարական է տալիս, և նրան փոխարինում է Ակ. Չխենկելին[31], որը իսկույն բանակցություններ է սկսում թուրքական կողմի հետ՝ Վեհիբ փաշայի զորքերի հաղթական երթը կասեցնելու համար, որն «ստացվեց» և նրա քաղաքական հաշվարկների մեջ տեղ գտավ հայերի հաշվին լայնածավալ քաղաքական առևտուրը՝ վերը հիշատակված գեներալ Ի. Օդիշելիձեի դերակատարմամբ Կարսը

[29] Տե՛ս Մելիքյան Վ., Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում, էջ 175:

[30] Գեգեչկորի Եվգենի Պյոտրի [20.06.1881 թ. - 5.06.1954 թ.]- Հանդիսացել է ՌՍԴ(բ)Կ անդամ 1903 թ.-ից, 1907-1912 թթ. դարձել է III Պետական Դումայի անդամ և սոցիալ-դեմոկրատական մենշևիկյան խմբակցության առաջնորդ, 1917 թ. վրաց մենշևիկների առաջնորդն էր: Եղել է Անդրկովկասյան կոմիսարիատի առաջին նախագահը (28 նոյեմբերի, 1918 թ. - 9 ապրիլի, 1918 թ.), Վրաստանի դեմոկրատական հանրապետության Արտաքին Գործերի (նոյեմբեր, 1918 թ. -1921 թ. սկիզբ), այնուհետև՝ Արդարադատության մինիստր, 1921 թ. փետրվարի 25-ից հետո հայտնվել է տարագրության մեջ:

[31] Չխենկելի Ակակի Իվանի [1874-1959 թթ.] – Վրաց կուսակցական-քաղաքական հայտնի գործիչ, մենշևիկ, IV Պետական Դումայի անդամ, Ժամանակավոր կառավարության ներկայացուցիչը Անդրկովկասում: 1918 թվականից՝ կառավարության նախագահ, Անդրկովկասյան Ֆեդերատիվ Դեմոկրատական Հանրապետության Արտաքին Գործերի մինիստր, Ֆրանսիայում՝ Վրաստանի դեսպան:

հանձնեցին թուրքերին՝ առանց կարևորելու հայ գործընկերների կարծիքը: Անտեսվեցին Չխենկելու կաբինետի հայ մինիստրների անկապ հրաժարականները: Իշխող կարծիք կար, որ Կարսը շնորհիվ իր զինապահեստների և սպաների, զինվորության, որի մասին ոչ միայն ՀՅԴ առաջնորդների ռոճացրած լեգենդները կային, այլև հեղինակավոր մասնագետների վկայությամբ, Կարսի բերդն իր պաշտպանական միջոցներով կարող էր կասեցնել թուրքերի առաջխաղացումը և երկար պաշտպանվել, կամ գոնե մի քանի շաբաթով կաշկանդեր Կարսյան հանգույցում թուրքական ուժերը: Այդ իրադարձությունների գնահատման առումով իր բազմանշանակ և հետաքրքիր դիտարկումն ունի անվանի պատմագետ Լեոն, որը նշում է հետևյալը. «Բայց բերդի հանձնումը կատարվեց խուճապային կարգով. Չխենկելին տենդագին շտապողականության մեջ էր արեւմտյան Վրաստանի վտանգված վայրերը ժամ առաջ փրկելու և Վեհիբ փաշայի նոր համակրանքները գրավելու համար: Կարսի շրջանի ամբողջ հայությունը հանկարծակիի եկած սկսեց փախչել՝ կորցնելով իր ունեցածը: Ծայր տվեց ավերիչ գաղթականությունը: Բայց այդ ինչ փույթ չխենկելիներին եւ նրանց բարձակից դաշնակցական փոքրիկ մինիստրներին…

Կարսի գնով զինադարար կնքվեց, պատերազմական գործողությունները դադար առան, եւ կողմերի միջև նոր խաղաղարար բանակցություններ սկսվեցին Բաթումում: Դրա համար խաղացվեց մի նոր քաղաքական կոմեդիա՝ Սեյմը հայտարարեց Անդրկովկասը անկախ հանրապետություն»[32]:

Միանգամայն ակնհայտ էր՝ ՀՅԴ խուճապային տրամադրության և վրաց մենշևիկների ազգայնամոլական, թուրքամետ վարքագծի և գործողությունների հետևանքով Կարսը և այլ բնակավայրեր հանձնվեցին թուրքերի ողորմածությանը, ինչն էլ հանգեցրեց անդրկովկասյան տան կամ համադաշնության անխուսափելի փլուզմանը: Իսկ 1918 թ. ապրիլի 9-ին (ն. տ. 22-ին) Թուրքիայի պահանջով Անդրկովկասը իրեն հռչակեց անկախ հանրապետություն, որը եղավ բեկումնային Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական կյանքում՝ սկիզբ դնելով ներքուստ հակասական և անկանխատեսելի ելևէջումներով լի անկախության գործըն-

[32] Լեո, Անցյալից: Հուշագրություն, Եր., «Շեմ» հրատ., 2009, էջ 363-364:

թացներին: Դրանով հանդերձ, ինչպես իրավացիորեն նշում է Գ. Գալոյանը, Անդրկովկասի Սեյմը հաստատագրեց իր կողմից Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ճանաչումը, չնայած մինչ այդ հայտարարել էր, որ չի ճանաչում այն, և մինչև արևելահայ քաղաքական ուժերը կկողմնորոշվեին ստեղծված նոր իրադրությունում[33], մուսավաթականները և վրաց մենշևիկները զբաղված էին զենք հայթայթելով, ժամանակ չկորցնելով և զբաղվելով կովկասյան ռազմաճակատից ետ վերադարձող ռուս զինվորների սպանդով: Վրացիներից, հայերից և ադրբեջանցիներից կազմված այդ դաշնակցային հանրապետությունը կենսունակ չգտնվեց, չնայած վրաց մենշևիկների առաջնորդ Ի. Ծերեթելին[34] բազմիցս հայտարարել էր, թե երեք գլխավոր ազգերից ոչ մեկը չի կարող իրեն փրկել և ապահովել իր անվտանգ գոյությունը, եթե իր ողջ ուժերը չժողովի և չտրամադրի մյուսների փրկության համար: Անդրկովկասյան երեք ժողովուրդները մեկ պետականության մեջ չկարողացան իրար հետ համերաշխ լինել, քանզի իրապես ունեին իրարամերժ քաղաքական կողմնորոշումներ: Ադրբեջանցիները և վրացիները քաղաքական որոշակի շահամետ նպատակներ էին հետապնդում դեպի Անդրկովկասի խորքերը թափանցող Թուրքիան՝ դաշնակցելով վերջինիս հետ, որի սուր ծայրերն ուղղորդված էին բոլշևիկյան Ռուսաստանի, Ստ. Շահումյանի և առհասարակ հայկական գործոնի չեզոքացման դեմ: Հարկ է նշել նաև մի կարևոր աշխարհաքաղաքական հակասության մասին, որն արդյունք էր ինչպես բոլշևիկների կողմից հրապարակված անուժ «Թուրքահայաստանի մասին» դեկրետի և Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պարտադրանքի, որն արդյունք էր բոլշևիկյան Ռուսաստանի ներքին խճճվածության և բոլշևիկյան առաջնորդների մի մասի սադրալից գործելակերպի, որը դրսից Լենինի Ռուսաստանին պարտադրված քայլ էր, և առաջին զոհերից մեկը դարձավ Անդրկովկասը, և անշուշտ՝ հայ ժողովուրդը, որը երիտթուրքերի հանցագործ քաղաքականության զոհն էր դարձել: Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի արդյունքում բոլշևիկյան Ռուսաստանի կողմից Կարսի, Արդահանի և Բաթումիի

[33] Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 24:

[34] Ծերեթելի Ի. Գ. [1882-1959 թթ.] – Վրաց մենշևիկների պարագլուխներից է, II Պետական Դումայի անդամ, 1917 թ. մայիսից՝ Ժամանակավոր կառավարության փոստի և հեռագրի մինիստր, վրաց մենշևիկյան կառավարության անդամ:

մարզերի նվիրատվությամբ Թուրքիային՝ բոլշևիկյան Ռուսաստանը անուղղակիորեն ինքն էլ ճանաչեց և պարզապես հրահրեց Անդրկովկասի անկախացման գործառույթները:

1918 թ. մայիսի վերջին տասնօրյակում հայկական զինված ուժերը գերմարդկային ճիգերով կարողացան կասեցնել թշնամու առաջխաղացումը դեպի Հայաստանի խորքերը: Հիրավի, անանց նշանակություն ունեցան Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերը: Ուշագրավ է հերոսամարտի համաժողովրդական բնույթը: Այդ հերոսամարտերի խորհուրդը մեծ է: Դա արտահայտվում է նրանով, որ այդ հաղթական ճակատամարտերով հայ ժողովուրդը ոչ միայն պաշտպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին հաշվի նստել իր հետ և ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը: Սարդարապատի հերոսամարտը կարելի է համեմատել Հայրենական պատերազմի, իսկ մեր ժամանակներում՝ արցախյան պատերազմի ու Շուշիի ազատագրման հետ:

Միայն և միայն 1918 թ. մայիսյան Սարդարապատի հիրավի ժողովրդական ճակատամարտաշարքը, որը հայության մղած Հայրենական պատերազմն էր դարավոր ոսոխի դեմ, ըստ էության փրկեց Հայաստանը նոր փորձություններից և հայ ժողովրդի հիրավի ֆիզիկական ոչնչացման անխուսափելի վտանգից: Միանգամայն Ճիշտ են նկատում մասնագետները, որ թե՛ 1917 թվականի նոյեմբերի կեսերին ստեղծված Անդրկովկասյան կոմիսարիատը, թե՛ 1918 թվականի փետրվարին հիմնված Անդրկովկասյան Սեյմը հակամարտություններով և հակասություններով, ներքին խարդավանքներով լի համախումբ էին, որոնց նպատակն էր Անդրկովկասն անջատել խորհրդային Ռուսաստանից, ինչին համառորեն ձգտում էին թուրքերը և երկրամասում հաստատել «բուրժուական» նոր տիպի կառավարություն: Բոլշևիկների գործնական հակվածությունը երկրամասում խորհրդային կառավարության հաստատումն էր, չնայած հայաստանյան բոլշևիկները իրենցից մեծ կշիռ չէին ներկայացնում, թույլ և ոչ լավ կազմակերպված ուժ էին, որի մասին գիտեին նաև հայտնի դաշնակցական գործիչները, այդ մասին փաս-

տում է Ս. Վրացյանը[35] իր «Հայաստանի Հանրապետություն» գրքում: Ի հակառակ դրան ՀՅ Դաշնակցությունը Սեյմի գործունեության սկզբնական շրջանում կարծես թե հաստատակամ էր և հակված էր ամեն կերպ նպաստել Սեյմի կայունացմանն ու միասնությանը և նույնիսկ այդ կապակցությամբ Հայ հեղափոխական Դաշնակցության արևելյան բյուրոն Սեյմի մարտի 31-ի նիստում հանդես եկավ ընդունված որոշման ջերմեռանդ պաշտպանությամբ, ինչը բխում էր հայկական շահերից. «Գիտակցելով բովանդակ դժւարութիւնը պատերազմի և ամբողջ պատասխանատուութիւնը Կովկասի ժողովուրդների առջև՝ Անդրկովկասեան Սէյմը իր մարտի 31-նիստում որոշեց մերժել Տաճկաստանի առաջարկած հաշտութեան ստորացուցիչ պայմանները և զէնքով պաշտպանել Անդրկովկասի ժողովուրդների իրաւունքն ու ազատութիւնը: Անդրկովկասի համար այս գերազանցապէս վեհ ու խորհրդաւոր ժամին, բոլոր ժողովուրդների և բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները հանդիսաւորապէս յայտարարեցին Սէյմում, որ այսուհետև կաջակցեն կառավարութեան Տաճկաստանի դէմ վարելիք պատերազմում, և որ այսուհետև համերաշխաբար կօգնեն նրան յաղթութեան հասնելու համար»[36]: Սակայն հետագա պատմաքաղաքական զարգացումները ցույց տվեցին, որ այդ սպասելիքները բոլորովին չարդացարան, և անդրկովկասյան հարևաններն իրենց հարցերը յուրովի լուծեցին՝ անգամ գործակցելով թուրքերի հետ և համերաշխության եզրեր ստեղծելով վերջինիս հետ:

Անդրկովկասը չընդունեց բոլշևիկյան հեղաշրջումը, դրա համար նա պատրաստակամություն չդրսևորեց, փոխարենը՝ կուլ գնաց երկրամասում անջատողական տրամադրությունների խորացմանը, որին նպաստեցին նաև հայ քաղաքական ուժերի անհաշտելի, խաճված, իրենց համար հաճախ անըմբռնելի քաղաքական մոտեցումները, որոնք առավելապես շահեկան էին դեպի Անդրկովկաս առաջխաղացող թուրքերի համար: Այս ամենը յուրովի գնահատելով, հանդերձ, քաղաքական

[35] Վրացյան Սիմոն Ղազարի [1882-1969 թթ.] – Քաղաքական-պետական հայտնի գործիչ, ՀՅԴ կուսակության անդամ: 1920 թ. մայիս-նոյեմբերին ՀՀ կառավարության Աշխատանքի և գյուղատնտեսության նախարարն էր: Ս. Վրացյանը ՀՀ չորրորդ՝ վերջին վարչապետն է (23 նոյեմբերի, 1920 թ.- 2 դեկտեմբերի, 1920 թ.):

[36] ՀԱԱ, Ֆ.Պ – 1457, ց. 1, գ. 118, թ. 1:

ակնհայտ և որոշակի ուժերի ճնշման ներքո և վրացիների բացահայտ իշխող ազդեցության պայմաններում 1918 թ. ապրիլի 9-ին (22-ին) Անդրկովկասյան Սեյմը փաստորեն հռչակեց Անդրկովկասի անկախությունը Ռուսաստանից, որում վրաց մենշևիկները կարևոր քաղաքական դերակատարում ունեցան, քողածածկված համագործակցության եզրեր պահպանելով Թուրքիայի և Կովկասյան թաթարների հետ, որի պայմաններում ոչ բավականաչափ ճկուն և հեռատես հայ քաղաքական ուժերը, և մասնավորապես ՀՅ Դաշնակցությունը, բախվեցին բարդ ու խճճված ռազմաքաղաքական իրավիճակի հետ, որը հայերին մեն մենակ դեմ առ դեմ հանեց թուրքերին: ՀՅԴ հաշտվեց այդ իրավիճակի հետ, իսկ այդ մասին Հովի. Քաջազնունին[37] ուղղակի հայտարարագրեց, որ «Դաշնակցական խմբակցությունը լիարժեք հստակությամբ գիտակցելով այն մեծ պատասխանատվությունը, որն իր վրա է վերցնում այդ պատմական պահին, միանում է անդրկովկասյան պետության ինքնուրույնության հռչակմանը»[38], ինչը ոչ միանշանակ կերպով ընդունվեց հայ քաղաքական ուժերի և հասարակական տարբեր խավերի կողմից: Ս. Վրացյանը այդ պատմաքաղաքական իրողության գնահատումը անելով, արժևորելով կատարվածի դրական և բացասական կողմերը, արձանագրեց, որ իրենք ստացան Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը՝ դրվելով կատարված փաստի առաջ և հարկադրված լինելով զրկված լինելու մեծ պետության մեջ գտնված լինելու «որոշակի» առավելություններից՝ ձեռնամուխ լինելու իրավական նոր կացության ձևավորմանը[39]: Այդ հանգամանքը լավ է նկատել նաև ականավոր հայ բոլշևիկ Ասք. Մռավյանը. «...Թուրքիան նպատակ դրեց Անդրկովկասը բաժանել Ռուսաստանից: Տրապիզոնի կոնֆերենցիայում Ռաուֆ բեյը հարցնում է Չխենկելուն ու Խատիսովին. «Դուք ո՞վ եք, ու՞մ ներկայացուցիչներ, Ռուսաստանի՞, թե՞ Անդրկովկասի»: Իզուր նրանք ճգնեցին հավատացնել թուրքերին, որ բոլշևիկյան տիրապետությունը ժամանակավոր բնույթ ունի և որ իրենք են երկրի տերը և այլն, և այլն: Թուրքիան այս պահանջն անում էր այն

[37] Քաջազնունի Հովհաննես Մաթևոսի (Իգիթխանյան, Տեր-Հովհաննիսյան Ռուբեն)- [1868-1937 թթ.] – ՀՀ առաջին վարչապետ [15 հունիսի, 1918 թ. - 27 մարտի, 1919 թ.]:

[38] Տե՛ս «Հորիզոն» Թիֆլիս, 11 (24) ապրիլի, 1918 թ., N 76:

[39] Տե՛ս նույն տեղում, 14 (27) ապրիլի, 1918 թ., N 79:

նպատակով, որ անջատված Անդրկովկասը շուտով թուլանա և և ընկնի իրենց հարվածների տակ»[40]:

Խորհրդային Ռուսաստանից Անդրկովկասի մեկուսացման և քաղաքական տարանջատման պահի, անդրկովկասյան ժողովուրդների անկախացման գործընթացների իր ուրույն գնահատումն ունի Հովի. Քաջազնունին, որը վեր է հանում այդ պատմական պահի ողջ հակասականությունը, խճճվածությունը և քաղաքական-կուսակցական ուժերից յուրաքանչյուրի ակնկալիքների և հուսախաբությունների, վստահության և անվճռականության, հասունության և ոչ խելամիտ, անհեռատես քայլերի ողջ համայնապատկերը, որը գուցե հենց ինքը՝ Քաջազնունին ուշ է վերաիմաստավորել և փաստագրել, որից նաև ակնհայտ է դառնում այն կարևոր քաղաքական հանգամանքը, որ Անդրկովկասյան Սեյմի ՀՅԴ խմբակցությունը ամենևին էլ նպատակադրում չի ունեցել անջատվել Ռուսաստանից, ոչ էլ որևիցե լուրջ սպասելիքներ ուներ Թուրքիայից և գործնականում խճճվել էր իր անսթափ քաղաքական հաշվարկներում, չնայած սկզբնական պահին Սեյմի վրաց-մենշևիկյան առաջնորդները վստահեցրել էին իրենց վճռական հրաժարման մեջ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունման խնդրում և պատերազմը շարունակելու վճռականությունը. «Բայց իրականացնել այդ որոշումը չէր տրւած մէզ, որովհետեւ մենք չէինք դրութեան տէրը, ոչ իսկ մեր սեփական բախտի տէրը: Հեշտ սրտով չէր, որ մենք արինք այդ. բայց չանել չէինք կարող: Եթե հակառակ արտահայայտուէինք, Անդրկովկասեան դաշնակցական (դաշնային) Հանրապետութիւնը իսկոյն պիտի քանդուէր, վրացիներն ու ադրբէյջանցիներն իսկոյն պիտի հաշտուէին թուրքերի հետ և թողնեին մեզ մենակ երես առ երես Վէհիպ փաշայի բանակի դէմ – մենակ, որովհետեւ Ռուսաստանը (ոչ բոլշեւիկյանը, ոչ հակաբոլշեւիկյանը) այն ժամին չէր կարող հասնել օգնութեան, եթե նոյնիսկ կամենար: Ոչ միայն մենակ, այլ նաեւ թիկունքից մեծապէս վտանգւած, որովհետեւ պարզ էր, որ թուրքերի հետ միասին մեզ պիտի զարնէին նաեւ ազրբէյջանցիները (ո՞վ գիտէ, գուցէ եւ վրացիները՝ Ախալքալաքը, Լօռին ու Փամբակը ամբողջովին գրաւելու համար):

[40] Մոավյան Ասք., Հոդվածներ և ճառեր, Եր., Հայպետհրատ, 1961, էջ 89:

Մենք ամենքից աւելի կարիք ունէինք Անդրկովկասեան դաշնակցութեան, չէինք ուզում, որ նա քանդուի, իսկ եթէ քանդուելու է, որքան կարելի է ուշ քանդուի: Ահա թե ինչու հարկադրուած էինք հետեւելու մեր դաշնակից-դրացիների քայլերին»[41]:

Այդ ընթացքում, Թուրքիան օգտվելով Անդրկովկասի անկախության հռչակումից, և Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունելու հրաժարումից, շարունակեց իր ագրեսիվ նկրտումները՝ ռազմաքաղաքական գործողություններ նախապատրաստելով: Այդ առիթով, վրաց քաղաքական գործիչներից ամենափորձառուներից մեկը՝ Ն. Ժորդանիան իր հուշերում նշել է այդ մասին. «Կարիք չկար երկար սպասելու հետևանքներին. թուրքերը ներխուժեցին Վրաստան և գրավեցին Ախալքալաքի գավառը և Հայաստանի երեք քառորդ մասը»[42]: Այստեղ կարևորվում է նաև այն հանգամանքը, որ Թուրքիան ոչ միայն պարզապես օգտվեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրով ընձեռված հնարավորություններից, այլև 1917-1918 թթ. գնաց ավելի հեռուն՝ գործնական և շահավետ համագործակցության բոլշևիկների հետ, ինչը նրան բոշևիկյան Ռուսաստանից ունեցած որոշակի կաշկանդվածության պայմաններում ռազմաքաղաքական ձեռնարկումների և ագրեսիվ քայլերի որոշակի ազատություն տվեց Անդրկովկասում, որի պայմաններում խրախուսվեցին վրացական անջատողականությունը և թաթարա-ադրբեջանական հակահայկական գործողությունները, իսկ հայերը պարզապես հայտնվեցին ռազմաքաղաքական մեկուսացման պայմաններում, ինչի մասին անուղղակիորեն փաստում են նաև թուրք հեղինակները[43]:

Ստեղծված չափազանց բարդ և վտանգալից ռազմաքաղաքական իրավիճակում, լարելով իր ուժերը, հայ ժողովուրդը 1918 թ. գարնանը Սարդարապատում և Բաշ-Ապարանում արժանի հակահարված հասցրեց թուրք ջարդարարներին և փրկեց Հայաստանը վերահաս վտանգից: Քաղաքական այս ծանր պայմաններում 1918 թ. Անդրկովկասյան

---

[41] Քաջազնունի Յովհ., Հ. Յ. Դաշնակցութիւնն անելիք չունի այլ եւս,, էջ 27-28:

[42] Տե՛ս Жордания Н., Моя жизнь, Станфорд, 1968 (на рус. яз.,), стр. 85:

[43] Տե՛ս CEMoGUZ C., The relations between the Ottoman empire and bolshevik Russia (1917-1918): A thesis submitted to the department of international relations in partial fulfillment of the requirements for the degree of master of international relations Bilkent university institute of economics, administrative and social sciences, Ankara, august, 1998:

Սեյմը Անդրկովկասը հռչակեց անկախ: Սեյմը ցրվեց նույն թվականի մայիսի վերջերին և դրանից հետո ստեղծվեցին Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի անկախ հանրապետությունները: Սեյմի լուծարումից հետո Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը ծանր երկընտրանքի առաջ կանգնեց: Խորհրդի անդամների մի մասը դեմ էր անկախություն հռչակելուն: Նրանք ելնում էին երկրամասի աշխարհաքաղաքական, ներկուսակցական դիրքերից ու շահերից, և համոզմունք հայտնում, որ առանց Ռուսաստանի օգնության հայերը նորից թուրքական ագրեսիայի զոհ կդառնան: Սակայն Վրաստանի և Ադրբեջանի անկախացումը նրանց ստիպեց դիմել նույն քայլին: Դա ակամա անկախություն էր, պատմաքաղաքական կտրուկ շրջադարձերի անկասելի ընթացքով պարտադրված աշխարհաքաղաքական ընթացք էր, որին հայ քաղաքական-կուսակցական շրջանները գործնականորեն պատրաստ չգտնվեցին, կախվածության մեջ հայտնվելով աշխարհաքաղաքական տարբեր կողմնորոշումներից և այն ուժերից, որոնք այդ քաղաքական պահին հայտնվում էին անդրկովկասյան իրադարձությունների տիրույթում:

Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից իսկապես որ այն ժամանակ քաոսային աշխարհաքաղաքական իրավիճակ ստեղծեց երկրամասում, ինչը համապատասխանության մեջ չէր գտնվում երկրամասի ժողովուրդների, աշխատավորության կենսական ազգային-քաղաքական և սոցիալ-տնտեսական շահերի հետ: Այն չհաշվարկված, սակայն իրադրությամբ պարտադրված քայլ էր, անկանխատեսելի, չսպասված և կործանարար հենց Անդրկովկասի ժողովուրդների համար, ամեն մեկը յուրովի էր պատկերացնում իր առջև կանգնած խնդիրները և լուծում դրանք: Վրացիները և ադրբեջանցիները քողածածկված եզրեր որոնելով թուրքերի հետ և գործնականում դրանք գտնելով, յուրովի լուծեցին իրենց պետությունների առջև կանգնած խնդիրները: Դրա պատճառը ըստ Քաջազնունու, այն էր, որ «…վրացիները տեսնում էին, որ մենք մի աւելորդ բեռ ենք նրանց համար, որ առանց մեզ նրանք աւելի հեշտ կը կարգաւորեն իրանց սեփական գործերը: Իսկ ազրբեյջանցիների միակ հոգսն էր այժմ՝ միանալ՝ օր առաջ թուրքերի հետ, անցնել նրանց հովանաւորութեան տակ ու «թուրք բանակի վրայ յենած»՝ մտնել Բաքու: Թուրքական բանակի յաղթանակից յետոյ Անդրկովկասեան Դաշնակ-

ցութիւնը այլ եւս պէտք չէր ազրբեյջանցիներին. Վրացիները աւելորդ էին, իսկ հայերը՝ թշնամի» [44]:

Անշուշտ, պետք է արձանագրել այն պատմաքաղաքական իրողությունը, որ 1917 թ. հոկտեմբերյան հեղաբեկիչ իրադարձությունները Ռուսաստանում, և անկասկած՝ Ռուսաստանի փաստացի կտրվածությունը Անդրկովկասից, Անդրկովկասյան դաշնության փլուզումը հայ հասարակական-քաղաքական ուժերին կանգնեցրին նոր իրողությունների առաջ: Անգամ ՀՅ Դաշնակցությունը Ռուսաստանի նկատմամբ տարվող քաղաքական ռազմավարությունում իրականացնում էր տարբերակված մոտեցում գոյություն ունեցող պետաքաղաքական միավորումների նկատմամբ, լիներ դա բոլշևիկյան Ռուսաստանը, թե դենիկինյան-կոլչակյան Ռուսաստանը, դրանց ընդունելով այնքանով, ինչքանով դրանք չեն խոչընդոտի Հայաստանի անկախության և տարածքային առումով ամբողջականացման նվիրական գործին, սակայն հրաժարվելով վերահաստատել Ռուսաստանի գերիշխանությունը նախկին Արևելահայաստանի նկատմամբ, կլինի դա բոլշևիկյան Ռուսաստանի, թե՛ Ա. Դենիկինի կամ թե՛ Կոլչակի ինքնահռչակ «սպիտակ» Ռուսաստանների կողմից, միաժամանակ շեշտելով, որ այդուհանդերձ պետք է պահպանվեն բարյացակամ, բարեկամական հարաբերությունները ռուս ժողովրդի և Ռուսաստանի քաղաքական վերածննդի հնարավորության հանդեպ, պահպանելով գաղափարաքաղաքական տարակարծությունները: Ի տարբերություն հստակ հակաբոլշևիկյան և հակառուսական դիրքորոշում որդեգրած անդրկովկասյան քաղաքական ուժերի՝ վրաց մենշևիկների և մուսավաթականների, ՀՅ Դաշնակցությունը գործնականում մինչև վերջին պահը դեմ է եղել Անդրկովկասը Ռուսաստանից տարանջատելուն, դրա մեջ ուղղակիորեն տեսնելով մեծ վտանգ և ծանր ռազմաքաղաքական հետևանքներ Արևելահայաստանի վրա ծվարած հայ ժողովրդի համար, որը 1918 թ. մայիսին շփոթահար կանգնեց հարկադիր և պարտադրված անկախության հռչակման փաստի առաջ[45]: Այստեղ Լեոն հարցադրում է առաջադրում ճակատագրով պարտադրված պատմաքաղաքական կողմնորոշման ընտրության հետ կապված. «Ինչու՞ բաժանվեցինք, ինչու՞ ուրիշների կուսակցական հա-

[44] Քաջազնունի Յովհ., Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, էջ 29:

[45] Տե՛ս «Յառաջ», Երևան, 2 հոկտեմբերի, 1919 թ.:

շիվների ենթարկվեցինք և «խաղալիք դարձել թուրք փաշաների ձեռքին»[46]:

Իհարկե Սեյմի ցրումը բնական էր, քանի որ Ռուսաստանում ծավալվող դեպքերի մեջ անդրկովկասյան քաղաքական ուժերը չկարողացան կողմնորոշվել, կախվածության մեջ հայտնվեցին Թուրքիայի ռազմաքաղաքական ծրագրերից, ի վիճակի չեղան անել ավելի իրատեսական հետևություններ և ամեն մեկը յուրովի իր հարցերը լուծեց, մասնավորապես վրացիները նախընտրեցին իրենց քաղաքական հաշվարկներում թուրքերի հետ ռազմաքաղաքական եզրերում կամ չեզոք դիրք գրավել կամ էլ պարզապես «բարեկամ հայերին» զոհել հանուն վեհապետական Վրաստանի քաղաքական շահերի և անվտանգության: Ի վերջո, 1918 թ. մայիսի 26-ին թուրքական վերջնագրի ներքո Անդրկովկասյան Սեյմը ցրվում է՝ տարածքային զիջումներ կատարելով թուրքական կողմին՝ զիջելով Արդահանը, Կարսը, Բաթումին, Երևանի նահանգից՝ Սուրմալուի գավառը, գրեթե ողջ Նախիջևանի գավառը, Շարուր-Դարալագյազի, Երևանի, Էջմիածնի և Ալեքսանդրապոլի գավառների մեծ մասը, Թիֆլիսի նահանգից՝ Ախալքալաքի և Ախալցխայի գավառները[47]: Նույն օրը Վրացական Ազգային խորհուրդը Վրաստանը հայտարարում է անկախ, ընդ որում Չխենկելին դիմում է Օսմանյան պետությանը ու Էնվեր փաշային և շնորհավորանք ստանում անկախության առթիվ[48]: Մայիսի 27-ին կազմակերպվում է Ադրբեջանի անկախ հանրապետությունը մուսավաթականների գլխավորությամբ, իսկ մայիսի 28-ին Թիֆլիսում Հայոց Ազգային խորհուրդը Հայաստանը ևս հայտարարեց անկախ: Կարելի է որոշակի վստահությամբ արձանագրել այն պատմաքաղաքական իրողությունը, որ վերջին հաշվով անկախության հռչակումը և Արևելյան Հայաստանի տարածքի վրա հայկական պետականության վերստեղծումը կախված էր ոչ այնքան կուսակցական-քաղաքական, հասարակական-մտավորական ուժերի գործադրած ռազմավարությունից, որքան աշխարհաքաղաքական ուժերի նոր դասա-

---

[46] Լեո, Անցյալից, Եր., «Շեմ» հրատ., 2009, էջ 367:

[47] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 171:

[48] Տե՛ս Մախմուրյան Գ., Հայաստանի Հանրապետության անկախությունը Հայոց Ազգային խորհրդի արձանագրություններում // «Պատմաբանասիրական հանդես», 2014, N 1 (195), էջ 223:

վորվածությամբ պարտադրված թուրքական հարկադրանքից, որը արդյունք էր նաև վերջինիս կողմից անդրկովկասյան ժողովուրդների միջև առկա անհաշտելի հակասությունների, որի հետևանքով էլ ազգամիջյան անհաշտելի զզվոտոցներից բզկտված ժողովուրդները անդրկովկասյան տան՝ Սեյմի հարկադիր փլուզման արդյունքում թուրքերին ձեռնտու տարբերակով կանգնեցին սեփական հանրապետությունների անկախության հռչակման փաստի առաջ, սակայն ինչպես դիպուկ նկատել է Լեոն, «փոխհարաբերություններն այս երեք «անկախությունների միջև չէին կարող երբեք լինել փոքր ի շատե տանելի, որովհետեւ երեքի մեջ էլ տիրողը գազանային նացիոնալիզմն էր»[49]: Այդ մասին ինքնատիպ դիտարկումի ենք հանդիպում նաև Ալ. Խատիսյանի[50] մոտ՝ հենց անկախությանը նախորդող օրերի մասին, երբ արդեն վրաց-գերմանական հանդիպման ժամանակ դեռևս նախօրյակին շատ հարցեր ուղղակի վճռվել էին և հայերն էլ կանգնեցին փաստի առաջ. «Ինչպե՞ս, չէ՞ որ մենք և դուք միասին պատերազմի մեջ ենք, ընդհանուր պատերազմի մեջ ենք, ինչպե՞ս կրնաք լքել մեզ, երբ մենք դեռ արյուն կը թափենք: Մի՞ թե ազնիվ բան է այս:

Ազնիվ բան է այն, - սառը պատասխանել է Ն. Ժորդանիան, ինչ-որ օգտակար է ժողովրդին: …Մենք չենք կրնար խեղդվիլ ձեզի հետ միասին, դուք ալ պարտավոր եք համաձայնության լեզու մը գտնել թուրքերուն հետ: Ուրիշ ելք չունինք:

Մեզ իրապես ուրիշ ելք չէր մնա, բայց եթէ մեր կողմէ ևս հայտարարել Հայաստանի անկախություն»[51]:

Անդրկովկասի անկախ հայտարարելը, ինչպես այդ մասին նշել է վրաց հայտնի քաղաքական-կուսակցական գործիչ Ն. Վ. Ռամիշվիլին, հետևանք էր նաև եվրոպական տերությունների կողմից այդ անկախությունը ճանաչելու համաձայնության[52]: Հայերի պարագայում, իհարկե, դա պատմաքաղաքական մի կարևորագույն իրադարձություն էր, որը

[49] Տե՛ս Լեո, Անցյալից, Եր., «Շեմ» հրատ., 2009, էջ 377:

[50] Ալեքսանդր Հովհաննեսի Խատիսյան [Խատիսով, 17.02.1874 թ. -10.03.1945 թ.]- 1910-1917 թթ. եղել է Թիֆլիսի քաղաքագլուխ, 1917-1918 թթ.՝ Ալեքսանդրապոլի քաղաքապետ, ՀՀ Արտաքին, այնուհետև՝ Ներքին Գործերի նախարար, ՀՀ երկրորդ վարչապետ (27 ապրիլի, 1919 թ. - 5 մայիսի, 1920 թ.), ստորագրել է Ալքսանդրապոլի պայմանագիրը:

[51] Խատիսեան Ալ., Նշվ. աշխ., էջ 8:

[52] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 77:

կարելի է ասել, իր էական շտկումները մտցրեց հայ ժողովրդի պատմատարեգրությունում, և ինչն էլ հարկադրեց Մեհմեդ Վեհիբ փաշային և առհասարակ թուրք հրամանատարությանը հաշտվել այդ անհերքելի իրողության հետ. դա 1918 թ. մայիսյան Սարդարապատյան հերոսամարտն էր, որը գոյատևման կռիվ էր թուրքերի դեմ: Սակայն իրականում անկախացման հռչակագիրը գրվել էր Ն. Աղբալյանի կողմից մայիսի 30-ին, որով ազդարարվել է Հայոց Ազգային խորհրդի իրավունքների մասին հայկական գավառների նկատմամբ[53]: Ս. Վրացյանը այդ կապակցությամբ ընդգծում է հետևյալ բնորոշիչ միտքը. «անկախութեան յայտարարութիւնը, սակայն եղաւ մայիսի 30–ին, աւելի արտաքին ճնշումների տակ, քան Ազգային խորհրդի յոժար կամքովե, ավելացնելով, որ դա «իսկական առումով անկախության հռչակում չէր, բայց դեպքերի բերումով դարձավ այդպիսին»[54]: Այնուհետև շարունակելով իր ասելիքը, Ս. Վրացյանը գնում է ավելի դիտարժան հետևության. «Այսպիսով, Հայաստանի անկախութեան օրը իսկապէս պէտք է համարուէր մայիսի 30-ը: Հակառակ դրան, համարւում է մայիսի 28-ը» [55], այսինքն այն օրը, երբ Ազգային խորհուրդը վճռեց հաշտութեան պատւիրակութիւն ուղարկել Բաթումի: Անուղղակի կերպով, այսօրն էլ կարող է համարուէլ անկախութեան սկզբնաւորութիւն, որովհետեւ թուրքերը հաշտութեան բանակցութիւններ վարելու համար նախապայման էին դրել անկախութեան յայտարարութիւնը»[56]. Նրան լրացնելու են գալիս Ալ. Խատիսյանի խոսքերը. «Մեզի իրապէս ուրիշ ելք չէր մնա, բայց եթէ մեր կողմէ եւս յայտարարել Հայաստանի անկախութիւնը: Բախտորոշ դեր կատարեց այդ վերջնագիրը, զոր մենք ստացանք նոյն գիշերն իսկ թուրքերու կողմէ: Երեք օր ժամանակ կուտար վերջնագիրը ընդունելու այն դաժան պայմանները, զոր թրքական պատւիրակութիւնը ներկայացու-

[53] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 18:

[54] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 160-161:

[55] Պատմագետ Ռ. Հովհաննիսյանը ներկայացնելով այդ օրերի իրադարձություններ, մայիսի 28–ը նկարագրում է որպես մի օր, որի համար հատկանշական էր 1919 թ. հանդիսավոր տոնակատարությունը, իսկ համապատասխան անկախության կոչը թվագրվում է մայիսի 30–ով // տե՛ս Hovannisian R. G., Armenia on the road to independence, 1918, Berkeley, Los Angelees, 1967, pp. 191, 305:

[56] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, տպ. «Մշակ», 1958, էջ 131-132:

ցած էր Պաթումի խորհրդաժողովի առաջին նիստին իսկ, փակ ծրարով»[57]: Այստեղից տպավորություն է ստեղծվում թուրքական պարտադրանքի որոշիչ լինելու հանգամանքի մասին, որը հակասության մեջ է մտնում Սարդարապատյան հաղթանակի պատմաքաղաքական արդյունքների հետ, և հետագայում դաշնակցական պատմագիրները զգալով պատմաքաղաքական այդ պահի գնահատումից առաջացած անհարմարությունները, իրենց կողմից կատարված հուշագրական բնույթի գրականությունում գնացել են վերագնահատումների ճանապարհով՝ առաջնային նշանակություն տալով Սարդարապատում հայոց միասնությամբ պայմանավորված հաղթարշավի ռազմաքաղաքական արդյունքներին: Հանրապետության անկախության հռչակման օրվա մասին, որոշվեց՝ «Հայաստանի անկախության հռչակման ճշգրիտ թվական համարել մայիսի 28-ը վերջնականապես»[58]:

Անկախության փաստը երկակի տրամադրություններով ընդունվեց: Այդ մասին Արշ. Աստվածատրյանը շատ դիտարժան դիտարկում ունի. «Անկախութիւն եւ հանրապետութիւն բառերը դնում էին չակերտների մէջ: Եւ այդպէս վարուելու հիմքերը շատ էին զորաւոր:..Այո, արցունքի ու արտասուքի ծովից ծնուեց Հայաստանի անկախութիւնը: Ոմանք չէին հաւատում դրան»[59]: Տատանողական տրամադրությունները, վստահության պակասը կապված Սարդարապատի հաղթանակի և արդյունքում՝ Բաթումիի բանակցություններում ոչ վախվորած, այլ ըստ արժանվույն ներկայացված լինելու առումով, ինչպես նաև դրանց նշանակությունը պետականության կերտման գործում և անորոշ տագնապները համակել էին շատերին, այդ թվում Հայոց ազգային խորհրդին: Դա հստակ ներկայացնում է Ս. Վրացյանը. «Մինչ վրացիներն ու թուրքերը յայտարարել էին իրենց անկախութիւնը, Հայոց ազգային խորհուրդը տատանւում էր. այսպիսի զարհուրելի պայմաններում անկախութիւնը համարում էին դառն հեգնանք: Մայիսի 30-ին դեռ Ազգային խորհուրդը չէ ընդունել անկախութիւնը: Ընդհակառակը, խորհրդի այն

[57] Տե՛ս Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 65:

[58] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ- 199, ց. 1, գ. 118, մաս III, թ. 10:

[59] Տե՛ս Աստուածատրեան Ա., Արամ, «Հայրենիք», Բոստոն, 1964, N 8 (vol. 42), օգոստոս, էջ 36:

նիստում, ուր ընդունեց այս «յայտարարութիւնը, ձայների ճնշող մեծամասնութեամբ մերժեց անկախութիւն յայտարարելու առաջարկը»[60]: Սակայն աստիճանաբար հարմարվելով իրավիճակին և իրենց դրության տեր համարելով, հայ ազգի ղեկավարները, Առաջին Հանրապետության կուսակցական-քաղաքական առաջնորդները իրենց անմիջական զգացողությամբ, հանգում են ավելի լավատեսական գնահատումների, գուցե ինչ-որ տեղ էլ գունազարդելով և գերագնահատելով պատմաքաղաքական իրողությունները: Ս. Վրացյանը այս առումով գրում է հետևյալը. «Բազմակողմանի քննելով մի կողմից, երկրի ոյժերը եւ այն հանգամանքները, որոնց մեջ գտնվում է հայ ժողովուրդը, եւ միւս կողմից, քաղաքական եւ տնտեսական ստեղծուած դրութիւնը, Հայոց ազգային խորհուրդը սեղմեց իր սիրտը, եւ անողոք գիտակցութեամբ որոշեց վերջնականապէս ընդունել վերջնագիրը եւ ճանաչել Հայաստանի անկախութիւնը, իրեն յանձնելով պատմութեան դատաստանին»[61]:

Հասկանալի է, որ կարճ ժամանակամիջոցում երեք ազգային-տարածքային միավորներից կազմված Անդրկովկասյան դաշնությունը պիտի քայքայվեր, և որի արդյունքում էլ՝ հերթականությամբ՝ Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը հռչակեցին իրենց անկախությունը: Այդ կապակցությամբ Լեոն հետաքրքիր դիտարկում ունի, որը հանգում է հետևյալին. «Անկախ չէր անդրկովկասյան հանրապետություններից եւ ոչ մեկը, բայց Հայաստանի «անկախությունը» ոչ մեկին նման չէր: Մի մեռնող ժողովրդի պետություն էր այդ՝ մի ափ հողամասով, աղքատ, կործանված մի երկիր, որի ճակատագրի վրա ազդել կարող էր ամեն ինչ, նույնիսկ մի ապստամբ Բասարգեչար գյուղ կամ գյուղերի մի խումբ»[62]: Հայաստանի անկախության վճիռը կայացվեց 1918 թ. մայիսի 28-ին՝ Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի կողմից: Այդ վճռին իրական ուժ տվեց Մայիսյան հերոսամարտը: Սակայն այդ նույն ժամանակ միայնակ և անօգնական նորանկախ Հայաստանը, ժամանակ շահելու և իր վերջին բեկորները փրկելու նպատակով, հունիսի 4-ին հարկադրված Թուրքիայի հետ կնքեց Բաթումիի հաշտության պայմանագիրը շատ ծանր

[60] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, տպ. «Մշակ», 1958, էջ 45-46:

[61] Տե՛ս նույն տեղում, էջ 163:

[62] Լեո, Անցյալից, Եր., «Շեմ» հրատ., 2009, էջ 376:

պայմաններով, անտեսելով հայկական անձնուրաց կռվի արդյունքները Սարդարապատյան ճակատամարտաշարքում, որի մասին իր հայտնի խոստովանանքն ունի Վեհիբ փաշան: Թուրքական պարտադրանքի պայմաններում ստեղծվում էր հայկական պետականություն:

Կարելի է ասել, որ վեցդարյա ընդմիջումից հետո վերականգնվեց Հայոց անկախ պետականությունը, որով, փաստորեն, սկսվեց մի նոր ժամանակաշրջան հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ: Գնահատելով ստեղծված Հայաստանի Հանրապետության պատմափաստը, Լեոն այս առթիվ նկատում է. «Բաթումում թուրքաց կառավարությունը հաճությամբ ճանաչեց երեք նորակազմ հանրապետությունները՝ իբրեւ անկախ պետություններ, եւ իսկույն կնքեց Վրաստանի եւ Հայաստանի հետ առանձին եւ անջատ դաշնագրեր, որոնցով անդամահատում էր երկուսին էլ, եւ երկուսն էլ չէին համարձակվում ծպտուն անգամ հանել: Տասը հազար քառակուսի վերստ էր այդ Հայաստանը՝ մեծ մասամբ լեռ ու անապատ՝ Սևանա լճի չորս կողմը, հայ ժողովրդի ոչ թե բնակության տեղ, այլ գերեզմանոց: Պետական սահմանն անցնում էր Երեւանի տակով, հայերի ձեռքին մնում էր միայն վեց վերստ երկարությամբ երկաթուղի: Էնվեր փաշան գտել էր, որ միայն այսպիսի չափ ունեցող Հայաստանը կարող էր երկյուղ չներշնչել Թուրքիային: Իսկությունն այն էր, որ Թուրքահայաստանը ոչնչացնելուց հետո երիտթուրքերը ոչնչացնում էին նաև Ռուսահայաստանը»[63]:

Այն ժամանակ, երբ վրացիների և թաթարների մոտ հասարակական-քաղաքական շրջանները անհամեմատ ավելի հանգիստ ընդունեցին անդրկովկասյան տան տրոհումը և անկախության հռչակումը, հայ ազգային-քաղաքական ուժերը՝ ՀՅ Դաշնակցությունը, էսէռների, սոցիալ-դեմոկրատների և հայ ժողովրդական կուսակցությունները միասնական և հստակ դիրքորոշում չունեցան, չկարողացան ընդհանուր ռազմավարություն մշակել ՀՀ անկախության հռչակման վերաբերյալ, գտնվելով որոշակի տագնապալից տրամադրությունների մեջ, մտավախություն ապրելով կապված իրենց միայնակ վիճակի հետ, որ ստեղծված իրավիճակում անկախության հռչակումը կարող է անուղղելի հարված հասցնել հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը՝ տեղիք տալով

[63] Լեո, Անցյալից, էջ 368-369:

հայության նոր ջարդերի և տարածքային բռնազավթումների, որի մասին մենք բազմաթիվ փաստերի ենք հանդիպում Արտ. Բաբալյանի, Ս. Վրացյանի և այլ կուսակցական-պետական գործիչների մոտ:

Անկախության այդ հարկադրված հռչակման հետևանքով, Հայոց Ազգային խորհրդի որոշմամբ Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ Ալ. Խատիսյանի ղեկավարությամբ կազմվեց պատվիրակություն, որի կազմի մեջ ընդգրկվեցին Հովի. Քաջազնունին և ցարական Ռուսաստանի վերջին գումարման Պետական Դումայի նախկին պատգամավոր Միք. Պապաջանյանը, և այն ուղարկվեց Բաթումի՝ թուրքերի հետ հաշտության բանակցություններ վարելու համար:

Գրեթե միաժամանակ, քաղաքական-կուսակցական ուժերի, մասնավորապես Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի տատանումներից ու վարանումներից հետո, արդեն մայիսի 30-ին, Ավ. Ահարոնյանը[64] հրապարակեց Ն. Աղբալյանի, Մ. Թումանյանի հեղինակությամբ գրված հայկական գավառների անկախության հայտնի հռչակագիրը (չնայած առ այսօր ընդունված է եղել անկախության հռչակման օրը համարել մայիսի 28–ը, երբ հայկական պատվիրակությունը մեկնեց Բաթումի՝ թուրքերի հետ բանակցությունների, և հենց այդ օրն էլ կատարվում է հայկական պետականության ծննդի տոնակատարությունը). «Անդրկովկասյան քաղաքական ամբողջության լուծարումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ Հայոց ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմել Հայոց ազգային կառավարություն՝ Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարության բոլոր գործառույթները հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար[65]: Հարկ է ասել, որ անկախության հռչակագրում Հայոց ազգային խորհուրդը խուսափեց հստակ

---

[64] Ահարոնյան Ավետիս Առաքելի [9.01.1866 թ. -20.03.1948 թ.] –Հասարակական-քաղաքական և պետական գործիչ, 1917 թ. ընտրվել է Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի նախագահ, 1919 թ. ընտրվել է խորհրդարանի անդամ, ապա՝ նախագահ: 1919-1920 թթ. գլխավորել է ՀՀ պատվիրակությունը Փարիզի խաղաղության վեհաժողովում, 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրել է Սևրի պայմանագիրը: Ավ. Ահարոնյանը մասնակցել է Լոնդոնի (1921 թ.) և Լոզանի (1922-1923 թթ.) խորհրդաժողովներին:

[65] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 222, ց. 1, գ. 141, թ. 7:

սահմանների մասին նշելուց, միաժամանակ ակնարկելով իր հետագա պահանջատիրության մասին, ընդգծելով հայկական գավառների նկատմամբ իր իրավասության մասին, և երբ դրա համար ստեղծվեին նպաստավոր քաղաքական պայմաններ՝ լուծել դրանք, առժամանակ խուսափելով խիստ անցանկալի ռազմաքաղաքական բախումներից հարևանների հետ, ավելացնելով նաև այն մասին, որ չնայած վերը նշված հանգամանքին, 1918 թ. հունիսի 4-ի Բաթումիի հաշտության պայմանագրում ընդգծվում էր «իրեն անկախ հռչակած Հայաստանի Հանրապետության» մասին [66]:

Արտասովոր ծանր պայմաններում ձևավորվեց հայոց պետականությունը: Ընդամենը 12 հազար քառ. կմ տարածք, չորս կողմից թուրք-թաթարական շրջապատում, 300 հազար գաղթականներ, համընդհանուր քայքայում, սով և աղքատություն, անգամ անդրանիկ կառավարությունը դրսում էր ստեղծվել, որը հուլիսի երկրորդ կեսին ժամանեց հայրենիք: Այսպիսով, պատմաքաղաքական հանգամանքների անողոք պարտադրվածությամբ Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց, մայրաքաղաքն էլ որոշվեց, սակայն կառավարության հարցը հեշտ չլուծվեց, այն տեղի ունեցավ որոշակի քաղաքական քաշքշուկների պայմաններում, այդ օրերի ուղեկիցը դարձավ անառողջ և անզիջում մրցակցությունը Հայ ժողովրդական կուսակցության և ՀՅԴ կուսակցության միջև, թե ում պետք է վստահվեր ՀՀ անդրանիկ կառավարության կազմումը: Այդ քաղաքական դրությունը նկատի ունենալով, Ս. Վրացյանը ՀՀ կառավարության ձևավորման ձգձգումը բացատրել էր որոշ ծանրակշիռ պատճառներով. «Այսպես թե այնպես, Հայաստանի Հանրապետության ծագման օրը եղավ մայիսի 28–ը: Այդ օրը դարձավ նվիրական հայ ժողովրդի համար և մտավ ազգային տոնացուցի մեջ»[67]:

Դեռ 1918 թ. հունիսի 1-ին մենշևիկյան Վրաստանի կառավարության նախագահի պարտականությունները կատարող, Զինվորական մինիստր Գ. Գեորգաձեն Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանին ուղղված դիմումագրում պնդում էր իր անառարկելի որոշման մասին. «Վրաստանի կառավարությունն ինձ լիազորել է հաղորդելու Ձեզ, որ Վրացական Դեմոկրատական Հանրապետության տա-

[66] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 36:

[67] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993, էջ 161-162:

րածքում, անկասկած, անթույլատրելի է օրենսդիր և վարչական գործառույթներով օժտված որևէ այլ քաղաքական մարմնի գոյությունը, որովհետև այդ կնշանակի վրացական ժողովրդի ինքնիշխան իրավունքների խախտում»[68]: Դա վերաբերում էր հավասարապես և՛ հայերին, և՛ ադրբեջանցիներին, որոնց ներկայությունը Թիֆլիսում և Վրաստանի այլ շրջաններում, մասնավորապես Ծալկայի և Բակուրիանի շրջաններում, անօթևան մնացած բազմահազար սովալլուկ հայ գաղթականության ներկայությունը դարձել էր խիստ անցանկալի վրացական իշխանությունների համար, սակայն դրա իրականացումը տարբեր պատրվակներով անընդհատ հետաձգվում էր, բերվում էին տարբեր պատճառաբանություններ՝ ճանապարհների հետ կապված դժվարությունները, կայուն փոստային և հեռագրային կապի բացակայությունը, ֆինանսական բարդությունները, սահմանային-տարածքային խնդիրները հանրապետությունների միջև, թուրքերի հետ ունեցած բոլոր բարդույթները, Երևանի անմխիթար կենցաղային պայմանները: Այդ պայմաններում Հայոց ազգային խորհրդի անդամների մի մասը պարզապես չէր ցանկանում թողնել Թիֆլիսի հարմարավետ կենցաղային պայմանները և մեկնել գաղթականներով շրջափակված գավառական անհրապույր Երևան, որը բազմիցս քննադատության է արժանացել ժամանակի մտավորականների և պատմաբանների, հասարակական գործիչների մի մասի կողմից: Այդքանը բավական էր, որ Հայաստանի կառավարությունը ի դեմս Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի չցանկանա հոժարակամ որոշում կայացնել Երևան տեղափոխվելու մասին, և որոշակի դժկամությամբ, վրացական իշխանությունների անբարյացակամության պայմաններում հանգել որոշման: Վրաստանի կառավարությունը վերջ ի վերջո ավելի բացահայտորեն էր արտահայտում իր անբարյացակամությունը հայկական մարմնի ներկայությամբ Վրաստանի մայրաքաղաքում: Այդ ընթացքում, որոշակի միջկուսակցական տարակարծություններից հետո, որի արդյունքում ձախողվեց կոալիցիոն կառավարություն ստեղծելու գաղափարը, հունիսի 27-ին Հովի. Քաջազնունու առաջարկությամբ որոշվում է հարցի հանգուցալուծումը հետաձգել և վճռել Երևանում[69],

[68] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 17, թ. 237-238:

[69] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 222, ց. 1, գ. 141, թ. 269-270, 273: Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 53:

սակայն արդեն առանց կոալիցիոն կառավարության ստեղծման մտադրության իրականացման, չնայած այդ ժամանակ կառավարության Երևան տեղափոխվելու հարցերի շուրջ առաջացած տեղի-անտեղի քաշքշուկը առաջացրել էր երևանյան հասարակական գործիչների արդարացի դժգոհությունները, ինչն արագացնում է հարցի հանգուցալուծումը: Սակայն հարցն այդքան հրատապ չի լուծվում: 1918 թ. հուլիսի 12-ի անարդյունավետ քննարկումներից հետո, երբ Երևան տեղափոխվելու կապակցությամբ իրենց առաջարկներով հանդես եկան անկուսակցական Ստ. Մամիկոնյանը և սոցիալ-դեմոկրատ Ար. Երզնկյանը, ՀՅԴ անդամ Խ. Կարճիկյանը, անտեղի վիճարկումներից հետո խիստ դժգոհ մնացած Երևան տեղափոխվելու վճռական և համոզված կողմնակից համարվող Հովհ. Քաջազնունին կտրուկ հայտարարեց վարչապետի պաշտոնից հրաժարվելու իր վճռի մասին, այդ ժամանակ արդեն Հայոց ազգային խորհրդի անդամները սթափվեցին և հուլիսի 13-ին որոշեցին, որ Հայոց Ազգային խորհուրդն անմիջապես տեղափոխվում է Երևան[70]: Եվ ի վերջո, անմիտ քաշքշուկներից հետո, 1918 թ. հուլիսին, վրացական իշխանությունների բացահայտ և ոչ բացահայտ դժգոհության պայմաններում, անցնելով սահմանագծին տեղի ունեցած լարված միջադեպով, չկամությամբ լքելով Թիֆլիսի բարեկեցիկ պայմանները, վրացիների դժգոհ հայացքի ներքո, հուլիսի 17-ին Հայոց ազգային խորհրդի անդամները՝ Ավ. Սահակյանը, Ս. Տիգրանյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Ա. Բաբալյանը, Ստ. Մալխասյանը, Հ. Ազատյանը, Հովհ. Քաջազնունին, Արշ. Միխիթարյանը, Խ. Կարճիկյանը, Հովհ. Հախվերդյանը գերմանացի և թուրք սպաների անմիջական ուղեկցությամբ Թիֆլիսից ուղևորվեցին Երևան, և արդեն հուլիսի 19-ին Երևանում էին:

1918 թ. հուլիսի 24-ին պաշտոնապես հրապարակվեց ՀՀ անդրանիկ կառավարության կազմը. վարչապետ՝ Հ. Քաջազնունի, Արտաքին Գործերի նախարար՝ Ալ. Խատիսյան, Ներքին Գործերի նախարար՝ Ա.

[70] Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու/ կազմող, առաջաբանի և և ծանոթագր. հեղինակ՝ Հ. Կ. Սուքիասյան, երկրորդ՝ լրացված և բարեփոխ. հրատ., Եր., Հայ. Ազգ. արխիվ, 2009, էջ 10-11, 149-152:

Մանուկյան, ֆինանսների նախարար՝ Խ. Կարճիկյան, Զինվորական նախարար՝ գեներալ Հ. Հախվերդյան[71]:

Հովհ. Քաջազնունին տարօրինակ և վհատեցուցիչ համարելով այդ իբր թե ժողովրդավարական հաստատության կազմը, որի մեծագույն մասը դաշնակցականներ էին, գրում էր. «Չէինք հասկանում, որ մեր սեփական դաստիարակության համար մեծ կարիք ունեինք, որ մի զորեղ օպոզիցիա կանգնած լիներ մեր կողքին, միշտ զգաստ պահեր մեզ, կարգի հրավիրեր և թույլ չտար, որ դուրս գայինք օրենքի և իրավասության սահմաններից…Չկար և կառավարություն, սա ևս ենթարկված էր բյուրոյին, բյուրոյի մի տեսակ գործադիր մարմին էր պետության մեջ: Բոլշևիկյան սիստեմ էր սա…» [72]: Սա կարևոր էր, որպեսզի համերաշխության հողի վրա համախմբեր ժողովրդին, ինչը իրողություն չդարձավ:

Հայաստանի Առաջին Հանրապետության կազմավորումը և զարգացումը ընթանում էր դժվարին պայմաններում: Ժամանակաշրջանը շատ ցայտուն է երևում Ս. Վրացյանի հետևյալ խոսքերից. «Անկախության համար անժամանակ ծնունդ էր Հայաստանի Հանրապետութիւնը: Ո՛չ առարկայական պայմաններով, ո՛չ ենթակայական գիտակցութեամբ նախապատրաստուած…: Հայաստանի Հանրապետութիւնը ծնունդ էր առնում Արարատեան դաշտում, ռուսների տիրապետութեան ներքեւ գտնուող հողի վրա եւ այն էլ անհնարին պայմաններում: Զարմանալի չէր, որ հայ միտքը շփոթի մատնուեց եւ դժուարանում էր ըմբռնել կացութիւնը եւ քաղաքական նոր դիրքաւորում որդեգրել… ճանապարհները արտաքին աշխարհի հետ կտրուած էին: Տնտեսական կեանքը քայքայուած: Պաշտօնեութիւնը, որ մեծմասամբ բաղկացած էր ռուսներից կամ վրացիներից, ձգել փախել էր»[73]:

Առավել ամբողջական ժամանակաշրջանի բնութագիրը երևում է Հովհ. Քաջազնունու «Հայաստանի Հանրապետություն» հուշագրից, որ 1919 թ. հոկտեմբերին ներկայացվել է ամերիկյան կառավարությանը, և քննարկվել Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի հայկական գործերի գծով ենթակոմիտեի նիստի կողմից: Դրանում մասնա-

[71] Հախվերդյան Հովհաննես Բարսեղի [29.07.1873 թ. - 28.04.1931 թ.] – Գեներալ-մայոր, ՀՀ առաջին Զինվորական նախարար (15 հունիսի, 1918 թ.- 27 մարտի, 1919 թ.):

[72] Քաջազնունի Հովհ., Դաշնակցութիւնը անելիք չունի այլ ևս, էջ 37-38:

[73] Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատոր Ե, էջ 11:

վորապես ասվում էր. «Երբ Երեւանում հաստատուեց եւ գործի անցաւ Հայկական կառավարութիւնը, երկրի դրութիւնը պատկերանում էր այսպէս. թիւրքական բանակը գրաւել էր Անդրկովկասեան Հայաստանի մեծ մասը, թիւրքական արագաձիգ թնդանօթները դրուած էին մայրաքաղաք Երեւանից 7 կիլոմետր հեռաւորութեամբ:

Ազրբեյջան (Անդրկովկասեան Թաթարստանը), յենուելով թիւրք բանակի ներկայութեան վրայ, նեղում էր Հայաստանի արեւելեան (մասամբ էլ հիւսիսային) սահմանները ու սպառնում է սրի քաշել այդ կողմերի հայ ազգաբնակութիւնը:

Վրաստանը գտել էր Գերմանիայի հովանաւորութիւնը, հիւրընկալել էր իր երկրում գերմանական զօրքերը եւ նրանց բարեհաճութեամբ գրաւել էր Հայաստանի հիւսիս-արեւմտեան սահմաններում երկու զուտ հայկական գաւառներ. Ախալքալաք եւ Լոռի: Հայաստանը մնացել էր մենակ, չորս կողմից շրջապատուած թշնամի կամ անբարեացակամ ուժերով, առանց որեւէ արտաքին նեցուկի եւ օգնութեան:

Երկրի ներսում դրութիւնը յուսահատական էր: Ազգաբնակութեան կիսից աւելին կազմում էին փախստականներ եւ գաղթականներ, անտուն, մերկ ու քաղցած:

Գիւղերը քանդուած ու աւերուած, դաշտային աշխատանքները դադարեցրած:

Հացի բացակայութեան եւ միւս կենսամթերքների սակաւութեան պատճառով գիւղացիք կերել էին արդէն իրանց սերմնացանը եւ սկսել էին ուտել լծկան անասունները:

Տիրում էր սով, այդ բառի ամբողջ իմաստով:

Սովի հետեւանքով, առաջ էին եկել տարափոխիկ հիւանդութիւններ, մասնաւորապէս՝ բծաւոր տիֆ, իսկ դեղերը սպառած էին արդէն, դեղատները՝ դատարկ:

Հաղորդակցութիւնը արտաքին աշխարհի հետ կտրուած էին միանգամայն, որովհետեւ միակ երկաթուղային գիծը բռնել էին թիւրքական զօրքերը, ապրանքների ներմուծումը դադարած էր, որովհետեւ կտրուած էին կապերը թէ՛ Ռուսաստանի, թէ՛ Պարսկաստանի եւ թէ՛ Եւրոպայի հետ, իսկ հարեւան երկրները՝ Վրաստան, Ազրբեյջան, եւ Թիւրքիա իրանք չունեին արտահանելու ապրանք:

Այս պատճառով տիրում էր սուր պակասութիւն ամենաանհրաժեշտ ապրանքների: Ո՛չ մանուֆակտուրա, ո՛չ երկաթեղէն, ո՛չ քիմիական պրոդուկտներ, ոչ դեղ: Պակասում էր նոյնիսկ քարիւղ՝ տները լուսավորելու համար եւ դժարութեամբ էր ճարւում թուղթ պետական գործավարութեան համար:

Ռուսական տիրապետութիւնից ժառանգած պետական մեքանիզմը քայքայուած էր միանգամայն, վարչական բոլոր օրգանները խանգարուած: Տիրում էր կատարեալ քաոս եւ անիշխանութիւն: Ամէն բան պետք էր վերսկսել սկզբից, աւերակների վրայ կառուցանել նոր պետական շէնք»[74]:

Անհրաժեշտ էր կարճատև ժամանակամիջոցում ստեղծել պետաքաղաքական կառույցներ (բանակ, ոստիկանություն, հատուկ ծառայություններ և այլն) ֆինանսատնտեսական համակարգ, լուծել պարենային, գաղթականների, և հատկապես տարածքային հարցերը, հանդարտեցնել ազգային խմբերին, հաղթահարել ներքին հակասությունները, մի խոսքով, դուրս գալ քաոսի ու անիշխանության ճիրաններից:

Ռազմաքաղաքական բնույթի մի տեղեկագրում արձանագրվում է, որ երբ 1918 թ. դեկտեմբերի 13-ին սկսվեց վրաց-հայկական պատերազմը, այն արգելակեց հաղորդակցությունը մինչև 1919 թ. մարտը, ընդ որում այդ կոնֆլիկտի ընթացքում Թիֆլիսում գտնվող Հայաստանի ռազմական ունեցվածքի մեծ մասը բռնագրավվեց վրացիների կողմից: Վրացական կառավարության կողմից արգելվեց Վրաստանի սահմաններից դուրս բերել ամեն տեսակի պարենամթերք և մանուֆակտուրա, իսկ եթե հաջողվում էր թույլտվություն ստանալ, ապա հաճախ ծագում էին ֆինանսական դժվարություններ[75]:

Ավելին: Ամերիկյան հեղինակ Ստ. Ջոնսը անդրադառնալով 1918-1920 թթ. իշխող վրաց-հայկական հարաբերությունների ողջ կոմպլեքսի վերհանմանը, դիպուկ նկատում է, որ Վրաստանի սոցիալ-դեմոկրատական կառավարությունը, գաղափարապես թշնամական դիրքորոշում ունենալով մեծ բիզնեսի նկատմամբ, տարածում էր վրացական նացիոնալիստական, ընդգծված ազգայնական երեսպաշտություն և ան-

[74] Քաջազնունի Յովհ., Հայաստանի Հանրապետութիւն, Եր., «Մ. Վարանդեան» հրատ., 1993, էջ 24-25:

[75] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275 [նախկինը՝ 276], ց. 5 [1], գ. 79, թ. 46:

հիմն կասկածամտություն: Մայրաքաղաքի բնակչության մեծամասնությունը կազմող կես միլիոն հայերը, ովքեր տիրապետող դիրքեր ունեին մայրաքաղաքում, հսկում էին ռազմավարական նշանակություն ունեցող սահմանակից տարածքների և տնտեսության մեծ մասին, և ի սկզբանե լոյալ էին տրամադրված դեպի Հայաստանի նոր հանրապետությունը: Մտ. Ջոնսը եզրակացնում էր, որ հենց դա հանգեցրեց Վրաստանի իշխանությունների պաշտոնական չարաշահումներին՝ հայկական սեփականության բռնագրավումներին և ոստիկանության կողմից կոպիտ, բռնի վերաբերմունքին, որը զրկում էր հայերին իրենց նախորդ տնտեսական և քաղաքական առավելություններից Թիֆլիսում՝ գրգռելով հայ-վրացական հարաբերությունները անկախության հաստատման շրջանում[76]:

Այդպիսի հուսահատական պայմաններում էլ Հայաստանի կառավարությունը և ժողովուրդը ձեռնամուխ էին եղել զանազան պետական-տնտեսական կառույցների, բանկի և մարտունակ բանակի ստեղծմանը: Նույն ճանապարհին էին նաև վրացիները և ադրբեջանցիները, որոնք խոչընդոտներ էին հարուցում Հայաստանում ընթացող գործընթացների անարգել զարգացման առաջ: Առավել նախընտրելի վիճակում, անշուշտ, գտնվում էին վրացիները՝ Կովկասյան տան առավել հավակնոտ ներկայացուցիչները: «Վրացիները շատ վարպետօրէն (ավելացնեմ՝ նաեւ ցինիկաբար) օգտվում էին հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հակասություններից՝ իրենց արտօնյալ դիրքը ամրապնդելու համար»,- գրում է Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին[77]:

Այս առումով շատ դիպուկ է նկատում նաև Ռ. Տեր-Մինասյանը[78]. «Ջույգ ժողովուրդներին սպառնացող վտանգի ժամուն, վրացիները օգտուեցին մեր ինկած վիճակից եւ շահագործեցին այդքան խիստ կերպով

[76] Տե՛ս Jones Stephen F., Georgian - Armenian Relations in 1918-20 and 1991-94, p. 64:

[77] Քաջազնունի Յովհ., Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, էջ 17:

[78] Տեր-Մինասյան Ռուբեն Կարապետի, Ռուբեն փաշա [1882-1951 թթ.]: Աչքի ընկնող ՀՅԴ գործիչ է: Նա եղել է Հայաստանի Առաջին Հանրապետության Ռազմական նախարար (5 մայիսի, 1920 թ. -23 նոյեմբերի, 1920 թ.):

իրենց աշխարհագրական դիրքը՝ մեր ժողովրդեան թե՛ արժանապատուութիւնը եւ թե՛ կենսական արդար իրաւունքները ոտնահարելով»[79]:

Ինչպես 1918 թվականին, երբ սկսել էր կազմավորվել Հայաստանի Առաջին Հանրապետությունը, դժվարին ջանքեր գործադրելով ստեղծելու պետաքաղաքական և ռազմական անհրաժեշտ կառույցները, դուրս գալու սովի ճիրաններից, 1919 թ. կեսերին, չնայած ընդհանուր ոգևորիչ որոշ տրամադրություններին, Հայաստանի Հանրապետության իրական վիճակը մնում էր տագնապալից, սպասելիքները՝ պայմանական: Այդ է վկայում կառավարության նախագահ Ալ. Խատիսյանի դիմումն ուղղված Թիֆլիսում հայկական ներկայացուցչության ղեկավար Լ. Եվանգուլյանին (Եվանգուլով). «Բոլոր շոգեքարշերը և վագոնները ուղարկված են Վրաստան: Ամբողջ շարժումը կանգնած է: Հաղորդեցեք Գրինին և Բրաֆին: Սարսափելի սով է: Ամեն օր հեռագրեք ինձ՝ ինչքան ալյուրով բեռնված վագոն է դուրս գալիս Թիֆլիսից: Անհապաղ հեռագրեք Բեկզադյանին՝ շտապ ուղարկի մազութ և բենզին, ոչ մի կաթիլ չկա… հակառակ դեպքում ամեն ինչ կմեռնի»[80]:

Հարկ է ընդգծել, որ հայաստանյան պայմանների «անհեթեթությունը» հրաշալի ըմբռնում էին նաև ուրիշ հայ հասարակական-քաղաքական, մտավորական գործիչներ:

«Երկրի վիճակը շարունակում է մնալ ծանր, հացը պակաս է, եւ սովն առատ հունձ է անում: Կտրված ենք արտաքին աշխարհից, Վրաստանը շարունակում է մեր ճամփան փակել, կարող եք երեւակայել՝ ինչպիսի անհանդուրժելի կացություն է ստեղծվել մեզ համար: Ամերիկայից ուղարկվող ալիւրը շատ անկանոն է մեզ հասնում, առաջին հասած նավից մօտ 80.000 փութ տրվեց Բաթումի ազգաբնակչութիւեանը, փոխանակ սովից կոտորվող Հայաստանին ուղարկելու: Առհասարակ Անգլիայի քաղաքականությունը դեպի մեզ մինչեւ վերջերս եղել է տմարդօրեն դաժան եւ քիչ բարյացակամ»[81], - գրում է Ս. Վրացյանը 1919 թ. մայիսի 18-ին Հ.Յ.Դ. Ամերիկայի Կենտրոնական Կոմիտեին:

---

[79] Տե՛ս Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, հատոր Է, էջ 243:

[80] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 79, թ. 13:

[81] Տե՛ս Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, Պէյրութ, 1962, էջ 287-288:

Ինչպես իրավացիորեն նշում է վերը հիշատակված Ստ. Ջոնսը՝ «Հայաստանի կախվածությունը մթերքներ եւ էներգակիրներ մատակարարող Վրաստանի ճանապարհներից հանդիսացավ ապագա կոնֆլիկտի աղբյուրներից, եւ արդեն 1918 թ. մայիսին որպես վերապրելու ուղի նկատվեց ավելի շատ հեռացումը, քան համագործակցությունը»[82]:

Հենց դա նկատի ուներ Ս. Վրացյանը, երբ գրում է. «Վրացիները առանձնապես դժվարություններ էին հանում արտասահմանից Հայաստան ուղարկվող մթերքի դեմ: Բաթումից գնացքներ չէին գալիս: Զանազան պատրվակներով յափշտակում էին Հայաստանին պատկանող ցորենը: Հայաստանում մարդիկ մեռնում էին սովից, եւ Հայաստանի ալյուրը պահվում էր Բաթումի պահեստներում: Երեւանից ուղարկված բողոքները մնում էին անլսելի: Հասարակական խիղճը վրդովված էր»[83]: Հարկ է ընդգծել նաև այն մասին, որ չնչին փոփոխություններով հանդերձ, Ս. Վրացյանի մատնանշած այս սցենարը կրկնվեց Հայաստանի համար բախտորոշ 1988-1994 թթ., և 2001 թ. գարնան-ամռան ամիսներին՝ դարձյալ Ախալքալաքյան իրադարձությունների կապակցությամբ, երբ վրացական շովինիզմը վերելք էր ապրում: Հայ-վրացական հարաբերությունների հենց այդ բարդույթից հետաքրքիր մի միջադեպի մասին է պատմում նույն Ս. Վրացյանը իր հիշողությունների «Կյանքի ուղիներով» ուշագրավ գրքաշարի Ե. հատորում. «Ես, ինքնաբերաբար մի խիստ հեռագիր ուղարկեցի Թիֆլիսի մեզ համակիր ռուսական «Зак. Слово» թերթի խմբագրութեան՝ ներկայացնելով վրաց կառավարութեան ու գործիչների հակահայ արարքները, բողոքելով նրանց անարդար քաղաքականութեան դեմ՝ Հայաստանի հանդեպ: Իմ հեռագիրը զուգադիպվեց Քլեմանսոյի խիստ ազդարարութեան՝ ուղղված վրացի ղեկավարներին՝ արգելք չհանդիսանալու Հայաստանի մատակարարման գործին: Փոթորիկ պայթեց վրաց մամուլի եւ կառավարական շրջանների մեջ: Աջ թե ձախ ամենքը մեղադրում էին ինձ, որ շինծու եւ զրպարտիչ տեղեկություններ եմ հաղորդել… վրաց կառավարությունը նույնիսկ հրապարակային հայտարարություն արավ՝ մեղադրելով հայերին, որ Հայաստանի երկաթուղային վարչությունը չի վերադարձնում վրացական վագոնները, այդ պատճառով Վրաստանի երկաթուղին չի

[82] Տե՛ս Jones Stephen F., Նշվ. աշխ., p. 64-65:

[83] Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատոր Ե, էջ 98:

կարողանում Բաթումի հասնող հայկական ապրանքները փոխադրել Երեւան: Ծիծաղելի էր այս ինքնարդարացումը»[84]:

1919 թ. վերջին 6-7 ամիսների ընթացքում մեծագույն դժվարություններով հաջողվում է Հայաստան մտցնել 1 մլն 250 հազար փութ ցորեն, 125 հազար փութ լոբի, 20 հազար փութ կորեկ, 950 հազար տուփ կաթ, 12 հազար փութ կակաո, 44 հազար փութ շաքար, 1500 փութ թեյ, 5000 փութ ճարպ (ճրագու), 50 հազար փութ բրինձ, 6 հազար փութ եգիպտացորեն և այլն[85], ինչպես նաև մինչև 500 հազար փութ մազութ և հում նավթ, մինչև 140 հազար փութ կերոսին, 25 հազար փութ բենզին, 45 հազար փութ փայտածուխ, 40 հազար փութ մանր կաղին, 25 հազար փութ ծովատառեխ, 60 հազար փութ զանազան մրգեղեն և այլն[86]:

1920 թ. ամռանը «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցության կողմից բանակի օգտին ԱՄՆ-ում կազմակերպված հանգանակությունից հավաքվում է ավելի քան կես միլիոն ամերիկյան դոլար, Երևան է հասցվում մեծ քանակությամբ պաքսիմատ և պահածո[87]:

Ստեղծված բարդ իրավիճակը Հայաստանում խիստ բացասաբար էր անդրադառնում կառավարության ռազմաքաղաքական և տնտեսական գործունեության վրա, հնարավորություն չէր տալիս վերջինիս իր ձեռքում կենտրոնացնելու զգալի դրամական և նյութական ռեսուրսներ, լուծելու զանազան ռազմական խնդիրներ:

Հարկ է ընդգծել, որ հենց այդ դժվար կացության մեջ ստեղծվում ու զարգանում էր Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Զախողման վտանգի տակ էին այն ռազմաքաղաքական և տնտեսական ձեռնարկումները և հույս կար իրականացնել Հայաստանում: Մյուս կողմից, իրադրության վրա բացասաբար էր անդրադառնում այն հանգամանքը, որ հայ մտավորական-կուսակցական խավը դրսից էր ցանկանում կառավարել Հայաստանյան իրողությունները, իսկ Թիֆլիսի ազդեցիկ Հայոց Ազգային խորհուրդը պարզապես չէր շտապում ժամանել Երևան՝ լքելով Թիֆլիսի հիրավի բարեկեցիկ կացարանը, որի մասին շատ դիտարժան հիշատակում կա Ս. Վրացյանի մոտ. «Նախագահը բաց էր

[84] Տե՛ս նույն տեղում:
[85] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 79, թ. 145:
[86] Տե՛ս նույն տեղում, թ. 43:
[87] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 450-451:

անում ժողովը: Քոչարեանը կարդում էր վերջին նամակներն ու հեռագիրները: Ներկաները հաղորդում էին իրենց ունեցած տեղեկութիւնները օրուայ անցքերի մասին: Տեղի էր ունենում մտքերի փոխանակութիւն: Ապա բերում էին թէյ սպիտակ հացով եւ կարագ-պանիրով: Դուրսը դժուարութեամբ էր մթերք ճարւում, բայց Հայոց Ազգային Խորհուրդը առատ թէյ ու շաքար ունէր: Եւ այնպէս հաճելի էր տաք եւ անոյշ թէյը սպիտակ հացով ու կարագ-պանիրով, մանաւանդ, հեռագրական լուրերից յետոյ Հայաստանի սառնամանիքների եւ գաղթականների կրած տառապանքների մասին:

Թէյին ընկերանում էին է՛ւ զուարճալի մանրավէպեր: Ահարոնեանն ու Բէզզադեանը աննման պատմողներ էին, իսկ երբ նրանց միանում էր է՛ւ Գիգա Խատիսեանը, կարելի էր ժամերով կախուած մնալ նրանց շրթունքներից: Ուստի, բնաւ զարմանալի չէր, որ Հայոց Ազգային Խորհուրդը միշտ «վաղուայ նիստին» էր յետաձգում ռազմաճակատ այցելելու հարցը»[88]:

Շատ շուտով ակնհայտ դարձաւ, որ հայ ձեռներեցները, որոնք կարող էին քիչ թե շատ օգտակար լինել տնտեսության և առհասարակ հարազատ երկրի զարգացմանը, պարզապես չէին ցանկանում գալ Հայաստան՝ որպես շարքային աշխատողներ. մեծամասամբ ձգտում էին հեղինակավոր բարձր պաշտոնների, ինչի մասին մենք շատ գունեղ վկայակոչության ենք հանդիպում Ս. Վրացյանի գրառումներում: Այսպես, վերջինս 1919 թվականին գրում է Արմեն Գարոյին. «Մեր մտավորականությունը դրսից է ուզում վայելել անկախ Հայաստանը: Միքայելին խնդրեցինք, որ գայ: Պատասխանեց, որ իր ներկայությունը անհրաժեշտ է Հռոմում: Անցնող օրը Խատիսյանը ասում էր, թե Ավետիքը իրեն գրել է, որ խաղաղության դաշնագրի ստորագրությունից հետո ինքը ցանկանում է դեսպան մնալ Փարիզում: Չնեղանաս, բայց դու էլ գերադասեցիր Վաշինգտոնը Երևանից: Եվ մեզ նման «խուրտաներին» մնաց Հայաստանի պետության կազմակերպելն ու վայելելը: Համաձայն եմ, որ այս մոմենտում դրսի աշխատանքը շատ կարևոր է, անհրաժեշտ է խաղաղության դաշնագիր կնքել իր բոլոր հետևանքներով, անհրաժեշտ է նյութական օժանդակության աղբյուրներ գտնել- համաձայն եմ, բայց այդ

[88] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատոր Ա, էջ 193:

բոլորը շենքի վերին հարկերն են, եթե պատվանդանը ամուր չլինի, ձեր այդ միջազգային նվաճումները հինգ կոպեկի արժեք չեն ունենայ: Հիմքը պետությունն է և կառավարությունը»[89]: Փայլուն է ասված: Հստակորեն կարևորն ու պակաս կարևորն իրարից զատվել են:

Անշուշտ, այստեղ կարևոր էր նաև այն հանգամանքը, որ արտերկրի հայ արտադրական մտավորականության ներկայացուցիչները բացասական «լիցքեր» էին տեսնում Հայաստանի Հանրապետությունում կառավարող դաշնակցական բյուրո-կառավարության գործունեության մեջ: Նրանք տնտեսական ձեռնարկումների ողջ հնարավորությունը տեսնում էին քաղաքական կայունության ապահովման մեջ՝ այն, ինչ Հայաստանում իրապես չկար:

Դա դեռ 1920 թ. լավ էր նկատել նույնիսկ Անդրկովկասում, այնուհետև Հայաստանում ամերիկյան գերագույն կոմիսար Վ. Հասկելը[90]: Ինչպես հաղորդում է Թիֆլիսում հայկական դիվանագիտական ներկայացուցիչը 1920 թ. փետրվարի 14-ի իր հաղորդման մեջ՝ ուղարկված Արտաքին Գործոց նախարարին. «մի անգամ գնդապետ Հասկելը, տեղեկանալով, որ Հայաստանի կառավարության յուրաքանչյուր բաժանմունք իր ներկայացուցիչն ունի Թիֆլիսում, ասել է, թե այդպիսի շքեղություն իրեն թույլ չի տալիս նույնիսկ Ամերիկան, որ մի քանի անգամ Հայաստանից հարուստ է»[91]: Միանգամայն օրինաչափորեն ուժեղ, տնտեսական պետական և ղեկավար կազմ ձևավորել 1918-1920 թթ. չհաջողվեց, ձախողվեցին գործունյա պետական կազմակերպության ձևավորման բոլոր քիչ թե շատ լուրջ ջանքերը: Անշուշտ, այս առումով ճշմարտություն կա վերոհիշյալ գնդապետ Վ. Հասկելի՝ 1919 թ. աշնանը Լ. Եվանգուլյանի հետ ունեցած զրույցի ընթացքում ասված այն խոսքերում, թե այդ կառավարությունը «բաղկացած է նախկին դասատուներից և կուսակցության աջակցությունից օգտվող ամեն կարգի մարդկանցից՝ քաղաքականապես ոչ հասուն և ոչ հեռատես»[92]:

---

[89] Տե՛ս Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, էջ 301:

[90] Հասկել Վիլյամ Նեֆյու [1878-1952 թթ.] - ամերիկյան գնդապետ, 1919 թ. հուլիսի 5–ից մինչև 1920 թ. օգոստոսի 17-ը հանդիսացել է դաշնակիցների Գերագույն կոմիսարը՝ հանձնակատարը Հայաստանի Հանրապետությունում:

[91] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 212, թ. 23:

[92] Տե՛ս նույն տեղում, գ. 183, թ. 146:

Եվ առհասարակ Հայաստանում շատ անմխիթար էր կադրային վիճակը: Այդ հանգամանքը հասկանում էին նաև կառավարության, պետության և զանազան կուսակցությունների առավել խելացի ներկայացուցիչները, որոնք երբեմն-երբեմն վեհերոտ փորձեր էին կատարում շտկումներ մտցնելու այդ բնագավառում, սակայն ապարդյուն: Ոչ ոք չէր ցանկանում մեկնել անկայուն, թշնամիներով շրջապատված Հայաստան, ուր ցուրտ էր, սով, խոլերա և տագնապով լի իրավիճակ:

Վրդովվելով ազգասիրության պակասից, հաճախակի ցուցաբերվող եսականության դրսևորումներից, Ս. Վրացյանը բողոքում է նաև մեկ այլ փաստի դեմ: Վկայակոչելով, որ Հայաստան եկողները քիչ չեն, նա միևնույն ժամանակ նշում է, որ «մեծ մասը գալիս է նախարար կամ խորհրդարանի անդամ և կամ դուրսը դեսպան նշանակվելու ակնկալիքով և հույսով»[93]: Ավելին, զայրանալով, որ շատերն էլ Հայաստան են գալիս չարչիական-առևտրական նպատակներով, իբր թե հայրենի երկրին տնտեսապես օժանդակելու համար, Ս. Վրացյանը փաստագրում է, որ դա ավարտվում էր նրանով, որ դրանցից շատերը զբաղվում էին էժան գներով գորգեր և թանկագին քարեր գնելու եկամտաբեր առուծախով՝ առանց փոխարենը Հայաստանում որևէ բան ներդնելու: Իսկ կառավարության արգելքի դեպքում էլ վերջիններս աղմուկ էին բարձրացնում, թե դաշնակցական սոցիալիստական կառավարությունը մեռցնում է ազատ առևտուրը[94]:

Հարկ է սակայն ընդգծել, որ հայկական ոչ բոլոր քաղաքական շրջանակներում էր իշխում ոգևորիչ (էյֆորիկ) հիացմունքը Եվրոպայից սպասվող ակնկալիքների նկատմամբ: Այլընտրանքի հնարավորությունները այնքան էլ մեծ չէին, մնում էր հավատալ, հույսեր տածել: Սակայն ոչ բոլորն էին հավատում: Հետաքրքրական է այս առումով Թիֆլիսում հայկական դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանի 1919 թ. դեկտեմբերի 9-ի Արտաքին Գործերի մինիստրին ներկայացված զեկուցագիրը. «Ես այլևս չեմ հավատում արտաքին ուժին ու նրա՝ դեպի մեզ բարելավ վերաբերմունքին. սպասելով անցյալ տարի Անգլիային, որպես մեր դաշնակցի, այս տարի՝ Ամերիկային, որպես մեր հովանավորի, Ֆրանսիային նրա սիմպատիաներով դեպի մեզ, մենք սխալվել

[93] Տե՛ս Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, էջ 301:
[94] Տե՛ս նույն տեղում, էջ 302:

ենք մեր հաշիվներում: Ֆրանսիան գրավել է Կիլիկիան, Ամերիկան տատանվում է մեզ վրա մանդատ ստանձնել, Անգլիան մահմեդական տարրի մեծ տերություն է, Ռուսաստանը հեռու է, Իտալիային թույլ չի տվել Անդրկովկաս մտնել Անգլիան, իսկ հունական զորքերի Անդրկովկաս գալուն համաձայն չեն երևի դաշնակիցները: Այսպիսով, մեր ժողովուրդը մնացել է մեն ու մենակ առանց կողմնակի օգնության, շարունակվում է կոտորվել սովից, ցրտից, հիվանդություններից ու Տաճկաստանի մշտական սպառնալիքից»[95]: Այս առումով ուշագրավ է նաև նշել, որ վերը հիշված հայ դիվանագետը շատ նրբին ձևով մի այլ միտք է արտահայտում՝ կապված օրիենտացիաների խնդրի հետ: Ըստ երևույթին լավ ըմբռնելով աշխարհաքաղաքական իրավիճակում կատարված փոփոխությունները 1919 թ. վերջերին, որոնք էական նշանակություն ունեին Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի համար, Լ. Եվանգուլյանը խորաթափանցորեն նկատում է. «Սակայն, որքան վատ լինեն կամավորական Ռուսաստանի գործերը, մենք չպետք է, իմ կարծիքով, այժմ ձեռնարկենք որևէ քայլեր, որոնք ունեն բացարձակ ագրեսիվ բնույթ Ռուսաստանի նկատմամբ: Ես կարծում եմ, որ չպետք է մոռանալ, որ մեր բոլոր արտաքին օրիենտացիաներից, մենք չենք հուսահատվել միայն ռուսական օրիենտացիայից:

Անգլիայի և Ամերիկայի օրիենտացիան, մանավանդ առաջինի վրա դրական արդյունք չեն տվել մեզ, Անգլիան համակրանքով է վերաբերվում դեպի մահմեդական տարրը, մասնավորապես դեպի Ազրբեյջանը: Ամերիկան Անգլիայի և հյուրասեր ու հարուստ Բագու քաղաքի ու նրա ոչ պակաս հարուստ տերերի ազդեցության տակ պատրաստ է իր սիմպատիաները նվիրել Ադրբեջանին»[96]:

Այդ նույն միտքն է շեշտում նաև Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարարության ընդհանուր քարտուղար Հ. Տեր-Հակոբյանը 1919 թ. սեպտեմբերի 16-ին (№ 3741) Թիֆլիսում հայկական դիվանագիտական հավատարմատարին ուղղված ուղերձում. «Փարիզի մեր պատվիրակության գրություններից պարզվում է, որ անգլիացիք Կովկասում իրենց ներկայության ամբողջ ընթացքում եղել են ոչ անկեղծ դեպի մեզ և վարել սիստեմատիկաբար մուսուլմանական քաղա-

[95] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 116, թ. 125:

[96] Տե՛ս նույն տեղում, թ. 125:

քականություն. թե՛ Տոմսոնի և թե՛ մյուս գեներալների (անգամ մեզ մոտ հայասեր համարված Անդրկովկասում բրիտանական օկուպացիոն զորքերի շտաբի քաղաքական բյուրոյի ղեկավար գեներալ Վ. Հ. Բիչի) զեկուցումները, մասնավորապես Ղարաբաղի և առհասարակ մեզ վերաբերող խնդիրներում միշտ եղել են ի վնաս մեզ»[97]:

Մի կարևոր հավելում ևս: Դեպի Անդրկովկաս ձգվում էին ոչ միայն անգլիացիները, այլև ԱՄՆ-ի իմպերիական քաղաքականության իրականացնողները: Հարստանալով Առաջին աշխարհամարտում, նրանք մշակում էին համաշխարհային տիրապետության լայնածավալ պլաններ, որոնցում ինչպես և այսօր կարևորագույն տեղ էր հատկացվում Անդրկովկասին, և մասնավորապես հենց Հայաստանին՝ «Marlboro»-ի «սքանչելի» բուրմունքը տարածելու համար: Եվ դա արվում էր Հայաստանի նկատմամբ մանդատ ստանալու և «բարեկամի» քողածածկույթի տակ, ինչպես դա արվում է այսօր՝ 1915 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման փաստի շուրջ ծավալված քաշքշուկի ընթացքում: Այս առումով շատ հատկանշական է ազդեցիկ ամերիկյան «New York Times» թերթից հետևյալ մեջբերումը (1919 թ. հուլիսի 6). «Մենք պետք է շահագրգռված լինենք Հայաստանով, Բալկաններով՝ մեծ տերությունների սահմաններ-ի հարցում…Հայաստանը հանդիսանում է մեծ ճանապարհ, որ կապում է Եվրոպան Ասիայի հետ և գրավում է հրամանատարական դիրք Սև և Միջերկրական ծովերի նկատմամբ: Եթե մենք ընդունենք Հայաստանի նկատմամբ մանդատը, Հայաստանը կդառնա ամերիկյան ֆորպոստը Արևելքում…Հայաստանի սահմաններից 500 մղոն ռադիուսով (շառավղով) ապրում է 100 միլիոն մարդ, որոնց հարկավոր է ենթարկել ամերիկյան գաղափարախոսությանը և քաղաքականությանը: Իսկ եթե մենք հրաժարվենք մանդատից, ապա Հայաստանը դուրս կգա անգլոսաքսոնական քաղաքակրթության ազդեցությունից և, այդպիսով, մենք կկորցնենք անգլոսաքսոնական քաղաքակրթության պրոպագանդայի հնարավորությունը Մերձավոր Արևելքի նկատմամբ»[98]:

Հայաստանի անկախության ընդունման փաստը մեծ ոգևորություն առաջ բերեց Հայաստանում: Սակայն ինչպես վկայում են փաստերը, դա էլ բավարար զորեղ գործոն չէր, որ գործերը Հայաստանում դեպի լավը

[97] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 62, թ. 45; Ֆ.Պ- 275, ց. 5, գ. 97, թ. 126:

[98] Տե՛ս Адамия В. И., Из истории английской интервенции в Грузии, стр. 13-14:

գնային, որ դրանից ոգևորվեին արտերկրի հայ գործարարները: Դա հատկապես ցայտուն դրսևորվեց 1919 թ. սեպտեմբերի 28-ին, Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական, իշխան Մ. Թումանյանի կողմից հրավիրված հայ արդյունաբերողների և բանկերի ներկայացուցիչների ժողովում, որին ներկա էին Ե. Մայիլյանը, Մ. Բունիաթյանը, Ե. Տեր-Մինասյանը, ինչպես նաև գեներալ Ջեյմս Հենրի Հարբորդը, որը նույն հարցերը իր ժամանակին տվել էր Կ. Պոլսի հայ արդյունաբերողներին, թե ինչքանով են նրանք պատրաստակամ լինելու հաստատվել ազատագրվող Հայաստանում[99]: Ժողովի նախագահը հրավիրվածներին տեղեկացնում է գեներալին հետաքրքրող երկու հարցի մասին. 1) Հայաստանի անկախությունը ճանաչելու դեպքում արդյունաբերության և բանկերի հայ ներկայացուցիչները կկամենա՞ն արդյոք իրենց գործունեությունը տեղափոխել Հայաստան և 2) ի՞նչ պայմաններ են հարկավոր, որպեսզի արդյունաբերությունը Հայաստանում բարգավաճի[100]: Հարկ է նշել, որ Ջ.Հարբորդը այդ նույն հարցերը տվել էր նաև Կ. Պոլսի հայ արդյունաբերողներին, որոնք պատրաստակամություն էին հայտնել կարգ ու կանոն հաստատվելուց հետո միայն տեղափոխվել Հայաստան: Այս առումով հատկանշական են Թիֆլիսի որոշ հայ մեծահարուստների ելույթները վերոհիշյալ ժողովում: Գործնական խոսքով հանդես է գալիս Եղյա Ղազարյան-Մայիլյանը: Շեշտելով, որ հայերը ոչ միայն առևտրական կարող են լինել, այլև լավ արդյունաբերողներ, նա այնուամենայնիվ պնդում է, որ բոլորն էլ իրենց գործերը Հայաստան կտեղափոխեն միայն այն դեպքում, եթե այնտեղ հաստատվի կարգ ու կանոն, և վերանան քաղաքական անբնպաստ պայմանները: Գտնելով, որ ժամանակակից Հայաստանի արդյունաբերության զարգացման խոչընդոտները բազմաթիվ են, Ղազարյան-Մայիլյանը անդրադառնում է երկու կարևոր արգելքների. «նախ այն, որ Հայաստանը կտրված է արտաքին աշխարհից: Այս դրության հետ հայ արդյունաբերողը հաշտվել չի կարող: Առանց Վրաստանի հետ համաձայնության գալու, Հայաստանը գոյություն ունենալ չի կարող. Վրաստանի տրամադրությունից է կախված Հայաստանի լինել-չլինելը: Այս կախումը Վրաստանից Հայաստանին դնում է ամենածանր վիճա-

[99] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения, стр. 24:
[100] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 119, թ. 167: Ֆ.Պ- 200, ց. 2, գ. 64, թ. 3-4:

կում: Այժմյան Հայաստանում արդյունաբերության ոչ մի ճյուղ զարգանալ չի կարող, որովհետև դրա համար պահանջվում են արտադրական գործիքներ, որոնք Հայաստան մտցնելու համար հարկավոր է ստանալ Վրաստանի համաձայնությունը, այն Վրաստանը, որը մինչև իսկ տրանզիտի պայմանագիր չի կամենում կնքել, կապելով վերջինս տարածքային խնդիրների հետ, այսպիսով տալով այդ պայմանագրին քաղաքական բնավորություն…Այս ամենը գալիս է մեզ ասելու, որ Հայաստանը կարող է զարգանալ միայն այն դեպքում, եթե նա ելք ունենա դեպի ծով, ցանկալի է դեպի Միջերկրական ծովը, որը կապ է եվրոպական երկրների հետ անմիջապես»[101]: Վերջնամասում կարևոր եզրահանգում է արվում հայ արդյունաբերողների և բանկիրների կողմից. «Խոչընդոտը, որ հանդիպում է արդյունաբերությունը Հայաստանում, դա իրավակարգի, գույքի և անձի ապահովության բացակայությունն է, որի պատճառն, ըստ Մայիլյանի հետևանք է այն բանի, որ Հայաստանի [Հանրապետության] կառավարությունը չի արտահայտում հայ ժողովրդի կամքը: Հայ ժողովուրդը զբաղված է միմիայն մի խնդրով՝ փրկել իր ֆիզիկական գոյությունը, ուստի հնարավորություն չունի աչալուրջ վերաբերմունք ցույց տալ դեպի այս կամ այն ներքին քաղաքական խնդիրը: Ժամանակակից Հայաստանին հարկավոր է ոչ թե կուսակցական կառավարություն, որ կուսակցական շարժառիթները նկատի ունենալով է այս կամ այն բնակավայրի վարչակազմը լրացնում, այլ զուտ «деловой» [գործարար - Վ. Վ.] կաբինետ, կարող և մտավոր ույժերի կարիք է զգում Հայաստանը, որոնց հարկավոր է հասարակական և պետական շինարարական ասպարեզ քաշել, մինչդեռ իրականությունը գալիս է ասելու, որ մեր կառավարությունը զուտ կուսակցական մասշտաբներով է մոտենում այս կամ այն հարցին կամ պաշտոնին:

Կուսակցական լինելը մեր կառավարության համար առաջին պայմանն է այս կամ այն պաշտոն ստանձնելու համար: Այսպիսի պայմաններում, ոչ մի արդյունաբերություն չի կարող զարգանալ Հայաստանում: Հայաստանին հարկավոր է չափավորական կառավարություն, որի մեջ պիտի մտնեն նաև արդյունաբերության ներկայացուցիչներ»[102]:

[101] Տե՛ս նույն տեղում:
[102] Տե՛ս նույն տեղում:

Մ. Բունիաթյանը գտնում է. «Հայաստանից հայ արդյունաբերողները և մասնագետները իրենք չեն, որ փախչում են, այլ նրանց մեր կառավարությունն է փախցնում՝ իր նեղ կուսակցական գործելակերպով»[103]:

Ի դեպ, այս հանգամանքին անդրադառնում է նաև Հայաստանի վերջին վարչապետ Ս. Վրացյանը 1919 թ. հունվարի 8-ի իր՝ Յ. Յոբոյանին հասցեագրված նամակում, նշելով նաև արտաքին աշխարհաքաղաքական գործոնների մասին. «Վրացիները, օգտվելով իրենց աշխարհագրական դիրքից, փակել են Հայաստանի ճամփան դրսի աշխարհի հետ՝ դատապարտելով հայերին սովամահութեան, ինչպես և ուզում են գրավել անվիճելի հայկական գավառները՝ Ախալքալակը և Լոռին»[104]: Ուրեմն, այս առումով տարբեր հեղինակներ, տարբեր դիրքորոշումների երկու մարդ՝ միակարծիք են:

Երկրորդ խոչընդոտը ներքին բնույթի էր, և ըստ իս՝ շատ ավելի կարևոր էր, որովհետև դա կախված էր «հայ» կոչված գործոնից: Հայ արդյունաբերող Ղազարյան-Մայիլյանը հենց այդ երկրորդ խոչընդոտը, որին հանդիպում էր արդյունաբերությունը Հայաստանում, համարում էր իրավակարգի, գույքի և անձի ապահովության բացակայությունը, ինչը զգալի չափով վերաբերում է նաև Հայաստանի Երրորդ՝ ներկայիս հանրապետությանը: Վերոհիշյալ հեղինակը դա համարում էր հետևանք այն բանի, որ ՀՀ «դաշնակցական կառավարությունը հաճախ պատասխանատու մասնագետի կարիք ունեցող պաշտոնները հատկացնում է անձանց, որոնք ունքը շինելու տեղը աչքն էլ են հանում»[105]: Տեղին է ասել, որ նմանատիպ իրավիճակի հետ բախվեց հայ ժողովուրդը նաև 1990-ական թվականներին, որն էլ շատ բացասական ազդեցություն ունեցավ նրա քաղաքական և հասարակական ակտիվության, ինչպես նաև կենսամակարդակի վրա: Տնտեսական համակարգը փլուզվեց, և նույնիսկ հնարավոր չեղավ 2000-ական թվականների մատույցներին ապահովել նախորդ դարի 80-ական թվականների մակարդակը՝ բոլոր առումներով՝ տնտեսական, սոցիալական, հատկապես՝ ռազմաքաղաքական: Երկիրը կանգնեց բացարձակ աղքատության եզրին, փոխարենը՝ քաղաքական լիդերների և կուսակցությունների գերակշռող

[103] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 119, թ. 168: Ֆ.Պ- 200, ց. 2, գ. 64, թ. 3-4:
[104] Տե՛ս Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, էջ 275:
[105] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 119, թ. 167: Ֆ.Պ- 200, ց. 2, գ. 64, թ. 3-4:

մասը սկսեց ժողովրդին «հաջողությամբ» կերակրել Ղարաբաղյան հիմնահարցով, ընկղմվելով «ղարաբաղամոլության մեջ» և անհիմն շահարկելով Ղարաբաղ-Արցախի հիմնահարցը: Դրան ավելացրած՝ երկրի բարձրագույն օրենսդիր մարմնում՝ Ազգային ժողովում անպայմանորեն ընտրված լինելու առանձին «ժողովրդական» հավակնոտ «լիդերնեբի» և այսպես կոչված եվրոպական ստանդարտներին բավարարող և համապատասխանող «ազգային», «ընդդիմադիր դեմոկրատական» և այլ բնույթի կուսակցությունների հիվանդագին մարմաջը և ձգտումը՝ «դեպուտատացավը», որը ժողովրդին բերեց նոր տառապանքներ և հարկային սպասելիքներ ու հավելումներ, որոնք հավանաբար չեն եղել ինչպես Արաբական խալիֆայության, այնպես էլ նույնիսկ Օսմանյան կայսրության օրոք, իսկ պետությանը՝ անհիմն լարվածություն և խճճված իրավիճակում կողմնորոշվելու նորանոր բարդացումներ ու դժվարություններ: Արդյունքում նաև՝ ժողովրդական զանգվածների ու հասարակական խավերի քաղաքական ակտիվության բովանդակության նորանոր և գործնականում էական «որակական» ձևախեղումներ:

Եվ վերջապես, ամփոփելով իր միտքը, վերոհիշյալ հեղինակը գալիս է այն ճշմարիտ եզրահանգմանը, որ «Հայաստանի կառավարությունը մտավոր ու կարող ուժերի կարիք ունի, և կասկածից դուրս է, որ Հայաստանում փոքր ի շատե կայուն դրություն ստեղծելուց հետո միայն բոլորը կթողնեն Վրաստանը և Ադրբեջանը և կքոչեն Հայաստան: Հայ արդյունաբերող Պ. Բունիաթյանը Ջ. Հարբորդին ի պատասխան հայտնում է, որ հայ մասնագետները և արդյունաբերության ներկայացուցիչները հաճույքով կվերադառնան հայրենիք, եթե միայն այնտեղ հաստատվի կարգ ու կանոն»[106]:

Խիստ այժմեական և իրատեսական հարցադրումներ, որոնց հետ չհամաձայնվել չի կարելի: Շարունակելով իր միտքը՝ վերոհիշյալ հեղինակը պնդում է և գալիս կարևոր հետևության, որ քաղաքական առումներով «դաշնակցական լինելը մեր կառավարության համար առաջին պայման է այս կամ այն պաշտոն ստանձնելու համար»: Գտնելով, որ այդպիսի պայմաններում Հայաստանում արդյունաբերությունը չի կարող առաջընթաց ունենալ, դրա հետ մեկտեղ առաջարկվում էր նաև

[106] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 119, թ. 168: Ֆ.Պ- 200, ց. 2, գ. 64, թ. 3-4:

«Հայաստանի օրենսդիր մարմնում ընդգրկել նաև այլ դասերի ներկայացուցիչների»[107]: Իսկ մի այլ արդյունաբերող, շարունակելով վերոհիշյալ հեղինակի տեսակետը, դարձյալ փաստում է այն կարևոր հանգամանքի մասին, որ «հայ կապիտալը ձգտում ունի դեպի Հայաստան և այդ ձգտումը կուժեղանա, եթե միայն կառավարությունը իր գործելակերպով նրան չփախցնի այնտեղից»[108]:

Հետաքրքիր է, որ այս փաստն արձանագրում է նույնիսկ գնդապետ Վ. Հասկելը, որը թվում է, թե Հայաստանի ներքին կյանքից չպետք է լավ գլուխ հաներ: 1919 թ. վերջին (նոյեմբեր-դեկտեմբեր) Լ. Եվանգուլյանի հետ ունեցած զրույցի ժամանակ նա շեշտում է, որ չնայած «կառավարության ղեկավարը (խոսքը վերաբերվում է Ալ. Խատիսյանին) ավելի խելացի է և բարձր է մնացած բոլորից, սակայն ամբողջությամբ գտնվում է կուսակցության ձեռքին և հարկադրված է իրագործել պառլամենտի և կուսակցության կողմից իրեն թելադրվող հրամանները»[109]:

Սա փաստ է, որն անտեսելն անիմաստ է, ընդհակառակը, որպես պատմական փաստ այն հարկավոր է մանրազնին ուսումնասիրել ու հաշվի առնել ներկա հասարակական-քաղաքական նորագույն օր-օրի բարդացող գործընթացներում: Ի վերջո Հայաստանում մնացին նրանք, ովքեր ցանկանում էին, և արեցին այն, ինչ իրենք ի վիճակի էին: Հայաստանում աշխատել ցանկացողների թիվը քիչ էր, զգալի մասը պարզապես չէր ցանկանում աշխատել Հայաստանում, այլ ձգտում էր իր համար ապահովել «օազիսային» պայմաններ: Հայաստանում առաջացել էր կադրային դատարկություն: Շատերը ձգտում էին մնալ արտասահմանում և չաշխատել Հայաստանի դժվարին պայմաններում, բայց փոխարենը մնացած տեղական իշխանավորներից պահանջում էին կայուն, հզոր պետություն՝ հզոր բանակով, գերազանց սպայական-հրամանատարական կազմով, «արհեստավարժ» Նախարարների կաբինետով՝ փոխարենը ոչինչ չառաջարկելով: Հայաստանի Հանրապետությունում մնաց մարդկային այն մարդկային նյութը, որը ցանկանում էր գեթ ինչ-որ բան տալ իր երկրին ու ժողովրդին:

---

[107] Տե՛ս նույն տեղում Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 119, թ. 168: Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 64, թ. 3-4:
[108] Տե՛ս նույն տեղում:
[109] Տե՛ս նույն տեղում, գ. 183, թ. 146:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԻՆ: ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ: ՌԱԶՄԱԿԱՆ ԱՌՃԱԿԱՏՄԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

XX դարը հագեցած է ազգամիջյան բախումնալիցքերով: Դրանք հատկապես հաճախակի դարձան 1917 թ. ռուսական փետրվարյան և մասնավորապես հոկտեմբերյան հեղափոխություններից հետո ընկած ժամանակահատվածում, երբ Ռուսաստանը հայտնվեց քաոսի գրկում, որի արդյունքում անդրկովկասյան ժողովուրդները խմորվող հակամարտության պայմաններում հայտնվել էին միանգամայն տարբեր և հակադիր բևեռներում:

Համադրելով պատմական իրողությունները և փաստերը, պետք է անշուշտ, կարևորել այն պատմաքաղաքական իրողությունը, որ ինչպես 1918 թ. սահմանակռվի կամ վրաց-հայկական պատերազմի և հետագա սահմանային-տարածքային բախումների արմատները պետք է որոնել Անդրկովկասում դեռ 19-րդ դարում ցարական իշխանությունների իրականացրած ռազմավարական բնույթի տեսանկյունից հեռահար նպատակներ հետամտող և նպատակային քաղաքական արդյունքներ ակնկալող վարչաքաղաքական վերաձևումների և փոփոխությունների մեջ, որոնց արդյունքում էլ ձևավորվեց Հարավային Կովկասի վարչաքաղաքական մի քարտեզ, որն ազգային տեղաբաշխվածության տեսանկյունից շատ կտրտված էր և խճճված:

Ինչպես գիտենք, ռուսական ցարի տապալումից հետո դադարեց գոյություն ունենալ և Կովկասյան փոխարքայությունը, որից հետո կազմավորվեց Օզակոմը՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտեն դարձավ Ռուսաստանյան ժամանակավոր կառավարության երկրամասային օրգանը, որի նախագահ դարձավ Վ. Խառլամովը, իսկ դրան զուգահեռաբար՝

բանվորների և զինվորների դեպուտատների սովետները, որոնց նախագահ դարձավ Ն. Ժորդանիան[110]: Ժամանակավոր կառավարության, միասնական և անբաժանելի Ռուսաստանի քաղաքականության ջերմեռանդ կողմնակիցներ էին ՀՅԴ-ն և Մուսավաթը, որոնք նաև գործնականում Ռուսաստանից անջատման կողմնակից չէին: Նույնը շարունակվեց Անդրկովկասյան կառավարության՝ Սեյմի գործունեության ընթացքում: Ժամանակավոր կառավարությունը ըստ էության ընդունելի էր համարել Անդրկովկասի սահմանազատումը ըստ ազգագրական սկզբունքի, սակայն այն իրողություն չդարձավ, որովհետև այդ Ժամանակավոր կառավարությունը «ժամանակավոր» էլ մնաց, և չլուծեց այդ հիմնախնդիրները, ավելացնենք, որ հեռահար նպատակադրումներում դրանք ըստ էության չկային էլ և չէին էլ իրապես նախատեսվում:

Հայտնի է, որ դեռ 1917 թ. ամռանը վարչատարածքային վերաբաժանման հարցերը քննարկման նյութ հանդիսացան անդրկովկասյան քաղաքական առաջնորդների համար Պետերբուրգում հրավիրված խորհրդակցությունում, որը հրավիրվել էր Ներքին Գործերի նախարարի նախաձեռնությամբ զեմստվոյական կառավարման նոր նախագիծ մշակելու համար, որին մասնակցում էին նաև Հայոց Ազգային խորհրդի անդամներ Ալ. Խատիսյանը և Ա. Շահխաթունյանը, որոնք էլ բարձրացնում են Անդրկովկասի վարչաքաղաքական սահմանների փոփոխման հարցը: Խորհրդակցության անդամները հավանություն են տալիս և ընդունում, որ այն պետք է լուծվի էթնիկական սկզբունքի հիման վրա: Լուծման համար ընտրվում է հատուկ հանձնաժողով՝ էթնիկական սկզբունքի հիման վրա Անդրկովկասի նոր վարչատարածքային բաժանման նախագիծը մշակելու համար, որի նախագահ է ընտրվում վրաց հայտնի քաղաքական գործիչ, պետական իրավունքի պրոֆեսոր Զուրաբ Ավալովը (Ավալաշվիլին - հանձնաժողովի նախագահ), իսկ հանձնաժողովի անդամներ՝ Անդրկովկասի ազգություններից երկուական ներկայացուցիչներ, այդ թվում Ալ. Խատիսյանը, Ա. Շահխաթունյանը, Ֆաթալի խան Խոյսկին, սոցիալիստ-ֆեդերալիստների առաջնորդներից Լորդկիպանիձեն: Որոշ ժամանակ անց, այդ հանձնաժողովը քննարկում և ընդունում է Ալ. Խատիսյանի և Ա. Շահխաթունյանի կողմից ներկայացված

[110] Տե՛ս Сеф С. Е.. Революция 1917 года в Закавказье, стр. 17:

առաջարկը Ախալքալաքը և Լոռին Թիֆլիսի նահանգի վարչատարածքային կազմից դուրս բերելու մասին, արձանագրելով նաև, որ Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Լոռու, Կարսի և Կաղզվանի գավառներից (Անդրկովկասի տարածքի ազգային սահմանագծման մասին հայկական պատվիրակության մեզ հասած տվյալներով 1918 թ. օգոստոսի 15-ի վիճակով, Կարսի և Կաղզվանի շրջաններն ունեին 10.200 քառ. կմ տարածք, որում ապրում էին 140 հազար հայեր, 75 հազար մուսուլման, 45 հազար հույներ, 15 հազար եզդիներ[111]) ստեղծվում է նոր՝ Ալեքսանդրապոլի հայկական նահանգը, հիմք ընդունելով էթնիկական սկզբունքը: Հենց այս նախագիծը ներկայացվում է Ներքին Գործերի մինիստրության հաստատմանը, և նա էլ իր հերթին, որոշակի փոփոխություններով հանդերձ, հաստատում է և հասցեագրում Թիֆլիս՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտեի եզրակացությունը ստանալու համար: Հայկական պահանջները «գիտական» առումով խարսխված էին Ա. Շահխաթունյանի մեկնակետային գաղափարի վրա, որը գրել է. «Մեզ թվում է, որ հայկական շրջանների վարչական և զեմստվային առանձնացումը շահավետ է և մեր հարևանների համար: Չէ որ դրանով բարձրանում է իրենց ազգության տոկոսը իրենց տարածքում: Այսպես, վրացիները այժմ կազմում են Թիֆլիսի նահանգի բնակչության կեսից պակաս: Որոշ գավառներում իրենք չնչին փոքրամասնություն են: Հայկական շրջանի՝ Ախալքալաքի և Բորչալուի գավառների առանձնացմամբ[112], վրացիների տոկոսը նահանգում էապես բարձրանում էր»[113]: Սակայն հարցի քննարկումներն ամենևին էլ անհարթ չեն ընթանում: 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Օզակոմի կողմից տվյալ հարցերի վերաբերյալ անցկացված խորհրդակցությունները ևս էական արդյունքներ չեն տալիս, իսկ հոկտեմբերի 14-15-ին տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ վերը առաջարկված փոփոխությունը անհնարին համարվեց, գտնելով, որ այն իբր խախտում է 1783 թ. Ռուսական կայսրության և Վրաստանի միջև կնքված պայմանագիրը:

[111] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 104, թ. 1-2:

[112] Տե՛ս Шахатунян Ав., Административный передел Закавказского края, стр. 174:

[113] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузиннские взаимоотношения в 1918-1920 годах, Тб., Тб. гос. ун-т, 2007: // http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

Հետաքրքիր է նշել, որ վրաց հանրահայտ պատմաենգ Գ. Մարխուլիայի վկայությամբ, իբր թե դեռ 1912 թ. Կիևում տեղի է ունեցել մի կոնֆերանս, որում Վրաստանի քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները «խոստացան հայերին տալ [Անդրկովկասի նախատեսվող վարչական բաժանմամբ] Ախալցխան, Ախալքալաքը և Բորչալուի գավառը մինչև Նավթլուղ»[114]:

Գ. Մարխուլիան այդ կապակցությամբ անդրադառնում է Ն. Ժորդանիայի մի ասույթի՝ նախօրոք վերապահում անելով, որ վերջինս դա ասել է, գտնվելով «գիտական սոցիալիզմի» տեսության ազդեցության տակ: Ն. Ժորդանիայի միտքը հետևյալն էր. «վրաց ժողովրդի ազգային ծրագիրը պետք է կառուցվի ոչ միայն վրացիների, այլև և մնացած երկու ժողովուրդների պահանջների հիման վրա [հայերի և ադրբեջանցիների – Վ. Վ.]»[115]:

Գ. Մարխուլիան գնահատելով այդ հանգամանքը, շեշտում է, որ վրացական պատմագիտությունը առ այսօր պատասխան չի տվել այդ ճչացող փաստին, չեն գնահատվել վրաց քաղաքական-մտավորական գործիչների մի մասի թույլ տված սխալները վրաց ժողովրդի ազգային շահերի պաշտպանության գործում:

Գ. Մարխուլիան գտնում է, որ հզոր ֆինանսական-քաղաքական համակարգի, ազգային կապիտալի և ազգային մտավորականության իսպառ բացակայությունը եղան այն բանի պատճառը, որ Վրաստանում չստեղծվեցին որևիցե լուրջ ազգային-քաղաքական կուսակցություններ և կազմակերպություններ, որոնք կարող էին կազմակերպել վրաց ժողովրդի ազգային շահերը ընդդեմ թշնամական հայ-ռուսական շրջապատի: Ըստ նրա այդ ամենը ծնեց դատարկություն, որը լցվեց հայկական հիպերտրոֆանացված (գերաճած - Վ. Վ.) նացիոնալիզմով, որը եռանդուն կոչ էր անում «քշել-վռնդել հարևան կուլտուրական ժողո-

[114] Վրաստանից կոնֆերանսին մասնակցում էին Ն. Ռամիշվիլին, Ս. Ջիբլաձեն (սոցիալ-դեմոկրատ), Օ. Բարաթաշվիլին, Ս. Փիրցխալավան (սոցիալիստ-ֆեդերալիստ): Գաբաշվили Р. А., «Что помню». Воспоминания. (В кн. Грузинская эмигрантская литература. Возвращение. Под общей ред. Г. Шарадзе, Тб., 1992, стр. 118: Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах, Тб., Тб. гос. ун-т, 2007: // Տե՛ս http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[115] Տե՛ս Жордания Н. Н., Национальный вопрос в Закавказье, Тб., 1917, стр. 13:

վուրդներին և նրանց տարածքում ստեղծել սեփական ազգային պետությունը»[116]:

Գ. Մարխուլիան վկայակոչելով Ն. Ժորդանիային, և իբր թե ընդհանրացնելով Ա. Շահխաթունյանի փորձը ևս, ոչ խորքային և համակողմանի դիտարկում է կատարում, փութով շտապելով նշել ի զարմանս վրաց հասարակայնության, որ ըստ նրա՝ Կովկասի վարչական բաժանման իր կողմից առաջադրվող թեզերում նա հանգել է այն փաստին, ըստ որի վրացիների 98 %-ն ապրում է Քութաիսի և Թիֆլիսի նահանգներում, ուր վրացիները կազմում են ողջ բնակչության 63 %-ը: Սակայն ըստ Ժորդանիայի, որին վկայակոչում է Մարխուլիան, ստացվում է այնպես, որ եթե իրենք այդ նահանգներից առանձնացնեն այն գավառները, որոնցում վրացիները կազմում են աննշան թիվ, ապա ըստ նրա կստացվի մի ազգային տարածք, ուր վրացիների թիվը կազմում է 90 %: Ըստ նրա, պետք է Թիֆլիսի նահանգից տարանջատվեին Ախալքալաքի, Ախալցխայի, Բորչալուի գավառները և Զաքաթալայի մարզը, ուր 437279 բնակչությունից վրացիները կազմում էին 27 930-ը; Քութաիսի նահանգից պետք է առանձնանար Արդվինի մարզը, իսկ Սուխումիի մարզից Գուդաուտի և Գումիստանի մասերը, որտեղ 96787 ապրող բնակչությունից վրացիները կազմում են 19485-ը, այդպիսի առանձնացումով իրենք կստանային վրացական ազգային տարածք, ուր ազգային փոքրամասնությունը գլխավորապես պետք է կենտրոնանար քաղաքներում՝ կազմելով աննշան տոկոս[117]:

Գ. Մարխուլիան վրաց քաղաքագետներին մեղադրում է նրանում, որ վերջիններս իբր թե ուշադրություն չդարձնելով հեռահար հայկական մանևրումներին, հայերին խոստացան Անդրկովկասը սահմանազատել ըստ ազգային-էթնիկական սկզբունքի: Սակայն բոլշևիկյան հեղաշրջումը անակնկալ արմատական հեղաբեկումներ է առաջացնում քաղաքական իրադրության մեջ, որի հետևանքով իբր թե հայերի «ոգևորիչ և հովանավոր» Ռուսաստանը խաղից դուրս է եկել, իսկ նոր՝ Սովետական Ռուսաստանը դեռևս բավարար չափով պատրաստ չէր մասնակցել համաշխարհային խաղարկությանը, որի արդյունքում էլ փոփոխության էին ենթարկվել վրաց քաղաքագետների մոտեցումները պատմական

[116] Տե՛ս Hovannisian R. G., The Republic of Armenia, vol. I, pp. 17-18:

[117] Տե՛ս Жордания Н. Н., Национальный вопрос в Закавказье, стр. 23-24:

տարածքների պատկանելիության խնդրում, իսկ հայերին ազգային այդ խնդիրների իրագործման համար նոր և հուսալի դաշնակից էր անհրաժեշտ: 1918 թ. կեսերին, ապրիլ-մայիսին Անդրկովկասյան տունը կանգնեց փլուզման եզրին, և ստեղծված բարդագույն ռազմաքաղաքական իրավիճակում, երբ վրացիները ակտիվորեն ուղիներ էին որոնում դեպի գերմանական պրոտեկտորատը, հայերը կանգնեցին անորոշության առաջ: Դա հրաշալի է զգացել և քաղաքական պահը իրատեսորեն գնահատել 1918-1921 թթ. Հյուսիսային Կովկասում Հայաստանի Հանրապետության հյուպատոս Հակոբ Սառիկյանը. «Առհասարակ վրացիք իրենց յերկչոտ, յերկդիմի քաղաքականությամբ մինչև այժմ ահագին վնասներ հասցրին թե՛ իրենց և թե՛ մանավանդ մեր ինքնապաշտպանության գործին: Յեվ յեթե այսօր թշնամին բախում է և՛ մեր, թե՛ նրանց դռները, դրա մեծագույն մեղքն ընկնում է այս տարամերժորեն անկայուն ժողովրդի, վարանոտ ժողովրդի քաղաքականության վրա…Առհասարակ, մենշևիկյան Վրաստանի դիրքը մեր նկատմամբ շատ թշնամական էր, կեղծավոր, նենգ ու զզվելի, ինչու՞ յեր այդպես՝ յես դժվարանում եմ բացատրել, թող բացատրեն դիպլոմատները»[118]:

Դաշնակցականները բախվեցին վրաց մենշևիկների նոր ռազմավարության դրսևորումների նորանոր քողածածկված երանգների հետ: Ալ. Խատիսյանը վրաց լիդերներից պահանջում էր քաղաքական ռազմավարության և կողմնորոշման ուղղվածության նոր տարբերակ. «եթե մենք խեղդվում ենք, ապա պետք է միասին խեղդվենք», ինչին Ն. Ժորդանիան հակադարձել էր. «Եթե հայերը խեղդվում են, ապա վրացիները պարտավոր չեն խեղդվել նրանց հետ միասին»[119]: Սեյմի ողջ գոյության ընթացքում Անդրկովկասը գնում էր դեպի փլուզում, այն իրողություն դարձավ և ճանապարհ բացվեց թուրքական ագրեսիայի ծավալման համար: Սառիկյանն այդ կապակցությամբ նկատում է. «Թյուրքերն առանց դիմադրության Ղարսին ու Բաթումին էին մոտենում: Կովկասյան վիրա-թաթարա-հայկական կառավարությունը ֆիկցիա յէր դառնում (առանց այն էլ մի բան չէր): Սարսափ էր պատել հայ ժողովրդին Կովկասում, նա քարացել, ինքնապաշտպանության կարողությունից

[118] Սառիկյան Հ., Հիշողություններ, էջ 354, 384:

[119] Տե՛ս Жордания Н. Н., Мое прошлое (Воспоминания), Тб., 1990, стр. 91: ՀԱԱ, Ֆ.Պ - 190/507, ց. 1, գ. 23, թ. 101;

ընկել էր: Վերջապես կատարվեց աղետներից գերագույնը. թյուրքերը մտան Ղարս և սկսեցին անարգել շարժվել՝ ճյուղավորվելով դեպի Յերևան ու Լոռի»[120]: Նշելով, որ հայերը չէին կարող ազդել ռազմաքաղաքական դրության վրա, Յովի. Քաջազնունին դիպուկ անդրադարձել է ավելի ու ավելի ծավալվող հայ-վրացա-թաթարական տարաձայնությունների մասին Սեյմում. «Սեյմի մէջ միշտ աճող ներքին անհամաձայնութիւնները այլ եւս չէր կարելի հաշտեցնել ոչ մի կօմպրոմիսով: Վրացիների տատանումները երկար չը տեւեցին. Գերմանօ-թուրքական թեւը յաղթանակեց եւ այդ յաղթանակի առաջին արտայայտութիւնը եղաւ այն, որ Ապրիլի 22–ին Սեյմը հանդիսաւորապէս յայտարարեց Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից»[121], և արդեն հաջորդող ժամանակահատվածում սկսեցին ընդերքային վիճակում ձևավորվել և աստիճանաբար իրողություն դառնալ վրաց քաղաքական-կուսակցական ուժերի հավակնությունները հայկական Ախալքալաքի և Լոռի-Բորչալուի նկատմամբ և հակադրվածությունը հայկական նախագծերի դեմ:

Այնպես որ վրաց քաղաքական ուժերը, բացի սոցիալ-դեմոկրատներից, որոնք համաձայն էին հայկական նախագծին, և հատկապես ազդեցիկ վրաց ազգային դեմոկրատները, միանշանակ Ախալքալաքն ու Լոռին համարում էին վրացական ժողովրդի և պետականության սեփականություն, հստակ պնդելով, որ այդ տարածքները պետք է մտնեն Վրաստանի սահմանների մեջ: Ավելացրած դրան՝ սահմանագծում առկա վրաց-ադրբեջանական համադաշնությունը, ինչը պարզորոշ նկատել է Ս. Վրացյանը. «թէ՛ վարչական սահմանագծման և թէ՛ այլ հարցերում, հենց սկզբից, նկատելի դարձավ թուրք (ադրբեջանական)-վրացական ընդհանուր հասկացութիւն ու գործակցութիւն…որը հայերի հետ առնչութիւն ունեցող բոլոր դէպքերում մնաց իրողութիւն, եւ այս հանգամանքը դարձավ անդրկովկասեան կեանքի կարեւոր գործոններից մեկը»[122]: Լոռի-Ախալքալաքի, Արդահանի և այլ տարածքների համար սուր մրցակցությունը փոթորկեց Անդրկովկասյան հանրապետությունների կյանքը, և հիմք հանդիսացավ ապագա ազգամիջյան ռազմաքաղաքական բախումների համար:

---

[120] Սառիկյան Հ., Հիշողություններ, էջ 352:

[121] Քաջազնունի Յովի., Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, էջ 28-29:

[122] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, տպ. «Մշակ», 1958, էջ 25:

Դա լավ է զգացել նաև Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ և հայտնի քաղաքական գործիչ Ալ. Խատիսյանը. «Ատրպէջանցիներն ու վրացիներն ալ շարք մը հայկական հողամասեր մտցուած են իրենց սահմաններուն մէջ: Հրապարակ կու գար ներքին վտանգաւոր հակամարտութիւն մը, որ յետոյ արտայայտուեցաւ հայ-վրացական եւ հայ-ատրպէջանեան ընդհարումներու միջոցով, որ այսօր ժամանակաւոր կերպով զսպուած է եւ վաղը հաւանաբար նորէն հրապարակ գայ այս կամ այն եղանակով»[123]:

Անդրկովկասյան Սեյմի գոյության ողջ ընթացքում վիճահարույց սահմանագծման հարցերը մնացին օրակարգում, սակայն այդ խնդրում փոփոխություններ չէին կատարվել: 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո վրաց սոցիալ-դեմոկրատների ռազմավարությունում արմատական հեղաբեկում կատարվեց, և 1918 թ. փետրվարի 15-ին Անդրկովկասյան Սեյմի նիստում Նոյ Ժորդանիան ուղղակի հայտարարեց. «Հենվելով հողային սկզբունքների վրա՝ մենք պետք է գոյություն ունեցող ազգերը սահմանաբաժանենք այնպես, որ միմյանց չխանգարեն, ընդհակառակը, որ նրանք կարողանան աջակցել միմյանց և միացյալ ու ընդհանուր ջանքերով դուրս բերեն մեր երկիրը քաղաքակրթության և ազատության ճանապարհի վրա»[124]:

Իրականում, Ն. Ժորդանիայի իրական նպատակադրումները քողարկում էր դեկլարատիվ հայտարարությունների քողի տակ, իսկ նպատակը Վրաստանի գերակա մեծապատիվ շահերն էին, վրացիների ձգտումը՝ դառնալ գերիշխող ազգ Անդրկովկասում, որի համար վրաց առաջնորդները անգամ գնացին թուրքերի հետ գաղտնի համաձայնության, որի արդյունքներից մեկը անկախության հռչակումն էր, որին հայերը թե՛ պատրաստ չէին, և թե՛ անակնկալի եկան, մեն մենակ մնալով, միաժամանակ կարողանալով վայելել գերմանական հովանավորչությունը, որը փոխարինեց թուրքականին: Վրացական ռազմաքաղաքական և դիվանագիտական շրջադարձը ցայտնոտի մեջ գցեց հայկական քաղաքական և զինվորական շրջաններին, իսկ Ախալքալաքի գավառի և Բորչալուի գավառի մի մասի, Լոռիի շուրջ հիմնախնդիրը դարձավ բախումնալիցք հայերի և վրացիների միջև, որն ավելի մեծ սրություն

[123] Խատիսեան Ալ., Նշվ. աշխ., էջ 100:

[124] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993, էջ 78-79:

ստացավ հատկապես 1917 թ. ընթացքում՝ Ազգային խորհուրդների ստեղծման շրջանում: Ռ. Տեր-Մինասյանը այս առումով գտնում է, որ վրացիները «կը հետապնդէին տնտեսական ու ռազմական յարմար դիրքերի գրավումը, կուզէին միացնել իրենց Բորչալուն ամբողջ, Ալեքսանդրապոլի շրջանի Փամբակ-Ղարաքիլիսէ գաւառը եւ Կարսից՝ Արդահանը, իսկ Ադրբեջանից՝ Զաքաթալա գաւառը»[125]:

Ցարական իշխանության տապալումից հետո իրավիճակի կտրուկ անցումներին հայերն անպատրաստ գտնվեցին, չնայած ժամանակավոր կառավարության կողմից հռչակած ժողովրդավարական սկզբունքների պայմաններում Անդրկովկասի ազգագրական սկզբունքներով ազգային կենսատարածքների բաժանման հարցը համարվում էր որպես բնական և միանգամայն արդարացի, մյուս կողմից էլ՝ Անդրկովկասի էթնիկական սահմանազծման հիմնախնդիրը հայ կուսակցական-քաղաքական շրջանների կողմից օրակարգային հարց չէր համարվում, քանզի ըստ Ռուբեն Տեր-Մինասյանի, բացի Հ. Յ. Դաշնակցությունից, հայ մյուս քաղաքական ազդեցիկ կուսակցությունները Արևելահայաստանի առումով որևիցե պահանջատիրության խնդիր չէին առաջադրում: Դաշնակցական Ռուբեն փաշայի պնդմամբ «Անդրկովկասում նրանց համար Հայաստան չկար եւ ոչ էլ առանձին հայկական պահանջներ…չէ՞ որ Անդրկովկասը ռուսական նահանգ է մնալու ի վերջոյ»[126]:

1917 թ. հոկտեմբերին ՀՅԴ նախաձեռնությամբ Թիֆլիսում հրավիրվեց հայկական ազգային կոնգրես, որի աշխատանքներին մասնակցեց 2 հազար պատգամավոր, և որի գլխավոր խնդիրը դարձավ ապագա հայկական պետության սահմանների որոշումը, հենվելով էթնիկական սկզբունքի վրա[127]: Ստեղծված իրավիճակում, երբ հայ քաղաքական շրջաններում ընդհանուր ռազմավարության խնդիրներում շփոթալից իրավիճակ էր իշխում, չկար միասնական և հստակ ռազմավարություն, վրաց-ադրբեջանական ազգայնական-քաղաքական շրջանները ոչ մի-

[125] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Է, էջ 180:

[126] Ռուբէն, Նշվ. աշխ., էջ 130:

[127] Բորչալուի գավառը առանձնացվել է որպես առանձին վարչական միավոր դեռ 1880 թ. Թիֆլիսի նահանգի կազմում, և որի մեջ մտան Բորչալուի ցածրավայրը, Լոռու լեռնային հատվածը և Թրիալեթին.- См.: Ерицов А. Ф., Экономический быт государственных крестьян Борчалинского уезда Тифлисской губернии, Тифлис, 1889, стр. 1:

այն ձգտում էին ներդաշնակացնել իրենց շահերն ընդդեմ հայերի, այլև մերժում էին կենսատարածքների էթնիկական սկզբունքով բաժանումը: Այս կապակցությամբ Ռ. Տեր-Մինասյանը դիպուկ է նկատել. «Շատերն էլ, հակայեղափոխական կը համարէին նման մտքերը, որովհետեւ Չխենկելին, վրացի մենշեւիկների հետ հակայեղափոխական կը համարէր սահմանների ճշտումը, սոցիալիստական արգումենտներով. Չէ՞ որ Հայաստանի մասերը մտած էին հին ձեւով Թիֆլիսի նահանգին մէջ: Իսկ Ջաֆարովները, միտք ունենալով Հայաստանի թուլացումը, Թուրքիոյ գալը արագացնելու համար կը պատճառաբանէին կա՛մ ռուսական միապետական, կա՛մ սոցիալիստական ժարգոններով»[128]:

Պատմական այդ պահին հայ քաղաքական գործիչները դժվարանում էին ստեղծված իրադրության մեջ կողմնորոշվել, ճիշտ կռահել պատմաքաղաքական զարգացումների հնարավոր ձեռնտու միտումները, գնահատումներ անել, արդյունքում՝ նրանք բավարարվում էին միայն փաստերը, կատարվածը արձանագրելով: Միևնույն ժամանակ, խիստ վախվորած գլխապտույտ շրջադարձերից, Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը դեմ հանդես եկավ Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու գործընթացների դեմ, և 1918 թ. ապրիլի 16-ին հրավիրված ներկայացուցչական ժողովում նման դիրքորոշման որդեգրման փաստին Ազգային խորհրդին նախագահ Ավ. Ահարոնյանը տվեց իր պարզաբանումը. «Անկախությունն ավելի աղետաբեր պետք է լինի մեզ համար, քան Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունումը: Թուրքիան պահանջ է դրել Անդրկովկասն անկախ հայտարարել և այդ պահանջը նա բանակցությունների նախապայման է համարել: Ընդունելով այդ պայմանը և Անդրկովկասն անկախ հայտարարելով ու մեր թիկունքում չունենալով մեծ Ռուսաստան, մեր պատգամավորներն ավելի խեղճ պիտի լինեն բանակցությունների ժամանակ: Տաճիկները մեր առաջ պիտի դնեն ավելի ծանր պայմաններ, իսկ երբ մեր պատվիրակությունը հայտարարի, որ անկարող է համաձայնել առաջարկված պայմաններին, Թուրքիան պատերազմ կհայտարարի: Ես չգիտեմ, թե Չխենկելին ու իր ընկերներն ի՞նչ են մտածում այդ մասին»[129]: Այս փակուղային մտածելակերպը և անուժության փաստացի վիճակը, Չխենկելու հաշտվողա-

[128] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Է, էջ 130-131:
[129] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 222, ց. 1, գ. 124, թ. 9:

կան և պարտվողական ռազմավարությունը ի վերջո, Անդրկովկասի կառավարության կողմից Բրեստի պայմանագրի ընդունումը սանձազերծեցին թուրքական առաջխաղացումը, որին հետևեց ռազմական մինիստր Ի.Զ. Օդիշելիձեի հայկական և վրացական կորպուսների հրամանատարներ Թ. Նազարբեկյանին և Գաբաևին ուղարկված ապրիլի 10-ի հրամանագիրը՝ դադարեցնել ռազմական գործողությունները[130], որի անմիջական ռազմաքաղաքական հետևանքը եղավ այն, որ ապրիլի 11-ին թուրքական զորամասերն առանց որևիցե լուրջ դիմադրության հանդիպելու կարողացան գրավել անմատչելի համարվող Կարսի ամրությունները, որը անկախ Անդրկովկասի կառավարության առաջին քայլն էր Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կատարման ճանապարհին, ինչը նաև նախկինում որդեգրած քաղաքական դիրքորոշումից հրաժարումն էր նոր իրադրության մեջ:

Իրադրությունից ակնթարթորեն օգտվեցին թուրքերը, որոնք Անդրկովկասին, և մասնավորապես հայերին պարտադրեցին իրենց դրակոնյան պահանջները, որին անդրադարձել է նաև Անդրկովկասում գերմանական ռազմաքաղաքական ներկայացուցչության ղեկավար գեներալ ֆոն Լոսսովը իր կառավարությանը հղված հեռագրում. «Թուրքերի պահանջներն անցնում են ամեն չափ ու սահման՝ անջատելու զուտ հայկական գավառները և Երևանի նահանգի մասերը, որոնք ճչացող կերպով խախտում են Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և նպատակ ունեն բնաջնջել հայերին Անդրկովկասում»[131]: Սակայն գերմանական գեներալի այսպիսի դիրքորոշումը զուտ ցուցադրական բնույթ ուներ, այն ամրապնդված չէր որևիցե ռազմաքաղաքական աջակցությամբ, և ընդամենը նպատակադրում ուներ թուրքերին պահել իրենց աշխարհաքաղաքական ազդեցության տիրույթում, և սակայն այդ պահին այն որևէ էական ազդեցություն չթողեց թուրքերի վրա, առավել ևս, որ գերմանական կառավարությունն էլ առանձնակի քայլեր չձեռնարկեց այդ ուղղությամբ, քանզի Գերմանիայի նպատակն էր օր առաջ տիրանալ Բաքվի նավթային մատույցներին, իսկ այդ ճանապարհին հայությունը արգելք էր, որի պայմաններում հայության համար առաջին հերթին ծայրահեղ կարևորություն ձեռք բերեց այդ չարաբաստիկ 12 հազար

[130] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 121, ց. 2, գ. 181, թ. 1:

[131] Տե՛ս Ահարոնյան Գերսամ, Մեծ երազուն ճամփուն վրա, Բէյրութ, 1964, էջ 105:

քառ. կիլոմետրի վրա իրապես ամրապնդվելը որպես փրկության հնարավոր քաղաքական հեռանկարային ելք, և դա Անդրկովկասում թուրք-թաթարական և առավել անցանկալի՝ քաղաքական ներքին լարիրինթներում շատ շրջանառվող թուրք-վրացական գաղտնի համաձայնության պայմաններում, ինչը դեռ պարզ էր դարձել անկախության հռչակման նախօրյակին: Դա հաստատում է Ռ. Հովհաննիսյանը. «Առ 1918 թ. մայիսը վրաց քաղաքական ղեկավարները եկան այն եզրակացության, որ իրենց ժողովրդի փրկությունը կախված է Գերմանիայի օգնությունից, մինչդեռ գերմանական կառավարությունը՝ անկարող զսպելու թուրքերին Հայաստանում, մի երկիր՝ առանց մատչելի հումքի, վճռեց գոնե Վրաստանը ընդգրկել Բեռլինի ազդեցության ոլորտը: Այդ ծրագրի իրագործումը պահանջում էր, որ վրացիները դուրս գան հուսահատորեն թփրտացող Անդրկովկասյան Հանրապետությունից և լքեն հայերին…ըստ որի Անդրկովկասյան Դաշնակցային Հանրապետության երեք բաղկացուցիչ ժողովուրդներից մեկը զոհ էր գնալու թուրքական ագրեսիային, սակայն հույս կար, որ մյուս երկուսը՝ վրացիները և մահմեդականները կկարողանային ստեղծել փոխադարձ բարեկամական հարաբերություններ: Նախատեսվում էր ուրեմն, որ հայերն այլևս դեր չէին խաղալու Անդրկովկասի քաղաքականության մեջ: Այսպիսով, վրացիները այլ ընտրություն չունեին, եթե ոչ անկախություն հռչակել և առանձին կառավարություն կազմել…զայրացած Հայոց Ազգային խորհուրդը …դատապարտեց վրացական ռազմավարությունը»[132]:

Այսպիսով, Վրաստանը վերականգնելով իր անկախությունը, Անդրկովկասի վարչաքաղաքական քարտեզի ձևավորման խնդրում որդեգրեց մի քաղաքականություն, որում ոչ մի զիջողականության դրսևորում անգամ չկար սահմանազծման խնդրում, և այն իրականացնող կառավարության գլուխ կանգնեց Նոյ Ռամիշվիլին, որը նաև Ներքին Գործերի նախարարն էր, իսկ Արտաքին Գործերի նախարարը՝ Ակակի Չխենկելին, Ռազմական նախարարը՝ Գրիգորի Գեորգաձեն, Ֆինանսների, առևտրի և արդյունաբերության նախարարը՝ Գեորգի Ժուրուլին, Լուսավորության նախարարը՝ Գեորգի Լասխիշվիլին, Հողագործության և աշխատանքի նախարարը՝ Նոյ Խոմերիկին, Արդարադատության նա-

[132] Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, էջ 31-32::

խարարը՝ Շալվա Ալեքսի-Մեսխիշվիլին, Հաղորդակցության ուղիների նախարարը՝ Իվանե Լորդկիպանիձեն:

Գ. Մարխուլիան կարծում է, որ ըստ դաշնակների, Վրաստանի անկախության հռչակումը նրա համար էր, որ մերձենան Թուրքիայի հետ, առանձին սեպարատ բանակցություններ վարել և զոհաբերել Հայաստանը թուրքերին[133]:

Հոկտեմբերյան հեղաշրջումը և Ռուսաստանում կատարված իշխանափոխությունը, և դրան զուգընթաց Անդրկովկասի ժողովուրդների կողմից անկախության հռչակագրերի ընդունումը առ ժամանակ դադարեցրին սահմանատարածքային բաժանումների վերաբերյալ խորհրդակցությունների և զանազան ժողովների հրավիրումը, սակայն կատարված աշխարհաքաղաքական տեղաշարժերի հետևանքով դրանց փոխարինելու եկան հայ-վրացական տարակարծությունների դրսևորման ավելի բարդ և լարված դրսևորումներ, որոնք աստիճանաբար երկու նոր ձևավորված պետություններին անկասելիորեն տանում էին դեպի ռազմական առճակատման: Անկախացման գործընթացներից հետո Հարավային Կովկասը ազգամիջյան բախումների թատերաբեմ դարձավ: Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև առաջացած սահմանավեճը հայտնվեց ազդեցիկ աշխարհաքաղաքական ուժերի ուշադրության կիզակետում, որոնք անկայունության և անջատողականության սերմեր, ռազմաքաղաքական քաոս սերմանեցին անդրկովկասյան տարածաշրջանում, ձգտելով այն հեռահար ռազմավարության տեսանկյունից կառավարելի և իրագործելի դարձնել: Հարավային Կովկասի ժողովուրդները ձգտում էին սեփական տնտեսաքաղաքական ապահովության հիմքերը ստեղծել: Իսկ դրանց արմատները գալիս էին խորքերից: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում Ռ. Հովհաննիսյանի դիտարկումը. «Տեղական ազգային-կրոնական համախմբումը թուլացնելու հաշվարկումով ցարական կառավարությունը գծում և վերագծում էր ներքին սահմանները, հաճախ մեկ նահանգում միավորելով տարբեր ժողովուրդներ և հակադիր տեղագրական կազմավորումներ: Այդպիսի քաղաքականության հետևանքը Անդրկովկասում,

[133] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах (с сокращениями), стр. 4-5, 9: Տե՛ս մանրամասն նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

որն արդեն իսկ ազգագրական խճապատկեր էր, եղավ ազգերի էլ ավելի մեծ խճողումը»[134]:

Իսկ կովկասագետներ Է. Անդերսենը, Գ. Էգգեն կամա ակամա ընդունելով, որ բախումնային իրավիճակը ստեղծվեց Վրաստանի կազմում գտնվող այսպես կոչված Ջավախեթի-Ջավախք հայաբնակ նահանգի շուրջ՝ որոշակի հանգամանքներում վերաճեց միջէթնիկական բախման՝ 1918 թ. վրաց-հայկական պատերազմին: Հենց այդ պատերազմի սադրիչ մեկնաբանությունը այսօր ևս պատճառ է դառնում ազգամիջյան լարվածության[135]:

Փոխհարաբերությունները երեք անկախ հանրապետությունների միջև երբեք էլ տանելի չեղան, դրանց մշտական ուղեկիցը դարձան ազգայնական սուր անհանդուրժողականությունը, և ազգամիջյան թշնամությունների շարժառիթները մշտապես անպակաս և անհաշտելի սահմանային վեճերն էին: Լեոն այս առթիվ տեղին նկատել է. «Վրաստանը դեռ Բաթումի պայմանագրից առաջ որոշել էր, թե իր հարավային սահմանը պիտի կազմի Սեւանա լիճը, եւ սոցիալիստ Ծերեթելին,… որ այժմ վրացական մի ողորմելի շովինիստ է, հենց այդպիսի մի առաջարկություն էր բերում հայերին, այն է՝ հանձնել վրացիներին Փամբակը, Դիլիջանը: Այնուհետև վրաց մենշեւիկները պինդ կառչեցին ցարական ժամանակի Թիֆլիսի նահանգին եւ պահանջում էին, որ այդ նահանգն իր բոլոր սահմաններով մտնի Վրաստանի մեջ, որ նշանակում էր հափշտակել նաեւ այնպիսի զուտ հայաբնակ շրջան, որպիսին Լոռին էր: Միեւնույն եղանակին հետեւում էր եւ Ադրբեջանը»[136]:

Հարկ է հաստատագրել այն հանգամանքը, որ ազգամիջյան բախման հիմքում ընկած սահմանավեճին վրացական և հայկական հասարակական-քաղաքական շրջանների կողմից ցուցաբերվում էր արմատապես իրարից տարբեր ռազմավարություն, երկու իրարամերժ տեսակետներ, որոնք հաշտեցման եզրեր չունեին: Եվ այսպես, հայկական

---

[134] Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, էջ 69-70:

[135] Տե՛ս Эндрью Андерсен, Георг Эгге, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: iberiana.wordpress.com/armenia-georgia / armeno-georgian-war-1918-20/:

[136] Լեո, Անցյալից, Եր., Շեմ հրատ., 2009, էջ 377:

կողմը երկու վիճարկման ենթակա տարածքները համարելով Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը, հենվում էր այդ գավառների բնակչության էթնիկական կազմի վրա: Հենց դրանից ելնելով, դեռ 1918 թ. (հավանաբար՝ հունիս-հուլիսին) այդ նախագծի ջատագովների և կողմնակիցների շարքում իր ուրույն տեղն էր գրավում գեներալ Գ. Գ. Ղորղանյանը, որը ելնելով հայերի գերակշռող վիճակից Բորչալուի գավառում և նրա մի շարք բնակավայրերում, գտնում էր, որ սահմանագծման հիմքում պետք է ընկած լինի էթնիկական սկզբունքը, և ավելացնում, որ այդ սկզբունքից կարելի է նահանջել բացառիկ դեպքերում, որ տեղագրության պայմաններով ինչպես Հայաստանի, այնպես էլ հարևան պետությունների համար բացարձակապես անհրաժեշտություն է կատարել դա[137]:

Սակայն 1918 թ. պաշտոնական Թիֆլիսի պնդմամբ, հայկական կողմից մատնանշված պայմանավորվածությունները ըստ էության այդպիսին չհանդիսացան ոչ որպես իրապես պայմանավորվածություններ, այլ ավելի շուտ ընդամենը կառուցողական նախաձեռնողականության դրսևորում, որը վերաբերում էին միասնական ֆեդերատիվ պետության շրջանակներում սահմանազատմանը (ռեֆորմացված Ռուսաստանյան կայսրության)՝ բացառապես տնտեսական գործունեության և վարչական ղեկավարման հարմարությունից ելնելով: Նման հայտարարությունները, ըստ վրացական կառավարության ներկայացուցիչների պնդման, արվել էին ավելի վաղ՝ մինչև Հայաստանի և Վրաստանի պետական անկախության հռչակումը և ըստ նրանց՝ չէին կարող ընդունելի լինել պետական սահմանների որոշման համար[138]: Այսպիսով, 1918 թ. աշնանը Վրաստանի և Հայաստանի միջև բացակայում էր համաձայնությունը վիճելի տարածքների ապագա պատկանելիության առումով, իր մեջ ներառնելով երկու գավառներ՝ Բորչալուի և Ախալքալաքի:

Եվ իրականում, հայ-վրացական պատերազմական առճակատման նախօրեին այդ երկու գավառների բնակչության զգալի մասը կազմում էին էթնիկ հայերը, իսկ դրանց վրաց բնակչությունը՝ ընդամենը աննշան մասը, որի հետ համակարծիք են անգամ մեզ հայտնի կովկասագիտության գծով պատմակեղծարարներ Է. Անդերսենը և Գ. Էգգեն, դա համա-

[137] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 441, ց. 1, գ. 42, թ. 7-8 հակ.:

[138] Տե՛ս Из истории армяно-грузинских отноошений. 1918 год, стр. 63-64:

րելով անժխտելի ճշմարտություն[139], ըստ այդմ փաստելով, որ 1897 թ. փետրվարի 9-ի մարդահամարի տվյալներով Բորչալուի գավառի ողջ բնակչության 32,1 տոկոսը կազմում էին հայերը, 31,3 տոկոսը՝ թաթարները [մինչև XX դ. առաջին երկու տասնամյակները ներկայիս ադրբեջանցիներին նախորդած բնակչությանը տալիս էին հավաքական «թաթարներ» անվանումը - Վ. Վ.], 3,6 տոկոսը՝ վրացիները, իսկ Ախալքալաքի գավառի բնակչության ընդհանուր թվի 71,1 տոկոսը կազմում էին հայերը, 10,2 տոկոսը՝ թաթարները, 6,2 տոկոսը՝ վրացիները և այլն[140]: Ակնհայտորեն այս հեղինակների իսկ բերած տվյալներով Լոռում հայերը բացարձակորեն գերակշռել են, իսկ Բորչալուում կազմել են բնակչության ընդհանուր թվի մեկ երրորդից ավելին, հանդիսանալով առավել մեծաքանակ էթնիկական խումբը գավառում:

Հարկ է առանձնահատուկ ձևով նշել, որ առհասարակ այս արևմտյան հեղինակների՝ Է. Անդերսենի և Գ. Էգգեի մոտ իշխում է յուրահատուկ սեփական քաղաքական շահերի իրականացմանը միտված տեսակետ, ըստ որի նրանք կապված 1918 թ. վրաց-հայկական պատերազմի հետ, դիտարկելով Ախալքալաքի և Բորչալուի գավառների պետական պատկանելության խնդիրը հնագույն ժամանակներից սկսած, ընդ որում մերկապարանոց, առանց փաստարկման լուրջ հիմքերի «վկայակոչելով» հնագիտական պեղումների արդյունքները և հնագույն հեղինակներին՝ Հերոդոտին, Քսենոֆոնին, Ստրաբոնին և ուրիշներին, պնդում են, թե իբր դա իրենց թույլ է տալիս հավատալ, որ առնվազն մ.թ. ա. V դարից սկսած նշված գրեթե ողջ անվանյալ տարածքը մտել է իվերների և մոսխերի վաղ պետական կազմավորումների, կամ էլ այսպես կոչված Իբերիա թագավորության կազմի մեջ, որը երկար է տևել, սակայն երբեմն կարճ ժամանակով ընդմիջարկվել է, երբ այդ տարածքների մի մասը, և մասնավորապես ներկայիս հարավարևելյան Վրաստանի զգալի մասը, այդ թվում վրաց-հայկական բախման հանգուցակետ հանդիսացած երկու գավառները, գրեթե երեք հարյուր տարով ան-

[139] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18 R. html:

[140] Տե՛ս նույն տեղում:

ցել են Հայաստանի կազմի մեջ կամ տարբեր պատմական ժամանակահատվածներում Հայաստանի նկատմամբ վերահսկող Հռոմեական կայսրության կամ Պարթևստանի տիրապետության տակ[141]: Ըստ Է. Անդերսենի և Գ. Էգգեի, այդպես շարունակվել է հետագա դարերում՝ մինչև ոչ մեծ թագավորությունների տեսքով ինչպես վրացական, այնպես էլ հայկական պետականությունների և իշխանապետությունների առաջացումը՝ ընդհուպ մինչև X դարը, մինչև Լոռի-Տաշիրի թագավորության առաջացումը և այլն[142]: Այդ կապակցությամբ վերոնշյալ հեղինակները ևս մեկ հավելում են անում իրենց գիտական «պրպտումներում», ասելով, թե իբր Լոռի-Տաշիրի թագավորությունը, որի սահմանները, ըստ նրանց պնդման, իրենց մեջ ներառում էին գրեթե ողջ ապագա Բուրչալուի գավառը, ինչպես նաև դարձյալ «ապագա» Ալեքսանդրապոլի և Ղազախի գավառները, հայկական պատմաբանների մեծ մասի կողմից ընդունված է համարել հայկական, կարծես թե դա այդպես չէ, իսկ ըստ վրացռուսական հեղինակների՝ իբր թե հայ-վրացական: Այնուհետև գրում են, որ իբր թե «Վրաստանի ոսկե դարում»՝ [XII դ. առաջին տասնամյակներից սկսած մինչև XIII դ. առաջին քառորդը] երկու այդ գավառների տարածքները Հարավային Կովկասի մեծ մասի հետ միասին մտել են կենտրոնացված վրացական միապետության կազմի մեջ, այդուհանդերձ դժկամությամբ ավելացնելով, որ Տաշիրի մարզը, ներառյալ ապագա Բորչալուի գավառի մեծ մասը (նույնացվում է Ծալկայի շրջանի հետ) գտնվում էին հյուսիսային Հայաստանում վրաց թագավորների ժառանգական փոխարքաների [կուսակալների] Զաքարյանների իշխանության տակ, որը Վրաստանի կազմում առանձին վարչական միավոր էր, ինչը ըստ հեղինակների չի կարելի ասել Ջավախեթի-Ախալքալաքի գավառի մասին, որն իբր թե Վրաստանի թագավորապատկան հողերի կազմում էր[143]: Իրենց ասելիքի վերջնամասային եզրահանգման մեջ Է. Անդերսենը և Գ. Էգգեն կարծում են, որ այդպես շարունակվել է մինչև Ռուսաստանյան կայսրության կողմից կլանվելը, որի ընթացքում իբր թե նշված գավառները գրեթե երբեք «չեն լքել» Վրաստանի սահմանները՝ մինչև XIX դ. երկրորդ կեսին Թիֆլիսի նահանգի կազմի մեջ ընդգրկվե-

[141] Տե՛ս նույն տեղում:
[142] Տե՛ս նույն տեղում:
[143] Տե՛ս նույն տեղում:

լը: Հենվելով իրենց կողմից իսկ բերված կամածին ընտրված «պատմափաստերի» վրա, որոնք իբր հայտնի են եղել և վրացական լիդերներին, և վրացիների մեծամասնությանը, Է. Անդերսենը և Գ. Էգգեն այդ ամենը տեղադրելով բրիտանական կայսրության շահերի հետ նրբորեն շաղկապվող վրացամետ կեղծ, ոչ գիտական, իսկ ավելի շատ գաղափարական վարկածի շրջանակներում, իրենց այսպես կոչված «հանրագումարային» հետևության մեջ ընդգծում են, որ Վրաստանի ղեկավարությունը Բորչալուի և Ախալքալաքի գավառները համարում են Վրաստանի անքակտելի և անվիճելի մասերը[144], բնականաբար լռելյայն համերաշխվելով դրա հետ[145]:

Հարկ է նշել, որ Է. Անդերսենը և Գ. Էգգեն փորձելով օբյեկտիվ դիտորդի դեր խաղալ հայ-վրացական բախման հիմնախնդրում, պնդում են այն մասին, որ վաղուց ինչպես հայերը, այնպես էլ վրացիները համատեղ ապրել են Բորչալուի գավառում, որի մասին վկայակոչում են որպես օրինակ բերված ճարտարապետության և մշակույթի հուշարձանները, մասնավորապես նշելով պատմական Լոռու հարավային մասի հուշարձանախումբը՝ հայկական եկեղեցիները Օձունում, Սանահինում և Հաղպատում, սակայն որպես վրացական մշակույթի պատկանելիության հուշարձաններ համարելով այսպես կոչված «վրացական եկեղեցիները» Ախթալայում և Ակոռիում՝ բոլորն էլ իբր թե միջնադարյան ժամանակաշրջանի: Այնուհետև վերոնշյալ հեղինակները պնդում են, թե իբր Օսմանյան Թուրքիայի և Իրանի մահմեդական պետությունների նվաճողական քաղաքականության հետևանքով Բորչալու-Փամբակի բնակչության էթնիկական կազմը բնաջնջման կամ տարագրման հետևանքով որակական փոփոխություններ կրեց, ի հավելումն դրան՝ այդ տարածքները բնակեցվեցին թյուրքական քոչվոր ցեղերով, որոնք առ այսօր ապրում են այդ տարածքներում: Իսկ Ռուսաստանյան կայսրության կողմից կլանվելուց կամ բռնակցվելուց հետո Բորչալուի գավառի

[144] Տե՛ս նույն տեղում:

[145] Է. Անդերսենը և Գ. Էգգեն չեն մոռանում որպես հետգրություն ավելացնել, որ իրենց այդ փաստարկումը կասկածի չի ենթարկվում հարցի առավել հեղինակավոր, գիտակ հետազոտողների կողմից, մասնավորապես պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանի կողմից [տե՛ս Hovannisian R., The Republic of Armenia. Los Angeles, 1982, vol. I, p. 72, Տե՛ս նաև Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. հատոր I. Առաջին տարին, 1918-1919, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2005, էջ 76-77:

էթնիկական նկարագիրը մասնակի փոփոխության ենթարկվեց, համալրվելով Թուրքիայից, և մասնավորապես Էրզրումի նահանգից ներգաղթած հայերով, ինչպես նաև գաղութաբնակներով կենտրոնական Ռուսաստանից և Գերմանիայից[146]:

1918 թվականի դեկտեմբերի 13-ին բռնկվում է վրաց-հայկական պատերազմը, որը նորաստեղծ Հայաստանի Հանրապետության համար ծանր փորձություն է դառնում: Անդրկովկասում վարչատարածքային հարցը դարձել էր ազգամիջյան փոխհարաբերություններում լարվածության պահպանման գլխավոր գործոն և կռվան: Անդրկովկասյան ժողովուրդների՝ հայերի, վրացիների և աղրբեջանցիների (թաթարներ, ազերիներ) միջև գոյություն ունեցող հողային-տարածքային սահմանավեճերն ու կռիվները գլխավորապես առնչվում էին Հայաստանի պատմական գավառների՝ Արցախի, Զանգեզուրի, Ախալքալաքի և Բորչալուի, ինչպես նաև Լոռի-Փամբակի տարածքների պատկանելիության վիճարկման հետ: «…վիճելի կը մնային Ղարաբաղն ու Զանգեզուրը, որոնց վրա յաւակնութիւն ուներ Ազրբեյջանը, Լոռին, Ախալքալաքը, եւ Կարսի շրջանի որոշ մասերը, որոնք կը պահանջուէին Վրաստանի կողմէ, եւ վերջապէս Օլթին ու Նախիջևանը, որոնք թուրքերու աշխարհակալութեան առարկա էին»[147], - գրում է Հայաստանի Առաջին Հանրապետության երկրորդ վարչապետ Ալ. Խատիսյանը: Վերջինս ավելացնում է նաև, որ որոշ փորձեր արվեցին հարթելու վեճերի պատճառով առաջ եկած դժվարությունները: «Այդ վէճերու առթիւ գումարուեցան շարք մը խորհրդաժողովներ, - շարունակում է իր միտքը Ալ. Խատիսյանը, - որոնք համաձայնութեան չյանգեցան եւ որոնց կը հետեւէին նոր ապստամբութիւններ եւ պատերազմական գործողութիւններ, երբ կը պարզուէր, որ ապստամբներու ետեւը կանգնած էին համապատասխան կառավարութիւնները»[148]:

---

[146] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R. html:

[147] Տե՛ս Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 154:

[148] Տե՛ս նույն տեղում, էջ 141:

Դրա հետ մեկտեղ հայտնի էր, որ Արցախ-Զանգեզուրի գավառները Ռուսաստանյան կայսրության ժամանակաշրջանում մտցված էին հիմնականում մուսուլմանական բնակչություն ունեցող Ելիզավետպոլի, իսկ Ախալքալաքի ու Բորչալուի գավառները՝ Թիֆլիսի նահանգի կազմում:

Անդրկովկասի վերը նշված տարածքներում հայերը որոշակի կայուն տեսակարար կշիռ ունեին: Ժողովրդագրական նույնիսկ աննպաստ իրավիճակներում հայերը զգալի տոկոս էին կազմում և՛ Արցախում, և՛ Ախալքալաքի ու Բորչալուի գավառներում: Ա. Շահխաթունյանի տվյալներով, դեռ 1897 թ. հայերը Ախալքալաքի գավառում կազմում էին մեծամասնություն, 72703 հոգուց հայեր էին 50208-ը, իսկ արդեն 1916 թ. տվյալներով 108500 բնակիչներից հայեր էին 84275-ը կամ 77,6 %-ը, ընդ որում երկրորդ տեղը զբաղեցնում էին մուսուլմանները, երրորդ տեղը՝ ռուս բողոքականները և ընդամենը չորրորդը՝ վրացիները[149]: Դա հաստատվում է նաև 1919 թվականին վերաբերող ֆրանսերեն լեզվով հայտնի մի տեղեկագրի տվյալներով. ուր նշված է, որ 1919 թվականին Ախալքալաքի գավառում, որի տարածքն ըստ այդ տեղեկագրի կազմում էր 2568 քառակուսի կիլոմետր, բնակվում է 82775 հայ: Ըստ այդ աղբյուրի, վրացիների թիվը Ախալքալաքի գավառում հասնում էր 10306-ի, մահմեդականներինը՝ 6338-ի, մնացյալ ազգությունների թիվը՝ 7542-ի[150]: Իսկ ինչ վերաբերում է Բորչալուի գավառին ամբողջությամբ վերցրած, ապա հայերն այնտեղ կազմում էին հարաբերական մեծամասնություն. եթե վերցնենք հարավային և ծայրահեղ արևմտյան մասերը, ապա ըստ Ա. Շահխաթունյանի՝ հայերը 1916 թ. կազմում էին ոչ պակաս քան 75 %, 169351 բնակչից 63702-ը հայեր էին[151]: Իսկ ըստ վերը նշված ֆրանսերեն լեզվով հրապարակված տեղեկագրի, 3200 քառակուսի կիլոմետր տարածք զբաղեցնող Բորչալուի գավառում 1919 թ. ապրում էին 64 հազար հայեր, 7600 թաթարներ, թուրքմեններ և այլ ազգություններ, ինչպես նաև ընդամենը 1150 վրացի[152]: Կան նաև այլ կարգի տվյալներ, որոնք

[149] Տե՛ս Шахатунян Ав., Административный переделъ Закавказского края, стр. 71-72: ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 104, թ. 1-40:

[150] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 452, թ. 3:

[151] Տե՛ս Шахатунян Ав., Административный переделъ Закавказского края, стр. 71-72:

[152] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 452, թ. 2:

լրացնում, ամբողջացնում են այս պատկերը՝ հարակից հայաբնակ և հայկական որոշ շրջանների հետ մեկտեղ: Այսպես, Հայաստանի և Ադրբեջանի սահմանների վերաբերյալ 1919 թ. ապրիլի 22-ով թվագրվող մի պատմաքաղաքական տեղեկագրում նշվում է, որ «...վիճելի Բորչալուի և Փամբակի շրջանների սահմաններում ապրում են 105 հազար հայ, 15 հազար մուսուլման, 420 վրացի և 13 հազար այլ ազգություններ, ուրիշ խոսքով՝ 72 % հայ, իսկ վրացի՝ ընդամենը 0,32 %»: Այդ նույն տեղեկագրի համաձայն, Ախալքալաքի շրջանում՝ ներառյալ Ծալկան, կար 89-90 հազար հայ, 8 հազար մուսուլման, 7 հազար վրացի և 17 հազար այլազգի, այսինքն՝ 73,5 % հայ, իսկ վրացի՝ 5,7 %[153]:

1919 թ. մի այլ աղբյուրի համաձայն, վրացիների և հայերի միջև վիճելի համարվող Ախալքալաքի գավառում, Ծալկայով հանդերձ, ինչպես նաև Բորչալուի գավառում (Խրամ գետից հարավ) և Ղազախի գավառի հարավային մասում կար 260 հազար հայ, ընդամենը 7 հազար վրացի և 30 հազար այլազգիներ[154]: Ուշագրավ է այս առումով նշել նաև 1919 թ. վրաց-հայկական խորհրդաժողովում Ղորղանովի (Ղորղանյան, Կորգանով) այն դիտողության մասին, ըստ որի վիճելի տարածքում վրացիները կազմում են ընդամենը 500 մարդ, ունենալով միայն երկու գյուղ՝ Սիոնը և Ցագերը, այդ երկու գյուղերը գտնվում էին վրացական զորքերի կողմից զբաղեցրած գծից հյուսիս, և գումարած դրանց երեք թաթարական գյուղեր՝ Կարախսը, Իլիմազլուն և Կիշլագը[155]: Սակայն «վեհապետական» Վրաստանի ախորժակը շատ մեծ էր: Միանգամայն իրավացի է Հր. Ավետիսյանը, որն իր ուշագրավ «Հայկական հարցը 1918 թվականին» մենագրության մեջ շեշտում է, որ թեև վրացիները կազմում էին Անդրկովկասի բնիկ բնակչության 28 %-ը, սակայն հավակնություններ էին ներկայացնում երկրամասի տարածքի 33 %-ի նկատմամբ (61 հազար քառակուսի կիլոմետր), 43 % կազմող կովկասյան մահմեդականները՝ տարածքի 38 %-ին (70 հազար քառակուսի կիլոմետր), իսկ բնիկ բնակչության 29 %-ը կազմող հայերի 54,5 հազար քառակուսի կիլոմետր տարածքի նկատմամբ պահանջը երկրամասի տարածքի 29 %-ն

[153] Տե՛ս նույն տեղում, գ. 191, թ. 15, գ. 104, թ. 5:

[154] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 31: Տե՛ս նաև Армяно-грузинский вооружённый конфликтъ. На основании фактических данныхъ и подлинныхъ документов, стр. 2:

[155] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 104, թ. 70:

էր ընդամենը կազմում: Իրավացիորեն Հր. Ավետիսյանը արձանագրում է այն փաստը, որ «…սակայն հայկական գավառները միմյանց մեջ և Թուրքիայի հետ բաժանել ցանկացող վրացական մենշևիկներն ու մուսավաթը ձգտում էին հասնել Հայաստանի հաշվին նոր տարածքների ձեռքբերման: Վրացիները ունեին հավակնություն Ղազախի ու Բորչալուի, Ալեքսանդրապոլի շրջանի մի մասի՝ Փամբակի նկատմամբ, որտեղ ոչ մի վրացի չկար, հակառակը՝ հայերի թիվն այնտեղ հասնում էր 171 հազարի: Նույնը և թուրքերի կողմից գրավված Ախալքալաքի նկատմամբ, որտեղ բնակվում էր 90 հազար հայ և ընդամենը 7 հազար վրացի: Այսպիսով, վրացիների հավակնությունները հայկական հողերի նկատմամբ, ներառյալ Ախալքալաքը, միտում էին 13 հազար քառակուսի կիլոմետր տարածքի, 261 հազար հայ և 7 հազար վրացի բնակչությամբ: Վրաստանի պահանջած տարածքը կազմում էր 75 հազար քառակուսի կիլոմետր, 2 միլիոն 951 հազար բնակչությամբ, որոնցից 1 միլիոն 607 հազարը՝ վրացի, 535 հազարը՝ հայ, 300 հազարը՝ մահմեդական, 510 հազարը՝ ռուսներ և այլազգիներ»[156]:

Այս առումով տեղին է նշել, որ ըստ էության վրացիների և կովկասյան մահմեդականների նպատակն էր, ինչպես իրավացիորեն նկատել է Ավստրիական Հանրապետության զինվորական ներկայացուցիչ գեներալ բարոն Գևորգ Ֆրանկենշտայնը իրենց կողքին ունենալ Հայաստան «առանց Լոռու ու Ղազախի, առանց Արարատյան դաշտավայրի, առանց Շիրակի և Ախալքալաքի, առանց Ղարաբաղի ու Զանգեզուրի, առանց գավառների, որոնք դարեր շարունակ Հայաստանին են պատկանել»[157]:

Հետաքրքիր է նշել, որ անգամ Վեհիբ փաշան անդրադառնալով Հայաստանի և Վրաստանի միջև ձևավորված սահմանային-տարածքային խնդիրներին, 1918 թ. հունիսի 24-ին, փաստելով Գերմանիայի կողմից Վրաստանին ցուցաբերվող աջակցության մասին, ինչպես նաև այն մասին, որ վրացիները Հայաստանից ուզում են խլել այնպիսի հողամասեր, որոնցում ոչ մի վրացի չի ապրում, ըստ երևույթին ոչ վատ տիրապետելով նյութին, դիպուկ նկատում է, որ վրացական հավակնությունները «հիմնվում են անցյալ դարում մինչև ռուսաց տիրապետությունը

[156] Տե՛ս Ավետիսյան Հ., Հայկական Հարցը 1918 թվականին, էջ 255: Տե՛ս նաև Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատոր Ե, էջ 98:

[157] Տե՛ս Ավետիսյան Հ., Նշվ. աշխ., էջ 256:

եղած սահմանագծի վրա», նաև ավելացնելով, որ «բայց դա ռեալ հիմք չէ»[158]:

Վրացիների ձգտման մասին, իրենց համար Անդրկովկասում ապահովել արտոնյալ դիրքեր, ընդգծում է նաև Ռ. Տեր-Մինասյանը. «Վրացիք նստած էին միակ ճանապարհի վրայ, որ Հայաստանը կը կապէր արտաքին աշխարհին: Վրացիների անբարեացակամութիւնը կը նշանակէր՝ չստանալ ոչ մի նիւթ դրսի աշխարհից, այսինքն՝ մեռցնել 30.000-40.000 որբեր, 200000-ից աւելի գաղթականներ, մեր զօրքը անպարէն թողնել…»[159]:

Այդ միտքն է ընդգծում նաև Լեոն. «Երկու հազար տարվա պատմությունը տանում հասցնում է այն եզրակացության, որ առանց Լոռու երկար դարաշրջաններում չէր կարելի երևակայել Հայաստան: Ներկայումս այս բանն ավելի ևս աներևակայելի պիտի համարել, քանի որ կտրել Լոռին Հայաստանի մարմնից, կնշանակե հոշոտել նրա ամբողջ անցյալը և նրա կուլտուրական գանձերը՝ դարերի և հարյուրավոր սերունդների մեծագործությունը թալանել տալ»[160]:

Հայ-վրացական հարաբերությունների առնչությամբ տարբեր վավերագրերի, փաստաթղթերի և գիտական առկա գրականության ուսումնասիրությունը հստակ արձանագրում է այն փաստը, որ մինչև Անդրկովկասյան Հանրապետությունների անկախության հռչակագիրը, վիճելի հարցերում քաղաքական կուսակցությունները պաշտպանել են հետևյալ դիրքորոշումը. «Սոցիալ-դեմոկրատները՝ մենշևիկները հայտարարել են. «Ինքնակառավարման տերիտորիալ սահմանները պետք է որոշվեն ըստ այդ շրջաններում մեկ կամ այլ ազգերի բնակչության տոկոսային հարաբերությամբ՝ միաժամանակ հաշվի առնելով նաև այդ ազգերի տնտեսական ու մշակութային պայմանները: Իսկ երբ սահմանները որոշվեն, ապա այն պետք է հաստատվի այդ շրջաններում բնակվող ժողովուրդների հանրաքվեի միջոցով»:

Վրացական ֆեդերալ-սոցիալիստական հեղափոխական կուսակցության կոնֆերանսը վրացական սահմանների առնչությամբ որոշեց. Վրաստանի տարածքը պետք է կազմված լինի հետևյալ շրջաններից՝

[158] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 222, ց. 1, գ. 119, թ. 10:

[159] Ռուբէն, Հայ յեղափոխականի հիշատակը մը, հատոր Է, էջ 242:

[160] Լեո, Սահմանավեճեր, էջ 24:

Թիֆլիսի, Գորիի, Դուշեթի, Թելավի, Սղնախի, Թրիոնեթի, Բորչալուի, Ախալցխայի, Ախալքալաքի, Քութաիսիի, Բաթումիի, Սուխումի, եթե այդ շրջաններում անցկացված հանրաքվեները պետք է համաձայնություն տան նմանօրինակ որոշմանը»[161]:

Դեռևս 1918 թ. հունիսին տեղի ունեցած Անդրկվկասյան սոցիալ-դեմոկրատների, կամ ավելի ճշգրիտ՝ վրաց սոցիալ-դեմոկրատական մենշևիկյան կուսակցության համագումարը քննության առնելով ազգային ավտոնոմիայի՝ ինքնավարության հիմնախնդիրը, հանգեց որոշման, ըստ որի հայտնի տարածքների ինքնավարության սահմանները որոշվում են ըստ այս կամ այն ազգի իրական բնակության, ըստ որում պիտի նկատի ունենան նաև տնտեսական և կենցաղային պայմանները: Ազգային սահմանները փոփոխության ենթարկելիս, պետք է գործադրվի այն շրջանների նկատմամբ, որոնք վիճարկելի սահմաններ են համարվում[162]:

Վիճելի տարածքային հարցերը նման ժողովրդավարական սկզբունքով լուծելու խնդրում հայկական և վրացական քաղաքական-հասարակական հոսանքների միջև մինչ 1918 թ. դեկտեմբերյան ռազմական բախումն իշխում էր «կատարյալ համաձայնություն և փոխըմբռնում»: Հարկ է սակայն ընդգծել, որ լոկ արտաքուստ, քանզի քաղաքականության մեջ ընդունված է մի բան ասել, այլ բան անել: Դա իրեն երկար սպասեցնել չտվեց: 1918 թ. հուլիս-սեպտեմբերին վրացական «Սաքարթվելո» (N 139) թերթը բանավիճելով հպատակության հարցի շուրջը, անհաշտելի կերպով պնդում էր, որ հայերը դաշնակցականների և նացիոնալիստների ազդեցության տակ ձգտում են Վրաստանի տարածքում ստեղծել Հայաստան[163]: Իրավիճակի և ազգային-տարածքային հարցերի նկատմամբ դիրքորոշման այդ տրանսֆորմացիան (փոփոխությունը) ճիշտ է նկատել «Ղարաբաղի կոնֆլիկտ» գրքի հեղինակ Վ. Թունյանը, ասելով, որ երեք անդրկովկասյան ժողովուրդների դիրքորոշումները մինչև անկախության ձեռքբերումը՝ 1918 թ. մայիսին իրենց կոն-

[161] Տե՛ս Դրո. Կենսագրական: Հուշեր: Վկայություններ, Եր.: «Ազատ խոսք», 1991, էջ 112-113: Տե՛ս նաև Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք», (ամսագիր)., 1928. N° 6, ապրիլ, էջ 88-90:

[162] Տե՛ս «Борьба», Тифлис, 1 июня, 1917 г., N 89:

[163] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 7, թ. 222բ:

տուրները, ակսինքն՝ որոշակիացած ուրվագծերը ստացան՝ ձևափոխության ենթարկվելով հետագայում: Վրաստանը և Ադրբեջանը որպես պետական սահմանների հիմք վերցրեցին վարչական-նահանգային բաժանումը, մերժելով էթնիկական գործոնը, ձգտելով չթույլատրել Հայաստանի Հանրապետության ամրապնդումը: Եթե հայկական կողմը, ելնելով Կովկասյան տան կամ էլ Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծման շահերից, ինչ-որ տեղ գնում էր զիջումների ազգային օրգանիզմի ձևավորման խնդրում, համաձայնվելով առանձին տարածքների ժամանակավոր առանձնացմանը (այսինքն՝ փաստորեն օտարմանը - Վ. Վ.), ապա վրացական և մուսուլմանական կողմերը, գտնվելով, ինչպես միանգամայն ճիշտ նկատում է Վ. Թունյանը, գաղտնի դաշինքում, օգտագործելով բարենպաստ դրությունը, գրավեցին անզիջում դիրք ազգային-պետական շինարարությունում[164]: Վրաստանը կանգնած էր Ռուսաստանյան կայսրության կազմում գտնվող նախկին նահանգային սահմանների անբաժանելիության տեսակետի վրա, իսկ Հայաստանը պաշտպանում էր էթնիկական գործոնի հաշվառումը[165]: Այնպես, որ կարելի է համաձայնվել Վ. Թունյանի նաև այն տեսակետի հետ, որ ըստ էության տարածաշրջանի բոլոր երեք ժողովուրդների ներկայացուցիչները նահանգների սահմանների վարչական փոփոխությունների մասին ոչ մի համաձայնության չեն եկել ինչպես մինչև 1917 թվականը, այնպես էլ 1918 թվականին[166], որն էլ ապագայի աղետալի իրադարձություններին տանող պատճառներից մեկը հանդիսացավ: Փոխանակ զբաղվելու լուրջ քաղաքականությամբ, իրապես մոբիլիզացնելով սեփական առկա ռեսուրսները և ամրապնդվելու հայոց միջնաբերդերում, հույս չդնելով կովկասյան տան հարևանների խաբուսիկ և դեմագոգիկ խոստումների վրա, երևանյան քաղաքականագետները ընկան քաղաքական սնամեջ բանավեճերի ու ոչ լուրջ դիվանագիտական խարդավանքների ոլորտը՝ տանուլ տալով մեծ ռազմավարության բնագավառում:

Հարկ է ասել, որ վերջին հանգամանքը լավ են ըմբռնել որոշ խորաթափանց հայ մտավորականներ: Ապրելով հայ-վրացական փոխհարաբերությունների կիզակետում, լայնորեն շփվելով վրաց և հայ ժողո-

[164] Տե՛ս Тунян В. Г., Карабахский конфликт, стр. 43:
[165] Տե՛ս там же, стр. 33:
[166] Տե՛ս там же, стр. 26:

վուրդների քաղաքական վերնախավերի հետ, մեծագույն հայ բանաստեղծ Հովի. Թումանյանը, կարծես թե կանխագուշակելով ապագայի փոթորկալից իրադարձությունները, վրաց հասարակության ընդերքում հասունացող փոփոխությունների աղետաբեր շունչը և սպառնացող վտանգը հայ ժողովրդի կենսական շահերին, դեռ 1917-1918 թթ. սահմանագծին իր տագնապն է արտահայտել այդ կապակցությամբ, և զգուշացրել, որ փաստորեն դատարկ խոսակցություններով զբաղվելու և սին խոստումներին հավատալու փոխարեն (որը ևս «բնական է» հարևան ժողովրդի տեսանկյունից) հարկավոր է ամրացնել լեռնաշխարհները, ապահովել դրանց անվտանգությունը զինական և ռազմավարական առումներով: 1918 թ. ապրիլին Վրաստանում Հայաստանի ապագա դիվանագիտական ներկայացուցիչ Լևոն Գեորգիի Եվանգուլյանին (Եվանգուլով)[167] հասցեագրված իր մի նամակում (Հովի. Թումանյանը որոշակի մտերմություն էր անում վերջինիս հետ, և ըստ երևույթին, բարձր էր գնահատում նրա դիվանագիտական գործունեությունը - Վ. Վ.) հետևյալ ուշագրավ միտքն էր զարգացնում (որոշ վիճարկելի կողմերով հանդերձ, և դա էլ բնական է, քանի որ Հովի. Թումանյանը արհեստավարժ, հմուտ քաղաքագետ չէր, բայց շատերից կոահողականությամբ անչափ բարձր էր - Վ. Վ.). «Մեր ընդհանուր վիճակը, գործերի դրությունը, ուժերի հարաբերակցությունը նկատի ունենալով և ծանոթ լինելով մեր անցյալին, ես համոզված էի, որ ռուսների՝ Կովկասը թողնելուց հետո մենք չենք կարողանալու պահենք մեզ թողնված ֆրոնտը և բերդերը իրենց ռազմական ու այլ պարենավորման հսկայական պահեստներով: Ինձ թվում էր, որ պետք է մեր ժողովուրդը բոլոր հովիտներից ու դաշտավայրերից տեղի տա և նորից մտնի իր աշխարհքի հին բնական միջնաբերդերը-լեռնաստանները, ինչպես պատահել է մեր պատմության ընթացքում շատ անգամ և էս դեպքում, Ռուսահայաստանում Կուրի և Արաք-

[167] Եվանգուլյան Լևոն – Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար: ՀՀ կառավարությունից հավատարմագրերը ստացել է 1919 թ. մարտի 6-ին, իսկ իր փաստացի պարտականությունների կատարմանը անցել է մարտի 10-ին: Սակայն Լ. Եվանգուլյանի արգասաբեր աշխատանքը այս պաշտոնում շարունակվում է ընդամենը մինչև 1920 թ. մարտի 30-ը, և երկարատև հիվանդությունից հետո նա վախճանվում է ապրիլի 9-ին: Այդ ընթացքում նա մի շարք անգամ Հայաստանի կառավարությանը դիմումագրեր է ուղարկում՝ խնդրելով իրեն փոխարինող գտնել// Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920, стр. 20: ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 357 (մաս I), թ. 48:

սի մեջ գտնվող լեռնաշխարհում - Լոռի, Ղազախ, Շամշադին - կլիներ զինված ու ապահով և մեր ամեն տեսակ մթերքների պահեստներ, մեր լեռնաշխարհքում կլինեին, որոնք պետք է ընկնեին միայն հայ ժողովրդի հետ, երկրորդը - չէինք տալ էդ ամենը թշնամուն բերդերը թողնելիս, և սոված թշնամուն կշտացնել և ուժեղացնել ըստ ամենայնի: Ազգային խորհուրդը ուրիշ կերպ էր մտածում և միանգամայն ապահով էր համարում ամենը ու բնավ կանգ չառավ էս առաջարկի ու իրադրության վրա (թեև ես պատմական ու ռազմական շատ տվյալներով էի ապացուցանում): Նրանք (ասել է, թե Ամերիկայի և Անգլիայի ներկայացուցիչները) խոստանում էին շատ խոշոր գումար դնել էդ գործի վրա, նկատելով էդ դիմադրությունը, դաշնակիցների կռիվը և էդ լեռնաշխարհների և Ղարաբաղի ուժեղացումը: 1917 թ. դեկտեմբերին և 1918 թվի հունվարին էս միտքը արծարծեցի Հայոց Ազգային խորհրդրդում և առաջարկեցի մտածել բերդերից ամեն տեսակ մթերք ու զենք քաշել դեպի մեր լեռնաշխարհները - ապահովել և ամրացնել մեծաքանակ թնդանոթներով ու ամեն տեսակ զենք ու մթերքով»[168]:

Արդեն վերը նշեցինք, որ մեծագույն Հայոց բանաստեղծ Հովի. Թումանյանը պրոֆեսիոնալ քաղաքագետ չէր, և ամենևին էլ պարտադիր չէր, որ նա ամեն ինչում իրավացի լիներ և կողմնորոշվեր քաղաքական խաղերի մութ լաբիրինթոսներում: Սակայն ինչպես Հովի. Թումանյանի, այնպես էլ շատ-շատերի մոտ իշխող մի մտայնություն կար, որ մտածելու տեղիք է տալիս: Հիմնահարցի էությունը վերաբերում է այն հարցադրմանը, ըստ որի թշնամուն հակահարված տալու համար անհրաժեշտ է, որ «…մեր ժողովուրդը բոլոր հովիտներից ու դաշտավայրերից տեղի տա և նորից մտնի իր աշխարհքի հին բնական միջնաբերդերը – լեռնաստանները, ինչպես պատահել է մեր պատմության ընթացքում շատ անգամ»: Դժվար է համաձայնվել այս տեսակետի հետ, քանզի դարերի ընթացքում դա ժողովրդի ստվար զանգվածներում արմատավորել է պարտվողական տրամադրություններ, նվազեցրել զինվորական կորովի ուժգնությունը, տկարացրել ազգային ոգին, ավելացրած դրան նաև այն հանգամանքը, որ տվյալ իրավիճակում հաշտվելով այդ մտքի հետ և ետ քաշվելով դեպի Հայոց լեռների խորքերը, հայերը բնականաբար

[168] Տե՛ս Թումանյան Հովհաննես, Երկերի լիակատար ժողովածու. Տասը հատորով, հ. 10, Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 313-314:

հրաժարվել են հովիտներում ու դաշտավայրերում ամրապնդվելու մտքից և բերդա-ամրոցաշինությունից, զբաղվելով համատարած եկեղեցաշինությամբ և այլ երկրները շենացնելով, որը դրսից խրախուսվում էր, սևեռուն գաղափար դարձնելով այն հայեցակետը, թե իբր թշնամուն կարելի է դիմադրել (այլ ոչ թե հաղթել)՝ միայն ամրապնդվելով լեռնաստաններում (դա ցայտուն երևում է Կիլիկիայի հայկական պետականության պատմությունն ուսումնասիրելիս, ինչն ակնհայտ է դարձնում հենց նշված գործոնի դերը: Կիլիկիայում ևս հայերը կարողացան ամրապնդվել միայն լեռնաստաններում, զիջելով հովիտները և արգավանդ դաշտավայրերը, ինչը շարունակվեց դարեր շարունակ, և որի լավագույն օրինակը Զեյթունի պատմաքաղաքական փորձն է - Վ. Վ.): Ինչպես տեսնում ենք, խնդիրներ կային, կան և շրջանցել դրանք իմաստ չունի, այլ հարկ է վերաիմաստավորել անցյալի փորձը, ինչպես նաև նորովի մոտենալ նաև Հայոց Մեծերի արտահայտած որոշ մտքերի հետ, անշուշտ փորձ անգամ չանելով ստվեր գցելու նրանց հեղինակության և առհասարակ ամեն ինչի վրա: Իրադարձությունները ակնհայտորեն ցույց տվեցին, որ նույնիսկ Հովհաննես Թումանյանի խոսքերում առկա ռացիոնալ հատիկներին ուշադիր ունկնդրողներ չեղան:

Ավա՞ղ: Ասողին լսող էր հարկավոր, և ճոռոմախոս քաղաքագետները, որոնք Մ. Խորենացու խոսքերով ասած ծույլ ու ամբարտավան աշակերտների նման «դեռ չսովորած»՝ իրենց «աստվածաբան» էին երևակայում և ներկայացնում[169], իրենց հարազատ ժողովրդին կերակրելով հայ-վրացական եղբայրության և լուսավոր ապագայի, ծովից ծով Հայաստանի մասին գայթակղիչ կերակուրներով, որը հետո հանգեցնելու էր սրընթացորեն բռնկած վրաց-հայկական առճակատմանը, Սևրյան ոգորումներին և շլացմանը, վիլսոնյան վեհերոտ մանդատյորության սպասելիքներին և այնուհետև՝ սրընթաց գահավիժմանը:

Իսկ 1918 թ. իրականությունն ավելի ռեալ էր, քան դա պատկերացնում էին քաղաքագետները: Հետաքրքիր է նկատում այս կապակցությամբ ամերիկահայ հեղինակ Վերնոն Վ. Ասպատուրյանը. Այնուամենայնիվ, այս Հայաստանը («ծովից ծով») իրապես ոչ ռեալ էր և դաշնակիցների կողմից լուրջ չէր դիտվում: Փարիզում մնացած հայկական

[169] Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհ. թարգմ. և ծանոթությունները Ստ. Մալխասյանի. խմբ. Գ. Սարգսյան, Եր.: «Հայաստան» հրատ., 1990, էջ 238:

առաջնորդները զգուշորեն իրենց պահանջները սահմանափակում էին Ռուսահայաստանի նկատմամբ պահանջատիրությամբ և իրենց խաղում «ռուսական ազդեցության ոլորտը» դիտում որպես «մեռնող» գործոն, նախքան բոլշևիկները և թուրքերը կվերակենդանանային, իսկ դաշնակիցները նման պահանջն ընդունում էին որպես վստահություն վայելող և ունակ էին իրենց համարում արագորեն շարժվելու և վճռաբար ընդունելու այդպիսի Հայաստանը[170]:

Հենց այսպիսի աշխարհաքաղաքական իրավիճակում էլ, 1918 թ. մայիսյան անկախական գործընթացներից հետո վրաց մենշևիկների մոտ հասունացավ այն սևեռուն համոզմունքը, որ տարածքային-սահմանային հարցերում հարկավոր է նախապատվությունը տալ Վրաստանի վեհապետական շահերին, չնայած այն ոչ բոլոր խնդիրներում իրողություն դարձավ:

Իսկ 1918 թ. մայիսի 30-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարելով հայկական գավառների գերագույն կառավարիչ, գործնականում հոչակելով անկախ պետականության կերտման գործընթացը, մի կողմից ստեղծված բարդ ռազմաքաղաքական իրավիճակում խուսափելով առճակատումից թուրքերի և հարևան պետությունների հետ, միաժամանակ որոշակի հաստատակամությամբ, հաստատեց հայկական տարածքների՝ այդ թվում Լոռի-Ախալքալաքի, Ղարաբաղի և այլ վիճահարույց տարածքների նկատմամբ իր իրավունքների մասին:

Դեռևս հունիսի 1-ին Հայոց Ազգային խորհրդի նախագահին ուղղված դիմումագրում (№ 6666) Վրաստանի Զինվորական նախարարության ղեկավարի պարտականությունները կատարող Գեորգաձեն հաղորդում էր, որ Վրաստանի կառավարությունը իրեն լիազորել է հաղորդել, որ անկասկած անթույլատրելի է Թիֆլիսում օրենսդրական և վարչական գործառնություններով օժտված որևիցե քաղաքական օրգանի (հայկական - Վ. Վ.) գոյությունը, քանի որ դա նշանակում է վրաց ժողովրդի սուվերեն իրավունքների ոտնահարում[171]: Անշուշտ, դժվար է չհամաձայնվել վրացական կողմի հարցադրման հետ, որոշակի վերապա-

[170] Տե՛ս Aspaturian Vernon V., Armenia in the World Arena,1914-1921.- Armenian Review. spring-winter. 1993. volume 46, number 1-4 (181-184), p. 136:

[171] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 17, թ. 7:

հումներով հանդերձ: Ինքնին հասկանալի է, որ ոչ մի լուրջ պետություն չի կարող համաձայնվել այն մտքի հետ, որ իր սուվերեն տարածքում գործի այլ ժողովրդին պատկանող օրենսդրական և գործադիր քաղաքական գործառնություններով օժտված որևիցե այլ մարմին, առավել ևս երբ վերջինս փորձում էր շարունակել Թիֆլիսից երևանյան իր գործերի կառավարումը, բացատրելով՝ Հայաստանի մայրաքաղաքում կենցաղային և այլ կարգի հարմարությունների բացակայությամբ, գումարած դրան նաև այն հանգամանքը, որ Վրաստանի մայրաքաղաքում առկա էր հայկական զինվորական ոչ աննշան մի թվաքանակ՝ զենք ու զինամթերքով հանդերձ: Բնականաբար, այս հանգամանքը չէր կարող դուր գալ Վրաստանի սուվերեն պետության կառավարությանը, և ոչ մի կարգին պետություն չէր կարող դա հաշվի չառնել, և ինքնին հասկանալի էր, որ վրացիները ձգտում էին օր առաջ շուտափույթ ազատվել այդ գործոնի առկայությունից Վրաստանում, ինչի հետ չէին ցանկանում հաշվի նստել հայ գործիչները: Վրաց պատմաբան Գ. Մանդջգալաձեն այդ կապակցությամբ հստակ կրկնում է իր պատմական նախնիներին. «Ակնհայտ է, որ Հայոց Ազգային խորհուրդը և կառավարությունը դիտավորյալ ձգձգում էին իրենց Երևան ժամանումը, քանի որ հայկական ղեկավարների մոտ, առաջին հերթին՝ կային հավակնություններ վրացական բնածին հողերի վրա, այդ թվում և Թբիլիսիի նկատմամբ, և երկրորդ, կար ցանկություն և ստեղծվեց հակավրացական «հինգերորդ շարասյունը»[172]:

Սակայն դա դեռ սկիզբն էր: 1918 թ. հունիսի 3-ի դիմումագրում՝ ուղղված Հայոց Ազգային խորհրդին, այդ նույն Գեորգաձեն հայտնում էր, որ Թուրքիայի կամ Ադրբեջանի հետ որևիցե պայմանագրի դեպքում, Վրաստանի կառավարությունը չի կարող այն իր համար ընդունելի և պարտադիր համարել[173]: Ակնհայտ էր դառնում, որ այս քայլերով Վրաստանը պարզապես հող էր նախապատրաստում Անդրկովկասյան տանը արտոնյալ տեղ ու դիրք գրավելու համար, ձգտելով առկա աշխարհաքաղաքական իրավիճակից բխող բոլոր առավելությունները ծառայեցնել իր օգտին: Ավելին, ինչպես ակնհայտ է դառնում Հայկական հաշ-

[172] Տե՛ս Манджаладзе Гурам, Военный конфликт между Грузией и Арменией в 1918 году / Dirçəliş XXI əsr».- 2008.- № 120-121.- стр. 85-90. elibrary.az/docs/jurnal-08/148j.htm:

[173] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 17, թ. 11:

տարար պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանի 1918 թ. հունիսի 3-ի նամակից՝ ուղղված Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանին, որ վրացիները հայտարարություն են արել այն մասին, որ ամբողջ Բորչալուի գավառը պատկանում է իրենց, ավելացնելով, որ տվյալ պահին հայերը, թուրքերը և թաթարները Բորչալուի գավառի հարավային մասը՝ Ագրիկալ լեռ-Շուլավեր-Ղամարլու գծով ամեն մեկը իրենն է համարում, ավելացնելով, որ անհրաժեշտ է անմիջապես քայլեր ձեռնարկել փաստացի այդ գիծը գրավելու համար (թաթարների հետ համաձայնեցված), գտնելով որ այլապես ուշ կլինի, միաժամանակ ճնշում գործադրելով շուլավերցիների վրա, քանզի նրանք հակված են դեպի Թիֆլիսը[174]:

Առաջին հայացքից իրերը այդպես էին դիտվում, մանավանդ վրացական կառավարությունը իր իրական ռազմաքաղաքական պատրաստությունները քողարկում էր դեկլարատիվ, ամպագոռգոռ և սնամեջ հայտարարագրերով: Հայոց ազգային խորհրդին ուղղված իր 1918 թ. հունիսի 3-ի գրության մեջ Վրաստանի կառավարությունը հայտնում էր հետևյալի մասին. «Վրացական Հանրապետության կառավարությունն այս՝ 1918 թ. հունիսի 2–ի իր նիստում որոշեց. Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի միջև սահմանների ուղղումն ու հաստատումը կազմում է նշված երկրների կառավարությունների բացառիկ իրավասությունը, որ Վրացական Հանրապետության կառավարությունը Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչների հետ նշված հարցի շուրջ անմիջական բանակցություններ կարող է վարել Թիֆլիս քաղաքում առանց Թուրքիայի միջամտության: Այն դեպքում, եթե պարզվի մի կողմից Օսմանյան կայսրության, մյուս կողմից՝ Ադրբեջանի և Հայաստանի կամ նրանցից մեկի միջև այս իրողության վերաբերյալ պայմանագիր կնքված լինելը, այդպիսի պայմանագիրը Վրացական Հանրապետության կառավարությունը ոչ մի դեպքում չի կարող իր համար ընդունելի և պարտադիր ճանաչել»[175]:

---

[174] Տե՛ս Հայ-վրացական սահմանավեճը փաստաթղթերի լեզվով // կազմեց Համո Կ. Սուքիասյանը, «ՎԷՄ», համահայկական հանդես, Դ (Ժ) տարի, 2012, թիվ 4 (40) , հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 200: Տե՛ս նաև ՀԱԱ, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 23, թ.. 59:

[175] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 17, թ. 11 և հակադ.: «Հորիզոն», Թիֆլիս, 6 հունիսի, 1918 թ.: «Մշակ», Թիֆլիս, 6 հունիսի, 1920 թ.:

Փաստը փաստ էր, 1918 թ. հունիսի 4-ին կնքված Բաթումիի պայմանագրի և այլ պայմանավորվածությունների համաձայն, որով օրինականացվում էին թուրքական զավթումները Կովկասում և զուգահեռաբար Թուրքիայի կողմից «ճանաչվում էին անկախացած» այսպես կոչված նորաթուխ անդրկովկասյան հանրապետություններից Հայաստանի Հանրապետությունը այնքան էր կտրատվել, որ ամփոփվելով Երևանի, Էջմիածնի և Նոր-Բայազետի գավառների մասերի ամբողջության մեջ, կանգնել էր կայացման համալիր բարդույթների առաջ: Բաթումիի պայմանագիրը գործնականում չարձարծեց հայ-վրացական, նմանապես և հայ-ադրբեջանական հարաբերությունները, սակայն ըստ Ալ. Խատիսյանի, թուրքերի ձեռքին էր նաև Ախալքալաքի գավառը. «Երբ անդրկովկասեան հանրապետութիւնները հաշտութիւն կնքեցին Թուրքիոյ հետ, անմիջապես հերթական դարձաւ սահմաններու խնդիրը նորակազմ հանրապետութիւններու միջեւ, հրապարակ եկան Լոռիի, Ղազախի, Զանգեզուրի, Սեւանայ լճի, Ղարաբաղի, Նախիջեւանի եւ այլ ցաւոտ սահմանային խնդիրներ»[176]: Սահմանային-տարածքային հարցերը թողնված էր այդ ժողովուրդներին, որոնք փոխադարձ համաձայնությամբ պետք է լուծեին այդ հարցերը, անհամաձայնության պարագայում՝ միջազգային արբիտրաժի միջոցով:

Բաթումիի պայմանագրից հետո թուրքական հրամանատարությունը պնդեց ժամանակավորապես իրենց հանձնելու տարածքի մի լրացուցիչ շերտ ևս՝ Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Լոռու տեղամասը, քանզի այն հարում էր ռազմավարական առումով կարևոր խճուղային ճանապարհին, որով թուրքական զորքերը անընդհատ հոսանքներով նետվում էին դեպի Ադրբեջան, ձգտելով խեղդամահ անել Բաքվի Կոմունան, որի ճակատագրից կախված էին մնում շատ պատմաքաղաքական զարգացումների մի շարք հնարավոր ակնկալվող միտումները Անդրկովկասում: Հետևաբար, միանգամայն ակնհայտ էր, որ Ղարաքիլիսայի և Դիլիջանի միջև գտնվող վերը նշյալ ճանապարհի հատվածը անցնում էր Վրաստանին ժառանգություն հասած Թիֆլիսի նահանգի սահմանին անմիջական հարևանությամբ, և թուրքական հրամանատարությանը ոչինչ չէր մնում անելու, եթե ոչ չափազանց կա-

[176] Խատիսեան Ալ., Նշվ. աշխ., էջ 87, 92:

րևոր համարել տեղաշարժել այդ սահմանագիծը դեպի հյուսիս, իբր թե իրենց գործունեությունը, դիմադրությունը չդադարեցրած, այսպես կոչված, հայ պարտիզանների հնարավոր հարձակումներից՝ այդ ճանապարհահատվածը վտանգազերծելու համար: Այդ ընթացքում թուրքական կողմը պահանջեց հետևյալը. «Ընդ որում Թուրքիայի կողմից վրացական կառավարության առաջ պահանջ դրվեց թույլ տալ 1918 թ. հունիսի 4-ի պայմանագրի II հոդվածից ժամանակավորապես ետ կանգնել և թուրքական զորքերին թույլ տալ ժամանակավորապես գրավել Բորչալուի գավառի մի մասը Կամենկա գետով և երկաթգծով կամրջից դեպի դեպի հարավ Քոբեր [Քոբայր] կիսակայարանի և Քոլագիրան կայարանի միջև (117 վերստի վրա)»: Այդ միջոցը թուրքական հրամանատարությանը անհրաժեշտ էր Ղարաքիլիսա-Դիլիջան-Ղազախի խճուղով իրենց կողմից ձեռնարկված զորքերի տեղաշարժի, այդ ձեռնարկվելիք ետ քաշման անխոչընդոտ և անվտանգ ապահովության համար: Թուրքական հրամանատարության պնդումները աջակցություն գտան Թիֆլիսում գերմանական ռազմական ներկայացուցչության ղեկավարության կողմից և Վրաստանի կառավարությունը կանգնեց պարտավորվածության առաջ բավարարել դրանք և հրաժարվել իր պահանջներից ողջ Թիֆլիսի նահանգի և երկաթգծի վրա մինչև թունելի մեջտեղը՝ Շահալի կայարանից այն կողմ: Նա հարկադրված էր համաձայնվել վերը նշված տարածքի նկատմամբ Թուրքիայի կողմից ժամանակավոր փաստական տիրապետմանը: Ըստ էության, Թուրքիան վերահսկում էր Ախալքալաքի գավառը և Բորչալուի հարավային հատվածը:

Այդ նկրտումների և թուրքական հրամանատարության հետ բանակցությունների առիթով ծագած մի շարք ռազմական գործողությունների արդյունքում, «թուրքական զորքերին իրավունք տրվեց զբաղեցնել Կամենկայի աջ ափագիծը - հենց Նովոպոկրովկա, Ջալալօղլի, Նիկոլաևկա, Հերհեր, Վարդանլուր, Քուրտան, Դարաքենդ [Դար-Քենդ] գյուղերը և այնուհետև՝ կամրջից նախկին Անդրկովկասյան երկաթգծի ալեքսանդրապոլյան ճյուղի 117 վերստի վրայի գիծը՝ Քոբեր և Քոլագիրան կայարանների միջև տարածքի մեջտեղը մինչև Մարց և Լորուտ գյուղերը: Այդ գծից հարավ տեղանքները հաջողվեց պաշտպանել թուրքական օկուպացիայից և այն թուրքերի ներխուժումից արգելափակելու համար այն գրավվեց անգլիական զորաջոկատների կողմից, որոնց տե-

ղաբաշխման կետեր հանդիսացան Վորոնցովկան, Ալեքսանդրովկան, Հայդարբեկը, Մղարթը, Քոբեր կիսակայարանը և Քորինջ [Քարինջ] ու Ծաթեր գյուղերը»[177]:

Այստեղ նկատի է առնվում այն ռազմական գործողությունները, որոնք տեղի ունեցան գերմանական զորաջոկատների աջակցությամբ գործող վրացական զորամասերի և թուրքերի միջև 1918 թ. հունիսին, որոնք չնայած ձեռքբերված պայմանավորվածությանը, շարունակում էին առաջխաղացումը Ղարաքիլիսայի շրջանից դեպի հյուսիս, Թիֆլիսի ուղղությամբ, ինչպես կարծում էին վրացիները: Այդ բախումների արդյունքում թուրքերի առաջխաղացումը կասեցվեց Կամենկա գետի և Կարմիր կամրջի մոտ: Արդյունքում, հաստատված սահմանաբաժան գիծը դարձավ Վրաստանի այն փաստական սահմանը, որը գոյություն ունեցավ Բաթումիի պայմանագրից մինչև Օսմանյան կայսրության անձնատուր լինելն ընկած ժամանակահատվածը, այսինքն՝ ընդհուպ մինչև 1918 թ. աշնան վերջերը՝ Մուդրոսի զինադադարը: Ինքնին հասկանալի է, որ Հայաստանը Վրաստանի հետ ուղղակի սահմանագիծ չուներ, քանզի սահմանաբաժան գծից դեպի հարավ գտնվում էր թուրքերի կողմից վերահսկող տարածքը, որը Մուդրոսի զինադադարից հետո դադարեց գոյություն ունենալ, քանզի թուրքերը հարկադրված էին անկախ իրենց ցանկություններից հեռանալ:

Հարկ է ասել, որ հայ-վրացական տարակարծություններից թուրքերը օգտվեցին, որպեսզի իրենց վերահսկողության տակ առնեն Լոռի-Բորչալուն, նույնիսկ հայտարարելով, որ դա բխում է հայերի շահերից:

Հայ-վրացական հարաբերությունների բարդացման սկզբնական ժամանակահատվածում պատերազմական իրադրության առաջացման առիթ հանդիսացավ այն հանգամանքը, որ Վրաստանի կառավարությունը չկամություն դրսևորեց Թիֆլիսից բաց թողնել Հայոց Ազգային խորհրդի գույքը, այն անարդարացիորեն համարելով իր սեփականությունը: Վրաստանի կառավարությունը հայկական կողմի նկատմամբ դժկամ և օտարոտի վերաբերմունք ցուցաբերեց նաև 1918 թ. հունիսի 21-ին, երբ Թիֆլիսից Հայաստան էին տեղափոխվում Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարության «թիֆլիսաբնակ» անդամները:

[177] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 12-13:

Ինչպես վկայում են ժամանակակիցները (Ս. Վրացյան և ուրիշներ), կառավարության անդամներին տեղափոխող 3 ավտոմոբիլները Երևան բաց թողնվեցին չափազանց մեծ դժկամությամբ, ընդ որում նրանց ճանապարհելու համար չէր եկել Վրաստանի ոչ մի պաշտոնակատար անձ: Թիֆլիսից Հայոց Ազգային խորհրդի հեռացումը Վրաստանի համար քաղաքական կարևոր խնդիր էր, և նրանք դրան հասան, միանգամայն իրավացիորեն գտնելով, որ չի կարելի սեփական երկիրը կառավարել դրսից, հասկացնելով հայերին, որ Թիֆլիսը Հայաստանի մայրաքաղաքը չէ, որ անհրաժեշտ է տեղափոխվել Երևան, ինչը և կատարվեց Վրաստանի կառավարության և հասարակական կարծիքի ճնշման տակ, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ նման դիրքորոշման հետ համակարծիք էին նաև որոշակի մտավորական և քաղաքական շրջաններ Երևանում, որոնք հոգնել էին անպտուղ միջկուսակցական կռիվներից ու վեճերից այդ խնդրի շուրջ, և անհանդուրժելի էին համարում այդպիսի իրավիճակը: Այդ մասին միանշանակ հայտարարեց նաև Հովի. Քաջազնունին կառավարության հուլիսի 13-ի նիստում, ասելով, որ ինքը կհրաժարվի վարչապետությունից, եթե Հայոց Ազգային խորհուրդը շարունակի մնալ Թիֆլիսում[178]: Ի վերջո հարցը լուծվեց: Թեկուզև որոշակի դժկամությամբ, որը պատիվ չէր բերում հայկական կողմին, բայց Հայոց Ազգային խորհրդի տեղափոխման հարցը լուծվեց, և վրացիներն էլ վերջապես հանգիստ շունչ քաշեցին, ձգտելով ազատվել իրենց համար օտար և անցանկալի իշխանության մարմնի առկայությունից Թիֆլիսում: Երևանում էլ կարծես թե կուսակցական-քաղաքական որոշակի ուժեր վերջ տվեցին այդ հարցի հետ կապված անպտուղ միջկուսակցական վեճերին և ձեռնամուխ եղան գործնական քայլերի: Սակայն Վրաստանի հետ տարաձայնության հիմնական պատճառը Բորչալուի գավառում Հայաստանի և Վրաստանի միջև պետական սահմանի շուրջ առաջացած սահմանավեճն էր, և մասնավորապես վերջինիս կազմի մեջ մտնող հայաբնակ Լոռի-Փամբակի, Հարավային Բորչալուի պատկանելիության մասին հարցը: 1918 թ. մայիսին թուրքերի կողմից Ալեքսանդրապոլի գրավման ժամանակաշրջանում, Հայոց Ազգային խորհուրդը, հաշվի առնելով Վրաստանի սահմանների անվտանգու-

[178] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 16 հունիսի, 1918 թ., N 139:

թյան հարցը, համաձայնվեց Վրաց կառավարության խնդրանքի հետ, որպեսզի վրացական զորամիավորումները զբաղեցնեն այդ շրջանը: Այդ կապակցությամբ այդ օրերին իշխող մտայնությունների մասին է փաստում Ա. Ջամալյանը, ասելով, որ Վրաց կառավարության և Ազգային խորհրդի ներկայացուցիչներ Ն. Ռամիշվիլին և Ն. Ժորդանիան «գալիս են Հայոց Ազգային խորհուրդ եւ հանդիսաւոր կերպով յայտարարում յանձինս Ա. Ահարոնեանի, Ա. Խատիսեանի եւ Յ. Քաջազնունիի, թէ իրենք, ինչպէս առաջ, նոյնպէս է՛ւ այժմ Հայկական Բորչալուն Հայաստանի մասն են համարում, թէ այդ գաւառի որոշ մասերը իրենք գրաւել են՝ միայն թրքական ներխուժումից Վրաստանի սահմանները պաշտպանելու համար եւ թէ երբ այդ վտանգն անցնի, իրենք կը թողնեն գրաւուած հողերը»[179]:

Հատկանշական է, որ այդ պահին դեմոկրատական Վրաստանի ղեկավարները՝ Նոյ Ռամիշվիլին և Նոյ Ժորդանիան Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչներ Ավ. Ահարոնյանին, Ալ. Խատիսյանին և Հովի. Քաջազնունուն խոստացան, որ վրացական բանակը կդատարկի Բորչալուն այն բանից հետո, երբ թուրքերը հեռանան Վրաստանի սահմանամերձ շրջաններից:

1918 թ. հունիսի 15-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը կրկին անդրադառնում է սահմանների խնդրին, որի մասին զեկուցում են Խ. Կարճիկյանը և Ալ. Խատիսյանը, անդրադառնալով Ն. Ժորդանիայի և Ի. Ծերեթելու հետ ունեցած բանակցությունների արդյունքներին, ասելով, թե վերջիններս Ավ. Ահարոնյանին հայտնել են, որ իրենց տեսակետը սահմափոխման խնդրում ազգագրականն է: Միաժամանակ, այդ փաստաթղթից ակնհայտ է դառնում Ի. Ծերեթելու բռնած դիրքը ընթացած բանակցությունների ժամանակ, որում նա նոր վարկած է առաջադրել՝ կապված սահմանազծման պատմական սկզբունքով իրագործման տարբերակի հնարավորության մասին, ասելով, թե պատմական տեսակետը արդյունք է տնտեսական և ռազմական նկատառումների, առանց որի ոչ մի պետություն չի կարող գոյություն ունենալ, որ տարբեր ազգությունների ներկայությունը նման պետության մեջ չի խանգարում ներկայացվող տեսակետին: Հաջորդ միտքը, որ արտահայտել էր Ի. Ծերե-

[179] Տե՛ս Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը // Հայրենիք (Բոստոն), 1928, Ապրիլ, էջ 91:

թելին, դա այն էր, որ եթե ընդունեն ազգագրական սկզբունքը, ապա չեն կարող պաշտպանվել թուրքերի պահանջներից Զաքաթալայի և այլ տարածամասերի նկատմամբ, որ անհնարին կդարձներ դրա պաշտպանությունը: Իսկ ամենահետաքրքիրը՝ այս բանակցությունների ժամանակ Ի. Ծերեթելին առանց տատանվելու պնդել էր, թե ստեղծված դրությունը նպաստավոր է նաև հայերի համար, որովհետև հայտնի չէ հայկական գավառների վիճակը, ասելով, թե թերևս դրանով ապահովվի մնացած հայերի դրությունը, չնայած վերջում Ծերեթելին ասածին հավելել էր նաև այն, որ իբր իր կողմից արտահայտված տեսակետը վերջնագրային չէ և չեն պնդում դրա վրա, սակայն ավելացնելով մի կարևոր մանրամասն՝ թե այս խնդրում ցանկալի է թուրքերի մասնակցությունը, ինչը վրացական կողմից ցուցաբերված հրաշալի մաննր էր՝ հայերին շեղող քայլ, որին հաջորդ օրը հետևեց Վրաց կառավարության նոր որոշումը սահմանների մասին[180]: Հետագայում պաշտոնական Թիֆլիսի ներկայացուցիչները, վերանայելով իրենց գնահատումները սահմանազատման խնդրի վերաբերյալ, կրկին ամպագոռգոռ պնդում էին, թե հայկական կողմից առաջադրված տեսակետը, իբր երկու կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածությունները՝ որպես այդպիսին պայմանավորվածություններ չեն, այլ ընդամենը կառուցողական նախաձեռնողականության որոշակի դրսևորումներ, որոնք վերաբերում էին միասնական ֆեդերատիվ պետության ներսում իրականացված տարածքազատմանը (խոսքը վերաբերում էր ռեֆորմացված Ռուսաստանին), բացառապես տնտեսական-վարչական կառավարման հարմարության խնդիրներից ելնելով: Վրացական կողմը գտնում էր, որ նախկին հայտարարությունները անդրկովկասյան հանրապետությունների հռչակումից հետո այլևս կիրառելի չեն սահմանազատման համար: Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ 1918 թ. աշնան վիճակով Վրաստանի և Հայաստանի միջև բացակայում էր համաձայնությունը վիճելի տարածքների պատկանելիության մասին, ներառյալ երկու գավառներ՝ Բորչալուի և Ախալքալաքի[181]:

[180] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ – 222, ց. 1, գ. 141, թ. 255-256:

[181] Տե՛ս Армяно-Грузинская война (1918)-Адамалла www.adamalla.com›...› Библиотека› Кавказ:

Որոշ ժամանակ անց, 1918 թ. հունիսի սկզբին Վրաց Ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիան և Վրաստանի վարչապետ Ն. Ռամիշվիլին այցելում են Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցչություն և Ավ. Ահարոնյանին, Հովհ. Քաջազնունուն և Ալ. Խատիսյանին Վրաստանի կառավարության անունից հրավիրում մասնակցելու Ախալքալաքի, Բորչալուի շրջանների բաժանումը ազգային սկզբունքներով կատարելու համար հրավիրվող խորհրդակցությանը: Այնուհետև, ինչպես պարզապես փաստագրում է Ս. Վրացյանը, Հայոց Ազգային խորհուրդը նշանակում է Խ. Կարճիկյանին, Գ. Խատիսյանին և զոր. Գ. Ղորղանյանին (զորավար Ղորղանով) որպես հայկական պատգամավորության ներկայացուցիչներ սահմանազատման հարցով հատուկ հանձնախմբում, որոնք ներկայանում են ընդունելության Վրաստանի կառավարությանը, որը աղճատելով մինչ այդ Վրաստանի և Հայաստանի միջև ընթացած բանակցությունների բովանդակային մասը, ըստ որի Բորչալուի գավառում սահմանազատման գծով հայ-վրացական համաձայնության հիմքում պետք է ընկած լիներ էթնիկական սկզբունքը, ի դեմս Ի. Ծերեթելու, նրանց կատարյալ անակնկալ է մատուցում. «…Ի. Ծերեթելին, հանուն Վրաց Ազգային խորհրդի հայտարարեց, որ Վրաստանի սահմանների մեջ են մտնելու ամբողջապես Ախալքալաքի, Ղազախի ու Բորչալուի գավառները և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանը: Ծերեթելին բացատրեց, որ նման սահմանների հաստատումը անհրաժեշտ է վրաց ժողովրդի կենսական շահերի համար, որ ռազմագիտական տեսակետից, Վրաստանը չի կարող ապրել առանց Լոռի-Փամբակի: Մյուս կողմից, հայերի շահն էլ պահանջում է այդ շրջանների Վրաստանի սահմաններում լինելը, որովհետև հանձին Վրաստանի, Կովկասում կստեղծվի կենսունակ և հզոր քրիստոնյա պետություն, որը գերմանացիների աջակցությամբ կպաշտպանի և հայերին»[182], քանի որ «հայերը, Բաթումիի համաձայնությունից հետո, չեն կարող կազմել քիչ թե շատ կենսունակ պետություն և իրենց ձեռնտու է ուժեղացնել Վրաստանը»[183]:

---

[182] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993, էջ 215: Տե՛ս նաև ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 17, թ. 15-17:

[183] Տե՛ս Армяно-грузинский вооружённый конфликтъ. На основании фактических данныхъ и подлинныхъ документов, стр. 11:

Մի շարք փաստաթղթեր թույլ են տալիս էլ ավելի ընդգծված ցույց տալ վրաց ազգայնական շրջանների ագրեսիվ-մեծապետական ռազմավարության նրբերանգները Հայաստանի նկատմամբ, և այդ առումով դիտարժան վկայակոչումներ կան ՀՀ Ազգայինի արխիվում պահ տված 1918 թ. հունիսի 24–ից մինչև նոյեմբերի 1–ը Ավ. Ահարոնյանի գլխավորությամբ Կ. Պոլսում գտնված հայկական պատվիրակության քարտուղար և դիվանագիտական սուրհանդակ [նամակատար] Լևոն Լիսիցյանի օրագրության մեջ, որի շնորհիվ բացահայտվում են հայ-վրացական սահմանազատման խնդրում վրացական կողմի դիրքորոշման մի շարք էական մանրամասներ՝ կապված Պ. Ինգորոկվայի կողմից դեռևս հունիսի 16-ին կայացած հանդիպման ժամանակ շոշափված հարցերի շրջանակի հետ՝ կապված վրաց քաղաքական առաջնորդների մոտեցումների փոփոխության հետ անկախության շրջանի գործընթացների ժամանակահատվածում: Դրանից պարզ է դարձել, որ դեռ հունիսի 1-ին վրաց քաղաքական գործիչները պնդել են այն մասին, որ Անդրկովկասում հնարավոր չէ միանգամից երկու կենսունակ քրիստոնյա պետությունների գոյությունը, և քանզի այդ պետությունը կարող է լինել միայն Վրաստանը, ուստի ըստ վրաց քաղաքական շրջանների ըմբռնման, հայերը պետք է հաշտվեն Բորչալուի և Ախալքալաքի գավառները Վրաստանին միացնելու անհրաժեշտության հետ[184]: Եվ դեռ ավելին, վրացական պատվիրակության զինվորական խորհրդական, Անդրկովկասյան Սեյմի շուրջ ծավալված ռազմաքաղաքական գործընթացների ժամանակ իր հակահայկական դիրքորոշումներով հայտնի գեներալ Իլյա Օդիշելիձեն անգամ իրեն թույլ է տալիս ամբարտավանորեն հայտարարել. «Դուք պետք է հրաժարվեք Ախալքալաքից ու Փամբակի կիրճից, եթե չեք ցանկանում, որ մեր միջև թշնամանք և հատկապես պատերազմ լինի»[185]: Այս ամենը ակնհայտորեն վկայում էր վրաց ռազմաքաղաքական շրջաններում կատարված փոփոխությունների մասին սահմանատարածքային խնդիրներում, որոնք պատրաստ էին, ըստ վրաց վերոհիշյալ տխրահռչակ գեներալ Ի. Օդիշելիձեի մտադրությունների, ան-

[184] Տե՛ս նաև Սուքիասյան Հ., Հայ-վրացական սահմանավեճը փաստաթղթերի լեզվով, Մաս առաջին. Միջպետական սահմանի հարցը 1918 թ. հունիս-հուլիսին, «ՎԷմ», 2012, N 4, էջ 201-203:

[185] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 428, ց. 1, գ. 89, թ. 14:

գամ աղրբեջանցիների հետ եզրեր հաստատել՝ Բորչալուի գավառում աղրբեջանցիներին զիջել այդ կարևոր «միջանցիկ տարածքը, որպեսզի Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև ստեղծվեր բուֆերային գոտի»[186]: Դա ակնհայտորեն Հայաստանի Հանրապետության դեմ միտված տարանջատիչ և սադրիչ քայլ էր՝ հակահայկական բովանդակության բոլոր գուներանգներով:

Ըստ Գ. Մարխուլիայի, նկատի ունենալով վերը բերված փաստերը, և Վրաստանի կառավարության կողմից իրենց երկրի պատմական տարածքների գրավումը, միաժամանակ պնդելով, որ այն դաշնակցականների կարծիքով, «իբր թե [դա] հակասում էր դեմոկրատական սկզբունքներին» և անկասկած, հայերին խանգարում էր ինքնորոշվել վրացական տարածքների վրա: Հայաստանի կառավարությունը և Հայոց Ազգային խորհուրդը կտրականապես դեմ էին սահմանների պատմական հիմքի վրա որոշելուն, քանի որ այն կսպառնար միանգամայն աշխարհագրական այլ միջավայրում ծագած հայկական պետականության գոյությանը: Այսպիսով, դաշնակցական «ստեղծարարները (հորինողները - Վ. Վ.) ըստ Գ. Մարխուլիայի, վրացական կառավարությունից պահանջում էին ճանաչել դարերի ընթացքում շարունակվող Վրաստանի պատմական մարզերի սողացող, էթնիկական օկուպացումը»»[187]:

Վրաց-հայկական հարաբերություններում առկա պատրանքային պատկերացումները իրենց տեղը զիջեցին իրատեսականին, երբ թուրքական զորամասերը մայիսի վերջերին արագ տեղաշարժ էին կատարում դեպի Բաքու, մենշևիկյան Վրաստանը օգտվելով ստեղծված լարված ռազմաքաղաքական, և տնտեսական իրավիճակից, զբաղեցրեց Լոռին, և ի պատասխան հայկական կառավարության կողմից ներկայացված բողոքագրի, վրացիները պատճառաբանություն բերեցին, թե Լոռու

---

[186] Տե՛ս Սուքիասյան Հ., Կոստանդնուպոլսում Հայաստանի Հանրապետության պատվիրակության գործունեության լուսաբանումը պատվիրակների օրագրություններում (1918 թ. հունիս-նոյեմբեր) // Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմության և արդիական խնդիրներ). Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր.: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2015, էջ 197-198:

[187] Տե՛ս Мархулия Г. Р., Территориальные претензии дашнаковцев и т. н. вопрос «раздела Армении» в политических кругах Турции, Грузии и Азербайджана: См. в кн. «Исторические разыскания». Абхазская организация. Т. VI, Тб., 2003, стр. 241:

գրավումը բխում է Վրաստանի անվտանգությանը սպառնացող վտանգից, որից ելնելով ձեռնարկվել են գործողություններ՝ Թիֆլիսի վրա թուրքական վերահաս հարձակումը կանխելու համար:

Վրացական կողմը հաշվի էր առնում բոլոր այն փոփոխությունները, որոնք տեղի էին ունեցել անկախության գործընթացներից հետո, երբ ռազմաքաղաքական նոր իրավիճակը անհնարին դարձրեց մի հարկի տակ անդրկովկասյան ժողովուրդների համակեցությունը, ըստ որի էլ և՛ Ծերեթելին և՛ Ժորդանիան ազդարարեցին՝ քանի որ Վրաստանը ինքնորոշվել է որպես առանձին պետություն, այդ պայմաններում իրենց պետության սահմանները որոշելիս իրենք ամենևին չեն կարող առաջնորդվել ուրիշների, այդ թվում և հայերի ազգային ձգտումներով, որքան էլ նախկինում լավ հարաբերություններ եղած լինեն նրանց հետ, ելնելով իրենց ռազմաքաղաքական գերակա շահերից, որոնք հրամայաբար պահանջում են Վրաստանի հանրապետության սահմանների մեջ ներառել նաև ամբողջ Բորչալուի գավառը՝ որպես նրա անքակտելի մաս: Վրաստանը գտավ, որ անհրաժեշտ է միասնական Անդրկովկասի շրջանակներում ցուցաբերած ընդհանուր ռազմավարությունից անցում կատարել սեփական շահերի վրա բազայավորված քաղաքականության, որ անկախության հռչակումից հետո նոր իրավիճակ է ստեղծվել, որի հետ իրենք հաշվի չնստել չեն կարող, որը բացառում է ազգագրական սկզբունքի իրագործումը: Արդյունքում, անդրկովկասյան երեք անկախ հանրապետությունների հռչակումից հետո Անդրկովկասում վարչատարածքային կամ սահմանային-տարածքային վերաբաժանման շուրջն ընթացած քննարկումները և բանակցությունները աստիճանաբար վերաճեցին միջպետական սահմանատարածքային վեճերի և բախումների, ազգամիջյան հարաբերությունների բովանդակությունը հագեցվեց սահմանավեճերով: Ռազմաքաղաքական առճակատումը հայերին ձեռնտու չէր, և դրանից խուսափելու համար հայկական կողմը ամբողջովին գործարկեց հարցերի լուծման բանակցային-դիվանագիտական հնարավորությունները, ելնելով նաև թուրքական արշավանքներից հյուծված Հայաստանի Հանրապետության քայքայված վիճակից: Հայ ժողովրդի քաղաքական առաջնորդությունը ստանձնեց ՀՅ Դաշնակցություն կուսակցությունը, որը ՀՀ անկախության պաշտոնական ազդարարումից հետո նույնպես սկսեց հանդես գալ 1917 թ. առաջադրված

անդրկովկասյան պետությունների սահմանագծման ազգագրական և պատմական սկզբունքներով: Դրա գործնական սկիզբը դրվեց Բաթումիի պայմանագրով, և այդ իրողությունից էլ ելնելով, Թիֆլիսում գտնվող Հայոց Ազգային խորհուրդը ձեռնամուխ եղավ Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների հետ ՀՀ միջպետական սահմանների հստակեցմանը և վերջնական հաստատագրմանը:

Իրադարձությունները հաջորդում էին մեկը մյուսին: 1918 թ. հունիսի 12-ին Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանը Վրաստանի Ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիային տեղեկացնում է, որ խախտվել է սահմանների շուրջ բանակցություններ սկսելու մասին փոխպայմանավորվածությունը, որ Ծերեթելու հայտարարագիրը սահմանների մասին անիրական է, և ըստ այդմ առաջարկելով սկսել հայ-վրացական բանակցություններ, պարզել վիճելի տարածքների հարցը և նախնական պայմանավորվածության համաձայն սահմանազատումը կատարել ազգագրական սկզբունքներով[188], բայց դրանք մնում են անպատասխան, քանզի մի քանի օր անց Վրաստանի կառավարությունը պաշտոնապես հռչակում է պետական սահմանների մասին իր հայտարարագիրը:

Հունիսի 12-ին Վրաստանի կառավարության կողմից լրագրերում հայտարարություն է արվում երկրի պետական սահմանների մասին: Ըստ դրա, հայտնվում էր, որ Վրաստանի կառավարությունը գերմանական ռազմաքաղաքական ներկայացուցչությանը հայտնել էր այն մասին, որ կարգադրություն է արվել գրավել անդրկովկասյան երկաթուղու Բաքվի գծի տարածքը՝ մինչև Փոյլի կայարանի կամուրջը Քուռ գետի վրա և Ալեքսանդրապոլի ուղղությամբ՝ մինչև Ղարաքիլիսայի և Շահալի կայարանի միջև գտնվող թունելը, թեև վրացական թագավորության սահմանները արևելյան կողմից, համաձայն Ռուսաստանյան կայսրության և Վրաստանի միջև կնքված 1783 թ. պայմանագրի, և դրանով սահմանված սահմանագծի՝ համարվում են հիշյալ կետերից այն կողմ ընկած տարածքները[189]:

[188] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 17, թ. 16:

[189] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 13 հունիսի, 1918 թ., N 114: «Մշակ», Թիֆլիս, 13 հունիսի, 1918 թ., N 111:

Ազգայնական գաղափարաքաղաքական թունդ շերտանստվածքով հագեցած այս իրավիճակն էլ պայմանավորեց անդրկովկասյան այս հանրապետությունների ներքնապես խոր ախտահարումը և նախադրյալներ ստեղծեց նրանցից յուրաքանչյուրի կազմացրման համար: Դրան նպաստեց նաև Հայաստանի Հանրապետության ծանր ռազմաքաղաքական կացությունը 1918 թ. երկրորդ կեսին, երբ ակնհայտորեն ձևավորված վրացա-թուրքա-ադրբեջանական համագործակցությունը խնդրահարույց վիճակ ստեղծեց Անդրկովկասի համար, որի պայմաններում հայ-վրացական պաշտպանական դաշինքը մեռելածին դուրս եկավ:

1918 թ. հունիսի 16-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը իր նիստում լսեց սահմանների վերաբերյալ Վրաստանի կառավարությանը ներկայացվող բողոքագրի մասին հարցը, որի շուրջ արտահայտվեցին Մ. Պապաջանյանը, Խ. Կարճիկյանը, Ս. Մամիկոնյանը, որոնք առաջարկեցին ձևական բողոքով բավարարվել, փորձելով մեկ անգամ ևս տեսնվել Վրաստանի կառավարության հետ և պարզել նրանց տեսակետը, իսկ Ս. Հարությունյանը առաջարկում է ոչ միայն բողոքել, այլ նաև ցույց տալ մեր սահմանները, որի մեջ մտնում են այն գավառները, որոնց նկատմամբ վրացիները հավակնություններ ունեն, իսկ ինչ վերաբերում է այդ նիստում ելույթ ունեցած Հ. Ազատյանին, ապա նա պահանջում է բողոքել և դեմոկրատական սկզբունքի հիման վրա պահանջել, որ նոր հանձնաժողով կազմվի, որպեսզի այդ խնդիրը լուծվի: Նիստում արտահայտված Ա. Բաբալյանն էլ եզրահանգում է, որ պետք է հայտարարել, որ մեր սահմանը հենց սա է, թող վրացիները բողոքարկեն: Մ. Պապաջանյանը կրկին ելույթ է ունենում, գտնելով, որ պետք չէ խճճել գործը ու պետք է կիսապաշտոնական ձևով բողոքել և դեմոկրատական սկզբունքներով պաշտպանել հայկական կողմի հին տեսակետը, սակայն առանց հանձնաժողովի պահանջի: Ի վերջո, որոշակի անվճռականությունից հետո, Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը վճռում է ընդունված որոշումը պատճառաբանել դեմոկրատական սկզբունքներով և մամուլի միջոցով միայն հայտնել ի գիտություն՝ առանց Վրաստանի կառավարությանը ձևական բողոք հայտնելու[190]: 1918 թ. հունիսի

[190] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 222, ց. 1, գ. 120, թ. 39-40:

16-ին հետևեց Հայոց Ազգային խորհրդի հայտարարությունը Վրաստանի կառավարության կողմից երկրի սահմանների հայտարարման առթիվ: Անդրադառնալով այդ խնդրին և նշելով այն մասին, որ ըստ վրացական կառավարության դեկլարացիայի հրահանգ է տրվել վրաց զորքերին գրավել Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղագծի մի մասը՝ մինչև Շահալիի և Ղարաքիլիսայի միջև գտնված թունելը և մատնացույց անելով 1783 թ. Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված դաշնագիրը, հայկական կողմը անհամաձայնություն է արտահայտում այդ մոտեցման հետ և հակառաջարկ անում: Հայկական կողմի տեսակետով, 1) Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև սահմանների խնդրի վերաբերյալ դեռևս համաձայնություն չի կայացել հարևան պետությունների հետ: Վրաստանի կառավարության միակողմանի որոշմամբ սահմանների հարցը վճռվել չի կարող, քանի որ այդ բանը որոշվելու է Վրաստանի և Հայաստանի միջև կայացած համաձայնությամբ և դաշնագրով, 2) իր էությամբ վրացական կառավարության այդ որոշումը հակասում է դեմոկրատական սկզբունքներին, որի հիմքը ծառայում է ժողովուրդների ինքնորոշումը և էթնիկական սկզբունքը, որով և ղեկավարվում էր մինչև օրս կովկասյան դեմոկրատիան[191]:

Այս առումով դիտարժան է նաև Լոռու և Ղազախ-Շամշադինի հայրենակցական միությունների կողմից 1918 թ. հունիսի 16-ին ընդունված բանաձևը Վրաստանի տարածքային նկրտումների վերաբերյալ. «Ի նկատի ունենալով վերջերս տեղական մամուլի մեջ երևացած պաշտոնական հայտարարությունը և լսելով այդ առթիվ զեկուցումներ, ըստ որոնց Վրաց Դեմոկրատիկ Հանրապետությունը որոշել է յուր սահմաններին կցել Լոռու և Ղազախ-Շամշադինի հայաբնակ շրջանները՝ առանց այդ վայրերի ազգաբնակչության կամքը և ցանկությունները հարցնելու կատարվելիք սահմանակցման վերաբերմամբ, նկատի ունենալով ռուսական մեծ հեղափոխության զանազան ելևէջներում սրբագործված ազգերի և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքներն ու իրավունքները.

ա) նկատի ունենալով հայ ժողովրդի պատմական, ազգագրական և կուլտուրական պայմանները, որոնք անկապտելիորեն վերապահում են

[191] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 19 հունիսի, 1918 թ., N 118:

հիշյալ գավառներին իրենց բացառապես հայ ազգաբնակչությամբ, ուր չկա մի անհատ իսկ վրացի բնակիչ, նույնիսկ վերաբնակյալ՝ միանալու իրենց ցեղակից և պատմական իրավունքներով ու ավանդություններով կատարելապես համանման հայկական Հանրապետությանը,

բ) որ Լոռու և Ղազախ-Շամշադինի շրջաններից զրկվելը ծանր հարված կլիներ այդ ժողովրդի [հայ] սրտին և ոտնահարում նրա էական իրավունքների, Լոռու և Ղազախ-Շամշադինի հայրենակցական միությունների ընդհանուր ժողովը 1918 թ. հունիսի 16–ին կայացրած հավաքույթում որոշեց՝ բողոքելով Վրաց կառավարության ձգտումների դեմ, կտրուկ և շեշտակի պահանջ դնել [Հայոց] Ազգային խորհրդի առջև, որ նա սույն նկատառումներով ամեն կարելի միջոցներ գործ դնի՝ դիմում անելու վրացական կառավարությանը և հարկ եղած դեպքում գերմանական ներկայացուցչությանը՝ Լոռու և Ղազախ-Շամշադինի զուտ հայաբնակ շրջանները կցելու Հայկական Հանրապետությանը՝ սպառելով այդ նպատակին հասնելու համար բոլոր բարոյական և դիվանագիտական հնարները: Սույն բանաձևը ուղարկել նաև վրաց սոցիալ-դեմոկրատիայի պատասխանատու մարմնին և նույնն իբրև կոչ ուղղել մամուլի մեջ»[192]:

Գերմանիայի և Թուրքիայի միջև անմիջական փոխպայմանավորվածության կամ ավելի շուտ գործնական համաձայնության արդյունքում, 1918 թ. հունիսի երկրորդ կեսին գերմանական զորքերը Բորչալուի գավառում պետք է մնային Վորոնցովկայի գծի վրա, իսկ Կամենկա գետը պետք է դառնար բաժանարար գիծ գերմանացիների և թուրքերի միջև, որում պետք է դրվեին սահմանապահ ուղեկալներ[193]: 1918 թ. վրաց-գերմանական միացյալ զորամասերը Բորչալուի գավառում զբաղեցրին Վորոնցովկա-Ալեքսանդրովկա-Այդեբեկ-Քոբեր կիսակայարանը՝ Քորինջ-Ծաթեր գիծը, իսկ թուրքերը՝ Զորագետ գետի աջ կողմը՝ Նովոպոկրովկա, Ջալալօղլի-Նիկոլաևկա-Գյառգյառ-Վարդաբլուր-Կուրթան եզրագիծը՝ ընդհուպ մինչև Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթուղու 117 վերստը՝ Քոբեր, Քոլագիրան, Մարց և Լորուտ բնակավայրերը:

---

[192] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 245, ց. 1, գ. 4, թ. 17 և հակ.:

[193] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 48:

Հարկ է ասել, որ առհասարակ հայ քաղաքական ուժերի համար աննշմարելի էին այն խորքային քաղաքական տեղաշարժերը, որոնք տեղի էին ունեցել տարածաշրջանում, երբ անիրականը իրականի տեղ էր ընդունվում: Այս առումով տեղին է նկատել Լեոն, երբ նկատում է, որ «ՀՅԴ չէր կարողանում նշմարել այն դիրքի տարբերությունը, որ կար նրա (ասել է թե՝ Հայաստանի Հանրապետության – Վ. Վ.) և մյուս հաղթողների միջև: Այսինքն, որ հաղթողներին «իրերի և կացությունների տեր դարձնում է ուժը»[194], մինչդեռ հայ քաղաքական կուսակցություններըը դա չէին տեսնում կամ չէին կարողանում տեսնել:

Այս հայտարարությունը սառը ցնցուղ էր հայերի գլխին: Վրաց և Հայոց ազգային խորհուրդների նախկինում տեղի ունեցած երկխոսությունը փակուղի մտավ, տեղ տալով թշնամանքին վիճելի տարածքների շուրջ: Եվ չնայած որոշվեց կրկին ուսումնասիրել հարցը և նոր խորհրդաժողովում առաջարկել փոխզիջումային տարբերակներ, վիճելի տարածքների համար բանակցությունները փոխադրվեցին այլ հարթություն: Վրացական առաջնորդները ամպագոռգոռ հայտարարեցին, որ Վրաստանը ռազմաքաղաքական նկատառումներով չի կարող հրաժարվել Լոռի-Ախալքալաքի գավառներից, ինչպես և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանից, միաժամանակ օգտվելով Գերմանիայի ռազմաքաղաքական ներկայացուցչության ղեկավար ֆոն Քրեսսի[195] և առհասարակ Գերմանիայի աջակցությունից, չնայած դեռ 1918 թ. մայիսի 15-ին Բաթումիի կոնֆերանսում գերմանական պատվիրակության ղեկավար գեներալ Օտտո ֆոն Լոսսովը Բեռլին՝ Արտաքին Գործերի նախարարությանը ուղղված հեռագրում հաղորդում էր «մաքուր հայկական մարզեր Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի և Երևանի նկատ-

---

[194] Տե՛ս Լեո, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատոր Բ, Փարիզ, տպ. Պահրի եղբարց, 1934, էջ 234:

[195] Ֆոն Քրեսս (Քրեսսենշտեյն) Ֆրիդրիխ [24.04.1870 թ. -16.10.1948 թ.] – Գերմանական հայտնի ռազմական գործիչ, բարոն, բավարական գեներալ-մայոր: Եղել է Գերմանիայի կառավարության կողմից Օսմանյան Թուրքիա գործուղված գերմանական գեներալների և սպաների պատվիրակության կազմում: Հանդիսացել է Ջեմալ փաշայի բանակի շտաբի պետը, իսկ այնուհետև՝ թուրք-գերմանական բլոկի փլուզումից հետո գործուղվել է Վրաստան՝ նպաստելով Վրաստանի անկախ պետականության կայացման ռազմաքաղաքական գործընթացներին: Հանդիսացել է Անդրկովկասում գերմանական զորքերի հրամանատարը:

մամբ թուրքերի չափից դուրս պահանջների մասին»[196]: Վրաց առաջնորդները մերկապարանոց պնդում էին, որ դա, այսինքն՝ իրենց դիրքորոշումը նույնիսկ բխում է այդ վայրերի հայկական բնակչության շահերից, չնայած հայ գաղթականների նկատմամբ նրանց վերաբերմունքը, հաղորդակցության ուղիներում նրանց բռնարարքները, անդրկովկասյան գույքին նրանց միանձնյա տիրելու ձգտումը, Ալավերդու և այլ շրջաններում անհիմն զորակոչերը հայ բնակչության շրջանում բացահայտեցին ուղիղ հակառակը: Վրացական դիրքորոշման անսպասելի փոփոխությունը շփոթմունք է առաջ բերում հայկական քաղաքական շրջաններում: Այս առիթով Խաչատուր Կարճիկյանը հայտարարում է, որ «Ծերեթելու հայտարարության մեջ ինքը տեսնում է Հայաստանը Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի մեջ բաժանելու հին նախագծի իրագործման գործընթացը»[197]: Այս նույն տեսակետին է նաև Վահան Փափազյանը (Կոմս). «Վրացիները կլանելով Ախալքալաքը, Արտ[դ]ահան-Արդուինի շրջանները եւ մեր առջեւ փակելով Սեւ ծովը տանող Ճորոխի հովիտը՝ ախորժակ ունէին ձեռք ձգելու նաեւ Լոռիի ամբողջ հովիտը, հողամաս մը, որ բացառապէս հայերով բնակեցուած էր եւ հարուստ էր անտառներով ու հռչակավոր պղնձահանքովը:…Վրացիները, որոնք պատմութեան մեջ միշտ եղբայրօրէն կենակցած են հայութեան հետ, գերազանցեցին ազրպէյջանցիներուն, ախորժակնին ուտելով բացուեցաւ: Օգտուելով Հայաստանի ներքին ծանր վիճակին, տնտեսական ծանր պայմաններէն եւ նորակազմ պետութեան յարաբերական թուլութիւնէն, յանկարծակի խուժեցին Լոռիի գիւղերը և փորձեցին վրացական վարչութիւններ հաստատել»[198]: Ծերեթելին խոստանում է վերաքննել հարցը, սակայն հետագա գործընթացները ցույց են տալիս նրա խոսքերի սնամեջությունը:

Սահմանազատման խնդրում 1918 թ. աշնանը երկու նորաստեղծ հանրապետությունները՝ Հայաստանը և Վրաստանը կանգնեցին դեմ առ դեմ անհաշտելի դիրքորոշումներում: Այս առումով հետաքրքիր դիտարկում ունի Ռ. Հովհաննիսյանը, որի հետ բոլոր նրբերանգներում

---

[196] Տե՛ս Из истории иностранной интервенции в Армении в 1918 г.: Документы, Ер., 1970, стр. 16:

[197] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 17, թ. 15-17:

[198] Տե՛ս Փափազեան Վ., Իմ յուշերը, հատոր 2, Պէյրութ, 1952, էջ 495-496:

դժվար է համաձայնվել, սակայն ընդհանուր առմամբ պատմաքննական մոտեցումը դիտարժան է. «…1918 թ., երբ երկու ազգերն էլ մարտնչում էին գոյատևելու համար, նրանց անփորձ կառավարությունները արագորեն տրվեցին վիրավորանքներին և անզիջում վարքագիծ որդեգրեցին միմյանց հանդեպ: Նախկին կապերը քայքայվեցին և վերածվեցին նախանձի և անվստահության:

Զգալով, որ իրենց դավաճանել են, հայերը Անդրկովկասյան Դաշնակցային Հանրապետության փլուզումը վերագրեցին վրացիներին»[199] [իսկ դա գործնականում իրողություն էր – Վ. Վ.] , որոնք ապավինելով գերմանական հովանավորությանը, Հայաստանը թողեցին թուրքերին դեմ-հանդիման: Դառնացած և վիրավորված՝ հայերը հուզվեցին վերստին, երբ Թիֆլիսի վերահսկողությունը խլվեց նրանց ձեռքից [կարծում ենք, այս պարագայում դժվար է համակարծիք լինել Ռ. Հովհաննիսյանի հետ, ըստ որի կեղծ տպավորություն է առաջանում, թե իբր «հայերը իրական հավակնություններ էին ցուցաբերել Թիֆլիսի նկատմամբ, ինչը չի համապատասխանում իրականությանը –Վ. Վ.]: Նրանք մեղադրում էին վրաց մենշևիկներին, որ անարգելով սոցիալ-դեմոկրատական շարժման միջազգայնական և մարդասիրական սկզբունքները, ամենաանպատկառ ձևով դիմակազերծել են իրենց ազգայնամոլությունը՝ դաշնակցելով ազնվականության հետ, Թիֆլիսի հայկական համեմատական մեծամասնությունը ճնշելու համար: Հավասարապես քստմնելի վարքագծով, վրաց կառավարությունը փակել էր թուրքական բանակների առջևից փախչող գաղթականների փախուստի ճանապարհները»: Այստեղ, վճռաբար հերքելով վրացական կողմի այն տգետ հերյուրանքները, ըստ որի իբր թե «հայերը Վրաստանում ապաստան գտնելով անցյալ տասնամյակներին, այժմ անխղճորեն ոտնահարում են վրաց ժողովրդի բարյացակամությունը»՝ ձգտելով տիրանալ երկրին[200], Ռ. Հովհաննիսյանը հանգում է եզրահանգման, դա բոլորովին էլ այդպես չէր, քանզի Թիֆլիսը որպես Անդրկովկասի ամենաբարգավաճող և ծաղկող քաղաք պարտական էր հայերի աշխատասիրությանը և եռանդին, ինչու չէ՝ սովորութային ուժով ամրակայված նվիրվածությանը թիֆլիս-

[199] Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, էջ 70-71:

[200] Տե՛ս նույն տեղում, էջ 71: Տե՛ս նաև Ա-Դո, Հայութեան երկունքը, էջ 563-569:

յան բարքերին և պատմությանը, և ընդամենը դա էր իրողությունը, ու ոչ ավելին, և ամենևին էլ ոչ Վրաստանում իշխող դիրք գրավելը:

Սակայն Ախալքալաքի և Բորչալուի գավառների պատկանելիության խնդրում կոնսենսուս ձեռք չբերվեց, քանզի պաշտոնական մենշևիկյան Վրաստանը ամուր կերպով կառչած մնաց Թիֆլիսի նահանգի հարավային սահմանագծի անխախտելիության վրա՝ որպես Վրաստանի Հանրապետության նոր պետական սահմանների, իսկ Հայաստանի Հանրապետությունը հակադրվելով դրան, պնդում էր, որ նախկին կայսերական նահանգների սահմանները չպետք է ընդունել որպես իրողություն, որպես գոյություն չունեցող սահմաններ ո՛չ էթնիկական, ո՛չ էլ պատմական առումներով: Հայկական կողմը ոչ առանց հիմքի ընդամենը մեղադրական տոնով հիշեցնում էր վրացական կողմին, որ դեռ 1917 թ. Պետրոգրադում հրավիրված Անդրկովկասյան զեմստվային կոնֆերանսի ընթացքում վրացական սոցիալիստները, որոնք 1918 թ. մայիսին եկան իշխանության գլուխ, խոստումներ էին տվել հայկական ազգային կուսակցություններին էթնիկական սկզբունքի հաշվառմամբ վերանայել մի շարք վարչական սահմաններ, ինչից էլ ելնելով ՀՀ կառավարությունը և կուսակցությունները Վրաստանից պահանջում էին հրաժարվել մի շարք սահմանային տարածքներից, որոնցում հայերը էթնիկական տեսանկյունից մեծամասնություն էին կազմում:

1917 թ. հունիսին վրացական մենշևիկները և սոցիալիստ-ֆեդերալիստները նպատակահարմար էին գտնում, որ տարածքային ինքնավարության սահմանագծերը պետք է հաստատվեն ըստ այս կամ այն ժողովրդի իրական տեղաբաշխման, ընդ որում հաշվի առնելով նաև կենցաղային-տնտեսական պայմանները, պահպանելով և անփոփոխ թողնելով սահմանային-տարածքային ամբողջականությունը: Ըստ այդմ, ազգային-էթնիկական սահմանների փոփոխման պարագայում սահմանային վիճարկելի տարածքներում պետք է անցկացվեր բնակչության հանրաքվե[201]: Բնականաբար, նոր իրավիճակում նրանց համերաշխությունը և գործակցությունը ՀՅ Դաշնակցության հետ երկարատև չեղավ, այլ ընդամենը մինչև այն պատմական պահը, երբ երկու վրացական ազգային-քաղաքական կուսակցությունները՝ վրաց հեղափոխական-սո-

[201] Տե՛ս «Պայքար», Թիֆլիս, 21 հունիսի, 1917 թ.:

ցիալիստական կուսակցությունները վճռապես և հաստատապես հրաժարվեցին իրենց հայամետ և թվացյալ հայասեր տեսանկյունից, վրացական ազգային գերապատիվ ռազմավարական շահերին հակադիր վտանգավոր հայեցակարգից և ըստ էության հարեցին վրացական ազգային–դեմոկրատական կուսակցությանը:

Պաշտոնական Թիֆլիսը իր կոշտ հակադարձման մեջ առարկելով հայկական կողմին, պնդեց, որ հայկական կողմի հետ ձեռքբերված պայմանավորվածությունները իրապես և ըստ սկզբունքի չեն եղել պայմանավորվածություններ, այլ ընդամենը հանդիսացել են կառուցողական-կոնստրուկտիվ նախաձեռնողականության արտահայտություններ, որը վերաբերել է միասնական ֆեդերատիվ պետության շրջանակներում սահմանագծմանը [ռեֆորմացված Ռուսաստանյան կայսրության], հաշվի առնելով և որպես մեկնակետ ընդունելով բացառապես տնտեսական գործունեության և վարչական ղեկավարման հարմարությունը: Ավելին, ճկունորեն օգտագործելով քաղաքական ձեռնածության հնարքները, վրացական կողմը հայտարարեց, որ այդ հայտարարությունները արվել են դեռ մինչև Վրաստանի և Հայաստանի անկախության հռչակումը, և պարզապես չեն կարող կիրառելի լինել պետական սահմանների որոշման ժամանակ: Այսպիսով, ինչպես ակնհայտ է դառնում պատմաքաղաքական զարգացումների համադիր վերլուծությունից, 1918 թ. աշնանը Հայաստանի և Վրաստանի միջև չկար համաձայնություն վիճելի դարձած Բորչալուի և Ախալքալաքի գավառների ապագա պատկանելիության խնդրում: Այս եզրահանգմանը որպես հետգրություն ավելացնենք, որ մի շարք հեղինակներ, ինչպես աղմուկ հանած արևմտյան հեղինակներ Է. Անդերսենը և Գ. Էգգեն, տուրք տալով վրացական փաստարկումներին և իրենց իմպերիական նախապաշարմունքներին, հանիրավի, առանց լուրջ փաստարկման մերկապարանոց պնդում են, թե իբր հայկական կողմը չբավարարվելով պահանջատիրական դիրքերից հանդես գալ Ախալքալաքի և Բորչալուի գավառների խնդրում, պահանջներ է ներկայացրել նաև Գորիի գավառի ոչ մեծ մասի նկատմամբ,

առաջարկելով սահմանը տեղաշարժել Ցխրացկարո կամ Ցխրա-Ցկարո լեռնանցքով[202]:

Հայ-վրացական հարաբերությունների լարվածությունը վերաճում էր բացահայտ պատերազմի, և Լոռում հայ բնակչության ապստամբությունը վրացական զորամասերի միջոցով խեղդելուն պետք է բնականաբար հաջորդեին հայկական կողմից ձեռնարկված լայնածավալ ռազմական գործողությունները Դրոյի գլխավորությամբ: Վրացիները զգալի ուղղակի և անուղղակի աջակցություն ստանալով Թուրքիայից և Ադրբեջանից, էլ ավելի վստահ զգացին իրենց, Հայաստանի մատակարարման և համալրման տեսանկյունից շատ կարևոր ծովային, ավտոմոբիլային և երկաթուղային հանգուցակետերը արգելափակելով և պահելով իրենց մշտական հսկողության տակ: Այդ ընթացքում ձգտելով հասնել Լոռու և Ախալքալաքի ժողովրդագրական փոփոխություններին և էթնիկական զտմանը, վրացիները բազմաթիվ արգելքներ հարուցեցին հայ փախստականների վերադարձի ճանապարհին, միաժամանակ ամենևին դեմ չլինելով նույնիսկ թուրքական օգնություն ստանալուն: Հենց դրանով էլ պարզապես պայմանավորված էր վրացական հրաժարականը 1917 թ. փոխպայմանավորվածություններից իրենց նախկին «հայ բարեկամների հետ»: Նպատակներից մեկն էլ Վրաստանում հայկական համայնքի չեզոքացումն էր և նաև՝ վերջին հաշվով ձուլումը: Վրացական նացիոնալիզմը այնքան վճռականորեն էր տրամադրված, որ առավել խուսափողական հայկական ստրատեգիան և տակտիկան իրեն փակուղի մտցրեց, և գործնականում ցանկալին ընդունվեց իրականության տեղ և կախվածության մեջ հայտնվեց բրիտանական կամ եվրոպական այլ երկրներից ակնկալվող սպասելիքներից և օգնությունից, ինչը էապես վտանգեց հեռանկարային և խելամիտ հայկական ռազմավարության ընտրության հարցը: Այդ ընթացքում վրացիները օգտվելով աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխություններով ընձեռված

[202] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

նոր հնարավորություններից, ամեն կերպ ձգտեցին կովկասյան տան մեջ ունենալ առավելություններ և զավթել կովկասյան տարածքի մեծ մասը[203], ինչն ինքնին վրացական մեկնակետից հասկանալի էր և որին վրաց պետաքաղաքական գործիչներն անսահմանորեն նվիրված էին, մասնավորապես բազմափորձ Ն. Ժորդանիան և Ն. Ռամիշվիլին:

Դեռ 1918 թ. հունիսի 4-ին թուրքական կառավարությունը Բաթումիում պայմանագիր կնքեց Վրաստանի հետ, ըստ որի ստացավ Կարսը, Արդվինը, Արդահանը, Ախալցխան, Ախալքալաքը, որի կապակցությամբ վրաց պատմաբան Գուրամ Մարխուլիան գրում է որպես վրացական պետության սահմանների պարզորոշման ուղղությամբ առաջին կարևոր քայլերից: 1918 թ. հունիսի 5-ին Վրաստանի կառավարության նիստում լսվեց ռազմական մինիստր պ. Գեորգաձեի զեկույցը՝ «Բորչալուի գավառում տիրող վիճակի և վրացական պետության ճշգրիտ սահմանների պարզորոշման անհրաժեշտության մասին» զեկուցումը: Ընդունվեց հետևյալ որոշումը. գոյություն ունեցող սահմանների պահպանության համար հանձնարարել Զինվորական մինիստրին ռազմական ուժեր տեղադրել Բորչալուի, Սղնախի և Թիֆլիսի գավառների սահմաններին, իսկ սահմանների մանրակրկիտ ճշգրտման համար կազմել հանձնաժողով, որի կազմի մեջ մտան Դ. Օնիաշվիլին, Ալ. Մդիվանին, Տակայշվիլին[204]:

Ընդ որում հայ-վրացական սահմանավեճին միախառնվեց նաև ադրբեջանական պահանջատիրությունը ոչ միայն Զաքաթալայի, այլև Բորչալուի գավառի, Սղնախի և Թիֆլիսի գավառների մուսուլմաններով բնակեցված շրջանների նկատմամբ, ինչը նյարդայնացնում էր վրաց կառավարող և ռազմաքաղաքական շրջաններին, և մատնանշելով ազգերի ինքնորոշման սկզբունքը, առաջարկվեց ստեղծել սահմանազատող հանձնաժողով՝ սահմանատարածքային հարցերը կարգավորելու համար: Սակայն ստեղծված իրավիճակում Վրաստանը հակված չէր ռազմաքաղաքական զիջողականության ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Ադրբեջանի հանրապետության հետ, և կտրականապես հրաժարվեց

[203] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах (с сокращениями), стр. 4: Տե՛ս նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/: http://groong.usc.edu/tcc/tcc-20060508.htm1:

[204] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 10:

քննարկել այդ հարցը, միանշանակ եզրակացնելով, որ Թիֆլիսի նահանգի ողջ տարածքը անվիճելիորեն վրացական տարածք է, համաձայնվելով միայն Ադրբեջանի հետ որոշակի զիջման գնալ Զաքաթալայի խնդրում[205]:

1918 թ. հունիսի 8-ին Վրաստանի պրեմիեր-մինիստրի կողմից հաղորդվում է Թիֆլիսում գերմանական ռազմական ներկայացուցչության պետին այն մասին, որ Վրաստանի կառավարության կողմից արվել է կարգադրություն Անդրկովկասյան երկաթգծի ողջ երկայնքով մինչև Քուռ գետի և Փոյլի կայարանի մոտ գտնվող կամուրջն ընկած տարածքի գրավման մասին, իսկ Ալեքսանդրապոլի գծով՝ այդ նույն ճանապարհով մինչև Ղարաքիլիսա և Շահալի կայարանների միջև գտնվող թունելի միջակայքը, հիմնվելով նախկին վրացական թագավորության պետական սահմանների վրա՝ արևելյան կողմից ավելացնելով, որ դա ավելին կլիներ, եթե հաշվի առնվեր 1783 թ. տրակտատը Վրաստանի և Ռուսաստանի միջ[206]:

Վրացական կառավարության նման դիրքորոշումը բողոք-դժգոհություն առաջ բերեց Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի կողմից, որը տպագրվեց «Борьба» թերթում. «Հայոց Ազգային խորհուրդը տեղեկանալով Վրացական կառավարության նոտայի մասին, որում նա կարգադրել է վրացական զորամասերին գրավել Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղագծի մի մասը մինչև Շահալի-Ղարաքիլիսա թունելը, վկայակոչելով Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված 1783 թ. պայմանագիրը, ըստ որի վերջինիս պատմական սահմանները տարածվում են ավելի հեռուն, կարծում է, որ Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև չի կայացել համաձայնություն երկու հարևան պետությունների սահմանների հարցի մասին»: Հայկական կողմը գտնում էր, որ Վրաստանի կառավարության միակողմանի որոշմամբ սահմանների մասին հարցը չի կարող լուծվել, որը կարող է լինել սահմանների հարցում Վրաստանի և Հայաստանի միջև համաձայնության կայացմամբ, որի հիմքում պետք է ընկած լինի ազգերի ինքնորոշման իրավունքը և սահմանազատման էթնիկական սկզբունքը[207]: Հայկական կողմը գտնում

[205] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, N 151, 1 օգոստոսի, 1918,: Авалов З., Указ. соч., стр. 57:
[206] Տե՛ս http://www.iarex.ru/articles/32741.html:
[207] Տե՛ս «Борьба», Тифлис, 10 июня, 1918, № 96:

էր, որ Վրացական կառավարության որոշումը հակասում է դեմոկրատական սկզբունքներին, որի հիմքում ընկած է ժողովուրդների ինքնորոշումը և էթնիկական սկզբունքը: Պատմական սկզբունքը, բնականաբար, ձեռնտու չէր Հայաստանի կառավարությանը, որը վրացիները հրաշալի ըմբռնում էին, քանզի այն կողմերին դնում էր այլ տարածականության մեջ, և այդ առումով սպառնալիք էր ստեղծվում որոշակի ախարհագրական-քաղաքական միջավայրում հայտնված հայկական պետականության գոյությանը: Բնականաբար, այս մոտեցումը մերժվում էր վրաց մեծապետականության գաղափարները կրողների կողմից:

Դրան հաջորդեցին վրաց կառավարության այլ քայլեր ևս: Այդ կապակցությամբ Վրաստանի կառավարությունը 1918 թ. հունիսի 10-ին սահմանազատման հետ կապված կազմեց հանձնաժողով և առաջին իսկ նիստում հայտարարեց այն մասին, որ Վրաստանի կազմի մեջ ամբողջությամբ պետք է մտնեն Ախալքալաքի, Ղազախի, Բորչալուի գավառները և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանը, որը ազգամիջյան հարաբերությունների սրացման հարմար առիթ էր:

Այդ ընթացքում վրացիները փորձում էին նախաձեռնողականությունը ոչ մի կերպ իրենց ձեռքից բաց չթողնել և երկու հանրապետությունների միջպետական սահմանի որոշման համար 1918 թ. հունիսի 10-ին ստեղծվեց հանձնաժողով, որի կազմում ընդգրկվեցին Ի. Գ. Ծերեթելին, Դ. Ե. Օնիաշվիլին, Ե. Ս. Թակայշվիլին, գեներալ Ի. Օդիշելիձեն, որի աշխատանքներին իբրև իրազեկ անձինք հրավիրվեցին Պ. Ինգորոկվան, Ալ. Մդիվանին. մասնակցելու համահրավերք ուղարկվեց Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչներին, որին սակայն ադրբեջանցիները չմասնակցեցին: Հանձնաժողովի առաջին իսկ նիստում Վրաստանի Ազգային խորհրդի կողմից Հայաստանի ներկայացուցիչներ Կարճիկյանին, Գ. Խատիսյանին, Գ. Կարախանովին հայտնվեց, որ Վրաստանի կազմի մեջ ամբողջությամբ պետք է ընդգրկվեն Ախալքալաքի, Ղազախի, Բորչալուի և Ալեքսանդրապոլի գավառները: Դրան ի պատասխան Կարճիկյանը հայտարարեց, որ ինքը Ծերեթելու առաջարկության մեջ տեսնում է Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի միջև Հայաստանի բաժանման հին պլանը, պնդելով, որ Լոռին և Ախալքալաքը անվիճելիորեն պատկանում են Հայաստանին: Կարելի է հետևություն անել, որ Անդրկովկասյան տան փլուզման գաղափարը ձեռնտու

էր Վրաստանին, քանզի վերջինս գտնում էր, որ կարելի է գործակցել Թուրքիայի հետ, իսկ Հայաստանի հետ ընդհանուր մի միության մեջ գտնվելը ընդամենը միայն կկաշկանդեր[208]:

Գործի մեջ իրենց բաժին քաղաքական խառնաշփոթը մտցրեցին բրիտանացիները, որոնք իրենց երկակի-եռակողմ և բազմակողմ տեսանելի և անտեսանելի ռազմավարական մոտեցումները ներարկեցին աշխարհաքաղաքական անդրկովկասյան միջավայր, որոնց հետ էլ հայ քաղաքական առաջատար ուժը՝ ՀՅԴ սկսեց որոշակի հույսեր փայփայել, չնայած ինչ-որ տեղ ակնհայտ էր, որ Մեծ Բրիտանիային անդրկովկասյան հանրապետություններն անհրաժեշտ էին բոլշևիզմից պատսպարվելու և բոլշևիկյան կայսերակալությունից պաշտպանվելու համար: Մեծ Բրիտանիան իր հաշվարկներն ուներ և «Մեծ Հայաստանի» գաղափարի իրագործման տիրույթում կային նաև թուրքերը, որոնց հետ էլ բրիտանացիները իրենց խնդիրներն ու լուծումներն ունեին:

Իրադարձություններն ընթանում էին հակասական ընթացքով, և այնուամենայնիվ անդրկովկասյան ժողովուրդների ներկայացուցիչները փորձում էին կուտակված սահմանատարածքային վիճարկելի հարցերը լուծել: Սահմանազատիչ հանձնաժողովի հունիսի 11-ի նիստում լսվեց Պ. Ինգորոկվայի զեկույցը, ըստ որի Վրաստանի սահմանները հարավից ձգվում էին Փոքր Կովկաս գագաթով, անցնելով Բորչալուի գավառի հարավային սահմանի մոտով, Ղարաքիլիսայով դեպի հարավ, հասնելով Գյոկչա-Սևանա լճի հյուսիսային ափը, Աղստև գետով թեքվելով դեպի հյուսիս, հասնելով Ձեգամ [Ջեգամ] կայարանը, իր մեջ ներառնելով Զաքաթալայի գավառը և եզրափակվելով Սիլարաթ լեռով, գտնելով, որ պատմության ողջ երկարաձիգ ընթացքում Վրաստանը ձգտել է դեպի հենց այդ սահմանները՝ ընդհուպ մինչև Սուրամի լեռնաշղթա: Պ. Ինգորոկվան էթնիկական սկզբունքով սահմանաբաժանումը կտրուկ մերժում էր, գտնելով, որ այն չի պատասխանում վրացական պետականության պահանջներին, որ Վրաստանը պետություն դառնալու համար պետք է պարփակված լինի տնտեսական և ռազմազիտական առումներով հարմար սահմանների մեջ: Դրան ի հակառակ, Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչները՝ Գ. Հ. Խատիսյանը, գեներալ Գ.

[208] Տե՛ս http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920:

Ղորղանյանը և Խ. Կարճիկյանը հակադրվելով վրացական հանձնաժողովի կողմից առաջադրված նկատառումներին ուղղակիորեն, առանց դիվանագիտական մանևրումների ու շահմատային ռազմավարության կանոնների կիրառման պահանջում էին Լոռին, Ախալքալաքը և Բորչալուի գավառի առնվազն երկու երրորդը, որը չէր վերաբերում գավառի թաթարաբնակ մասին, ասելով, որ հարկավոր է հիմք ընդունել այն սահմանագիծը, որի շուրջը նախկինում անդրկովկասյան ժողովուրդների ներկայացուցիչները համաձայնության են եկել երկրամասի վարչական բաժանման հարցը քննարկելիս, միաժամանակ նաև Ադրբեջանին զիջելով Սղնախի գավառի մեծ մասը[209]:

Հայկական պատվիրակության այդպիսի հարցադրումը առաջ բերեց վրացական կողմի բացահայտ դժգոհությունը, ինչի հետևանքով հանձնաժողովի աշխատանքներն ընդհատվեցին և այլևս չվերսկսվեցին:

Այդ ընթացքում ձախողվեց նաև Անդրկովկասի հանրապետությունների և եվրոպական պետությունների մասնակցությամբ Կ. Պոլսում կոնֆերանս հրավիրելու գերմանական նախաձեռնությունը[210]:

Եվ այդ ընթացքում, դեռ 1918 թ. հունիսի սկզբին թուրքական զորամասերը և տեղական թաթարների զինված բանդաները «ակոսում էին» Բորչալուի գավառի զգալի մասը մինչև Շուլավեր: Իսկ հունիսի 11-ին վրացական զորամասերը օգտվելով ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի ընձեռած հնարավորություններից և գերմանական աջակցությունից, երեք օրվա ընթացքում հասնելով մինչև Սանահին, գործնականում վերահաստատվեցին ողջ Բորչալուի գավառում[211]:

Հունիսի 15-ին Թուրքիայի կառավարությունը Վրաստանի վարչակարգին ներկայացրեց պահանջ, ըստ որի պահանջում էր թույլ տալ ժամանակավորապես ետ կանգնելու 1918 թ. հունիսի 4-ի III հոդվածից, և թույլ տալ թուրքական զորքերին զբաղեցնելու Բորչալուի գավառի մի

---

[209] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 11: Տե՛ս նաև «Հորիզոն», Թիֆլիս, N 117, 18 օգոստոսի, 1918 թ.: Шахатунян А., Административный переделъ Закавказского края, стр. 136-137:

[210] Hovannisian R. G., The Republic of Armenia. University of California Press. Berkeley. Los Angeles. London. Volume I, 1975, p. 52:

[211] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 2, հունիսի, N 105, 8 հունիսի, N 110, 15 հունիսի, N 115, 18 հունիսի, N 117, 1918 թ.:

մասը՝ Կամենկա գետով ու Քոբեր կիսակայարանի և Քոլագիրան կայարանի միջև կամրջից երկաթգծով դեպի հարավ՝ 117 վերստ: Թուրքական հրամանատարության պահանջը հավանության արժանացավ Թիֆլիսի գերմանական ռազմական միսիայի կողմից, որին մասամբ անդրադարձել ենք: Դա պետք էր թուրքական հրամանատարությանը, որպեսզի իրենք կարողանան անհրաժեշտության դեպքում առաջխաղացվել Ղարաքիլիսա-Դիլիջան-Ղազախի խճուղով, և իրենց զբաղեցրած ռազմավարական դիրքի հետ հաշվի նստեն, զորքեր տեղափոխեն, ինչի հետ էլ Վրաստանի կառավարությունը համաձայնվեց: Թուրքական զորքերին թույլատրվեց զբաղեցնելու Կամենկա գետի աջ ափով ընկած գիծը, այսինքն՝ Նովոպոկրովկա, Ջալալօղլի, Նիկոլաևկա, Հերհեր, Վարդանլուր, Քուրտան, Դարաքենդ [Դար-Քենդ] գյուղերը և այնուհետև կամրջից 117 վերստ նախկին անդրկովկասյան երկաթգծի Ալեքսանդրապոլի ճյուղով ընդհուպ մինչև Քոբեր և Քոլագիրան կայարանները և Մարց ու Լորուտ [Լոռուտ] գյուղերը, իսկ այդ գծից հյուսիս գտնվող Վորոնցովկա, Ալեքսանդրովկա, Այդեբել, Մղերթ, Քոբեր, Քորինջ և Ծաթեր գյուղերը զբաղեցվեցին վրացական զորամասերի կողմից[212]:

Այդ իրավիճակը գործնականում պահպանվեց մինչև 1918 թ. հոկտեմբերի 18-ը, և ըստ այդ սահմանավիճակի, Հայաստանը Վրաստանի տարածքի հետ անմիջական սահմանակցման եզրեր չուներ, երկու պետությունների միջև փոխադարձ մեղադրանքները և համեմատաբար խաղաղ բնույթ ունեցող վեճերը առ ժամանակ դադարեցին՝ ընդհուպ մինչև 1918 թ. հոկտեմբերը, ավելացրած նաև այն հանգամանքը, որ վիճելի համարվող Ախալքալաքը և Բորչալուի գավառի հարավային մասը ռազմակալված էին թուրքական զորամասերի կողմից:

Միաժամանակ կան ասվածին հակասող մտեցումներ. պրոֆեսոր Ռ. Հովհաննիսյանը ենթադրում է, որ հոկտեմբերյան միջադեպը ընդամենը միայն հայկական զինվորականության «վրացական ուժերի փորձարկումն» էր, նպատակ հետապնդելով պարզել, թե ինչքանով լուրջ

[212] Տե՛ս Армяно-Грузинская война (1918) -Адамалла www.adamalla.com›...› Библиотека› Кавказ:

խոչընդոտների կիանդիպի վիճելի տարածքները ուժով Հայաստանի Հանրապետությանը միացնելու փորձը[213]:

Իրավիճակը բարդանում էր նրանով, որ այդ ժամանակ Թիֆլիսում գտնվող հայկական կառավարությունը հապաղում էր Երևան մեկնել, և նման պայմաններում վրացական կառավարությունը անգամ կամեցողություն չդրսևորեց իր հայկական գործընկերներին ճանապարհելու, և ավելին՝ սահմանային ուղեկալում ենթարկվեցին մանրազնին խուզարկման և ստուգման[214], որից հետո, հուլիսի 19-ին հայտնվեցին Երևանում, որտեղ իշխում էր սովը, մաուզերիստական անարխիան և ալանթալանը: Այս հարցում վրացիներն ունեցան իրենց գաղափարաքաղաքական շահարկումները, հակասություններ որոնելով Թիֆլիսի և Երևանի Հայոց ազգային խորհուրդների գործելակերպում և քաղաքական մոտեցումներում, չնայած իրավամբ ունեին իրենց իրավացիության պահերը՝ չհանդուրժելու օտար պետական մարմնի առկայությունը իրենց մայրաքաղաքում, որտեղ նաև գործնականում պարապուրդի վիճակում գտնվում էին հայ զինվորության և առհասարակ՝ կադրային զգալի ներուժ, որոնք կամեցողություն չէին դրսևորում մեկնել հայրենիք և ազնվորեն նվիրվել նրա վերաշինության սրբազան գործին:

Այս առումով հարկ է նշել, որ կար ևս մի խարդավալից քաղաքական հանգամանք: Պարզվում է, այդ նույն ժամանակ, երբ Թիֆլիսում ձևավորվում էր հայոց կառավարությունը, Երևանի Հայոց Ազգային խորհուրդը կազմավորել էր, այսպես կոչված, ժամանակավոր կառավարություն, որը 1918 թ. հուլիսի սկզբին իր ներկայացուցչին գործուղեց Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդ՝ հաղորդելու կատեգորիկ պահանջը՝ երկու շաբաթ անց ժամանելու Երևան, հակառակ դեպքում հրավիրելով Սահմանադիր ժողով, որը ժողովրդի կամքով կվճռի երկրի ճակատագիրը»[215]:

---

[213] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Առաջին տարին. Հատոր I, էջ 78-83:

[214] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993, էջ 186-188:

[215] Տե՛ս Тарасов Станислав: «Неизвестная война»: Грузино-армянский вооруженный конфликт 1918 года: arminfocenter.org/news/2013-01-02-3959-987:

Իսկ այդ ընթացքում հայ-վրացական տարակարծությունները, սահմանագծման, տարածքային պատկանելիության հարցերի շուրջ՝ լարվածության հերթական, տեղատվության փուլի մեջ մտան:

Վրացական դիրքորոշման փոփոխությունը առաջ է բերում հայկական հասարակայնության լայն շրջանների խոր վրդովմունքը: «Եղբայր» վրացիների վերաբերմունքից դժգոհ, 1918 թ. հունիսի 26-ին Լոռու և Ղազախ-Շամշադինի հայրենակցական միությունների ժողովը՝ կապված սույն գավառները Վրաստանի Հանրապետությանը կցելու առիթով, իր կողմից ընդունված բանաձևում ընդգծում էր. «Նկատի ունենալով… ազգերի ինքնորոշման իրավունքը…, նկատի ունենալով վերջապես այն հսկայական զրկանքները և վնասները, որ կրեց հայ ժողովուրդը այս աշխարհասասան պատերազմի ընթացքում, թե՛ Ռուսաստանի և թե՛ Տաճկաստանի մեջ, որոնցից հետո գեթ տեղին առիթ է ներկայացել այդ ժողովրդին միանալու, ինքնամփոփվելու և միատարր կյանք հաստատելու առանց այն էլ չափազանց սեղմ և անձուկ աշխարհագրական սահմաններում, այն ինչ Լոռուց և Ղազախ-Շամշադինից զրկվելը ծանր հարված կլինի հայ ժողովրդի սրտին և ոտնահարում է նրա էական իրավունքները»[216]: Հայոց Ազգային խորհրդին ներկայացրած բանաձևում Լոռու և Ղազախ-Շամշադինի հայրենակցական միությունները խնդրում էին դիմել ամենակտրուկ միջոցների այդ առիթով և վարչություններին իրազեկ պահել այդ խնդրի վերաբերյալ արված քայլերի մասին[217]:

Հարկ է սակայն նշել ևս մի կարևոր հանգամանքի մասին: Հարցը վերաբերում է այն բանին, որ դեռևս մինչև այդ հանրահայտ ախալքալաքյան իրադարձությունները տեղական բնակչության մեջ որոշակի տագնապ և անվստահություն կար վրացական իշխանությունների կողմից սպասվելիք արդար գործողությունների նկատմամբ: Տեղական որոշ լիդերներ ըստ երևույթին լավ էին ըմբռնում իրավիճակի ողջ լրջությունը, ապագայում ընթանալիք աշխարհաքաղաքական գործընթացների հնարավոր միտումները և դիմելով Հայոց Ազգային խորհրդին, ակնկալում էին ադեկվատ գործողությունների ձեռնարկում, որն ավա՜ղ, ոչ հաճախ էր սթափ գնահատվում վերջիններիս կողմից:

[216] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 201, ց. 1, գ. 36, թ. 108:

[217] Տե՛ս նույն տեղում:

Այսպես, դեռ 1918 թ. մայիսի 15-ին Ախալքալաքի Ազգային խորհրդի նախագահի պաշտոնակատար Վ. Այվազյանը Թիֆլիսի Հայոց Ազգային Կենտրոնական խորհրդին հասցեագրված դիմումագրում նշում էր Ախալքալաքի շրջանի ծանր վիճակի մասին, նաև հայտնելով, որ տեղի զինվորական գունդը չունի հարկավոր քանակությամբ հրացաններ և փամփուշտներ: Ավելին, այդ տեղեկագրում ավելացվում էր, որ 3000-ից ավելի զինվորների մեծագույն մասն անզեն են, իսկ զենք ունեցող զինվորը ունի ոչ ավելի քան 100-200 փամփուշտ, ընդգծելով, որ փամփուշտի պաշար բոլորովին չկա: Դիմումագրում նաև ասվում էր, որ դրսից ոչ մի օգնություն չստանալով մինչև օգոստոս ամիսը, և սեփական սուղ միջոցներով մասնավոր աղբյուրներից փամփուշտ և զենք ձեռք բերելով, հազիվ կարողացել են պահպանել սահմանները և արգելել թշնամու հարձակումը գավառի հայ և վրացի գյուղերի վրա: Ամփոփելով ասելիքը, խնդրագրի հեղինակը խնդրում էր ուշադրությամբ քննարկել այն և բավարարել առկա պահանջները, հատուկ ընդգծելով, որ դրանից է կախված գավառի 80 հազար հայ ազգաբնակչության գոյության անմիջական ապահովությունը և ընդհանուր ճակատի դրությունը[218]:

Չնայած առկա բարդություններին և աշխարհաքաղաքական իրավիճակի մեծ լարվածությանը և խճճվածությանը, ինչպես նաև այն հանգամանքին, որ հայերը դեռևս չունեին հարկ եղած կառույցները տարածաշրջանում սեփական ազգաբնակչության կյանքը կազմակերպելու և նոր փորձություններից ապահովագրելու, այնուամենայնիվ որոշ քայլեր քաղաքական կոնկրետ շրջանակների կողմից ձեռնարկվեցին: Ուշագրավ է մի այսպիսի փաստ. 1918 թվականի հունիսի 3-ին Ավիացիոն դպրոցի պետ Թոխաձեին ուղղված դիմումագրում Հայոց Ազգային խորհուրդը խնդրում էր՝ հենվելով Վրաստանի կառավարության կարգադրության վրա, կատարել հարկ եղած միջամտությունը և նույն օրը մի «աերոպլան» ուղարկել Բորչալուի գավառի Շուլավեր վայրը՝ այն պատճառաբանությամբ, որ ստացված տեղեկությունների համաձայն Շուլավեր քաղաքը շրջապատված է տեղական թաթարների բազանեռով և տեղի են ունեցել հրացանաձգություններ, միաժամանակ անհրաժեշտություն է առաջացել հետախուզել հարձակվողների ուժերը և

[218] Տե՛ս նույն տեղում, թ. 204:

տեղաբաշխումը, ինչպես նաև պարզել, առկա՞ են արդյոք կանոնավոր զորքեր և հրետանի տարածքում[219]:

Հարկ է ասել, որ չնայած վրացական իշխանությունների որոշ ցուցաղրական հանդուրժողականությանը, որը բացատրվում էր իրավիճակից բխող մարտավարական խնդիրներով, ներքին լարվածությունը պահպանվում էր և սքողվում կիսատ-պռատ բարիդրացիական վերաբերմունքի դրսևորումներով:

Վրաստանի գործողությունները առաջ բերեցին նաև Ադրբեջանի սուր արձագանքը: Այդ օրերին Բորչալուի հայկական տարածքների նկատմամբ, մասնավորապես մահմեդականներով բնակեցված հատվածի նկատմամբ, բացի «եղբայրական» Վրաստանից, աչք էր դրել նաև մյուս հարևանը՝ մուսավաթական Ադրբեջանը, այդ արհեստական պետությունը: Այսպես, 1918 թ. հունիսի 14-ին Ադրբեջանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարար Մ. Հ. Հաջինսկին նամակով (№ 15) դիմելով Վրաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարարին, և նշելով, որ Վրաստանի կառավարությունը Բորչալուի գավառը համարելով Վրաստանի տարածք, իր զորքերին հրաման է տվել զբաղեցնել անդրկովկասյան երկաթուղիների հարակից տարածքը ընդհուպ մինչև Փոյլի կայարանը, այնտեղ է ուղարկել վրացական զորքերի ջոկատ գերմանական զորաջոկատի հետ միասին՝ իբր թե գավառը ավազակային բանդաներից մաքրելու համար, ինչպես նաև նշված ջոկատի և խաղաղ մուսուլմանական բնակչության միջև տեղի ունեցած բախման մասին պնդում էր, որ Բորչալուի, Թիֆլիսի և Սղնախի (նաև՝ Սիգնախ) գավառների համատարած մուսուլմաններով բնակեցված որոշակի մասերը բազմիցս իրենց ներկայացուցիչների միջոցով ցանկություն են արտահայտել լինել Ադրբեջանի Հանրապետության կազմում: Հաջինսկին իր կառավարության անունից կատեգորիկ բողոքում էր ընդդեմ Վրաստանի Հանրապետության կողմից ձեռնարկված վերը նշված կարգադրությունների դեմ և համառորեն խնդրում երկու երկրների միջև բարիդրացիական հարաբերությունների պահպանման համար ձեռնարկել անհետաձգելի միջոցներ Բորչալուի գավառի սահմաններից վրացական զորամասերի դուրս բերման և Ադրբեջանի տարածք հանդիսացող

[219] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 201, ց. 1, գ. 36, թ. 204:

Բորչալուի, Թիֆլիսի և Սղնախի՝ զուտ մահմեդականներով բնակեցված մասերի զբաղեցման մասին կարգադրության չեղյալ հայտարարելու և զորքերը դուրս բերելու մասին[220]:

Հենց այսպես, ոչ ավել, ոչ պակաս: Սակայն վրացիները դրանից ամենևին էլ չվհատվեցին, և գլուխները չկորցրեցին, ոչ էլ շատ լուրջ ընդունեցին դիվանագիտական այդ խաղաքայլը (ինչպես հաճախակի դա պատահում էր վերջիններիս հայ գործընկերների հետ): Վրաստանը որևիցե զիջում անելու պատրաստակամություն չդրսևորեց: Վրաստանի այդ ժամանակվա մինիստր-նախագահի և Արտաքին Գործերի նախարարի պարտականությունները կատարող Ն. Ռամիշվիլին իր պատասխանում՝ 1918 թ. հունիսի 17-ին (№ 6933) խոր ափսոսանք էր արտահայտում, որ նման միջոցառումները, որոնք անհրաժեշտ են Վրաստանի Հանրապետության տարածքում ներքին կարգ ու կանոնի պահպանման համար, կարող են որևիցե թյուրիմացության առարկա հանդիսանալ: Ռամիշվիլին շեշտում էր, որ Բորչալուի գավառը միշտ եղել է Վրաստանի տարածքային կազմում և չի հանդիսացել վեճերի ու կասկածների առարկա, չնայած այդ գավառը նախկինում ևս չի ներկայացրել միատարր էթնիկական միավոր: Վերջինս Ադրբեջանի կառավարությանը նաև հայտնում էր, որ հավասարապես վեճի ենթակա չի և Վրաստանի արևելյան սահմանը: Ավարտելով դիմումագիրը, Ռամիշվիլին վստահություն էր հայտնում, որ Ադրբեջանական Հանրապետության կառավարությունը այսուհետ թույլ չի տա միջամտություն իրենց ներքին գործերին, քանզի խնդիր կա պահպանելու այն բարի դրացիական հարաբերությունները, որոնք վաղուց ի վեր գոյություն ունեն իրենց միջև և որոնք անկեղծորեն ցանկանում է պահպանել վրացական կառավարությունը[221]: Այս վերջին միտքն էլ կարևոր է, քանզի փաստագրում է այն եղելությունը, ինչ եղել է և իրականում կար գերակշռող վրաց-ադրբեջանական հարաբերություններում, և սուր ծայրերով նպատակաուղղված է եղել Հայաստանի Հանրապետության դեմ: Որոշ ժամանակ դեռ կրքերը մնում են բորբոքված վիճակում, և վրաց-ադրբեջանական փոխհարաբերությունների մեջ որոշակի տագնապ է մնում՝ ոչ երկար ժամանակով: 1918 թ. հունիսի 22-ին Ադրբեջանի Հանրապետության Ար-

[220] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии.., стр. 436:
[221] Տե՛ս там же, стр. 437:

տաքին Գործերի մինիստր Մ. Հաջինսկին մեկ անգամ ևս փորձում է Ադրբեջանի օգտին ինչ-որ բան անել, և դիմումագրով (№ 19) դիմում է իր ներկայացուցչին Վրաստանում, խնդրելով տեղյակ պահել Վրաստանի կառավարությանը, որ Ադրբեջանի կառավարությունը ցանկանում է շուտափույթ կազմել հատուկ խառը վրաց-ադրբեջանական հանձնաժողով, որը մոտակա ժամանակաշրջանում ձեռնամուխ պիտի լինի տարածքների սահմանազատման հետ կապված բոլոր հարցերի քննարկմանը և լուծմանը, և խնդրում էր համաձայնության դեպքում հայտնել պատգամավորների թիվը, հանդիպման վայրը և ժամկետը[222]: Նշենք նաև, որ այնուհետ Ադրբեջանը այս խնդրում որոշակի համառություն դրսևորեց: Արդեն 1918 թ. սեպտեմբերին Ադրբեջանի վարչապետ Ֆ. Խան-Խոյսկին դիմում է Անդրկովկասում գերմանական ռազմաքաղաքական ներկայացուցչության ղեկավար գեներալ ֆոն Քրեսսին՝ բողոքելով վրացական և գերմանական զորամասերի կողմից Բորչալուի գավառի մուսուլմանների նկատմամբ գործադրված բռնություններից, և ելնելով դրանից պահանջում էր դադարեցնել բռնությունները, փոխհատուցել հարուցված վնասները, կանխել մահմեդական բնակչության զինաթափումը կամ էլ այն տարածել գավառի ողջ բնակչության վրա: Սակայն վրացական իշխանությունները իրենց հերթին Խան-Խոյսկու այս դիմումագրին կոշտ արձագանք են տալիս, իսկ մամուլում հրապարակվում են խնդրո առարկայի վերաբերյալ հակաադրբեջանական նյութեր, որոնցում Ադրբեջանի վարչապետին մեղադրում են Վրաստանի ներքին գործերին միջամտելու համար, եզրահանգելով որ Վրաստանի կառավարության հստակ տեսակետով Զաքաթալայի մարզը, Ղարայազը և ողջ Բորչալուի գավառը հանդիսանում են Վրաստանի Հանրապետության անբաժանելի և անքակտելի մասը, որի հետ Ադրբեջանը պետք է հաշվի նստի[223]: Անշուշտ, վրացական կառավարության ինքնավստահ դիրքորոշումը բխում էր այն հանգամանքից, որ Վրաստանի թիկունքում կանգնած էր Կայզերական Գերմանիան, որը բացահայտ հայտարարել

[222] Տե՛ս там же, стр. 438:

[223] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 57, թ. 11, 89, 150, գ. 143, թ. 6, «Հորիզոն, Թիֆլիս, N 197, 1918 թ., 29 սեպտեմբերի: N 147, 27 հուլիսի, 1918 թ., N 192, 24 սեպտեմբերի 1918 թ.: «Մշակ», Թիֆլիս, N 145, 27 սեպտեմբերի 1919 թ.:

էր վրացական իշխանություններին աջակցելու պատրաստակամության մասին:

Սակայն վրացական կողմը շատ յուրահատուկ մոտեցում է ցուցաբերում այս հարցադրմանը, և ըստ էության կարծես թե անտեսելով ադրբեջանական կողմի բռնած դիրքորոշման իրական շարժառիթները, իր խոսքն է առաջ տանում, կամ էլ լռության մատնում այն, ինչ իրենց համար անցանկալի էր: Լավագույնը, որ այս իրադրությունում առաջարկում են վրացիները ադրբեջանցիներին, դա այն էր, որ գնացին դիվանագիտական մանևրումների, ժամանակ շահելով ավելի խելացի և նպատակահարմար քայլերի համար: Այն իր արտացոլումը գտավ Վրաստանի Հանրապետության կառավարության 1918 թ. օգոստոսի 31-ի դիմումագրում (№ 3004) ուղղված Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչին, որում նշվում էր, որ Վրաստանի Հանրապետության կառավարությունը օգոստոսի 24-ին որոշել է Ադրբեջանի և Վրաստանի միջև ծագած վիճելի հարցերի լուծման համար կազմել արբիտրաժային հանձնաժողով՝ երեք անձից բաղկացած, որոնցից մեկը պիտի ընտրվեր Ադրբեջանի Հանրապետության կառավարության, մյուսը՝ Վրաստանի կառավարության, երրորդը՝ այդ երկու իրավարարների ընտրությամբ՝ չեզոք երկրների ներկայացուցիչների թվից[224]:

Հենց այսպես աննրբանկատորեն Հայաստանի Հանրապետության անմիջական հարևանները զբաղված էին ստորաքարշ դիվանագիտական գործողություններով, անտեսելով հայտնի տարածքների օրինական տիրոջ՝ Հայաստանի Հանրապետության իրավունքները: Այն կարծես թե ձևավորված և քողարկված ադրբեջանա-վրացական քայքայիչ երկյակ էր ընդդեմ Հայաստանի: Այն էլ ավելի խճճեց հայ-վրացական հարաբերությունները, էլ ավելի բարդացնելով աշխարհաքաղաքական իրավիճակը Անդրկովկասում:

Հասկանալի է, որ այս ամենը վաղուց էր հասունանում: Առկա փաստաթղթերի ուշադիր զննումը վկայում է, որ հայ-վրացական հարաբերությունները սկսեցին մթագնվել դեռ մինչև Ախալքալաքի և Բորչալուի հանրահայտ դեպքերը, և դրանց մեջ որոշակի իմաստ կար: Անշուշտ, վրացիների այդ յուրահատուկ ներքին գերապատվական շահը

[224] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 438:

նկատի ուներ Հայաստանի Հանրապետության նախարարապետը Անդրկովկասում բրիտանական գերագույն կոմիսար գնդապետ Ք. Ստոքսի հետ ունեցած զրույցի ժամանակ 1920 թ. սեպտեմբերի 31-ին, երբ ասում էր, որ հայերը «միշտ էլ լավ են վերաբերվել դեպի վրացիները», սակայն վերջիններս տրամադիր չեն եղել ավելի սերտ կապեր հաստատելու, քանզի վախեցել են, որ ավելի սերտ կապվելով Հայաստանի հետ, կգրգռեն տաճիկներին իրենց դեմ, իսկ տաճիկների հետ իրենք թշնամանալ չեն ցանկանում[225]: Դա այդպես էր և 1918 թվականին, երբեմն լավ քողարկված, երբեմն բացահայտ: Այսպես, Հայոց Ազգային խորհրդի նախագահը 1918 թ. հուլիսին դիմելով Վրաստանի մինիստր-նախագահին, տեղեկացնում էր, որ հուլիսի 1-ի տեղեկագրով Վրաստանի Հանրապետության զորքերի դաշտային շտաբի պետը՝ գնդապետ Ա. Զախարիաձեն, Վրաստանի կառավարության կարգադրության համաձայն վերջնագրային ձևով պահանջել է կամ անհապաղ դուրս հանել Թիֆլիսում գտնվող հայկական զորամասերը կամ էլ 3-օրյա ժամկետում զինաթափել վերջիններիս, ընդգծելով նաև, որ Վրաստանի կառավարության որոշման և Զինվորական նախարարի կարգադրության համաձայն բոլոր հայկական զորամասերը և զինվորական աստիճանավորները ենթակա են 3 օրվա ընթացքում Վրաստանի Հանրապետության սահմաններից անհապաղ արտաքսման կամ զինաթափման, որ երկաթգիծը մինչև Ղարաքիլիսա բաց է[226]: Ազգային խորհրդի նախագահը նշելով, որ երկաթուղագծով դուրս բերման համար որոշ ժամանակ է պահանջվում, բողոքում էր, որ հայկական զորամասերի անհապաղ զինաթափումը ոչ մի հանգամանքով չի արդարացվում, որ դա հայ ժողովրդի իրավունքների ոտնահարում է, քանի որ դրանք Թիֆլիսում են գտնվում իրադարձությունների բերումով, այլ ոչ թե ինքնակամ (ճանապարհների փակ լինելու պատճառով ՀՀ կառավարությունը չէր կարողանում Վրաստանում գտնվող ավելի քան 1800 սպաներին ու զինվորներին տեղափոխել Հայաստան, որի կապակցությամբ Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանը բազմիցս դիմել էր Վրաստանի կառավարությանը՝ խնդրելով չընդհատել դրանց պարենավորումը): Հայոց Ազգային խորհրդի նախագահը գտնում էր, որ այն պետք է կատարվի (զորամասերի

[225] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 377, ց. 1, գ. 40, թ. 1:
[226] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 17, թ. 26:

դուրս բերումը - Վ. Վ.) Ալեքսանդրապոլից դուրս գալուց հետո, ոչ այլ կերպ, քան պլանաչափ, աստիճանաբար[227], չնայած դեռ հունիսի 29-ին Հայոց Ազգային խորհրդի որոշմամբ հրաման էր տրված դրանք կազմացրել, ընդ որում բոլոր ազատված զինվորները, որոնք ենթակա չէին զորացրման, ուղարկվում էին կրտսեր (ունտեր) սպայական դպրոց և Հայկական հատուկ հրետանային գումարտակի առաջին մարտկոցը, միայն թե՝ դրանք շարունակելու էին իրենց գոյությունը: Հայոց Ազգային խորհուրդը իր վրդովմունքն էր արտահայտում վրացական կողմին, պարզաբանումներ տալով, որ հայկական զորամասերը Թիֆլիսում են գտնվում ոչ ինքնակամ, որ նրանք այնտեղ են հայտնվել հանգամանքների բերումով՝ Ալեքսանդրապոլից նահանջելուց հետո, պնդելով, որ հայկական զորամասերի դուրսբերումը Վրաստանից պետք է կատարվի փուլ առ փուլ՝ աստիճանականության սկզբունքով[228]:

Վրացիները ձգտում էին հնարավորին չափով շուտ ազատվել հայկական ներկայությունից Թիֆլիսում և այլուր, իսկ Վրաստանի մայրաքաղաքում գտնվող Հայկական առանձին կորպուսի շտաբային սպանեների թիվը կազմում էր 17 մարդ, օբեր-սպաներինը՝ 194, բժիշկներինը՝ 4, չինովնիկների թիվը՝ 32-ի, և վերջապես զինվորների թիվը հասնում էր 1538-ի[229], ինչը բնականաբար, անհանգստացնում էր վրացական կողմին և դա ևս վրացիների համար խիստ վճռորոշ գործոն էր, ձգտելու համար ազատվել հայկական ներկայությունից Վրաստանի մայրաքաղաքում՝ Թիֆլիսում:

Հարկ է ընդգծել, որ այդ նույն ժամանակահատվածում թուրքական առաջխաղացման հետևանքով վրաց-գերմանական զորաջոկատները գրավել էին Բորչալուն, ընդ որում վրացական կողմը փարիսեցիական պատճառաբանություն էր մեջտեղ բերել, որ իբր թե այդ գրավումը ժամանակավոր բնույթ ունի, և ելնում է Վրաստանի պաշտպանության շահերից:

Սակայն իրականում իրադարձությունները միանգամայն այլ ընթացք ստացան: Ակնհայտ էր, որ փորձառու Ի. Ծերեթելին սկզբում դիվանագիտորեն վրացական կողմի համար ժամանակ խնդրեց հարցի

[227] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 222, ց. 1, գ. 24, մաս I, թ. 359:
[228] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 222, ց. 1, գ. 24, մաս II, թ. 359-360:
[229] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 17, թ. 27:

հետագա քննության և արդարացի լուծման համար: Սակայն որոշ ժամանակ անց, «առանց հայերին տեղեկացնելու, Վրաստանի կառավարությունը հայտարարեց Վրաստանի սահմանագծերի մասին՝ մտցնելով նրանց մեջ և վիճելի համարվող շրջանները»[230]: Այդ նույն ժամանակաշրջանում, ինչպես վկայում են ժամանակակիցները, վիճելի տարածքներում վրացիները իրենց պահում էին այնպես, ինչպես իրենց տոհմական կալվածքում, հարկախեղդ էին անում հայերին, պաշտոնից հեռացնում էին անհնազանդներին, անտեղի զորակոչեր էին անցկացնում: Ամերիկյան հեղինակ Ստ. Ջոնսը «Armenian review» հանդեսում գրում է, որ վրացական առաջնորդները հայերին դիտում էին որպես պոտենցիալ «հինգերորդ զորասյուն», օտարերկրյա պետությունների կողմից մեքենայությունների սուբյեկտ, որոնք հույս ունեին առավելություններ ձեռք բերել Վրաստանի թուլությամբ[231]: Միևնույն ժամանակ նույն հեղինակը ավելացնում էր, որ հայկական առաջնորդներն էլ հավատում էին, որ դաշնակիցները համակրում են իրենց՝ սեփական պահանջների հարցերում[232]:

Ըստ էության Լոռու և Ախալքալաքի համար սահմանային-տարածքային խնդիրը դարձավ ապագա պատերազմի հիմք Վրաստանի և Հայաստանի միջև, որը մնաց ռազմաքաղաքական առումով չհաղթահարված կնճիռ կայացման ձգտող նորելուկ անդրկովկասյան հանրապետությունների համար:

Պատմափաստերի համադրումը բերում է հետևության, որ Հայաստանի հետ բախման խնդրում Վրաստանի համար բավականաչափ լուրջ պատճառներ կային և դրանք պետք է որոնել այդ մենշևիկյան հանրապետության ներսում, քանզի վրացական ազգային-քաղաքական էլիտան միշտ էլ հարմար առիթ է որոնել ազատվելու հայկական տնտեսական հեգեմոնիայից Վրաստանում, որի հետ համաձայն են նաև մի շարք արտասահմանյան փորձագետներ ու պատմաբաններ: Ըստ այդմ անկախության հռչակումից հետո Վրաստանի որոշ էլիտար քաղաքական շրջաններ համախմբվելով, առանց հապաղելու նոր ռազմավարություն մշակեցին՝ ամեն առիթ օգտագործելով իրագործել հայկական

[230] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 215:
[231] Տե՛ս Jones Stephen F., Նշվ. աշխ., p. 64:
[232] Տե՛ս նույն տեղում:

տնտեսական իշխանության ներուժի հենակետերի ոչնչացմանը Վրաստանում, որը նրանց համար դարձավ սևեռուն քաղաքական նպատակադրում: Անկախությունը Վրաստանին հարմար առիթ և հնարավորություն տվեց հասնել քաղաքական իշխանության, և ազատվել իրենց գլխավոր ներքին մրցակցից՝ հայ տնտեսական դասից Վրաստանում:

Եթե անտեսենք այն հանգամանքը, որ վրաց զորամասերը չեն մտել Լոռու Ուզունլար և մյուս հայկական գյուղերը, այնտեղ սանձարձակություններ թույլ տվել, ապա կարելի է համաձայնվել այն անհեթեթ և ստահոդ պնդման հետ, որ «Վրաստանի համար անսպասելի էր Հայաստանի զինված հարձակումը 1918 թ. դեկտեմբերի 7-ին: Դրա նպատակը իբր թե վրացական հողերի հաշվին «Մեծ Հայաստանի» այսպես կոչված պատմական սահմանների վերականգնումն էր»[233]: Այս նույն հեղինակները պնդելով Հայաստանի ագրեսիվ նկրտումների մասին իրենց ստահոդ տեսակետը, չէին խորշում նաև ասել, որ հայերն են պայթեցրել Զեգվիի մոտի երկաթուղային կամուրջը [1918 թ. նոյեմբերին Զեգվիի գործի կապակցությամբ ձեռբակալվել էին մի շարք ռուս և հայ ահաբեկիչներ՝ Քուչերյանց, Մելիք-Հայկազով, Անտոնով և ուրիշներ], որ Արամյանցների տանը դաշնակցականների կողմից մշտապես գաղտնի հավաքներ են տեղի ունեցել և այլն[234]:

Նոյ Ժորդանիան գտնելով, որ վրաց-հայկական պատերազմի ժամանակ հայերը Թիֆլիսում կատարել են հայկական «հինգերորդ շարասյան դեր»[235], միաժամանակ պնդում էր անհեթեթ մի տեսակետի վրա, համաձայն որի դաշնակցական կառավարության խարդախ հարձակման գլխավոր պատճառը եղել է Թիֆլիսի հարցը, որ «հայերը շատ դժգոհ էին Թիֆլիսի վրացականացումից, նրա վերածվելուց որպես մայրաքաղաքի, որ երկար ժամանակ այդ քաղաքը համարել են իրենց սեփականությունը, որ ռուսները տիրել են քաղաքականապես, ռուսները գնացին, քաղաքը պետք է մնա իրենց [ասել է թե՝ հայերին - Վ. Վ.]: Նրանց կարծիքով, իսկական Վրաստանը միայն արևմտյան Վրաստանն է, իսկ արևելյանում՝ խառը ապրել են շատ ազգեր, այնտեղ չէր կարող լինել մաքուր վրացական ազգային կառավարում: Կառավարությունը

[233] Տե՛ս Тетвадзе Ш., Тетвадзе О., Армяне в Грузии, стр. 90:
[234] Տե՛ս նույն տեղում, էջ 92-93:
[235] Տե՛ս Жордания Н., Мое прошлое, Тб., 1990, стр. 92-93:

պետք է անցնի Քութաիսի, իսկ Թիֆլիսում ստեղծվում է խառը բազմազգ պետություն: Այդ մասին նրանք քարոզել են Հայաստանում, գրել են իրենց օրգաններում, չեն գնացել ոչ մի տեսակի բանակցության: Նրանք սպասել են Անգլիայի գալստյանը»[236]: Այնուհետև Ն. Ժորդանիան շարունակում է հակահայկական ներկապնակով հարուստ, քաղաքականապես անհավասարակշիռ միտքը. «Հենց որ մենք լուր ստացանք հայկական զորքերի հանկարծակի հարձակման մասին, իմ համար պարզ դարձավ, ինչումն է բանը: Նրանց հանկարծակի հարձակման նպատակը հնարավորինս շուտ Թիֆլիսին հասնելն էր, այնտեղ ապստամբություն բարձրացնելը [նրանք դրան պատրաստ էին – Վ. Վ.] քաղաքը գրավելը»[237]:

Արդյունքում, ըստ վրաց հեղինակների, քաղաքական տեսանկյունից հաղթանակ տարան դաշնակցականները, իսկ դաշնակիցները «հաղթած» Հայաստանին շնորհեցին Բորչալուի գավառի հարավային մասը՝ մինչև Ջալալօղլի, ի հավելում դրան ձևավորվեց «Չեզոք գոտին, որի հյուսիսային մասը մնաց Վրաստանի կազմում»[238]:

Սակայն հարկ է ասել, որ վրաց հեղինակները երբեմն իրենց տեսակետներում գնում են իրականությունից հեռու եզրահանգումների, կամ էլ առաջարկում վարկածներ, որոնք, մեղմ ասած, դեռևս խորը փաստարկման կարիք են զգում, չնայած գուցե և բավականաչափ ինքնատիպ են, անկախ այն հանգամանքից, դրանք ինչ ուղղվածություն ունեն: Համաձայն այդ հեղինակների կողմից արտահայտած տեսակետների, վրաց-հայկական պատերազմը պայմանավորված է ռուսաստանյան կայսերական քաղաքականությամբ: Ըստ այդ տեսակետների, Ռուսաստանը Առաջին աշխարհամարտում պարտություն կրելով՝ չէր շոշափում Կովկասը: Ի դեմս Հայաստանի Ռուսաստանը հուսալի հենարան էր տեսնում իր իմպերիալիստական նպատակների իրագործման խնդրում: Երբեմն էլ վրաց հեղինակները իրենց վարկածներում ավելի հեռուն են միտում. Այսպես, նրանք պնդում են, որ 1918 թ. դաշնակցականների կողմից Բորչալուի գրավման ժամանակ իբր նրանց մեծապես աջակցել են ռուսական հատուկ ծառայությունները, որ իբր

[236] Տե՛ս նույն տեղում:

[237] Տե՛ս նույն տեղում:

[238] Տե՛ս Тетвадзе Ш., Тетвадзе О., Армяне в Грузии, стр. 99-100:

դա հաստատվում է ռազմական արխիվի տվյալներով, որոնք հրատարակվել են վրացական «Отечественный архив» - ում 1992 թվականին[239]:

Հետևաբար, վրացական պետականության համար կարևորվեց իր հարևան հայկական պետության թուլացումը, որը հավակնում էր ոչ միայն հայտնի տարածքների նկատմամբ, այլև կարող էր հանդես գալ Վրաստանում հայկական էլիտայի պաշտպանությամբ և վերջին հաշվով՝ նաև հավակնել հեգեմոնիայի համակովկասյան տան մեջ: Դա հարմար պատրվակ էր Վրաստանի համար հնարավոր հակամարտությունում հասնել ՀՀ մեկուսացմանը Հարավային Կովկասում և նրա թուլացմանը որպես տարածաշրջանային ազդեցիկ գործոնի և մրցակցի: Ըստ այդմ, աջակցություն ստանալով Կայզերական Գերմանիայից, Վրաստանը փութկոտ պատրաստություններ տեսավ և օգտվելով ստեղծված իրավիճակի ընձեռած բացառիկ հնարավորություններից՝ ձեռնամուխ եղավ 1918 թ. դեկտեմբերին սանձազերծած պատերազմի միջոցով սահմանային-տարածքային Լոռի-Ախալքալաքյան հիմնախնդրի լուծմանը հօգուտ Վրաստանի, որում էլ շախմատային կոմբինացիաներ ձեռնարկելով, Մեծ Բրիտանիան և մյուս համաշխարհային ուժերը ձգտեցին իրագործել իրենց նկրտումները, որոնք հանգեցնում էին անդրկովկասյան տարածաշրջանում ընտրված դաշնակիցների դիրքերի տեղաշարժմանը կովկասյան քարտեզում: Քաղաքական-ռազմական առումով օղակելով հայկական շրջանները, և հրաժարական տալով 1917 թ. հայտարարություններից, վրաց ազգայնականները արագ մտան վիճելի համարվող տարածքները, ձգտելով հարմար դիրքեր գրավել և ապահովել հայկական զինուժի զինաթափումը և դուրսբերումը ոչ միայն Լոռի-Ախալքալաքի հատվածից, այլև Թիֆլիսից, այլևս անհնարին համարելով հայկական ազգային կազմակերպությունների գոյությունը Վրաստանում, այդ ամենը ուղեկցելով քաղաքական-տնտեսական հարձակումով հայերի վրա և այդ տեսանկյունից անխուսափելի դարձան այնպիսի երևույթներ, ինչպես ապրանքների բռնագրավումը, չտեսնված հարկային խժդժությունները և այլ կամայականություններ, սովորական դարձան հայ բնակչության ունեցվածքի կողոպուտի դեպքերը, մշակութային արժեքների սեփականաշնորհման դեպքերը և այլն, որոնք էլ

[239] Տե՛ս там же, стр. 101:

հենց ընկան 1918 թ. վրաց-հայկական պատերազմի նախապատրաստման շարժառիթների հիմքում:

Վրացիները սակայն ունեին ավելի իրական հիմքեր ոգևորվելու և նախահարձակ լինելու՝ ձգտելով տիրել ոչ միայն Ախալքալաքին, այլև Լոռուն: Վրացիներին ոգևորողների դերում հայտնվեցին առաջին հերթին գերմանացիները:

Վրաստանի կառավարության դիրքորոշումը ակնհայտորեն հակահայկական էր, որը երբեմն քողածածկված եզրեր էր գտնում ադրբեջանականի հետ: Ըստ վրաց շովինիստների, որոնց հետ համամիտ էին ազերիները, Անդրկովկասի ամբողջ բնակչության ավելի քան 30% կազմող հայերը պետք է ամփոփվեին միայն Սևանա լճի ավազանում և Արարատյան դաշտի մի հատվածում, այսինքն՝ բավարարվեին ընդամենը 11 հազար քառակուսի կիլոմետր տարածքով, որը կազմում էր Անդրկովկասի տարածքի միայն 5 %-ը: Իսկ Վրաստանը, որի բնակչությունը ավելին չէր, քան հայերի թիվը, հավակնում էր տիրելու Անդրկովկասի ամբողջ տարածքի 42 %-ին, այսինքն՝ մոտ 8 անգամ ավելի, քան պետք է ունենային հայերը[240]: Անդրկովկասի տարածքի մնացած 53%-ին հավակնում էր Ադրբեջանը, որը վկայում էր այն մասին, որ գոյություն ուներ վրաց-ադրբեջանական շահերի ներդաշնակություն, փոխհամաձայնություն ընդհանուր ռազմավարությունում: Վրաստանը օգտվելով ինչպես Հայաստանի խարխլված ռազմաքաղաքական և ընկերային կացությունից, այնպես էլ Գերմանիայի Թիֆլիսում գտնվող ներկայացուցչության տնտեսական և ռազմական աջակցությունից, ձեռնամուխ եղավ իր մերձավոր հարևանի՝ Հայաստանի նկատմամբ ավազակային նպատակների իրագործմանը:

Այս առումով հատկանշական է Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի և Գերմանիայի ներկայացուցիչ ֆոն Քրեսսի միջև կայացած պաշտոնական զրույցից մի ուշագրավ դրվագ. «Անդրկովկասում գերմանական միսիայի ներկայացուցիչ ֆոն Քրեսսը Թիֆլիսում հայտնում է Ջամալյանին, որ հայերն ազատեն «վրացական» տարածքներն առանց արյունահեղության: Ջամալյանի այն հարցապնդմանը, թե ինչու՞ է գերմանական մի-

[240] Տե՛ս Դրո, Կենսագրական: Հուշեր: Վկայություններ, էջ 114:

սիայի ներկայացուցիչը խառնվում վրաց-հայկական գործերին և սատար կանգնում վաղուց ի վեր հայերին պատկանող հողերին հավակնող Վրաստանին, ֆոն Քրեսսը պատասխանել է, որ Գերմանիան գտնվում է Վրաստանի հետ նույն միության մեջ և պարտավորություն է վերցրել պաշտպանել այդ հանրապետության տարածքային շահերը և դա է իրենց միսիայի նպատակը Անդրկովկասում, չնայած մի այլ կապակցությամբ ֆոն Քրեսսը արել էր այլ կարգի մի ուշագրավ հայտարարություն: Այսպես, Ա. Ջամալյանի հետ իր մասնավոր զրույցներից մեկում ֆոն Քրեսսը առանձնապես ընդգծելով, որ թուրքերը գրավել են Հայաստանի «ամենահետաքրքիր շրջանները», հատուկ նշել էր, որ «եթե Հայաստանը չվերադառնա Բրեստում գծված սահմաններից դուրս գտնված իր խոշոր հողամասերը՝ նա չի կարող բարգավաճել և Անդրկովկասում չի կարող տևական խաղաղություն լինել»[241]: Ստացվում էր, որ գերմանական պատվիրակության կողմից արված այս հայտարարությունը ընդամենը դեմագոգիա էր, նրբորեն քողարկված մի քաղաքական մանևր, որով վերջինս ջուր էր լցնում վրացիների ջրաղացին, փոխարենը մոլորության մեջ գցում հայկական կողմին, որը երբեմն հակված էր հավատալու նման ստահոդ, դեկլարատիվ բնույթի հայտարարություններին: Պրովրացական դիրքորոշումն ավելի ամուր էր և ավելի իրական, ինչը հաստատվում է բազմաթիվ փաստերով:

Ի դեպ, պետք է նկատել, որ դեռ մայիսի 14-ին Վրաց Ազգային խորհուրդը որոշում էր ընդունել խնդրել Գերմանիայի հովանավորությունը: Մայիսի 28-ին Փոթի քաղաքում հանդիպում են Գերմանիայի ներկայացուցիչ Օտտո ֆոն Լոսսովն ու Վրաստանի ներկայացուցիչներ Նոյ Ռամիշվիլին և Ակակի Չխենկելին: Նրանց կողմից ստորագրվեց Փոթիի ժամանակավոր պայմանագիրը, որի համաձայն Վրաստանը Գերմանիային օգտագործման էր տրամադրում երկաթուղային ուղիները, թույլատրում էր գերմանական վայրուտայի ազատ շրջանառությունը երկրում և համաձայնվում էր հանքերի համատեղ օգտագործմանը: Պայմանագիրը փաստացիորեն նշանակում էր Գերմանիայի կողմից վերածնված վրացական պետության ճանաչում: Բեռլինում բացվեց Վրաստանի դեսպանությունը, որում այդ ժամանակ աշխատում էր Զվիադ Գամսա-

[241] Տե՛ս Դրո. Կենսագրական: Հուշեր: Վկայություններ, էջ 115: Տե՛ս նաև ՀԱԱ, Ֆ.Պ-275, ց. 5, գ. 37, թ. 16:

խուրդիայի հայրը՝ Կոնստանտին Գամսախուրդիան: Իսկ արդեն հունիսի 8-ին Գերմանիան Ղրիմից Փոթի է ուղարկում էքսպեդիցիոն կորպուս գեներալ-մայոր Ֆրիդրիխ Ֆրայեր ֆոն Քրեսսի (Քրեսսենշտեյնի) գլխավորությամբ, որն իր կազմում ուներ 3 000 մարդ, և գլխավորապես բավարացիներից բաղկացած՝ դրանք 7-րդ բավարական հեծելաբրիգադն էր, 29–րդ բավարական գունդը, 10-րդ գրոհային գումարտակը, գնդացրային ջոկատը և 176-րդ հրասանդային վաշտը: Դրան հետագայում միանում է վրաց ռազմագերիներից կազմված ջոկատը և զորակոչված վրացական «վյուրտեմբերգացիները» (Վրաստանում գերմանական գաղութների բնակիչները): Գերմանացիները իրենց ջոկատները տեղաբաշխեցին մի շարք քաղաքներում և ուղեկալներ դրեցին սահմանի երկայնքով: Դրանով գերմանական հրամանատարությունը ձևավորեց Վրաստանի պետական սահմանը, որը Կոնֆեդերացիայի փլուզումից հետո միանգամայն պայմանական էր: Որպես վրացական պետության սահմաններ արևելյան տեղամասում գերմանացիները համարեցին և ճանաչեցին Թիֆլիսի նահանգի նախկին սահմանները: Սակայն հարավում սահմանը անցավ Կամենկա գետով (Ձորագետ), պետության սահմաններից դուրս թողնելով Ղարաքիլիսա քաղաքը: Այդ կապակցությամբ Զ. Ավալով-Ավալաշվիլին պարզապես նշում է, որ «գերմանական կառավարությունն իր պատրաստակամությունն է արտահայտել աջակցել Վրաստանին, և սատարել նրա սահմանների պաշտպանության գործում և հարևան պետությունների հետ Վրաստանի փոխհարաբերությունների հաստատման գործում»[242]: Ավելին, 1918 թ. հունիսի 11-ին Թիֆլիսում Գոլովինյան պողոտայում տեղի ունեցավ գերմանա-վրացական զորքերի մեծ զորահանդես, որն ընդունեցին մինիստր-նախագահ Նոյ Վիսարիոնի Ռամիշվիլին, Ռազմական նախարար Գեորգաձեն, գեներալ-լեյտենանտ Գաբաևը և գերմանական պատվիրակ կոմս ֆոն Շուլենբերգը (Շուլենբուրգը)[243], օբեր-լեյտենանտ Կայզերը[244]: Կառավա-

[242] Տե՛ս Авалов З., Указ. соч., стр. 68:

[243] Ֆրիդրիխ Վեռներ ֆոն դեր Շուլենբուրգ, կոմս [20.01.1875 թ. - 10.11.1944 թ.] – Հայտնի է, որ 1918 թ. Շուլենբուրգը գերմանական պատվիրակության կազմում գործուղվել է Վրաստան, մասնակցել է սոցիալ-դեմոկրատական [մենշևիկյան] կուսակցության հետ բանակցություններին և համատեղ քայլերի մասին համաձայնության կայացմանը, ըստ այդմ կարևոր դեր խաղացել վրաց-գերմանական դաշինքի կնքման գործում, որով երաշխավորվում էր Վրաստանի անկախությունը: Շուլենբուրգը օգնել է Վրաստանի հանրա-

րության ղեկավար Ն. Վ. Ռամիշվիլին գերմանական զորքերին դիմեց ճառով, որում ողջունեց նրանց Կովկաս գալու կապակցությամբ, և վստահություն հայտնեց, որ դեմ առ դեմ կանգնած վրացական և գերմանական զորքերը կկարողանան պահպանել կարգ ու կանոնը երկրում: Այնուհետև ճառով հանդես եկավ կոմս Շուլենբե[ու]րգը, որը վստահություն հայտնեց, որ այսուհետև կայսերական գերմանական և հանրապետական վրացական զորքերը գտնվելու են մշտական բարեկամության մեջ և պաշտպանելու են մեկը մյուսի շահերը[245]:

Գերմանացիները ոչ մի հիմք չունեին դժգոհ մնալու վրացական կառավարությունից: Դա ի միջի այլոց երևում է այն բանից, որ գեներալ ֆոն Քրեսսը (կամ Քրեսս ֆոն Քրեսսենշտեյն) նույնիսկ անհրաժեշտ գտավ հետագա խրախուսման նպատակով վրաց մի շարք նախարարների իր իսկ կառավարության կողմից պարգևատրման ներկայացնել: «Վրացական պետության նախատեսվող պաշտոնական ճանաչման կապակցությամբ, - գրում է գեներալ ֆոն Քրեսսը գեներալ-ռայխսկանցլերին 1918 թ. սեպտեմբերի 8-ին,- ցանկալի է Վրաստանի ղեկավար անձանց նվիրել գերմանական շքանշաններ…գերազանցության նշանի (շքանշանի) ներկայացնելու համար ես առաջին հերթին առաջ եմ քաշում մի խումբ անձանց, որոնց ես ստորև թվարկել եմ ըստ խմբերի՝ կախված շքանշանի աստիճանից.

1. Մինիստր-նախագահ Ժորդանիա:
2. Արտաքին Գործերի մինիստր Չխենկելի, ինչպես նաև նրա տեղակալը և Ներքին Գործերի մինիստր Ռամիշվիլին: Այնուհետև՝ Ազգային խորհրդի նախագահ պ-ն Չխեիձեն:

պետության կառավարությանը վրաց պետականության կայացման գործում: 1918 թ. Պաշտոնապես ներկայացրել է Գերմանիայի կառավարությանը Վրաստանում: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո անգլիական օկուպացիոն իշխանությունների կողմից աքսորվել է Բյուլյուկադա կղզին, և միայն 1919 թ. վերադարձել է հայրենիք: 1922-1931 թթ. եղել է Գերմանիայի դեսպանորդը Թեհրանում, 1931-1934 թթ.՝ Բուխարեստում, իսկ արդեն 1934-1941 թթ. հանդիսացել է Գերմանիայի դեսպանը Մոսկվայում: 1944 թ. հուլիսի 20-ին մասնակցել է Ադոլֆ Հիտլերի դեմ մահափորձին, որով ավարտվել է թե՛ նրա քաղաքական կարիերան, և թե առհասարակ նրա երկրային կյանքը:

[244] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ- 289, ց. 1, գ. 2, թ. 13: Տե՛ս նաև «Борьба», Тифлис, 1918, № 92:

[245] Տե՛ս Германские оккупанты в Грузии в 1918 году. Сборник документов и материалов. Составил и подготовил к печати М. М. Габригидзе. Госиздат Груз. ССР, Тбилиси, 1942, стр. 58-59:

3. Հաջորդը՝ մինիստրները, որոնք առաջին հերթին կարևոր են մեզ համար գերմանական կառավարության հետ համատեղ աշխատանքում. դրանք են զինվորական մինիստր Գեորգաձեն, ֆինանսների մինիստր Ժուրուլին և երկաթուղային ճանապարհների մինիստր Լորդկիպանիձեն: Այնուհետև՝ Ազգային խորհրդի փոխպրեզիդենտ Բարաթաշվիլին»[246]:

Չնայած այս արարողությունը չկայացավ, սակայն փաստն ինքնին շատ խոսուն է: Մայիսի 25-ին Փոթի ժամանեց գերմանական զորքերի 3 հազարանոց էշելոնը, իսկ մայիսի 28-ից հետո (Գերմանիայի կողմից Վրաստանի ճանաչումից հետո) Փոթիում կնքվեցին ևս 6 պայմանագրեր, համաձայն որոնց Գերմանիան մենաշնորհային իրավունք ձեռքբերեց շահագործելու Վրաստանի տնտեսական ռեսուրսները, իսկ Փոթի նավահանգիստը և երկաթուղային ուղիները անցան գերմանական հրամանատարության հսկողության տակ: Վերջապես, հունիսին Թիֆլիսում և Վրաստանի գլխավոր ռազմավարական նշանակություն ունեցող քաղաքներում տեղաբաշխվեցին գերմանական զորքեր՝ 30 հազար մարդ [1918 թ. դեկտեմբերի 26-ին Փոթիից մեկնեց վերջին գերմանական զինվորը, իսկ 1919 հունվարի 7-ին՝ նաև գերմանական ռազմաքաղաքական միսիան, իսկ արդեն 1918 թ. դեկտեմբերի 25-ին բրիտանացիները ժամանեցին Թիֆլիս], որոնք փաստացի մնացին մինչև 1919 թ. կեսերը: Վրացական կառավարության հետ կնքված պայմանագրի հիման վրա (12 հուլիսի) Գերմանիան ձեռք բերեց Չիաթուրիի մարգանեցի (մանգան) հանքերը շահագործելու իրավունքը 30 տարի ժամկետով (ի դեպ, հարկ է հատուկ նշել, քանզի դա կարևոր է. Չիաթուրիի մարգանեցի հանքերը տալիս էին մարգանեցի համաշխարհային ողջ հանույթի գրեթե 40 %-ը, հետևաբար կարևոր դեր էին խաղում համաշխարհային տնտեսության մեջ), Փոթի նավահանգիստը՝ 60 տարով, Շորապան-Չիաթուրի-Սաչխերե երկաթուղագիծը՝ 40 տարով: Մայիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում գերմանացիները Վրաստանից դուրս բերեցին 30 մլն մարկին համարժեք պղինձ, ծխախոտ, թեյ, մրգեր, գինի և այլն: Նույնիսկ գերմանական միսիայի ղեկավար ֆոն Քրեսսի

[246] Տե՛ս Хачапуридзе Г. В., Борьба за пролетарскую революцию в Грузии. Очерки. 1917-1921. стр. 135. փաստաթուղթն ամբողջությամբ հրապարակված է «Правда»-ի 1933 թ. դեկտեմբերի 1-ի համարում (№ 330):

նվազեցված տվյալներով, Վրաստանում գտնվելու ժամանակահատվածում իրենց կողմից Գերմանիա արտահանվեց 31 հազար տոննա մարգանեց, մոտ 70 հազար տոննա պղինձ, 360 տոննա բուրդ, 40350 հատ ոչխարի մորթի և այլն[247]: Այստեղից էլ ինքնաբերաբար ակնհայտ է դառնում գերմանական շահագրգռվածությունը վրացական խնդրում, և նրանց կողմից ցուցաբերվող օժանդակությունը Վրաստանին՝ հայ-վրացական ռազմաքաղաքական հակամարտությունում[248]:

Վեհապետական Վրաստանի դիրքերից ամեն ինչ թույլատրելի էր, առավել ևս նրանց կողքին էր կանգնած Կայզերական Գերմանիան: Իսկ հիմնավորումներ որքան ասես գտնվում էին: Հայ-վրացական հարաբերությունները շիկանում էին և ի վերջո թիզ առ թիզ մոտեցնում պատերազմական իրավիճակի:

Վրացիների կողմից ամեն պատրվակ օգտագործվում էր կրքերը բորբոքելու համար: Այս առիթով Ս. Վրացյանը դիպուկ նկատում էր, որ «…վրացիները ավելի նպաստավոր պայմաններում էին և առիթ չէին փախցնում վիրավորելու հայերի ինքնասիրությունը»[249]: Վրաց ազգայնականների պահանջների հիմքում ընկած էր սահմանազծման պատմական սկզբունքը, այն դիտարկելով որպես հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների կարգավորման մեկնակետ: Հայկական կողմից առաջարկվող ծրագրերը անընդունելի էին համարում թե՛ թաթարները, և թե՛ վրաց տարբեր քաղաքական շրջաններ, և մասնավորապես ազգայնական գաղափարախոսությունը սերած վրաց ազնվականության ներկայացուցիչները, որոնց դիրքորոշումը պարարտ հող նախապատրաստեց վրաց-հայկական ռազմաքաղաքական հակամարտությունը բորբոքելու համար:

Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարարությանն ուղղված 1918 թ. հուլիսի 26-ի նամակում Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական միսիայի ղեկավար Ա. Ջամալյանը գրում է Ազ-

[247] Տե՛ս Адамия В. И., Из истории английской интервенции в Грузии, стр. 38; Տե՛ս նաև Хачапуридзе Г. В., Борьба грузинского народа за установление Советской власти, стр. 123; Кадишев А. Б., Интервенция и гражданская война в Закавказье, стр. 14:

[248] Տե՛ս Великая Октябрьская Социалистическая революция. Издание третье, дополненное. Энцилопедия, Москва, «Советская Энциклопедия», 1987, стр. 195:

[249] Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատոր Ա, էջ 204:

գային խորհրդի և հայկական կորպուսի պահեստների պահպանության հետ կապված հարցերի մասին, շեշտելով՝ Վրաստանի տեղական իշխանությունների, հատուկ օրգանների ինքնագլուխ գործունեության մասին, որոնք մի տեղ իրենց պահակն են դնում, մի այլ տեղ՝ կնքում պահեստը, իսկ երրորդ տեղում՝ պարզապես գրավում պահեստները[250]:

Այդ նույն օրը՝ 1918 թ. հուլիսի 26-ին, Ջամալյանը բողոքի նոտա է ուղարկում Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրություն, փաստեր բերելով վրացիների կողմից հայկական ունեցվածքի նկատմամբ կատարվող անընդմեջ չարաշահումների և խախտումների մասին: Ջամալյանը գտնում էր, որ հայկական կորպուսի ունեցվածքի, զենքի ու հանդերձանքի նկատմամբ կատարվող ոտնձգությունները ճնշող տպավորություն են թողնում հայկական հասարակայնության վրա: Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը պահանջում էր վրացական մինիստրից տեղյակ պահել իշխանության բոլոր համապատասխան օրգաններին, որպեսզի Վրաստանի տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության ողջ ունեցվածքը դիտեն որպես անվիճելիորեն անձեռնմխելի, իսկ վիճելի հարցերում ունեցվածքի հետ կապված ոչ մի վիճակ տեղ չգտնի, առանց նախօրոք Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրության և Վրաստանում հայկական դիվանագիտական միսիայի միջև հարաբերությունները պարզելու[251]:

Լորուտի գյուղական կոմիսարին ուղղված Վրաստանի Դեմոկրատական հանրապետության Ներքին Գործերի նախարարության Ալավերդու տեղամասի կոմիսար Միրաքովի հուլիսի 27-ի դիմումագրից (№ 35) տեղեկանում ենք, որ Բորչալուի գավառային կոմիսարի հուլիսի 23-ի № 876 հրահանգի համաձայն կարգադրված է եռօրյա ժամկետում 2 օրինակով կազմել 1895-1899 թթ. ծնված երիտասարդ մարդկանց ցուցակները, որոնք ենթակա են զորակոչի, և տվյալ փաստաթղթերը ներկայացնել ըստ հասցեի[252]: Վրացիները, հասկանալի նկատառումներով, տենդագին կերպով շտապում էին իրենց ներկայությունը Լոռու-Փամբակի շրջանում դարձնել ավելի իրական և արդյունավետ, հերթական հակահայկական ոտնձգությանը ձեռնամուխ լինելով: Այս կապակցու-

[250] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 66, թ. 15:
[251] Տե՛ս նույն տեղում, գ. 67, թ. 2:
[252] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 17, թ. 13:

թյամբ Վրաստանում հայկական դիվանագիտական ներկայացուցչությունը իր վճռական բողոքն էր հայտնում Վրաստանի իշխանություններին վիճելի Բորչալուի գավառում զորահավաք հայտարարելու դեմ: Դրանում նաև ընդգծվում էր, որ դեռ հունիս ամսին Բորչալուի գավառի Հայաստանի Հանրապետությանը պատկանալու մասին ամենևին չէին կասկածում պպ. նախարարները՝ Ժորդանիան և Ռամիշվիլին, որոնք պպ. Քաջազնունուն, Ահարոնյանին և Խատիսյանին հայտնել էին, որ վերոհիշյալ շրջանը ժամանակավորապես վրացական զորքերով գրավելու պատճառը եղել է միայն տաճիկների առաջխաղացումը դեպի Թիֆլիս արգելելու համար[253]:

1918 թ. օգոստոսի 3-ին վրացիների կողմից հերթական քայլն է կատարվում ամրապնդվելու և՛ իրենց ներկայությունը, և՛ դիրքերը ուժեղացնելու համար հայտնի շրջաններում: Այսպես, Վրաստանի ռազմական մինիստր Գեորգաձեն Հայաստանի Հանրապետության Զինվորական նախարարության Գլխավոր շտաբին հասցեագրված դիմումագրով պահանջում էր անհապաղ կարգադրություն անել Թիֆլիսում և Վրաստանի տարածքում գտնվող Հայկական կորպուսի բոլոր զինված զինվորներին անհապաղ Հայաստանի Հանրապետության սահմանները ուղարկելու մասին՝ հարկ եղած հրահանգները տալով, նշելով նաև, որ անհրաժեշտ շարժակազմը տեղափոխելու համար կտրամադրվի երկաթուղի, միաժամանակ խնդրելով, որ զինվորներից զենքը առգրավվի և պահվի մի շինությունում ըստ հայեցողության[254]: Սակայն, Հայաստանի կառավարությունը, ձգտելով հասնել հարցի խաղաղ կարգավորման, 1918 թ. օգոստոսի 3-ին խորհրդարանում հանդես եկավ կոնկրետ հայտարարությամբ, որում խնդիր էր դրվում փոխադարձ համաձայնությամբ վճռել Հայաստանի և հարևան պետությունների սահմանային-տարածքային հարցը՝ հիմք ընդունելով էթնիկական սկզբունքը, որպես միակ և իրաւդրությանը, ռամկավար պետությունների ոգուն և նպատակներին համապատասխանող լուծում[255], սակայն դա էլ խնդիրը չլուծեց և հայ-վրացական հարաբերությունները փակուղի մտան, ռազմաքաղա-

[253] Տե՛ս «Ձանգ», Երևան, 3 սեպտեմբերի, 1918, N 51 (67):

[254] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 43, թ. 31: Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 11:

[255] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 58:

քական լարվածությունը պահպանվեց: Կառավարության վերը նշված հայտարարագրի հետ կապված, որում ուղենշվում էին ՀՀ արտաքին և ռազմաքաղաքական ռազմավարության ուղենիշները, 1918 թ. օգոստոսի 7-ի նիստում սոցիալիստ-հեղափոխական խմբակցության պատգամավոր Արշ. Խոնդկարյանը հանդես է գալիս դիտողությամբ, համաձայն որի Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սահմանները որոշելիս պետք է նկատի առվի միայն ազգագրական սկզբունքը, անտեսելով տնտեսական պայմանները, որի հետ իր գործնական համերաշխությունն է արտահայտում պատգամավոր Ս. Մամիկոնյանը[256]:

Վրացիները ամեն պատեհ և անպատեհ առիթ օգտագործում էին հայերի վրա ճնշում գործադրելու նպատակով, վիրավորելով վրացահայերի ազգային արժանապատվությունը, և ոտնձգություն կատարելով Թիֆլիսում գտնվող հայկական ունեցվածքի նկատմամբ: «Էրթոբա» թերթը (1918 թ. օգոստոսի կեսեր) առաջնորդող հոդվածում գրում էր Մանթաշևի [Մանթաշով-Մանթաշյան] քարավանսարայում կատարված խուզարկությունների մասին, որոնելով այլևայլ գուներանգներ հակահայկական հիստերիայի հերթական փորձի համար: Այսպես, այդ թերթը գրում էր, որ Մանթաշևի պահեստներում հայտնաբերվել են մի ամբողջ պահեստ ռումբեր, թնդանոթներ և պայթուցիկ նյութեր, ավելացնելով, որ դրանք այնտեղ պահպանության են տվել հայկական նացիոնալիստ-դաշնակցականները սադրիչ նպատակներով: Այդ կապակցությամբ Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական միսիային կից Ինֆորմացիոն բյուրոն հանդես է գալիս հայտարարությամբ, որտեղ հասարակայնությանը տեղեկացնում էր, որ Մանթաշևի քարավանսարայում գտնվող ունեցվածքը պատկանում է Առանձին Հայկական կորպուսի զորամասերին, և կնքված է վերջինիս կնիքով: Հաղորդագրության վերջում Ինֆորմացիոն բյուրոյի պետ Մալխազևը պաշտոնապես հայտնում էր, որ ոչ մի կուսակցություն, և առանձնապես Դաշնակցությունը այդ ունեցվածքի նկատմամբ որևիցե վերաբերմունք չունի[257]: Ինչպես տեսնում ենք, Վրաստանի մենշևիկյան հանրապետությանը պատրվակ էր պետք, և նրանք այն գտնում էին: Թեկուզև ամեն մի պետություն էլ

[256] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 17:

[257] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 12, թ. 121:

դժվար թե այլ կերպ վերաբերվեր իր սուվերեն տարածքում գտնվող օտարազգի զորաջոկատի, զենքի ու զինամթերքի առկայության նկատմամբ ունենալիք դիրքորոշման հարցերում:

Արդեն վերը մասնակիորեն անդրադարձել ենք, որ հայ-վրացական հարաբերությունների սրման, պատերազմական առճակատման գործում որոշակի դեր է խաղացել նաև դեմոկրատական Վրաստանի հակահայկական քաղաքականությունը հայաբնակ բնակչության շրջանում: Հատկանշական է այս առումով Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի 1918 թ. օգոստոսի 26-ի բողոքագիրը՝ ուղղված Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրին (N 534). «Ներկայացնելով ընդսմին Ալլա[հ]վերդիի շրջանի կոմիսարի սույն տարվա հունիսի 27-ի N 35 գրությունը՝ ուղղված Լերութի գյուղական կոմիսարին ի մասին 1895-1899 թթ. ծնվածների զորակոչի Վրաստանի կողմից, իմ կառավարության հանձնարարությամբ հայտնում եմ ամենավճռական բողոք այն մասին, որ Վրաստանի կառավարությունը զորակոչ է անում Բորչալուի վիճելի շրջանում, որի սեփականության իրավունքի մասին Հայաստանի Հանրապետությունը երբեք չի կասկածել և պարոնայք նախարարներ Ժորդանիան և Ռամիշվիլին դեռ սույն տարվա հունիս ամսին հայտարարեցին Քաջազնունուն, Ահարոնյանին ու Խատիսյանին, որ հիշյալ շրջանը ժամանակավոր գրավված է վրաց զորքերի կողմից՝ թուրքերի ճանապարհը դեպի Թիֆլիս կտրելու նպատակով»[258]:

Վրացիները դեպքը բացատրեցին «թյուրիմացությամբ» և խոստացան «համապատասխան հրահանգներ» տալ, բայց իրենց գործելակերպը չփոխեցին, և իրադարձությունների ընթացակարգում նոր գունեթանգներ չհայտնվեցին:

Նույն օրերին, մի այլ նոտայով, հասցեագրված Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պարտականությունները կատարող Նոյ Վիսարիոնի Ռամիշվիլուն, հիշեցնելով օգոստոսի 26-ի իր վերոնշյալ դիմումագրի մասին, Վրաստանում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Արշակ Ջամալյանը վճռական և փաստարկված բողոք էր հայտնում «վիճելի Բորչալուի շրջանում Վրաստանի կառավարության կողմից 1895-1899 թթ. ծնվածների շրջանում անցկացվող զորահավաքի

[258] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 251; գ. 99, թ. 2; Ֆ.Պ- 275, ց. 5, գ. 27, թ. 12, 150:

մասին», որի մասին ինչպես Ն.Վ. Ռամիշվիլին, այնպես էլ Ն. Ժորդանիան հունիս ամսին հայտարարել էին, որ այն «վրաց զորքերի կողմից գրավված է ընդամենը ժամանակավորապես», նպատակ ունենալով կանգնեցնելու տաճիկների առաջխաղացումը դեպի Թիֆլիս: Իր դիմումագիրը ավարտելով, Ա. Ջամալյանը հայտարարեց, որ ըստ այդմ ինքը նորից դիմում է պ. մինիստրին ամենավճռական բողոքով հիշատակված զոնայում ընդդեմ վրացական իշխանությունների գործողությունների, որը հակասում է Վրաստանի կառավարության բարձրագույն ներկայացուցիչների հայտարարություններին օկուպացիայի ժամանակավոր բնույթի մասին[259]:

1918 թ. սեպտեմբերի 24-ին թվագրվող մի տեղեկատվության մեջ դարձյալ հաղորդվում է Լոռու շրջանում կատարվող բռնարարքների, և հայերի շրջանում իրականացվող ապօրինի զորահավաքի մասին, որը բռնությամբ իրագործում էին գյուղական կոմիսարները, որոնք չներկայացածների ծնողներին սպառնում էին հաշվեհարդարով: Այդ հաղորդագրության մեջ ընդգծվում էր այն մասին, որ հայկական բնակչությունը բողոքում է այդ կարգադրության դեմ և հրաժարվում կատարել այն, մերժումը պատճառաբանելով, որ Լոռու տեղամասի միացման հարցը Վրաստանին կամ Հայաստանին վճռված չէ, և հետևաբար իրենք համաձայն են զորակոչի ենթարկվել միայն այն դեպքում, եթե այդ մասին կարգադրություն արվի նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից[260]:

Սցենարը կար, և վրացիները ըստ այդ սցենարի գործում էին և հետևողականորեն զբաղվում հակահայկական ուղղվածության ահաբեկչական գործողություններով, այն համեմելով «բարեկամության և եղբայրության մասին հավաստիացումների» կարգախոսներով:

1918 թ. սեպտեմբերի 27-ին Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը Վրաստանում՝ Ա. Ջամալյանը[261] իր օգնական Մ. Թու-

---

[259] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ- 200, ց. 1, գ. 149, թ. 48, գ. 99, թ. 5: Ֆ.Պ- 275, ց. 5, գ. 17, թ. 14:

[260] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 12, թ. 195:

[261] Ջամալյան Արշակ Ջամալի [Խսահակյան, Արիսյան - 1882-1940 թթ.] – ՀՀ դիվանագիտական առաջին հավատարմատարը Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում՝ 1918 հուլիսի 13-ից մինչև դեկտեմբերի 22-ը՝ ընդհատվելով Լոռու գավառի շուրջ առաջացած հայ-վրացական բախման և հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների ծայրահեղ սրման հետևանքով, և իր սկզբունքային դիրքորոշման պատճառով Վրաստանի

մանյանի[262] հետ այցելեցին նախագահ Ն. Ժորդանիային, որպեսզի բողոք ներկայացնեն Լոռվա շրջանի հայերին զորահավաքի ենթարկելու դեմ: Սակայն նրանց սպասում էին նոր անակնկալներ, նոր ելևէջներ վրացական փքուն առոգանությամբ՝ մեծամիտ և վեհապետական Վրաստանի շահերից բխող: Հայաստանի ներկայացուցիչը Ժորդանիային հայտարարեց, որ «վրացիք զօրաժողով են հայտարարել մի շրջանում, որ Վրաստանի մի մասը չի հանդիսանում և նրանց համար լավագույն դեպքում վիճելի շրջան կարող է միայն համարվել»[263]: Ն. Ժորդանիան, որին դեռևս 1915 թ. մեծագույն բոլշևիկ Վ. Ի. Լենինը անվանել էր «բացահայտ սոցիալ-շովինիստ»[264], դրան պատասխանեց, որ թեև Լոռին իրավ վիճելի մի գավառ է, սակայն ըստ 1783 թ. դաշնագրի շարունակում է մնալ Վրաստանի սահմաններում և կազմում է Վրաստանի մի մասը, եթե իհարկե, հրավիրվելիք խորհրդաժողովում չորոշվի, որ գավառն անցնում է Հայաստանին: Մինչ այդ, ըստ Ժորդանիայի, լոռեցինե-

---

իշխանությունների կողմից համարվեց անցանկալի անձ՝ persona non granata Վրաստանում, միաժամանակ խզվեցին դիվանագիտական հարաբերությունները Հայաստանի և Վրաստանի միջև: 1919 թ. եղել է ՀՀ խորհրդարանի անդամ, զինահավաքման արտակարգ կոմիսար, 1920 թ. օգոստոսի 10–ին ստորագրել է համաձայնագիր ՌԽՖՍՀ և ՀՀ միջև:

[262] Թումանյան Միքայել Գեորգիի [Թումանյանց, Թումանով, Թումանիշվիլի, ծնվ. 28 նոյեմբերի, 1887 թ., Թիֆլիս – 1930-ական թթ. վերջին դարձավ ստալինյան բռնությունների զոհ]- մասնագիտությամբ իրավաբան էր: Մ. Թումանյանը եղել է Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական՝ փաստացիորեն լինելով երկրորդ մարդը դիվանագիտական հավատարմատարից հետո, հաճախակի փոխարինելով վերջինիս բացակա ժամանակ: Հրաշալի տիրապետել է հայերենին, ռուսերենին, ֆրանսերենին, վրացերենին: 1917 թ. վերջին -1918 թ. սկզբին ծառայել է Անդրկովկասյան կոմիսարիատում և Սեյմի կառավարությունում՝ լինելով Արտաքին հարաբերությունների մինիստրության քարտուղար: Աշխատել է և՛ Արշակ Ջամալյանի, և՛ Լևոն Եվանգուլյանի և՛ Տիգրան Բեկզադյանի ժամանակ: 1918 թ. սեպտեմբերի 15-ին Ա. Ջամալյանի կարգադրությամբ Միքայել Թումանյանը նշանակվում է ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական: 1920 թ. օգոստոսի 3-ից՝ շուրջ երկու շաբաթ շարունակ Լ. Եվանգուլյանի հիվանդության պատճառով կատարել է Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարի պարտականությունները: 1920 թ. Մ. Թումանյանը շարունակել է փոխարինել ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին, լինելով նաև միսիայի խորհրդականը՝ մինչև ապրիլի 3-ին նոր դիվանագիտական հավատարմատարի՝ Տիգրան Բեկզադյանի նշանակումը, որի հավատարմագրերը (верительные грамоты) ստորագրվեցին ապրիլի 23-ին, սակայն իր փաստացի պարտականությունների կատարմանը նա անցավ միայն մայիսի 3-ին:- Туманян М. Дипломатиюескаяистория Республики Армения. 1918-1920, стр. 10-11, 14-15, 38:

[263] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 99, թ. 5-6; Ֆ.Պ- 275, ց. 5, գ. 67, թ. 35:

[264] Տե՛ս Ленин В. И., Соч. т. 21, стр. 306:

րը կհամարվեն վրացահպատակ ու քաղաքացիական իրավունքներ ստանալով, պետք է կատարեն բոլոր պարտականությունները: Ժորդանիան գտնում էր, որ եթե վրացական կառավարությունը լոռեցիներից զինվոր չվերցնի, ապա նրանց համար արտոնյալ դրություն կստեղծվի, իսկ դա անարդար կլինի, քանի որ Վրաստանի գավառներից մի քանիսը դարձյալ վիճելի են համարվում, ինչպես օրինակ Սղնախի մի մասը, Ղարեազը և Զաքաթալան, իսկ այդ գավառներից զորք վերցվում է: Ժորդանիան պնդում էր, որ Զաքաթալան վրացիներինն է, սակայն մնում է թուրքերի ձեռքին և իրենք այդ գործին չեն խառնվում՝ մինչև սահմանների վերջնական կարգավորումը: Այդ իսկ պատճառով նույն ձևով պետք է մոտենալ «Լոռու խնդրին», - պնդում էր Ժորդանիան: Նոյ Ժորդանիան նաև յուրովի է մեկնաբանում վերն արդեն ասված տարածքների «ժամանակավոր գրավման մասին» հարցը. «Ժամանակավոր խօսքը ոչինչ չի նշանակում, որովհետև ամեն բան, գուցե և մեր հանրապետությունների գոյությունը ժամանակավոր է: Ներկայումս Լօռին մեր ձեռքին է գտնվում իբրև պատմական Վրաստանի մի մասը և մենք նրան համարում ենք Վրաստանի տերիտորիա, իսկ թե ապագայում ինչպես կտնօրինվի նրա վիճակը, արդյօք համաձայն էթնիկական սկզբունքի թե՞ այլ կերպ, մենք չգիտենք: Ձեր պահանջը, որ մենք Լօռիում զօրաժողով (այսինքն՝ զորահավաք - Վ. Վ.) չանենք, որովհետև հայերը պրետենզիաներ ունեն նրա վրա, անընդունելի է, որովհետև հակառակ դեպքում մենք պետք է հրաժարվենք մեր երկրի գրեթե բոլոր ծայրամասերում զօրաժողով անելուց, նկատի ունենալով այն հանգամանքը, որ բոլոր ծայրամասերի վրա մեր հարևանները պրետենզիաներ են երևան հանում: Եթե դուք ցանկանում եք Լօռվա հայերի համար մենք բացառություն անենք, դրա համար հիմք չենք տեսնում»[265]: Ավարտելով իր ասելիքը, Ն. Ժորդանիան ընդգծում է, որ զորակոչային վերը նշված տարիքի համապատասխան «լոռեցի զինվորները երևի կծառայեն Թիֆլիսում, իսկ այլ հասակի գյուղացիները կարող են, եթե ցանկանում են, հայկական զորքերի մեջ մտնել»[266]: Ն. Ժորդանիան շեշտում է նաև, որ Վրաստանը որևէ երկրամասի վիճակը որոշելու խնդրում կարող է ղեկավարվել պատմական-պայմանական իրավունքների տեսակետով, և

[265] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 99, թ. 6:
[266] Տե՛ս նույն տեղում:

քանի որ Լոռուն մի կողմից «սպառնում են թուրք ավազակները, իսկ մյուս կողմից՝ Ադրբեջանի կառավարությունը, որն արդեն Խան-Խոյսկու բերանով հետին նպատակներով սուտ լուրեր է տարածում, թե Բորչալուի մեր գրաված վայրերում կոտորում են թյուրքերին և մինչև անգամ գերմանացիների միջամտությունն է հրավիրում թյուրքերին պաշտպանելու համար, այս հանգամանքներում հարկավոր է Լոռին պաշտպանել զինվորական ուժերով: Եվ Լոռվա հայերը, որ մեր շնորհիվ վայելում են կյանքի և գույքի ապահովություն, պարտականություններ էլ պետք է կրեն»[267]: Ասել է, թե սրանով վրաց ղեկավարները արդարացնում էին իրենց կողմից անցկացվող անհիմն և հակաօրինական զորակոչերը Լոռվա հայկական տարածքում, չնայած այն հանգամանքին, որ այդ երկրամասում ապրող հայերը ամենևին էլ Վրաստանի քաղաքացիներ չէին, ինչը Ժորդանիան ժխտում էր վերը հիշատակված հանդիպման ժամանակ, և հետևաբար արդարացնում վրացական իշխանությունների ապօրինի հակահայկական գործողությունները:

Իշխելով իրավիճակի վրա, Վրաստանի իշխանությունները միաժամանակ ձգտում էին զորակոչերի նկատմամբ նման ռազմավարության իրականացմամբ Հայաստանի Հանրապետության վրա ճնշում գործադրելու բոլոր հնարավոր լծակները պահել վրացական իշխանությունների ձեռքին, թույլ չտալ ռազմական առումով Հայաստանի զորեղացում: Այդ վերջին հանգամանքը կարևոր էր, քանզի դրանով վրացական իշխանությունները սահմանա-տարածքային առճակատման մեջ այն օգտագործում էին Հայաստանի Հանրապետության դեմ: Վրաստանի իշխանությունները արգելքներ հարուցելով տարանցիկ ուղիներով զենքի ու զինամթերքի առաքման խնդրում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դեմ խոչընդոտներ հարուցելով զինվորակոչության հարցում, ձգտում էին առավելություններ կորզել և պահպանել իրենց գերապատիվ, աշխարհաքաղաքական առումով շահեկան դիրքը կովկասյան տարածաշրջանում՝ բոլոր միջոցները գործադրելով Հայաստանի հետ ռազմաքաղաքական և գլխավորապես՝ սահմանատարածքային կռվում և անհաշտելի մրցակցությունում հողային հիմնախնդիրները վճռել հօգուտ Վրաստանի:

[267] Տե՛ս նույն տեղում:

Մի այլ տարբերակով, վրացիները այս դեպքերը բացատրեցին «թյուրիմացությամբ» և խոստացան «համապատասխան հրահանգներ» տալ, բայց իրենց ընթացքը շարունակեցին անփոփոխ պահել, նորանոր խարդախ մանևրումների գնալով: 1918 թ. սեպտեմբերի 29-ին Ջամալյանը մի նոր, «ամենավճռական բողոք» ևս ուղարկեց վրաց կառավարությանը, հայտնելով թե՝ «մինչև այսօր էլ շարունակում եմ ստանալ տեղեկություններ վիճելի գոտու բնակիչների կողմից, որոնք գանգատվում են, որ վրաց իշխանությունները զորակոչ են անում»: Այս բողոքն էլ ունեցավ նախկինի հետևանքը. «սիրալիր խոստում և որդեգրված գործելակերպի շարունակություն»[268]: Ավելին, վրացիներն անցան էլ ավելի նրբանկատ մոտեցումների, քողածածկված շախմատային քայլեր կատարելով, մանևրելով ինչքան հնարավոր է՝ դիմացինին խճճելու նպատակադրումով:

Վրացական իշխանությունները հայտնի ռազմավարական նկատառումներից ելնելով՝ արդարացնում էին նաև իրենց վերաբերմունքը (անմարդկային և դաժան) հայ գաղթականության նկատմամբ: Այսպես, «Борьба» թերթի 1918 թվականի օգոստոսի 8-ի 138 համարում, վկայակոչելով մամուլի բյուրոյի տեղեկությունները, հայտնվում էր, որ Վրաստանի տարածքում գտնվող 200 հազար փախստական հայերից ամեն օր սովից և հիվանդություններից մեռնում էր 1000 հոգի, գլխավորապես՝ երեխաներ[269]: Ելնելով հենց այդ հուսահատական վիճակից, 1918 թ. օգոստոսի 8-ին Ախալքալաքի հայկական ընկերակցության վարչությունը դիմելով Վրաստանում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարին, շեշտում էր այն մասին, որ թուրքերի կողմից Ախալքալաքի գավառի գրավումից հետո (այսինքն՝ հունիսի 1-ից հետո) միայն գավառի բնակչության աննշան մասն է այնտեղ մնացել: Դիմումագրում նշվում էր, որ գավառի 100 հազարանոց բնակչությունից 80 հազարը վախենալով թուրքերի կողմից կոտորված լինելու հանգամանքից, մինչև վերջիններիս գալը, բախտի քմահաճույքին թողնելով իրենց միլիարդանոց ունեցվածքը (հարյուր հազարավոր փութ պատրաստի հաց, մոտ 10 մլն փութ արժեք ունեցող բերք և այլն), դուրս են եկել Ախալքալաքի գավառից, և թաքնվել Բակուրիանում և Բորչալուի գավառի Ծալկայի տե-

[268] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 216:
[269] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 7, թ. 221բ:

ղամասում, որից 40 հազարը՝ Բակուրիանում և նույնքան՝ Ծալկայում: Ախալքալաքի հայկական ընկերակցության վարչությունը գտնում էր, որ քանի դեռ կառավարությունը չի բնակեցրել տարածքը եկվոր տարրերով, փախստականները պետք է վերադառնան, և պետք է կազմակերպվի գավառական միլիցիա համամասնական սկզբունքներով[270]: Սակայն այս խնդրում հայերի դեմ խոչընդոտներ հարուցվեցին, և թուրքերից ետ չմնալով, վրացական իշխանությունները սովից ու հիվանդություններից ոչնչացող հայ գաղթականության նկատմամբ որդեգրեցին կոշտ ու կոպիտ, քողածածկված հակահայկական քաղաքականություն: Ըստ էության փախստականների վերադարձը հարազատ բնակության վայրերը նրանց սրտով չէր, և մեքենայությունները իրենց երկար սպասեցնել չտվեցին: Դա հստակ երևում է Ա. Ջամալյանի օգոստոսի 8-ի գրությունից՝ ուղարկված Հայոց Ազգային կոմիտեին և Հայաստանի խորհրդին: Դրանում մասնավորապես ասվում էր հետևյալը. «…վրացիք մեր հետ լավ չեն վարվում, մանավանդ գաղթականների ընդունելության հարցում: Հայ-վրացական հարաբերությունների դրությունը բարդանում է նաև այն հանգամանքով, որ վրացիք գրավիլ են Լոռին և ուզում էն իրենց երկրին կցել, մի բան, որ նրանք ոչ մի տեսակետից իրավունք չունին: Այս բոլորով հանդերձ, մենք հույս ունինք, որ հենց գաղթականների վերադարձի խնդիրը կարգադրվի և մեր սահմանները որոշվին, կարելի կլինի ավելի նորմալ հարաբերություններ ստեղծիլ վրացիների հետ»[271], որոնք ձգտում էին փոխել երկրամասի ժողովրդագրական նկարագիրը:

1918 թ. հոկտեմբերի 2-ին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարին ուղղված գրության մեջ Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնակատարի անունից նշվում էր, որ «Վրաստանի Հայոց Ազգային խորհուրդը միջնորդություն է հարուցել թույլ տալու այնտեղ գտնվող հայ փախստականների մի մասին տեղաբաշխելու Լոռվա տեղամասի սահմաններում գտնվող հայկական գյուղերում, սակայն նրանց և մուսուլմանների միջև Մանգլիսի շրջանում տեղի ունեցած բախումները նկատի ունենալով, իրենք անհրաժեշտ են գտնում, որ Հայաստանի կառավարությունը իր վրա վերցնի այժմ

[270] Տե՛ս նույն տեղում, գ. 17, թ. 34-35:
[271] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 37, թ. 19:

Վրաստանի Հանրապետությունում գտնվող հայ փախստականների մի մասին Հայաստան տեղափոխելու, մի մասին էլ՝ Արմավիրի շրջանի հայկական գյուղերը»[272]: Եվ միայն մի բանի հետ էր «եղբայրական» Վրաստանը համաձայնվել. «…հայ փախստականների աննշան մասն էլ ժամանակավորապես կարող է թողնվել իր ներկա տարաբնակեցման սահմաններում, ընդ որում մեր կողմից կձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները նրանց անվտանգության ապահովման համար»[273]: Վրացիները հրաշալի հասկանում էին, ինչ են անում: Վերջիններիս նպատակը մեկն էր՝ օգտվելով ստեղծված խճճված, սակայն իրենց համար նպաստավոր իրավիճակից՝ հայկական հայտնի գավառները՝ Ախալքալաքը և Լոռի-Փամբակը բեռնաթափել բնիկ բնակիչներից՝ հայերից, և դրանով իսկ լուծել բոլոր սահմանային-տարածքային վեճերը:

Փարիսեցիական մոտեցումներ, ոչինչ չտվող: Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործոց նախարարությունը ի պատասխան հոկտեմբերի 2-ի վերը բերված գրության, Ա. Ջամալյանի միջոցով հոկտեմբերի 15-ին Վրաստանի կառավարությանը ուղարկում է պատասխան հեռագիր (№ 1028), որում մասնավորապես շեշտվում էր հետևյալ միտքը. «Նախկին Բորչալուի գավառի Լոռու տեղամասը Հայաստանի կառավարությունը չի համարում Վրաստանի տարածքի կազմի մեջ մտնող, և հետևաբար չի ընդունում Վրաստանի կառավարության «իրավունքը» արգելել հայ փախստականներին բնակություն հաստատելու այդ տեղամասի հայկական գյուղերում: Եվ եթե Վրաստանի կառավարությունը այնուամենայնիվ խոչընդոտներ կհարուցի այդպիսի տարաբնակեցման դեմ, ապա Հայաստանի կառավարությունը դա կհամարի ոչ թե իրավունքի ակտ, այլ ռասիզմի ակտ»[274]:

Նմանատիպ մի բողոքագիր էլ ուղարկվում է 1918 թվականի հոկտեմբերի 23-ին (№ 1357), որում դարձյալ բողոք էր հայտնվում Լոռու տարածքում հայ փախստականներին հայկական գյուղերում տեղաբաշխելու կապակցությամբ, և շեշտվում էր, որ «…նախկին Բորչալուի գավառի Լոռու տեղամասը Հայաստանի կառավարությունը չի համարում Վրաստանի տարածքային կազմում գտնվող, և ըստ այդմ Վրաս-

[272] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 99, թ. 12:
[273] Տե՛ս նույն տեղում, թ. 12:
[274] Տե՛ս նույն տեղում, թ. 16:

տանի կառավարությանը իրավունք չի վերապահում արգելել այդ տեղամասի հայկական գյուղերում փախստական հայերին տեղաբաշխելը»: Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը գտնում էր, որ եթե Վրաստանի կառավարությունը այնուամենայնիվ խոչընդոտի այդպիսի տեղաբաշխմանը, ապա Հայաստանի կառավարությունը դա կհամարի ոչ թե իրավունքի, այլ բռնության ակտ[275]:

Նա խարազանում էր վրացական իշխանությունների կեցվածքը գաղթականների հարցում, դա համարում ոտնձգություն Հայաստանի ներքին գործերին[276]: Իսկ 1918 թ. նոյեմբերի 13-ին Մդիվանու միջոցով ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը[277] դիմեց Վրաստանի կառավարությանը, որպեսզի վերջինս թույլատրի հայ գաղթականների անցումը «վրացական գրավման տակ գտնվող» հայկական գյուղեր և որում ակնկալվեց Մդիվանու աջակցությունը[278]:

Սակայն Վրաստանը բոլորովին չանսաց դրական պատասխան տալ այդ դիմումագրից բխող հիմնախնդրին՝ բարեհաճ վերաբերմունք դրսևորել և ապահովել հայ գաղթականների մուտքը «վրացական գրավման տակ գտնվող հայկական գյուղեր» և ավելին՝ վրացական կառավարությունը անզիջում մնաց սահմանները փակ պահելու իր համառ և հակահայկական ուղղվածություն ունեցող որոշման մեջ:

Ասել է, թե դիվանագիտական հակամարտությունը շարունակվում էր, և այլևայլ դրսևորումներ գտնում: Հարկ է ասել նաև մի կարևոր հանգամանքի մասին, և դա կարևոր է երկրամասում այսպես կոչված դաշնակիցների դերը ըմբռնելու տեսանկյունից: Հարցը վերաբերում է այն բանին, որ այդ դեպքերից անմիջապես հետո էլ, Լոռու Չեզոք գոտու առաջացման պայմաններում 1919 թ. փետրվարի 13-ին վրաց մենշևիկ-

---

[275] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 99, թ. 22; Ֆ.Պ- 275, ց. 5, գ. 17, թ. 105:

[276] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 62: Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը, Հայրենիք (Բոստոն), 1928, N 11, էջ 121-124:

[277] Տիգրանյան Սիրական Ֆադեյի [1875-1947 թթ.] - ՀՅԴ անդամ, կրթությամբ՝ իրավաբան: Հասարակական-քաղաքական և պետական գործիչ, Ռուսաստանի Պետական Դումայի անդամ, Անդրկովկասյան Սեյմի փոխնախագահ, 1918-1919 թթ. եղել է ՀՀ Արտաքին Գործերի, այնուհետև Լուսավորության, ապա Լուսավորության և արվեստի նախարար, Երևանի պետական համալսարանի կազմակերպական հանձնաժողովի անդամ, պրոֆեսոր: 1919 թ. դեկտեմբերի 16-ին ընտրվել է ՀՀ պառլամենտի փոխնախագահ:

[278] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр, 84-85:

յան կառավարությունը օկուպացիոն իշխանություններից կարգադրություն ստացավ՝ թույլ չտալ Վրաստանով փախստական հայերի անցումը, որոնք Թուրքիայից ուղևորվում էին Հայաստան և այլն[279]: Հենց այսպես, սցենարը պարզ էր, որն ակնհայտորեն նպատակամղված էր հայվրացական հակամարտության արհեստականորեն պահպանմանը՝ այլևայլ դրսևորումներով, իսկ պղտոր ջրում ձուկ որսալը հարմար էր և հեշտ:

Այնուհանդերձ, կասեցնել պատերազմական մեքենայի գործողությունները երկու հարևանների միջև՝ չհաջողվեց: Հարաբերությունները հատկապես սրվեցին 1918 թ. հոկտեմբերին, երբ թուրքերը դատարկեցին Լոռի-Փամբակի շրջանը և հայոց զորքերը Դրոյի գլխավորությամբ զբաղեցրին այդ տարածքը: Նախկին պայմանավորվածությունները հայերի և վրացիների միջև՝ կապված վերոհիշյալ տարածքները թուրքերի հեռանալուց հետո զբաղեցնելու խնդրի հետ, խախտվեց և սահմանակռվի պատճառ հանդիսացավ: Հայկական զորախմբի մուտքը Լոռի տեղի ունեցավ ավելի շուտ, քան Եռյակ Միության, և հետևաբար, Գերմանիայի վերջնական անձնատուր լինելը:

Մասնագիտական գրականության մեջ տեսակետ կա, որ հայերին այդ մասին պարզ դարձավ օգոստոսի 31-ին Երևան Օսմանյան արևելյան բանակի հրամանատար Խալիլ փաշայի պաշտոնական այցից հետո, սակայն այն ունի նաև իր նախապատմությունը, ինչին ստորև կանդրադառնանք: Մասնավորապես որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի և հայտնի վիճելի տարածքների նկատմամբ գերմանա-թուրքական, և մասնավորապես Թուրքիայի դիրքորոշման որոշ արժեքավոր մանրամասներ: Այդ կապակցությամբ ուշագրավ են 1918 թվականի օգոստոսի 11-ին Թիֆլիսում ավստրո-հունգարական ներկայացուցչության ղեկավար բարոն Գ. ֆոն Ֆրանկենշտայնի կողմից հրավիրված բանկետի ժամանակ դրան մասնակցած գեներալ ֆոն Քրեսսի, Խալիլ փաշայի և այլոց կողմից արծարծված որոշ մտքեր: Այսպես, ֆոն Քրեսսը նշել է, որ ինքը խոսել է Խալիլ փաշայի հետ այն մասին, որ նա պետք է իր զորքերի մի մասը Անդրկովկասից տեղափոխի Միջագետք: Եվ չնայած այն հանգամանքին, որ Խալիլ փաշան հենց այդ բան-

[279] Տե՛ս Адамия В. И., Из истории анлийской интервенции в Грузии, стр. 62:

կետի սկզբում շեշտել էր, որ պետք է ամեն կերպ աջակցել, որ վերանան մշտական անհամությունները հայերի և թուրքերի միջև, որ չի կարելի ամիսներով, տարիներով իրար փչացնել և իրար վնասելու մասին մտածել, այնուամենայնիվ երկյուղ է արտահայտել, թե զորքերի ետ քաշվելու դեպքում հայերը իրենց թիկունքից կհարվածեն: Դրան գեներալ ֆոն Քրեսսը պատասխանել է, որ հայերն այդպիսի բան չեն անի, հակառակ դեպքում իրենք՝ գերմանացիները, որպես Թյուրքիայի դաշնակիցներ, իրենց, գուցե և վրացական զորքերով դուրս կգան հայերի դեմ: Այնուհետև ֆոն Քրեսսը իբր թե Խալիլ փաշային համոզել է, որ Հայաստանը չի կարող հանգստանալ այն պարագայում, որի մեջ է տվյալ պահին, որ այդ երկիրը տևականորեն հանգստացնելու համար անհրաժեշտ է նրան վերադարձնել այն գավառները, որ Բրեստ-Լիտովսկում գծած սահմաններից այս կողմում են գտնվում, և եթե Տաճկաստանը ետ քաշի իր զորքերը մինչև Բրեստի սահմանները, հայերը պատրաստ կլինեն իրենց զորքի թիվը քչացնել մինչև 10-12 հազար մարդ[280]:

Այստեղ կարևոր է նշել նաև 1918 թ. օգոստոսի 16-ին ֆոն Քրեսսի հետ Ա. Ջամալյանի հանդիպման որոշ այլ մանրամասներ, որից պարզ է դառնում, թե ինչ դիրքորոշում և մտադրություններ են ունեցել տարածաշրջանային ուժերը թուրքերի Լոռու-Փամբակի և այլ հատվածներից հեռանալուց առաջ, ինչպես նաև հայերի նկատմամբ ոչ այնքան բարեկամաբար տրամադրված ֆոն Քրեսսի որոշ հետաքրքիր հետևությունների մասին: Այդ հանդիպման ժամանակ ֆոն Քրեսսը Ա. Ջամալյանին դիմելով, պարզապես ընդգծում է, որ թուրքերը հայերի և Հայաստանի նկատմամբ հարձակողական ծրագրեր չունեն, սակայն միաժամանակ ավելացնում է, որ ոչ ոք չի կարող ոչինչ երաշխավորել: Զրույցի վերջնամասում ֆոն Քրեսսը չափազանց բովանդակալից միտք է արտահայտում: Վերջինս ընդգծում է. «…շիտակ թուրք չկա աշխարհի երեսին, պ. Ջամալյան,- ընդմիջեց ինձ գեներալը,- և Խալիլ փաշան էլ շիտակ մարդ չէ…որ երկու քայլից այն կողմը ոչինչ չի տեսնում քաղաքական հորիզոնում: Նրա և ուրիշների տարբերությունն այն է, որ նա զգում է հայերի հետ բարեկամ մնալու անհրաժեշտությունը ներկա ռազմական սիտուացիայում (իրավիճակում),…իսկ Էսադներն ու Նուրիները այնքան են

[280] Տե՛ս ՀԱԱ, Ֆ, Պ - 275, ց. 5, գ. 37, թ. 13:

խորացել պանթյուրքական հիմարությունների մեջ, որ երկու քայլից այն կողմը ոչինչ չեն տեսնում քաղաքական հորիզոնում»[281]: Այս և այլ կարգի փաստերից պարզ է դառնում, թե ինչքան անկայուն էր հայերի վիճակը Անդրկովկասում, և թե ինչ չափով կարելի էր հույս դնել զանազան խոստումների կամ հաղորդագրությունների ճշմարտացիության վրա: Վերջապես, վերջին հանգույցը: Ինչպես արդեն վերը նշել ենք, օգոստոսի 31-ին Խալիլ փաշան ժամանեց Երևան: Ուղևորության ժամանակ վերջինիս ուղեկցում էին բարոն Ֆրանկենշտայնը, Ա. Ջամալյանը և ուրիշներ: Խալիլի այցը պետք է որոշ պարզություն մտցներ իրադրության մեջ: Խալիլ փաշան Երևանում արժանացավ բավական սրտաբաց ընդունելության: Վերջինիս կայարանում դիմավորեց Ներքին Գործերի նախարար Արամ Մանուկյանը, որը Խալիլ փաշայի վաղեմի ընկերն էր: Կայարանում հանդիպման ժամանակ Խալիլ փաշան վազելով ընդառաջում է և գրկախառնվում Արամի հետ, որից հետո Խալիլ փաշան ընդունում է պատվավոր պահակախմբի «պարադը» (զորահանդես) և ապա պատվավոր հեծելազորի ուղեկցությամբ Արամ Մանուկյանի հետ միասին մտնում քաղաք:

Հյուրի պատվին տրված ճաշկերույթից հետո տեղի է ունենում պաշտոնական խորհրդակցություն մինիստր-նախագահ Քաջազնունու և Հայաստանի խորհրդարանի նախագահ պ. Սահակյանի մասնակցությամբ: Առաջին հերթին Հովհ. Քաջազնունին խորհրդակցության առաջ դրեց Փամբակն ու Լոռին դատարկելու հարցը: Երկար խոսակցությունից հետո հարցը փակվեց նրանով, որ Խալիլ փաշան երեք օրվա ընթացքում պետք է իր կառավարությանը այդ գավառները դատարկելու առաջարկ աներ և համապատասխան հրաման ստանալուց հետո դատարկեր հայտնի տարածքները: Ինչպես նշվում է պ. Ջամալյանի կողմից, սա արդեն նահանջ էր այն խոստումից, որ տվել էր Խալիլ փաշան ճաշի վերջում՝ երեք օրվա ընթացքում իր պատասխանատվությամբ համաձայնության գալով Հայոց կառավարության հետ՝ դատարկել Հայաստանի գրաված մասերը՝ Փամբակ-Լոռին, ամբողջությամբ կամ մասամբ: Ա. Ջամալյանը այս կարևոր հանդիպմանը անդրադառնալով, վերջնամասում նշում է Խալիլ փաշայի կողմից արտահայտած չափա-

[281] Տե՛ս նույն տեղում, թ. 26 – 27:

զանց հետաքրքիր մի մտքի մասին, որը շատ ուշագրավ է: Այսպես, Խալիլ փաշան հատուկ ընդգծում է. «…Մենք թուրքերս չենք մտածում որևէ ժողովուրդ ստրկացնելու մասին, սակայն մենք, մի իդէա ունենք և ուզում ենք այդ իդէան իրագործել: Մենք ցանկանում էինք վերականգնել կապը մեր հին հայրենիքի՝ Թուրանի հետ և դրա համար ուզում ենք, որ մեր երկու հայրենիքները իրար միացնող ճանապարհները ուրիշների տիրապետության տակ չլինեն»: Այդպիսով, այն միտքը, թե թուրքերը ցանկանում էին Անդրկովկասի վրայով իրենց տիրապետությունը տարածել մինչև Թուրքեստան՝ իր շատ որոշակի արտահայտությունը գտավ Խալիլ փաշայի խոսքերի մեջ[282]:

Այստեղից պարզից էլ պարզ է, որ թուրքական այդ մոտեցումը որքան երկդիմի էր, այն լի էր հակասականությամբ և անորոշությամբ, երբեմն էլ պարզապես սովորական դիվանագիտական ներկայացում էր, որի խայծը ոչ հազվադեպ կուլ էին տալիս ոչ փորձառու հայ քաղաքագետները: ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղված 1918 թ. սեպտեմբերի 19-ի զեկուցագրում (N 771) Ա. Ջամալյանը տեղեկացնում էր Աբդուլ-Քերիմ փաշայի հետ հանդիպման մասին՝ կապված վերջինիս կողմից հայ-թուրքական դաշնակցության ստեղծման կամ հայ-թուրքական հարաբերությունների մերձեցման մասին, քննարկելու գաղթականների և Լոռու-Փամբակի էվակուացիայի հարցը, ավելացնելով, որ իբր թե փաշան համաձայն է այդ մտքին և իր կառավարությունը արդեն գործնականապես աշխատում է այս ուղղությամբ: Ջամալյանը հայտնում էր, որ Աբդուլ-Քերիմ փաշան տեղեկացրել է իրեն, որ իբր ինքը մի քանի օր առաջ իր կառավարությունից տեղեկություն է ստացել, որ թյուրքերը թողնում են Ղարաքիլիսայից հյուսիս գտնված շրջանը, որ այդ մասին հայտնվել է հայկական կառավարությանը Մեհմեդ Ալի փաշայի միջոցով (Ահմեդ Ալին ի միջի այլոց նկատում է, որ ինքն այդ մասին հայտնել է հայերին Դրոյի միջոցով): Աբդուլ-Քերիմ փաշան նաև ասել էր, որ ինքը Էսադ փաշայի հետ բանակցությունների մեջ է գտնվում՝ ախալքալաքցիներին վերադարձնելու իրենց գյուղերը: Հաղորդելով այդ մասին, Ա. Ջամալյանը խնդրում էր շտապ իրեն հրահանգավորել, թե ինքը ինչ քաղաքական կուրս պետք է ընդունի տվյալ իրավի-

[282] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 37, թ. 46-48:

ճակում և ինչ պետք է հաղորդվի հայկական պատգամավորությանը առաջադրված խնդրի մասին[283]: Այս հարցի մասին վկայող ևս մեկ ուշագրավ տեղեկատվություն կա (N 789)՝ հասցեագրված Հայաստանի Արտաքին Գործերի նախարարին, որը 1918 թ. սեպտեմբերի 21-ին ուղարկել էր Թիֆլիսում հայկական դիվանագիտական հավատարմատար Արշակ Ջամալյանը: Հարկ է ընդգծել, որ դրանում ողջ որոշակիությամբ երևում է թուրքական կողմի երկերեսանիությունը. «Լոռու և Փամբակի մասին Մեհմեդ Ալի փաշայի միջոցով Խալիլ փաշան նամակ է ստացել Էնվեր փաշայից, որ այդ գավառների զինվորական օկուպացիան մնա, իսկ քաղաքացիական վարչությունը հանձնել հայերին: Այս առիթով պետք է ասիմ, - ավելացրել է Խալիլ փաշան, - Աբդուլ-Քերիմ փաշան մի սխալ է թույլատրել իրեն՝ Վրաց կառավարությանը պաշտոնապես հայտնելով, որ թուրքերը թողնում ին Լոռիի և Փամբակի վարչությունը և շահագրգռված պետութիւնները կարող են իրենց վարչությունը հաստատել այնտեղ. այսօր Ժորդանիան ինձ հայտնեց, որ վրացիք շուտով պետք է իրենց վարչությունը հաստատեն մեր թողնվելիք կամ թողած շրջաններում: Դուք անմիջապես ուղարկեցե՛ք ձեր մարդիքը, սակայն առանց զինվորական մասերի, որ օր առաջ տեր կանգնեն իրենց երկրին»[284]:

Սույն խնդրի համակողմանի և ավելի լիարժեք բացահայտման տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում կապիտան Մեդվեդևի ծառայողական խոսակցությունը Ղարաքիլիսա-Լոռու տեղամասի պետի հետ 1918 թ. սեպտեմբերի 30-ին, որում փոխգնդապետ Միրիմանովը և գնդապետ Ղորղանովը Երևան էին հաղորդում կարևոր տեղեկություններ թուրքերի մտադրությունների մասին Լոռու-Փամբակի շրջանից իրենց հեռանալու խնդրի հետ կապված: Սույն տեղեկատվությամբ գեներալ Մ. Սիլիկյանին (Սիլիկով) և Դրոյին հայտնվում էր, որ թուրքական 36-րդ դիվիզիայի հրամանատարը կատեգորիկ ձևով հայտարարել է, որ թուրքական պահակակետերը կսկսեն իրենց հեռացումը Վրաստանի սահմանից Ախալքալաքի շրջանում ցերեկը ժամը 12-ին, դեկտեմբերի 4-ին վերջին թուրքական զինվորները կմաքրեն Ախալքալաքը: Կապիտան Մեդվեդևը այնուհետև հայտնում էր, որ իր խնդ-

[283] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 37, թ. 32:

[284] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 66, թ. 41-42; Ֆ.Պ- 275, ց. 5, գ. 37, թ. 33-34:

րանքին, որ գոնե երկու օր թուրքերը կանգնեն սահմանի վրա, 36-րդ թուրքական դիվիզիայի հրամանատարը արձագանքեց՝ կապվելով Շեվքեթ փաշայի հետ, որի բացակայության ժամանակ շտաբի պետը պատասխանեց, որ Վրաստանի հետ պայմանագրի համաձայն թուրքերը չեն կարող մաքրել Ախալքալաքի գավառը դեկտեմբերի 4-ի գիշերը: Դիվիզիայի պետը հայտնում էր, որ վրացիները կենտրոնացել են Ախալքալաքի գավառի հյուսիսային սահմանում, և նրանց պահակակետերը գտնվում են թուրքերի պահակակետերից 4 վերստ հեռավորության վրա, այդպիսով հայկական պլանների համար անհրաժեշտ է դեկտեմբերի 2-ի գիշերը՝ լույս դեկտեմբերի 3-ին մոտենալ Վրաստանի սահմանի վրա գտնվող թուրքերի պահակակետերին և Ախալքալաքը գրավել դեկտեմբերի 3-ի գիշերը՝ լույս դեկտեմբերի 4-ին: Կապիտան Մեդվեդևը հայտնում էր, որ անհրաժեշտ է անհապաղ սկսել հայկական հրամանատարության հրամանի իրագործումը: Այնուհետև կապիտան Մեդվեդևը տեղեկացնում էր, որ թուրքական հրամանատարությունն արդեն հրաման է տվել հայկական զորքերին ներս թողնելու մասին: Բացի այդ, հայտնվում էր, որ Ղարաքիլիսա-Լոռու տեղամասի զորամասի պետի անունից ինքը (Մեդվեդևը - Վ. Վ.) թուրքական դիվիզիայի պետի միջոցով մեկ անգամ ևս դիմել է Շեվքեթ փաշային խնդրանքով՝ կանգնեցնել թուրքական պահակակետերը Վրաստանի սահմանի վրա գոնե մինչև դեկտեմբերի 4-ի առավոտը: Կապիտան Մեդվեդևը նաև հայտնում էր, որ ինքը մնում է Ալեքսանդրապոլում՝ հյուպատոսի մոտ՝ հրամանի սպասելով: Այնուհետև ասվում էր, որ իրենց ջոկատի պետը չմտնի Ախալքալաք, քանի որ այնտեղ լինելու են թուրքերը, այլ տեղավորվել Ախալքալաքի մոտ և թուրքերի հետ կապի մեջ մտնել: Կապիտան Մեդվեդևը արձանագրում էր, որ դրությունը շատ լուրջ է, որ զորաջոկատը կարող է դուրս գալ նույնիսկ այդ նույն օրը գիշերը, թուրքական դիվիզիայի հրամանատարը արել է կարգադրություն, որպեսզի սահմանի վրա ջոկատին նոյեմբերի 30-ին ժամը 16-ին չկանգնեցնեն: Այնուհետև ներկայացվում էր գնդապետ Ղորղանովի խնդրանքը, որով վերջինս խնդրում էր տեղեկացնել դիվիզիայի հրամանատարին, որ իր ջոկատը գտնվում է Համամլուում, և որ Համամլուից մինչև Ախալքալաք, մինչև թուրքերի պահակադիրքերը կազմում է 120 վերստ: Այս շատ հետաքրքիր տեղեկատվության վերջնամասում կապիտան Մեդվեդևը հայտ-

նում էր Ղարաքիլիսա-Լոռու տեղամասի զորաջոկատի պետին, որ ինքն այդ մասին հայտնել է Երևան՝ դիվիզիայի հրամանատարին և սպասում է համապատասխան կարգադրության: Երևանից ստացված պատասխան հեռագրում հրահանգավորվում էր հիշյալ Ղարաքիլիսա-Լոռու տեղամասի զորաջոկատը ժամանակավորապես պահել Համամլուում՝ մինչև հատուկ կարգադրությունը: Այն, որ թուրքական կողմն ունեցել է որոշակի մութ մտադրություններ և ծրագրեր տարածաշրջանային այս հարցերում, ակնհայտորեն երևում է նաև Վրաստանի կառավարության նախագահ Ն. Ն. Ժորդանիայի զրույցից Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Ջ. Ֆորեսթեր-Ուոքերի հետ: Այս զրույցը պարզորոշում է նաև որոշ կարևոր «մանրամասներ», համաձայն որոնց թուրքերը ակնհայտորեն ոչ միայն վրացիների հետ տարածքային հարցերի ստորաքարշ առևտուր էին անում, այլև կազմակերպում մի խաղ, որի նետերը իրենց սուր ծայրերով ուղղված էին Հայաստանի դեմ: Երկդիմի մի խաղ, որի նպատակը թուրքերի հեռացումից հետո տարածաշրջանում մշտական լարվածության պահպանումն էր: Եվ այսպես, ինչպես այդ զրույցի ժամանակ ընդգծում է Վրաստանի կառավարության նախագահ Ն. Ն. Ժորդանիան, մինչև անգլիացիների գալը Անդրկովկաս, այլ խոսքերով մինչև դաշնակիցների զենքի հաղթարշավի փաստացի ամրագրումը, Վրաստանի կառավարությունը Կ.Պոլսում համաձայնության է եկել թուրքական կառավարության հետ, որ Ախալցխայի և Ախալքալաքի գավառները պետք է դատարկվեն (թուրքական զորքերից - Վ. Վ.) մեկ ամսվա ընթացքում, և այդ մարզերը թուրքական զորամասերի կողմից դատարկելուց, դուրս գալուց անմիջապես հետո պետք է այնտեղ մտնեն Վրաստանի Հանրապետության զորքերը և զբաղեցնեն մաքրված երկրամասը: Զրույցի վերջնամասում Ն. Ժորդանիան ընդգծում է, որ ինքն ունի այդ հանգամանքը հաստատող հավաստի փաստաթղթեր[285]: Այն հաստատելու համար մենք բառացիորեն մեջբերենք մի հատված 1919 թ. փետրվարի 23-ին գեներալ Ֆորեստյեր-Ուոքերի[286] հետ Վրաստանի կառավարության ղեկավար Նոյ Ժորդանիայի

[285] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 71, թ. 37:

[286] Ֆորեստյեր-Ուոքեր Ջորջ Թաունշենդ [1866-1939 թթ.] - Գեներալ-մայոր, 1918 թ. դեկտեմբերի 25–ից մինչև 1919 թ. մարտի 10–ը եղել է Կովկասում տեղաբաշխված 27–րդ դիվիզիայի հրամանատարը:

ունեցած անչափ կարևոր զրույցից. «Մինչև անգլիացիների այստեղ գալը, այլ խոսքերով ասած, մինչև դաշնակիցների զենքի վերջնական հաղթանակը, Վրաստանի կառավարությունը Կոստանդնուպոլսում համաձայնության մեջ մտավ թուրքական կառավարության հետ՝ Ախալցխայի և Ախալքալաքի գավառները մեկ ամսվա ընթացքում դատարկելու, նոյեմբերի 4-ից մինչև դեկտեմբերի 4-ն ընկած ժամկետում, այդ մարզերի զոր-քերի մաքրվելուց հետո Վրացական հանրապետության զորքերը կմտնեն և կզբաղեցնեն մաքրված երկրամասը: Կան այդ հանգամանքները հաստատող փաստաթղթեր: Գեներալ Մականին առաջարկվել է դեկտեմբերի 4-ին նշված վայրերը մտցնել վրացական զորամասեր: Մաքրման պահին Ախալքալաքի գավառի թուրքերի կողմից այնտեղ կազմավորվել է կոմիսարիատ՝ կազմված թուրքական կողմնորոշման անձանցից, որի գլուխ կանգնած է եղել Սերվեր բեկ Աթաբեկովը: Դեկտեմբերի 2-ին պարոն Աթաբեկովը իր համախոհների հետ եկան Ացխուր՝ գեներալ Մականի մոտ և հայտարարեցին իրենց չկամության մասին՝ ճանաչելու վրացական կառավարության իշխանությունը: Մականը նրանց պատասխանել էր, որ ինքը հաշվի է նստում միայն իր սեփական կառավարության կարգադրության հետ, որ չի կարող ճանաչել որևիցե նոր իշխանության կազմավորումը և որ իրեն հավաստի հայտնի է, որ թուրքերը Ախալցխայի գավառը դատարկել են իրենց համար»[287]:

Անշուշտ, հայ-վրացական ընդհանուր ռազմաքաղաքական խառնաշփոթում իր դերակատարումն ունեցավ Թուրքիան, որին ձեռնտու էր հայ-վրացական առճակատման սանձազերծումը: Հոկտեմբերի 5-ին Խալիլ փաշան դարձյալ ժամանում է Երևան (դեռ օգոստոսին նա եղել էր Երևանում) և հայտնում իր կառավարության կամքը՝ դատարկելու Լոռի-Փամբակի շրջանները, ինչպես նաև թույլատրելու Ալեքսանդրապոլի գավառի հայերին մաս-մաս վերադառնալու իրենց տեղերը[288]: Եվ ինչպես վկայում է Հայաստանի խորհրդարանի պատգամավոր Արշամ Խոնդկարյանը, Խալիլ փաշան «եկավ ոչ թե բանակի գլուխ անցած, ինչպես սպասում էինք մենք բոլորս գրեթե ամեն օր, այլ որպես հյուր «իր

[287] Տե՛ս Сеф С. Е., «Демократическое правительство» Грузии и английское командование, Тифлис, Заккнига, 1928, стр. 43:

[288] Տե՛ս «Հորիզոն», 12 դեկտեմբերի, 1918 թ., N 61 (76):

հին բարեկամ Արամին»՝ Հայաստանի Ներքին գործոց նախարարին»[289]: Հոկտեմբերի 5-ին, երբ Թուրքիան պատրաստվում էր անձնատուր լինել Անտանտին, և պետք է իրականացվեր զորքերի դուրսբերումը Կովկասյան թատերաբեմից, այդ ժամանակ Երևանում գտնվող թուրք գեներալ Խալիլ փաշան, որը Էնվեր փաշայի քեռին էր, իր մոտ հրավիրված բարձրաստիճան հայ սպաներին առաջարկեց զբաղեցնել ոչ միայն թուրքերի կողմից գրավված Էջմիածնի գավառի մի մասը՝ Փամբակը, այլև Լոռում գտնվող Կամենկա գետից հարավ գտնվող բուֆերային գոտին: Թիֆլիսում գտնվող օսմանյան դեսպան և ռազմական ներկայացուցիչ Աբդուլ Քերիմ փաշան հավաստիացրեց Վրաստանում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Արշակ Ջամալյանին, որ թուրքական զորքերը շուտով դատարկելու են Փամբակը և Հարավային Լոռին, և որ հայ գաղթականներին կթույլատրվի վերադառնալ իրենց բնակավայրերը: Հայտնի է, որ Վրաստանում թուրքական ներկայացուցիչ Աբդուլ Քերիմ փաշան համանման առաջարկով դիմեց վրացական կողմին[290]: Խալիլ փաշայի վերոնշյալ հաղորդումից հետո հայկական և թուրքական զինվորական ներկայացուցչությունները պայմանավորվում են հիշյալ շրջաններում թուրքական զորամասերին հայկականով փոխարինելու ծրագրի շուրջ: Թուրքական հրամանատարությունը այդ պահի տեսանկյունից իրագործում էր ընդամենը իր կողմից զբաղեցված այն տարածքների ազատումը, որոնք Բրեստյան պայմանագրի շրջանակներից դուրս էին գտնվում: Այդ նույն օրը՝ հոկտեմբերի 5-ին, համապատասխան բանակցությունների ավարտից հետո, օսմանյան զորքերի արևելյան խմբավորման շտաբի պետ փոխգնդապետ Բասրի-բեյի և հայկական դիվիզիայի շտաբի պետ գնդապետ Մ. Զինկևիչի[291] կողմից ստորագրվեց արձանագրություն այն տեղանքների ազատման մասին, որոնք սահմանված էին Բաթումի պայմանագրի համաձայն: Կողմերի միջև կա-

[289] Տե՛ս «ՎԷՄ», Փարիզ, 1924, հունվար - փետրվար, էջ 56:

[290] Տե՛ս Hovannisian R. G., Armenia on the Road toIndependence (Berkley and Los Angeles, 1969), p. 233:

[291] Զինկևիչ Միխայիլ Միխայիլի [9.01.1883 թ. -23.02.1945 թ.] - 1915-1917 թթ. Կովկասյան ճակատում եղել է Սիբիրական կազակային բրիգադի շտաբի պետը, Գլխավոր շտաբի գնդապետ, 1918 թ. հայկական դիվիզիայի շտաբի պետը, իսկ այնուհետև՝ հայկական բանակի շտաբին առընթեր Դենիկինի Կամավորական բանակի ներկայացուցիչը. 1920 թվականից գեներալ-մայոր է և դիվիզիայի հրամանատարի օգնական:

րևոր պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ օսմանյան զորքերը ետ կքաշվեն միայն այն բանից հետո, երբ հայկական զորամասերը կզբաղեցնեն ազատված բնակավայրերը: Այդ նույն ընթացքում Ալեքսանդրապոլում պետք է գործեր խառը հայ-թուրքական հանձնաժողով, որը պետք է զբաղվեր Բրեստի պայմանագրով հաստատագրված սահմանագծումը տեղում իրագործելու համար: Հնարավոր թյուրըմբռնողությունից և բախումնալից իրավիճակից խուսափելու համար ըստ ձեռքբերված պայմանավորվածության հայկական զորամասերը չէին կարող զբաղեցնել սահմանագծի այն մասը, որը ձգվում էր Արագածի գագաթից մինչև Թափարավանի (Թափարվա-Փարվանա) լիճը ընկած տարածքը՝ մինչև հայ-թուրքական հանձնաժողովի կողմից այդ խնդրում որոշակի հստակություն մտցնելը, ընդ որում Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղագիծը որպես ռազմական տեսանկյունից մեծ կարևորություն ներկայացնող հանգույց հայկական կառավարության և զինվորական գերատեսչության կողմից պետք է ապահովագրվեին ավազակային հարձակումներից: Իսկ մեկ շաբաթ անց Հայաստանի Հանրապետության Ռազմական նախարար գեներալ Հովի. Հախվերդյանը հեռագիր է ստանում 1918 թ. Հայաստանում Թուրքիայի դիվանագիտական և ռազմական ներկայացուցիչ Մեհմեդ Ալի փաշայից, ըստ որի թուրքական զորամասերի էվակուացիան պետք է իրագործվեր հոկտեմբերի 18-ի գիշերից-հոկտեմբերի 19-ից սկսած: Սակայն ամեն ինչ հստակ չէր և այդ գործում որոշակի խճճվածություն կար: Ս. Վրացյանը դիպուկ բնութագրել է այդ իրավիճակը. «…եւ ոչ մի ասկեար չի մնայ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի սահմաններում գտնվող հողամասերի վրայ: Հայերը կարող էին գրաւել այդ հողամասերը, ինչպէս եւ Ախալքալաքի շրջանը, որ պիտի պարպէին թուրքերը[292]»:

Սակայն հարկ է հաստատագրել այն պատմաքաղաքական իրողությունը, որ Առաջին աշխարհամարտի ավարտամասում, դաշնակիցների ողորմածությանը հանձնվելուց երկու շաբաթ առաջ, երբ արդեն գործնականում ակնհայտ էր բոլոր ռազմաճակատներում պարտության փաստը, թուրքերը ձեռնարկեցին իրենց զորքերի աստիճանական, ոչ հապճեպ տարհանումը Բաթումիի պայմանագրով ապօրինի բռնա-

[292] Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատոր Դ, էջ 41:

զավթված տարածքներից: Նոյեմբերի սկզբներին Պարսկաստանում բրիտանական էքսպեդիցիոն կորպուսի հրամանատար Սըր Վիլյամ Մոնտհոմերի Թոմսոնը[293], որն այդ ժամանակ գտնում էր Կասպիականի ափին գտնվող Էնզելի նավահանգստում, մի շարք լուրջ հայտարարություններ արեց, որոնք ամեն ինչից բացի, իրենց մեջ բովանդակում էին քաղաքական կանխադրույթներ.

1. 1918 թ. նոյեմբերի 17-ի առավոտյան ժամը տասից ոչ ուշ բոլոր թուրքական և գերմանական զորքերը պետք է լքեն ռուսական Կովկասի սահմանները կովկասյան փոխարքայության 1914 թ. սահմաններում,

2. Բաքու քաղաքը, նավթահորերը և Բաթումիի նավահանգիստը պետք է բրիտանական զորքերի կողմից օկուպացվեն՝ կարգ ու կանոնի ապահովման համար և ոչ մի այլ զորամասեր չեն կարող թույլատրվել բրիտանական օկուպացիայի զոնայում:

3. Մեծ Բրիտանիան Կովկասը դիտարկում է իրեն դաշնակից Ռուսաստանի տարածքի մաս, որի հետ կապված որևիցե պետական կազմավորումների ճանաչման հանգամանք չի դիտարկվում, չնայած և չի բացառվում համագործակցությունը դե-ֆակտո գոյություն ունեցող իշխանությունների հետ տեղերում,

4. Մեծ Բրիտանիան ի դեմս լիազոր ներկայացուցիչների պետք է վերահսկի միջազգային առևտուրը և Կովկասում իրավակարգի օրգանները, չմիջամտելով տարածաշրջանի այլ ներքին գործերի մեջ:

Հենց այդ ժամանակ էլ, ՀՀ զորքերը թուրքական հրամանատարության հետ ձեռքբերված համաձայնության հիման վրա սկսեցին զբաղեցնել թուրքերի կողմից դատարկվող հայկական տարածքները: 1918 թ. հոկտեմբերի 18-ին հայկական առաջապահ զորաջոկատները մտան Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Կամենկա գետից հարավ ընկած և նախկինում թուրքերի կողմից գրավված տարածքը, ինչպես նաև անցան սահմանաբաժան գիծը և գրավեցին Քոբեր երկաթուղային կա-

[293] Թոմսոն Վիլյամ Մոնտհոմերի [2.12.1878 թ. -23.07.1963 թ.] – 1918 թ. սեպտեմբերից մինչև 1919 թ. մայիսը գլխավորել է բրիտանական զորքերի հյուսիս-պարսկական խումբը: Բրիտանական գեներալ, 1918 թ. նոյեմբերի 17–ից մինչև 1919 թ. մայիսի 10–ը եղել է 39–րդ դիվիզիայի հրամանատարը, որը գրավեց Բաքուն, այնուհետև 1919 թ. գլխավորել է միացյալ բրիտանական զորքերը [27–րդ դիվիզիան] Անդրկովկասում [10.03.1919 թ. - 12.05.1919 թ.], որի կենտրոնակայանը գտնվում էր Թիֆլիսում:

յարանը, որը գտնվում էր վրացական կողմում[294], այնտեղից դուրս մղելով վրացական պահակազորին: Այդ պատմաքաղաքական պահին էլ իր ողջ սրությամբ հառնեց վիճարկելի այն հիմնահարցը, թե հենց որտեղով պետք է անցնի Հայաստան-Վրաստան պետական սահմանը:

Միաժամանակ, աշխարհաքաղաքական նոր իրողությունները բացահայտեցին թաքնված վիճակում գոյություն ունեցող այն հակասությունները, որ սահմանատարածքային խնդրում առկա էին Վրաստանի ու Հայաստանի միջև, և այդ ուղղությամբ հայ-վրացական երկխոսությունները, քննարկումները, վեհաժողովները անարդյունավետ եղան, էլ ավելի սրեցին տարակարծությունները երկու դրկից ժողովուրդների միջև: 1918 թ. ամռանը քաղաքական կրքերը շիկացած էին և ընդհանուր համաձայնությունը չկայացավ: Եվ այսպես, ազգամիջյան ռազմաքաղաքական փոխհարաբերությունների կիզակետում հայտնվեց վրաց-հայկական սահմանավեճը Թիֆլիսի նահանգի հարավային մասում տեղաբաշխված Ախալքալաքի և Բորչալուի գավառների համար: Սահմանավեճի խնդրում արտահայտելով իրենց դիրքորոշումը, Է. Անդերսենը և Գ. Էգգեն քաղաքական ներկնապնակի գույները փոխելով, գտնում են, որ ըստ այսպես կոչված «հայ նացիոնալիստների», ողջ Ախալքալաքի և Բորչալուի գավառի ավելի քան կեսը անվիճելիորեն ենթակա են Հայաստանի կազմում ընդգրկվելու, միաժամանակ աղավաղելով ճշմարտությունը և գնահատումների արժեքային համակարգը, վերն ասվածին նաև ավելացնում, թե իբր առավել ռադիկալ տրամադրված հայ գործիչները կոչ են արել հայկական պահանջատիրությունը էլ ավելի լայն տարածել՝ դեպի հյուսիս-արևմուտք, ընդհուպ մինչև Բաթումի՝ ելքի ապահովմամբ դեպի Սև ծով: Վրացական դիրքորոշման առումով վերընշյալ հեղինակները ավելի նրբանկատ մոտեցում են ցուցաբերում, գտնելով թե իբր վրաց լիդերների մեծամասնությունը և քաղաքականապես ակտիվ հասարակայնության հիմնական զանգվածը համերաշխ են եղել այն բանում, որ Թիֆլիսի նահանգի հարավարևելյան սահմանը անվիճելի է և Վրացական դեմոկրատական հանրապետության կողմից վերանայման ենթակա չէ, և ավելին, ավելացնելով, որ կային նաև Վրաստանի կազմի մեջ Ղազախի շրջանի, Ելիզավետպոլի նահանգի և Երևա-

[294] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 14:

նի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի որոշ մասերի ընդգրկման կողմնակիցներ[295], որից Անդրկովկասում վրացական հեգեմոնիայի հոտ էր գալիս:

Եթե մենք հալած յուղի տեղ ընդունենք վրաց պատմաքաղաքագետների որոշ տեսակետներ, ապա համաձայն այդ տեսակետներից մեկի Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիան իբր թե դեռ 1918 թ. հոկտեմբերի 5-ին Երևանում կնքել են գաղտնի պայմանագիր, ըստ որի Բաթումիի պայմանագրով հաստատված թուրքերին անցած գրավյալ տարածքները «մաքրվելու են թուրքական զորքերից և հանձնվելու են Հայաստանին»[296]:

Մյուս կողմից, թուրքերը նույն խոստումները տալով հայերին և վրացիներին, ձգտում էին անհավասարակշիռ վիճակ ստեղծել Վրաստանի և Հայաստանի միջև: Վրացիներն էլ պնդում էին, որ հայերի և թուրքերի միջև գաղտնի համաձայնություն կա, որն իբր կնքվել է 1918 թ. հոկտեմբերի 5-ին, ըստ որի Ալեքսանդրապոլում գումարված խառը թուրք-հայկական հանձնաժողովը պետք է հաստատեր սահմանագիծը, որը պետք է որոշվեր թուրքերի հեռանալու պահին՝ համաձայն Բաթումիի պայմանագրի[297]:

Միաժամանակ, Թուրքիան վստահություն էր ուզում ունենալ, որ դրանով իսկ իր կողմից հնարավորինս ամեն ինչ կարվի, որ բացառվի հնարավոր հայ-վրացական ռազմաքաղաքական համագործակցությունը և դաշինքը, չնայած Վրաստանը տվյալ պատմաքաղաքական իրավիճակում ամենևին էլ չէր ձգտում գնալ չերաշախավորված և իր համար ոչ շահավետ գործողությունների, այն ժամանակ երբ հայ քաղաքական առաջնորդների մոտ նկատվում էին անհավասարակշիռ և ոչ սթափ, զգացմունքային մոտեցումներ:

---

[295] Տե՛ս Эндрью Андерсен, Георг Эгге, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/: Տե՛ս http://Iberiana.wordpress.com/armenia-georgia/marxulia interviu/http: //news.day.az/politics/263452.html:

[296] Տե՛ս http://Iberiana.wordpress.com/armenia-georgia/marxulia-interviu/http://news.day.az/ politics/263452.html:

[297] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 14, թ. 26-27:

Վրաց պատմաբանների, այդ թվում և Գ. Մարխուլիայի անփաստարկ պնդմամբ, այս վերջին հանգամանքը սանձազերծիչ ձգանի դեր է խաղացել վրաց-հայկական պատերազմի բռնկման գործում, ինչը չի համապատասխանում իրողությանը թեկուզ այն առումով, որ թուրքերը նման առաջարկ արել էին նաև վրացական կողմին: Եթե վրաց պատմաբանները պնդում են Հայաստանի և Թուրքիայի միջև կնքված գաղտնի պայմանագրի գոյության չապացուցված փաստի մասին, ապա նույնը կարելի է պնդել իրենց առումով, ինչը բառախաղ է հիշեցնում:

Հայտնի է, որ ըստ Մուդրոսի զինադադարի, թուրքական զորքերը պետք է դուրս բերվեին Անդրկովկասից, այդ թվում և Թիֆլիսի նահանգից: Ըստ այդմ, Թիֆլիսում գտնվող թուրքական ներկայացուցիչ Աբդուլ Քերիմ փաշան 1918 թ. նոյեմբերին վրացական կառավարությանը հայտնեց Ախալքալաքի և Ախալցխայի շրջաններից զորքեր դուրս բերման ժամանակացույցի մասին:

Այդուհանդերձ, թուրքական իշխանությունները նախքան իրենց զորքերի տարհանումը զբաղեցված տարածքներից իրագործելը, և այդ մասին գործնականում երկու կողմերին էլ հայտնելով, ամենևին չէին խորշում իրենց հեռանալուց հետո հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում խառնաշփոթ մտցնելուց, իսկ զորքերի դուրսբերման խնդրում էլ թուրքական կողմը խիստ ճշտապահությամբ աչքի չընկավ: 1918 թ. նոյեմբերի 2-ին Վրաստանում Թուրքիայի դիվանագիտական և ռազմական ներկայացուցիչ Աբդուլ Քերիմ փաշան պաշտոնապես տեղեկացրեց ՀՀ դիվանագիտական հավատարմատար Արշ. Ջամալյանին այն մասին, որ համապատասխան զորամասերի հրամանատարներին հրաման է տրվել զորքերի տարհանումը իրագործել վեց շաբաթն անց տեղավորվող ժամկետում, սկսած 1918 թ. հոկտեմբերի 24-ից[298]: Իրավիճակը սրվեց, քանի որ Երևանում թուրքական ներկայացուցիչ Մեհմեդ Ալի փաշան համանման տեղեկություն էր հաղորդել հայկական կողմին[299]: Իսկ արդեն նոյեմբերի 30-ին Ս. Մդիվանին հեռագիր

[298] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 73-75:

[299] Տե՛ս Բաբալեան Ա., Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրե, 1950, էջ 26-27: Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 73-75:

ուղարկեց Թիֆլիս՝ Եվգ. Գեգեչկորուն այն տագնապալից տեղեկատվության մասին, ըստ որի թուրք պաշտոնատար անձինք իբր թե Ախալքալաքի գավառը առաջարկել են Հայաստանին, և հարցնում էր, թե արդյո՞ք վրացական զորքերին հաջողվել է զբաղեցնել այդ տարածքները: Այդ վարկածից պարզորոշվում է, որ Գեգեչկորու մոտ համոզվածություն կար, որ հայերի և թուրքերի միջև ինչ-որ գաղտնի համաձայնություն գոյություն ունի, որի հետևանքով հայերի հետ հարաբերվելու անհարմարություններ և դժվարություններ են առաջացել[300]:

Այդ ամենը նկատի ունենալով, մենշևիկյան Վրաստանը նախաձեռնողաբար և վստահ իր իրավացիության մեջ, հնարավոր ամեն ինչ ձեռնարկեց Ախալքալաքի և Ախալցխայի նկատմամբ իր վերահսկողությունը հաստատելու համար: Սակայն ամեն ինչ այնքան հարթ չի ընթանում, ինչպես կարելի էր սպասել՝ համաձայն թուրքական «սայթաքուն» խոստումների: Դա մասնավորապես երևում է մի շարք փաստերից, այդ թվում և բժ. Հ. Օհանջանյանի հոկտեմբերի 12-ի հեռագրից տաճկական զորքերի հեռանալու ժամկետների մասին: Դրանից ելնելով և ռազմաքաղաքական իրավիճակից բխող բարդությունները պարզելու համար ՀՀ կառավարությունը դիմում է Մեհմեդ Ալի փաշային, հայտնելով, թե նա այդ մասին որևէ բան գիտի՞, և եթե հայտնի է, ե՞րբ և ի՞նչ կարգով պիտի դուրս գան զորքերը: Ի պատասխան դրան, վերջինս հայկական կողմին հայտնում է, որ իրեն պաշտոնապես հայտնի չէ և խոստացավ այդ առթիվ դիմում անել Կ. Պոլսի կառավարությանը[301]: Իրավիճակի խճճվածությունը ակնհայտորեն ձեռնտու էր թուրքերին, որոնք ամեն կերպ ձգտում էին, անգամ իրենց հեռանալու պարագայում, պահպանել անդրկովկասյան ռազմաքաղաքական իրավիճակին իրենց միջամտության հնարավորությունները, դրա համար հայկական կողմի համար պահպանում էին իրավիճակի անորոշությունը:

Հայկական դիվիզիայի պետին ուղղված ուղերձում Օսմանյան կայսրության ներկայացուցիչ և դիվիզիոնային գեներալ Մեհմեդ օղլին հայտնում էր, որ ինքը գեներալ Խալիլ փաշայից հեռագիր է ստացել, որում վերջինս խնդրել է հաղորդել, որ էվակուացիան կսկսվի ընթացիկ ամսվա (հոկտեմբերի) 18-ին և խնդրել հայկական կառավարությանն

[300] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 79:

[301] Տե՛ս «Ձանգ», Երևան, 3 նոյեմբերի, 1918 թ., N 67 (83):

անել բոլոր կարգադրությունները վերոնշյալ տարածքը նշված օրը զբաղեցնելու համար[302]: Զինվորական նախարար Հախվերդյանը (Հախվերդով) վերը բերված նամակի (N 22) պատճենն ուղարկելով Հայկական դիվիզիայի պետին, հաղորդում էր, որ Մեհմեդ Ալի փաշայից ստացված այդ նամակին որպես լրացում իր անձնական պարզաբանումից բացահայտ է դարձել, որ այդ հաղորդագրությունը պետք է հասկանալ այնպես, որ պահակապոստերի (պահակակետ) հերթափոխությունը պետք է տեղի ունենա 18-ի գիշերը՝ լույս 19-ին, այլ ոչ թե 15-16-ին, ինչպես իրենք ենթադրում էին: Հապաղումը տեղի է ունեցել հեռագրի ստացման ուշացման պատճառով: Զինվորական նախարարը հայտնում էր, որ բանակցությունների համար նախնական հանդիպումը գնդապետ Ղորղանովի և Դրոյի կողմից պետք է իրականացվի նրանց համաձայնության հիման վրա՝ թուրքական ջոկատների պետի հետ: Հախվերդյանը հրամայում էր շարադրվածը հաղորդել հայկական զորաջոկատների պետերին՝ այն իրագործելու համար և որ իրագործման մասին ինքը սպասում է հաղորդագրության[303]:

Բորչալուի գավառից ուրքական զորքերի ետքաշման հետ կապված շատ տեղին դիտարկում կա Ֆիրուզ Կազեմզադեի մոտ: Ըստ Ֆ. Կազեմզադեի, թուրքերն առաջինը Հայաստանին հաղորդեցին, որ դեկտեմբերի 6-ին հայերը կարող են զբաղեցնել այն տարածքը, որը նախկինում պատկանել է Օսմանյան կայսրությանը: Ըստ Կազեմզադեի, նմանատիպ հաղորդագրություն է ուղարկվում նաև վրացիներին, սակայն վերջիններիս որպես թուրքական զորքերի էվակուացիայի օր հայտնվում է դեկտեմբերի 4-ը: Այսպիսով, ըստ Կազեմզադեի, երբ հայկական զորքերը մտան Լոռու և Բորչալուի շրջան, նրանք ականատես եղան այն բանին, որ վրացական զորքերը խոչընդոտում են իրենց ճանապարհը[304]:

Դա ինքնին ակնհայտ վկայում է թուրքական կողմի երկդիմի և նենգ գործելակերպի մասին, որի նպատակն էր հեռանալուց առաջ ռազմաքաղաքական լարվածություն ստեղծել երկու հարևանների՝ Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև, հետագա հնարավոր նոր միջամտման համար թաքնված հնարավորություններ պահպա-

[302] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 17, թ. 33:
[303] Տե՛ս նույն տեղում:
[304] Տե՛ս Каземзаде Фируз, Борьба за Закавказье (1917–1921), стр. 171:

նել, իրավիճակի մեջ խճճվածություն մտցնել և մի ազգին հանել մյուսի դեմ, և հատկապես հայերի պարագայում։։

Վերոհիշյալ բոլոր փաստաթղթերը վկայում են մի գործընթացի մասին, ըստ որի դրանով Հայաստանին վերադարձվում էր (կամ էլ ձգտում էին վերադարձնել) մի հողամաս, որ նրան էր պատկանում նույնիսկ Բաթումիի դաշնագրով։ Սակայն իրականությունն ավելի բարդ էր։ Այդ մասին ցայտունորեն երևում է ժամանակակցի և այդ ժամանակաշրջանի իրադարձությունների ակտիվ մասնակցի՝ Ս.Վրացյանի հետևյալ խոսքերից. «Բնորոշ է, որ նոյն ձեւի յայտարարութիւն արաւ եւ վրաց կառավարութեան Թիֆլիսի թրքական ներկայացուցիչը՝ խորհուրդ տալով միաժամանակ վրացիներին՝ գրաւել Ախալքալաքի գավառը։ Խաղը պարզ էր. հայերը եւ վրացիները միաժամանակ ուզելով գրաւել Ախալքալաքը՝ անխուսափելի կէրպով պիտի ընդհարուէին, ինչ-որ մտնում էր թուրքերի քաղաքական հաշիւների մեջ։ Հայերը, զբաղուած լինելով ներքին աւելի ծանրակշիռ հարցերով՝ ուժ չունէին Ախալքալաքը գրաւելու համար։ Վրացիները օգտուելով առիթից՝ փութացին զօրք մտցնել եւ իրենց իշխանութիւնը տարածել Ախալքալաքի շրջանի վրայ, ինչ-որ վրդովմունք առաջ բերեց հայկական շրջանակներում»[305]։

Սակայն փաստաթղթերի մանրազնին ուսումնասիրությունը որոշակի հիմք է տալիս մեզ եզրակացություն անել այն մասին, որ վրացիները թուրքերի հետ ավելի լավ և ռեալ պայմանավորվածություն ունեին, քան հայերը, և ավելին, վրացիները լինելով ավելի հիմնավոր տեղեկացված ընթացող գործընթացների մասին, ունեին ռազմավարական անվիճելի առավելություններ՝ իրենց ապօրինի մտադրություններն իրականացնելու տեսանկյունից։ 1918 թ. հոկտեմբերի 17-ին Հայաստանի Արտաքին Գործերի նախարարությանը հասցեագրված նամակում Ա. Ջամալյանը, ըստ երևույթին կռահելով այդ ամենի մասին, գրում է, որ վրացիների կողմից Ախալքալաքի գավառը գրավելու մտադրությունը իրականություն է դառնում, ավելացնելով, որ դեռևս ամբողջական գրավում տեղի չի ունեցել, որովհետև «թյուրքերը վերջնականապես դեռ չեն հեռացել այնտեղից, սակայն արդեն նշանակված վարչական, փոստային և այլ հաստատութեանց գլխավոր պաշտօնյաները մեկնել են

[305] Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատոր Ե, էջ 41։

իրենց տեղերը»: Նամակի վերջում Ա. Ջամալյանը շատ զգուշավոր վերապահում է անում (հային հատուկ, որն այսօր էլ կա, հանկարծ օտարներին նեղություն չտան, հանկարծ միջազգային և այլ ատյաններում չզբաղվեն հայերի անօրինականությունների, ագրեսիվ գործողությունների և այլնի մասին քննարկումներով - Վ. Վ.), որ այնուհանդերձ պետք չէ և անհարմար է սույն բողոքը ներկայացնել վրացական կառավարությանը, որովհետև դա կարող է գաղթականների վերադարձի առաջ դժվարություններ հարուցանել[306]: Ոչնչով չարդարացված զգուշավորություն, որ հանկարծ «եղբայր վրացին» ոչ մի վատ բան չմտածի և նախահարձակ չլինի: Հարկ է ասել, որ հայկական կողմի մոտեցումներում երբեմն իշխում էին զգացմունքային գուներանգները, որոնք հնարավորություն չէին տալիս ռացիոնալ եզրահանգումների գալ, ավելի իրատեսորեն գնահատելու դեպքերն ու իրադարձությունները:

Անշուշտ, հայկական կողմն իր պատկերացումներն ուներ, և կան փաստաթղթեր, որոնք վկայում են, որ Հայաստանի կառավարությունը ելնելով էթնիկական սկզբունքից, մոռանում էր, որ իրեն ձեռնտու է այդ սկզբունքը, իսկ Վրաստանին՝ այլ սկզբունքներ, որոնք միջազգային հարաբերությունների պրակտիկայում, պատմության մեջ ամենևին էլ նորություն չէին, և բացառություն չէին կազմում: Մյուս կողմից, աշխարհաքաղաքական ընդհանուր իրավիճակի բացասական շերտանստվածքներն իրենց դերն էին կատարում: Ինչևիցե, Հայաստանի կառավարությունն իր ռազմաքաղաքական գործունեության մեջ ելնում էր գլխավորապես այն փաստից (իսկ դա քաղաքականության մեջ ամենևին էլ ամեն ինչ չէ - Վ. Վ.), որ Ախալքալաքի գավառի ողջ բնակչության շուրջ 77 %-ը հայեր են, իսկ վրացիները՝ ընդամենը 6,5 %-ը[307], այսինքն գլխավորապես հենվում էր էթնիկական սկզբունքի վրա, ինչպես նշվում է 1918 թ. հոկտեմբերի 17-ի մի փաստաթղթի նախագծում՝ հասցեագրված Ն. Վ. Ռամիշվիլուն (նույնը կարելի է ասել թե՛ Բորչալուի գավառի, և թե՛ հետևաբար Լոռու հատվածի վերաբերյալ), շեշտելով նաև այն հանգամանքի մասին, որ դեռ 1917 թ. վարչական բաժանման մասին հարցի քննարկման ժամանակ հայկական բնակչությունը հասարակական կազմակերպությունների կոլեկտիվ հեռագրում՝ ուղղված Անդրկովկա-

[306] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ -200, ց. 1, գ. 99, թ. 19:
[307] Տե՛ս նույն տեղում, թ. 21:

սի իշխանություններին, հայտարարել էր իր ամուր վճռի մասին՝ միանալ Երևանի նահանգին[308]: Այդ փաստաթղթի նախագծում միանգամայն արդարացիորեն նշվում էր, որ Ախալքալաքի բնակչությունը սեղմված է եղել համակենտրոնացման ճամբարի ճիրաններում, որ նա ենթարկվում է բանդաների հարձակմանը, վրացական ստորին օղակի քաղաքացիական վարչակազմի գործակալների կողոպուտներին, և ամենազանազան բռնաճնշումներին և սահմանափակումներին, հատկապես պարենամթերքների ձեռքբերման գործում: Փաստաթղթի այդ նախագծում շեշտվում էր, որ վրացական իշխանությունների բռնաճնշումների քաղաքականության հետևանքով, փախստականների ոչ մեծ խմբաքանակները, որոնք ներթափանցել էին Վրաստանի Սուրամի և Մանգլիսի շրջանները, այդ վայրերից անխղճորեն դուրս են վռնդվել և թողնվել բախտի քմահաճույքին: Փաստաթղթում ընդգծվում էր, որ Ախալքալաքի գավառի պատկանելիության հարցը Վրաստանին կամ Հայաստանին կարող է լուծվել միայն միջազգային արբիտրաժի միջոցով և Ախալքալաքի գավառի բնակչության կամքի ազատ արտահայտման համաձայն, որի համար գավառի օկուպացիան վրացական իշխանությունների կողմից ոչ մի հիմք չունի[309]:

Ակնհայտ է, որ և՛ հայերը, և՛ վրացիները, և՛ թուրքերը Անդրկովկասում ունեին իրենց ռազմավարությունը, իրենց կոնկրետ քաղաքական շահերը, և ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակում ավելի բարդ էր Հայաստանի խնդիրը, որը ձգտում էր ամրապնդվել հյուսիսային հայկական շրջաններում: Հայկական կողմը ձգտում էր կողմնորոշվել վրաց-թուրքական խաղերում, և պաշտպանել սեփական ազգաբնակչության շահերը Ախալքալաքում և Բորչալուում, ինչպես և մնացած վայրերում: Հնարավոր է, որ հայերը որոշ հույսեր էին կապում նաև թուրքական խոստումների հետ: Այդ հանգամանքը չի բացառվում, սակայն հայկական իշխանությունների սևեռուն կողմնորոշումը դեպի Սևրյան երկրները ճակատագրական դեր խաղաց երկրի ընդհանուր ռազմավարության որոշման հարցերում, և իր կնիքը թողեց հայ ժողովրդի պատմական ճակատագրի այս կամ այն դրսևորման մեջ:

[308] Տե՛ս նույն տեղում, թ. 20; Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 96, թ. 2:
[309] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 99, թ. 21:

Եվ այնուամենայնիվ, թուրքերն Անդրկովկասում ունեին միանգամայն այլ ռազմավարական նկատառումներ, և ամենևին էլ չէին պատրաստվում հենց այնպես հեռանալ: Անդրկովկասում հետագայի իրենց խաղաքարտերն ապահովելու տեսանկյունից ելնելով, ինչպես նաև ձգտելով ապահովել հայ-վրացական մրցակցություն, թուրքերն ըստ էության նմանատիպ խոստումներ էին տալիս նաև վրացիներին, ինչը լավ է երևում հոկտեմբերի 24-ի հայ-վրացական հանդիպման արդյունքներն արտացոլող մի փաստաթղթի վերլուծությունից: Այսպես, այդ հանդիպման ժամանակ Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնակատար Ն. Վ. Ռամիշվիլին շեշտելով, որ վրաց կառավարությունը պատրաստ է համաձայնության գալու Հայաստանի կառավարության հետ խնդիրը խաղաղ կերպով լուծելու, և եթե համաձայնությունը չկայանա, գործը արբիտրաժի հանձնելու, սակայն ինքը տեղեկություններ ունի, որ Շուլավերի հայերը ինչ-ինչ պատրաստություններ են տեսնում, և Լոռու վերաբերյալ Հայաստանի կառավարությունը տաճիկների հետ համաձայնության է եկել, որոնց թողտվությամբ էլ գրավել է նրանց թողած դիրքերը: Հայաստանի ներկայացուցիչը ի պատասխան ընդգծում է, որ անելով այդ քայլը, Հայաստանի կառավարությունը տարակույս չի ունեցել, որ Լոռու տաճիկների կողմից գրավված շրջանը կազմում է Հայաստանի մի մասը, ինչպես որ վրացիներն իրենց իրավունք են տվել մյուս մասի գրավման վերաբերյալ՝ թեև գուցե ժամանակավորապես համաձայնության գալով գերմանացիների հետ, այնպես էլ Հայաստանի կառավարությունը իր իրավունքն է համարել բռնելու տաճիկների թողած մասը: Դրան ի պատասխան Ն. Ռամիշվիլին շատ յուրօրինակ պատասխան է տալիս, որ եթե Հայաստանը մեծանա (ըստ երևույթին նկատի ունի այն ակնկալիքները և փոփոխությունները, որոնք սպասվում էին՝ Առաջին աշխարհամարտի և դրա արդյունքների Սևրյան «ամփոփման» հետ կապված), վիճելի հարցերը ավելի հեշտությամբ կլուծվեն, որովհետև Հայաստանի տաճկական մասերը, որոնք պետք է միանան իրենց պետությանը, ազգաբնակչություն չունեն, և հետևապես հայերը տերիտորիա ձեռք բերելով հնարավորություն կունենան ավելի զիջող լինելու սակավահող վրաց ժողովրդի հանդեպ[310]: Յու-

[310] Տե՛ս նույն տեղում, գ. 147, թ. 43:

րօրինակ մոտեցում, որի հիմքում ընկած է վեհապետական Վրաստանի մեծապետական շահը:

Սույն հարցի ուսումնասիրողների մեծամասնությունը համակարծիք են նրանում, որ սահմանատարածքային խնդիրներում հայկական կողմի անզիջում դիրքը առաջին հերթին կապված է այն բանի հետ, որ ՀՀ և Սփյուռքի քաղաքական-կուսակցական առաջնորդները ենթադրել են, որ Անտանտի հաղթարշավը Առաջին աշխարհամարտում վերջապես հայերին կբերի փոխհատուցում ընդհանուր ռազմական հաղթանակում ունեցած ներդրումի և բոլոր զոհողությունների համար, որ հայ ժողովուրդը կրել էր այդ պատերազմում: Այդպես է դատում Ֆիրուզ Կազեմզադեն մտքերի այն վիճակի մասին, որ իշխում էր հայ հասարակության մեջ Քառյակ դաշինքի պարտության պահին, և առաջին հերթին՝ Թուրքիայի. «Օսմանյան կայսրության կապիտուլյացիան 1918 թ. նոյեմբերին՝ թվում է, բացում է նոր դարաշրջան հայոց պատմության մեջ: Վաղնջական թշնամին ծնկի էր եկել...Հաղթանակը, որը հասավ Հայաստանին այդպիսի տառապանքներից հետո, պտտեցրեց նրա առաջնորդների գլուխները: Նրանք արդեն տեսնում էին Մեծ Հայաստանը՝ երկիր, որը ձգվում էր Միջերկրականից դեպի Սև ծով և Սև ծովից մինչ Կասպից ծովը: Նրանց ֆանտազիաները խրախուսվում էին Փարիզում, Լոնդոնում և հատկապես՝ Վաշինգտոնում» [սրա մեջ ռացիոնալ հատիկներ, անկասկած, կան - Վ.Վ.[311]]. Ամենայն հավանականությամբ, վերածնված Հայաստանի ղեկավարությունը կարծում էր, ավելի շատ հաշվարկել էր, որ հաղթական դաշնակիցները կառաջարկեն անհամեմատ ավելի տարածքային օգուտներ և առավելություններ, որով հնարավոր էր հասնել երկողմանի բանակցությունների միջոցով հարևան պետություններից յուրաքանչյուրի հետ: Եվ ավելին, Ֆ. Կազեմզադեի կարծիքը տեղ-տեղ խիստ վիճարկելի է, երբ նա պնդում է, որ հայկական առաջնորդները երբեք չէին համարձակվի ռազմական ուժ կիրառել հայկական Բորչալուում, սակայն 1918 վերջին, եթե լիովին համոզված չլինեին Մեծ Բրիտանիայից և Ֆրանսիայից ակնկալվող անվերապահ աջակցության վրա՝ Վրաստանին նման ձևով «պատժելով» ոչ վաղուցվա, թեկուզև կարճատև ժամանակով Գերմանիայի ազդեցության ուղե-

[311] Տե՛ս Kazemzadeh F., The Struggle for Transcaucasia (1917-1921), pp. 213-215:

ծրում գտնվելու համար[312]: Իրադարձությունների զարգացման հետագա ընթացքը սակայն ցույց է տվել այդ քաղաքական գնահատումները, թեկուզև հասկանալի է, որ թե՛ հայկական կողմի հաշվարկները և ռազմաքաղաքական սպասումները չարդարացան, սակայն միանշանակ բացահայտվեց նաև այն հանգամանքը, որ թե՛ Մեծ Բրիտանիան, և թե՛ Ֆրանսիան ամենևին էլ ցանկություն չունեին իրենց ռազմավարական շահերը ստորադասել թե՛ Հայաստանի Հանրապետության, և թե՛ մենշևիկյան Վրաստանի և մուսավաթական Ադրբեջանի շահերին, և իրենց քաղաքական հաշվարկներում դրանցից յուրաքանչյուրին աջակցել են այնքանով, ինչքանով դա բխել է իրենց գերապատիվ շահերից: Ավելին, բրիտանական կառավարության և առհասարակ դաշնակիցների անվճռականությունը Մուդրոսի զինադադարից հետո ընկած ժամանակահատվածում նպաստեց թուրքերի քողարկված աշխուժացմանը, որոնք օգտվելով նման թողտվությունից, ամենևին էլ լուրջ ջանքեր չգործադրեցին, որպեսզի իրականություն դառնա թե՛ հայկական հողերի ազատագրումը, և թե՛ թուրքական զորագնդերի արդյունավեր և հիմնավոր զինաթափումը, որը ինչ-որ տեղ հնարավոր կդարձներ Թուրքիայի մեկուսացումը և արևմտահայության ու արևելահայության համար ապահովության եզրերի ստեղծումը: Բրիտանա-ֆրանսիական շահագրգռվածության բացակայությունը կամ ռազմաքաղաքական ճիգերի ու ձեռնարկումների անարդյունավետությունը աշխարհաքաղաքական իրավիճակում նոր զարգացումների պատճառ հանդիսացան: Դրանք գործնականում ի չիք դարձրեցին Թուրքիայի դեմ ընդհանուր հակազդեցության արդյունավետ ռազմաքաղաքական հենարանի ստեղծումը:

Իրադարձությունները զարգանում էին իրենց հատուկ սցենարով և նորանոր ճշգրտումներ մտցնում աշխարհաքաղաքական-տարածաշրջանային իրավիճակում, վերջինիս ռազմավարության հիմնավորումներում: Ինչպես արդեն նշվել է, 1918 թ. հոկտեմբեր ամսին և հետագա ժամանակահատվածում Հայաստանի Առաջին Հանրապետության ղեկավարությունը ռազմաքաղաքական որոշակի պատրաստություններ ձեռնարկեց թուրքերի կողմից թողնվելիք տարածքները գրավելու –

[312] Տե՛ս Kazemzadeh F., The Struggle for Transcaucasia (1917-1921), pp. 166-170, 180-181: Տե՛ս նաև Армяно-Грузинская война (1918)-Адамалла www.adamalla.com›...›Библиотека› Кавказ:

զբաղեցնելու ուղղությամբ: Զինվորական նախարարին ներկայացված 1918 թ. հոկտեմբերի 18-ի զեկուցագրում (N 710) գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը և Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Ալ. Շնեուրը տեղեկացնում էին, որ թուրքական հրամանատարության հետ կայացած համաձայնության հիման վրա Հայկական բանակի Լոռու ջոկատը Դրոյի գլխավորությամբ հոկտեմբերի 18-ին դուրս գալով Ղարաքիլիսայից (Հայկական զորքերի Դիլիջանի զորամասը Ղարաքիլիսա էր մտել հոկտեմբերի 18-ին, ժամը 11 անց 20 րոպեին)[313], մոտեցել են Սիպտախի, Հերհերի մատույցներին[314]: Վերոհիշյալ բարձրաստիճան սպաները հոկտեմբերի 20-ի գրությամբ (N 0742) տեղեկացնում են, որ Դիլիջանյան զորաջոկատը հոկտեմբերի 18-ին ժամը 22-ին գրավել է Շահալի կայարանը և Քոբեր կիսակայարանը[315]:

1918 թ. հոկտեմբերի 18-ին հայկական զորաջոկատը հարավային կողմից շրջանցելով սահմանազատիչ գիծը, մտավ վրացիների հսկողության տակ գտնվող երկաթգծի Քոբեր կիսակայարանը, իսկ այնուհետև՝ Դիլիջանի ջոկատի կողմից՝ Ղարաքիլիսան[316]: Այդ ժամանակ այնտեղ գտնվող գերմանական ռազմական հրամանատարությունը, որը գործնականում հանդես էին գալիս վրացիների հովանավորի դերում, հայկական զորաջոկատից պահանջեցին լքել Քոբերը, սակայն այն չիրագործվեց: Դա որոշակիորեն բխում էր ռազմաքաղաքական իրավիճակի ընձեռած առանձնահատկությունից, քանզի գերմանական կողմը չուներ զինվորների բավարար թվաքանակ, առավել ևս, որ ինչպես թուրքական, այնպես էլ գերմանական զորքերը քաղաքական նոր հանգամանքների բերումով հարկադրված էին լքել տարածաշրջանը, և չնայած վրաց կառավարության գործադրած ջանքերին, նրանց չհաջողվեց կանխել գերմանական զորաջոկատների դուրսբերումը զբաղեցրած բնակավայրերից: Անշուշտ, ռազմական տեսանկյունից գերմանա-վրացական զորաջոկատները փոքրաթիվ էին [Քորինջ գյուղի գերմանա-վրացական առաջակալ զորամասն ուներ ընդամենը 20 վրաց և 12 գերմանացի զին-

[313] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 17, թ. 35:
[314] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 147, թ. 4-5:
[315] Տե՛ս նույն տեղում, գ. 147, թ. 4-5: Տե՛ս նաև Ֆ.Պ- 275, ց. 5, գ. 17, թ. 42:
[316] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 80, թ. 10:

վոր մեկ սպայով հանդերձ[317]], գուցե և վիճակի չէին էապես կարևոր ռազմական հարցեր լուծել, ակնկալելով աջակցություն Թիֆլիսից ռազմական համալրումների առումով, սակայն կարևոր էր դրանց ռազմաքաղաքական դերակատարումը, իսկ այդ ժամանակ թե՛ հայկական, թե՛ վրացական կողմը մեկ գերմանական կամ բրիտանական սպայից ավելի շատ էին ազդվում և վախվորած զգում, քան սեփական բանակի գեներալներից կամ կառավարության անդամներից:

Վրաստանը ամենևին էլ չէր պատրաստվում զիջումների գնալ, և Վրաստանի Ռազմական մինիստր Գ. Գեորգաձեն կարգադրում է Քոբեր կայարանում գտնվող զրահագնացքների պետ Գոգվաձեին անհապաղ պահանջել, որպեսզի հայկական զորամասերը ետ քաշվեն Շահալի կայարանից[318]: Հաջորդ հրահանգով հայտնվում էր, որ ուղարկվում է 250 հոգանոց համալրում, միաժամանակ տեղեկացնում, որ ընդհանուր հրամանատարությունը ստանձնվելու է գեներալ Ցիցիանովի կողմից, միակ նպատակադրումով՝ իրագործել Բորչալուի գավառի մաքրագործումը[319]:

Բորչալուի գավառից հայկական կողմի ետ քաշվելու մասին վրացական պահանջատիրությունը հանդիպեց հայկական կողմի համառ դիմադրողականությանը: Սանահին կայարանի գերմանական պարետ լեյտենանտ Շենեի Վրաստանի Ռազմական մինիստր Գ. Գեորգաձեին ուղղված հաղորդումից պարզ է դառնում ևս մեկ լրացուցիչ փաստ հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում առկա ակնհայտ բարդույթային վտանգալից վիճակի մասին: Դրանում վերջինս հաղորդում էր հետևյալը. «…Հայերը զբաղեցնում են 17 վերստի վրա գտնվող կամուրջը և Մարց գյուղն ու արևելքում ողջ գիծը մինչև Թիֆլիսի նահանգի սահմանը, երկաթգծի արևմուտքում՝ Կամենկա գետով Ջալալօղլիի վրա: Այդ գիծը հայերը համարում են վերջնական և ետ քաշվել դեպի Թիֆլիսի նահանգի սահմանը՝ հրաժարվում են: Հենց նոր Գոգվաձեի հետ միասին հասանք կամրջին՝ հայկական զորաջոկատի պետին ներկայացնելու Ձեր հրամանը Շահալի կայարանից մինչև Ջա-

[317] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno_Georgian_War18_R.html:

[318] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 17:

[319] Տե՛ս նույն տեղում;

մանլու գետը ընկած տարածքը ազատելու մասին, որի համար նրանց տրվեց 24 ժամ՝ իրենց ղեկավարությանը տեղեկացնելու համար: Ժամկետը լրանում է վաղը ցերեկվա ժամը 2-ին, որից հետո Գոգվաձեն Ձեր հրամանը կիրագործի ռազմական ուժով»[320]:

Հոկտեմբերի 19-ին հայերը թողնում են Քոբեր կիսակայարանը, սակայն այն օրվա վերջին հայկական 1-ին և 2-րդ հրաձգային գնդերը վերագրավում են այն, և մոտենում Սանահին կայարանին[321]: 1918 թ. հոկտեմբերի 21-ի գրությամբ (N 108) գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը[322] (Սիլիկով) տեղեկացնում էր Զինվորական նախարարին, որ հոկտեմբերի 19-20-ը ընկած ժամանակահատվածում հայկական զորքերը գրավել են Նովոպոկրովկա, Ջալալօղլի, Վարդանլուր և Դարաքենդ ռազմագիծը: Հայտնվում էր, որ ուղարկվել է հետախուզություն վրացա-գերմանական մատույցները պարզելու համար[323]: Վրացիներն այդ օրերին գերմանացիներից որոշակի աջակցություն են ստանում և էլ ավելի ոգևորվում: Դա երևում է ներքոհիշյալ փաստից: Ինչպես երևում է Հայկական դիվիզիայի հրամանատարի պաշտոնակատար գեներալ-մայոր Փիրումովի Զինվորական նախարարին ուղղված զեկուցագրից (N 118), հոկտեմբերի 21-ին, երբ հայկական հեծելապարեկը մտել է Վորոնցովկա գյուղը, սկզբում լավ է ընդունվել գերմանացիների կողմից (տակտիկական նկատառումներով - Վ. Վ.), իսկ այնուհետև շրջապատվել է և զինաթափվել: Այնուհետև հայտնվում էր, որ ուղարկված պառլամենտյորներին (բանագնաց) գերմանացիները վերադարձրել են հեծելապարեկի հետ միասին, խնդրելով չանցնել Ջալլու գետը, այն համարելով Վրաստանի սահմանագիծ[324]:

Այս նույն տեղեկությունները, որոշակի տարատեսակումներով հանդերձ, պարունակվում են նաև շտաբի պետի պաշտոնակատար կապիտան Գրոսսի ստորագրությամբ հայտնի 1918 թ. հոկտեմբերի 24-ի զեկուցագրում (N 00119), որը հասցեագրված էր դարձյալ Զինվորական

---

[320] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год. стр. 20.

[321] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 17, թ. 42:

[322] Սիլիկյան Մովսես Բաբայի [14.09.1862 թ. - 10.12.1937 թ.] - Անվանի հայ ռազմական գործիչ, Սարդարապատի ճակատամարտի հերոս, գեներալ-մայոր, Հայաստանի Առաջին հանրապետության Ռազմական խորհրդի անդամ::

[323] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 147, թ. 6, գ. 16, թ. 308:

[324] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 17, թ. 39:

նախարարության Գլխավոր շտաբին: Դրանում նշվում էր, որ Լոռու ջոկատի պետ գնդապետ Ղորղանովը հեռագրել է, որ Վորոնցովկա ուղարկված բանագնացներին գերմանացիները մերժել են ետ տալ կալանված և զինաթափված հեծելապարեկը, որից հետո բանագնացները ձեռնունայն ետ են եկել՝ բավարարվելով գերմանացիների կողմից հայտնված ներողությամբ տեղի ունեցած թյուրիմացությունների համար[325]: Վրաց-գերմանական համաձայնությունը ռեալ էր, և տալիս էր պրակտիկ արդյունքներ՝ ապահովելով մեծապետական Վրաստանի դիրքերը նշված տարածքներում և դրանց մատույցներում:

Սակայն ինչպես արդեն ասացինք, Դրոն մտավ Լոռի-Փամբակ և դա առաջ բերեց վրացական կողմի հակազդեցությունը, որը հոկտեմբերի 19-ին ժամը 7-ին ի դեմս վրացական Արտաքին Գործերի մինիստր Գվարժալաձեի, որը Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին Վրաստանում՝ Արշակ Ջամալյանին է հանձնում հետևյալ բողոքագիրը (N 4303). «Վրաստանի Հանրապետության կառավարությունը տեղեկացավ, որ Թիֆլիսի նահանգի մեկ մասը՝ Քոբեր կիսակայարանից սկսած մինչև սահմանակից կամուրջը, այլև Սանահինի մոտի շրջանները, սույն թվի հոկտեմբերի 18-ին գրավվել են Հայկական կանոնավոր զորքերի 1-ին և 4-րդ հրացանաձիգ գնդերի կողմից: Վրաց կառավարությունը, որ միշտ պատրաստ է խաղաղ, փոխադարձ համաձայնության միջոցով կարգավորել սահմանների հարցը բարեկամ Հայաստանի Հանրապետության հետ, իր պարտականությունն է համարում հայտարարելու, որ քանի այդպիսի համաձայնություն չի կայացել, հայկական զորամասերի մուտքը Թիֆլիսի նահանգի սահմաններից ներս Վրաց կառավարության կողմից կդիտվի որպես Հայաստանի կողմից արված ակներև մի թշնամական քայլ Վրաստանի նկատմամբ»[326]:

Հարցի էությունը պարզելու նպատակով հայկական կողմը կոնկրետ քայլեր է ձեռնարկում, բնականաբար ձգտելով խուսափել հարցերի լուծման պատերազմական եղանակներից: Ինչպես տեղեկացնում է Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջա-

[325] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 17, թ. 40:

[326] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993, էջ 216-217; Տե՛ս նաև ՀԱԱ, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 16, թ. 253; Ֆ.Պ- 275, ց. 5, գ. 17, թ. 18; Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии..., стр. 445:

մալյանը Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարարին ուղարկված 1918 թ. հոկտեմբերի 20-ի հեռագրով (N 1301), այդ նպատակադրումով նա նույն թվականի հոկտեմբերի 19-ին հանդիպում է ունեցել Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պարտականությունները կատարող Գվարժալաձեի հետ, որն էլ հայտնել է, որ վրացական կառավարության կարծիքով հայկական զորքերը պետք է մաքրեն թուրքերի կողմից զբաղեցրած Լոռու տեղամասը՝ «մինչև սահմանների մասին հարցի վճռվելը խաղաղ եղանակով»: Ա. Ջամալյանը կոնֆլիկտի լուծման նպատակով հարց է բարձրացնում՝ ամեն ինչում կոնդոմինիմում հաստատելու մասին[327]: Գվարժալաձեն նորից պնդում է, որ խնդիրը վերաբերում է ոչ թե Լոռվա այս կամ այն մասին, այլ Թիֆլիսի ողջ նահանգին, և վրաց կառավարության կարծիքով հայկական զորքերը չպետք է մտնեն Թիֆլիսի նահանգի սահմաններից ներս, անկախ այն բանից, թե այդ նահանգի այս կամ այն մասը ինչպես է կոչվում: Ինչպես տեսնում ենք, իսկապես շատ հետաքրքիր է իր մտքերը ձևակերպում վրացի այս պաշտոնյան: Այնուհետև Գվարժալաձեն խոսակցության ընթացքում հայտնում էր, որ մոտ մեկ ամիս առաջ Աբդուլ Քերիմ փաշան «պաշտոնական թղթով» հայտարարել է վրացական կառավարությանը, որ թուրքերը շուտով թողնելու են Լոռին և առաջարկել է միջոցներ ձեռք առնել գրավելու այդ երկիրը՝ մինչև Ղարաքիլիսայից փոքր ինչ հյուսիսով անցնող Ալեքսանդրապոլ գավառի սահմանը: Այդ ժամանակ վրաց ազգային դեմոկրատները, ըստ Գվարժալաձեի, պնդել են կառավարությանն անմիջապես միջոցներ ձեռք առնելու Լոռվա այդ մասը գրավելու համար, սակայն իբր թե Ժորդանիան, Ռամիշվիլին և ինքը՝ Գվարժալաձեն հակառակվել են այդ քայլին, ասելով, թե այդ հողի ում պատկանելը վիճելի է, և որ իրենք առհասարակ դեմ են վիճելի հողեր գրավելուն: Սակայն Գվարժալաձեն իր միտքն ավարտելով, հայտնում էր, որ երեկ լուր է ստացվել, որ հայերը մտել են Լոռվա շրջան, ինչը ծայրաստիճան գրգռել է ազգային դեմոկրատիային, որոնց ստիպմամբ էլ միջոցներ են ձեռք առնվել հայերի առաջխաղացման դեմն առնելու համար: Ջամալյանի այն հարցին, թե ի՞նչ պետք է անել՝ այդ «ինցիդենտին» (միջադեպ) վերջ դնելու համար, Գվարժալաձեն պատասխանում է, որ լավ կլինի,

[327] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 147, թ. 16:

որ հայերը առայժմ հեռանան Թիֆլիսի նահանգի սահմաններից՝ ավելորդ կոնֆլիկտների տեղիք չտալու համար՝ մինչև սահմանների հարցի կարգավորումը, որի ժամանակ, անշուշտ, հայերի արդար իրավունքները անտես չեն առնվի (իբր թե - Վ. Վ.): Դրան Ա. Ջամալյանը պատասխանում է, որ անդրկովկասյան ժողովուրդների սահմանաբաժանումը պետք է կատարվի համաձայն ազգագրական սկզբունքի, ինչ-որ իրենք պաշտպանել են հանձնաժողովներում՝ Լոռվա խնդրի վերաբերյալ, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այնտեղ ազգաբնակչության 90%-ը հայերն են կազմում[328]:

Սակայն այս զրույցը անհետևանք չի մնում: Առաջ ընկնելով ասենք, որ դրանից հետո հանդիպելով Արզումանովին և Կ. Գազազյանին (ՀՅԴ), Ռամիշվիլին հաղորդում է, որ Ջամալյանի կողմից Արտաքին Գործերի մինիստրի տեղակալ Գվարժալաձեին հայտարարվել է, որ իբր թե Հայաստանի կառավարության և թուրքերի միջև կայացել է համաձայնություն հայկական զորքերի կողմից Լոռու շրջանը գրավելու կապակցությամբ: Ջամալյանը բողոքի նոտայով դիմելով Ռամիշվիլուն, իր վրդովմունքն է հայտնում, որ այդ բովանդակությամբ հաղորդագրություն տպագրվել է վրացական թերթերում: Ջամալյանը շեշտում է, որ թյուրիմացությունից խուսափելու համար ինքը նորից պնդում է, որ Գվարժալաձեի հետ խոսակցության ժամանակ վերջինիցս լսել է, որ իր ձեռքի տակ կա փաստաթուղթ, ըստ որի Թուրքիայի ներկայացուցիչը Վրաստանում՝ Աբդուլ Քերիմ փաշան առաջարկել է Վրաստանի կառավարությանը զբաղեցնելու Լոռու շրջանը, քանի որ թուրքերն այնտեղից հեռանում են: Ջամալյանը այնուհետև տեղեկացնում է, որ ինքն այդ խոսակցության ժամանակ հակառակն է ասել, պնդելով, որ նմանատիպ առաջարկ Հայաստանի կառավարությունը ստացել է Հայաստանում Թուրքիայի ներկայացուցիչ Մեհմեդ Ալի փաշայից (հարկ է նշել որոշ հակասականության մասին, որ կա Ա. Ջամալյանի խոսքերում, որից և կառչել է ճարպիկ վրաց քաղաքագետը՝ հայերին մեղադրելով նախահարձակողականության և իրենց «եղբայր» վրացիներին՝ հայերի կողմից դավաճանելու մեջ - Վ. Վ.): Ընդ որում Ա. Ջամալյանը գրում է, թե ինքն ավելացրել է, որ այն հանգամանքը, որ միևնույն տարածքն

[328] Տե՛ս նույն տեղում, թ. 44:

առաջարկվել է Վրաստանին և Հայաստանին գրեթե միաժամանակ, ցույց է տալիս, որ վեճը պետք է լուծվի երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ[329]: Անշուշտ, հասկանալի է, որ այստեղ նպատակը պարզ էր: Միանգամայն ճիշտ է այս առումով դեռ պատերազմի նախօրեին նկատել Հովի. Քաջազնունին. «Մենք հասկանում էինք այդ ու անկեղծօրեն ուզում էինք հաշտ ապրել վրացիների հետ: Բայց փաստն այն էր, որ չկարողացանք: Եւ անկախ Վրաստանի բռնած դիրքից, որ անվիճելիօրեն դատապարտելի էր…», սակայն պարզ էր, որ հայերը ոչ միայն մնացել էին «մենակ, այլ նաեւ թիկունքից մեծապէս վտանգւած, որովհետեւ պարզ էր», որ թուրքերի հետ միասին մեզ պիտի զարնէին նաեւ ազրբէյջանցիները, ով գիտէ, գուցէ եւ վրացիները՝ Ախալքալաքը, Լօռին ու Փամբակը ամբողջովին գրաւելու համար»[330]:

Հատկանշական է, որ հենց այդ օրերին Վրաստանի իշխանությունները որոշակի խոչընդոտներ են սկսում հարուցել Վրաստանից դուրս բերվող ապրանքների և այլնի նկատմամբ, ձգտելով յուրահատուկ բլոկադային վիճակ ստեղծել Հայաստանի համար, հմտորեն օգտագործելով երկաթուղու և առհասարակ բոլոր տեսակի կոմունիկացիաների ընձեռած հնարավորությունները: Չնայած այն հանգամանքին, որ Ժորդանիայի և Ռամիշվիլու հետ տեղի էր ունեցել խոսակցություն և Վրաց կառավարությունը պաշտոնական խոստում էր տվել հայկական կողմին, ոտնձգությունները շարունակվում էին: Այդ մասին Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը 1918 թ. հոկտեմբերի 19-ին տեղեկացնում է Հայաստանի Արտաքին Գործերի նախարարին, փաստեր բերելով, որ Վրաստանի ժողովրդական գվարդիայի ոստիկանական գործերով զբաղվող այսպես կոչված առանձին զորախմբերը ամեն տեսակ խոչընդոտներ են հարուցում ապրանքները պահեստներից տեղափոխելու կամ վագոններում դարսելու համար, միաժամանակ ավելացնելով, որ խուզարկողները ոչ միայն թեյն ու շաքարն են գրավում, այլև ծխախոտը, լոբին և այլն: Դիմումագրում Ջամալյանը տեղեկացնում էր, որ Ժորդանիան խոստացավ կարգադրել վերադարձնեն առգրավված իրերը և վերացնեն Հայաստանի համար նախատեսված ապրանքների տեղափոխության դեմ հարուցված արգելքները, դրա հետ

[329] Տե՛ս նույն տեղում, գ. 16, թ. 262:

[330] Տե՛ս Քաջազնունի Յովի., Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, էջ 28, 35:

մեկտեղ պահանջելով, որ հայկական կողմը ներկայացնի ցուցակներ տեղափոխվելիք ապրանքների վերաբերյալ[331]: Սակայն վրացական կողմը ողջ ապրանքը չի վերադարձնում, չնայած Ժորդանիայի հավաստիացումներին, այլ միայն մի մասը, որն իբր փաստաթուղթ ուներ[332]: Վրացական կողմը բյուրոկրատական այդ բռնաճնշումների մեխանիզմով ձգտում էր խեղճացնել հայկական կողմին, ստիպել գնալ զիջումների սահմանային-տարածքային խնդիրներում:

Վրացիները հավակնում էին անառարկելիորեն տիրել Լոռուն՝ այն հողատարածքին, որը Վահան Փափազյանի բնորոշմամբ «…Հայաստանի թոքն է. առանց այդ գեղեցիկ և ռազմական կարեւորութիւն ունեցող շրջանի և երկաթուղագծին, անկարելի էր շնչել»[333]:

Հոկտեմբերի 20-ին, Սանահինում կանգնած զրահապատ գնացքների պետ Գոգվաձեն (Գոգուաձե) ստացավ Զինվորական նախարարի հրամանը, որում պահանջվում էր հայկական զորամասերից մաքրել Լոռին, ներառյալ Շահալի կայարանը: Վերջինս Հայաստանի կառավարությանը ուղարկեց հետևյալ բովանդակությամբ հեռագիր. «Հիմնվելով Վրաստանի Հանրապետության Զինվորական նախարարի թիվ 642 հեռագրի վրա՝ հանձնարարում եմ ձեզ 24 ժամվա ընթացքում տեղեկացնել ձեր կառավարությանը, որ դուք պետք է հեռանաք ձեր այժմ գրաված տեղից Շահալի կայարանից այն կողմը: Սպասում եմ ձեր պատասխանին մինչև 22 հոկտեմբերի ժամը 2 կեսօրից հետո»[334]:

Շուտով վրացական կողմը առանց ավելորդ կաշկանդվածության, անցավ պատասխան քայլերի և վրացական զինվորական հրամանատարության պահանջով Սանահին՝ բախման հանգուցակետ, ուղարկվեցին երկու զրահագնացք և շուրջ 250 հոգուց բաղկացած զորաջոկատ, որից հետո միայն հոկտեմբերի 20-ի երեկոյան լքեց Քոբեր կիսակայարանը, սակայն երկաթգծից դեպի արևմուտք և արևելք գտնվող բարձունքների վրա պահակակետեր դնելով, միաժամանակ ի պատասխան վրացական կողմից ներկայացված ուլտիմատումին՝ ետ քաշվելու Շահալի կայարանից դեպի հարավ գտնվող սահմանաբաժան գիծը, հայ-

[331] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 67, թ. 9-10:
[332] Տե՛ս նույն տեղում, թ. 10:
[333] Տե՛ս Փափազեան Վ., Իմ յուշերը, հատոր 2, Պէյրութ, 1952, էջ 426:
[334] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 1:

կական հրամանատարությունը մերժեց այն կատարել: Հենց այդ ժամանակ էլ Ն. Ժորդանիան [պատճենը՝ Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանին] ՀՀ վարչապետ Հովի. Քաջազնունուց, որն այդ ժամանակ գտնվում էր Աղստաֆայում, ստանում է համապատասխան բովանդակությամբ հեռագիր, որում հակառակ կարծիքն էր հայտնվում Շահալի-Սանահինի դեպքերի մասին:

Հաջորդ օրը, հոկտեմբերի 21-ին Գոգվաձեն ստանում է Զինվորական նախարարության հետևյալ հեռագիրը. «Վաղը, հոկտեմբերի 22-ին ժամը 12-ին, երկաթուղով ձեզ մոտ են գալիս նահանգային գումարտակի 250 զինվորներ, դեպի Վորոնցովկա է շարժվում զորավար Ցիցիանովի զորամասը՝ բաղկացած մարտկոցներից և հետևակներից: Զորավար Ցիցիանովի գալուց հետո նա կընդունի բոլոր զորքերի հրամանատարությունը: Ամբողջ Բորչալուի գավառի մաքրագործման և մինչև Թիֆլիսի նահանգի սահմանները հեռանալու պահանջն անպայման է»[335]: «Մեր պահանջը, որ հայերն ազատեն ամբողջ Բորչալուի գավառը և հետ քաշվեն մինչև Թիֆլիսի նահանգի սահմանը, անվերապահ է», - 1918 թ. հոկտեմբերի 22-ին գրում էր Զինվորական նախարարի տեղակալ գեներալ, իշխան Ա. Կ. Գեդևանովը [336]:

Իսկ հոկտեմբերի 22-ին հայկական զորամասերը սկսեցին առաջ շարժվել և ժամը 10-ն անց 23 րոպեին Քորինջի գերմանական զորաջոկատներին առաջարկեցին ազատել գյուղը, որտեղ կար 14 զինվոր, մեկ սպա, 20 հոգուց բաղկացած վրացական զորաջոկատը, երկու սպա,

---

[335] Տե՛ս Աստուածատրեան Ա., Հայ-վրացական պատերազմը (Դրոյի յիշատակին), «Հայրենիք» (ամսագիր), Բոստոն, 1957, թիվ 2, փետրվար, էջ 3; 1928, ապրիլ, № 6, էջ 93:

[336] Գեներալ Ա. Կ. Գեդևանով (16.02.1870 թ. -1933 թ., դեռ 1914 թ. դարձել է գեներալ) -Նրա մասին տե՛ս Տե՛ս Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք» (ամսագիր), 1928, № 7, էջ 85: Гогитидзе М., Грузинский генералитет (1699-1921 гг.). Биографический справочник НАН Украины. Инс-т археографии и источниковедения им. М. Грушевского, Укр. центр биографической некрополистики. Сост. М. Гогитидзе, отв. ред. Иван Дивный, Киев, 2001, стр. 74: Ինչպես գեներալ Դ. Սումբատովի կամ Սումբատաշվիլու և այլ զինվորական գործիչների պարագայում, Տ. Հայազնը և Գ. Ղազարյանը իրենց հեղինակած կենսագրական հանրագիտարանում այն փաստարկի կողմնակից են, որ վրացական բանակի այս գեներալը հայկական ծագում ունի և նրա անունը տեղադրել են 1000 գեներալների, զորապետների շարքում. Սումբատաշվիլին ներկայացվել է հայազգի 1000 գեներալների ու ծովակալների շարքում. –Տե՛ս Հայազն (Տ. Մ. Պետրոսյանց) Տ., Ղազարյան Գ., 1000 հայազգի գեներալներ, ծովակալներ, Եր., Հեղ. հրատ., 2009, էջ 290:

դրա համար էլ Վրաստանի Զինվորական ղեկավարությունը բախման գոտի ուղարկեց 250 հոգանոց Թիֆլիսի նահանգային գումարտակը՝ գնդապետ Զախարիաձեի գլխավորությամբ, որը հոկտեմբերի 23-ի առավոտյան ժամը հինգն անց երեսունին Քորինջում էր և ձեռնամուխ եղավ Բորչալուի ողջ գավառը հայկական զինուժից ազատելու համար: Սակայն ազատվել հայկական զորաջոկատի ներկայությունից՝ գործնականում չհաջողվեց:

Ուշագրավ է, որ հայկական կողմը որոշակի տեղեկատվություն ուներ վրացական կողմի նախապատրաստությունների մասին, և ինչ-ինչ քայլեր ձեռնարկում էր Վրաստանի ագրեսիվ գործողությունները կանխելու ուղղությամբ: Այդ մասին է վկայում գեներալ-լեյտենանտ Մ. Սիլիկյանի և փոխգնդապետ Ալ. Շնեուրի ստորագրությամբ Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարարություն ուղարկված հոկտեմբերի 22-ի հեռագիրը (թիվ 00111), որում հաղորդվում էր, որ «վրացիները Քոբեր կիսակայարանին են մոտեցրել զրահագնացքը և 300 կարմիր գվարդիականներ՝ Սանահին կայարանին: Առավոտյան, լուրերի համաձայն, նրանց կմոտենան ևս 500 կարմիր գվարդիական, նույնքան՝ Քորինջ գյուղին. եկել է գերմանական սպա՝ 10 զինվորների հետ միասին: Վրացիները պահանջեցին մաքրել Շահալի կայարանը: Դիլիջանյան ջոկատի պետին հրահանգ է տրված ակտիվ գործողությունների դեպքում հարձակման անցնել և գրավել Սանահին կայարանը»[337]: Բացի այդ, կարգադրվեց այդ նպատակի համար Դիլիջանի զինապահեստից ուղարկել հրացանափամփուշտներ, ռումբեր և շրապնել (կլոր գնդակներով լցրած հրետանային ռումբ -կոտորակառումբ)[338]:

Երկու կողմերն էլ ինչ-ինչ քայլեր ձեռնարկում էին, սակայն վրացիներն ավելի ագրեսիվ էին և նախահարձակ: Հոկտեմբերի 22-ի վերջում Զինվորական նախարար Գեորգաձեն հեռագրում է գնացքների պետ Գոգվաձեին, թե «քանի որ Հայաստանի ներկայացուցիչ Ջամալյանը, իր կառավարությունից դեռ չի ստացել մեր դիմումի պատասխանը, հրամայում եմ շտապով գրավել այն գիծը, որ մենք բռնում էինք թուրքերի հեռանալուց առաջ և ոչ ոքի թույլ չտալ անցնելու ոչ այդ գծի այն կողմը, ոչ այս կողմը: Մեր զորքերը դեռ չպետք է անցնեն այդ գիծը»: Եվ մի լրա-

[337] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 147, թ. 6, ց. 2, գ. 21, թ. 11, Ֆ.Պ- 275, ց. 5, գ. 17, թ. 36:
[338] Տե՛ս նույն տեղում:

ցուցիչ հեռագրով էլ հրամայեց՝ «առանց վրաց կառավարության արտոնության Հայաստանից ոչ ոքի թույլ չտալ մտնելու Վրաստան»[339]:

Ակնհայտորեն պարզ է, որ Վրաստանը Հայաստանին դրդում էր պատերազմի, օգտվելով Գերմանիայի հովանավորությունից: Ինչպես վկայում է ժամանակակիցը՝ Ս. Վրացյանը, «Գերմանիայի զինվորական ներկայացուցիչ ֆոն Քրեսսը աշխատում էր համոզել Հայաստանի ներկայացուցիչ Ջամալյանին ընդունել վրացիների վերջնագիրը և առանց արյունահեղության դատարկել «վրացական» հողը: Ջամալյանի հարցումին, թե արդյոք Գերմանիան կխառնվի՞ հայ-վրացական սահմանային վեճին, ֆոն Քրեսսը պատասխանեց դրական մտքով: Գերմանիան, որպես Վրաստանի դաշնակից, պարտավորված է պաշտպանել վերջինիս երկիրը այն սահմաններում, ինչ սահմաններում որ ցույց կտա վրաց կառավարությունը»[340]:

Երեկվա «եղբայրների»՝ վրացիների դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ վրդովմունք և զայրույթ առաջ բերեց հայ քաղաքական, մտավորական և կառավարական շրջաններում: Հոկտեմբերի 22-ին Հայաստանի խորհրդարանի նիստում վարչապետ Հովհ. Քաջազնունին հայտարարում է. «Մեր հողի մի մասը, Լոռի-Փամբակի շրջանում, գրավված էր թուրքական զորքերով: Կառավարությունը մի քանի անգամ պաշտոնական բողոքներ է ներկայացրել թուրքաց կառավարությանը, ինչպես նաև գերմանական և ավստրիական միսիաներին ու գերմանական կառավարությանը և միշտ մի պատասխան է ստացել, որ գրավումը ժամանակավոր է: Հոկտեմբերի 5-ին Խալիլ փաշան Երևանում հայտնեց մեզ, որ հրաման է ստացել դատարկել վերոհիշյալ երկրամասերը: Անմիջապես մեր և թուրքաց շտաբները գծեցին գործողության ծրագիր, որը սկսվեց հոկտեմբերի 18-ին և առանց որևէ լուրջ միջադեպի շարունակվեց մինչև հոկտեմբերի 21-ը, երբ գիշերվա ժամը 12-ին հեռագիր ստացանք Դրոյից, որ «վրացիները վերջնագիր են ներկայացրել՝ դատարկելու համար մեր ստացած շրջանը մինչև Շահալի ու շարժվեցին Քոբերի վրայով»: Նա խնդրում է կարգադրություն անել: Կառավարությունը որոշեց չընդունել վերջնագիրը, չհանձնել Շահալի կա-

[339] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993, էջ 217: Армяно-грузинский вооружённый конфликтъ…, стр. 15:

[340] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 217-218:

յարանը և զինված ուժի դիմելու պարագային՝ ցույց տալ դիմադրություն»[341]:

Մի կողմից միանգամայն ակնհայտ է, որ հայկական կողմը ամենևին էլ չէր ձգտում ռազմաքաղաքական լարվածությունը խորացնել, ոչ պատերազմական եղանակներով լուծել վիճարկելի հարցերը, այլ ոչ թե ռազմական ուժ կիրառել այդ վիճակից դուրս գալու, ոչ միայն պաշտպանել հայկական Լոռու գյուղացիների ոտնահարված իրավունքները, այլև թույլ չտալ հայկական տարածքների բռնակցումը Վրաստանին:

Եվ ակնհայտորեն հարցերը միայն խաղաղ եղանակով կարգավորելու բոլոր հնարավորությունները սպառելուց հետո էր, որ Դրոն Հայաստանի կառավարությանը խնդրեց իրեն թույլատրել ռազմուժ կիրառել բոլորովին չափն անցած և սանձարձակ վրացական զորքերի դեմ: Այս առումով նա դրսևորեց մեծ վճռականություն և անհողդողդ կամք, համախմբեց հայկական զինվորական ուժը և այն վճռականորեն նպատակաուղղեց Լոռվա գյուղացիության և Հայաստանի Հանրապետության ազգային-քաղաքական շահերի պաշտպանությանը, սահմանատարածքային հարցերի հանգուցալուծմանը հօգուտ նորաստեղծ հայկական հանրապետության: Հենց այս հանգամանքը կարևոր դեր խաղաց հետագա ռազմաքաղաքական գործընթացներում, վստահություն ներշնչեց սեփական քայլերի և գործի իրավացիության մեջ: Հենց այդ վերջին ռազմաքաղաքական իրողությունների կապակցությամբ ՀՀ մինիստր-նախագահ Հովհ. Քաջազնունու նախագահությամբ տեղի ունեցած 1918 թ. հոկտեմբերի 22-ին պառլամենտի կողմից ընդունված հարցի վերաբերյալ բանաձևում կառավարությունը եզրահանգում է, որ հայ-վրացական բախումնալից հարցը պիտի լուծել խաղաղ ճանապարհով՝ պահելով բարիդրացիական հարաբերությունները: Հավանություն է տրվում կառավարության բռնած քաղաքականությանը և արած քայլերին, և հանձնարարական տալիս նույն ուղղությամբ շարունակել[342]:

Սակայն դա չբավարարեց վրացական կողմին: Կրքերը սաստիկ բորբոքվել էին և վրացական կողմի ամբարտավան կեցվածքը հունից հանում էր հայերին, առավել ևս, որ գերմանական սպաների ներկայությունը վրացական կողմում, անկասկած ոգևորիչ հանգամանք էր և

[341] Տե՛ս նույն տեղում, էջ 218:
[342] Տե՛ս նույն տեղում, էջ 219:

դա էլ նպաստեց հայ-վրացական ռազմաքաղաքական և դիվանագիտական-քաղաքական հարաբերություններում լարվածության էլ ավելի խորացմանը և փոխադարձ վիրավորանքների տարափի ավելացմանը: Այս կապակցությամբ Ռ. Հովհաննիսյանը տեղին դիտարկում է անում. «Հոկտեմբերի 22-ին Թիֆլիսի կառավարությունը որդեգրելով զգուշավոր քաղաքականություն, հրամայեց իր բանակին՝ պաշտպանել մինչև թուրքական պարպումը բռնած դիրքերը: Բայց և այնպես, փոքրաթիվ մարդկանց մասնակցությամբ երկկողմանի միջադեպերը շարունակվեցին: Հայկական ջոկատները նույնիսկ առաջ շարժվեցին Ծաթեր և գրավեցին Քորինջ (Քարինջ) գյուղակը: Ճգնաժամը՝ թեև լուրջ, գրեթե զավեշտական դարձավ»[343]:

Վրացական ռազմախաղը Լոռիում պայթունավտանգ էր:

Իրադարձությունները շարունակում էին զարգանալ, սցենարները անընդհատ փոփոխվում էին: Հայաստանի Արտաքին Գործերի նախարարին ուղղված դիմումագրում՝ Վրաստանում հայկական դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար Արշակ Ջամալյանը հայտնում էր, որ գեներալ ֆոն Քրեսսը հաղորդագրություն է ստացել այն մասին, որ հայկական պարեկը ժամանել է Վորոնցովկա, որտեղ կալանվել է գերմանացիների կողմից մինչև միջադեպի պարզաբանումը: Գեներալը ինչպես վրացական կառավարությանը, այնպես էլ հայկական ներկայացուցչին հայտնել է, որ գերմանացիները հայերի դեմ ոչինչ հակառակը չունեն, որ հայերը կարող են գրավել թուրքական վերջին դիրքերը, սակայն ոչ մի դեպքում չեն կարող թողնել նրանց վրացա-գերմանական ուժերի կողմից գրավված գծից այն կողմ: Ջամալյանը սույն գրության մեջ հայտնում էր, որ ֆոն Քրեսսը հաղորդել է, որ հայկական պարեկների հայտնվելը Վորոնցովկայում տագնապ է առաջ բերել հայկական հնարավոր ագրեսիվ գործողությունների հանդեպ: Այնուհետև Ջամալյանը տեղեկացնում է իր հանդիպման մասին Վրաստանի մինիստր-նախագահի պաշտոնակատար Գեորգաձեի հետ, որը հայտնել էր Ջամալյանին, որ անհապաղ կկասեցվեն իրենց կողմից ձեռնարկված ռազմական միջոցառումները՝ պայմանով, եթե ստանան հայկական կողմի համաձայնությունը միջադեպի խաղաղ կարգավորման խնդրում: Վեր-

[343] Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, էջ 80:

ջում Ա. Ջամալյանը տեղեկացնում էր, որ իբր թե տհաճ միջադեպերից խուսափելու նպատակով Թիֆլիսում գտնվող Հայաստանի սեփականությունը հանդիսացող պահեստների պահպանությունը իր վրա է վերցրել Վրաստանի կառավարությունը, իսկ հայկական պահակազորը ուղարկվել է Երևան[344]: Վրացիների կողմից պատրվակներ և առիթներ էին որոնվում շիկացնելու առանց այն էլ արդեն բավականաչափ լարված իրադրությունը, իսկ վերջիններս արտաքուստ հանդես էին գալիս խաղաղասիրական բնույթի առաջարկներով, հաճախ էլ դեմագոգիկ բնույթի հայտարարություններով: Նմանատիպ մոտեցումներում վրացիները վայելում էին գերմանացիների աջակցությունը, որը սակայն ոչ միշտ էր հստակ և հաճախ շփոթության մեջ էր գցում հայկական կողմին: Հոկտեմբերի կեսերին հանդիպելով գեներալ ֆոն Քրեսսի հետ, Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը վերջինից պահանջում է պատասխանել այն հարցին, թե ճի՞շտ է արդյոք, որ վրացիները ցանկանում են գրավել Լոռու թուրքերից ազատվող մասը՝ ընդհուպ մինչև Փամբակի որոշ մասերը, նշելով նաև դեպի Սանահին ուղևորված գերմանական զորաջոկատի մասին: Ի տարբերություն իր նախորդ հայտարարությունների, ֆոն Քրեսսը այս անգամ ավելի քողարկված պատասխան է տալիս, ասելով՝ իբր անհիմն են այն լուրերը, որ գերմանացիները պետք է աջակցեն վրացիներին իրենց առաջխաղացման մեջ, և եթե վրացիք չուզենան հետևել իրենց խորհուրդներին և մնան առկա սահմաններում, ապա պետք է պարզ լինի, որ գերմանացիները երբեք չեն մասնակցի նրանց այդ ձեռնարկին: Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը միամտաբար հավատալով այդ պնդումին, ի պատասխան ասում է, որ դժվար թե գեներալը, որ այդքան աշխատել է Լոռին և Փամբակը թյուրքերից ետ ստանալու համար՝ դրանք վրացիներին հանձնի: Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատարը հայտնում է, որ ինքը հավատում է, որ լուրջ խոսակցություններ վերոհիշյալ խնդրի շուրջ վրաց կառավարության և Գերմանիայի պատգամավորության միջև տեղի չեն ունեցել[345]:

[344] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 254; Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 17, թ. 21:
[345] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 21, թ. 9 - 10:

Սակայն հայկական կողմը ակնհայտորեն թյուրիմացության մեջ էր գերմանական հավաստիացման առումով իրենց անկողմնակալության մասին Լոռու խնդրում, ինչը հերքվում է թե՛ նախորդ պնդումներով, և թե՛ իրադարձությունների զարգացման ներքին լարվածության և խորքային երևույթների վերլուծությամբ: Երկակի խաղը գերմանական կողմի քաղաքականությունում ակնբախ էր, ինչը շուտով ակնհայտորեն բացահայտ է դառնում:

Եվ այսպես, ինչպես հոկտեմբերի 23-ի գրությամբ տեղեկացվում է Հայաստանի Արտաքին Գործերի նախարարին, Հայաստանի դիվանագիտական միսիայի ղեկավար Ա. Ջամալյանը հոկտեմբերի 23-ին հանդիպում է ունենում ինչպես Վրաստանի մինիստր-նախագահին փոխարինող Գեորգաձեի, այնպես էլ ֆոն Քրեսսի (նաև ֆոն Կրես) հետ: Խոսքն անշուշտ, գնում էր Լոռու մասին: Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի հետ ունեցած հանդիպման ժամանակ ֆոն Քրեսսը խոսելով Եկատերինֆելդի հետ կապված հայկական կողմի աշխուժացման մասին, անհնարին էր համարում, որ առկա (ստեղծված) բարդ քաղաքական հանգամանքներում Հայաստանի կառավարությունը մտադրություն ունենար ընդհարվելու Վրաստանի հետ, ասելով, որ դա «մի քանի տաքագլուխ սպաների գործ է, կամ թերևս ավանտյուրա է հայկական ծառայության մեջ գտնված ռուս օֆիցերների կողմից, որոնք ուզում էին պղտոր ջրում ձուկ որսալ» (ակնհայտ է, որ սակայն թե ուր է ծռում ֆոն Քրեսսը, որը ևս պղտոր ջրում ձուկ որսալու կողմնակից էր, թեկուզև դա վերագրում էր այլոց - Վ. Վ.): Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը ֆոն Քրեսսին հայտնում էր, որ ինքը ստույգ աղբյուրներից տեղեկություն ունի, որ Վրաց կառավարությունը որոշում է կայացրել բռնագրավել ամբողջ Բորչալուի գավառը, ուրեմն և Լոռվա այն մասը, որը թուրքական լծից ազատելու համար զգալի աշխատանք է «թափվել»: Սակայն ֆոն Քրեսսը կասկած է հայտնում, թե ի՞նչ ուժով պիտի իրագործեն վրացիք իրենց որոշումը: Ջամալյանը տալիս է ուղիղ պատասխան, ասելով, որ հույս են դրել գերմանական աջակցության վրա: ֆոն Քրեսսը տալիս է բավականին անորոշ, սակայն ակնհայտորեն սադրիչ պատասխան. «Այդ մասին մի անգամ էլ գրավոր եմ հայտնել, որ ես ոչ մի կերպով չեմ արգելի, որ հայերը գրավեն Թուրքիայից ազատված Լոռին և խորհուրդ եմ տվել վրաց կառավարությանը, որ նա էլ ար-

գելք չհանդիսանա»: Այնուհետև ավելացնում է, որ եթե վերջինս իրենց խորհրդին չհետևի և թշնամական գործողություններ սկսի այդ խնդրում Հայաստանի դեմ, ոչ մի աջակցություն չի գտնի գերմանացիների կողմից…, սակայն եթե հայերը դուրս գան նախկին թյուրքական գծից, որպեսզի գրավեն և իրենց՝ գերմանացիների ու վրացիների դիրքերը, ինքը կհրամայի պատերազմական բոլոր միջոցներով դիմադրել: Սակայն գտնում եմ, - ավելացնում է գեներալը, - որ միանգամայն ցավալի կլինի, որ հենց այստեղ մի փամփուշտ պարպվի, որովհետև ոչ ոք չի կարող նախատեսնել, թե այդ մի հատիկ պայթյունը ներկա հանգամանքներում ինչ հետևանքներ կարող է ունենալ»[346]: Ֆոն Քրեսսը հանդիպման վերջում խաղաղության կոչ է անում: Վրաստանի Հանրապետության մինիստր-նախագահի հետ հանդիպումը ևս ծանր ընթացք է ունենում: Ոգևորված իրենց համար բարենպաստ աշխարհաքաղաքական կացությունից և գերմանական սվինների ակնհայտ աջակցությունից կամ լավագույն դեպքում հայերի նկատմամբ գերմանացիների թշնամական «նեյտրալիտետից», վրաց քաղաքականագետը հետևյալ մեղադրանքն է ներկայացնում Ջամալյանին. «Թյուրքերի հետ քաշվելուց հետո հայերը առանց նախազգուշացնելու վրաց կառավարությանը կամ աշխատելու նրա հետ համաձայնության գալ, մտել են Թիֆլիսի նահանգի սահմանները Լոռվա շրջանում: Տպավորությունն այն է, որ հայերը բռնագրավումների քաղաքականություն են կիրառում՝ ինչպես թյուրքերը, փոխանակ համաձայնության քաղաքականության»[347]: Ա. Ջամալյանը որպես պատասխան հայտնում է, որ Լոռին Հայաստանի անկապտելի սեփականությունն է, որ Վրաստանն ինքը պիտի առներ հայերի համաձայնությունը Բորչալուի հայաբնակ վայրերը գրավելու համար, որ դա թշնամական ակտ է Վրաստանի Հանրապետության կողմից[348]:

Բնականաբար, Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է հնարավոր ամեն ինչ աներ պահպանելու սեփական տարածքների անվտանգությունը, միաժամանակ տեր կանգներ իր օրինական տարածքների յուրաքանչյուր մասին՝ պաշտպանելով սեփական հպատակների իրավունքները: Ինչպես արձանագրվում է Թիֆլիսում

[346] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 147, թ. 50-51:
[347] Տե՛ս նույն տեղում, թ. 49:
[348] Տե՛ս նույն տեղում, թ. 50:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի օրագրում, 1918 թ. հոկտեմբերի 21-23-ի վիճակով հայկական զորքերը գրավեցին Լոռիում ոչ միայն տաճիկների թողած գիծը, այլև առաջ անցան դեպի վրաց և գերմանական զորքերի բռնած տերիտորիան: Այդ առթիվ հայերը ստացան վրաց կառավարությունից մի նոտա, որով բողոք էր հայտնվում և պահանջ դրվում մինչև խնդրի խաղաղ լուծումը ետ պահել հայկական զորամասերը Թիֆլիսի նահանգի տարածքը մտնելուց: Միաժամանակ ասվում էր այն մասին, որ ֆոն Քրեսսը խոստացել է, որ գերմանական զորքերը չեզոք դիրքում կմնան, եթե հայերը գրավեն նախկին թուրքական մասը, իսկ եթե արշավեն դեպի վրաց մասը՝ դիմադրություն ցույց կտրվի[349], ասել է թե՝ սպառնում էին պատերազմով:

Կարևոր է ընդգծել, որ Հայաստանի կառավարությունը պատերազմելու ձգտում չուներ, և այդ իսկ պատճառով էլ վրացական կառավարության վերջնագրին տվեց հետևյալ պատասխանը (22 հոկտեմբերի, N 5149). «Թիֆլիս. վարչապետ Ժորդանիային, պատճենը՝ Հայաստանի ներկայացուցիչ Ջամալյանին.

Դիլիջանյան զորամասի հրամանատարը հայտնում է, որ վրացական հրամանատարությունը նրան վերջնագիր է ներկայացրել՝ ազատել Շահալի կայարանը: Հրամայված է չթողնել կայարանը, իսկ եթե վրացիք հարձակման կանցնեն՝ պաշտպանվել: Բարդություններից խույս տալու համար, որոնք կարող են նոր թշնամությունների դուռ բանալ, խնդրում եմ, հանուն պատերազմից տանջված, բզկտված Վրաստանի և Հայաստանի բարեկեցության, որոնք տառապել ու տանջվել են պատերազմից, հանուն իրավունքի և արդարության, զգուշանալ հարձակողական գործողություններից, և պահել վրաց զորքերին նրանց բռնած այժմյան գծի վրա, իսկ սահմանների խնդիրը լուծել խաղաղ համաձայնությամբ:

Հիշեցնում եմ Ձեզ սեփական հանդիսավոր հայտարարությունը հունիսին՝ Նոյ Ռամիշվիլիի և Ահարոնյանի ու Խատիսյանի ներկայությամբ, թե Վրաստանը ոչ մի հավակնություն չունի Լոռիի նկատմամբ և միայն ժամանակավորապես է գրավել այն երրորդ պետության գրավումից ազատ պահելու նպատակով. վարչապետ Քաջազնունի»[350]: Վրաս-

[349] Տե՛ս նույն տեղում, գ. 66, թ. 144: Տե՛ս նաև «Յառաջ», 19 հունիսի, 1928, N 677, էջ 2:

[350] Տե՛ս Ջամալեան Ա., Հայ- վրացական կնճիռը, «Հայրենիք», Բոստոն, 1928, N° 27, էջ 93-94: Տե՛ս նաև Армяно-грузинский вооружённый конфликтъ…, стр. 17-18; Տե՛ս նաև

տանում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանին հասցեագրված հեռագրում այդ նույն բնագավառի ներկայացուցիչ Արզումանովը նշում էր, որ Շահալի կայարանը ազատելու մասին վրացական նոտան ինքն արդեն հաղորդել է, միաժամանակ տեղեկացնելով, որ զրահագնացքի պետի ուլտիմատումը հանդիսացել է կազուս, և հույս էր հայտնում, որ Թիֆլիսում ամեն ինչ կպարզվի…[351]:

Սակայն ամեն ինչ ապարդյուն էր: Հայկական կողմի որդեգրած զգուշավոր ռազմավարությունը բնավ արգելք չեղավ, որ վրացական կողմը գնար առավել ագրեսիվ քայլերի և՛ Բորչալուում, և՛ Ախալքալաքում: Հայկական կողմի հարցի լուծման դիվանագիտական ուղին փակուղային էր, և դա այն պարագայում, երբ վրացիներն «առանց սահմանները խախտելու» գնում էին տարածքային բռնազավթումների ուղիով[352]:

Վեհապետական Վրաստանը, հենվելով գերմանական սվինների վրա, փորձում էր Հայաստանի հաշվին ընդարձակվել և դառնալ Կովկասյան տան ամենամեծ սեփականատեր տանտերը՝ օգտվելով բոլոր տեսակի բարիքներից և ճակատագրի, աշխարհագրական դիրքի ընձեռած աշխարհաքաղաքական բոլոր առավելություններից. օր օրի նրանց դիրքորոշումն ավելի ու ավելի անկանխատեսելի էր դառնում, հայ-վրացական հարաբերությունները հագենում էին վառոդի լիցքով, որն ամեն պահ պատրաստ էր պայթելու: Վրացյանը վերլուծելով այս իրողությունները, եզրահանգում է. «Այսպես ուրեմն, վրաց կառավարությունը պատրաստվում էր զենքի ուժով ստիպելու հայերին, որ դուրս գան Լոռիից՝ վրացիներին հանձնելով և Շահալի կայարանը: Ի՞նչ է այս, եթե ոչ պատերազմի որոշում, որովհետև վրաց ղեկավարները չէին կարող չհասկանալ, որ հայերը հոժար կամքով չէին կատարելու իրենց պահանջը», մանավանդ ֆոն Քրեսսը բազմիցս փորձել էր Արշակ Ջամալյանին համոզել դատարկել «վրացական հողը»[353]:

Գերմանական գործոնի ազդեցությունը բացահայտ էր, և գերմանական ներկայացուցիչը Ջամալյանին պարզ հասկացրել էր Վրաստա-

---

ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 2; Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 157, թ. 45: «Ձանգ», Երևան, 27 հոկտեմբերի, 1918 թ., N 65:

[351] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 66, թ. 260:

[352] Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 53:

[353] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 217-218:

նին օգնելու իրենց բացահայտ պատրաստակամության և պարտավորվածության մասին:

Հոկտեմբերի 23-ին գեներալ Գ. Դ. Ծուլուկիձեի[354] ներխուժումը Այրում կայարան, Շնող հայկական գյուղի ռմբակոծումը և հայ գյուղացիների զորակոչի պարտադրելը առաջ բերեցին հայ-վրացական լարվածության հերթական ալիք: «Վրաց զինվորները խուզարկությունների պատրվակով մտնում էին տները և տանում ինչ-որ պատահի: Ենիչերիական կարգեր էին սահմանվել Լոռիում, ուր վրացին ամեն ինչ էր, հայը՝ ճնշված ռայա»[355]: Հոկտեմբերի 23-ին իրադրությունը սրվեց, այդ պահին հայկական զորամասերը երեք գումարտակների ուժերով անցան հարձակման, և հարկադրեցին Քորինջ գյուղի գերմանական հենակետը վերացնել և նահանջել, չնայած Սանահինում գտնվող վրացական զինվորական հրամանատարությունը հապճեպ գերմանացիներին օգնություն ուղարկեց մեկ գումարտակ հետևակ զորաջոկատ և զրահագնացք: Հաջորդ օրը Վրաստանի մենշևիկյան կառավարությունը ավելի կտրուկ միջոցների դիմեց և Բորչալուի գավառում հայտարարեց հատուկ դրություն, գավառի նահանգապետ նշանակելով գեներալ Գեորգի Դ. Ծուլուկիձեին: Դրանով Վրաստանի մենշևիկյան հանրապետության իշխանությունները ձգտում էին օրինականացնել իրենց դիրքերը, օրինականացնել իրենց խախուտ ազդեցությունը Ախալքալաքի գավառում և հայերին հոգեբանորեն ճնշել՝ համոզելով, որ վրացիներն են փաստացի դրության միակ տերերը: Այդ մասին մեծադղորդ թմբկահարվեց վրաց ողջ կառավարական շրջաններում, մամուլում և կուսակցական-քաղաքական բոլոր շրջաններում:

Վրաստանի կառավարությունը իր քայլերում և դիրքորոշման մեջ չափազանց վստահ, փորձեց ի սկզբանե նախաձեռնությունը իր ձեռքը վերցնել, և սահմանատարածքային վեճերը վճռել կտրուկ միջոցներով, իսկ եթե անհրաժեշտ լինի՝ պատերազմի միջոցով: Ուստի վրացական իշխանությունները հապշտապ զորքեր մտցրեցին Ախալքալաք, դրանով իսկ փորձելով վճռաբար կաշկանդել հայկական նախաձեռնողականու-

[354] Ծուլուկիձե Գեորգի Դավիդի [1860-1923 թթ.] - Իշխան, ռազմական գործիչ, գեներալ-մայոր, 1917 թ.-ից դիվիզիայի հրամանատար, 1918-1921 թթ. ծառայել է Վրաստանի հանրապետության բանակում, 1923 թ. ձերբակալվել է և գնդակահարվել:

[355] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 223-224:

թյունը սահմանազատման խնդրում: Հենց այդ նպատակով էլ վրացական իշխանությունները ցուցադրաբար Ախալքալաքում զորահանդես կազմակերպեցին ի ցույց հայերի և նշանակեցին գեներալ-նահանգապետ, իրենց անմիտ զորակոչերով և բռնազավթումներով առաջ բերելով տեղական հայ բնակչության վրդովմունքը:

Քորինջի դատարկումից հետո գերմանական լեյտենանտ Շենեն իր հրամանատարությունից հրաման ստացավ ուլտիմատում ներկայացնել հայերին՝ 24 ժամվա ընթացքում դատարկել Քորինջը, հակառակ դեպքում սպառնալով ռազմուժ օգտագործել: Հետաքրքրություն է ներկայացնում Ա. Կ. Զախարիաձեի[356] հոկտեմբերի 23-ի հեռագիրը Գ. Գեորգաձեին. «Այսօր ժամը 18-ին հանդիպել եմ երկաթգծի երկայնքով տեղաբաշխված տեղամասի պետ հայ գնդապետի հետ, որը ամբարտավան տոնով ինձ հայտարարեց, որ իրեն ոչինչ հայտնի չէ հայկական կառավարության խաղաղասիրական տրամադրության մասին, և որ ինքը հրաման ունի գրավել Քորինջ-Ծաթեր գիծը, որը և կատարել է, իսկ վրացական զորքերի կողմից որևիցե հակազդեցության պարագայում անցնել հարձակման և ետ շպրտել նրանց: Իմ կատեգորիկ պահանջին՝ մաքրել Քորինջը և Ծաթերը, նա քիչ մտորեց և խոստացավ 12 ժամ անց, վաղը պատասխան տալ: Տեղեկություններ եմ ստացել, որ Այրումի մոտ հայկական հեծյալ հետախույզներ են երևացել…»: Այդ ողջ ընթացքում Վրաստանի զինվորական հրամանատարությունը անմիջապես ևերոպլաններ ուղարկեց Քորինջ-Ծաթերի շրջանն ուսումնասիրելու, սակայն առանց լուրջ արդյունքների և հայերի ագրեսիվ դրսևորումների, ինչպես խոստովանում են հենց իրենք՝ վրաց հեղինակները և Գ. Մար-

[356] Գեներալ Ալեքսանդր Կարամանի Զախարիաձե (15.02.1884 թ.-1957 թ.), - 1917 թ. ժամանել է Թիֆլիս, և համալրել Վրաստանի անկախության կողմնակիցների շարքերը, եղել է Վրաստանի Ազգային խորհրդի զինվորական բաժանմունքի քարտուղարը, իսկ 1918-1921 թթ. ծառայել է Վրաստանի Հանրապետության բանակում՝ զբաղեցրել սկզբում կորպուսի շտաբի, իսկ այնուհետև դաշտային բանակի շտաբի պետի, ռազմաճակատի հրամանատարի, Վրաստանի զինված ուժերի Գլխավոր շտաբի պետի տեղակալի և վերջապես Գլխավոր շտաբի պետի պաշտոնները: 1919 թ. օգոստոսի 1-ին դարձել է գեներալ, իսկ 1921 թ. հայտնվել է տարագրության մեջ, ծառայել Լեհաստանի բանակում, մահացել և հուղարկավորվել է Փարիզում: Տե՛ս մանրամասն Гогитидзе М., Грузинский генералитет (1699-1921 гг.). Биографический справочник НАН Украины. Инс-т археографии и источниковедения им. М. Грушевского, Укр. центр биографической некрополистики. Сост. М. Гогитидзе, отв. ред. Иван Дивный, Киев, 2001, стр. 93-94:

խուլիան[357]: Դրանում, անկասկած, խեղաթյուրված ձևով է ներկայացվում իրականությունը, գլխավոր նպատակ ունենալով Հայաստանը ներկայացնել ագրեսորի դերում: Ավելին, Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնակատար Ն. Վ. Ռամիշվիլին Թիֆլիսում ՀՀ Արտաքին Գործերի նախարարության հավատարմատարին ուղղված հեռագրում հայերին մեղադրում է ագրեսիվ ձգտումների մեջ. «Քննարկելով ստեղծված իրավիճակը, Վրաստանի կառավարությունը ինձ հանձնարարել է ձեզ տեղեկացնել, որ եթե հայկական զորամասերը անհապաղ չդատարկեն Քորինջ-Ծաթեր գիծը կամ այսուհետև անհապաղ կգրավեն Թիֆլիսի նահանգի սահմաններում գտնվող տարածքի որևիցե նոր մաս, ապա վրացական կառավարությունը դա կհամարի որպես ռազմական գործողությունների սկսում Հայկական Հանրապետության կառավարության կողմից, նրա վրա կընկնի պատասխանատվությունը՝ երկու հանրապետությունների համար կործանարար հետևանքներով»[358]: Ա. Ջամալյանը իր հեռագրում հակադարձեց, որ եղբայրական հարաբերությունները երկու ժողովուրդների միջև թույլ չեն տա երկու հանրապետությունների միջև առաջացած խնդիրների այլ լուծում[359]:

Հոկտեմբերի 23-ին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանին ուղարկված գրությունում Հովհ. Քաջազնունին հայտնում էր, որ Հայաստանի խորհուրդը լսելով N 4303 նոտայի ուլտիմատիվ պահանջը՝ մաքրելու Շահալին, կառավարության կողմից ձեռք առած միջոցների մասին, որոշեց՝ հավանություն տալ կառավարության բռնած ընթացքին, առաջարկել նրան այսուհետև շարունակել նույն ձևով: Այնուհետև ասվում էր, որ կառավարությունը պարտավորություն է ստանձնում գործի դնել ամեն ջանք միջադեպը խաղաղ միջոցով լուծելու և հույս է հայտնում, որ Վրաստանն էլ ետ կկանգնի ագրեսիվ գործողություններից և չի անցնի իր այդ պահին զբաղեցրած գիծը, իսկ սահմանների մասին հարցը լուծել խաղաղ ճանապարհով[360]:

---

[357] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[358] Տե՛ս նույն տեղում:

[359] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ -275, ց, 5, գ. 13, թ. 14:

[360] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 578, թ. 5: «Ձանգ», Երևան, 27 հոկտեմբերի, 1918, N 65:

Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնակատար Ն. Վ. Ռամիշվիլին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանին ուղարկած 1918 թ. հոկտեմբերի 23-ի գրության (N 12130) մեջ հայտնում էր (շատ նրբանկատորեն ձևակերպելով ասելիքը - Վ. Վ.), որ «իբր թե» «Հայաստանի կառավարության նախագահի խնդրանքի համաձայն Վրաստանի Ջինվորական նախարարությունը հրամայել է վրացական զորքերին մնալ մինչև թուրքերի հեռացումը իրենց կողմից զբաղեցրած Քորինջ-Ծաթեր-Կամենկա գծի վրա ներառյալ և սպասել սահմանների մասին հարցի խաղաղ եղանակով լուծմանը»: Դրա հետ մեկտեղ վրաց նախարարը բողոքում էր, որ «հայկական զորքերը շարունակում են ագրեսիվ գործողությունները Վրաստանի դեմ», և որ «վրացական կառավարությունը հենց նոր տեղեկություն է ստացել», որ «հայկական զորամասերը պահանջել են մաքրել Քորինջը և դրանից հետո հարկադրել են հեռանալ գերմանական պահակազորին և զբաղեցրել Քորինջ-Ծաթեր գիծը»: Վերջում, ամփոփելով ասելիքը, վրաց մինիստրը հայտնում էր, որ քննարկելով ստեղծված իրավիճակը, Վրաստանի կառավարությունը հանձնարարել է իրեն տեղյակ պահել Հայաստանի կառավարությանը, որ «եթե հայկական զորամասերը անհապաղ չմաքրեն Քորինջ-Ծաթեր գիծը կամ այսուհետ էլ Թիֆլիսի նահանգի սահմաններում կգրավեն տարածքի որևիցե նոր մաս, ապա վրացական կառավարությունը դա կհամարի ռազմական գործողությունների սկսում Հայկական Հանրապետության կառավարության կողմից, որի վրա էլ ընկնում է ողջ պատասխանատվությունը՝ երկու կողմերի համար էլ կործանարար հետևանքներով»[361]:

Սակայն շուտով ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որ Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը ինքն իր ուժերով ի վիճակի չի լինում վերը նշված դիմումագիրն ուղարկել սեփական կառավարությանը (կամ էլ հնարավոր է, միայն իրեն հասկանալի նրբին նկատառումներից ելնելով, գտնելով, որ անհրաժեշտություն կա ուղղակի կապ հաստատել կառավարության հետ- Վ. Վ.): Այդ իսկ պատճառով էլ հոկտեմբերի 24-ին (N 1977) Ա. Ջամալյանը նորից դիմում է Ն. Վ. Ռամիշվիլուն (N 12130 վրացական դիմումագիր-նոտային ի պատասխան), ասե-

[361] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 147, թ. 71-72:

լով, որ Երևանի հետ կապի բացակայության պատճառով ինքը զրկված է Վրաստանի կառավարության նոտան անհապաղ սեփական կառավարությանը ուղարկելու հնարավորությունից, և կարգադրություն անել հենց նույն օրը նոտան ռադիոյով Երևան հաղորդել, դրա հետ մեկտեղ հնարավորություն տալ իր կողմից լիազորված անձանց՝ Մ. Արզումանովի և Ա. Շահմազյանի գլխավորությամբ արտակարգ գնացքով մեկնել՝ առաջապահ զորամասերին նոտայի պատճեն հասցնելու, այնուհետև հեռագրով այն Երևան հաղորդելու համար[362]:

Չնայած այս դժվարություններին, հայկական կողմը համառորեն ձգտում էր խուսափել իր համար անցանկալի և տհաճ պատերազմի հասունացումից, որը կարող էր աղետալի հետևանքներ ունենալ տնտեսական-քաղաքական առումով: Այդ բանը հստակ երևում է այն հրահանգներից, որոնք տրվում էին Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանին Հովի. Քաջազնունու կողմից ուղարկված 1918 թ. հոկտեմբերի 24-ի գրությամբ (N 389): Դրանում Հայաստանի Առաջին Հանրապետության վարչապետ Հովի. Քաջազնունին միանշանակ պնդում էր, որ «ոչ մի ագրեսիվ նպատակներ» իրենք չունեն և չեն արել այդ ուղղությամբ «ոչ մի քայլ», որ ՀՀ կառավարությունը մտադրություն չունի զենքի ուժով վճռելու սահմանների վեճը: Հովի. Քաջազնունին ընդգծում էր, որ Հայկական զորքերի Լոռվա զորաջոկատը «հրահանգ է ստացել բռնել այն տեղերը և գիծը, որ կդատարկեն տաճիկները, առանց անցնելու այդ գծից»[363]: Հովի. Քաջազնունին այդ գրության մեջ անդրադառնալով Քոբեր կիսակայարանի շուրջ ծավալված իրադարձություններին և գերմանացիների հետ ունեցած միջադեպին, նորից շեշտում էր, որ «Հայկական կառավարությունը մտադրություն չունի զենքի ուժով վճռելու սահմանների վեճը», քանի որ «կառավարությունը կանգնած է այն տեսակետի վրա, որ ոչ միայն թյուրքերի դատարկած վայրը, այլև Բօրչալու գավառի ամբողջ հայկական մասը…պատկանելու են Հայաստանին և ոչ Վրաստանին, բայց Հայաստանը իր իրավունքները ցանկանում է պաշտպանել ոչ պատերազմով, այլ բանակցությունների և համաձայնությունների ճանապարհով»: Շարունակելով իր միտքը, Հովի. Քաջազնունին Ա. Ջամալյանին հայտ-

[362] Տե՛ս նույն տեղում, գ. 147, թ. 74; գ. 16, թ. 258:
[363] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 17, թ. 125:

նում էր, որ «մյուս կողմից Հայաստանի կառավարությունը ոչ մի դեպքում չի կարող ընդառաջել Վրաստանի պահանջին՝ նախ թողնել վրացիներին գրավել զօրքերով ամբողջ Բօրչալու գավառը և ապա սկսել բանակցություններ»: Հովի. Քաջազնունին ընդգծում էր, որ Հայկական կառավարությունն արդեն տվել է իր խաղաղասիրության ամենամեծ ապացույցը նրանով, որ վրացիներից չեն պահանջել անմիջապես դատարկելու «արդէն գրաված հայկական տերիտորիան և պատրաստվելով այդ հարցը բանակցությունների նյութ դարձնել»[364]: Հովի. Քաջազնունին Ա. Ջամալյանին տեղեկացնում էր, որ «իրենք համաձայն են, որ վրաց զօրքերը ժամանակավորապես, մինչև բանակցությունների ավարտը, մնան Սանահինում և Վորոնցովկայում, պահանջելով, որ վրացիք այդ սահմաններից առաջ չանցնեն»: Այնուամենայնիվ, այս բոլորով հանդերձ, Ա. Ջամալյանին հասցեագրված այս չափազանց ուշագրավ նամակագրությունում Հովի. Քաջազնունին մի կարևոր վերապահում էր անում, ընդգծելով հետևյալը. «իսկ եթէ վրացիները ուրիշ տեսակետի վրա են, եթէ նրանց տիրապետական ակնկալությունները մղում են իրենց մեր երկրի խօրքը և եթէ մտադրություն ունին դնել մեզ կատարած իրողության առաջ, այլ այն ժամանակ ուրիշ քայլ չի մնա, քանց երբ զենքով պաշտպանիլ մեր իրավունքները և մեր պատիվը: Մենք չենք ուզում պատերազմ. մենք ուզում ենք ամեն կերպ պահպանել մեր բարեկամական հարաբերությունները Վրաստանի հետ…բայց ուզում ենք, որ այն խաղաղասեր և բարեացակամ ընթացքը բանի և Վրաստանը, ուզում ենք, որ նախ ճանաչի և հարգի մեր իրավունքները, և ցույց տալ այդ ոչ միայն հայտարարություններով:

Ներկա դեպքում մենք պահանջում ենք, որ Վրաստանը չանցնի այդ գիծը, ուր կանգնած է եղել թուրքերի հանդէպ: Մենք ևս մեր կողմից պարտավորվում ենք չանցնել այդ գծից առաջ և չանցնել այն:

Պահանջում ենք ամենակարճ ժամանակամիջոցում հրավիրել կոնֆերանս, կամ գործադրել դրանք՝ արբիտրաժ հայ-վրացական սահմանների վեճը խաղաղությամբ լուծելու համար: Պատրաստ ենք այսօրվանից մտնիլ վրացիների հետ բանակցության մեջ այդ կօնֆլիկտը կամ

[364] Տե՛ս նույն տեղում:

արբիտրաժը հրավիրելու համար»[365]: Հենց այսպես: Սակայն իրադարձությունների հետագա զարգացման ընթացքը ակնհայտորեն ցույց տվեց, որ այդ ամենը անբավարար էր վրացիների համար: Նրանք ունեին միանգամայն այլ ծրագրեր:

Սակայն ի հակառակ ՀՀ կառավարության խաղաղասիրական դիրքորոշման, Վրաստանի կառավարությունը հոկտեմբերի 24-ին ռազմական դրություն հայտարարեց Բորչալուի գավառում.

«1. Ի նկատի ունենալով Բորչալուի գավառի հարավային սահմանում տեղի ունեցող իրադարձությունները, կապված Հայկական Հանրապետության որոշ զորամասերի ելույթների հետ, Վրացական Հանրապետության կառավարությունը որոշեց Բորչալուի գավառը և վրացական երկաթգծի հարավային ճյուղը հայտարարել ռազմական դրության մեջ:

2. Բորչալուի գավառի և վրացական երկաթգծի հարավային ճյուղի գեներալ-նահանգապետ է նշանակվում 2-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Ծուլուկիձեն»[366]:

Այս առումով Գ. Մարխուլիան ճարպկորեն մի փտած և ստահոդ փաստ է շրջանառության մեջ դնում, թե իբր ի պատասխան հայկական ագրեսիվ գործողությունների, վրացիները կաշկանդված են եղել, իբր թե այն պատճառով, որ Վրաստանի կառավարությունը իրենց զորքերին հրահանգ չէին տվել ռազմական գործողություններ սկսել: Եվ ավելին, խորապես վրդովված սեփական կառավարության անվճռականությունից, վրացական զորամասերը ինքնակամ կրակ են բացել հայկական զորամասերի վրա, կարծելով, որ սեփական կառավարությունը ի վիճակի չէ պաշտպանել ոչ միայն իր տարածքը, այլև և իր արժանապատվությունը, կամ ինչպես փորձել է արդարանալ Ծուլուկիձեն Վրաստանի ռազմական մինիստր Գ. Գեորգաձեին ուղղված հեռագրում, քանի որ հայերը իրենց պահել են չափազանց անպատկառ և կպել են իրենց ինքնասիրությանը, սակայն իրենք իշխանություններից հրաման չունեն իրենց զինվորներին հարձակման հրաման տալու և սպաները չափա-

[365] Տե՛ս նույն տեղում:

[366] Տե՛ս Мархулия Г. Р. Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах, Тбилиси, Тб., Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/: Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 32-33: Տե՛ս նաև «Հորիզոն», Թիֆլիս, 26 հոկտեմբերի, 1918 թ., N 219:

զանց դժգոհ են, որ պատասխան տալու իրավունք չունեն և իշխանություններից սպասում են հրամանի[367]: Վրաց հեղինակ Գ. Մարխուլիան վրացիներին ներկայացնելով որպես խաղաղասերների, որոնք իբր թե փորձել են խուսափել ռազմական առճակատումից Հայաստանի հետ, միաժամանակ գրում է, որ վրացական կողմը բավարարվեց միայն Ռազմական նախարարին թույլատրելով «հայկական բանդաներին դիտարկել որպես ապստամբներ և նրանց հետ վարվել ռազմական ժամանակների օրենքների ողջ խստությամբ»[368]:

Վրաստանում ՀՀ ներկայացուցիչ Ա. Ջամալյանը Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի տեղակալ Գվարժալաձեի հետ հոկտեմբերի 25-ին ունեցած զրույցում նշում է, որ Հայաստանի և Թուրքիայի միջև կա հատուկ համաձայնություն, ըստ որի այն գիծը, որ զբաղեցված է թուրքական զորքերի կողմից, թուրքական կառավարության կողմից տրված է Հայաստանին[369]: Այդ նույն հոկտեմբերի 25-ին Ա. Ջամալյանը գրում է Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պարտականությունները կատարող Ն. Վ. Ռամիշվիլուն. «Իմ խոսքերի ոչ ճիշտ մեկնաբանումից խուսափելու համար հարկ եմ համարում վերականգնել իմ զրույցը պ. Գ. Գվարժալաձեի հետ: Պ. Գվարժալաձեն հայտարարեց ինձ, որ ինքն ունի փաստաթուղթ, ըստ որի Վրաստանում Թուրքիայի ներկայացուցիչ Աբդուլ Քերիմ փաշան առաջարկել է վրացական կառավարությանը զբաղեցնել Լոռու շրջանը այնտեղից թուրքերի հեռանալուց հետո: Դրան ես առարկեցի, որ նման առաջարկ է ստացվել նաև Հայաստանի կառավարությունը Հայաստանում Թուրքիայի ներկայացուցիչ Մամեդ Ալի փաշայից: Ընդ որում ես ավելացրի, որ արդեն այն հանգամանքը, որ նույն տարածքը այստեղ առաջարկում են Վրաստանին, իսկ այնտեղ, Հայաստանին, մեզ պարզ ցույց են տալիս, որ մեր միջև վեճը պետք է լուծվի մեր իսկ կողմից, փոխադարձ և խաղաղ համաձայնությամբ»[370]:

---

[367] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http://iberiana,wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[368] Տե՛ս նույն տեղում:

[369] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: //http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/: В газ. «Сакартвелос Республика», «Кавказское слово»:

[370] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 4033, ց. 2, գ. 971, թ. 3:

Իրենց նպատակահարմար ձևով մեկնաբանելով պատմաքաղաքական և ռազմաքաղաքական զարգացումները, Գ. Մարխուլիան պնդում է, թե իբր ՀՀ կառավարությունը տագնապելով գրավված տարածքների կորստից, այնտեղ իր մնալը արդարացնելու համար հորինել է վարկած, որ իբր թե այդ տարածքը իրենց է զիջվել թուրքերի կողմից: Եթե անգամ ընդունենք Գ. Մարխուլիայի մտասևեռուն գաղափարը, ստացվում է, որ հայկական փաստարկման հիմքում ընկած է ոչ թե երկրամասի էթնիկական պատկանելիության հանգամանքը, այլ այն, որ այդ տարածքը ոչ միայն հայերը, այլև վրացիները նվեր են ստանում Թուրքիայից, որը ընդամենը «գիտական զառանցանք կամ հորինվածք է», ինչն անընդունելի և հակագիտական մոտեցում է Լոռու հիմնահարցին:

Հերթական քայլերն այդ ուղղությամբ կատարվում են 1918 թ. հոկտեմբերի 24-25-ին: Այսպես, Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրին ուղղված 1918 թ. հոկտեմբերի 24-ի դիմումագրում (№ 1388) բողոքում էր վրացական մամուլում հայտնված Ռազմական մինիստրի այն կարգադրության կապակցությամբ, որով արգելքներ էին հարուցվում Հայաստանից եկող քաղաքացիների առաջ, վերջիններիս անցագիր չտալով: Ա. Ջամալյանը Վրաստանի իշխանություններից խնդրում էր շտապ պարզաբանումներ մտցնել այդ հարցում, միաժամանակ հայտնելով, թե տարածվու՞մ է արդյոք սույն կարգադրությունը նաև Երևանից եկող հատուկ թղթատարների (սուրհանդակների) վրա, և եթե ոչ, ապա տրվե՞լ է արդյոք համապատասխան կարգադրություն սահմանապահ իշխանություններին[371]: Սակայն վրացիները մտադրություն չունեին կանգ առնելու կես ճանապարհին, և օր օրի վրա ուժեղացնում են ճնշամեխանիզմը, նորանոր հնարքների դիմելով: Վրացական կառավարությունը հոկտեմբերի 20-ից արգելում է հայոց կառավարությանը բոներ տալ, կարգադրելով պետական բանկի գրասենյակին բոների տրամադրումը դադարեցնել ցնոր կարգադրություն[372]: Այդ մասին մենք լրացուցիչ տեղեկանում ենք Ա. Ջամալյանի հերթական՝ 1918 թ. հոկտեմբերի 25-ի դիմումագրից (№ 1402)՝ ուղղված Վրաստանի Հանրապետության Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնակատար Ն. Վ. Ռամիշվի-

[371] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 17, թ. 103:

[372] Տե՛ս «Զանգ», Երևան, 3 նոյեմբերի, 1918, N 67 (83):

լուն, որում հայտնվում էր, որ պետական բանկի Թիֆլիսի գրասենյակում Հայկական կառավարությանը հասանելիք Հայկական բոնների ստացման խնդրում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներկայացուցչին գրասենյակի կառավարիչը հայտարարել է, որ Վրաստանի Ֆինանսների նախարարության 1918 թվականի հոկտեմբերի 24-ի № 1738 հրահանգի համաձայն, ինքը չի կարող բոնեբը դուրս գրել: Դրան ի պատասխան Ա. Ջամալյանը իրեն թույլ է տալիս հիշեցնելու Վրաստանի ներկայացուցչին, որ դիվանագիտական հարաբերությունները երկու երկրների միջև ընդհատված չեն, և հետևաբար Վրաստանի կառավարությունը իրավունք չունի արգելք դնելու Հայաստանի Հանրապետության կառավարությանը պատկանող գումարի վրա: Վերջում Ա. Ջամալյանը Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրից խնդրում էր հաղորդել նման արգելքի մոտիվների մասին Հայաստանի կառավարությանը[373]: Սակայն վրացական կողմը ամենևին էլ իրեն վատ չզգաց դրանից, և առաջ քաշեց իր սեփական պատճառաբանությունները: Ի պատասխան Ա. Ջամալյանի հոկտեմբերի 25-ի նամակի, Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնակատար Ն. Վ. Ռամիշվիլին իր հոկտեմբերի 26-ի դիմումագրում (№ 4485) հայտնում էր, որ Վրաստանի կառավարության որոշմամբ Ֆինանսների մինիստրին հրահանգ է տրվել կասեցնել բոների տրամադրումը մինչև հոկտեմբերի 23-ի իրենց կողմից ուղարկված նոտայի (№ 12130) պատասխանի ստացումը, որը ապահովում էր կոնֆլիկտի խաղաղ հանգուցալուծումը: Ռամիշվիլին հայտնում էր, որ երբ իրենք ստանան այդ պատասխանը, այդ ժամանակ անհապաղ կարգադրություն կարվի վերոհիշյալ արգելքը վերացնելու համար[374]:

Իրադարձությունները սակայն զարգացման այլ «տրամաբանություն» ունեին և վրացիները ամենևին էլ չէին պատրաստվում խստորեն հետևել իրենց իսկ կողմից արված հայտարարությունների տառին ու ոգուն: Վրացիները սկսեցին տենդագին զինվորական պատրաստություններ տեսնել, մեծաքանակ զորաջոկատներ կուտակել և պատրվակ որոնել ռազմական առճակատման համար: Նույնիսկ տեղի ունեցան ընդհարումներ, մինչև իսկական «լուրջ» և անկանխատեսելի հետևանք-

[373] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 17, թ. 107:
[374] Տե՛ս նույն տեղում, թ. 106:

ներով լի պատերազմը, որը բռնկվեց 1918 թ. դեկտեմբերին: Այսպես, զորավար Գեորգի Ծուլուկիձեի հրամանով դեռ հոկտեմբերի 23-ին Գոգվաձեի (Գոգուաձե) զրահապատ գնացքը հրանոթներից ռմբակոծել էր Շընիխ գյուղը և հայ գյուղացիներից պահանջեց ճանաչել Վրաստանի իշխանությունը: Այդ կապակցությամբ հոկտեմբերի 23-ին Այրում կայարանից զրահագնացքի պետ Գոգվաձեն հաղորդում է Սանահին՝ գեներալ Ծուլուկիձեին հետևյալը. «Ձեր հրամանի համաձայն իմ կողմից զրահագնացքը թողնվել է Շընիխ գյուղի մոտ և հետախույզների խումբ է ուղարկվել գյուղ: Գյուղի մոտ հետախույզները հանդիպել են հակառակորդի հրացանակրակին: Հրացանաձգությունը շարունակվել է 45 րոպե: Վտանգի պատճառով իմ կողմից հետախույզներին օգնություն է ուղարկվել՝ հետևակի մի մասը զրահագնացքի հետ, սակայն տեսնելով, որ հրաձգությունը չի դադարում, ես մի քանի արկ արձակեցի հակառակորդի ուղղությամբ: Պարզվեց, որ Շընիխ գյուղում կանգնած են եղել 25 հեծյալ և 20 մարդ հետևակ: Մեր կողմից կորուստներ չկան: Այժմ հանգիստ է: Մանրամասները կզեկուցվեն անձամբ: Կապիտան Դիդեբուլիձեի սահմանապահների ջոկատը գրավվել է գնդապետ Ջախարիաձեի կողմից նշված դիրքը: Զրահագնացքի պետ Գոգվաձե»[375]:

Դա արդեն լուրջ պատերազմ է, և այդ առթիվ Վրաստանի Ջինվորական մինիստր Գեորգաձեն խորհրդարանում հանդես էր եկել մարտաշունչ ճառով և վճռականություն արտահայտել «զենքի ուժով ապստամբությունը ճնշելու գործում»[376]

Միջադեպի նկատմամբ որոշակի հետաքրքրություն ունեին նաև գերմանացիները: Սակայն ինչպես պարզվում է Ա. Ջամալյանի Երևան ուղարկված մի զեկուցագրից, գերմանացիները կարծես թե չկասկածելով հայերի խաղաղասիրական մտադրությունների մեջ, այնուամենայնիվ ցույց են տվել, թե իբր տեղյակ չեն, ինչպես է վրացական զրահագնացքը հայտնվել Շահալի կայարանի մոտ: Միաժամանակ ըստ Ջամալյանի հաղորդագրության, ֆոն Քրեսսը հավաստիացրել էր, որ վրացիները իբր թե համաձայնություն են տվել Քրեսսի ներկայացուցիչնե-

[375] Տե՛ս Армяно-грузинский вооружённый конфликтъ…, стр. 16:
[376] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 220:

րին վիճելի հարցերը լուծել համաձայնեցնող հանձնաժողովի կամ արբիտրաժի միջոցով[377]:

Սակայն այս և այլ կարգի միջամտությունները դեռևս արդյունք չէին տալիս, իսկ ընդհարման վտանգը մնում էր օրակարգում դրված: Քիչ անց, վրացի զինվորների ջոկատը ընդհարում է ունենում հայ գյուղացիների և այդ շրջանում գտնվող փոքրաքանակ հայկական զորամասի հետ: Անշուշտ, զարմանալի կլիներ, եթե Հայաստանի կառավարությունը և հայ ժողովուրդը, որ գտնվում էին ծանր տնտեսական և աշխարհաքաղաքական անհարմար իրավիճակում, սովալլուկ գաղթականների բանակները աչքի առաջ ունենալով, անգամ այդ պայմաններում չփորձեին հակազդել այդ հակահայ քայլերին, տեղյակ չլինեին ռազմական անցուդարձին: Հոկտեմբերի 24-ին ժամը 22-ին գեներալ Սիլիկյանը Ղարաքիլիսայից Զինվորական նախարարին ուղարկված հեռագրում նշում է, որ հետախուզության միջոցով պարզվել է, որ մինչև Շուլավեր՝ ձախ տեղամասում վրացիներ չկան, և կամրջի հակառակ կողմում մեր առաջամաս դիրքերը կանգնած են երկաթուղու վրա: Այնուհետև ասվում էր, որ գերմանացիներն իրենց դիրքերն են դրել և որ նույն օրը տեղամաս է ներկայացել պառլամենտյոր (բանագնաց, սուրհանդակ), որը հայտարարություն է արել, որ վրացիները ուլտիմատում չեն ներկայացրել, այլ ընդամենը առաջարկել են մաքրել Շահալի կայարանը: «Վաղը նրանց խնդրանքով, - ասվում էր վերոհիշյալ հեռագրում, - նրանց ջոկատի շտաբի պետի հետ բանակցությունների համար Քոլագիրան կայարանից մեկնում են Դրոն և փոխգնդապետ Շնեուրը: Մեր ջոկատը առաջամաս զորամասերով գրավում է Շընիխ-Քորինջ-Ծաթեր-Հերհեր-Ջալալօղլի-Նովոպոկրովկա գիծը»[378]:

Ուշագրավ փաստաթուղթ, որը վկայում է այն մասին, որ վրացիները դեռ բացարձակ վստահություն չունեին իրենց ուժերի նկատմամբ, թե չէ ավելի լկտի կլինեին այդ պահին, և որ հենվելով գերմանական սվինների վրա, փորձում էին ժամանակ շահել զարգացնելու իրենց առաջխաղացումը՝ սպասելով ավելի հարմար պահի: Այդ մասին ակնառու կերպով վկայում է նաև ներքոհիշյալ փաստաթուղթը. այսպես, 1918 թ. հոկտեմբերի 24-ին ժամը 16 անց 30-ին Զինվորական նախարարին

[377] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 17, թ. 49, 50:
[378] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 147, թ. 24:

ուղղված հեռագրում փոխգնդապետ Շնեուրը տեղեկացնում էր հետևյալը. «Ժամը 15-ի մոտ վրացիների գումարտակը հյուսիսից մոտեցել է Ծաթեր գյուղին: Ռազմական գործողություններ չեն ծավալել…Մնացած ճակատի վրա առանց փոփոխությունների է: Ժամը 16-ին Քոբեր կիսակայարանից հարավ, կամրջի վրա երևաց Գլխավոր շտաբի գնդապետից, շտաբային մի սպայից և համհարզից բաղկացած վրացական պատգամավորությունը, որը հայտարարեց Դրոյին, որ վրացիները հավակնում են Կամենկա գետի ձախ ափից դեպի հյուսիս ընկած ողջ շրջանին, ինչպես նաև Ծաթեր և Քորինջ գյուղերին, որոնք գրավվել են գերմանացիների, այլ ոչ թե թուրքերի կողմից: Վրաստանի Զինվորական մինիստրը հրամայել է այդ գյուղերը վրացիների կողմից գրավել: Դրոն հայտարարեց, որ կատեգորիկ հրաման է ստացել պահել Նովոպոկրովկա-Ջալալօղլի-Վեթվենդ-Քոբեր-Քորինջ և մինչև Քուլպ ձգվող ճակատը, որից հետո պատգամավորությունը հեռացավ»[379]:

Հայկական կողմի խաղաղ զգուշավորությունը ամենևին էլ վրացիների կողմից ըստ էության լուրջ չէր ընդունվում և երբեմն նրանք փորձում էին շոշափել, գտնել հայկական կողմի թույլ կետերը՝ նախահարձակ լինելու համար: Դա դեռ պատերազմ չէր, սակայն կարելի էր համարել պատերազմի նախապատրաստություն, որից Հայաստանը համառորեն խուսափում էր՝ ձգտելով իրավիճակային հարցերի քաղաքական-դիվանագիտական լուծումներ գտնել: Գեներալ Մ. Սիլիկյանը հոկտեմբերի 25-ին Դիլիջանից հեռագիր է ուղարկում Հայաստանի Զինվորական նախարար Հախվերդյանին (պատճենը՝ գեներալ Փիրումովին), որում հայտնում էր այն մասին, որ ժամը 18-ին փոխգնդապետ Կորոլկովից տեղեկատվություն է ստացվել, որ նույն օրը ցերեկով վրացիները հարձակում են սկսել Ծաթեր գյուղի վրա, որից հետո սկսվել է փոխհրաձգությունը: Սակայն որոշ ժամանակ անց այն ավարտվել է՝ հայկական կողմի ոչ մեծ կորուստներով: Այնուհետև ասվում էր, որ արդեն «պառլամենտյորներ» են ուղարկվել վրացիների մոտ, նրանց հայտնելու, որ կոնֆլիկտը կարելի է հարթել դիվանագիտական եղանակով[380]:

Եվ այնուամենայնիվ, դա վրացիներին ակնհայտորեն չէր բավարարում, քանի որ վերջիններս այլ կերպ էին մտածում: Ձեռնարկելով

[379] Տե՛ս նույն տեղում, թ. 25:
[380] Տե՛ս նույն տեղում, թ. 42:

լայնածավալ նախապատրաստություններ, վրացիները զգալի ջանքեր էին գործադրում դրա համար հասարակական կարծիքը ընդդեմ հայերի տրամադրելու ուղղությամբ, ավելի ու ավելի սաստկացնելով այդ քաղաքականությունը:

Հայկական կառավարությունը իրագործում էր համապատասխան ռազմաքաղաքական գործունեություն, մոբիլիզացնելով իր սուղ միջոցները, հնարավորին չափով աշխատելով հաշվի առնել շրջափակման հնարավոր տարբերակները, որոնց մեջ ընկավ Հայաստանի Առաջին Հանրապետությունը 1918-1920-ական թվականների անտանելի ծանր օրերին, երբ ի տարբերություն 1980-ական թվականների վերջերի-1990-ական թվականների, չկային օդային և այլ կարգի կամուրջներ, զանազան այլ կոմունիկացիաներ, և ամբողջ հույսը ցամաքային հաղորդակցության և տարատեսակ ուղիների վրա էր, որոնք գրեթե լիովին վերահսկվում էին Վրաստանի շովինիստների կողմից:

Օր օրի Վրաստանը ավելի ու ավելի զազրելի էր դառնում: Վրաստանը օգտվելով իր աշխարհաքաղաքական դիրքի առավելություններից, տնտեսաքաղաքական շրջափակման մեջ էր առել Հայաստանի Հանրապետությանը, ամեն միջոց օգտագործելով պարտադրելու էական զիջումների գնալ սահմանատարածքային խնդիրներում՝ Լոռին, Ախալքալաքը և մնացած հայկական օրինական տարածքները Վրաստանին միացնելու համար:

Գեներալ-մայոր Սիլիկյանը Զինվորական նախարար Հովհաննես Հախվերդյանին ուղղված մի գրության մեջ (1918 թ. հոկտեմբերի վերջ) տեղեկացնում է. «Առկա տեղեկությունների համաձայն վրացիները ուժեղացված կերպով հասարակայնությունից թաքցնում են Շահալին մաքրելու իրենց ոչ ճիշտ պահանջների մասին և հայերին մեղադրում են ագրեսիվ գործողությունների մեջ: Վրացիները գրեթե մի գումարտակ զորուժով հյուսիս-արևելքից մոտեցել են Ծաթեր կայարանին մինչև 200 քայլ, ուր թաքնվել են և խրամատավորվել: Մոտեցվել է ռեզերվը: Հոկտեմբերի 24-ին վրացական զորաջոկատի պետ, գնդապետ Զախարիաձեի հետ Դրոյի և Մ.Արզումանովի ունեցած խոսակցություններից պարզ է դարձել, որ վրացիները Ծաթերի և Քորինջի հանձնումը համարում են ընդամենը նախնական զիջում բանակցություններից առաջ, իսկ առաջիկայում նկատառումներ ունեն Ջալալօղլու շրջանի նկատմամբ, որը

հավանաբար նրանց կողմից չի գրավվել միայն մեր կողմից թուրքերին արագ փոխարինելու հետևանքով, որին նրանք չեն սպասել: Մ. Արզումանովը տեսել է Վրաստանի Զինվորական նախարարի հրահանգը այդ շրջանը գրավելու մասին: Ռազմական հետախուզության ուղարկումը Ձեր հրահանգով կարգադրվել է կանգնեցնել: Մինչև այժմ մեր զորամասերը ոչ մի տեղ առաջխաղացում չեն ունեցել»[381]: Վերոնշյալ տեղեկատվությունը հաստատվում է նաև հայկական պատգամավորության անդամ Արզումանովի Սանահինից Վրաստանի մինիստր-նախագահին և ՀՀ դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանին ուղարկված 1918 թ. հոկտեմբերի 25-ի հեռագրով (№ 895), որում Արզումանովը հայտնում էր, որ ինքը պարզել է Ծաթերի և Քորինջի մասին հարցը, ինչպես նաև արդեն բանակցել է գնդապետ Զախարիաձեի հետ, որը հրահանգ ուներ զբաղեցնելու հին գիծը: Արզումանովը խնդրում էր ռազմական գործողություններ չսկսել Ծաթերի և Քորինջի համար՝ մինչև հայկական պատգամավորության ժամանումը Երևան[382]: Պատասխան հեռագրերից ևս մեկում (26 հոկտեմբերի, 1918 թ.)՝ հասցեագրված գեներալ-մայոր Մ. Սիլիկյանին և Դրոյին, Զինվորական նախարար գեներալ-մայոր Հախվերդյանը հայտնում էր, որ Վրաստանի մինիստր-նախագահը իրենց հեռագրել է, որ վրացական զորքերին հրամայված է պահել մինչև թուրքերի հեռացումը զբաղեցրած գիծը, և հենց Քորինջ-Ծաթեր-Կամենկա գետը ներառյալ, սպասել հարցի խաղաղ լուծմանը՝ սահմանների մասին փոխադարձ համաձայնության կայացմամբ: Այնուհետև ասվում էր, որ հայկական զորամասերը գրավել են Ծաթեր-Քորինջը՝ ստիպելով սահմանապահ կայազորին հեռանալ այնտեղից: Զինվորական նախարարը տեղեկացնում էր, որ իր № 688 հեռագրի և մինիստր-նախագահի հրամանի համաձայն և վրացիների հետ պայմանավորվածության հիման վրա հրամայված է մաքրել Ծաթերը և Քորինջը, ինչպես նաև ոչ մի զորամաս առաջ չքաշել: Հեռագրում ասվում էր նաև, որ այդ մասին տեղեկացվել է Վրաստանի կառավարությանը[383]: Եվ այսպես, փոխգնդապետ Կորոլկովին ուղղված հոկտեմբերի 26-ի հեռագրում, Դրոն, հիմք ունենալով Զինվորական նախարարի հրամանը (№

[381] Տե՛ս նույն տեղում, թ. 26:
[382] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 17, թ. 31, 32:
[383] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 147, թ. 33:

905), հրամայում էր հոկտեմբերի 27-ին ժամը 9-ին իրականացնել Քորինջի և Ծաթերի հանձնումը, ավարտելով պահակակետերի փոփոխությունը, այդ մասին ժամանակին տեղեկացնելով վրացական հրամանատարությանը[384]:

Ուշագրավ են այդ ժամանակաշրջանի մյուս հեռագրերը և դիմումագրերը, այլևայլ փաստաթղթեր, որոնց հեղինակները ռազմական ուժերի ղեկավարներն են և Արտաքին Գործերի նախարարության պաշտոնյաները, և իհարկե՝ մինիստր-նախագահը, որոնց շնորհիվ զգալի հստակություն է մտցվում ուսումնասիրվող հարցում և ավելի ամբողջական, լիարժեք է դառնում Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարության անդրանիկ ռազմաքաղաքական քայլերի բացահայտումը հայկական պետականության կայացման, նրա զարգացման համար անհրաժեշտ աշխարհաքաղաքական պայմաններն ու վարչաքաղաքական քարտեզի ձևավորումն ապահովելու տեսանկյունից:

Եվս մի կարևոր հավելում վկայում է նորաթուխ պետության ամենևին էլ ոչ ռազմատենչ քաղաքականության և հայկական կառավարության իրական ձգտումների մասին՝ բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ եղանակներով: Զինվորական նախարարին ուղարկված հաղորդագրության մեջ փոխգնդապետ Շնեուրը հայտնում էր, որ ստացվել է տեղեկություն այն մասին, որ համաձայն նախորդ կարգադրությունների, մեր զորքերի կողմից գրավվել են Շընիխը, Արջիկը, Աղնաձորը, իսկ քանի որ այդ գյուղերը ընկած են Թիֆլիսի նահանգում, ապա մեր զորամասերին հրաման է ուղարկված ետ նահանջել դեպի Քուլպ գյուղի շրջանը՝ այդ մասին զգուշացնելով վրացիներին՝ հնարավոր թյուրիմացությունից խուսափելու համար[385]:

Սակայն այս նախազգուշական, զիջողական բնույթի քայլերը ամենևին էլ չեն սթափեցնում շովինիզմի ոգով տոգորված վրաց ղեկավարներին և նրանց ամբարտավան զինվորականությանը, որոնք ոգևորված Հայաստանի կողմից արվող զիջումներից և չանսալով խոհեմության զգաստամիտ կոչերին, փորձում էին դիրքերն ամրապնդել: Այդ մասին է վկայում հետևյալ հեռագիրը, որն ուղարկել է փոխգնդապետ Շնեուրը Հայաստանի Արտաքին Գործերի նախարարին Դիլիջանից, որում

[384] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 17, թ. 41:
[385] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 147, թ. 34-35:

տեղեկացնում է հոկտեմբերի 26-ի իրադարձությունների մասին՝ հենվելով Դրոյից ստացված հաղորդագրության վրա: Դրանում նշվում էր, որ հոկտեմբերի 26-ին ժամը 6-ին վրացիները մի գումարտակով և գնդացիրներով զինված՝ Ծաթերից հարձակում են կատարել մեր սահմանապահ տեղամասի վրա, բացելով գնդացրային և հրացանային կրակ: Այնուհետև այդ նույն տեղեկագրում ասվում էր, որ մեր սահմանաջոկատի անընկճելիության և հմուտ կրակի շնորհիվ վրացական գումարտակը ետ է շպրտվել, և վրացիները փախել են, առգրավվել են 13 ժապավեններով հանդերձ մի գնդացիր և հրացաններ, գերի է վերցվել մի յունկեր և հեծյալ գումարտակի մի զինվոր, մի զինվոր էլ վրացական գնդից: Այնուհետև հաղորդագրության մեջ ասվում էր, որ հայկական կողմից կորուստներ չկան: Հաղորդագրության ամենավերջում փոխգնդապետ Շնեուրը ի հավելումն Դրոյի ուղարկած տեղեկության, հայտնում էր, որ այդ ամենը տեղի է ունեցել առավոտյան՝ մինչև Ծաթեր-Քորինջը ազատելու մասին հրամանի ստացումը, որն ստացվել է ժամը 15-ին, և անհապաղ տրվել է Դրոյին, և հավաստիացնում, որ այդ գյուղերը կազատագրվեն[386]:

Ինքնին հասկանալի է հայկական զինվորականության, և մասնավորապես թե՛ Դրոյի, և թե՛ փորձված հետախույզ Ալեքսանդր Շնեուրի մարտավարությունը, որոնք անշուշտ տեղեկացված լինելով խնդրի քաղաքական կարգավորման ուղղությամբ կողմերի ձեռնարկած քայլերին, ճկունորեն կողմնորոշվում էին կոնկրետ իրավիճակներում, և չէին շտապում թե՛ հապճեպ որոշումներ կայացնել, և թե՛ կոնկրետ ռազմական գործողություններ ձեռնարկել՝ խուսափելով իրադարձությունների զարգացման հնարավորին չափով անկանխատեսելի ընթացքից, ձգտելով հայ ժողովրդի ազգային-պետական շահերը չվտանգել, խուսանավելով վրաց-գերմանա-թուրքական մեքենայությունների հորձանուտում, որոնց ընդհանուր շահը և նպատակը Հայաստանը անդամահատելն էր, և վերջին հաշվով պարտադրելու հրաժարվել Արևմտյան Հայաստանից և ամփոփվելու անձուկ կովկասյան փոքրիկ պետության շրջանակներում:

[386] Տե՛ս նույն տեղում, թ. 35:

Հոկտեմբերի 26-ին Գոգվաձեն իր զրահագնացքով անցավ մինչև Այրում և հայ գյուղացիներից պահանջեց ճանաչել Վրաստանի գերապատվությունը:

1918 թ. հոկտեմբերի 26 –ին Թիֆլիսում ստացվում է ՀՀ վարչապետ Հովհ. Քաջազնունու հեռագիրը. «Հոկտեմբերի 25-ին ժամը 23-ն անց 18 րոպեին մեր զորքերին խիստ հրաման է տրվել գրավել թուրքերի կողմից թողնված դիրքերը: Հրամանը կրկնվել է: Մասնավորապես, կարգադրություն է արվել դատարկել Քորինջը և Ծաթերը, որոնք, հավանաբար, գրավվել են թյուրիմացաբար և պաշտպանության նպատակով: Բարեհաճեք ձեր կողմից կարգադրություն անել դադարեցնել վրդովեցուցիչ սադրիչ գործողությունները՝ վրացական զորքերի տագնապ ներշնչող առաջխաղացումները: Սահմանների մասին վեճի խաղաղ լուծման համար առաջարկում եմ հրավիրել հայ-վրացական կոնֆերանս»: Այս կապակցությամբ վրաց հեղինակները անտեղի պնդում են, թե իբր Քաջազնունու հեռագիրը Վրաստանի քաղաքական շրջաններում վստահության չարժանացավ, և քննարկման նյութ դարձավ Վրաստանի պառլամենտի 1918 թ. հոկտեմբերի 26-ի արտակարգ նիստում:

Ավելին, Վրաստանի խորհրդարանում, հոկտեմբերի 26-ի արտակարգ նիստում ելույթ ունենալով՝ Արտաքին Գործոց մինիստր Նոյ Ռամիշվիլին, անշուշտ, մեղադրում էր Հայաստանին ագրեսիայի մեջ: Եվ այդ կապակցությամբ իր հաշվետվության մեջ Վրաստանի Ներքին Գործերի մինիստր Ն. Վ. Ռամիշվիլին ընդգծել է. «Վրացական կառավարությունը անկեղծ ցանկանում է վիճելի հարցի խաղաղ լուծում, սակայն բոլոր միջոցները կձեռնարկի հանրապետության սահմանները պաշտպանելու համար, և սպառնալով, որ եթե ետ չքաշվի սահմաններից, որպիսին իրենք գրավում էին մինչև թուրքերի հեռանալը, կամ էլ եթե գրավեն Թիֆլիսի նահանգի շրջանակներում որևիցե տարածք, ապա այդ դեպքում Վրաց կառավարությունը դա կհամարի ռազմական գործողությունների սկիզբ հայկական կառավարության կողմից»: Բացի այդ, Ն. Վ. Ռամիշվիլին արեց հետևյալ հայտարարությունը, որը մեջբերում ենք բառացի. «Ամեն տեսակ թյուրիմացություն ցրելու համար, հարկավոր եմ համարում հայտարարել, թե մենք Թիֆլիսի նահանգը հայտարարում ենք Վրաստանի անվիճելի տերիտորիան: Ինչպես պատմական, այնպես և դեմոկրատական սկզբունքները պահանջում են Թիֆլիսի նա-

հանգի հարցի այդօրինակ լուծումը, որը և ընդունելի է վրաց կառավարությանը»[387]:

Ըստ այդմ հենվելով կառավարության հաղորդագրության վրա և հաշվի առնելով խմբակցությունների կարծիքները, Վրաստանի պառլամենտը Հայաստանի և Վրաստանի միջև բախման կապակցությամբ իր որոշումն է ընդունում. «Վրաստանի կառավարության կողմից ընդունված միջոցները միանգամայն պարզ մատնանշում են այն, որ վրացական կառավարությունը բարեխղճորեն ցանկացել է և ցանկանում է բախման խաղաղ կարգավորում, և լրիվ հույս է հայտնում, որ կառավարությունը կձեռնարկի բոլոր միջոցները, որպեսզի կանխի արյունահեղության սարսափելի վտանգը Վրաստանի և Հայաստանի ժողովուրդների միջև:

Վրաց դեմոկրատական հանրապետական կառավարությունը համաձայն է սահմանային բոլոր վեճերը լուծել խաղաղ համաձայնությամբ, իսկ եթե անհնարին լինի՝ արբիտրաժի միջոցով: Հույս ունենք, որ այս միակ խելացի ուղին ընդունելի կլինի և Հայոց կառավարության կողմից, որով և հնարավոր կլինի ցավալի միջադեպը հարթել և վրաց ու հայ դեմոկրատիան իրենց մեջ ուժ կգտնեն երաշխիքի համար ապագայում ևս միասնական ու համերաշխ աշխատանքի»[388]:

Հաջորդող ճառով հանդես եկած Ն. Ռամիշվիլին փքուն ամբարտավանությամբ ավելացրել էր, թե ինքը «բոլոր թյուրիմացությունները վերացնելու նպատակով…Թիֆլիսի նահանգը անվիճելիորեն» համարում է Վրաստանի հող[389]: Վերը նշված հռետորներից ըստ էության չէին տարբերվում նաև վրաց սոցիալ-դեմոկրատները, որոնք ազգային հարցում կանգնած էին շովինիստների հետ միևնույն դիրքերում և գտնում էին, որ «Թիֆլիսի նահանգը իրենից ներկայացնում է Վրաստանի անվիճելի տարածքը»[390], իսկ հանուն ձևականության կոչ էին անում խաղաղ եղանակներով լուծել կամ էլ ինչպես վրաց սոցիալ-դեմոկրատ Մ. Արսենիձեն էր «նրբանկատորեն» նշում, քողածածկված մտքեր արտահայ-

[387] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 42-43.

[388] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 38, թ. 21; ց. 1, գ. 147, թ. 83:.

[389] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 220: Из истории армяно-грузинских отношений, 1918 год, стр. 42-43:

[390] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 147, թ. 83:

տելով այն մասին, որ իբր թե «իրենց կառավարությունը բոլոր միջոցները ձեռնարկել է արյունահեղության դադարեցման համար, ցուցաբերելով անսովոր համբերատարություն, նման հանգստություն և տոկունություն է ցույց տվել մեր բանակը»[391]: Մի այլ «պառլամենտյոր», սոցիալիստ-հեղափոխական Գոբեչիան կոչ էր անում, որ իրենց բոլորի համար անսովոր այդ դժբախտությունից խուսափելու համար սեփական կառավարությունը իր վրա նախաձեռնություն պետք է վերցնի ստեղծել այնպիսի միջազգային օրգան, որը միջոցներ կգտնի բոլոր հարցերի խաղաղ լուծման համար[392]: Սակայն ոչ բոլորն էին այդպես կարծես թե համեմատաբար «պարզ» ու «խաղաղասիրաբար» մտածում: Պատգամավոր Գոմարթելին իր ելույթն սկսեց՝ ասելով, որ կա մի առած, թե «որքան ուզում ես գայլին կերակրիր, նրա աչքը միշտ անտառումն է», ցանկանալով մատնանշել Լոռվա անտառները: Սակայն նա ավելի խորը գնաց, հասնելով բացահայտ վիրավորանքների, բոլոր դժբախտությունների մեջ մեղադրելով «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցությանը: Մասնավորապես իր ելույթում Գոմարթելին շեշտեց. «Մենք հնարավորություն ունեցանք համոզվելու, թե որպիսի զգացումներ է տածում այդ կուսակցությունը դեպի Վրաստանը… նրանք վարվել են այնպես, ինչպես որ պետք է վարվեին, ես պետք է Ձեզ անկեղծորեն հայտարարեմ, որ Վրաստանի թշնամիների մեջ դաշնակցականները վերջին տեղը չեն բռնում: Եթե դուք դիմում եք հայ դեմոկրատիային, դուք մոռանում եք, որ այդ դեմոկրատիային ղեկավարում է Դաշնակցությունը: Անազնիվ բան է լինել բացարձակ թշնամի, բայց երբ դաշնակցականի սիրտը սև է, նա մեզ ցույց է տալիս սպիտակ ատամները… մենք պետք է ամեն բանի պատրաստ լինենք»[393]: Ահա այսպես էին վարվում վրաց պառլամենտի պատգամավորները, անարդար մեղադրանքներ ուղղելով իրենց պատմական հայրենիքի իրավունքները պաշտպանելու համար ոտքի կանգնած հայկական դեմոկրատիայի հասցեին: Սակայն բոլորին գերազանցեց վրաց անկախ ազգային-դեմոկրատ Գ. Վեշապելին, որը քողածածկույթ ընտրելով շաբլոն ֆրազները, բառացիորեն արտաբերեց հետևյալը. «մենք՝ նացիոնալիստներս, հասկանում ենք, թե

[391] Տե՛ս նույն տեղում, գ. 147, թ. 83:
[392] Տե՛ս նույն տեղում, թ. 85:
[393] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 38, թ. 21:

հայերի քաղաքականությունը ներկա միջադեպում չի սպառնում միայն Լոռու տեսանկյունով, այլ սնվում է հայերի ավելի խոր ազգային գաղափարով: Հայաստանի պատմական ու քաղաքական պայմանները այն աստիճան աննպաստ են, որ անհնարին են դարձնում իրենց սահմաններում հայկական պետության ստեղծելը: Այդ պատճառով, պետական շինարարության ծանրության կենտրոնը հայերը փոխադրել են իրենց դրամատերերի միլիոնների օգնությամբ Կովկասի սահմանները:

Նրանց նպատակն է ձեռք բերել քաղաքական կենտրոն Վրաստանի մայրաքաղաքում, վերածելով այն Հայաստանի մայրաքաղաքի: Այդ պատճառով նրանց բովանդակ քաղաքականությունը այստեղ հանդիսանում է կռվի քաղաքականություն Թիֆլիսի համար»[394]: Այնուհետև հռետորը նշում է վրացիների մոտ ազգային քաղաքականության բացակայության մասին և խորհուրդ է տալիս «ավելի ակտիվ քաղաքականություն վարել Ադրբեջանի և լեռնական ժողովուրդների միության հետ բարեկամական հարաբերությունների հաստատման ուղղությամբ, իրենց դարավոր հարևանների հետ՝ ընդդեմ եկվոր տարրերի»[395]: Հենց այսպես, վրաց պառլամենտի պատգամավորները ոչ միայն հայերին եկվոր էին համարում և անմիջական եզրեր փնտրում ադրբեջանա-թուրքական ազգերի ներկայացուցիչների հետ, որի մասին բացեիբաց այդպես դեկլարատիվ ոչ միայն հայտարարում էին, այլև կոնկրետ քայլերի դիմում թե՛ դիվանագիտական, թե՛ ռազմական, և թե՛ մասսայական լրատվության միջոցները օգտագործելով:

Ի վերջո, սուր վիճաբանություններից հետո, Վրաստանի պառլամենտը կառավարության զեկուցման հիման վրա ընդունում է բանաձև, որում ասվում էր, որ նա «համաձայն է ամեն մի վիճելի հարցի խաղաղ լուծման, բայց ոչ ոքի թույլ չի տա խուժել Վրաստանի սահմանները զենքով և սպառնալ մեր ազատությանը»: Այդ պատճառով էլ Վրաստանի պառլամենտը հավանություն է տալիս իր կառավարության ձեռնարկած միջոցներին և անցնում հերթական գործերին[396]: Խոսքով՝ ամեն ինչ, գործով՝ ոչինչ: Սովորական վրացական ճոռոմաբանություն՝ վտանգավոր նպատակադրումներով և հակահայկական վառոդալիցքով լի:

---

[394] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 38, թ. 22:

[395] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 147, թ. 86:

[396] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 38, թ. 22:

Գ. Մարխուլիան խեղաթյուրելով փաստերը, պնդում է, որ Վրաստանի բռնած ընդգծված խաղաղասիրական դիրքորոշումը իբր թե չազդեց ընդհանուր ռազմաքաղաքական իրադրության վրա, միաժամանակ հանգելով եզրահանգման, որ Վրաստանի կառավարության կողմից թույլատրվեց անուղղելի սխալ, քանզի Հայաստանին պատերազմ չհայտարարվեց, որն էլ հիմք դրեց հայկական ագրեսիային և սկիզբ և առիթ հանդիսացավ Վրաստանի դեմ Հայաստանի կողմից ձեռնարկված հարձակման համար 1918 թվականին[397]:

Այդ նույն օրը, 1918 թ. հոկտեմբերի 26-ին, Հայաստանի խորհրդի նիստում քննարկվեց Հայաստանի կառավարության ղեկավար Հովի. Քաջազնունու հաղորդումը հայ-վրացական հարաբերությունների հարցի վերաբերյալ, ինչպես նաև Քոբերի միջադեպի մասին զեկուցումը: Մտքերի փոխանակության արդյունքում Խորհրդի կողմից ընդունվեց հետևյալ բանաձևը. «Հայ-վրացական հարցը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով Դաշնակցություն խմբակցությունն առաջարկում է հարաբերության մեջ մտնել Վրացական կառավարության հետ Հայաստանի և Վրաստանի միջև սահմանների հաստատման համար»[398]:

Այդուհանդերձ, հարցը խաղաղ եղանակով լուծելու վերաբերյալ ձեռքբերված համաձայնությունը առանձնապես լավ ըմբռնում չգտավ, քանզի կողմերը, և հատկապես վրացականը գործնական առումով հակվածություն չդրսևորեց բախման դեմն առնելու ուղղությամբ, իսկ հոկտեմբերի 26-27-ին ռազմական գործողությունները շարունակվում էին:

Այս սահմանավեճը երկու կողմերի համար էլ հղի էր աղետալի հետևանքներով: Ամերիկյան հեղինակ Ստ. Ջոնսը «Armenian review» ամսագրի էջերում ոչ առանց հիմքի նշում է, որ մինչև 1919 թ. աշունը փոխադարձ կախումը նույնպես դարձավ փոխգործողությունների առիթ, և Վրաստանի Սոցիալ-Դեմոկրատական կուսակցության և Դաշնակցության միջև քաղաքական տարաձայնությունները հանգեցրին այդ պետությունների համար առևտրի կորուստին, սահմանների պաշտպա-

[397] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах (с сокращениями), стр. 11-13: Տե՛ս նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[398] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 69-70, 74-76:

նության ծախսերին՝ ընդհանուր վտանգի դեմ երկկողմանի անվտանգության բացակայությամբ, և այդ ամենը ակնհայտ դարձավ, հենց որ նրանց սահմանների մոտ ծավալվեց ռուսական քաղաքական պատերազմը և դաշնակիցները սպառնացին դուրս գալ տարածաշրջանի սահմաններից, և ըստ էության շարունակվեց 1918 թ. մայիսից մինչև խոր աշուն, որպես վերապրելու ուղի նկատվեց ավելի շատ հեռացումը իրարից, քան համագործակցությունը միմյանց հետ[399]: 1918 թ. աշունը լի էր տագնապով, և երկու հարևան երկրները իներցիայի ուժով, կարծես թե անտես մի ուժով ներքաշվում էին պատերազմական մղձավանջի մեջ:

Ինչպես պարզվում է գեներալ-մայոր Մ. Սիլիկյանի 1918 թ. հոկտեմբերի 27-ի հաղորդագրությունից՝ ուղղված Զինվորական նախարարին, հոկտեմբերի 27-ին ժամը 3-ին և 5-ին զրահապատ գնացքը միաժամանակյա գնդացրային և հրետանային կրակ է բացել կամրջի մատույցների մոտ, հետևակային զորամասերը հարձակվել են Ծաթերի վրա: Նշվում էր նաև, որ վրացիների հարձակումը ետ է մղվել, նրանք փախել, ցրվել են, զրահապատ գնացքը ետ է քաշվել: Հաղորդագրության մեջ ընդգծվում էր, որ հրետանային կրակ չեն արձակել և վրացական պատվիրակությունը գեներալ-մայոր Կիլտ Տոլուշիձեի գլխավորությամբ Ղարաքիլիսա է ուղևորվել՝ Դրոյի հետ բանակցելու: Տեղեկատվությունը Մ. Սիլիկյանը ավարտում էր նրանով, որ ինքը գերի վրացիներին վրացական պատգամավորության խնդրանքով թույլատրել է բաց թողնել և մեկնել է Երևան[400]:

Հարկ է նշել, որ այս ռազմաքաղաքական դեպքերի և առհասարակ հայ-վրացական ռազմաքաղաքական փոխհարաբերություններում իշխող իրավիճակի վերաբերյալ թե՛ հայ և թե՛ վրացի մասնագետները արտահայտել են տեսակետներ, որոնց վրա կարելի է բևեռել ուշադրությունը և մի շարք դիտարկումներ կատարել: Այս կապակցությամբ արտահայտելով իր տեսակետը, վրաց հեղինակ Արչիլ Չաչխիանին, սեփական մեկնակետից դատելով փաստերի մասին և դրանց մեջ մտցնելով վրացական կողմի նրբերանգները, պնդում է այն մասին, որ իբր թե հայկական կառավարության կողմից հոկտեմբերյան միջադեպը նպատակ է

[399] Տե՛ս Jones Stephen F., Georgian-Armenian Relations in 1918-20 and 1991-94: A Comparison, «Armenian Review», vol. 46, № 1-4 (181-184), 1993, p. 65:

[400] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 147, թ. 60:

ունեցել ցուցադրել դաշնակցային հավատարմությունը Անտանտի երկրներին, այն էլ՝ Կենտրոնական բլոկի [այսինքն՝ Քառյակ դաշինքի կամ գերմանական բլոկի երկրների] անձնատուր լինելու նախօրյակին ընդդեմ Վրաստանի և վրացական տարածքում գտնվող գերմանական զորքերի դեմ ռազմական գործողություններ սկսելով, որոնք այդ ժամանակ դեռևս հանդիսանում էին Գերմանիայի դաշնակիցը[401]: Պատճենահանելով իր վրացական կոլեգային, Է. Անդերսենը և Գ. Էգգեն աննկատ վրացական դիրքակետ անցնելով, ընդգծում են, որ վրաց-հայկական պատերազմի երկրորդ փուլը՝ սկսվեց 1918 թ. դեկտեմբերին անմիջապես այն պահից, երբ բրիտանական զորքերը մտան Բաքու, ինչը, ըստ հեղինակների, հնարավոր է, որ պատահական համընկնում չէր[402]:

Ներկայացնելով Ռ. Հովհաննիսյանի տեսակետը, Է. Անդերսենը և Գ. Էգգեն որոշակի առումով ձևափոխելով այն և առանձին կտորներ օգտագործելով, մեջբերում են անում հայազգի պատմաբանից, և ըստ դրա ենթադրության հանգել, որ «հոկտեմբերյան միջադեպը ընդամենը հայկական ռազմավարության նպատակն էր փորձել և եթե դիմադրություն չլիներ, շարժվել ավելի հյուսիս»», «հայ ռազմագետների կողմից վրացական ուժերի փորձություն էր՝ պարզելու, թե ինչքանով լուրջ խոչընդոտների կարող է հանդիպել ձեռնարկվելիք փորձը՝ ռազմուժով Հայաստանին միացնելու վիճելի տարածքները[403]:

Սակայն վրացիներին զգաստացնելն այնքան էլ հեշտ չէր, և շատ դեպքերում էլ պարզապես անհնարին էր, և սահմանավեճը մնում էր փակուղային վիճակում: Այդ մասին են վկայում հետագա շրջանի իրադարձությունները: Այսպես, Շահալի կայարանի պետը Ղարաքիլիսայից հոկտեմբերի 28-ին կառավարությանը հաղորդագրություն է ուղարկում

---

[401] Տե՛ս Чачхиани А., Борьба за территориальную целостность Грузии в 1918-1919 годах (Армяно-Грузинская война). Диссертация на соискание научной степени кандидата исторических наук, Тбилиси, 2006, стр. 82, 84-86, 93:

[402] Տե՛ս Эндрью Андерсен, Георг Эгге, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

[403] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, Առաջին տարին, 1918-1919, էջ 75, 82:

(հոկտեմբերի 27-ի վիճակով) Լոռվա վիճակի մասին, որում տեղեկացնում էր, որ բնակչության և Վրաստանի զորքերի միջև տեղի է ունեցել բախում՝ վերջիններիս կողմից բնակչությունից անասուններ պահանջելու հողի վրա: Այնուհետև ասվում էր, որ գյուղացիները հրաժարվել են անասուն տալ: Դրա հետ մեկտեղ ավելացվում էր, որ բռնախլման «ցանկության» դեպքում նրանք զինված դիմադրություն են ցույց տվել և վրացական զորքերից խլել 2 գնդացիր: Հայտնվում էր, որ Թիֆլիսից Սանահին՝ ճակատ են ուղարկվել վրացական զորքեր, իսկ հոկտեմբերի 27-ին ուղևորվել է զրահագնացք, Սանահինից եկած ռուսների տեղեկությունների համաձայն գյուղացիները փակել են 2 զրահագնացքների ետդարձի ճանապարհը, որոնք կտրվել են իրենց զորքերից[404]:

Հոկտեմբերի 25-27-ի ընթացքում Քորինջ գյուղի մերձակայքում ռազմական գործողությունները շարունակվում են, ռազմավարական առումով կարևոր դիրքը մի քանի անգամ ձեռքից ձեռք է անցնում, և երբ իրադարձությունների ռազմական ընթացքին խառնվում է վրացական զրահագնացքը, բեկում է տեղի ունենում այդ ռազմական միջադեպում և հայկական զորամասերը հարկադրված ժամանակավորապես թողնում են Ծաթերը և Քորինջը, ինչի մասին պարզ է դառնում Հովի. Քաջազնունու հեռագրից՝ ուղղված Վրաստանի կառավարությանը, որում առաջարկվում էր սահմանավեճը լուծելու համար կոնֆերանս հրավիրել, որից էլ ելնելով հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում ժամանակավոր խաղաղ դադար տիրեց:

Վրացական վարկածի համաձայն, իրադրության վրա ազդելու իրենց փորձերը ձախողվեցին, ըստ որի Վրաստանի կառավարության կողմից պետք է ձեռնարկվեին ավելի վճռական քայլեր և Հայաստանին պատերազմ հայտարարվեր՝ կանխարգելելու հայերի նախահարձակ լինելը 1918 թ. աշնանը , որի հետ համակարծիք են վրաց պատմաբանները, այդ թվում և «հանրահայտ» պատմակեղծարար Գ. Մարխուլիան, քանզի ինչպես խոստովանում է Ն. Ժորդանիան, Բորչալուի գավառի վիճելի տարածքները գրավվել են վրացական զորքերի կողմից հենց 1918 թ. հոկտեմբերին, դրանով իսկ կոպտորեն խախտելով վրաց մենշևիկների կուսակցության VI համագումարի կողմից ընդունված բանա-

[404] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 147, թ. 24:

ձևը ազգային հարցի վերաբերյալ. «Տարածքային ինքնակառավարման սահմանները հաստատվում են այս կամ այն ազգության ռեալ տեղաբաշխման սկզբունքով, ընդ որում ի նկատի են առնվում տնտեսական և կենցաղային պայմանները: Ազգային սահմանների տեղաշարժի դեպքում պետք է կիրառվի այն տեղանքների ռեֆերենդումը, որոնք սահմանների որոշման դեպքում հանդիսանում են վիճելի»[405]:

Այդ օրերին սակայն կրքերը սաստիկ շիկացած էին, 1918 թ. հոկտեմբերը դարձավ ինչպես երկու կողմերի համար ռազմական փորձարկումների և նախապատրաստությունների փուլ, այնպես էլ իբր պատերազմից խուսափելու հնարավոր ելքի ոչ արդյունավետ և անատամ որոնումների ժամանակաշրջան: Այդ ընթացքում Հայաստանի խորհրդում թեժ քննարկումներ էին ընթանում հայ-վրացական հարաբերությունների հարցի՝ Քոբերի միջադեպի և այլ հարցերի մասին: Հ. Քաջազնունին հայտարարեց, որ հայկական զորքերը առաջ չեն շարժվի թուրքերի թողած գծից այն կողմ, որ անհրաժեշտ է հրավիրել հայ-վրացական խորհրդաժողով՝ լուծելու բոլոր տարաձայնությունները[406]:

Այդուհանդերձ, հարցը խաղաղ եղանակով լուծելու վերաբերյալ ձեռքբերված համաձայնությունը առանձնապես լավ ըմբռնում չգտավ, քանզի կողմերը, հատկապես վրացականը, գործնական առումով հակվածություն չդրսևորեցին բախման դեմն առնելու, իսկ հոկտեմբերի 26-27-ին ռազմական գործողությունները շարունակվում էին:

Եվ այդ ամենը Վրաստանի Հանրապետության մամուլի էջերում վրացիների կողմից ուղեկցվում էր հերյուրանքների հեղեղով: Հակահայկական հիստերիան շատ թանձր էր: Այդ կապակցությամբ Վրաստանում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը 1918 թ. հոկտեմբերի 29-ին նոտայով (№ 1465) դիմում է Ն. Վ. Ռամիշվիլուն: Ա. Ջամալյանը շեշտում էր, որ Վրաստանի կառավարության պաշտոնական օրգան «Սաքարթվելո Ռեսպուբլիկայի» վերջին համարներում հայտնվել են մի շարք հոդվածներ, որոնք վերաբերում էին Լոռու

[405] Տե՛ս «Борьба», Тифлис, 21 июня, 1917, N 39: Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах, Тбилиси, Тб., Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[406] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 г., стр. 36: Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 448-449:

շրջանում տեղի ունեցած ու ընթացող իրադարձություններին և գրված են ոչ բարեկամական դիրքերից Հայաստանի Հանրապետության նկատմամբ, օգտագործելով այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «վրացական զորքերը ստիպված են եղել զինված ուժ գործադրել մաքրելու համար մեր (վրացական) տերիտորիան հայկական զորքերից», և որ «մենք (վրացիներս) ստիպել ենք հայկական զորքից մաքրել մեր տերիտորիան», որի համար Ջամալյանի կողմից նշվում են «Кавказское слово»-ի 229, 231 համարները: Ավարտելով իր դիվանագիտական դիմումագիրը, Ա. Ջամալյանը այն կարծիքն էր արտահայտում, որ հենց այդ հոդվածների նման տոնով կառավարական օրգանը բնավ չի կարող նպաստել երկու հանրապետությունների միջև առաջ եկած խնդիրների և թյուրիմացությունների արագ լուծմանը, և այդպիսի հոդվածների հրապարակման անցանկալիությունն էր արտահայտում[407]:

Հակադարձելով վրացական կողմի ստահոդ քարոզչությանը, Ա. Ջամալյանը 1918 թ. հոկտեմբերի 31-ին ևս մի ուշագրավ նոտա (№ 514) է ուղարկում Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պարտականությունները կատարող Ն. Վ. Ռամիշվիլուն, որում անդրադառնում էր ինչպես Վրաստանի կառավարության հոկտեմբերի 19-ի չարաբաստիկ նոտային, այնպես էլ մինչև հոկտեմբերի 30-ն ընկած անցքերին, ներկայացնելով Հայաստանի կառավարության դիրքորոշումը հայտնի հարցերի վերաբերյալ: Դրանում մասնավորապես Ա. Ջամալյանի կողմից շեշտվում էր. «Այս նամակի հիման վրա պատիվ ունեմ Ձեզ տեղ հասցնելու Հայաստանի կառավարության կատեգորիկ հայտարարությունը, որ նա չի ձեռնարկել որևիցե քայլեր, որ կարող էին հիմք տալ ենթադրություն անել իր կողմից որևիցե ագրեսիվ մտադրությունների մասին բարեկամական Վրաստանի նկատմամբ: Հայկական զորքերի Լոռու ջոկատը հրահանգ է ստացել զբաղեցնել թուրքերի կողմից էվակուացված տարածքները, բայց ոչ անցնել նախկինում օտոմանյան զորքերի կողմից զբաղեցրած գիծը: Ոչ մեծ Քոբեր կիսակայարանի գրավման պատճառ է հանդիսացել այն հանգամանքը, որ այդ կիսակայարանում չի եղել ո՛չ գերմանական, ո՛չ վրացական պահակազոր, և հեծելապարեկին հայտնի չէր, թե դեմարկացիոն գծի ո՞ր կողմում է գտնվում Քոբերը: Գերմանա-

[407] Տե՛ս ՀԱԱ, Ֆ,Պ - 200, ց. 1, գ. 99, գ. 147, թ. 82:

կան սպայի հայտարարությունից տեղեկանալով այն մասին, որ Քոբերը վրացական կողմում է, հեծելապարեկը ետ քաշվեց: Մի այլ ոչ մեծ հեծելապարեկի հայտնվելը Վորոնցովկայում առաջ է եկել այնտեղ գտնվող վրացական և գերմանական զորաջոկատների հրամանատարների հետ բանակցությունների մեջ մտնելու անհրաժեշտությամբ, և բնավ ոչ զավթողական նպատակներով, որն ապացուցվում է Վորոնցովկայում հայտնված մարդկանց քանակով՝ 18 զինվոր մեկ սպայի հետ միասին: Հարկ է նշել, որ ինչպես վրացական, այնպես էլ գերմանական զորաջոկատները բաժանարար գծում փոքրաքանակ էին և ունեին սահմանապահ, այլ ոչ թե մարտական գործառնություններ. այսպես, վրաց-գերմանական առաջակալ զորամասը Քորինջ գյուղում ուներ ընդամենը 20 վրաց և 12 գերմանական զինվոր՝ մեկ սպայով հանդերձ: Մյուս առաջակալ զորամասերը եթե և ուժեղ էին, ապա ոչ շատ: Ծավալվող իրադարձությունների ընթացքում վրացիները և գերմանացիները Թիֆլիսից համալրումներ էին պահանջում[408]:

Այնուհետև Ա. Ջամալյանը բազմանշանակ ավելացնում է հետևյալը. «Այդ նույն նամակով ինձ տրված հրահանգների համաձայն նույնպես պատիվ ունեմ հայտարարելու, որ իմ կառավարությունը մտադրություն չունի զենքի ուժով լուծել սահմանազատման հարցերը: Հայաստանի կառավարության տեսակետն այնպիսին է, որ ոչ միայն թուրքերի կողմից էվակուացված տարածքները, այլև ընդհանրապես Բորչալուի գավառի հայերով զբաղեցրած ողջ շրջանը պետք է պատկանեն ոչ թե Վրաստանին, այլ Հայաստանին: Սակայն իր իրավունքները նշված տարածքների նկատմամբ Հայաստանի կառավարությունը մտադիր է լուծել ոչ թե զենքի, այլ դիվանագիտական առնչությունների և համաձայնության միջոցով: Մյուս կողմից, սակայն Հայաստանի կառավարությունը ոչ մի դեպքում չի կարող համաձայնվել վրացական կառավարության պահանջի հետ՝ հայկական զորքերից ազատել թուրքերի կողմից զբաղեցրած շրջանը և թույլ տալ ողջ Բորչալուի գավառի գրավումը վրացական զորքերի կողմից մինչև խաղաղ բանակցությունների սկսվելը, ինչպես դա պահանջում է Վրացական կառավարությունը: Հայաստանի կառավարությունը գտնում է, որ չպնդելով վրացական զորքերի

[408] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 3-4:

կողմից հայկական տարածքների անհապաղ ազատագրման վրա և համաձայնվելով այդ տարածքի մասին հարցը դարձնել բանակցությունների առարկա, նա դրանով իսկ տալիս է իր խաղաղասիրության լավագույն ապացույցը»[409]:

Անշուշտ, ուրբաթն ավելի շուտ եկավ, քան շաբաթը, ինչը ցույց տվեցին ապագա ռազմական գործողությունները: Վրացիների ռազմատենչ կրքերը էլ ավելի բորբոքվեցին հենց հոկտեմբերին տեղի ունեցած ռազմական բախումների ժամանակ: Վրաց հեղինակների կարծիքով, հոկտեմբերյան միջադեպի ժամանակ հայկական կողմի հաշվարկները կառուցված էին Դաշնակիցների կողմից ակնկալվող աջակցության վրա, որն ըստ այդմ վստահ ռազմական գործողություններ ծավալեց ընդդեմ այդ պահին դեռևս ձևականորեն Գերմանիայի դաշնակից համարվող Վրաստանի և վերջինիս տարածքում գտնվող գերմանական զորքերի դեմ[410]: Ռ. Հովհաննիսյանը այն կարծիքին է, որ դրանով «Հայաստանը վերահաստատեց հսկողությունը հարավային Լոռու վրա, չնայած ավելի հյուսիս խորանալու փորձերը ցույց տվեցին, որ Վրաստանը հակահարված կտար, և որ գերմանական ազդեցությունը դեռևս չի կարելի անտեսել: Ի վիճակի չլինելով պարտադրելու իր վերջնագիրը Երևանին, մենշևիկյան կառավարությունը գործեց զուսպ և և չնախաձեռնեց ոչ մի պատասխան քայլ»,[411], և գնաց այլ՝ զարտուղի ուղիով:

Ս. Մդիվանուց ստացված տեղեկությունների հիման վրա, Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրությունը դեռ 1918 թ. հոկտեմբերի 27-ին պաշտոնապես դիմում է Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանին նամակով: Դա հոկտեմբերի 27-ի Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Ն. Վ. Ռամիշվիլու հայտնի դիմումագիրն էր Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնականների կառավարություններին (№ 1500): Այդ փաստաթղթում ընդգծվում էր. «Համաշխարհային պատերազմը մոտենում է իր ավարտին և կասկած չկա, որ մոտ ապագայում կգա մի պահ, երբ համաշխարհային կոնգրեսում կվճռվեն ընդհանրապես ժողովուրդների ճակատագրերը, և մաս-

[409] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 4, գ. 16, թ. 263ա:

[410] Տե՛ս Армяно-Грузинская война (1918)-Адамалла www.adamalla.com› ...› Библиотека› Кавказ:

[411] Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, էջ 78-83:

նավորապես նախկին Ռուսաստանյան կայսրությունից առանձնացված ժողովուրդներինը: Այդ իսկ պատճառով այդ կոնգրեսում Անդրկովկասի և Կովկասի ժողովուրդները պետք է հանդես գան միասին: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի Անդրկովկասի և Կովկասի պետությունների կառավարությունները պայմանավորվեն համատեղ բարեկամական ելույթի պայմանների մասին…Այդ կոնգրեսին դեմ հանդիման պետք է պատրաստ լինեն հանդես գալու համերաշխ ու բարեկամ Անդրկովկասի և Կովկասի ժողովուրդները, քանի որ միայն այդ դեպքում նրանց ձայները, որպես փոքր ժողովուրդների և նոր պետական կազմավորումների, կարող են կշիռ և նշանակություն ունենալ:

Այդ նկատառումով անհրաժեշտ է, որպեսզի Անդրկովկասի և Կովկասի պետությունների կառավարությունները պայմանավորվեն ինչպես այդպիսի համերաշխ ելույթի, այնպես էլ միմյանց միջև փոխադարձ բարենպաստ բարիդրացիական գոյակցության համար՝ ներծծված փոխադարձ վստահության և պատրաստակամության ոգով՝ մեկը մյուսին օգնության հասնելու համար:

Այդ նպատակներով Վրացական Հանրապետության կառավարությունը առաջարկում է Հայկական և Ադրբեջանական Հանրապետությունների կառավարություններին, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի լեռնական ժողովուրդների միության կառավարությանը Թիֆլիսում հավաքվել կոնֆերանսի, նոյեմբերի 3-ին ժամը 12-ին, ցերեկը (նշում. հետագայում Վրացական կառավարությունը կոնֆերանսի հրավիրումը հետաձգեց մինչև նոյեմբերի 10-ը, այդ մասին տեղյակ պահելով Հայաստանի կառավարությանը), Արտաքին Գործերի մինիստրության շենքում (Երմոլովյան 9), ուղարկելով անհրաժեշտ օրինական լիազորություններով օժտված երկուական ներկայացուցիչ այդ կոնֆերանսին:

Ընդ որում Վրացական Հանրապետության կառավարությունը որոշել է կոնֆերանսի լուծմանը դնել հետևյալ հարցերը.

1. Կոնֆերանսին հրավիրված պետությունների անկախության փոխադարձ ճանաչում.

2. Բոլոր վիճելի հարցերի լուծում, չբացառելով և սահմանների մասին վեճերը՝ շահագրգռված պետությունների համաձայնությամբ, իսկ այդպիսի համաձայնության բացակայության դեպքում՝ արբիտրաժի միջոցով.

3. Փոխադարձ պարտավորություն չմտնելու որևիցե պետության հետ համաձայնության մեջ՝ ի վնաս կոնֆերանսին մասնակցող ժողովուրդներից որևիցե մեկի.

4. Փոխադարձ աջակցությամբ համերաշխ ելույթ համաշխարհային կոնգրեսում՝ պետությունների անկախության ճանաչման և ընդհանուր շահերի պաշտպանության նպատակներով:

Որպես պատասխան խնդրում եմ ինձ նախօրոք տեղյակ պահել»[412]:

Դիմումագիրը ստորագրվել էր Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պարտականությունները կատարող Ն. Վ. Ռամիշվիլու և գրասենյակի դիրեկտոր Լորդկիպանիձեի կողմից, և ինչպես բնութագրում է հենց վրաց գործիչ Ջուրաբ Ավալովը, Ռամիշվիլու ստորագրած փաստաթուղթը հիշեցնում էր մի քիչ Ներքին Գործոց նախարարի շրջաբերական, քան միջազգային կարևոր հուշագիր[413]: Իրավացի էր Ա. Ջամալյանը, երբ գրում էր, որ դրա մեջ «ամենախտացած ձևով հանդէս էր գալիս վրացական հեգեմոնիայի զգացումը և այդ զգացումով պայմանաւորուած արհամարհանքը դէպի հարեւան պետութիւնները…»[414]: Հարկ է նշել, որ այս դիմումագիրը ըստ էության հիշեցնում էր յուրահատուկ դիվանագիտական փաստաթուղթ, որի միջոցով Վրաստանը սկսեց ոչ առանց հաջողության մանևրել, ժամանակ շահել, առավել ևս եթե նկատի ունենանք, որ կոնֆերանսի տեղն ու ժամը, ինչպես նաև օրակարգը որոշվել էր առանց հաշվի առնելու մյուս պետությունների կամքը: Աշխարհաքաղաքական իրադարձությունների պատմաքննական համադրումը ցույց է տալիս, որ այս քայլով Վրաստանը ձգտում էր ժամանակ շահել և իր համար պարզել հաղթանակած երկրների իրական դիրքորոշումը Անդրկովկասի հանդեպ, և մինչև Գերմանիայի պարտությունը, Վրաստանը ամենևին էլ չէր շտապում կոնֆերանս հրավիրելու ուղղությամբ քայլեր ձեռնարկել՝ փորձելով հասկանալ իր հեգեմոն դիրք ձեռք բերելու հնարավոր տարբերակները: Սակայն լիո-

---

[412] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 428-429: Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 3-4:

[413] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 220-221: Տե՛ս նաև Авалов З. Д., Независимость Грузии в международной политике. 1918-1921 гг., стр. 167:

[414] Տե՛ս Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք» ամսագիր (Բոստոն), փետրվար, 1929, N 4, Է տարի, էջ 93: Տե՛ս նաև Авалов З. Д., Независимость Грузии в международной политике. 1918-1921 гг., стр. 428-429:

վին ակնհայտ էր, և դա դժվար չէր նկատել, որ առաջին հերթին այն նպատակաուղղված էր Հայաստանի դեմ, և վերջինիս մոլորեցնելու նպատակ էր հետապնդում, և հայերի մոտ վրացիների կողմից Անդրկովկասում գերիշխանություն հաստատելու տպավորություն էր թողնում, չնայած Ռ. Հովհաննիսյանը ենթադրություն է անում, որ իբր թե «այս հրավերը ամենայն հավանականությամբ դիտավորություն չուներ վիրավորանք պատճառել», այնուհետև ինքն իրեն քիչ հակասելով, նշում. «բայց և այնպես, վիրավորանք պատճառեց: Առանց նախնական մասնակցության, Վրաստանն ինքն էր որոշում խորհրդաժողովի ժամանակը, վայրը, մասնակիցների կազմն ու օրակարգը, չնայած նույնիսկ այն փաստին, որ մյուս կառավարությունների ներկայացուցիչները այդ ժամանակ Թիֆլիսում էին գտնվում»[415]: Դա լիովին ակնհայտ էր, քանի որ Կովկասյան լեռնականները և Ադրբեջանը ընդհանուր եզրեր ունեին Վրաստանի հետ, դրանց հնարավոր ռազմաքաղաքական համերաշխումն ընդդեմ Հայաստանի՝ հանուն Կովկասյան տան մեջ իրենց խնդիրների լուծման, բնականաբար հայկական կողմի համար անհասկանալի այս դիմումագիրը կասկածների մեջ գցեց՝ տագնապներ հարուցեց Կովկասյան լեռնականների և Ադրբեջանի կողմից Վրաստանին ցուցաբերվելիք ռազմաքաղաքական աջակցության խնդրում վիճարկելի տարածքները իր կազմում պահելու տեսանկյունից: Միաժամանակ, հայկական կողմը փորձեց որոշ խնդիրներ լուծել՝ հույսը դնելով վրացական կողմի ողջախոհության վրա, և սահմանագծման խրթին հիմնախնդիրները լուծել անմիջապես պահանջատեր պետությունների՝ Վրաստանի և Հայաստանի միջև կայացրած փոխհամաձայնեցված որոշումով, ինչն էլ հնարավորություն կտար գործնականում խուսափել ընդհանուր խորհրդաժողովում պետությունների ռազմաքաղաքական խմբակցություն ստեղծելուց: Այդ պայմաններում հնարավոր էր Կովկասյան Լեռնականների և Ադրբեջանի փոխպայմանավորվածություն Ելիզավետպոլի և Երևանի նահանգների վիճարկելի տարածքների նկատմամբ, և ստեղծված իրավիճակում մահմեդական պետական կազմավորումները ստանալով ակնկալվող քաղաքական-բարոյական աջակցությունը Վրաստանի դեմոկրատական հանրապետության կող-

[415] Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, էջ 99-100:

մից, փոխարենը տալով իրենց ռազմաքաղաքական աջակցությունը Վրաստանին իր հավակնություններում Թիֆլիսի նահանգի հարավային շրջանների հայաբնակ բնակավայրերի նկատմամբ: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական կարևորություն էր ներկայացնում Լեռնականների հանրապետության, Թերեքի և Դաղստանի հնարավոր համախմբման խնդիրը, և քանի որ հայ քաղաքական-հասարակական շրջաններում դեռ թարմ էին ինչպես Էնվեր փաշայի և մի շարք ազդեցիկ թուրք գործակալ-սպաների ոչ հայանպաստ գործունեության մասին հիշողությունները և Անդրկովկասյան կոմիսարիատի ժամանակաշրջանում ադրբեջանա-թուրքական զինակցության և նրանց դավաճանական քաղաքականության հետևանքով Կարսի և այլ կարևոր բնակավայրերի թուրքերին հանձնելու մասին փաստը, ուստի հայկական կողմը զգուշավոր մոտեցում ցուցաբերեց վրացիների կողմից կազմակերպվող համակովկասյան վեհաժողովի հրավիրմանը, հակվելով դեպի երկկողմանի համաձայնության կողմը և այդպիսով կոնֆերանսին հայկական մասնակցությունը երկրորդ պլան մղվեց: Հայաստանը նաև ցանկություն չուներ Եվրոպայում կայանալիք վեհաժողովում հարել վրացիների կողմից առաջարկվող որևիցե ռազմաքաղաքական բլոկի, քանզի դրա անհրաժեշտությունը չէր տեսնում: Վայելելով եվրոպական ընտանիքում իր աճող հեղինակության և ընդունված լինելու հանգամանքը, իսկ հակաթուրքական, ընդդեմ Թուրքիայի համաանդրկովկասյան զինակցությունից հրաժարվելու, վրացական մերժողականության և թուրք-վրացական համաձայնության պայմաններում մնացած գաղափարները հայկական կառավարական և ռազմական շրջանների համար ընդամենը անհեթեթություն էին:

1918 թ. հոկտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովհ. Քաջազնունին ևս մեկ անգամ դիմելով Վրաստանի Հանրապետության մինիստր-նախագահ պ. Ռամիշվիլուն, ի պատասխան վերջինիս հոկտեմբերի 25-ի երեկոյան Երևանում ստացված (№ 5277) հեռագրի (առանց ամսաթվի և համարի), շեշտում էր, որ «հայկական զորքերին խիստ հրաման է տրված զբաղեցնել միայն թուրքերի կողմից լքված դիրքերը: Հրամանը կրկնված է: Մասնավորապես, կարգադրություն է արված մաքրել Ծաթեր-Քորինջը, որոնք գրավվել են հավանաբար թյուրիմացաբար կամ պաշտպանության նպատակներով: Բարե-

հաճե՛ք ձեր կողմից կարգադրություն անել ընդհատել վրդովեցուցիչ գործողությունները և վրացական զորքերի տագնապ ներշնչող տեղաշարժերը: Սահմանների մասին հարցի խաղաղ լուծման համար առաջարկում եմ հրավիրել Հայ-Վրացական կոնֆերանս»[416]: Վրացական կողմի համար Հայաստանի նկատմամբ նման ռազմավարությունը կառուցվում էր՝ հաշվի առնելով վերջինիս համար աշխարհաքաղաքական գործոնի բոլոր հնարավոր պլյուսները և մինուսները:

Հոկտեմբերի 31-ին որպես պատասխան Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատար Ջամալյանը Վրաստանում համապատասխան նոտա է ուղարկում վրացական կողմին (№ 1488): Դրանում ասվում էր, որ ի պատասխան հոկտեմբերի 27-ի առաջարկության (№ 1500) ինքը պատիվ ունի իր կողմից հայտնելու, որ նշված առաջարկի պատճենը իր կողմից ուղարկված է սուրհանդակի միջոցով Երևան՝ անհրաժեշտ հրահանգավորումներ ստանալու համար: Հաղորդելով այդ մասին և իմանալով կառավարության մշտընդյա ձգտումը ամրապնդելու բարեկամական հարաբերությունները հարևան պետությունների, այդ թվում Վրաստանի հետ, - ընդգծում էր ՀՀ դիվանագիտական հավատարմատարը, - ինքը վստահություն է հայտնում, որ նաև Վրաստանի կողմից առաջարկված մտքերը կհանդիպեն Հայաստանի կառավարության սկզբունքային լրիվ համակրանքին: Միաժամանակ ՀՀ դիվանագիտական հավատարմատարը իր պարտքն էր համարում ավելացնել, որ վրացիների կողմից առաջադրված գաղափարի հաջող իրագործումը զգալի չափով կշահեր ինչպես կոնֆերանսի առարկայի, այնպես էլ դրա տեղի ու ժամանակի նախօրոք քննարկումից ու բանակցություններից, եթե այդպիսի նախնական քննարկում իրականում տեղ գտներ[417]: Փաստորեն, ստացվում էր այնպես, որ եթե անգամ Հայաստանի Հանրապետությունը գործնականում և իրապես կամեցողություն և քաղաքական կամք դրսևորեր, իրոք չէր կարողանա մինչև նոյեմբերի 3-ը պատվիրակություն կազմեր և ուղարկեր Թիֆլիս նաև այն պատճառով, քանի որ կային հաղորդակցության և փոխադրության հետ կապված լուրջ դժվարություններ: Ավելացրած դրան այն

[416] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии..., стр. 449:

[417] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 4:

հանգամանքը, որ հենց այդ պատճառներով՝ միայն նոյեմբերի 7-ին, խորհրդաժողովի բացման ընտրված օրից չորս օր հետո, վրաց կառավարության կողմից ուղարկված նոտան հասավ Երևան[418]: ՀՀ դիվանագիտական հավատարմատարի առջև խնդիր դրվեց վրաց քաղաքական ղեկավարներին համոզել հայ-վրացական կոնֆերանս անցկացնելու անհրաժեշտության մեջ, որի գլխավոր խնդիրները կլինեին սահմանային-տարածքային խնդիրների լուծումը, տնտեսական-հաղորդակցության, ընդհանուր շահերը և այլ հարցեր:

Այս ամենը Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև հասունացող պատերազմական իրավիճակից խուսափելուն միտված քայլ էր հիշեցնում: Պատերազմի մղձավանջը հետապնդում էր երկու հանրապետություններին: Ռ. Հովհաննիսյանը գտնում է, որ ռազմաքաղաքական «բախումը երկու հանրապետություններին ծաղրի առարկա դարձրեց այն քաղաքական հակառակորդների և թերահավատների համար, ովքեր հարցականի տակ էին դնում անկախ պետությունների կայացումը Կովկասում: Եվ իրապես, երկու շաբաթվա անփառունակ պատերազմը սասանեց օտարերկրյա աջակիցների և համակրող պաշտոնական անձանց հավատը»[419]: Ռ. Հովհաննիսյանի այս գնահատումին հարկ է վերապահումով մոտենալ: Խնդիրը նրանում է, որ դաշնակիցների քաղաքական վայրիվերումների կամ համակրական դիրքորոշումնրի խորքային պատճառները որոնվում են երկրորդական նշանակության գործոնների խորքային ծալքերում: Պատմաքննական վերլուծությունները ակնբախորեն վկայում են, որ Ռ. Հովհաննիսյանի մատնանշած դաշնակիցների պաշտոնատար անձանց անդրկովկասյան ժողովուրդների, և այդ թվում հայերի նկատմամբ հավատի ու համակրանքի մարումը կամ ուժեղացումը քաղաքական քարտեզի վրա ուժերի դասավորվածության խորքային պայմանավորվածության արտացոլանք էին, կամ էլ կախվածության մեջ էին գտնվում տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացների և նրբին դիրքային ելևէջումների հետ, այլ ոչ թե պարզապես Անդրկովկասում տեղի ունեցող այս կամ այն գործընթացի անհաջող դրսևորումների հետ:

---

[418] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии..., стр. 429:

[419] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, էջ 99:

1918 թ. նոյեմբերին Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև ընթացան բանակցություններ և տեղի ունեցան երկխոսություններ բախումից խուսափելու համար: Այդ օրերին Երևանում էր գտնվում Վրաստանից ՀՀ մայրաքաղաք գործուղված որպես հատուկ լիազորված անձ, վրացական պառլամենտի անդամ Սեմյոն [Սիմեոն] Գուրգենի Մդիվանին Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով[420]: Բացի այդ, Ս. Մդիվանուն հանձնարարվել էր Հայաստանի ղեկավարներին համոզել Համակովկասյան կոնֆերանս անցկացնելու անհրաժեշտության մեջ, որի գլխավոր խնդիրները կլինեին տարածքային խնդիրների լուծումը, խաղաղության ամրապնդումը, տարածաշրջանային կոլեկտիվ անվտանգության մեխանիզմների մշակումը և այլն[421]:

Միաժամանակ, Վրաստանի կառավարության կողմից որոշակի «նախաձեռնողականություն» դրսևորվեց Հարավային և Հյուսիսային Կովկասի պետությունների մասնակցությամբ հրավիրել կոնֆերանս, նվիրված «ընդհանուր, կենսական հարցերի լուծմանը, այդ թվում և սահմանազատման»: Հեն այդ նպատակին էր ծառայում Երևան գործուղված Ս. Մդիվանին[422]:

Վրաստանի կառավարության կողմից ծրագրված կոնֆերանսի օրակարգում առաջարկվում էր դնել հետևյալ հարցերը.1) Այն պետությունների անկախության ճանաչումը, որոնք կմասնակցեն կոնֆերանսին.

2) Վիճելի հարցերի լուծում, չբացառելով և սահմանների մասին հարցը՝ շահագրգռված երկրների փոխադարձ համաձայնությամբ: Այս կամ այն հարցի վերաբերյալ կոնսենսուսի բացակայության պարագայում հարցերի լուծում արբիտրաժի միջոցով.

3) Փոխադարձ պարտավորվածության ձեռքբերում ոչ մի տեսակի համաձայնության մեջ չմտնել երրորդ երկրների հետ՝ ի վնաս կոնֆերանսին ներկայացված ժողովուրդների շահերի.

4) Կոնֆերանսի բոլոր մասնակից պետությունների համատեղ, փոխադարձ աջակցության վրա հիմնված ելույթ 1919 թվականի սկզբին

---

[420] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 44:

[421] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 17 դեկտեմբերի, 1918 թ., N 21:

[422] Տե՛ս նույն տեղում:

պլանավորված «համաշխարհային կոնգրեսում»[423] իրենց անկախության միջազգային ճանաչման և ընդհանուր շահերի պաշտպանության համար[424]:

Սակայն ինչպես ակնհայտ դարձավ իրադարձությունների զարգացման հետագա ընթացքից, Հայաստանի կառավարությունը ամենևին էլ գոհ չմնաց վեհաժողովի հրավիրման վրացական նախաձեռնողականության գաղափարից, առավել ևս Ա. Ջամալյանի «խուսափողական» պատասխանները լարված նյարդային լիցքեր էին հաղորդում կոնֆերանսի հրավիրման շուրջ ծավալված խոսակցություններին ՀՀ կառավարության ներսում, սրելով տագնապալից և անորոշ վիճակը, որից էլ ելնելով Հայաստանի օրենսդիր մարմինը ևս՝ ՀՀ խորհուրդը կամ պառլամենտը հանդես եկավ մի շարք սկզբունքային առարկություններով, որոնք հանգում էին հետևյալին. 1) Հայկական կողմը դժգոհություն էր արտահայտում այն առումով, որ Վրաստանի կառավարությունը միակողմանիորեն և առանց նախնական քննարկման նշանակել է կոնֆերանսի անցկացման ժամանակը և տեղը, հայկական կողմի համար բավարար ժամանակ չթողնելով նախապատրաստական աշխատանքների և պատգամավորության ժամկետին ներկայանալու համար, ինչը հիմնական պահանջն էր, 2} Հայկական կառավարությունը նաև ցանկություն չուներ և համաձայն չէր Թիֆլիսում պլանավորված հրավիրվելիք կոնֆերանսում քննարկել սահմանների մասին հարցը:

Պատասխան նամակում Ա. Ջամալյանը հայտնեց Ե. Գեգեչկորուն, որ առաջարկները կարժանանան Հայաստանի կառավարության լրիվ համակրանքին: Սակայն միաժամանակ Ջամալյանը ավելացրել էր, որ առաջարկված գաղափարները ավելի կշահեին, եթե նախապես համատեղ քննարկվեին բանակցությունների նպատակները և խնդիրները, ինչպես նաև կոնֆերանսի ժամանակը և անցկացման վայրը[425]: Դրան Գեգեչկորին պատասխանում է, որ ցանկության դեպքում նախապես առաջարկվող հարցերից բացի, մասնակիցները կարող են քննարկման ներկայացնել այլ հարցեր[426]:

---

[423] Նկատի է առնվում Փարիզում հրավիրվելիք մեծ տերությունների վեհաժողովը:

[424] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 46:

[425] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, стр. 429:

[426] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 13, թ. 7:

Սակայն կապի բացակայության հետևանքով Երևանյան ռադիոկայանն այս առաջարկները ժամանակին չի ստանում, դրանք տեղ են հասնում ուշացումով, և այդ իսկ պատճառով էլ կոնֆերանսի հրավիրումը հետաձգվում է մինչև նոյեմբերի 10-ը[427]: Հարկ է ասել, որ այս խնդրի նկատմամբ միանշանակ մոտեցում չկար նույնիսկ վրացական կողմում, և նրանց առավել զգոն և հեռատես քաղաքական-հասարակական գործիչները փորձում էին ըմբռնել իրավիճակի լրջությունը: Այսպես, Երևանում Վրաստանի պատասխանատու լիազոր ներկայացուցիչ Ս. Մդիվանին Թիֆլիս ուղարկված իր ճեպագրերում նշում էր, որ ինքնին կոնֆերանսի հրավիրման մասին վրացական առաջարկի ֆորմատը՝ ձևաչափը, բողոքի զգացում է առաջ բերել ոչ միայն հայ քաղաքական գործիչների և պաշտոնյաների մոտ, այլև նույնիսկ հայկական Սփյուռքի ազդեցիկ ներկայացուցիչների շրջանում, որոնք դրանում տեսնում են որպես Վրաստանի կողմից փորձ գերակշռող դեր խաղալ նոր կովկասյան պետությունների մեջ: Եվ եթե առաջին պահանջում հայկական կողմի դժգոհությունը հանգուցալուծվեց դրական առումով՝ բանակցությունների միջոցով, որում պոզիտիվ դեր խաղաց Մդիվանու երևանյան առաքելությունը, որը պարզաբանումներ տվեց կոնֆերանսի անհապաղ հրավիրման դրդապատճառների խնդրում՝ կապված տարածաշրջանում արագորեն փոփոխվող քաղաքական իրողությունների հետ, ապա Հայաստանի կատեգորիկ պահանջագիրը օրակարգից հանելու սահմանազատման և սահմանների հետ կապված հարցերը՝ մնաց անփոփոխ և չբավարարվեց վրացական կողմից:

Ակնհայտ է Հայաստանի Հանրապետության խաղաղասիրական դիրքորոշումը սահմանավեճում և մնացյալ հարցերում, սակայն բացահայտորեն Վրացական կառավարությունը լուրջ ուշադրություն չդարձրեց այս և այլ դիմումագրերի վրա, շարունակեց օգտագործել անդրկովկասյան ժողովուրդների կոնֆերանս հրավիրելու քողածածկույթը, ներքուստ նախապատրաստվելով իրադարձությունների զարգացման այլ ընթացքի: Այդ մասին է վկայում Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի նոր պաշտոնակատար Եվգենի Գեգեչկորու 1918 թ. նոյեմբերի

[427] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии..., стр. 449-450:

5-ի նոտան (№ 4599)՝ հասցեագրված Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատարին: Դրանում մի քիչ ավելի ճկունորեն, քան հոկտեմբերի 31-ի տարբերակում, վրացական կողմն արդեն ոչ միայն նշում էր, որ կոնֆերանսում քննարկվող հարցերի ծրագիրն ունի նախնական նախագծի բնույթ, այլև ընդգծվում էր, որ կոնֆերանսի մասնակիցների ցանկության դեպքում նրանք հնարավորություն ունեն քննարկման դնել այլ հարցեր, բացի իրենց կողմից նախագծվածներից: Վերջնամասում նրբանկատորեն սքողելով հակասությունները, Ե. Գեգեչկորին փարիսեցիորեն վստահություն էր հայտնում, որ «գործի շահերը կգերակայեն մաքուր ձևական բնույթի նկատառումների նկատմամբ և Անդրկովկասի բոլոր ժողովուրդների համար այդքան անհրաժեշտ կոնֆերանսը կկայանա»[428]: Ինչպես Ռամիշվիլու, այնպես էլ այս դիմումագիրը համապատասխան քննության արժանացավ Հայաստանի խորհրդարանում, ստացավ որոշակի գնահատական և հասարակական արձագանք, որին կանդրադառնանք առանձին:

1918 թ. նոյեմբերի 8-ին Հայաստանի խորհուրդը լսելով անդրկովկասյան կոնֆերանսին Հայաստանի մասնակցության հարցը, ընդունեց հետևյալ որոշումը. «…Խորհուրդը գտնում է, որ կոնֆերանսը նոյեմբերի 10-ին չի կարող կայանալ, քանի որ վրացական կառավարության կողմից այդ հարցի վերաբերյալ նախնական աշխատանքներ չեն անցկացվել հարևան պետությանը վայել կարգով, և այնուհետև կոնֆերանսին հրավերքը ուշ է ստացվել…Դրա հետ մեկտեղ Հայաստանի խորհուրդը գտնում է, որ Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև սահմանների որոշման մասին հարցը չի կարող առնչություն ունենալ անդրկովկասյան կոնֆերանսի հետ, այլ պետք է որոշվի այդ երկու հանրապետությունների միջև համատեղ համաձայնության ճանապարհով և մինչև անդրկովկասյան կոնֆերանսի հրավիրումը»[429]: Հարկ է ասել, որ անգամ մինչ այդ ավելի զգույշ և ոչ վճռական դիրք գրաված հայ սոցիալ-դեմոկրատական խմբակցությունը բարկացավ վրացական ամբարտավանությունից և մենշևիկ Աբրահամ Մալխասյանը վճռականորեն դատապարտեց Ն. Ժորդանիայի կառավարության «մենատիրական

[428] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 4:

[429] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 88-92:

ձգտումները» և նրա գործունեությունը գնահատում է որպես հավասարության սկզբունքների խախտում և վկայություն, որ մի կառավարություն կամենում է ուրիշների վզին փաթաթել իր կամքը: Խորհրդի որոշումը ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Ֆ. Տիգրանյանը հանձնեց Ս. Մդիվանուն, միաժամանակ էլ այդ նոտայի տեքստը ուղարկվեց Թիֆլիս՝ Հայաստանի դիվանագիտական հավատարմատարին[430]:

Գ. Մարխուլիան նենգափոխելով իրականությունը, պնդում է, որ Հայաստանի կառավարությունը հիմնավոր կերպով տագնապում էր, որ կոնֆերանսի օրակարգում դրված տարածքային հարցերը լուծվելու են ոչ հօգուտ Հայաստանի, այդ իսկ պատճառով էլ ձգտում էր խուսափել մասնակցությունից: Եվ ավելին, ըստ վրացի հեղինակի անկանխատեսելի ֆանտազիայի՝ հենց այդ դրդապատճառներով էլ իբր թե ՀՀ կառավարությունն իր պաշտոնական նոտաներում պնդում էր, որ անդրկովկասյան կոնֆերանսը ևս լիազորված չէ վճռելու հայ-վրացական տարածքային հարցերը:[431]: Ինչպես տեսնում ենք, վրացական մոտեցումը իր երկակի ստանդարտներով աղավաղված է մոտենում հարցերին:

ՀՀ Դաշնակցական կառավարության դիրքորոշումը կոնֆերանսի նկատմամբ արտացոլվել է նաև ՀՅԴ օրգանում «Զանգ» թերթում. «Առաջին հայացքից թվում է, որ վրացական ղեկավարության առաջարկը ոչ միայն ընդունելի է, այլև միանգամայն ժամանակին, այնպես որ մեզ մնում է միայն արտաբերել ողջույնի խոսքեր այդ առումով: Սակայն դիտարկելով օրակարգի հարցերը և ուշադրությունը բևեռելով այն տոնի վրա, որով վրացական կառավարությունը դիմում է հարևան պետություններին, մենք համոզվում ենք, որ և այս անգամ մենք գործ ունենք վրաց մենշևիկներին հատուկ ամբարտավանության և խորամանկության հետ: Մի րոպե մտածենք, որ վրացական կառավարությունը առանց ետին մտքի համոզված է նման կոնֆերանսի անհրաժեշտության մեջ և անկեղծորեն նկատի ունի կովկասյան ժողովուրդների ընդհանուր շահերը,- սակայն միթե՞ հանդուրժելի է առաջարկության այն տոնը, որով

[430] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 222:

[431] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах (с сокращениями), стр. 15-16, 31: Տե՛ս նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

նա դիմում է հարևան պետություններին, և մի թե՞ չկա այլ հաստատված ձև, որը սովորաբար կիրառվում է միջազգային հարցերի վիճարկման՝ դեբատի միջոցով: Վրացական կառավարությունը, հարևան պետություններին առաջարկելով կոնֆերանս, կարծես թե նկատի չի ունեցել այն կարևոր հանգամանքը, որ ինքը գործ ունի իր երկրին հավասար հանրապետությունների հետ, այլ ոչ թե վասալների հետ: Այլապես նա նախապես կգար համաձայնության հարևան պետությունների հետ ոչ միայն կոնֆերանսի օրակարգի վերաբերյալ, այլ նաև կոնֆերանսի ժամանակի և հրավիրման տեղի մասին: Իր հին սովորույթի համաձայն վրացական մենշևիկյան կառավարությունը և այս անգամ ուշադրություն չդարձրեց այլ ժողովուրդների իրավունքներին և ոտնահարեց նրանց ինքնասիրությունը: Հակառակ դեպքում նա կկանգներ իրավական հողի վրա և նախապես կկազմավորեր միջազգային հանձնաժողով, որը քննարկման կենթարկեր կոնֆերանսին վերաբերող բոլոր հարցերը»[432]:

Այսպիսով, ակնհայտ է, որ Հայաստանի ղեկավարների դժգոհությունը պայմանավորված էր Վրաստանի նախաձեռնությամբ Անդրկովկասյան կոնֆերանսի հրավիրման առաջարկի հետ, որը հայ առաջնորդների կարծիքով, տեղի էր ունեցել առանց նախապես տեղեկացնելու ՀՀ պետական գործիչներին, որն էլ ըստ Գ. Մարխուլիայի «քաղաքականապես ոչ հասուն դաշնակցական լիդերները անհամատեղելի էին համարել իրենց արժանապատվությանը, որպես ինքնուրույն պետության, որ դրանով Վրաստանը ցանկացել է ցույց տալ իր տիրապետող դիրքը կովկասյան պետությունների մեջ»[433]:

Այդ ընթացքում, 1918 թ. նոյեմբերի 8-ին Ս. Մդիվանին Երևանից Թիֆլիս հեռագիր ուղարկեց, հայտնելով, որ կոնֆերանսը չի կարող բացվել, քանի որ հրավերքը ստացվել է ընդամենը նոյեմբերի 7-ին, առավել ևս որ Հայաստանի Հանրապետության կառավարական շրջան-

[432] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 93, թ. 21 (Քաղվածք «Զանգ» թերթից, 12 նոյեմբերի, 1918 թ., № 70 և № 72):

[433] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

ներում դեռևս որոշում չի ընդունվել հայկական պատվիրակության մասնակցության մասին[434]:

Այդուհանդերձ, նախօրոք ծրագրված համակովկասյան կոնֆերանսը Թիֆլիսում 1918 թ. նոյեմբերի 10-ին բացվեց, որի առաջին նիստը բացեց Ն. Ն. Ժորդանիան, որը հանդես եկավ ողջույնի խոսքով: Վրաստանը ներկայացնում էին Արտաքին Գործերի նախարար Եվգենի Պ. Գեգեչկորին և Ներքին Գործերի նախարար Նոյ Ռամիշվիլին, Ադրբեջանը ներկայացնում էին Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Մուհամեդ Յուսուֆ Ջաֆարովը և դոկտոր Մուստաֆա բեկ Վեքիլովը, հյուսիսկովկասյան Լեռնականների հանրապետությունը ներկայացնում էին [Միավորված Լեռնականների Միություն] Փշեմախո Կոցևը և Վասսան-Ղիրայ Ջաբաղին[435]:

Հայաստանի Հանրապետությունը պարզապես ներկայացված չէր, որն էլ պատճառ դարձավ, որ կոնֆերանսը իր աշխատանքները չսկսի, այն հետաձգվեց մինչև նոյեմբերի 14-ը, ինչի մասին էլ Ն. Ժորդանիան տեղեկացրեց Ս. Մդիվանուն, նա էլ նոյեմբերի 11-ին՝ Ս. Տիգրանյանին:

Ի պատասխան, Ս. Մդիվանին Ն. Ռամիշվիլուն հասցեագրված հաղորդագրության մեջ նշում էր, որ հայերը դեռ պատրաստ չեն կոնֆերանսին, որ նրանք ցանկանում են տեղեկացվել լեռնական ժողովուրդների լիազորությունների և կազմի, ինչպես նաև Ադրբեջանի կառավարության վերաբերմունքի մասին կոնֆերանսի նկատմամբ, իր կառավարությանը առաջարկելով գործի շահերից ելնելով առ ժամանակ հետաձգել կոնֆերանսի աշխատանքները՝ երկու շաբաթով կամ ծայրահեղ դեպքում՝ տասն օր, մինչև որ ինքը և հայոց պատվիրակները լուծեին մի շարք կարևոր խնդիրներ[436]: Իսկ այդ ժամանակ արդեն ՀՀ Արտաքին Գործերի նախարար Սիրական Տիգրանյանը հստակ հայտարարարել էր, որ Հայաստանը չի մասնակցի որևէ խորհրդաժողովի, որտեղ կշռադատվեն տարածքային խնդիրներ[437]: Այս ամենին կարելի է ավելացնել նաև, որ ըստ Գ. Մարխուլիայի ստահոդ և հակագիտական վարկածի,

[434] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 49-52:

[435] Տե՛ս там же, стр. 53:

[436] Տե՛ս там же, стр. 48-49, 53-54:

[437] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 430:

դաշնակցականները կոնֆերանսին մասնակցությունը ձգձգում էին, որովհետև իբր թե սպասում էին անգլիացիների ժամանմանը[438]: Այնուհետև Գ. Մարխուլիան անդրադառնում է Մդիվանու առաքելությանը, վրացական կողմին ներկայացնելով որպես Հայաստանի և Վրաստանի միջև կայուն խաղաղության հաստատմամբ շահագրգռված կողմի՝ անդրադառնալով Վրաստանի կողմից ձեռնարկված քայլերին: Անդրկովկասյան վեհաժողովի հրավիրման ժամանակ միջնորդական առաքելությամբ հանդես եկող Մդիվանին Լոռու և Ախալքալաքի խնդրով հանդիպումներ է ունենում Հայաստանի կառավարության հետ, որի ընթացքում ձևավորվում են որոշակի տեսակետներ: Նոյեմբերի 12-ին Մդիվանուն հրավիրում են խորհրդակցության երկու պետությունների համար վիճարկելի տարածքային հարցերի քննարկման համար: Ս. Տիգրանյանի և Գ. Խատիսյանի մասնակցությամբ բանակցությունների արդյունքում ձևակերպվեց որոշակի պահանջ՝ Հայաստանին զիջել Ախալքալաքի գավառը, Գորիի գավառի մի մասը, և այդ շրջանում սահմանը պետք է հասներ մինչև Ցխրա-Ցկարո, և Բորչալուի գավառի մեծ մասը: Հայկական այդ պահանջի հիմքում ընկած էր էթնիկական սկզբունքը, և այդ կապակցությամբ Ալ. Խատիսյանը հիշեցրել էր Ս. Մդիվանուն, որ դեռ 1917 թ. վրաց սոցիալ-դեմոկրատները խոստացել են իրենց տալ հենց այդ տարածքները[439]: Ս. Մդիվանին հայ կուսակցական-քաղաքական գործիչների պահանջներին ի պատասխան հայտնել է, որ հայտարարությունները, որոնք արվել են դեռևս 1917 թ., և առհասարակ մինչև 1918 թ. մայիսի 26-ը, չեն կարող ներկայումս, փոփոխված քաղաքական իրադրությունում, ընդունվել որպես պայման երկու հանրապետությունների միջև սահմանային հարցերի լուծման համար, ավելացնելով, որ այդ ժամանակ խոսքը գնացել է ընդամենը միասնական Ռուսաստանյան պետության «ժողովուրդների ներքին տարանջատման» մասին, և որ հենց այդ չափանիշն է պայմանավորել վրաց սոցիալ-դեմոկրատների հայտարարությունների փոփոխությունը, որ Կովկասում տեղի ունեցած վերջին արտակարգ քաղաքական փոփոխությունները հայ-

[438] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах (с сокращениями), стр. 17: Տե՛ս մանրամասն նաև http://iberiana,wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[439] Տե՛ս նույն տեղում:

կական կողմի հայտարարություններն անհիմն են դարձնում: Ս. Մդիվանին գալիս է այն եզրահանգման, որ խոսքը գնում է երկու հանրապետությունների պետական սահմանների մասին, այդ իսկ պատճառով ակնհայտ է, որ միայն ազգային-էթնիկական սկզբունքը անբավարար է այդ հարցի լուծման համար, Վրաստանը ռազմավարական նկատառումներով կարող է նույնիսկ պահանջել Հայաստանի հյուսիսային մասը, բայց հրաժարվում են Փամբակի և Ղազախի նկատմամբ իրենց տարածքային հավակնություններից, քանզի թուրքական սպառնալիքը վերացել է, և սակայն չեն կարող զիջել Լոռին և Ախալքալաքը: Հետագա հանդիպումների ժամանակ այլ զարգացումներ եղան, և մասնավորապես Տիգրանյանի և Քաջազնունու կողմից առաջարկ եղավ զիջումների գնալ, եթե Վրաստանը Հայաստանին աջակցություն ցուցաբերի Լեռնային Ղարաբաղի խնդրում, ինչը չի կարող անել Արևմտահայաստանի խնդրում: Մդիվանին առարկում է, ասելով, որ իրենց ունեցած կապերը Եվրոպայի և հատկապես սոցիալիստական շրջանների հետ առավել օգտակար կարող են լինել դեպի արևմուտք Հայաստանի Հանրապետության ծավալման ծրագրերի իրականացման գործում[440]:

Գ. Մարխուլիան շարունակելով քաղաքական բառախաղը, և կոպտորեն ոտնահարելով պատմաքննության սկզբունքները, պնդում է, որ դեռ 1917 թ. Վրաստանի ներկայացուցիչների հայտարարություններում ոչ ոք չի հայտարարագրել, որ Ախալքալաքի և Բորչալուի գավառները կազմելու են Հայաստանի անքակտելի մասը: Գ. Մարխուլիան ընդգծում է, որ վրաց լիդերների հայտարարություններում եղել է սոսկ այն փաստի հաստատագրումը, որ այդ գավառներում հայկական բնակչությունը գերակշռում է և արդարացի էին համարում այդ բնակչությանը հնարավորություն տալ կազմակերպվել Ռուսաստանի կազմում, որպես ինքնուրույն կուլտուր-տնտեսական միավորներ: Եվ ի վերջո, Մարխուլիան համառում է իր պնդման մեջ, գտնելով որ խոստումները եղել են բանավոր, այսինքն, ոչ մի բանաձև, ոչ մի ստորագրված վճիռ, ոչ մի համաձայնություն հայերի հետ Թիֆլիսի և այլ նահանգների սահմաններում գտնվող հողերից նրանց զիջման մասին խոսք անգամ չի կարող լինել: Այսպիսով, ըստ Գուրամ Մարխուլիայի, Հայաստանի կառավարության

[440] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год. стр. 63-67:

պահանջները հենված չեն եղել որևիցե համաձայնության վրա, քանզի դրանք գոյություն չեն ունեցել[441]:

Հասկանալի է, որ նորօրյա «Մարխուլիաների» նախատիպերը կային նաև 1918-1920-ական թվականներին: Այնուհետև, տարածքային հարցի շուրջ բանակցություններում Ս. Մդիվանին հայկական կողմին հայտարարում է, որ հոգուտ Թիֆլիսի նահանգի և Վրաստանի Հանրապետության կազմում դրա բոլոր մասերի ընդգրկման վկայում է նաև այն հանգամանքը, որ այն բաժանվում է հարևան նահանգից բնական սահմաններով, այն է՝ Ախալքալաքի գավառում որպես ջրբաժան գիծ և լեռնագագաթ Բորչալուի գավառում [10000 ֆուտ]: Այդ սահմանները, ըստ Մդիվանու, պետք է առավել ընդունելի և ցանկալի լինեն պետությունների համար: Մդիվանին գտնում էր, որ ողջ Թիֆլիսի նահանգը և նրա բոլոր առանձին մասերը պատմականորեն և ձևավորված առանձնահատկությունների ամրության, բնակչության կուլտուր-տնտեսական կենցաղի հետևանքով, լիովին հակված են դեպի Վրաստան և նրա կենտրոնը՝ Թիֆլիս, դրանց հետ կապակցվելով մեկ ամբողջական նահանգի մեջ: Այնուհետև Մդիվանին պնդում էր, որ էթնիկական սկզբունքի անցկացումը, չնայած առաջադրվող այլ պայմանների՝ բնական սահմանների, պատմական պայմանների և հաստատագրված կենցաղի, այստեղ խաղում է միայն ապակազմակերպող դեր, առանց անհրաժեշտության խախտելով տարածքային միավորի ամբողջականությունը և միասնությունը: Իսկ ինչ վերաբերում է Փամբակի և Ղազախի շրջաններին, ապա նկատի ունենալով այն պայմանները, որոնց շնորհիվ դրանք ձեռք են բերել ռազմավարական նշանակություն Վրաստանի համար [թուրքերի հարևանությունը], այժմ անցել են, և չնայած պատմության մեջ գոյություն ունեցող դրանց կապերին Վրաստանի հետ, Վրաստանի կառավարությունը այժմ անհրաժեշտ չի գտնում պնդել դրանց ընդգրկման մասին իրենց երկրի կազմում, քանի որ մնացած բոլոր հարաբերություններում նրանց հակվածությունը Վրաստանին և նրա կենտրոնին, սուր կերպով արտահայտված չեն, սակայն Ախալքալաքի և Բորչա-

[441] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах, Тбилиси, Тб., Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http://iberiana,wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

լուի գավառները օրգանապես կապված լինելով Վրաստանի հետ՝ նրա համար անհրաժեշտ են, և այդ սկզբունքային դրդապատճառներով Վրաստանի կառավարությունը, ցավոք սրտի, չի կարող Հայաստանին զիջել Ախալքալաքի և Բորչալուի գավառները[442]:

Ըստ Գ. Մարխուլիայի, ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Ֆ. Տիգրանյանը Մդիվանու հետ զրույցներից մեկում հայտարարել է, որ Հայաստանը կարող է զիջել Վրաստանին Ախալքալաքի և Բորչալուի գավառները, եթե Վրաստանը աջակցի Հայաստանի Հանրապետության կառավարությանը նրա մտադրության մեջ վերջինիս միացնելու Ղարաբաղը և Ղազախի գավառի լեռնային մասը: Մդիվանին, բնականաբար, ոչ մի խոստում չի տալիս, սակայն կտրուկ բացառում է ընդդեմ Ադրբեջանի Հայաստանի կողմից ակնկալվող պատերազմում մասնակցության հնարավորությունը: Այդ հարցը հետագայում էլ մնում է օրակարգում: Վրաստանի կառավարական շրջաններում իսկույն ևեթ բացառեցին Հայաստանի հետ ռազմական դաշինքի հնարավորությունը, որի մասին Մդիվանին տեղեկացնում է Ս. Տիգրանյանին: Այդ ընթացքում նաև հայ-վրացական ռազմական պաշտպանական դաշինքի տարբերակ է առաջարկվում ընդդեմ Թուրքիայի, որը կրկին անընդունելի է լինում Վրաստանի համար, քանի որ այն անցանկալի էր սկզբունքորեն, և խոսքը վերաբերում էր Արդահանի, Ախալցխայի և Կարսի մարզերի պատկանելիության խնդրին[443]: Այս պարագայում փաստերն անառարկելիորեն վկայում են, որ հայ-վրացական հարաբերությունների բախումնակետը սահմանատարածքային հիմնախնդիրն էր:

Այնպես, որ 1918 թ. նոյեմբերի 14-ին երեք հանրապետությունների հավաքվելը դարձյալ արդյունք չտվեց, հայերը դարձյալ ներկայացված չէին կոնֆերանսում: Դրանից վրդովված, Ադրբեջանի ներկայացուցիչ Մ. Յ. Ջաֆարովը հայտարարեց, որ հարկավոր է առանց հայերի սկսել կոնֆերանսը, որին ի պատասխան վրաց պատվիրակ Ն. Ռամիշվիլին խորհուրդ տվեց բավարարվել հարցերի ոչ պաշտոնական քննարկումներով, մինչև հայերի հայտնվելը, որի պարագայում արդեն պաշտոնական բնույթ տալ ընդունված որոշումներին, որին, իհարկե, Ջաֆարովը հակառակվեց և հարցը կրկին փակուղի մտավ: Համաանդրկովկասյան

[442] Տե՛ս նույն տեղում:
[443] Տե՛ս նույն տեղում:

կոնֆերանսի հարցն, անշուշտ, օրակարգում էր: 1918 թ. նոյեմբերի 14-ին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Ե. Պ. Գեգեչկորին հեռագրում է Ս. Մդիվանուն. «Գաղտնի. կոնֆերանսի հրավիրման ձգձգումը բարդացնում է առանց այն էլ բարդ դրությունը, որում հայտնվել է մեր հանրապետությունը: Ծայրահեղ անհրաժեշտ համարելով Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությունը նրանում, մենք որոշել ենք վերջին փորձը կատարել նրանց ներկայացուցիչներին կոնֆերանսի հրավիրելու, որը չի կարող հետաձգվել նոյեմբերի 20-ից այն կողմ… Ընդ որում, ձեզ հանձնարարվում է անմիջական բանակցություններում հայկական կառավարությանը հասկացնել տալ, որ նրանց ներկայացուցիչների բացակայության դեպքում մենք ստիպված կլինենք անհրաժեշտաբար կոնֆերանսը սկսել առանց նրանց մասնակցության»[444]:

1918 թ. նոյեմբերի 17-ին Ս. Մդիվանու և Ս. Տիգրանյանի միջև կայացած բանակցությունների արդյունքում կարծես թե ձեռք բերվեց ինչ-ինչ համաձայնություն մասնակցելու կոնֆերանսին, սակայն հայկական կողմը պայման դրեց, որ օրակարգում տարածքային հարցեր չլինեն: Այդուհանդերձ, հայկական պատվիրակությունը չհասցրեց Թիֆլիս ժամանել, և Ս. Մդիվանին նախազգուշացրեց իր կառավարությանը հապաղման պատճառների մասին և առաջարկեց կոնֆերանսը հետաձգել մինչև նոյեմբերի 27-ը:

1918 թ. նոյեմբերի 19-ին Ս. Մդիվանու հետ հանդիպման ժամանակ, որին մասնակցեցին վարչապետ Հ. Քաջազնունին, Ս. Տիգրանյանը և նրա տեղակալ Մ. Կիրակոսյանը, քննարկվեցին երկու երկրների համար վիճարկելի տարածքային հարցեր: Բանակցությունների ժամանակ Հ. Քաջազնունին հայտարարեց, որ Հայաստանի կառավարությունը չի կարող հրաժարվել իր հավակնություններից Ախալքալաքի և Բորչալուի գավառների նկատմամբ, նաև արտահայտելով տարակուսանք, որ Վրաստանը հավակնություններ ունի այդ գավառների նկատմամբ[445]: Մդիվանին կարծում էր, որ Հայաստանը Լոռի-Ախալքալաքի նկատ-

[444] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии …, стр. 434-435:

[445] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах, Тбилиси, Тб., Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: //http://iberiana,wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

մամբ իր պահանջատիրությունից կհրաժարվի, եթե աջակցություն ստանա Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ իր տարածքային հարցերում: Մդիվանին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորուց երկդիմի հրահանգներ էր ստացել, մի կողմից իբր թե անհրաժեշտ լինի, նկատի ունենալ հնարավոր սահմանային-տարածքային ճշգրտումներ Լոռիում, գնալ երկկողմանի բանակցությունների, մյուս կողմից էլ՝ անհրաժեշտության դեպքում՝ հակաառաջարկ-պահանջարկ ներկայացնել հայկական կողմին՝ ոչ մի դեպքում Վրաստանի հանրապետության ոչ մի շահ զիջման չի ենթարկվի[446]:

Այս տեսանկյունից կարելի է կարևորել Վրաստանի կառավարության նոյեմբերի 21-ի նիստը, որում քննարկվեց Հայաստանին աջակցելու բնույթի մասին հարցը: Վրաստանի կառավարությունը միանգամից բացառեց Ադրբեջանի և Թուրքիայի հետ ռազմաքաղաքական առկա առնչությունների պարագայում Հայաստանին ռազմական աջակցության ցուցաբերումը, ընդամենը որոշվեց Հայաստանին աջակցել Փարիզի խաղաղության կոնֆերանսի ժամանակ: Կառավարության նիստի կողմից ընդունված արձանագրության մեջ ընդգծվեց հետևյալը. «…Մոտիկությունը հայերի հետ մեզ անհրաժեշտ է, եթե մենք, երկու քրիստոնյա ժողովուրդներս, չենք կարող միմյանց հետ պայմանավորվել, ապա դա կասկածի տակ կարող է դնել Վրաստանի կարողունականությունը ինքնուրույն գոյություն ունենալ և այդ հանգամանքը վատ տպավորություն կստեղծի Եվրոպայում: Մենք պետք է նպատակ դնենք՝ միավորել Թուրքական և Ռուսական Հայաստանը և ձգտել, որ Հայաստանի քաղաքական կենտրոնը տեղափոխվի Թուրքահայաստան: Դրանով մենք կօգնենք հայերին դեպի Սև ծով ելք գտնել, եթե գործն այդպես գնա, ապա Հայաստանը չի նեղվի և դրանով իսկ հեշտությամբ կլուծվի սրված հայվրացական հարաբերությունների հարցը»: Գ. Մարխուլիան Վրաստանի այս դիրքորոշումը համարում է ամոթալի ի պատասխան դաշնակցականների դավաճանական քայլերի, որոնց նպատակն էր իբր թե Վրաստանի դուրս մղումը իր պատմական տարածքներից[447]: Սակայն

[446] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 62:

[447] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http://iberiana,wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

քաղաքական իրադրությունը 1918 թ. նոյեմբերի 22-ին դաշնակիցների ռազմածովային ուժերի Բաթումիում ափ իջնելով՝ շուտով փոփոխության ենթարկվեց, և՛ Վրաստանի, և՛ Հայաստանի միմյանց հետ փոխհարաբերությունների բուն բովանդակությունը փոխվեց:

Հարկ է ասել, որ հայկական հաշվարկները գլխավորապես ուղղորդվեցին դեպի Անտանտի երկրները: Այդ ընթացքում կոնֆերանսը ըստ Ե. Գեգեչկորու նոյեմբերի 22-ի հեռագրի, որպես ամենավերջին ժամկետ հետաձգվեց մինչև նոյեմբերի 30-ը, որի մասին Ե. Գեգեչկորին նոյեմբերի 22-ին տեղեկացրեց Ս. Մդիվանուն[448], այդ ընթացքում վրացական կողմը համաձայնվեց դաշնակցական առաջնորդների հետ՝ տարածքային հարցերը անդրկովկասյան կոնֆերանսի քննարկմանը չդնել: Գ. Մարխուլիայի կարծիքով, բրիտանացիների Բաթումի ժամանելը ոգևորեց հայերին իրենց հակավրացական և հակաադրբեջանական ծրագրերի իրականացման գործում[449]:

1918 թ. նոյեմբերի 28-ին ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Ֆ. Տիգրանյանը իր մոտ է հրավիրում Ս. Գ.Մդիվանուն, և հայտնում, որ «…պառլամենտական շրջաններում ցանկություն է որոշակիացել նրանից ստանալ պաշտոնական գրավոր առաջարկ Հայաստանի և Վրաստանի միջև սահմանների հաստատման մասին»[450]:

Իսկ նոյեմբերի 29-ին Ս. Մդիվանին լիազորություններ ստանալով Հայաստանի հետ կնքելու նախնական սահմանային համաձայնագիր, ՀՀ Արտաքին Գործերի նախարարին է ներկայացնում Վրաստանի կառավարության դիրքորոշումը սահմանատարածքային հարցի վերաբերյալ. «Վրացական Դեմոկրատական Հանրապետության կառավարության հանձնարարությամբ պատիվ ունեմ Ձեզ տեղեկացնել, պ. Մինիստր, որ Վրացական Հանրապետության կարծիքով Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև սահմանագիծը պետք է անցնի նախկին Թիֆլիսի նահանգի հին սահմանով, այսինքն այն գծով, որ ներկայումս բաժանում է Ախալքալաքի և Բորչալուի գավառները նախկին

[448] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 58.

[449] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 275, ց. 5, գ. 55, թ. 191; Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http://iberiana,wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[450] Տե՛ս Мархулия Г. Р., там же:

Երևանի նահանգից, նախկին Ալեքսանդրապոլի գավառի հարավային կողմից, իսկ արևելյան կողմից՝ այն գծով, որ Բորչալուի գավառը տարանջատում է նախկին Ելիզավետպոլի նահանգի նախկին Ղազախի գավառից, և խնդրում ենք Ջեզ մեզ տեղեկացնել, կա արդյոք որևիցե առարկություն Հայաստանի Հանրապետության կողմից ընդդեմ սահմանի այդպիսի ուղղվածության, և ինչպիսին է այդ առարկությունը…»[451]:

Ըստ Գ. Մարխուլիայի ստահոդ պնդման, ՀՀ կառավարությունը իրականում չի ձգտել գնալ սահմանավեճի խաղաղ լուծման, և ողջ նոյեմբեր ամսվա ընթացքում համագործակցելու ցանկության պատրանք է ստեղծել, բավարարվելով նոտաներով, պաշտոնական հայտարարագրերով և դեկլարացիաներով, սակայն այդ ամենին զուգահեռաբար նախապատրաստվել է պատերազմի[452]:

Ըստ վրաց հեղինակների, այդ թվում և Գ. Մարխուլիայի կարծիքով, ստացվում էր, որ միակ հնարավոր ելքն այդ իրադրությունից այն էր, որ Հայաստանի Հանրապետությունը պարզապես հրաժարվեր հինավուրց հայկական տարածքների՝ Ախալքալաքի և Բորչալուի գավառների նկատմամբ իր տարածքային իրավունքներից: Սակայն հայկական կողմն ամենևին էլ չէր պատրաստվում գնալ նման զիջման. Այսպես, 1918 թ. դեկտեմբերի 1-ին Ս. Տիգրանյանը ընդգծելով իրենց հավատարմությունը ազգագրական սկզբունքին, որ 1917 թ. ընթացքում և մասամբ 1918 թ. հարգվել էր վրացիների կողմից, Վրաստանի դիվանագիտական հավատարմատարին ուղարկված հեռագրում ընդգծում է հետևյալը. «Ախալքալաքի գավառը ամբողջությամբ և Բորչալուի գավառի մեծ մասը, դրանցում հայկական բնակչության բացարձակ գերակշռությամբ, հանդիսանում են Հայաստանի անքակտելի մասը, միաժամանակ, Բորչալուի գավառի հյուսիսային և Թիֆլիսի հարավային մասը՝ ընդհուպ մինչև Թիֆլիս, չնայած այդ շրջանում հայկական բնակչության գերակշռությանը վրացականի նկատմամբ, մտցված է Վրաստանի կազմի մեջ՝ Վրաստանում հայերի ազգային-կուլտուրական ինքնորոշման երաշ-

[451] Տե՛ս նույն տեղում: Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 7:

[452] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

խիքների հաշվարկով: Ձեր նոտայում գծված նոր սահմանագիծը էապես և զգալի չափով խախտում է ի վնաս Հայաստանի Հանրապետության Վրաստանի և Հայաստանի այն տարածքային տարանջատումը, որի վրա կանգնած էր ու կցանկանայի կանգնել և այսուհետև: Ի հարգանս ինչպես դրա հիմքում ընկած սկզբունքների, այնպես էլ վրացական և հայկական շրջանների կայացած համաձայնության, Հայաստանի կառավարությունը չի գտնում ընդունելի ձեր կողմից առաջարկված սահմանների ուղղվածությունը նկատառումով, բազմիցս շարադրված խորհրդակցություններում և բավականաչափ հայտնի վրացական կառավարությանը»[453]: Ակնհայտ է, որ հայկական կառավարությունը պնդում էր պետական սահմանագծի որոշման էթնիկական սկզբունքի վրա, այն դեպքում, երբ Վրաստանի հանրապետության համար ցարական վարչատարածքային բաժանումն էր տարածքների ձևավորման միակ ընդունելի հիմքը:

Ժամանակն իր որոշ նրբերանգներն է մտցնում այս հանդիպումների քննարկման բովանդակության մեջ. 1918 թ. դեկտեմբերի 2-ին կրկին հանդիպում են Ս. Մդիվանին և Ս. Տիգրանյանը, փորձելով ձեռք բերել որոշակի պայմանավորվածություն, որի մասին համապատասխան հաղորդագրություն է հղվել Թիֆլիս Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրությանը. «Երեկ, Տիգրանյանի հետ հանդիպման ժամանակ մենք պայմանավորվեցինք Ախալքալաքը Վրաստանին զիջելու մասին: Այդ համաձայնության հիմքում դնելով այն պայմանը, որ եթե Հայաստանը Թուրքիայից ստանա իր հողերի գոնե կեսը: Վրաստանն իր հերթին պայմանավորվում է այդ հարցում պաշտպանել Հայաստանին»[454]: Սակայն այս քայլը հաջորդում չի ունենում և փոխզիջման տարբերակը չի գտնվում, չնայած Մդիվանին և Տիգրանյանը մեկ անգամ ևս հանդիպում են իրար, արդեն դեկտեմբերի 7-ին՝ Մդիվանու Թիֆլիս մեկնելուց մեկ օր առաջ, հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրը Մդիվանուն հրահանգել էր ընթացող բանակցությունների ժամանակ հայկական կողմի ուշադրությունը շեղել դեպի Արևմտահայաստանի տարածքների կողմը:

[453] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 69-70:

[454] Տե՛ս там же, стр. 75:

1918 թ. դեկտեմբերի 3-ին կրկին հանդիպում են Ս. Մդիվանին և Ս. Տիգրանյանը, քննարկման առարկա դարձնելով սահմանային-տարածքային և հայ-վրացական ռազմաքաղաքական համագործակցության հարցերը: Հանդիպման ժամանակ Տիգրանյանը Հայաստանի կառավարության պատրաստակամությունն է արտահայտում Վրաստանին զիջել Ախալքալաքի գավառը, եթե Հայաստանը ստանա թեկուզև թուրքական մարզերի մի մասը: Իր հերթին Մդիվանին պատրաստակամություն արտահայտեց Հայաստանին զիջել Բորչալուի գավառի Լոռու տեղամասը: Հաջորդ օրը կողմերը պետք է որոշեին Բորչալուի գավառի սահմանները, սակայն այդ նույն օրը միանգամայն հանկարծակի Ս. Մդիվանին ստանում է Ս. Տիգրանյանի հեռագիրը, որում ուղղակի ասվում էր. «Այսօրվա մեր հանդիպման ժամանակ Ձեր հաղորդումներից տեղեկանալով, որ Վրաստանի հանրապետության կառավարությունը նշանակել է Ախալցխա-Ախալքալաքի [շրջանի] գեներալ-նահանգապետ և միջոցառումներ է նախապատրաստում Ախալքալաքի ռազմական գրավման համար, Հայաստանի Հանրապետության կառավարության անունից բողոքում եմ ընդդեմ հիշյալ գործողությունների, ուղղված Հայաստանի տարածքային իրավունքների դեմ Ախալքալաքի գավառի նկատմամբ»[455]: Սույն նոտան ուղարկվում է Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրին: Տվյալ իրավիճակում վստահությունը պայմանավորված էր նաև այլ գործոններով, ընդ որում հայերը հաշվարկներ ունեին բրիտանական ռազմական ներկայության հետ կապված[456]:

Եվ այսպես, ՀՀ պատվիրակությունը կոնֆերանսին չներկայացավ, որի մասին կոնֆերանսին ամեն անգամ հաղորդվում էր գլխավորապես Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի միջոցով, որպես Հայաստանի Արտաքին Գործերի նախարարության անունից բացատրություն, պատճառը համարելով Երևանի և Թիֆլիսի միջև վատ երկաթուղային հաղորդակցությունը և այլ պատճառներ բերելով, որի հետևանքով ՀՀ ներկայացուցիչները իբր հնարավորություն չունեին սահմանված ժամկետում ժամանելու Վրաստանի մայրաքաղաք[457]:

---

[455] Տե՛ս там же, стр. 77:

[456] ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 93, թ. 122 (Թերթային քաղվածք «Նոր Հորիզոն», 1918):

[457] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год. стр. 55.

Դարձյալ հարցը չհանգուցալուծվեց. կոնֆերանսի բացումը հետաձգվեց մինչև նոյեմբերի 20-ը, այնուհետև՝ մինչև նոյեմբերի 30-ը և այլ ժամկետներով, սակայն տարբեր պատճառներով և պատրվակներով հայկական պատվիրակության ժամանումը կոնֆերանսին չկայացավ, և բերված փաստարկները գրեթե նույնն էին՝ սահմանային հարցերի հանում օրակարգից, Թիֆլիս գնացող գնացքի բացակայություն և այլն: Հայկական կողմը անընդհատ հետաձգում էր իր ժամանումը Թիֆլիս, և արդյունքում՝ կոնֆերանսի աշխատանքները ձախողվեցին: Այսպիսով, անդրկովկասյան խորհրդաժողովը ցրվեց առանց պաշտոնապես գումարվելու, և չհաջողվեց որևիցե դրական հանգուցալուծման գալ, և հետագա դեպքերի ավելի ծայրահեղորեն դրսևորվելու նախապայմաններ ստեղծվեցին՝ մինչ Հայաստանի և Վրաստանի հանրապետությունները կմտնեին աղետալի պատերազմի թոհ ու բոհի մեջ:

1918 թ. դեկտեմբերի 5-ին Մդիվանին մեկնեց Երևանից Թիֆլիս, ներկայացնելով իր հաշվետվությունը՝ խորհրդատվություն-հանձնաբարականներով: Մդիվանին մեկնելով, Ս. Տիգրանյանից խոստում ստացավ, որ նա առանց հապաղման կհետևի իրեն Թիֆլիս, ֆրանսիական ներկայացուցչին դիմավորելուց և Երևանի նահանգից թուրքական զորքերի դուրսբերման վերաբերյալ խնդիրները կարգավորելուց անմիջապես հետո[458]: Սիրական Տիգրանյանը համաձայնվելով երկկողմանի հարաբերությունների մեջ մտնել Վրաստանի կառավարության հետ, համոզվածություն էր հայտնել, որ հապաղումը երկու շաբաթից ավելի չի տևի[459]: Դրանով Հայաստանի ու Վրաստանի միջև պատերազմը կանխելու փորձերը և՛ ուշացան, և՛ գործնականում առանձնապես լուրջ չընկալվեցին: Դարձյալ իրադարձությունները այլ կերպ դասավորվեցին: Երևի թե հենց այդ պահից Վրաստանի կառավարությունը ուշացած տեղեկացրեց Հայաստանի կառավարությանը իր պատրաստակամության մասին կոնֆերանսի օրակարգից բացառել սահմանների մասին հարցի քննարկումը: Սակայն հարցն այս անգամ ևս փակուղի է մտնում, գործնականում վրացական կողմի հետ համաձայնություն չի կայանում: Հանգամանքներն իրենց չարաբաստիկ դերն են խաղում, քանզի հերթական հեռագիրն այս անգամ դիվերսիոն գործողության հետևանքով հե-

[458] Տե՛ս там же, стр. 114-116:

[459] Տե՛ս там же, стр. 60-61, 69:

ռագրագծի վրա ուշացումով է տեղ հասնում: Հեռագրի տեքստը կրկնակի, այս անգամ, ռադիոյով է ուղարկվում, սակայն դա տեղի է ունենում միայն դեկտեմբերի 14-ին, երբ արդեն չարաբաստիկ պատերազմը սանձազերծվել էր[460]:

Եվ շուտով կոնֆերանսի հրավիրման և աշխատանքների կազմակերպման սևեռուն վրացական գաղափարը պարզապես հոդս է ցնդում, այն պարզապես չի կայանում, այն ցրվում է, առանց պաշտոնապես գումարվելու, և հիմնական մեղքը գցվում էր հայերի վրա: Ցավոք սրտի, այդ կարծիքին է նաև Ռիչարդ Հովհաննիսյանը, ըստ որի անդրկովկասյան խորհրդաժողովի «վիժեցման պատասխանատվությունը նշանակալի չափով ընկնում էր հայերի վրա[461]», ինչի հետ համակարծիք չենք, քանզի ակնհայտ է վրացական կողմի մեղսակցությունը կոնֆերանսի ձախողման խնդրում, որի արդյունքում հարևան երկու պետությունները չկարողացան համաձայնության եզրեր գտնել սահմանազատման հիմնախնդրում և հետագա դեպքերը ծայրահեղ բնույթ ընդունեցին:

Արդյունքում՝ կանխել պատերազմը, չհաջողվեց: Պատերազմի մեքենան շարժվում էր գլխապտույտ արագությամբ, և կովկասյան նախկին երկու «բարեկամ» ժողովուրդների կանգնեցնում քաղաքական և ռազմական բնույթի նորանոր աղետների ու փորձությունների առաջ: Իրադարձությունները և դեպքերը զարգանում էին անսովոր արագությամբ, ոչ ստանդարտ սցենարով:

Ըստ Սայմոն Մասխարաշվիլու, պատմական Լոռու տարածքը դարձավ վիճարկելի իբր թե այն պատճառով, որ 1918 թ. նոյեմբերին Վրաստանը կորցրեց իր ռազմավարական դաշնակից Գերմանիային և նրա դաշնակիցներին, անձնատուր լինելով Անտանտի երկրներին, ինչը թուլացրեց նրա դիրքերը Հարավային Կովկասում, որից էլ անհապաղ օգտվեցին հարևանները, և մասնավորապես Հայաստանի Հանրապետությունը: Հայ-վրացական սահմանագիծը դարձավ թեժ կետ, և ըստ վրացական վարկածի, դրան նպաստեց Մեծ Բրիտանիայի հայամետ դիրքորոշումը, որը իբր թե հիասթափվել էր Վրաստանից նախկինում բռնած գերմանամետ ռազմավարության համար, ինչպես նաև այն էական պատճառով, որ Վրաստանում իշխում էին բրիտանացիների հա-

[460] Տե՛ս там же, стр. 60:

[461] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, էջ 104:

մար անցանկալի սոցիալիստները, ինչը, մեղմ ասած չփաստարկված վարկած է, քանզի իրենց քաղաքական կշռով վրաց սոցիալիստները չէին կարող իրական հետաքրքրություն ներկայացնել բրիտանական կողմի համար: Մյուս կողմից, վրաց մի շարք պատմաբաններ իրենք իրենց հակասելով, այդուհանդեձ համաձայնվում են ընդունել բրիտանական կառավարության պրոհայկական միջամտության չափազանցվածության հանգամանքը, և գրում, որ Բրիտանիան գործնականում հրաժարվել է միջնորդական առաքելությունից, և միաժամանակ առանձնապես չի էլ ձգտել խրախուսել հայերին հասունացող հակամարտության ընթացքում, բողոքելով, որ դիվանագիտական առումով Վրաստանը բավականաչափ վստահ չգործեց, չնայած որոշակի ռազմական հաջողություններին[462]:

Ի վերջո, Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև այդ նույն բրիտանական միջամտությամբ հաջորդիվ հաստատվում է հրադադարի վիճակ, կնքվում է զինադադար և այլն, չնայած վրաց պատմաբանները դրանից էլ են դժգոհություն արտահայտում, գտնելով, որ դրա հետևանքով Վրաստանը զրկվեց ոչ մեծ, սակայն իբր թե «ամենահին վրացական տարածքից»՝ պատմական Լոռուց, դա համարելով պատմական աղետ Վրաստանի համար, և դա էլ այն դեպքում, երբ վրացական բանակը իբր թե մարտերում փոշիացրել էր հայկական զորքերին, կանգնեցնելով նրանց անխուսափելի պարտության փաստի առաջ: Հենց այդ փաստարկը առհասարակ իշխում է վրաց պատմագիտական գրականության մեջ, որից իհարկե կարելի էր խուսափել, եթե բրիտանացիները ավելի շատ շահագրգռված լինեին Հարավային Կովկասի միասնության պահպանման խնդրում, և ոչ թե հանդես գային առանձին որևիցե երկրի հովանավորությամբ, որ եթե այդ դերում լիներ Գերմանիան, ապա վերջինս բոլորի նկատմամբ կբռներ հիրավի անկողմնակալ դիրք, ինչը չի համապատասխանում պատմական իրողություններին:

Ընդ որում, վրաց գիտնականները կառչելով վրացական վեհապետության սևեռուն գաղափարից, պնդում են, որ վրացական կողմը ամենևին էլ պատասխանատվություն չեն կրում վրաց-հայկական բախման համար, որ դրանում մեղավոր է Հայաստանը, որն էլ հանդես է եկել

[462] Տե՛ս «Georgian News», Tbilisi, 16 september, 2010:

պատերազմի հրձիգի դերում, աջակցություն ստանալով Մեծ Բրիտանիայի կողմից, փորձելով համախմբել Հարավային Կովկասը:

Միաժամանակ, վրաց հեղինակները, քաղաքական հեղինակությունները պնդում են, որ վրաց-հայկական բախման սկզբնամասում Անգլիան աջակցություն ցուցաբերելով Հայաստանին, քաղաքական առումով վրիպեց, սակայն կարճ ժամանակ անց սթափվեց և քայլեր ձեռնարկեց շտկելու իր սխալները: Այդ ուղղությամբ առաջին գործնական քայլը, ըստ վրացական մեկնությունների, հանդիսացավ բրիտանական միջնորդական առաքելությունը, որը նոր դերակատարման անցնելով, իր երկիմաստ ծրագրերը իրագործելու համար բրիտանական զորքեր մտցրեց Թիֆլիս և առհասարակ Անդրկովկաս, ընդ որում ամենևին էլ շտապողականություն չդրսևորելով երեք անդրկովկասյան հանրապետությունների փաստացի ճանաչման խնդրում:

Շուտով դիվանագիտական անհարթությունների հետ մեկտեղ հայ-վրացական հարաբերություններում հայտնվում են մի շարք այլ բարդույթներ: Վրացական կողմը անբարյացակամություն սկսեց դրսևորել նաև Թուրքիայից եկած հայ փախստականներին Բորչալուի գավառի Լոռու տեղամասում իրենց կողմից վերահսկվող հատվածում ընդունելու և տեղաբաշխելու գործում: Վրացական կողմը պարզապես հրաժարվեց հայ փախստականներին տեղավորել հայկական բնակավայրերում: Հայաստանի կառավարությունը բողոքարկեց այդ ոչ բարեկամական քայլի դեմ, որի մասին համապատասխան նոտայով 1918 թ. հոկտեմբերի 23-ին տեղեկացվեց Վրաստանի կառավարությանը[463]:

Այս խնդրում ՀՀ կառավարության ռազմավարության, տեղում դոփելու և դիվանագիտական-քաղաքական քայլերի ձեռնարկման գործում առկա քաշքշուկների բացատրության խնդրում տարբեր հեղինակների կողմից իրարամերժ տեսակետներ են արտահայտվել: Սակայն հեղինակները մեծամասամբ համակարծիք են նրանում, որ սահմանային-տարածքային խնդրում հայկական կողմի անզիջողունակությունը բացատրում են գլխավորապես նրանով, որ ՀՀ կառավարությունը և հայկական Սփյուռքը ենթադրում էին, որ Առաջին աշխարհամարտում Անտանտի հաղթարշավը վերջապես հայերին հնարավորություն կնձե-

[463] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год. стр. 62:

ռի փոխհատուցում ստանալ ընդհանուր հաղթանակում ունեցած ներդրումի, հայ ժողովրդի կրած մարդկային ծանր կորուստների համար[464]:

Առաջին աշխարհամարտում թուրքական ալյանսին պատկանող երկրների, և առաջին հերթին Թուրքիայի պարտության հետ շաղկապված հայ հասարակության մեջ ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտի, իշխող մտավիճակի մասին իր տեսակետն ունի Ֆ. Կազեմզադեն. «Օսմանյան կայսրության կապիտուլյացիան 1918 թ. նոյեմբերին, թվում է՝ նոր դարաշրջան էր բացում հայոց պատմության մեջ: Վաղեմի թշնամին ծնկի էր իջել…Հաղթանակը, որը եկավ Հայաստանին այդպիսի տառապանքներից հետո, պտտեցրեց նրա առաջնորդների գլուխը: Նրանք արդեն տեսնում էին Մեծ Հայաստանը – երկիր, որ սփռված էր Միջերկրականից մինչև Սև ծովը և Սև ծովից մինչև Կասպից ծովը: Նրանց ֆանտազիաները խրախուսվում էին Փարիզում, Լոնդոնում և հատկապես՝ Վաշինգտոնում…Սակայն հայերին հունից գցում էին (շեղում էին) ոչ իրապաշտական հույսերով և խոստումներով»[465]: Ամենայն հավանականությամբ, իրենց հաշվարկը կառուցելով Անտանտյան երկրների Առաջին աշխարհամարտում ունեցած հաղթարշավի արդյունքների վրա, հայերն ակնկալում էին, որ որպես Անտանտի դաշնակիցներ ավելի մեծ տարածքային ձեռքբերումներ կունենան, քան հնարավոր կլիներ ձեռք բերել հարևան երկրներից յուրաքանչյուրի հետ առանձին վարած երկկողմանի բանակցությունների արդյունքում: Այդպես էին մտածում Հայաստանի Հանրապետությանը հակառակորդները մեզ հայտնի պատմական անցյալում, և այսօր, կարծելով, որ հայկական ռազմական և քաղաքական առաջնորդները իբր թե երբեք չէին հանդգնի ռազմական ուժ կիրառել Բորչալուում 1918 թ. վերջին, եթե խորապես համոզվածություն չունենային Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից ակնկալվող անվերապահ աջակցության մեջ, ինչպես նաև ցանկության մեջ պարզապես պատժելու մենշևիկյան Վրաստանին թեկուզև երկար ժամանակով իրենց թշնամի Գերմանիայի քաղաքականության անմիջական ուղեծրում հայտնվելու համար: Միաժամանակ, պատմաքաղաքական զարգացումները ակնհայտորեն ցույց տվեցին, որ թե՛ հայերը, և

[464] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, էջ 101-102:

[465] Տե՛ս Kazemzadeh F., The Struggle for Transcaucasia (1917-1921), p. 213:

թե՛ վրացիները պարզապես իրենց բրիտանա-ֆրանսիական հաշվարկներում խաբվեցին և նրանց ուղղակի խաբեցին, առավելագույնս կարևորելով սեփական իմպերիական քաղաքականության ամեն մի փոքր ու մեծ շահը, իսկ դրանից գլխավորապես տուժեցին հայերը:

Ըստ երևույթին, հայ քաղաքական և ռազմական առաջնորդները սխալվեցին կամ ավելի ճիշտ վրիպեցին նաև այն պարագայում, երբ փորձեցին վրացական կողմի հետ բանակցություններում առաջարկել զիջումների տարբերակ Բորչալուի և Ախալքալաքի գավառների սահմանավեճում, եթե իհարկե վրացական կողմը օգներ Հայաստանին Լեռնային Ղարաբաղը կամ էլ Թուրքիայի տարածքի արևելյան մի շարք հատվածներ, որոնք Երևանում դիտարկվում էին որպես «Թուրքահայաստանի տարածքներ»՝ ՀՀ կազմում ընդգրկելու գործում: Սակայն դա սխալ հաշվարկ էր, և մեղմ ասած՝ հայկական դիվանագիտության վրիպում վրացական քաղաքական դաշտում, Վրաստանի ռազմաքաղաքական իրական հնարավորությունների թերագնահատում, ավելացրած դրան Վրաստանի հանրապետության խելամիտ զգուշավորությունը և գործնականում՝ ոչ կամեցողությունը ներքաշվելու նոր ռազմական բախումների մեջ, և այն էլ՝ հանուն Հայաստանի Հանրապետության եթերային պատկերացումների:

Ի վերջո մի հանգամանք էլ կար: Դա անպտուղ և չհաշվարկված բանակցությունների շարունակականությունն էր և անհաջող դիվանագիտական մանևրումները, որոնց արդյունքում իրադրությունը Լոռու և Ախալքալաքի գավառներում անընդհատ լարված էր մնում:

Իրադրությունը բարդանում էր նրանով, որ վրացական զորամասերը ուղղակիորեն տեղաբաշխվել էին հայկական բնակավայրերում, այլ ոչ թե առանձին ճամբարով, որը հանգեցրեց երկկողմանի դժգոհությունների: Հայ գյուղացիները մեղադրում էին վրաց զինվորականներին տեղական բնակչության նկատմամբ անկարգապահության և զազրելի վերաբերմունքի մեջ, իսկ վրացիները, իրենց հերթին՝ մեղսագրում կամ հանցանքներ էին վերագրում տեղացի հայերին սադրիչ վարքագծի համար[466]:

[466] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, էջ 103-105:

Դիվանագիտական պայքարը զուգակցվում էր ռազմականի հետ: Մի շարք փորձերը խորհրդաժողովների միջոցով լուծել սահմանային-տարածքային խնդիրները՝ չհաջողվեց:

Պատերազմը նախորդվեց վրացական զորամասերի գործադրած ենիչէրիական գործողություններով ու բռնություններով Լոռվա հայկական գյուղերի բնակչության նկատմամբ, որին այնուհետև ավելացավ Ախալքալաքը: 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբերի սկզբներին Հայաստանի կառավարությունը բազմիցս գանգատներ ու բողոքներ էր ստանում Վրաստանի իշխանությունների և զորքերի կողմից խաղաղ հայ բնակչության նկատմամբ գործադրված բռնարարքների, ունեցվածքի կողոպուտների մասին: Տեղաբաշխվելով հայկական գյուղերում, վրաց զորաջոկատները կողոպուտի և անհարկի խուզարկությունների էին ենթարկում Լոռվա հայկական գյուղերի և Ախալքալաքի հայերին:

Մի կարևոր նկատառում ևս: Խնդիրը վերաբերում է այն բանին, որ վրաց ղեկավարները առհասարակ շատ լավ էին օգտագործում իրավիճակի ընձեռած բոլոր հնարավորությունները, և իրենց պահում փորձառու եվրոպական դիվանագետների նման: Այդ մասին է վկայում Ա. Ջամալյանի նոյեմբերի 5-ի հաղորդագրությունը Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարարին: Անգամ 1918 թ. նոյեմբերի սկզբի կրիտիկական օրերին վրաց քաղաքական լիդեր Գեգեչկորին կապված Վրաստանում սպասվելիք մինիստրական կազմի փոփոխման հետ, իրատեսորեն օգտվեց իրավիճակից և Վրաստանում մինիստր-նախագահի պաշտոնը գրավելու նպատակադրումով, անսալով հայերի և վրացիների միջև օրըստօրե շիկացող մթնոլորտը, չհապաղեց դիմել տեղական դաշնակցականների օգնությանը, վերջիններիս նախընտրական խոստումներ տալով՝ 1) անմիջապես կարգադրել փախստականների խնդիրը, 2) կռիվ սկսել վրաց նացիոնալիստական հոսանքների դեմ, 3) արդար ձևով լուծել հայ-վրացական սահմանային խնդիրները՝ հայերի ցանկության համեմատ և հայ-վրացական մերձեցում առաջ բերելով՝ մեկուսացնել Ադրբեջանին: Գեգեչկորին այս պլատֆորմի վրա աշխատելու համար անհրաժեշտ էր համարում, որ 1) Չխենկելին, Ռամիշվիլին և Գեորգաձեն հեռանան կառավարությունից, և որ 2) Դաշնակցությունը իր աջակցությունը խոստանա իրեն, և ժամանակ տվեց մինչև նոյեմբերի 5-ը, ասելով, որ եթե դաշնակցականների կողմից բացասական

վերաբերմունք լինի դեպի ինքը և իր պլատֆորմը, ապա ինքը չի ստանա մինիստր-նախագահի պաշտոնը[467]: Շատ ուշագրավ մի փաստաթուղթ, որն ականառու կերպով վկայում է վրացիների փարիսեցիական օգտապաշտական վերաբերմունքի մասին դեպի հայերը, որը ևս կարելի է հասկանալ՝ ելնելով Վրաստանի շահերից:

Ամեն ինչ հարմարեցվում էր Վրաստանի վեհապետական շահերին: Վրացական իշխանությունները նոյեմբերի սկզբներին չափազանց լարված վիճակ ստեղծեցին՝ կապված Հայաստանի դիվանագիտական միսիայի աշխատակիցների Թիֆլիսում ծավալած գործունեության, ինչպես նաև Վրաստանի մայրաքաղաքում գտնվող հայկական կորպուսին պատկանող ունեցվածքի ճակատագրի տնօրինման հետ: Դեռ 1918 թ. նոյեմբերի 3-ին Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը բողոքագրով դիմելով Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրին, հայտնում էր, որ վրացական հատուկ ջոկատի աշխատակիցները, չնայած բողոքներին, խուզարկություն են կատարել գնդապետ Դոլուխանովի մոտ, որը գտնվելիս է եղել Հայաստանի դիվանագիտական միսիայի կազմում, որին վրացիները ապօրինաբար ձերբակալելով տարել են հատուկ ջոկատի շենք: Բացի այդ, հայտնվում էր, որ այդ ընթացքում վերջինիս հարցաքննել են որպես վկա՝ կապված Քսանկա կայարանի մոտ տեղի ունեցած պայթյունի հետ, որից հետո նոր բաց են թողել[468]:

Անշուշտ, սա պատրվակ էր ավելի խոշորամասշտաբ հակահայկական գործողությունների համար: Վրացիները ոտնձգություն են կատարում Թիֆլիսում գտնվող հայկական ունեցվածքի պահեստների նկատմամբ: Այդ կապակցությամբ Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը նոյեմբերի 4-ի իր բողոքագրում՝ ուղղված Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրին, նշում էր այն մասին, որ հայտնվելով Հայաստանի Հանրապետության ունեցվածքը պահպանող շինությունում՝ (Մանթաշովի տանը), Թիֆլիսի պահակազորի պետ, գեներալ Ահմեդելովը (Ահմեդելաշվիլի) պահանջել է անհապաղ հանձնել պահեստում գտնվող ողջ ունեցվածքը, ընդ որում վկայակոչելով Վրաստանի Հանրապետության կառավարության ինչ-որ կարգադրություն: Հայաս-

[467] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 66, թ. 109:
[468] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 67, թ. 21:

տանի դիվանագիտական հավատարմատարը հայտնում էր, որ գնդապետ Դոլուխանովի միջոցով հայտարարություն է արվել, որ Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրության կողմից ոչ մի հարաբերություն այդ առիթով ՀՀ դիվանագիտական միսիայի հետ չի եղել, հետևաբար պահեստները չէին կարող բացվել[469]:

Վրաստանի իշխանությունները նորանոր քայլերի են դիմում, ձեռնարկելով հայ բնակչության զինաթափում և այլ ապօրինի գործողություններ: Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պարտականությունները կատարող Եվգ. Գեգեչկորին 1918 թ. նոյեմբերի 8-ի գրությամբ ի պատասխան Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի 1918 թ. նոյեմբերի 4-ի նոտայի, հայտնում էր, որ անվտանգության ապահովման նպատակով, խուսափելու համար դժբախտ պատահարներից կապված քաղաքի կենտրոնում գտնվող զինամթերքի պահեստների և զինվորական հանդերձանքի հետ, Վրաստանի կառավարությունը որոշել է Մանթաշովի տանը պահպանվող և հայկական զորամասերին պատկանող ունեցվածքը տեղափոխել քաղաքից դուրս: Միաժամանակ ասվում էր, որ իբր թե, հաշվի առնելով հայկական կողմի խնդրանքը, այդ հրամանի կատարումը կասեցվել է: Պահանջվում էր կարճ ժամանակամիջոցում հաղորդել, թե երբ հատկապես կարող են ձեռնամուխ լինել իրենց ունեցվածքի դուրս բերմանը Մանթաշովի տնից դեպի զինանոց (կամ էլ զինապահեստ), որոնց ցուցակները կընդունվեն Վրաստանի կառավարության կողմից ի պահպանություն[470]: Հասկանալի է, թե ինչ խոչընդոտներ էր հարուցում Վրաստանը և ինչ նպատակներով: Վրացիները քայլ առ քայլ խորացնում էին տագնապը հայ-վրացական հարաբերություններում: 1918 թ. նոյեմբերի 8-ին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պարտականությունները կատարող Ե. Գեգեչկորին ի պատասխան Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի նոյեմբերի 2-ի և 5-ի բողոքի նոտաների, նշում էր, որ 1) կառավարության որոշումը Թիֆլիսի բնակչության զինաթափման մասին տարածվում է նաև հայերի վրա, բացառությամբ Թիֆլիսում գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի կազմում գտնվողների, 2) Հայկական հրետանային դիվիզիաների 2 անձնակազ-

[469] Տե՛ս նույն տեղում, թ. 20:
[470] Տե՛ս նույն տեղում, թ. 14:

մերի 2 մարտկոցների ունեցվածքի պահպանությունը Զինվորական նախարարությունն իր վրա է վերցնում, 3) նշված մարտկոցների ծառայողակազմը անհապաղ պետք է ուղարկվի Հայաստան, որոնց հետ միասին կարող են տարվել և ձիերը, ընդ որում հրետանավորները Թիֆլիսում զենք կրելու իրավունքից չեն օգտվում[471]:

Հենց այսպես վրացիները ուժեղացնում էին ճնշումը, յուրահատուկ ներքին բլոկադա կազմակերպելով հայերի և Հայաստանի շուրջ: Թեկուզև արդեն այդ մասին վերն ասել ենք, այդ ամենի համար որոշակի հիմք ունեին, կապված հատկապես հայկական զինվորականության զենքի ու զինամթերքի առկայության հետ Վրաստանի սրտում՝ Թիֆլիսում: Սակայն դա նաև պատրվակ էր, որից վրացիները հրաշալի օգտվում էին: Այդ նույն Գեգեչկորին ի պատասխան նոյեմբերի 6-ի Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի հերթական նոտայի, նոյեմբերի 8-ին հաղորդում էր, որ Վրաստանի կառավարությունը ներկա պահին հնարավոր չի գտնում թույլատրել հայկական զորամասերի զինվորական հանդերձանքի և ռազմամթերքի դուրս բերումը Թիֆլիսից Երևան՝ Բորչալուի գավառի ռազմական վիճակում գտնվելու կապակցությամբ: Միաժամանակ Գեգեչկորին արձանագրում էր, որ անհրաժեշտություն է առաջացել անհապաղ քաղաքից դուրս բերել հայկական զորամասերին պատկանող զինվորական հանդերձանքը և ռազմամթերքը, որը պահպանվում էր Մանթաշովի քարվանսարայում և ուրիշ պահեստներում, խնդրում էր ներկայացուցիչ գործուղել՝ պարետային ծառայության հետ բանակցությունների՝ ի դեմս Թիֆլիսի կայազորի պետ, զինվորական մինիստրության ներկայացուցիչ գեներալ-մայոր Ահմեդելաշվիլու[472]:

Որոշ հակաքայլեր հայկական կողմը փորձեց ձեռնարկել, և սակայն էական արդյունքների չհասավ: Նոյեմբերի 8-ին Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը դիմելով Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրին, նշում էր, որ իր կողմից արդեն կարգադրություն է արվել ռազմամթերքի (ռումբեր, փամփուշտներ, ձեռքի նռնակներ և տարբեր տեսակի պայթուցիկ նյութեր և իրեր) տեղափոխության մասին միսիայի համար հատկացված քաղաքից դուրս գտնվող շինություն: Միաժամանակ, Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը

[471] Տե՛ս նույն տեղում, թ. 33:
[472] Տե՛ս նույն տեղում, թ. 16:

խնդրում էր չմերժել շտապ կարգադրություն անել թույլատրելու համար ողջ ունեցվածքը տեղափոխել Հայաստան[473]:

Սակայն վրացական իշխանությունները մտադիր չէին այդ մտքի հետ համակերպվել և աղեկվատ քայլեր ձեռնարկել, որը չէր համապատասխանում իրենց շահերին: 1918 թ. նոյեմբերի 8-ի գրության մեջ՝ ուղղված Հայաստանի Արտաքին Գործերի նախարարությանը, Ջամալյանը տեղեկացնում էր իր հանդիպման մասին Գեգեչկորու հետ, որին ինքը տեղյակ էր պահել երկաթուղային երթևեկության հետ կապված վերջին գնացքների ապահովության հարցի մասին, ինչպես նաև խնդրել միջոցներ ձեռք առնելու Սանահինում պահեստավորված Հայաստանին պատկանող ապրանքները թալանի չենթարկելու վերաբերյալ[474]: Նույն օրերին Ջամալյանը Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրին ուղղված մի այլ գրության մեջ բողոքում էր հայ սպաների կողմից զենք կրելու իրավունքի արգելման հարցի հետ կապված[475]:

Վրացիների ոտնձգությունները ավելի ու ավելի սանձարձակ էին դառնում: Այսպես, 1918 թ. նոյեմբերի 9-ին Վրաստանի Հանրապետության հաղորդակցության ճանապարհների մինիստրը տեղեկացնում էր Վրաստանի Հանրապետությունում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարին այն մասին, որ ինքը տեղեկացվել է, որ Զինվորական նախարարի կարգադրության համաձայն, Վրացական երկաթուղագծի հարավային ճյուղը ռազմական դրության մեջ հայտարարելու կապակցությամբ, ոչ մի գնացք, բացառությամբ օտոմանյան կառավարության շարժակազմերի, չպետք է բաց թողնվի Շահալի կայարանից հարավ: Դա նկատի ունենալով, ավելացնում էր վրաց մինիստրը, երևանյան գնացքները պետք է առաջիկայում բաց թողնվեն Թիֆլիսից՝ միայն մինչև Շահալի կայարանը, ուր պետք է տրվի Հայկական երկաթուղու շարժակազմը՝ ուղևորների տեղափոխման և բեռների վերաբեռնման համար[476]:

Ահա այսպես վրացիներն ուժեղացնում էին տնտեսական և ռազմական ճնշամիջոցները Հայաստանի դեմ, սանձարձակություններ կա-

[473] Տե՛ս նույն տեղում, թ. 18:
[474] Տե՛ս նույն տեղում, գ. 66, թ. 120:
[475] Տե՛ս նույն տեղում, թ. 111:
[476] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 17, թ. 78:

տարելով հայտնի տարածքների հայկական բնակավայրերում: Վրացական իշխանությունները 1918 թ. նոյեմբերի սկզբներին Բորչալուի գավառի սահմաններում տեղաբաշխված զինվորական ջոկատների միջոցով ամեն կերպ և ամեն տեսակի բռնություններ էին գործադրում արդեն Շուլավեր բնակավայրում: Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը բողոքի նոտայով դիմելով Վրաստանի Հանրապետության Արտաքին Գործերի մինիստր Ե. Պ. Գեգեչկորուն (9 նոյեմբերի, 1918 թ., № 1689 գրություն) վրդովմունքով նկատում է. «Շուլավերին ներկա պահին շրջապատված է զինվորական ջոկատով, որը ռմբակոծման սպառնալիքի տակ պահանջում է անհապաղ իրեն հանձնել երկու հազար հրացան, վեց գնդացիր, երեք հազար ռումբ և վեց հարյուր ատրճանակ…Սկզբնապես թուրքական, ապա գերմանական և վրացական իշխանությունների կողմից իրականացված կրկնակի զինաթափումներից հետո, բնակչությունը հնարավորություն չունենալով կատարելու այդ պահանջը, խուճապահար սպասում է ռմբակոծման: Ես ավելորդ եմ համարում մատնանշել, թե ինչպիսի տխուր հետևանքներ կարող է ունենալ Բորչալուի հայկական բնակչության նկատմամբ վրացական իշխանությունների թշնամական վերաբերմունքը երկու եղբայրական ժողովուրդների խաղաղ գոյակցության համար, հատկապես նկատի ունենալով մոտակայքում տեղաբաշխված հայկական զորամասերին, որոնք նույնիսկ առանց Հայաստանի կառավարության կամքի կարող են ներգրավվել անցանկալի բախման մեջ»: Նոտայում հույս էր հայտնվում, որ դա նկատի ունենալով, «ամենաանհապաղ միջոցները կձեռնարկվեն վերացնելու լուրջ բարդություններ սպառնացող Շուլավերյան միջադեպը տեղական վրացական իշխանությունների և հայկական բնակչության միջև նորմալ հարաբերություններ հաստատելու համար»[477]: Ահա այսպիսին էր իրադարձությունների խճանկարը:

Ըստ երևույթին հենց այս տագնապալի իրողություններից ելնելով, Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը դեռ 1918 թ. նոյեմբերի 11-ին գրում էր, որ «վրացիք արդեն միջոցներ են ձեռք առնում, որպեսզի գրավեն Ախալցխան և Ախալքալաքը, հենց որ թուրքերը հեռանան: Այսպիսով, վրաց կառավարությունը, որ

[477] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց.1, գ. 16, թ. 12:

այս ամբողջ ամիսների ընթացքում ոչ միայն չէր ուզում Ախալքալաքի հայ ժողովրդին տերություն անիլ, այլև դիտավորյալ թե անդիտավորյալ կերպով հյուծում էր և մաշում նրանց Ծալկայում, Բակուրիանում, այլև հանդես է գալիս Ախալքալաքի տիրոջ դերում»[478]: Իր այս մտքերը Ա. Ջամալյանը ավարտում է ըստ էության կարևոր եզրահանգումով. «…հրամանագրել Դրօյին, որ Լոռվա շրջանի մեր այն գյուղերը, որ գերմանացիք արդեն թողել են, գրավվի հայկական զօրքով, մինչև իսկ այստեղ վրացիներ կան… Այսպիսով, կստեղծվի զինվորական գրավում, որ պետք է պահպանվի, մինչև որ վրացիք կհաճին մեզ հետ բանակցել այս ու մնացած սահմանների խնդիրը կարգադրելու համար:…Պետք է համաձայնության գալ Խալիլ փաշայի հետ, որ նա ի կատարումն իր բարեկամական խոստումների իր զօրքերը յետ քաշելու դեպքում նախազգուշացնի մեզ, որպեսզի մեր երկիրը ուրիշների ձեռքը չընկնի»[479]: Անշուշտ, լիովին ըմբռնելի է Ա. Ջամալյանի այս տագնապը, և նրա խորհուրդը՝ միջոցներ ձեռք առնել: Սակայն արդեն ասվել է, որ ամեն ինչ չէ, որ հայերից էր կախված կամ Հայաստանի կառավարության չափազանց խելացի և նպատակահարմար գործողություններից: Աշխարհաքաղաքական իրավիճակն այնքան էր բարդ ու խճճված, որ իրադարձությունների այդ գլխապտույտ փոփոխվող ընթացքում դժվար էր ճիշտ կողմնորոշվել և իրատեսական որոշումներ կայացնել: Մյուս կողմից, ակնհայտ էր թուրքական կողմի երկակի խաղը, որի հետ հայկական լիդերները որոշակիորեն ավելորդ հույսեր էին կապում, առանց խորապես ըմբռնելու, որ թուրքերին Անդրկովկասում այլ նպատակներ էին հետաքրքրում և որ Կովկասյան տան իրենց հարցադրման մեջ հայերին նրանք ամենաերկրորդական դերն ու տեղն էին հատկացնում, և աշխատում էին Անդրկովկասից իրենց հեռացումից առաջ խորացնել հայ-վրացական ռազմաքաղաքական լարվածությունը՝ հույս ունենալով առաջ բերել խոշոր անկարգություններ, և ստիպել Անտանտի ներկայացուցիչներին հաշտվել ստեղծված իրավիճակի հետ: Այս առումով հետաքրքիր է նշել, որ դեռ հոկտեմբեր ամսին արևելյան ռազմաճակատի թուրքական զորքերի հրամանատար Խալիլ փաշան Թիֆլիսով անցման ժամանակ կոնֆեդենցիալ կերպով զգուշացրել էր ՀՀ դիվանագիտական

[478] Տե՛ս նույն տեղում, գ. 66, թ. 147:
[479] Տե՛ս նույն տեղում, գ. 66, թ. 148:

հավատարմատար Ա. Ջամալյանին նրա հետ անձնական տեսակցության ժամանակ վրացական այն պլանի մասին, ըստ որի, Վրաստանը նախօրոք պատրաստվել է գրավել և անեքսիայի ենթարկել ոչ միայն Ախալքալաքի, Բորչալուի գավառներն ամբողջությամբ, այլև Ղարաքիլիսայի շրջանի ողջ տարածքը, որը գտնվում էր Հայաստանի Հանրապետության տարածքային կազմում դեռ նրա կազմավորման իսկ պահից սկսած և որը ոչ մի վրացի բնակիչ չուներ: Խալիլ փաշան հայտնել էր Ջամալյանին, որ Վրաստանի կառավարությունը դիմել է թուրքերին խնդրանքով, որպեսզի թուրքական հրամանատարությունը նախապես Վրաստանին հայտներ իրենց հեռացման՝ էվակուացիայի մասին և, այդպիսով իրենց հնարավորություն տար Ղարաքիլիսա ուղարկել քաղաքացիական վարչակարգ և զորքեր, որոնք պետք՝ կանխարգելեին հայկական զորքերի մուտքը: Թուրք հրամանատարը Ջամալյանին հավաստիացրել էր, որ թուրքական կողմի տեսակետով, իբր թե «վրացիները ոչինչ չունեն անելու Ղարաքիլիսայում և որ երևանյան կառավարությունը պետք է զգոն լինի իր շահերի պաշտպանության խնդրում»[480]: Դեռ 1918 թվականի հոկտեմբերի 5-ին Հայաստանի Արտաքին Գործերի նախարարին ուղարկված գրության մեջ Ա. Ջամալյանը նրբորեն այն միտքն էր արտահայտում, որ իբր թե «թիւրք սպաներից մեկը հաղորդել է մերոնցից մեկին, թե թիւրքերը պաշտոնապես պետք է հայտնեն, թե գնում են, սակայն փաստորեն պիտի մնան այնտեղ»[481]: Ուշագրավ միտք: Հարկ է մի հետաքրքիր փաստի մասին ևս նշել, որը լրացնում է վերը բերված փաստերը՝ կապված թուրքական խարդավանքների հետ հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում՝ նպատակ հետապնդելով պահպանել և խորացնել լարվածության բոլոր խորքային դրդապատճառները և գործոնները: Ինչպես վկայում է Վրաստանում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը, դեռ օգոստոսի 5-ին Վրաստանի կառավարության կողմից կազմակերպված բանկետի ժամանակ վրացական կառավարության հետ մի շարք հարցեր քննարկելու նպատակով Թիֆլիս ժամանած Միջազետքում և Արևելյան Անդրկովկասի թուրքական զորքերի հրամանատար Խալիլ փաշան ընդգծել էր հետևյալ բազմանշանակ միտքը. «Վրացիների հետ մենք կա-

[480] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения, стр. 77-78:
[481] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ – 200, ց. 1, գ. 66, թ. 149:

րող ենք առանց այլևայլության բարեկամ լինել, սակայն ինչ վերաբերում է հայերին, մենք միշտ նրանց հետ կռվում ենք՝ և ապա՝ բարեկամանում»[482]: Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ նմանատիպ վերաբերմունքից պետք է ոգևորվեին և նախահարձակ գործողությունների դիմեին վրացիները, միևնույն ժամանակ մշակելով զանազան պահեստային սադրիչ տարբերակներ: Այսպես անընդմեջ:

Ստորև կբերենք ևս մեկ փաստաթուղթ, որը ևս ապացուցում է, որ վրացիները շատ լրջորեն էին վերաբերվում անդրկովկասյան տան ներսում տեղի ունեցող անցուդարձին, և որ զիջումների պարագայում էլ ձգտում էին զիջել այն, ինչ չէր կարելի պահել կամ որևիցե միջոցով կարելի էր մաներել: Մի շարք փորձեր էլ նորից կատարվեցին խորհրդաժողովների միջոցով լուծել հարցը: Հայաստանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչին ուղարկված նոտայում Հայաստանի Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը սկզբունքորեն ընդունելով խորհրդաժողովի գաղափարը, անդրկովկասյան հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, Հայաստանի կառավարության անունից անհրաժեշտ էր համարում մտնել բանակցությունների մեջ Վրաստանի կառավարության հետ՝ պարզելու ինչպես խորհրդաժողովի ժամանակը, տեղը, այնպես էլ զբաղմունքների կազմը և ծրագրերը: Իսկ ինչ վերաբերում է երկու հանրապետությունների միջև պետական սահմանների հաստատման հարցին, ապա այն պետք է արտահայտվի երկու հանրապետությունների փոխադարձ համաձայնությամբ՝ մինչև նշված խորհրդաժողովի հրավիրումը,- շեշտում էր Ս. Տիգրանյանը[483]:

Ցանկալի արձագանքը վրացական կողմից չստացվեց: Պարզապես վրացական իշխանություններն ունեին իրենց գործողությունների ծրագիրը և իրենց սցենարը, որով էլ առաջնորդվում էին, տարածքային հարցերում ավելի ու ավելի անզիջում և համառ դառնալով: Նույնիսկ այդ ծանր պահերին Հայաստանի Հանրապետության կառավարությունը փորձում էր հարցը լուծել խաղաղասիրական դիրքերից: ՀՀ Նախարարների խորհուրդը, 1918 թվականի նոյեմբերի 11-ին լսելով Արտաքին Գործերի նախարարի զեկուցումը հայ-վրացական սահմանի հաստատման շուրջ վարվող բանակցությունների վերաբերյալ, որոշում ընդունեց

[482] Տե՛ս նույն տեղում, թ. 11-11 հակ.:

[483] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 5:

հանձնարարել Արտաքին Գործերի նախարարին Վրաստանի ներկայացուցիչների հետ բանակցություններ վարել վերաբաժանման շրջանակներում[484]:

1918 թ. նոյեմբերի 14-ին Կ. Պոլսից վերադարձող Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը (Ա. Ահարոնյան, Մ. Պապաջանյան, Ալ. Խատիսյան, Զինվորական խորհրդական Կորգանով) հասնում է Թիֆլիս, ուր խորհրդակցություն է ունենում վրացական կառավարության հետ, որը պահանջում էր Վրաստանին զիջել Ախալքալաքի և Բորչալուի գավառները այն պատրվակով, իբր հայերը պետք է ստանան Թուրքահայաստանի վեց վիլայեթները, հետևաբար հողի կարիք չպետք է ունենան[485]: Հրաշալի երկերեսանիություն, աներեսություն՝ նպատակին ամեն գնով հասնելու խնդրում:

1918 թ. նոյեմբերի 15-ին Նախարարների խորհրդի նիստը հայտնում է, որ համաձայն Արտաքին Գործոց նախարարի հաղորդագրության տաճկական 9-րդ բանակի հրամանատար Շէվքի փաշան առաջարկել է կազմել հայ-վրացա-թուրքական խառը հանձնաժողով էվակուացիայի և կառավարելու ձևի հարցերը լուծելու այն շրջաններում, որոնք գրավված են տաճկական զորքերով և պետք է դատարկվեն: Այդ կապակցությամբ Նախարարների խորհուրդը որոշում է ընդունում համաձայնվել քննության նյութ դարձնելու միայն բնակչության թողած տերիտորիան վերադառնալու կարգի խնդիրը և չշոշափել էվակուացիայի հարցը, ընդունելով այն արդեն որոշված, ինչպես և կառավարման ձևի հարցը, որը մտնում է միայն Հայաստանի կառավարության իրավասության սահմանների մեջ և այն պայմանով, որ հանձնաժողովին պետք է մասնակցեն միայն հայերը և թուրքերը, առանց վրացիների մասնակցության, ընդսմին ցանկալի համարել, որ հանձնաժողովի աշխատանքները կատարվեն Երևանում, և ոչ թե Ալեքսանդրապոլում[486]: Այս շատ ուշագրավ փաստաթղթից պարզ է դառնում, թե ինչպիսի խառնաշփոթ էին ցանկանում ստեղծել թուրքերը գոյություն ունեցող աշխարհաքաղաքական իրավիճակում՝ իրար դեմ հանելով հայերին և վրացիներին,

[484] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 13, թ. 89:

[485] Տե՛ս Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 114:

[486] Տե՛ս ՀԱԱ Ֆ.Պ - 202, ց.1, գ. 13, թ. 89:

ինչից հայկական կողմը համառորեն փորձում էր խուսափել, և որը դժվարին խնդիր էր: Վրացական կողմին թուրքական մոտեցումը ձեռնտու էր, և նման իրավիճակում վրացիներն ամեն ինչ անում էին, որպեսզի հայ-վրացական սահմանակնճիռը իրենց օգտին վճռեն, ցինիկաբար խաղարկելով հայ ժողովրդի համար ստեղծված տնտեսական ծանրագույն իրավիճակի խաղաքարտը: Հայաստանում Վրաստանի դիվանագիտական հավատարմատար Մդիվանուն ուղարկված 1918 թ. նոյեմբերի 18-ի հեռագրում (№ 3035) Արտաքին Գործերի մինիստր Գեգեչկորին հաղորդում էր, որ նախորդ օրը կառավարության կողմից լսվել է իր զեկույցը Հայաստանի հետ փոխհարաբերությունների մասին: Գեգեչկորին հայտնում էր, որ իր տեսակետը հավանության է արժանացել, և հանգում է նրան, որ տարածքային սահմանազատման հարցում վրացիները միանգամայն որոշակի իմաստով կանգնած են իրենց օգտին պահելու «Ախալքալաքի գավառը, զիջումներ անելով Լոռու տեղամասում»: Այնուհետև Ե. Պ. Գեգեչկորին ասում էր, որ իրենք եռանդուն կերպով պաշտպանում են Թուրքիայի և հնարավորին չափով Ադրբեջանի շրջանակներում նրանց (ասել է թե՝ հայերի - Վ. Վ.) տերիտորիայի ընդարձակվելը: Այնուհետև, տվյալ հաղորդագրության մեջ զոհունակություն էր արտահայտվում վրացա-ադրբեջանական փոխհարաբերություններից և դրանք բավարար համարում: Հարկ է սակայն ընդգծել, որ հաղորդագրության վերջնամասում Գեգեչկորին Մդիվանուն հայտնում էր. «Հայաստանի մի քանի ոչ պատասխանատու քաղաքագետների հաշվարկները ամենայն հավանականությամբ չեն արդարանա: Անգլիան մուսուլմանության հետ չի վիճի», և որպես ապացույց Գեգեչկորին շեշտում էր անգլիական զորքերի Բաքու ժամանելու, և թուրքական ու գերմանական զինվորական ուժերի հեռացման մասին: Գեգեչկորին եզրափակում էր դիմումագիրը նրանով, որ Մդիվանուն խորհուրդ էր տալիս ձգտել փոխադարձ վստահության մթնոլորտի ստեղծման ոգով արտահայտվել, մի դույզն իսկ չանտեսելով սեփական շահերը: Ի վերջո, հետաքրքիր է նաև նշել, որ Գեգեչկորին խորհուրդ էր տալիս մասնակցել Կարճիկյանի հուղարկավորությանը և այդ ոգով ճառ արտասանել[487]:

[487] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 27, թ. 1-2:

Սակայն դա ընդամենը քարոզչական-դիվանագիտական ներկայացում էր, իսկ խորքում ընթանում էին այլ գործընթացներ, որի հիմքերի մեջ փորձել են խորամուխ լինել տարբեր հեղինակներ, առանց մեծ արդյունքների, սակայն որոնց դատողությունները արժանի են դիտարկման՝ Հայաստան-Վրաստան առնչություններում առկա ողջ ռազմաքաղաքական բարդույթը և հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացումներն ընկալելու և գնահատելու համար:

Այս կապակցությամբ ազգությամբ աղրբեջանցի, ամերիկյան պատմաբան, պրոֆեսոր Ֆիրուզ Կազեմզադեն ընդգծում է, որ Լոռվա գավառում ռազմական գործողությունների հոկտեմբերյան էպիզոդից հետո Թուրքիան անձնատուր եղավ, և ստորագրվեց Մուդրոսի զինադադարը: Ձեռքբերված պայմանավորվածության համաձայն Հարավային Կովկասը դառնում էր Մեծ Բրիտանիայի ազդեցության ոլորտ: Նոյեմբերի սկզբներին Պարսկաստանում գտնվող բրիտանական էքսպեդիցիոն կորպուսի հրամանատար գեներալ-մայոր Սըր Վիլյամ Մոնտհոմերի Թոմսոնը Կասպից ծովի ափին գտնվող Էնզելի նավահանգստում ունեցած ելույթում հայտարարում է, որ իրենք Կովկասը դիտարկում են որպես իրենց դաշնակից Ռուսաստանի տարածքի մի մաս, որի հետ կապված որևիցե պետական կազմավորման ճանաչման հարց չի դիտարկվում, թեկուզև չի բացառվում դե-ֆակտո գոյություն ունեցող իշխանությունների հետ համագործակցությունը[488]: Եվ արդեն նոյեմբերի 17-ին բրիտանական էքսպեդիցիոն կորպուսը ժամանեց Բաքու, որին հաջորդեց Բաթումի քաղաքի և մարզի օկուպացիան՝ պահակազորեր դնելով բոլոր կարևոր հանգուցակետերում:

Որպես եզրահանգում վրաց-հայկական առճակատման խնդրում, Է. Անդերսենը և Գ.Էգգեն կարծում են, որ տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադրության փոփոխությունները զգուշաբար ընդունվեցին Ադրբեջանի [1918 թ. դեռևս այն «Արևելա-Կովկասյան մուսուլմանական հանրապետություն էր] և Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետության կողմից, և ընդհակառակը, բրիտանացիների ժամանումը ոգևորություն և լավատեսություն առաջ բերեց Հայաստանում, նոր հույսեր «փայլուն ապագայի» առումով՝ Առաջին աշխարհամարտի տա-

[488] Տե՛ս Kazemzadeh F., The Struggle for Transcaucasia (1917-1921), p. 25:

րիներին Անտանտի բարձր ներկայացուցիչների կողմից բազմիցս խոստացված[489]:

Այն ժամանակ, երբ կարծես թե լուրջ փորձեր էին արվում երկու երկրների միջև հասունացող պատերազմը կանխելու և վիճելի հարցերը բանակցությունների միջոցով լուծելու, պատերազմը բախում էր երկու հանրապետությունների դռները:

Այս կապակցությամբ վրաց պատմաբանները և ռազմաքաղաքական այրերը պնդում են, որ Վրաստանի կողմից ոչ մի պատերազմական պատրաստություն չի եղել: Գեներալ Գ. Կվինիտաձեն[490] գրում է հետևյալը. «Հայերը դա գիտեին և, արդեն գործնականում պատրաստ լինելով պատերազմի, նրանք հաշվարկել էին միանգամից գրավել իրենց կողմից հավակնվող մարզերը, ճիշտ կերպով ենթադրելով, որ Անտանտի երկրները կկանգնեցնեն պատերազմը, իսկ հնարավոր է, և նույնիսկ այդ առումով ունեին նրանց համաձայնությունը»[491]: Այս կապակցությամբ հարկ է, անշուշտ, փաստել, որ ասվածի մեջ կային ռացիոնալ հատիկ-

---

[489] Տե՛ս Эндрью Андерсен, Георг Эгге, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

[490] Գեներալ-մայոր Կվինիտաձե Գեորգի Իվանի (1874 թ.- 07.08.1970 թ.)- Մասնակցել է Առաջին աշխարհամարտին, աչքի է ընկել Էրզրումի 1916 թ. գործողության ժամանակ, քաջության համար պարգևատրվել է Ոսկե սրով և Սբ. Գեորգիի 4–րդ աստիճանի շքանշանով: 1918 թ. հունվարի 11-ին Ժամանակավոր կառավարության կողմից նրան շնորհվել է գեներալ-մայորի կոչում, նշանակվել է Կովկասյան ռազմաճակատի գեներալ-զորաբնակարանապետի [квартитмейстер] օգնական, պարգևատրվել Սբ. Աննայի 2–րդ աստիճանի, Սբ. Վլադիմիրի 2–րդ աստիճանի շքանաններով: 1918-1921 թթ. ծառայել է Վրաստանի Հանրապետության բանակում, որտեղ հաջորդաբար զբաղեցրել է ռազմական մինիստրի օգնականի, 1-ին դիվիզիայի հրամանատարի, Աբխազիայի գեներալ-նահանգապետի, և Սևծովյան ափամերձ շրջանի հրամանատարի, դաշտային ռազմական դպրոցի պետի, և վերջապես՝ Վրաստանի զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնները: 1921 թ. հայտնվել է տարագրության մեջ՝ Ֆրանսիայում, մահացել է Շատու քաղաքում: Գ. Ի. Կվինիտաձեն 1917-1921 թվականներին վերաբերող հայտնի հուշագրային բնույթի գրքի հեղինակ է, որի մասին ներածական մասում նշվել է.- Տե՛ս Гогитидзе М., Грузинский генералитет (1699-1921 гг.). Биографический справочник НАН Украины. Инс-т археографии и источниковедения им. М. Грушевского, Укр. Центр биографической некрополистики. Сост. М. Гогитидзе, отв. ред. Иван Дивный, Киев, 2001, стр. 99-100:

[491] Տե՛ս Квинитадзе Г. И., Мои воспоминания в годы независимости Грузии. 1917-1921, Париж, 1985, стр. 58:

ներ, քանզի Անտանտի դաշնակից երկրները հետագայում պատերազմական գործողությունները դադարեցնելու առաջարկ արեցին հենց այն պահին, երբ վրացական զորքը խուճապահար բռնել էր նահանջի ուղին, և այս առումով հայ քաղաքական-ռազմական առաջնորդների հաշվարկները սխալ դուրս եկան, և գործնականում նրանց կողմից առանց երկմտանքի ընդունվեց միջնորդական առաքելության մասին Վրաստանի Հանրապետության կառավարության առաջարկը պատերազմը դադարեցնելու մասին, առավել ևս, որ այդ հարցում այլընտրանք չկար:

Դա ըստ էության լիովին անակնկալ էր ՀՀ կառավարական, կուսակցական-քաղաքական շրջանների և բարձրագույն սպայակույտի համար, քանզի նրանք այլ սպասելիքներ ունեին դաշնակիցներից, որոնք չարդարացան, քանզի այդ ակնկալիքները չէին բխում նրանց խորքային աշխարհաքաղաքական շահերից: Հենց այս առումով փոխանակ փորձելու իրապես սեփական հնարավորությունները հաշվառելու և ապագայի ռազմավարության դիրքային ուղենիշները հստակեցնելու և իրատեսական որոշումներ կայացնելու, նրանք անիմաստ և չհաշվարկված խնդրանքներով բազմիցս դիմում էին դաշնակիցներին՝ փորձելով խոստումներ կորզել նրանցից՝ օգնելու և սատարելու ՀՀ կառավարությանը անդրկովկասյան աշխարհաքաղաքական միջավայրում, վստահ, որ այդ աջակցությունը փոփոխական չի լինի: Այնպես, որ դեռ ի սկզբանե, հայ քաղաքական շրջանների հաշվարկները խախուտ էին: Հենց այս և այլ հանգամանքներն էլ շահարկվում են վրաց պատմագիտական մտքի ներկայացուցիչների կողմից: Աղավաղելով իրականությունը, Գ. Մարխուլիան վկայակոչելով ոմն Պ. Գելեիշվիլու, անմիտ վարկած է առաջ քաշում, թե իբր ամենուր հայերը սկսել են հավաքել դրամ Վրաստանի դեմ պատերազմի համար, որին իբր թե գյուղերում այդ ամենին ակտիվ մասնակցություն է ունեցել հոգևորականությունը, որոնք գյուղացիներին երդվեցնում էին, ընդ որում խաչի փոխարեն համբուրելու էին տալիս դաշույն՝ ի նշան այն բանի, որ նրանք զենքը ձեռքին պետք է պայքարեն վրացիների դեմ»[492]: Հասկանալի է, որ Գերմանիայի պարտությունը չէր կարող չազդել Վրաստանի գործերի վրա, որն իրեն «վար-

[492] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http:/iberiana,wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

կաբեկել էր» Գերմանիայի հետ բարեկամության համար: Ըստ վրացիների, հայերը ելնելով այն իրողությունից, որ Անդրկովկասից գերմանացիների հարկադիր հեռացումից հետո այդ քաղաքական դատարկությունը լցվելու է բրիտանացիներով և ֆրանսիացիներով, որը հայ առաջնորդների մոտ վստահություն էր առաջ բերել, որ իրենց դժվար օրերը մնացել են ետևում, հետևաբար Վրաստանը դատապարտված երկիր է, վերջ կտրվի նրանց ինքնուրույնությանը[493]: Պատերազմի վրացի կեղծարարների զինանոցում փտած գաղափարների պակաս չկա: Ըստ դրանց, իբր թե հայկական հրամանատարությունը Վրաստանի սահմաններն է ուղարկել քարոզիչների, որոնց առջև խնդիր է դրված տեղական հայ բնակչության շրջանում բարձրացնել ապստամբական տրամադրություններ ընդդեմ Վրաստանի, և հող նախապատրաստել զինված ներխուժման համար, չնայած ինքը՝ Լեոն գրում է, որ Դրոն ապստամբեցրեց Վրաստանի հպատակ հայությանը[494], որն իհարկե, չպետք է դիտարկել բառացի՝ որպես իրականությունից կտրված փաստարկ:

Ակնհայտ էր, որ վրացական կողմն իր կողմից հաշվարկված քաղաքական գործողությունների որոշակի պլանն էր իրագործում և դրանով էր առաջնորդվում՝ ձգտելով հնարավորին հաշվի չառնել հայկական կողմի պահանջները: Բնականաբար, Հայաստանի Հանրապետության իշխանությունների վերը նշված բազմաթիվ բողոքագրերն ու դիվանագիտական նոտաները ցանկալի ազդեցություն չէին թողնում Վրաստանի կառավարության վարքագծի ու գործողությունների վրա: Այդ մասին է վկայում ՀՀ Նախարարների խորհրդի 1918 թ. նոյեմբերի 19-ի նիստի որոշումը. լսելով մինիստր-նախագահի զեկուցումը Ախալքալաքի գավառը վրացական զորամասեր մտցնելու մասին, որոշում է ընդունվում այդ հարցի մասին նորից խորհրդակցել Հայաստանի խորհրդի խմբակցությունների հետ[495], ինչը վկայում է Հայաստանի կառավարության միանգամայն խաղաղասիրական ձգտումների մասին:

Առանձնապես վրդովեցուցիչ էր վրացիների քաղաքականությունը հայկական Ուզունլար (Օձուն) գյուղի նկատմամբ, որի մասին տեղեկանում ենք Բորչալուի գավառի գեներալ-նահանգապետ Ծուլուկիձեին

[493] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 21.11.1918 թ.: ՀԱԱ, Ֆ.Պ- 275, ց. 5, գ. 93, թ 118:
[494] Տե՛ս Լեո, Անցյալից, Եր., «Շեմ» Հրատ., 2009, էջ 383-384:
[495] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 6, թ. 15:

ուղղված Մանգլիսյան Սահմանապահ ջոկատի երրորդ (3-րդ) Վորոնցովկայի բաժնի վրացական զորքերի հրամանատար գնդապետ Ռամազովի 1918 թ. նոյեմբերի 21-ի զեկուցագրից, որում ուղղակի ասվում էր. «Հաղորդում եմ Ձեզ, որ այսօր, ժամը 15-ին, հրացանաձգություն էր լսվում Ուզունլար գյուղի ուղղությամբ: Ես պարեկներ ուղարկեցի պոռուչիկ Շուբլաձեի հետ հետախուզելու, թե ինչումն է բանը: Շուբլաձեի երևալով հրացանաձգությունը դադարեցվում է: Պարզվեց, որ պահակային հարյուրյակի զինվորները և Ուզունլար գյուղի բնակիչները հրացանաձգության են բռնվել միմյանց հետ, որի ժամանակ սպանվել է ուզունլարյան միլիցիոները և վիրավորվել է ձին, զինվորների կողմից սաստիկ ծեծ է կերել գյուղի կոմիսարը: Պատմածներից երևում է, որ հարյուրյակի զինվորները մեղավոր են եղել, բայց հանդուգն, բացահայտ և զինված ելույթը մարտական շղթայաշարերով առիթ է տալիս մտածելու, որ գյուղում շատ զենք կա: Անհրաժեշտ է խուզարկություն կատարել գյուղի բոլոր տներում և միաժամանակ հարկավոր է այստեղից հեռացնել երկու հարյուրյակներին էլ, և փոխարինել դրանք ուրիշ զորամասերով, քանի որ զինվորները սաստիկ սանձարձակ են դառել և իրենց կողոպուտներով հուզում են տեղական բնակչությանը: Վաղը, իրադրությունը պարզելու համար և գյուղացիների ցանկությամբ մտադիր եմ Ուզունլարում տեղակայել ուզունլարյան սահմանապահ տեղամասի անձնակազմին և նշանակել այդ գյուղի պարետ՝ տեղամասի պետին»[496]: Սակայն այդ քայլը ևս խաղաղություն չմտցրեց հայկական այս գյուղում, քանզի վրացիները շարունակեցին իրենց հակահայկական գործողությունները, էլ ավելի գրգռելով տեղաբնակ հայերին: Ամեն ինչ տանում էր պատերազմի և ռազմական լուրջ գործողությունների: Իրադարձությունները սկսում են զարգանալ գլխապտույտ արագությամբ, դիվանագիտական դեմարշներն ու բողոքագրերն ուղեկցվում են անմիջական պատերազմական գործողությունների հապճեպ ու տենդագին նախապատրաստություններով: Վրացիները ոգևորվելով իրենց հարմար աշխարհաքաղաքական կացությունից, հաղորդակցության ուղիների նկատմամբ շահավետ վերահսկողությունից, Ադրբեջանի հարմարավետ չմիջամտությունից և մեծ տերությունների խարդախ ու նենգա-

[496] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 12:

միտ վերաբերմունքից՝ ոգևորված ավելի ու ավելի մարտականորեն էին տրամադրվում և ձգտում էին դեպի հայկական լեռնաշխարհների խորքերը՝ Լոռի, Ախալքալաք, Բորչալու:

Մինչ հայ-վրացական սահմանագլխին ռազմական գործողությունների ամպեր էին կուտակվում, կրքերն ավելի ու ավելի էին բորբոքվում, ընթանում էր դիվանագիտական հակամարտություն, որում հայկական կողմը համառորեն ձգտում էր խուսափել ռազմական առճակատումից, որը ձեռնտու էր միայն Վրաստանին: Դեռ 1918 թ. նոյեմբերի սկզբներին Երևան էր եկել Վրաստանի պառլամենտի անդամ և Հայաստանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Մդիվանին՝ վրաց-հայկական սահմանակնճիռը լուծելու նպատակով: Նոյեմբերի 29-ին նա գրավոր հաղորդել էր Հայաստանի Արտաքին Գործերի նախարարին, որ ինքը լիազորված է վերջնականապես լուծելու սահմանախնդիրը և կայացվելիք վճիռը ներկայացնելու Վրաստանի կառավարությանը ի վավերացում: Դրա հետ մեկտեղ վրաց դիվանագետը նրբորեն ներկայացրել էր Վրաստանի տարածքային հավակնությունները ՀՀ նկատմամբ: Ըստ դրա, Վրաստանի Հանրապետության կառավարության կարծիքով սահմանագիծը Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև պետք է անցներ նախկին Թիֆլիսի նահանգի հին սահմանով, այսինքն՝ ներկայումս Ախալքալաքի և Բորչալուի գավառները նախկին Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառից բաժանող գծով՝ հարավային կողմից, իսկ արևելյան կողմից՝ այն գծով, որ բաժանում է Բորչալուի գավառը նախկին Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառից: Այդ պահին նա փորձել էր պարզել Հայաստանի Հանրապետության հնարավոր առարկումները ընդդեմ վրացիների կողմից առաջադրվող սահմանների այդպիսի ուղղորդման և լսել նրա առարկությունները»[497]: Այդ ամենը սահմանավեճը փոխադրեց առճակատման մի նոր և լարված փուլ:

Ի պատասխան Վրաստանի կառավարության 1918 թ. նոյեմբերի 29-ի N 52 նոտայի, ըստ որի ներկայացվում էր վրացական դիրքորոշումը հայ-վրացական պետական սահմանի տարանջատման մասին սկզբունքները, 1918 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության

[497] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 7:

Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը ուղարկում է համապատասխան պատասխան նոտա (N 740) Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Մդիվանուն, որն էլ այն պետք է հասցեագրեր սեփական կառավարությանը, որը նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 7-ն ընկած ժամանակաշրջանում, անսալով հայկական կողմի խաղաղասիրական տրամադրություններին, զբաղված էր ռազմական գործողությունների ձեռնարկմամբ, ինչի մասին ստորև կանդրադառնանք: Դեկտեմբերի 7-ի գրությամբ Հայաստանի Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը հայտնում էր վրացական կողմին, որ ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում «Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև սահմանագծի ուղղվածության հարցում հայկական կառավարությունը ելնում է այն սկզբունքներից, որոնք միշտ բաժանվել են հայկական և վրացական դեմոկրատիաների ղեկավար շրջանների կողմից և բազմիցս վավերացվել և հիմնավորվել են 1917 թ. ընթացքում» և հետագա գործընթացքում «մի շարք խորհրդակցությունների և հաստատությունների կողմից, որոնք մշակել և քննարկել են նշված հարցը: Վրացական և հայկական ներկայացուցիչների համաձայնությամբ որոշված սահմանագծի հիմքում ընկած է, ինչպես հայտնի է՝ ռեալ ազգային-տարածքային տարաբնակեցման ազգագրական սկզբունքը, այդ սկզբունքի շեղմամբ հօգուտ Վրաստանի՝ ելնելով տեղագրական անհրաժեշտության նկատառումներից: Ըստ տարածքների սահմանազատման այդ սխեմայի, որն ընդունված է և վրացական պաշտոնական շրջանների կողմից, վեճի ենթակա չէ. Ախալքալաքի գավառն ամբողջովին և Բորչալուի գավառի մեծ մասը, ուր հայ բնակչությունը կազմում է բացարձակ մեծամասնություն, դրանք կազմում են Հայաստանի անկապտելի մասը»: Միաժամանակ նշվում էր, որ Բորչալուի գավառի հյուսիսային մասը և Թիֆլիսի գավառի հարավային մասը՝ ընդհուպ մինչև Թիֆլիս քաղաքը, չնայած որ այս շրջանում հայկական բնակչությունը գերակշռում է վրացական բնակչության նկատմամբ, մտցված են Վրաստանի կազմի մեջ՝ այն հաշվով, որ Վրաստանում հայերը կունենան ազգային-մշակութային ինքնորոշման երաշխիքներ[498]:

[498] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 73-74: Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 7:

Այնուհետև սույն նոտայում ընդգծվում էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունելի չի համարում վրացիների կողմից առաջադրված սահմանների նոր ուղղվածությունը, սակայն դրա հետ մեկտեղ իր պարտքն է համարում հայտարարել, որ Վրաստանի Հանրապետության կառավարության կողմից այդ առաջարկության վրա պնդումը կհանգեցնի հարցը ամբողջությամբ վերանայելու անհրաժեշտությանը, ընդ որում վերանայման կենթարկվի ոչ միայն այդ շրջանների մասին հարցը (Ախալքալաքի և Բորչալուի մի մասը), որոնց առիթով ներկայումս վրացական կառավարության կողմից վեճ է հարուցվել, այլև այն շրջանների (Բորչալուի մի մասը և Թիֆլիսի նահանգի հյուսիսային մասը), որոնք կարող են անվիճելիորեն Վրաստանի տարածքի հաշվին գրանցվել միայն Հայաստանի և Վրաստանի միջև տարածքային սահմանազատման ողջ նախկին սխեմայի լրիվ և աներկբա պահպանման դեպքում[499]:

Այս առումով անկասկած հետաքրքրություն են ներկայացնում նաև Ալ. Խատիսյանի (Խատիսով) նոյեմբերի 30-ի նշումները՝ կապված սահմանների ուղղման հետ: Վերջինս ընդգծում էր, որ սահմանազատումները պետք է անցկացվեն ազգագրական սկզբունքի հիման վրա և վեճերի դեպքում հարցերը պետք է լուծվեն ինքնորոշման կարգով և բնակչությունը պետք է արտահայտվի, ավելացնելով, որ մշտապես այդ տեսակետի վրա է կանգնած եղել վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների կուսակցությունը, որպեսզի Վրաստանին վերաբերվեին միայն Ախալքալաքի և Բորչալուի գավառների վրացիներով բնակեցված կտորները, որը կազմում է նշված գավառների աննշան մասը: Խատիսյանը նշում էր, որ այդ տեսակետին են եղել վրաց ժողովրդի բոլոր պաշտոնական ներկայացուցիչները՝ բազմաթիվ կառավարական հանձնաժողովներում: Խատիսյանը արձանագրում էր, որ միայն 1918 թվականի հուլիսին առաջին անգամ Վրաստանի Ազգային խորհրդի նախագահ Իրակլի Ծերեթելին հայտարարեց, որ Վրաստանի սահմանը պետք է զբաղեցնի ողջ Թիֆլիսի նահանգը, Ղազախի գավառը և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի տեղամասը: Նշելով, որ վերջին երկու գավառ-

[499] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 7; Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., (քաղաքական պատմություն). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 73-74:

ները արդեն չեն մտնում Վրաստանի կողմից նախագծվող պետական-տարածքային կազմի մեջ, այլ այդ վայրերը մտցված են կից գավառների մեջ, որոնցում գրեթե 200 հազարը հայ են, և ոչ ավելի, քան 15 վրացի կա, որոնք սահմանների ուղղման միջոցով մեծ չափով կարող են դուրս բերվել Հայաստանի սահմաններից: Խատիսյանը իր այս նոթերի վերջում նշում էր, որ երկու կողմերի իրավունքները վեճերի ընթացքում պետք է հավասար լինեն և փաստորեն հարաբերությունը առարկայի նկատմամբ պետք է հաստատվի համաձայնությամբ, այլ ոչ թե միակողմանի հայտարարությամբ՝ ազդարարելով տարածքները իրենց պետության սեփականություն և դրանք գրավելով ռազմական ուժով[500], դրժելով դեռ 1917 թ. ամռան վերջին Թիֆլիսում տեղի ունեցած մի շարք խորհրդակցություններում Ն. Ժորդանիայի, Ա. Չխենկելու, Ն. Ռամիշվիլու և այլոց նախաձեռնությամբ ընդունված որոշումները սահմանային-տարածքային հարցերի վերաբերյալ, ըստ որի չէր վիճարկվում Ախալքալաքը և հայկական Բորչալուն Հայաստանին միացնելու օրինավորությունը:

Ամեն դեպքում Հայաստանի կառավարությունը փորձում էր անել ամեն հնարավորը այդ բարդ իրավիճակից դուրս գալու համար՝ պահպանելով արժանապատիվ կեցվածքը: 1918 թ. դեկտեմբերի 1-ին Նախարարների խորհրդի նիստում Արտաքին Գործերի նախարարը զեկուցում է Վրաստանի ներկայացուցիչ Մդիվանիից ստացված գրության մասին հայ-վրացական սահմանների վերաբերմամբ, և ներկայացնում իր պատասխանի նախագիծը: Կառավարության անդամները որոշում են՝ համաձայնվելով Արտաքին Գործերի նախարարի առաջադրած տեսակետների հետ, հանձնարարել նրան տեղեկացնել, պ. Մդիվանու միջոցով, Վրաստանի կառավարությանը, որ եթե վերջինս հակառակ մինչև հիմա տեղի ունեցած բանակցությունների և սկզբունքային համաձայնությունների, այժմ հայտարարում է ամբողջ Թիֆլիսի նահանգը (ի բաց չառեալ Ախալքալաքի գավառը և Բորչալու գավառի հայկական մասը) Վրաստանին պատկանող, Հայաստանի կառավարությունը իր կողմից վիճելի կհայտարարի Թիֆլիսի գավառը Թիֆլիս քաղաքով հանդերձ[501]:

Հետաքրքիր մոտեցում է, սակայն փակուղային, քանի որ վրացիները դրանից ավելի կատաղեցին: Այդ նույն նիստում (1918 թ., դեկտեմ-

[500] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 99, թ. 37-38:
[501] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 484, թ. 74, 199:

բերի 1) մինիստր-նախագահը զեկուցում է Զինվորական նախարարից ստացված գրության մասին Ախալքալաքի գավառը զինված ուժ մտցնելու մասին: Նիստում տեղեկացվում է, որ հարցի մասին Զինվորական նախարարը հատուկ խորհրդակցություն է ունեցել Հայկական դիվիզիայի պետ, գեներալ Սիլիկյանի (Սիլիկով), զինվորական շտաբի պետ Դոլուխանովի, դիվիզիայի շտաբի պետ գնդապետ Զինկևիչի և Դիլիջանի շրջանի պետ Դրոյի հետ: Խորհրդակցությունը նկատի ունենալով ընդունվելիք բարդությունները հարավային սահմանի վրա և մի քանի այլ հանգամանքներ, միաձայն եկել է այն եզրակացության, որ ներկայիս Ախալքալաքի գավառը զորամասեր չպետք է մտցնել, բավականանալով առայժմ միմիայն նախապատրաստական գործողություններով: Ըստ այդմ Նախարարների խորհուրդը համերաշխվելով Զինվորական նախարարի և նրա կողմից հրավիրված խորհրդակցության կողմից ընդունված բանաձևի և պատճառաբանությունների հետ, լիովին հիմնավոր գտավ դրանք և դրա հիման վրա Զինվորական նախարարին լիազորեց՝ Ախալքալաքի գավառը զորամասեր չմտցնել ու առժամանակ բավականանալ նախապատրաստական գործողություններով[502]:

Այդ նույն ժամանակ վրացիները շարունակում էին պնդել իրենց նոր տեսակետի վրա, և օգտվելով թուրքերի հեռանալուց, սկսեցին նախապատրաստվել հայկական տարածքների զավթման ապօրինի մեծապետական ծրագրերի իրականացմանը, որին հայկական կողմը փորձում էր հակազդել՝ ամեն ինչ անելով պատերազմի մեջ չմտնելու համար: 1918 թ. դեկտեմբերի 1-ի տվյալներով, կառավարության նիստում ընթացած խորհրդակցության արդյունքներով, որին մասնակցում էին դիվիզիայի հրամանատար Մ. Սիլիկյանը, ռազմական շտաբի պետ, գեներալ-մայոր Դոլուխանովը, Գլխավոր շտաբի Հետախուզական բաժնի պետ, գնդապետ Զինկևիչը և դիլիջանյան ջոկատի պետ Դրոն, ընդունվում է որոշում՝ կապված հնարավոր ռազմական գործողությունների հետ Ախալքալաքի շրջանում: Մասնակիցները գալիս են այն եզրահանգման, որ Ախալքալաքի գավառի գրավման համար չի կարելի ուղարկել ոչ նշանակալից ուժեր, քանի որ գործելով անվճռական, կվարկաբեկվեն և կիջեցնեն մեր զորքերի բարոյական վիճակն ու մար-

[502] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 6, թ. 1:

տական ոգին: Ռազմական նկատառումներով անհրաժեշտ է միաժամանակ զարգացնել գործողությունները և Բորչալուի գավառի առավել հայկական կողմի համար ակնհայտ ուղղությամբ[503]:

Սակայն ինչպես արդեն ասվել է, վրացիները շարունակեցին իրենց հակահայկական գործողությունները Հայաստանի հյուսիսային շրջաններում, իրական սպառնալիք ստեղծելով հայկական Լոռու, Ախալքալաքի և Բորչալուի համար, բնակչությանը կանգնեցնելով աղետի, նորանոր փորձությունների և որ շատ կարևոր է՝ արտագաղթի վտանգի առաջ: Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը 1918 թ. դեկտեմբերի 2-ի գրությամբ (№ 763)՝ ուղղված Վրաստանի դիվանագիտական միսիայի ներկայացուցչին Հայաստանում, նշում էր, որ վերջին հանդիպման ժամանակ տեղեկանալով, որ Վրաստանի Հանրապետության կառավարությունը նշանակել է Ախալցխա-Ախալքալաքյան գավառի գեներալ-նահանգապետություն և միջոցներ ձեռնարկել Ախալքալաքի շրջանի ռազմական գրավման համար: Ս. Տիգրանյանը Հայաստանի կառավարության անունից բողոքում էր Վրացական կառավարության նշված գործողությունների դեմ, որոնք ուղղված էին Հայաստանի տարածքային իրավունքների դեմ Ախալքալաքի գավառում[504]:

Հարկ է նաև նշել այն մասին, որ Ախալքալաքի նկատմամբ քաղաքականությունում հայկական քաղաքական առաջնորդների և կառավարական շրջաններում որոշակի երկվություն կար: Ս. Վրացյանը Ախալքալաքի գավառի հարցի նկատմամբ հատուկ ուշադրության բացակայությունը և այդ հիմնահարցի չարծարծելը բնական էր համարում այնքանով, քանի դեռ հայկական այդ գավառը ռազմական առումով օկուպացված էր կամ ռազմակալված էր թուրքական զորամասերի կողմից, և միայն 1918 թ. դեկտեմբերի 1-ին ՀՀ կառավարությունը ընդունեց որոշում, ըստ որի «ներկայիս Ախալքալաքի գավառը զորքեր չպետք է մտցնել՝ բավականանալով առայժմ նախապատրաստական գործողություններով»[505]: Սակայն իրադարձությունների հետագա զարգացում-

[503] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 99, թ. 41:
[504] Տե՛ս նույն տեղում, գ. 16, թ. 8:
[505] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 73:

ները իրենց լուրջ շտկումները մտցրին իրադարձությունների զարգացման հետագա ընթացքում և ՀՀ կառավարության գործելակերպում:

Արդեն դեկտեմբերի 2-ի Գեգեչկորու հեռագիրը՝ ուղղված Երևանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մդիվանուն, վկայում է, որ վրացիներն այլ տրամադրություններ ունեին: Նշված հեռագրում Գեգեչկորին հայտնելով իրենց համոզվածության մասին հայկական կառավարության և թուրքական հրամանատարության միջև կայացած համաձայնության կապակցությամբ, գտնում էր նաև, որ այդ հանգամանքը բարդացնում է հայերի հետ հնարավոր համաձայնության խնդիրը: Գեգեչկորին Մդիվանուց խնդրում էր, որ աշխատի այդ հարցը պարզել Տիգրանյանի հետ, վերջինիս տեղեկացնելով, որ խորհրդաժողովը հետաձգված է, հարցնելով նաև, թե ինչու հայկական կառավարությունը պատգամավորներ չի ուղարկել: Տեղեկատվության վերջնամասում Գեգեչկորին նշում էր նաև, որ ինքը հնարավոր է համարում հայերի հետ նախօրոք բանակցություններ վարել, սակայն եթե նրանց կողմից ցանկություն չարտահայտվի ընդառաջ գնալ, այդ գաղափարը երկար ժամանակով կվարկաբեկվի[506]:

Այս փաստաթուղթը պարզ վկայում է վրացական սցենարի կանխորոշվածության մասին, ձգտման մեջ հանդիպակաց կողմի նկատմամբ մեղադրանքների միջոցով քաղաքական անմեղսակցության ալիբի ստեղծել, շփոթության մեջ գցելով հանրային կարծիքը: Դա շարունակվում է հետագայում ևս: Վրաստանի կառավարության հետագա քայլերը ևս այդ մասին են վկայում: Վրաստանի կառավարության որոշումով շրջափակվում է ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Բաթումի-Ալեքսանդրապոլ երկաթուղին, որով դժվարությամբ Հայաստան էր գալիս կենսական մեծ նշանակություն ունեցող պարենամթերք և այլն՝ ԱՄՆ-ից և այլ երկրներից:

Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Մդիվանին Հայաստանի Արտաքին Գործերի նախարարին ուղղված 1918 թ. դեկտեմբերի 4-ի գրության մեջ ցինիկաբար հայտնում էր, որ իրականում Ախալցխա-Ախալքալաքյան շրջանի գեներալ-նահանգապետի նշանակումը կատարվել է ոչ թե վերջին օրերին, այլ դեռ երկու ամիս առաջ, և այդ

[506] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 27, թ. 3:

ժամանակ ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ Վրաստանի Հանրապետության զորքերի կողմից Ախալքալաքի շրջանը գրավելու համար, որ բոլոր միջոցները ձեռնարկվել են միանգամայն բացահայտ բոլորի աչքի առաջ, և նույնիսկ կազմակերպվել է դեպի Ախալքալաքի գավառն ուղարկվող զորքերի զորահանդես: Մդիվանին ավելացնում էր, որ հետևաբար, դեկտեմբերի 2-ին կայացած իրենց խոսակցությունը ոչ մի կերպ չէր կարող իր մեջ պարունակել հաղորդագրություն այն մասին, որ Վրաստանի կառավարությունը միմիայն այժմ է նախապատրաստվել Ախալքալաքի շրջանի գրավմանը[507]:

Տիպիկ վրացական հոգեբանություն՝ վեհապետական շովինիզմի դիրքերից: Ավելին, այս քաղաքականության էությունը ավելի բացահայտ երևում է մի այլ փաստաթղթից: Այսպես, այդ նույն Մդիվանին դեռ դեկտեմբերի 3-ի գրությամբ ի պատասխան դեկտեմբերի 1-ի ՀՀ կառավարության նոտայի՝ լրիվ բացահայտում է բոլոր խաղաքարտերը՝ կապված Վրաստանի տարածքային հավակնությունների հետ: Հարկ է նշել, որ դա նա անում էր բավականին հմտորեն և ցինիկաբար: Այսպես, Հայաստանում վրաց դիվանագիտական հավատարմատար Մդիվանին վերը նշված փաստաթղթում շեշտում է, որ «ինքը չի ժխտում այն փաստը, որ 1917 թ. ընթացքում և 1918 թ. սկզբին (մինչև մայիսի 26-ը) իսկապես եղել են վրացական դեմոկրատիայի ղեկավար շրջանների ներկայացուցիչների հայտարարությունները Ախալքալաքի շրջանը և Բորչալուի գավառի մեծ մասը Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու անհրաժեշտության մասին:…Դրանք կատարվել են այն ժամանակ, երբ դեռ խոսք անգամ չկար ո՛չ Վրաստանի, ո՛չ Հայաստանի մասին որպես ինքնուրույն պետությունների, և երբ խոսքը գնում էր, ոչ թե առանձին պետական կազմավորումների սահմանազատման, այլ միասնական պետության կազմի մեջ մտնող առանձին ժողովուրդների միմյանց միջև սահմանազատումների մասին՝ այդ ժողովուրդների հասարակական - տնտեսական կյանքի կազմակերպման համար»: Ըստ այդմ էլ և կառուցվեց բացառապես ազգագրական սկզբունքի հիման վրա ազգային-տարածքային տարաբնակեցումը, այդպիսի սկզբունքը լիովին համապատասխանում էր հեղինակների առջև դրված խնդրի էությանը:

[507] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 99, թ. 59; գ. 16, թ. 8:

Ակնհայտ է, որ այս դեպքում միայն առանձին վերցրած ազգագրական սկզբունքը դառնում է լիովին անբավարար, քանի որ այս կամ այն տարածքի հարաբերությունը այս կամ այն պետության տարածքի նկատմամբ որոշվում է ոչ միայն ընդամենը նրա բնակչության ազգությամբ, այլև պատմական, աշխարհագրական, տնտեսական-կենցաղային և մի շարք այլ պայմանների ամբողջությամբ միասին վերցրած,- ընդգծում էր Մդիվանին: Այնուհետև, ավելին, դիմացինին ավելի խճճելու նպատակով Մդիվանին շեշտում էր, որ «վրացական դեմոկրատիայի ոչ մի ներկայացուցիչ ոչ ավելի ուշ, ոչ ավելի վաղ չի հայտարարել, որ Ախալքալաքի և Բորչալուի գավառները կազմում են Հայաստանի որպես ինքնուրույն պետության անքակտելի մասը» (ընդգծումը մերն է - Վ. Վ.): Շարունակելով իր այս միտքը, Մդիվանին նշում էր, որ նրանց հայտարարություններում պարունակվել է ընդամենը այն փաստի արձանագրումը, որ այդ գավառներում գերակշռում է հայկական բնակչությունը (ընդ որում, առանց բացատրելու այդ երևույթի առաջացման պատճառները, այլև այդ բնակչության Ռուսաստանի կազմում որպես ինքնուրույն մշակութային-տնտեսական միավոր կազմակերպվելու հնարավորության արդարացիության ընդունումը): Իր ասելիքը Մդիվանին եզրահանգում է հետևյալ ևս ոչ անհետաքրքիր շարադրանքով. «Ինչ վերաբերում է Փամբակի և Ղազախի շրջաններին, ապա այն բանի հետ կապված, որ պայմանները, որոնց շնորհիվ դրանք ձեռք են բերել ռազմավարական նշանակություն Վրաստանի համար (թուրքերի հարևանությունը) այժմ անցյալ են դարձել, և չնայած պատմության մեջ գոյություն ունեցող դրանց կապին Վրաստանի հետ, վերջինիս կառավարությունը անհրաժեշտ չի գտնում պնդել դրանց այդ երկրի կազմի մեջ ընդգրկելու վրա:

Վերջապես ես չեմ կարող չնշել և այն հանգամանքի մասին, եթե Վրաստանի կառավարությունը համարում է իրեն իրավասու պնդել Ախալքալաքի և Բորչալուի գավառների տարածքները իր կազմում թողնելու վրա, ինչպես դա երևում է շարադրանքից, դա անում է օրգանապես ամբողջական տերիտորիայի պահպանման իր տեսանկյունից՝ միակ արդարացի սկզբունքից ելնելով»[508]:

[508] Տե՛ս նույն տեղում, գ. 99, թ. 46:

Չնայած այս ամենին, Հայաստանի կառավարությունը անընդհատ փորձում էր շտկումներ մտցնել իրավիճակում: 1918 թ. դեկտեմբերի 4-ին Նախարարների խորհուրդը իր նիստում կրկին լսում է Արտաքին Գործերի նախարարի զեկուցումը Վրաստանի ներկայացուցիչ Մդիվանու գրության մասին՝ կապված Վրաստանի կողմից Ախալքալաքի գավառը զինված ուժեր մտցնելու կապակցությամբ: Նիստում ընդունվում է համապատասխան որոշում, որով հանձնարարվում է Արտաքին Գործերի նախարարին ի լրումն արդեն հանձնված գրավոր բողոքի, հայտնել Մդիվանուն, որպեսզի նա իր կառավարությանը տեղեկացնի, որ Վրաստանի կառավարությունը զորք չմտցնի Ախալքալաքի գավառ, մինչև որ հայ-վրացական սահմանների հարցը լուծվի փոխադարձ համաձայնությամբ կամ այլ խաղաղ ճանապարհով[509]:

Արդեն ասել ենք, որ ըստ վրաց գեներալ Գ. Կվինիտաձեի, պատմակեղծարար Գ. Մարխուլիայի պնդման, Վրաստանի կողմից պատերազմի ոչ մի նախապատրաստություն և նպատակադրում չի եղել, և ընդհակառակը՝ նախահարձակ լինելու մեղքը գցվում է Հայաստանի կառավարության, ռազմատենչորեն տրամադրված ռազմական շրջանների վրա[510]: Վրաստանը, իհարկե, լուրջ չընդունեց հայկական դիմումագրերը, այդ թվում և Ս. Տիգրանյանի պահանջագիրը՝ դուրս բերելու վրացական զորքերը Ախալքալաքից: Ավելին, վրացական կողմը կարծում էր, որ նախապատրաստվելով պատերազմի, հայկական կողմը՝ հայկական հրամանատարությունը դեռ դեկտեմբերի 4-ի գիշերը վրացական իշխանությունների դեմ տեղական բնակչությանը ապստամբության դրդելու և վերջին հաշվով՝ Վրաստան զինված ներխուժման համար նախօրոք Վրաստանի սահմաններն է ուղարկել քարոզիչների: Եվ ավելին, վրացական հեղինակների, և մասնավորապես, Գ. Մարխուլիայի ստահոդ պնդմամբ, դեռ դեկտեմբերի 5-ի գիշերը հայկական կանոնավոր բանակի զորամասերը շրջանցելով վրացական սահմանա-

[509] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 484, թ. 74; Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 6, թ. 19:

[510] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах (с сокращениями), 2007, стр. 17: Տե՛ս նաև http:/iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/: Տե՛ս նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia/marxulia-interviu/: Տե՛ս նաև Квинитадзе Г. И., Мои воспоминания в годы независимости Грузии. 1917-1921, Париж, 1985, стр. 58:

պահ ուղեկալները, ներխուժեցին Վրաստանի սահման, տեղերում միավորվելով «հայկական զինված բանդաների հետ»: Ավելին, վրաց այդ կեղծարարների ստահոդ պնդմամբ, այդ միավորված հայկական զինուժը, Դրոյի պլանի համաձայն, փաստորեն պետք է գրավեին Վորոնցովկան, Ալեքսանդրովկան, Մղարթը, Քոբերը [Քոբայրը], Ուզունլարը, Քորինջը, Ծաթերը, Բորչալուն, Եկատերինֆելդը, Բաշկիթեչին, Դաղեթ-Խաչենը, Շուլավերը, Բոլնիս-Խաչենը և այլն, որից հետո, ըստ այդ վրացական պարզապես հերյուրալից զրպարտանքի, հայերը իբր թե պատրաստվում էին գրավել Թիֆլիսը, ուր տանող ճանապարհը, ըստ էության, բաց էր, քանզի հայկական զորքերի կայծակնային հարձակումը առանց մեծ դժվարության, կջարդեր վրացական զորամասերի դիմադրությունը, և հայկական զորքերը հաղթական կմտնեին Վրաստանի մայրաքաղաք[511]:

Գ. Մարխուլիան ոչնչով չհիմնավորված վարկած է առաջ քաշում, թե օգտագործելով դիվանագիտական հարաբերությունները, ՀՀ այդ ընթացքում նախապատրաստվել է պատերազմի: Սակայն այդպես չէր, քանզի հենց դեկտեմբերի 5-ին վրացական զորամասերը մտնում են Ախալքալաք: Մեծապետական Վրաստանը ամեն ինչ տանում էր դեպի առճակատում: Եվս մեկ փորձ կանխելու համար ռազմական բախումը երկու հանրապետությունների միջև կատարեց Հայաստանի Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը 1918 թ. դեկտեմբերի 5-ին, համապատասխան նոտա ուղարկելով Վրաստանի դիվանագիտական հավատարմատարին Հայաստանի Հանրապետությունում: Դրանում ասվում էր, որ կառավարության հանձնարարության համաձայն խնդրվում է հաղորդել Վրաստանի Հանրապետության կառավարությանը, որպեսզի այն ձեռնպահ մնա իր զորքերը Ախալքալաքի գավառի սահմանները մտցնելուց, մինչև հարցի բանակցային ուղիով խաղաղ կարգավորումը նշված շրջանում[512]:

«Հայկական Հանրապետության կառավարության հանձնարարությամբ խնդրում եմ Ձեզ հայտնել Վրաստանի Հանրապետության կառա-

[511] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http://iberiana,wordpress.com/armenia-georgia/1918-1920/: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/ marxulia-interviu:

[512] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 10:

վարությանը, որպեսզի նա ձեռնպահ մնա Ախալքալաքի գավառի սահմանները իր զորքերը մտցնելուց մինչև այդ հարցի խաղաղ հանգուցալուծումը այդ շրջանում», - ասվում էր հայկական կողմի նոտայում: Նոտան հանձնվում է Ե. Գեզեչկորուն:

Վրացական կողմը սակայն լուրջ չընդունեց այդ նոտան, և դեկտեմբերի 5-ի պատասխան նոտայում պարզապես հայտարարագրեց հետևյալը. «…Վրաստանի կողմից Ախալքալաքի գավառի գրավումը ո՛չ պատմական, ո՛չ քաղաքական, ո՛չ էլ բարոյական հարաբերության առումով վիճարկելի չի հանդիսանում[513]:

Այսպիսով, վրացիները յուրովի են որոշում լուծել հարցերը, անսալով հայկական կողմի հորդորները՝ խաղաղ միջոցներով լուծել սահմանավեճը, 1918 թ. դեկտեմբերի 5-ին վրաց զորքերը զորավար Մականի (նաև՝ Մաղաշվիլի) գլխավորությամբ մտնում են Ախալքալաք և հայտարարում, որ այն միացված է Վրաստանին: Գեներալ-մայոր Կ. Մականը նշանակվում է նահանգապետ, միաժամանակ խոստանալով և սպառնալով խիստ միջոցներ ձեռնարկել անկարգությունների և հակակառավարական-հակավրացական գործունեության դեմ[514]: Նույն օրը Վրաստանի Զինվորական մինիստրի անունով Ախալքալաքից ուղարկվում է հեռագիր, որում ցինիկաբար խեղաթյուրելով իրականությունը, ասվում էր. «Ախալքալաքը գրավված է դեկտեմբերի 5-ին, ժամը 10-ին: Բնակչությունը դիմավորել է աղ ու հացով: Շուրջ բոլորը եղել են կողոպուտներ: Ձեռնարկվել են ծայրահեղ միջոցներ, ուղարկվել է հետախուզություն: Բնակչությանը հայտարարվել է իրենց բնակատեղիները վերադառնալու մասին: Սպայական ֆլիգելներից (առանձնաշենք) մեկը, ուր պահվում էր ցորենը, այրվել է թուրքերի կողմից: Զորքերի տրամադրությունը առույգ է. Մական»[515]: Դրա ետևից գեներալ Մականի կողմից ուղարկվում է մի այլ հեռագիր ևս Վրաստանի կառավարության նախագահի հասցեով, որում նա կառավարությանը շնորհավորում էր առանց

---

[513] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: //http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/ marxuliainterviu:

[514] Տե՛ս «Борьба», Тифлис, 9, 10 ноября, 1918: Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 80-82:

[515] Տե՛ս Армяно-грузинский вооружённый конфликтъ…, стр. 31:

արյունահեղության Ախալքալաքի գավառը Վրաստանին միացնելու կապակցությամբ[516]: Ախալքալաքի գրավման կապակցությամբ Մղիվանին դեկտեմբերի 6-ին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրին ուղղված գրության մեջ հայտնում էր դեկտեմբերի 5-ին Երևանից ստացված ՀՀ կառավարության հանձնարարությամբ ուղարկված Ս. Տիգրանյանի հայտարարագրի մասին, որում վրացական կառավարությանը հայտնվում էր, որ նա ձեռնպահ մնա իր զորքերը մտցնելուց Ախալքալաքի գավառի սահմանները՝ նախքան հիշյալ շրջանի հարցի խաղաղ լուծումը[517]:

Այդ նույն իրադարձությունների կապակցությամբ Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Գեգեչկորին 1918 թ. դեկտեմբերի 7-ի հեռագրով (№ 5447)՝ ուղղված իր դիվանագիտական հավատարմատարին Հայաստանում, տեղեկացնում էր հետևյալը. «Ախալքալաքը գրավված է մեր զորքերի կողմից դեկտեմբերի 5-ին, առավոտյան ժամը 10-ին: Մեր կառավարության այդպիսի քայլը թելադրված է տեղական բնակչության շահերով, որը ենթարկվում էր անվերջանալի բռնությունների գավառում դեռևս մնացած թուրքական զորամասերի, ինչպես նաև անպատասխանատու անձանց և զինված բանդաների կողմից: Վրացական կառավարությունը իր պարտքն համարեց առաջին իսկ հնարավորության դեպքում վերջ դնել իրերի անտանելի վիճակին, գտնելով, որ Վրաստանի կառավարության կողմից Ախալքալաքի գավառի գրավման հարցը ո՛չ պատմական, ո՛չ քաղաքական, ո՛չ բարոյական առումներով վիճելի չի թվում: Ընդ որում Վրաստանի կառավարությունը լիովին համոզված է մնում, որ այդ հանգամանքը ոչ մի չափով չի կարող ազդել տարածքային սահմանազատման մասին բանակցությունների ընթացքի վրա՝ այդ խնդրի վերաբերյալ երկու կողմերի համար էլ նախընտրելի պայմաններով երկկողմանի համաձայնություն ձեռք բերելու նպատակով»[518]:

---

[516] Տե՛ս նույն տեղում, էջ 31:

[517] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 17 դեկտեմբերի, 1918 թ., N 21:

[518] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 77: Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 17 դեկտեմբերի, 1918 թ., N 21:

Ի լրացումն Վրաստանի Արտաքին գործերի մինիստր Գեգեչկորու 1918 թ. դեկտեմբերի 7-ի հեռագրի (№ 5447)՝ ուղղված իր դիվանագիտական հավատարմատարին Հայաստանում՝ Մդիվանուն, հայտնում էր, որ Զինվորական նախարարությունից այդ իսկ պահին ստացված տեղեկությունների համաձայն, Սանահինի մոտ երևացել են հայկական 4-րդ հրաձգային գնդի զորամասեր՝ գլխավորությամբ գնդապետ Տեր-Նիկողոսյանի, որոնք իբր թե գրգռում են տեղական ազգաբնակչությանը, ստեղծում են թյուրիմացություն և խառնաշփոթ, որն իբր դրսևորվեց Սանահին կայարանի վրա հրացանաձգությամբ: Մդիվանուն հրահանգվում էր քայլեր ձեռնարկել, որոնք իրենց կերաշխավորեին անցանկալի միջադեպերից, նույնիսկ պնդելով, որ Ախալքալաքի գրավմամբ չեն խախտվել այն սկզբունքները, որոնք կարող էին դրվել փոխադարձ համաձայնության հիմքում, առաջարկելով այդ մասին հայկական կառավարությանը անել պարզորոշ հավաստիացումներ[519]: Սակայն Երևանի հետ հաղորդակցության բացակայության պատճառով այս հեռագիրն ուշացումով է տեղ հասնում:

Դեկտեմբերի 7-ին կորնետ Սաղոյանը էսկադրոնով (հեծելավաշտ) մտնում է Գորելովկա, որտեղ նա Ախալքալաքից եկող բնակիչներից տեղեկանում է, որ վրացական զորքերն արդեն մտել են Ախալքալաք[520], և սանձարձակություններ են անում, տեռորի մեջ պահելով տեղական հայկական բնակչությանը: Հայկական հեծելավաշտը տեղաշարժվելով դեպի Ախալքալաքի գավառի հարավարևելյան ծայրամասը՝ գրավեց ռուս աղանդավորների Տրոիցկոյե, Եֆրեմովկա, Գորելովկա և Բոգդանովկա (Նինոծմինդա) գյուղերը: Այդ մասին տեղեկանում ենք նաև Դրոյի դեկտեմբերի 7-ի Ալեքսանդրապոլից ուղարկված հեռագրից, որով վերջինս տեղեկացնում էր հայկական զորամասի կողմից Ախալքալաքի շրջանի Գորելովկա գյուղի գրավման մասին, միաժամանակ տեղեկացնում, որ հայկական առաջապահ զորաջոկատը դեկտեմբերի 8-ի առավոտյան ուղարկվել է Բոգդանովկա, որտեղ նրանց մի վրաց սպա առաջարկում է հայկական զորքին հեռանալ և բոլորովին դատարկել Ախալքալաքի գավառը, ինչին հետևում է այնտեղ թվով 300 հոգուց բաղկա-

[519] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 17 դեկտեմբերի, 1918 թ., N 21:
[520] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 150, թ. 11-12:

ցած վրացական զորամասի հայտնվելը՝ մեկ թնդանոթախմբի ուղեկցությամբ[521]:

Վրացական զորքերը դեկտեմբերի 8-9-ին չսահմանափակվելով իրենց այդ ձեռնարկումներով, իրականացնում են Ախալքալաքի գավառի Եֆրեմովկա և Տրոիցկոյե գյուղերի սակավամարդ հայ զորամասերի զինաթափումը, որոնք հայերը գրավել էին թուրքերի հեռանալուց հետո[522]: Իրեն որոշակիորեն ապահովագրված համարելով, գեներալ Մակաևը Ախալքալաքում նշանակեց կայազորի հրամանատար և գավառի կոմիսար, որից հետո շարժվեց Ախալցխա, որտեղ մահմեդական բնակչության ընդվզումներ էին ակնկալվում[523]:

Այստեղից բնականաբար մի հարց է առաջանում, թե ինչու՞ հայկական զորքերը որոշակի նախապատրաստական գործողություններից հետո, այդուհանդերձ խնդիր չդրեցին ռազմակալել ողջ Ախալքալաքի գավառը, այդ անվիճելիորեն հայկական տարածքը, այլ ընդամենը բավարարվեցին փոքրաթիվ զորամասերով գրավելով վերը նշված Եֆրեմովկա և Տրոիցկոյե գյուղերը, որոնք սակայն հարկադրված թողեցին դեկտեմբերի 8-9-ին: Դա փորձել է բացահայտել Ս. Վրացյանը, վերհանելով իրենց զիջողականության խորքային պատճառները. «Հայաստանի խորհուրդը մի շարք դռնփակ նիստերում քննելով դրությունը, կառավարությանը տվեց գործելու ազատություն, պարտավորեցնելով նրան ամեն միջոցի պաշտպանելու համար Հայաստանի իրավունքը Ախալքալաքի, նամանավանդ, Լոռու վերաբերմամբ: Այս հարցում տարակարծություն չկար, բոլոր կուսակցությունները Լոռին համարում էին Հայաստանի անբաժանելի մասը»[524]:

Լարվածությունը օր-օրի ահագնանում էր, որին իրենց վերաբերմունքը ցույց տվեցին հայրենակցական միությունները ի պատասխան վրացական ոտնձգությունների հայ ազգաբնակչության նկատմամբ:

Հայաստանի Զինվորական նախարար Հովի. Հախվերդյանին ուղղված Ուզունլարի (Օձուն) ընկերակցության ընտրյալների՝ Թադյանի և Կարաքեշիշյանի դիմումագրում նշվում է այն մասին, որ դեկտեմբերի 8-

[521] Տե՛ս «Ձանգ», Երևան, 15 դեկտեմբերի, 1918 թ., N 80:
[522] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 226:
[523] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 128:
[524] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 227:

ին վրացական զորքերը ցանկացել են գրավել Ուզունլար գյուղը, սակայն գյուղի հասարակայնությունը վճռական հակահարված է տվել: Պատերազմը դարձավ իրողություն, լուրջ իրադարձություններ ծավալվեցին Քոբեր-Ծաթերի և Ուզունլարի շրջանում, որին մասնակցեցին հայկական կանոնավոր բանակի զորամասերը...[525]: Այնուհետև տեղեկագրում ասվում էր. «…զորքերը վճռել են ուժով գրավել, 2 օր Ուզունլարը գտնվում է հրետանակոծության տակ: Վրացիները սպառնում են կոտորել ուզունլարցիներին: Հազար տուն խնդրում են՝ անհապաղ կարգադրություն անել՝ օգնություն ցուցաբերելու կործանվող հպատակ ժողովրդին»[526]:

Վրաստանը իր քայլերում անզիջում էր և կտրուկ, և Հայաստանի Հանրապետության կառավարության բողոքներին պատասխանեց մերժողական պատասխաններով, որ Ախալքալաքը վրացական է և դրա գրավումը անհրաժեշտ՝ ազգաբնակչությանը պաշտպանելու պարտավորությունից ելնելով[527]:

Այդ ընթացքում Վրաստանը տնտեսական արգելքներ հարուցեց Հայաստանի առաջ, հաղորդակցությունը վատացավ, ճանպարհները փակվեցին, Թիֆլիսում արգելքներ դրվեցին Հայաստանին հասանելիք գումարների, զինվորական ունեցվածքի, պարենային ապրանքների, զեմստվոյական միությունների գույքի, փոստ-հեռագրերի վրա, այն պատճառաբանությամբ, որ երկու պետությունները տարանցիկ պայմանագիր, համաձայնագիր չեն ստորագրել: Քանի որ խնդիր առաջացավ Երևան փոխադրել Բաքվում ձեռքբերված 40 ցիստեռն նավթը և 9 ցիստեռն բենզինը, Վրաստանը առիթից օգտվեց և Հայաստանից առանց երկմտելու պահանջեց նավթամթերքների 20 տոկոսը՝ տարանցիկ փոխադրման արտոնության փոխարեն: Բայց այնուհետև հրաժարվեց որևիցե շարժակազմ բաց թողնել դեպի Հայաստան, բացառությամբ թուրքական զորքերը փոխադրող գնացքների, այն փաստարկով, որ Լոռվա շրջանը, որտեղով անցնում էր երկաթուղագիծը, գտվում էր ռազմական դրության մեջ, որի հետևանքով Հայաստանը հայտնվեց տնտե-

[525] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 88-90.

[526] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 13:

[527] Տե՛ս Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 103: Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии..., стр. 451-452:

սական շրջափակման մեջ, և զրկվեց նաև արտասահմանում հայթայթված հացահատիկի այն փոքր քանակությունից, որին սպասում էին սովահար մարդիկ Հայաստանում[528]: Վրացական զորաջոկատների ամբարտավան և սանձարձակ կեցվածքը և բռնարարքները առաջ բերեցին մեծ վրդովմունք, որի արդյունքում և հետևանքով Լոռու գյուղացիությունը վրացական տիրապետությունը իր նկատմամբ համարեց անցանկալի և խնդիր առաջադրեց վերամիավորվելու մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ: Երևան ուղարկված բազմաթիվ դիմումագրերում լոռեցիները բողոքում էին անհարկի բռնագրավումների և կողոպուտների օրեցօր սաստկացող քաղաքականությունից, դատապարտելով վրացական իշխանություններին:

Վերջ ի վերջո, այս ամենը էլ ավելի սրեց ռազմաքաղաքական հարաբերությունները Վրաստանի և Հայաստանի միջև, հանգեցնելով արյունոտ պատերազմական գործողությունների, որից ոչ մի կողմը գործնականում չշահեց:

Ուզունլարի դեպքերը Լոռվա ռազմաքաղաքական իրադրության սրման ժամանակագրության մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում: Այդ հանգամանքը լավ է նկատել անգամ ամերիկյան պատմաբան Ֆ. Կազեմզադեն, որն այդ իրադարձությունների կապակցությամբ արձանագրում է հետևյալը. «Այն ժամանակ, երբ Գեգեչկորին և Տիգրանյանը վիճում էին, Բորչալուում բռնկվեց ապստամբություն վրացական օկուպացման դեմ: Այն առաջացավ ինչպես վրացիների անբավարար կառավարման, այլև դաշնակների քարոզչության հետևանքով»[529]: Նման զարգացումները էլ ավելի սրեցին ռազմաքաղաքական իրավիճակը: Դեկտեմբերի 9-ին Բորչալուի գավառի Ուզունլար հայկական գյուղի վրացական կայազորը սրընթաց զինաթափվեց և գերի վերցվեց, որին հաջորդեց վրացական պատասխանը՝ գեներալ Ծուլուկիձեի կողմից դեկտեմբերի 9-ին պատժիչ զորաջոկատի ուղարկումը Ուզունլարում կարգ ու կանոն հաստատելու համար, սակայն իր փոքրաթվության հետևանքով չարողացավ կատարել իր առջև դրված պատժիչ պարտականությունը, քանզի տեղական զինված բնակչությունը և կադրային հայ զինվորականությունը տվյալ պահին ամուր պաշտպանություն էին

[528] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 223:

[529] Տե՛ս Каземзаде Фируз, Борьба за Закавказье (1917–1921, стр. 171:

կազմակերպել: Տեղի ունեցած ռազմական բախման հետևանքով վրացական 400 հեծելակից բաղկացած զորաջոկատը կորուստներ ունեցավ և նահանջեց Սանահին: Վրացիներին չօգնեց նաև օգնության հասած զրահագնացքը, որը ևս նահանջեց Սանահին[530]: Վրացական կողմի ռազմական անհաջողությունները երբեմն թե՛ վրաց և թե՛ օտար հեղինակները բացատրում են նրանով, թե իբր գեներալ Ծուլուկիձեն տեղեկացված չի եղել, որ իր դիմաց կանգնած են եղել հայկական կանոնավոր բանակի զորամասերը, այլ ոչ թե անփորձ և անզեն հայ գյուղացիություն, ինչը կարծում ենք, պարզապես թույլ հնարք է և ինքնին չի պարզեցնում հարցը[531]: Այդ ընթացքում 4-րդ հայկական հետևակային գունդը հասել էր Սանահին, որին արագ միացան զինված հայ գյուղացիները, որից հետո սկսվեց Սանահին կայարանի գնդակոծումը:

Հայկական զորամասերը և ապստամբ հայ գյուղացիները թևերից շրջանցելով թշնամուն, ամրապնդվեցին Ալավերդու մերձակայքում: Բարդացող իրադրությունում, որին ավելացել էր Ալավերդու և Սանահինի միջև գործող երկաթգծի վնասումը, վրաց գեներալ Գ. Ծուլուկիձեն ելք որոնելով, և Թիֆլիսից բերված երկրորդ զրահագնացքը և լրացուցիչ գումարտակը դիրքավորելով Ալավերդու շրջանում՝ փորձեց ներդաշնակեցնել Սանահինում և Ալավերդու իրարից տարանջատված վրացական զինուժի գործողությունները, ինչը դյուրին խնդիր դուրս չեկավ[532]:

Վրացիները չեն սթափվում, և մթագնված գիտակցությամբ որոշում են շարունակել հաշվեհարդարը գյուղի խաղաղ բնակչության նկատմամբ: Վրացական զորքերը սանձարձակությունների են դիմում, ուզունլարցիներից պահանջելով տալ սայլեր և խոտ, յուղ, ալյուր, կարտոֆիլ, կաղամբ և այլ մթերքներ, որն ի վերջո ավարտվեց նրանց կողմից գյուղական կոմիսարի օգնականի սպանությամբ և կոմիսարի վիրավորմամբ: Գյուղացիները պատգամավորություն են ուղարկում Սանահին՝ ջոկատի հրամանատարի մոտ՝ զինվորներից բողոքելու, որին ի պատասխան ձերբակալվում են: Կրկին թնդանոթներով և գնդացիրներով

[530] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 87-91:

[531] Տե՛ս «Զանգ», Երևան, 29 դեկտեմբերի, 1918 թ., N 86: http://www.conflicts.rem33.com/ images/ Georgia /Armeno-Georgian War18-R.html:

[532] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, էջ 110-111:

ուղեկցվող էքսպեդիցիոն կորպուս է ուղարկվում Ուզունլար: Ուզունլարի գյուղապետը ծեծի է ենթարկվում, իսկ մեկ ուրիշ պաշտոնատար անձ սպանվում է վրացական զինվորների կողմից, որի մանրամասները պարզվում են վրաց փոխգնդապետ Ռամազովի հետաքննության ժամանակ, ինչը վկայում է գյուղի նկատմամբ վրացական կողմի որդեգրած ռազմատենչ գործելակերպի մասին:

Եվ ավելին, գեներալ Գ. Ծուլուկիձեն անարդարացիորեն իր դեմ ապստամբած և իր զինվորների կամայականությունները, բռնարարքները չհանդուրժած Ուզունլար [Օձուն] գյուղի բնակիչներին անվանում է «ավազակների շայկա»:

Ուզունլարյան դեպքերն ու իրադարձությունները իրենց արտացոլումն են գտել նաև Վրաստանում հրապարակվող «Борьба» թերթում, ուր հրապարակված է Ուզունլար ուղարկված № 1 զրահագնացքի պետի հաղորդագրությունը (12 դեկտեմբերի, 1918 թվական)՝ ռազմական գործողությունների նկարագրությամբ: N 1 զրահապատ գնացքի պետ Խունդաձեն (այլ տվյալի համաձայն՝ Խանգիան) հայտնում էր, որ ճանապարհին պատժիչ ջոկատը գնդակոծվում է մոտակա սարը բարձրացած ուզունլարցիների կողմից, որոնք իրենց պատիվն ու արժանապատվությունն էին պաշտպանում զավթիչներից, որոնք իրենց պահում էին մոնղոլ-թաթարների նման: Հաղորդագրության մեջ այնուհետև ասվում էր բառացի հետևյալը. «Զրահապատից պատասխանեցինք հրետանային և գնդացրային կրակով: Մեր հետևակը չկարողացավ սարը բարձրանալ և նահանջեց, թողնելով մեկ գնդացիր… Մեր հետևակը խիստ տուժեց, հայերը մեծ քարեր էին նետում կայարանի վրա և առաջ բերեցին ռազմամթերքով բեռնված երեք թուրքական վագոնների պայթյունը: Անհրաժեշտ է, որ Սանահին և Այրում կայարանների միջև անընդմեջ տեղաշարժվի զրահագնացք»[533]: Արդյունքում, վրացական պատժիչ գործողությունների հետևանքով խաղաղ, սակայն խիստ վրդովված հայ բնակչության նկատմամբ, միայն դեկտեմբերի 9-ի կռվում վրացիները տալիս են երեք սպանված զինվոր, ծանր վիրավոր՝ մեկ հոգու, անհայտ կորած՝ երկու հոգու, թեթև վիրավոր՝ վեց հոգի, այդ թվում՝ սպա Շուբլաձեն: Ընդ որում, հետաքրքիր է նշել գյուղի գրավման համար վրացիների կողմից

[533] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 13:

գործածված զենքի և զինամթերքի մասին. գյուղի գնդակոծման ժամանակ այդ պահի վիճակով գործածվել է ռուսական հրացանի 1443 փամփուշտ, ֆրանսիական հրացանի փամփուշտ՝ 3460, ընդամենը՝ 50836:

Ինչպես վկայում են արխիվները, իրականում Լոռու տեղամասում հրետանիով ռմբահարման էին ենթարկվում ոչ միայն Ուզունլար գյուղը, այլև մի շարք ուրիշ գյուղեր՝ Ագրին, Ամուչը, Ակոռին և այլն: Բռնության վրդովեցուցիչ ակտերը, համատարած կողոպուտները, ձերբակալությունները և խուզարկությունները կատարվում էին բոլոր գյուղերում, որտեղ կանգնած էին վրացական զորքեր, չնայած վրացական կողմը դեկտեմբերի 9-ի տվյալներով հերքում էր վերը նշված վանդալիզմի և ալան-թալանի, խաղաղ բնակչության նկատմամբ ծաղր ու ծանակի փաստերը[534]: Ուզունլարյան իրադարձությունները խթանեցին հետագա լարվածությունը հայ-վրացական հարաբերություններում և ապագայում ծավալված դրամատիկ սցենարներում իրենց բացասական դերը կատարեցին: Ուզունլարյան դեպքերը ապստամբական իրադրություն ստեղծեցին Լոռում: Ուզունլարից հայ գյուղացիության անունից բանագնացներ են հայտնվում Սանահին կայարանում և դրա մոտ գտնվող վրաց սպայակույտին բողոքում վրաց զինվորների կողմից ցուցաբերված բռնություններից, որին սակայն շրջանի հրամանատարը՝ գեներալ Ծուլուկիձեն բռնությամբ է պատասխանում և հրամայում է ձերբակալել բանագնացներին և զորամաս ուղարկել գյուղ՝ ընդվզումներին ուղղակի վերջ տալու համար[535]: Սակայն դա էլ ավելի է սրում ռազմական իրավիճակը, քանզի Լոռվա հայ ըմբոստ գյուղացիները ընդվզում են դրա դեմ:

Վրաց հեղինակները, աղավաղելով փաստերը, պատերազմի սկսվելու օրվա հարցում ևս ճշտապահ չեն, գտնելով, որ 1918 թ. դեկտեմբերի 7-ին հանկարծակի, առանց պատերազմ հայտարարելու հայերը հարձակվել են Վրաստանի վրա, որ իբր թե միայն դեկտեմբերի 13-ին են հարկադրված եղել պատերազմին տալ պաշտոնական բնույթ, իսկ Վրաստանի կառավարությունում այդ մասին հայտնի է դարձել մի-

[534] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 223, ց. 1, գ. 61, թ. 24:

[535] Տե՛ս Армяно-грузинский вооруженный конфликть…, стр. 20-21: Енукидзе Д., Крах империалистической интервенции в Закавказье, Тбилиси, 1954, стр. 124: Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 224-226:

այն դեկտեմբերի 16-ին: Իրականում, պատերազմը սկսվել է դեկտեմբերի 13-ին, և այստեղ, մեղմ ասած Գ. Մարխուլիան աղավաղում է պատմական իրողությունները, երբ պնդում է, որ հայերն են նախահարձակ եղել[536]: Փաստերն ինքնին հակառակն են պնդում: Այդ մասին է վկայում Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորու 1918 թ. դեկտեմբերի 7-ի հեռագիրը Ախալքալաքի գրավման հետ կապված: Դրանում նա ցինիկաբար հայտարարում էր, որ իրենց «կառավարության այդպիսի քայլը պայմանավորված էր տեղական բնակչության շահերով, որը ենթարկվում էր անվերջ բռնությունների Ախալքալաքի գավառում՝ ինչպես դեռևս այնտեղ մնացած թուրքական բանակային ստորաբաժանումների, այնպես էլ անպատասխանատու անձանց և զինված ավազակախմբերի կողմից», իսկ այնուհետև ուժի դիրքերից պնդում, թե «Վրաստանի կառավարության կողմից Ախալքալաքի գավառի զբաղեցումը ո՛չ պատմական, ո՛չ քաղաքական և ո՛չ էլ բարոյական տեսանկյունից վիճարկելի չէ»[537]:

Հայկական կառավարության կրավորական, տեղ-տեղ ոչ վճռական հարցադրումները և դիրքորոշումը Ախալքալաքի և Լոռու խնդրում էլ ավելի վստահություն ներշնչեցին վրացական կողմին իրենց կողմից ձեռնարկված ագրեսիվ քայլերի օրինականության մեջ, որից ՀՀ կառավարությունը չկարողացավ պատնեշվել ընդհուպ մինչև դեկտեմբերի 13-ը, երբ Դրոյի վճռականությունը կոտրեց վրացական համառությունը: Հայկական դիվանագիտության խաղաղասիրական ամրաքարը ճեղքվածքներ տվեց: Ակնհայտ դարձավ, որ ի զուր են փորձում վրացիներին համոզել, որ անգամ Բորչալուի հյուսիսային շրջանները զիջելու միջոցով իրենք պատրաստ են փոխզիջման գնալ, ինչը վրացական կառավարությունն անտեսեց, իսկ դա ապացուցեց հայկական դիվանագիտության կողմից ձեռնարկած խաղաղասիրական քայլերի ձախողումը և իրապես դատապարտվածությունը, որ դրանով հնարավոր չեղավ խուսափել անվիճելիորեն հայկական տարածքների նկատմամբ վրա-

[536] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах (с сокращениями), стр. 20, 31, 34: Տե՛ս նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[537] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918 -1920 թթ., էջ 77:

ցական հավակնություններից, այդ տարածքների գրավման և տիրապետման հավակնոտ մտադրությունների իրագործումից:

Եվ ավելին, բոլորովին քննադատության չի դիմանում Գ. Մարխուլիայի այն կեղտոտ հերյուրյանքը, ըստ որի հայկական զորամասերը հեռացնելով վրացական սահմանապահ ուղեկալները՝ դիտակետերը Քոբերի [Քոբայր] շրջանում, իբր թե գազանաբար գլխատել են 13 քնած վրացի զինվորների[538], որից հետո շրջանցելով վրացական ուղեկալները Քոբայրում և Ծաթերում, շարժվել են դեպի Ուզունլար: Հետաքրքիրն այն է, որ Գ. Մարխուլիան, «մանկամտաբար» պնդում է թե հայերը լավ նախապատրաստված էին, ունեին մեծ կանոնավոր զորք, իսկ վրացիները ամեն ինչից անտեղյակ էին, Լոռում շատ փոքր քանակով զինվորներ ունեին, որ Վրաստանը մինչև վերջ խաղաղասիրաբար է տրամադրված եղել, և անգամ դեկտեմբերի կեսերին չի շտապել լուրջ զինված գործողությունների ընդդեմ Հայաստանի, որ այդ ընթացքում հայկական զորամասերը օգտվել են բարենպաստ իրավիճակից, որ իբր թե Վրաստանը բոլորովին չէր սպասել Հայաստանի կողմից ռազմական գործողությունների, որ ըստ այդմ վրաց զորամասերը համարժեք գործողություններ չեն ձեռնարկել, ելնելով նաև այն հանգամանքից, որ իրենց դեմ կանգնած են եղել ոչ թե հայկական բանակի կանոնավոր զորամասեր, այլ, տեղական անկանոն ուժեր[539]:

Վրացական իշխանությունները համապատասխան կոչով դիմում են սեփական կառավարությանը, բացատրելով, որ հայերը սկսված պատերազմական գործողությունների ընթացքում ուխտադրուժ հարձակվել են Վրաստանի հարավային շրջանների վրա, սահմանապահ պահակախմբին մասամբ կոտորել, մասամբ գերի վերցրել, քարուքանդ են արել երկաթուղագիծը և ընդհատել հեռագրակապը Վրաստանի և Հայաստանի միջև՝ հետապնդելով զավթողական նպատակներ:

Նույնիսկ այս դժնդակ և չափազանց խճճված, բարոյական-հոգեբանական առումով անտանելի իրավիճակում հայկական կողմը դարձյալ փորձում է դիվանագիտական եղանակներով լուծել կոնֆլիկտը,

---

[538] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http://iberiana,wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[539] Տե՛ս նույն տեղում:

խուսափելով ոչ ցանկալի և կորստաբեր պատերազմից: Հայտնի է, որ դեռ 1918 թ. դեկտեմբերի 7-ին զորավար Դրոն (Դրաստամատ Կանայանը), չցանկանալով խճճել առանց այն էլ բարդ ռազմաքաղաքական իրավիճակը, ուզունլարյան դեպքերի կապակցությամբ ՀՀ կառավարությանը դիմում է մի հեռագրով, որով առաջարկում էր անհապաղ և կտրուկ քայլեր ստեղծված լարված բախումնալից ռազմաքաղաքական իրավիճակից դուրս գալու համար, որի մեջ վրացիների հետ առճակատելու խնդիր չէր դրվում: Դրոյի հեռագրում ընդգծվում էր հետևյալը. «Ուզունլարցիները ահա երկու օր է, որ գտնվում են վրացական զորքի թնդանոթագնդացրային կրակի տակ: Լոռվա շրջանի հյուսիսային մասի հայ գյուղերն ենթարկվում են թալանի և կողոպուտի նույն զորքերի կողմից: Ազգաբնակչությունն օգնություն է խնդրում: Դրությունը ծայր աստիճան հուսահատական է: Հայտնում եմ, որ եթե վրացական զորամասերը շարունակեն տանջել հայ ժողովրդին, այլևս չեմ կարող լռել: Խնդրում եմ Հայաստանի կառավարությանը ձեռք առնել կտրուկ միջոցներ, կամ ընդունել իմ հրաժարականը: Սպասում եմ շուտափույթ պատասխանի» (N 0151)»[540]:

Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը այդ նպատակով համապատասխան նոտա է ուղարկում Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրին (պատճենը՝ Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին), որում ասվում էր (9 դեկտեմբերի, 1918 թ., № 6913). «Ղարաքիլիսա - Լոռիի զորամասի պետը հաղորդում է, որ երկրորդ օրն է գտնվում են վրացական զորքերի հրետանային և գնդացրային կրակի տակ: Լոռիի հյուսիսային մասի հայկական գյուղերը ենթարկվում են կողոպուտների և բռնությունների այդ նույն զորքերի կողմից: Հայաստանի կառավարությունը վճռական կերպով բողոքում է վրացական զորքերի սանձարձակությունների դեմ վրացական զորքերի կողմից բռնությամբ գրավված Հայաստանի տարածքի մեջ մտնող շրջաններում: Եթե Ձեր կողմից չձեռնարկվեն անհապաղ միջոցներ վերջ տալու (նկատի ունի՝ սանձարձակություններին- Վ. Վ.), հետևանքների պատասխանատվությունը Հայաստանի կառա-

[540] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտամենտի նիստերի արձանագրություններ: 1918 -1920 թթ., էջ 118:

վարությունը հանում է իր վրայից»[541]: Իրականում հրետանակոծման էին ենթարկվում ոչ միայն Ուզունլար գյուղը, այլև Ագվին, Ամուչը, Ակոռին և մի շարք այլ բնակավայրեր, որոնք ուղեկցվում էին բռնություններով և սպանություններով, համատարած կողոպուտներով, ալանթալանով, ձերբակալություններով և խուզարկություններով: Կարծես թե ցանկանալով ընդգծել, որ իրենց քաղաքական ագրեսիվ կուրսը ամենևին էլ չի փոխվել, Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Գեգեչկորին որպես լրացում իր № 5447 հեռագրի՝ հասցեագրված Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մդիվանուն, նոր հեռագիր է ուղարկում (9 դեկտեմբերի, 1918 թ., № 5497): Դրանում վերջինս նախահարձակության մեղքը գցում էր հայկական կողմի վրա, շեշտելով, որ «Սանահինի մոտ հայտնվել են 4-րդ հայկական հրաձգային գնդի զորամասերը գնդապետ Տեր-Նիկողոսովի գլխավորությամբ, որոնք գրգռում են տեղական բնակչությանը, ստեղծում թյուրիմացություն, որը վերաճեց այսօր Սանահին կայարանի գնդակոծմանը»: Այնուհետև Գեգեչկորին հայտնում էր, որ «Ախալքալաքից Զինվորական մինիստրության կողմից ստացվել է հաղորդագրություն, ըստ որի Բոգդանովկա գյուղում հայտնաբերվել է հայկական հեծելավաշտի ներկայություն»: Գեգեչկորին խնդրում էր «ձեռնարկել քայլեր, որոնք իրենց կապահովեին անցանկալի միջադեպերից: Եվ նորից կրկնում, որ Ախալքալաքի գրավումը ամենևին էլ չի սասանում այն հիմքերը, որոնք կարող էին դրվել փոխադարձ համաձայնության դեպքում»[542]: Վրացական կողմը համոզված հերքելով հայկական կողմին, պնդում էր, որ Լոռվա գյուղացիության ապստամբական տրամադրությունների հրահրման մեջ մեղավոր են հայ քարոզիչները և կանոնավոր զորքերի մասնակցությունը ուզունլարյան իրադարձություններին, և առհասարակ Լոռվա իրադարձություններին: Հայկական աղբյուրների վկայությամբ, եթե հարցականի տակ չդրվեր հայ գյուղացիության ֆիզիկական ապահովության հարցը, ապա բախման մեջ կանոնավոր զորամիավորումների մասնակցության որևիցե խնդիր չէր առաջանա, գոնե մինչև դեկտեմբերի կեսերը, երբ հայկական կողմը պարտադրված կանգնեց Լոռվա գյուղացիության ընդվզումներին զինված միջամտության անհրաժեշտության առաջ:

[541] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 13:
[542] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 17 դեկտեմբերի, 1918 թ., N 21:

Անշուշտ, հասկանալի է, որ վրաց հրամանատարությունը փորձում էր ամեն կերպ կոտրել հայկական դիմադրողականությունը և դրա համար օգտագործում էր ամեն առիթ: Ըստ տարբեր աղբյուրների, վրաց հրամանատարությունը համոզված էր, որ հայ զինվորներից շատերը կանոնավոր զորքերից են, քանի որ զինվորական հրամանները տրվել են ռուսերեն, որը կիրառական էր հայկական բանակի սպայության մեջ[543], որն այնքան էլ զորեղ փաստարկ չէր, և այն չէր կարելի լուրջ ընդունել:

Պատասխան հեռագրում, Ե. Գեգեչկորին մերկապարանոց հայտարարում է, որ իրենց կողմից հայկական բնակավայրերի գնդակոծում տեղի չի ունեցել: Բնականաբար, վրացական զորքերի սանձարձակությունները հայկական գյուղերում խթանեցին պատերազմական տրամադրությունները և հարկադրեցին Հայաստանի իշխանություններին պատասխան գործողություններ ձեռնարկել, բայց դրանք ամենևին էլ չեն հանդիսացել հայ-վրացական պատերազմի սանձազերծման գլխավոր պատճառը[544]: Նույնպես չի կարելի պնդել, որ այդ պատերազմի չարաբաստիկ դրդապատճառը հանդիսացել են հայ քարոզիչներն ու տեղական բնակչության շրջանում հայտնված պարտիզանական հայկական զինված ջոկատների սպաները և ունտեր-սպաները, ինչի մասին տեղեկատվությունը վրաց պատմաբանները խեղաթյուրելով, պատերազմի հրձիգ են համարում Հայաստանի կառավարությանը, ամենևին էլ մի կողմ դնելով վրացական զավթողականության հանգամանքը:

Խոսքով արվում էր ամեն ինչ, սակայն վրացիները ինքնավստահությամբ լի էին, չխուսափելով նաև ռազմական առճակատումից, թեկուզև առաջին զոհերը պետք է, որ վերջիններիս սթափեցնեին: Ինչպես հաղորդում է «Борьба» թերթը (№ 241), դեկտեմբերի 9-ին Սանահինի մոտ վրացիները տվել էին 3 սպանված, 1 հոգի ծանր վիրավորվել էր, 3 թեթև վիրավորներ, անհետ կորել՝ 2 հոգի, արձակվել է 3600 փամ-

[543] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 89-90:

[544] Տե՛ս Армяно-грузинский вооружённый конфликтъ…, стр. 22: ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 96, թ. 22: Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

փուշտ[545]: Պարզից էլ պարզ է, որ սրանով վրացական մամուլը բորբոքում էր հակահայկական կրքերը, փորձելով հարցերը լուծել ռազմական առճակատման եղանակով:

Գ. Մարխուլիան հայկական զորքերի հաջողությունները բացատրում է Սանահինի շրջանում գտնվող վրացական զորքերի սակավաթվությամբ, ինչը իբր թույլ չի տվել գեներալ Ծուլուկիձեին Ուզունլարից դուրս շպրտել հայկական զորամասերին[546]: Այդուհանդերձ, վրացական զորամասերը կորուստներ են ունենում, գեներալ Ծուլուկիձեն վրդովված դիմում է ռազմական մինիստրին. «Եթե կառավարությունը ցանկանում է ճնշել սկսված անարխիան, ապա պետք է տա և ուժեր, հակառակ դեպքում սանահինյան ջոկատը ենթարկել կորուստների՝ աննպատակ կլինի…Սպային, որ եղել է Ուզունլար գյուղում, հաջողվեց հարցաքննել գերի հային, որը հայտարարեց, որ Ուզունլարից չեն հեռանա, մինչև գնդապետ Տեր-Նիկողոսովը չհրամայի»[547] :

Գեներալ Ծուլուկիձեի Ռազմական մինիստրին ուղարկված հաղորդագրությունից հայտնի է դառնում Ալավերդիի շրջանում ընթացող իրադարձությունների մասին, վերջինիս խնդրանքի մասին ևս մեկ զրահագնացք ուղարկել, որը կվերահսկեր և կպաշտպաներ Սադախլո-Այրում և Շինիխ ճանապարհը, գլխավոր ուշադրությունը դարձնելով Այրումի վրա[548], ավելացնելով, որ վրացական ջոկատներին Քուլպ-Այրում-Շինիխ երկաթգծի երկայնքով վտանգ է սպառնում, որ հայերը այդ կայարանների շրջակայքի բոլոր բարձունքները գրավվել են հայկական կանոնավոր զորամասերի կողմից: Ուզունլարի մոտակայքում գտնվող վրացական ուղեկալների կողմից բնակչությունից մթերքներ բռնագրավելու ընթացքում վրացական զինվորականների կողմից անթույլատրելի արարքներ են տեղի ունենում, սպանվում է գյուղական կոմիսարի օգնականը, որն այնքան է գրգռում գյուղացիներին, որ վերջիններս ապստամբում են վրացական զորամասերի դեմ: Սակայն Գ. Մարխուլիան

[545] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 6, թ. 24:

[546] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[547] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 89-90:

[548] Տե՛ս Там же, стр. 92:

ցինիկաբար նշում է, որ նման բռնարարքները հայ գյուղացիների նկատմամբ, անգամ սպանությունը, բավարար չեն, որ վրացական իշխանությունների դեմ ապստամբություն սկսվեր, չնայած այդ մասին Ղարաքիլիսայի ռազմական օկրուգի պետ Դրոն Ալեքսանդրապոլ այցելության ժամանակ Ա. Ահարոնյանի և Մ. Պապաջանյանի ներկայությամբ տեղեկացրել էր Մդիվանուն[549]: Դրոն առաջարկում է Մդիվանուն այդ իրողությունների կապակցությամբ բանակցել Բորչալուի գեներալ-նահանգապետ, գեներալ Ծուլուկիձեի հետ, առաջարկելով միջոցներ ձեռնարկել դադարեցնելու սանձարձակությունները և բռնությունները: Ի պատասխան, Մդիվանին անվարժ հակափաստարկների դիմելով՝ Դրոյին առաջարկում է պատգամավորներ ուղարկել Ուզունլարի բնակիչների մոտ, որպեսզի վերջիններս ձեռնպահ մնան հակակառավարական, ասել է թե՝ հակավրացական ելույթներից[550]:

Ուզունլարի և դրա հետ կապված դեպքերի պատճառների վերհանմանը և իրադարձությունների զարգացման գնահատականներին իր վերաբերմունքն է արտահայտում նաև ՀՀ Նախարարների խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 9-ի նիստը, որում լսվում է մինիստր-նախագահի զեկուցումը Դրոյից ստացված հեռագրի մասին՝ Ուզունլար գյուղի ռմբակոծման, վրաց զորքերի կողմից Լոռվա հյուսիսային մասում իրականացրած ալան-թալանի, աննախադեպ բռնությունների մասին հայ ազգաբնակչության նկատմամբ: Այդ կապակցությամբ Նախարարների խորհուրդը համապատասխան որոշում է ընդունում հանձնարարելով Արտաքին Գործերի նախարարին հեռագրել Վրաց կառավարությանը տեղի ունեցող դեպքերի մասին, խստիվ բողոքելով վրաց զորքերի վայրագությունների մասին մի շրջանում, որ պատկանում է Հայաստանին և ապօրինի կերպով օկուպացվել է վրաց զորքերի կողմից: Նախարարների խորհուրդը պահանջում էր անմիջապես դադարեցնել բռնությունները, հայտարարելով, որ հակառակ դեպքում Հայաստանի կառավարությունը վերցնում է իր վրայից հետևանքների մասին պատասխանատվությունը: Նիստում որոշվում է այդ մասին տեղյակ պահել նաև Թիֆ-

[549] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах (с сокращениями), 2007, стр. 18-21: Տե՛ս նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia /1918-1920/:

[550] Տե՛ս նույն տեղում:

լիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարին, Ալեքսանդրապոլում Հայաստանի ներկայացուցիչ Խոյեցյանին, ինչպես նաև Զինվորական նախարարին և Դրոյին հրահանգելով՝ վրաց ներկայացուցիչ Մդիվանու գնացքը անարգել բաց թողնեն Թիֆլիս մեկնելու, ձեռնարկելով անհրաժեշտ զինվորական նախապատրաստություններ, եթե բարդություններ ծագեն[551]:

Ապստամբած գյուղացիների հետ անհաջող բանակցություններից հետո Մդիվանին հեռախոսով հայտնում է Դրոյին, որ Ուզունլարում ապստամբության պատճառը վրացական զորքերի անկարգություններն են: Դրոն պահանջում է, որ վրացական կառավարությունը հեռացնի գեներալ Գ. Ծուլուկիձեին և իրենց զորքերը Սանահինից: Մդիվանին ի պատասխան ընդգծում է, որ այդպիսի պահանջը միջամտություն է Վրաստանի ներքին գործերին և որ ինքը Դրոյից ակնկալում էր օգնություն բախման խաղաղ կարգավորման գործում, այլ ոչ թե իրավակարգի հաստատման մեջ, որը մտնում է Վրաստանի կառավարության իրավասության մեջ[552]:

Հայկական կողմը յուրովի փորձեր էր անում մաննրելու, ձգտելով խուսափել լուրջ պատերազմից և երկու կողմերի համար էլ կործանաբար հետևանքներ ունեցող ռազմական գործողություններից: Հայկական դիվիզիայի հրամանատարին ուղղված 1918 թ. դեկտեմբերի 10-ի Զինվորական նախարար գեներալ-մայոր Հախվերդյանի (Հախվերդով) գրավոր հրամանագիրը վկայում է այդ մասին: Դրանում մասնավորապես ասվում է. «Հեծելազորին հրահանգված է Ախալքալաքի տեղամասում վարել հետախուզություն և վրացիների հետ շփման մեջ չմտնելով, փոխհրաձգության չգնալ, և ցույց չտալ դիմադրություն, մինչև վրացիները չմտնեն Ալեքսանդրապոլի գավառի սահմանները: Այդ դեպքում հարձակվել, որի համար հարկավոր է նախապատրաստել ուժեր, առաջ քաշել մեկ գումարտակ Ալեքսանդրապոլից»[553]:

---

[551] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ – 199, ց.1, գ.6, թ.24:

[552] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах (с сокращениями), стр. 20-21: Տե՛ս մանրամասն նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[553] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 11:

Ալեքսանդրապոլից հաղորդված դեկտեմբերի 10-ի մի այլ հեռագրում (№ 00345)՝ ուղղված Դրոյին, գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը հրահանգում էր հրաման տալ Ախալքալաքի գավառում գտնվող հայկական հեծելավաշտին փոխհրաձգության մեջ չմտնել, այլ մշտապես գտնվելով վրացիների հետ սահմանակցային հարաբերություններում, բուռն գրոհի դեպքում՝ նահանջել[554]: Ակնհայտ է հայկական կողմի չպատերազմելու ցանկությունը, բարդություններից խուսափելու բացահայտ ձգտումը: Դեկտեմբերի 10-ի երեկոյան Ս. Մդիվանին իրեն ուղեկցող հայկական պատվիրակության հետ ժամանում է Ղարաքիլիսա, որտեղ նրան հայտնում են, որ Սանահին կայարանի մոտի երկաթգիծը քանդված է և ընդատված է հեռագրակապը, որն էլ իբր թե խոչընդոտեց գեներալ Ծուլուկիձեի հետ նրա հանդիպմանը: Ս. Մդիվանին իր հետ ժամանած Ավ. Ահարոնյանի և Միք. Պապաջանյանի հետ առժամանակ մնում են այնտեղ, իսկ հայկական պատվիրակությունը չի կարողանում առանց խոչընդոտների մեկնել Փարիզ՝ Հաշտության վեհաժողովի աշխատանքներին մասնակցելու համար: Մդիվանին հանդիպում է Դրոյի հետ, որը առաջարկում է համոզել գեներալ Ծուլուկիձեին և վրաց կառավարությանը զսպվածություն դրսևորել Լոռվա հայ գյուղացիության նկատմամբ, և այդ դեպքում միայն ինքը հանդարտության կոչ կանի ժողովրդին:

Դեկտեմբերի 11-ին Մդիվանին փորձում է կապվել Սանահինում գտնվող Ծուլուկիձեի հետ՝ իբր թե վերջինիս հայ գյուղացիների և զինվորների դեմ ձեռնարկվելիք պատժիչ գործողություններից ետ պահելու համար, սակայն առանց լուրջ արդյունքների, որից հետո Քոբեր հասած Մդիվանին կրկին ետ է վերադառնում Ղարաքիլիսա: Այստեղ նա հանդիպում է Դրոյի հետ, որն էլ հայտարարում է, որ եթե Վրաստանը ետ կանչի գեներալ Ծուլուկիձեին և սահմանից դուրս բերի կայազորը, Հայաստանը կհամաձայնվի հյուսիսային Լոռում վրացական քաղաքացիական վարչությունը պաշտպանելուն, մինչև խնդրի վերջնական հանգուցալուծումը, որից անհանգստացած և չբավարարված Մդիվանին շտապ կապվում է ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանի հետ, բողոքելով Դրոյի կողմից առաջադրված պայմաններից, և առաջարկում խառը հայ-վրացական հանձնախմբեր ուղարկել Լոռի՝ հայ-

[554] Տե՛ս նույն տեղում, գ. 665, թ. 9:

կական գյուղերի բնակչությանը հանդարտացնելու համար, միաժամանակ խոստանալով պատժել մեղսունակ վրաց պաշտոնյաներին: Ս. Տիգրանյանը հակադարձում է Մդիվանուն, գտնելով, որ ինքը չի կարող հորդորել Հայաստանի քաղաքացիներին ենթարկվել մի օտարածին իշխանության, որ բռնությամբ զավթել է իրենց հողը, և միայն ինքնորոշման սկզբունքի կիրառումը և վրացական զորքերի դուրսբերումը Լոռուց կշտկի իրադրությունը տարածքում[555]: Դեկտեմբերի 9-11-ը ընկած ժամանակահատվածում Ս. Տիգրանյանի կողմից Վրաստանի կառավարությանն ուղարկված ճեպագրերը լի են տագնապով և լարվածությամբ, որոնցում բացահայտ դատապարտվում էր բռնությունը Լոռում և խստորեն նախազգուշացվում էր Վրաստանի կառավարությանը՝ վերջ տալու բռնագրավումների քաղաքականությանը Լոռում:

Դեկտեմբերի 10-ին տեղի է ունենում Վիրահայոց Ազգային խորհրդի արտակարգ նիստը, որը քննարկում է Սանահինի խնդրի հետ կապված հարցերը: Ա. Երզնկյանի Սանահինի դեպքերի մասին տված զեկուցումից հետո խորհուրդը կայացնում է հետևյալ որոշումը. 1) նկատի ունենալով, որ վրաց կառավարությունը մի պատգամավորություն է ուղարկել Սանահին Ներքին Գործերի մինիստրի օգնական Մախարաձեի գլխավորությամբ, մի պատգամավորություն է ուղարկվել Վիրահայոց Ազգային խորհրդի կողմից, որը ծանոթանալու է դեպքի մասին տեղն ու տեղը, և միջոցներ է ձեռք առնելու միջադեպը հարթելու համար, 2) իրական քայլերի դիմել, որպեսզի Հայաստանի և Վրաստանի կառավարությունները վերջնականորեն լուծեն սահմանագծային վեճը: Արդյունքում, ընտրվեց պատգամավորություն, որի կազմի մեջ մտան Հ. Յաղջյանը, Ա. Երզնկյանը, Ա. Քոչարյանը, Տեր-Օհանյանը, Աբովյանը, Լ. Թումանյանը և պ. Դոլուխանյանը[556]: Հենց այս կազմով էլ պատգամավորությունը մեկնեց Սանահին՝ հարթելու հայ-վրացական սահմանատարածքային հարցի շուրջը ծագած ռազմաքաղաքական բախումը:

Սակայն Վրաստանի խորհրդարանը չանսալով այդ կոչերին, ավելի կոշտ և անզիջում ռազմավարություն է որդեգրում: Եվգ. Գեգեչկորին վստահություն է արտահայտում, որ վրաց «կառավարությունը բոլոր

[555] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 453-456:

[556] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 228-229:

միջոցները ձեռք կառնի պաշտպանելու համար պետությունը թշնամիներից, որոնք միայն տենչում են առաջ բերել արյունահեղ բախում երկու հարևան ժողովուրդների միջև, անիշխանություն մեր երկրի մեջ, և այդպիսով հող պատրաստել մեր անկախությունը և ժողովրդավարական հանրապետությունը կործանելու համար»[557]:

Ռազմաքաղաքական կրքերը օր-օրի շիկանում էին: Վրացական սոցիալ-դեմոկրատիայի օրգան «Էրթոբան» իր 1918 թ. դեկտեմբերի 11-ի (N 265) համարում արտատպելով նախորդ օրը՝ դեկտեմբերի 10-ի «Նոր հորիզոն» հայկական թերթում տպագրված «Հայ Էլզաս-Լոթարը» խորագիրն ունեցող առաջնորդող հոդվածը ու Երևանից Ախալքալաքի գավառի հարցի առիթով ուղարկված թղթակցությունը, հետևյալ հայտարարությունն է անում. «Մենք մի անգամ էլ հայտարարում ենք, որ Լոռին ու Ախալքալաքի գավառը տնտեսապես, աշխարհագրապես ու պետականապես կցված են Թիֆլիսին ու կազմում են Վրաստանի պետական օրգանիզմի անբաժան մասը: Պարոն դաշնակցականներն ուրիշ չափ ունեն, բայց ինչու նրանք չեն կամենում կոնֆերենցիա, արբիտրաժ և բանակցությունների խաղաղ ճանապարհ, եթե իրենք գտել են այնպիսի «անվիճելի ապացույցներ», որոնք ցույց են տալիս, թե այդ տեղերը Հայաստանի պետության մասերն են կազմում»: Սակայն դրանով էրթոբականները չեն բավարարվում, ավելացնելով, որ «Զեգվիի կամրջի պայթեցնողների դավաճանության մասին այդ լրագիրը (նկատի ունեն «Հորիզոն» թերթը) մի ծպտուն իսկ չհանեց, չնայելով, որ այդ պայմաններում կկտրեր թե՛ Թիֆլիսը և թե՛ Հայաստանը Հյուսիսային Կովկասով»: Վրաց ազգայնականները համառորեն պնդում էին, որ ամբողջ Ախալքալաքի գավառը շրջապատված է վրացի ազգաբնակչությամբ և կապված է Թիֆլիսի հետ[558]:

Հայաստանի և Վրաստանի միջև ռազմաքաղաքական լարվածության թուլացման ուղղությամբ երկուստեք փորձեր արվում են, սակայն ավելի անզիջողական վրաց իշխանությունները աստիճանաբար հարցը մտցնում են անելանելի փակուղի:

Դեկտեմբերի 11-ին Երևանում Վրաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատար Մդիվանին Ղարաքիլիսայից մեկ-

[557] Խատիսեան Ալ., Նշվ. աշխ., էջ 107:

[558] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 17 դեկտեմբերի, 1918 թ., N 21:

նում է Սանահին կայարան, որն այդ պահին խցանված էր լեռներից գլորված քարերով: Ղարաքիլիսայում եղած ժամանակ Մդիվանին դեկտեմբերի 11-ին հեռագրաթելով անմիջական խոսակցություն է ունենում ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանի հետ, որի բուն նյութը՝ Լոռվա դեպքերն էին: Մդիվանին փաստելով, որ այնտեղ գործ ունեն հայ գյուղացիների ապստամբության հետ, ՀՀ Արտաքին Գործերի նախարարին «հիշեցնում էր, թե իբր անցած անգամ իրենք դեռ Ալեքսանդրապոլում որոշ համաձայնության են եկել խնդիրը նպաստավոր կերպով լուծելու՝ առանց բարդությունների և օտար ուժերի իրենց ներքին գործերի մեջ խառնվելու»: Եվ դեռ ավելին, Մդիվանին անգամ ստահոդ փաստարկ է բերում, թե իբր Լոռվա գյուղերում բռնկված հակավրացական ապստամբությունը նախապատրաստվել է Դրոյի կողմից, որպեսզի հիմք ստեղծի պահանջելու վրացական զորքերի դուրսբերումը Վրաստանին պատկանող տարածքից: Ի պատասխան, Ս. Տիգրանյանը Մդիվանուն հիշեցնում էր վրաց զորքի բռնությունների մասին հայ բնակչության նկատմամբ, ակնարկելով նաև Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրին դեկտեմբերի 9-ին ուղարկված բողոք-նոտայի մասին: Աղավաղելով իրողությունները, Մդիվանին հենվելով իրեն հայտնի փաստերի վրա, աղճատված կամ միակողմանի ներկայացնելով փաստերը, պնդում է, թե իբր երկու զրահապատ գնացքների միջոցով գեներալ Ծուլուկիձեն կարող էր վերականգնել Քոբեր-Սանահին-Ալավերդի երկաթգիծը, բայց չի արել, քանզի այդ դեպքում հարկադրված կլիներ դիմել խիստ միջոցների, միաժամանակ ընդունելով, որ տեղական գյուղացիները գանգատվում են զորքի և իշխող վարչակարգի դեմ, սակայն ավելացնելով, որ Հայաստանի կառավարությունը չպետք է իր վերաբերմունքով խստացնի առանց այն էլ ծանր կացությունը, որն ստեղծվել է երկու հանրապետությունների միջև[559]: Մդիվանու հետ հեռագրագրույցում ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը նաև ընդգծում է այն մասին, որ չնայած Մդիվանու հավաստիացումներին, որ մեղավորները, այդ թվում թե՛ վարչակարգից և թե՛ ժողովրդից կպատժվեն (անհասկանալի էր ժողովրդին, ասել է թե՝ անմեղ հայ գյուղացիներին պատժելու մեղադրական եզրակացությունը որպես իրավիճակից

[559] Տե՛ս «Զանգ», Երևան, 15 դեկտեմբերի, 1918 թ., N 80:

դուրս գալու տարբերակ - Վ. Վ.), Այդուհանդերձ Հայաստանի Հանրապետության կառավարությունը չի կարող հաշտվել ազգաբնակչության վրա կատարված դաժան բռնությունների հետ, ո՛չ էլ ազդել, որ ժողովուրդը հարկադրված ենթարկվի մի իշխանության, որը հանիրավի մնում է Հայաստանի երկրամասը կազմող վայրերում: Ըստ Ս. Տիգրանյանի, անհրաժեշտ էր, որ Վրաստանը հասկանար, որ տեղի ունեցած իրադարձությունները ու ստեղծված կացության պայմաններում վրաց դեմոկրատական հանրապետության կառավարությունը իր իսկ սեփական նախաձեռնությամբ դուրս հանի իր զորքերը հայկական գյուղերից և այլ բնակավայրերից՝ հարգելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Մդիվանուն առաջարկվում էր հանուն խաղաղության այդ ուղղությամբ ազդեցություն գործել: Փոխարենը վերջինս իր պատասխանում բավարարվում է նրանով, որ կրկնում է հին դիրքորոշումը՝ խառը ներկայացուցիչներ ուղարկել բանակցություններ վարելու, որի հետ Տիգրանյանը իր համաձայնությունն է արտահայտում, սակայն պնդում, որ Վրաստանի հանրապետության կառավարության կողմից անհապաղ քայլեր ձեռնարկվեն՝ ստեղծված բարդ ռազմաքաղաքական իրավիճակից դուրս գալու համար: Երկուստեք կարևորվում է ռազմական գործողություններին վերջ դնելու խնդիրը, չնայած վրաց դիվանագետը իր խոսքում գնում է որոշ մանևրումների, բողոքելով, թե չի կարող կապի կտրված լինելու պատճառով անմիջապես կապվել Թիֆլիսի հետ, սակայն ի վերջո պատրաստակամություն հայտնելով առաջարկների մասին հայտնել Վրաստանի կառավարությանը[560]:

Սա ևս մի չհաջողված քայլ էր պատերազմը կանխելու ճանապարհին, ընդ որում վրացական կողմը դրանում համառորեն մեղադրում էր Հայաստանի իշխանություններին: Սակայն վերը բերված բոլոր փաստերն անառարկելիորեն հերքում են վրացական կողմի հիմնավորումները, որ կարելի էր խուսափել ռազմաքաղաքական առճակատումից, եթե ՀՀ կառավարությունը շարունակեր սահմանային վեճի լուծման փնտրտուքները բանակցությունների միջոցով, որն անշուշտ, կեղծ և հիմնազուրկ պատճառաբանվածություն է, քանզի բանակցությունների տակ Վրաստանի կառավարությունը պարզապես հասկանում էր ծանր

[560] Տե՛ս նույն տեղում:

ռազմաքաղաքական կացության մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության վիճակից օգտվելու հնարավորության օգտագործում այն նպատակադրումով, որ վերջինիս պարտադրեն սահմանային-տարածքային էական զիջումների գնալ հաշտվելով՝ Ախալքալաքի և Լոռու գավառների Վրաստանի կազմում ամրագրվելու փաստի հետ, չակնկալելով, որ Լոռվա գյուղերը կարող են պարզապես առանց ՀՀ իշխանությունների թողտվության ընդվզել Վրաստանի կամայականությունների դեմ, և դա այն պարագայում, երբ այդ տարածքների գյուղերը տասնամյակներով գտնվելիս են եղել Թիֆլիսի նահանգի կազմում՝ մշակութային-տնտեսական առումով կապվածություն ունենալով Թիֆլիսի հետ:

1918 թ. դեկտեմբերի 11-ին կայանում է կապիտան Մեդվեդևի ուղիղ գծով ծառայողական խոսակցությունը Դրոյի հետ, որից պարզ է դառնում հետևյալը. Դրոյի անունից գնդապետ Միրիմանովը Ահարոնյանի, Պապաջանովի, Արզումանովի և ուրիշ անձանց ներկայությամբ Վրաստանի ներկայացուցչին է ներկայացնում ներքոհիշյալ բողոքի նոտան. «Ուզունլար գյուղի բնակիչների նկատմամբ բռնությունը գեներալ Ծուլուկիձեի զորքերի կողմից ստիպել է Լոռիի տեղամասի բնակչությանը ապստամբել…Առաջարկում են նշված շրջանից հեռացնել բոլոր զորամասերը հետագա բարդացումներից խուսափելու համար: Մենք չենք կարող լինել մեր գյուղերի, կանանց և երեխաների հրետանային և գնդացրային կրակի ենթարկման ականատեսները: Ես խնդրում եմ հանուն երկու ժողովուրդների բարօրության նշանակել հանձնաժողով հետաքննության համար և այդ շրջանում միայն ադմինիստրացիան թողնել: Հետագա պատասխանատվությունը դնում ենք վրացական հրամանատարության վրա»[561]: Դեկտեմբերի 10-11-ի ընթացքում վրաց-հայկական բախումները շարունակվեցին, և Վրաստանի կառավարությունը հապճեպ և տենդագին փութաջանությամբ Թիֆլիսից ռազմական գործողությունների գոտի նետեց 5-րդ գումարտակի երկու վաշտեր՝ երկու հրանոթներով, սակայն այդ համալրումը հայերի կողմից լարած թակարդն ընկավ և վնասազերծվեց՝ չհասցնելով յուրայիններին օգնել: Գործին չօգնեց նաև գեներալ Ծուլուկիձեի որոշումը իր շտաբը Սանահինից Ալավերդի տեղափոխել, իր հետ տանելով նաև զրահագնացքը:

[561] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 13-14:

Դեկտեմբերի 11-ին ժամը 12-ին Հայաստանի Հանրապետության Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի Հետախուզական բաժնի պետ Մ. Զինկևիչի՝ Գլխավոր շտաբի պետին հասցեագրված հաղորդագրության մեջ նշվում էր, որ «վրացիները երրորդ օրն է գնդակոծում են Ուզունլարի, Ծաթերի բնակչությանը: Երկաթուղային ծառայողները խուճապահար փախել են. Գորելովկա-Բոգդանովկա շրջանում գտնվող վրացական զորամասերի հետ: Ախալքալաքյան հեծյալ ջոկատի հանդիպումից հետո ոչ մի հաղորդագրություն չի ստացվել: Ջոկատներում (նկատի ունի Ղարաքիլիսա-Լոռիի և Ալեքսանդրապոլի – ընդգծումը մերն է - Վ. Վ.) տեղի է ունենում նոր վերախմբավորում»[562]:

Դեկտեմբերի 12-ին Մ. Զինկևիչը նոր ամփոփագիր է ուղարկում Գլխավոր շտաբի պետին, որում ասվում էր. «Դեկտեմբերի 9-ից սկսեցին ստացվել տեղեկություններ, որ Լոռիի շրջանում վրացիները սկսել են իրականացնել բռնություններ խաղաղ հայկական բնակչության նկատմամբ: Ուզունլար և Ծաթեր գյուղերը ենթարկվել են հրետանային և գնդացրային կրակի, որն ստիպել է հենց իրենց՝ մերձակա գյուղերի բնակիչներին անցնել հարձակման: Դիմանալով ուժեղ մարտի, նրանք փախուստի մատնեցին վրացիներին, գրավելով գնդացիրները, և կտրելով երկու զրահագնացքների ճանապարհը: Առայժմ դեկտեմբերի 12-ի վիճակով հայ գյուղացիների կողմից գրավվել է Սանահին գյուղը, նրանք մոտեցել են հենց Ալավերդիի գործարանին»[563]:

Դեկտեմբերի 12-ին ռազմաքաղաքական լարվածությունն էլ ավելի շիկացավ: Թիֆլիսից բերված թարմ վրացական զորամասերը հայկական զինուժի կրակազծի տակ այնուամենայնիվ կարողացան որոշակի հաջողության հասնել, նեղել հայերին և գրավել Ալավերդու շրջակայքի որոշ բարձունքներ, իսկ հաջորդ օրն էլ փորձեցին հակահարձակում ձեռնարկել և հասնել Սանահինում շրջափակման մեջ գտնվող զրահագնացքին և հետևակ ջոկատի մնացորդներին: Սակայն դա վրացական զորամասերին ուղղակի չհաջողվեց, հակահարձակումը փառավորապես ձախողվեց, այն անհնարին դարձավ, որովհետև հայերը երկաթուղագիծը պայթեցրել էին և արդյունքում, մեծ արագությամբ շարժվող

[562] Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, № 3, էջ 25:
[563] Տե՛ս նույն տեղում, էջ 74:

վրացական զրահագնացքը չկարողացավ շտապ արգելափակել գնացքի ընթացքը և այն գծից դուրս եկավ:

Իրադրությունը դեկտեմբերի կեսերին չափազանց սպառնալից բովանդակություն էր ձեռք բերել: Զրահագնացքների հրամանատար գեներալ Գոգվաձեն Թիֆլիս ուղարկած ճեպագրերում կառավարությանը տեղեկացնում էր Սանահինում և Ալավերդիում իշխող իրավիճակի մասին, իսկ գեներալ Ծուլուկիձեն սրտնեղություն էր հայտնում հայկական զորքի 4-րդ հետևակային գնդի հարձակողական գործողություններից, որոնց արդյունքում Ալավերդիի մոտ նեղն էին ընկել, իսկ Վորոնցովկայի շրջանում գտնվող գեներալ Ցիցիանովը հայտնում էր հայ հետախույզների ակտիվ գործունեության մասին, և ըստ այդմ մայրաքաղաքից համալրում էր խնդրում[564]:

Վրացական զինուժի համար Սանահին-Ալավերդու շրջանում ստեղծվեց չափազանց ծանր և լարված վիճակ: Հայկական զինուժի մարտական փայլուն գործողությունների արդյունքում վրացական նահանգային գումարտակը [60 սվին և զրահագնացք] շրջափակված վիճակում հայտնվեց Սանահինում, իսկ 5-րդ հետևակային գնդի երեք գումարտակները, 6-րդ հետևակային գնդի մեկ գումարտակը, հրետանային մարտկոցը, երկու մոտոհրաձգային դասակները՝ թվով մոտ 600 մարդ հարկադիր պաշտպանական դիրքեր զբաղեցրին Դեբեդ գետի կիրճում՝ հայկական զորքերի կողմից շրջափակված լինելով, որոնց թվում էին 2-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 4-րդ և 6-րդ գնդերը, 1-ին հրաձգային դիվիզիայի 1-ին գնդի գումարտակները, հեծելազորային բրիգադի երեք էսկադրոնները, ոչ պակաս 4 հազար մարդուց բաղկացած տեղական բնակիչների աշխարհազորը, ավելացրած՝ 20 միավորից բաղկացած հրետանին[565]:

Հետաքրքրական է այս առումով նաև Դրոյի 1918 թ. դեկտեմբերի 12-ի հաղորդագրությունը՝ ուղղված Նախարարների խորհրդի նախագահին (պատճենը՝ Դիվիզիայի հրամանատարին և Հայաստանի Հանրապետության Զինվորական նախարարին), որում ասվում էր. «Ախալ-

[564] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год,, стр. 91-93, 95-96: Տե՛ս նաև Армяно-грузинский вооружённый конфликть…, стр. 22:

[565] Տե՛ս Чачхиани А., Борьба за территориальную целостность Грузии в 1918-1919 годах,стр.115:http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno_Georgian_War18_R.html:

քալաքյան ուղղությունում վրացիները հարձակում են կատարել: Դիվիզիայի հրամանատարի հրամանի համաձայն ես կարգադրել եմ նահանջել Բոգդանովկայից Գորելովկա: Վերջինիս նորից մոտեցել են վրացական զորամասերը, մերոնք ետ են քաշվել դեպի սահմանը: Ամբողջ Ախալքալաքյան ուղղությունում վրացական զորաջոկատը առայժմ հայտնաբերվել է 300 հոգիանոց կազմով՝ ունենալով 4 թնդանոթ: Վաղն առավոտյան ամբողջ առաջին դիվիզիոնը առաջ եմ շարժում դեպի Ախալքալաքի սահմանը: Լոռվա իրադարձությունները հետաձգման կարիք չեմ զգում: Խնդրում եմ թույլ տալ առայժմ անհապաղ գրավել Սանահինը, Վորոնցովկան - Ալավերդին»[566]:

Վրացիների ռազմագիտական ընդգրկումները չափավորելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ի դեմս Հովի. Քաջազնունու (վրաց-հայկական պատերազմի անմիջապես նախօրյակին) 1918 թ. դեկտեմբերի 12-ին ևս մեկ անգամ փորձում է անկանխատեսելի հետևանքներով լի իրադարձությունների զարգացման ընթացքի վրա ազդել և այդ նպատակադրումով դիմումագիր է հղում Վրաստանի կառավարության նախագահ Ն. Ժորդանիային՝ կապված վրացական զորքերի գործողությունների հետ Բորչալուի գավառի հայկական մասում, որը բռնի զավթվել էր Վրաստանի կողմից: Դիմումագրում ասվում էր, որ Վրաստանը ստեղծել է դրություն, որն առաջիկայում «հանդուրժել հնարավոր չէ: Միայն վրացական զորքերի անհապաղ հեռացումը այդ շրջանից կարող է կանխել հետագա արյունահեղությունը և հաստատել ամուր բարեկամական հարաբերություններ Վրաստանի և Հայաստանի միջև: Նկատի ունենալով այդ հանգամանքը, Հայաստանի կառավարությունը պատիվ ունի առաջարկելու Վրաստանի կառավարությանը առանց որևիցե հապաղման դուրս բերելու վրացական զորքերը Բորչալուի գավառի հայկական մասից: Մերժման կամ հապաղման դեպքում Հայաստանի կառավարությունը հարկադրված կլինի այդժամ միջոցներ ձեռք առնել՝ պաշտպանելու համար Հայաստանի քաղաքացիներին վրացական իշխանությունների բռնություններից և սանձարձակություններից»[567]:

---

[566] Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, № 3, էջ 25, 74:

[567] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 14: «Ջանգ», Երևան, 15 դեկտեմբերի, 1918 թ., N 80:

Քաջազնունու հեռագիրը Վրաստանում ստացվեց դեկտեմբերի 16-ին, երբ արդեն ծավալվել էին դաժան մարտեր, և Վրաստանն էլ չէր պատրաստվում փոխզիջումային քայլերի գնալ: Վիրահայոց Ազգային խորհուրդը Ն. Ժորդանիայի կառավարությունից թույլտվություն խնդրեց պատվիրակություն ուղարկել Լոռի՝ անդորրը, կարգ ու կանոնը վերականգնելու համար, որին ուղեկցեցին Վրաստանի Ներքին Գործերի մինիստրի օգնական Գերասիմ Ֆ. Մախարաձեն, զինվորական մինիստրի օգնական, գեներալ Ա. Կ. Գեդևանովը [Գեղևանիշվիլին]: Դեկտեմբերի 12-ին Վիրահայ Հայոց Ազգային խորհրդի պատվիրակները ժամանեցին Ալավերդի, և այնտեղ փորձեցին պարզել մի շարք հանգամանքներ՝ կապված տեղի ունեցող իրադարձությունների հետ: Թիֆլիսահայերի պատվիրակության կազմում գտնվող Արամայիս Երզնկյանը, առանց լրջորեն խորամուխ լինելու երևույթների մեջ, եզրահանգեց, որ «անկարգությունները կրում են մեկուսի բնույթ և խոստացավ բոլոր հարկ եղած միջոցները ձեռնարկել անդորրը վերականգնելու համար[568], սակայն դրանից իրադրության մեջ լուրջ շտկումներ չմտան:

Վրաստանը, սակայն, չպատասխանեց խաղաղասիրական քայլով: Վրաստանի կառավարությունը շարունակում էր պնդել իր «անվիճելի» «քաղաքական, տնտեսական, կենցաղային» իրավունքների վրա, և Հայաստանի կառավարության պահանջը համարում էր «միջամտություն Վրաստանի ներքին գործերին»: Հայաստանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Գ. Մդիվանին 1918 թ. դեկտեմբերի 13-ի իր հեռագրում՝ ուղղված Հայաստանի պառլամենտի նախագահ Ա. Սահակյանին, բողոքել էր, որ երեք օր նստած է Ղարաքիլիսայում, հնարավորություն չունենալով տեղաշարժվել առաջ և հեռագրաթելով կապվել Վրաստանի կառավարության հետ՝ Բորչալուի գավառում գյուղացիների ապստամբությամբ առաջացած իրադարձությունների կապակցությամբ: Մդիվանին հայտնում էր, որ իրադարձությունները կործանարար բնույթ են ստանում, հայտնելով Ղարաքիլիսա-Լոռու զորաջոկատի պետ Դրոյի հաղորդագրության մասին՝ ներկայացված ուլտիմատումի և հայկական զորքերի կողմից նախապատրաստվող հարձակման մասին: Մդիվանին խնդրում էր հայկական պառլամենտի աջակ-

[568] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 93-94:

ցությունը իրեն հնարավորություն տալ հասնելու Թիֆլիս և այնտեղ անձամբ տեղեկացնելու Վրաստանի կառավարությանը և դրանով իսկ նպաստելու երկու ժողովուրդների համար այդքան հանկարծակի առաջ եկած կոնֆլիկտի վճռման առավելապես նախընտրելի միջոցի ընտրությանը[569]:

Այդ նույն օրը՝ 1918 թ. դեկտեմբերի 13-ին Մդիվանին Լոռիում և նրա շուրջ աղետալի ընթացք ստացող իրադարձությունների կապակցությամբ մեկ այլ հեռագրով դիմում է Ղարաքիլիսայում գտնվող Ֆրանսիայի ռազմաքաղաքական ներկայացուցիչ կապիտան Անտոն Պուադեբարին, որում նա հայտնում էր, որ Սիլիկյան-Դրոյի միջոցով ստացել է Վրաստանի կառավարությանը հասցեագրված մինիստր-նախագահ Հովի. Քաջազնունու հեռագիրը՝ Բորչալուի գավառը վրացական զորքերից անհապաղ ազատելու պահանջով: Պուադեբարին ուղղված այս հեռագրում Մդիվանին ՀՀ կառավարության այդպիսի պահանջագիրը համարում էր Վրաստանի ներքին գործերին միջամտելուն ուղղված գործողություն և հետագա բարդացումների առիթ՝ ընդհուպ մինչև ռազմական բախում: Միաժամանակ, Մդիվանին գտնում էր, որ գյուղացիների զինված ապստամբության հողի վրա Բորչալուի գավառում ծավալված իրադարձությունները պետք է կարգավորվեն Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների կողմից ձեռնարկված խաղաղ ազդեցության միջոցներով, անհրաժեշտաբար պատժելով գյուղացիների զինված ապստամբության մեջ մեղավորներին՝ ինչպես վերջիններին, այնպես էլ գավառի վրացական վարչակազմի ներկայացուցիչներին, միաժամանակ տեղեկացնելով իր հանդիպումների մասին և՛ Ս. Տիգրանյանի, և՛ Ղարաքիլիսա գործուղված Հայաստանի կառավարության պատվիրակության անդամների հետ: Հեռագրում անդրադառնալով Ա. Պուադեբարին ուղղված դիմումագրի բուն նյութին, Մդիվանին վերջինից խնդրում էր ազդել Հայաստանի կառավարության վրա, որպեսզի հայկական կողմը ձեռնպահ մնար Բորչալուի գավառի այն մասի սահմանները անցնելուց, որը դեռ մայիս ամսից թուրքերի դեմ մարտերում զբաղեցվել էր վրացական զորքերի կողմից, և իր հետ միասին՝ հայկական պատվիրակության ուղեկցությամբ գնալ Թիֆլիս՝ բախման խաղաղ կարգավոր-

[569] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 458:

ման համար: Մդիվանին ընդգծում էր շտապ Թիֆլիս մեկնելու անհրաժեշտությունը, պատճառաբանելով այն հանգամանքով, որ հեռագրաթելի անգործության պատճառով վրացական կառավարությունը անտեղյակ է մնացել Բորչալուի գավառում տեղի ունեցող իրադարձություններին՝ կապված վրացական կառավարությանը հասցեագրված Հայաստանի կառավարության մի շարք կարևոր նոտաներից և հաղորդագրություններից, որ իր կողմից շատ իրադարձություններ անհրաժեշտ և ստույգ լուսաբանման կենթարկվեն, որը թույլ կտա կողմերին պայմանավորվածության գալ[570]:

Մասնավորապես այդ միտքն է արտահայտում Մդիվանին 1918 թ. դեկտեմբերի 13-ի իր հեռագրում՝ ուղղված Հայաստանի Արտաքին Գործերի նախարար Տիգրանյանին: Վերոհիշյալ հեռագրում Մդիվանին շեշտելով իր կողմից արված կոնկրետ առաջարկի մասին Բորչալուի գավառում տեղի ունեցող իրադարձությունների խաղաղ կարգավորման ձևերի մասին, միևնույն ժամանակ բողոքում էր, որ ինքը չի կարողացել Հայաստանի մինիստր-նախագահի կողմից Վրաստանի կառավարությանը հասցեագրված նոտան ուղարկել, որում պահանջ էր դրվում անհապաղ մաքրել վրացական զորքերից Բորչալուի գավառի հայկական մասը: Մդիվանին հայտնում էր, որ ինքը համապատասխան հեռագիրը չի ուղարկել Թիֆլիս, քանի որ ոչ միայն չի կարողացել շարժվել դեպի Թիֆլիս, այլև մտնել հեռագրակապի մեջ իր կառավարության հետ: Մդիվանին բողոքում էր, որ այդ ընթացքում, համաձայն Ղարաքիլիսա-Լոռու ջոկատի պետ Դրոյի, վաղը Հայաստանի Հանրապետության զորքերը անցնելու են նախօրոք հաստատված սահմանը, նպատակ հետապնդելով գրավելու Բորչալուի գավառի այն մասը, որը դեռևս 1918 թվականի մայիսին թուրքերի դեմ մարտերում գրավվել են վրացական զորքերի կողմից՝ մինչև Խրամ գետը, որն էլ անխուսափելիորեն առաջ կբերի երկու հանրապետությունների միջև պատերազմական գործողությունների սկսման: Մդիվանին շեշտում էր, որ բացի նրանից, որ «Հայաստանի կառավարության գործողությունները չի կարելի դիտարկել այլ կերպ, քան որպես միջամտություն Վրաստանի ներքին գործերին, միջազգային հարաբերությունների տեսանկյունից անթույլատրելի է,

[570] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии.., стр. 458-459:

որպեսզի Հայաստանի կառավարությունը, չսպասելով ուլտիմատումի պատասխանին, ձեռնամուխ է եղել ուլտիմատումում շարադրված պահանջների իրականացմանը՝ ռազմական ուժի ճանապարհով»: Նոտայում Մղիվանին արտահայտելով վճռական բողոք, մեկ անգամ ևս խնդրում էր կառավարությանը զեկուցել իր կողմից ընդունված որոշման վերանայման և զորքերին հրաման տալ չանցնել ներկայումս գոյություն ունեցող սահմանը և չմտնել թշնամական գործողությունների մեջ Վրաստանի Հանրապետության զորքերի դեմ[571]:

Ռ. Հովհաննիսյանը վիճարկելով Մղիվանու հաղորդագրությունների իսկությունը, կասկած է արտահայտում, որ ինքը կարող էր տեղեկացված լիներ Դրոյի կողմից ձեռնարկվող այնպիսի մի գերգաղտնի հրամանագրի մասին, որի համաձայն Դրոն պետք է դեկտեմբերի 13-ին, իր հետ խոսակցությունից մի քանի ժամ անց ձեռնամուխ լիներ Բորչալուի գավառի գրավման գործողությանը: Համենայն դեպս, իրեն հայտնի իրողությունից և տեղեկացվածությունից ելնելով, Մղիվանին նման բովանդակության հեռագրեր է ուղարկում ինչպես Հայաստանի Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանին, խնամատարության նախարար Ալ. Խատիսյանին, խորհրդի նախագահ Ավետիք Սահակյանին, խորհրդի անդամ Ստեփան Մալխասյանին, այնպես էլ Ալեքսանդրապոլում Ֆրանսիայի ռազմական ներկայացուցիչ կապիտան Ա. Պուադեբարին, որոնցում շեշտում էր, որ հաղորդակցության ընդհատման պատճառով իր կառավարությունը ամենայն հավանականությամբ տեղեկացված չէ Հայաստանի Հանրապետության դիրքորոշմանը: Նա պնդում էր, որ եթե Դրոյի զորամասերը առաջ շարժվեն, ապա Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն մեղավոր կլինի Վրաստանի ներքին գործերին միջամտելու մեջ, այլև կոտնահարի ու կխախտի ընդունված միջազգային նորմերը, այն է՝ ժամանակ չտալով հայկական վերջնագրին պատասխանելու, նախքան ռազմական գործողությունների ձեռնարկումը[572]: Այդ ընթացքում Սանահինի մոտի կամուրջը կրակի մատնվեց, Սանահին

[571] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 458:

[572] Տե՛ս նույն տեղում: Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, էջ 115-116:

տանող ճանապարհը կտրվեց, N 1 զրահագնացքը, որը հրետանու միջոցով գնդակոծվում էր հայկական դիրքերից[573], վնասազերծվեց:

Ղարաքիլիսայից ուղարկված մի այլ հեռագրում՝ հասցեագրված Հայաստանի պառլամենտի նախագահ Սահակյանին (13 դեկտեմբերի, 1918 թ.), Մդիվանին բողոքելով, որ երեք օր է, ինչ ինքը նստած է Ղարաքիլիսայում, հնարավորություն չունենալով էլ առաջ շարժվել, և հեռագրաթելով կապվել սեփական կառավարության հետ՝ կապված Բորչալուի գավառի գյուղացիների ապստամբությամբ առաջ եկած իրադարձությունների հետ: Հետաքրքիր է, որ վերջինս չի ժխտում ապստամբության փաստը, որը կարևոր հանգամանք է ըմբռնելու համար իրադարձությունների իրական իմաստը: Դրան զուգընթաց, - գրում է Մդիվանին, - իրադարձությունները աղետալի բնույթ են ստանում, և խնդրում էր ազդել կառավարության վրա (նկատի ունի ՀՀ կառավարությանը - Վ. Վ.), որպեսզի նա չեղյալ հայտարարի իր որոշումը և իրեն հնարավորություն տար հասնել Թիֆլիս, և այնտեղ անձամբ տեղեկացնել Վրաստանի կառավարությանը, դրանով իսկ նպաստել երկու ժողովուրդների համար այդպես հանկարծակի ծագած կոնֆլիկտի լուծման լավագույն եղանակին[574]: Պատերազմի ուրվականը երկու հանրապետությունների միջև սկսեց տենդագին ման գալ: Ակնհայտ դարձավ նաև, որ Մդիվանու առաքելությունը ձախողվել է և դեկտեմբերի 14-ին նա շրջանցիկ ճանապարհով մեկնեց Վրաստանի մայրաքաղաք՝ Թիֆլիս, հարկադրված կրկնելով այն անցուդարձը, որով ստիպված էր եղել գնալ հայկական կառավարությունը, երբ վերջինս 1918 թ. ամռանը Թիֆլիսից հապշտապ, առանց մեծ կամեցողության և վրացական անբարյացակամ վերաբերմունքի ներքո փոխադրվում էր Երևան[575]:

Եվ 1918 թ. դեկտեմբերի 13-ին դիմելով Վրաստանի դիվանագիտական հավատարմատարին (№ 5572), Ե. Գեգեչկորին նշում էր, որ իրենք ստացել են հավաստի տեղեկություններ, որ Սանահինի շրջանում վրացական զորքերի դեմ ռազմական գործողություններում մաս-

[573] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 124-125; Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии..., Док. № 241, стр. 462-464:

[574] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 458:

[575] Տե՛ս там же, стр. 460:

նակցություն են ցուցաբերում և հայկական զինվորական մասերը, ընդ որում նրանց քայլերը կրում են միանգամայն կազմակերպված բնույթ: Դրանում նաև ասվում էր, որ Սանահինի մոտակա բոլոր կետերում կան զինվորական սպայակույտեր (շտաբ), որոնց գլուխ կանգնած են շտաբի սպաներ և օբեր-օֆիցերներ, որոնք գտնվում են Հայաստանի Հանրապետության ծառայության մեջ: Այնուհետև նշելով, որ մի րոպե անգամ չթույլատրելով մտածել, որ այդ բոլորը կատարվում է Հայաստանի կառավարության հրամանով, տխուր միջադեպից, ճակատագրական հետևանքների վերածվելու հնարավորությունից խուսափելու նպատակով, որի զոհը արդեն դարձել են տասնյակ զինվորներ և վրացի սպաներ, խնդրում էր ձեռնարկել քայլեր, որպեսզի Հայաստանի կառավարությունը ազդեցության անհրաժեշտ միջոցներ կիրառեր զինվորական մասերի և այն անձանց վրա, որոնք անպատասխանատու, հանցավոր գործողություններով խախտել են երկու հանրապետությունների միջև բարեկամական հարաբերությունները[576]:

Պատասխան նոտայում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության աշխատակից Թումանովը հաղորդում էր, որ իրենք տվյալներ չունեն, բացի վերը նշված հաղորդագրությունից (Եվգ. Գեգեչկորու- Վ. Վ.), որն իբր թե հայկական կանոնավոր զորամասերը գտնվում են վրացական զորքերի կողմից օկուպացված տարածքներում[577]: Իսկ արդեն 1918 թ. դեկտեմբերի 13-ի հեռագրով (№ 5599) Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Ե. Պ. Գեգեչկորին ձևականորեն համակարծիք լինելով Հայաստանի խաղաղասիրական առաջարկին՝ բանակցությունների միջոցով լուծել սահմանավեճը, միևնույն ժամանակ պնդում էր, որ առ այսօր որոշ հայկական զորամասեր հայկական ծառայությունների սպաների գլխավորությամբ գնդակոծել են ողջ վրացական սահմանային պահակազորը, մնացածներին գերի վերցնելով, զոհերը հասնում են տասնյակների: Գեգեչկորին այդ նոտայում տեղեկացնում էր, որ արյունահեղության դադարեցման նպատակով իրենց կողմից Սանահին է ուղարկվել պատգամավորություն, որի կազմի մեջ մտել են 3 հոգի Հայոց Ազգային խորհրդից: Վրացական կառավարությունը պնդում էր արյունահեղության դադարեցման և այն անպատասխանա-

[576] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 112-116:.

[577] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 96, թ. 38:

տու անձանց պատժելու վրա, որոնք ցավալի իրադարձությունների մեղավորներն էին[578]: Հարկ է ընդգծել (դա կարևոր է սկզբունքային առումով), որ վրացական կառավարության կողմից հրատարակված ռադիոհեռագրի այս տեքստում («Борьба», № 244, 1918 թ.) կային բառերի և բառակապակցությունների փոփոխություններ, որոնք արտաքուստ կարծես թե ոչինչ չէին փոխում, սակայն իրականում կարևոր նշանակություն ունեին (օրինակ՝ «Վրաստանի կառավարությունը չի կարող կողքից թույլատրել միջամտություն իր գործերին» բառակապակցությունը նենգափոխվում էր վերջին մասում «իր ներքին գործերին» բառակապակցությամբ և այլն) և շփոթության մեջ էին գցում հասարակայնությանը և ապատեղեկատվության խնդիրներ էին լուծում:

Ըստ էության հայ-վրացական ռազմաքաղաքական բախման հիմքերը սկզբունքային վերլուծության չենթարկվեցին նաև Վրաստանի պառլամենտի 1918 թ. դեկտեմբերի 13-ի նիստում, որը բացվում է Ն. Ս. Չխեիձեի նախագահությամբ, քննարկման հիմք դարձնելով Սանահինի դեպքերը: Հենց սկզբից նենգափոխելով փաստերը, և անդրադառնալով դեկտեմբերի 9-ին Ուզունլարում և նրա շուրջ ծավալված ռազմաքաղաքական անցքերին, պառլամենտի նիստում Ռազմական նախարար Գեորգաձեն պնդում է, թե իբր Ուզունլար գյուղի բնակիչները հարձակվել են սահմանապահ սակավաթիվ զորախմբի վրա, որ դա ավազակախումբ է եղել, որի արդյունքում կա 15 սպանված և 14 վիրավոր, սակայն առանց պարզաբանելու, թե այդ ինչ ավազակախումբ էր, որ քարեր գլորելով էր արգելափակել վրաց զորախմբի ճանապարհը, և ինչ գործ ուներ զորամասը խաղաղ հայկական գյուղում, ստահոդաբար ավելացնելով, որ հարձակմանը մասնակցել են հայկական բանակի նախկին զինվորներ, և հետաքննության համար այնտեղ են ուղարկվել զինվորներ և ՆԳ նախարարի օգնականները, ավելացնելով, որ այդ պահին հարձակումներ են կատարվել Քորինջի և Ծաթերի վրացական սահմանախմբի վրա, որ հայկական զորամասերը գործում են Ղարաքիլիսայի, Ջալալօղլու, Դիլիջանի և Քոլագիրանի շրջանում՝ ունեն իրենց սպայակույտը՝ շտաբը, հետախույզները, գործում են պատերազմական արվես-

[578] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 461:

տի բոլոր կանոններով[579]: Իր տխրահռչակ և սանձարձակ ելույթում Վրաստանի Ռազմական մինիստր Գեորգաձեն պարզապես հանգում է հետևյալին. «Այդպիսի պայմաններում մեր ինքնապաշտպանության շահերը թելադրում են մեզ, որ անհրաժեշտ է ձեռք առնել զինվորական համապատասխան միջոցներ՝ մեր տերիտորիան մաքրել այն հանդունգն ավանտյուրիստներից, որոնք լրբորեն մտել են մեր սահմանները»[580]: Նրան հաջորդած Եվգ. Գեգեչկորին ավելացրեց, որ Սանահինի հայտնի դեպքերի առումով իրենք գործ ունեն «այն անպատասխանատու խմբակների հետ, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն կառավարության հետ: Մենք արինք այն ամենը, ինչ կարելի էր անել դիվանագիտական ճանապարհով, և եթե այս ճանապարհը մեզ չառաջնորդի վճռելու կոնֆլիկտը, այդ դեպքում դիվանագիտությունը ստիպված կլինի լռել»[581]: Ի վերջո, Վրաստանի պառլամենտի կողմից ընդունվում է սոցիալ-դեմոկրատների խմբակցության կողմից առաջարկված բանաձևը. «Լսելով Սանահինի և Վորոնցովկայի շրջակայքում տեղի ունեցած անցքերի մասին կառավարական հաղորդագրությունը, պառլամենտը լիակատար հույս է հայտնում, որ կառավարությունն ամեն միջոց ձեռք կառնի պետությունը պաշտպանելու թշնամիներից, որոնց միակ ցանկությունն է արյունալի ընդհարում առաջացնել երկու հարևան ժողովուրդների միջև և անիշխանություն՝ մեր երկրում, և դրանով հող պատրաստել մեր անկախության և դեմոկրատական հանրապետության կործանման համար, և անցնում է հերթական խնդիրներին»[582]:

Ըստ էության դա պատերազմի նախապատրաստության և առաջ մղելուն ուղղված հերթական քայլն էր, պակասում էր միայն առիթը: «Վրաստանը ամէն կերպ դժուարութիւններ կը յարուցաներ Թիֆլիս-Ղարաքիլիսա գծին վրայ: Օգտուելով մեր նեղութիւններէն եւ ուժասպառ վիճակէն, մեր դրացիները կուզէին իրենց ի նպաստ լուծել հողային վէճերը, գրաւելով Բորչալուի և Ախալքալաքի գաւառները: Այսպիսով կը ըստեղծուէր այն մթնոլորտը, որմէ ծնաւ հայ-վրացական պատերազմը:

Այդ պատերազմի անմիջական առիթները երկուք էին.

---

[579] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 17 դեկտեմբերի, 1918 թ., N 21:

[580] Տե՛ս նույն տեղում:

[581] Տե՛ս նույն տեղում:

[582] Տե՛ս նույն տեղում:

ա) Հայաստան կ'ուզեր ազատ ելք ունենալ դէպի Պաթում, եւ

բ) իրեն կցել Լոռիի եւ Ախալքալաքի զուտ հայկական գաւառները, որոնց վրայ Վրաստան դրած է իր ձեռքը: Վրաստան հաղորդակցութեան անտանելի դժուարութիւններ յարուցանելով՝ կը ձգտէր ճնշում ի գործ դնել Հայաստանի վրայ, որպէսզի մենք իրեն զիջումներ ընենք՝ հողային վէճերու մեջ: Այս պարագաները պետք կը զգամ շեշտելու, որովհետեւ տարբեր պատճառներ կը փնտռեն հայ-վրացական պատերազմի բռնկման մեջ, ըսելով թէ վճռական դէր կատարած են Հայաստանի մէջ գտնուող ռուս սպաներու հակավրացական փրովոքասիոնները եւ Դրոյի ռազմատենչ խմբակցութիւնը», - նկատում է Ալ. Խատիսյանը[583]:

Դիվանագիտական բախումները շարունակվեցին մինչև անմիջական ռազմական գործողությունների սկսումը, որոնց արմատները ամենևին էլ պետք չի որոնել Երևանում և Հայաստանի քաղաքական-ռազմական գործիչների գործողություններում: Երևանում և Թիֆլիսում հայկական դիվանագիտական ներկայացուցչությունները փորձում էին ավելի համբերատար լինել և լուծումներ գտնել ստեղծված էքստրեմալ իրավիճակում, բացառելով և ժխտելով հայկական կանոնավոր զորամասերի ներկայությունը հայտնի տարածքներում: Վրաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարարին ուղղված դիմումագրում (ի պատասխան դեկտեմբերի 13-ի № 5598 գրության) Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի տեղակալ Մ. Թումանովը հաղորդում էր, որ բացի վրացական կողմի հաղորդագրությունից, որոնք մատնանշում էին հայկական կանոնավոր զորամասերի ներկայության մասին վրացական զորքերի կողմից օկուպացված տարածքում, ինքն այլ տվյալներ չունի և հույս էր հայտնում, որ մոտակա օրերին այդ իրադարձությունները կլինկվիդացվեն ի շահ երկու ժողովուրդների[584]

Սակայն այդ լավատեսությունը բոլորովին էլ չարդարացավ: Վրաստանը պատերազմի տենդագին նախապատրաստություններ էր տեսնում, և այն կանխել չհաջողվեց: Եվ քանի որ պատերազմը դա քաղաքականության շարունակությունն էր՝ միայն այլ միջոցներով, ապա կարելի է ասել, կանխել այն չհաջողվեց, քանզի պատերազմը կանխելու

[583] Տե՛ս Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 118:

[584] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 96, թ. 38:

ցանկությունը իրապես չուղեկցվեց կողմերի դիրքորոշումների որակական փոփոխություններով, քանի որ նաև կողմերի ազգային-քաղաքական ձգտման մոտեցումները չէին կարողանում որակական փոփոխությունների ենթարկվել պետահիրավական քաղաքականության տարողունականության տեսանկյունից: Այս կապակցությամբ Ռ. Հովհաննիսյանը հետաքրքիր նկատառում ունի, որն իր որոշ վիճարկելի կողմերով հանդերձ, դիտարժան է հայ-վրացական ռազմաքաղաքական առճակատման խորքային ծալքերի և բուն պատերազմի սանձազերծման նախապատմության և ռազմավարական դրդապատճառների պարզաբանման տեսանկյունից. «Տարածաշրջանային հարցերում նման կեցվածքը [արևմտյան մտասևեռումը, որին համարժեք այլընտրանք հայ քաղաքական շրջանները և ՀՀ կառավարությունը չէին կարողանում գտնել] Հայաստանի կառավարությանը հեռացնում էին Ադրբեջանի և Վրաստանի հետ վեճերում տեղային լուծումներ փնտրելուց: Հայաստանը վարում էր մի ռազմավարություն, որին բնորոշ էր հանուն փոխադարձ հարաբերությունների բարելավման լուրջ զիջումների գնալուց հրաժարվելն ու հույսով սպասելը, որ Դաշնակից պետություններն ավելի բարենպաստ պայմաններ կմտցնեն համընդհանուր Արևելյան պայմանագրի մեջ»[585]: Երկկողմանի կոշտ անզիջողականությունը և ռազմական լծակներին ապավինելը, որը ներքուստ խրախուսվեց Կովկասում գտնվող մեծ տերությունների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների կողմից, որի խայծը կուլ տվեցին թե՛ հայ, և թե՛ վրաց-ադրբեջանական քաղաքական-կուսակցական շրջանները և ռազմական առաջնորդները, հանգեցրին չարաբաստիկ պատերազմին Հայաստանի և Վրաստանի միջև, որն իր ամենակուլ երախի մեջ առավ երկու հարևան ժողովուրդներին, պատճառելով անհաշիվ տառապանքներ և թշնամանք:

Հայաստանը վատ էր նախապատրաստված պատերազմին, քանզի սոցիալ-տնտեսական տեղաբաշխման, ինչպես նաև ռազմաքաղաքական առումով շրջափակման վիճակում էր գտնվում, շարունակական լարվածության մեջ գտնվելով երկու հարևանների՝ Ադրբեջանի և Թուրքիայի հետ, որոնք ախորժակ ունեին զավթելու հայաբնակ մի շարք տարածքներ, իսկ վերջիններս դեռ դեկտեմբեր ամսից, ինչպես տեղին

[585] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր III, էջ 2:

նկատում է Ա-Դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), թե՛ հայերին, և թե՛ վրացիներին հավասարապես հրահրում էին իրար դեմ[586]: Դա որոշակի առումով հիշեցնում է ներկայիս օրերը, որին ավելանում է այն հանգամանքը, որ Սփյուռքի կապիտալը և այն ներկայացնող կրթված էլիտան բացակայում էր, դա այն դեպքում, երբ դրա կարիքը միշտ էլ զգացնել է տվել իրեն: Եվ չնայած այն կարևոր հանգամանքին, որ 1917 թ. Հոկտեմբեր- 1918 թ. մայիս ընկած ժամանակահատվածում Ախալքալաքն ու Հայկական Բորչալուն ենթարկվում էին բացառապես Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդին, դա անհրաժեշտ վստահություն չհաղորդեց ՀՀ կառավարությանը և պատերազմի ողջ ընթացքում ՀՀ ռազմաքաղաքական գործողությունները հայկական Լոռում և Ախալքալաքում լրացուցիչ բարդույթների առաջ են կանգնել ռազմաքաղաքական կենտրոնացման բացակայության հետևանքով, որին հավելվեցին նյութատեխնիկական և հաղորդակցման խնդիրների լուծման դժվարությունները, և անշուշտ, Հայաստանի կառավարության չափից ավելի անվճականությունը ռազմավարական մոտեցումների ընտրության և իրականացման բնագավառում, ավելացրած դրան թուրքական թշնամական մեքենայությունները և բրիտանական ձեռնածությունները: Շատ դեպքերում այդ օրերի ՀՀ կառավարության գործելակերպը, որի վրա էապես ազդում էր հայ զինվորական բարձրագույն խավի դիրքորոշումը և եսասիրական մոտեցումները, անհասկանալի էր և խորապես չպատճառաբանված, ինչն էլ հանգեցնում էր ոչ ցանկալի ռազմաքաղաքական արդյունքների: «Այստեղից հասկանալի է, - եզրահանգում է հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, 1918-1919 թթ. Դոնում ՀՀ դեսպան Գրիգորի Չալխուշյանը, - սահմանների մասին հարցը պետք է ճակատագրական դեր խաղար և չափից ավելի ագրեսիվ վրացական կառավարող շրջաններին իր ետևից տաներ բացահայտ բախման»[587]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Անդրկովկասի զանազան ազգային-քաղաքական և կուսակցական շրջաններում բուռն քննարկման հիմնահարց դարձած անդրկովկասյան երկրամասի վարչատարածքային սահմա-

[586] Տե՛ս Ա-Դո, Իմ հիշողությունները, էջ 445: Ա-Դո (Հ. Տեր-Մարտիրոսյան), Հայութեան երկունքը, էջ 568-569:

[587] Чальхушян Гр., Красная книга, стр. 129:

նազատման հարցերը դարձան ազգամիջյան լուրջ բախումների դրդապատճառ, էապես սրելով ռազմաքաղաքական հարաբերությունները ձևավորված ազգային պետականությունների միջև, որի հիմքերը գալիս էին դեռ ցարական ժամանակներից որպես ժառանգություն անդրկովկասյան ժողովուրդներին, այդ թվում նաև հայերին և վրացիներին, ընդ որում վերջիններս օգտագործելով իրենց ռազմավարական առումով բարենպաստ աշխարհագրական տարանցիկ խաչմերուկային վիճակը, ձգտում էին առաջնային իշխող դիրքեր գրավել անդրկովկասյան տանը և տարածաշրջանում: Դա շատ դիպուկ է նկատել Հովհ. Քաջազնունին 1923 թ. հունիսի 17–ին Ս. Վրացյանին ուղղված նամակում. «Վրաստանը ուզում է ապահովել իր գերիշխող դիրքը Անդրկովկասում, ձգտում է ամբողջացնել իր պատմական նախառուսական - սահմանները, նա չի ուզում հրաժարվել ոչ միայն Ախալքալաքից ու Արդահանից, այլ նաեւ Լոռիից – դեռ Փամբակի վրա էլ աչք ունի»[588]:

Սահմանատարածքային հիմնախնդիրներում անդրկովկասյան ժողովուրդների համար ջրբաժան հանդիսացավ 1918 թ. մայիսը: Անդրկովկասյան ժողովուրդների անկախության և ազգային սեփական պետությունների կերտման ուղին, որի ճանապարհին տարածքային սահմանազատման հարցը դարձավ ազգամիջյան հարաբերություններում անհաշտելի լարվածության և ռազմաքաղաքական առճակատումների, և մասնավորապես 1918 թ. դեկտեմբերի կեսերին բռնկված վրաց-հայկական պատերազմի գլխավոր դրդապատճառը և խթանիչ ուժը, ինչը վրաց պատմաբանները[589] փորձում են գտնել հայերի մեջ և դրա մեղքը բարդել Հայաստանի Հանրապետության, և գլխավորապես կառավարող կուսակցության՝ ՀՅ Դաշնակցության վրա, որն անփաստարկ և ստահոդ գաղափարադրույթ է, ինչը հերքվում է ստորև շրջանառության մեջ դրվող բազմաբնույթ և անառարկելի պատմափաստերով:

---

[588] Քաջազնունի Յովհաննես, Յետ մահու: Պատմուածքներ, Յուշեր, յօդուածներ. Հրատար. համար պատր. Ս. Վրացեանը, Պէյրութ, հրատ. «Համազգային» ընկեր., տպ. «Մշակ», 1965, էջ 224-225:

[589] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах (с сокращениями), стр. 16-17, 32-34: Տե՛ս նաև http://iberiana,wordpress.com/armenia-georgia /1918-1920/: Вачнадзе М., Гурули В., История Грузии (XIX-XX века), Тбилиси, 2004, стр. 91: Вадачкория Ш. И., Вопросы грузино-армянских взаимоотношений в политической мысли Грузии (1918-1920), Тбилиси, 1999:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ ԵՎ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՈՒՄԸ: ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՏԵՍԱԿԱՆ, ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ: 1918 Թ. ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հայաստանի կողմից գործադրված ջանքերը էական արդյունքներ չտվեցին, ամեն ինչ գնում էր դեպի փակուղի, և «եղբայրական» Վրաստանը նպաստում էր դրան: Կանխել պատերազմը՝ չհաջողվեց, այն դարձավ յուրահատուկ հայկական «Էլզաս-Լոթարինգիա» հայ ժողովրդի համար: Այն սկսվեց դեկտեմբերի 13-ին: Այդ մասին շատ դիպուկ է նկատում Հայաստանի Առաջին Հանրապետության առաջին վարչապետ Հովի. Քաջազնունին. «Դեկտեմբերի սկզբներին ծագեց կարճատեւ հայ-վրացական պատերազմը:

Երբ թուրքական բանակը՝ Ալեքսանդրապոլի վրայից անցնելով՝ հասաւ Փամբակ ու գրաւեց Ղարաքիլիսան, վրացիները օգտուեցին հանգամանքից ու զօրքերը մտցրին Հայկական Լօռին: Պատրուակը այն էր, թե ուզում են կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը դէպի Թիֆլիս: Բայց թուրքերի հեռանալուց յետո էլ վրացիները չուզեցին դատարկել Լօռին, ընդհակառակը, եռանդօրեն աշխատում էին ամրացնել ու յաւերժացնել իրենց տիրապետութիւնը, իսկ տեղացիների դժգոհութեան արտահայտութիւնները խեղդում էին դաժանօրէն:

Լօռին - կռվածաղիկ էր Հայաստանի եւ Վրաստանի միջև, ամէնից ցաւոտը հայ-վրացական սահմանային վէճերի մեջ:

Մեզ վրա ճնշում գործ դնելու նպատակով, Վրաստանը փաստօրէն կտրել էր մեր հաղորդակցութիւնը դրսի աշխարհի հետ, փակել էր մեր սահմանները, նույնիսկ այն հացը, որ ուղարկւում էր դրսից մեր սովամահ գաղթականութիւնը կերակրելու համար, այդ հացն էր հանդիպում

Վրաստանում բազմազան արգելքների ու ուշանում էր, լրիւ չէր հասնում տեղը:

Վրաստանը գրաւել էր Լոռին, փակել երկաթուղին ու պաշարել մեզ, այն էր պատերազմի հիմնական պատճառը:

Իսկ անմիջական առիթը՝ Լոռուայ մի քանի հայ գիւղերի ապստամբութիւնն է ր եւ Վրաց կառավարութեան գործադրած անհամապատասխան խիստ միջոցները, կարծես կառավարութիւնը առիթ էր որոնում (ու նույնիսկ ինքը ստեղծում), որպեսզի կոտորի ու ահաբեկի հայ ազգաբնակչութիւնը»[590]:

Վրաց-հայկական պատերազմի տարեգիրներից մեկը՝ Ս. Վրացյանը այդ առումով ունի հետաքրքիր դիտարկում. «Անմիտ էր այդ պատերազմը, խելացնոր, բայց անխուսափելի:…Վրացիները պատճառ դարձան այդ պատերազմին՝ գրաւելով հայկական հողերը, փակելով երկաթուղային [ուղին] արտասահմանից Հայաստան բերուող պարենի առջեւ, սովամահութեան մատնելով հայ ժողովուրդը: Հայերին ոչինչ չէր մնում անել, բայց եթէ զէնքի դիմել»[591]:

Հայտնի պատմաբան Լեոն շատ հետաքրքիր և ինչ-որ տեղ վիճարկելի դիտարկում ունի հայ-վրացական պատերազմի սկզբի, բնույթի, հետևանքների և հնարավոր արդյունքների վերաբերյալ. «1918-ի վերջերին շատ սուր կերպարանք ընդունեց սահմանային վեճը հայերի եւ վրացիների միջեւ Լոռիում: Երկու կողմերն էլ մեղավոր էին: Վրացիները գուցե ավելի շատ, որովհետեւ ռազմատենչ նացիոնալիզմը նրանց մեջ չափազանց առաջ էր գնացել շնորհիվ այն հանգամանքի, որ նրանք ամենքից շատ ունեին ռազմամթերք եւ պատերազմական հանդերձանքներ, որ մնացել էին ռուսներից եւ մասամբ էլ ձեռք բերվել հեռացած գերմանացիներից: Սակայն վեճը շատ հեշտ կարելի էր լուծել բանակցություններով:

Դրոն այդպես չուզեց: Պատերազմ չէր ուզում հենց ինքը՝ դաշնակցական կառավարությունը, որ արգելել էր Դրոյին անցնել սահմանը: Մի քանի օրվա ձգձգումներից հետո Դրոն, պատճառ բերելով, որ վրացական զորքերը բռնություններ են կատարում Լոռու մի քանի հայաբնակ գյուղերում, թույլտվություն խնդրեց պատերազմական գործողությու-

[590] Տե՛ս Քաջազնունի Յովհ., Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, էջ 34-35:
[591] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատոր Դ, էջ 186:

ներ սկսելու: Այդ թույլտվությունը նրան չտրվեց: Այն ժամանակ նա հեռագրեց՝ թեեւ չեք թույլատրում, բայց ես անցնում եմ սահմանը: Դաշնակցական կառավարությունն ի՞նչ կարող էր անել իր ամենակարող խմբապետին, եթե ոչ հնազանդվել նրան, իսկ ժողովրդական կուսակցության անդամներն էլ համակերպվեցին այդ հնազանդությանը՝ իրենց ողորմելի պորտֆելները պահպանելու համար…»[592]:

Բավականին ինքնատիպ է նաև Լեոյի տեսակետը այդ պատերազմի հնարավոր կանխման վերաբերյալ դեռ բուն խանձարուրում՝ պատերազմի բոցը մարելու նրանց գործադրած ջանքերի առումով. «Եվ այսպես պայթեց հայ-վրացական պատերազմը: Եթե երբեւիցե հայ պատմագրությունը պիտի հավաքի, դասավորի եւ արձանագրի այն բոլոր թշվառությունները, որոնք թափվեցին կովկասահայ ժողովրդի գլխին 1918-ի ապրիլից սկսած, ուսումնասիրողը շատ պիտի ապշի՝ տեսնելով այդ սարսափների ծովի վերջում այս ոճրագործությունը՝ մի պատերազմ, անհասկանալի, ամոթաբեր ու վայրենի բոլոր տեսակետներից, բայց հախուռն եւ սանձակտուր ֆիդայականությունից… Անգլիական հրամանատարությունն, իհարկե, կարող էր հենց առաջին րոպեից կանգնել կռվողների մեջտեղը եւ թույլ չտալ, որ արյունահեղություն լինի: Բայց չարավ այս, որովհետեւ այսպիսի մի քայլ կհակասեր անգլիական ավանդական քաղաքականությանը:…Իրար բզկտող կողմեր, եւ ինքը մեջտեղ՝ իբրեւ իրավարար եւ հաշտեցնող. Այս դերի մեջ էր նա առաջին անգամ իրեն ցույց տալիս՝ Անդրկովկասը իր զորքերով գրավելուց հետո»[593]:

Կողմերի մոտ ցանկություն է եղել ստեղծել քննող հանձնաժողով՝ վիճարկելի հարցերի խաղաղ ճանապարհով լուծման համար: Սակայն պատմաբան Կ. Սարդարյանը մեջբերելով ՀՀ Զինվորական նախարար գեներալ Հ. Հախվերդյանի տեսակետը, որ «Դրոն ստեղծել էր այնպիսի վիճակ, երբ հրանոթներն իրենք են կրակում», գործնականում հավանական է համարում այդ փաստի իրողությունը, միաժամանակ կարծելով, որ Դրոյի դեկտեմբերի 11-ի վերջնագիրը հանգեցրեց պատերազմի, սակայն միաժամանակ եզրահանգելով, որ Դրոն պարզապես լինելով սահմանագծում և տեսնելով պատերազմի անխուսափելիությունը, ջանում

[592] Լեո, Անցյալից: Հուշագրություն, Եր., «Շեմ», 2009, էջ 382-383:
[593] Տե՛ս նույն տեղում, էջ 383:

էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն այլևս չխուսափի հասունացած ու անխուսափելի ռազմական առճակատումից, որն ավելի թանկ էր նստում շրջափակված Հայաստանի վրա, այդպես էր հասկացել Սիմեոն Մդիվանին[594] Դրոյի հետ Ալեքսանդրապոլում ունեցած զրույցից: Դրոն Մդիվանուն նոր հանդիպման ժամանակ՝ Ղարաքիլիսայում, ներկայացրել էր նոր և լրացուցիչ պահանջներ, որոնք, ըստ Կ. Սարդարյանի մոտեցման, գործնականում համընկնում էր վրաց պատվիրակի կողմից հրամցված մոտեցման հետ, դրանք կարող էին ըստ էության նպաստել իրավիճակի կտրուկ սրմանը՝ ընդհուպ մինչև ողբերգական ավարտ[595]: Այդ պահին նման մոտեցումը հարցադրում էր առաջադրում, որ տվյալ իրավիճակում կարելի էր Դրոյին հակառակը համոզել և դրանով իսկ գուցե նաև խուսափել հայ-վրացական ռազմական առճակատումից: Կ. Սարդարյանը բերելով նոր փաստեր, որ Մդիվանին Ս. Տիգրանյանին տեղեկացրել էր, որ Սանահին և Ալավերդի կայարաններում դեկտեմբերի 10-11-ին հայերը վրացական զորամասերի վրա կրակ են բացել, սակայն վրացական կողմը չի պատասխանել, դրանով իսկ ՀՀ Արտաքին Գործերի նախարարին հայտնվել է, որպեսզի նա տեղեկանար, որ Լոռում ապստամբության և ռազմական գործողությունների նախաձեռնողը իբր Դրոն է: Այնուհետև ներկայացվում է այն վարկածը, որ իբր թե նման դիրքորոշումով Մդիվանին փորձել է պարզել, թե եղե՞լ են արդյոք տարաձայնություններ ՀՀ կառավարության և Դրոյի բռնած կոշտ դիրքորոշման միջև, որ ըստ էության տարբերություն չկար Դրոյի դեկտեմբերի 11-ի վերջնագրի և ՀՀ կառավարության կողմից Վրաստանին ներկայացված դեկտեմբերի 9-ի նոտայի միջև,[596] կարծես թե այդ պահին Վրաստանը խաղաղարարի դեր էր ստանձնել՝ ձգտելով պատերազմը կանխել, իսկ Հայաստանն ընդհակառակը՝ ամեն

---

[594] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 228: Սիմյոն [Սիմեոն] Մդիվանի – Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Վրաստանում, որին անգամ սեփական հայրենիքում համարում էին ապաշնորհ և ամենաանարժան անձնավորություն ու դեսպանը, որ երբևէ Վրաստանն ուղարկել էր հարևան պետություն՝ Փառնազ թագավորից ի վեր: Տե՛ս Գերոնտի Քիքոձե, Ժամանակակցի գրառումներ, «Մնաթոբի», Թիֆլիս, N 1, 1989:

[595] Տե՛ս Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., էջ 72-73:

[596] Տե՛ս նույն տեղում, էջ 73:

կերպ նետվում էր պատերազմի թոհ ու բոհի մեջ: Ինքնին հասկանալի է, որ Վրաստանի դիվանագիտական հավատարմատարը պարզապես ճարպկորեն մանևրում էր, փորձելով շփոթ առաջ բերել հակառակորդի շարքերում, միաժամանակ ձգտելով հնարավորինս առավելագույն ջանքեր գործադրել՝ իրերի նման դասավորությունը պահպանելու և ձգձգելու տեղեկատվության, այդ պարագայում՝ շտապ հեռագրի տեղին առաքումը, որը լիովին ձեռնտու էր Վրաստանին՝ Հայաստանի Հանրապետությանը նոր շինծու մեղադրանքներ ներկայացնելու համար՝ որպես վրաց-հայկական պատերազմի հրձիգների:

Բավականին ամբողջական և ուշագրավ է Հայաստանի Սովետական Հանրագիտարանի համապատասխան հատորում զետեղված կարծիքը հայ-վրացական պատերազմի ծագման պատճառների մասին: «Այն հակասությունները, որոնք հանգեցրին Անդրկովկասյան Սեյմի վերացմանը, երեք ազգային հանրապետությունների ստեղծումից հետո ոչ միայն չթուլացան, այլև ավելի սրվեցին, վերաճեցին զինված ընդհարումների նրանց միջև: Դեռևս 1918-ի մայիսին, երբ թուրքական զորքերը մտել էին Անդրկովկաս, վրացական մենշևիկները, նրանց առաջխաղացումը դեպի Թիֆլիս կանխելու պատրվակով, իրենց զորքերը մտցրին Լոռի: 1918-ի վերջին, երբ թուրք զորքերը թողեցին Անդրկովկասի սահմանները, Վրաստանի մենշևիկյան կառավարությունը հրաժարվեց Լոռին վերադարձնել Հայաստանին: 1918-ի դեկտեմբերին Վրաստանի և Հայաստանի միջև Լոռու համար պատերազմական գործողություններ սկսվեցին: Ընդհարմանը միջամտեցին Անտանտի երկրները: Անգլիացիների առաջարկով Բորչալուի գավառից ստեղծվեց «Չեզոք գոտի», որն ընդգրկում էր գրեթե ամբողջ Լոռին: Անգլիական զորքերը մտան «Չեզոք գոտի»: Այդպիսով, Հայաստանի Հանրապետությունից խլվեցին նրա հյուսիսային շրջանները»[597]:

Վրաց-հայկական պատերազմի մեջ բոլշևիկյան պետական-քաղաքական, կուսակցական գործիչ, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի անդամ Գ. Կ. Օրջոնիկիձեն [12(24).10.1886 թ.- 18.02.1937 թ.] մեղադրում է Մեծ Բրիտանիային. «Անդրկովկասի ռեսպուբլիկաների մեծ հովանավորը՝ Անգլիան և նրա գործակալները, իրենց տիրապետությունը

[597] Տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարան (ՀՍՀ). «Սովետական Հայաստան». Եր., 1987, էջ 162:

հիմնելով «բաժանիր և տիրիր» սկզբունքի վրա, պատերազմ են հրահրում Վրաստանի և Հայաստանի միջև: Եթե Վրաստանի և Հայաստանի փոխհարաբերությունների ամբողջ պատմությունը երբեք պատերազմ չի տեսել այդ երկու եղբայրական ժողովուրդների միջև, ապա բավական եղավ, թույլ տվեք ասել, սոցիալիստների՝ մենշևիկների և դաշնակների՝ իշխանության գլուխ անցնելը և երկու եղբայրական ժողովուրդները մահացու կռիվ սկսեցին ինչ-որ մի պատառ հողի համար, թափելով հարյուրավոր բանվորների և գյուղացիների՝ հայերի և վրացիների արյունը ի հաճույս անգլիական վաճառականների և արդյունաբերողների, որոնք օգտվեցին դրանից, որպեսզի թե՛ մենշևիկյան և թե՛ դաշնակցական բանդիտներին քշեին վիճելի տերիտորիայից և հայտարարեին չեզոք գոտի, այսինքն գցեին իրենց ձեռքը, որը և նրանք արին: Հիմարացված դաշնակներն ու մենշևիկները բացատրություններ էին տալիս պառլամենտ-բալագանում՝ ոմանք Երևանում, մյուսները՝ ի դեմս Ն. Ժորդանիայի, Թիֆլիսում: Վրացական ռազմատենչ նացիոնալիստների այն հարցին, թե ինչու՞ պատերազմը դադարեց և ինչու՞ այն անհետևանք ավարտվեց, ալեհեր ծերունի Ն. Ժորդանիան, որը ծերության հասակում դարձել էր համաշխարհային իմպերիալիզմի սպասավորը, իր մարդակեր նացիոնալիստներին շփոթված պատասխանում էր, թե պատերազմը դադարեց, որովհետև «Անգլիայի միջամտության հետևանքով պատերազմը կորցրեց իր հեռանկարը…»[598]: Ավելին, 1919 թ. փետրվարի 15-ին գեներալ Ջ. Ֆորոստյեր-Ուոքերի հետ ունեցած երկխոսության ժամանակ ինքն իրեն հակասելով, Նոյ Ժորդանիան բավականին իրատեսական բնութագիր է տալիս անգլիացիների գործունեությանը Անդրկովկասում, պնդելով, որ հենց դաշնակիցների ժամանումով իրավիճակը Անդրկովկասում կտրուկ փոխվեց. «Մենք անկախություն հռչակեցինք 1918 թ. մայիսի 26-ին և մինչև դաշնակիցների մեզ մոտ գալը (Անդրկովկաս- Վ. Վ.), զբաղված էինք բացառապես մեր նոր պետական կյանքի շինարարությամբ: Մենք ոչ ոքի հետ չենք պատերազմել և ոչ մի տեղ թշնամի չունեինք: Մեր բարեկեցության միակ վտանգը բոլշևիկներն էին, բայց մենք նրանց քշեցինք Սոչիի մյուս կողմը, և մեր պետու-

[598] Տե՛ս Օրջոնիկիձե Գ. Կ.. Ընտիր հոդվածներ և ճառեր. 1918-1937. էջ 74-75:

թյունը ազատվեց այդ վտանգից: Կրկնում եմ, բոլոր մեզ շրջապատողների հետ մենք ապրում էինք խաղաղության մեջ:

Դաշնակիցների գալուց հետո պատկերը խիստ կերպով փոխվեց. մենք ամբողջ ժամանակ պատերազմում ենք: Նախ՝ Հայաստանի դավադիր հարձակումը, յետոյ՝ կամավորականների առաջխաղացումը և, վերջապես՝ թուրք-թաթարական հորդաների ներխուժումը մեր երկիրը Արդահանի կողմից դեպի Ախալցխա: Ես առանձնապես հրավիրում եմ ձեր ուշադրությունը վերջին փաստի վրա: Վրաստանի կառավարությունը միշտ համարել է, որ Բաթումիի և Արդահանի շրջանները գտնվում են բրիտանական զինվորական ուժերի անմիջական ազդեցության և կառավարության ներքո, և ես ենթադրում եմ, որ թուրք բանակի ասկյարներն ու սպաները կհեռացվեն այդ հողամասերից անգլիական հրամանատարության կարգադրությամբ:...Կարսի շրջանի վերաբերմամբ մենք ենթադրում էինք, և հիմք ունեինք դրա համար, որ դա օրինական հիմունքներով պիտի հանձնվի Հայաստանին: Մինչդեռ իմ հիշած տարածության վրա կազմվել է նոր ինքնակոչ մի պետություն, որը բաց կերպով հայտարարում է, որ ինքը գտնվում է Անգլիայի անմիջական հովանավորության տակ»[599]: Իսկ Եվգ. Գեգեչկորին անգամ իր պատրաստակամությունն է հայտնել օգնել անգլիացիներին, միաժամանակ պնդելով, որ սեփական [Վրաստանի – Վ. Վ.] զորքերը մշտապես կառաջարկեն իրենց ծառայությունները, սակայն դրանք կարող են անբարավար լինել, քանզի Հայաստանի դեմ անհրաժեշտ է ունենալ ծանրակշիռ ռազմական ուժ[600]:

Առավել ամբողջական է դիտարկում հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների խնդիրը Զուրաբ Ավալովը, որը գրում է հետևյալը. «Հայաստանի և Վրաստանի միջև վիճելի հարցերը Անտանտի ներկայացուցիչները չէին վճռում, այլ հետաձգում էին դրանց լուծումը, որոշելով, որ երկու պետությունների՝ Վրաստանի և Ադրբեջանի

---

[599] Տե՛ս Борьян Б. А., Армения, международная дипломатия и СССР, часть II, М-Л., Гос. изд-во, 1929, стр. 22: // Жордания Н., Большевизм, Берлин, Изд-во ЦК СДРП Грузии, 1919, стр. 36: Տե՛ս Сеф С. Е.,. «Демократическое правительство» Грузии и английское командование, стр. 27-28: Վրացի մենշեւիկները եւ անգլիական զօրավարները. գրեց Ս. Մասուրեան, «Հայրենիք», Բոստոն, Յունուար, 1928, N 3 (63), էջ 149:

[600] Տե՛ս Борьян Б. А., Армения, международная дипломатия и СССР, часть II, стр. 22: Տե՛ս նաև «Правда», 16 июня, 1920 г., N 138 (665):

ներկայացուցիչները շուտով ուղարկվելու են Եվրոպա, որտեղ նրանց սահմանների վերաբերյալ հարցերը կվճռվեն մեծ տերությունների կողմից»[601]:

Պատերազմի ծագման և արժևորման առումով հետաքրքիր նկատառումների ենք հանդիպում վրաց հեղինակների հուշագրային բնույթի հրապարակումներում: 1918 թ. վրաց-հայկական պատերազմի ժամանակվա իրադարձությունների ժամանակակիցներից մեկի՝ Գերոնտի Քիքոձեի գրառումներում հանդիպում ենք հետևյալ դիտարժան հետևությանը. «Այդ ժամանակ Երևանի կառավարությունը հավաքում է իր զորքը, առանց պատերազմ հայտարարելու անցնում Վրաստանի սահմանները և կոտորում այնտեղ գտնվող վրացական զորախմբերը: Վրաստանի ղեկավարությունը և հիմնադիր ժողովը այս լուրը ուշացումով իմացան: Տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ ամենահուզիչը Վրաստանի պառլամենտի կարճ պատմության ընթացքում: Մի չորս դաշնակցական բավականին անօգնական վիճակում էին գտնվում հարյուր քսան զայրացած վրացի երեսփոխանների առաջ:

-Այս ընդհարման ժամանակ դուք ու՞մ կողմն եք կանգնելու,- նրանց հարցրին ամբիոն բարձրացող հռետորները:

-Իհարկե՛ հայրենիքի, - պատասխանեցին դաշնակները:

-Ո՛ր հայրենիքի՝ Հայաստանի, թե՞ Վրաստանի:

Պարզամիտ այս հարցին հաջորդեց պերճախոս լռություն, որը և անչափ զայրացրեց փիլիսոփայորեն խորհող մի ֆեդերալիստի: Նա ձեռքը գցեց աթոռին, բայց պարզվեց, որ այն ամրացված է հատակին»[602]:

Պատերազմին իր ինքնատիպ անդրադարձն ունի ևս մեկ վրացի ժամանակակից՝ Ալեքսանդր Մուջիրին, որը դիպուկ ներկայացնում է – վրաց- հայկական առճակատման պահը, անշուշտ՝ որոշ վերապահումներով հանդերձ. «1918 թ. դեկտեմբերի 9-ին Դաշնակցական Հայաստանը պատերազմ սկսեց Վրաստանի տարածքի այն մասի համար, որ նրանք վիճելի էին համարում: Դա շատ ցավալի պատերազմ էր երկու ամենամոտ, պատմականորեն միմյանց ուրախությունն ու ցավը կիսող հարևանների միջև»[603]:

---

[601] Տե՛ս Авалов З. Д., Указ. соч., стр. 209-212, 301-306:

[602] Տե՛ս «Մնաթոբի», Թիֆլիս, 1989 թ., թիվ 1, էջ 14-15:

[603] Տե՛ս նույն տեղում, թիվ 7, էջ 106-107:

Վրաց-հայկական պատերազմի ծագման, պատճառների բացահայտման և վրաց-հայկական ռազմաքաղաքական հարաբերությունների արժևորման հիմնախնդիրներում առավել ժխտողական և հակահայկական կեցվածք ունի վրաց պատմաբան Իվանե Ջավախիշվիլին. «Ճիշտ այդ ժամանակ՝ 1918 թ. Ստամբուլում տպագրվեց Հայաստանի (իբրև թե պատմական) ֆանտաստիկ մի քարտեզ, որտեղ Համայն Հայաստանի սահմանները ձգվում են Սև ծովից մինչև Կասպից ծով և… Միջերկրական ծովերը…Ըստ այդ քարտեզի՝ Հայաստանի կազմում են նաև Բաթումին, Ախալցխան, Մցխեթը, նույնիսկ Թիֆլիսը, մինչդեռ Վրաստանին հատկացված էր մի փոքրիկ, նեղ շերտ:

Հայկական Հանրապետությունը Թուրքահայաստանից բացի, որ կորցրեց ձեռքից, Երևանի նահանգից բացի, տիրություն էր անում նաև Ղարսի ամբողջ գավառին՝ Արդահան-Արդվինով հանդերձ: Բայց ոչ էլ դրանով բավարարվեց: Ռազմական գաղտնի նախապատրաստությունից հետո, համաձայնվելով Անգլիայի օկուպացիոն բանակի ավագ գեներալ Ուոկերի (նկատի ունի գեներալ Ջ. Ֆորեստյեր-Ուոքերին – Վ. Վ.) հետ, 1918 թ. դեկտեմբերի սկզբին հայ դաշնակցական կառավարությունն իր զորքերը մտցրեց Վրաստան և միաժամանակ Արտաքին Գործերի նախարարի անունից Վրաստանից վերջնագրի կարգով պահանջեց՝ հետ գնալ մինչև Քարթլիի սահմանը, քանի որ հայերը Քարթլի են համարում Գորիի գավառը, պարզ է, որ այս վերջնագրով նկատի էր առնվում նաև Թիֆլիսի դատարկումը, և այդպիսով, այդ պահանջը վերոհիշյալ երկու քարտեզներից շատ ավելի ֆանտաստիկ էր: Իբրև թե պատմական քարտեզի սահմանները վերականգնել էին փորձում: Թուրքիայում պարտություն կրելուց հետո Վրաստանը զավթելու և սեփականելու հայ քաղաքագետների ախորժակը ոչ միայն չկորավ, այլ, ընդհակառակը, ավելի բացվեց. Այժմ էլ նրանք ուզում էին հին Հայաստանի իբրև թե պատմական սահմանների վերականգնումն իրականացնել Վրաստանի և վրաց ժողովրդի հաշվին»[604]:

[604] Տե՛ս Իվանե Ջավախաշվիլու արխիվից //Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1990). Նյութերի ժողովածու. Պրակ առաջին, կազմեց, առաջաբանը գրեց և վրացերենից թարգմանեց Հրաչյա Բայրամյանը, Եր., «Զանգակ – 97» հրատ., 2001, էջ 59-60:

Այս գունեղ պատկերները ցույց են տալիս ողջ լարվածությունը հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում, որն էլ հանգեցրեց երկու հարևան դրկից ժողովուրդների միջև անցանկալի և տնտեսաքաղաքական առումով աղետալի հետևանքներով լի վրաց-հայկական պատերազմին:

Իսկ հայտնի բոլշևիկ Գ. Կ. Օրջոնիկիձեն ուղղակի արձանագրում է փաստը, ինչ-որ տեղ նաև մեղադրելով թե՛ դաշնակներին և թե՛ մենշևիկներին. «Եթե հայ-վրացական հարաբերությունների պատմությունը մինչև 1918 թիվը չգիտեր այդ ժողովուրդների զինված ընդհարումներ, ապա 1918 թվից, այսինքն՝ մենշևիկյան Վրաստանի և դաշնակցական Հայաստանի կազմակերպվելու մոմենտից սկսած այդ երկրները իսկական պատերազմ էին վարում»[605]:

Բավականին հետաքրքիր է հայտնի վրաց հասարակական գործիչ, «Էրթոբա»-յի խմբագիր Գրիգորի Իլ. Ուրատաձեի տեսակետը հայ-վրացական պատերազմի ծագման և այլ հարցերի վերաբերյալ. «Հայ-վրացական պատերազմը գիտակից պրովոկացիայի ձեռքի գործ էր: Այն ինչ-որ մեկին պետք էր, որպեսզի ապացուցեն, որ Կովկասում անկախ պետությունների գոյությունը անպատկերացնելի անմիտ է: Այդ երկու մոտ հարևանների մեջ պատերազմը այդ հանրապետությունների անկախության հակառակորդների ձեռքին կարևոր շահաթուղթ էր: Երկու կողմերն էլ հասկացան, թե ինչքան կործանարար է այդ պատերազմը բոլոր առումներով, և ձգտում էին շուտափույթ վերջացնել այն»[606]: Ավելի ծայրահեղական մոտեցում ունի վրաց պատմաբան Գ. Մանդջգալաձեն. «Հենց այդ պատճառով էլ Հայաստանի ղեկավարները այդ իրադրությունը նպաստավոր համարեցին իրենց հավակնությունների բավարարման համար, և 1918 թ. դեկտեմբերի 7-ին, առանց պատերազմի հայտարարման, Հայաստանը ագրեսիա սկսեց Վրաստանի դեմ: Զինված հայկական զորաջոկատները գրավեցին Սանահինը և Ալավերդին, սկսեցին կողոպտել երկաթուղագիծը և այլ օբյեկտներ: Դրանից հետո Հայաստանի կառավարությունը վրացական իշխանություններին վերջնագիր ներկայացրեց՝ իրենց հանձնելու Ախալքալաքի և Բորչալուի գավառները:

---

[605] Տե՛ս Օրջոնիկիձե Գ. Կ.. Ընտիր հոդվածներ և ճառեր. 1918-1937, էջ 61:

[606] Տե՛ս Уратадзе Г. А., Образование и консолидация Грузинской Демократической республики, стр. 87-88:

Վրացական կառավարության փորձերը խաղաղ բանակցություններ անցկացնել՝ դուրս եկան անարդյունք:

Վրաստանի կառավարությունը, չնայած և ուշացումով, սակայն միջոցներ ձեռնարկեց հայկական ագրեսիան ետ մղելու համար, հրաման արձակեց զորամասերին և հանրապետական գվարդիային ազատագրել հայկական զորքերի կողմից ինքնակամ գրավված տարածքները: Դեկտեմբերի 19-ին սկսվեցին բախումները: Հայաստանի զորքերը ամենուրեք պարտություն կրեցին: Հայերը հատկապես ծանր պարտություն կրեցին Շուլավերի մոտի ճակատամարտում: Հայկական զորքերը սկսեցին նահանջը, որը վերածվեց փախուստի, Հայաստանը հայտնվեց ծայրահեղ վատ վիճակում, և նրա սեփական տարածք ներխուժելու ճանապարհը բաց էր: Պատերազմի մեջ ներքաշվել էին Հայաստանի բոլոր ուժերը, այն դեպքում, երբ Վրաստանի զինված ուժերի ռեզերվային ուժերի նշանակալից մասը և՛ Արևմտյան, և՛ Արևելյան Վրաստանում դեռ նոր էր ներքաշվում դեպի ռազմաճակատ: Հենց այդ ժամանակ կոնֆլիկտին միջամտեց Անդրկովկասում գտնվող անգլիական զորքերի հրամանատարությունը, որի օգնությունը բացահայտորեն փրկեց Հայաստանին ջախջախիչ վերջնական պարտությունից: Մի շարք բանակցություններից հետո և դեկտեմբերի 31-ի համաձայնությունից հետո ռազմական գործողությունները ռազմաճակատի ողջ գծով ընդհատվեցին և վրացական զորքերի առաջխաղացումը կանգնեցվեց»[607]:

Վրաց-հայկական պատերազմի ժամանակակից Գերոնտի Քիքոձեն իր սեփական հայեցակետն ունի, որում ռացիոնալ մոտեցումներ կան հարցին, և որոնք հանգում էին հետևյալին. «Հայաստանը Վրաստանի դեմ պատերազմն սկսեց Լոռու գավառի համար: Այդ գավառը հայերով էր բնակեցված, բայց անցյալում երկար ժամանակ եղել է Վրաստանի թագավորության սահմաններում: Հայաստանի և Վրաստանի բաժանման ժամանակ մնաց Վրաստանին, իբրև նախկին Թիֆլիսի նահանգի բաղկացուցիչ մաս»[608]:

Ընդհանուր առմամբ, որոշ վերապահումներով հանդերձ, կարելի է համաձայնվել վերոնշյալ տեսակետով արտահայտված այս կամ այն

---

[607] Տե՛ս Манджаладзе Гурам, Военный конфликт между Грузией и Арменией в 1918 году // Dirçəliş XXI əsr».- 2008.- № 120-121.- стр. 85-90. elibrary.az/docs/jurnal-08/148j.htm:

[608] Տե՛ս «Մնաթոբի», Թիֆլիս, 1989 թ., թիվ 7, էջ 106-107:

նրբերանգի հետ, սակայն կան հարցադրումներ, որոնց հետ դժվար է համաձայնվել, քանի որ դրանք իրողությունը չեն արտացոլում և արտահայտում: Հարցը վերաբերում է պատերազմի պատճառներին և շարժառիթներին: Համակարծիք լինելով Հովի. Քաջազնունու արտահայտած մի շարք մտքերի հետ, միաժամանակ սակայն դժվար է համաձայնվել այն տեսակետի հետ, ըստ որի պատերազմի սկսման մեջ «որոշ դեր կատարել է նաեւ մեր բանակի մէջ գտնուող ռուս սպաների պրօվօկացիան», որովհետև անհավանական էր, որ այդ ռուս սպաները «գրգռում էին» հայկական զինվորական շրջանները Վրաստանի դեմ, ստեղծում էին թշնամական մթնոլորտ, որ «շատ նպաստաւոր էր ռազմական գործողութիւններ սկսելու համար»[609], քանզի դրանք հաստատող ուղղակի և հիմնավորված լուրջ փաստեր պարզապես չկան:

Ըստ էության քիչ ավելի ամբողջական և ավելի տրամաբանական է Հայ Ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության 7-րդ հատորում արտահայտված տեսակետը (հաշվի առնելով նաև այն ժամանակաշրջանը, երբ այն գրվել է): Ընդհանուր առմամբ ճիշտ է բացահայտված սյուժեն, վերհանված է այն աշխարհաքաղաքական իրավիճակը, որը հանգեցրեց այդ պատերազմին: Որպեսզի նյութն ավելի ամբողջական և լիարժեք ընկալվի, բառացի մեջբերում ենք հետևյալը. «Բորչալուի գավառի համար 1918 թվականի դեկտեմբերին եղբայրասպան պատերազմ է ծագում Հայաստանի և Վրաստանի միջև: Միջամտելով այդ պատերազմին, անգլիական իմպերիալիստներն առաջարկում են վիճելի շրջանը հայտարարել «չեզոք գոտի», որը կառավարվելու էր անգլիական «նահանգապետի» կողմից: «Չեզոք գոտի» մտցվեցին անգլիական զորքեր…երկրամասը բաժանելով մանր մասերի, անգլիական իմպերիալիստներն այդ վայրերում հիմնում էին իրենց ժամանակավոր գեներալ-նահանգապետությունները (Կարսում, Բաթումում և այլ վայրերում) կամ ստեղծում «Չեզոք գոտիներ»[610]:

Վրացական քաղաքական գործիչները, իշխանությունները իրենց սուբյեկտիվ կանխակալ կողմնորոշումն ունեին անգլիացիների խաղացած ոչ անկողմնակալ, սանձազերծիչ դերի վերաբերյալ հայ-վրացական

[609] Տե՛ս Քաջազնունի Յովի., Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, էջ 34-35:

[610] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, հ. VII, (1917-1941), էջ 63-64:

ռազմաքաղաքական բախման խնդրում, որն իր արտացոլումը գտավ Վրաստանի պառլամենտում տեղ գտած ելույթների մեջ, որոնք անմիջապես արձագանք գտան վրացական մամուլում և նույնիսկ պառլամենտի նիստերում: Այսպես, վրաց-հայկական պատերազմի անմիջական ավարտից հետո, 1919 թ. հունվարի 3-ին ելույթ ունենալով Վրաստանի պառլամենտում, Եվգ. Գեգեչկորին պառլամենտի ուշադրությունը հրավիրեց «այն օրգանական կապի մեջ, որ կար Կովկասում դաշնակիցների հայտնվելու և պատերազմի հայտարարման փաստի միջև»: Անգլիացիներին վերագրվում էր սադրիչ դեր, որոնք դրդեցին Վրաստանին և Հայաստանի Հանրապետությանը բախման, նպատակ հետապնդելով, ըստ վրաց քաղաքական գործիչների՝ հաստատել իրենց գերիշխանությունը Կովկասում[611]:

Այս առումով դիտարժան է նաև այդ օրերին վրաց-հայկական հարաբերություններում առկա ռազմաքաղաքական լարվածության և դիվանագիտական-քաղաքական հակամարտության, դրանում դաշնակիցների անմիջական մասնակցության մասին Վրաստանի զինված ուժերի նախկին հրամանատար, վրաց-հայկական բախման օրերին Գլխավոր շտաբի պետի պաշտոնը ստանձնած հայտնի ռազմական գործիչ, գեներալ Գ. Ի Կվինիտաձեի դիտարկումը. «Անտանտի զինվորական ներայացուցիչները, ինչպես նաև գերմանացիները, ծուռ աչքով էին նայում դեպի Սահմանադիր ժողովի վրա ծավալվող կարմիր դրոշը, ինչպես նաև դեպի Վրաստանի մարքսիստական կառավարությունը: Նրանց համակրանքը հայերի կողմն էր: Բացի այդ, հայկական զորքերում կային շատ ռուս սպաներ: Մեր սպայությունը (վրացական- Վ. Վ.) հայկական զորքերն անվանում էին «7-րդ դենիկինյան կորպուս»: Իհարկե, հայերն ունեին ուրիշ այլ, ավելի խորքային պատճառներ հարձակվելու Վրաստանի վրա, առավել ևս, որ Հայաստանի կառավարության և Վրաստանի միջև ընթանում էին բանակցություններ: Գտնվելով պաշտոնաթողության մեջ, ես այդ բանակցություններից անտեղյակ էի:

Հայերը, հարձակվելով Վրաստանի վրա, չէին կարող հավակնել գրավելու Վրաստանը, անկասկած, նրանք դա գիտեին, և հազիվ թե

[611] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 103-104:

նույնիսկ Ա. Դենիկինի[612] և հնարավոր է, Անտանտի ներկայացուցիչների հրահրմամբ (ընդամենը երկու կապիտաններ, մեկ անգլիացի և երկու ֆրանսիացի) ռիսկ անեին պատերազմել Վրաստանի հետ:

1919 թ. վրացական կառավարությունը հրապարակեց «Վրաց-հայկական հարաբերությունների պատմությունից» գիրքը ռուսերեն լեզվով: Այդ գիրքը իմ ձեռքն ընկավ տարագրության մեջ, և նախապատրաստելով իմ հիշողությունները հրատարակման, 1955 թ. ես անհրաժեշտ գտա այդ գրքի հիման վրա մի քանի տող ավելացնել: Հայերի հետ բանակցությունները վարում էր Սոսիկո Մդիվանին, 1918 թ. անհաջող մի դիվանագետ Հայաստանում և այնուհետև Թուրքիայում 1921 թվականին, որը Բաթումին տվեց թուրքերին: Այդ գրքում գրվածից պարզվում է, որ մեր առաջնորդները 1917 թվականից հայերին խոստացել էին այն վրացական հողերը, որտեղ մեծամասնությունը հայեր էին, և դա, հավանաբար, վատ ըմբռնման և ազգերի ինքնորոշման ոչ ճիշտ կիրառման հետևանք էր: Բանը նրանում է, որ դարեր ի վեր Վրաստանը ապաստան է տվել Թուրքիայից փախած հայերին, ինչպես այժմ բոլոր երկրները ապաստան են տալիս Ռուսաստանից փախածներին: Իհարկե, մենք կարող էինք համաձայնվել Վրաստանից դուրս բերել հայերին դեպի նոր կազմավորվող հայրենիքը, սակայն ամենևին էլ չտալ այն տարածքը, որը միշտ հանդիսացել է վրացական պետության մասը:

Ինչ վերաբերում է Վրաստանի կողմից պատերազմի նախապատրաստմանը, ապա այդպիսին բացարձակապես բոլորովին չի եղել, ո՛չ արտաքին քաղաքական, ո՛չ էլ ռազմական առումներով»: Անշուշտ, սա վրացական մեկնակետից բխող տեսակետ է, քանզի պատերազմին նախորդող ողջ ժամանակաշրջանում Վրաստանը չէր խորշում ձեռնարկել քայլեր, որոնք ոտնահարում էին հայկական շահերը, և հենց Լոռվա հայկական գյուղերի նկատմամբ նրանց ագրեսիվ նկրտումները ցայտուն այդ մասին են վկայում: Սակայն Գ. Կվինիտաձեն շարունակում է

[612] Դենիկին Անտոն Իվանի [4(16).12.1872 թ. -7.08.1947 թ.] – ցարական բանակի սպա, գեներալ-լեյտենանտ: 1918 թ. ապրիլի 13-ից եղել է Կամավորական բանակի հրամանատարը, 1918 թ. սեպտեմբերի 28–ից՝ Ռուսաստանի Հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարը: 1920 թ. ապրիլից հայտնվել է տարագրության մեջ և որպես վտարանդի ապրել Անգլիայում, Ֆրանսիայում և այլուր: Դենիկինից որպես ժառանգություն մեզ է հասել նրա հուշագրության բազմահատորյակը՝ «Очерки русской смуты» (в 5-и тт.):

իր անփաստարկ պնդումները. «Վրացիների արյունը հոսեց դեկտեմբերի 8-ից, իսկ զորահավաքը հայտարարվեց միայն դեկտեմբերի 18-ին, և դա այն ժամանակ, երբ մարտերն ընթանում էին մայրաքաղաքից 60-80 վերստի վրա: Ասեմ ավելին, դեկտեմբերի 12-ին հատուկ հանդիսավորությամբ տոնեցին Ժողովրդական գվարդիայի կողմից զինանոցի գրավման օրը, որի ավելի մեծ հանդիսավորության համար, ինչպես ես հետո իմացա Եկատերինֆելդից, ռազմական գործողությունների թատերաբեմից, Թիֆլիս կանչվեց [Ազգային] Գվարդիայի հեծելակը» [613]:

Պետք է նկատել, որ ամենևին էլ նահանջ չկատարելով սահմանատարածքային խնդրում հակահայկական ռազմավարությունից, վրաց պատմաբանները, գեներալները երբեմն արտահայտում են ստահոդ և կեղծ հակագիտական վարկածներ, կապված հայ-վրացական պատերազմի բարդույթով առաջացած խնդիրների հետ, որոնք որոշ վերապահումներով հանդերձ, հետաքրքրություն են ներկայացնում. Այսպես, ոչ առանց հիմքի պնդելով, որ 1921 թ. հունվարին Մեծ Բրիտանիան ուշացումով ճանաչեց Վրաստանի անկախությունը, ինչը գործնականում ուշացած քայլ էր, վրացական կողմը կարծում է, որ եթե Մեծ Բրիտանիան դեռ 1918-1919 թթ. ճանաչեր անդրկովկասյան երեք հանրապետությունների անկախությունը, ապա ամենայն հավանականությամբ, ռազմաքաղաքական զարգացումները Անդրկովկասում միանգամայն այլ որակական բովանդակություն կունենային, սակայն որոնք գործնականում համապատասխանության մեջ չէին գտնվում բրիտանական կայսերական խորքային շահերի հետ, և այդ տեսանկյունից անընդունելի էր բրիտանական ձգտումը սպիտակգվարդիական գեներալ Կոլչակի և նրա նմանների հետ եզրեր որոնելը, և որոնց համար մերժելի էր անդրկովկասյան նորածին պետությունների դուրս գտնվելը նախկին ցարական կայսրության տիրույթների շրջանակներից:

Իսկ բրիտանացիների նման դիրքորոշումը, հավանաբար, բացատրվում է նրանով, որ մի կողմից աշխատելով չկորցնել իրենց աշխարհաքաղաքական հնարավորությունները Անդրկովկասում, ինչը գուցե և բավականաչափ ռեալ էր 1918 թ. վերջին-1919 թվականի ընթացքում,

[613] Տե՛ս Квинитадзе Г. И., Мои воспоминания в годы независимости Грузии. 1917-1921, YMCA-PRESS 11, rue de la Montagne-Ste-Geneviève, 75005, Paris, 1985, стр. 57-58 (на рус. языке):

ըստ էության անիրագործելի դարձավ 1920 թվականի վերջերին, երբ բոլշևիզմը դարձավ զորեղագույն իրողություն Ռուսաստանում, և ստեղծված իրավիճակում Մեծ Բրիտանիան ելնելով հեռահար շահերից, ներքին խորքային գործարքի գնաց բոլշևիկյան Ռուսաստանի հետ, Անդրկովկասը հոժարակամ «նվիրաբերելով» վերջինիս, որի հետ մասամբ են համաձայն վրաց պատմաբանները: Հենց այդ հանգամանքն էլ գործնականում խոչընդոտեց Հարավային Կովկասի ժողովուրդների համախմբմանը, և բրիտանացիների «պասսիվությունը» անդրկովկասյան գործերում էլ ավելի խաճեց ռազմաքաղաքական իրավիճակը, զորացրեց ազգամիջյան բախումնային պայթունալիցքը, որի արդյունքում իրագործելի դարձավ աշխարհաքաղաքական նոր իրողությունը՝ բոլշևիկյան Ռուսաստանի կողմից Անդրկովկասի բռնազավթումը խորհրդայնացման տարբերակով, և այդ պարագայում մենշևիկյան Վրաստանն անգամ իր շուրջ 60 հազար զինվորներով և 20 հազար սպաներով (ըստ վրացական հեղինակների պնդման) անընդունակ գտնվեց դիմակայել Հյուսիսային Կովկասից ներխուժած Կարմիր բանակին:

Հարկ է նշել, որ այս պատերազմի սկսվելու օրվա հետ կապված կան որոշ տարակարծություններ, որոնց մասին նույնպես արժե նշել: Վրաց-հայկական պատերազմի սկսվելու օրի հետ կապված տարբեր հեղինակներ տարբեր օրեր են նշում և միակարծիքություն այս տեսակետում չկա: Այդ օրերի ականատես, ՀՀ վերջին վարչապետ Ս. Վրացյանը որպես այդ պատերազմի սկիզբ դիտում է դեկտեմբերի 13-ը[614], վրացական կողմը՝ ըստ Կ. Սարդարյանի կողմից ներկայացված տարբերակի՝ դեկտեմբերի 9-ին, իսկ դեկտեմբերի 13-ից վրացական զորքերը ստիպված են եղել պաշտպանվելու[615]: Իսկ ՀՀ Զինվորական նախարար գեներալ Հովի. Հախվերդյանը Վրաստանի և Հայաստանի միջև պատերազմական գործողությունների սկիզբը համարում է դեկտեմբերի 12–ից 13-ը, երբ «Ղարաքիլիսա-Լոռու զորաջոկատը Դրոյի գլխավորությամբ գրավեց Ուզունլար գյուղը, իսկ Ալեքսանդրապոլից դուրս եկած գումարտակը կոտրելով վրաց կայազորի դիմադրությունը, գրավեց Ախալ-

[614] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993, էջ 227:

[615] Տե՛ս Սարդարյան Կ., Նշվ. աշխ., էջ 77:

քալաքը»[616], գտնելով, որ նախահարձակ կողմը եղել է Հայաստանը, որը ջուր է լցնում վրացիների ջրաղացին: Կարծում ենք, որ նման դիրքորոշումը գեներալ Հախվերդյանի թյուրըմբռնման արդյունք է եղել, առավել ևս, որ նա գործնականում հեռու է եղել պատերազմական գործողությունների անմիջական թատերաբեմից, ընդ որում վիճարկելի է նաև Հ. Հախվերդյանի Ախալքալաքի գրավման հետ կապված նրա կողմից բերված փաստը, որի մասին հիմնավոր հիշատակումներ չկան, այլ կա ընդամենը վարկած, որ Դրոն հայկական զորուժի սակավաթվության պատճառով նախընտրել է առանց մարտի թողնել Ախալքալաքը: Չնայած պետք է նաև ասել, որ հենց նույն գեներալ Հովի. Հախվերդյանը այդ բոլորով հանդերձ, իր մի արժեքավոր դիտարկման մեջ կարևորում է հենց Դրոյի դերակատարումը արդեն սկսված պատերազմում. «…Գործողության պլանը կազմված էր ճիշտ, այսպես, զորամասերի հիմնական զանգվածը կենտրոնացվել էր գլխավոր՝ դեպի Թիֆլիս տանող ամենակարճ ճանապարհի ուղղությամբ, իսկ զորամասերի մյուս, փոքրաթիվ մասը երկրորդական՝ Ախալքալաքի ուղղությամբ:

Երեք զորախմբերով հարձակվելը հնարավորություն է տվել դուրս գալ հակառակորդի թիկունքը, որը լեռնային պայմաններում մարտ վարելու համար շատ կարևոր հանգամանք է»[617], առավել ևս, որ ըստ Վ. Փափազյանի, հայկական փոքրաքանակ զորքերի հրամանատարը «կորովի, վճռական եւ հանդունգնի մէկն էր»[618], իսկ նրա գլխավորած «զօրագունդը պատերազմներու մէջ թրծուած ուժ մըն էր»[619]:

Ամեն դեպքում հասկանալի է, որ վրացական իշխանությունները առաջնային գիծ տեղափոխելով տարածքային սահմանազատման խնդիրը, հմտորեն շրջանցում էին Հայաստանի տնտեսաքաղաքական շրջափակման մեջ գտնվելու կարևոր հանգամանքը, ինչն ինքնին պատերազմական իրավիճակ էր Հայաստանի և Վրաստանի միջև, և որ ստեղծված դրությունում հայկական գերխնդիրը դարձավ Վրաստանի կողմից այդ շրջափակումը վերացնելը և արտաքին աշխարհի հետ հարաբերվելու հարցերի լուծումը, որը դանդաղ մահվան էր դատապար-

[616] Տե՛ս նույն տեղում, էջ 77:
[617] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 45, ց. 1, գ. 32, թ. 8:
[618] Տե՛ս Փափազեան Վ., Իմ յուշերը, հատոր 2, Պէյրութ, 1952, էջ 496:
[619] Տե՛ս նույն տեղում:

տել հայկական պետությանը՝ հաշվի չնստելով հայկական Լոռու բնակչության կամքի ազատ արտահայտման հետ: Հենց այդ հանգամանքն էլ դրդեց մեղավորներ փնտրող Վրաստանի կառավարությանը պատերազմի սկիզբ համարելու հայկական Ուզունլար գյուղի դեկտեմբերի 9-ի ապստամբությունը, որի դեպքում ՀՀ իշխանությունները չէին կարող անտարբեր դիտորդի դերում լինել, ինչը վրացական կողմը ներկայացնում է ծուռ հայելու մեջ:

Մեր օրերի հետազոտող Հ. Գևորգյանը ևս նույն կարծիքին է[620]: Աշ. Մելքոնյանը նշում է դեկտեմբերի կեսերը՝ ընդգծելով նաև, որ այդ պատերազմի «սանձազերծման գործում… իրենց ամենամեծ դերն ունեցան թուրքերը»[621], իսկ Մ. Կարապետյանը որպես այդ պատերազմի սկիզբ դիտում է դեկտեմբերի 11-ը, երբ Ալեքսանդրապոլից ուղարկված հայկական 4-րդ հետևակային գնդի առաջին գումարտակը շարժվեց Ախալքալաքի գավառ, և առատ ձյան միջոցով շարժվելով դեպի քաղաք, ճանապարհին ընդհարում ունեցավ վրացական փոքրաթիվ կայազորի հետ, որը կարճատև մարտից հետո դիմեց նահանջի[622]:

«Великая Октябрьская Социалистическая революция» հանրագիտարանում նշվում է, որ ռազմական գործողությունները սկսվեցին դեկտեմբերի 9-ին, որն առաջ բերեց շովինիստական պայթյուն և՛ մենշևիկյան Վրաստանում, և՛ դաշնակցական Հայաստանում[623]:

Սակայն ի մի բերելով վերն ասվածը, կարելի է գալ այն եզրահանգման, որ առավել նպատակահարմար թվագրումը դեկտեմբերի 13-ն է, երբ սկսվեցին ռազմական բուռն և լուրջ գործողություններ Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև: Վրաց-հայկական ռազմաճակատում գործող Հայկական զորքերի թվակազմի մեջ ներգրավվեցին 3-րդ բրիգադի 5-րդ և 6-րդ հայկական գնդերը՝ իրենց տրամադրված հրետանային դիվիզիոնով, որոնք տեղակայված էին Ղարաքիլիսայում և Դիլիջանում, 2-րդ հետևակային գունդը՝ 6-րդ հրետանային մարտկո-

[620] Տե՛ս Գևորգյան Հ., Դրո, Եր.: «Զանգակ 97» հրատ., 1999, էջ 290:

[621] Տե՛ս Մելքոնյան Ա., Ջավախք. Պատմության ուրվագծեր, էջ 33: Տե՛ս նաև Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, էջ 301:

[622] Տե՛ս Կարապետյան Մ., Հայաստանի Հանրապետության բանակը (1918 -1920), էջ 87:

[623] Տե՛ս Великая Октябрьская Социалистическая революция. Энциклопедия, стр. 45:

ցով, 4-րդ գունդը, որից մեկ գումարտակ արդեն ուղարկվել էր Ախալքալաք, գնդապետ Կորոլկովի հեծյալ գունդը, որը տեղաբաշխված էր Շահալի-Վորոնցովկա ուղղության վրա[624]:

Ս. Վրացյանը իր «Հայաստանի Հանրապետություն» գրքում բերում է այդ պատերազմին մասնակցած զորամիավորումների մասին բավականին ամբողջական տվյալներ. «Գործողություն սկսող զորամասի մեջ մտնում էին հետևյալ միավորները. աջ թևում՝ փոխգնդապետ Կորոլկովը 6-րդ գնդի 2-րդ վաշտով, 2 գնդացիրով, 3 հարյուրյակ ձիավորով և միլիցիոն գնդի 4 վաշտով: Կենտրոնում՝ փոխգնդապետ Նեստերովսկին 4-րդ գնդի 2 գումարտակով, 4 գնդացիրով, 7-րդ լեռնային մարտկոցը 2 թնդանոթով: Ձախ թևում՝ գնդապետ Տեր-Նիկողոսյանը 5-րդ գնդի 3 գումարտակով, 12 գնդացիրով, 4-րդ լեռնային մարտկոցը 3 թնդանոթով: Ընդհանուր պահեստ՝ հրամանատար գնդապետ Միրիմանյանը 4-րդ գնդի 3 վաշտով, 4-րդ գնդի ձիավոր հետախույզներով և 7-րդ լեռնային մարտկոցի 2 թնդանոթներով: Զորամասի ուժերի համագումար թիվն էր՝ 28 վաշտ, 26 գնդացիր, 7 լեռնային թնդանոթ, 4 հարյուրյակ ձիավորներ: Այս համեստ ուժերով սկսվեց հայ-վրացական պատերազմը»[625]:

Ավելի ընդհանրացնող տվյալներ այդ պատերազմին մասնակցած հայկական բանակի թվակազմի մասին հանդիպում ենք ՀՀ Զինվորական առաջին նախարար գեներալ Հովհ. Հախվերդյանի հուշագրությունում. «վաշտերը 100-200 անձնակազմ ունենալու պայմաններում զորամասերի անձնակազմի քանակը պետք է կազմեր 6000 սվին, 2000 աշխարհազորայիններ և 16-20 հրանոթ»[626]: Ի դեպ հարկ է ասել, որ Հայաստանի Հանրապետության ընդհանուր բանակի թիվն ըստ Հովհ. Քաջազնունու կողմից 1919 թ. աշնանը ԱՄՆ-ի կառավարությանը ներկայացրած հուշագրի տվյալների ևս այնքան մեծ չէր, և նրա առավել մարտունակ համարվող մասի թիվը 1919 թ. հուլիսի վերջերին հասնում էր 18 հազարի[627], որից 6000-ը գտնվում էր հայ-վրացական ճակատում:

---

[624] Տե՛ս Կարապետյան Մ., Նշվ. աշխ., էջ 87-88:

[625] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 230:

[626] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 45, ց. 1, գ. 32, թ. 8:

[627] Տե՛ս Քաջազնունի Յովհաննես, Հայաստանի Հանրապետութիւն, Եր., «Մ. Վարանդեան» հրատարակչութիւն», 1993, էջ 17:

Սակայն հայկական բանակի զորամասերը անցնելով սարդարապատյան ճակատամարտաշարքի բովով (որի մասին հիշողությունները դեռևս բավականաչափ թարմ էին), բավականին թրծվել էին և մարտունակ էին, և դեռևս նրանցից հեռու էին քեմալա-բոլշևիկյան քայքայիչ քամիների հովերը, աշխարհաքաղաքական իրավիճակն էլ դեռևս այնքան սարսափելի չէր, ինչպես 1920 թվականի դեկտեմբերին, իսկ դաշնակիցներն էլ ահռելի խոստումներ էին տվել: Այնուհանդերձ, այդ փոքրաթիվ բանակի իրական հնարավորությունները բավականին համեստ էին, հատկապես զինվածության, և հանդերձավորման, ռազմամթերքի և սննդամթերքի առումով: Հայաստանի ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակը, բազմահազարանոց գաղթականությունը բյուր խնդիրներով հանդերձ իր ծանր կնիքն էր թողնում այդ ամենի վրա: Ավելացրած դրան նաև այն կարևոր փաստը, որ վրացական զորքերն ավելի լավ էին հագեցած տեխնիկապես, նրանց ուղեկցում էր 3 զրահագնացք, որոնք հզոր ուժ էին ներկայացնում: Հետագայում պարզվել է, որ Հայաստանի դեմ գործող վրաց զորքերի թիվը կազմել է 12 հազար սվին[628], այսինքն գրեթե 2 անգամ ավելի հայկական զորքերից: Սակայն դա ամենևին էլ էական առավելություններ չտվեց վրացական զորքերին, և արդեն ռազմական գործողությունների ընթացքում ապացուցվեց, որ հաղթում է նա, ով առավել նախաձեռնող է և ավելի խելամիտ ռազմավարություն է կիրառում հակառակորդին անակնկալի բերելու առումով, և այստեղ թվաքանակը ամենևին էլ ամենակարևորը չի դառնում ընդհանուր հաղթանակի ձեռքբերման գործում: Առավելապես դա վերաբերում է Դրոյին, որի զորքերն ամենահմուտ և կարգապահ զորաջոկատներն էին հայկական բանակում, որոնք Դրոյի գերազանց ղեկավարության պայմաններում, աջակցություն ստանալով Լոռու ապստամբած գյուղացիության կողմից, վճռաբար դուրս ելան վրաց զորքի դեմ, չերկնչելով զորքի սակավաթվությունից և վստահությամբ, որ կռվում են հայրենի հողի համար:

Դա շատ պատկերավոր է նկատել Ս. Վրացյանը. «Այստեղ կարող եմ ասել, որ Հայաստանը բոլորովին անպատրաստ էր նման պատերազմի համար, բայց ժողովուրդը և բանակը այնքան վրդովված էին վրացի-

[628] Տե՛ս «Կայծ», Երևան, 22 հուլիսի, 1919 թ., № 22:

ների անիրավ վերաբերմունքից, որ կռվեցին արտակարգ քաջությամբ: Ընդհակառակն, վրացիները, որ ամեն տեսակետից գերազանց վիճակի մեջ էին, ունեին առատ ռազմամթերք, ուտելիք, հաղորդակցության միջոցներ, պատերազմի համար անհրաժեշտ մեքենայական սարքավորում, Գերմանիո աջակցությունը իրենց թիկունքում, զարմանալի կերպով ապիկար դուրս եկան»[629]:

Իսկ ահա հայ մեծագույն բանաստեղծ Հովհ. Թումանյանը Անդրանիկ Օզանյանին 1918 թ. դեկտեմբերի 14-ին ուղարկված նամակում պատերազմի այս պատճառների ու սկզբի մասին շատ պատկերավոր նկատում է. «Լոռեցիները վրաց զորքերի լրբությունից կատաղած հարձակվել են նրանց վրա, և առաջ է եկել կանոնավոր պատերազմ: Վրացիք նահանջել են մինչև Բորչալու՝ տալով բավական սպանվածներ և գերիներ:

Զբաղված ենք էդ կռիվը վերջացնելու գործով»[630]:

Եվ այսպես դեկտեմբերի 13-ին հայկական զորքերը ձեռնամուխ են լինում Լոռի-Փամբակը վրացական զորքերից մաքրելու Հայաստանի Հանրապետության կառավարության հրամանի կատարմանը: Հայկական զորքերի հարձակումը նախատեսված էր իրականացնել Վորոնցովկա-Պրիվոլնոյե-Սանահին-Օփրե[յ]թ-Այրում ուղղությամբ: Կռիվների առաջին օրվա արդյունքները գոհացուցիչ էին հայկական կողմի համար, չնայած զարհուրելի ցրտերին և այն հանգամանքին, որ մեր զինվորները տաք հագուստից զուրկ էին: Ուշագրավ է Ալ. Խատիսյանի այդ օրերի նկարագրությունը. «Հայերը համոզուած էին, որ իրենց գործը արդար է: Եւ, ընդհանրապէս, պետք է ըսել, որ պատերազմը ժողովրդական էր, հակառակ ցուրտին և սովին: Հոգեբանօրէն մեր ժողովուրդը կը մղուէր դէպի ազատ ելք, որ փակուած էր Վրաստանի կողմէ: Այնտեղէն էր, որ կը սպասէին հաց եւ յարաբերութիւն արտաքին աշխարհի հետ:

Պատերազմը կը մղուէր շատ փոքրիկ ուժերով, կանոնաւոր կռուող զինուորներու թիւը 1000-էն աւելի չէր, բայց անոնց միացած էր Բորչա-

[629] Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատոր Ե, էջ 42:

[630] Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Եր.: ՀՀ ԳԱԱ, 1999 (նամակներ), էջ 299:

լուի գաւառի ամբողջ հայութիւնը, որ կատաղօրեն կը կռուէր ձգտելով միանալ Հայաստանին»[631]:

Կարծում ենք, որ որոշ հարցեր, այդուհանդերձ, որոշակի պարզաբանման կարիք են զգում: Կարծում ենք, որ դժվար է համերաշխվել Ռ. Հովհաննիսյանի տեսակետի հետ, երբ նա պնդում է հետևյալը, ինչը գործնականում հակասում է պատմաքննական խորքային եզրահանգումների տրամաբանությանը և կեղծ տպավորություն ստեղծում, որ հայկական ռազմաքաղաքական շրջանները խնամքով նախապատրաստվել էին վրացիների հետ ռազմական առճակատմանը: Եվ այսպես, վերջինիս պնդումը բառացի հետևյալն է. «Ձեռք զցված հայկական փաստաթղթերը, որոնք հետագայում հրապարակվեցին վրացական կառավարության կողմից [իսկական անգլոսաքսի հայկականացված մտածելակերպ և հայեցակետ է հիշեցնում - Վ. Վ.], մատնանշում էին, որ Երևանը մանրամասն ծրագրեր էր նախապատրաստել մինչև Խրամ գետն ընկած հողերը գրավելու համար, և հայկական ռազմական գործողությունները կարծես հավաստում էին այս փաստաթղթերի իսկությունը»[632]:

ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղված հեռագրում դեկտեմբերի 13-ի հեռագրում [N 5599] Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորին ի պատասխան հայկական կողմի հեռագրի [N 6913] ընդգծում էր Վրաստանի կառավարության դիրքորոշման մասին, ըստ որի անթույլատրելի էր համարվում որևիցե միջամտություն իրենց ներքին գործերի մեջ, որ դա վերաբերում է Ղարաքիլիսա-Լոռու զորամասի կողմից ՀՀ կառավարությանը ներկայացված զեկուցմանը, որում փաստեր են բերված եղել վրացական զորքերի անօրինականությունների մասին: Եվ հակառակը, վրաց նախարարը վերոհիշյալ հեռագրում, կեղծելով փաստերը, պնդում էր, թե նոյեմբերի 9-ից սկսած հայկական մի քանի զորամասի հայկական ծառայության շտաբի և օբեր-օֆիցերի հրամանատարությամբ կոտորվել է համարյա ամբողջ վրաց սահմանապահ զորախումբը, մնացածները գերի են վերցվել: Նշելով, որ արյունահեղությունը կանխելու նպատակով իրենք նոյեմբերի 14-ին Սանա-

[631] Տե՛ս Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 127-128:

[632] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, էջ 118:

հին են ուղարկել պատվիրակություն, որի կազմի մեջ են եղել Հայոց Ազգային խորհրդի երեք անդամներ: Եվգ. Գեգեչկորին կեղծավորաբար հավաստիացնում էր, որ մինչ այդ իրենք զենքի չեն դիմել, և ըստ այդմ հանուն երկու եղբայրակից ժողովուրդների խաղաղ համակեցության առաջարկում էր «ձեռք առնել բոլոր միջոցները՝ դադարեցնելու համար արյունահեղությունն ու պատժելու այն անպատասխանատու անձերին, որոնք մեղավոր են այդ ցավալի դեպքերի համար»[633]:

Ի պատասխան, ՀՀ Արտաքին Գործերի նախարարը 1918 թ. դեկտեմբերի 14-ի հեռագրում (913) ի պատասխան Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի հեռագրի (N 5599) ընդգծում էր, որ դեռ դեկտեմբերի 10-ից հայկական կառավարությունն առաջարկել է անմիջապես վրացական զորքերը դուրս բերել Զաքաթալայի և Բորչալուի հայկական մասից, միակ նպատակը համարելով վրացական և հայկական զորամասերի միջև ընդհանրումը կանխելը, այնուհետև հիշեցնում վրացական կողմին, որ առաջարկություն անելը դեռ չի նշանակում միջամտություն Վրաստանի ներքին գործերին, ինչպես պնդել էր Վրաստանի Արտգործնախարարը իր նախորդ դիմումագրում, քանզի այդ տարածքը միշտ էլ կազմել է Հայաստանի անկապտելի մասը: Ըստ այդմ վրացական կողմին առաջարկվում էր ձեռնպահ մնալ ագրեսիվ գործողություններից տեղական ազգաբնակչության նկատմամբ, որը չէր ցանկանում Վրաստանի հետ միացումը, որին ի հակառակ, այդ տարածքը իր համար հաստատապես ամրապնդելու համար վրացական իշխանությունները ձեռնարկեցին արշավանք խաղաղ ազգաբնակչության նկատմամբ՝ «ընկերակցելով» արյունալի և դաժան բռնությունների հետ, ընդհուպ մինչև հրետանակոծության ենթարկելով հայկական գյուղերը, ավելացնելով, որ այդ ամենին հայկական կառավարությունը չի կարող անմասն մնալ: Վերջում կոչ էր արվում սեփական նախաձեռնությամբ զորքերը դուրս բերել, որի դեպքում միայն հայկական պատվիրակությունը կարող է հարաբերության մեջ մտնել, և վերականգնել խաղաղ համակեցությունը երկու ժողովուրդների միջև[634]:

Արտաքուստ, դատելով այս և մի շարք այլ փաստաթղթերի հպանցիկ դիտարկումից, թվում է, թե վրացական կողմը ձգտում էր ամեն

[633] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 17 դեկտեմբերի, 1918 թ., N 21:
[634] Տե՛ս նույն տեղում::

կերպ հայ-վրացական կնճիռը համահարթել խաղաղ միջոցներով, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարությունն անհետևողականություն էր դրսևորում այս խնդրում, չնայած չի կարելի միանշանակ դատել այդ մասին: Այսպես, 1918 թ. դեկտեմբերի կեսերին տեղի ունեցած Թիֆլիսի քաղաքային դումայի նիստը, որը լսեց քաղաքագլուխ Էլիավայի զեկուցումը հայ-վրացական միջադեպի մասին: Նիստում ելույթ ունեցած Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորին, անդրադառնալով երկու հանրապետությունների միջև փոխանակված նոտաներին, կեղծելով և աղճատելով առկա փաստերը, ստահոդաբար պնդեց, թե իբր հայոց կառավարությունը միշտ խուսափել է կոնֆերանսից և այժմ ուզում է զենքի ուժով լուծել խնդիրը: Դումայի խմբակցություններում կային որոշ տարակարծություններ. վերջիններս պնդում էին, որ իրենք լավ ծանոթ չեն հայոց կառավարության տեսակետներին: Ի վերջո, մենշևիկների կողմից առաջարկվում է երկկողմանի մի բանաձև, որի առաջին մասում ցանկություն էր հայտնվում՝ վեճը լուծել խաղաղ ճանապարհով, իսկ երկրորդում՝ դրա իրագործման համար նախապայման էր դրվում՝ status quo ante bellum մինչև ռազմական գործողությունների սկսվելը, որ ամեն մի կողմի զորքերը նախկին դիրքերը վերադարձվեն: Քվեարկությամբ առաջին մասը ընդունվեց միաձայն, մեկ ձեռնպահով (Վեշապելի), իսկ երկրորդ մասը՝ մերժվեց 40 ձայնով ընդդեմ 34-ի, և այս անգամ մենշևիկների բանաձևին դեմ ձայն տվեց սոցիալ-դեմոկրատական ընդդիմությունը[635]:

Սակայն այս ամենը ոչ մի արդյունքի չհանգեցրին, ռազմաքաղաքական առճակատումը Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև աստիճանաբար դառնում էր անհերքելի իրողություն:

Վրաց-հայկական պատերազմի սկսվելու պահին կենտրոնում գործում էր Ղարաքիլիսայի զորամասը, որը շարժվում էր երկաթուղագծի ուղղությամբ, աջ կողմում՝ Դիլիջանի, իսկ ձախ թևի վրա՝ Ջալալօղլու զորքերը, իսկ մի հատուկ զորախումբ էլ գործում էր Ախալքալաքի գավառի սահմաններում, որոնք գործում էին Դրոյի անմիջական հրամանատարությամբ:

[635] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 18 դեկտեմբերի, 1918 թ., N 22:

Վրաց-հայկական պատերազմի առաջին իսկ օրը գնդապետ Տեր-Նիկողոսյանի «զորամասը, գիշերային խիզախ գրոհով, գրավեց Վորոնցովկան ու Պրիվոլնոյեն: Գերի վերցրին 5 վրացի սպա, 45 զինվոր, 3 լեռնային թնդանոթ, 1 «Մաքսիմ» գնդացիր, մեծ քանակությամբ փամփուշտ ու ձիեր: Հայկական կողմի կորուստներն էին՝ սպանված տեղակալ Զաբաֆյանը, վիրավոր՝ 8 զինվոր և տեղակալ Ազատյանը, որը մինչև կռվի վերջը զորամասից չհեռացավ: Գնդապետ Նեստերովսկու զորամասը գրավեց Սանահին կայարանը, ուր մերոնց ձեռքն ընկան 49 վագոն ու 1 շոգեշարժ, գերի ընկան 15 զինվորներ»[636]: Հայերը որոշակի մարտական հաջողություններ ունեցան նաև Այրումի ուղղությամբ: Վճռականորեն հաղթահարելով 3 զրահապատ գնացքների համառ դիմադրությունը, գնդապետ Կորոլկովի զորամասը քանդեց երկաթուղագիծը և կտրեց նրանց նահանջի ճանապարհը[637]: Ինչպես խոստովանում են նաև վրացական հեղինակները, դեկտեմբերի 13-ին սկսված ռազմական գործողությունների հետևանքով վրացական զորքերը Քոբերի և դրան հարող գյուղերի շրջանում ջարդվեցին, գրավվեց զրահագնացքը, որը սարից ցած գլորված մեծ քարակտորից ուղղակի քանդուքարափ եղավ, որի մասին փաստում է նաև զրահագնացքների պետ Վ. Գոգվաձեն:

Իսկ ինչպես հաղորդում է Դրոն իր հեռագրերից մեկում, այդ նույն ժամանակ գնդապետ Նիկողոսովի գլխավորությամբ գործող ջոկատը գրավելով Նովոմիխայլովկա գյուղը, շարունակում էր հետախուզությունը դեպի հյուսիս: Դրոն նաև տեղեկացնում էր, որ փոխգնդապետ Նեստերովսկու ջոկատում գտնվող կապիտան Թարվերդովը գիշերային գրոհով ջարդեց վրացիների ջոկատը Հաղպատի և Ախթալայի միջակայքում և գրավեց երկու հաուբից և մեկ գնդացիր, իսկ շտաբս-ռոտմիստր Փիրումովը Լալվար լեռան մոտ ջախջախեց վրացիներին, գրավելով 1 գնդացիր և 15 գերի: Զինվորական ամփոփագիրը Դրոն ավարտում էր տեղեկատվությամբ այն մասին, որ «որսորդները վրացական զրահագնացքների վրա ռմբանետումներ են կատարել, որոնցից մեկը պայթեցվել է, և հարձակումը ուղղվել է Ալավերդու կողմը»[638]:

[636] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 230-231:
[637] Տե՛ս նույն տեղում, էջ 231:
[638] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 96, թ. 72:

Հաջող անցան նաև հայկական զորքերի դեկտեմբերի 14-15-ի ռազմական գործողությունները, ուժեղ կռիվներ են տեղի ունենում Ալլա[հ]վերդիի բարձունքներում, ուր ամրացած էին գեներալ Ծուլուկիձեի զորամասերը: Վրացիները չդիմացան ճնշմանը և թողեցին Ալլահվերդին (Ալավերդի), որից հետո դուրս եկան Բոլնիս-Խաչեն-Եկատերինֆելդ գիծը: Ինչպես այդ մասին վկայում է Ս.Վրացյանը, «նույն օրը Կորոլկովի Այրումի ջոկատը, մի խիստ հաջող շարժումով, ոչնչացրեց [ջարդեց – Վ. Վ.] վրացական մի գունդ [որ գալիս էր Թիֆլիսից և թիվը հասնում էր մոտ հազար հոգու] և գրավեց Այրում (Հայրում) կայարանը: Վրացիներից գերի ընկան 12 սպաներ գնդ. Վաչնաձեի գլխավորությամբ և 300 զինվորներ: Մոտ 200 հոգի սպանվեցին ու վիրավորվեցին, մյուսները փախան: Մեր կողմից սպանվեցին տեղակալ Մուկուչ Տեր-Հովհաննիսյանը և մի զինվոր, վիրավորվեցին 7 հոգի: Տեր–Նիկողոսյանի և Նեստերովսկու զորամասերը շարունակեցին ճնշել վրացիներին դեպի հյուսիս: Վրաց կողմից սկսեցին երևալ Թիֆլիսից հասած թարմ ուժեր»[639]:

Ստեղծված իրադրությունում դեկտեմբերի 14-ին գեներալ Ծուլուկիձեն ընդունում է որոշում Սանահին կայարանը և Ալավերդի ավանը թողնելու մասին և փորձում մարտով դուրս գալ Սադախլո կայարանի ուղղությամբ:

Այդ նույն ժամանակահատվածում, պատերազմական գործողությունների հիմնական օջախին զուգահեռ, ռազմաքաղաքական լարվածության օջախներ առաջացան նաև Վորոնցովկա-Պրիվոլնոյե, իսկ մյուսը՝ Ախալքալաքի գավառում:

Դեկտեմբերի 12-14-ի ընթացքում Ալեքսանդրովկա-Վորոնցովկա-Պրիվոլնոյեի եռանկյունում ծավալվեցին ծանր մարտեր վրացական զորամասերի և՛ Ջալալօղլի, և՛ Կոտուր-Բուլաղ գյուղերի շրջանից Կամենկա գետը շրջանցած և երկու ուղղություններով ներխուժած շուրջ մեկ գումարտակի չափ հայկական զորաջոկատների միջև: Վորոնցովկայի շրջանում գործող վրացական զորքերի հրամանատար գեներալ Ցիցիանովը Թիֆլիս ուղարկված ճեպագրում հաղորդում էր հայ գյուղացիների

[639] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 231-232:

կողմից բարձրացրած ապստամբության տարածման մասին Ագարակում, Հովնաքարում և այլ գյուղերում[640]:

Վորոնցովկայի և Պրիվոլնոյի ուղղությամբ գործող հայկական զինուժի գլխավոր հարվածային ուժը գնդապետ Տեր-Նիկողոսովի գլխավորությամբ գործող 5-րդ հայկական հրաձգային գունդն էր, որին միացել էին նաև տեղական բնակչությունից կազմված զորաջոկատները, և որոնց ջանքերով էլ ձեռնարկվեց Վորոնցովկա գյուղի գրոհը, որը տեղի ունեցավ դեկտեմբերի 14-ի առավոտյան՝ երկու ուղղություններով՝ 500-600 սվիններ միջոցով: Ծավալված մարտերը համառ էին, և հայկական զորաջոկատները հաջողությամբ դիմագրավելով վրացական հրետանու ռումբերի կոտորակին՝ կարտեչին, հեծելազորային զորաջոկատներով համալրում ստանալով, հարկադրեցին վրացական զորամասերին նահանջել՝ ծանր կորուստներ տալով: Վրացիները կորցնում են մի քանի հարյուր զինվոր, երեք սպա, շարքերում ունենալով ընդամենը 80-ից պակաս մարդ: Արդյունքում, դեկտեմբերի 19-ի երեկոյան վրացական զորքերի մնացորդները ետ քաշվեցին դեպի Եկատերինֆելդ, իսկ նրանց հետապնդող հայկական առաջապահ զորամասերը հասան Մաշավեր գետին[641]:

Այդ նույն ժամանակ Ախալքալաքի գավառում ռազմաքաղաքական իրադրությունը արմատապես տարբերվում էր Լոռուց: Առաջին հերթին, այնտեղ սրացված վիճակ չէր, և տեղական բնակչությունը գտնվելով վրացական օրենքների իշխանատիրության տակ, որևիցե քայլ չձեռնարկվեց վրացական զորքերի դեմ առճակատման գնալու: Բացի այդ, Ախալքալաքի գավառի հարավային մասում բնակվող ռուս դուխոբորները ոչ միայն լոյալ վերաբերմունք ունեին վրացական իշխանությունների նկատմամբ, այլև նրանց նախընտրում էին հայկականից[642]: Եվ երկրորդ, Ախալքալաքի գավառում կենտրոնացված էին բավականաչափ և զգալի քանակությամբ վրացական ուժեր՝ ավելի քան 6000 մարդ գեներալ Մաղաշվիլու [Մականի] գլխավորությամբ:

Եվ այնուամենայնիվ, չնայած Ախալքալաքի գավառում վրացական մեծաքանակ զորաբանակի ներկայությանը, հայ-վրացական ռազ-

[640] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 105:
[641] Տե՛ս там же, стр. 124:
[642] Տե՛ս там же, стр. 127:

մական բախումն անխուսափելի դարձավ, և դեկտեմբերի 6-ին հայկական զորքերը կանգնեցին գավառ մտնելու անհետաձգելի անհրաժեշտության առաջ, գրավելով նաև մի շարք ռուս դուխոբորներով բնակեցված գյուղեր՝ Տրոիցկոյեն, Եֆրեմովկան, Գորելովկան և Բոգդանովկան: Դրան հաջորդեց գեներալ Մաղաշվիլու ուլտիմատումը՝ անհապաղ գավառի տարածքը ազատելու պահանջով: Ստեղծված իրավիճակում հայկական զորքերը թողեցին Ախալքալաքի գավառը:

Այդ նույն ժամանակահատվածում ռազմական գործողությունների արևելյան ճակատում՝ դեկտեմբերի 14-ի վաղ առավոտյան սկսվեց գնդապետ Տեր-Նիկողոսովի, Նեստերովսկու և Կորոլկովի գլխավորությամբ գործող հայկական 4-րդ, 5-րդ, 6-րդ գնդերի հարձակումը երեք զորաշարքերով, որոնք դուրս եկան Վորոնցովկա-Պրիվոլնոյե-Օփրեթ-Այրում գիծը: Դրոյի բանակի լիակազմ ուժերը, ներառյալ նաև պահեստի զորամասերը, բաղկացած էին հետևակի 28 վաշտից և հեծելազորի 4 հարյուրյակից՝ զինված 26 գնդացիրներով և 7 լեռնային թնդանոթներով: Ինչպես ավելացնում է այնուհետև Ռ. Հովհաննիսյանը՝ դարձյալ վկայակոչելով Ս.Վրացյանին, այդ պահին հայերն ունեին ավելի քիչ կռվողներ, պարեն և զինամթերք, քան վրացիները, բայց ունեին վճռորոշ առավելություն՝ հարձակում տարածելով հարազատ տարածքում[643]: Տրամագծորեն հակառակ տեսակետն է պարտադրվում Է. Անդերսենի և Գ. Էգգեի կողմից, որոնք պնդում են, թե իբր հարձակվող հայկական զորքերի ընդհանուր թվաքանակը հասնում էր 6000 սվինավորի և 640 թրի, ինչն էապես գերազանցում էր վրացականին և իբր թե ավելանում էր, քանզի դրան ավելացվում է հայ գյուղացի պարտիզանների թիվը[644], ինչը ստահոդ պնդում է, և հերքվում է բերված ավելի հավաստի փաստերով:

Բնականաբար, այդ իրավիճակում դեկտեմբերի 14-15-ին հետևեց վրացական զորքերի նահանջը դեպի Սադախլո կայարանը, և գեներալ Ծուլուկիձեի հրահանգների համաձայն դրանք իրագործեցին այն, իսկ

[643] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1958, էջ 118, 195:

[644] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

այդ ընթացքում նահանջը քողարկող և ապահովող զրահագնացքը Հաղպատ և Ախթալա կայարանների միջև վթարի ենթարկվեց, իսկ նրանում գտնվող զորաջոկատը հարկադրված մարտով նահանջեց Ախթալա: Իրավիճակի բարդությունը հաշվի առնելով, վրացական հրամանատարության պահանջով, Թիֆլիսից օգնության ուղարկվեց թվով երրորդ զրահագնացքը, որը պետք է ապահովեր վրացիների նահանջը: Առ դեկտեմբերի 15-ը հայկական կանոնավոր զորքերը գրավեցին Վորոնցովկան, Պրիվոլնոյեն, Սանահինը, Միխայլովկան, Ալավերդին և Հաղպատի ու Աղովայի միջև եղած բարձունքները, գերի վերցնելով մի քանի հարյուր վրացի զինվորների, մի շոգեքարշ, հիսուն բեռնատար վագոններ, մի քանի գնդացիր, լեռնային մարտկոցներ և այլն[645]:

Դեկտեմբերի 16-ի առավոտյան հայկական զորքերի ձախ թևը, որի հրամանատարն էր Տեր-Նիկողոսյանը, հարվածեց Բոլնիս-Խաչենի և Եկատերինֆելդի ուղղությամբ, իսկ Կորոլկովի աջ թևը գրավեց Այրում կայարանը սրընթաց և գեղեցիկ գրոհով, որի արդյունքում վրացիները տվեցին կորուստներ, այդ թվում 500 հոգի մարդ սպանված, վիրավոր և գերի ընկած: Ավելին, «այդ ընդհանուր գործողության ժամանակ հայերը Ախթալա կայարանի մոտ գրավեցին կազմ ու պատրաստ վրացական երկու զրահագնացք: Ի վիճակի չլինելով տիրապետել իրադրությանը, գեներալ Ծուլուկիձեն լքեց իր անձնական շքեղ վագոնը, Թիֆլիսը հուզումնալից կացության մեջ էր, զորակոչվեց ժողովրդական գվարդիան ու հայտարարվեց արտակարգ դրություն[646]: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, վրացական զորամասերն ունեցան ծանր կորուստներ կենդանի ուժի և տեխնիկայի տեսանկյունից: Եվ մասնավորապես, նահանջի ժամանակ վրացիների կողմից շարքից հանվեցին երկու արգելափակված զրահագնացքները, որոնցից մեկը Սանահինում շրջափակված լինելով, վրացիների կողմից պայթեցվեց, իսկ մյուսը՝ շարքից դուրս բերվեց, ոչ պիտանի դարձավ, քանզի նրանք ի վիճակի չեղան ապահովել դրանց անարգել տեղափոխությունը ապահով տարածք: Այդ օրերին պատերազմը մղվում էր նաև դիվանագիտական ոլորտում: Հայաստանի

[645] Տե՛ս Кадишев А. Б., Интервенция и гражданская война в Закавказье, стр. 173: Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 123-124:

[646] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 231-232: «Ձանգ», Երևան, 20 դեկտեմբերի, 1918 թ.:

Արտաքին Գործերի նախարար Տիգրանյանը 1918 թ. դեկտեմբերի 14-ի ռադիոհեռագրով (№ 912)՝ ուղղված Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրին, նշելով, որ ստացել է վերջինիս դեկտեմբերի 9-ի թիվ 5599 հեռագիրը (ըստ էության ուշացած և անպատեհ) և դեկտեմբերի 12-ին ուղարկված երկրորդ նոտան՝ դիմում է վերջինիս առաջարկությամբ վրացական զորքերը դուրս բերել Բորչալուի գավառի հայկական մասից, շեշտելով, որ այդ միջոցը միակ նպատակահարմարն է հետագա արյունահեղության դադարեցման համար: Տիգրանյանը փաստում էր, որ հայկական կառավարության առաջարկը ամենևին չի հանդիսանում միջամտություն Վրաստանի ներքին գործերին, քանի որ ինչպես բազմիցս հայտարարվել է, այդ «շրջանը անկասկած չի մտնում Վրաստանի տարածքի մեջ, որ բռնի գրավվել է վրացական զորքերի կողմից»: Այնուհետև շատ դիպուկ Ս. Տիգրանյանը նկատում էր, որ «ծայրահեղ իր խաղաղասիրությամբ Հայաստանի կառավարությունը ժամանակավորապես հաշտվել է այդ դրության հետ, հույս ունենալով, որ Վրաստանի կառավարությունը ձեռնպահ կմնա ագրեսիվ գործողություններից խաղաղ բնակչության դեմ, որը չի ցանկանում միանալ Վրաստանին»: Ս. Տիգրանյանը շեշտում էր, որ «այդուամենայնիվ Վրաստանի կառավարությունը ոչ միայն ընդառաջ չգնաց Հայաստանի ցանկությանը՝ խաղաղ ձևով լուծել սահմանների մասին հարցը, այլև նպատակ ունենալով ամուր կերպով իրեն կցել օտար տարածքը, ձեռնարկել է արշավանք ընդդեմ խաղաղ բնակչության, որն ուղեկցվում էր արյունոտ և դաժան բռնություններով ընդհուպ մինչև հայկական գյուղերի գնդակոծումը թնդանոթային կրակով»: Հեռագրի վերջում Տիգրանյանը շեշտում էր, որ «Հայաստանի կառավարությունը չի կարող մնալ անտարբեր հանդիսատեսի դերում այն բանի նկատմամբ, թե ինչպես հարևան պետության զորքերը սանձարձակություններ են անում Հայաստանին պատկանող տարածքում և գնդակահարում Հայաստանի քաղաքացիներին»: Ս. Տիգրանյանը ամփոփում էր իր ասելիքը, տեղեկացնելով, որ «Հայաստանի կառավարությունը ջերմորեն ցանկանալով կանխել հետագա նոր բարդացումները», ցանկանում է հավատալ, որ «Վրաստանի կառավարությունը հարգելով Հայաստանի բնակչության ցանկությունները և իրավունքները, կշտապի սեփական նախաձեռնությամբ հեռացնել իր զորքերը, որը հնարավորություն կտա վրացական պատգամավորությանը

հարաբերության մեջ մտնել հայկական կողմի հետ, վերականգնել հեռագրակապը և դրանով իսկ ամրապնդել ազգակից պետությունների խաղաղ գոյակցությունը»[647]:

Դեկտեմբերի 14-ին Մդիվանին մեկնում է Թիֆլիս, իսկ այդ ընթացքում Դրոն և իր զորքերը առաջանում են դեպի Խրամ գետը, սակայն ինչպես պնդում են վրաց հեղինակները, «ոչ պաշտոնապես դաշնակցականները երազում էին գրավել Թիֆլիսը և այդ քաղաքը հայտարարել Հայաստանի մայրաքաղաք»[648], ինչը վրացական թեմայով աբսուրդ էր:

Երկու կողմերն էլ միտումնավոր թե ոչ միտումնավոր հեռագրերը ուշացած էին ստանում, դա էլ էր ազդում իրադարձությունների զարգացման ու դրա նկատմամբ վերահսկողության իրականացման վրա: Այդ ընթացքում Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Ե. Գեգեչկորին դեկտեմբերի 14-ին պառլամենտի նիստում հայտարարեց. «…Ես հիմք չունեմ ենթադրելու որևիցե կապի մասին Հայաստանի կառավարության և սանահինյան իրադարձությունների միջև: Մենք խորապես համոզված ենք, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք այն անպատասխանատու խմբերի հետ, որոնք ընդհանուր ոչինչ չունեն Հայաստանի կառավարության հետ»[649]: Պատասխան հեռագրերից մեկում, Ե. Պ. Գեգեչկորին դիմելով Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարարին (պատճենը՝ Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչին {15 դեկտեմբերի, № 5628}), գրում էր, որ ինքը ստացել է միայն № 6913 հեռագիրը, այլ հեռագրեր Վրաստանի կառավարությունը չի ստացել: Գեգեչկորին աճպարարի հմտությամբ պնդում էր նշված հեռագրում, որ Վրաստանի կառավարությունը ամեն ինչ արել է, որ բոլոր վիճելի հարցերը լուծվեն համաձայնության հողի վրա, Հայաստանի ներկայացուցիչներին հրավիրել է Անդրկովկասյան կոնֆերանսի, սակայն բոլոր փորձերը զուր են եղել: Գեգեչկորին Վրաստանի կառավարության անունից հայտարարում էր, որ հայկական գյուղերի գնդակո-

[647] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 15:

[648] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах (с сокращениями), стр. 29-30: Տե՛ս նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/ և ուրիշ.:

[649] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии..., док. № 242, стр. 466:

ծումը և որևիցե ելույթ իրենց կողմից (որոնց մասին հիշատակվում է հայկական կողմի № 912 հեռագրում), չեն եղել մինչև դեկտեմբերի 13-ը, երբ իրենք ստիպված են եղել գնալ դրան պաշտպանության նպատակներով ընդդեմ դեկտեմբերի 9-ին սկսված հայկական զորամասերի ագրեսիվ գործողությունների: Ամփոփելով հեռագիրը, Գեգեչկորին հայտարարում էր, որ միանգամայն որոշակիորեն Վրաստանի կառավարությունը իր պարտքն է համարում հաստատելու իր առաջարկությունը՝ ընդհատել թշնամական գործողությունները, գրավել հին սահմանները և հրավիրել հայ-վրացական կոնֆերանս՝ վիճելի հարցերի լուծման համար՝ համաձայնության միջոցով, իսկ այդպիսի համաձայնության բացակայության դեպքում՝ արբիտրաժի միջոցով, հակառակ դեպքում Հայաստանի կառավարության վրա է ընկնում ողջ պատասխանատվությունը երկու հանրապետությունների համար կործանարար հետևանքներով[650]:

Վրաստանի Հանրապետության Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորին 1918 թ. դեկտեմբերի 16-ին Թիֆլիսում դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Մ. Թումանյանին հանձնեց N 13 (2) հերթական նոտան, որը նաև 1918 թ. դեկտեմբերի 15-ին դիմումագրվել էր Համաձայնության երկրների ներկայացուցիչներին: Դրանում նշվում էր, որ դեկտեմբերի 6-ին Սանահինում և Վորոնցովկայում կանգնած իրենց սահմանապահ զորամասերը ենթարկվել են հայկական կանոնավոր զորամասերի դավաճան հարձակմանը, որի հետևանքով սահմանապահ զորամասն իբր թե մասամբ ջարդվել է, հեռագիրը կտրվել է, իսկ երկաթուղին՝ խանգարվել: Վրացական կողմը երկերեսանի կերպով պնդում էր, որ իրենք ամենևին էլ չեն կարծում, թե այդ հարձակումները կատարվել են Հայաստանի կառավարության գիտությամբ կամ համաձայնությամբ, ուստի ՀՀ կառավարությանն առաջարկվում էր անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել արյունահեղությանը վերջ դնելու համար, միաժամանակ բողոքելով, որ այդ առումով դեռ Հայաստանի իշխանությունների կողմից միջոցներ չեն ձեռնարկվել, որ այդուհանդերձ, իրենք գտնում են, որ հայերի կողմից այդ դավաճանական հարձակումը

[650] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 16: Տե՛ս նաև «Հորիզոն», Թիֆլիս, 17 դեկտեմբերի, 1918 թ., N 21: Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии..., док. № 245, стр. 468-469:

կատարվել է կառավարության հրամանով: Վրաց առաջնորդը պնդում էր, որ դեպքերի վայրը ուղարկված պատվիրակությունը, որոնց թվում էին և Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչները, քիչ է մնացել զոհ գնան միջադեպին: Ամփոփելով դիմումը, Գեգեչկորին հայկական կողմին մեղադրում էր անդրկովկասյան կոնֆերանսից, իսկ այնուհետև նաև հայ-վրացական կոնֆերանսին մասնակցությունից, ինչպես նաև բոլոր վիճելի խնդիրները խաղաղությամբ և համաձայնության ճանապարհով լուծելուց, ընդհուպ մինչև արբիտրաժի դիմելուց հրաժարվելու մեջ, ինչը չէր համապատասխանում իրողությանը: Վրաստանի կառավարության անունից իր պարտքն էր համարում հայտարարել ողջ աշխարհին Հայաստանի կառավարության գործելակերպի մասին և ողջ պատասխանատվությունը իր վրայից վերցնելով, քանի որ օրեցօր սպասվող Հայաստանի պատվիրակության ժամանումը ձգձգվում է, որի փոխարեն միջազգային հարաբերությունների նորմերով չարդարացված պատերազմը շարունակվում է[651]:

Գեներալ Գ. Ծուլուկիձեից տեղեկանալով հայկական զորամասերի գործողությունների մասին, Վրաստանի կառավարությունը դիմում է տերություններին նոտայով, որում նշում է, որ այդ արյունահեղության հետևանքների համար պատասխանատվությունը ընկնում է Հայաստանի կառավարության վրա[652]:

Վրաստանը պատերազմ հայտարարեց հայերին: Ի. Ջավախիշվիլին անդրադառնալով այդ ժամանակաշրջանի հիմնախնդիրներին, պարզապես գրում է հետևյալը. «Ջավախեթիան և Բորչալուն հանդիսանում են Վրաստանի դռները, և դրանց կորուստը հավասարազոր է պետության դռների կորստի: Վրացական ժողովուրդը երբեք չի կարող թույլ տալ դրանց կորուստը, և եթե պայքարի համար պետք լինի, պետք է միավորվել այնպես, ինչպես այն սարերը, որոնք գրկում են իրար Վրաստանի բոլոր անկյուններում»[653]:

---

[651] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 469-470; Տե՛ս նաև ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 22, թ. 5: Տե՛ս նաև «Ձանգ», Երևան, 22 դեկտեմբերի 1918 թ., N 83:

[652] Տե՛ս «Сакартвелос Республика», Тифлис, № 117, 17.XII.1918; «Борьба», Тифлис, № 244, 17.XII.1918; «Тифлисский листок», № 272, 18.XII.1918:

[653] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 12 դեկտեմբերի, 1918 թ., N 19:

Նույն օրերի մի այլ փաստաթղթում Վրաստանի կառավարությունը պնդում էր, որ իրենք գործ ունեն Հայաստանի «ներքին անիշխանության» հետ[654], որի պայմաններում Հայաստանի Հանրապետության ղեկավարները ոտնատակ են տալիս դեմոկրատական լավագույն ավանդույթները, սպառնալով երկու պետությունների մեջ անիշխանությունը զորացնել, և քանի որ Վրաստանի կառավարությունը այդ հանցանքին ամենևին էլ մասնակից չէ, ուրեմն ողջ պատասխանատվությունը ընկնում է ՀՀ կառավարության վրա, և իրենց երկրի ավերածության դեմն առնելու համար իրենք անխուսափելի համարեցին զինվորական լայն միջոցներ ձեռք առնելու, և քաղաքացիներին կոչ էր արվում կռվելու Երևանի զինվորական խմբակցության դեմ, պահպանելով կատարյալ կարգապահություն և միավորելով բոլոր ուժերը[655]: Դեկտեմբերի 15-16-ի ընթացքում վրացական զորքերը կրեցին մի շարք պարտություններ և նահանջեցին: Ն. Ժորդանիան անդրադառնալով այդ հարցին, գրել է. «Հենց որ ստացա Շուլավերից տեղեկություն հայկական զորքերի հանկարծակի հարձակման մասին, ինձ համար միանգամից պարզ դարձավ, որ ինչումն է բանը: Նրանց հանկարծակի հարձակման նպատակն էր Թբիլիսիի մատույցներին մոտենալը, քաղաքի հայկական բնակչությունը պատրաստ էր ապստամբության, այնուհետև հայկական զորքերը առանց դժվարության կգրավեին քաղաքը... Այդ իսկ պատճառով ես Ջուղելիիին և Մայսուրաձեին ասացի՝ անմիջապես կտրե՛ք ճանապարհը Բոլնիս-Խաչենի շրջանում, քանի որ այն Թիֆլիս տանող ուղիղ ճանապարհն էր«[656]:

Դեկտեմբերի 13-16-ի ընթացքում տեղի ունեցած ռազմական գործողությունների ընթացքում գերի առնվեց 17 սպա և 420 զինվոր, ինչպես նաև հայ-վրացական այդ օրերի կռիվների ընթացքում որպես պատերազմական ավար հայերի ձեռքն ընկավ 6 թնդանոթ, որից երկուսը Ուզունլարի մոտ ձորը նետվեց, ինչպես նաև 8 գնդացիր, 31 հրացան, 34 արկղ ռումբ, մեկ շոգեքարշ մեքենա, 60 վագոն, 250 ձի, մեկ զրահապատ գնացք և զգալի ռազմամթերք: Այդ ընթացքում վրացական զորամասերի դասավորությունը եղել է հետևյալ կերպ. Դրոյի զորախմբի դեմ գործել

[654] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 22, թ. 6:
[655] Տե՛ս նույն տեղում, թ. 8:
[656] Տե՛ս Жордания Н. Н., Мое прошлое (Воспоминания), Тб., 1990, стр. 93:

են Թիֆլիսյան նահանգային գումարտակը, երկրորդ սահմանապահ գունդը (զորաբանակը), 5-րդ գնդի մի մասը, 2-րդ առանձին հեծյալ հարյուրյակը, 3 զրահապատ գնացք, որից մեկը խորտակվեց, 4 մարտկոց, որից մեկը՝ հաուբիցային և այսպես կոչված կարմիր գվարդիականները, Ալեքսանդրապոլյան զորախմբի դեմ՝ հրացանաձիգ գունդը[657]:

Ակնհայտ էր, որ կապիտան Գրինի հայտնի միջամտությունը ևս ոչ մի կերպ չի ազդում իրադարձությունների զարգացման հետագա ընթացքի վրա: Պատերազմը կանխելու և եղբայրասպան բախումներին վերջ տալուն Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը և Հայաստանի կառավարությունը ձեռնամուխ եղան հենց առաջին օրից սկսած: Դեկտեմբերի 13-ին Ազգային խորհուրդը որոշեց պատվիրակություն ուղարկել ապստամբած Լոռու գյուղացիության մոտ, և այդ ընթացքում կապ հաստատել Ակոռի, Ուզունլար, Արդվին և այլ գյուղերի հետ, պարզելու ծագած իրադարձությունների պատճառները և բանակցելու Վրաստանի կառավարության հետ: Վրաց պատվիրակության ներկայացուցիչների հետ (Ն. Վ. Ժորդանիա, Ե. Պ. Գեգեչկորի, Ն. Վ. Ռամիշվիլի) բանակցությունները վարում էին Հայոց Ազգային խորհրդի նախագահ, Վրաստանի պառլամենտի անդամ Արամայիս Երզնկյանը, Արտեմ Խաչատրյանը, Յաղջյանը, Թումանովը, Դոլուխանովը[658]: Նախնական համաձայնության գալուց հետո, զինված համապատասխան փաստաթղթերով և հրահանգներով, պատվիրակության անդամները (Երզնկյան, Քոչարյան, Աբովյան, Հայաստանի պառլամենտի անդամ Գ. Տեր-Օհանյան) դեկտեմբերի 15-ին դուրս ելան Թիֆլիսից՝ Վորոնցովկայի վրայով Ղարաքիլիսա գնալու համար: Պատվիրակության նպատակն էր՝ անցնելով ճակատային գիծը, կապվել ապստամբած լոռեցիների և Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ բոլոր վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու համար: Սակայն դեկտեմբերի 17-ի առավոտյան Եկատերինֆելդում պատգամավորության անդամ Արտեմ Քոչարյանը ենթարկվեց բռնության վրաց ժողովրդական գվարդիականների կողմից՝ մտրակով ծեծի և այլն, Երզնկյանի և Աբովյանի հասցեին եղան վիրավորանքներ և լուտանքներ՝ սպառնալով կյանքից զրկել: Այն, որ նրանք Վրաստանի պառլամենտի անդամ էին, չազդեց վրաց գվար-

[657] Տե՛ս «Զանգ», Երևան, 20 դեկտեմբերի, 1918 թ., N 82:
[658] Տե՛ս «Знамя труда», Тифлис, 14 декабря, 1918 г., N 64:

դիական Մայսուրաձեի վրա, որը հայկական պատվիրակներին մեղադրեց լրտեսության մեջ: Պատվիրակության անդամները ենթարկվեցին ծեծի և վիրավորանքների[659]: Ակնհայտ էր, որ Վրաց կառավարության կողմից բազմիցս արված հայտարարությունները՝ վերջ տալու «եղբայրասպան» պատերազմին, ընդամենը դեկլարատիվ հայտարարություններ էին, որոնք չէին համապատասխանում նրա մեծապետական ծրագրերին ու ձգտումներին:

Չնայած այս ամենին, այդ ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը փորձում էր կապվել Անդրկովկասում անտանտյան իր դաշնակիցների ներկայացուցիչների հետ՝ փորձելով միջադեպի հարթման խաղաղ նոր ուղիներ որոնել: Այդ նպատակով ՀՀ Նախարարների խորհուրդը 1918 թ. դեկտեմբերի 14-ի նիստում լսում է մինիստր-նախագահի զեկուցումը ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանի Բագու (Բաքու) ուղևորվելու և նրան այդ առթիվ Լոռվա դեպքերի նկատմամբ հրահանգներ տալու մասին: Ընդունված որոշման մեջ Նախարարների խորհուրդը հանձնարարում է Արտաքին Գործոց նախարարին Լոռվա իրադարձությունների, Ախալքալաքի վրա զորքերով հարձակվելու և գրավելու, ինչպես նաև Կարսի ու Կաղզվանի շրջանների թուրքերի կողմից դատարկելու ու վերջիններիս՝ պետական ու մասնավոր անձանց տարած ապրանքները վերադարձնելու մասին հրահանգներ տալ Ա. Ահարոնյանին, որպեսզի նա հանգամանքներին նայած Անգլիական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Վ. Թոմսոնին տեղեկություններ հաղորդի՝ ինֆորմացիայի համար, իսկ հարկավոր դեպքում նաև՝ պաշտոնական հարաբերության մեջ մտնի նրա հետ[660]:

Սակայն ապարդյուն: Վրացական կողմն այդ պահին հակվեց հայերին ի ցույց դնել ողջ աշխարհին: Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորին դեկտեմբերի 15-ի իր հաղորդագրության մեջ հայ-վրացական աղետալի ճգնաժամային իրավիճակը դիտարկում էր վրացական մեկնակետից և բացեիբաց հայտարարում, որ «այժմ ամբողջ

[659] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 99, թ. 78-79: Տե՛ս նաև «Знамя труда», Тифлис, 1918 г., N 64: «Ժողովրդի ձայն», 20. 12.1918 թ.:

[660] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 13, թ. 130:

աշխարհի առջև բողոքում է հայկական կառավարության ուխտադրժության դեմ»[661]:

Վերջ ի վերջո պատերազմի ընթացքի վրա ազդելու և այն կանխելու նպատակով իրենց անմիջական միջամտությունն են կատարում նաև անգլիական զինվորական-քաղաքական ծառայությունները, որոնք իրենց պլաններն ունեին հայտնի տարածաշրջանում և ամենևին էլ խաղաղասիրությունը չէր առաջնորդում վերջիններիս իրենց գեոպոլիտիկ խոշորամասշտաբ ծրագրերում: Եվ այնուհանդերձ, այդ ժամանակ Ղարաքիլիսայում գտնվող անգլիական տրանսպորտային ծառայության կապիտան Է. Գրինը, որը եկել էր Բաքվից, 1918 թ. դեկտեմբերի 15-ին որպես միջնորդ զորահրամանատար Դրոյի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն է ներկայացնում առաջարկներ հայվրացական ռազմաքաղաքական հարաբերությունների, Լոռվա իրավիճակի և դրա վերաբերյալ զինադադարի ստորև բերվող պայմանները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատրաստակամություն հայտնեց և համաձայնվեց պատվիրակություն ուղարկել կապիտան Է. Գրինի հետ հանդիպելու՝ վրաց ներկայացուցիչների մասնակցությամբ: Կառավարության կողմից կազմված խմբի մեջ մտան որպես նախագահ ՀՅԴ անդամ Մարտիրոս Հարությունյանը, Սմբատ Խաչատրյանը, անկուսակցական Ստեփան Մամիկոնյանը, սոցիալիստ-հեղափոխական Արշամ Խոնդկարյանը, ժողովրդական Գրիգոր Տեր-Խաչատրյանը: Հարկ է ասել, որ Գրինի կողմից ներկայացվող պայմանները հանգում էին հետևյալին.

«1) Զինադադար 14 օրով, 2) երկու պատերազմող կողմերը թողնում են Լոռու և Ախալքալաքի բոլոր վիճելի շրջանները՝ մինչև Խրամ գետը, 3) բոլոր գյուղացիները պետք է հանգիստ թողնվեն և ոչ ոք չպետք է միջամտի նրանց գործերին, նրանց պետք է թույլատրվի զբաղվել իրենց ամենօրյա աշխատանքով, 4) երկաթուղագիծը պետք է վերականգնվի, բոլոր զնացքները պետք է բաց թողնվեն և ճանապարհը պետք է բաց լինի ինչպես վրացիների, այնպես էլ հայերի համար առանց որևիցե հապաղման, 5) երկու կողմերն էլ պետք է իրենց ներկայացուցիչներին ուղարկեն Սանահին՝ հարցի համատեղ լուծման համար, 6) զրահա-

[661] Տե՛ս Документы и материалы по внешней полтике Закавказья и Грузии..., стр. 469-470:

գնացքը պետք է կանգնի Սանահինում, վրացական սպասակազմը պետք է թողնի գնացքը, որը պետք է գտնվի բրիտանական հանձնաժողովի կարգադրության տակ, 7) Ախալքալաքի գավառում փախստականների հայկական ներկայացուցիչներին պետք է թույլատրվի մնալ տեղում և շարունակել աշխատանքը առանց արգելքների և ողջ պարենամթերքը պետք է անխոչընդոտ բաց թողնվի»[662]: Ի դեպ հարկ է ասել, որ բերված տեքստի և «Բանբեր Հայաստանի արխիվների» 1991 թ. № 3-ում հրատարակված տեքստի միջև (էջ 83) որոշակի անհամապատասխանություն կա բերվող կետերի բովանդակության և համապատասխանության միջև, սակայն երևի թե ավելի ամբողջական, ճիշտ է վերը բերված տարբերակը: Հենց այդ տեքստի կետերին էլ համապատասխանում է կառավարության թե՛ հարցադրումը, և թե՛ հարցապնդումը:

1918 թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ Նախարարների խորհրդի նիստը քննարկում է մինիստր-նախագահ Քաջազնունու զեկուցումը՝ Դրոյից ստացված հեռագրի մասին, կապված կապիտան Գրինի առաջարկության հետ Լոռվա շրջանում ծագած հայ-վրացական կոնֆլիկտը խաղաղությամբ վերջացնելու մասին: Նշվում է նաև, որ այդ կապակցությամբ տեղի է ունեցել նաև կառավարության և Հայաստանի խորհրդի ավագների միացյալ խորհրդակցություն՝ նոյեմբերի 15-ի երկու նիստերի ընթացքում: Նախարարների խորհրդի նախագահի զեկուցագրում հարց էր բարձրացվում խնդրել կապիտան Գրինին պարզաբանելու իր առաջարկության մի քանի կետեր, որոնց իմաստը կարող էր տարբեր մեկնաբանությունների տեղիք տալ, որից հետո այն մտցնել Հայաստանի խորհուրդ քննության համար: Այդ առթիվ նաև Նախարարների խորհուրդն ընդունում է համապատասխան որոշում՝ հեռագիր ուղարկել Դրոյին, որում նշվում էր, որ կապիտան Գրինի առաջարկությունը ընդունվել է սկզբունքային համակրությամբ և մտցվել է Հայաստանի խորհրդի օրակարգ՝ քննության համար կոնկրետ հրահանգներ ստանալու նպատառումով[663]:

Դա նշանակում էր, որ չնայած պատերազմի դաշտում ունեցած հաղթանակներին, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ելնելով երկրի համար ստեղծված ծանր տնտեսաքաղաքական իրավի-

[662] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 34; գ. 16, թ. 17:
[663] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 6, թ. 21:

ճակից, փորձում էր լուծումներ գտնել և ինչ-որ տեղ մեղմել հայ-վրացական հարաբերություններում առկա լարվածությունը, ուղիներ գտնել սահմանատարածքային առճակատմանը վերջ դնելու և դրա հետ մեկտեղ զիջումներ չկատարել Լոռու, հայկական Բորչալուի, Արդահանի և այլ վիճարկելի հարցերում: Այդ իսկ պատճառով ՀՀ կառավարությունը անտարբեր չգտնվեց կապիտան Գրինի միջնորդական առաքելության նկատմամբ, և այդ հանգամանքը օգտագործեց ստեղծված իրավիճակից դուրս գալու համար: Այն քննության առնվեց ՀՀ կառավարության և խորհրդարանի կողմից, և առաջադրվեցին սկզբունքային լուծումներ, իրատեսական առաջարկներ, որի մասին տեղեկացվեց նաև բարձրագույն զինվորական հրամանատարությանը: Սկզբունքային համակրանքով վերաբերվելով կապիտան Գրինի ասջարկին, այդուհանդերձ ՀՀ կառավարությունը պահպանեց որոշակի զգուշավորություն, ամեն ջանք գործադրելով սահմանազատման խնդրում Հայաստանի կարծր և հնարավորինս անզիջում դիրքորոշումը պահպանելու համար:

Դեկտեմբերի 15-ին վարչապետ Հովի. Քաջազնունին Ղարաքիլիսայում գտնվող գեներալ Սիլիկյանի միջոցով Դրոյին հեռագրով տեղեկացնում էր, որ կապիտան Գրինի առաջարկությունը սկզբունքորեն ընդունելի է, սակայն խորհրդարանին զեկուցելու համար անհրաժեշտ է պարզաբանում, քանի որ «Լոռիի դեպքերը խորհրդի որոշմամբ են ձեռնարկված: Խորհրդում զեկուցում տալու համար անհրաժեշտ է կապիտան Գրինից ստանալ մի քանի բացատրություններ նրա առաջարկի հետևյալ կետերի նկատմամբ: Առաջին կետի մասին՝ տրվու՞մ է արդյոք երաշխիք, որ վրացիները չեն օգտագործի զինադադարը զորքի ուժեղացման և կենտրոնացման համար: Երկրորդ կետի մասին՝ համաձայն ազգագրական սկզբունքի և ազգերի ինքնորոշման իրավունքի, Ախալքալաքի ամբողջ գավառը և Բորչալվի հայկական մասը անվիճելիորեն մենք համարում ենք Հայաստանին պատկանյալ, վիճելի ենք համարում միայն Խրամ գետից հյուսիս գտնվող մասը: Հինգերորդ կետի մասին՝ ի՞նչ հարցեր պիտի լուծվեն և քննվեն Սանահինում գումարվելիք Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչների ժողովին: Վեցերորդ կետի մասին՝ հնարավոր չէ՞ արդյոք զրահապատ գնացքը թողնել Հայաստանի տնօրինության տակ, որպիսին շատ անհրաժեշտ է Հայաստանին, Երևան-Ջուլֆա երկաթուղագիծը պարսկական քրդերի հարձակումնե-

րից պաշտպանելու համար: Մի լրացուցիչ հարց ևս, առաջարկն արվա՞ծ է Վրաստանի Հանրապետությանը և ի՞նչ պատասխան է ստացված»[664]:

1918 թ. դեկտեմբերի 16-ին Նախարարների խորհուրդն իր հերթական նիստում լսում է վարչապետ Քաջազնունու զեկուցումը՝ կապված Հայաստանի խորհրդի արտակարգ նիստում կապիտան Գրինի կողմից արված առաջարկության՝ հայ-վրացական կոնֆլիկտը խաղաղությամբ վերջացնելու մասին հարցի քննության հետ կապված: Նախարարների խորհուրդն ընդունում է սկզբունքորեն խաղաղասիրական որոշում. Ընդունել կապիտան Գրինի առաջարկը իբրև հիմք խաղաղության բանակցություններ սկսելու համար, համաձայնվելով, որ 1) Ախալքալաքի գավառից և Բորչալուի գավառի հայկական մասից վրացական և հայկական զորքերի դուրս բերելու առաջարկը համարել ընդունելի, եթե հաստատ երաշխիք լինի, որ Վրաց կառավարությունը չի շահագործի այդ հանգամանքը իր զորամասերը ուժեղացնելու և դատարկված գավառները նորից գրավելու նպատակով, 2) հատուկ պատվիրակություն ուղարկելու առաջարկը նկատել ընդունելի, 3) մյուս կետերի վերաբերմամբ սպասել կապիտան Գրինի բացատրություններին[665]:

Բավականին արագ կապիտան Գրինից ստացվում է պատասխան հետևյալ բովանդակությամբ. «Մինիստր-նախագահ Քաջազնունուն: Առաջին կետի մասին՝ ո՛չ, չեմ կարող: Եթե վրացիները սկսեն զորախաղացում, զինադադարը խախտվում է: Երկրորդ կետի մասին՝ այդ հարցը լուծելու է հաշտարար վեհաժողովը: Հինգերորդ կետի մասին՝ այդ ժամանակավոր միջոց է, որով հնարավոր է երկաթուղագծի վրա փոխադարձ աշխատանք: Վեցերորդ խնդրի մասին՝ գնացքի խնդիրը կլուծվի արբիտրաժին, միևնույն ժամանակ և վերականգնել երկաթուղագիծը, վերջ տալ ժողովուրդների տանջանքին: Նորից հայտնում եմ հինգերորդ կետը, որ դուք սխալ եք հասկացել: Սանահին կայարանում երկու կողմերի ներկայացուցիչները պետք է փոխադարձ ջանքերով կանոնավորեն և հսկեն գնացքների երթևեկությունը: 1918 թ. դեկտեմբերի 16: Կապիտան Գրին»[666]: Այդ կապակցությամբ 1918 թ. դեկտեմբերի 17-

[664] Տե՛ս «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1991, № 3, էջ 83-84:
[665] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 6, թ. 29:
[666] Տե՛ս «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1991, № 3, էջ 84:

ին ՀՀ Նախարարների խորհուրդը քննարկում է վարչապետի զեկուցումը Հայաստանի խորհրդի (պառլամենտի) դեկտեմբերի 16-ին կայացած արտակարգ նիստի որոշման մասին՝ կապված կապիտան Գրինի առաջարկության հետ և այդ կապակցությամբ պատվիրակության կազմման, նրան տրվող հրահանգների, դրանում զինվորականների ընդգրկման, ինչպես նաև ֆրանսիական կապիտան Ա. Պուադեբարի մասնակցության մասին այդ պատվիրակության աշխատանքներին: Նախարարների խորհրդի նիստի կողմից ընդունված որոշման մեջ արձանագրվում էր, որ պատվիրակությունը պետք է կազմված լինի Հայաստանի խորհրդի անդամներից, թվով հինգ հոգի, որոնք պետք է նշանակվեին Նախարարների խորհրդի նախագահի համաձայնությամբ: Կառավարության նիստի որոշմամբ Հայաստանի պատվիրակությանը հրահանգվում էր առաջնորդվել կառավարության և ավագների խորհրդի նիստում (այդ թվում միացյալ) ընդունված տեսակետներով, միաժամանակ ընթացքում մշտական կապ պահպանելով կառավարության հետ՝ նոր հարցերի առաջացման դեպքում: Կառավարության որոշմամբ պատվիրակությանը կցվում էր փորձառու զինվորական, գեներալ Գ. Ղորղանովը (Ղորղանյան, որը նաև սերտ կապեր ուներ ՀՀ հետախուզական ծառայությունների հետ)[667]: Ըստ կառավարության մտահղացման, այդ պատվիրակությանը պետք է ուղեկցեր ֆրանսիական բանակի սպա, կապիտան Պուադեբարը[668]: Պարզելով իրեն հետաքրքրող հարցերը, ՀՀ կառավարությունը և պառլամենտը անհրաժեշտ գտան (դեկտեմբերի 17, N° 85) բախման վայրը ուղարկել խաղաղության պատգամավորություն, կարծելով, թե նույնպիսի պատգամավորություն կժամանի Վրաստանից՝ խաղաղ համաձայնության միջոցով կոնֆլիկտի վերացման համար, ինչի մասին և տեղեկացվում էր վերոհիշյալ գրությամբ Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրությանը[669]:

ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը ըստ այդմ հարկ է համարում տեղեկացնել Վրաստանի կառավարությանը և առաջարկում պատվիրակներ ուղարկել Ղարաքիլիսա՝ Գրինի հետ խորհրդակ-

---

[667] Տե՛ս Վիրաբյան Վ. Հ., Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920 թթ., Եր., ՀՊՃՀ, 1999, էջ 6:

[668] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ -199, ց. 1, գ. 6, թ. 30:

[669] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 16:

ցելու, սակայն վրացական պատվիրակությունը այդպես էլ չի ժամանում: Ստեղծված անբնական իրավիճակում, այս խառնաշփոթից դժգոհ կապիտան Է. Գրինը մեկնում է Թիֆլիս, այնուհետև՝ Բաքու, այդ մասին գեներալ Վ. Թոմսոնին զեկուցելու և անհրաժեշտ հրահանգավորում ստանալու՝ ստեղծված իրավիճակում կողմնորոշվելու և անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու համար, քանի որ այդ տարածաշրջանը մտնում էր գեներալ Ֆորեստյեր-Ուոքերի լիազորությունների շրջանակների մեջ[670]: Ի վերջո, հայ-վրացական պատերազմի հետ կապված Է. Գրինի առաքելության այս ողջ անց ու դարձն ավարտվում է նրանով, որ Է. Գրինը ոնց հանկարծակի հայտնվել էր հայ-վրացական հարաբերությունների բախումնային փուլի կարգավորման միջնորդական առաքելության դերում, այդպես էլ հանկարծակի անհետացավ և նրա մասին այլևս որևիցե կարևոր տեղեկատվություն չստացվեց: Ըստ Ռ. Հովհաննիսյանի, Է. Գրինը դեկտեմբերի 25-ին վերադարձավ Բաքու, և 1919 թ. հունվարի 4-ին նշանակվեց Բաքվի շրջանի երկաթուղային հաղորդակցության գծով սպա[671]:

Ակնհայտ է, որ Գրինի առաքելությունը ձախողվեց, որովհետև Վրաստանի կառավարությունը պատվիրակություն չուղարկեց և կապիտան Գրինին տեղեկացրեց, որ հայկական զորամասերն առանց որևիցե նախապայմանի պետք է դուրս բերվեն Բորչալուի գավառից, միաժամանակ ցույց տալով ՀՀ կառավարության պատրաստակամությունը փոխադարձ զիջումների միջոցով լուծել վիճարկելի հարցը, չնայած Վրաստանը խուսափել էր հարցի երկուստեք փոխադարձ համաձայնությամբ վճռելու տարբերակից և հայտնել, որ պատրաստ է ընդունելու պատերազմը կանխելու և զինադադար կնքելու դաշնակիցների առաջարկը՝ սպասելով իրենց համար ռազմաքաղաքական նպաստավոր զարգացումների պահի, ակնկալելով, որ վերջին պահին իրենք կհաղթանակեն Հայաստանի Հանրապետության հետ ռազմական առճակատումում և անվերադարձ ուղղումներ կմտցնեն պատերազմի արդյունքների հանրագումարում:

---

[670] Տե՛ս Hovannisian R. G., The Republic of Armenia, vol. II, p. 110-111: Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 193:

[671] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, էջ 118:

Հայաստանի շրջափակված վիճակը պարտադրում էր ՀՀ իշխանություններին իրավիճակից պատվով ելք որոնել, հրաշալի ըմբռնելով, որ Հայաստանը նման պայմաններում երկարատև պատերազմի իրական հնարավորություն պարզապես չունի, իսկ սպառնացող սովը և թիֆլիսահայության հալածական վիճակը ցույց էին տալիս, որ պատերազմի հետագա շարունակումը հղի է անկանխատեսելի հետևանքներով, և որ անհրաժեշտ է շուտափույթ ավարտել այդ հաղթական, բայց նաև կործանարար պատերազմը:

Այդ ընթացքում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ իր դիրքորոշումը փորձեց հստակեցնել ֆրանսիական ռազմաքաղաքական ներկայացուցչությունը, սակայն մեծ արդյունքների չհասավ: Իսկ այդ ընթացքում Թիֆլիսում գտնվող ֆրանսիական կառավարության ոչ պաշտոնական ներկայացուցիչ Դյուրուան տեղեկանալով հայ-վրացական բախումներին, այդ մասին դեկտեմբերի 14-ին հեռագրաթելով հաղորդեց Թիֆլիսում գտնվող Վ. Թոմսոնին առընթեր գործող ֆրանսիական ռազմական ներկայացուցիչ Շարդինյիին: Դյուրուան դաշնակցային հրամանատարությանը հարցապնդում արեց Անտանտի կողմից վիճելի տարածքների նկատմամբ իրական վերահսկողության հաստատման հնարավորության մասին: Այդ նույն օրը, դեկտեմբերի 14-ին, Թիֆլիսում ՀՀ դիվանագիրական հավատարմատարի պարտականությունները ժամանակավորապես կատարող միսիայի խորհրդական Մ. Թումանյանը բախման կապակցությամբ հանդիպում է ունենում բրիտանական հանձնաժողովի և Դյուրուայի հետ, որն իր համակրանքն արտահայտեց Հայաստանի նկատմամբ, ափսոսանք հայտնելով, որ հայկական կառավարությունը դաշնակիցների առաջ նախնական քայլեր չի ձեռնարկել իր իրավունքների պաշտպանության համար Ախալքալաքի և Բորչալուի գավառներում, և անգամ չի տեղեկացրել վրացական զինվորների անկարգությունների մասին, միաժամանակ խորհուրդ տալիս եռանդուն քայլեր ձեռնարկել, քանի որ Կովկասը մտել է բրիտանական ազդեցության ոլորտի մեջ: Միաժամանակ, ըստ Մ. Թումանյանի, պարզվում է, որ այդ բախման առիթով բրիտանական հանձնաժողովի նախագահ գնդապետ Ջորդանը և մայոր Մակդոնալդը իրենց բողոքն են ներկայացրել Հայաստանի կառավարությանը, որը մարտերի պատճառով խոչընդոտել է թուրքական զորքերի տարհանմանը, ինչի

մասին գեներալ Թոմսոնը, իբր թե, ունեցել է կատեգորիկ պահանջ: Այնուհետև շեշտվում է, որ բրիտանական այդ սպաները՝ Ջորդանը և Մակդոնալդը պնդել են այն մասին, թե իբր, թշնամական գործողությունների համար պահը անհաջող է ընտրվել, քանզի դաշնակիցները չեն որոշակիացրել իրենց վերաբերմունքը կովկասյան տարածքային հարցերի նկատմամբ, և իրենց որոշումը կարող է Հայաստանի համար նպաստավոր չլինել, եթե իրենք կրկին նման փաստերի հանդիպեն, որ իրենք չեն կարող ճանաչել այնպիսի կառավարությունը, որն ի վիճակի չէ՝ լիարժեք կարգ ու կանոն հաստատել իր երկրում, որ նմանակարգ դիտողություններ իրենք արել են նաև վրացական կառավարությանը[672]:

Երկու օր անց, դեկտեմբերի 16-ին, Դյուրուան, որն իր վրա միջնորդի դեր էր ստանձնել վրացական կառավարության և Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության միջև, հաղորդում է վերջինիս, որ դաշնակիցները չեն կարող ուղարկել իրենց զորքերը վիճելի տարածքները ժամանակավորապես զբաղեցնելու համար: Դրանից ելնելով, նա առաջարկում է հայկական կողմին կանգնեցնել արագ առաջխաղացող հայկական զորամասերը Խրամ գետասահմանագծի վրա և հայտարարել, որ Հայաստանը մինչև Խրամ ընկած տարածքը զբաղեցրել է ժամանակավորապես՝ նպատակ ունենալով ապահովել հայկական բնակչության անվտանգությունը, չկանխորոշելով նրա վերջնական ճակատագիրը, որը պետք է վճռվի միայն շահագրգիռ կողմերի պետությունների կողմից հրավիրվելիք կոնֆերանսում՝ դաշնակիցների մասնակցությամբ, ավելացնելով, որ վրացական կողմը դեմ չի լինի այդպիսի ձևակերպմանը[673]:

Իսկ իրադարձությունների ընթացքն իր տեղում չէր դոփում, և երկու կողմերն էլ տենդագին քայլեր էին ձեռնարկում իրավիճակից ելք որոնելու համար՝ ամեն մեկը յուրովի, իր հասկացողությամբ:

Մի այլ գրությամբ (դեկտեմբերի 19, № 946) Հայաստանի Արտաքին Գործերի նախարար Տիգրանյանը տեղեկացնում էր, որ պառլամենտի որոշմամբ կառավարությունը պատգամավորություն է ուղարկել Վրաստանի կառավարության լիազորների և կապիտան Գրինի հետ համատեղ ռազմական գործողությունների դադարեցման պայմանները սահ-

[672] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения, стр. 105-106:
[673] Տե՛ս там же, стр. 106:

մանելու համար: Միաժամանակ, հայտնվում էր, որ Հայաստանի պառլամենտը գտնում է, որ «հայկական կառավարությունը կարող է իր զորքերը Բորչալվի գավառից դուրս բերել միայն այն դեպքում, եթե երաշխիք ստանա, որ այդ և Ախալքալաքի գավառները կապահովվեն վրացական զորքերի նոր ներխուժումից»[674]: Մերժելով վրացական կողմի սին մեղադրանքները, հեռագրում նաև ընդգծվում էր, որ Վրաստանի կառավարությունը իր ոտնձգությամբ Լոռու նկատմամբ, Ախալքալաքի ռազմական գրավմամբ, ռազմական ռեպրեսիաներով Բորչալուում հանդես է եկել որպես ագրեսիվ նվաճողական քաղաքականության կրող՝ լիովին անտեսելով Հայաստանի կառավարության կողմից բազմիցս արված դիվանագիտական բողոքագրերը և խաղաղության առաջարկները: Միաժամանակ, հույս էր հայտնվում, որ Վրաստանի կառավարությունը ընդառաջ կգնա Հայաստանի կառավարությանը ամուր և խաղաղ հարաբերություններ հաստատելու համար՝ բնակչության ինքնորոշման սկզբունքին և փոխադարձ տարածքային իրավունքների հարգման հիման վրա[675]: Հարկ է նշել, որ այս խաղաղասիրական առաջարկը կրկնվում է դեկտեմբերի 22-ին (№ 950), երբ Հայաստանի Արտաքին Գործերի նախարար Տիգրանյանը հավաստիացնում էր Հայաստանի կառավարության պատրաստակամության մասին՝ վերջ տալու արյունահեղությանը, այդ նպատակով դեռ դեկտեմբերի 19-ին ուղարկելով պատգամավորություն[676]:

Հարկ է ասել նաև, որ Հայաստանի անտանտյան գծով դաշնակիցները այդ օրերին որոշակի կրավորականություն էին ցուցաբերում: Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից երևում է, որ հայկական ակնկալիքները կապված անգլիացիների և ֆրանսիացիների դիրքորոշման հետ, այնքան էլ հիմնավոր չէին: Դա երևում է Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Թումանովի (Թումանյան) կողմից Հայաստանի Արտաքին Գործերի նախարարին ուղղված մի շարք հաղորդագրություններից (դեկտեմբերի 15-19 ժամանակահատվածում): Դեկտեմբերի 15-ի գրությունում (№ 2229) Թումանովը հաղորդում էր, որ Բորչալվի իրադարձությունների առիթով

[674] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 16:
[675] Տե՛ս նույն տեղում:
[676] Տե՛ս նույն տեղում:

ինքը զրույց է ունեցել ֆրանսիական և անգլիական ներկայացուցիչների հետ: Թումանովը տեղեկացնում էր, որ ֆրանսիական ներկայացուցիչը միանգամայն կարեկցաբար է արտահայտվել զինված բախման վերաբերյալ, և ցավում է, որ Հայկական կառավարությունը չի բողոքել դաշնակիցներին վրացիների կողմից Ախալքալաքի գրավման կապակցությամբ և ընդդեմ նրանց բռնությունների Բորչալուում: Թումանովը նաև հաղորդում էր, որ անգլիական մայոր Մակդոնալդը հայտարարություն է արել այն մասին, որ տվյալ պահը հայերի համար չափազանց պատասխանատու է, քանի որ մինչև խորհրդաժողովը՝ հարցերը մնում են չլուծված և որոշումը կարող է թեքվել դեպի անբարենպաստ կողմը, եթե տեղ գտնեն տեղի ունեցածի նման փաստեր (նկատի ունենալով Բորչալվի բախումները): Տեղեկացվում էր նաև, որ հարցում է արվել Բաքու՝ վիճելի տարածքների նկատմամբ դաշնակիցների կողմից հսկողության հնարավորության մասին, և դեռ պատասխան չի ստացվել: Թումանովը այդ հանդիպումից եզրահանգում է, որ այդ բախումները շատ վնաս կբերեն քաղաքական առումով, և անհրաժեշտ է բոլոր միջոցներով և առանց հապաղման հանգցնել պատերազմի հրդեհը, բացատրելով, որ դա թյուրիմացության արդյունք է: Թումանովը գտնում էր, որ կռվելու վճռականություն ցուցաբերելով տարածքների հարցում, կարելի է համարել նպատակին հասած, սակայն հետագա բախումը ուժեղ կերպով կվնասի գործին[677]:

Թումանովի զգուշավորությունը զուր չէր, առավել ևս ինչպես պարզվում է Հայաստանի Արտաքին Գործերի նախարարին ուղղված դեկտեմբերի 17-ի գրությունից (№ 2255) դաշնակիցները վիճելի տարածքների օկուպացիայի համար զորք չէին կարող տալ (անգլիացիները դա արեցին հետո, երբ նպատակահարմար գտան և իրենց հարմար ձևով): Թումանովը տեղեկացնում էր, որ Թիֆլիսում գտնվող ֆրանսիական ներկայացուցիչն առաջարկել է հայկական զորքերը կանգնեցնել Խրամ գետի գծի վրա, հայտարարելով, որ դա ժամանակավոր օկուպացիա է և նպատակ է հետապնդում պաշտպանել հայկական բնակչությանը, չհավակնելով վերջնականապես լուծել հարցը, որը պետք է վճռվեր կոնֆերանսին, և գտնում էր, որ վրացիները կհամաձայնվեն:

[677] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 96, թ. 43:

Թումանովը այս հաղորդագրության մեջ մի ուշագրավ միտք էր արտահայտում, որ վրացիները բանակցություններ են վարում բոլշևիկների հետ, որը նրանց հնարավորություն կտա հնարավորին չափ զորքեր ազատել Դուշեթում և ուրիշ շրջաններում՝ ուղարկելով հայերի դեմ (սա, անշուշտ, վկայում է վրացական կողմի դիվանագիտական նրբանկատության և կուսակցական նեղմիտ բառապաշարի դարձվածքաբանական պաճուճաբանության, ինչպես նաև «կուսակցականամոլությունից» և զանազան «իզմ»-երից վեր կանգնած լինելու կարողության դրսևորումների մասին, որը խելամտության նշան է քաղաքականության մեջ - Վ. Վ.): Թումանովը նաև տեղեկացնում էր, որ այդ նույն նպատակով հնարավոր է թաթարական ելույթների հրահրում Ղազախում, Նուխիում և ուրիշ գավառներում՝ հայկական ուժերի շեղման նպատակով (ինչ խոսք, հետաքրքիր փաստաթուղթ է, որը վկայում է շատ բանի մասին, կողմերի պատրաստվածության և թրծվածության մասին - Վ.Վ.): Հանրագումարի բերելով իր հաղորդագրությունը, Թումանովը ելնելով Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի հետ զրույցի տպավորությունից, կարծիք է արտահայտում, որ գուցե և վրացիները համաձայնվեն զինադադարի և անհապաղ խորհրդաժողովի հրավիրման գաղափարի հետ, սակայն պայմանով իհարկե, եթե հայկական զորքերը ետ քաշվեն Ղարաքիլիսա, իսկ վրացականը՝ դեպի Խրամ գետը, իսկ նրանց միջև ընկած տարածքում զորքեր չլինեն, ադմինիստրացիան լինի վրացական, իսկ երկաթուղագիծն էլ պահպանվի ժողովրդական գվարդիականների ուղեկալի (պիկետի)՝ Ջուղելու ջոկատի կողմից, կիսով չափ վրացիներից և հայերից կազմված[678]: Իրադարձությունները, սակայն, նույնիսկ հայերի համար ոչ նպաստավոր, այդ սցենարով չզարգացան, և իրադրության մեջ անընդհատ շտկումներ էին մտնում: Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի տեղակալը՝ Մ. Թումանովը դեկտեմբերի 18-ի հաղորդագրության մեջ (№ 2259) նշում էր, որ արդեն սկսվել են ռեպրեսիաներ Թիֆլիսում, և որ հաղթել է ռազմական կուսակցությունը, և բանակցություններ են վարվում թուրքերի հետ, և հայտնում էր, որ հայկական բնակչության դեմ ռեպրեսիաների

[678] Տե՛ս նույն տեղում:

շարունակվելու պայմաններում ինքը մտադիր է դիմել դաշնակիցներին՝ օգնության պաշտոնական խնդրանքով[679]:

1919 թ. դեկտեմբերի 18-ին իր արտակարգ նիստում, Հայոց հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդը քննելով հայ-վրացական ռազմական բախման խնդիրը և համապատասխան դիմումագիր հասցեագրելով ՀՀ կառավարությանը, և նկատի ունենալով, որ երկու հարևան և ազգակից ժողովուրդների միջև առաջ եկած եղբայրասպան պատերազմը լի է սարսափելի ծանր ու կործանարար հետևանքներով, վստահություն էր հայտնում, որ ազգակից ժողովուրդների միջև չկա և չի կարող լինել և ոչ մի դեպք և ոչ մի խնդիր, որ անկարելի լինի լուծել հաշտ ու խաղաղ ճանապարհով: Ի վերջո որոշվեց բուռն կերպով բողոքել կատարվող արյունահեղության դեմ, պահանջել անմիջապես դադարեցնել թշնամական գործողությունները, գտնել ընդհարման պատճառները և դրանք վերացնելու համար անմիջապես գումարել հայ-վրացական կոնֆերանս, որի իրավասությանը հանձնել նաև մյուս բոլոր վիճելի հարցերը, այդ մասին տեղեկացնելով ժողովուրդների ազգային-հասարակական հիմնարկություններին և ամեն կերպ տարածել այդ ժողովուրդների ամենալայն խավերի մեջ[680]:

Հարցի «խաղաղ լուծման» գրեթե բոլոր հնարավորությունները փակուղի մտան, իսկ Եվգենի Գեգեչկորին Թիֆլիսում Վրաստանի խորհրդարանին զեկուցեց պատերազմը կանխելու ուղղությամբ իրենց կողմից ձեռնարկած քայլերի և դրանց արդյունքների մասին, ինչպես նաև խորհրդաժողով հրավիրելու ձախողման և դրանում հայկական կողմի մեղավորության, եթե ոչ դիտավորության մասին: Վրաստանի խորհրդարանը կառավարությանը լիազորեց «ձեռք առնել բոլոր հարկ եղած միջոցները՝ ջախջախելու թշնամուն, որը փորձում է երկու ժողովուրդների միջև սերմանել թշնամական հարաբերություններ, ճնշել անիշխանությունը և պաշտպանել Վրաստանի ժողովրդավարությունը»[681]:

Բանակցությունների սկսվելը ձգձգվեց և ավարտվեց անարդյունք, իսկ Վրաստանի պառլամենտում շարունակվում էին հնչել ռազմատենչ

---

[679] Տե՛ս նույն տեղում, թ. 58:

[680] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 96, թ. 78:

[681] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 464-467: Տե՛ս նաև Армяно-грузинский вооруженный конфликтъ…, стр. 34-35:

ճառեր: Դեկտեմբերի 17-ին ելույթ ունենալով Վրաստանի պառլամենտում, կառավարության նախագահ Ն. Վ. Ժորդանիան կեղծելով փաստերը և խեղաթյուրելով իրականությունը, նշում էր, որ «այժմ պարզ է դառնում, որ Հայաստանի կառավարությունը և նրա գործակալները սկզբից ևեթ ապստամբություն են սարքել հայկական գյուղերում, այնուհետև օգտվել են դրանից և մեր սահմանները մտցրել իրենց կանոնավոր զորքերը: Տեղի է ունեցել այն, ինչը տեղի չպետք է ունենար: Ներկա հայկական կառավարությունը սադրելով այս ամոթալի բախումը, պատճառել է այն, ինչ նախկինում բնավ չի եղել՝ պատերազմ Վրաստանի և Հայաստանի միջև: Ո՞վ էր երբևէ լսել պատերազմի մասին՝ մեկ կամ երկու գյուղում տեղի ունեցած մի քանի պատահարների մեջ»: Ն. Վ. Ժորդանիան այնպես էր ներկայացնում իրերը, կարծես թե հայկական կողմը ապօրինաբար էր միջամտում իրադարձությունների ընթացքին: Իր ելույթում Ժորդանիան ընդգծում էր, որ ժամանակին իրենք հայտարարել են, որ ողջ Թիֆլիսի նահանգն իրենք համարում են Վրաստանի սահմանների մեջ, և իրենք ողջ տարածքը կզբաղեցնեն, և եթե որևիցե մեկն այստեղ ինչ-որ բան վիճելի է համարում, իրենք պատրաստ են բանակցություններ վարել, և այդ պատճառներով էլ գրավել են «Ջավախեթիան»: Այնուհետև Ժորդանիան ավելացնում էր, որ այդ նպատակով էլ իրենք այնտեղ են ուղարկել զորքեր և դա բնավ էլ չեն թաքցրել, և հիմնել են հատուկ գեներալ-նահանգապետություն Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում, և այդ նպատակով էլ գրագրություն են ունեցել թուրքերի հետ: Ն. Ժորդանիան իր ճառում մեղադրելով Հայաստանին ագրեսիայի մեջ, գտնում էր, որ «Քաջազնունու կառավարությունը չի կարող լինել խաղաղ «հարաբերությունների մեջ հարևանների հետ», պնդելով, որ իրենք ենթադրում են, որ «Երևանի կառավարությունը գիտի և կգնահատի այն հանգամանքը, որ եթե ներքին պայմաններում փչացած են հարաբերությունները մուսուլմանների հետ, ապա գոնե լավ հարաբերություններ են պահպանված վրացիների հետ»: Ն. Ժորդանիան իր ելույթում նշում էր, որ «Հայաստանում հաղթել է պատերազմի՝ մաուզերիստների կուսակցությունը, և իրենք կոչ են անում պայքար սկսել այն կառավարության և այն ռազմական կուսակցության դեմ, որոնք ձեռնարկել են այդ սարսափելի հանցագործությունը» և «ով իրենց դեմ զենք է բարձրացրել, իրենք պետք է նույն զենքով պատասխա-

նեն»[682]: Վրաստանի խորհրդարանը բանաձև ընդունեց պաշտպանելու Վրաստանի Հանրապետությունը Հայաստանի «ոտնձգություններից», շեշտադրելով թե իբր այդ քայլերը ուղղված են ոչ թե հայ ժողովրդի դեմ, այլ «այն շրջանակների, որոնք ձգտում են խզել երկու հարևան ազգերի մեջ եղած դարավոր կապերը»[683]: Այդ օրը Վրաստանի պառլամենտում հնչեցին բազմաթիվ ռազմաշունչ ճառեր: Ագրեսիվ ձևով ելույթ ունեցավ ոչ միայն Վեշապելին, այլև Ժողովրդական գվարդիայի հրամանատար Վալիկո Ջուղելին, որն իր հայատյաց ելույթում շեշտեց, որ հայերը դարանամուտ գայլի պես հարձակվեցին վրացիների վրա, և ավազակի պես սրում էին իրենց դաշույնը, որպեսզի խփեն վրացիների մեջքին: Նման ոճով ելույթ ունեցավ նաև Զինվորական մինիստր Գեորգաձեն, կոչով դիմելով նորակոչիկներին, ընդգծել էր, որ թշնամին լցվելով նախանձով, կամենում է կործանել Վրաստանի Հանրապետությունը[684]:

Դեկտեմբերի 17-ին Վրաստանի պառլամենտում հայ-վրացական բախման պատճառով կայացած սուր բանավեճի արդյունքում ընդունվեց հետևյալ բանաձևը. «Լսելով կառավարության զեկուցումը Վրաստանի և Հայաստանի միջև առաջ եկած պատերազմական գործողությունների մասին, պառլամենտը ընդունում է, որ Վրաստանի կառավարությունը չի տվել և ոչ մի առիթ Հայաստանի կառավարությանը Վրաստանի նկատմամբ թշնամական հարաբերություններ ունենալու, որ նա գործ է դրել ամեն միջոց երկու եղբայրական ժողովուրդների միջև ընդհարումը խաղաղ միջոցներով լուծելու համար, որ Հայաստանի կառավարական զորքերը նենգորեն ներս են խուժել Վրաստանի սահմանները, անսպասելի կերպով հարձակվել են վրաց բանակի պահակների վրա, շատերին կոտորել են և շատերին գերի առել - Վրաստանի պառլամենտը հավանություն է տալիս կառավարության բոլոր գործերին և Վրաստանի թշնամիներին սանձելու նպատակով արված զինվորական հրամաններին, խոստանում է նրան ամեն տեսակ օգնություն հանրապետության պաշտպանության գործում և հայտարարում է, որ հանրապետության ուժերը ուղղվում են ոչ թե հայ ժողովրդի, այլ Հայաստանի

[682] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 473-476:

[683] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 г., стр. 138:

[684] Տե՛ս «Զանգ», Երևան, 12 հունվարի, 1919 թ., N 5:

կառավարության և այն շրջանների դեմ, որոնց քաղաքականությունն իրեն նպատակ է դրել քանդել երկու հարևան ժողովուրդների դարավոր բարեկամությունը, որ կորստաբեր է թե՛ վրաց և թե՛ հայ ժողովուրդների համար»[685]: Եվ չնայած բարեկամության և պատերազմը կանխելու պատրաստակամության մասին Վրաստանի պառլամենտի փարիսեցիական կոչերին ու խոստումներին, այդ նույն նիստում որոշվեց 25 միլիոն ռուբլի հատկացնել կառավարությանը՝ պատերազմական կարիքների համար[686]:

Իսկ պատերազմը շարունակվում էր, և նորանոր դժբախտություններ և արհավիրքներ բերում երկու ժողովուրդներին: Հետագա արյունահեղությունից խուսափելու և Վրաստանի կառավարությանը զգաստամտության և ողջախոհության կոչելու նպատակով հայկական զորախմբի հրամանատար Դրոն (Դրաստամատ Կանայան) 1918 թ. դեկտեմբերի 17-ին հետևյալ հեռագիրն է հղում վրացական զինվորական հրամկազմին. «Վրացական հրամանատարությանը՝ Ձեր և Ձեր կողմից ղեկավարվող զինվորների կողմից հայկական բնակչության նկատմամբ գործադրված ճնշումները անցնում են բոլոր հնարավոր սահմանները, որի հետևանքով և եղել է հայկական կառավարության հրամանը զենքի ուժով վերջ դնել բոլոր կարգի ճնշումներին հայկական աշխատավոր գյուղացիության նկատմամբ:

Ուշքի եկե՛ք, հիշեցե՛ք, որ դուք դեմոկրատական հանրապետության զորքեր եք, որի գլուխ կանգնած են անձինք, որոնք ազդարարել են ժողովուրդների ինքնորոշման գաղափարը, և անհապաղ մաքրե՛ք մեր տարածքը, եթե դուք չեք ցանկանում հետագա արյունահեղություններ»[687]:

Դա էլ չզգաստացրեց վրացիներին, պատերազմը շարունակվում էր, հայկական զորքերը լի էին վճռականությամբ ջախջախելու լկտիացած վրացական զորքերին: «Դեկտեմբերի 17-ին արևելքից գլխապետ Թարվերդյանի ու արևմուտքից Փիրումյանի խիզախ գրոհով ջարդ ու փշուր եղան 5-րդ և 6-րդ վրացական գնդերը և գվարդիայի ու սահմանապահ զումարտակները: Գրավվեցին 2 հաուբիցներ, 2 դաշտային

[685] Տե՛ս «Զանգ» Երևան, 12 հունվարի, 1919 թ., N 5:
[686] Տե՛ս նույն տեղում:
[687] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 149, թ. 76:

թնդանոթ, 25 գնդացիր և Ախթալա կայարանի մոտ 2 կազմ ու պատրաստ զրահապատ գնացքներ, որոնք տեղն ու տեղը գործադրության դրվեցին հակառակորդի դեմ: Վրացիները ցույց տվեցին կատաղի դիմադրություն և կռվի դաշտում թողին 60 դիակ: Վրաց ճակատի հրամանատար զոր. Ծուլուկիձեն բոլորովին ջախջախված հապճեպ փախավ Հայրում-Սադախլո գիծը՝ հայերի ձեռքում թողնելով նույնիսկ իր սալոն-վագոնը մեջի իրերով»[688], - գրում է Ս. Վրացյանը: Հայկական զորքերի առաջխաղացումը շարունակվեց, հայ զինվորները հաղթահարելով վրաց զինվորների կատաղի դիմադրությունը, ցուրտը, սննդի ու հագուստի պակասությունները, դեկտեմբերի 18-ին գրավեցին Այրումը, Ախթալան և վերջապես՝ Բոլնիս-Խաչենը, որն իրականացրեց Տեր-Նիկողոսովի զորամասը: Ընդհանուր ոգևորիչ տրամադրությունը կարևոր ազդակ էր հայկական զորքերի հաջողությունների համար: Մարտական գործողությունները սկսեցին կենտրոնանալ Սադախլոյի շրջակայքում: «Այսպիսով, - ընդգծում է Երևանի Հայոց Ազգային խորհրդի անդամ Արշ. Աստվածատրյանը, - Դրօն իր սահմանափակ ուժերով, սկսած հայ-վրացական պատերազմի առաջին օրից, ծեծելով, ջարդեր տալով ու մասամբ ոչնչացնելով՝ քշեց-հանեց վրացական զօրքերը հայկական Լոռիի սահմաններից»[689]:

Վրաստանի Հանրապետությունը տենդագին պատրաստություն է տեսնում հայկական զորքերի հանդուգն ու սրընթաց գրոհները կասեցնելու համար: Վրաստանում կատարվում է զորահավաք: Կրքերը անսովոր բորբոքվել էին, Վրաստանի խորհրդարանում ռազմաշունչ ճառերը շարունակվում էին, էլ ավելի սրելով իրավիճակը: Վրացական կառավարությունը ստեղծված աննպաստ ռազմաքաղաքական իրավիճակում փորձեց պահպանել «արժանապատիվ կեցվածքը» և հակագործողությունների դիմել, միաժամանակ կատարվածը համարելով որպես պատերազմական վիճակ երկու հանրապետությունների միջև, դեկտեմբերի 16-ին համապատասխան նոտա ներկայացվեց Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանին, իսկ դեկտեմբերի 18-ին Վրաստանում զորահավաք հայտարարվեց:

---

[688] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 231:

[689] Տե՛ս Աստուածատրեան Ա., Հայ-վրացական պատերազմը (Դրոյի յիշատակին), «Հայրենիք» (Բոստոն), 1957, N 2, փետրվար, էջ 9:

Դեկտեմբերի 17-ին Գ. Մազնիաշվիլին նշանակվեց վրացական բանակի գլխավոր հրամանատար, իսկ նրա տեղակալ՝ գեներալ Դ. Ա. Սումբատաշվիլին (Սումբատով Դավիթ Ալեքսանդրի, 27.12.1831 թ. - 1919 թ.)[690], իսկ դեկտեմբերի 18-ին շտաբի պետ նշանակվեց Գ. Կվինիտաձեն[691], որոնք այդ օրը ժամանեցին Սանդարի, ձեռնամուխ լինելով զորահավաքի, հավաքելով ժողովրդական աշխարհազորը և վրացական Ազգային գվարդիան, վերջնական նպատակադրում ունենալով՝ պաշտպանողականից անցնել ակտիվ հարձակողական գործողությունների:

Դրանք Վրաստանի կառավարության և Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի, վրացական բարձրագույն սպայակույտի կողմից ձեռնարկված ամենավերջին հուսահատ և հապճեպ քայլերն էին՝ իրավիճակը արմատապես շտկելու և փորձելու ռազմական գործողությունների ընթացքի մեջ արմատական բեկում մտցնելու, սակայն միանգամայն ապարդյուն:

Անշուշտ, այստեղ խոսքը վերաբերում է առավելագույնը մինչև դեկտեմբերի 25-ը տեղի ունեցած ռազմական բախումներին՝ մինչև բրիտանացիների չարաբաստիկ միջամտությունը՝ յուրովի կարգավորելու հայ-վրացական չափազանց լարված ռազմաքաղաքական և առհասարակ՝ միջպետական հարաբերությունները, իրենց կամքը պարտադրելու առճակատող կողմերից յուրաքանչյուրին:

Հենց այդ հանգամանքն էլ ըստ էության կանխորոշեց ռազմական գործողությունների հետագա ընթացքը: Այն կանխեց անցանկալի պատերազմը՝ ի չիք դարձնելով ռազմի դաշտում հայկական զորքի հաղթարշավը, դիվանագիտական կոշտ միջամտությամբ ճանապարհ հար-

---

[690] Գեներալ-լեյտենանտ Դ. Ա. Սումբատովը (Սումբատաշվիլին) 1918 թ. ծառայել է վրացական բանակում, ակտիվ մասնակցություն ցուցաբերել վրաց-հայկական պատերազմին. Այդ մասին տե՛ս Гогитидзе М., Грузинский генералитет (1699-1921 гг.). Биографический справочник НАН Украины. Инс-т археографии и источниковедения им. М. Грушевского, Укр. Центр биографической некрополистики. Сост. М. Гогитидзе, отв. ред. Иван Дивный, Киев, 2001, стр. 137: Տեղին է այս կապակցությամբ նշել հայ հեղինակներ Տ. Հայազնի և Գ. Ղազարյանի կենսագրական հանրագիտարանի մասին, որում գեներալ Դավիթ Ալեքսանդրի Սումբատաշվիլին ներկայավել է հայազգի 1000 գեներալների ու ծովակալների շարքում. - Տե՛ս Հայազն (Պետրոսյանց Տ. Մ.) Տ., Ղազարյան Գ., 1000 հայազգի գեներալներ, ծովակալներ, Եր., Հեղ. հրատ., 2009, էջ 277:

[691] Տե՛ս Квинитадзе Г., Мои воспоминания в годы независимости Грузии…, стр. 58-60.

թելով հիմնահարցի բրիտանական ձևով «կարգավորման» համար, որի հիմքում ընկավ այդ վիճարկելի դարձած սահմանատարածքային սահմանազատման վրացամետ հանգուցալուծումը:

Գնդապետ Վաչնաձեի էշելոնը Սանահինի մոտ տեղի ունեցած մարտերում կորցրեց իր կազմի մեկ երրորդը, սպառելեց բոլոր փամփուշտները և բոլոր կողմերից շրջապատված՝ զորքերի մնացորդով ընկավ գերի: Վաչնաձեին Սանահինի ծերպը օգնության ուղարկվեցին զրահագնացքներ և հաուբիցային մարտկոց, որոնք այդ տեղանքում, ըստ վրացական տեսակետի, պիտանի չէին, և հայկական զորքերի կողմից պայթեցվեցին[692]: Ինչպես խոստովանում են վրաց հեղինակները և անգամ Գ. Մարխուլիան[693], դրությունը ռազմաճակատում շատ կատաստրոֆիկ էր, հայկական զորամասերը երկու շաբաթվա ընթացքում գերի վերցրին 1000 վրացի զինվոր և մոտ 100 սպա, որպես ռազմական ավար վերցվեց 3 զրահագնաց, 16 թնդանոթ, 35 գնդացիր, մի քանի տասնյակ շոգեքարշ, հարյուրավոր վագոններ և այլն[694]: Գեներալ Կվինիտաձեն վիրավորական էր համարում, որ իրենք պարտություն էին կրում անկասկած «թուլագույն» թշնամուց: Այդ բարդագույն վիճակում, գտնում է Կվինիտաձեն, Վրաստանի իշխանությունները բողոքի սնամեջ և փքուն դիվանագիտական նոտաներ էին ուղարկում Երևան, փոխանակ զորքերը շարժելու դեպի ռազմական գործողությունների շրջան և ջախջախելու թշնամուն: Ըստ նրա, հենց դա է հանդիսացել վրացական զորքերի ամոթալի նահանջի պատճառը, այլ ոչ թե մարտական անհաջողությունները[695]:

Հայկական զորամասերը գրավել էին Շուլավերը և նրանից արևելք ընկած բարձունքները, և այդ պահին գեներալ Մազնիաշվիլու առջև դրված առաջնային խնդիրն էր դարձել արգելել հայկական զորքերին

---

[692] Տե՛ս «Զանգ», Երևան, 27 դեկտեմբերի, N 85, 29 դեկտեմբերի, 1918 թ., N 86: Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах (с сокращениями), стр. 49-53: Տե՛ս մանրամասն նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[693] Տե՛ս նույն տեղում:

[694] Տե՛ս «Զանգ», Երևան, 27 դեկտեմբերի, N 85, 29 դեկտեմբերի, 1918 թ., N 86, 12 հունվարի, 1919 թ., N 5:

[695] Տե՛ս Квинитадзе Г., Мои воспоминания в годы независимости Грузии…, стр. 59.: Мазниашвили Г., Воспоминания. 1917-1925, стр. 124-125:

նահանջելու Սադախլո, բայց չկարողացան դա իրագործել՝ իբր զորքերի սակավաթվության հետևանքով, ինչը չի ապացուցվում փաստերով:

Դեկտեմբերի երկրորդ կեսին Թիֆլիսում և Ղարաքիլիսայում հայ-վրացական բանակցություններին զուգընթաց շարունակում էին չափազանց լարված մնալ հայ-վրացական ռազմաքաղաքական փոխհարաբերությունները, պատերազմը շարունակվում էր, Հայաստանը մնում էր շրջափակված, կտրված արտաքին աշխարհի հետ կապող տնտեսական ուղիներից:

Ռազմական առճակատման ամենաթեժ կետերից դարձավ գերմանական գաղութ Եկատերինֆելդը [Բոլնիս], որտեղ գտնվում էր վրացական Ազգային գվարդիան, իսկ դրանից հարավում գտնվող Բոլնիս-Խաչեն գյուղում՝ Վորոնցովկան գրաված հայկական զորաջոկատները և աշխարհազորայինները: Այնպես էր ստացվում, որ Խրամ գետի ափին գտնվող Եկատերինֆելդը դառնում էր ռազմավարական տեսանկյունից կարևոր կետ արևմուտքից Թիֆլիսին մոտենալու համար:

Հենց այս տագնապից ելնելով, դեկտեմբերի 18-ին Վրաստանի կառավարության կողմից զորահավաքի հրաման արձակվեց Եկատերինֆելդ ուղարկել թարմ համալրումներ: Վրացական զորամասերի հրամանատար նշանակվեց գվարդիական սպա Վալիկո Ջուղելին, իսկ բոլոր նոր ձևավորված զորքերի գլուխ կարգվեց գեներալ Ախմետաշվիլին: Դեկտեմբերի 19-ի առավոտյան այդ զորամասերը՝ թվով 600 սվին զինվոր հասան Եկատերինֆելդ[696]: Վկայակոչելով վրացական հեղինակներին, պարզ է դառնում, որ ռազմաճակատ ժամանած գվարդիայի զինվորներն աչքի ընկան անկազմակերպվածությամբ, պահակազորի վատ դրվածքով, անգամ գիշերը արհամարհելով պահակներ դնել, իմանալով հանդերձ, որ հայկական զորամասերը քթի տակ են, ինչպես նաև հակառակորդի նկատմամբ քամահրական վերաբերմունքով և այլն[697]:

---

[696] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

[697] Վրացական Գվարդիան (հայտնի նաև որպես Ժողովրդական Գվարդիա) իրենից ներկայացնում էր ռազմականացված կազմավորումների ամբողջություն, կազմված տարածքային սկզբունքով և Վրաստանի կառավարության կողմից դիտվում էր որպես նոր,

Գիշերը հայկական զորամասերը խլեցին վրացական հրետանին՝ թվով 8 հատ, և գնդացիրները տեղադրելով ավանում գտնվող տների բարձր կետերում, լուսաբացին անցան հարձակման վրացական դիրքերի վրա, որը սակայն ըստ Է. Անդերսենի և Գ. Էգգեի, իբր թե ձախողվեց Վրացական գվարդիայի գործողությունների հետևանքով, որոնց գլխավորում էր Ջուղելին, որն ըստ վերոնշյալ հեղինակների՝ անզգույշ, սակայն խիզախ մարդ էր, և նրանից նորից ետ խլեցին հրետանին:

Դեկտեմբերի 30-ին վրացական հակահարձակումը հաջողությամբ ետ է մղվում հայկական զինուժի կողմից: Վերջ ի վերջո, վերը նշյալ այս երկու հեղինակները գործնականում փաստերը ներկայացնելով վրացական մեկնակետից, ընդգծում են, թե իբր դեկտեմբերի 31-ի գիշերը վրացական զորքերը համալրում ստանալով, այդ թվում լեռնային հրետանու հեծյալ մարտկոցը, ահեղ մարտից հետո վերցնում են Բոլնիս-Խաչենը, իսկ իբր ջարդված հայկական զորքերը նահանջեցին դեպի Վորոնցովկայի չբնակեցված գոտին[698], ինչը որոշակի առումով հանդիսանում է պատմաքաղաքական իրադարձությունների ոչ սկզբունքային և խեղաթյուրված, իսկ ավելի ճիշտ՝ աղճատված գնահատում:

Այդ ընթացքում հայկական զորքերի ձախ թևը գնդապետ Տեր-Նիկողոսովի հրամանատարությամբ հարձակումը շարունակեց և հարվա-

---

դեմոկրատական սկզբունքներով կազմակերպված վրացական զինված ուժերի նախատիպ և հիմք, որի ստորաբաժանումներում կարգապահությունը և սուբորդինացիան իրենց տեղը զիջում էին «քաղաքացի-ռազմիկների» գիտակցված ինքնակարգապահությանը: Անկախության ժամանակաշրջանի վրաց բարձրաստիճան զինվորական հրամանատարների կարծիքով (Գ. Կվինիտաձե, Գ. Մազնիաշվիլի և ուրիշներ), գվարդիական զորամասերը ստանում էին անհամեմատ ավելի լավ ռազմական հանդերձանք և զենք, սակայն աչքի էին ընկնում ցածր զինվորական կարգապահությամբ և հրամանատարական կազմի պրոֆեսիոնալ անբավարար պատրաստվածությամբ - Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: // Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: Iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/: Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[698] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia / armeno-georgian-war-1918-20/:

ծեց Բոլնիս-Խաչենի և Եկատերինֆելդի ուղղությամբ, իսկ աջ թևում գնդապետ Կորոլկովի զորամասը փայլուն մանևր կատարելով, գրավեց Այրումը, որի ընթացքում վրացական 5-րդ և 6-րդ գնդերը այրումյան ռազմական բախման ընթացքում հրաշքով դուրս եկան շրջապատումից, կորցնելով ավելի քան 500 մարդ սպանված, վիրավոր և գերի, ինչպես նաև հակառակորդին թողնելով՝ 5 գնդացիր և 2 հրետանի[699]:

Ըստ վրացական կողմի, դեկտեմբերի 18-ին Զինվորական մինիստր Գրիգորի Տ. Գեորգաձեն անձամբ Սադախլո առաջնորդեց 1000 վրաց հետևակայինների, իսկ հայկական կոմիտեի տեղեկատվության համաձայն՝ շուրջ 2000 հետևակային, 3 մարտկոց, 12 թնդանոթ, մեկ հեծյալ հարյուրակ ձիավոր (հակական կողմի վկայմամբ՝ 400 հեծելակ) և վերջին զրահագնացքը[700]: Գեներալ Գ. Ծուլուկիձեի ջոկատը ամրապնդվեց Սադախլո կայարանում, որը շուտով Դրոյի գլխավորությամբ գործող հայկական զինուժի կողմից հարձակման ենթարկվեց, սակայն առաջին անհաջող գրոհից հետո հայկական զորամասերը թևերից շրջանցեցին այն: Դեկտեմբերի 18-19-ի հայկական զորքերը գրավում են մի քանի անհրաժեշտ և ռազմական առումով կարևոր դիրքեր, իսկ Սադախլոյի ձախ թևի վրա հայկական առաջապահ զորամասերը վերցնում են Խոժոռնի, Գոմաձոր և Ճոճկան գյուղերը, իսկ Դեբեդ-չայի աջ ափին գրավում են Սադախլոյի թիկունքը առնող թուրքական ձմեռանոցները, մերձակայքի լեռնային բարձունքները[701]: Դեկտեմբերի 19-ի առավոտյան մտան Շուլավեր, և նույն օրը Շուլավերում և հարևան գյուղերում զորակոչային տարիքի տղամարդկանց զորահավաք հայտարարվեց՝ Սադախլոյի վճռական հարձակման համար, և դեկտեմբերի 20-ին հրետանակոծումից հետո հայկական զորամասերը անցան գրոհի, և դրանով իսկ Սա-

[699] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, էջ 120-121:

[700] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/: Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[701] Տե՛ս «Զանգ», Երևան, 29 դեկտեմբերի, 1918 թ., N 86:

դախլոն կտրեցին Թիֆլիսից, հասան Խրամ գետին, չնայած այն բանին, որ մյուս հայկական զորամասերը հարձակվեցին Սադախլոյի վրա, սակայն ընկան զրահագնացքի ուժեղ կրակի տակ և առաջին անգամ հայոց զորամասերը զգալի կորուստներ ունեցան: Այդ նույն օրը գեներալ Ծուլուկիձեն մեկնեց Թիֆլիս ռազմական իրադրության մասին կառավարությանը զեկուցելու համար, արդյունքում զինված ուժերի հրամանատարությունը հանձնարարվեց գեներալ Սումբատաձեին:

Հենց այդ ռազմաքաղաքական իրավիճակում հայկական զորքերը ընդհուպ մոտեցան Խրամ գետին, որը ՀՀ կառավարությունը համարում էր Հայաստանի սահմանագիծ:

Այդ օրերի հաղորդագրությունները էլ ավելի հստակորեն ցույց են տալիս, որ ընդհանուր տագնապալից իրավիճակի մեղմացման հույսերը զուր էին: Վրացական կողմն ակնհայտորեն որոշակի հույսեր կապելով տարածաշրջանում գործող որոշակիորեն խորքային ուժերի հետ, այլ ռազմավարություն էր կիրառում պրակտիկայում: Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի տեղակալ Թումանովի (Թումանյան) 1918 թ. դեկտեմբերի 19-ի արժեքավոր ռազմական բնույթի հաղորդագրությունից (№ 2280) տեղեկանում ենք, որ իրավիճակը այդ օրերին արդեն փոխված էր, Վրաստանի առաջին օրերի տրամադրությունը դարձել էր ռազմաշունչ, և Վրաստանում լայնածավալ զորահավաք էր իրականացվում: Միաժամանակ այդ հաղորդագրությունից պարզ էր դառնում, որ տեղական հայկական շրջանները համառ պահանջ էին ներկայացրել ամեն գնով վերջ դնել կոնֆլիկտին, որ սպառնում էր ընդունել ժողովրդական բնույթ, երբ այն այլևս կանգնեցնել չէր լինի: Տեղեկացվում էր նաև, որ վրացական կառավարության մոտավոր պայմանները արտահայտվել են դեռ դեկտեմբերի 17-ին ՀՀ դիվանագիտական հավատարմատարի հետ ունեցած հանդիպման ժամանակ արտահայտած Գեգեչկորու խոսքերում, որ իրենք կհամաձայնվեն զինադադարին և կոնֆերանսի անհապաղ հրավիրմանը, եթե հայկական զորամասերը ետ քաշվեն մինչև նախապատերազմյան սահմանները՝ մինչև Կամենկա գետը՝ այսինքն նախկին ժամանակավոր սահմանը՝ «թուրքական գիծը», իսկ վրացական զորքերը զբաղեցնեն Խրամ գետի ողջ երկայնքով ընկած տարածքը: Իսկ արդեն հաջորդ օրը՝ դեկտեմբերի 18-ին, Գեգեչկորին պնդեց, որ սահմանակետերը, սահմանապահ

զորքերի տեղը պետք է զբաղեցնեին ժողովրդական գվարդիականները՝ հայերի հետ համահավասար, իսկ երկաթուղագծի պահպանությունը՝ ժողովրդական գվարդիականների կողմից, իսկ Կամենկայի և Խրամի միջև ընկած տարածքը պետք է ազատ լիներ և՛ վրացական, և՛ հայկական զորքերից, սակայն վարչակարգը պետք է լինի վրացական, ընդ որում երկաթուղագիծը պետք է գտնվեր գվարդիայի պետ Ջուղելու գլխավորությամբ գործող վրաց ժողովրդական գվարդիականների կողմից հաստատված ուղեկալների հսկողության տակ, ընդ որում որպես նրանց օգնական կարող էր նշանակվել «թիֆլիսյան հայկական շրջանների» կողմից հավանության արժանացած հայկական ծագման անձնավորություն, իսկ ուղեկալները կազմված պետք լինեին գվարդիականներից՝ կիսով չափով վրացիներից և կիսով չափ՝ հայերից [702]: Ողջ այդ պլանը նախատեսված էր մինչև հայ-վրացական կոնֆերանսի հրավիրումը:

Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը տեղեկացնում էր, որ առաջարկվող նախագիծը նախատեսված է շատ կարճ ժամանակամիջոցի համար՝ մինչև կոնֆերանսի անհապաղ հրավիրումը: Դիվանագիտական հավատարմատարը նաև հայտնում էր, որ միջնորդի դեր կատարող ֆրանսիական զինվորական ծառայության սպա Դյուրուան առաջարկել է, որպեսզի հայկական կառավարությունը հայտարարություն տա այն մասին, որ իր զորքերը ետ է քաշում դեպի հին սահմանը և հայտարարում է, որ դա չի կանխորոշում հարցի վերջնական որոշումը: Դյուրուան ասել էր նաև, որ հայկական կառավարությունը պահանջի կոնֆերանսի անհապաղ հրավիրում, որի հարցը հարկավոր է վճռել մի շաբաթից ոչ ուշ, իսկ տարաձայնության դեպքում՝ դաշնակիցների արբիտրաժի միջոցով: Ըստ այդ նույն տվյալների, Դյուրուան կարծիք էր արտահայտել, որ հայկական կառավարությունը պահանջեր խառը հանձնաժողովի ստեղծում, նպատակ հետամտելով վերհանել գյուղացիների ապստամբության պատճառները հայտնի տարածքներում: Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը խնդրում էր, որ Հայաստանի կառավարությունը հնարավորինս շուտ հայտներ իր պայմանների մասին, գտնելով, որ վերջինիս տեսակետը հնարավոր

[702] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 107:

ելքի մասին մնում է ոչ բավականաչափ պարզ: Վերջնամասում դիվանագիտական հավատարմատարի տեղակալ Թումանովը տեղեկացնում էր, որ դաշնակիցների համար կոնֆլիկտը տհաճ է, ավելացնելով նաև, որ վրացական կառավարությունը դեռևս միջամտություն չի խնդրել[703]:

Այդ ընթացքում վրացական կողմը էլ ավելի սրեց վիճակը: Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատարին ուղղված հեռագրում (20 դեկտեմբերի, 1918 թ.) Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Գեգեչկորին հայտնում էր, որ իրենք իրենց դեմ գործող Հայաստանի Հանրապետության զորքերի հրամանատար Դրոյից ստացել են պաշտոնական հեռագիր, որ ինքը անցել է վրացական սահմանը և սկսել է ռազմական գործողություններ: Ընդունելով, որ նշված պաշտոնական հաղորդագրությունը նշանակում է ռազմական գործողությունների սկիզբ Հայաստանի Հանրապետության կողմից ընդդեմ Վրաստանի Հանրապետության, Վրաստանի Հանրապետությունը ներկա պահից հայտարարում է Հայաստանի և Վրաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների խզման մասին, և ետ է վերադարձնում հուլիսի 22-ի հավատարմագրերը[704]:

Եվ ինչպես վկայում է դեպքերի ժամանակակիցը՝ Ս. Վրացյանը, դեկտեմբերի 18-ին «Սադախլո եկավ և Վրաստանի զինվորական մինիստրը, 1000 թարմ զինվորներ, մի հարյուրյակ ձիավոր, 3 լեռնային մարտկոց և վերջին զրահապատ գնացքը: Զորավար Ծուլուկիձեն պատրաստվում է ուժեղ հակահարձակման»[705]: Եվ ինչպես դարձյալ վկայում են փաստերը, հայկական ռազմական ուժերը զգալի կորուստներ կրելով, և ոչ մի համալրում չստանալով, կանգնած էին հիմնավոր խնդիրների առաջ, չնայած ընդհանուր մարտական բարձր տրամադրվածությունը դեռ պահպանվում էր: Հաղորդակցության ուղիները գտնվում էին անմխիթար վիճակում, ձմռան բարդ պայմաններին միացել էին Շարուրի ճակատից սպառնացող բարդությունները, և Պարսկաստանից ու Նախիջևանից նահանջող թուրքական զորքերի սանձարձակությունները ճանապարհին: Լոռվա հիմնախնդիրը ընկած էր սակավաթիվ, սակայն մարտերում թրծված հայկական զորաջոկատի վրա: Չնայած հոգ-

[703] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 96, թ. 60:
[704] Տե՛ս նույն տեղում, թ. 83:
[705] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 232:

նածությանը և պարենի ու ռազմամթերքի պակասությանը, հայկական բանակը լի էր վճռականությամբ ջախջախելու ուժերով զգալիորեն իրեն գերազանցող, լավ զինված, սակայն ամբարտավան վրաց զորքերին: Դիլիջան-Լոռիի զորամասի պետը՝ Դրոն «որոշեց շրջապատել ու ջարդել Ծուլուկիձեի զորամասը: Գնդ. Տեր-Նիկողոսյանին նա հրամայեց Բոլնիս-Խաչենից մի գումարտակ առաջ քաշել դեպի արևելք՝ երկաթուղու կողմը և ցուցադրական շարժումներով օժանդակել Կորոլկովի զորասյունին, իսկ Կորոլկովին հրամայեց երկու թնդանոթ և 3 վաշտ թողնել Հայրումում (Այրում) և մնացած ուժերով, Բրդաձորի և Գյուլ Բեգիի վրայով, անցնելով Դամիա գյուղը, վրացիների թիկունքը՝ ջարդել նրանց՝ լուրջ ուշադրություն դարձնելով Շուլավերից Օփրե[յ]թ տանող ճանապարհի վրա: Դեկտեմբերի 19-ին փոխգնդապետ Կորոլկովին միացավ միլիցիոն գունդը 350 զինվորներով և 2 գնդացիրներով, որին հրամայվեց գրավել Շուլավերը»[706]:

Սակայն իսկական պատերազմում լինում են նաև անհաջողություններ ու պարտություններ, չնախատեսված իրադարձություններ, ցավալի վրիպումներ, որոնք դժվարություններ էին առաջ բերում:

Մինչև հայկական զորաբանակի գլխավոր ուժերը կարևոր վերախմբավորումներ էին կատարում և պատրաստվում լուրջ ռազմական օպերացիաների, 4-րդ գնդի 6-րդ վաշտը փոխգլխապետ Ֆեյերկովսկու հրամանատարությամբ և առանձին ձիավոր գնդի 2-րդ դիվիզիոնի 2-րդ հարյուրյակը տեղակալ Տեր-Մարտիրոսյանի գլխավորությամբ, դիմում են ինքնագլուխ, չհամաձայնեցված գործողությունների: Արդյունքը լինում է այն, որ վերջիններս սեփական նախաձեռնությամբ դիմելով հարձակման, անցնում են Դեբեդը և գրավում են Սադախլոն: Վրացիները սպիտակ դրոշ են բարձրացնում և անձնատուր լինելու նշան են անում, սակայն այդ միջոցին վրա հասած վրացական զրահապատ գնացքը գնդացրային և թնդանոթային սաստիկ կրակով ստիպում է անձնատուր լինել հայկական 6-րդ վաշտի և 2-րդ հարյուրյակի զինվորներին, որոնցից շատերը անտեղի սպանվում են, իսկ մոտ 30 զինվորներ Ֆեյերկովսկու ու Տեր-Մարտիրոսյանի հետ գերի են առնվում, մի մասն էլ փախուստով փրկվում են, չնայած այդ նույն օրը հայկական զորամասերը գրա-

[706] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 232: Տե՛ս նաև «Զանգ», Երևան, 29 դեկտեմբերի, 1918 թ., N 86:

վում են Սադախլոյից դեպի հյուսիս-արևելք, հինգ վերստի վրա, լեռնալանջին գտնվող Դամիա գյուղը և մի շարք այլ դիրքեր, որին հաջորդեցին այլ քայլեր[707]:

Հայկական հրամանատարությունը ձեռք առավ կտրուկ միջոցներ՝ իրավիճակը շտկելու և իրադրության նկատմամբ մարտավարական վերահսկողությունը չկորցնելու համար: Ձեռնարկվեցին անհրաժեշտ օպերատիվ քայլեր. դեկտեմբերի 20-ին Կուռո Թարխանյանի հարյուրյակը գրավեց հայաշատ Շուլավերը: Այդ կարևոր հայաբնակ ավանի գրավումով վրաց զորքերը ռազմական տեսանկյունից ընկնում են շատ աննպաստ վիճակի մեջ, քանզի ամբողջ լեռնագիծը, որ ձգվում էր Շուլավերի արևմտյան և հյուսիսային կողմով, տարածվում էր երկաթուղագծին զուգահեռ և սկսած Աշաղա-Սա[ե]րալ կայարանից մինչև Սադախլո հնարավոր էր հակառակորդին պահել թնդանոթային կրակի տակ, ինչն էլ հարկադրեց վրացիներին աննկատ նահանջի ուղին բռնել, որն ընդհանուր առմամբ ձախողվում է: Արդեն դեկտեմբերի 22-ին հայկական զորամասերը Այրումի կողմից մոտենում են Սադախլոյին և հայտնվում դրանից մոտ կես վերստ հեռավորության վրա, որին հետևում է վրացական զորամասերի նահանջը դեպի Խրամ, և տեղի ունեցած կռվի հետևանքով գերի են վերցվում 7 սպա և 100 զինվոր[708]:

Սակայն գլխավոր իրադարձությունները ծավալվում էին Սադախլոյի շրջանում: Վրացական բանակը վերջնականապես ջախջախելու մտադրությամբ «Շուլավեր-Սադախլոյի շրջանում գործող վրաց ուժերի մի մասը հեռացնելու նպատակով՝ Դրոն հրամայեց գնդ. Տեր-Նիկողոսյանին, դեկտեմբերի 21-ին 1 գումարտակ ու 2 թնդանոթ թողնել Մեծ Դումանիսում, իսկ մնացած ուժերով շարժվել Արախլուի վրա: Սկսվեց տաք կռիվ: Մերոնք հարձակվում էին անվերջ, վրացիները հուսահատական դիմադրություն էին ցույց տալիս: Գլխ. Մնացականյանի Շուլավերի զորամասը կռվի բռնվեց Թիֆլիսից նոր հասած վրացական թարմ ուժերի հետ: Մերոնք քանդեցին Սադախլո-Մամայ երկաթուղագիծը՝ կտրելով վրաց զրահապատի նահանջի ճանապարհը: Կուռո Թարխան-

[707] Տե՛ս «Զանգ», Երևան, 22 դեկտեմբերի, 1918 թ., N 83:
[708] Տե՛ս նույն տեղում, 29 դեկտեմբերի, 1918 թ. N 86:

յանը հանդուգն հարձակումներ գործելով Աշաղա-Սարայլի ուղղությամբ՝ գրավեց մի թնդանոթ և մի գնդացիր»[709]:

Սակայն կռիվները շատ համառ էին և շարունակվեցին անընդմեջ: «Դեկտեմբերի 22-ին, հակառակ թշնամու հրացանի ու գնդացիրների մրրկահույզ կրակի, Ճոճկանի զորախումբը փոխգլխ. Պետրոսյանի գլխավորությամբ, արհամարհելով գնդակների տեղատարափը, շարժվեց Սադախլոյի վրա և համառ ու երկարատև կռվից հետո գրավեց կայարանն ու գյուղի հարավային մասը, բայց օգնական ուժեր չստանալով՝ վրացիների հակահարձակման ու թևից սպառնացող վտանգի տակ՝ քաշվեց նախկին դիրքերը՝ տալով մոտ 40 զոհ»[710]:

Վրացիները շարունակում էին նորանոր ուժեր կենտրոնացնել Բոլնիս-Խաչենի մոտ:

Այդ ընթացքում Հայաստանի կառավարությունը քնած չէր: Զինվորական նախարարությունը համապատասխան միջոցներ էր ձեռնարկել զորահավաքային խնդիրները լուծելու համար: Հրապարակվեց ՀՀ Զինվորական նախարար գեներալ-մայոր Հախվերդյանի 1918 թ. դեկտեմբերի 23-ի հրամանը (N 196), որը մեջբերում ենք ամբողջությամբ.

«Հրաման.

Համաձայն «Զինվորական դաշտային վարչության օրենքի» 418 հոդվածի՝ Հայաստանում իմ հետևյալ հրամանը անպայման ի կատար ածելու համար.

1) Զինվորականներ ու քաղաքացիներ, հայկական Բորչալվի գավառի հայկական բաժնի բնակիչ մեր հարազատ եղբայրները գտնվելով օտար իշխանության տակ ապստամբել են իրենց կեղեքիչների դեմ ու դիմել Հայաստանի կառավարության օգնությանը: Մեր քաջարի զորքը՝ աչքի չառնելով սառնամանիքն ու կռվի դժվար պայմանները հառաջ շարժվելով՝ ազատել է մեր եղբայրներին ճնշողներից ու ստրկացողներից: Բայց մեր հարազատ իր կյանքն ու առողջությունը իր եղբոր համար զոհող զինվորին օգնություն է հարավոր: Թանկ է րոպեն, նրանից է կախված Բորչալվի մեր եղբայրների ու խիզախ զինվորների կյանքը: Դուք, որ մինչև հիմա խուսափել եք զինվորական ծառայությունից ու

[709] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 233:
[710] Տե՛ս նույն տեղում:

թողել եք Ձեր զորամասերը՝ շտապեցե՛ք մտնելու զորքի շարքը, այդ է պահանջում Ձեզանից հայրենիքն ու ազնիվ քաղաքացու պարտքը.

2) Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության տերիտորիան բաժանվում է ութ շրջանների համապատասխան գավառներով՝ Դիլիջանի (Ղազախի հարավային մասը), Նոր Բայազետի, Երևանի, Սուրմալվի, Էջմիածնի, Ալեքանդրապոլ-Ախալքալաքի, Լոռի-Ղարաքիլիսայի (Բորչալվի հարավային մասը) և Շարուր-Դարալագյազի:

3) Ամեն մի շրջանում նշանակվում է՝ հավաքական կենտրոն (сборные пункты)

1. Երևանում՝ զինվորական պետի վարչատուն (Управление Военного Начальника), 2. Ն. Ախտայում էտապի կոմենդանտի մոտ, 3. Նոր-Բայազետում՝ էտապի կոմենդանտի մոտ, 4. Վաղարշապատում՝ էտապի կոմենդանտի մոտ, 5. Դիլիջանում՝ էտապի կոմենդանտի մոտ: Սրանք բոլորը ենթարկվում են Երևանի զինուրական վարչապետին (Военному Начальнику), 6. Ալեքսանդրապոլում՝ զինուրական պետի վարչատունը, 7. Ղարաքիլիսայում՝ էտապի կոմենդանտի մոտ: Սրանք ենթարկւում են Ալեքսանդրապոլի զինուրական վարչապետին, 8. Սուրմալուի գաւառի համար –Իգդիրում՝ երկրորդ հայկական գնդի շտաբում, 9. Շարուր-Դարալագյազի համար՝ Գայլի Դարպաս (Գայլի Դրունք - Вольчи Ворота), 3-րդ հայկական գնդի շտաբում:

4) Հայաստանում ապրող բոլոր արական սեռի հայերն ու ասորիները 20-25 տարեկան, որոնք չեն գտնվում զինվորական ծառայության մեջ (զորամասերում կամ զինվորական հիմնարկություններում ու վարչատներում) պարտավոր են 3 օրվա ընթացքում, սույն հրամանն արձակելու օրից ներկայանալ համապատասխան հավաքական կենտրոնները (сборные пункты), որտեղից կուղարկվեն զորամասերը կամ էլ կարձակվեն զինվորական ծառայությունից՝ ըստ օրենքի՝ համապատասխան վկայականներով: Հարկ եղած դեպքում սրանից հետո կհայտարարվի նոր զորահավաք 26-32 տարեկան քաղաքացիներին ժողովելու.

5) Ես կարգադրություն էի արել բոլոր նրանց, որոնք չեն գտնվում զորամասերում, կատարեն իրենց պարտքը զինվորական ծառայության, բայց քչերը կատարեցին իրենց պարտքը, այդ պատճառով ներկա հրամանով նորից կոչ եմ անում ու հայտարարում, որ բոլոր նրանք, որոնք ըստ սույն հրամանի 4 կետի ժամանակամիջոցին չեն ներկայանա հա-

վաքական կենտրոնները (сборные пункты) ու չեն ստանա այնտեղից համապատասխան վկայականներ՝ կհամարվեն կռվի մասնակցելու հրամանից խուսափողներ և համաձայն հոդ. 245-ի Հ.Զ-ն № 1869 թ. Գ. Ի. 204-րդ հրամանի և ժամանակավոր կառավարության հրամանի նո. 44 հուլիսի 21-ի 1917 թ. կենթարկվեն մահվան պատժի՝ զրկվելով իր բոլոր ստացվածքի իրավունքից:

6) Սույն հրամանի անխափան ու ճիշտ կատարման պատասխանատվությունը ընկնում է համապատասխան կառավարչական ու հասարակական հիմնարկությունների ու անձանց վրա: Վերջիններս, ինչպես և սույն հրամանը կատարելուց խուսափողներին թաքցնողները ենթարկվում են քրեական հետապնդման, համաձայն ռազմական ժամանակի օրենքների:

ՀՀ Զինվորական նախարար՝ գեներալ-մայոր Հախվերդյան»[711]:

Հայկական հրամանատարությունը կատարելով ուժերի խելամիտ վերախմբավորումներ, դեկտեմբերի 23-ի գիշերը Դրոյի գլխավորությամբ գործող զորամասը ձեռնարկեց հայկական զորքի նոր՝ խիզախ հարձակում, և 4-րդ գնդի 12 վաշտերը, փոխգլխապետ Ասլանյանի հրամանատարությամբ շրջանցելով թշնամու թիկունքը՝ գրավեցին Սադախլոն[712]: Արդյունքում, վրացիներից գերի վերցվեց 35 [այլ տվյալի համաձայն՝ 37 սպա[713]] սպա, մոտ 500 զինվոր, 3 շոգեքարշ մեքենա, հարյուր վագոն և մթերքներ, և այլն[714], չնայած Ս. Վրացյանի մոտ հանդիպում ենք ավելի համեստ տվյալների. ըստ դրանց՝ հայերի ձեռքը գերի ընկան 6 սպա, 126 զինվոր, 2 «Կոլտ»-ի գնդացիր, 200 հրացան, 4 գնդացիր, ավելի քան 100 վագոն պարեն, ռազմամթերք ու փամփուշտ, 3 շոգեքարշ և ուրիշ պաշարեղեն[715]: Մեկ այլ վկայությամբ, որի հեղինակը գեներալ Մ. Սիլիկյանն է, դեկտեմբերի 24-ի առավոտյան հաղորդում էր. «Գիշերը Դրօն ճարպիկ զորաշարժերով Ղարաքիլիսեի փոքրաթիվ զորամասով ջարդուեցին ու ցրուեցին վրացիների գերազանց ուժերը Սա-

[711] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 22, թ. 9: Տե՛ս «Զանգ», Երևան, 29 դեկտեմբերի, 1918 թ., N 86:

[712] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 234:

[713] Տե՛ս «Զանգ», Երևան, 27 դեկտեմբերի, 1918 թ., N 85:

[714] Տե՛ս «Կայծ». Երևան, 26 դեկտեմբերի, 1918 թ., № 15:

[715] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 234:

դախլոյի մոտ, գրավեց երկաթուղու գիծը մինչև Խրամ գետը, փայլուն կերպով իրագործեց իր խնդիրը աջ թևում և տալով չնչին զոհեր՝ գրավեց թնդանոթներ, գնդացիրներ, փամփուշտներ, երեք շոգեմեքենա և մեծ քանակությամբ երկաթուղային ստացվածք ու վագոններ,: Գեներալ Ծուլուկիձեի զորամասը ցրւեց թաթարական գյուղերում՝ ուր և գտնում է իր փրկութիւնը վերջնական գերությունից»[716]:

Անդրադառնալով վրաց-հայկական պատերազմի տարեգրությանը և կարևորագույն ռազմաքաղաքական իրողություններին, հարկ է առաջին հերթին կարևոր տեղ հատկացնել այդ բախման շուլավերյան էջին: Դեկտեմբերի 22-ին և հաջորդող օրերին պատերազմի գլխավոր՝ Շուլավերյան ճակատում հայկական զորքերը զգալի առաջխաղացում ունեցան Թիֆլիսի ուղղությամբ, հասնելով մինչև Խրամ գետը, իսկ այն բանից հետո, որ հաջորդ օրը վրացական զորամասերը գեներալ Ծուլուկիձեի գլխավորությամբ շրջապատումից դուրս գալով, ետ քաշվեցին դեպի Սադախլո, այդ ընթացքում փորձելով ետ մղել հայկական զորքի նոր գրոհները, և դեկտեմբերի 23-ին ժամը 12-ին վրացական աէրոպլանը շրջանց կատարելով, անհաջող կերպով ռումբեր է գցում Ղարաքիլիսայի կայարանում, և կայարանի տարածքի շուրջ[717]: Սակայն անկախ այդ մասնակի էպիզոդից, Բորչալուի գավառի ողջ վիճելի տարածքը, բացառությամբ Եկատերինֆելդ գաղութի, հայտնվեց հայկական վերահսկողության տակ:

Այնուհանդերձ, այդ տարակարծությունը էական չի: Կարևորն այն է, որ հայերը հաղթանակ տարան, և մեր զորքի բարոյական ոգին շատ բարձրացավ: Դրանից բացի, Խրամ գետի վրայի կամուրջը, Շուլավերի ուղղությամբ, մեր զորքերի հսկողության տակ հայտնվեց, տալով ընդամենը կորուստ՝ 150 հոգի՝ սպանված և վիրավոր (ըստ «Կայծ»-ի տվյալների), իսկ ըստ Ս. Վրացյանի և այլ աղբյուրների՝ փոխգլխապետ Ալեքսանդրովը, պորուչիկ Շահնազարյանը, պոդպորուչիկ Ազիզյանը և պրապորշչիկ Բաբալյանը 7 զինվոր սպանված և 11 վիրավոր: Հայկական բանակը տարավ կարևոր և վճռական հաղթանակ. «Դեկտեմբերի 23-ին, մեր զօրքերը, ի պատասխան Ուզունթալայի դէպքերով, յարձակման դիմեցին եւ, դէն շպրտեցին յոխորտացող վրացիներին, մեծամեծ

[716] Տե՛ս «Զանգ», Երևան, 27 դեկտեմբերի, 1918 թ., N 85:
[717] Տե՛ս նույն տեղում:

կորուստներ պատճառելով նրանց: Տասն օրուայ ընթացքում ամբողջ Լօռին հայկական բանակի ձեռքին էր: Վրացական զօրքը ջախջախուեց, թողնելով 2000-ից աւելի գերիներ, որոնցից 100-ի չափ սպաներ, մեծ թւով վագոններ, շոգեմեքենաներ, ռազմամթերք եւ երեք զրահապատ գնացք», - գրում է Արտ. Բաբալյանը[718]:

Ռազմական գործողությունները շարունակվում էին, վրացիները տենդագին զորահավաք էին անցկացնում, մոբիլիզացնելով զենքի ընդունակ ողջ տղամարդ բնակչությանը, գեներալ Գ. Ծուլուկիձեին փոխարինում է նոր հրամանատար Գ. Ի. Մազնիևը [Մազնիաշվիլին], որն առանձնապես էական շտկումներ չկարողացավ մտցնել ռազմական գործողությունների ընդհանուր խճանկարում:

Ձեռք գցելով Շուլավերը և Թիֆլիսի գավառում գտնվող Բելիյ-Կլյուչ գյուղաքաղաքը, հայկական զինված ուժերը հայտնվեցին Վրաստանի մայրաքաղաքից գրեթե 50 կմ հեռավորության վրա: Դեկտեմբերի 24-ին տեղի ունեցան առանձին բախումներ, որի արդյունքում Մազնիևի զորաջոկատները շարունակեցին նահանջել, բայց շուտով 1000 հոգի համալրում ստանալով, փորձեցին շտկել խարխլված վիճակը ռազմաճակատում, և արդեն ասել ենք, նույնիսկ առաջին անգամ վրացական ինքնաթիռները ռմբակոծեցին հայկական դիրքերը Շուլավերի մոտ: Իսկ դեկտեմբերի 24-ին Վրաստանի Ռազմական նախարար Գ. Գեորգաձեն Բորչալուի ճակատում հայկական զորքերի գլխավոր հրամանատար Ղազախ-Բորչալուի զորաջոկատի պետ Դրոյից ստացավ հեռագիր և վրացական Գլխավոր հրամանատարությանը ուղարկեց ուլտիմատումի տեքստը, որում Դրոն պահանջում էր Ախալքալաքի գավառը անհապաղ հանձնել Հայաստանին: Ուլտիմատումի մերժման պարագայում Դրոն սպառնում էր ռազմական գործողությունները շարունակել և դրանք տեղափոխել Խրամ գետից հյուսիս, որը հավասարազոր էր Վրաստանի մայրաքաղաք՝ Թիֆլիսը գրավելուն. «Վրաստանի Հանրապետության զորամասերի կողմից Բորչալուի գավառի մի մասի և ողջ Ախալքալաքի գավառի գրավումը, որ գերակշռող մեծամասնությամբ բնակեցված են հայերով, վրացական վարչակարգի սանձարձակ ուլտի կամայականություններով այդ շրջաններում և վրացական զոր-

[718] Տե՛ս Բաբալեան Արտ., Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1957, էջ 26:

քերի անպատասխանատու վարքը, որոնք առաջ բերեցին բնակչության արդարացի վրդովմունքը:

Այժմ զենքի ուժով Վրաստանի հանրապետության զորամասերը շպրտված են Խրամ գետից այն կողմ, և Բորչալուի գավառը, որ բնակեցված է հայերով՝ ազատագրված է: Առաջարկում եմ Ախալքալաքի գավառի տարածքը անհապաղ ազատել Վրաստանի հանրապետության զորամասերից, եթե հետագա արյունահեղությունը ձեզ ցանկալի չէ, հակառակ դեպքում ես հարկադրված եմ շարունակել ռազմական գործողությունները, զարգացնելով դրանք Խրամ գետի գծից դեպի հյուսիս»[719]:

Եվ ստեղծված իրավիճակում համաձայն Մազնիաշվիլու պլանի, վրացիները պետք է շեղեին հայերի հիմնական ուժերը թիֆլիսյան ուղղությունից, որն այդ պահին առավել վտանգավորն էր: Թիֆլիս տանող երկաթգծի ողջ երկայնքով հայկական հարվածի պարագայում վրացական կողմը չէր կարող պաշտպանությունը իրականացնել և գիծը պահել, քանզի մինչև լրացուցիչ համալրող ուժեր ստանալը վրացիները իրենց տրամադրության տակ չունեին բավականաչափ ուժեր: Այդ իսկ պատճառով Խրամ գետի աջ ափն անցած վրացական զրամասերին հրաման էր տրվել իրականացնել շեղիչ հարված երկաթգծից դեպի արևմուտք՝ Շուլավերի ուղղությամբ: Եթե հայերը, ըստ վրացական աղբյուրների, չնայած վրացական մանևրումին, այդուհանդերձ շարունակեին հարձակումը Թիֆլիսի վրա, ապա ողջ վրացական բանակը կհայտնվեր ծայրահեղ ծանր վիճակում: Ստեղծված իրավիճակում հայկական հրամանատարությունը ըստ այդ աղբյուրների ոչ հիմնավոր պնդման, թույլ տվեց լուրջ սխալ և սկսեց իբր թե գործել այնպես, ինչպես հաշվարկել և նախատեսել էր Մազնիաշվիլին, և գործնականում իր տրամադրության տակ առկա ողջ ուժերը նետեց Շուլավերի ուղղությամբ և դրա շուրջ, իսկ գնդապետ Կորոլկովն էլ զորակոչ հայտարարեց տեղական հայ բնակչության մեջ: Այդ ընթացքում դեպի Սանդարի կայարան սկսեցին մոտենալ էշելոններ համալրումներով վրացական բանակի համար Կախեթիայից [Կախեթ], իսկ այնուհետև՝ արդեն Արևմտյան Վրաստանից եկած գումարտակներով, (ընդհանուր առմամբ՝ մոտ հազար): Ըստ վրացական պնդման, Թիֆլիսին սպառնացող վտանգը

[719] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, док. № 254, стр. 480-481, Տե՛ս նաև Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 131:

դրանով իսկ վերացավ, և վրացական հրամանատարությունը ձեռնամուխ եղավ հակահարձակման պլանավորմանը, որի հիմնական տարրը պետք է դառնար Շուլավերի վերադարձման գործողությունը և այնտեղ գտնվող հայկական բանակի խմբավորման ոչնչացումը[720]: Եվ սակայն, ի հերքումն վրացական այս ստահոդ պնդումների, հայկական սրընթաց հարձակումն իր բարձրակետին հասավ դեկտեմբերի 25-ին, երբ Թիֆլիսում գտնվող դաշնակիցների ներկայացուցիչները պահանջեցին դադարեցնել անիմաստ և արյունոտ պատերազմը[721]:

Ինչպես արդեն գիտենք, Վրաստանի կառավարությունը չընդունեց ուլտիմատումը, Շուլավերի ճակատում գործող զորքերի հրամանատարի նոր նշանակում կատարելով՝ Ծուլուկիձեի փոխարեն նշանակելով գեներալ Գ. Մազնիևին [Մազնիաշվիլի], իսկ նրա տեղակալ՝ գեներալ Դ. Սումբատաշվիլուն, շտաբի պետ՝ նախկինում վրացական զորքերի գլխավոր հրամանատար Գ. Ի. Կվինիտաձեին:

Այդ նշանակումներով Վրաստանի կառավարությունը փորձում էր շտկել իրավիճակը ռազմաճակատում, նպատակ հետապնդելով անցնել հարձակողական գործողությունների: Այդ ամենին զուգահեռ երկրում զորահավաք հայտարարվեց, որի արդյունքում ձևավորվեցին նոր զորամասեր, գվարդիա և ժողովրդական աշխարհազոր:

Պատերազմական գործողությունները սաստկացան Շուլավերի շրջանում: Շուլավերյան ռազմաճակատում հայկական զորքն ուներ զգալի գերազանցություն և նախաձեռությունը գտնվում էր հայկական կողմում, իսկ դա հունից գցում էր վրացական կողմին, որը ձգտում էր ռևանշի՝ իրադարձությունների բարենպաստ դասավորման դեպքում խափանելու համար հայկական զորքի ռազմավարական պլանը՝ գրավելու Թիֆլիսը:

Դեկտեմբերի 24-ի առավոտյան, ըստ հենց իր՝ գեներալ Գ. Մազնիաշվիլու տվյալների, իբր թե իրենց հաջողվել է զրահագնացքի կրակային աջակցությամբ անցնել Խրամ գետը և հանկարծակի գրավել Աշաղի-Սերալ կայարանը, իսկ այնուհետև՝ վրաց հետևակը մտավ Փոքր Շուլավեր գյուղը և գրավեց Իմիր գյուղի մոտի երկաթուղային կա-

[720] Տե՛ս Армяно-Грузинская война (1918)-Адамалла www. adamalla.com» Библиотека› Кавказ:

[721] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 234-235:

մուրջը[722]: Սակայն վրացական կողմը դա առավելագույնն էր, որ կարողացավ անել, իսկ ընդհանուր առմամբ, նա ի վիճակի չեղավ արժանի հակահարված տալ հայկական զորքին, առավել ևս, մարտական ոգին այնքան էլ բարձր չէր, իսկ վրացական գովելի գվարդիան տառապում էր անկարգապահությամբ և բազմաթիվ խոցելի կողմեր ուներ:

Հետաքրքիր է արձանագրել, որ Է. Անդերսենը և Գ. Էգգեն, համադրելով փաստերը, եկել են այն եզրակացության, եթե հայերը, չնայած վրացական մանևրումներին, այդուհանդերձ շարունակեին հարձակումը Թիֆլիսի վրա, ապա ողջ վրացական բանակը կհայտնվեր ծայրահեղ ծանր վիճակում[723]:

Արդեն ասել ենք, որ և՛ հայկական կողմը, և՛ վրացական կողմը բնակչության շրջանում զորահավաք իրականացրին, վրացիներին հաջողվեց Կախեթիայի և Արևմտյան Վրաստանից հավաքված զինապարտների հաշվին մոտ 1000 սվին լրացուցիչ զորք հավաքել, առաջին անգամ վրացական ինքնաթիռները ռմբակոծեցին հայկական դիրքերը Շուլավերի մոտ:

Վրացիները դեկտեմբերի 24-ին համալրվեցին Թիֆլիսից նոր եկած մոտ 1500 մարդով, ուժեղ հրետանու ընկերակցությամբ, և դիմեցին հարձակման Շուլավերի խճուղու շրջանում: Վրացական կողմն օգտագործում էր նաև սավառնակներ, որոնք ռմբակոծում էին հայկական դիրքերը: Այդ կռիվներն ու հակագրոհները շարունակվեցին մինչև դեկտեմբերի 28-ը, և օրեցօր նոսրացող հայկական բանակը հարկադրված էր շարունակ համալրվող վրացական բանակի դեմ մարտնչելու նորանոր հնարքներ որոնել և կիրառել: Դրա արդյունքն այն եղավ, որ դեկտեմբերի 22-ի վիճակով հայերը գերեցին վրացիներից 825 զինվոր, 3 բժիշկ, 48 սպա, վերցրեցին 17 թնդանոթ, 39 գնդացիր, 600 հրացան, 12 շոգեմեքե-

[722] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

[723] Տե՛ս նույն տեղում: :

նա, 250 վագոն, 2 զրահագնացք, 49 հեռախոսային ապարատ և 48 արկղ ռումբ[724]:

Հայկական հարձակումն իր ապշեցուցիչ բարձրակետին էր հասել դեկտեմբերի 25-ին, այն օրը, երբ դաշնակիցների ներկայացուցիչները Թիֆլիսում պահանջեցին դադարեցնել անիմաստ պատերազմը[725]:

Ի պատասխան Գ. Գեորգաձեն Գ. Մազնիաշվիլուց պահանջում է հայկական ուժերի անհապաղ ջախջախում: Մազնիաշվիլին կազմավորում է երեք գլխավոր ուղղություններ. Շուլավերյան, որը գլխավորեց գեներալ Գ. Սումբատաշվիլին, Արևմտյան ճակատը կամ Եկատերինֆելդի ուղղությունը վստահվեց գեներալ Վ. Իմնաձեին, և Արևելյան կամ Սադախլոյի ուղղությունը գլխավորեց գեներալ Ծուլուկիձեն: Վրացական զորքերի հարձակումը նշանակվեց դեկտեմբերի 25-ի գիշերվա ժամը 12-ին:

Վրացական կողմը ստեղծված իրավիճակից ելքեր որոնելով, մի քանի երկրորդական մանևրումներ կատարեց, դիրքեր գրավելով ռազմավարական առումով պակաս կարևոր Շուլավերից արևմուտք գտնվող մահմեդական Սարաչլո գյուղի մոտ, և անգամ այն բանից հետո երբ դրանից առաջ Շուլավերի մոտ առաջին անգամ Կովկասում, երկու վրացական ինքնաթիռները ռմբակոծեցին հայկական դիրքերը, փորձելով ցայտնոտային վիճակ ստեղծել հայկական զորքում, սակայն արդյունքում վրացիները չկարողացան ջարդել հայկական զորքի ոգին և բեկում մտցնել ռազմաքաղաքական իրադարձությունների ընթացքում:

Իսկ դա իրեն երկար սպասեցնել չէր տալու: Մինչ այդ իրադարձությունները գնում էին իրենց ընթացքով, իսկ նորօրյա վրաց պատմաբանները հենց այդ իրողություններն են կեղծում, և վրացիների համար պատերազմի փոքր նշանակության դեպքերը ուռճացնում: Վրացական հրամանատարության կողմից ծրագրված դեկտեմբերի 26-ի շուլավերյան հակագրոհը չկայացավ, այն ուղղակի ձախողվեց գվարդիական զինվորական ստորաբաժանման անկարգապահության և իրենց զբա-

[724] Տե՛ս «Կայծ», Երևան, 29 դեկտեմբերի, № 16, 1918 թ.; Տես նաև ՀԱԱ, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 16, թ. 373:

[725] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, էջ 121:

ղեցրած դիքերը լքելու պատճառով, իսկ հրամանատարը՝ գեներալ Ճխետիանին գործնականում չկարողացավ զսպել գվարդիականներին, և անգամ խնդրեց իրեն ազատել զբաղեցրած պաշտոնից[726]:

Իսկ դեկտեմբերի 26-ի վիճակով հայկական զորքերի կողմից գերի են վերցվել 1000 մարդ, որոնցից 40 սպա, բռնագրավվել է 300 վագոն, 15 շոգեքարշ, 39 գնդացիր, 3 զրահագնացք, դրանցից 2-ը՝ առանց որևիցե վնասվածքի, իսկ 1-ը՝ անմիջապես օգտագործվել է ռազմական գործողություններում: Հայկական զորքերի կողմից վերցվել է տարբեր տեսակի ռազմական հանդերձանք, հեռախոսային, երկաթուղային և այլ ունեցվածք: Երկու կողմերն էլ տվել են զոհեր, հայերը՝ համեմատաբար փոքր քանակով, նրանց մի մասին թե՛ վրացական, թե՛ հայկական կողմից կարելի էր փրկել, եթե բժիշկներ և ֆելդշերներ լինեին, նրանք անհրաժեշտ քանակությամբ չկային ռազմաճակատում[727]: Իսկ «Ձանգի» 1918 թ. դեկտեմբերի 29-ի տվյալներով քիչ այլ պատկեր է ստացվում: Վրացիների կորուստները տվյալ պահին հետևյալ պատկերն են ներկայացնում. գերի են տվել 80 սպա և 900 զինվոր, սպանվածների և վիրավորների թիվը 700-ից անցել էր, մարտի դաշտը լքելով, վրացիք որպես ավար թողել են 12 թնդանոթ, այդ թվում երկու հաուբից, երկու դաշտային թնդանոթ, 38 գնդացիր, 4 շոգեքարշ, երեք զրահապատ գնացք, 190 վագոն, 200 ձի, 34 արկղ ռումբ, 250 հրացան, փամփուշտ, հագուստեղեն, և ուտեստեղենի պաշարներ[728]:

Հարկ է ասել, որ որոշ տվյալներում հակասություն կա, չնայած կարևորը դա չի, այլ իրավիճակների ընդհանուր արդյունքները: Այսպես, նշվում է, որ Սադախլո կայարանի և Շուլավեր բնակավայրի մոտի մարտերում հայկական զորքերի կողմից (դեկտեմբերի 25-ի վիճակով) գերվել են 3000 վրացի, շատ սպաներ և 2 գեներալ, 40 գնդացիր և այլն[729]:

---

[726] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

[727] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 373:

[728] Տե՛ս «Ձանգ», Երևան, 29 դեկտեմբերի, 1918 թ., N 86:

[729] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 96, թ. 91:

Դեկտեմբերի 27-ին այս անգամ գեներալ Մազնիաշվիլու գլխավորությամբ վրացական զորքը փորձեց մի հարվածով գրավել Շուլավերը և ինքն անձամբ զինվորներին գրոհի տարավ, մասնավորապես գնդապետ Կորոլկովի դեմ և ամբողջ ճակատի կտրվածքով, սակայն այդ գրոհն էլ ետ շպրտվեց հայկական զորքի կողմից[730]: Ստեղծված իրավիճակում իրավիճակը շտկելու փորձեր կատարելով՝ վրացական հրամանատարությունը անկարգապահ գվարդիականներին փոխարինեց կանոնավոր զորքի զինվորներով: Իբր այնքան ուժեղ էին իրենց զգում և վստահ վրաց զորքի մարտական ունակությունների մեջ, որ վրացական իշխանությունները և հրամանատարությունը, վրաց հեղինակների կողմից բերվող փաստերի համաձայն, որոնք ոչնչով լրջորեն հիմնավոր հիմք չունեին, որոշեց հայերին դաս տալու և ռազմական իրադրության մեջ վերջնական բեկում մտցնելու համար հապճեպ ձեռնարկված կազմակերպական-ռազմական բնույթի մանևրումների և սպայական-հրամանատարական կազմում կադրային փոփոխությունների միջոցով այս անգամ միանգամից երկու ճակատում՝ Շուլավեր-Սադախլո ուղղություններում վճռական հակահարձակման անցնել: Սակայն ի հեճուկս վրացական կողմի, նրանց ռազմավարական սպասելիքները ամենևին էլ չարդարացան, և ինչպես նշում են Է. Անդերսենը և Գ. Էգգեն, վկայակոչելով վրացական կողմին, այդ նույն ժամանակ հայկական զորքերը, որոնք իբր մարտական գործողությունների գոտի էին նետվել Բաքվից Շուլավերի ուղղությամբ՝ ուժեղացվեցին հրաձգային գնդով[731], ինչը վճռորոշ դեր խաղաց մարտական գործողությունների ելքի վճռման խնդրում հօգուտ հայկական կողմի:

Այստեղ նկատվում է որոշակի հակասություն փաստերի մեկնության և արժևորման գործում, սակայն կարևոր է ընդգծել մի այլ հանգամանքի, որը վկայում է հայ զինվորի և սպայի բարձր բարոյական հատկությունների, հոգու վեհության մասին: Հայաստանում գտնվող օտար-

[730] Տե՛ս «Ջանգ», Երևան, 1 հունվարի, 1918 թ., N 1:

[731] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

երկրյա քաղաքացիները վկայում էին, որ գերված վրացիները Հայաստանում օգտվում էին մեծ ազատությունից և լավ էին պահվում, չնայած այն հանգամանքին, որ հայ ռազմագերիները Վրաստանում ուղարկվում էին սևագործ աշխատանքի Քութաիսի նահանգի մարգանեցի ձեռնարկությունները և ենթարկվում ամենազանազան զրկանքների, սովահարության և վիրավորանքների: Ի դեպ, պետք է նկատի ունենալ այն կարևոր հանգամանքը, որ հենց մարգանեցի այդ հանքերի նկատմամբ որոշակի հետաքրքրություն ունեին ֆրանսիացիները: Դրանից բացի, նշվում էր, որ հայկական զորքերին խիստ հրաման էր տրված ռազմական գործողությունների ընթացքում խնայել մուսուլմանական գյուղերը, որը կիրարկվեց ամենայն լրջությամբ: Հարկ է ասել, որ այն ժամանակ, երբ Շուլավերի և Սադախլոյի բնակչությունը որոշակի նկատառումներով հայերի կողմից դատարկվել էին՝ զբաղեցվեցին վրացիների կողմից, որոնցում իշխանությունների կողմից զանազան բռնարարքներ կիրառվեցին բնակչության նկատմամբ՝ անխուսափելիորեն ուղեկցվելով կողոպուտներով: Շուլավերը ենթարկվեց կողոպուտի, վրաց զինվորները կանանց բռնաբարություններով լիովին վարկաբեկեցին իրենց, գյուղի վրա դրվեց 1 մլն ռուբլու ռազմատուգանք, և մեծ քանակությամբ պարենամթերք պահանջվեց[732]:

Վրաստանի զինվորական հրամանատարությանը ուղղված հեռագրում Ղազախ-Բորչալուի ջոկատի պետը շեշտում էր, որ գերակշռող մեծամասնությամբ հայերով բնակեցված Բորչալուի գավառի մի մասի և Ախալքալաքի գավառի գրավումը Վրաստանի Հանրապետության զորամասերի կողմից և վրացական վարչակարգի անպատասխանատու և անթույլատրելի վարքագիծը առաջացրել են բնակչության արդարացի բողոքը: Այդ իսկ պատճառով, նշվում էր հեռագրում, այժմ զենքի ուժով Վրաստանի Հանրապետության զորամասերը շպրտված են Խրամ գետից այն կողմ, և Բորչալուի գավառի տարածքը, որ բնակեցված է եղել հայերով, ազատագրվել է: Հեռագրում հայկական հրամանատարությունը պահանջում էր անհապաղ վրացական զորքերից մաքրել Ախալքալաքի գավառի տարածքը, եթե հետագա արյունահեղությունը ձեռնտու

[732] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 96, թ. 91:

չէ վրացական կողմին, հակառակ դեպքում՝ ռազմական գործողությունները կշարունակվեն, և կզարգացվեն Խրամ գետից դեպի հյուսիս[733]:

Սակայն թե՛ հայկական, և թե՛ վրացական կողմը այդ հակամարտությունում «միայնակ չէին»: Պատերազմի այդ թոհ ու բոհի օրերին դաշնակիցները Անդրկովկասում ամրապնդվելու իրենց գեոպոլիտիկ նկատառումները և հետաքրքրությունն ունեին, և փորձում էին փոփոխություններ մտցնել թե՛ Հայաստանի և թե՛ Վրաստանի իշխանությունների քաղաքական գործելակերպում: Հայտնի է, օրինակ, որ ֆրանսիական կապիտալը մենշևիկյան Վրաստանի մետալուրգիական արդյունաբերությունում ուներ շահեր, որոնք ներկայացվում էին ակցիոներական «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերության» միջոցով: Սակայն ընկերության վիճակը վատթարացել էր՝ կապված այն բանի հետ, որ այդ ձեռնարկությունները գտնվում էին Բորչալուի գավառում, որը դարձել էր հակամարտության, սահմանավեճի օբյեկտ: Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրությանը 1918 թ. դեկտեմբերին ուղարկված նոտաներից մեկում Թիֆլիսում գտնվող ֆրանսիական հյուպատոս Դյուրուան պահանջում էր վրացական զորամասերի կողմից ֆրանսիական ֆիրմաներին հասցված վնասների փոխհատուցում: Այնուհետև Դյուրուան հիշեցնում էր այն մասին, որ «օտարերկրյա կապիտալի ձեռնարկությունը չպետք է տուժի քաղաքական կոնֆլիկտներից, որ ծնվում են այն տարածքում, ուր դրանք գտնվում են»: Ֆրանսիական հյուպատոսը պահանջում էր «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերությանը» հատուցել վնասը[734]: Հարկ է ասել նաև, որ ըստ երևույթին Անդրկովկասը Ռուսաստանից անջատվելուց հետո որոշ ոչ պակաս կարևոր փոփոխություններ էին տեղի ունեցել այդ ֆրանսիական ֆիրմայի ստատուսում: Այսպես, եթե 1899 թ. «պայմանները» արգելում էին այդ ընկերությանը զբաղվել ոսկու արդյունահանմամբ, ապա 1919 թ. Ալավերդու գործարանի արտադրանքի ցուցակում հայտնվում են ոսկի և արծաթ, որը ֆրանսիական այդ ընկերության հետաքրքրության ոլորտում էր: Այդ մետաղները ֆրանսիական ֆիրման ստանում էր Հայաստանի տարածքում ձեռքբերված հանքաքա-

[733] Տե՛ս նույն տեղում, թ. 44:

[734] Տե՛ս Чохели А. И., Политика Франции в отношении Грузии в 1917-1921 годах, стр. 58, 59:

րից: Ավելին, մենշևիկյան կառավարությունը պայմանագիր ուներ այդ ընկերության հետ, ըստ որի Ալավերդու գործարանը նրան էր մատակարարում արտադրվող թանկարժեք մետաղների զգալի մասը: Հետևաբար, ակնհայտ էր ֆրանսիական տնտեսական-քաղաքական հետաքրքրությունը տարածաշրջանային իրադարձությունների, և այդ թվում հայ-վրացական սահմանավեճի նկատմամբ: Ֆրանսիացիներից ետ չէին մնում անգլիացիները, որոնք ըստ էության ավելի ակտիվ գտնվեցին, և ձեռնամուխ եղան Անդրկովկասի քաղաքական օկուպացմանը[735]: Բաքվի գրավումից հետո նրանք ձեռնամուխ եղան զորքերի տեղափոխմանը Վրաստան: Երկու ամսվա ընթացքում (նոյեմբեր-դեկտեմբեր) հետախուզական բնույթի անգլիական միսիաներ են ժամանում Թիֆլիս և Բաթումի: Այնուհետև անգլիական նավերը խարիսխ են գցում Վրաստանի նավահանգիստներում: Վերջապես, հմտորեն օգտվելով վրաց-հայկական սահմանային կոնֆլիկտից (վրաց հեղինակ Ա. Չոխելին գտնում է, որ դրա սանձազերծման մեջ մեղավոր են անգլիացիները), և երկու հանրապետությունների միջև ռազմական գործողությունների սկսվելուց քիչ անց, 1918 թ. դեկտեմբերի 21-ին անգլիացիները անաղմուկ իրենց զորքերը մտցրին Վրաստան և զբաղեցրին երկրի կարևորագույն ստրատեգիական կետերը, ինչը էապես նպաստեց նրանց «վրացամոլությանը» և կրավորականությանը Հայաստանի նկատմամբ: 1918 թվականի դեկտեմբերի 22-ին անգլիացիների 15 հազարանոց զինվորական միավորումը ափ իջավ Բաթումիում, իսկ դեկտեմբերի 25-ին անգլիական գունդը արդեն Թիֆլիսում էր գտնվում[736], չնայած Ժորդանիայի կառավարությունը առանձնապես ոգևորված չէր դաշնակիցների ժամանմամբ, ավելին՝ նույնիսկ ընդդիմանում էր Սալոնիկից Սև ծովով ժամանող գեներալ Ֆորեստյեր-Ուոքերի զորաբաժնի գալստյանը, որը սակայն դրանից հետո փոխարինվեց հակառակ պատկերով՝ Ժորդանիայի դաշնակիցների նկատմամբ ստորաքարշ ընկերակցման ձգտման քայլերով: Այդ ընթացքում վրացական զորքերն արդեն ձգված էին դեպի վրացական սահմա-

[735] Տե՛ս Նասիպեան Ագապի, Բրիտանիա և Հայկական հարցը. 1915-1923, Պէյրութ, Հրատարակութիւն Հ.Բ.Ը. Միութեան Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադրամի, 1994, էջ 109-111, 164-170, 201-211, 218-220, 229-241:

[736] Տե՛ս Чохели А. И., Политика Франции в отношении Грузии в 1917-1921 годах, стр. 112:

նը, իսկ վրացիներն ամենևին էլ չխոչընդոտեցին անգլիացիների մուտքը, չնայած Ա. Չոխելին հակառակն է պնդում: Իսկ դեկտեմբերի վերջին արդեն 25 հազար անգլիական զորք էր կուտակվել Վրաստանում (մի այլ աղբյուրի համաձայն՝ մոտ 30 հազար զորք[737], իսկ ամբողջ Անդրկովկասում դրանց թիվը հասնում էր 60 հազարի), որը ինչպես կյանքը ցույց տվեց, այդ վերջին հանգամանքը հայերի օգտին չդասավորվեց, և բացասական դեր խաղաց հայ-վրացական հակամարտությունում: Վրաստանում անգլիացիները զբաղեցրին Թիֆլիսը, Քութաիսը, Բաթումին, Սուխումին, Փոթին, Քոբուլեթին, Սամտրեդիան, Խաշուրին, Բորժոմին, Նաթանեբին, Մցխեթը, Դուշեթը, Կազբեկը և, իհարկե, Բորչալուն[738]: Անգլիացիները Վրաստանի, և այդ թվում Վրաստանին հարող հայկական տարածքների օկուպացիայի ժամանակաշրջանում ձեռքերը ծալած չնստեցին, նրանք չէին եկել զուտ խաղաղասիրական լոզունգներով և նպատակներով: Ինչպես պնդում է վրաց հեղինակ Վ. Ի. Ադամիան, օկուպացիայի ընթացքում անգլիացիների կողմից Վրաստանից գլխավորապես դուրս բերվեցին մրգեր, ծխախոտ, անտառանյութ, թեյ և այլ արժեքներ: Օկուպացիայի ողջ ընթացքում Վրաստանից դուրս բերվեց 26 մլն փութ մարգանեց (Ադրբեջանից՝ 30 մլն փութ նավթ)[739]:

Հենց այդ տնտեսական շահերն էլ պայմանավորեցին որոշակի քաղաքականություն Անդրկովկասում, որի արդյունքը եղան անհաշտելի ազգամիջյան լարվածությունը և դրա անխուսափելի ուղեկից ռազմական առճակատումները անդրկովկասյան ժողովուրդների միջև: Ըստ երևույթին, որոշակի ճշմարտություն կա վրաց հեղինակ Վ. Ի. Ադամիայի խոսքերում, երբ գրում է, որ մենշևիկյան Վրաստանի և նրա նկատմամբ հակառակորդ ուժերի միջև կոնֆլիկտները, որոնք տեղի էին ունենում ինտերվենտների «պրովոկացիոն» մասնակցությամբ, որպես օրինակ, ավարտվում էին նրանով, որ գործի մեջ որպես «միջնորդներ» մասնակցում էին անգլիական ինտերվենտները, որոնք պատերազմող ուժերին պարտադրում էին առհասարակ «կոնֆլիկտի» և մասնավորապես ռազմական բախման կարգավորման իրենց պայմանները: Ընդ

[737] Տե՛ս Великая Октябрьская Социалистическая революция. Энциклопедия. стр. 192:

[738] Տե՛ս Чохели А. И., Политика Франции в отношении Грузии в 1917-1921 годах, стр. 112-113: Տե՛ս Адамия В. И., Из истории английской интервенции в Грузии, стр. 64:

[739] Տե՛ս Адамия В. И., Из истории английской интервенции в Грузии, стр. 64:

որում, ընդգծում է Վ. Ի. Ադամիան, և դրա մեջ որոշակի իմաստ կա, անգլիացիների կողմից թելադրված պայմանները երբեք հաշվի չէին առնում կողմերի իրական շահերը, չէին հանգեցնում նրանց հաշտեցմանը, և կողմերի միջև հարաբերությունները մնում էին լարված, և «կարգավորումը» երբեմն ավարտվում էր պատերազմող կողմերի միջև այսպես կոչված «չեզոք զոնայի» առաջացմամբ, որը սովորաբար զբաղեցնում էին անգլիական օկուպացիոն զորքերը, վերջին հաշվով տարածաշրջանի ժողովուրդներին պահելով մշտական լարվածության և հսկողության տակ[740]:

Վրաստանում գտնվող դաշնակիցների զինվորական-քաղաքական և դիվանագիտական միսիաները խոսքով կողմնակից լինելով կոնֆլիկտային իրավիճակների մարմանը (ինչպես դա կատարվեց և կատարվում է 90-ական թվականներին-21-րդ դարի մատույցներում- Վ. Վ.), գործնականում երբեմն պարզապես մի ազգին մյուսի դեմ էին թունավորում: Այսպես, ինչպես վկայում է Վ. Ի. Ադամիան իր գրքում, անգլիական միսիայի ղեկավար Վեբստերը 1918 թ. դեկտեմբերին (1918 թ. դեկտեմբերի 6-ին առաջին անգամ անգլիական միսիան Վեբստերի գլխավորությամբ ժամանեց Բաթումի, որը Կովկասում բրիտանական զորքերի գլխավոր հրամանատար Թոմսոնի ներկայացուցիչն էր) բազմիցս ներշնչում էր մենշևիկյան կառավարության ներկայացուցիչներին հայերի դեմ պայքարելու անհրաժեշտության մասին: Մասնավորապես, նա խորհուրդ էր տալիս հայերին վռնդել Վրաստանից և դա պատճառաբանում ու փաստարկում էր նրանով, որ հայկական բուրժուազիան Վրաստանում իբր թե ձգտում է իր ձեռքը վերցնել երկրի ողջ տնտեսությունը[741]: Այդ հանգամանքը լավ է նկատել ամերիկյան հեղինակ Ստ. Ջոնսը, որը հայերի նկատմամբ վրացիների ոտնձգությունների գլխավոր պատճառներից մեկը տեսնում էր նրանում, որ հայերը Վրաստանում «հսկում էին տնտեսության մեծ մասին», ինչը մշտական տագնապի մեջ էր պահում մենշևիկյան Վրաստանի ղեկավարներին[742]:

---

[740] Տե՛ս там же, стр. 73:

[741] Տե՛ս там же, стр. 73-74:

[742] Տե՛ս Jones Stephen F., Georgian-Armenian Relations in 1918-20 and 1991-94: A comparison, «Armenian review». vol. 46, no 1-4 (181-184), pp. 57-77:

Այդ կապակցությամբ Բաթումիում մենշևիկյան Վրաստանի կառավարության ներկայացուցիչ Դ. Թոփուրիձեն, կառավարությանը տեղյակ պահելով Վեբստերի հետ իր զրույցի մասին, գրում էր. «նա նրանց դերը (խոսքը գնում է հայերի մասին - Վ. Վ.) համեմատում է հրեաների դերի հետ և ձգտում է ինձ ներշնչել, որ հատկապես վրացիները պետք է զգուշանան հայերի տնտեսական տիրապետությունից, որոնք ցանկալի են համարում, ըստ իր կարծիքի, վրացիներին լիովին վռնդել Թիֆլիսից և նրանց իրենց ենթարկել: Նա գալիս է այն եզրակացության, որ մենք չպետք է օգտվենք հայկական կապիտալներից, որ մեզ համար անհամեմատ շահավետ են անգլիական կապիտալները: Ինչպես պարզ է դառնում, հայերի նկատմամբ անգլիացիները լավ չեն տրամադրված, քանի որ հայկական կապիտալում նրանք տեսնում են իրենց մրցակցին»[743]: Ամեն դեպքում շատ ուշագրավ տեսակետ է, չնայած ամեն ինչի հետ չի կարելի միանշանակ համաձայնվել:

Ըստ էության վրացիներն այդպես էլ վարվեցին, լցվելով թշնամությամբ Վրաստանի հայերի նկատմամբ, ինչին մենք արդեն վերը մասամբ անդրադարձել ենք: Մյուս կողմից, չնայած վերոհիշյալ Վ. Ադամիան պնդում է, որ նույն բանն անում էին Հայաստանում ևս (ինչը չի համապատասխանում իրականությանը), քանի որ անգլիացիները հայերին խոստացել են տալ Բաթումին[744], այնուամենայնիվ հայկական կողմն էլ ավելորդ հավատարմություն և նվիրվածություն դրսևորեց անգլիացիների նկատմամբ (երբեմն նաև ստրկամտության հասնող), կորցնելով նորմալ զգուշավորությունը, բոլոր հաշվարկները կառուցելով Անգլիայի վրա: Իսկ երբ պատերազմը Վրաստանի և Հայաստանի միջև սկսեց ձգձգված բնույթ ստանալ, անգլիական հրամանատարությունը հանդես եկավ որպես միջնորդ և երկու կողմերին էլ սկսեց թելադրել կոնֆլիկտի լիկվիդացման իր պայմանները:

Այդ հանգամանքը լավ է ըմբռնել նույնիսկ մենշևիկյան կառավարության ղեկավար Նոյ Ժորդանիան, որը հայտնի է իր արևմտամետ տրամադրություններով և հակաբոլշևիկյան դիրքորոշմամբ: Վերջինս սակայն հարկադրված մի անգամ հայտարարում է օկուպացիոն զորքերի հրամանատարին, որ «մինչև դաշնակիցների ժամանելը իրենց մոտ,

[743] Տե՛ս Адамия В. И., Указ. соч., стр. 74:

[744] Տե՛ս там же:

մենք ոչ մեկի հետ չենք կռվել և ոչ մի տեղ չունեինք թշնամիներ: Դաշնակիցների գալով պատկերը փոխվեց. մենք ամբողջ ժամանակ պատերազմում ենք»[745]: Նմանատիպ միտք է արծարծվում վրաց հեղինակ Գավիոզ Դեվդարիանու կողմից. «Խոսքը գնում է նախկին Թիֆլիսի նահանգի Բորչալուի և Ախալքալաքի գավառների վիճելի տարածքների զավթման մասին:

Անզիջում պայքարը մի կողմից՝ դաշնակցական Հայաստանի, և մյուս կողմից՝ մենշևիկյան Վրաստանի կողմից, ուժեղ չափով գրգռվում էր նաև անգլիացիների և ընդհանրապես անտանտյան զավթիչների կողմից, որոնք 1918 թ. վերջին մտել էին Անդրկովկաս, զբաղեցնելով գերմանա-թուրքական օկուպանտների տեղը»: 1918 թ. վերջին բռնկված պատերազմի մեջ հավասարապես մեղադրելով թե՛ դաշնակցական Հայաստանին, և թե՛ մենշևիկյան Վրաստանին Գ. Դեվդարիանին ընդգծում էր հետևյալը. «Ընդ որում անգլիացիները, ժամանակին նկատելով, որ հայ-վրացական արյունահեղության հետագա շարունակումը կարող է և հենց իմպերիալիստների համար ընդունել անցանկալի շրջադարձ, ձգտում էին ինչքան հնարավոր է շուտ այն լիկվիդացնել: Սակայն գարշելի գործն արված էր, երկու կողմերից էլ եղբայրական արյունը հեղված էր և ազգային չարացածությունը մեկը մյուսի դեմ ուժեղացավ: Հենց Վրաստանում պատերազմի ժամանակ ողջ հայկական բնակչությունը ընկավ կասկածանքի տակ և մեղադրվեց հայրենիքի դավաճանության մեջ: Ամբողջ Վրաստանով մեկ գվարդիականների, միլիցիոներների և հատուկ ջոկատի պաշտոնյաների կողմից հայերը ենթարկվում էին չլսված վիրավորանքների, ձերբակալությունների, աքսորի և այլն, առանց վերջիններիս կողմից պատրվակի: Հայերի հետ ամեն ոք կարող էր անել այն ամենը, ինչ որ ցանկանում էր»[746]:

Հայտնի է, որ իբր թե ելնելով հայ-վրացական ռազմաքաղաքական լարված փոխհարաբերությունները կարգավորելու բարիդրացիական ցանկությունից և ստեղծված բարդ իրավիճակից դուրս գալու համար դեռ դեկտեմբերի 16-ին՝ պատերազմական գործողություններին զուգահեռաբար Վրաստանի կողմից քողարկված բանակցություններ էին

[745] Տե՛ս там же, стр. 76:

[746] Տե՛ս Девдариани Гаиоз, Дни господства меньшевиков в Грузии (документы и материалы), стр. 245:

վարվում անգլիական և ֆրանսիական ռազմական միսիաների ներկայացուցիչներ գնդապետներ Ռ. Փ. Ջորդանի և Պ. Ա. Շարդինյիի հետ Հայաստանի հետ պատերազմը դադարեցնելու նպատակով: Այդ նպատակով անգլիական գնդապետ Ռ. Փ. Ջորդանի, մայոր Մակդոնալդի և Պ. Ա. Շարդինյին Բաքվից դեկտեմբերի 21-ին ժամանեցին Թիֆլիս: Ըստ էության չնայած այս ռազմաքաղաքական առաքելության նպատակն էր արագացնել թուրքական զորամասերի հետքաշումը Բաքվից՝ Թիֆլիս և Ալեքսանդրապոլ երկաթուղագծի երկայնքով, և պայմանավորվել Ֆորեստյեր-Ուոքերի հետ՝ ժամանող 27-րդ զորաբանակի տեղակայման մասին, գնդապետ Ջորդանը օպերատիվ արձագանքեց Գեգեչկորու դեկտեմբերի 15-ի դիմումագրին: ՀՀ դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանին առաջարկելով չլքել Թիֆլիսը, դաշնակիցների հանձնաժողովը վրացական կառավարության հետ կայացրած համաձայնությամբ, ձեռնամուխ եղավ պատերազմի հետևանքների վերացմանը: Վրաստանը կոնֆերանսում ներկայացնում էին վրաց կառավարության նախագահ Նոյ Ժորդանիան և Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորին, Հայաստանի Հանրապետությունը՝ Արշ. Ջամալյանը և Ավ. Ահարոնյանը, որը նշանակվել էր ՀՀ կառավարությանն պատվիրակության նախագահ Փարիզի կոնֆերանսում, և Թիֆլիս էր ժամանել Մդիվանու հետ, չնայած Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները լիազորություններ չէին ստացել սեփական կառավարությունից, և ստեղծված իրավիճակում, օգտվելով հանգամանքներից, աշխատեցին կարգավորել իրենց հարաբերությունները Անտանտի հետ:

Կոնֆերանսում նախագահող Ռիչարդ Ջորդանի և գնդապետ Շարդինյիի առաջարկով կողմերին առաջարկվեց անհապաղ դադարեցնել պատերազմական գործողությունները, հայկական և վրացական զորամասերը պետք է ազատեին վիճելի տարածքը՝ ներառյալ Ախալքալաքը և այնուհետև փոխարինվեին բրիտանական զորամասերով՝ մինչև որ Փարիզյան Հաշտության վեհաժողովը որոշեր այդ տարածքների ապագա կարգավիճակը: Ռիչարդ Ջորդանը արտահայտեց դաշնակիցների վերաբերմունքը տարածքային խնդիրների վերաբերյալ. «Ես գտնում եմ, որ երկու կողմերն էլ սխալ են թույլ տվել, ցանկանալով զենքի միջոցով վճռել այդպիսի հարցը, որը կարող է լուծվել միայն Փարիզի կոնֆերանսի ժամանակ: Ո՛չ դաշնակիցների ներկայացուցիչները, ո՛չ կովկասյան

կառավարությունները իրավունք չունեն որոշումներ կայացնել մարզերի տարածքային պատկանելիության մասին, քանզի այդ իրավունքը պատկանում է միայն Փարիզի կոնֆերանսին: Սակայն դաշնակցային ներկայացուցիչների պարտքն է՝ անհապաղ դադարեցնել արյունահեղությունը: Այդ իսկ պատճառով դաշնակիցները առաջարկում են դադարեցնել պայքարը և դուս բերել զորքերը վիճելի շրջաններից, անհնազանդները կենթարկվեն խիստ պատժի, եթե այդպիսիք գտնվեն: Որևիցե կովկասյան հանրապետության կողմից հարևան հանրապետության տարածքի նվաճումը չի կարող որևիցե նշանակություն ունենալ և դա կհանդիսանա միայն մարդկանց և դրամի անտեղի կորուստ»[747]: Ջորդանի կողմից ասվածին Շարդինյին ավելացրեց, որ բոլոր տարածքները, որոնք նախկինում զբաղեցված են եղել թուրքերի կողմից, դաշնակիցների հաղթանակից հետո պատկանում են վերջիններիս, և միայն դաշնակիցները կարող են դրանք տնօրինել:

Սակայն Վրաստանը չհամաձայնվեց Ջորդանի առաջարկի հետ, և Եվգ. Գեգեչկորին անգամ հայտարարեց, որ հնարավոր չէ վրաց ժողովրդին պարտադրել հրամաններ, որը վաղուց սովորել է քաղաքական կյանքին, իսկ արդեն դեկտեմբերի 21-ին Ն. Ժորդանիան ներկայացրեց իր կառավարության դիրքորոշման սկզբունքները.

1. Վրաստանի կառավարությունը ողջունում է դաշնակիցների նախաձեռնությունը արյունահեղությունը դադարեցնելու գործում.

2. Հեռագիրը, որ պետք է առաքվեր Հայաստան՝ ռազմական գործողությունները դադարեցնելու պահանջագրով, պետք է հաղորդվի վրացական զորքերի հրամանատարի և ոչ թե դաշնակիցների ներկայացուցիչների միջոցով.

3. Թշնամական գործողությունների դադարեցմանը անմիջապես պետք է հետևի հայերի հետքաշումը պատերազմական գործողություններից առաջ եղած գիծը.

[747] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 112:

4. Առաջարկվող խառը հանձնախմբի պարտականությունների մեջ պետք է մտնի նախահարձակ պետության մատնանշումը, որից, այնուհետև փոխհատուցում պետք է պահանջվի[748]:

Դրա հիման վրա Վրաստանի կառավարությունը դեկտեմբերի 22-ին որոշում է ընդունում զնալ պատերազմի դադարեցմանը, պայմանով, որ ռազմական գործողությունների ավարտից հետո, հայկական զորքերը դուրս գան Բորչալուի գավառից դեպի այն դիրքերը, որոնք նախկինում զբաղեցրել են, այսինքն՝ դեպի «թուրքական գիծը», պատերազմող կողմերի համար վերականգնելով status quo ante bellum, ընդ որում վրացական կառավարությունը պետք է երաշխավորեր ողջ բնակչության անձնական և գույքային անվտանգությունը, և կազմավորելով հայ-վրացական հանձնաժողով՝ համաձայնության կայացման համար, որն այնուհետև երկու կառավարությունների կողմից ներկայացվելու էր Փարիզի կոնֆերանսին որպես հիմնական փաստաթուղթ, որի վրա էլ հենվելով՝ կկայացվի վերջնական վճիռը: Իսկ ինչ վերաբերում էր այն հարցին, թե ու՞մ վրա կընկնի պատասխանատվությունը ռազմական գործողությունները սկսելու համար, հաստատագրվեց, որ մեղավոր երկրի վրա կընկնի ռազմատուգանքը վճարելու պարտականությունը, այն վնասը փոխհատուցելու խնդիրը, որը կրել է հարձակման ենթարկված երկիրը[749]: Եվգ. Գեգեչկորին ներկայացրեց իր կառավարության դիրքորոշումը. «Երաշխիքը, որ համանման նախահարձակում տեղի չի ունենա ապագայում և բոլոր վիճելի հարցերը կլուծվեն փոխադարձ համաձայնությամբ կամ իրավարարությամբ, թելադրում է status quo ante bellum-ի ապահովում»[750]: Այս փաստաթուղթը փոխանցվում է անգլիական միսիային, և որն էլ իր հերթին փոխանցում է Երևան, որտեղ էլ Գ. Մարխոլիայի կարծիքով, հայերը ոգևորված պատերազմի դաշտում իրենց հաջողություններով, կատեգորիկ կերպով հրաժարվեցին հարցի նման հանգուցալուծումից[751]: Սակայն դա այդպես չէր, քանզի փոխա-

[748] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 477-478: Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения, стр. 113:

[749] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 114:

[750] Տե՛ս Документы и материалы по внешней политие Закавказья и Грузии…, стр. 478-479, Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 128-130:

[751] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 69, թ. 104:

դարձ մեղադրանքներից հետո Ավ. Ահարոնյանը հայտարարեց, որ իրենք խնդրի լուծումը լիովին թողնում են դաշնակիցների հայեցողությանը և պատրաստ են կատարել նրանց պահանջները[752]:

Շուտով Բաքվում և Բաթումիում գտնվող անգլիական զորքերը ցանկություն են հայտնում Վրաստանի ներքին կայունությունը ապահովելու նպատակով՝ զբաղեցնել Վրաստանի մնացած մասը: 1918 թ. դեկտեմբերի 22-ին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Ե. Գեգեչկորին դիմում է անգլիական միսիայի ղեկավար գնդապետ Ջորդանին, հայտնելով, որ իրենք չեն կարող թույլ տալ միջամտություն իրենց ներքին գործերին, ուստի իրենք անհրաժեշտ չեն գտնում վրացական տարածք մտցնել օտարերկրյա զորքեր՝ կարգուկանոնը պաշտպանելու համար, որ իրենք բավարար չափով ուժեր ունեն[753], որին ի պատասխան ուղարկված նոտայում գնդապետ Ջորդանը հայտնեց, որ իրենք չեն էլ պատրաստվում միջամտել Վրաստանի ներքին գործերին, սակայն դեկտեմբերի 25-ին անգլիական զորքերը մտան Թիֆլիս, այն դարձնելով դաշնակիցների գերագույն կոմիսարի նստավայր Կովկասում[754]: Պնդելով, որ Թիֆլիսում գտնվող հայերը իրենց թիկունքում քայքայիչ-ջլատիչ գործունեություն են ծավալում, իրենց իսկ տվյալներով, վրացական իշխանությունները ձերբակալում են ավելի քան 2000 հայ քաղաքացիների, փակվեցին թերթեր, որոնք գաղափարական պատերազմ էին մղում Վրաստանի դեմ[755]:

---

[752] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 114:

[753] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, Док. № 209, стр. 426-427:

[754] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia / armeno-georgian-war-1918-20/:

[755] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/: Мазниашвили Г., Воспоминания…, стр. 127-128; Квинитадзе Г., Мои воспоминания в годы независимости Грузии…, стр. 67: Տե՛ս Тетвадзе Ш., Тетвадзе О., Армяне в Грузии, стр. 98:

Այդ ընթացքում ռազմական գործողությունները շարունակվում են, հայերը գրավված պահում էին Եկատերինֆելդը, Սադախլո, Շուլավերի և շրջակա բարձունքները[756]:

Յուրովի, իրենց աշխարհաքաղաքական ընկալմամբ, դաշնակիցները փորձեցին կանխել արյունահեղությունը: 1918 թ. դեկտեմբերի կեսերին Կովկասում փաստացի գեներալ-նահանգապետ Վ. Թոմսոնի կարգադրությամբ Բաքվից Թիֆլիս են ժամանում Անտանտի ներկայացուցիչներ՝ բրիտանական փոխգնդապետ Ռիչարդ Փրայս Ջորդանը և ֆրանսիական փոխգնդապետ՝ Պիեռ-Օգյուստ Շարդինյին[757]:

Այդ սպաների առջև դրված խնդիրներից էին անմիջական հսկողության սահմանումը Թիֆլիս-Բաքու և Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղագծերի վրա և դրանց վիճակի անընդմեջ ստուգումների իրականացումը, այդ թվում նաև ռազմական միսիաների շտաբկայանների աշխատանքների ապահովումը:

Կովկասում էր գտնվում բրիտանական 27-րդ օկուպացիոն դիվիզիան, իսկ բրիտանական ռազմական առաքելությունը գլխավորում էր բրիտանական Սալոնիկյան բանակի կվարտիրմեյստեր կամ զորաբնակարանապետի նախկին տեղակալ, գեներալ-մայոր Սըր Վիլյամ Հենրի Ռայկրոֆտը [1861-1925 թթ.], որն իր վրա վերցրեց բանակցությունների ղեկավարությունը: Դաշնակիցների ներկայացուցիչների կողմից Վրաստանի կառավարությանը առաջարկվեց ընդունել իրենց առաքելությունը Հայաստանի հետ պատերազմի շուտափույթ դադարեցման խնդրում, և Վրաստանի կառավարությունը ընդունեց Հայաստանի հետ բանակցություններ վարելու առաջարկը, քանզի վրացական զորքը նահանջում էր՝ լուրջ կորուստներ կրելով հայկական զորքից: Որոշակի առումով տեղի տալով վրացիներին, Ռայկրոֆտը համաձայնվեց մի շարք փոփոխություններ մտցնել բրիտանական նախնական առաջարկություններում, և մասնավորապես Ախալքալաքի վերաբերյալ: Ռայկրոֆտի ծրա-

---

[756] Տե՛ս Квинитадзе Г., Мои воспоминания в годы независимости Грузии…, стр. 67-68; Мазниашвили Г., Воспоминания…, стр. 128:

[757] Փոխգնդապետ Ջորդանը, մինչև իր միջնորդական առաքելությունը հայ-վրացական բախման ընթացքում եղել է Թիֆլիսում տեղակայված Գլոչեստերշիրյան գնդի 7-րդ գումարտակի հրամանատարը, որից հետո նա ստանձնում է Բաքվում տեղաբաշխված 39-րդ բրիտանական հետևակային բրիգադի հրամանատարությունը, իսկ Շարդինյին եղել է Հարավային Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության պետը:

գիրը նախատեսում էր վրացական զորամասերը թողնել Ախալքալաքում և հյուսիսային Բորչալուում, իսկ հայկական զորամասերը հարավային Բորչալուում՝ նրանց արանքում ընկած «Չեզոք գոտիով»՝ բրիտանական հսկողության տակ: Վրացական կառավարության ղեկավար Ժորդանիան պնդեց կազմել մի միջազգային հանձնաժողով, որը կորոշեր պատերազմի մեջ նախահարձակ երկրին և վերջինիս պարտադրեր ռազմատուգանք վճարել[758]:

Ինչպես վկայում է Հայկական պատվիրակության ղեկավար Հարությունյանի դեկտեմբերի 22-ի հեռագիրը ՀՀ Նախարարների խորհրդի նախագահին, կապիտան Գրինի հայտնի առաջարկները ուղարկվել էին (բացի Հայաստանի կառավարությունից)՝ երկու ռազմագերիների միջոցով Վրաստանի կառավարությանը, սակայն նշելով, որ դեռ պատասխան չի ստացվել[759]: Սակայն շուտով, Վրաստանի կառավարությունը համոզվելով, որ ո՛չ ռազմական համալրումները, ո՛չ գլխավոր հրամանատարին փոխարինելը էապես չեն ազդում ռազմական գործողությունների ընդհանուր ընթացքի վրա՝ ձգտելով առաջ բերել բեկում ռազմաքաղաքական իրադարձությունների զարգացման ընթացքում՝ անմիջապես դիմեցին դաշնակիցների միջնորդական առաքելությանը, որի կապակցությամբ Ն. Ժորդանիան մի շարք հանդիպումներ ունեցավ Թիֆլիսում գտնվող Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ռազմաքաղաքական ներկայացուցչությունների հետ:

Ըստ Գ. Էգգեյի և Է. Անդերսենի, դաշնակիցների կողմից պատերազմի դադարեցման մասին առաջարկն արվեց հենց այն պահին, երբ վրացական բանակը հապճեպ նահանջում էր՝ լքելով զբաղեցրած դիրքերը[760]:

Դեկտեմբերի 22-ին դաշնակիցների ներկայացուցիչներ գնդապետ Ջորդանը և Շարդինյին ներկայացնում են զինադադարի մասին իրենց կողմից մշակված առաջարկը, որը հասցեագրված էր վրաց և հայկա-

---

[758] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 130:

[759] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 27, 34-35:

[760] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

կան հրամանատարությանը, ըստ որի անհապաղ ամեն մի անօգուտ արյունահեղության վերջ տրվի, և հայկական ու վրացական ժողովուրդների ընդհանուր շահերից ելնելով՝ խորհրդակցելով երկու շահագրգռված պետությունների կառավարությունների ներկայացուցիչների հետ, «հրամայում» են վրաց և հայկական հրամանատարությանը Բորչալուի և Ախալքալաքի գավառներում վերջ տալ թշնամական գործողություններին ամսվա 23-ին ժամը 3-ին: Ախալքալաքի ճակատի հրամանատարները պետք է ետ քաշեին իրենց զորքերը հեռագրի ստացման պահին զբաղեցրած գծից 4 կմ, իսկ Բորչալուի ճակատում գործող զորքերը պետք է այնտեղ գործուղվող անգլիական սպայից հրահանգներ ստանային նոր դիրքերի վերաբերյալ, որոնք նրանք պետք է զբաղեցնեին: Նշվում էր, որ երկու կողմերի հրամանատարները անձնապես պատասխանատու են դաշնակիցների առաջ հրամանի ճիշտ կատարման համար: Դաշնակիցների ներկայացուցիչները առաջարկության տեքստում հայտնում էին, որ Հայկական կառավարությունը նշանակի երկու ներկայացուցիչների ներկայումս Թիֆլիսում գտնվող երկու զինվորական խորհրդականների հետ՝ խառը հանձնաժողովում մասնակցության համար, կազմված հայկական և վրացական ժողովուրդների ներկայացուցիչներից, որը պետք է հաստատեր modus vivendi (կենսաձև) կոնֆլիկտի ընդհատման համար՝ սպասելով միջազգային խաղաղության կոնգրեսի որոշմանը[761]:

Դրան զուգահեռ, Վրաստանի ներկայացուցիչներն իրենց հակաառաջարկն (կոնտրառաջարկն) են անում գնդապետ Ժորդանի և Շարդինյիի առաջարկի վերաբերյալ և այն ներկայացնում դեկտեմբերի 23-ին: Վրացական կոնտրառաջարկում արձանագրվում էր հետևյալը.

1. Վրացական կառավարությունը գոհունակությամբ է ընդունում դաշնակիցների նախաձեռնությունը արյունահեղության դադարեցման գործում.
2. Ռազմական գործողությունների դադարեցման մասին հրամանը, որը պետք է ուղարկվի վրացական զորքերի հրամանատարին,

[761] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 19: Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 114:

պետք է տրվի Վրաստանի կառավարության կողմից, այլ ոչ թե դաշնակիցների.

3. Ռազմական գործողությունների դադարեցման պահից երկու կողմերից էլ, Բորչալուի գավառում պետք է տեղի ունենա հայկական զորքերի նահանջը այն դիրքերից, որոնք նրանք գրավում են ներկայումս, պայմանով, որ ժամանակամիջոցը, որ պետք է որոշվի, այդ զորքերը պետք է զբաղեցնեն այն դիրքերը, որ նրանք զբաղեցրել են թշնամական գործողություններից առաջ, դրանով իսկ վերջ դնելով երկու պատերազմող կողմերի համար «status quo ante bellum»-ին, դրա հետ միաժամանակ վրացական կառավարությունը իր վրա պարտավորություն է վերցնում երաշխավորելու ողջ բնակչության անձնական և գույքային անվտանգությունը.
4. Պետք է ստեղծել հանձնաժողով, որը մյուս հարցերի հետ միաժամանակ պետք է պարզի, թե ո՞վ է առաջինը սկսել պատերազմը, որպեսզի մեղավոր կողմի վրա դրվի ծախսերի և վնասների փոխհատուցումը[762]:

Վրացական կառավարության այդ որոշումը միանշանակ չընդունվեց: Վրացական կողմը պնդում էր նախապատերազմյան դիրքերին ետ քաշվելու պարտադիր լինելու մասին: Կապված դաշնակիցների կողմից այդ խնդրում ցուցաբերված նման դիրքորոշման ընդունելու հանգամանքի հետ, 1918 թ. դեկտեմբերի 24-ին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի կողմից դաշնակցային հանձնաժողովին ներկայացվեց երկրորդ վրացական նոտան, որում վրաց մինիստրը կատեգորիկ պնդում էր նախապատերազմյան ստատուսի վերականգնման վրա: Դրան ի հակառակ, Ա. Ջամալյանը պնդում էր դեկտեմբերի 21-ի հեռագրում դաշնակիցների կողմից ձևակերպված առաջարկների վրա[763]:

Ակնհայտ է այստեղ հակահայկական ուղղվածությունը, ամեն կերպ վեհապետական Վրաստանի գերակայությունը և չքմեղությունը ապացուցելու համար Հայկական Բորչալուի և Ախալքալաքի խնդրում:

---

[762] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 19: Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 115:

[763] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 114:

Ըստ երևույթին, վրացիները կարողացել էին շփոթության մեջ գցել անգամ մեծագույն հայ բանաստեղծ Հովհաննես Թումանյանին, իրավիճակը ներկայացնելով այնպես, կարծես թե վերը նշված առաջարկով դաշնակիցները անընդունելի և Վրաստանի համար ծանր պայմաններ են ներկայացրել: Այդ է վկայում Հովհաննես Թումանյանի 1918 թ. դեկտեմբերի 22-ի նամակը Եվգենի Գեգեչկորուն. «…այսօր իմացա, որ դաշնակիցների ներկայացուցիչները Վրաց կառավարության համար հաշտության անընդունելի առաջարկ են արել: Արդյոք նպատակահարմար չե՞ք գտնում հայ-վրացական ինտելիգենցիայի ներկայացուցիչներից հրավիրել արտակարգ խորհրդակցություն՝ կազմելու հաշտության նոր նախագիծ՝ այն պայմանների հիման վրա, որ դուք առաջարկեցիք, երբ ես և Զուրաբովը Ձեզ մոտ էինք: Այսպես, խիստ անհրաժեշտ է երկու կողմերի համար էլ կործանարար այդ արյունահեղությունը դադարեցնել, որը մենք պետք է գլուխ բերենք բոլոր ուժերով՝ ինչ էլ լինի»[764]: Ավա՜ղ, Հովհ. Թումանյանի «տագնապները» վրացիներին անընդունելի առաջարկ ներկայացնելու կապակցությամբ պարզապես անհիմք դուրս եկան: Վրացական կողմը ակնհայտորեն խաղի ավելի հարմար պայմաններում էր գտնվում, որը շուտով բացահայտվեց:

Դա շատ պարզ երևում է ՀՀ Նախարարների խորհրդի 1918 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի օրագրի վերլուծությունից, որում տագնապ էր արտահայտվում հայ-վրացական հարաբերությունների հետագա բարդացման հնարավոր հետևանքներից: 1918 թ. դեկտեմբերի 24-ի նիստում Հովհ. Քաջազնունին զեկուցում է այն մասին, որ հայկական զորքերը դուրս գալով Սադախլո-Շուլավեր սահմանագիծը, Բորչալուի գավառում հասել են արդեն այն գծին, որ հայկական կողմը համարում է հայկական տարածքի սահման, որը մաքրվել է վրացական զորքերից: Քաջազնունին նշում էր, որ այդ պայմաններում պատերազմը շարունակելու այլևս պատճառ չկա: Սակայն մինիստր-նախագահը հենց այս նիստում ունեցած իր զեկուցման մեջ ուշագրավ շեշտադրում էր անում այն մասին, որ թե՝ երկրի ներքին տնտեսական դրությունը և թե՝ զուտ զինվորական դժվարությունները անհրաժեշտ են դարձնում օր առաջ վերջացնելու պատերազմը և վերականգնել երկաթուղային հաղորդակ-

[764] Տե՛ս Թումանյան Հովհաննես, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10 (նամակներ), էջ 301, 655:

ցությունը: Զեկուցագրում նշվում էր, որ հայկական զորքերին հրաման է տրված չանցնել Բորչալուի գավառի այն գիծը, ուր վերջանում է Հայաստանին պատկանող տարածքի սահմանը, անհրաժեշտ էր համարում բանակցությունների մեջ մտնել Վրաստանի հետ, միաժամանակ դիմելով Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներին Թիֆլիսում, որպեսզի վերջիններս էլ իրենց կողմից ճնշում գործադրեն Վրաց կառավարության վրա՝ բանակցությունների ընթացքն արագացնելու համար, դրա հետ մեկտեղ պարզաբանելով, որ վրացիների մերժման դեպքում հարկ է դիմել արբիտրաժի՝ ապավինելով Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների միջնորդության վրա: Կառավարության այս նիստում Քաջազնունին ակնհայտորեն ցույց տվեց խաղաղությունը շուտափույթ վերականգնելու անհրաժեշտությունը՝ նկատի ունենալով Հայաստանի ծանր կացությունը, դրա հետ մեկտեղ պարզություն մտցնելով այն հարցում, թե ինչպիսի որոշ զիջումներ կարելի է անել հակառակորդի հետ բանակցություններում, ինչի մասին անհրաժեշտ է հրահանգավորել ՀՀ պատվիրակությանը, որի մասին համապատասխան որոշում պետք է կայացվի նաև Հայաստանի խորհրդի (պառլամենտի) կողմից: Լսելով Նախարարների խորհրդի նախագահի զեկուցագիրը, նիստը ընդունում է ադեկվատ որոշում: Դրանում արձանագրվում էր, որ նկատի ունենալով երկրի թե' ներքին և թե' արտաքին կացությունը, խնդիր է բարձրացվում՝ որքան հնարավոր է շուտ վերջացնել պատերազմը: Ըստ այդմ, որոշվում է նորից դիմում անել Վրաց կառավարությանը, 1) առաջարկելով նրան ուղարկել լիազոր պատվիրակություն՝ համաձայնության գալու համար զինադադարի պայմանների շուրջ, տեղեկացնելով նաև, որ հայկական զորքերին հրաման է տրված չանցնել Բորչալու գավառում այն գիծը, ուր վերջանում է Հայաստանին պատկանող տերիտորիայի սահմանը, 2) միջոցներ ձեռք առնել, որ Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչներն իրենց կողմից ճնշում գործադրեն Վրաց կառավարության վրա՝ բանակցություններն արագացնելու համար, 3) եթե վրացիք չհամաձայնվեն անմիջական բանակցություններ սկսել, առաջարկել նրանց հարցը հանձնել վեճի՝ արբիտրաժի: Նախարարների խորհրդի որոշման վերջնամասում այն միտքն էր արտահայտվում, որ նկատի ունենալով Հայաստանի համար ծանրագույն աշխարհաքաղաքական և ռազմական իրավիճակը, հարկավոր է որոշել զիջումների այն շրջանա-

կը, որով կարելի է գնալ բանակցությունների վրացիների հետ: Պարզաբանվում էր, թե ինչ զիջումներ կարող են արվել վրացիներին՝ համաձայն Հայաստանի պառլամենտի որոշման, եթե պարզվի նաև, որ վրացիները չեն ընդունում Հայաստանի առաջարկած պայմանները: Բացի այդ, Նախարարների խորհրդի որոշման մեջ մասնավորապես պարզաբանում էր տրվում, թե կոնկրետ ի՞նչ զիջումների մասին կարող է խոսք գնալ, և առաջարկվում էր զիջումների ներքոհիշյալ տարբերակը. Բորչալուի գավառի այն մասը, որ հայկական կողմը արդեն գրավել է զենքով, մնում է Հայաստանի տրամադրության տակ, այնտեղ հաստատվում է հայկական վարչակարգ, հայկական զորքերը մնում են տեղում: Դրա հետ մեկտեղ ՀՀ Նախարարների խորհուրդը Ախալքալաքի կապակցությամբ համաձայնվում էր, որ վրացական զորքերը և քաղաքացիական վարչությունը ժամանակավորապես մնան այնտեղ, պայմանով, որ գաղթականության մասին հոգացող հայկական ընկերակցությունները անարգել գործելու իրավունք ստանային գավառում: ՀՀ Նախարարների խորհրդի նիստը տեղեկացնում է, որ սույնի վերաբերյալ համապատասխան հրահանգներ են տրվելու Հայաստանի պատվիրակությանը և Թիֆլիսում Հայոց դիվանագիտական հավատարմատարին, հենց որ ստացվի Հայաստանի պառլամենտի, նրա խմբակցությունների կամ ավագների խորհրդակցության համաձայնությունը[765]: Հարկ է այստեղ ավելացնել, որ շուտով Քաջազնունու հասցեին հնչեցին մեղադրականներ, որ նա չի ցանկանում և չի կարողանում ճիշտ օգտվել հայկական զորքերի փայլուն հաղթանակից, և Վրաստանի հետ հարաբերությունների կարգավորման խնդրում նույնիսկ գնում է չհիմնավորված զիջումների, սակայն դրանք չազդեցին Քաջազնունու առավել հավասարակշռված և սթափ դիրքորոշման վրա, որն իր համար առաջնային էր դարձրել ռազմական հաջողությունների օգտագործմամբ ճնշում գործադրել վրացական իշխանությունների վրա և հասնել Հայաստանի համար այլևս անտանելի շրջափակման վերացմանը, որից երկիրը շնչահեղձ էր լինում՝ կապեր չունենալով արտաքին աշխարհի հետ:

Անտանտյան դաշնակիցների նախասկզբնական առաջարկը կայանում էր ընդարձակ Չեզոք գոտու ստեղծման մեջ, որն իր մեջ էր նե-

[765] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 6, թ. 36:

րառնելու ինչպես Ախալքալաքի, այնպես էլ Բորչալուի գավառի մեծ մասը և գտնվելու էր բրիտանական հովանավորության [պրոտեկտորատի] և հսկողության տակ՝ մինչև Փարիզի Խաղաղության վեհաժողովի կողմից Հայաստանի և Վրաստանի միջև տարածքային սահմանազատման մասին վճռի կայացումը: Սակայն դաշնակիցների կողմից ներկայացված այս առաջարկը անընդունելի եղավ Վրաստանի համար, որը դրա փոխարեն առաջարկեց պատերազմող երկրների զորքերը վերադարձնել բախման սկզբում զբաղեցրած դիրքերը՝ այսինքն անցկացնել նախնական սահմանազատում Կամենկա գետով: Ավելին, Վրաստանը պահանջեց որոշել, թե որն է «ազրեսոր երկիրը», որին պետք է պարտադրվեր փոխհատուցել դիմացինին պատճառված նյութական վնասը[766]: Անհասկանալի էր այն հանգամանքը, որ նախնական բանակցային հարաբերությունների ընթացքին որևիցե առումով հայկական կողմը ներգրավված չէր, և միայն այն բանից հետո, երբ արդեն Երևան ուղարկվելիք դիմումագիրը գործնականում պատրաստ էր, Սըր Վիլյամ Հենրի Ռայկրոֆտը և Պիեռ Օգյուստ Շարդինյին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Արշակ Ջամալյանին հրավիրեցին այդ գործընթացին մասնակցություն ցուցաբերելու և ստորագրելու դրա տակ, սակայն վերջինս ելնելով դրանից՝ հրաժարվեց դա անել առանց իր կառավարության և վարչապետ Հովհ. Քաջազնունու հրահանգի:

1918 թ. դեկտեմբերի 25-ին մի քանի օր տևած վիճաբանություններից, փոխադարձ զիջումներից հետո և տեքստի վրա աշխատանքից հետո Երևան ուղարկվեց հետևյալ բովանդակությամբ հեռագիր, որի ուղարկման պահին ողջ Լոռին Բորչալուի գավառի հարակից շրջանների հետ արդեն գրավված էին Դրոյի զորամասերի կողմից: Այդուհանդերձ, Երևան ուղարկված հեռագրում ընդգծված էր հետևյալը. «Երևան, Հայկական հանրապետության նախագահ Քաջազնունուն. Այժմ Թիֆլիսում գտնվող զորավար Ռայկրոֆտը, ֆրանսիական պատվիրակությունից՝ Շարդինյին, ընկերակցությամբ Ժորդանիայի և ներկայությամբ Ջամալյանի, որոշեցին, որ ռազմական գործողությունները պետք է դադարեցվեն, և հակառակ Ջամալյանի բողոքի, որոշեցին ստեղծել խառն հանձնաժողով՝ անգլիական, ֆրանսիական, հայկական և վրացական

[766] Տե՛ս նաև Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, էջ 122-123:

ներկայացուցիչներով, մեկնելու ռազմաճակատ և կենսագործելու սույն որոշումը: Հանձնաժողովը սահմանելու է վրացական կայազորների թվաքանակը, որ մնալու է Բորչալուի գավառի հյուսիսային մասում, ինչպես նաև հայկական կայազորի քանակը գավառի հարավում: Հանձնաժողովը կորոշի նաև այն կայազորների թվաքանակը, որ կթողնեն վրացիները Ախալքալաքում, նկատի ունենալով, որ դրանք պետք է հասնեն նվազագույնի: Վրացիները մնալու են իրենց ներկա գծի վրա, իսկ հայերը պետք է հետ քաշվեն Դսեղ-Ջալալօղլի սահմանագիծը: Բրիտանացիները դիրքեր կգրավեն վրացական և հայկական զորքերի միջև և այդ շրջանում կստեղծեն խառը վարչություն, անգլիական զինվորական պարեկները գրավում են երկաթուղին, իսկ վրացական վարչությունը Ախալքալաքում կվերահսկվի դաշնակիցների կողմից, այն երաշխիքով, որ վարչության մեջ ընդգրկվեն հայ և մահմեդական ներկայացուցիչներ: Շուտով վրացական և հայկական բանագնացները կմեկնեն Եվրոպա, որտեղ վերջնական սահմանները կորոշվեն մեծ տերությունների կողմից. գեներալ Ռայկրոֆտ, գնդապետ Շարդինյի, Ն. Ժորդանիա»[767]:

Միաժամանակ Ղարաքիլիսա ուղարկվեց բրիտանական հանձնաժողովը, որի կազմի մեջ ընդգրկվեցին կապիտան Վիձերսը, ֆրանսիական կապիտան Գասֆիլդը և վրացական բանակի գնդապետ Ջափարիձեն՝ գեներալ Մ. Սիլիկյանի հետ հանդիպելու համար:

Շուտով սակայն իրավիճակն ավելի պարզվեց, և հասկանալի դարձավ, որ դաշնակիցները կարծես թե հակված են բավարարելու վրացական պահանջատիրությունը, ինչն ուղղումներ պետք է մտցներ հայկական կողմի դիրքորոշումներում, և որոշակի շփոթ առաջ բերեր: Դրա արդյունքը եղավ դեկտեմբերի 26-ի համաձայնագիրը, որը ստորագրվեց Մեծ Բրիտանիայի գեներալ-մայոր Ռայկրոֆտի, ֆրանսիական գնդապետ Շարդինյիի և Վրաստանի Հանրապետության նախագահ Ժորդանիայի կողմից. «…պատերազմական գործողությունները պետք է անհապաղ դադարեցվեն… չնայած պարոն Ջամալյանի բողոքներին, գեներալ Ռայկրոֆտը, գնդապետ Շարդինյին և Վրաստանի Հանրապետության կառավարության նախագահ պարոն Ժորդանիան որոշել են, որ խառը

[767] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 480-481: Տե՛ս նաև «Ձանգ», Երևան, 27 դեկտեմբերի, 1918 թ., N 85:

հանձնաժողովը՝ բաղկացած անգլիական, ֆրանսիական, վրացական և հայկական ներկայացուցիչներից, պետք է հնարավորին չափով շուտ մեկնի ռազմաճակատ, որպեսզի կյանքում կենսագործի համաձայնության հետևյալ պայմանները. հանձնախումբը որոշում է այն պահակազորերի քանակը, որոնք պետք է թողնվեն վրացիների կողմից հյուսիսային մասում, իսկ հայկական կողմից՝ Բորչալուի գավառի հարավային մասում, վրացիների կողմից՝ Ախալքալաքի գավառում: Պահակազորերը պետք է լինեն սակավաթիվ: Վրացական զորքերը պետք է մնան իրենց գրաված այժմյան գծի վրա, հայկական զորքերը պետք է նահանջեն դեպի թուրքական գիծը՝ Դսեղ-Ջալալօղլի: Մեծ բրիտանական ուղեկալները (պիկետները) պետք է գտնվեն վրացական և հայկական զորքերի միջև ընկած տարածությունում գտնվող երկաթուղային ճանապարհի վրա: Ադմինիստրացիան (վարչակազմը) այդ վիճելի մասում պետք է լինի խառը:

Ախալքալաքի գավառի վրացական վարչության վրա վերահսկողությունը իրականացնելու խնդիրը դրվում է դաշնակիցների հանձնախմբի վրա, որի կազմում ընդգրկվում են նաև տեղական հայկական և մուսուլմանական բնակչության ներկայացուցիչները:

Երկու պետության՝ Վրաստանի ու Հայաստանի ներկայացուցիչները շուտով կուղարկվեն Եվրոպա, որտեղ սահմանների վերաբերյալ բոլոր հարցերը կվճռվեն մեծ տերությունների կողմից»[768]:

Հետաքրքիր է այս ամենին ավելացնել նաև, որ Ա. Ջամալյանը, որը նախնական փուլում չէր ներգրավվել բանակցությունների մեջ, կտրուկ հրաժարվեց ստորագրել այդ համաձայնագիրը՝ առարկելով Ախալքալաքի վերաբերյալ ձևակերպման շուրջ, գտնելով, որ դաշնակիցների կողմից ընդունված որոշումները ավելի շուտ արտահայտում են Վրաստանի կառավարության տեսակետները, անտեսելով Հայաստանի Հանրապետության կառավարության նկատառումները: Անգլիացիները համաձայնագրի տակ ավելացրին հետևյալը. «…պ. Ջամալյանը համաձայն չէ Ախալքալաքի գավառը Վրաստանի կողմից գրավելու կետի հետ»[769]: Փաստորեն, դաշնակիցները հաշվի չնստելով հայկական կողմի տեսակետի հետ, այդ միակողմանի, սադրիչ բնույթի համաձայնագիրը փոր-

[768] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 37:

[769] Տե՛ս Մելքոնյան Ա., Ջավախք. Պատմության ուրվագծեր, էջ 33-34:

ձեցին դնել գործողության մեջ, և դա ավաղ՝ վերջիններիս հաջողվեց, ինչպես դա երևում է իրադարձությունների զարգացման հետագա ընթացքից: Հարկ է նշել այս կարևոր փաստաթղթի ծանոթության մեջ նշված կարևոր վերապահումների մասին: Դրանում ընդգծվում է, որ դաշնակիցների վերը նշված հեռագիրը Երևան է ուղարկվել ռուսերեն թարգմանությամբ, որը կատարվել է վրացական կառավարության կարգադրությամբ, և միանգամայն չի համապատասխանում անգլիական տեքստին: Այսպես, վերջինից բխում է, որ.

1. Դաշնակիցների ներկայացուցիչները վրացական կառավարության նախագահ Ժորդանիայի հետ կայացրել են իրենց որոշումը զինադադարի մասին ոչ համատեղ, այլ ընդամենը՝ նրա ներկայությամբ,

2. Պահակազոր Ախալքալաքում պետք է լինի, թե՞ ոչ, «փոքրաթիվ», թե՞ «շատ փոքրաթիվ» և այլն:

Իսկական վրացական խորամանկություն և խարդավանք:

Հենց այս ամենը նկատի ուներ Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը, երբ բողոքում էր համաձայնագրի մեղմ ասած, ոչ բարյացակամ տրամադրվածության մասին հայերի նկատմամբ: Գեներալ-մայոր Վիլյամ Ռայկրոֆտին ուղղված նոտայում Ա. Ջամալյանը ընդգծում է հետևյալը. «Նկատի ունենալով, որ ընդունվել է որոշում ներկա կոնֆլիկտի վերաբերյալ վրացական և հայկական կառավարությունների միջև, և որ այդ որոշումը հիմք է ունեցել ընդամենը այն տեսակետը, որոնք Ձեզ շարադրվել են Վրաստանի Հանրապետության կառավարության կողմից, առանց նրա, որպեսզի ուշադրություն դարձվի Հայաստանի Հանրապետության կառավարության նկատառումներին, ես պատիվ ունեմ տեղեկացնելու Ձեզ, որ որպես Վրաստանի կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության գործերում հավատարմատար, բողոքում եմ այդ որոշման դեմ»[770]:

Ջամալյանը իր վրդովմունքն էր արտահայտում այն կապակցությամբ, որ վրացական կառավարության կողմից միտումնավոր թաքցվել են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից դեկտեմբերի 19-ից սկսված և արված խաղաղասիրական առաջարկները, որոնք որոշակի նպատակ են հետապնդել:

[770] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 20:

Իրավիճակի մեջ նման շրջադարձի խնդրին է անդրադարձել Ֆ. Կազեմզադեն, զինադադարի մասին տալով ինքնատիպ և հակասական քաղաքական գնահատական. «Զինադադարի պայմանները մշակված էին ֆրանսիացիների, անգլիացիների և վրացիների կողմից՝ առանց հայերի հետ համաձայնեցման և վերջիններիս համար բավականաչափ անարդարացի էին: Հայկական հանրապետության նախագահին ուղղված հեռագրում դաշնակիցները հրաման տվեցին հայկական բանակին նահանջել մինչ այն դիրքերը, որոնք նա զբաղեցրել էր մինչև բախումը: Ախալքալաքի շրջանը մնում էր վրացիների ձեռքին, Բորչալուն պետք է լիներ Չեզոք գոտի և պահպանվեր անգլիացիների կողմից: Այդ հաղորդագրությունը ստորագրվեց ոչ միայն ֆրանսիացիների և անգլիացիների կողմից, այլև և, ինչքան էլ որ տարօրինակ է՝ Ժորդանիայի կողմից: Այսպիսով, հայերը հիմք ունեին համարելու, որ արևմտյան բարեկամները իրենց հետ դաժան վարվեցին, եթե ոչ դավաճանաբար: Հայերի դրությունը հուսահատական էր: Եթե չլիներ նրանց հավատը դաշնակիցների նկատմամբ, նրանք երբեք չէին հարձակվի Վրաստանի վրա»[771]:

Հարկ է սակայն ընդգծել, որ Ռ. Հովհաննիսյանը այն համոզմունքին է, որ Դաշնակցային ռազմաքաղաքական ներկայացուցիչները Անդրկովկասում որոշել էին, անկախ ամեն ինչից, պարտադրել իրենց ծրագիրը, կստանան հայկական կառավարության հավանությունն ու համագործակցությունը, թե՞ ոչ[772]:

Կապված այն հանգամանքի հետ, որ Սըր Վիլյամ Հենրի Ռայկրոֆտի, Պիեռ Օգյուստ Շարդինյիի և Ռիչարդ Փրայս Ջորդանի կողմից ստորագրված փաստաթղթի որոշ կետեր կարիք ունեին լրացուցիչ բացատրության և մեկնաբանման, հայկական կառավարության ներկայացուցիչները պայմանագիրը ստորագրեցին վերապահումով, որ իրենց կողմից կպահանջվեն բացատրություններ: Երկու պատգամավորներ՝ անկուսակցական Ստ. Մամիկոնյանը և գեներալ Ղորղանյանը մեկնեցին Թիֆլիս գեներալ Ռայկրոֆտի և գնդապետ Շարդինյիի հետ խորհրդակցելու վերջնական պայմանների շուրջ: Դաշնակցային հանձնաժողովը այդ մասին տեղեկացնելով գեներալ Ռայկրոֆտին, նրան Ղարաքիլիսայից հաղորդում էր, որ «միանգամայն համաձայն է հայկական կառավա-

[771] Տե՛ս Каземзаде Фируз, Борьба за Закавказье (1917–1921), стр. 175:

[772] Տե՛ս Հովհաննիսյան Ռ.Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, էջ 124:

րության հետ և ենթադրում է, որ այդ հարցերի մի շարք մանրամասներ պետք է ճշգրիտ պարզաբանվեն բավարարող և խաղաղ աշխատանքի համար գեներալ Ռայկրոֆտի կողմից առաջարկված պայմաններում: Հայկական կառավարությունը արտահայտել է ամենալայն մեծահոգությունը և խաղաղության անկեղծ ցանկություն»[773]:

Ռազմաքաղաքական իրադարձությունների ընթացքը, դիվանագիտական քաշքշուկները և խորքային մանևրումները, սակայն ելևէջումներով ընթացան:

Մինչ Թիֆլիսում և Ղարաքիլիսայում բանակցություններ էին ընթանում պատերազմը կանխելու ուղղությամբ, ռազմական գործողությունները շարունակվում էին, և հայկական զորքերը ձգտում էին հարձակողականի թափը պահպանել, որը միշտ չէ, որ հաջողվում էր: Եվ քանի որ ռազմաճակատը ձգվել էր Լոռու հայկական գյուղերից դեպի հյուսիսին հարակից ցածրավայրեր, Լոռու հայ ապստամբ գյուղացիները ակնկալում էին, որ Լոռին կմիացվի Հայաստանին և այդ հանգամանքից ելնելով վերադառնում են իրենց գյուղերը, իսկ զորքը փորձում էր շարունակել դժվարությամբ ձեռքբերված առաջընթացը:

Սակայն այս միջամտությունը միանգամից չկանխեց ռազմական գործողությունները, դրանք շարունակվում էին, չնայած Հայաստանի խորհուրդը, լսելով կառավարության նախագահի զեկուցումը, 1918 թ. դեկտեմբերի 26-ին որոշում կայացրեց հայ-վրացական կոնֆլիկտը լուծելու համար դաշնակիցների առաջարկած պայմանները պատերազմի դադարեցման և հայ-վրացական բախումը հանգուցալուծելու մասին, միաժամանակ բողոքելով, որ դրանք չեն համապատասխանում Հայաստանի իրավունքներին և արդարացի պահանջներին, ուստի հրահանգեցին ՀՀ կառավարությանը բանակցության միջոցով ջանալ փոփոխել այդ պայմանները համաձայն խորհրդարանի նախորդ որոշումների[774]: Միևնույն ժամանակ պատերազմը երկու կողմերին էլ կանգնեցրեց հիմնախնդիրների առաջ, յուրաքանչյուր կողմը ստիպված էր լուծել կուտակված հիմնախնդիրները յուրովի: Չնայած հաղթական ճակատա-

[773] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 118:

[774] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 6, թ. 38: Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918 -1920 թթ., էջ 138-139:

մարտներին, հայկական բանակը կանգնել էր դժվարությունների առաջ: Այդ մասին հաղորդում է Թիֆլիսում հայկական պատվիրակության ղեկավար Հարությունյանը: 1918 թ. դեկտեմբերի 24-ի հեռագրում՝ հասցեագրված Հայաստանի Հանրապետության մինիստր-նախագահին և Զինվորական նախարարին, շեշտվում էր Դրոյի կողմից ներկայացված հետևյալ պահանջների մասին. 1) չնախատեսված ծախսերի համար իր տրամադրության տակ դնել 50.000 ռուբլի, 2) ուղարկել 1500 «Լեբելի» և 800 թուրքական հրացաններ, ոչ պակաս 1000 զինվոր, ընդ որում Դրոն պահանջում էր հրացաններն ուղարկել անհապաղ: Հաղորդագրության մեջ տեղեկացվում էր, որ բժիշկների և ֆելդշերների սուր կարիք է զգացվում, որի բացակայությունը Սադախլոյի մոտի վերջին մարտերում մինչև 70 հոգու կյանք է արժեցել երկու կողմերի համար էլ: Հաղորդագրության վերջում ընդգծվում էր, որ հայկական բանակի ձեռք բերած մարտական հաջողությունները կարելի է ամրապնդել և հասնել կոնֆլիկտի արդարացի լուծմանը՝միայն այդ պահանջները բավարարելու դեպքում[775]:

1918 թ. դեկտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավարը ուղիղ հեռագրաթելով հաղորդում էր կառավարությանը, որ զրահագնացքների համար Ալավերդու գործարանում Շարաֆյանը գնել է 1250 փութ մազութ: Բացի այդ, վերջինս հաղորդում էր, որ Լոռու գյուղացիները հայտարարել են, որ Սադախլոյի գրավումից հետո հեշտացել է ցորենի ձեռք բերումը մուսուլմաններից, միևնույն ժամանակ տեղեկացնելով այն մասին, որ (անկասկած, բանակի ամրապնդման նպատակով) Դրոն անհրաժեշտ է համարում ձեռք բերել զինմասեր, ռազմամթերք, զենք ու հանդերձանք Կարսի պաշարներից, որի համար նույն օրն ուղևորվել էր Ա. Պուադեբարը[776]:

Դեկտեմբերի 25-26-ի դաշնակիցների միջամտությունը ևս որոշակի տագնապի առաջ է կանգնեցնում Հայաստանի Հանրապետության կառավարությանը և ստիպում լրջորեն մտորել իր հետագա անելիքների մասին: Դա երևում է կառավարության ղեկավար Հովի. Քաջազնունու ուղիղ հեռախոսագծով խոսակցությունից հայկական պատվիրակության հետ: Ընդգծելով, որ ըստ էության ռազմական գործողությու-

[775] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 16, թ. 348:

[776] Տե՛ս նույն տեղում, թ. 353:

ներն ընդհատելու մասին պահանջագիրը պետք է ընդունել, սակայն դրա հետ մեկտեղ Քաջազնունին գտնում էր, որ պայմանները բացահայտորեն հակված են վրացիների կողմը, որի դեմ իրենք եռանդուն բողոքելու են: Քաջազնունին հույս էր հայտնում, որ կհաջողվի որոշակի չափով փոխել պայմանները հօգուտ Հայաստանի, օրինակ, որպեսզի Լոռիում լինի ոչ թե խառը, այլ միայն հայկական վարչակարգ[777]:

Սակայն իրադարձություններն իրենց երկար սպասեցնել չեն տալիս, որովհետև աշխարհաքաղաքական կացությունը փոփոխվում էր սրընթացորեն և նոր բարդ իրավիճակներ ստեղծում: Հայկական կողմը ձգտում էր կոնֆլիկտի հնարավորին շուտ հանգուցալուծման, չնայած վրացիները անարդարացիորեն Հայաստանին մեղադրում էին ոչ միայն ագրեսիվության, այլև պատերազմի անհարկի և անտեղի ձգձգման մեջ:

Հայաստանի վարչապետ Հովհ. Քաջազնունին 1918 թ. դեկտեմբերի 26-ին կապվելով հայկական պատվիրակության հետ (Ղարաքիլիսայի միջոցով) նշում էր, որ երկրի ներքին իրավիճակը և արտաքին քաղաքական իրադրությունը անհրաժեշտ են դարձնում կոնֆլիկտի անհապաղ լուծումը: Քաջազնունու կողմից նշվում էր, որ հայկական զորքերը Բորչալուի գավառում հասել են Հայաստանի Հանրապետության սահմանին, հրաման է տրվել չանցնել այդ սահմանը, եթե միայն վրացական զորքերի թշնամական գործողություններով առաջ չբերվի բանակցությունների դանդաղեցում կոնֆլիկտի դադարեցման համար: Հովհ. Քաջազնունին հիշեցնում էր, որ ծագած կոնֆլիկտի խաղաղ ավարտման նպատակով դեկտեմբերի 19-ին Սանահին է ուղարկվել պատվիրակություն վրացիների հետ հանդիպելու, որի մասին Վրաստանի կառավարությունը երկու անգամ տեղեկացվել է, սակայն վերջինս չի արձագանքել: Նկատելով, որ նշված հեռագիրը ստացվել է հասցեատիրոջ կողմից, - նշում է Քաջազնունին, - Հայաստանի կառավարությունը ևս մի անգամ հրավիրում է Վրաստանի կառավարությանը ուղարկել լիազորված անձանց ռազմական գործողությունների դադարեցման պայմանները հաստատելու համար[778]:

Հարկ է սակայն ընդգծել, որ Հայաստանի վարչապետի եզրափակիչ խոսքում՝ որոշակի անհանգստություն կար արդեն, որի մասին

[777] Տե՛ս նույն տեղում, թ. 357:
[778] Տե՛ս նույն տեղում, թ. 361-363:

ստորև կնշենք: Նշելով ռազմական գործողությունների դադարեցման անհրաժեշտության մասին, Հովի. Քաջազնունին նկատի ուներ այն հանգամանքը, որ երկաթուղային հաղորդակցության բացումը Թիֆլիսի հետ ծայրահեղորեն անհրաժեշտ է[779]: Հենց սա է այն զորավոր պատճառներից մեկը, որը չնայած պատերազմի փաստական հաղթական ելքին, Հայաստանի կառավարությունը հակված էր և գնաց որոշակի, լուրջ զիջումների Վրաստանին, որը բացատրվում էր այն աշխարհաքաղաքական խեղդուկ իրավիճակի առանձնահատկություններով, որում գտնվում էր Հայաստանն այդ օրերին:

Ըստ երևույթին, վրացիների հետ բանակցելու մեկնած հայկական պատվիրակության ղեկավար Մ. Հարությունյանը դեկտեմբերի 26-ի վիճակով դեռ որոշակի հույսեր էր փայփայում, երբ Հայաստանի միևնիստր-նախագահին ուղղված հեռախոսագրում ասում էր ներքոհիշյալը. Վրաստանը մտադրություն չունի շուտ ուղարկելու իր ներկայացուցիչներին, իսկ դիվանագիտական միջամտությունը կարող է ուշանալ: Այդ իսկ պատճառով, - ընդգծում էր Հարությունյանը, - միայն հայկական զորքերի թվական (հետևաբար նաև՝ ռազմական - Վ. Վ.) գերակշռությունը կարող է արագացնել վրացիների կողմից արվելիք զիջումը, և այդպիսով, զոհերի թիվը երկու կողմերի համար էլ կարող է քիչ լինել: Հարկավոր է, - պնդում էր նա այդ հեռախոսագրում, - շուտափույթ Դրոյին հասցնել 2000 լավ վարժված զինվոր՝ զինված ֆրանսիական հրացաններով: Պայքարը, ըստ երևույթին, դեռևս շարունակվելու է, դիմադրությունը լուրջ է, չնայած մենք համոզված ենք, որ հաղթանակը մերն է լինելու: Հետևաբար, - եզրափակում էր Հարությունյանը, - անհրաժեշտ է Դրոյին ուղարկել համալրում մարդկանցով և ֆրանսիական հրացաններով[780]:

Հաջորդ մի քանի օրերին ևս նման վիճակ է իշխում: Հովի. Քաջազնունին դեկտեմբերի 26-27-ի ընթացքում (գիշերվա ժամը 2-ին) Հայաստանի պատվիրակության ղեկավար Հարությունյանին ուղիղ հեռագրագծով հաղորդում էր ՀՀ պառլամենտի հայտնի որոշման մասին. 1) մեծ տերությունների ներկայացուցիչների կողմից ներկայացված համաձայնագրի և ռազմական գործողությունների դադարեցման մասին առա-

[779] Տե՛ս նույն տեղում, թ. 16:
[780] Տե՛ս նույն տեղում, թ. 365:

ջարկն ընդունել, 2) նկատի ունենալով, որ առաջարկված պայմանները խախտում են Հայաստանի իրավունքները, առաջարկել կառավարությանը փոփոխել դրանք՝ կոնֆլիկտի վերացման պայմանների մասին պառլամենտի նախորդ որոշման համաձայն: Այնուհետև իր անունից Հովի. Քաջազնունին հետաքրքրքիր հարցադրումներ է անում, որոնց մեջ որոշակի անհանգստություն էր զգացվում իրադարձությունների զարգացման հետագա ընթացքի վերաբերյալ: Հովի. Քաջազնունին հայկական պատվիրակությունից պահանջում էր աշխատել հասնել համաձայնագրի պայմանների փոփոխմանը. 1) եթե հանձնաժողովը լիազորված չէ փոփոխություններ ներկայացնելու, ապա հարկ է գնալ Թիֆլիս և ձգտել հասնել փոփոխության, 2) ցույց տալ, որ Ջամալյանը լիազորված չի եղել մտնել այդ հարցի վերաբերյալ որևիցե համաձայնության, մինչդեռ Վրաստանի կողմից կոնֆերանսին մասնակցում էր կառավարության ղեկավարը, 3) բողոքել Լոռուց հայկական զորքերի դուրս բերման դեմ այն ժամանակ, երբ վրացիները մնում են Ախալքալաքում, գլխավորապես ընդդեմ խառը հանձնաժողովի ստեղծման Լոռիում, այն ժամանակ, երբ Ախալքալաքում մնում է վրացականը: Հովի. Քաջազնունին ընդգծում էր, որ եթե Ախալքալաքից դուրս չեն բերվելու վրացական զորքերը, անհրաժեշտ է, որպեսզի Լոռիում մնան հայկական զորքերն այնտեղ, որտեղ նրանք կանգնած են: Այնուհետև Հովի. Քաջազնունին հայտնում էր, որ եթե Ախալքալաքում ադմինիստրացիան վրացական է, անհրաժեշտ է, որպեսզի Լոռիում այն լինի հայկական, 4) փորձել հասնել, որպեսզի երկաթուղային ճանապարհը բացվի ազատ երթևեկության համար Հայաստանից դուրս և դեպի Հայաստան՝ ապահովելով անհրաժեշտ շարժակազմը և վառելիքը, 5) պահանջել, որ վրացիները տան Հայաստանին պատկանող ունեցվածքը, որը գտնվում էր Թիֆլիսում, ինչպես նաև Հայաստանին պատկանող բոները[781]:

Արդեն ակնհայտ էր տագնապը Հայաստանի կառավարության դիվանագիտական և ռազմաքաղաքական քայլերում, որն ըստ երևույթին, զգում էր նաև վրացական կողմը, և օգտվելով ստեղծված բարենպաստ հանգամանքներից, ինչպես նաև մեծ տերությունների որոշակիորեն սադրիչ և պրովրացական տրամադրվածությունից, ձգձգում էին հայ-

[781] Տե՛ս նույն տեղում, թ. 378:

վրացական բանակցությունները: Այդ անհանգստությունը հստակորեն երևում է Հովի. Քաջազնունու վերը նշված խոսակցության ժամանակ արտահայտված հետևյալ մտքից. Հովի. Քաջազնունին, որպես ընդհանուր հրահանգ հաղորդում էր, որ պատվիրակությունը ձգտի հասնելու հնարավորինս առավելագույն արդյունքների, սակայն Հայաստանի դեմ չհանելով դաշնակիցներին, և որևիցե փոփոխության հասնելու անհնարինության դեպքում ընդունել պայմանները, սեփական իրավունքների պաշտպանությունը թողնել եվրոպական կոնգրեսին մասնակցող հայերին[782]:

Սակայն իրադարձությունները հայկական սցենարի համաձայն չեն ընթանում: Մեծ տերությունների հանձնախումբը (2 անգլիացի- բրիտանական կապիտան Հերբերտ Հենրի Դուգլաս Վիձերս, 1 ֆրանսիացի [ֆրանսիական կապիտան Նիկոլաս Գասֆիլդ] և 1 վրացի սպա – գնդապետ Ջափարիձե), անգլիական կապիտան Դուգլաս Վիձերսի գլխավորությամբ դեկտեմբերի 28-ին հասավ Ղարաքիլիսա և հայկական զորքերի հրամանատարությանը ներկայացրեց մեծ տերությունների կողմից մշակված համաձայնագիրը: Հայկական պատվիրակության ղեկավարը Մարտիրոս Հարությունյանն էր:

Սակայն հենց այդ նույն օրը վրացիներն անցան լայնածավալ ռազմական գործողությունների: Վրացական բանակը զգալի չափով համալրվել էր զենք ու զինամթերքի պաշարներով, սննդեղենի մատակարարումը ավելի բարվոք վիճակում էր: Ավելին, վրացիներին յուրահատուկ դաշնակից էր հայտնվել, նրանց էին միացել Բորչալուի թուրքերը, որոնք ռազմադաշտ էին դուրս բերել կամավորական խմբեր: Վրաստանը լրիվ մոբիլիզացվել էր: Մի տեղեկության համաձայն, Հայաստանի դեմ գործող զորքերի թիվը 12.000 սվին է եղել[783]:

Նկարագրելով այդ դրամատիզմով հագեցած իրադարձությունները, վրաց առաջնորդ Նոյ Ժորդանիան Ստանֆորդում 1968 թ. ռուսերեն լեզվով լույս տեսած «Իմ կյանքը» հուշագրության մեջ պնդում է, որ բրիտանական սպաները սկզբնական փուլում թշնամաբար էին տրամադրված Վրաստանի նկատմամբ, սակայն երբ վրացական բանակը ուշքի եկավ հայերի հարձակումից հետո, վրացիները սկսեցին նախաձեռ-

[782] Տե՛ս նույն տեղում:

[783] Տե՛ս «Կայծ». Երևան, 22 փետրվարի, 1919 թ., № 22:

նությունը իրենց ձեռքը վերցնել, որոնց «հաշվարկները ճիշտ դուրս չեկան», հայերին փրկելու համար միջամտեցին և ստիպեցին դադարեցնել պատերազմը»[784]: Իսկ վրաց պատմաբան Վ. Ի. Ադամիան իր աշխատանքներում մեղադրում է բրիտանական գործակալներին վրաց-հայկական պատերազմի սանձազերծման մեջ, գտնելով, որ Մեծ Բրիտանիան ձգտում էր իր համար ապահովել կայուն, հաստատուն դիրքեր Անդրկովկասում[785]:

Այդուհանդերձ, մի շարք հետազոտողներ, մասնավորապես Տ. Ասոյանը, ելնելով մի շարք փաստաթղթերից, քիչ այլ եզրահանգման է գալիս այդ իրադարձություններում հնարավոր բրիտանական մասնակցության ունեցած ազդեցության առումով, գտնելով, որ վրաց-հայկական պատերազմի սկսման պահին, ինչպես Վրաստանում, այնպես էլ Հայաստանում բրիտանական ներկայացուցիչներ չկային, որոնք կարող էին հրահրել ռազմական բախումներ[786]: Այս տեսանկյունից միանգամայն դիտարժան է բրիտանական թղթակից, բանաստեղծ Բեհհովերի վկայությունը Վրաստանի նկատմամբ դաշնակիցների բարեհաճ կողմնորոշման մասին: Բեհհովերը ուղևորվել էր Կովկաս «հայերի նկատմամբ ունեցած համաեվրոպական նախապատվություն ունեցած լինելու» նախատրամադրվածությամբ և շուտով հասկացավ, որ բրիտանական զինվորականները փրկեցին Վրաստանը[787]:

Ընդհակառակը, հայկական զգալիորեն ավելի սակավաթիվ բանակը դժվարությունների առաջ էր կանգնել: Զորքը վատ էր պարենավորված, կոմունիկացիաները վատ էին զարգացած, պահեստային ուժերի կարիք էր զգացվում, իրական թիկունքը զգալիորեն հեռու էր, Հայաստանի կառավարությունը զբաղված էր բազմաթիվ ներքին ու արտաքին հիմնախնդիրներով: Ինչպես նշում է Ս. Վրացյանը, դրությունը դժվարացնում էր և մի ուրիշ հանգամանք. «քանի դեռ կռիվները տեղի էին ունենում հայկական շրջաններում, լոռեցիները զենքը ձեռքներին մաս-

[784] Տե՛ս Жордания Н., Моя жизнь, Станфорд, 1968, стр. 89-90:

[785] Տե՛ս Адамия В. И., Из истории английский интервенции в Грузии (1918-1921 гг.), стр. 73-74:

[786] Տե՛ս Асоян Т. М., Территориальные проблемы Республики Армения и британская политика (1918-1920 гг.), стр. 110:

[787] Տե՛ս Hovannisian R. G., The Republic of Armenia, vol. II, p. 119-120:

նակցում էին պատերազմական գործողություններին՝ միշտ բանակի առաջին շարքերում: Հենց որ ամբողջ Լոռին գրավվեց և պատերազմը սկսեց տեղափոխվել հայկական շրջաններից դուրս, լոռեցիները, մեծ մասով հեռացան իրենց տները և կռվի դաշտում մնացին գլխավորապես կանոնավոր զորամասերը: Այս պարագան, իհարկե, վատ անդրադարձավ մնացած զինվորների հոգեկան վիճակի վրա: Հայկական բանակը աստիճանաբար փոքրանում էր, վրացիներինը, ընդհակառակը, ավելանում էր: Ուժերի համեմատությունը փոխվում էր ի նպաստ թշնամու»[788]:

Հայկական կառավարությունը փորձում էր և՛ զինադադար կնքել, և՛ պատերազմն ավարտել ոչ վատ արդյունքներով՝ ապավինելով Դաշնակից երկրների բարեսիրտ վերաբերմունքին: Հայաստանի կառավարության դիրքորոշումը լի էր տագնապով թե՛ դեկտեմբերի 27-ի, և թե՛ դեկտեմբերի 28-ի նիստի ժամանակ: Տագնապելու բոլոր հիմքերը կային, բայց և հակազդելու հնարավորությունները փոքր էին, ոչ իրական: Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի 1918 թվականի դեկտեմբերի 28-ի նիստում լսվեց Արտաքին Գործերի նախարարի զեկուցումը այն հեռագրական խոսակցության մասին, որ ինքն ունեցել է անգլո-ֆրանսիական ներկայացուցիչների ու վրաց պատվիրակության, ինչպես նաև Դիլիջան ժամանած ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի հետ: Արտաքին Գործերի նախարարի զեկուցագրում հարց էր բարձրացվում՝ կապված խառը հանձնաժողով ստեղծելու հանգամանքների, դրա գործառնությունների և իրավասությունների մասին: Միաժամանակ հարցապնդում էր արվում, թե ինչու՞ դաշնակից պետությունների ներկայացուցիչները հայ-վրացական կոնֆերանս վերաբացելու միտված բանակցություններին հրավիրել են Վրաստանի ներկայացուցչին, իսկ Հայաստանի ներկայացուցչին՝ ոչ: Բացի այդ, Արտաքին Գործերի նախարարը սույն նիստում ընդգծում էր՝ Վրաստանի դեպի հայերը բռնած դիրքի և Թիֆլիսում հայերի դեմ ձեռնարկած միջոցների մասին (հակահայկական հիստերիայի - Վ. Վ.): Այս ամենի կապակցությամբ Նախարարների խորհուրդը որոշում է ընդունում իսկույնևեթ ուղիղ հեռագրագծով կապվել Ղարաքիլիսայում գտնվող հայկական պատվիրակության հետ, և պայմանավորվել զինադադար կնքելու առ-

[788] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 236-237:

թիվ առաջ եկած նոր պայմանների մասին: Վարչապետը նաև տեղյակ է պահում այն փաստի մասին, որ իբրև հետևանք դաշնակիցների միջնորդության՝ Ղարաքիլիսայում գտնվող հայկական պատվիրակության և վրաց ներկայացուցիչների միջև սկզբունքային համաձայնություն է կայացել զինադադարը գործողության մեջ դնել դեկտեմբերի 31-ին ժամը 24-ից սկսած[789]:

Սակայն մինչև զինադադարի գնալը կողմերը փամփուշտների տեղատարափ ուղղեցին միմյանց դեմ: Դեկտեմբերի 25-ից մինչև 27-ը ընկած ժամանակահատվածը հայ-վրացական ռազմաբեմում ռազմական գործողությունները ամփոփվեցին մի շարք ընդհարումների մեջ: Վրացիների ձգտումը՝ ռազմական առավելության հասնելու, գործնականում ձախողվեց:

Հայտնի է, որ դեռ դեկտեմբերի 27-ից սկսված, վրացական զորքերի գլխավոր խմբերը սկսեցին կենտրոնանալ Շուլավերի շրջանում, փորձելով ուժերի գերակշռություն ապահովելով, ձեռք բերել ռազմավարական առավելություն, և այս ռազմաքաղաքական իրադարձությունների և հայ-վրացական հարաբերությունների տարեգրության ամեն մի էջ հաճախ յուրովի է լուսաբանվում, հաճախ նաև նենգափոխվում:

1918 թ. դեկտեմբերի 28-ին ժամը 12-ին սկսվեց վճռական ճակատամարտը Շուլավերի համար: Վրացական 3500 զորքը գեներալ Մազնիևի գլխավորությամբ, 12 թնդանոթով՝ հրետանային պատրաստությունից հետո, հարձակման անցան ավելի քան տասը կիլոմետր ձգվող ռազմաճակատով: Վրաց պատմաբանները, այդ թվում և վրաց-հայկական պատերազմի թեման իբր թե անաչառ ուսումնասիրող Է. Անդերսենը և Գ. Էգգեն, անկապ և երկրորդական փաստերը գլխավորի տակ անցկացնելով, կեղծ վարկած են առաջադրում, թե իբր այդ օրը վրացական կողմը առավելություններ ձեռք բերեց և մի քանի անգամ հայկական զորամասերը անհաջող հակագրոհներ ձեռնարկեցին, սակայն այդ նույն օրվա գիշերվա կողմը իբր թե վրացական զորքերին հաջողվեց գրավել Շուլավերից արևելք գտնվող բարձունքները և «կախվել» քաղաքի վրա, չնայած այնքան էլ համոզված չեն պնդում ասելիքը: Այդուհանդերձ, վերջիններս ավելացնում են նաև, թե արդեն դեկտեմբերի 29-ի

[789] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 199, ց. 1, գ. 6, թ. 41:

առավոտյան վրացական սպայական կազմը մտավ Շուլավեր: Տպավորություն է առաջանում, թե վրացական զորքը զինվորներ չուներ, իսկ հայերը նահանջեցին: Իսկ այնուհետև այս պնդումներին հետևում են սին պնդումները թե՛ հայ, և թե՛ վրացի զինվորության կողմից ձեռնարկված մանևրումների և փորձերի մասին՝ հակառակորդին թևային շրջանցումներով հաղթահարելու անորոշ փորձերի մասին[790]:

Դեկտեմբերի 29-ին Շուլավերի շրջանում Մազնիևի գլխավորած վրացական զորամասը 3500 հետևակով, 12 թնդանոթով հայկական դիրքերը մրրկալից թնդանոթային կրակի ենթարկելուց հետո հարձակում սկսեց գնդապետ Կորոլկովի ամբողջ ճակատի վրա: Չնայած հակառակորդի զինվորների և թնդանոթների գերազանց ուժերին, հայկական զորքերը դեկտեմբերի 26-ից սկսած չորս օր շարունակ ետ մղեցին վրացիների գրոհները՝ մեծ վնաս հասցնելով թշնամուն, մինչդեռ ձախ թևը համառ կերպով պաշտպանում էր հայկական դիրքերը, կենտրոնը չդիմանալով վրացիների գրոհներին, ստիպված եղավ անցնել Շուլավերի հյուսիսային կողմը և դրանով իսկ լուրջ դիմադրություն ստեղծեց երկու թևերի համար: Կորոլկովը սկսեց նահանջել ավելի հարմար դիրքեր՝ մինչև թարմ ուժերի հասնելը: Միևնույն ժամանակ աջ թևում, երկաթուղագծի շրջանում վրացիները թվով 800-900 հոգի՝ նրանց միացած թուրքերի հետ, հարձակում սկսեցին գնդապետ Իշխանյանի զորամասի վրա Կասսուլո և Ախմաղլու գյուղերի կողմից և անցան հայկական զորքերի աջ թևի թիկունքը: Հայկական զորքերը շարունակելով կռվել, դուրս են գալիս այդ վիճակից, փոխելով կռվի ճակատը, և օգնական ուժեր չստանալով՝ նահանջում են[791]: Հայկական կողմը տալիս է մոտ 200 հոգի սպանված ու վիրավոր 7 սպա, կորուստ տալով 3 թեթև թնդանոթ[792]: Դեկտեմբերի 29-ին օգնության է հասնում գնդապետ Տիմչենկոն: Որոշակի չափով վիճակը դեռ կայուն էր, սակայն կային արդեն ռեալ տագնապներ և հոգեբանական դժվարություններ: Այնուհետև հայ-վրացա-

[790] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html:

[791] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 38, թ. 1; Տե՛ս նաև «Խոսք», Երևան, 4 հունվարի, էջ 4, շաբաթ, 1919, № 1, «Ձանգ», Երևան, 1 հունվարի, 1919 թ., N 1:

[792] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 237:

կան առճակատման դաշտը տեղաշարժվեց դեպի Սադախլո, ընդ որում հայ զորքը խրամատավորվել էր Սադախլոյի արևելյան, հյուսիսային և հարավային հատվածներում, իսկ վրացիները ամրապնդվել էին հարավարևմտյան մասում, և կողմերի խուլ և համառ հակամարտություն էր ընթանում: Վրացիները կենտրոնացան երկու մեկնարկային կետերում՝ Շուլավերի մոտ կենտրոնացնելով 3500 մարդ, իսկ Կալագանի մոտ՝ 600, որոնց միացան նաև ավազակ թուրքերը[793]:

Դա լավ է երևում դեկտեմբերի 29-ի երեկոյան Հայաստանի Հանրապետության պատվիրակության և կառավարության նախագահ Հովհ. Քաջազնունու միջև ուղիղ հեռագրագծով կայացած խոսակցությունից. ապարատի մոտ է պատգամավորությունը և գեներալ Սիլիկովը:

Հովհաննես Քաջազնունին՝ Սիլիկովին. - Եթե բանակցությունները մի քանի օր ձգձգվեն, հույս ունենք, որ դուք որոշ ժամանակ հաջողությամբ կդիմանաք, կկարողանաք առաջ տեղաշարժվել կամ էլ գոնե պահպանել ներկա դիրքերը, նկատի ունենալով դրությունը ռազմաճակատում, զորքերի ռազմամթերքի վիճակը, դիրքերի տակտիկական վիճակը, 3-րդ մարտկոցի մոտենալու հնարավորությունը, ինչպես նաև՝ հայտնի՞ է Ձեզ արդյոք երկրի վիճակը դրամական և պարենային առումով.

Սիլիկով. - Զորքերը անընդմեջ երկու շաբաթ մարտական աշխատանքում են և Դրոյի զեկույցի համաձայն հոգնած են՝ փոխարինում չունենալով: Ռազմամթերքի պաշարները հրետանունը զգալի է կամ բավականին, հրացանայինը՝ 280.000: Համալրում գալիս է, բայց ոչ ուժեղ: Որոշ գնդերի դիրքեր բավականին ամուր կանգնած են: Օգնական ուժերի մոտեցումով կարող ենք հույս ունենալ, որ մոտակա օրերին գնդերը կպահպանեն այդ դիրքերը, սակայն այս վիճակը երկար շարունակվել չի կարող, այդ իսկ պատճառով կարծում եմ, առաջին իսկ հնարավորության դեպքում՝ ակտիվություն զարգացնել մինչև Խրամ: Պարենամթերքը միայն հաց և 50 ֆունտ շաքար է, որն ուղարկված է եղել հատուկ առաջապահ զորամասերի համար, ջոկատին տրված դրամները՝ 600.000 ռուբլի գումարը, արդեն վերջանալու վրա է… Հագնված են մար-

[793] Տե՛ս «Ձանգ», Երևան, 1 հունվարի, 1918, N 1:

դիկ, ինչպես ձեզ հայտնի է՝ վատ: Վագոններից վերցված հանդերձանքը, շինելները և կոշիկները ողջ ջոկատի համար բավարար չէ:

Քաջազնունի. - Ինչպիսին է Ձեր կարծիքը՝ հարկ կա արդյո՞ք շտապել զինադադարի կնքման հարցում, թե ավելի լավ է գործը ձգձգել մի քանի օր:

Սիլիկով. - Ես ներկա եմ եղել զինադադարի կնքման հարցի քննարկման ժամանակ, և չնայած այն բանին, որ փամփուշտները քիչ են, ակամայից կարծես թե ստիպված ես մի քանի օր ձգձգել: Ես կխնդրեի բնակչությունից հավաքել փամփուշտները: Ալեքսանդրապոլում հավաքված է մոտ 80.000 փամփուշտ, որոնց մի մասը՝ ես կվերցնեմ ինձ հետ:

Քաջազնունի. - Ես չհասկացա, շահավե՞տ է արդյոք մեզ ձգձգել բանակցությունները, թե մենք ստիպված ենք դա անել մեզանից չկախված հանգամանքներից դրդված:

Սիլիկով. - Մենք հարկադրված ենք գնալ դրան, ի հետևանք այն բանի, որ մեր մոտ ժամանած անձինք լիազորված են միայն ստանալ որոշակի պատասխան պատգամավորությունից, որից հետո կուղևորվեն Թիֆլիս, որտեղից կհետևի վերջնական որոշումը գործողությունների դադարեցման մասին… Ես խնդրում եմ ինձ ուղարկել համալրում և պարեն: Ուրիշ ոչինչ չունեմ: Դրությունը ռազմաճակատում շատ լուրջ է:

Քաջազնունին հարցնում է Հարությունյանին.- Պատգամավորությունը ոչինչ չունի՞ ավելացնելու Ջամալյանի կողմից ասվածին.

Հարությունյան.- Ջամալյանի հեռանալուց հետո պարզվեց, որ անգլո-ֆրանսիական հանձնաժողովը լիազորված չէ մտցնելու որևիցե փոփոխություն… Միակ բանը, որ նա կարող է անել, դա հեռագիր ուղարկելն է Թիֆլիս և հաղորդելը, որ Հայկական կառավարությունը համաձայն է անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և վրացական ներկայացուցիչների հետ Թիֆլիսում հաստատելու զորքերի ետքաշման օրը՝ համաձայն դաշնակցային հրամանատարության որոշման և խնդրել այդ որոշման որոշ կետերի պարզաբանումը, այն է՝ խոռը ադմինիստրացիայի և Ախալքալաքի գավառում ստեղծված վիճակին վերաբերող: Վերջին հեռագրում մանրամասները չեն հիշատակվում: Այսպիսով, եթե մենք համաձայնվենք այդպիսի հեռագրի ուղարկման հետ, ապա դրանով իսկ մենք ընդունում ենք բոլոր դրված պայմանները:

Սակայն դեռևս պատգամավորությունում միակարծություն չկա այդ հարցերի վերաբերյալ: Հետաքրքիր է իմանալ Ձեր կարծիքը, որից հետո պատգամավորությունը իրեն իրավունք է վերապահում ընդունել այս կամ այն վճիռը:

Քաջազնունի. - Մեր պատասխանը կտանք քիչ անց: Եթե համաձայնվենք հենց այսօր ընդունել դաշնակիցների պայմանները, ապա այդ ժամանակ և ի՞նչ կարգով է ենթադրվում իրականացնել ռազմական գործողությունների ավարտը:

Հարությունյան. - Նրանք ենթադրում են, որ անհապաղ կդադարեցվեն ռազմական գործողությունները, սակայն ինչպես արդեն ասել է Սիլիկովը, կարգադրությունը պետք է լինի Թիֆլիսից, որը կտևի երեք օր: Մենք մի քանի անգամ ընդգծել ենք, որ խնդրում ենք դաշնակցային հրամանատարությանը մեզ անձամբ ունկնդրել, որից հետո մենք, անկասկած, կենթարկվենք իրենց որոշմանը, նույնիսկ այն դեպքում, եթե նա չի ցանկանա որևիցե փոփոխության գնալ: Սակայն այս բոլորին հանձնաժողովի նախագահը համառորեն պատասխանում է, որ մենք պետք է կա՛մ ամբողջությամբ ընդունենք այդ առաջարկը, կա՛մ առաջադրենք մեր կոնտրառաջարկը: Նրանք նույնիսկ ոչ լիովին են համոզված, որ վրացիները կթողնեն մեր պատգամավորությանը Թիֆլիս[794]:

Մեկ ժամ անց ըստ պայմանավորվածության, զրույցը շարունակվում է.

Քաջազնունի. - Թելադրում եմ Նախարարների խորհրդի որոշումը. ներկա են Հախվերդովը, Խատիսովը, Տիգրանյանը, Հարությունյանը, Մելիք-Կարակոզյանը, Արամը հիվանդ պառկած է, Էնֆիաջյանը առողջության պատճառով բացակայում է: Որոշումը ընդունված է միաձայն. «Ելնելով այն հանգամանքից, որ պատերազմի հետագա շարունակումը կարող է մեզ սպառնալ դրության վատթարացմամբ, Նախարարների խորհուրդը միաձայն որոշում է Հարությունյանի գլխավորությամբ գործող պատգամավորությանը առաջարկել կապիտան Դուգլասի գլխավորությամբ գործող պատվիրակությանը տալ հետևյալ պատասխանը. Չցանկանալով հետագա արյունահեղություն, ընդառաջ գնալով տերությունների ցանկությանը, համաձայնություն ենք տալիս պատերազմի

[794] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 404-405:

շուտափույթ ավարտին և երկաթուղային հաղորդակցության վերականգնմանը: Հայաստանի կառավարությունը արտահայտում է իր համաձայնությունը անգլո-ֆրանսիական հանձնաժողովի առաջարկին՝ դադարեցնել ռազմական գործողությունները այն պայմաններով, որոնք այդ հանձնաժողովը որոշել է: Դրա հետ մեկտեղ Հայաստանի կառավարությունը գտնելով, որ այդ պայմանները մշակված են առանց իր կողմից լիազորված ներկայացուցիչների մասնակցության, ցանկություն է արտահայտում, որպեսզի այդ պայմանները վերանայվեն Հայաստանի կառավարության կողմից լիազորված անձանց մասնակցությամբ: Սակայն այդ ցանկության իրագործումը չպետք է կասեցնի անգլո-ֆրանսիական հանձնաժողովի առաջարկած պայմանների իրագործումը»[795]: Այնուհետև՝ «անհրաժեշտ է, որպեսզի անգլո-ֆրանսիացիները գնան ռազմաճակատ՝ ռազմական գործողությունների կանգնեցման նպատակով»:

Հարությունյան.- Կառավարության որոշումը հարցը լուծում է վերջնականապես և պատգամավորությանը զրկում մեզ առաջարկված բանաձևի հիման վրա Թիֆլիս մեկնելու հնարավորությունից ՝ նպատակ ունենալով հասնելու ուղղումների, թեկուզև այդ հեռագրում առաջարկված սահմաններում:

Քաջազնունի.- Կառավարության որոշումը վերջին զիջումն է: Եթե այսօր Ձեզ չհաջողվի հասնել համաձայնության լավագույն պայմանների հիման վրա: Եթե Ձեզ հենց այժմ հաջողվի դադարեցնել պատերազմը, իսկ մնացած պայմանները՝ Թիֆլիս տեղափոխման դեպքում դրվեն նոր քննարկման համար, ապա դա կլինի ամենալավագույնը: Սակայն եթե պայմանների վերանայման պահանջը կհանգեցնի դրանով իսկ ռազմական գործողությունների ավարտի դանդաղեցմանը, ապա դա մեզ համար օգուտ չի, քանի որ մենք զգուշանում ենք, որ մեր վիճակը կվատթարանա, այդ իսկ պատճառով անհրաժեշտ ենք գտնում հենց այժմ իսկ հասնել զինադադարի, թեկուզև դաշնակիցների բոլոր պայմանների ընդունումով: Եթե այսօրվա խորհրդակցության ընթացքում կպարզվի լավագույն հնարավորության կոմբինացիաներ և կտրվեն կառավարության նոր ցուցումներ, ապա կանչեցե՛ք մեզ ապարատի մոտ:

[795] Տե՛ս նույն տեղում:

Համենայն դեպս նիստի ավարտի դեպքում հաղորդեցեք մեզ արդյունքը[796]:

Ահա այսպես, ասվածից պարզ է, որ պատերազմը թևակոխում էր իր վճռական փուլը, և հակամարտող երկու կողմերն էլ ունեին թե՛ իրենց անելիքները, և թե՛ սպասելիքները: Ամեն դեպքում, ելնելով որոշակի իրողություններից, Հայաստանի Հանրապետության խորհրդարանը դեկտեմբերի 30-ին կրկին հայտնում է իր պատրաստակամությունը արյունահեղությունից խուսափելու նպատակադրումով գիշերվա ժամը 12-ին, համաձայն դաշնակիցների կատեգորիկ պահանջի՝ դադարեցնել պատերազմական գործողությունները և կնքել զինադադար, չնայած այն հանգամանքին, որ այդուհանդերձ, համաձայն զինադադարի նախնական պայմանների՝ հայկական կողմի պահանջները ամբողջությամբ չեն իրականացվում[797]:

Դեկտեմբերի 30-ին ռազմական գործողությունները շարունակվում էին: Այդ նույն օրը Ղարաքիլիսայում գտնվող դաշնակցային տերությունների հանձնաժողովի նախագահ կապիտան Դուգլաս Վիձերսը հեռագիր ուղարկեց դաշնակից տերությունների հրամանատարությանը, որում հայտնեց, որ Հայկական կառավարությունը համաձայն է ռազմական գործողությունների անհապաղ դադարեցմանը և հայկական զորքերի ետ քաշմանը, ինչպես դա որոշվել է գեներալ Ռայկրոֆտի կողմից: Վիձերսը հայտնում էր, որ պատերազմող կողմերի ներկայացուցիչների հետ համաձայնությամբ ռազմական գործողությունները պետք է ընդհատվեն 1918 թ. դեկտեմբերի 31-ին ժամը 24-ին:

Այդ ընթացքում, ծավալվող բանակցությունների և շարունակվող հայ-վրացական բախման ժամանակ, դեկտեմբերի 30-ին՝ որոշակի անհամաձայնողական դիրքորոշումից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, համաձայնվեց գնալ զինադադարի: Դրանից ելնելով, կապիտան Վիձերսը հետևյալ հեռագիրը հղեց Բրիտանական միսիայի ղեկավարին. «Թիֆլիս. Բրիտանական միսիային, պատճենը՝ Մինիստրների Խորհրդի նախագահին, Արտաքին և Զինվորական գործերի նախարարին.

---

[796] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 408: «Խոսք», Երևան, 4 հունվարի, 1919, № 1:

[797] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 139:

Հայկական կառավարությունը համաձայն է անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և ետ քաշել զորքերը, ինչպես դա վճռվել է գեներալ Ռայկրոֆտի հետ: Ռազմական գործողությունները պետք է դադարեն պատերազմող երկրների ներկայացուցիչների համաձայնությամբ, 1918 թվականի դեկտեմբերի 31-ին ժամը 24-ին: Հայկական կառավարության համար այնքան էլ պարզ չեն գեներալ Ռայկրոֆտի կողմից առաջարկված համաձայնագրի որոշ կետեր, սակայն սկզբունքորեն համաձայնվել է ստորագրել պայմանները: Նա ցանկանում է ստանալ ավելի ճշգրիտ պարզաբանում, այդ իսկ պատճառով էլ լիազորել է երկու պատգամավորների, մեկը՝ քաղաքացիական, մյուսը՝ զինվորական, որոնք իմ հետ միասին գնում են Թիֆլիս դաշնակիցների կողմից այս հարցերի վերջնական պարզաբանումների համար: Քննարկելով այդ հարցերը, ես միանգամայն համաձայն եմ հայկական կառավարության հետ, որ այդ հարցերի մի շարք մանրամասներ պետք է ավելի ճշգրիտ պարզաբանվեն բավարար և խաղաղ աշխատանքի համար այն պայմաններով, որ առաջարկվել են գեներալ Ռայկրոֆտի կողմից: Հայկական կառավարությունը արտահայտել է ամենալայն մեծահոգությունը և խաղաղության ամենաանկեղծ ցանկությունը: Դաշնակից տերությունների հանձնաժողով. Հանձնաժողովի նախագահ Դուգլաս Վիձերս, կապիտան, 30 դեկտեմբերի 1918 թվականի»[798]:

Սակայն սա վճռորոշ հանգամանք չէր, քանզի ՀՀ կառավարության, զինվորական այրերի և քաղաքական ուժերի գերակշռող մեծամասնության հենց այս արևմտամետ, այդ պահին եվրոպամետ [անգլո-ֆրանսիական] կողմնորոշումը, եվրոպական իրավարարչությանը կուրորեն ապավինելը, հայկական պետությանը հեռացրեց Վրաստանի հետ անմիջական և ուղղակի հարաբերումից սահմանատարաձքային խնդիրների լուծման գործում, ավելորդ վստահություն ներշնչեց ռազմական առճակատման ժամանակ, և վերջնարդյունքում, քանի որ սպասելիքները չարդարացան, հայտնվեց մեկուսացման և օտարվածության մեջ: Դա ակնհայտորեն արտացոլվեց պատերազմի հանրագումարում:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանը այդ չարաբաստիկ պատերազմը շարունակելու դեռ տեսական որոշ աղոտ հնարավորություններ և

[798] Տե՛ս Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 131-132: Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 20:

ժամանակ ուներ, և կողմերը պատերազմում էին, ով ինչպես կարողանում էր: Դեկտեմբերի 29-ի վիճակով հայկական Շուլավերի զորամասը թշնամու ուժերի ճնշման տակ ետ է քաշվում Սադախլո-Խոժոռնի գծի վրա և բռնում 2660 բարձունքը, որի ընթացքում թնդանոթային մարտկոցը կամ զորամասը կռիվներ էր մղում Իվխարի-Սարալի մոտ[799]: Ռազմաքաղաքական իրավիճակը շարունակեց մնալ շատ լարված, կողմերը տենդագին քայլեր էին ձեռնարկում: Դեկտեմբերի 30-ին առավոտյան վրացիները փորձեցին մոտենալ Սադախլո կայարանին և Լամբալո գյուղին, անգամ ժամանակավորապես գրավեցին, բայց հայկական հրետանին ուժեղ կրակով ետ շպրտեց նրանց գրավված դիրքերից: Վրացիները նորից անցան հարձակման, սակայն հայկական զրահապատը գնդակոծում է Սադախլոն, որի հետևանքով վրացիներն ու նրանց միացած թուրքերը այրում են Դամիա գյուղը, կատաղի կռիվներից հետո գրավելով Բոլնիս-Խաչեն գյուղը, ինչպես նաև զբաղեցնելով Սադախլո-Խոժոռնի գիծը[800]: Ռազմական գործողությունները շարունակվում են փոփոխական հաջողություններով, չնայած ընդհանուր առմամբ գերակշռությունը ակնհայտորեն դեռ հայկական զորքերի օգտին էր, վրաց հետախույզները վխտում էին Ախալքալաքի մոտերքը, աշխատելով ուսումնասիրել հայկական զորքի խոցելի տեղերը[801]: Այն բանից հետո, երբ Դրոն վերջապես ստացավ փոքրիկ օժանդակություն (600 թարմ զինվորներ 4-րդ և 6-րդ գնդերի համար), նախապատրաստություններ սկսեցին տեսնվել դեկտեմբերի 31-ին թշնամու նկատմամբ վճռական հարձակման անցնելու համար, որի դրական արդյունքը հայկական կողմի համար կարող էր խիստ էական լինել:

Դեկտեմբերի 31-ի առավոտյան Սադախլոյում հավաքել էին մոտ 3,5 հազար կռվող վրացիները (զորավար Մազնիևի հետագա հայտարարությունների համաձայն, վրացիներն ամբողջ հայկական ճակատի վրա ունեին 8000 կռվող), Դամիա-Սադախլոյում 12 թնդանոթ և մոտ 800 հոգի էլ Քասումլու թրքական շրջանում[802]:

---

[799] Տե՛ս «Ձանգ», Երևան, 1 հունվարի, 1918, N 1:

[800] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 238:

[801] Տե՛ս «Ձանգ», Երևան, 1 հունվարի, 1918, N 1:

[802] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 239: Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах (с сокращениями), стр. 53-56:

Հայկական հրամանատարության նպատակն էր գրավել Սադախլոն և վերջ տալ վրաց զորավար Մազնիևի բանակին: Ճակատամարտը Սադախլոյի մոտ պետք է վճռական լիներ: Այն ընթացավ փոփոխակի հաջողություններով: Հեռախոսային կապի անկատարության հետևանքով հայկական զորամասերի միջև որոշ անհամաձայնողական գործողություններ առաջացան: Կատաղի կռիվները վրացիների և հայերի միջև շարունակվեցին մինչև ժամը 12-ը՝ դաշնակիցների կողմից որոշված ժամկետը: Չնայած հայկական զորքը գրավեց նաև վերջին 4-րդ զրահագնացքը, այնուհանդերձ դա վերջին ճակատամարտն էր, և այն չավարտվեց, չնայած գնդապետ Մ. Զինկևիչը շատ վստահ պնդում է, որ հունվարի 1–ին Սադախլոի տակ վրացիներն անկասկած կջախջախվեին: Կապված զինադադարի հաստատման դաշնակիցների կողմից պարտադրված անհրաժեշտության մասին, 1918 թ. դեկտեմբերի 31-ին Վրաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ա. Կ. Գեղևանովի [Գեղևանիշվիլի] կողմից հայ-վրացական ռազմաճակատում գործող զորամասերին ուղարկվեց հետևյալ հրամանագիրը. «Կառավարության հրամանի համաձայն հրահանգում եմ Ձեզ դեկտեմբերի 31-ին, ժամը 24-ին դադարեցնել ռազմական գործողությունները: Զորքերը պետք է մնան իրենց տեղերում, որոնցում այդ ժամը կհասնի: Առաջապահ զորաջոկատների պետերին կապի մեջ մտնել հրամանատարության հետ՝ նրանց տեղեկացնելու համար մեր կառավարության որոշման մասին, ընդ որում հայկական զորապետերին տեղեկացնել, որ հայկական բանակային զորամասերը պետք է ետ քաշվեն այն գծից այն կողմ, որում նրանք կանգնած են եղել մինչև ռազմական գործողությունների սկիզբը: Վերը նշված ժամանակին մեր կողմից ռազմական գործողությունների դադարեցման մասին հրամանը պետք է իրագործվի ինչ գնով էլ լինի: Այդ հրամանի ստացման մասին տեղեկացնել անհապաղ»[803]:

Հետաքրքիր է նշել, որ Է. Անդերսենը և Գ. Էգգեն պնդում են, թե իբր վրացական հրամանատարությունը իր կառավարության կողմից ժամանակին տեղեկացված չլինելով դեկտեմբերի 31-ին ժամը 24-ին նա-

[803] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ – 275, ց. 2, գ. 5, թ. 31-34: Из истории армяно-грузинских отношений. 1918 год, стр. 132: տե՛ս նաև Kazemzadeh F., The Struggle for Transcaucasia (1917-1921), p. 181:

խատեսված զինադադարի մասին, պլանավորել էր հայկական կողմին հարված հասցնել հունվարի 1-ին: Եվ հակառակը, դրան հետևում է այդ նույն հեղինակների ստահոդ պնդումն այն մասին, որ այդ խնդրում հայկական հրամանատարությունն ուներ առավելություն, ճշգրիտ իմանալով պատերազմի վարման մարտական գործողությունների ժամանակային թույլատրելի շրջանակների մասին, և դեկտեմբերի 30-ին սկսել է կենտրոնացնել Սադախլոյից նահանջող զորքերը և թիկունքից ժամանող ռեզերվները Այրում կայարանի շրջանում, որպեսզի իրականացնեն վճռական հարված Լամբալո գագաթի կողմը, և դեկտեմբերի 31-ին, հնարավոր մարտական գործողությունների վերջին օրը՝ գրավել Սադախլոն: Հայկական զորամասերը երկու շարասյուներով Այրումից սկսեցին շարժվել Սադախլոյի ուղղությամբ[804]: Եվ այդուհանդերձ, օրվա վերջին հակառակորդ կողմերի զորամասերի կողմից զբաղեցրած դիրքավորման մասին կարելի է դատել երկու կողմերի հրամանատարների կողմից ստորագրված փաստաթղթերի հիման վրա:

Այսպես, ըստ Մազնիևի, ստացվում է հետևյալը. «Դեկտեմբերի 31-ին ժամը 24-ին վրացական զորքերի կողմից զբաղեցվել են՝ Օփրեթ, Խոջոռնի, Ղուլլի-Բաղ, Սադախլո գյուղերը, Սադախլո կայարանը, Լամբալո գյուղը, Սադախլո կայարանից դեպի հյուսիս գագաթը, այդ գագաթից 1554 դեպի հյուսիս-արևելք՝ դեպի 2660 գագաթը, և այնուհետև «աղբյուր» գրառումը, որը գտնվում է Կաչի-Կալայից դեպի հյուսիս. - բնագիր ստորագրություն՝ գեներալ Մազնիև»: Սրան հետևում է Դրոյի գրառումը. «Դիտողություն. «Լամբալո գյուղը և 2660 բարձրունքը, դեկտեմբերի 31-ին ժամը 24-ին գրավվել են իմ կողմից և միայն գեներալ Մազնիևի 1919 թ. հունվարի 1-ի համար 139 նամակի հիման վրա՝ հունվարի 1-ի ժամը 8-ի վիճակով կազմվել է մեր զորամասերի անմիջական սահմանակցումը [շփում] վրացական ստորաբաժանումների հետ, և դրանով իսկ խուսափել անկանխատեսելի հետևանքներից: Մնացյալ կետերի հետ համաձայն եմ: Դրո. Ճիշտ է՝ գնդապետ Նեցվալով»[805]:

---

[804] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html:

[805] Տե՛ս նույն տեղում:

Որպես հետգրություն ավելացնենք, որ նշված սահմագիծը այն է, ինչ-որ կա և այսօր՝ Վրաստան-Հայաստան սահմանահատվածում:

Շատ պատկերավոր է նշում Ս. Վրացյանը այդ պահը. «…ճակատամարտը դեռ չէր լրացած, բայց արդեն ժամը 12-ն էր, և կռվող կողմերը կանգ առան իրենց գրաված տեղերում: Պատերազմը վերջանում էր»[806]: Այդ պատերազմին և մասնավորապես ավարտական փուլին Ս. Վրացյանը նորից անդրադառնում է իր «Կյանքի ուղիներով» գրքաշարի Դ հատորում, որում այդ մասին հատուկ նշում է. «Եւ Հայաստանի խոհեմագույն վարչապետը՝ Քաջազնունին, բոլոր խաղաղ միջոցները սպառելուց հետոյ, Հայաստանի Խորհրդի միաձայն հաւանութեամբ, հարցի լուծումը յանձնեց հայկական բանակին՝ Դրօյի գլխաւորութեամբ, եւ Դրօն հայ տրեխաւոր զինուորութեան գլուխ անցած, յաղթանակից յաղթանակ, առաջ արշավեց դեպի Թիֆլիս: Եւ միայն անգլիական միջամտութիւնը փրկեց վրաց մայրաքաղաքը հայերի գրաւումից»[807] և ինչպես կրկին արձանագրում է փաստը Ս. Վրացյանը, «Հայ տրեխաւոր բանակը, Դրոյի ընդհանուր հրամանատարութեան տակ արագ եւ վճռական հարուածներով առաջացաւ Լոռիում, ջարդեց զօրավար Ծուլուկիձեի սալոն-վագոնը:…Դրօյի բանակը, անվանելի ուժով, առաջ էր շարժւում Թիֆլիսի ուղղութեամբ եւ անկասկած, կը գրաւեր Վրաստանի մայրաքաղաքը, եթե արտաքին միջամտութիւն տեղի չունենար»[808], առավել ևս որ կողմերը պատրաստվում էին նոր և վճռական ճակատամարտերի, էլ ավելի շիկացնելով հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները:

Որոշակի գրականության մեջ այն համոզմունքն է իշխում, որ Դրոն «անպայմանորեն կջախջախեր գեներալ Մազնիևի բանակն ու կգրավեր Վրաստանի մայրաքաղաքը, եթե չլինեին անգլիացիների ու ֆրանսիացիների միջնորդությունները»[809]:

Անգլիական, ֆրանսիական, վրացական և հայկական ներկայացուցչությամբ կազմված խառը հանձնաժողովը պետք է անհապաղ մեկ-

[806] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 240:
[807] Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատոր Դ, էջ 186:
[808] Տե՛ս Վրացեան Ս., Նշվ. աշխ., հատոր Ե, էջ 41-42:
[809] Տե՛ս Դրո, Անդրանիկյանի խմբագր., Եր., «Ազատ խոսք», 1991, էջ 303-304:

ներ ռազմաճակատ, որպեսզի կենսագործեր զինադադարի պայմանները:

Հանձնաժողովը պետք է որոշեր պահակազորերի թիվը, որը պետք է մնար Հյուսիսային մասում՝ վրացական և հարավայինում՝ հայկական, իսկ Ախալքալաքի գավառում պետք է լիներ վրացական կայազոր: Հայկական զորքերը պետք է նահանջեին Դսեղ-Ջալալօղլի գիծը, իսկ վրացականը՝ այդ պահին զբաղեցրած գիծը: Բրիտանացիները պետք է վերահսկեին հայկական և վրացական զորքերի միջակայքում գտնվող երկաթգիծը, իսկ վարչակարգը պետք է ունենար խառը կազմ: Եվ վերջապես, Վրաստանի և Հայաստանի ներկայացուցիչները պետք է մոտ ապագայում ուղարկվեին Եվրոպա, ուր Եվրոպական վեհաժողովի կողմից պետք է վճռվեին երկու կողմերին վերաբերող վիճարկելի հարցերը:

Հանձնաժողովը՝ բրիտանական բանակի գնդապետ Դուգլաս Վիձերսի, ֆրանսիական կապիտան Գասֆիլդի և վրաց գնդապետ Ջափարիձեի հետ միասին մեկնում են Ղարաքիլիսա՝ Հայաստանի զորքերի զորակայան՝ հանդիպելու գեներալ Մ. Սիլիկյանի հետ: Սակայն ՀՀ կառավարությունը չի ցանկանում հոժարակամ ընդունել այդ փաստերը՝ այսինքն կատարել այն պայմանները, որոնք մշակվել էին դաշնակիցների կողմից: Նույն օրն իսկ Դրոն Զինվորական նախարար Հախվերդյանից հրաման է ստանում անկանգառ հարձակումը շարունակել բոլոր ուղղություններով:

Վրաց հեղինակ Գ. Մարխուլիան առանց փաստեր բերելու պնդում է, որ հայկական զորքերի առաջխաղացումը կասեցվեց ոչ թե դաշնակիցների պահանջով կամ էլ առավել ևս հայկսկան կառավարության պնդմամբ, չնայած դաշնակիցները խնդրում էին դադարեցնել ռազմական գործողությունները, սակայն Հայաստանի ղեկավարները շարունակեցին ռազմական գործողությունները՝ հուսալով զավթել Թիֆլիսը [ի դեպ Մարխուլիան ողջ գրքում անտեղի օգտագործում է «Թբիլիսի» տերմինը], սակայն ջախջախվեցին վրացական զորքերի կողմից[810], ինչը չի համապատասխանում իրողությանը և շինծու պնդում է:

[810] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах (с сокращениями), стр. 54-55: Տե՛ս նաև http://iberiana,wordpress.com/armenia-georgia/1918-1920/: Տե՛ս նաև-II«Iberiana–ობერია გუშინ...iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

Հայկական զորքերի կողմից Դաղեթ-Խաչենը գրավելուց հետո դեռ դեկտեմբերի 17-ին մնացել էր մոտ 70 կմ հեռավորություն, սակայն դեկտեմբերի 18-ին հետագա առաջխաղացման ճանապարհը կտրվեց, որից հետո հայկական զորքերը մոտ մեկ շաբաթ դոփեցին տեղում: Դեկտեմբերի 24-ից հետո ըստ Մարխուլիայի, նախաձեռնությունը բոլոր ուղղություններով անցավ վրացիների ձեռքը, այսինքն, արդեն Թիֆլիսին սպառնացող վտանգը վերացավ: Դեկտեմբերի 25-ին վրացական հրամանատարությունը Շուլավերի, Եկատերինֆելդի և Սադախլոյի ուղղություններում կենտրոնացրեց իր հիմնական ուժերը: Մարխուլիան մերկապարանոց, առանց փաստերի, պնդում է, որ Եկատերինֆելդի համար մարտերում Կառուցա Չոլոկաշվիլին, Գեորգի Մայսուրաձեն, Վալիկո Ջուղելին և մյուս հայտնի գործիչները կարողացան ջախջախել թշնամական ուժերին և Թիֆլիսը ազատեցին զավթիչներից[811]: Եվ ավելին, դեկտեմբերի 28-ին Գ. Մազնիաշվիլին իբր հաղորդագրություն ստացավ, որ սպայական ջոկատը ճեղքել է հայերի պաշտպանությունը և մտել է Շուլավեր: Եվ հայերը չդիմանալով վրացիների գրոհին, մաքրեցին քաղաքը և խուճապահար փախուստի դիմեցին[812]: Այնուհետև, վրաց հեղինակը մերկապարանոց պնդում է, որ իր զորքերի պարտությունից անհանգստացած, ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել դաշնակիցների դեկտեմբերի 25-ի առաջարկը ռազմական գործողությունների դադարեցման մասին, և դեկտեմբերի 30-ին Ղարաքիլիսայում դաշնակցային հրամանատարությունը հեռագիր է ստանում Հայաստանի կառավարությունից. «Հայկական կառավարությունը համաձայն է ռազմական գործողությունների անհապաղ դադարեցմանը և զորքերի ետ քաշմանը, ինչպես որոշվել է գեներալ Ռայկրոֆտի կողմից»: Սակայն Գ. Մարխուլիան և մյուսները աղավաղելով փաստերը, պնդում են, որ Հայաստանի կառավարությունը տագնապելով կորցնել Երևանը, հայկական քաղաքական շրջաններում հեղինակություն չվայելող որոշում

[811] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах (с сокращениями), стр. 53: Տե՛ս նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/: Տե՛ս -II «Iberiana–ობერია გუშინ ...iberiana. wordpress.com/ armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

[812] Տե՛ս նույն տեղում:

ընդունեց և համաձայնվեց վերականգնել status quo-ն: Դեկտեմբերի 31-ի առավոտյան հայկական զորքերը ջախջախվեցին Բոլնիս-Խաչենում և Բաշկիչէթի մոտ, և փախան այնպիսի արագությամբ, որ վրացական զորքերը չէին հասցնում ետևից, ճանապարհը դեպի Երևան փաստորեն բացված էր, սակայն դեկտեմբերի 31-ին ժամը 4-ին ռազմաճակատի հրամանատար Գ. Մազնիաշվիլին հրաման ստացավ կառավարության որոշման համաձայն դադարեցնել ռազմական գործողությունները, տեղում մնալ, որ ժամին պահը կհասներ և առաջապահ զորաջոկատների պետերի միջոցով կապի մեջ մտնելով, հայկական հրամանատարության հետ՝ նրանց տեղեկացնել մեր կառավարության որոշման մասին և տեղյակ պահել հայկական պետերին, որ հայկական զորամասերը պետք է ետ քաշվեն դեպի այն գիծը, որտեղ նրանք կանգնած են եղել մինչև ռազմական գործողությունները, որ ռազմական գործողությունների անհապաղ դադարեցման մասին հրամանը ճիշտ ժամանակին պետք է իրագործվի[813]:

Սուտը սահմաններ չունի, սակայն իբր թե դրանից էլ դժգոհ վրաց հրամանատարությունը, վրաց զորքերը շարունակում էին հարձակումը, հայկական զորքը ջախջախվեց և փաստորեն դիմադրություն չէր ցույց տալիս վրացական զինված ուժերին, սակայն Մազնիաշվիլին իբր թե համաձայնվեց դրան, քանզի հրաման կար, որի հետ համաձայնվեց ժամը 24-ին[814]: Եվ այսպես, 1918 թ. դեկտեմբերի 31-ին, ժամը 12-ին ռազմական գործողությունները դադարեցվեցին: Ըստ Մարխուլիայի, հայկական զորքերը ջախջախվեցին, իսկ մնացած մասերը ետ քաշվեցին նախկինում զբաղեցրած դիրքերը և հայկական կողմը հրաժարվեց իր կողմից ներկայացված պահանջներից:

Գ. Մարխուլիան ավելացնում է, որ չնայած այդ ամենին, իբր թե Ալ. Խատիսյանը իր հուշերում «ցինիկաբար» գրել է. «Հայկական զորքերի

[813] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах (с сокращениями), стр. 55: Տե՛ս նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/: Տե՛ս -II «Iberiana–ობერია გუშინ ...iberiana. wordpress.com/ armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

[814] Տե՛ս Դրո,, Ա. Անդրանիկյանի խմբագր., էջ 177:

առաջխաղացումը կանգնեցվեց, սակայն ո՛չ թե վրացական բանակի կողմից, այլ Հայաստանի կառավարության կողմից»[815]:

Այս կապակցությամբ վրաց-հայկական պատերազմի իր մեկնաբանությունն ունի Ի. Ա. Ջավախիշվիլին. «…Չնայած պատմության դառը դասերին, Հայաստանի կառավարությունը նեղություն չքաշեց ներխուժել Վրաստանի սահմանները և ուժով տիրել մեր մայրաքաղաքին: Դժվար չէ պատկերացնել, ինչքան նրանց ախորժակը կաբարձրանա, երբ նորից մոռանան պատմության դառը օրերը, այս իսկ պատճառով վրաց ժողովուրդը և նրա կառավարությունը…պարտավոր են անհրաժեշտ ուշադրություն դարձնել պետական սահմանների վրա և խստորեն կանգնեն նրանց պաշտպանության վրա: Դա չի խանգարի ո՛չ եղբայրությանը և միասնությանը, ո՛չ բարիդրացիական հարաբերություններին նրանց հետ, ով, իրականում մտածում է եղբայրության և բարի դրացիական հարևանության մասին»[816]:

Ինչքան էլ այդուհանդերձ այդ պատերազմի հանկարծակի դադարեցման պատճառահետևանքային բոլոր եզրերը բավարար չափով պարզ չեն, և դեռ կարիք անդրադարձ կատարելու ներքին խորքային դրդապատճառներին, սակայն փաստ է, որ պատերազմը դադարեցվեց դաշնակից պետությունների հարկադրանքով: Բացի մի շարք ոչ շատ էական հաջողություններից Բորչալուի գավառում, կա ևս մեկ այլ բացատրություն Վրաստանի հետ բախման ժամանակ Հայաստանի ղեկավարության վերաբերմունքի հանկարծակի փոփոխության հետ կապված՝ 1918 թ. դեկտեմբերի վերջին, և հաշտության պայմանագիրը ստորագրելու պատրաստակամության խնդրում: Իր հուշագրությունում այդ ժամանակ Ռուսաստանի հարավում հակաբոլշևիկյան Կամավորական բանակը գլխավորող գեներալ Ա. Դենիկինը գրում է գեներալ Ջ. Ֆորեստյեր-Ուոքերի բացահայտ սպառնալիքի մասին ռազմական ուժ կիրառել Հայաստանի դեմ: Ըստ Դենիկինի, Ջ. Ֆորեստյեր-Ուոքերը հաղորդել է իրեն և Հայաստանի Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրան-

[815] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах (с сокращениями), стр. 55-56: Տե՛ս նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/: Տե՛ս -II «Iberiana–ობერია გუშინ... iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

[816] Տե՛ս նույն տեղում:

յանին, որ իրեն հայտնի է Հայաստանի կառավարության և Կամավորական բանակի հրամանատարության միջև կնքված գաղտնի համաձայնության մասին՝ Վրաստանին համատեղ հարված հասնելու մասին՝ նպատակ ունենալով հասնել նրա տարածքային անդամահատմանը: Ջ. Ֆորեստյեր-Ուոքերը նաև ընդգծում է, որ եթե Վրաստանը երկու կողմից հարձակման ենթարկվի, Մեծ Բրիտանիան կկանգնի Վրաստանի կողքին և իր զորքերը կուղղի Հայաստանի դեմ: Ինքը՝ Դենիկինը բազմիցս ժխտել է հայերի հետ նման համաձայնության կնքման գոյության փաստը, սակայն հայտնի ռազմական գործողությունները դենիկինյան և վրացական զորքերի միջև սևծովյան ափաեզրի Սուխումի-Տուապսեի տեղամասում 1918 թ. ամռանը և ուշ աշնանը թույլ է տալիս ենթադրության գալ ծայրահեղ դեպքում Կամավորական Բանակի և Հայաստանի Դեմոկրատական Հանրապետության միջև որոշ ընդհանուր շահերի գոյության մասին[817]: Ստեղծված իրավիճակում բնականաբար հասկանալի է, թե ինչ առիթներ դրդեցին դրան հասնելու համար. Գեներալ Գ. Տ. Ֆորեստյեր-Ուոքերը նույնիսկ պատերազմով սպառնաց Հայաստանին, այլ ոչ թե Վրաստանին, կամ էլ լավագույն դեպքում՝ երկու կողմերին էլ[818]: Եթե լսենք Ա. Դենիկինին և հավատանք նրան, ապա այստեղ մեր առաջ ուրիշ պատկեր է հառնում:

Հարկ է ասել, որ այսպիսի պնդում ժամանակին ունեցել է նաև Վրաստանի վարչապետ Նոյ Ժորդանիան, որը դեռ այն ժամանակ, երբ Կամավորական բանակի զորամասերը հարձակվել էին Սոչիի և շրջակայքի տարածքների վրա, որտեղ իբր թե ի դեմս հայերի գտան դաշնակիցներ, հենց այդ ժամանակ Կամավորական բանակի ներխուժումը Սև ծովի ափամերձ երկայնքով գործնականում նախապատրաստված էր դեպի Լոռի հայկական զորքի ռազմերթին աջակցելու համար, որի նպատակն էր տապալել Վրաստանի դեմոկրատական հանրապետությունը, ինչն էլ իբր թե պատճառ դարձավ նրան, որ վրացական կառավարու-

[817] Տե՛ս Պետրոսյան Գ., Նշվ. աշխ., էջ 153-156: Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах (с сокращениями), стр. 57-58: Տե՛ս նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/: Տե՛ս նաև Армяно-Грузинская война (1918)-Адамалла . www. adamalla.com›...› Библиотека› Кавказ:

[818] Տե՛ս Деникин А. И., Очерки русской смуты, книга 3, тт. IV, V, М., 2003, стр. 221-222:

թյունը հապշտապ իր զորամասերի մի մասը տեղափոխի Լոռի՝ Դրոյի զորքին դիմակայելու համար:

Եվ այսպես, Ա. Դենիկինի համաձայն, իբր թե գեներալ Ֆորեստյեր-Ուտքերը իրեն և Հայաստանի Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանին հաղորդել է, որ իրեն հայտնի է Հայաստանի կառավարության և Կամավորական բանակի միջև գաղտնի համաձայնության՝ Վրաստանին համատեղ հարված հասցնելու մասին՝ այն տարածքային առումով մասնատելու նպատակով: Կամավորական բանակն իրեն կից «Հատուկ խորհրդակցության» միջոցով հետապնդում էր նպատակ ամրապնդվել Հայաստանում և այն հենակետ դարձնել իր հեռահար ռազմավարության իրականացման համար, որի վերջնական արդյունքը պետք է լիներ Ռուսաստանյան կայսրության վերականգնումը՝ նոր զգեստավորմամբ, չնայած Հայաստանում այդ ժամանակ ուժեր կային, որոնք կողմնակից էին սպիտակգվարդիական Կամավորական բանակի ազդեցության չեզոքացմանը և ինքնուրույն քաղաքականության իրականացմանը կամ էլ իրենց տեսանկյունից ավելի նախընտրելի քաղաքական կողմնորոշմանը նախապատվություն տալով: Գ. Պետրոսյանը հետաքրքիր փաստեր է բերում, որ այդ տեսակետին է եղել նաև գեներալ Վ. Թոմսոնը, որը հայերին մեղադրել է պատերազմը առաջինը սկսելու մեջ, որ նախօրոք պատրաստվել էին և դրանով իսկ վրացիներին անակնկալի բերեցին: Վ. Թոմսոնը փաստել է, որ դրա ետևում կանգնած են եղել Կամավորական բանակի սպաները, և մասնավորապես հետագայում Հայաստանում որպես Կամավորական բանակի ներկայացուցիչներ ծառայության անցած սպաները, և մասնավորապես Մ. Զինկևիչը, և դրանից ելնելով՝ սպառնացել պատժամիջոցներ կիրառել[819]: Հենց այդ հանգամանքը նկատի ունենալով, գեներալ Ֆորեստյեր-Ուտքերը ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանին տեղեկացրել է, որ վրաց-հայկական պատերազմը հայերը սկսել են Կամավորական բանակի հետ դաշնակցած, որի նպատակը եղել է Վրաստանի անկախության վերացումը: Ըստ Դենիկինի, Ֆորեստյեր-Ուտքերը նաև ընդգծել է, որ եթե Վրաստանը երկու կողմերից հարձակման ենթարկվի, Մեծ Բրիտանիան կաջակցի վրացական կողմին և կուղարկի իր զորքերը

[819] Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918 -1920 թթ.), Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 153-154:

Հայաստանի դեմ, եթե հայերը միանան Դենիկինի Կամավորական բանակին՝ մասնակցելով Վրաստանի դեմ հարձակմանը: Հարկ է սակայն ավելացնել, որ այն, ինչ վերագրում են Ա. Դենիկինին, գործնականում իրապես մերժվում է հենց նույն Դենիկինի կողմից, որը կատեգորիկ ժխտում է հայերի հետ կնքված համաձայնության փաստը[820], թեկուզև այս ժխտողականությունը ռազմավարական նկատառումներով, բնականաբար, հասկանալի է:

Այստեղ ինքնին հասկանալի է նաև բրիտանական շահագրգռվածությունը Վրաստանի ռազմաքաղաքական աջակցության խնդրում, որն իր սուր ծայրերով ուղղված էր ոչ այնքան առանձին վերցրած Դենիկինի Կամավորական բանակի դեմ, որը ձգտում էր ռուսական իմպերիան վերականգնել, իսկ Մեծ Բրիտանիան էլ Վրաստանին վահան դարձնելով իր հակառուսական լայնածավալ ծրագրերի իրականացման բնագավառում, նպատակ ուներ խարխլել ուժեղ ռուսական կենտրոնացված պետության ստեղծումը, այլ ոչ թե ինքնին աբստրակտ պայքար մղել բոլշևիզմի դեմ, այլև խարխլել այն ամենը, ինչը կանգնած էր իր ճանապարհին: Վ. Թոմսոնին և նրա նմաններին վրդովեցնում էր հայերի ռուսամետությունը, և ոչ կամեցողությունն անգամ լրջորեն ընդհարվել բոլշևիկների հետ, էլ չենք ասում Դենիկինի Կամավորական բանակի հետ, չնայած գեներալ Ֆորեստյեր-Ուոքերը հայերին մեղադրում էր առաջինը պատերազմը սկսելու մեջ, դրանում մեղադրելով Հայկական բանակում ծառայության մեջ գտնվող Կամավորական բանակի ռուս սպաներին և առաջին հերթին Մ. Զինկևիչին[821]:

Սակայն հարկ է իրատեսորեն նկատել, որ կան մի շարք «բայց»-եր, որոնք ըստ էության վկայում են, որ այո, անգլո-ֆրանսիական կողմի երկդիմի, իսկ երբեմն էլ բացահայտորեն պրովրացական (այս առումով հատկանշական է անգլիացիների վերաբերմունքը) կողմնորոշումները հայտնի ռազմաքաղաքական իրավիճակում իրենց արջի ծառայությունն են մատուցել հայերին: Սակայն ինչպես ցույց է տալիս Հայաստանում և նրա շուրջ ստեղծված ռազմաքաղաքական և տնտեսական իրավիճակի

---

[820] Տե՛ս Деникин А. И., Очерки русской смуты, т. IV, Париж-Берлин, 1924, стр. 154: Տե՛ս նաև Kazemzadeh F., The Struggle for Transcaucasia (1917-1921), pp. 237-238:

[821] Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918 -1920 թթ.), էջ 153-154:

անկողմնակալ վերլուծությունը, հայերը երկար ի վիճակի չէին շարունակելու պատերազմը, թեկուզև մի կարևոր ճակատամարտ ևս շահեին: Հայաստանի կոմունիկացիաների շրջափակումը, սովը, և տնտեսական փլուզումը, ռազմական մատակարարումների կախվածությունն անմիջական հարևանի ողորմածությունից ի չիք էին դարձնում Վրաստանի մայրաքաղաքը գրավելու հույսերը և Հայաստանին կանգնեցնում ծանր խնդրի առաջ՝ ինչպե՞ս շարունակել պատերազմը, ի՞նչ միջոցներով, հաշտությունն էլ առանձնապես մեծ հույսեր չէր ներշնչում, արդյունքում՝ Լոռու «Չեզոք» գոտին, իսկ դա ամենևին էլ հաղթանակ չէր: Չէր կարելի անտեսել այն կարևոր ռազմաքաղաքական իրողությունը, որ վրաց-հայկական պատերազմի ողջ ընթացքում վրացական զորքը կրեց պարտություն-պարտության ետևից, սակայն ակնհայտորեն երևում էին այն առավելությունները, որոնք ուներ Վրաստանը՝ հաղորդակցության ուղիների դյուրինության, թիկունքին մոտ լինելու, ռազմամթերքի առատության, տաք հագուստեղենի առկայության, դրամով ապահովվածության և այլ առումներով, գումարած դրան դաշնակիցների կողմնակալ վերաբերմունքը, այն դեպքում երբ հայկական զորքի համար այդ պահին բնութագրական էր բարձր տոկունությունը և ոգեղեն բարձր վիճակը, հոգեղեն հատկությունները:

Այս կապակցությամբ հարկ է ևս մի կարևոր եզրահանգում անել, ճշգրտումներ մտցնել ընդհանուր գնահատականներում: Դա կապված է վրաց-հայկական պատերազմում վարչապետ Հովի. Քաջազնունու ունեցած կեցվածքի հետ, որի հետ համակարծիք է նաև «Դրո» գրքի հեղինակը՝ Հ. Գևորգյանը, որն այդ կապակցությամբ գրում է, որ «դեկտեմբերի վերջերին ծավալված կռիվներում հաջողությամբ հետ մղելով վրաց զորքերի հարձակումները, որ նա (Դրոն - Վ. Վ.) մտածում էր նոր հարձակում ձեռնարկելու մասին: Հարկ է խոստովանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը բավարար ուշադրություն չի դարձրել Դրոյի զորախումբը ժամանակին օգնական ուժերով համալրելու, զենքով ու զինամթերքով, հանդերձանքով ու պարենով ապահովելու գործում»: Ս. Վրացյանը գրում է, որ պատերազմի ողջ ընթացքում հայ-վրացական ռազմաճակատի ողջ ծանրությունը ընկած էր բացառապես Դիլիջան-Լոռի զորամասի, ինչպես նաև Ղազախի ու Լոռիի կամավորների վրա, իսկ դեկտեմբերի 30-ին ուղարկված 600 հոգանոց համալրու-

մը Դրոյին նա համարում է խիստ փոքրաթիվ և ուշացած[822]: Այդուհանդերձ, Հ. Գևորգյանը համոզված գտնում է, որ Դրոն «անպայմանորեն կջախջախեր գեներալ Մազնիևի բանակն ու կգրավեր Վրաստանի մայրաքաղաքը»[823]: Գուցե և կարելի է Սադախլոյում տարած հաղթանակի հարցում մեծարել Դրոյին, սակայն պատերազմի ընդհանուր արդյունքների գնահատման հարցում հարկավոր է ավելի իրատեսական լինել: Պատերազմում հայկական զորամասերի հաղթանակները բարձրացրին հայ ժողովրդի մարտական կորովը և համոզվածությունը, որ Լոռին, Ախալքալաքը անվիճելիորեն հայկական տարածքներ են: Եթե Ախալքալաքի հարցում զիջողականությունը ունեցավ իր բացասական հետևանքները, ապա Լոռու համար անզիջում դիրքորոշումը, նպաստեց, որ հետագայում, արդեն վրաց-հայկական պատերազմից հետո այդ հայկական տարածքը վերամիավորվի մայր հողի հետ՝ դառնալով ՀԽՍՀ անբաժանելի մաս: Անհրաժեշտ է ընդգծել, որ մի շարք փաստարկումներ չեն համապատասխանում իրականությանը, և մասնավորապես Թիֆլիսի գրավման խնդրում, քանի որ Հայաստանի Հանրապետության իրական հնարավորությունները շատ սահմանափակ էին, առավել ևս հեղինակն ընդգծում է, որ «Վրաց կառավարության որոշումով շրջափակվեց Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող Բաթումի-Ալեքսանդրապոլ երկաթուղին»[824], որով տարբեր կարգի օգնություն էր գալիս դեպի Հայաստան, այդ թվում և զենք, ընդ որում որոշակի քանակությամբ զենք ու հանդերձանք առգրավված վիճակում պահվում էր Թիֆլիսում: Հ. Գևորգյանը համերաշխվում է նաև Ա. Բաբալյանի հետևյալ կարծիքի հետ. «մեղավոր էին և մասնավորապես վարչապետ Յովի. Քաջազնունին, որ իւրայատուկ կեցուածքով չուզեց պատերազմին ժողովրդական բնույթ տալ և չօգտագործեց մեր մաքսիմում կարողութիւնը: Ճիշտ է, մեր ժողովուրդը սոսկալի վիճակի մեջ էր, բայց թե՛ Խորհուրդում, թե՛ երկրում կառաւարութիւնը ջանք չթափեց օգնական ուժեր ուղարկելու կռուող բանակին եւ մեծ «խոհեմութիւն» արեց՝ լռութեան տալով փայլուն հաղթանակները պատերազմի դաշտում:

[822] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 238:
[823] Տե՛ս Գևորգյան Հ., Դրո, Եր., Հեղ. հրատ., 2014, էջ 443-447:
[824] Տե՛ս Դրո, Ա. Անդրանիկյանի խմբագր., էջ 288:

Մենք նպատակ ունէինք գրաւել Լոռին մինչեւ Խրամ գետը, որ համարում էինք մեր սահմանը Վրաստանի հետ:

Բայց յոխորտացող թշնամուն վերջնականապէս պատժելու համար ի վիճակի էինք գրաւել Թիֆլիսը, եթէ կառավարութեան գլուխը անշարժ և եւ վեհերոտ չլինէր»[825]:

Դժվար է համաձայնվել այս տեսակետի հետ, մեղադրելով Հովհ. Քաջազնունուն. բերելով ինչպես վերը նշված փաստարկները, այնպես էլ այն, որ Հայաստանի թիկունքն անչափ թույլ էր, ռեսուրսներ չկային (թե՛ մարդկային, և թե՛ նյութական), զորքը բծավոր տիֆից և այլ հիվանդություններից տկարացել էր, հայկական զորքը որոշ խնդիրներ ուներ ձախ թևի վրա, որը թուլացել էր վրացիների և Բորչալուի թուրքերի ճնշման տակ, իսկ միայն բարոյական-հոգեբանական հատկանիշներով պատերազմում չէր կարելի «անվերջ հաղթանակներ» տանել, առավել ևս եթե նկատի ունենանք մեծ տերությունների ամենևին էլ ոչ հայանպաստ քաղաքականությունը (գերմանացիների վրացամոլությունը, անգլիացիների պրոմուսուլմանական և երկդիմի չեզոք դիրքորոշումը, ամերիկացիների կրավորականությունը և սենատյան մանդատախաղը, Ռուսաստանի բոլշևիկացումն ու օտարվածությունը Կովկասից և Անդրկովկասից և այլն):

Այնպես որ, համաձայնվելով Արտ. Բաբալյանի հետ նրանում, որ «դժբախտաբար անգլիական նորեկ իշխանութեան միջամտությամբ, դեկտեմբերի 31-ին վերջ տրուեց պատերազմին մեզ համար ոչ ձեռնտու պայմաններով», միաժամանակ չի կարելի նրա հետ համակարծիք լինել, ըստ որի «յոխորտացող թշնամուն վերջնականապես պատժելու համար ի վիճակի էին գրաւել Թիֆլիսը, եթե կառավարութեան գլուխը անշարժ եւ վեհերոտ չլինէր»[826]: Այնպես, որ դժվար է, կամ ամենևին էլ չի կարելի համաձայնվել այն մտքի հետ, թե ևս հաղթական մի ճակատամարտաշարքով կարելի էր պատերազմը շահել և Վրաստանին ստիպել անձնատուր լինել: Իրականությունը նրանում էր, որ Հայաստանի Հանրապետությունը դրա համար չուներ անհրաժեշտ տնտեսական, կադրային, մարդկային ռեսուրսներ, նրա կոմունիկացիաները գտնվում էին

[825] Տե՛ս Բաբալեան Արտ., Հայաստանի անկախութեան պատմութիւնից. Գահիրե, 1959, էջ 26:

[826] Տե՛ս նույն տեղում, էջ 26:

չափազանց անմխիթար վիճակում, և փաստորեն Հայաստանը իսկական բլոկադայի մեջ էր, դրան գումարած մեծ տերությունների Հայաստանի համար ոչ նպաստավոր դիրքորոշումը աշխարհաքաղաքական տվյալ իրավիճակում, ինչն էլ ստիպեց Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարության նախագահ Հովհ. Քաջազնունուն գնալ պատերազմի դադարեցմանը: Հայկական զորքերը ետ քաշվեցին Դսեղ-Ջալալօղլի (Ստեփանավան) գիծը:

Պատերազմը ունեցավ կատաստրոֆիկ հետևանքներ հատկապես Հայաստանի համար: Պատերազմի ընթացքում վրացական իշխանությունները իսկական մարդադորս կազմակերպեցին հայերի նկատմամբ Թիֆլիսում և ամբողջ Վրաստանով մեկ: Այդ մասին նշում է նաև ամերիկյան հեղինակ Ստ. Ջոնսը, ըստ որի պատերազմը բարդացրեց հայերի ազգակիցների դրությունը Վրաստանում, ուժեղացրեց մեկուսացումը տարածաշրջանում և խանգարեց դաշնակիցների թվից Հայաստանի կողմնակիցների միջամտությունը[827]:

Այդ նույն խնդրին են անդրադառնում արևմտյան հետազոտողներ Էնդրյու Անդերսենը և Գևորգ Էգգեն.. «Ռազմական բախումը համաշխարհային պատերազմից և ռուսաստանյան խռովությունից ծնված հանրապետություններին արժեցավ մի քանի հազար մարդկային կյանքեր, զգալի նյութական վնաս հասցրեց և զգալի չափով բարդացրեց հարաբերությունները երկու, առանց այն էլ բարդ վիճակում գտնվող պետությունների միջև: Բախման կողմերից ոչ մեկը գոհ չմնաց դրա արդյունքներից: Վրաստանը չկարողացավ պաշտպանել այն սահմանագիծը, որն արդարացի էր համարում և անվիճելի, և նույնիսկ կորցրեց տարածքի մի մասը (Չեզոք գոտին), որը վերահսկում էր մինչև բախման սկիզբը: Հայաստանի տարածքային ձեռքբերումը (Բորչալուի գավառում մի կտոր հողակտոր) չնչին էր այն բանի համեմատ, որ նրա առաջնորդները հավակնում էին ձեռք բերել պատերազմի ընթացքում»[828]:

---

[827] Տե՛ս Jones Stephen F., Georgian-Armenian Relations in 1918-20 and 1991-94: A comparison, «Armenian review». vol. 46, no 1-4 (181-184), p. 64:

[828] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

Թե ով հաղթեց և ինչ արդյունքների հասավ վրաց-հայկական պատերազմում, այդ մասին իր ուրույն տեսակետը և գնահատումները, եզրահանգումներն ունի Ռիչարդ Հովհաննիսյանը. «Ո՞վ հաղթեց կռվում: Վրացիները հայտարարեցին, որ կարևոր հաղթանակներ են տարել և պնդում էին, որ թշնամին ետ կշպրտվեր Երևանի նահանգ, եթե կրակը չդադարեցվեր: Հայերն այդ ժխտում էին, պնդելով, որ եթե չլիներ դաշնակիցների պարտադրած զինադադարը, Դրոյի բանակը կավարտեր վրացական ուժերի շրջափակումը Սադախլոում: Ռազմադաշտից այն կողմ քիչ բան էր հայտնի իսկական իրադրության մասին: Մի քանի եվրոպական լրագրեր, մինչև Լոնդոն համառոտ հաղորդագրություններ էին տալիս բախման մասին և, կախված լրատվության աղբյուրից, հաղորդում էին կամ հայկական հաղթանակի, կամ հայկական հարձակումների դեմ վրացական հաջող պաշտպանության մասին: Հայ-վրացական պատերազմը լավագույն դեպքում կարելի է փաստորեն համարել անավարտ: Հայկական զորասյունները առաջ խաղացին հյուսիսային Լոռիով և գրեթե հասել էին իրենց նպատակին՝ Խրամ գետին, երբ դաշնակիցները պահանջեցին վերջ տալ ռազմական գործողություններին: Մյուս կողմից, շարունակ նահանջելով առաջին տասն օրերի ընթացքում, վրացիներն ավելի մեծ քաջություն և նախաձեռնություն ցուցադրեցին դեկտեմբերի վերջին շաբաթվա ընթացքում: Կկարողանայի՞ն նրանք դուրս մղել հայերին Բորչալուի գավառից, եթե դաշնակիցները չմիջամտեին: Հարցը մնում է վիճելի, բայց ոչ այն փաստը, որ բոլոր ճակատամարտերը տեղի էին ունեցել նախկինում վրացական բանակի գրաված տարածքում: Վիճակագրական առումով հայերը ավելի քիչ կորուստներ էին ունեցել, քան վրացիները և տվել էին հարյուրից պակաս թվով գերիներ, մինչդեռ գրավել էին 2 զրահագնացք, 28 մարտկոց, մոտ 75 գնդացիր, 200 բեռնված ապրանքատար վագոն և գերել էին ավելի քան հազար վրացական զինվոր: Բայց անգամ այս թվերը, թեև գալիս են ժխտելու վրացական պարծենկոտությունը ջախջախիչ հաղթանակի մասին, ինքնըստինքյան, չեն ապացուցում հայերի վճռորոշ հաղթանակի փաստը»[829]:

---

[829] Տե՛ս Հովհաննիսյան Ռ.Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, Առաջին տարին, 1918-1919, էջ 127:

Այդ հանգամանքի մասին անուղղակիորեն նշել են նաև վրաց հեղինակները դեռևս մոռայլ 1937 թվականին: Վրաց հեղինակ Գ. Խաչապուրիձեն գրում է. «Վրաստանի և Հայաստանի ամոթալի եղբայրասպան պատերազմի ժամանակ մենշևիկները մեղադրեցին Վրաստանի տարածքում ապրող բոլոր հայերին՝ հայրենիքին դավաճանության մեջ: Հալածանքը վերաբերել է միայն աշխատավոր հայերին, և առաջին հերթին բանվորներին, որոնց մենշևիկները մեղադրեցին բոլշևիզմի և մենշևիկյան պետությունը ոչնչացնելու ձգտման մեջ: 1918 թ. դեկտեմբերի 24-ին Վրաստանի խորհրդարանը օրենք ընդունեց, որի համաձայն դավաճանության համար սահմանվում էր մահապատիժ և ունեցվածքի բռնագրավում, իսկ երկու օր անց՝ Թիֆլիսի նահանգապետը բոլոր հայերին հռչակեց տեխնիկապես ռազմագերիներ»[830]: Քաղաքների բեռնաթափման քողի տակ և աշխատավորների օտարերկրյա հպատակության պատրվակով հայկական բնակչությունը սիստեմատիկ արտաքսվում էր Վրաստանի սահմաններից»[831]: Թիֆլիսում գտնվող այն հայերը, որոնք թշնամու գրաված վայրերի, այսինքն՝ Բորչալու գավառի հարավային կեսի բնիկներից էին, պարտադրվեց 24 ժամվա ընթացքում ցուցակագրվել կամ այլապես պատասխան տալ ըստ դավաճանության մասին օրենքի: Վրացիները ահռելի գումարներ էին շորթում հարուստ հայերից, շատերին էլ բանտարկում էին Մետեխի բանտում[832]: Մի շարք վերապահումներով հանդերձ (հաշվի առնելով ժամանակին բնորոշ արտահայտությունները - Վ. Վ.), գնահատականը բնութագրական է:

Թիֆլիսում ձերբակալվեց մոտ 10 հազար մարդ: Այս և այլ երևույթների դեմ բողոք արտահայտեցին նաև դաշնակիցների ներկայացուցիչները[833]: Հայ-վրացական պատերազմի օրերին Վրաստանում և նրա մայրաքաղաք Թիֆլիսում հայերի դեմ սկսված ամոթալի վայրագությունների և հաշվեհարդարի մասին շատ պատկերավոր է գրում մեծագույն հայ բանաստեղծ Հովի. Թումանյանը (7 հունիսի, 1919 թ.) Հայաստանի Հան-

---

[830] Տե՛ս Хачапуридзе Г. В., Борьба за пролетарскую революцию в Грузии. Очерки. 1917-1921, стр. 290:

[831] Տե՛ս Хачапуридзе Г. В., Борьба за пролетарскую революцию в Грузии, стр. 290:

[832] Տե՛ս Деникин А., Очерки русской смуты, т. IV, Париж-Берлин, 1924 стр. 154, Махарадзе Ф., Диктатура меньшевистской партия в Грузии, М.,1921, стр. 74: Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը, մարտ, 1929, էջ 121-122:

[833] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 96, թ. 9:

բապետության նախարարապետին հասցեագրված նամակում. «…շուտով բռնկվեց հայ-վրացական պատերազմը, և Վրաց կառավարությունը հայտարարեց, թե ամեն մի հայ, որ որևէ կերպ աջակցություն ցույց կտա Հայաստանի կառավարությանը, կհամարվի պետական դավաճան և գույքը կգրավվի հարքունիս:

Միևնույն ժամանակ վրաց միլիցիան խուզարկության ենթարկեց մեր գրասենյակը, որ երկու շաբաթ փակ պահեցինք, մինչև որ ինձ հաջողեց Վրաց կառավարությունից գրավոր թույլտվություն ստանալ հանձնաժողովի գործունեությունը ազատ շարունակելու» (նկատի ունի «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովը» - Վ. Վ.)[834]: Այդ կապակցությամբ «Զանգ» թերթը 1918 թ. դեկտեմբերի 30-ի համարում գրում է հետևյալը. «Ամբողջ Վրաստանում կատաղի հալածանք է ստեղծվել հայերի դեմ: Թիֆլիսում վրացական կամայականությունն ու բռնությունները հայերի դեմ հասել են ծայրահեղ աստիճանի: Ամեն օր տեղի են ունենում բազմաթիվ խուզարկություններ: Խուզարկված են Վիրահայոց Ազգային խորհուրդը, Կովկ. Հայոց բարեգործական ընկերությունը և ուրիշ շատ հիմնարկություններ: Բանտարկված են Վիրահայոց Ազգ. խորհրդի անդամները, վրաց պառլամենտի անդամներ Տ. Ավետիսյանը, Դ. Դավիթխանյանը և ուրիշներ: Համարյա բոլոր հայտնի դաշնակցականները բանտարկված են: Բանտարկված են նաև Հայաստանի Հանրապետության պաշտօնյաները, ինչպես օրինակ Հայաստանի կառավարության գործերի վարիչ Գ. Խատիսյանը: Բանտարկվածներին լցնում են ապրանքատար վագոններ և հսկողության տակ տանում են Քութաիսի որպես աքսորյալներ[835]: Ճանապարհին նրանք ծաղրի և անպատվության են ենթարկվում: Տները խուզարկելիս թալանվում ու գողացվում են հայերի ստացվածքները և ոսկեղենը:

Փակված են «Նոր Հորիզոն», «Աշխատավոր», «Զնամյա Նարոդով», «Կավկազսկոյե սլովո» թերթերը: Խմբագիրները ձերբակալված են: Զինաթափման կարգադրության հետևանքով ոչ միայն Թիֆլիսի զանազան շրջաններում թաղային կոմիսարների ղեկավարությամբ տեղի են ունե-

[834] Տե՛ս Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, էջ 322:

[835] Տե՛ս Ментешашвили А. М., Отктябрьская революция и национально-освободительное движение в Грузии, 1917-1921, стр. 131:

ցել խուզարկություններ: Նոյեմբերի 8-ին Թիֆլիսի Լերմոնտովի N 12-ում, որտեղ տեղավորված էր «Հորիզոնի» խմագրությունը, խուզարկություն է կատարվում: Այդ նույն վարկաբեկիչ խուզարկությունները կատարվում են նաև Թիֆլիսում գտնվող Հայաստանի խնամատարության նախարար Խ. Կարճիկյանի, Խորհրդարանի անդամ Ստ. Մամիկոնյանի և Յ. Խունունցի բնակարաններում: Նոյեմբերի 10-ին «Հորիզոնի» խմագրություն են մտել Թիֆլիսի և նրա շրջակայքի նահանգապետ գեներալ-մայոր Մազնիևին ենթակա ծառայողները, պնդելով, որ քաղաքում հայերեն լեզվով լույս տեսնող «Հորիզոն» թերթի վտանգավոր ուղղվածություն ընտրելը, որ նպատակ է դրել կեղծ, տենդենցիոզ ճանապարհով լուսաբանել վրաց դեմոկրատական հանրապետության կառավարության գործունեությունը և միմյանց դեմ սրել առանձին ազգություններ ու դրանով առաջ բերել ժողովրդական զանգվածների մեջ անիշխանության ու թշնամական վերաբերմունք դեպի վրաց կառավարությունը: Անկախ Վրաստանը, որոշում է Թիֆլիսում և դրա ողջ շրջակայքում զինվորական դրության հայտարարման ամբողջ ժամանակամիջոցում փակել թերթի հրապարակումը[836]:

Թիֆլիսի բոլոր հայ միլիցիոներները՝ 476 հոգի զինաթափ են արված և հեռացված են պաշտոնից: Վրաստանը պատերազմ է հայտարարել փաստորեն ոչ թե Հայաստանի կառավարությանը, այլ ամբողջ հայ ազգին»[837]: Ոտնձգություններ կատարվեցին նախկին Հայկական կորպուսի ունեցվածքի նկատմամբ: Դրանից «Զանգ» թերթը եզրահանգում էր, որ դրանով իսկ վրացիները կամեցել են հայերին տնտեսապես քայքայել և նրանց ուժը Վրաստանում թուլացնել[838]: Թիֆլիսի քաղաքային դումայի դաշնակցական պատգամավորները ձերբակալվեցին, իսկ հայոց ներկայացուցիչները խորհրդարանում հանդիպեցին վրացական ազգայնական խմբակցությունների թունոտ ծաղրին և սոցիալ-դեմոկրատական մեծամասնության քար լռությանը[839]:

---

[836] Տե՛ս «Զանգ», Երևան, 24 նոյեմբերի, 1918 թ., N 73:

[837] Տե՛ս «Զանգ». Երևան, 30 դեկտեմբերի, 1918, № 9; Տե՛ս նաև Кадишев А. Б., Интервенция и гражданская война в Закавказье, стр. 173:

[838] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 96, թ. 91: «Զանգ», Երևան, 1 հունվարի, 1919 թ., N 1:

[839] Տե՛ս Кадишев А. Б., Интервенция и гражданская война в Закавказье, стр. 173, Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը, մարտ, 1929, էջ 121-122, 124, «Հայրենիք», Բոստոն, (օրաթերթ), 20 մարտի, 1919 թ., էջ 2, «Զանգ», Երևան, 1 հունվարի, 1919 թ., N 1:

Այս մասին շատ փաստերի ենք հանդիպում Ս. Վրացյանի մոտ: Այսպես, Ս. Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» գրքում ասվում է. «Այս բոլորի հետևանքով վրաց իշխանության տակ ապրող կես միլիոն հայ ազգաբնակչությունը զրկվեց ամեն իրավունքից, նրա պատիվը, ունեցվածքը, ազատությունն ու գույքերը դարձան միլիցիայի և հատուկ զորամասի պաշտոնյաների ազատ քմահաճույքի առարկա»[840]: Ս. Վրացյանն այնուհետև ավելացնում է. «Վրացական իշխանությունների և պաշտոնյաների այլասերման աստիճանի մասին կարելի է գաղափար կազմել նրանով, որ [վրաց] միլիցիոներները և հատուկ զորամասի պաշտոնյաները, հաստատել են փրկագնի որոշ տեսակ՝ 50-ից սկսած մինչև 50.000 ռուբլի… և այս բոլորի թագն ու պսակը եղավ հունվ. 5-ի այլանդակ դեպքը, երբ կնքված զինադադարից հետո Թիֆլիսում տեղի ունեցան հայերի զանգվածային ձերբակալություններ»: «Միլիցիայի գործակալները, - գրում է Վ. Ազգ. խորհուրդը, - վայրենիների պես, բառիս բուն նշանակությամբ, որսի ելան հայերի դեմ. մի քանի ժամվա մեջ ձերբակալեցին 6000 հոգի և ազատ թողին այն մի քանի հարյուր բախտավորներին, որոնք տեղն ու տեղը, մարդկանց աչքի առջև, կարողանում էին վճարել պահանջված գումարը կամ հնարավորություն էին ստանում, միլիցիոներների ուղեկցությամբ գնալ տուն և ավելի մեծ գումար վճարելով՝ ազատվել բռնակալների ձեռքից»[841]:

Վրացիները չեն խորշում նաև արգահատելի ուրիշ արարքներ ևս անել: Հայ-վրացական ընդհարումների բարդացման կապակցությամբ դադարեցվում է նաև Հովի. Թումանյանի գլխավորությամբ գործող Համաշխարհային պատերազմում հայերի կրած վնասները որոշող բյուրոյի գործունեությունը, որին արդեն մասամբ վերն անդրադարձել ենք[842]: Հալածանքների և բռնությունների զոհերի թվում էին ոչ միայն Հովի. Թումանյանը, այլև ճարտարապետ Լևոն Խատիսյանը, Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ Խունունցը, քիմիկոսներ Ղամբարովը և Քալանթարովը և շատ ուրիշներ: Այս հակահայկական գազանային ոճրագործությունների մասին կարելի է բերել բազմաթիվ փաստեր: Սակայն այն, ինչ այդ օրերին կատարվում էր գավառներում ու առհասարակ Թիֆլի-

[840] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 243:

[841] Տե՛ս նույն տեղում, էջ 243-244:

[842] Տե՛ս Թումանյան Հովի., Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, էջ 203, 656:

սից հեռու գտնվող վայրերում, պարզապես սարսափելի էր ու զարհուրելի. «Թիֆլիսի շրջակա գյուղերը Դաղեթ-Խաչէն, Սամտրեդ, Վայխուն, Շամշուդլա, Բէլըի Կըլիւչ, Շուլավեր եւն. յանձնված էին վրաց զորամասերի եւ «Կարմիր գւարդիա» կոչուած բաշիբոզուկների կամայականութիւններին: Կազմակերպուած բռնագրաւումը, աւազակային թալանը, ծեծը, բռնութիւնը, բանտարկութիւնը եւ կանանց բռնաբարութիւնը համատարած երեւոյթներ էին այդ գիւղերում: Գազանացած եւ գինարբու սրիկաների լրբութիւնները հասան մինչև որբանոցները, մինչեւ 10-12 տարեկան, դեռատի աղջիկները (Բէլըի Կըլիւչ…)»[843]: Հայերը Վրաստանում պարզապես օրենքից դուրս հայտարարվեցին, և նրանց նկատմամբ ամեն տեսակի անարգանքներ և սադիզմի երևույթներ դրսևորվեցին, ինչի մասին մանրամասն անդրադառնում է Արշակ Ջամալյանը՝ Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը այդ դժվարին օրերին[844]:

Փաստաթղթերը վկայում են, որ բոլոր հայերի դեմ ռեպրեսիաների համար ազդանշան հանդիսացավ Ներքին Գործերի նախարար Ն. Վ. Ռամիշվիլու շրջաբերականը, որից հետո Հատուկ զորաբաժնի կամ ջոկատի աստիճանավորները ձեռնամուխ եղան հայերի դեմ որսին, որի հետևանքով քշվում էին փողոցներով որպես ռազմագերիներ, և հայտնվում էին Քութաիսի նահանգի մարգանեցի հանքերում, բոլոր առումներով գերազանցելով անգամ ցարական պահնորդական բաժանմունքին իր տխրահռչակ վայրագություններով: Դրան ավելացավ գեներալ-նահանգապետ Մակլակելիձեի որոշումը, ըստ որի հայկական զորքերի կողմից գրաված Բորչալուի գավառի հայտնի տարածքների բոլոր քաղաքացիները և Հայաստանի Հանրապետության հպատակները հայտարարվում են ռազմագերիներ, ընդ որում օրվա ընթացքում միլիցիա չներկայանալու դեպքում, նրանց սպառնում էին Վրաստանի պառլամենտի օրենքով, որով վերջիններս մեղադրվում էին դավաճանության մեջ և դատապարտվում բանտարկության և աքսորների[845]: Թիֆլիսի քաղաքային վարչությունից հեռացվեցին շատ հայ պաշտոնյաներ, ոստի-

[843] Տե՛ս Ջամալեան Արշակ, Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք» ամսագիր. 1929, № 6, ապրիլ. Է տարի, էջ 136-137:

[844] Տե՛ս նույն տեղում, էջ 135-148:

[845] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 223, ց. 1, գ. 60, թ. 1-2:

կաններ, ծառայողներ և վերստին անցկացվեցին մունիցիպալ ընտրություններ, պարտադրելով, որ ընտրելու իրավունք ունեցող հայ քաղաքացիները գրանցվեն որպես վրացական քաղաքացիներ՝ այսինքն՝ վրացահպատակներ, որից սակայն հայ բնակչության մեծամասնությունը զայրույթով հրաժարվեց: Հայորսության ֆոնի վրա կաշառակերությունը մեծ չափեր ընդունեց, կամ բանտարկություն, կամ էլ մեծ փրկագնի պահանջում, որից հետո անամոթաբար տալիս էին վկայականներ, որ իբր թե հաջորդ անգամ բռնվելիս նույնը չկրկնվեր, ինչը սակայն հաճախ խախտվում էր, ուղեկցվելով ծաղրուծանակով և ազգային ինքնասիրությունը և պարզապես մարդկային արժանապատվությունը վիրավորելով: Դրան մեծապես նպաստում էր միլիցիան և հատուկ զորամասը, որոնք զբաղված էին համատարած կաշառակերությամբ և գողությամբ, հայերին պատկանող տներից կատարված թանկարժեք իրերի և պարենավորման առարկաների ալան-թալանով: Այդ և այլ քայլերի նպատակը Թիֆլիսի վրացականացումն էր:

Ավելին, դրան գումարվեց Հայաստանի դաշնակիցների անտարբեր վերաբերմունքը այդ չարաբաստիկ դեպքերի ու անցքերի նկատմամբ: Պատճառաբանելով, որ Անդրկովկասյան հանրապետությունները ճանաչված չեն դաշնակիցների կողմից, իհարկե, նպատակահարմար չգտնվեց միջամտել իրադարձությունների հետագա ընթացքին: Արդյունքում դաշնակիցները մատը մատին չխփեցին կանխելու համար վրացիների կողմից Թիֆլիսում և ողջ Վրաստանով մեկ հայերի նկատմամբ կիրառվող ծաղրուծանակը, ձերբակալությունները, գույքի բռնագրավումները, և երբեմն էլ պարզապես սպանությունները: Մեծ տերությունները այդ ծանր օրերին իրենց հովանավորության տակ չվերցրին հայերին, և դա ավելի լկտի դարձրեց վրացիներին: Հայերի նկատմամբ այդ նեղ ու զարհուրելի օրերին բարյացակամ վերաբերմունք դրսևորեց միայն Թիֆլիսում գտնվող պարսկական հյուպատոսը, որը ռեալ օգնություն և աջակցություն ցույց տվեց, գոնե ծայրահեղ դեպքում տեր կանգնելով պարսկահպատակներին: Մնացածները նետվեցին Ռուսական Ազգային խորհուրդ ռուսական հպատակության մասին վկայականներ ստանալու, սակայն ինչպես վկայում են Ռուսական Ազգային խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 26-31-ի բողոքագրերը՝ ուղղված Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրին (№ 8314, № 8380, № 8384 և այլն), վրացական մի-

լիցիան ներխուժել է Ռուսական Ազգային խորհրդի շենք, այդտեղից բռնությամբ դուրս քաշելով հայերին (չնայած Ռուսական Ազգային խորհրդի նախագահ Օ. Լեբեդևի բողոքներին), կալանվածներին աքսորում էին Քութաիսի մարգանեցի հանքերը կամ էլ ահռելի տուգանքներ, փրկագներ դնելով վերջիններիս վրա, որը վերջնական երաշխիք չէր անօրինականություններից ազատվելու համար: Գեներալ-նահանգապետի կողմից անօրինական ճանաչվեցին Ռուսական Ազգային խորհրդի կողմից հպատակության մասին տրվող բոլոր վկայագրերը, որը միջազգային պրակտիկայում չտեսնված այլանդակ երևույթ էր: Չնայած Անդրկովկասյան Ռուսական Ազգային խորհրդի կողմից բազմիցս արված բողոքներին՝ հայերը ենթարկվում էին դաժան հալածանքների[846]: Վրացիները ձերբակալեցին նաև Թիֆլիսի քաղաքային դումայի դաշնակցականների ողջ ֆրակցիան, բռնագրավելով նաև Հայոց Ազգային խորհրդին պատկանող մոտ 15 միլիոն ռուբլին, արգելակալանք դնելով հայկական ձեռնարկությունների միջոցների, այդ թվում և ՀՀ ֆինանսների նախարար Արտաշես Էնֆիաջյանի ֆաբրիկայի վրա և այլն[847]: Նպատակներից մեկը դա հայերին զրկելն էր իրենց առաջատար դիրքերից Վրաստանում, հայերին զրկելու իրենց մենաշնորհային դիրքերից և Թիֆլիսը վրաց ազգության տեսանկյունից ավելի միատարր դարձնելը: Վրաց կառավարությունը արգելք դրեց հայերին պատկանող գրեթե բոլոր առևտրա-արդյունաբերական, ընթացիկ ֆինանսական հաշիվների վրա, նույնիսկ վրաց պառլամենտում նախապատրաստելով բռնագրավումների նախագիծ, իրականում իրենց անօրինականությունները օրինականացնելու համար, որի վրա հատկապես պնդում էին վրաց ազգայնականները, որոնց հաճախ ձայնակցում էին սոցիալ-դեմոկրատները:

Վերջապես Թիֆլիսում բռնազավթվեցին նախկին Հայկական կորպուսին պատկանող պահեստները, արգելակալանք դրվեց այնտեղ գտնվող ռազմական ունեցվածքի նկատմամբ, ինչպես նաև ոտնձգություններ կատարվեցին փախստականների և այն ռազմագերիների նկատմամբ, որոնք նոր էին վերադարձել գերմանական գերությունից և եկել էին թոշակների ետևից[848]: Վրաստանի քաղաքներում և գյուղերում,

[846] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 223, ց. 1, գ. 60, թ. 3, 10, 11, 13, 30, 32:
[847] Տե՛ս նույն տեղում:
[848] Տե՛ս նույն տեղում, թ. 7:

ինչպես նաև Գորի, Սղնախ, Թելավի և այլ բնակավայրերում տեղի ունեցան հայերի տների և խանութների թալան, ավեր: Ջերբակալություններն ու անպատվությունը անասելի չափերի հասան, իսկ սահմանամերձ հայկական բնակավայրերի մեծ մասը սոսկալի կողոպուտի ենթարկվեցին, իսկ Շուլավեր, Բոլնիս-Խաչեն, Դաղեթ-Խաչեն, Դամիա և մի շարք գյուղերում թալանվեց հայերի ողջ ունեցվածքը՝ ամբողջ ցորենը, գարին, գինին, տնային կահկարասին, հագուստեղենը, անասունները, որին հաճախակի մասնակից էին գեներալ Գ. Մազնիևի անկարգապահ զորամասերը «Կարմիր գվարդիայի» սանձարձակ բաշիբոզուկները, որոնք իրենց սոսկալի կամայականություններով, բռնագրավումներով, ծեծով, բռնություններով և բանտարկություններով, անգամ եկեղեցու սպասավորների՝ քահանաների բանտարկություններով և խոշտանգումներով, սոսկալի ծաղրուծանակներով չափազանց տխրահռչակ համբավ ձեռք բերեցին հայ բնակչության շրջանում: Ստուգումներ կատարվեցին անգամ Արամյանցի տանը, որտեղ գտնվում էր Հայոց Ազգային խորհուրդը, հայկական ներկայացուցչությունը, գաղթականության բաժինը և այլ կազմակերպություններ: Գազանացած վրաց գվարդիականները չխորշեցին անգամ դիպչել որբանոցնրի հայ երեխաներին, անարգանքի ենթարկելով անգամ 10-12 տարեկան աղջիկներին Բելիյ-Կլյուչում: Վրաստանում հայկական դիվանագիտական միսիան փակվեց, իսկ նրա ողջ գրագրությունը անխնամ կերպով լցվել էր սայլակառքերի վրա և տարվել, հայությունը բառիս բուն իմաստով Վրաստանում օրենքից դուրս էր հայտարարված: Այսպես կոչված գովելի վրաց դեմոկրատիան բացահայտեց իր իսկական դեմքը՝ իր անտարբեր վերաբերմունքով հայ մարդկանց նկատմամբ Թիֆլիսում և այլ վայրերում ցուցաբերված ծաղր ու ծանակով, երեսպաշտությամբ և վերջապես՝ ազգայնամոլությամբ: Վրացական միջավայրում մեծապես հարգված մենշևիկ-միջազգայնագետ Արշակ Գ. Զոհրաբյանը [Զուրաբով] Վրաստանի վարչապետ Ժորդանիայի երեսին շպրտեց դառը խոսքեր այն ամոթալի գործողությունների մասին, որոնք կատարվեցին Թիֆլիսի փողոցներում և առավել վատթար էին, քան եղել էին երբևիցե ռուսական ցարերի նողկալի ժամանակներում[849]: Գործին չօգնեց նաև խաղաղություն հաստա-

[849] Տե՛ս Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը, մարտ, 1929, էջ 118, ապրիլ, 1929, էջ

տելու նպատակով 1918 թ. դեկտեմբերի վերջերին Թիֆլիս ժամանած հայկական պատվիրակությունը, որը բողոքագրերով դիմեց Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրին և դաշնակիցների հրամանատարությանը, որպեսզի վերջ տրվի Թիֆլիսում և Վրաստանի մյուս հայաշատ բնակավայրերում տեղի ունեցող խուզարկություններին, ձերբակալություններին և բացահայտ կողոպուտին, որի զոհը դարձան հազարավոր հայեր: Սակայն արդյունքները մեծ չեղան, կարգ ու կանոնի վերականգնման և մեղավորներին պատժելու խնդրում վրացական իշխանությունների կողմից ընդունված որոշումները վրացական իշխանությունների վճիռները բավականաչափ կատեգորիկ չեղան, կամ էլ ուղղակի անտեսվեցին, չնայած նշանակվեցին քննություններ կատարված կաշառակերությունների, բռնությունների, բռնաբարությունների և թալանի կապակցությամբ, և արդյունքում՝ զինվորական և քաղաքացիական իշխանավորներից ոմանք պատժվեցին, սակայն առանց բավարար արդյունքների:

Վերջապես անգլիացիների աջակցությամբ ժամանակավորապես արգելափակվեց հայկական պատվիրակության մեկնումը Փարիզ, նրանց մեղադրելով Կամավորական բանակի հետ ունեցած կապերի մեջ, ինչին նպաստել էին նաև վրացական կառավարության մեղադրանքները Հայաստանին: Այդ կապակցությամբ 1919 թ. հունվարի սկզբին Ավետիս Ահարոնյանը Ս. Տիգրանյանին տեղեկացնում է. «…տարաբախտաբար հայ-վրացական անակնկալ ռազմադեպը արգելք եղավ մեր պատվիրակության ժամ առաջ մեկնելուն: Անգլիական զինվորական միսիայի գլխավոր գեներալ Ռայկրոֆտը հասնելուն պես նախ բերանացի, ապա գրավոր հաղորդեց ինձ, որ մինչև հայ-վրացական ռազմադեպը չհարթվի, նա չի կարող թույլ տալ ո՛չ հայ և ո՛չ վրացի պատվիրակություններին Եվրոպա մեկնել: Հունվարի 4-ին միայն Ուոքերը հայտնեց, որ մեր պատվիրակությունը կարող է մեկնել»[850]: Եվ միայն այդ դեպքերից հետո Ավ. Ահարոնյանը կարողանում է իր ուղեկիցների հետ միասին հունվարի 9-ին մեկնել Եվրոպա:

Հարկ է սակայն հատուկ ընդգծել, որ այդ ամենի հակապատկերն էր իշխում Հայաստանում, ուր վրաց քաղաքացիների և ռազմագերինե-

---

136-137:

[850] ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 29:

րի հետ վարվում էին մարդավարի, ամենևին էլ չվիրավորելով վերջիններիս արժանապատվությունը: Այդ մասին գրում է ժամանակակիցը՝ Արշակ Ջամալյանը. «Հայաստանում քիչ թուով վրացիներ կային պատերազմից առաջ: Ընդամենը մի քանի հարիւր հոգի, որոնց մի մասը մնացել էր Հայկական Բորչալուում, իսկ մնացածները ցրուած ապրում էին Երեւան, Ալեքսանդրապոլ, Դիլիջան եւ այլ վայրերում: Հասկանալի պատճառով առաջիններին հրահանգուեց - ամենայն քաղաքավարութեամբ եւ նրբանկատութեամբ -որ հեռանան ռազմական գործողութիւնների շրջանից… ավելի եւս ուշագրաւ է այն վերաբերմունքը, որ գտան Հայաստանում վրացի ռազմագերիները: Այդ վերաբերմունքը բառի իսկական իմաստով եղբայրական էր թէ՛ իշխանութիւնների եւ թէ՛ ժողովրդի կողմից: Նույնիսկ այն ռազմագերիները, որոնք Հայկական Բորչալուի զօրամասերից էին առնուած, նոյնիսկ սրանք չենթարկուեցին որեւէ թշնամանքի, թէեւ այդ զօրամասերի կատարած բռնութիւնների դէմ անհունորեն կատաղած էին թէ՛ հայ ժողովուրդը եւ թէ՛ զինուորները …անձամբ շրջել եմ զօրանոցները, ուր կեդրոնացած էին վրացի ռազմագերիները: Դիլիջանում խօսել եմ գնդապետ Վաչնաձեի հետ, որը ազատ շրջում էր քաղաքում…որ վրաց ռազմագերիները երբեք չէին զգում, թէ իրենք «թշնամի» երկրում էին գտնուում[851]: Անգլիայի կապիտան Դագլէզ Վիձերսը, որ հայ-վրացական զինադադարի պայմանները կնքել տալու համար Հայաստան գալով՝ մօտիկից ծանօթացել էր Դիլիջանում եւ Ղարաքիլիսէում գտնուած վրացի ռազմագերիների վիճակին՝ ասում էր մեզ. «Որ այս պատերազմը թյուրիմացութիւն է. դրա պերճախօս ապացոյցն է այն փոխյարաբերութիւնը, որ գոյութիւն ունի վրացի ռազմագերիների եւ հայ ժողովրդի միջեւ: Այսպիսի մի բան անհնարին է երեւակայել եւրոպական ռազմաճակատներում»[852]: Պերճախոս է ասված: Այստեղ տեղին է ևս մեկ անգամ անդրադառնալ մի շատ հետաքրքիր օրինակի՝ կապված վրաց ռազմագերիների նկատմամբ Դրոյի ցուցաբերած վերաբերմունքի հետ, որի մասին մի շատ դիտարժան հիշատակում կա Ս. Վրացյանի մոտ. «Ես յիշում եմ Երեւան բերուած մի քանի տասնեակ վրացի սպաներին եւ բարձրաստիճան զինուորականներին ի պատիւ

[851] Տե՛ս Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, № 6, ապրիլ, Է տարի, էջ 141:

[852] Տե՛ս նույն տեղում:

տրուած մի ճաշկերոյթ Հայաստանի սպարապետութեան կողմից: Այդպիսի բաներ էլ հնարաւոր էին դեռ, որ պատերազմի միջոցին, գերի զինուորականութեան ի պատիւ ճաշկերոյթ տրուի: Իրենց բարքին յատուկ՝ վրացի գերիների լեզուները արագ բացուեցին եւ զինու հետ միասին սկսեցին հոսել նաեւ բաժակաճառեր: Պերճախոս զինուորականներից մէկը ասաց.

Ես առաջարկում եմ խմել տաղանդաւոր եւ վեհանձն զօրահրամանատար Դրոյի կենացը: Ես առաջարկում եմ խմել հայ և վրացի եղբայրական ժողովուրդների կենացը: Ուռռա՛»[853]:

Վրաց ռազմագերիների նկատմամբ բարեհաճ վերաբերմունքի մասին արժանահիշատակ փաստ է բերվում Արշ. Աստվածատրյանի կողմից. «…ներքեւ ստորագրող վիրավոր զինուորներս, որ 4-րդ եւ 5-րդ գնդերից ենք, գտանք ամենաջերմ եւ սրտագին վերաբերմունք հայերի կողմից, որոնց մօտ ենք ընկած: Թե՛ ժողովուրդը եւ թե՛ զինուորական իշխանութիւնները ամէն միջոց գործ են դնում, որպեսզի դիւրացնեն մեր վիճակը: Մեզ գերի վերցնող հայ զինուորները այնպիսի եղբայրական վերաբերմունք ունեցան, որ լաւագոյնը երեւակայել չի կարելի»[854]: Վրաց զինվորները և սպաները այդ հայտարարագիրը ուղարկելով «Борьба» թերթին, իրենց հայրենակիցներին կոչ էին անում նույնպիսի մարդկային վերաբերմունք դրսևորել Վրաստանում գտնվող հայ ռազմագերիների նկատմամբ:

Ինչևիցե, պատերազմն ավարտվեց: Զինվորներն ավարտեցին իրենց գործը: Պատերազմը շարունակվեց դիվանագիտական բեմահարթակում:

Անդրկովկասում դաշնակիցների ռազմական միսիային ուղարկված 1919 թ. հունվարի 2-ի հաղորդագրության մեջ Դիլիջան-Լոռու ջոկատի պետ Դրոն և Գլխավոր շտաբի պետ փոխգնդապետ Շնեուրը տեղեկացնում էին զորքերի ետքաշման կարգի մասին, նշելով, որ մնում է միայն սպաների անձնակազմը, որոնք անհրաժեշտ են այստեղ կենտ-

[853] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատոր Դ, էջ 186:

[854] Աստուածատրեան Ար., Հայ-վրացական յարաբերութիւնները Ռուսաստանի տիրապետութեան շրջանում եւ անկախութեան օրերին// Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի: Հոդվածների ժողովածու, Եր., «Միտք» վերլ. կենտրոն, 2011, էջ 749: Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1959, N 6, յունիս, էջ 55:

րոնացած ունեցվածքի դուրս բերման համար, որոնք պետք է հանվեն Այրում-Ախթալա և Սանահին կայարաններից՝ տեղափոխությունների ավարտից հետո[855]: Սակայն հարկ է նշել, որ միջադեպերը չավարտվեցին, և ինչպես երևում է ՀՀ Նախարարների խորհրդի 1919 թ. հունվարի 7-ի նիստում ստացված գեներալ Մ. Սիլիկյանի հեռագրից, վրաց զորքերի կողմից հայ ազգաբնակչության կողմից Բորչալուի գավառում գործադրվել են բռնություններ, և ընդունված որոշման մեջ առաջարկվել էր հեռագրել Թիֆլիս՝ դաշնակից երկրների ներկայացուցիչներին[856]:

1919 թ. հունվարի 4-ին Թիֆլիսից հայկական պատվիրակության ղեկավար Մ. Հարությունյանը հեռագրում է. «Ընկ. Քաջազնունի, իմ հեռագրից, որ ուղարկել եմ (Տիֆլիս, 29-30 դեկտեմբերի) Ղարաքիլիսայից, դուք արդեն գիտեիք, որ մենք հարկադրված եղանք ստորագրել անգլո - ֆրանսիական ներկայացուցիչների որոշումը խաղաղության պայմանների մասին»[857]:

Ագապի Նասիպյանը իր «Բրիտանիա և Հայկական հարցը» գրքում այդ մասին հստակ գրում է. «…բրիտանացիները իրաւադատեցին, ավելի ի նպաստ վրացիներուն էր, որոնց ջոկատները պիտի մնային Ախալքալաքի մեջ: Պորչալուն պիտի ըլլար չեզոք, բրիտանական հսկողության տակ»[858]:

Առհասարակ պետք է նկատել, որ կան որոշ ուշագրավ փաստեր այն մասին, որ դաշնակիցների ներկայացուցիչներն Անդրկովկասում և Հայաստանում իրենց պաշտոնեության քողածածկույթից օգտվում, նույնիսկ ժամանակ էին հատկացնում անձնական բնույթի խնդիրներ լուծելու և հարստանալու համար, ինչը հասարակայնության վրա չափազանց ճնշող տպավորություն էր թողնում: Այդ առումով մի դեպք է արձանագրված Ս. Վրացյանի մոտ՝ կապված գնդապետ Վ. Հասկելի Անդրկովկասից հեռանալու հետ. «Հասկելի գործունեության շուրջ աղմուկ շատ էր բարձրանում, բայց ստացուած արդիւնքը աննշան էր… ճանապարհին, Տրապիզոնի մոտ, Հասկելի նավի վրա (Հասկելը Երևան եկավ 1919 թ. օգ. 21-ին) յարձակուեցին մի խումբ քօղածածուկ ավազակներ եւ

[855] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 53:
[856] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ – 202, ց. 1, գ. 42, մաս I, թ. 4 հակ.:
[857] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 54:
[858] Տե՛ս Նասիպեան Ագապի, Նշվ. աշխ., էջ 165:

Հասկելի կնօջից խլեցին մի տոպրակ ադամանդ եւ ուրիշ թանկագին քարեր, որ տիկին Հասկելը հաւաքել էր իր ամուսնոյն ուղեկցելիս եւ այժմ տանում էր Ամերիկա: Ասում էին, որ վրացիներն էին կազմակերպել այդ գործը, ինչը որ շատ հեռու չէր իրականութիւնից»[859]:

Հարկ է ընդգծել, որ ամերիկյան այդ սպայի անձնավորությանը չի կարելի միանշանակ գնահատական տալ: Վերջինս ընդգծում էր իր անկողմնակալության և երբեմն էլ պրոհայկական դիրքորոշման մասին, սակայն իրականության մեջ նրա դիրքորոշումը կայունություն չուներ, որոշակի ստանդարտների չէր ենթարկվում և վերջին հաշվով իր երկրի քաղաքականության նման երկդիմի, ոչ հաստատուն էր և մեծ քաղաքական շահի վրա կառուցված, հետևաբար՝ ենթակա փոփոխությունների: Այդ մասին է վկայում գնդապետ Հասկելի հետևյալ շատ ուշագրավ արտահայտությունը (1919 թ. նոյեմբեր-դեկտեմբեր). «Երևանյան քաղաքագետները ամեն ինչ անում են, որպեսզի առաջ բերեն կոտորած, և նման է այն բանին, որ նրանք այն իրապես ցանկանում են, որպեսզի այդ մասին ազդարարեն ողջ աշխարհին և նոր աղմուկի հասնեն այդ ոլորտներում: Իզուր են նրանք դրա վրա շահարկում, եթե դա շարունակվի անվերջ, ապա ամբողջ աշխարհը կիմանա ճշմարտության մասին և կդադարի հավատալուց: Ինձ համար միևնույն են թաթարները և ինձ համար թանկ են հայերի շահերը, որպես Հայաստանի Գերագույն կոմիսարի, և ինձ համար ցավալի կլիներ, եթե այդ իրերի մասին իմանային»[860]: Ինչպիսի հրաշալի դեմագոգիա, որին երբեմն հավատում էին, երբեմն էլ լրջորեն ընդունում, ինչը վնասում էր հայկական շահերին:

Սակայն այդ ամենը չխոչընդոտեց, որպեսզի հայկական կողմը որոշակի անողնաշարավորություն դրսևորեր, նվեր մատուցելով Հասկելին, մտածելով, որ այդ ամերիկացուն արդեն կարող են իրենց կողմը գրաված համարել: Եվ այսպես, Գլխավոր շտաբի պետ Բաղդասարովի կողմից 1920 թ. օգոստոսի 4-ի գրության մեջ (№ 0289)՝ ուղղված Թիֆլիսում գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական կցորդ գեներալ Քիշմիշևին (Հ.Ա. Քիշմիշյանին), հարց էր բարձրացվում, որպեսզի դիվանագիտական հավատարմատարը Բեկզադյանի միջոցով ձեռնարկեր գնդապետ Հաս-

[859] Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատոր Ե, էջ 63, 65:
[860] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 183, թ. 146:

կելի համար Կովկասյան սուր գնելու գործը՝ ի հիշատակ և շնորհակալություն ժողովրդի փրկության գործում նրա կողմից ցուցաբերված օգնության: Գրության մեջ խնդրվում էր գնել ամենալավ սուրը՝ չնեղվելով գնից, անելով նաև դրա վրա մակագրություն[861]:

Բնականաբար, նման մեծ տերությունների նմանատիպ գործիչների գործելակերպը ձեռնտու էր վրացական կողմին, որը և անկասկած դրանից շահում էր, օգտվելով վերջիններիս երկերեսանիությունից:

Վրացիների հոխորտանքը չափ ու սահման չուներ: Պատերազմի արդյունքները նրանց առավել ևս, քան երբևիցե բավարարում էին, և Վրաստանի պառլամենտում 1919 թ. հունվարի 3-ին հետևեցին ճոռոմագին, մեծամիտ ճառեր: Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Ե. Պ. Գեգեչկորին փաստերն ու իրականությունը կեղծելով, փարիսեցիորեն ճոռոմաբանում էր, որ Վրաստանի կառավարության պետական էներգիան երկու շաբաթ նպատակաուղղված է եղել պատերազմի վարմանը, որում հասել է դրական արդյունքների: Խեղաթյուրելով պատերազմի արդյունքները և իրական վիճակը, Գեգեչկորին հայտարարեց, որ «առաջին հերթին, Վրաստանի կառավարությունը կարողացել է ճնշել Էրիվանի կառավարության ավանտյուրան և նրանք, ովքեր ձգտում էին Վրաստանի Հանրապետության քայքայմանը, այժմ իրենք են ջախջախված: Երկրորդ, Վրացական կառավարությունը հասավ նրան, որ հայկական զորքերը պետք է ետ քաշվեն իրենց սահմանները: Երրորդ, Վրաստանի կառավարությունը ապացուցեց բոլորին, ով դրան չի հավատացել կամ չի ցանկացել հավատալ, որ ինքը չի առաջ բերել այդ պատերազմը և արյունահեղությունը: Ձեր համար այսօր պետք է պարզ լինի, որ Վրաստանի կառավարությունը, որ թշնամուն պարտության է մատնել, մեծահոգի է այնտեղ, որտեղ չեն խախտվում ժողովրդի շահերը: Կառավարությունը փնտրում է խաղաղություն, թողնելով սուրը»[862]:

Վրաց-հայկական 1918 թ. պատերազմի ավարտը յուրովի է ընկալել մեր կողմից արդեն հիշատակված գեներալ Գ. Ի. Կվինիտաձեն. «Եվ այսպես, պատերազմն ավարտվեց մեր համար նպաստավոր ելքով:

[861] Տե՛ս նույն տեղում, գ. 154, թ. 195:

[862] Տես Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 489-490:

Թբիլիսին մեկընդմիշտ փրկվեց հայերի հարձակումից և պահանջներից: Ես գտնում եմ, որ եթե հայերը չգամվեին Շուլավերին, այլ շարունակեին հարձակումը, ապա պատերազմը կկանգնեցվեր Թբիլիսիի պատերի տակ: Թբիլիսին, մենք, անկասկած, կպահեինք, սակայն օտարերկրյա իշխանությունները մեզ հնարավորություն չէին տա այն կողմ, Խրամից ավելին ետ շպրտել հայերին, և 1921 թվականին հազիվ թե մեզ հնարավորություն ընձեռվեր բոլշևիկների հետ ռազմական գործողությունները վերածել պատերազմի: Թբիլիսին հավանաբար կվերցվեր Խրամում ջարդված զորքերի ուսերի վրա: Ես դրանով ուզում եմ ասել, որ Շուլավերի ճակատամարտի շահումը մեզ տվեց մայրաքաղաքից ավելի հեռացված սահման: Այդ հանգամանքը մեզ հնարավորություն տվեց 1921 թվականին փրկելու Թբիլիսին բոլշևիկների կողմից անհապաղ զավթվելուց: Մինչև Շուլավերյան ճակատամարտը եղած բախումները չպետք է համարել ոչ միայն վճռական-որոշիչ նույնիսկ այնպիսի փոքր պետությունների համար, ինչպիսին են Վրաստանը և Հայաստանը, բայց և հասարակ պատերազմ ևս չի կարելի, դրանց կարելի է դասել մանր սահմանային բախումների շարքին: Միայն Շուլավերյան ճակատամարտը հանդիսանում է երկու պետությունների զինված ուժերի բախում, այստեղ մեր զինված ուժերի մի մասի հետ դեմ առ դեմ դուրս եկան Հայաստանի գրեթե բոլոր զինված ուժերը: Այս վերջին հանգամանքը ապացուցում է, որ Հայաստանը պատրաստվել է հարձակման, իսկ մենք այն (հարմար առիթը – Վ.Վ.) ձեռքից բաց թողեցինք: Եվ դա մեր դիվանագիտության ձախողումն էր: Ճիշտ է, բարոյական տեսանկյունից մենք արդարացի դուրս եկանք հասարակական դատաստանի առաջ, մեր խիղճը մաքուր էր: Բայց հազիվ թե այդպիսի նպատակը կարող է արդարացնել այնպիսի գործողությունները, որոնք պետությունը դրեցին ծայրահեղ վիճակի մեջ, և այն ավելորդ արյունը, որի գնով մենք մեր դրությունը փրկեցինք:

Անասկած, Շուլավերի ճակատամարտը վճռորոշ էր, հակառակորդը հապճեպ թողեց դիրքերը և մեծամասամբ ետ քաշվեց դեպի Այրում, իսկ փոքր մասը, փոշիանալով, գնաց ուղիղ դեպի Ալավերդու գործարան: Հայկական ուժերի մեծ մասը ջախջախվեց և, իհարկե, այլևս ի վիճակի չէր դրսևորել այն համառությունը մարտում, որը նա ցույց տվեց մինչև մարտը: Իսկ մենք էլ, մասնավորապես, Շուլավերի ճակատա-

մարտից հետո միայն ծավալեցինք մեր ուժերը, ընդ որում ամենևին էլ ոչ ամեն ինչ: Դրա արդյունքում, կարելի է ասել, որ ամենևին էլ ոչ մեր բոլոր ուժերով մենք ջարդեցինք գրեթե ողջ հայկական բանակը, սակայն պատերազմի հետագա վարման համար մենք գտնվում էինք ավելի նպաստավոր պայմաններում, քան հայերը: Կազմակերպման տեսանկյունից հայերն ունեին 6 գնդեր, դրանցից Շուլավերի տակ, ներառյալ դեկտեմբերի 31-ին մոտեցածները, մասնակցեցին 4 գունդ, նաև կամավորական գունդը, շուլավերցիները և Բաթումիի շրջանի տեղական բնակչությունը: Իսկ մենք գործի մեջ մտցրեցինք 5-րդ գունդը, 6-ի մի մասը, 5 հետևակ էսկադրոնները, 1-ին դիվիզիայի առանձին գումարտակը և Գվարդիան, որը կազմում էր մեր զինված ուժերի ոչ ավելի քան երրորդ մասից ավելին:

Ի՞նչ արդյունքների մենք հասանք մեր պատերազմով, անկասկած շահված, քանզի Շուլավերյան ճակատամարտից հետո չէր կարելի կասկածել պատերազմում ունեցած հաջողության մեջ: Մանրամասների վրա կանգ չառնելով, հարկ է նշել, որ այն, ինչ մենք ունեինք մինչև պատերազմը, մենք զիջեցինք: Այն, ինչ մենք համարում ենք անքակտելիորեն մեր տարածքը, մենք դարձրինք վիճարկելի և դա այն ժամանակ, երբ մենք զենքի ուժով հակառակորդին ստիպեցինք հրաժարվել իր պահանջներից: Չէ որ սեփական տարածքը զիջել կամ դարձնելը վիճարկելի, կարելի է առանց պատերազմի, դիվանագիտական ճանապարհով: Ի՞նչ կարիք կար զենքի դիմել և արյուն հեղել: Իսկ եթե դիմել եք զենքի, ապա հեղված արյունը պահանջում է, որ այն ըստ արժանվույն գնահատվի: Դա պարզ է բոլոր ժամանակների դիվանագետների և ժողովուրդների համար, դիվանագետների, որոնք առաջին հերթին առաջնորդվում են միայն տիրակալի շահերով: Թվում է, թե ժողովրդի ծոցից դուրս եկած դիվանագետները պետք է առաջին հերթին առաջնորդվեին ժողովրդի բարօրությամբ և իրենց թույլ չեն տա այնպիսի շքեղություն, որ անտեղի թափեն իրենց ժողովրդի արյունը: Ինչի համար է արյուն թափվել: Մեզ կասեն. «Մենք չէինք կարող, մենք ամեն ինչ արեցինք, սակայն հանգամանքներն այնպիսին էին, որ մենք պետք է համաձայնվեինք այդ պայմանների հետ»: Ողջ այդ գործը նրանում է, որ չկարողացանք և դա միշտ կլինի, երբ դիվանագիտության հիմքում դրվում են ոչ թե ժողովրդի իրական շահերը, ո՛չ իրական ուժը, ո՛չ զորքը, նրա ուժը և

հաջողությունը, այլ հենվում են ինչ-որ կիսատ-պռատ խախուտ հիմքերի՝ իբր թե այսպես կոչված ինտերնացիոնալի սկզբունքներին, ժողովուրդների իրավունքին, մարդու և Մարքսի սոցիալիզմի սկզբունքներին և այլն: Պատերազմի ավարտից հետո, հենց որ անցան զորացրմանը, ես գնացի Թբիլիսի: Այնուհետև պաշտոնաթող եղա և զորացրվեցի»[863]:

Վրաց ժամանակակից հետազոտող պատմաբան, պրոֆեսոր Գուրամ Մանդջգալաձեն խեղաթյուրելով փաստերը, գրում է. «Անկախ Հայաստանի անվերջ տարածքային պահանջները Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության նկատմամբ առաջ բերեցին հայ-վրացական ռազմական բախում, որում գլխավորապես առավելություն ունեին վրացիները, և ջախջախիչ պարտություն, որից Հայաստանին ընդամենը փրկեց Անտանտի երկրների միջամտությունը»[864] :

Իրադարձությունների ժամանակակից Գերոնտի Քիքոձեն ուղղակի փորձում է «հաստատագրել» պատմաքաղաքական փաստերը, և ուղղակիորեն իր մոտեցումները և եզրակացություններն է պարտադրում, փորձելով ոչ համոզիչ «փաստերի» հիման վրա ամփոփել պատերազմի արդյունքները և դասեր քաղել. «Այս պատերազմում առաջին անգամ առավելությունը հայերի կողմն էր: Նրանք ցած իջան Մեզոմդալի բարձունքից, գրավեցին Լոռին և մոտեցան Թիֆլիսին մոտավորապես երեսուն կմ հեռավորությամբ: Սակայն Մաշավերա գետի ափին պարտություն կրեցին և սկսեցին շուտափույթ նահանջել: Այդ ժամանակ գործին խառնվեց նորերս ժամանած Մեծ Բրիտանիայի միսիայի ղեկավարը, որի հետ հայերը նախօրոք համաձայնության էին եկել: Անգլիացի գեներալը Ժորդանիային խնդրեց, որ Լոռվա սահմաններում կանգնեցնի իր զորքի ու գվարդիայի առաջընթացը»[865]:

Ակնհայտ է փաստերի խեղաթյուրումը վրացական կողմից: Հայկական զորքը հաղթեց այդ պատերազմում, սակայն անգլիական օժանդակությամբ և առհասարակ դաշնակիցների կրավորական դիրքի շնոր-

[863] Տե՛ս Квинитадзе Г. И., Мои воспоминания в годы независимости Грузии…,, стр. 74-75:

[864] Տե՛ս Манджгаладзе Гурам, Военный конфликт между Грузией и Арменией в 1918 году // Dirçəliş XXI əsr», 2008, № 120-121, стр. 85-90. elibrary.az/docs/jurnal-08/148j.htm: elibrary.az/ docs/jurnal-08/148j.htm:

[865] Տե՛ս «Մնաթոբի», Թիֆլիս, 1918 թ., N 7, 1918 թ. էջ 107:

հիվ Վրաստանը հավասարակշռեց ռազմաքաղաքական իր համար աննպաստ իրավիճակը, չեզոքացրեց հայկական զորքի հաղթանակի արդյունքները և ողջ ջանքերը նպատակամղեց պատերազմի իրական արդյունքների վերանայմանը: Ըստ երևույթին, այս հանգամանքը նկատի ուներ ամերիկյան հեղինակ Ստ. Ջոնսը, երբ գրում էր, որ «պատերազմ սկսելու որոշումը թուլացրեց հայկական անվտանգությունը: Այն խթանեց վրացական թշնամությունը, ցրիվ տվեց ռեսուրսները տնտեսական պահանջներից դեպի ռազմական կարիքները, վատթարացրեց Վրաստանում իրենց սեփական հայրենակիցների վիճակը, մեծացրեց նրանց մեկուսացումը տարածաշրջանում, և ի չիք դարձրեց ինտերվենցիայի կողմնակիցներին՝ պրոհայկական աջակիցների, դաշնակիցների շարքերում»: Ստ. Ջոնսը ընդգծում էր, որ Հայկական կախվածությունը վրացական տարանցիկ ճանապարհներից, ուտելիքի և էներգիայի խնդրում բախման շարունակական աղբյուր էր[866]: Դժվարություններ կային նաև ոչ միայն հացի ու պարենամթերքի, այլև զենքի և զինամթերքի առաքման, հայթայթման խնդրում, որոնք զգացվում էին դեռ վրաց-հայկական պատերազմի և դրան հաջորդող ժամանակահատվածում, որի մասին Վ. Փափազյանը բազմանշանակ նկատում է. «Դժբախտաբար, մեր «բարի» դրացի կառավարութեանց ստեղծած արգելքներուն հետեւանքով, կտրուած էինք արտաշխարհէն: Մեզի անհրաժեշտ ռազմամթերքի նախանիւթեր չունէինք: Հետագային հազիւ փամփուշտներու եւ զէնքեր նորոգող արհեստանոցներ բացուեցան: Դենիկինը (որուն հետ բաղդատաբար լաւ յարաբերութեան մէջ էինք) մեզի մէկ միլիոն փամփուշտ տուաւ (բանակի մեր հրացանները երեքգծանի մը էին, որ կը գործածէր ռուսական բանակը) ատոնք ալ կովկասեան լեռներու եւ Վրաստանի սահմաններու մէջ անհետ կորան... Իսկ անգլիական զէնքերու պատմութիւնը, իրենց կազմածներով եւ յարակից մթերքներով (*) 25-ը % յափշտակեցին վրացիները, իբր մաքս եւ անցագին եւ ամիսներով վար դրուեցան Պաթումի մաքսատունին մէջ»[867]:

[866] Տե՛ս Jones Stephen F.. Georgian-Armenian Relations in 1918-20 and 1991-94: A comparison. «Armenian review». vol. 46, no 1-4 (181-184), p. 64:

[867] Տե՛ս Փափազեան Վ., Իմ յուշերը, հատոր երրորդ (3), Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1957, էջ 72:

Ըստ Էության, ասվածի մեջ որոշակի ճշմարտություն կա, և այն արտահայտում է գոյություն ունեցող աշխարհաքաղաքական ռեալությունները հայտնի տարածաշրջանում: Ավելին, ինչպես նշում է Ս. Վրացյանը դրանից առաջ (1918 թ. հուլիսից առաջ), անգլիացիները «ստիպեցին հետաձգել հայերի մուտքը Կարս եւ իրենք գրավեցին Կարսի ռազմապահեստներում դիզված ռազմամթերքը՝ թնդանոթներ, հրացաններ և փամփուշտ, և ուղարկեցին ռուս Կամավորական բանակին…»[868]:

Պատերազմն ավարտվեց, հարցերը մնացին, թե՞ ով էր հաղթողը, Ս. Վրացյանը պատասխան չի տալիս, առանց մատնացույց անելու հաղթողին: Գործնականում այս պատերազմում ո՛չ հաղթող եղավ, և ո՛չ էլ պարտվող: Պատերազմը դարձավ միջոց բանակցությունների միջոցով ձախողման մատնված հարցերը լուծելու և չնայած հայկական զորքերը կարողացան Լոռուց դուրս քշել վրացական զորքերին, այդուհանդերձ, պատմաքաղաքական իրողություն է նաև այն փաստը, որ հաղթանակը իր մեջ ներառեց պատերազմի արդյունքում կնքված հայ-վրացական հաշտության համաձայնագիրը: Ակնհայտ է, որ 1919 թ. հունվարյան համաձայնագիրը ամենևին էլ տեղ չի թողնում հաղթող կամ պարտված կողմ քաղաքական ընկալումների կամ մոտեցումների, դրանց վերաբերյալ անտեղի ձևական բնույթի շահարկումների և պատմախաղերի համար: Մասնավորապես, մեր օրերում այն անտեղի շահարկումների առարկա է դարձել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բոնդո Արվելաձեի կողմից, որն այդ պատերազմի հաղթող է համարում Վրաստանին, ինչը կատեգորիկ ժխտվում է պրոֆեսոր Բ. Հարությունյանի կողմից, որը դեկտեմբերի 13-ին սկսված վրացական ագրեսիան համարում է ապացուցված փաստ, որին ի պատասխան ՀՀ կառավարությունը, սպառելով բախումնալից իրավիճակը պարպելու բոլոր խաղաղ միջոցները, վճռականորեն կիրառեց ռազմական ուժ, որի արդյունքում Վրաստանը հայտնվեց ռազմաքաղաքական փակուղում, և վրացական կառավարության մերժումը խաղաղ եղանակով հանգուցալուծելու լարվածությունը հենց հանգեցրեց պատերազմի, որում Վրաստանի հաղթող լինելու մասին Բ. Արվելաձեի գաղափարը հենց

[868] Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատոր Ե, էջ 60:

մերժվում է պրոֆեսոր Բ. Հարությունյանի կողմից[869]: Կարելի է ասել, որ որոշակի տարածում գտած այն տեսակետը, որ ՀՀ կառավարության և անձամբ վարչապետ Հովի. Քաջազնունու չափավորությունն էր գլխավոր պատճառը և արհեստականորեն հարուցված խոչընդոտը, որ թույլ չտվեց Դրոյին Թիֆլիս մտնելու, ինչն, անշուշտ, չի ամրապնդվում փաստերով, ինչը Վրաստանին ձեռնտու էր՝ արդարացնելու համար հայերի նկատմամբ շահատակությունները և բռնարարքները Թիֆլիսում: Սակայն հայերի ագրեսիվության և Թիֆլիսը գրավելու մտադրության մասին վրացիների սադաոդ պնդումների ամենամեծ հակափաստարկն էլ այն է, որ ՀՀ կառավարությունը դեռ դեկտեմբերի 24-ի նիստում հստակ և ուղղակի հրահանգ էր տվել հայկական զորքերին Վրաստանի տարածք և Թիֆլիս չմտնել:

Հաջորդ եզրահանգումն այն է, որ վրաց-հայկական պատերազմի մասին խոսելիս անպայման պետք է հիշել և արձանագրել, որ զինադադարն ու պատերազմի ավարտը, պատերազմական արդյունքների ամփոփումը պարտադրված էին Անտանտյան դաշնակիցների կողմից, որը նաև ակնհայտորեն արձանագրեց, որ այդ պատերազմում իրապես հաղթող և պարտված կողմ չկար, և որից, այդուհանդերձ, ՀՀ կառավարությունը գործնականում դժգոհ չմնաց, քանզի ըստ որոշ տեսակետների՝ Հայաստանի Հանրապետության համար պատերազմը միջոց էր Վրաստանի կողմից պարտադրված շրջափակումը վերացնելու, չնայած մեր կարծիքով, սա այնքան էլ զորեղ և հիմնավոր արդարացում չի:

Անգլիացիների այդ քաղաքականությունը զգալիորեն խարխլեց հայերի դիրքերը ռազմական առումով, էական ազդեցություն ունենալով նաև վրաց-հայկական պատերազմի, ռազմական մատակարարումների և այլ խնդրի վրա: Ոչնչով լավ չէր և մյուս դաշնակիցների դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ: Երևի հենց այդ հանգամանքը նկատի ուներ Ալ. Խատիսյանը, երբ խորաթափանցորեն նկատում է. «Պատմական վերլուծութիւնէն պարզ կերեւայ, որ դաշնակիցները եկան Կովկաս ոչ թե Կովկասեան ժողովուրդներու սիրոյն համար եւ հեռացան այնտեղէն, ոչ թե թշնամութենէ դրդուած: Հաշիւը չարդարացաւ, եւ անոնք հեռա-

[869] Տե՛ս Арутюнян Б., Об оголтелом арвеладизме и некоторых других вопросах, «Новое время», 22 февраля, 2003 г.:

ցան՝ թողելով մեզ ամենաղժուարին րոպէին, միանգամայն անօգնական եւ մինակ: Այդ եղաւ անոնց դերը»[870]:

Լեոն շատ հետաքրքիր և ինչ-որ տեղ վիճարկելի դիտարկում ունի հայ-վրացական պատերազմի բնույթի, բրիտանացիների կողմից կանխման հնարավորությունների և հետևանքների վերաբերյալ, պատերազմ, որը խաղարկվեց Անդրկովկասում գործող ռազմական, աշխարհաքաղաքական ուժերի կողմից. «Թշնամություն հայերի եւ վրացիների մեջ, այդ, ընդհակառակը, լավ էր: Աշխարհի բոլոր կողմերում անգլիական տիրապետությունը հաստատված էր «Բաժանեա զի տիրեսցես» սկզբունքի վրա»: Եվ դա հատուկ էր անգլիական դասական գաղութային քաղաքականության համար, որի սարսափելի հետևանքները զգացել են շատ ժողովուրդներ, որոնց հետաքրքրությունները ռազմավարական տեսանկյունից չէին ներդաշնակվում տեղական ժողովուրդների շահերի հետ: Այս առումով Լեոն կրկին իրավացի է. «Անգլիական հրամանատարությունը մատը մատին չխփեց մենշեւիկյան սարսափները արգելելու համար՝ հարգելով «Վրաստանի անկախությունը»: Բայց, վերջապես, դադարեցրին այս կոշմարային պատերազմը: Դրոն գնաց հանգչելու պարտության դափնիների վրա, Թիֆլիսում հաշտության բանակցություններ սկսվեցին՝ Անգլիայի եւ Ֆրանսիայի ներկայացուցիչների մասնակցությամբ: Վիճելի սահմանների հարցը պարզ ու որոշ կերպով չլուծվեց: Ստեղծվեց երկու երկրների հարաբերություններն ավելի եւս դժվարացնող, ավելի եւս բարդացնող մի դրություն»[871]:

Այդ պահի հետաքրքիր դիտարկումն ունի նաև Ռ. Հովհաննիսյանը. «Ընդհարումը լրջորեն հյուծեց երկու նոր պետությունների ֆիզիկական և նյութական ուժերը մի այնպիսի ժամանակ, երբ իրենց իսկ միջոցների աղբյուրներն անբավարար էին սեփական ներքին հիմնահարցերից գլուխ հանելու համար: …Չափազանց ինքնավստահ վրացիները, հակառակ իրենց հրապարակային հայտարարություններին, իմացան, որ այսուհետև իրենք պետք է հաշվի նստեն հայերի հետ, որպես ռազմական առումով հավասարների, ճակտամարտերը հասան Թիֆլիսի համար վտանգավոր մերձավորության: Եվ եթե, այդպես էր, ինչպես

[870] Տե՛ս Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 193:

[871] Տե՛ս Լեո, Անցյալից: Հուշագրություն, էջ 383-384:

Հայաստանն էր համառորեն մեղադրում Վրաստանին, որ նա տենչում է գերիշխել անդրկովկասյան գործերում, ապա այդ նպատակը բախվեց խիստ անհաջողության: Վրացիները նույնպես կարող էին թվարկել դրական արդյունքներ:…Վրաստանը հաջողեց ձեռք բերել Ախալքալաքը, իսկ Հայաստանին պարտադրվեց հետ քաշվել պատերազմի ընթացքում գրաված ամբողջ տարածքից[872]:

Այդ հարցի ունեցած անդրադարձում ժամանակակիցը՝ Գերոնտի Քիքոձեն մի շարք առարկելի պահերով հանդերձ, դիպուկ արձանագրում է փաստացի վիճակը՝. «Այսպիսով՝ վիճելի գավառը, որտեղից Հայաստանի զորքն արդեն հեռացել էր, իսկ վրացական զորքը չէր կարողացել գրավել, հայտարարվեց չեզոք գոտի»[873]: Գրեթե նույն տեսակետին է մեկ այլ ականատես ժամանակակից՝ Ալեքսանդր Մուջիրին, որը գրում է հետևյալը. «Պատերազմի ընթացքին միջամտեց Անգլիայի հրամանատարությունը: Այսպիսով՝ վիճելի գավառը, որտեղից Հայաստանի զորքն արդեն դուրս էր եկել, բայց վրացական զորքը չէր գրավել, հայտարարվեց չեզոք գոտի՝ խառն կառավարությամբ: Ախալքալաքի գավառում վրացական կառավարությունն էր մնում»[874]:

Արդյունքում, հայ-վրացական փոխհարաբերությունները փակուղի մտան, սահմանային-տարածքային հարցում համաձայնություն չկայացավ և փոխզիջումներ էլ չեղան, առավել ևս ռազմաքաղաքական համագործակցության հնարավորությունները հօդս ցնդեցին, քաղաքական շրջանների և զինվորական այրերի հաշվարկները խճճվեցին Արևմտահայաստանի և Արևելահայաստանի սահմանների հնարավոր լավագույն տարբերակների որոնումների կառուցման մեջ, որոնց գլխավոր հենքը արվում էր ամենազոր դաշնակիցների վրա՝ Սևրյան հիացմունքով արբեցած: Այստեղ ավելի տեղին է Ա. Ռաուլինսոնի կարծիքը, որն իրադրության իր ուրույն գնահատումն ունի: Այդ շրջանում անգլիական դիվանագիտության հայեցակետը արտահայտել է անգլիական բանակի կապիտան Ալֆրեդ Ռաուլինսոնը, որը հայ զինվորականների հետ զրույցում հայտնել է հետևյալը. «Ինչին են պետք ձեզ վիլայեթները, եթե դուք զորք չունեք գրավելու ձեր ներկայիս տարածքը: Մուսուլմանները

[872] Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, էջ 134-135:
[873] Տե՛ս «Մնաթոբի», Թիֆլիս, 1918 թ., N 1, էջ 14-15:
[874] Տե՛ս նույն տեղում, N 7, էջ 106-107:

ձեզ կամավոր չեն թողնի, իսկ ուժեր դուք չունեք… Մենք ժանդարմներ չենք, որպեսզի ուրիշների համար կարգ ու կանոն հաստատենք… Տրապիզոնը ձեր վրա կնստի մեծ փողեր, որը դուք չունեք: Եթե դուք ունեք օգտակար հանածոներ, մշակեք-արդյունահանեք ինքներդ, իսկ մեզանից նյութական օգնություն մի սպասեք»[875]:

Այսինքն, կարելի է ասել, որ հայ քաղաքական այրերի մոտ պակասում էր քաղաքական հաշվարկը, հեռատեսությունը վճիռներ կայացնելու առումով, ավելացրած դրան կույր նվիրվածությունը դաշնակիցներին, թշնամիներին անտեսելը և նրանց հետ հնարավոր զիջողականության և գործարքի պահը: Ինչքան էլ մեզ համար հոգեբանորեն կարող է անհասկանալի թվալ, սակայն այս առումով հետաքրքիր փաստի ենք հանդիպում Ալ. Խատիսյանի մոտ, կապված նրա հանդիպումի հետ Թալեաթ փաշայի հետ 1920 թ. հոկտեմբերի 20-ին: Թալեաթը նկատի ունենալով պատմաքաղաքական պահի իրողությունը, նույնիսկ խորհուրդ է տալիս Ալ. Խատիսյանին. «Քանի մը ժամ ետք ես պիտի ձգեմ իշխանութիւնը: Մենք յաղթուած ենք, ես ձեզ կը նախանձիմ. Դուք յաղթողներու բանակին մէջն էք, իսկ մենք պարտուածներու հետ ենք եւ շատ բան կը կորսցնենք: Բայց ձեզ բան մը պիտի ըսեմ: Երբե՛ք մի՛ մոռնաք, որ ապագան անյայտ է եւ դեռ ով գիտէ ինչեր կըրնան պատահիլ: Ես ճակատագրապաշտ եմ. Դուք երիտասարդ դիւանագետներ էք: Միշտ սպասեցէք վերջին վայրկեանին: Երբեք չստորագրեք թուղթ մը երեկոյեան, երբ ան պիտի երթայ վաղը առաւօտեան, ով գիտէ ինչ կրնայ պատահիլ գիշերուայ ընթացքին»[876]:

Հետևաբար, անշուշտ հասկանալի է միանգամայն, որ մենք չենք կարող համաձայնվել որոշ հեղինակների կողմից արտահայտված այն տեսակետների հետ, որ իբր թե Հայաստանը կարող էր խուսափել տարածքային վեճի հարցերը միջազգայնացնելու և միջնորդների միջոցով լուծելու ավանդույթից: Ըստ էության լրջմիտ մոտեցման դեպքում ակնհայտ է դառնում, որ նման մոտեցումը իրատեսական չէ, կեղծ է լիովին, և իր վրա կրում է կուսակցական նեղմիտ և ոչ լիարժեք մոտեցման,

[875] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 67, ց. 1, գ. 149, թ. 224: Տե՛ս նաև Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах (с сокращениями), стр. 60:

[876] Տե՛ս Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 112-113:

փաստերի գնահատման ու արժեքավորման կաղապարադրոշմը, և միակողմանիորեն է մոտենում աշխարհաքաղաքական գործընթացների խորքային բացահայտումներին, արդյունքում՝ ոչ սթափ և ոչ ճիշտ գնահատականներ: Մեր կարծիքով, երկու ճշմարտություն չի կարող լինել, իսկ ճիշտն այն է, որ գուցե և տեսական առումով հնարավոր է բացառել միջնորդների գործոնը, սակայն քաղաքական գործընթացների պրակտիկայում այդ գործոնի անտեսման հանգամանքը բացառվում է: Այսպես, 1918-1920 թվականների փորձը ցույց է տալիս, որ Անտանտյան գծով Հայաստանի բարեկամները կամ «եղբայրակիցները» չէին կարող չմիջամտել, չխառնվել Անդրկովկասի ժողովուրդների և մասնավորապես հայ ժողովրդի գործերին, քանի որ ունեին իրական տնտեսաքաղաքական շահեր տարածաշրջանում: Իսկ դա արդեն նշանակում է, որ գուցե Անդրկովկասյան ժողովուրդները ցանկություն ունենային և փորձեին խուսափել միջնորդների առաքելությունից (ինչը ակնհայտորեն պատրանքների բնագավառից է - Վ. Վ.), սակայն դժվար թե մեծ տերությունները թույլատրեին վերջիններիս ինքնուրույն կերպով տնօրինելու իրենց ճակատագիրը, ինչի մասին ցայտունորեն վկայում են ինչպես Անդրկովկասի, այնպես էլ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների 1990-2000-ական թվականների և առհասարակ արդի շրջանի իրադարձությունները, երբ մեծ տերությունները զանազան խարդախ և արտաքուստ «ոչ խարդախ թվացող» եղանակներով ու գործողություններով փորձում և ակնհայտորեն ներխուժում են հայտնի տարածաշրջաններ (Իրան, Իրաք, Սիրիա, Իսրայել և այլն), օգտագործելով ինչպես խաղաղ ու մեղմ միջոցները (ՄԱԿ, Համաշխարհային Բանկ, Միջազգային Վալյուտային հիմնադրամ, Կարմիր և այլ «Խաչեր»), այնպես էլ տրադիցիոն հնարավորությունները և միջոցները, որոնք ավարտվում էին ռազմական ուժի գործադրումով: Մի հանգամանք էլ կար. հայ-վրացական պատերազմով ինչ-որ տեղ խարխլվեց եվրոպական համակրանքի հայկական մենաշնորհը, ինչը գործնականում պարզորոշվեց դաշնակիցների անսկզբունքային և շահամետ քաղաքականությամբ Կովկասում և մասնավորապես Անդրկովկասում, նաև վկայելով, որ իրենք հայերի համար չեն եկել, այլ տարածաշրջանում իրենց հեռուն միտված տնտեսաքաղաքական և ռազմական շահերի իրականացման համար:

Հարկ է նշել, որ հայ-վրացական պատերազմի գնահատման շուրջ կան իրարամերժ այլ տեսակետներ ևս, մասնավորապես դրա արդյունքների գնահատման խնդրում, և դա էլ ուշադրության արժանի է, անկախ որևիցե բանից: Պատերազմն ավարտվեց, իսկ թե դա ի՞նչ օգուտներ տվեց Հայաստանին, դեռևս հարկ է այդ խնդրի շուրջ երկար մտորել և անհրաժեշտ հետևությունների գալ, որը դյուրին հարց չէ: Ոմանց կարծիքով մնացին շատ հարցականներ և չլուծված խնդիրներ, որոնք հետագայում էլ ավելի մթագնեցին երկու հարևան ժողովուրդների փոխհարաբերությունները: Հայաստանի Հանրապետության պառլամենտի անդամ Սիրաք Գրիգորյանը 1921 թ. նոյեմբերի 22-ին Հայ Հեղափոխական Դաշնակցության (ՀՀԴ) 10-րդ ընդհանուր ժողովին (բյուրոյի միջոցով) հասցեագրված իր դիմումագրում նշում է հետևյալը, որը չի կարելի միանշանակ ընդունել, և այնուամենայնիվ. «Դեռ տաճկական զորքերը 1918 թվի վերջերին Երևանի պատերի տակ էին, երբ ծագեց հայ-վրացական պատերազմը, որը Հայաստանի ժողովրդի վրա շատ ծանր նստեց…Կռիվներից յետո վրացիք փակեցին Հայաստանի բոլոր ճանապարհները և հաղորդակցությունը արտաքին աշխարհի հետ…մեզանում երբեք չքննեցին այդ պատերազմի դրդապատճառները, երևան չբերվեցին նրա հերոսները և պատասխանատվության չկանչվեցին: Հայ-վրացական սահմանը մնաց անլուծելի, Լոռին չմիացվեց Հայաստանին, Ախալքալաքը իր գավառով մնաց Վրաստանին և հաշտությունից շատ ամիսներ հետո էլ շարունակվեց վրացիների քմահաճույքին ենթակա մնալ: Այդ պատերազմը Թբիլիսիի և Վրաստանի հայության վիճակը վատթարացրեց և մենք մեկընդմիշտ կորցրինք վրացիների և ձգեցինք նրանց Ադրբեջանի գիրկը»[877]:

Անշուշտ, պետք է նկատի ունենալ, որ հեղինակի որոշ մոտեցումներ ծայրահեղական բովանդակություն ունեն և մեծ քաղաքականության բոլոր շերտանստվածքներն ու նրբերանգները չեն արտացոլում: Ակնհայտ է, որ միայն հայ-վրացական հարաբերությունների վատթարացումով և ռազմական առճակատումով չէր պայմանավորված Վրաստանի մերձեցումը Ադրբեջանի հետ, այլև այն աշխարհաքաղաքական միջավայրի քաղաքական ուժերի դասավորվածությամբ, որ կար տա-

[877] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 113, ց. 3, գ. 37, թ. 54:

րածաշրջանում և դրա շուրջ մեծ տերությունների քաղաքականությամբ, որն իր կնիքն էր թողնում անդրկովկասյան պետություններից յուրաքանչյուրի ռազմավարության վրա առանձին-առանձին վերցրած:

1918 թ. վրաց-հայկական պատերազմի ռազմաքաղաքական արդյունքները ծանր էին և կորստաբեր կողմերի համար: Առաջին աշխարհամարտի և ռուսական երկու հեղափոխությունների տեղատվությունից և քաոսից ծնված երկու անդրկովկասյան հանրապետությունների՝ Վրաստանի և Հայաստանի կարճատև ռազմաքաղաքական բախումը զգալի նյութատեխնիկական վնասներ պատճառեց երկու կողմերին, խճճեց ազգամիջյան ռազմաքաղաքական և դիվանագիտական փոխհարաբերությունները, առավել ևս որ, դժգոհությունը հանրապետությունում խոր արմատներ գցեց հասարակական-քաղաքական գիտակցության բոլոր շերտերում: Եվ Վրաստանը, և Հայաստանը դժգոհ մնացին սահմանային-տարածքային նման լուծումից, որը ժամանակավոր բնույթ պետք է կրեր: Պատերազմը կլանեց Հայաստանի առանց այն էլ սուղ ռազմատնտեսական հնարավորությունները, և թուլացրեց նրա հնարավոր ազդեցության և վերահսկողության հնարավորությունները Երևանի նահանգում[878], Նախիջևանում և Շարուր-Դարալագյազում:

Այդուհանդերձ, ինչպես գրում է Ռ. Հովհաննիսյանը, այդ պատերազմը հայերի համար ունեցավ նաև մխիթարիչ եզրեր, չնայած այն հանգամանքին, որ մասնավորապես «հայկական բանակից պահանջվեց հետ քաշվել իր սկզբնական դիրքերը, հյուսիսային Լոռին վերցվեց Վրաստանից և դաշնակիցների վերահսկողության ներքո վերածվեց չեզոք գոտու…Չնայած փոխանակվող կծու խոսքերին, կողմերից յուրաքանչյուրը հասկանում էր, որ դիմացինը չափազանց մեծ ճնշում չի գործադրելու, այլ բավարարվելու է նրանով, որ իր ծայրահեղական պահանջներն օգտագործելու է այլ հարցերի շուրջ զիջումներ ձեռք բերելու նպատակով»[879]:

---

[878] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, էջ 133-134, Հատոր III, էջ 140:

[879] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

Այստեղ հետաքրքիր է նշել, որ վրացական կողմը առ այսօր համառորեն վիճարկում է այն կարևոր հանգամանքը, թե վրաց-հայկական առճակատումում իրենք են փաստացիորեն շահել պատերազմը և նույնիսկ իրենց թույլ էին տալիս մեղադրել Անտանտի երկրներին նրանում, որ իրենք իրենց անհարկի միջամտությամբ «իրենց ձեռքից խլել են հաղթանակը»: Այդ հողի վրա Վրաստանում հայերի նկատմամբ ձևավորվեց օտարվացածության, թշնամանքի մթնոլորտը, քաղաքական նախապաշարումները առաջնային պլան մղվեցին, այն դեպքում, երբ օրինակ վրաց ռազմագերիների նկատմամբ Հայաստանում բավականաչափ բարեգութ և բարեհամբույր գտնվեցին: Վրաստանի և Հայաստանի միջև տրանսպորտային հաղորդակցությունը չափազանց անկայունացավ, որը առանձնակի բարդ տնտեսական-սոցիալական հետևանքներ ունեցավ հայկական պետության համար, որը գործնականում հայտնվեց մեկուսացված վիճակում արտաքին աշխարհից: Այս առումով դիտարժան է նաև Գր. Չալխուշյանի եզրահանգումը պատերազմի ավարտի և արդյունքների մասին. «Ի բարեբախտություն, այս հիմար եղբայրասպան պատերազմը, որը ոչինչ չտվեց ո՛չ հայերին, ո՛չ վրացիներն և այդքան թանկ արժեցավ, մասնավորապես մեզ, չէ որ էլ ավելի վատթարացրեց պարենային հարցը Հայաստանում, այն շնորհիվ Ֆրանսիայի և Անգլիայի միջամտության՝ ավարտվեց արագ: Այժմ հայ-վրացական բախման իրական մեղավորների բացահայտման հարց է բարձրացված: Մենք հակված ենք այն վերագրել իմպերիալիստական շարժմանը վրացիների մեջ:»[880]: Սակայն միաժամանակ ամենևին էլ չի կարելի համաձայնվել Է. Անդերսենի և Գ. Էգգեի կողմից պաշտպանվող այն չփաստարկված, հակագիտական տեսակետին, թե իբր այդ պատերազմը գցեց երկու պետությունների միջազգային հեղինակությունը համաշխարհային ատյաններում, իբր թե էապես թուլացրեց դրանց հաջողության հնարավորությունները Փարիզի Խաղաղության վեհաժողովում, այդ թվում անկախության ճանաչման խնդրում, ինչը բացահայտ կեղծիք է և չի բխում աշխարհաքաղաքական ռեալությունների իրական հաշվառումից, ինչպես պնդում է Ֆ. Կազեմզադեն[881]: Այստեղ, անշուշտ, չի կարելի լիովին համակարծիք լինել Ռ. Հովհաննիսյանի կողմից առաջադրած այն

[880] Чалхушян Гр., Красная книга, стр. 133:

[881] Տե՛ս Kazemzade F., The Struggle for Transcaucasia (1917-1921), pp. 182-183:

գաղափարադրույթի հետ, թե իբր «իրապես երկու շաբաթվա անփառունակ պատերազմը սասանեց օտարերկրյա աջակիցների և համակրող պաշտոնական անձանց հավատը», ինչը թույլ և անփաստարկ հիմնավորում է եզրակացնելու, որ դա գլխավոր պատճառը կամ առհասարակ դրդապատճառը հանդիսացավ կարևոր գործոն դաշնակիցների կողմից անդրկովկասյան հանրապետությունների ճանաչման խնդրում, որ «բախումը երկու հանրապետություններին ծաղրի առարկա դարձրեց այն քաղաքական հակառակորդների և թերահավատների համար, ովքեր հարցականի տակ էին դնում անկախ պետությունների կայացումը Կովկասում»[882]:

Եվ այս տեսանկյունից Է. Անդերսենի և Գ. Էգգեի ձգտումը հավասարության նշան դնել 1918 թ. վրաց-հայկական երկշաբաթյա պատերազմի և XIX-րդ դարի վերջի – XX դարի սկզբի եվրոպական պատերազմների [1912-1913 թթ. Բալկանյան պատերազմներ, բախումնալից վիճակներ և՛ Ֆրանսիայի, և՛ Գերմանիայի միջև Էլզաս-Լոթարինգիայի համար, Լեհաստանի և Արևմտյան Ուկրանիայի և այլն] միջև, գտնելով, որ դրանք իրարից քիչ են տարբերվում, մեղմ ասած հետապնդում է մի նպատակ՝ աղավաղելու պատմաքաղաքական իրողությունները և ցույց տալու համար, թե իբր այդ «հող հավաքող ժողովուրդները» Հարավային Կովկասում հանդիսանում են մեղավոր, և գործնականում համակարծիք են 1920-ական թվականների եվրոպական այն քաղաքագետների և պատմաբանների հետ[883], որոնք անհիմն հավասարության նշաններ դնելով կողմերի մեջ, ամբողջ ժողովուրդների մեղադրում են «անընդունակության մեջ ապրել խաղաղության մեջ»՝ «պայքարելով մի քանի քառակուսի մղոն տարածքի համար՝ մի քանի բնակավայրերով», պնդելով երկակի ստանդարտների կիրառման անհրաժեշտության մասին:

---

[882] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, էջ 99:

[883] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) // http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1918 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Արդեն մանրամասն անդրադարձել ենք այն խնդրին, որ պատմական 1918 թ. դեկտեմբերին Լոռի-Փամբակի սահմանային վեճի պատճառով երկշաբաթյա ռազմաքաղաքական բախում տեղի ունեցավ Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև: Դրա հետևանքով Հայկական Լոռին ճանաչվեց «Չեզոք գոտի» մինչև հարցի վերջնական լուծումը, իսկ Ադրբեջանի հետ ռազմաքաղաքական առճակատումը ավելի երկար տևեց, հիմքում գործնական առումով լինելով անլուծելի: Հայաստանում գործող բոլոր քաղաքական կուսակցությունները, բացի բոլշևիկներից (որոշ վերապահումներով հանդերձ), այսպես թե այնպես կանգնեցին ազգային անվտանգության և պետականության պաշտպանության դիրքերում:

Հարկ է ընդգծել, որ հայ-վրացական հարաբերությունների կարգավորման, պատերազմական կնճռի հաղթահարման հարցը պառլամենտական բուռն քննարկման նյութ է հանդիսացել՝ առաջ բերելով իրարամերժ տեսակետներ: Գործնականում ռազմական գործողությունները Բորչալուում սկսվեցին միայն և միայն Հայաստանի Հանրապետության խորհրդարանի որոշմամբ: Թերևս միայն սոցիալ-դեմոկրատական խմբակցությունն էր, որ սկզբունքով ընդունեց Ախալքալաքի և Բորչալուի հայկական բաժնի Հայաստանի մաս կազմելը և դատապարտեց վրաց կառավարության ագրեսիվ քայլերը, հակառակ արտահայտվեց զենքի դիմելուն: Սակայն պատերազմի խորացմանը զուգընթաց Հայ ժողովրդական կուսակցությունը ևս հանգեց այն տեսակետին, որ վերջ տրվի այդ եղբայրասպան կռվին, ինչը բխում էր Հայաստանի Հանրապետության օր օրի վատթարացող սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական իրավիճակից: Բացի այդ, բոլոր կուսակցական-քաղաքական

ուժերը նպատակահարմար էին գտնում, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը բավարարվեն սահմանին հասնելով՝ Խրամ գետին, համարելով առաջադրված խնդիրը լուծված և կառավարությանը առաջարկելով հաշտարար պատվիրակություն ուղարկել և դաշնակիցների ներկայացուցիչների հետ բանակցել և պատրաստակամություն հայտնել վերջ դնելու հայ-վրացական ռազմաքաղաքական առճակատմանը և սահմանային-տարածքային վեճին, եթե Վրաստանը ևս դրսևորի կամեցողություն այդ խնդրում և չհամառի ռազմական եղանակով վիճահարույց հարցի լուծման վրա, սակայն միշտ պատրաստ լինելով պաշտպանել ՀՀ տարածքն ու ժողովրդին: Մասնավորապես հայ-վրացական ռազմաքաղաքական բախմանը վերաբերող հիմնահարցերը հանգամանալից քննարկման նյութ են դարձել ՀՀ խորհրդարանի 1918 թ. հոկտեմբեր-դեկտեմբերի նիստերում: Առհասարակ, Հայաստանի Հանրապետության խորհրդի (պառլամենտի) խմբակցությունները, չնայած որոշ տարակարծություններին, միակարծիք էին 1918 թ. հայ-վրացական պատերազմի նկատմամբ ունեցած իրենց դիրքորոշման մեջ[884]:

Այս առումով, սկզբունքորեն դժվար է լիովին համաձայնվել այն հեղինակների հետ, որոնք ելնելով նեղ կուսակցական-քաղաքական, անձնական-էգոիստական շահերից, շահարկում են այն հարցը, ըստ որի իբր թե կուսակցությունները հստակ և աներկբայորեն բաժանվում են ազգային և ոչ ազգային կուսակցությունների տիպերի, որն ըստ էության որոշակի առումով և որոշ տեսանկյունից արհեստական, էկլեկտիկ մոտեցում է: Այն համահարթում է համակողմանի պատմական մոտեցումը կուսակցությունների գործունեության նկատմամբ, կտրելով այն աշխարհաքաղաքական իրավիճակի ռեալ պրոբլեմներից, որոնցում նրբանք գտնվել են և գործել, ինչը լավ երևում է ստորև ներկայացված շարադրանքից:

Հարկ է ընդգծել, որ հոկտեմբերի 22-ի նիստից սկսած ՀՀ կառավարությունը, պառլամենտական խմբակցությունները և կուսակցությունները ձգտում էին հայ-վրացական սահմանավեճը հարթել խաղաղ ճանապարհով, և այդ ոգով էլ հանդես էին գալիս խորհրդարանում, և մի-

[884] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ./ Գլխավոր խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան, Եր., Հայ. Ազգ. Արխիվ, 2009, էջ 15-19, 22-28, 67-80, 88-92 և այլն:

այն ծայրահեղ դեպքում կառավարությունից պահանջում էին դիմել արտակարգ՝ ռազմական ուժի օգնությանը, որի մասին ստորև կանդրադառնանք և այդ մասին արդեն որոշակիորեն, ընդհանուր գծերով անդրադարձել ենք մեր կողմից հրատարակված գրքույկում[885]:

Հայաստանի պառլամենտի հոկտեմբերի 22-ի նիստում վարչապետ Քաջազնունին պատգամավորներին ներկայացնելով առկա տեղեկատվությունը, ինչպես նաև Թիֆլիսում հայկական դիվանագիտական ներկայացուցչի հաղորդագրությունն այն մասին, որ ինքը տեսակցություն է ունեցել Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի հետ ու վերջինս «առաջարկել է թողնել գրավված շրջանները և ապա բանակցություններ սկսել հարցը խաղաղությամբ վերջացնելու համար, որ կառավարությունը կանգնած է այն տեսակետի վրա, որ հարցը պետք է լուծել խաղաղ ճանապարհով և պահել բարի դրացիական հարաբերությունները»[886]: Այդ ոգով են արտահայտվում մի շարք պատգամավորական խմբակցությունների ներկայացուցիչներ, որոնք ընդհանուր առմամբ շեշտում են, որ կարևոր է կոնֆլիկտը խաղաղությամբ վերջացնել, իսկ եթե վրացիք զինված ուժի կդիմեն՝ դիմադրություն ցույց տալ[887]: Պատգամավոր Թ. Ավդալբեգյանը իր ելույթում ընդգծում է, որ Վրաստանի կողմից ներկայացված ուլտիմատումը՝ դատարկելու Շահալի կայարանը, անհիմն է, և որ այն ո՛չ տաճիկների և ո՛չ էլ վրացիների կողմից զբաղեցված չի եղել, այն բոլորվին դատարկ է եղել, և ամենակարևորը՝ դեռ հունիս ամսին վրաց կառավարությունը այդ շրջանը ճանաչել է որպես Հայաստանի մաս, միայն ժամանակավորապես իրենց ձեռքում այն պահելով՝ Տփղիսը մի երրորդ պետության վտանգից ազատ պահելու դիտումով[888]: Իսկ պատգամավոր Սահակ Թորոսյանը ՀՅԴ խմբակցության անունից հավանություն տալով կառավարության ռազմաքաղաքական միջոցառումներին, առաջարկում է շարունակել նույն ձևով և ամեն մի

---

[885] Տե՛ս Վիրաբյան Վ. Հ., Հայաստանի Հանրապետությունը 1918-20 թթ.: Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները. Եր., ՀՊՃՀ, 1999, էջ 11-22:

[886] Տե՛ս «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1991, № 3, էջ 43; Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան» հրատ., 1993, էջ 219: «Ձանգ», Երևան, 27 հոկտեմբերի, N 65 (81) 1918:

[887] Տե՛ս «Կառավարության լրաբեր», Երևան, 08.11.1918 . № 17:

[888] Տե՛ս «Ձանգ», Երևան, 27 հոկտեմբերի, 1918 թ., N 65 (81):

ջանք գործադրել խաղաղ ճանապարհով լուծելու առաջ եկած կոնֆլիկտը, իսկ եթե այդ էլ չօգնի և Վրաստանը ագրեսիվ քայլեր ձեռնարկի՝ զենքի ուժով պաշտպանել Հայաստանի Հանրապետության իրավունքները: Նույն տեսակետն է պաշտպանում էսէռական խմբակցության ներկայացուցիչ Ա. Խոնդկարյանը: Սոցիալ-դեմոկրատական խմբակցության անդամ Թ. Ղարաջյանն առաջարկում է առաջացած վեճը լուծել խաղաղ ճանապարհով: Անգամ մեծամասնական Ա. Մելիքյանը սկզբունքային առաջարկ է անում, գտնելով, որ անհրաժեշտ է խաղաղ ճանապարհով լուծել հարցը, մինչև որ բոլոր միջոցները ամբողջովին սպառվեն և եթե հնարավոր է՝ մի հեղինակավոր անձի ուղարկել Թիֆլիս՝ բանակցելու վրաց կառավարության հետ, և եթե այդ միջոցներով խնդիրը չլուծվի, այդ դեպքում մնում է դիմել զենքի: Հարցը խաղաղ ճանապարհով լուծելու օգտին է արտահայտվում նաև թուրքական խմբակցությունը ի դեմս նրա ներկայացուցիչ Ասադ Բեկ Աղաբաբեկովի: Ի վերջո, քվեարկության դրված առաջարկություններից անցնում է ՀՅ Դաշնակցության խմբակցության առաջարկած տարբերակը[889]:

Վերջ ի վերջո հավանություն են տալիս ՀՀ կառավարության վարած արտաքին խաղաղասիրական քաղաքական կուրսին, որն անշուշտ, բխում էր հայ ժողովրդի քաղաքական-պետական շահերից (սով, գաղթականներ, պատերազմական վերքեր, ներքին մահմեդական հակահայկական ընդվզումներ և խժդժություններ, տարափոխիկ հիվանդություններ և այլն), ինչին «եղբայրական» վրացական կողմը, Անդրկովկասյան Սեյմի մեր եղբայրակիցները և դարավոր բարեկամները (դեռ Թամար թագուհու և Դավիթ Շինարարի ժամանակներից սկսած) հակադրում էին իրենց զորագլուխները և գերմանական սվինները: Եվ այնուամենայնիվ, վերջին փորձերից մեկը խաղաղեցնելու ագրեսորին, արտահայտվեց Հովի. Քաջազնունու խաղաղասիրական հեռագրով՝ ուղղված Թիֆլիսում հայկական դիվանագիտական ներկայացուցիչ Ջամալյանին, որում ասվում էր, թե «Հայաստանի խորհուրդը լսելով վարչապետի զեկուցումը Շահալին պարպելու մասին արված վերջնագիր-պահանջի, ինչպես նաև կառավարության ձեռք առած միջոցների մասին, որոշեց՝ 1) հավանություն տալ կառավարության գործողություննե-

[889] Տե՛ս նույն տեղում:

րին և առաջարկեց նրան հետագայում էլ հետևել ընդունած ուղղությանը, 2) պարտք դնել կառավարության վրա, ամեն ջանք թափել բախումը խաղաղ ճանապարհով լուծելու համար՝ այն հույսով, որ Վրաստանն էլ հետ կկանգնի հարձակողական քայլերից և չի անցնի իր գրաված գիծը: Խնդրում եմ հաղորդել այդ մասին Վրաց կառավարությանը»[890]:

Վրաց-հայկական հասունացող բախումնալից ռազմաքաղաքական իրավիճակի և հայ-վրացական փոխհարաբերությունների հարցը լուրջ քննարկման առարկա հանդիսացավ 1918 թ. հոկտեմբերի 25-26-ին Հայաստանի խորհրդի նիստում:

Բայց մինչ այդ, նախարարապետ Հովհ. Քաջազնունին հայտնում է, որ «խորհրդի ընդունած որոշումը ու կառավարության տեսակետը՝ հարցը խաղաղ ճանապարհով վերջացնելու մասին, արդեն հեռագրված է Ջամալյանին: Բացի այդ, որովհետև Ժորդանիայից մինչև այժմ պատասխան չենք ստացել, ուստի և Թիֆլիս է ուղարկված հատուկ սուրհանդակ: Նրա հետ Թիֆլիս է ուղարկված կոնֆլիկտի հետ կապ ունեցող բոլոր հեռագրերի, արված որոշումների պատճենները: Հաղորդված է նաև վրաց կառավարությանը, որ մեր կառավարությունն այն տեսակետն ունի, որ թուրքաց թողած հողամասերը և Բորչալվի գավառի հայաբնակ մասը մեզ են պատկանում, բայց զենքի ուժի չենք դիմի, այլ մեր իրավունքները կպաշտպանենք խաղաղ ճանապարհով: Ի վերջո, ստացանք վրաց զին[վորական] նախարար Գեորգաձեից մի հեռագիր, թե իրենք ցանկանում են հարցը խաղաղ ճանապարհով լուծել, ուստի մեր կառավարությունը կարծում է, որ հնարավոր է նախաձեռնել հայ-վրացական մի կոնֆերանսի գումարման՝ սահմանները որոշելու համար»[891]: Երեկոյան նիստում Քաջազնունին կրկին ելույթ է ունենում և պառլամենտականներին տեղեկացնում Քոբեր կիսակայարանի շրջանում ծավալված ռազմաքաղաքական անցքերի և Վորոնցովկայի գրավման մասին, միաժամանակ փաստելով հայկական զորաջոկատի զինաթափման մասին գերմանական զորքի կողմից, և նորից զենքերը վերադարձնելու և վրաց կառավարության կողմից Ախալքալաքում թուրքերի հեռացումից հետո պաշտոնյաներ նշանակելու փաստի, և վերջապես՝ Ն.

[890] Տե՛ս «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1991, № 3, էջ 43-44:

[891] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 69-70:

Ռամիշվիլուց ստացված պատերազմական տրամադրվածություն ունեցող հեռագրի մասին: Հովհ. Քաջազնունին եզրահանգել էր, որ անհրաժեշտ է բոլոր ջանքերը գործադրել ագրեսիվ տպավորություն չթողնելու համար, անզգույշ բառեր չօգտագործել և սահմանագծումների խնդիրը խաղաղ եղանակով հարթել հարևան հանրապետության հետ, այդուհանդերձ վերապահում անելով, ըստ որի սահմանագծումները արբիտրաժով չի կարելի լուծել, որովհետև Վրաստանը կանգնած է պատմական տեսակետի վրա, իսկ իրենք՝ էթնիկական, գտնելով որ հարկավոր է շտապ պարզել դեմարկացիոն գիծը, որովհետև սահմանագծին և դրա շուրջ գտնվող գյուղերը մեր զորքերի կողմից գրավելը գուցե զինվորական հարմարություններ ունի, ըստ այդմ դրա լուծումը ավելի կարևորելով առաջարկվող կոնֆերանսի գաղափարից:[892]:

Հայ-վրացական կոնֆլիկտային խնդրի վերաբերյալ ելույթ ունեցան տարբեր խմբակցությունների ներկայացուցիչներ՝ ՀՅԴ խբակցության ներկայացուցիչ Հովհ. Բուդաղյանը, Հայ Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Եր. Հարությունյանը, սոցիալ-դեմոկրատ Հ. Ազատյանը և ուրիշներ:

ՀՅԴ խբակցության ներկայացուցիչ Հովհ. Բուդաղյանը գտնելով, որ հարցը հասունացած չէ և տեղին չէ կոնֆերանսի մասին խոսել, առաջարկում է բանակցություններ վարել և աշխատել խաղաղ ճանապարհով հարթել այդ խնդիրը, կառավարությանը տալ համապատասխան լիազորություններ այդ խնդրի վճռման համար, իսկ Ստ. Մամիկոնյանը առաջարկում է խուսափել պատերազմ բառից և չդիմել արբիտրաժի, և առաջին հերթին պարզել դեմարկացիոն գծի խնդիրը, որի օգտին արտահայտվում է Հ. Ազատյանը: Հայ Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Եր. Հարությունյանը գործնականում աննպատակահարմար է գտնում պառլամենտական ներկայացուցչություն ուղարկել կոնֆերանսին, առաջարկելով այդ հարցը թողնել կառավարության հայեցողությանը, կարևորելով սահմանների հարցը և առաջարկում նոր կռիվների տեղիք չտալու համար խորհրդարանին և կառավարությանը լիազորել բանակցություններ սկսել վրսց կառավարության հետ: Սոցիալ-դեմոկրատ Հ. Ազատյանը գտնելով, որ Քաջազնունու կողմից շոշափած

[892] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 74-75:

դեմարկացիոն-բաժանարար գիծը նշանակություն չունի, առաջարկում է չառաջադրել այդ հարցը և հրահանգել հայկական զինվորական իշխանությանը կանգնել իրենց այդ պահին գտնված վայրում և սկսել բանակցությունները, ինչպես նաև հեռագիր ուղարկել վրաց պառլամենտին՝ հայտնելով, որ Հայաստանի խորհուրդը ընդառաջ է գնում կոնֆերանսի գումարմանը և ուղարկում է իր ներկայացուցիչներին՝ բոլոր խմբակցությունների մասնակցությամբ, և ըստ այդմ առաջարկում է, որ այդ մասին խորհրդարանի նախագահությունը հայտնի Վրաստանի խորհրդարանին[893]: Ի վերջո, ելույթ ունեցողներին զորակցում է Զինվորական նախարարը, որը առաջարկում է հանձնարարել կառավարությանը բանակցություններ սկսել վրաց կառավարության հետ՝ սահմանների գիծը որոշելու համար հրավիրել կոնֆերանս[894]:

Էականն այն է, որ որոշ տարակարծություններով հանդերձ, վերջ ի վերջո նրանք բոլորն էլ համերաշխվում են, և 27 ձայնով անցնում է ՀՅ Դաշնակցության բանաձևը, որում ասվում էր հետևյալը. «Հայ-վրացական խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով Հայաստանի խորհուրդը հանձնարարում է կառավարությանը բանակցություններ սկսել Վրաց կառավարության հետ՝ կոնֆերանս գումարելու՝ սահմանագիծն որոշելու համար»[895]: Պատգամավոր Հայկ Ազատյանի առաջարկով որոշվում է այդ մասին տեղեկացնել նաև Վրաստանի պառլամենտի նախագահությանը, որն ընդունվում է պայմանով, որ այն ունի քարոզչության բնույթ և նպատակ: Հետագա շրջանում հարցի քննարկումը, կապված հայ-վրացական կնճռի հաղթահարման հետ, շարունակվում է:

Հոկտեմբերի 28-ի նիստում շարունակվում է քննարկումը՝ կապված հայ-վրացական վեհաժողովի հրավիրման հարցի հետ: Կառավարության նախագահը տեղեկացնելով, որ Վրաց կառավարությունն արդեն պաշտոնյաներ է նշանակում հայտնի տարածքներում, այնուամենայնիվ գտնում էր, որ պետք է փոխադարձ համաձայնությամբ ու հաշ-

---

[893] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 74-75: Տե՛ս նաև «Ձանգ», Երևան, 7 նոյեմբերի, 1918, N 68 (84):

[894] Տե՛ս «Ձանգ», Երևան, 7 նոյեմբերի, 1918, N 68 (84):

[895] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 15, թ. 2, 11, 13: «Հորիզոն», Թիֆլիս, 10 նոյեմբերի, 1918 թ.:

տությամբ վերջացնել կոնֆլիկտը[896]: Հարցի կապակցությամբ ելույթ ունեցած խորհրդարանի անկուսակցական պատգամավոր Ստ. Մամիկոնյանը գտնում էր, որ սահմանագծումները արբիտրաժով լուծել չի կարելի, որովհետև Վրաստանը կանգնած է պատմական տեսակետի վրա, իսկ Հայաստանը՝ էթնիկական:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունից ելույթ ունեցած պատգամավոր Հովի. Բուդաղյանը գտնում էր, որ հայ-վրացական կոնֆերանսի մասին հարցը հասունացած չէ և կոնֆերանսի մասին չի կարելի խոսել, և իրենք տեղեկություն չունեն Վրաց կառավարության մտադրության մասին: ՀՅ Դաշնակցության խմբակցության անունից վերջինս առաջարկում էր կառավարությանը բանակցություններ վարել և աշխատել խաղաղ ճանապարհով հարթել այդ խնդիրը[897]:

Սոցիալ-դեմոկրատ Հայկ Ազատյանը առաջարկում է Հայաստանի պառլամենտի կողմից «վրաց պառլամենտին ուղարկել մի հեռագիր այն մասին, որ Հայաստանի խորհուրդը ընդառաջ է գնում կոնֆերանսի գումարմանը և կուղարկի յուր ներկայացուցչությունը՝ բաղկացած բոլոր խմբակցությունների ներկայացուցիչներից»:

Ի վերջո բանավեճից հետո քվեարկվում է Հայ Հեղափոխական Դաշնակցության առաջարկությունը՝ «Հայ-վրացական խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով, Հայաստանի խորհուրդը հանձնարարում է կառավարությանը բանակցություններ սկսել Վրաց կառավարության հետ՝ կոնֆերանս գումարելու սահմանագիծն որոշելու համար»: Սույն բանաձևը քվեարկվում է՝ ստանալով կողմ 27 ձայն[898]:

Ինչպես երևում է Հայաստանի Հանրապետության պառլամենտի 1918 թ. հոկտեմբերի 29-ի նիստի արձանագրությունից, կուսակցական խմբակցությունները դարձյալ որոշակի վերաբերմունք ունեցան այդ խնդրին: Եթե սոցիալիստ-հեղափոխականների խմբակցությունը ի դեմս Ա. Խոնդկարյանի առաջարկում էր Վրաստանի հետ ունեցած վեճը լուծել խաղաղ ճանապարհով, ապա դաշնակցական խմբակցությունը և նույնիսկ մեծամասնական Ա. Մելիքյանը հավանություն տալով կառավարության ձեռնարկած քայլերին՝ամեն ջանք գործադրել խաղաղ ճա-

[896] Տե՛ս «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1990, № 3, էջ 128:
[897] Տե՛ս նույն տեղում:
[898] Տե՛ս նույն տեղում, էջ 129:

նապարհով լուծելու սահմանավեճը, առաջարկում էին, անհրաժեշտության դեպքում, զենքի ուժով պաշտպանել Հայաստանի իրավունքները: Անցնում է, սակայն, դաշնակցական խմբակցության առաջարկը[899]: Արդյունքում, հոկտեմբերի 29-ի նիստում Հայաստանի խորհուրդը լսելով մինիստր-նախագահի զեկույցը, ընդունում է համապատասխան որոշում, որի մասին հեռագիր է ուղարկվում Վրաստանի պառլամենտի նախագահին (պատճենը՝ Ա. Ջամալյանին): Դրանում ընդգծվում էր, որ հանրապետությունների սահմանապահ զորամասերի միջև ծագած կոնֆլիկտը պետք է լուծել փոխադարձ համաձայնության ճանապարհով: Հայաստանի խորհուրդը որոշում է ընդունում՝ դիմել Վրաստանի պառլամենտին՝ խոր վստահություն արտահայտելով այն բանում, որ ոչ մի թյուրիմացություն չպետք է սասանի դարավոր կապերը երկու եղբայրական ժողովուրդների միջև: Հայաստանի խորհուրդը, - ասվում էր այդ փաստաթղթում, - հավատում է, որ և՛ Վրաստանի կառավարությունը, և՛ Պառլամենտը բոլոր միջոցները կձեռնարկեն սպասվող բանակցությունների խաղաղ լուծման համար[900]:

Հայ-վրացական պատերազմի, ռազմական գործողությունները դադարեցնելու և սահմանակնճիռը հարթելու նպատակով Լոռի մեկնեց խորհրդարանական հանձնաժողով, ուր ընդգրկված էին Գ. Տեր-Խաչատրյանը (ՀԺԿ), Մ. Հարությունյանը (ՀՀԴ), Ս. Խաչատրյանը (ՀՀԴ), Ա. Խոնդկարյանը (էսէռ), Ստ. Մամիկոնյանը (անկուս.) և զորավար Ղորդանյանը[901]: Բացի այդ, Հայ սոցիալ-դեմոկրատիան կոչով դիմեց Վրաստանի սոցիալ-դեմոկրատիային՝ հայ-վրացական միջադեպին վերջ տալու անհրաժեշտության մասին: Կոչը հասցեագրված էր սոցիալ-դեմոկրատիայի մարզային կոմիտեին, Ազգային խորհրդի նախագահին[902]: Սակայն այն էական արդյունքներ չտվեց:

Հայաստանի խորհրդի նոյեմբերի 8-ի նիստում քննվեց Վրաստանի վարչապետ Ն. Վ. Ռամիշվիլու դիմումը, և առաջին անգամ Հայաստանի Հանրապետության կյանքում Խորհրդի բոլոր կուսակցությունները, առ-

[899] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 16, թ. 4; Տե՛ս նաև «Ձանգ», Երևան, թիվ 65, հոկտեմբերի 27, 1918 թ.:

[900] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 52, թ. 53; գ. 17, թ. 115, 116:

[901] Տե՛ս «Ժողովուրդ», Երևան, 22 դեկտեմբերի, 1918 թ.:

[902] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 404, ց. 1, գ. 5, թ. 1:

անց բացառության, կանգնեցին միևնույն տեսակետի վրա՝ ցասումով դատապարտելով Վրաստանի մենշևիկյան հանրապետության կառավարության մենատիրական ձգտումները: Եվ որ շատ ավելի կարևոր և հետաքրքրական է, ամենաուժգին քննադատողներն ու դատափետողները եղան հայ սոցիալ-դեմոկրատները, որոնք դեռ շարունակում էին կազմակերպական կապեր պահպանել վրաց սոցիալ-դեմոկրատների հետ: Սոցիալ-դեմոկրատ պատգամավոր Ա. Մալխասյանը խիստ բողոքեց հայ-վրացական տարածքային սահմանավեճը հարթելու նպատակադրումով խորհրդաժողով հրավիրելու վրացական կողմի տարօրինակ ձևի դեմ (վրացական կողմը հաշվի չէր առել հակառակ կողմի ցանկությունները, նրա հետ հավասար դիրքերից հանդես գալու ելակետային պահանջները և այլն), որն այս դեպքում համազոր էր դիրքորոշման և ռազմավարության նոր տարբերակի ընտրության, և իր այդ եսակենտրոն քայլով Վրաստանի հանրապետության «դեմոկրատական» կառավարությունը խախտում էր հավասարության սկզբունքները, ցանկանում էր ուրիշների վզին փաթաթել իր կամքը և դրանով իսկ գերիշող դիրքեր գրավել անդրկովկասյան տարածաշրջանում: Վրաստանի կառավարությունը ինքնագլուխ կերպով առանց դիմացինի կարծիքը հաշվի առնելու, որոշել էր վեհաժողովի վայրն ու ժամանակը, օրակարգն ու կազմը: Այդ նույն ոգով արտահայտվեց դաշնակցական Սահակ Թորոսյանը, սկզբունքորեն սակայն դեմ չարտահայտվելով կոնֆերանսի հրավիրման գաղափարին[903]: Հայկական կողմը, քաղաքական կուսակցությունները անհանդուրժելի գտան նման վարքագիծը, և դատափետեցին այն: Անհանդուրժելի գտավ և ինչպես վկայում է Ս. Վրացյանը, «ըստ ձևի ու ըստ էության դեմ» արտահայտվեց նաև սոցիալիստ-հեղափոխականների խմբակցությունը: Նմանատիպ պատճառաբանություններից ելնելով՝ բացասական վերաբերմունք դրսևորեցին և՛ դաշնակցական, և՛ ժողովրդական խմբակցությունները: Դաշնակցական պատգամավոր Ս. Թորոսյանը իր ելույթում ընդգծում է, որ իրենք չեն ընդունել վրացական կառավարության առաջարկը: Չնայած Ս. Թորոսյանը առհասարակ սկզբունքորեն չէր առարկում դրա դեմ, այդուհանդերձ նա գալիս է հետևության, որ պետք է հանձնարարել ՀՀ կառավարությանը վրաց կա-

[903] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 89: Տե՛ս «Ձանգ», Երևան, 28 նոյեմբերի, 1918, N 74:

ռավարության հետ բանակցություններ սկսելուց առաջ հասկացնել նրանց, որ որոշ խնդիրներ պետք է լուծված լինեն նախքան կոնֆերանսը, օրինակ՝ սահմանորոշման խնդիրը: Անկուսակցական Ստ. Մամիկոնյանը իր հերթին ընդգծում է, որ եթե վրաց կառավարության առաջարկը իրենց ձեռնտու լիներ, իրենք ուշք չէին դարձնի վրացական կառավարության կողմից կոնֆերանսին հրավիրման այդ գործնականում մերժելի և անընդունելի ձևին և արտակարգ գնացքով իրենց կձգեին [շտապ կհասնեին- Վ. Վ.] Թիֆլիս, սակայն կանխավ սահմանազատման շուրջ վեճերի շուրջ իսկույնևեթ նոր համաձայնության գալով, իսկ մինչ այդ մերժելով մասնակցել կոնֆերանսի աշխատանքներին[904]: Սոցիալիստ-հեղափոխականների ներկայացուցիչ Ա. Խոնդկարյանն էլ գալիս է եզրահանգման, որ որ կոնֆերանսը ըստ ամենայնի ձեռնտու չէ, որ այն պետք է լինի հայ-վրացական: Ա. Խոնդկարյանը պնդում էր, որ կոնֆերանսը լինի միայն և միայն հայ-վրացական, որը կվերաբերի սահմանների վերաբերյալ վեճը վերջացնելու խնդրին[905]:

Միաձայն, բոլոր խմբակցությունների համաձայնեցված վճռով խորհրդարանը որոշեց չմասնակցել նոյեմբերի 10-ի խորհրդաժողովին և հանձնարարեց կառավարությանը, որ աշխատի «հող պատրաստել մասնակցելու խորհրդաժողովին՝ նախօրոք համաձայնության գալով դրա կազմի, օրակարգի, տեղի ու ժամանակի մասին»: Միաժամանակ խորհուրդը որոշեց, որ անմիջապես սկսեն բանակցություններ վրաց դեմոկրատական կառավարության հետ, գումարել միջպետական հանձնաժողով՝ կոնֆերանսի հրավիրման, խորհրդաժողովի կազմի, գումարման ժամանակի, տեղի ու օրակարգի հարցերը: Խորհրդարանի կողմից ընդգծվեց, որ հայ-վրացական սահմանային վեճը առնչություն չունի այդ խորհրդաժողովի հետ և «պետք է վճռվի միայն երկու հանրապետությունների ներկայացուցիչների միջոցով, փոխադարձ համաձայնությամբ և նախքան անդրկովկասյան կոնֆերանսի գումարումը»[906]:

Ախալքալաքի ու Լոռիի դեպքերը մեծ հուզում առաջ բերեցին Երևանում: Քաղաքական կուսակցությունները, Հայաստանի խորհրդա-

[904] Տե՛ս «Ձանգ», Երևան, 28 նոյեմբերի, 1918, N 74:

[905] Տե՛ս նույն տեղում:

[906] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993, էջ 221-222: Տե՛ս «Ձանգ», Երևան, 1 դեկտեմբերի, 1918, N 75:

րանը, կառավարությունը, հանրային կարծիքը միաբերան դատապարտում էին վրացիների հակահայկական դիրքորոշումը: Հայաստանի խորհրդարանը մի շարք դռնփակ նիստերում քննելով դրությունը՝ կառավարությանը տվեց գործելու ազատություն՝ պարտավորեցնելով՝ նրան դիմել ամեն միջոցի՝ պաշտպանելու համար Հայաստանի իրավունքը Ախալքալաքի, և մանավանդ, Լոռիի վերաբերմամբ: Այս հարցում տարակարծություն չկար. բոլոր կուսակցությունները Լոռին համարում էին Հայաստանի անբաժանելի մասը: Հայ ժողովրդի բոլոր խավերի համար սահմանավեճը ազգային-քաղաքական մեծ կարևորության խնդիր էր, քանզի դա ապահովում էր այն կենսատարածքի ամբողջությունը, առանց որի անպատկերացնելի էր հայության հոգևոր և տնտեսաքաղաքական բարեկեցությունը և հետագա բարգավաճումը: Դրա հետ մեկտեղ հայ քաղաքական ուժերի մեծ մասն ամենևին էլ չէր ձգտում, որ անհամաձայնությունների բախումնակետ դարձած սահմանավեճը, Լոռի-Ախալքալաքի, Բորչալուի և այլ տարածքների շուրջ ծավալված ռազմաքաղաքական լարվածությունը և այլ անհարթությունները խաղաղ ճանապարհով վերանային, պատերազմական գործողություններին վերջ դրվեր և համաձայնություն կայացվեր:

Հետաքրքրական է այս առումով նաև Հայաստանի խորհրդի խմբակցությունների 1918 թ. նոյեմբերի 21-ի խառը նիստի որոշ արձանագրությունների վերլուծությունը: Դրանք բացահայտում են տարբեր հայ քաղաքական կուսակցությունների համերաշխությունը ազգային մեծ կարևորություն ներկայացնող հարցերում, և ցույց տալիս, որ նրանց բաժանող տարակարծությունները էական չեն եղել, և ռազմավարական վտանգ չեն ներկայացրել: Խմբակցությունները 1-ին կետով պայմանավորվում են (22 ձայնով ընդդեմ 3-ի) հրահանգել կառավարությանը, որպեսզի վերջինս պայմանավորվի թուրքական հրամանատարության հետ, թե ինչ կարգով, հնարավորին ամենակարճ ժամանակամիջոցում թուրքական զորքերը պիտի դուրս բերվեն Ախալքալաքի գավառից և փոխարինվեն հայկական զորամասերով: 1-ին կետի քվեարկության ժամանակ սոցիալ-դեմոկրատական խմբակցության առաջարկած բանաձևի առաջին մասը ստանում է կողմ 5 ձայն, մնացածը՝ դեմ: Երկրորդ մասը հօգուտ ստանում է 4 ձայն: Այնուհետև քվեարկվում է Հայ Ժողովրդական կուսակցության առաջարկության 1-ին կետը և անցնում է

ձայների մեծամասնությամբ, ընդդեմ են արտահայտվում սոցիալ-դեմոկրատները և անկուսակցական պատգամավոր Ստ. Մամիկոնյանը, ձեռնպահությամբ սոցիալիստ-հեղափոխականների խմբակցության[907]: Միևնույն ժամանակ որոշվում է սույն պայմանագրի պատճենը տալ Ախալցխայի մուսուլմանական կոմիտեի ներկայացուցչին, եթե վերջինս պահանջի այն (12 կողմ, 10 դեմ, 4 ձեռնպահ)[908]: Այդ մասին քվեարկության ժամանակ հօգուտ ձայն են տալիս 11 հոգի (սոցիալիստ-հեղափոխականների, սոցիալ-դեմոկրատական և Հայ Ժողովրդական կուսակցությունների խմբակցությունները և Վարոս Բաբայանցը), ընդդեմ՝ դաշնակցականները՝ թվով 15 հոգի: Հայաստանի Խորհրդի խմբակցությունների կողմից ընդունված այդ փաստաթղթի 2-րդ կետում ասվում էր, որ Ախալցխա քաղաքի և Ախալցխայի գավառի հայ ազգաբնակչության իրավունքները և շահերը պաշտպանելու համար հարկ է նշանակել Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ախալցխա քաղաքում: Այն, սակայն, ձայների մեծամասնություն չստացավ՝ 15 կողմ, 10 դեմ, 1 ձեռնպահ (սոցիալիստ-հեղափոխականներ, սոցիալ-դեմոկրատներ և Հայ Ժողովրդական կուսակցություն):

Ըստ այդ փաստաթղթի երրորդ կետի, կառավարությանը լիազորություն էր տրվում համաձայնության գալ տաճկական հրամանատարության հետ, որ Ախալքալաքի գավառում հայկական գյուղերի միջև ընկած փոքրաթիվ թուրքական գյուղերի ազգաբնակչությունը փոխադրվի այն թուրքական գյուղերը, որոնք գտնվում են Ախալքալաքի և Ախալցխայի սահմանագծի վրա, գետի աջ ափին (հարցի այդ մասը ստանում է 25 կողմ ընդդեմ 4-ի), և որ այդ փոքրիկ հողամասը ժամանակավորապես կառավարվի Ախալցխայում գոյություն ունեցող կառավարության կողմից (այս տեսակետի այս մասն էլ ստացավ 15 կողմ ընդդեմ 12-ի-սոցիալ-դեմոկրատներ, սոցիալիստ-հեղափոխականներ և Հայ Ժողովրդական կուսակցություն), դրա փոխարեն Ախալցխայի գավառում գտնվող հայաբնակ Տամալա գյուղը կցելով Ախալքալաքի գավառին (18 կողմ ընդդեմ 8-ի, 1-ը՝ ձեռնպահ): Եվ վերջապես, երրորդ կետի երրորդ

[907] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 99, թ. 28:
[908] Տե՛ս նույն տեղում:

մասին հօգուտ ձայն են տալիս 18 հոգի, դեմ՝ 8 (սոցիալ-դեմոկրատներ, սոցիալիստ հեղափոխականներ), 1-ը՝ ձեռնպահ[909]:

Եվ վերջապես 4-րդ կետն առաջարկվեց Ս. Տիգրանյանի կողմից: Դրանով նախատեսվում էր. ա) Ախալքալաքի գավառը համարել Հայաստանի անբաժան մաս (միաձայն), բ) գաղթականությանը տեղավորել Ախալքալաքի գավառում (միաձայն), գ) գրավել Ախալքալաքի գավառը հայկական զորամասերով և այնտեղ հաստատել վարչակազմ (21 կողմ ընդդեմ 6-ի)[910]:

Ուշագրավ է նաև խմբակցությունների առանձին-առանձին դիրքորոշումը: Բերենք մի օրինակ: Հայ Ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) պառլամենտական խմբակցության առաջարկությունը Ախալքալաքի գավառի և վրաց-հայկական տերիտորիայի սահմանների մասին, ներկայացվում է 1918 թ. նոյեմբերի 21-ի նիստին: Դրանում մասնավորապես ասվում էր.

1. «Ախալքալաքի գավառի ընդունելության մասին. տաճկական զօրքերի հրամանատարության հետ մտնել պաշտօնական հարաբերությունների մեջ և կայացնիլ համաձայնություն, որ այժմս և իր սահմանագլխի տաճկական զօրքերը անարգել վիճակով թույլ տան Ախալքալաքի գաղթականներին Վրաստանից ներս մտնիլ Ախալքալաքի գավառը և տեղավորվին իրենց գյուղերում»:

Ըստ ձևակերպված փաստաթղթի այդ կետի տաճկական զօրքերը միաժամանակ պետք է սկսեին իրենց զբաղեցրած դիրքերը զիջել Հայկական զորամասերին և այդ գործողությունները ձևակերպեին այնպես, ինչպես դա կատարվեց Ղարաքիլիսայի հանձնման ժամանակ հայկական կողմին.

2. «Համարելով պատերազմը վրաց և հայերի մեջ կորստաբեր երկու կողմերի համար և անհանդուրժելի, անմիջապես բանակցության մեջ մտնիլ Վրաստանի կառավարության հետ սահմանների խնդիրը լուծելու խաղաղ ճանապարհով, այդ նպատակի համար բանակցություններ կայացնել երկու կողմերի կառավարությունների ներկայացուցիչների և հատուկ պառլամենտական պատվիրակությունների միջոցով».

---

[909] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 99, թ. 28:

[910] Տե՛ս նույն տեղում:

3. Ախալցխայից և Ախալքալաքից եկած թուրք գաղթականների հետ հարաբերությունները և համաձայնությունը վերոհիշյալ խնդրի մասին համարիլ անընդունելի, նույնպես անհանդուրժելի համարիլ ներկայացուցիչ ուղարկել Ախալցխա մեր կառավարության կողմից»[911]:

Ակնհայտ է, որ ազգային խնդիրներում բոլոր կուսակցությունները համերաշխվում էին, տարաձայնություններ ունենալով որոշ նրբերանգներում՝ տակտիկական նկատառումներով, մի խոսքով՝ ոչ էական հարցերում: Այս առումով նաև որոշակիորեն պարզ է, որ մեղմ ասած ոչ ճիշտ են արտահայտվում այն հեղինակները, որոնք արհեստականորեն, գաղափարախոսական նկատառումներից ելնելով հայ իրականության մեջ գործած կուսակցությունները «խստորեն» բաժանում են ազգայինի և ոչ ազգայինի, և հակադրելով միմյանց ստեղծում մի նոր հակագիտություն, ինչը մերժելի է իրատեսության դիրքերից:

Դա է վկայում Հայաստանի խորհրդարանի խմբակցությունների խորհրդակցության կողմից 1918 թ. նոյեմբերի 29-ին ընդունված փաստաթուղթը (19 կողմ, 8 դեմ, 6 ձեռնպահ)՝ հասցեագրված Հայաստանի Հանրապետության կառավարությանը, մինիստր-նախագահին՝ վարչապետին, որում ասվում էր հետևյալը. «…Հայաստանի Հանրապետության խորհրդի հայ խմբակցությունների խորհրդակցության ամսույս 29-ի նիստում ընդունել է հետևյալ որոշումը Ախալքալաքի գավառի մասին, որ հայտնում է Ձեզ. «Հայաստանի խորհրդի հայ խմբակցությունների խորհրդակցությունը լսելով կառավարության հաղորդած տեղեկությունները Ախալքալաքի գավառի մասին, գտնում են, որ առաջ բերված նոր հանգամանքները բավարար չեն փոխելու իր որոշումները այդ գավառի վերաբերմամբ և հրահանգում է արագացնել բանակցությունները Վրաց կառավարության հետ մեր սահմանների ճշտման մասին»[912]:

Հատկանշական է, որ հայ-վրացական վեճի առանցքը հանդիսացող տարածքների հայկական պատկանելության հարցում Հայաստանի կուսակցությունների և խորհրդարանական պատվիրակությունների գերակշռող մեծամասնությունը էական տարակարծություններ չունեին: Այս առումով հետաքրքրական է Հայաստանի խորհրդարանի 1918 թ. դեկտեմբերի 12-ի նիստի ընթացքի ամբողջական վերլուծումը: Պատգա-

[911] Տե՛ս նույն տեղում, թ. 31:
[912] Տե՛ս նույն տեղում, թ. 33:

մավորները լսում են մինիստր-նախագահի հաղորդագրությունը Լոռվա շրջանում վրաց զորքի և տեղական հայ ազգաբնակչության միջև սկսված ընդհարումների մասին: Իր ելույթում Հովի. Քաջազնունին մասնավորապես ընդգծում է հետևյալը. «…հայտնի է, որ Վրաց կառավարությունը մարդ է ուղարկել Ուզունլար և ուրիշ հարևան գյուղեր որոշ պահանջներով. տեղացիները չեն հպատակվել և վրաց կառավարության պահանջները չեն կատարել, որի հետևանքով վրաց զորքը զենք է բարձրացրել հանդեպ տեղացի հայ ազգաբնակչության և դրանով ինցիդենտը մեծ ծավալ է ստացել: Այսօր Լոռվա հայկական գյուղերն ապստամբական դրության մեջ են: Վրաց կառավարությունը պահանջներ է դնում այդ տերիտորիայի վրա բնակեցված ժողովրդի վրա՝ համարելով այդ տերիտորիան իրենը: Իսկ տեղացիները, որ ամբողջովին հայեր են, չճանաչելով այդ անհարազատ իշխանությունը, հակված լինելով և գիտակցելով, որ մեր տերիտորիայի մասն է Լոռին, ապստամբել են: Այդ բոլորի հետևանքն այն է եղել, որ վրաց զորքը գործ է ածում թնդանոթներ և գնդացիրներ՝ հայ խաղաղ բնակչության վրա: Լոռվա ազգաբնակչությունը խնդրում է մեր կառավարությունից, որ վերջինս օգնի իրան վայրագություններից ու կործանումից: Մենք երբեք չենք հաշտվել այն մտքի հետ, որ հայաբնակ Լոռին Վրաստանի տերիտորիայի մաս կարող է համարվել: Սահմաններ գծելիս Անդրկովկասյան ժողովուրդների մեջ առաջնորդվել ենք էթնոգրաֆիկ սկզբունքով: Դեպքերն այնպես էին դասավորված, որ մեր տերիտորիայի մի մասը գերմանացիների աջակցությամբ վրացիները գրավեցին իրենց զորքերով: Մենք կարծում էինք, որ Վրաստանն այնքան տակտ կունենա, որ ծայրահեղությունների չի հասցնի հայկական շրջաններով, և խնդրի լուծումը խաղաղ ճանապարհով կվերջանա: Մեզ ստիպել են լռությամբ տանել այդ հանգամանքը, լռությամբ ոչ խոսքի, այլ գործի: Սակայն պարզվեց, որ վրացիներն ուզում են իրենց դիրքն հիշյալ գավառներում ամրապնդել և նույնիսկ առաջ շարժվել՝ նախօրոք գրաված ունենալով բարձրավանդակները: Տեղական ժողովուրդը բացարձակապես չի հանդուրժում օտարի իշխանությունը, տեսնելով բռնի ուժի ենթարկվելը, զենքի է դիմում և դիմադրում վրաց զորքերին: Հայաստանի կառավարությունը չի կարող հաշտվել, որ իր ժողովուրդը, իր հարազատներն իր երկրում վայրագությունների ենթարկվեն ապօրինաբար իշխողների կողմից, որ Վրաս-

տանն իրենը համարելով և թնդանոթային ու գնդացրային կրակով լռեցնեն ժողովրդի ձգտումներն ու ցանկությունները: Հայաստանի կառավարությունը պարտք համարեց դիմել վրաց կառավարությանը, որ վրացական զորքերը հեռացվեն այդ շրջանից: Կառավարությունը կարծում էր, որ խելահասությունը պիտի թելադրեր ընդառաջել մեր դիմումին, առաջնորդվելով ազգերի ինքնորոշման սկզբունքներով, որ Վրաց կառավարության անդամները շատ հաճախ շեշտել են: Բայց եթե դժբախտաբար վրաց կառավարությունը չկանգնի իր տեսակետի վրա, եթե ժողովրդի կամքը չուզենա ի նկատի առնել, Հայաստանի կառավարությունը ստիպված կլինի ուժով ստիպել թողնել մեր երկրամասը: Ահավասիկ կացությունը և կառավարության տեսակետը, զեկուցելով խորհրդիդ, կառավարությունը կուզեր լսել խորհրդի կարծիքը, որքան նպատակահարմար և հարգելի է գտնում կառավարության բռնած դիրքը և իր որոշումը, հետագայում Վրաց կառավարության անհամաձայնության դեպքում»[913]: Ի պատասխան պատգամավոր Ա. Խոնդկարյանի հարցումին, Հովի. Քաջազնունին ասվածին ավելացնում է հետևյալը. «Մեր և վրացիների մեջ սահման չունենք: Մենք ասել էինք, քանի դեռ սահման չի ընդունված, մեր զորքերը թող կանգնեն այս գծով, իսկ վրացական զորքերը կանգնեն թող այնտեղ՝ մատնանշելով մի որոշ գիծ: Այստեղ հարցը վերաբերում է հայկական կոտորածներին ու ճնշումներին»[914]:

Դրան հաջորդում է մտքերի փոխանակությունը վրաց-հայկական ռազմաքաղաքական փոխհարաբերությունների շուրջ, հնչում են առաջարկներ ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալու ուղիների որոնման առումով, միաժամանակ լսելով Լոռվա բնակչության դիմումի մասին Հայաստանի կառավարությանը, ընթերցվում է ուզունլարցիների դեկտեմբերի 7-ի դիմում-հեռագիրը: Հարցի կապակցությամբ ելույթ են ունենում տարբեր խմբակցությունների ներկայացուցիչներ: Չնայած արտահայտման որոշ տարակարծություններին, հիմնականում կու-

[913] Տե՛ս «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1991, № 3, էջ 70: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 116-117:

[914] Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 117:

սակցական խմբավորումները միակարծիք էին: Այսպես, Հայ Հեղափոխական Դաշնակցության ներկայացուցիչ Ն. Աղբալյանը ելույթ ունենալով ընդգծելով վրաց կառավարության անհանդուրժողական դիրքորոշման մասին, նշում է, որ «հայկական կառավարությունը պետք է լինի զգույշ, բայց և կտրուկ. Լոռին մերն է և ժողովուրդն իրավունք ունի ինքնորոշվելու, և պետք է նրա ձայնը որոշիչ լինի: Պետք է վերջ տալ այս կատակերգությանը, պետք է պարզել Վրաստանի և Հայաստանի հարաբերությունները. Պետք է ասել, որ մեզ է պատկանում այդ երկիրը անվիճելիորեն»[915], քանի որ այդ բնակավայրերի «ազգաբնակչության 80 տոկոսը հայեր են»[916]: Ն. Աղբալյանը եզրափակելով ասելիքը, ընդգծում է. «Ուրեմն կա մի հողամաս, որի բնակչության խոշորագույն տոկոսը հայերն են. այդ հողամասի ազգաբնակչությունը չի ուզում օտարի հետ լինել…Կառավարությունը շատ զուսպ, չափավոր դիրք է բռնել, նա առաջարկել է կամովին ետ քաշվել: Մեզ մնում է միայն հաշտվել կառավարության արած քայլերի հետ: …Մեր կառավարությունը պետք է լինի զգույշ, բայց և կտրուկ: Լոռին մերն է, և ժողովուրդը իրավունք ունի ինքնորոշվելու և պետք է նրա ձայնը որոշող լինի: Պետք է վերջ տալ այս կատակերգությանը, պետք է պարզել Վրաստանի և Հայաստանի հարաբերությունները. պետք է ասել, որ մեզ է պատկանում այդ երկիրը անվիճելիորեն: Հավանություն ենք տալիս կառավարության քայլերին և պահանջում ենք պատրաստ լինել հարկ եղածին պաշտպանել մեր ժողովրդին և Հայաստանի Հանրապետության արդարացի իրավունքները»[917]:

Ըստ էության սոցիալ-դեմոկրատ Ա. Մալխասյանը ևս կանգնած էր Լոռու պաշտպանության դիրքում, չնայած գուներանգների տարբերությանը: Ա. Մալխասյանը հայտարարեց, որ իրենց խմբակցությունը «պատգամավոր Աղբալյանի և կառավարության հայտնած տեսակետի վրա է կանգնած. դա ազգերի ինքնորոշման տեսակետն է»: Ա. Մալխասյանի ելույթն ուներ նաև միամիտ երանգներ, որոնց իմաստը նրանում էր, որ իբր թե վրաց կառավարությունը հայ ժողովրդի վրա իշխելու տրամադրություն չունի, և պնդում էր, որ միշտ էլ կարելի է երկու կողմի

[915] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 15, թ. 40:
[916] Տե՛ս նույն տեղում, թ. 39:
[917] Տե՛ս «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1991, № 3, էջ 45-76:

համար էլ ընդունելի տարբերակ գտնել և խուսափել պատերազմից, գտնելով փոխադարձ համաձայնության ընդհանուր սկզբունքներ, որը հնարավոր է միայն արբիտրաժի միջոցով, ստեղծելով խառն ադմինիստրացիա: Դեմ արտահայտվելով պատերազմին, գտնելով, որ կարելի է կոնֆերանս հրավիրել, որը ձախողվեց կենտրոնի և կառավարության բռնած դիրքի շնորհիվ (ինչը չէր համապատասխանում իրականությանը, քանի որ կոնֆերանսը ձախողվեց Վրաստանի կառավարության բռնած դիրքի շնորհիվ, և այս առումով չի կարելի համաձայնվել Ա. Մալխասյանի տեսակետի հետ -Վ. Վ.), այնուամենայնիվ սոցիալ-դեմոկրատ պատգամավոր Ա. Մալխասյանը ուշագրավ միտք է արտահայտում, որն էլ մեջբերում ենք. «...եթե նույնիսկ մենք երկու դեմոկրատիաների արյան գնով տիրանանք մեր երկրին, համենայն դեպս ոչ մի երաշխիք չունենք, որ վաղը համաձայնության պետության ներկայացուցիչները մեզ համար հակառակ որոշում չեն տա… իսկ եթե խաղաղ ճանապարհով հարցը լուծենք, այն ժամանակ մի երրորդ պետության թույլ տված չէինք լինի մեր ներքին գործերին խառնվելու»: Ա. Մալխասյանը տագնապում էր շրջափակման և միայնակ մնալու վտանգից, վկայակոչելով արդեն երկաթուղային հաղորդակցության ընդհատման մասին փաստը, որը կյանքի երակ էր: Ա. Մալխասյանը, ամփոփելով իր ելույթը, ընդգծում է, որ «վիճելի գավառները պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, որ Լոռին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի մասն է կազմում», միաժամանակ ընդգծելով, որ իրենք խաղաղասերներ են և պետք է «այդ վեճը պատերազմի միջոցով լուծելը համարել անթույլատրելի, և իրենք որպես միակ ելք ընդունում ենք արբիտրաժը: Առաջարկել վրաց կառավարությանը զորքերը քաշել այդ շրջաններից՝ ցավալի դեպքերը կանխելու համար, խոստանալով, որ հայ զորքը չի մտնի այդ շրջանները, մինչև արբիտրաժի որոշումները: Կազմել մինչև այդ խառն ադմինիստրացիա: Բանակցություններ վարել պարլամենտական հատուկ հանձնաժողովների միջոցով, որոնք մեկնելու են դեպքերի վայրը, այդ բոլոր առաջարկները վրաց կառավարությանը հայտնել ի գիտություն, դաշնակից պետության ներկայացուցիչներին խնդրելով, իրենց ազդեցությունը գործ դնեն այս խնդրի խաղաղ լուծման հա-

մար»[918], պնդելով, որ Հայաստանն ունի միայն մի լուսամուտ. Դա Տփղիսն է և չպետք է այդ ճանապարհը վտանգել[919]: Շարունակելով իր ասելիքը, Ա. Մալխասյանը կառավարությանը մեղադրելով կոնֆերանսի ձախողման մեջ, և խորապես տագնապ արտահայտելով վերահաս պատերազմից, այդուհանդերձ, խորաթափանցորեն գտնում է, որ «երկու դեմոկրատիկ հանրապետություններ չեն, որ այդ խնդիրը վերջնականապես պիտի լուծեն: Եթե նույնիսկ երկու դեմոկրատիաների արյան գնով տիրանանք մեր երկրին, համենայն դեպս ոչ մի երաշխիք չունենք, որ վաղը համաձայնության պետության ներկայացուցիչները մեզ համար հակառակ որոշում չեն տա, մանավանդ որ գեներալ Թոմսոնին արդեն տրամադրում են. Ադրբեջանին այդ մասամբ հաջողվել է, մենք ծանոթ չենք նրանց տրամադրություններին. Իսկ եթե խաղաղ ճանապարհով հարցը լուծենք, այն ժամանակ մի երրորդ պետության թույլ տված չէինք լինի մեր երկրի ներքին գործերին խառնվելու: Խորհուրդը իր վրա պետք է վերցնի հարցի խաղաղ լուծումը: Նա պետք է այնպիսի միջոցների դիմի, որ արյունահեղության տեղիք տված չլինի…պետք է կողմնակի ձեռքերն հեռու լինեն դեմոկրատիաներից: Արդեն վրաց կառավարության հետ երկաթուղային հաղորդակցության կապը կտրվել է, պետք է հաստատել, որովհետև դա է մեր կյանքի երակը»: Եվ ամփոփելով իր խոսքը, նա եզրահանգում է. «վիճելի գավառները պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: Այդ վեճը պատերազմի միջոցով համարել անթույլատրելի, միակ ելք ընդունում ենք արբիտրաժը: Առաջարկել վրաց կառավարությանը զորքերը քաշել այդ շրջաններից՝ ցավալի դեպքերը կանխելու համար, խոստանալով, որ հայ զորքը չի մտնի այդ շրջանները՝ մինչև արբիտրաժի որոշումները: Կազմել մինչ այդ խառն ադմինիստրացիա: Բանակցությունները վարել պառլամենտական հատուկ հանձնաժողովների միջոցով, որոնք մեկնելու են դեպքերի վայրը: Այդ բոլոր առաջարկները վրաց կառավարության՝ հայտնել ի գիտություն դաշնակից պետությանց ներկայացուցիչներին՝ խնդրելով իրենց ազդեցությունը գործ դնեն այս խնդրի խաղաղ լուծման համար»[920]:

[918] Տե՛ս նույն տեղում, էջ 78:

[919] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 122:

[920] Տե՛ս նույն տեղում, էջ 123:

Ուշագրավ է Հայ Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Կոնստանտին Գյուլնազարյանի ելույթը, որում ասվում էր. «Թուրքը մեզ ջարդեց, ռուսը ջարդեց, վրացի՞ն էլ ջարդի…գուցե այդ այն պատճառով, որ այնտեղ՝ Վրաստանում, իշխում էր գերմանական բռունցքը: Ներկա խնդրում ևս վրաց կառավարությունն անհանդուրժելի դիրք է բռնել: Նա իր բռնած դիրքով երկու հարևան երկրների խաղաղ կենակցությունն ուզում է խանգարել՝ թշնամանք և ատելություն սերմանելով նրանց մեջ: Սոցիալ-դեմոկրատները Հովբի համբերությունն են ուզում պատվաստել մեզանում. հապա այդ խոհեմության և համբերության 1/100-երորդական մասը ինչու՞ սոցիալ-դեմոկրատների լիդեր Ծերեթելու մեջ մենք չենք տեսնում: Այն նույն մարդը, չգիտեմ ինչու՞, միշտ Հայաստանի Հանրապետության վրա խեթ աչքով է նայում: Տփղիսում ասել է մի անգամ. «Ի՞նչ Հայաստանի մասին եք մտածում: Ավելի լավ չէ՞ր լինի, որ մի մեծ Վրաստան ստեղծվեր և հայերը նրա թևի տակ ապրեին»: Դա ասում է այն Ծերեթելին, որ ինքնորոշման քարոզիչն է: Այժմ նրանց բռնած նման դիրքից հետո այլևս կիսամիջոցներն ավելորդ են: Գորդյան հանգույցը կա, հասունացել է և պետք է լուծել:…Չնայած այդ հանգամանքներին, այնուամենայնիվ մենք պետք է սկսենք բանակցել վրացիների հետ…որովհետև մենք կորցրել ենք մեր ազգի կեսը, մենք հյուծված ենք ու քայքայված:

Վերջացնելով իմ խոսքը, պետք է ասեմ, որ Հայ Ժողովրդական կուսակցությունը տրամադիր է այս հարցը միանգամայն խաղաղ ճանապարհով լուծել, բայց ոչ ծայրաստիճան զիջումներ անելով. այստեղ կա նաև պատվազգացության խնդիր, որը մենք պարտավոր ենք հարգելու»[921]:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև սոցիալիստ-հեղափոխական Վ. Մինախորյանի ելույթը, որում նա ընդգծում է հետևյալը. «Ստեղծված պայմաններում կամ պետք է զոհել ամեն ինչ վրացիների հետ պատերազմ չունենալու նպատակով, կամ անել այդ ժողովրդին փրկելու համար: Եթե ես համոզված լինեի, որ սոցիալ-դեմոկրատների առաջարկը գործնական հետևանքներ կունենա, ես մեծ ուրախությամբ

[921] Տե՛ս «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1991, № 3, էջ 77-79: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 123-124:

համաձայն կլինեի դրա հետ: Ժողովրդական կուսակցությունը ասում է, որ մենք պետք է բանակցենք վրացիների հետ, որովհետև մենք կորցրել ենք մեր ժողովրդի կեսը: Սա բացատրություն չի. մենք կորցրել ենք մեր ժողովրդի կեսը, այո՛, բայց ոչ վրացիներից, այլ անհավասար ուժի դեմ ենք կռվել: Գալով նրան, որ վրացիները իրենց զորքը հանեն Լոռուց, մեր զորքերը պետք է գնան, քանի որ առանց զորքի Լոռին չի կարելի կառավարել: Այն առաջարկը, թե վրաց զորքը հանելուց հետո այնտեղ ստեղծել մի ադմինիստրացիա վրացիներից և հայերից, դա ավելի վատթար վիճակ կստեղծի, քան հիմա է… եթե Լոռին հանձնենք վրացիներին, հայ-վրացական հարաբերությունը ավելի կփչանա: Ապագա հայ-վրացական խաղաղ հարաբերության տեսակետից, մեր խմբակցության կարծիքով, Լոռին պետք է կցել Հայաստանին: Սակայն դրանով հանդերձ, մեր ֆրակցիան առաջարկում է բոլոր խաղաղ միջոցները սպառել, եթե էլ ուրիշ միջոց չլինի, նոր միայն ընդհարման տեղիք տալ»[922]:

Յուրօրինակ ելույթ ունեցավ անկուսակցական պատգամավոր Ստ. Մամիկոնյանը, որը ռազմաքաղաքական հարաբերություններում լարվածության խորացման և սահմանավեճի խորացման կապակցությամբ ընդգծեց հետևյալը. «Եկել է վրաց սպան զորքով և թնդանոթով և հարձակվել է հայ գյուղացու վրա: Միթե՞ այս դեպքում մեր կառավարությունը ագրեսիվ է, միթե՞ մեր կառավարությունը, որը թույլ տվեց վրացիներին մտնել Ախալքալաք և Լոռի, ագրեսիվ է: Ինչու՞ համար է վրաց իշխանությունը Լոռվում օրինական, երբ այնտեղ ոչ մի վրացի չկա և երբ Լոռին Հայաստանի մի մասն է կազմում: Ուրեմն, չգիտեմ, ինչու՞ Լոռում ապրող հայը չպետք է ապստամբի Վրաստանի դեմ և պահանջի, որ ինքը միանում է Հայաստանին և վերջինիս մի մասն է կազմում: Դա շատ հասկանալի է. այդ ժողովուրդը իր բնական իրավունքներն է պաշտպանում…մեր այս բոլոր դժբախտությունների պատճառը վրացին է… վաղուց մեր երկիրը ոչ ոք չի գալիս, և բոլորը խուսափում են: Ո՞վ է մեղավոր, իհարկե Վրաստանը… երբ ասացին ինձ, թե Վրաստանը իրեն անկախ է հայտարարել, իսկույն ես մտածեցի, թե ինչպես պետք է նա վարվի Ռուսաստանի թողած ժառանգության հետ, չէ՞ որ դրանից

[922] Տե՛ս «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1991, № 3, էջ 79-80: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 124:

մեզ ևս բաժին է հասնում…վրաց մտավորականները թնդանոթները ժառանգեցին Ռուսաստանից հայ անմեղ ազգաբնակչության վրա գործադրելու համար: Վրաց բարձր խավը ամեն միջոց գործադրեց, որ մեր ժողովուրդը հյուծվի…վրացիները իրենց գործը լավ գիտեն: Ինչու՞ Ուզունլարում վրացիները հայտնվեցին, որովհետև զորքին պաշար չուներ, զորքը այնտեղ մթերք կգներ, չնայած որ գյուղը քայքայված է: Երկրորդ, որ վրացիք իրենց զորքը կենտրոնացնում են այդտեղ՝ իրենց թիկունքը ապահովեցնելու համար: Վրացիները իրենց գործը լավ գիտեն: Թող ամեն մի պարլամենտ և կառավարություն իր ժողովրդի ճարը տեսնի: Ուրիշ տեսակետ այսպիսի պայմաններում չի կարող լինել…Ասում են, որ հայ ժողովուրդը ծանր դրության մեջ է և նա չի կարող պատերազմել. հային դուք դրանով չեք զարմացնի, այո՛, հայը գիտե անարդարության դեպքում պատերազմել: Մի՛ք սպասի անգլիացոց, որովհետև նրանց համար միևնույն է թե ում կպատկանի Լոռին, վրացուն, թե՞ հային…Այժմ քեռիներ գտնելու ժամանակ չէ: Ճիշտ է ասել սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունը՝ «В борьбе обретёшь ты право своё»: Այս խնդրում չպետք է տատանվել և ճիշտ այնպես պետք է վարվել, ինչպես Սողոմոն իմաստունը, երբ նրա մոտ երկու կին եկան և բերեցին մի երեխա ու երկուսն էլ կռվում էին ու ասում, թե երեխան իմն է: Սողոմոնը ասեց, որ երեխային երկու կես կանեմ և ամեն կեսը մեկիդ կտամ: Այն ժամանակ իսկական մայրը գրկեց երեխային և ասաց. սա իմն է, ես չեմ տա: Այդպես էլ պետք է վարվի Լոռվա խնդրում Հայաստանի կառավարությունը»[923]:

Կարևոր է նաև ընդգծել, որ էական տարբերություններ չկային տարբեր խմբակցությունների բանաձևերում, որոնք մենք կշարադրենք ստորև, չնայած այն հանգամանքին, որ դրանք ձայների մեծամասնություն չստացան և անցավ Հայ Հեղափոխական Դաշնակցության առաջարկը[924]: Խորհրդարանի սոցիալ-դեմոկրատներն անում են հետևյալ առաջարկը, որն ստանում է 6 կողմ ձայն. «Հայաստանի խորհուրդը լսելով կառավարության զեկուցումը Լոռվա դեպքերի մասին, որոշեց.

1. Վիճելի գավառները պատկանում են Հայաստանի Հանրապետությանը.

[923] Տե՛ս «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1991, № 3, էջ 80-81:
[924] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 15, թ. 45:

2. Համարելով հայ-վրացական վեճի պատերազմով լուծելն անթույլատրելի, իսկ կոնֆերանսի միջոցով՝ անհնարին, ինչպես այդ ցույց տվեցին մինչև այժմ վարված բանակցությունները, միակ ելքը ընդունվում է արբիտրաժը.

3. Առաջարկում է Վրաց կառավարությանը ցավալի դեպքերի զարգացման առաջն առնելու համար հետ քաշել զորքերը Լոռվա սահմաններից, խոստանալով, որ հայոց զորքերը չեն մտնիլ այս գավառն, սպասիլով անմիջապես կազմվող արբիտրաժի վճռին.

4. Մինչև արբիտրաժի վճիռը՝ գավառում խառն հանձնաժողովի ձեռքով կազմել խառն ադմինիստրացիա.

5. Բանակցությունները վարել ոչ թե կառավարության ներկայացուցիչների, այլ պառլամենտական հատուկ հանձնաժողովների միջոցով, որոնք երկու կողմերից էլ դիմում են դեպքերի վայրը, և Վրաստանին արած այս բոլոր առաջարկություններն հայտնիլ ի գիտություն դաշնակից պետությունների ներկայացուցիչներին, խնդրելով նրանց գործադրել իրենց ազդեցությունը, այս հարցին խաղաղ լուծում տալու համար»[925]:

Հայ Ժողովրդական կուսակցության բանաձևը, որն աննշան թվով ձայներ է ստանում, արձանագրում էր հետևյալը. «Լսելով մինիստր-նախագահի հաղորդագրությունը Լոռվա դեպքերի մասին, խորհուրդը որոշում է հավանություն տալ կառավարության ձեռնարկած բոլոր միջոցներին այդ միջադեպը հարթելու համար՝ իրավունքի և արդարության հիմունքների վրա»[926]: Վերջնական տարբերակում ՀԺԿ-ն վերջին բառերը հանում է բանաձևից: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև սոցիալիստ-հեղափոխականների բանաձևը. «1) Նկատելով, որ Լոռվա շրջանը հայկական է և դեմոկրատիայի սկզբունքները պահանջում են այդ հարցի լուծումը ազգագրական տեսակետով, 2) նկատելով, որ ուրիշ որևէ լուծում մշտական կերպարանք կտա հայ-վրացական արդի հարաբերությանը՝ ազգային հարց ստեղծելով ապագայի համար երկու ժողովուրդների միջև վնասիլով նրանց համերաշխությունը, սո-

[925] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 15, թ. 46: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 126:

[926] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 15, թ. 45-46: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 126:

ցիալիստ-հեղափոխականների խմբակցությունն առաջարկում է կառավարությանը բոլոր հնարավոր միջոցներով աշխատիլ խնդիրը լուծել խաղաղ ճանապարհով, հակառակ պարագային պաշտպանիլ հայ ժողովրդի շահերը այդ շրջանում»: Բանաձևը քվեարկվում է և ստանում 5 ձայն կողմ[927]:

Վերջապես, պառլամենտի նիստում ընթերցվում է Հայ Հեղափոխական Դաշնակցության խմբակցության բանաձևը. «Լսելով կառավարության զեկուցումը Լոռվա դրության և այն միջոցների մասին, որ նա ձեռք է առիլ այդ շրջանի հայ ժողովուրդը վրաց զորքերի դեմ պաշտպանիլու համար՝ Հայաստանի խորհուրդը հավանություն է տալիս կառավարության տեսակետին և ձեռնարկած միջոցներին»[928]:

Ի մի բերելով վերն ասվածը, կարելի է գալ այն հետևության, որ էական տարակարծություններ խմբակցությունների տեսակետում, կապված հայ-վրացական կնճռի հաղթահարման և այդ առումով կառավարության ու պետության ձեռնարկած ռազմաքաղաքական գործունեության հետ՝ չկար, և դա էր էականը: Այսինքն, ակնհայտ էր, որ այդ կուսակցությունների մեծամասնությունը, չնայած ծրագրային որոշ տարակարծություններին, ազգային կարևորագույն հիմնահարցերի լուծման բնագավառում միակարծիք էին, և վեր էին կանգնած կուսակցական նեղ հարցադրումների ու նկատառումների շրջանակներից:

Այս բոլորը վերաբերում է 1918 թ. դեկտեմբերի 12-ի նիստին, իսկ դեկտեմբերի 16-ի նիստում եղավ շարունակությունը, որտեղ խմբակցությունները դարձյալ փաստեցին իրենց զորակցությունը կառավարությանը: Այս պատմական վավերաթղթերի արժեքն անվիճարկելի է: Գեներալ Թոմսոնի կողմից դեպի գործողությունների վայրն ուղարկված կապիտան Գրինի զինադադարի մասին միջնորդության, և արված առաջարկության վերաբերյալ կուսակցական խմբակցություններն անում են իրենց առաջարկները և դիտողություններն Ախալքալաքի և Բորչալուի գավառների պատկանելիության, ժողովրդի՝ հարազատ բնակության վայրերը վերադարձի, երկաթուղային հաղորդակցության

[927] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 198, ց. 1, գ. 15, թ. 46: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 126-127:

[928] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 198, ց. 1, գ. 15, 45: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 126-127:

վերականգնման և պարենավորման ու տնտեսական այլ խնդիրների վերաբերյալ:

Հ.Հ. Դաշնակցության ներկայացուցիչ Ն. Աղբալյանը ընդհանուր առմամբ ընդունելով խաղաղության առաջարկված տարբերակը, այնուամենայնիվ իր անհամաձայնությունն էր հայտնում զորքերի հետ քաշելու պահանջի հետ, գտնելով, որ անգլիական կապիտանը բնավ ծանոթ չէ այն պայմաններին և երկրին, ուր նա գտնվում է: Եվ այնուհետև նա խիստ տրամաբանական մի հարցադրում է անում այն մասին, թե ինչու՞ համար իրենք սահմանակից ժողովրդին զենքով են դուրս քշում հայկական հողերից: Ն. Աղբալյանը ի մի բերելով ասվածը, եզրահանգում էր. «…Ես սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ մեր հարևանների դերը, մանավանդ այս պատերազմի ընթացքին, երկդիմի էր և անկեղծ չէր այն պետությունը, որի քաղաքացիներն էին և դեպի այն դատը, որ վարում էին դաշնակիցները: Կամավորական խնդրի ժամանակ նրանք չխնայեցին ոչ մի ջանք, որպեսզի արգելեն հայ կամավորական շարժումը: Երբ որ հասնենք այս սահմաններին, մենք կանգ կառնենք և այնուհետև թույլ չենք տա, որ որևիցե մեկը մեր իրավունքները ոտնակոխի: Մենք առանց այն էլ բավականաչափ հող և ժողովուրդ ենք թողել նրանց: Մենք հեռու ենք օտարի հող գրավելու մտքից, բայց չենք էլ կարող օտարին թողնել մեր հողի վրա»: Հարկ է ընդգծել, որ այդ մտքից հետո Ն. Աղբալյանը արտահայտում է ևս մի տեսակետ, որը սակայն հեռու էր իրականությունից կամ ճշմարտանման չէր, և ապացուցվեց հետագա աշխարհաքաղաքական փոփոխություններով Անդրկովկասում: Խոսքը վերաբերում է այն բանին, որ Ն. Աղբալյանը ըստ էության ոչ իրական հույսեր ուներ, երբ ասում էր. եթե «այդ հողը (Լոռին) գրավեր մի հզոր ուժ (ասել է թե Դաշնակցության ուժերը (դաշնակիցները), դա թերևս կլիներ նպատակահարմար լուծում, որ դաշնակիցները, որոնց համար իրենք այդքան արյուն են թափել և տառապել, անտես չեն առնի հայերի իրավունքները (դա պատրանք էր, սակայն այն ժամանակ ո՛չ Ն. Աղբալյանը, և ո՛չ էլ ուրիշները դա չըմբռնեցին - Վ. Վ.)»: Հանրագումարելով իր միտքը, Ն. Աղբալյանը խաղաղասիրական եզրահանգում էր անում. «Մենք երբեք չենք ցանկացել կռվի դիմել, մեզ ստիպել են այդպես վարվել, և այսօր, ինչպես էլ միշտ պատրաստ ենք բանակցությունների դիմել և լիազորություն տալ մեր պատգամավորներին, որ նրանք բանակցություն վա-

րեն և վրացիների հետ: Մեր պայմանն այդ է, որ մենք մեր զորքերը հետ չենք քաշի մեր հողերից, որովհետև մենք չենք կարող թույլ տալ, որ ուրիշները ոտնահարեն մեր իրավունքները»[929]:

Խորհրդարանի դեկտեմբերի 16-ի նիստում ելույթ ունենալով Հայ Ժողովրդական կուսակցության անունից պատգամավոր Ս. Ստեփանյանը (նախկինում անկուսակցական), ընդգծեց, որ հայ «ազգաբնակչություն ունեցող տերիտորիաների վրա կատարվել են բռնություններ, որի հետևանքով հայ ազգաբնակչությունը ապստամբվել է և ցանկություն է հայտնել միանալու Հայաստանին… մեր զորքերը գնացել են օգնելու հայ ժողովրդին», այդուհանդերձ, իրենց խմբակցությունը կապիտան Գրինի առաջարկի հետ համաձայն է, բացի երկրորդ կետից, որ վերաբերում է Բորչալվի և Ախալքալաքի շրջաններից հայկական զորքերը ետ քաշելուն: Ս. Ստեփանյանը իր ելույթում ընդգծում է, որ Դաշնակից պետությունների ներկայացուցչությունն այդ խնդիրը պետք է հօգուտ Հայաստանի լուծեին, որովհետև Լոռին և Ախալքալաքը թե՛ ազգագրական, և թե՛ պատմական տեսակետից հայկական են: Նկատի ունենալով վերն ասվածը, խմբակցությունն իր առաջարկությունն է անում, որում ասվում էր հետևյալը. «Հայաստանի խորհուրդը լսելով մինիստր-նախագահի հայտարարությունը վրաց-հայկական կոնֆլիկտի մասին, և այդ առթիվ կապիտան Գրինի արած առաջարկությունը, որոշեց՝

1) սկզբունքով ընդունելի համարել այդ առաջարկությունը,
2) հավանություն տալ կառավարության գործելակերպին,
3) հանձնարարել կառավարությանը միջոցներ ձեռք առնել ապահովելու զինադադարի պայմանները և լուծելու Վրաստանի կողմից հարուցած վեճերը»[930]:

Սոցիալիստ-հեղափոխական Ա. Խոնդկարյանը ՀՀ խորհրդարանի դեկտեմբերի 16-ի նիստում ունեցած ելույթում ընդգծում է, որ «Լոռին և Ախալքալաքը Հայաստանի անբաժան մասն են», որ այն պաշտպանվել է սոցիալիստ-հեղափոխականների կոնֆերանսին, և ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում «Հայաստանի խորհուրդը պետք է աշխատի առանց արյունահեղության, խաղաղ ճանապարհով լուծել

[929] Տե՛ս «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1991, № 3, էջ 86-87:

[930] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 17, թ. 48: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 131-132:

ստեղծված անախորժությունը: Ուստի կապիտան Գրինի առաջարկը պետք է ընդունել, ընտրել մի պատգամավորություն, որին կառավարությունը դիրեկտիվներ կտա»[931]: Վերջում նա ներկայացնում է իրենց խմբակցության հետևյալ բանաձևը. «Հայաստանի խորհուրդը սկզբից կանգնած լինելով հայ-վրացական տարաձայնությունը խաղաղ կերպով լուծելու տեսակետի վրա, ընդառաջ է գնում այն առաջարկին, որ կապիտան Գրինը անում է Հայաստանի կառավարությանը ու գտնում, որ առաջադրված կետերը կարող են ծառայել իբրև հիմք, որի շուրջը բանակցելով կարելի կլինի գալ ցանկալի համաձայնության և այդ պատճառով հրահանգում է ուղարկել Սանահին իր ներկայացուցիչներին՝ բանակցելու Վրաստանի ներկայացուցիչների հետ»[932]:

Սոցիալ-դեմոկրատ Հայկ Ազատյանը, ելույթ ունենալով, գտնում է, որ եթե իրենք հետևեն Ն. Աղբալյանի ճառին, ապա ըստ իր տեսակետի ոչ մի համաձայնություն չի կարող կայանալ հայերի և վրացիների միջև, ուստի և ինքը գտնում է, որ չպետք է այնքան սպասել, որ անգլիացիները միջամտեին, քանի որ այսօր այդ երրորդ ուժի, «Անգլիայի միջամտությունը կարող է լավ լինել, բայց չէ՞ որ վաղը մենք նորից կռվելու ենք, որովհետև ամբողջովին շրջապատված ենք լինելու շովինիստներով: Ուստի պիտի կարողանանք ապացուցել Եվրոպային, որ մենք էլ կարող ենք հաշտ ապրել և ամեն միջոցով խաղաղության ձգտել… այժմ փոխանակ ընդհառաջ գնալու կապիտան Գրինի առաջարկին, մենք ծուռ ճանապարհով փորձում ենք խույս տալ նրանից: Եթե վրացիները հանում են իրենց զորքը, մենք ևս պիտի հանենք, և եթե կենտրոնը համաձայն չէ այս առաջարկին, նշանակում է նա հետին միտք ունի»[933]:

Պետք է խոստովանել, որ այս բառերում ճշմարտություն կար և ուշագրավը դա է: Եվ այդ տեսանկյունից էլ ելնելով՝ Հայկ Ազատյանը ներկայացնում է սոցիալ-դեմոկրատական խմբակցության հետևյալ առաջարկը. «Լսելով կառավարության հայտարարությունը կապիտան Գրինի արած առաջարկների մասին, Հայաստանի խորհուրդը որոշում է ընդունել առաջարկած պայմանները և հանձնարարում է կառավարութ-

[931] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 17, թ. 48-49: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 132-133:

[932] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 17, թ. 49:

[933] Տե՛ս նույն տեղում, թ. 50:

յանը ի կատար ածել դրանք, եթե այդ որոշումները կընդունվեն և Վրաց կառավարության կողմից»: Խորհրդարանում հարցի քննարկման ամբողջականությունը վերհանելու տեսանկյունից ուշագրավ է նաև անկուսակցական Ստ. Մամիկոնյանի ելույթը, որում նա ընդգծեց հետևյալը. «…այն ժամանակ, երբ հայը կռվում էր Ղարաքիլիսայում տաճիկների դեմ (ըստ երևույթին նկատի ունի հերոսական սարդարապատյան ճակատամարտաշարքը - ընդգծումը մերն է՝ Վ. Վ.), Վրաց կառավարությունը գերմանական զորքեր բերեց, որոնց աջակցությամբ գրավեց Լոռին, որովհետև Գերմանիայի հետ դաշն էր կնքել: Գերմանական ներկայացուցիչ Շուլեմբերգը [նկատի ունի Վրաստանում անկախության հռչակման պահին գտնվող Գերմանիայի պաշտոնական ներկայացուցիչ Ֆրիդրիխ Վերներ ֆոն դեր Շուլենբուրգին -Վ. Վ.] հայտնեց հայերին, թե մոռացե՛ք Լոռու մասին, ձեր սահմանը Ղարաքիլիսան է: Իսկ երբ Ահարոնյանը ասաց, թե Լոռում վրացիներ չկան, բոլորը հայեր են, Շուլեմբերգը պատասխանեց, թե այնտեղ վրաց կալվածատերեր կան»: Իր ելույթի վերջում Ստ. Մամիկոնյանը նշելով, որ ինքը չի կասկածում, որ Գրինը բարի մտադրություն ունի, սակայն համակարծիք չէ, թե հայկական զորքը պետք է թողնի գրավված վայրերը և ետ քաշվի մի որոշ սահման[934]: Ստ. Մամիկոնյանը գտնում էր, որ «ընդհարումը հայերի և վրացիների մեջ եղել է ոչ թե սահմանաբաժանման համար, այլ այն մի շարք խնդիրների և հարաբերությունների համար, որ ստեղծվել էին հայերի և վրացիների միջև»: Ստ. Մամիկոնյանը այդ խնդիրներն էր համարում տրանզիտը, այն մթերքները, պարենը, որոնք պատկանում էին հայերին և գտնվում էին Վրաստանում: Ստ. Մամիկոնյանը գտնում էր, որ «Վրաստանն ապօրինի կերպով տիրապետեց Ռուսաստանի ժառանգությանը, մասն չհանելով Հայաստանին: Ընդհարումը մեր և վրացիների մեջ եղել է ոչ թե սահմանաբաժանման համար, այլ այն մի շարք խնդիրների և հարաբերությունների համար, որ ստեղծվել էին մեր և նրանց մեջ: այդ խնդիրներն են տրանզիտը, այն մթերքները, որոնք պատկանում են մեզ և գտնվում են Վրաստանում և այլն»: Ստ. Մամիկոնյանը եզրահանգում էր, որ հենց այդ խնդիրներն էլ պիտի դնել կոնֆերանսում և որոնց համար նախապես վրաց կառավարության համա-

[934] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 17, թ. 50-51: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 133:

ձայնությունը պետք է առնել պայմանով, որ հայկական զորքերը մնան այնտեղ, որտեղ գտնվում են[935]: Սակայն ի վերջո այս տեսակետները չեն անցնում, և այն բանից հետո, երբ սոցիալ-դեմոկրատ Հ. Ազատյանը գտնում է, որ մյուս բանաձևերը չարժե քվեարկել, ձայների գերակշռող մեծամասնությամբ ընդունվում է ՀՅ Դաշնակցության ճշգրտված և բարելավված բանաձևը. «Լսելով կառավարության ձեռք առած միջոցները Ախալքալաքի և Բորչալվի շրջաններից վրաց զորքերը հեռացնելու և Բորչալվի հայ ազգաբնակչությանը վրաց զորքերի բռնություններից ազատելու մասին՝ Խորհրդարանը հավանություն է տալիս կատարված քայլերին: Միշտ կողմնակից լինելով հայ-վրացական վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու և սկզբունքով համաձայն լինելով կապիտան Գրինի առաջարկին, Հայաստանի խորհրդարանը անհնարին է համարում մեր զորքերի հեռացումը, մինչև որ չերաշխավորվի Հայաստանի անվիճելի մասը կազմող Բորչալվի հայկական բաժնի և Ախալքալաքի գավառի ապահովությունը վրաց զորքերից: Խորհրդարանը հրահանգում է կառավարությանը այս հիմքերի վրա հատուկ պատվիրակության միջոցով բանակցություններ վարել կապիտան Գրինի հետ և եթե հարկ լինի՝ նաև Վրաստանի հետ»: Բանաձևը 18 ձայնով ընդդեմ 4-ի ընդունվում է, 13-ը՝ ձեռնպահ են մնում[936]:

Ի վերջո պատերազմը մոտենում է ավարտին և ՀՀ խորհրդարանը 1918 թ. դեկտեմբրի 26-ի նիստում լսում է կառավարության նախագահ Հովհ. Քաջազնունու զեկուցումը Թիֆլիսում տեղի ունեցած դաշնակիցների կողմից հրավիրված խորհրդակցության մասի՝ մասնակցությամբ անգլիական զորքերի հրամանատար գեներալ Ջ. Միլնի, ֆրանսիական ներկայացուցիչ գնդապետ Շարդինյիի, Վրաստանի կառավարության նախագահ Ժորդանիայի և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի: Արդեն գիտենք, որ խորհրդակցությունը հակառակ Ջամալյանի կարծիքի, հայ-վրացական բախումը հարթելու համար ընդունեց ոչ հայանպաստ վճիռ, որի վերաբերյալ ՀՀ խորհրդարանն իր կարծիքն արտահայտեց: Քննելով դաշնակիցների մասնակցությամբ ընդունված որոշման կետերը, խորհրդարանը ընդու-

[935] Տե՛ս «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1991, № 3, էջ 90-91:

[936] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 17, թ. 52: Տե՛ս նաև «Ձանգ», Երևան, 20 դեկտեմբերի, 1918 թ., N 82:

նեց ՀՅԴ առաջարկած հետևյալ բանաձևը. «Հայաստանի խորհրդարանն լսելով նախագահի զեկուցումը հայ-վրացական կոնֆլիկտը լուծելու համար առաջարկված պայմանների մասին, ընդունում է երկու հարևան ժողովուրդների եղբայրասպան պատերազմին վերջ տալու առաջարկը:

Ապա գտնելով, որ ներկայացված պայմանները չեն համապատասխանում Հայաստանի իրավունքներին և արդար պահանջներին, հրահանգում է կառավարությանը բանակցության միջոցով ջանալ փոփոխել այդ պայմանները՝ համաձայն խորհրդարանի նախորդ որոշումների»[937]:

Մի շարք փաստաթղթերից ևս ակնհայտ է դառնում հայկական կողմի անհանգստությունը ընթացող իրադարձությունների հետևանքների առումով: 1918 թ. դեկտեմբերի 27-ին Երևանից ֆրանսիական բանակի ներկայացուցիչ կապիտան Պուադեբարին ուղղված (պատճենը՝ հայկական պատվիրակության ղեկավար Հարությունյանին) հեռագրում ընդգծվում էր այն մասին, որ Հայաստանի խորհրդի որոշ թվով անդամներ (Վրացյան, Բաբալյան, Ռաղմաջյան, Տեր-Թորոսյան, Տեր-Հակոբյան, Մինախորյան, Ղազարյան, Զաքարյան, Տեր-Մարտիրոսով, Հարությունյան, Թեյմարով, Տեր-Գևորգով) առանց կուսակցությունների տարբերության՝ լսելով կառավարության հաղորդումը Թիֆլիսում Դաշնակից պետությունների ներկայացուցիչների կողմից առաջարկված զինադադարի պայմանների մասին, իրենց բողոքն են արտահայտում ընդդեմ Բորչալուի և Ախալքալաքի նահանգներին վերաբերող հարցերի անարդարացի լուծման, որ բնակեցված են գերակշռող մեծամասնությամբ հայերով: Հեռագրում շեշտվում էր Թիֆլիսից առաջարկված պայմանների անընդունելիության մասին իրենց համար, որն ընդունվել է առանց տեղյակ պահելու և հայկական կառավարության կողմից նախօրոք քննարկման: Հեռագրում հույս էր հայտնվում, որ բարձրաստիճան ֆրանսիական սպայի ջանքերով այդ պայմանները կվերանայվեն և կլուծվեն իրավունքի և արդարության ոգով[938]: Սակայն ավա՜ղ, այդ հույսերն իրականանալու ոչ մի հիմք չունեին և չիրականացան, իսկ «Ֆրանսիացի սպան» այդպես էլ մատը մատին չխփեց, վերջին հաշվով այդպիսի մտադրություն և դրա իրականացման ցանկություն չդրսևորվեց և Անտանտի ոչ մի երկրի կողմից:

[937] Տե՛ս «Զանգ», Երևան, 29 դեկտեմբերի, 1918 թ., N 86:
[938] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 382:

Զինադադարի առաջարկված պայմանները դժգոհություն են առաջ բերում նաև լայն կուսակցական շրջաններում: Իր խոր վրդովմունքն է հայտնում այդ կապակցությամբ ՀՅ Դաշնակցություն կուսակցության քաղաքային և Կենտրոնական կոմիտեն (ԿԿ), 1918 թ. դեկտեմբերի 28-ին հեռագիր ուղարկելով Ղարաքիլիսա՝ Հայկական պատվիրակության նախագահ Հարությունյանի անունով: Հեռագրում ընդգծվում էր, որ արտակարգ նիստում լսելով զինադադարի պայմանների մասին հաղորդումը, ԿԿ-ն համառորեն խորհուրդ էր տալիս պատվիրակության ղեկավարին անխախտ պահել այն գիծը, որը պահանջում է Բորչալուի և Ախալքալաքի գավառների միացումը Հայաստանին, որտեղ բնակչությունը գերակշռող մեծամասնությամբ հայկական է, որն զգում է իր կապը Հայաստանի հետ և համառորեն ձգտում է նրա հետ միացման: Հեռագրում ասվում էր, որ ոչ մի դեպքում Հայկական զորքերը չեն կարող ետ քաշվել դեպի հին դիրքերը, և հույս էր հայտնում, որ դաշնակիցները կպաշտպանեն իրենց[939]:

Նույն միտքն է ընդգծվում Ս. Վրացյանի նախագահությամբ 1918 թ. դեկտեմբերի 28-ին տեղի ունեցած Երևանի քաղաքացիների ժողովում, որին ներկա է եղել 650 մարդ: Հայաստանի պատվիրակության նախագահին հասցեագրված դիմումագրում ժողովի մասնակիցների անունից պահանջվում էր պաշտպանել Բորչալուի և Ախալքալաքի գավառների հայկական բնակչության շահերը, Լոռիի խաղաղ հայկական բնակչության նկատմամբ վրացական զորամասերի արյունոտ հաշվեհարդարից, պահանջելով հայկական զորքերի մնալը Բորչալուի գավառում և գրավված բոլոր դիրքերում: Ժողովի մասնակիցները խնդրում էին ցույց տալ դաշնակիցներին, որ իրենց գործն արդար է, և իրավունքն ակնհայտորեն իրենց կողմն է, գտնելով, որ անջատված մասերը պետք է միանան մայր հայրենիքին[940]:

Ըստ էության, գրեթե ոչ մի կուսակցություն անտարբեր չգտնվեց այն ամենի նկատմամբ, ինչ կատարվում էր Հայաստանի շուրջ և հայ ժողովրդի հետ: Այսպես, 1918 թ. վերջի -1919 թ. սկզբի մի գրությամբ սոցիալ-դեմոկրատական խմբակցությունը ևս համերաշխվում էր Ախալքալաքի և Բորչալուի հայ բնակչության վիճակի վատթարացման հետ

[939] Տե՛ս նույն տեղում, թ. 389:

[940] Տե՛ս նույն տեղում, թ. 383, 384, 387, 391:

կապված բողոքի շուրջ: Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղղված դիմումագրում ասվում էր, որ Ախալքալաքի գաղթականությունը Բակուրիանում ու Ծալկայում մահացման և բնաջնջման է ենթարկվում: Դիմումագրում առաջարկվում էր՝

1) Հայտնել տաճիկ և վրաց կառավարությանը, որ Հայաստանի Հանրապետությունն այլևս չի կարող հանդիսատես լինել Ախալքալաքի բնակչության բնաջնջման հարցում,

2) Պահանջել անմիջապես և ամենակարճ ժամանակամիջոցում տաճիկ և վրաց կառավարություններից, և տվյալ դեպքում առաջինից՝ որ թույլ տան անվտանգ կերպով գաղթականությանը վերադառնալ իրենց բնակավայրերը, երկրորդից՝ որ խոչընդոտներ չդնի այդ վերադարձի առաջ և հնարավորություն տա այդ գաղթականությանը պատսպարվել և ժամանակավորապես տեղավորվել Վրաստանի և Բորչալվի գյուղերում, վերջ տալով կենտրոնացման սպանիչ քաղաքականությանը,

3) Պահանջել վրաց կառավարությունից թույլ տալ անարգել կերպով գաղթականներին ընդհանրապես տեղավորվելու Թիֆլիսի գավառի և Բորչալուի հայ գյուղերում,

4) Ընդունել, որ թե՛ տաճիկ և թե՛ վրաց կառավարությունների քաղաքականությունը գաղթականության հետ հայ ժողովրդի վերաբերմամբ նպատակ ունի գաղթականների բնաջնջումով ամայացնել հայաբնակ վայրերը և համարել այդ թշնամական գործողություն հանդեպ հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության,

5) Պահանջել կառավարությանը յոթն օրվա ընթացքում կարգադրել ներկա խնդիրը բանակցությունների միջոցով, հակառակ պարագային դիմել համապատասխան կտրուկ միջոցների՝ փրկելու գաղթական հայ ժողովուրդը վերջնական բնաջնջումից[941]:

Ակնհայտ է, որ կեղծ է այն մոտեցումը, երբ կուսակցությունները արհեստականորեն բաժանվում են ազգայինի և ոչ ազգայինի, հիմք ընդունելով ոչ իրական և արհեստածին չափանիշներ: Արխիվային և այլ փաստաթղթերը անվիճելիորեն վկայում են, որ թե՛ ընդդիմադիր, և թե՛ մնացյալ կուսակցական խմբավորումներն ու կազմակերպությունները,

[941] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 404, ց. 1, գ. 19, թ. 4:

ներքուստ ունենալով զանազան տեսակետներ, այնուամենայնիվ, ազգային-տարածքային հարցերի լուծման խնդրում միասնական են եղել: Այլ բան է, որ գործնականում ներկայացվող առաջարկները իրագործելի լինեին, բխեին գոյություն ունեցող իրավիճակի իրատեսական հաշվառումից: Նման հարցերը պարզաբանելիս պետք է նկատի ունենալ այն իրական աշխարհաքաղաքական իրավիճակը, որում գտնվում էին թե՛ կուսակցությունները, և թե՛ Հայաստանը ընդհանուր առմամբ, ինչպես նաև այն հնարավորությունները, որ կյանքում կարող էին գործադրել կուսակցություններից և խմբավորումներից յուրաքանչյուրը: Թե՛ պատերազմի ընթացքին, և թե՛ մյուս մանրամասներին մենք չենք անդրադառնում, որովհետև դա հատուկ քննարկման նյութ է, և որին արդեն որոշակիորեն անդրադարձել ենք: Ընդամենը նպատակահարմար ենք գտնում նշել, որ հայ-վրացական պատերազմը, որին վրացական կողմից մասնակցել է 12 հազարանոց զորք[942], իսկ հայկական կողմից՝ կանոնավոր բանակի 6000 զինվոր և 2000 աշխարհազորային, և ընդ որում կողմերը կորցրել են զգալի թվով մարդիկ, 1919 թ. սկզբին ավարտվում է խորհրդաժողովով, որը որոշում է հետպատերազմյան իրադրության խնդիրները: Այդ փաստն արձանագրվեց նաև Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 25-ի նիստում, որտեղ լսվեց կառավարության զեկուցումը, ընդունվեց համապատասխան որոշում: Տեղեկացվեց հայ-վրացական կոնֆերանսի կողմից ընդունված և կառավարության լիազորներկայացուցիչների կողմից զինադադարի պայմանների՝ Բորչալվի սահմանների, գերիների փոխանակման կարգի, երկաթուղային հաղորդակցության կազմակերպման և «Չեզոք գոտու» ղեկավարման մասին: Հաստատագրվում է երկու երկրների միջև ժամանակավոր դիվանագիտական գործողությունների վերսկսման կարգը և հատուկ հարցերի գծով հարաբերությունների բնույթը: Այս հարցի կապակցությամբ բանավեճ չի ծավալվում, պարզապես կուսակցական խմբավորումներն արձանագրում են իրողությունը և հավանություն տալիս կառավարության ռազմաքաղաքական գործունեությանը[943]:

---

[942] Տե՛ս «Կայծ», Երևան, 22 հունվարի, 1919 թ., թիվ 22; Տե՛ս նաև Կարապետյան Մ. Լ., Հայաստանի Հանրապետության բանակը (1918 - 1920), էջ 88:

[943] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 198, ց. 1, գ. 15, թ. 83-88:

Հարցերի քննարկումը ավարտուն դարձնելու նպատակով, վերջապես, անհետաքրքիր չէ նշել միջազգային կազմակերպությունների վերաբերմունքը հայ-վրացական պատերազմի նկատմամբ: Այդ մասին արժանահիշատակ վկայակոչումներ ունի Ա. Ջամալյանը: Քանզի հայկական կողմը դժգոհ է մնում Հաշտության վեհաժողովի կողմից վրաց-հայկական պատերազմի արդյունքների ամփոփումից, վիճահարույց հարցերի հանգուցալուծումը տեղափոխվում է միջազգային ատյաններ՝ Բեռն և Երկրորդ Ինտերնացիոնալ, Փարիզի Խաղաղության վեհաժողով: Հայ-վրացական պատերազմի հաջորդ շաբաթներին՝ 1919 թվականի փետրվարին, Բեռնում տեղի է ունենում Երկրորդ ինտերնացիոնալի խորհրդաժողովը: Գագաթաժողովին մասնակցած ՀՅ Դաշնակցության և վրաց սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչները (Ա. Չխենկելի և ուրիշներ) համաձայնության են գալիս հայ-վրացական տարածքավեճը դնելու խորհրդաժողովի քննությանը: Խորհրդաժողովը վճռում է, որ այդ սահմանավեճը պետք է լուծվի համաձայն ազգերի ինքնորոշման իրավունքի ճշգրիտ գործադրության և հանրաքվեի կիրառմամբ: Վիճաբանող կողմերն իրենց պատրաստակամությունն են հայտնում ենթարկվելու այս պայմանին, չնայած այս հանգամանքը ակնհայտորեն չէր բավարարում հայկական կողմին, ինչի մասին բազմանշանակ նկատում է Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանը. «Սա, անկասկած խոշոր զիջում էր հայերի կողմից. որովհետեւ այն ամենից յետոյ, ինչ անցել-դարձել էր երկու կուսակցութիւնների միջեւ Հայկ. Բորչալուի եւ Ախալքալաքի շուրջը, այն բոլոր հանդիսաւոր յայտարարութիւններից յետոյ, որ արել էին վրաց սոցիալ-դեմոկրատները անցեալում՝ այս գաւառները Հայաստանի սեփականութիւն ճանաչելով՝ մենք իրաւունք ունէինք պահանջելու, որ ոչ թէ նոր հանրաքուէարկութիւն կատարուի նրանց մէջ, այլ գոյութիւն ունեցող վիճակագրութիւնների եւ վրաց Սոցիալ-Դեմոկրատիայի նախկին յայտարարութիւնների հիման վրայ, այդ գաւառները պարզապէս կցուեն Հայաստանին»: Ավելին, հայ պատվիրակները համակերպվելով կատարվածի հետ, մտահոգություն են արտահայտում այն մասին, որպեսզի «որոշ-

ուած հանրաքուէարկութիւնը կատարուի կանոնաւոր ձեւերով, առանց կողմնակի ճնշումների եւ մեքենայութիւնների»[944]:

Հայ-վրացական բախմանը վերաբերող հիմնահարցերը հերթական քննարկման նյութ դարձան 1919 թ. ապրիլի 26-29-ին Ամստերդամում հրավիրված Երկրորդ Ինտերնացիոնալի մշտական հանձնաժողովում, որի կապակցությամբ կոչ արվեց անկասելիորեն հենվել ազգերի ինքնորոշման իրավունքի վրա՝ համաժողովրդական հանրաքվեի միջոցով լուծել վիճարկելի սահմանային-տարածքային հարցերը, որի կապակցությամբ մենշևիկ պատվիրակ Ծերեթելին հայտարարեց, որ Հայաստանի և Վրաստանի միջև տարաձայնությունները վերացել են, ինչը սակայն ամենևին էլ չէր համապատասխանում իրականությանը: Դրա հետ մեկտեղ արձանագրվեց, որ հայ և վրաց պատվիրակները համաձայնվել են, որ երկու երկրների միջև առկա սահմանատարածքային հարցերը կարգավորվեն Բեռնի համագումարի կողմից ընդունված բանաձևի սկզբունքների համաձայն[945]: Դաշնակցականները Ամստերդամի խորհրդաժողովին չմասնակցեցին, սակայն Ծերեթելու ամբարտավան հայտարարության հետ կապված, բուռն բողոքեցին հայ-վրացական բախման հետ կապված նրա բռնած դիրքորոշման կապակցությամբ: Այդ առիթով Միքայել Վարանդյանը հանդես եկավ շատ խիստ դատապարտիչ խոսքով վրացիների նկատմամբ, որոնք ձգտում էին պահպանել իրենց ոչ իրավական ներկայությունը Ախալքալաքի և Բորչալուի մեծ մասի հայկական բնակավայրերի նկատմամբ: Սահմանավեճի շուրջ հայ-վրացական կուսակցական-քաղաքական առաջնորդների վիճաբանությունները շարունակվեցին մայիսի 10-ին հրավիրված Երկրորդ Ինտերնացիոնալի ղեկավարների ժողովներից մեկում: Վարանդյանը դատափետեց վրաց մենշևիկներ Իրակլի Ծերեթելուն, Ակակի Չխենկելուն և Նիկոլայ Չխեիձեին խաբեբայության ու հայերին դավաճանելու մեջ, որին հակադարձելով, Ծերեթելին կեղծ, անհիմն և երկերեսանի փաստարկներ բերեց, թե իրենք այդպես վարվեցին իրադրության փոփոխման պատճառով: Որպես սահմանազծման առավել նպատակահարմար տարբերակ առաջարկելով հայ-վրացական սահմանա-

[944] Տե՛ս Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք» (հասարակական-քաղաքական ամսագիր), Բոստոն, 1928, թիվ 6, էջ 98:

[945] Տե՛ս նույն տեղում:

գծման ժամանակ ավելի շատ հիմք ընդունել չեզոք իրավարարությունը, քան հանրաքվեի անցկացումը, տագնապելով տանուլ տալ հայ-վրացական տարածքային վեճում, վրաց մենշևիկները շրջանցելով իրողությունները՝ միաժամանակ հայկական կողմին՝ ՀՅԴ կուսակցության ներկայացուցիչներին առաջարկեցին հանրաքվե անցկացնել Թուրքահայաստանում: Առաջարկվում էր Կարսի մարզում և Հայաստանին դեռ հնարավոր միացվելիք Արևմտյան Հայաստանի գավառներում բնակեցնել ախալքալաքցիներին, դրանով իսկ վճռելով Ախալքալաք-Ջավախքի հիմնահարցը, որով էլ իբր հնարավոր կլիներ վերջնականապես պարպել հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում առկա պայթունավտանգ լիցքը: Դա, իհարկե լավ կազմակերպված մանևր էր վրացիների կողմից, հայերին շեղելով Արևմտյան Հայաստանի կողմը, որը նրանց իրավարարության մեջ չէր կարող մտնել: Վրացական կողմը փորձելով էլ ավելի գրգռել հայ քաղաքական գործիչների փառասիրական ձգտումները, կոչ արեցին և տրամադրեցին հայերին իրենց ուշադրությունը բևեռել Արևմտահայաստանի վրա, եթե հայկական կողմը այդչափ վստահ է իր ուժերի և հնարավորությունների վրա: Այդ հանգամանքի հետ կապված, վրաց պատվիրակների նման դիրքորոշումը դատապարտող վերաբերմունքի արժանացավ ոչ միայն Երկրորդ Ինտերնացիոնալում ներկայացված հայ պատգամախոսների կողմից, այնպես էլ բրիտանական լեյբորիստ Արթուր Հենդերսոնի կողմից, որը հիշեցրեց վրացիներին, որ հարցը տվյալ պահին վերաբերում է անդրկովկասյան տարածքային մի սահմանագծի անցկացմանը, այլ ոչ թե Թուրքահայաստանին: Վերահաստատվեց Բեռնի վճիռը խնդրո առարկա հարցի վերաբերյալ[946]: Վեճը շարունակվեց, և վրաց մենշևիկ Ծերեթելին էլ ավելի վստահաբար, հարցի հանգուցալուծումը հօգուտ Վրաստանի պատճառաբանեց ևս մեկ փաստարկով, թե իբր Լոռվա և Ախալքալաքի շրջաններն արդեն հասցրել են տնտեսապես կապվել Վրաստանի հետ: Դա խորապես վրդովվեցրեց հայ պատվիրակներին, որոնք ստեղծված իրադրությունից ելնելով՝ պահանջեցին դուրս բերել վրացական զորամասերը և պաշտոնյաներին այդ շրջաններից, դա համարելով երաշխիք հանրաքվեի օրինական անցկացման համար:

[946] Տե՛ս Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը, 1928, ապրիլ, N 6, 1928, էջ 97-99:

Սակայն դա արմատական փոփոխություններ չմտցրեց ազգամիջյան փոխհարաբերություններում: Վրացիները շարունակեցին նախկին քաղաքականությունը հողային-տարածքային խնդրում, և ակնհայտ դարձավ, որ նրանք ամեն անգամ փորձում էին ժամանակ շահել, խաղարկելով Եվրոպայի սոցիալիստական կուսակցությունների մեջ առկա տատանումները, առավել ևս, որ բրիտանացիների թեթև ձեռքով Վրաստանի կառավարությունը թեկուզև առժամանակ, ձեռք էր բերել Լոռու և Ախալքալաք-Ջավախքի վրա իշխելու արտոնագիր: Այդ մասին քննարկումները միակողմանիորեն, առանց հայերի մասնակցության շարունակվեցին Ամստերդամում, ինչի մասին Ա. Ջամալյանը գրում է. «Ամստերդամում տեղի ունեցած ընկերավարական միջազգային խորհրդաժողովին վրաց Սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչները, օգտուելով Դաշնակցութեան ներկայացուցիչների բացակայութիւնից, յայտարարել են, թէ հողային խնդիրների վերաբերմամբ, այլեւս որ եւ է վէճ չըկայ հայերի եւ վրացիների միջեւ: Ընկ. Վարանդեանը հաղորդում է Բ [Երկրորդ -Վ. Վ.] Ինտերնացիոնալի Գործադիր մարմնին, որ վերոյիշեալ յայտարարութիւնը չէ համապատասխանում իրականութեան եւ դրա հետ միասին խնդրում է, որ Գործադիր մարմինը միջոցներ ձեռք առնի Բեռնի Խորհրդաժողովի որոշումը իրականացնելու համար»[947]: Խորհրդաժողովները մնացին թղթային մակարդակում: Այդ հարցով 1919 թ. մայիսին Փարիզում զբաղվում է Երկրորդ Ինտերնացիոնալի Գործադիր մարմինը, ստեղծվում է համապատասխան հանձնաժողով, որի կազմում էին Կ. Հյուսիմանսը, Պիեռ Ռենոդելը, Ժակ Լոնգեն, Ռամսեյ Մակդոնալդը և ուրիշներ, նպատակ ունենալով վճռել մենշևիկ-դաշնակցական վեճը[948]: Հենց այստեղ պարզ դարձավ, որ Վրաստանի սոցիալ-դեմոկրատներն առաջարկում են տարածքավեճը լուծել ոչ թե հանրաքվեով, ինչպես իրենց իսկ համաձայնությամբ որոշել էր Բեռնի խորհրդաժողովը, այլ միջնորդ դատարանի միջոցով: Իր տարածքային հարցերի հանձնաժողովի միջոցով Բեռնի խորհրդաժողովը լսեց հայ-վրացական վեճի երկու կողմերին և որոշեց, որ սահմանները հաստատելիս միայն ազգային սկզբունքով պետք է առաջնորդվել և այն որպես

[947] Տե՛ս նույն տեղում:

[948] Տե՛ս Борьян Б. А., Армения, международная дипломатия и СССР, часть II, стр. 65-66, 76, 242, 406:

հիմք ընդունել: Իր լիագումար նիստում Բեռնի խորհրդաժողովը որպես հիմք ընդունեց տարածքային հանձնաժողովի բանաձևի նախագիծը ազգային ինքնորոշման իրավունքի անվերապահ կիրառման մասին, իսկ անհամաձայնության պարագայում դիմել հանրաքվեի՝ համաժողովրդական հարցման, գործնականում մերժելով սահմանազատման լուծման ռազմական եղանակը: Դա որոշ չափով մեղմեց լարվածության որոշ եզրեր, և դրա հիմքի վրա Չխենկելին և Հ. Օհանջանյանը[949] հրապարակեցին համատեղ հաշտվողական հայտարարագիր, ըստ որի ընդգծվում էր, որ «Վրաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության և Հայաստանի Հայ Հեղափոխական Դաշնակցության պատվիրակությունները համաձայն են տարածքային հարցերը լուծել Սոցիալիստական Ինտերնացիոնալի Բեռնի համագումարի բանաձևում:

Սակայն դարձյալ ապարդյուն: Երկու ամիս անց Լյուցեռնի խորհրդաժողովը նորից քննարկում է այդ չարաբաստիկ հարցը: Այստեղ էլ որոշվում է, որ ինչպես բոլոր հողային վեճերը, այնպես էլ հայ-վրացական սահմանավեճը պետք է լուծվեն ժողովրդական հանրաքվեով՝ կազմակերպված Ազգերի Դաշնակցության կողմից և նրա անմիջական հսկողությամբ: Ի վերջո այդ ամենը ավարտվում է վերոհիշյալ հայ-վրացական խորհրդաժողովով 1919 թվականի օգոստոսի 29-30-ին Թիֆլիսում, և կնքված համաձայնությամբ, որով վիճելի հարցերի վերջնական հանգուցալուծումը հետաձգվում է մինչև Թուրքահայաստանի հարցի լուծումը Ազգերի Դաշնակցության կողմից: Դաշնակցական պատվիրակության համոզմամբ, անկողմնապահորեն անցկացված հանրաքվեի կամ համաժողովրդական հարցման դեպքում արդյունքը կարող է լինել այն, որ և՛ Լոռին, և՛ Ախալքալաքը կմիանան Հայաստանին: Իսկ այդ նույն ժամանակ Վրաստանում հայ պատվիրակներ Ստեփան Մամիկոնյանը և Սմբատ Խաչատրյանը ինչքան էլ ջանքեր գործադրեցին, ի վերջո չկարողացան համաձայնության գալ վրացական կառավարության հետ հանրաքվե կամ համաժողովրդական հանրաքվե անցկացնելու նպատակահարմարության հետ: Այդ ուղին էլ էր փակուղային: Բեռնի խորհրդաժողովը մերժել էր տնտեսական կամ ռազմավարական պահանջների օրինականությունը, մինչդեռ վրացական կողմի

[949] Օհանջանյան Համո Հովհաննեսի [Համո Միերյան, 1873-1947 թթ.] – ՀՀ երրորդ վարչապետ [ՀՀ վարչապետ - 5 մայիսի, 1920 թ. -23 նոյեմբերի, 1920 թ.]:

համար հենց այս գործոններն էին առաջնային և դրանից ելնելով էին իրենք իրենց իրավացի համարում[950]: Այնուհետև հայ-վրացական հարաբերությունների սահմանավեճային խնդիրները իրենց արտացոլումը գտան Երկրորդ Ինտերնացիոնալի մշտական հանձնաժողովի Լյուցեռնի օգոստոսյան հանդիպման ժամանակ, չնայած ընդհանուր առմամբ այն բացահայտեց քննարկվող հարցերի նկատմամբ իներտ, ոչ շահագրգիռ մոտեցման պատճառները, վրացական պատվիրակների եսակենտրոն դիրքորոշման արմատները և էությունը: Եվրոպական պետություններից աջակցություն չստանալով, Հայաստանը փորձեց Սոցինտերնի միջոցով առաջ տանել գործերը: Այդ ընթացքում Երկրորդ ինտերնացիոնալի Գործադիր մարմինը մերժեց միջնորդական առաքելության վերաբերյալ վրաց պատվիրակների առաջարկը և կրկնելով Բեռնի խորհրդաժողովի վճիռները, հաստատագրեց հանրաքվե անցկացնելու սկզբունքը, որոշելով այդ նպատակով Սոցինտերնի պատվիրակություն ուղարկել Լոռի և Ախալքալաք, որի ժամանակ ՀՅԴ ներկայացուցիչները առաջարկեցին, որ հանրաքվեի ժամանակ բռնաճնշումներից խուսափելու համար և տեղական բնակչության ազատ արտահայտվելու հնարավորությունը ապահովելու համար Լոռուց և Ախալքալաքից դուրս բերել վրացական զորամասերը, սակայն վրացական կողմի ընդդիմության հետևանքով այդ առումով դրական որոշում չընդունվեց:

Հարկ է այստեղ նաև հատուկ արձանագրել այն փաստը, որ հայ քաղաքական-կուսակցական ուժերը զորավիգ լինելով ՀՀ կառավարությանը հայ-վրացական տարածքային բախումնալից սահմանավեճում, այդուհանդերձ շատ դեպքերում հակումներ չէին դրսևորում անպայմանորեն ռազմական բախման ճանապարհով լուծել հարցերը, և կողմնակից էի գրեթե բացառապես խաղաղ ճանապարհով լուծել հարցերը՝ ձգտելով բարիդրացիական հարաբերությունները պահպանել և վերականգնել հաստատուն դիվանագիտական և առևտրա-տնտեսական հարաբերությունները, որոնք կենսական էին շրջափակումից դուրս գալ փորձող Հայաստանին: Դա դիպուկ է նկատել Ա. Ջամալյանը. «Մեր պարտության դեպքում վրացիք ոչինչ չպետք է շահին, անգամ եթե նրանք իրենց սահմանների մեջ առնեն Լոռին և Փամբակը, որ երբեք

[950] Տե՛ս «Борьба», Тифлис, 4 июня, 1919 г.:

մարսել չեն կարող: Բայց թուլացնելով մեզ՝ իրենք ևս կթուլանան Մերձավոր Արևելքի և կովկասյան ժողովուրդների դրացիության մեջ: Վրացիների պարտության դեպքում մենք, եթե նույնիսկ Ախալքալաքի փոխարեն երկուսի տիրանանք, դարձյալ չենք կարող հավասարակշռել այն վնասը, որ պետք է ստանանք վերոհիշյալ ժողովուրդների դրացիության մեջ մեզ մենակ զգալով: Բացի սրանից՝ երկու դեպքում էլ հայերի և վրացիների միջև ատելության և թշնամության մի շրջան պետք է բացվի՝ փոխադարձաբար ջլատելով նրանց ուժերը և կորստյան անդունդը գլորելով երկուսին էլ»[951]:

Փոխզիջման տարբերակը ևս անարդյունավետ դուրս եկավ: Դա ակնհայտ երևում է Ալ. Խատիսյանին հասցեագրված Ավ. Ահարոնյանի 1920 թ. ապրիլի 12-ի նամակից. «Ձեր փետրվարի 6-ի նամակից տեսնում եմ, դուք տրամադիր եք զիջել Ախալքալաքը, բայց չհասկացա, ո՞ր զիջողության դիմաց: Վրացիք պահանջում են Արդահան և Օլթի, և առհասարակ Ճորոխի շրջանը, որը կարող է մեզ ծով դուրս գալու տեսակետից շատ դժվար կացության մեջ դնել, ահա թե ինչու, եթե դուք տրամադիր եք զիջել Ախալքալաքը, ապա դա պետք է անել այն պայմանով, որ վրացիք ընդունեն մեր հայեցակետը ոչ միայն Լոռու շրջանի վերաբերյալ, այլև Արդահանի, Օլթիի և առհասարակ Ճորոխի շրջանի վրա: Ինչ վերաբերում է Լոռիին, մենք գտնում ենք, որ չի կարելի նրանց զիջել հանքային շրջանը և առհասարակ նրանց պետք չէ շատ ներս թողնել մեր լեռնավայրը»[952]: Սակայն կարճ ժամանակ անց, Ավ. Ահարոնյանը ավելի զիջողամիտ է դառնում, և արդեն 1920 թ. ապրիլի 27-ին, ելնելով Վրաստանի հետ կենսական շահերի ապահովման աշխարհաքաղաքական պարտադրանքից, գրեթե հանգում է այն տեսակետին, ինչ Ալ. Խատիսյանը, ինչպես նաև ՀՀ կառավարությունը. «Սակայն ես կարծում եմ, հնարավոր է, այնուամենայնիվ, նրանց հետ մի կոմպրոմիսի հանգել, օրինակ, նրանց ձգելով Ախալքալաքն ու Լոռու-Բորչալուի շրջանից մեր մասը, բայց միայն առանց հանքերի»[953]: Հայ-վրացական սահմանավեճի

[951] Ջամալեան Ա., Իմ պատասխանը, «Յառաջ», 11 հուլիսի, 1928, N 96, էջ 2:

[952] Մախմուրյան Գ., ՀՀ արտաքին քաղաքականության հարցերի արծարծումը Ավետիս Ահարոնյանի Փարիզից ու Սան-Ռեմոյից ուղարկված նամակներում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2010, N 1(115), էջ 61:

[953] Տե՛ս նույն տեղում, էջ 66:

շուրջ ծավալված բանակցությունները և վիճաբանությունները, կուսակցական-քաղաքական-քաղաքական մակարդակով հանդիպումները թե՛ Փարզոում, թե՛ Երևանում, և թե՛ Թիֆլիսում գործնականում ձախողվում են և փակուղի մտնում:

Հայաստանի խորհրդայնացումը փոքր ինչ ժամանակ տվեց մենշևիկյան Վրաստանին մանևրելու, չնայած դա վերջին հաշվով դատապարտված և անհաջողության մատնված հուսահատ մանևրում էր, և ոչ մի առումով չէր տեղավորվում աշխարհաքաղաքական նոր ռեալությունների մեջ: Թուրք-հայկական պատերազմի օրերին (1920 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր), ասենք դրանից առաջ էլ վրացիները գործնականում փորձեցին իրենց հսկողության տակ վերցնել ռազմաքաղաքական մեծ նշանակություն ունեցող Կարսի և Արդահանի մարզերի զգալի մասը, օգտվելով Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական թուլությունից և թուրքական զորքերից կրած պարտություններից (թեկուզ էլ պատմականորեն ժամանակավոր բնույթ կրող): Իսկ արդեն չարաբաստիկ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի ամոթալի և քայքայիչ պայմանագրից և Երևանի համաձայնագրից հետո, որոնք վավերացրին Հայաստանի Առաջին Հանրապետության անկումը և ոչ կամովին հրաժարումը իր հիմնական տարածքներից և Սևրյան երազանքներից, հայ-վրացական հողային-տարածքային սահմանավեճը թևակոխեց իր վճռական փուլը՝ ուղեկցվելով ռազմաքաղաքական մեծ լարվածությամբ և դիվանագիտական-քաղաքական անզիջում առճակատման տեսարաններով: Հայկական Բորչալուի հարավային մասը, որ կոչվում է Լոռի և որտեղ 1918 թվականի դեկտեմբերին բռնկվեց հայ գյուղացիության հուժկու ապստամբությունը վրացական իշխանությունների դեմ, 1920-1921թթ. սահմանագծում իր հյուսիսային սահմանագծի մի փոքր շտկումով Խորհրդային Հայաստանի կոմունիստական իշխանությունը միացրեց Խորհրդային Հայաստանին, փոխարենը ամենևին էլ ոչ կամովին, Կրեմլյան քաղաքագետների քողածածկված ջանքերով բոլշևիկյան զգեստավորման անցած Վրաստանին «զիջեց» Հայկական Բորչալուի հյուսիսային մասը՝ Լոռիից մինչև Խրամ գետ՝ 3000 քառակուսի կիլոմետրից ավելի տարածություն, և ամբողջ Ախալքալաքի (Ջավախք) գավառը: Դա էլ հենց դարձավ քաղաքական քարտեզի նոր բովանդակության էությունը և բովանդակային մասը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1919 Թ. ՀՈՒՆՎԱՐՅԱՆ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1919 Թ. -1920 Թ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

1. 1919 թ. հունվարյան հաշտության համաձայնագիրը: ժամանակավոր սահմանազատումը

1918 թ. դեկտեմբերի 31-ին վրաց-հայկական երկշաբաթյա պատերազմն ավարտվեց, որի պատճառները սերտորեն շաղկապվեցին սահմանային-տարածքային վեճերի, ռազմաքաղաքական հարաբերությունների կարգավորման հնարավոր ուղիների որոշակիացման ու վրաց-հայկական հնարավոր դաշինքի կնքման և առհասարակ 1918 թ. հայ-վրացական դեկտեմբերյան երկշաբաթյա ռազմական բախման հետևանքների վերացման հետ: Միաժամանակ երկուստեք փորձեր արվեցին կուտակված բարդույթների, ռազմաքաղաքական ու դիվանագիտական հարաբերություններում առկա լարվածության հաղթահարման, չլուծված հիմնախնդիրների վճռման ուղիների ընտրության խնդրում բոլոր ռազմաքաղաքական և դիվանագիտական լծակների ու հնարավորությունների օգտագործման ուղղությամբ, արդյունքում՝ գտնվեցին մի շարք միջանկյալ լուծումներ, սակայն որոնց անխուսափելի ուղեկիցները եղան նաև իմիտացիոն բնույթի քաղաքական խաղարկումները:

Հայաստանի և Վրաստանի դեմոկրատական հանրապետությունների միջև աղետաբեր պատերազմից հետո էլ շարունակում էին վիճարկելի տարածքներ համարվել Ախալքալաքի գավառը (պատմական Գուգարք աշխարհի Ջավախք գավառ), դրան հարող Ծալկայի շրջանով (պատմական Գուգարք աշխարհի Թռեղք գավառ), Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Խրամ գետից հարավ ընկած մասը (պատմական Գուգարք աշխարհի Տաշիր գավառի հարավային մասը): Վերջինս XX

դարի սկզբի վիճակում համապատասխանում էր Բորչալուի գավառի Եկատերինֆելդի ու Լոռու ոստիկանական տեղամասերին և Թրիալեթի ոստիկանական տեղամասի Խրամ գետից հարավ ընկած հատվածին: Երկու կողմերի միջև վիճելի էր համարվում նաև Ղազախի գավառի հարավարևմտյան հայկական մասը: Նշված տարածքում գոյություն ուներ ազգային հետևյալ համամասնությունը՝ 260 հազար հայեր, 7 հազար վրացիներ և այլ փոքրաքանակ ազգեր:

Վրաց-հայկական ռազմաքաղաքական բախումը գործնականում այլընտրանք չունեցավ, և ըստ աշխարհաքաղաքական զարգացումների տրամաբանական ընթացքի, տարաձայնությունները հաղթահարելու համար բախված կողմերը զբաղվեցին իրենց հարցերի կարգավորմամբ՝ սկզբում ռազմական, իսկ այնուհետև դիվանագիտական-քաղաքական բեմահարթակում: Հայկական կողմի համար ըստ էության կարևոր էին ոչ միայն ժամանակավոր համաձայնագրի պայմանները և Լոռու Չեզոք գոտու ստեղծումը, այլև ոչ պաշտոնական բանակցությունները Հայաստան-Վրաստան դիվանագիտական-քաղաքական հարաբերությունների կարգավորման, այդ թվում ռազմական բախման հետևանքով առաջացած կնճիռը հաղթահարելու ուղղությամբ: 1919 թ. հունվարի 1-ին անգլիական զորքերը զբաղեցրին Լոռու և Բորչալու գավառների տարածքի մի մասը՝ Այրում կայարանից մինչև Շահալի կայարանը և այդ տարածքը համարեցին «Չեզոք» գոտի, որից դուրս են բերվում նաև վրացական զորամասերը[954]: Այսպիսով, Չեզոք գոտու տարածքը ընդգրկում էր Վիրահայոց լեռներից մինչև Ձորագետ ընկած հատվածը: Հետագայում Չեզոք գոտու հյուսիսային սահմանը դարձավ հայ-վրացական միջպետական սահման: Անգլիական, ֆրանսիական, վրացական և հայկական ներկայացուցչությամբ կազմված խառը հանձնաժողովը պետք է անհապաղ մեկներ ռազմաճակատ, որպեսզի կենսագործեր զինադադարի պարտադրված պայմանները: Անշուշտ, հարցի լիարժեք լուսաբանման տեսանկյունից հետաքրքիր է նշել, որ հարցի նման հանգուցալուծումից վրացիները շատ դժգոհ մնացին: Այսպես, 1919 թ. հունվարի 3-ին պառլամենտի նիստում պատգամավոր Ս. Կեդիան այդ կապակցությամբ նշել է. «Հաշտության պայմանները շատ սարսափելի են մեր

[954] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18R.html // Мазниашвили Г., Воспоминания. 1917-1925, Париж, 1985, Тб., 1927, стр. 132:

համար: Կառավարությունը բարոյական իրավունք չուներ առանց պառլամենտում նախապես քննարկման այդպիսի պայմաններում համաձայնագիր ստորագրելու: Կառավարությունը չի պաշտպանել մեր ազգի արժանապատվությունը և տվեց մեզ ոչ թե հաղթողի հաշտություն, այլ հաղթվողի»[955]: Վրացական պառլամենտի տարբեր խմբակցություններ իրենց կարծիքն արտահայտեցին և հաճախ կուլ գնացին ծայրահեղական մոտեցումներին, հայ-վրացական հարաբերությունների բովանդակությունը լցնելով անհաշտելի թշնամանքի և անզիջողականության ոգով: Աղավաղելով պատմաքաղաքական իրադարձությունների բուն բովանդակային իմաստը և անհերքելի ճշմարտությունները պատերազմական փաստերի մասին, իր դժգոհությունն արտահայտեց նաև գեներալ Գ. Ի. Կվինիտաձեն. «Այդ օտարերկրացիները չէ, որ միջամտեցին և կանգնեցրին մեզ վրա հարձակված հայերին, սակայն երբ մենք ոչ միայն ետ մղեցինք հայերին, և սկսեցինք նրանց հետապնդել, նրանք միջամտեցին և կանգնեցրին ռազմական գործողությունները: Իհարկե, հարկավոր էր շարունակել ռազմական գործողությունները: Մեր ղեկավարները, չնայած մեր հաջողությանը, համաձայնվեցին մեր Բորչալուի մարզը ճանաչել վիճարկելի գոտի: Այդ մարզը հնուց միշտ մտել է Վրաստանի կազմի մեջ. Հայերն այդ մարզում մեծամասնություն են կազմել, քանզի նրանք Թուրքիայից եկած փախստականներն էին: Ռուսաստանի՝ Թուրքիայի հետ ամեն մի պատերազմից հետո հայ փախստականները ռուսական իշխանությունների կողմից բնակեցվել են ոչ միայն այդ մարզում, այլև Քարթլիում և Կախեթիայում: Ընդհանրապես մեր ղեկավարները թեթամտորեն են վերաբերվել հնամենի վրացական հողերի նկատմամբ. Մեր ղեկավարները չեն առաջնորդվել պետական շահերով և ցրիվ են տվել մեր մարզերը»[956]:

Վրաստանի պաշտոնական-քաղաքական առաջնորդները ևս առանձնապես ոգևորված չէին վրաց-հայկական պատերազմի արդյունքներից: Իր ելույթում փորձառու քաղաքական գործիչ Ն. Ն. Ժոր-

[955] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html:

[956] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-GeorgianWar18 R. html // տե՛ս Квинитадзе Г. И., Мои воспоминания в годы независимости Грузии. 1917-1921, YMCA-PRESS 11, rue de la Montagne-Ste-Geneviève, 75005, Paris, 1985 (на рус. яз.), стр. 6:

դանիան այդ կապակցությամբ նկատել է. «Երբ պատերազմը չլուծեց տարածքային հարցերը, և երբ քաղաքական ճանապարհով առաջադրվում էին հարցի լուծման հեռանկարներ, պատերազմի շարունակումը այդ դեպքում նշանակում էր ոչ թե պատերազմ, այլ վրիժառություն»[957]: Ն. Ժորդանիան հայտարարեց «հայկական արկածախնդրության վերացման մասին», որ հայերը չեն կարող իրենց վզին փաթաթել սեփական կամքը: Իր հերթին Եվգ. Գեգեչկորին հայտարարեց հայկական կառավարության հաշվարկների ձախողման մասին: Վրացական խորհրդարանն ընդունեց բանաձև, որում Վրաստանի տարածքային ամբողջականությունը քայքայելուն ուղղված հայկական դավադրությունը համարում էր տապալված, և իր տեսանկյունից իրադարձությունների հարմար շրջադարձից զոհ մնալով, հայտարարում, որ Վրաստանը բարեհաճորեն է տրամադրված հաշտության բանակցությունների նկատմամբ[958]: Վիճաբանությունները շարունակվում են հունվարի 3-ին և 5-ին, և վեջնաորոշումը ընդունվում է:

Հայաստանի Հանրապետության հետ հաշտության համաձայնագրի գնահատման խնդրում ծայրահեղական և միակողմանի մոտեցում է ցուցաբերում վրաց պատմաբան, պրոֆեսոր Գուրամ Մանդջգալաձեն. «Հայաստանի հետ հաշտության պայմանագրի ստորագրումը Վրաստանի համար հարկադրական քայլ էր: Վիճարկելի հայտարարվեց վաղնջական, հնամենի Վրացական Լոռի երկրամասը: Այդ զինադադարով ագրեսորները հասան նրան, որ նրանց կողմից տանուլ տրված պատերազմը արդյունքում նրանց համար վերածվեց շահած պատերազմի: Վրաստանից կտրված տարածքը, չնայած և չմիացված Հայաստանին, այլ հայտարարված «չեզոք», Հայաստանին հնարավորություն տվեց ապագայում այն ձեռքը գցել, ինչը և հետագայում տեղի ունեցավ»[959]:

Այդուհանդերձ, փաստ էր, որ հայ-վրացական ռազմաքաղաքական առճակատումն ավարտվել էր, և անհրաժեշտ էր զբաղվել պատերազմի

---

[957] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html.

[958] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии…, стр. 483-491:

[959] Տե՛ս Манджгаладзе Гурам, Военный конфликт между Грузией и Арменией в 1918 году // Dirçəliş XXI əsr», 2008, № 120-121, стр. 85-90. elibrary.az/docs/jurnal-08/148j.htm:

ռազմաքաղաքական և դիվանագիտական-քաղաքական արդյունքների ամփոփմամբ, երկու հարևան երկրների միջև ռազմաքաղաքական հարաբերությունների, տնտեսական-առևտրային, ֆինանսական և այլ հիմնահարցերի կարգավորմամբ: Անհրաժեշտություն էր զբաղվել ազգամիջյան-միջպետական փոխառնչությունների վերականգնմամբ ու մասնավորապես տարանցիկ առևտրի և այլ կարևոր հիմնահարցերով:

Հայաստանի Հանրապետության փաստացի տնտեսաքաղաքական մեկուսացումը և շրջափակումը այդ աշխարհաքաղաքական պահին հրամայական անհրաժեշտություն էր դարձնում Վրաստանի Հանրապետության հետ քիչ թե շատ բնականոն տնտեսաքաղաքական, ռազմական և դիվանագիտական «բարեկամական» հարաբերություններ հաստատելու խնդրի լուծումը և այդ ձևով Բաթումիից ու Փոթիից Երևան գործնականում միակ տարանցիկ ուղին պահպանելու ռազմավարական թելադրանքով պարտադրված հակասությունների հանգուցալուծումը: Եվ չնայած Ռ. Հովհաննիսյանը իր կողմից առաջադրվող փաստարկման հիման վրա, որը ինչ-որ տեղ վիճարկելի է, պնդում է, որ «Վրաստանը գրաված էր պահում վիճելի տարածքների մեծ մասը և գործածում էր Հայաստանի խոցելիությունը՝ հաճախակի ընդհատելով երկաթուղային երթևեկությունն ու ձեռնարկելով այնպիսի բարեփոխումներ, որոնք միտված էին Թիֆլիսում հայ-ռուսական սոցիալ-տնտեսական գերակայությունը վերացնելուն»[960]: Իսկ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հնարավոր և իր տեսանկյունից հասկանալի դաշնակցական ռազմավարության մեթոդներով փորձում էր լուծել հաղորդակցության, զենքի ու ռազմամթերքի, հատկապես պարենամթերքի Վրաստանից Հայաստան ներմուծման խնդիրները լուծել, քանզի երկիրը կանգնած էր սովի և մաուզերիստական-խմբապետական կամայականությունների գործնականում անկառավարելի անարխիայի անզսպելի վիճակի առաջ: Միաժամանակ հայ քաղաքական շրջանակները փորձում էին վրաց վեհապետական ազգայնականությամբ տոգորված առաջնորդների վրա ազդել՝ ապավինելով դաշնակիցների կողմից ակնկալվող օժանդակության և հենվելով Ռուսաստանի Հարավի սպիտակ բանակների՝ մասնավորապես Ա. Դենիկինի Կամավորական բա-

[960] Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր II. Վերսալից-Լոնդոն, 1919-1920, էջ 165:

նակից ունեցած հնարավոր և ցանկալի վախի թողած ազդեցության վրա, օգտագործելով նաև թիֆլիսյան հայության արդյունաբերական-բանկային հնարավորությունները, որոնք սակայն Ներքին Գործերի մինիստր Ն. Վ. Ռամիշվիլու կողմից հապշտապ ձեռնարկված ոստիկանական-քաղաքական բնույթի կտրուկ և բացահայտ հակահայկական ճնշիչ ուղղվածության գործողությունների արդյունքում չեզոքացվեցին:

Հարկ է ասել, որ հայկական պատվիրակությունը մինչև որոշում ընդունելը փորձել է նախնական պայմանավորվածության գալ հրավիրվելիք հայ-վրացական կոնֆերանսի օրակարգային հարցերի կապակցությամբ, հարաբերվելով գեներալներ Ռիչարդ Փ. Ջորդանի և Ջ. Ֆորեստյեր-Ուոքերի հետ, որին մասնակցել են նաև գնդապետ Պիեռ Օ. Շարդինյին և կապիտան Գասֆիլդը, սակայն առանց առանձնապես շոշափելի արդյունքների[961]: 1919 թ. հունվարի 1-ին կապիտան Դուգլաս Վիձերսի գլխավորությամբ դաշնակիցների հանձնախումբը, գեներալ Գաբրիել Ղորղանյանի և հայկական պատվիրակության հետ վերադարձավ Թիֆլիս, որպեսզի այնտեղ մշակեն հաշտության պայմանագրի մանրամասները: 1919 թ. հունվարի կեսերին բացված հայ-վրացական խորհրդաժողովը Թիֆլիսում զբաղվեց պատերազմի արդյունքների ամփոփմամբ, և ապագայի որոշ խնդիրների կարգավորմամբ: Սակայն այստեղ հարկ է նշել, որ դեռ 1919 թ. հունվարի 1-ին, երբ ըստ էության Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև ռազմական գործողությունները դադարեցվել էին: Բրիտանացիների ու ֆրանսիացիների հովանու ներքո Ղարաքիլիսայում սկսվեցին հաշտության բանակցությունները, որոնց մասնակցեցին նաև երկու երկրների զորքերի հրամանատարները: Այնուհետև, ոչ լիովին հասկանալի պատճառներով, բանակցությունները տեղափոխվեցին Թիֆլիս:

Այդ ընթացքում, հունվարի 3-ին Փոթի նավահանգստում ափ իջավ 300 հոգանոց լրացուցիչ բրիտանական ռազմական համակազմ, որը մեկնեց Թիֆլիս, իսկ այնուհետև՝ Բորչալուի գավառ, որտեղ այդ պահին վրաց զորամասերի կողմից շարունակվում էին բռնությունները և տարբեր տեսակի ոտնձգությունները հայ խաղաղ ազգաբնակչության նկատմամբ, ինչի մասին գեներալ Մ. Սիլիկյանը 1919 թ. հունվարի 7-ին հեռա-

[961] Տե՛ս Шахдин И., Дашнакцутюн на службе русской белогвардейщины и английского командования на Кавказе, Тифлис, 1931, стр. 74:

գրով տեղեկացնում է ՀՀ Նախարարների խորհրդին և կառավարությունն իր հերթին որոշում է համապատասխան հարցապնդումով դիմել Թիֆլիսում գտնվող դաշնակից պետություններին[962]: Կոնֆերանսի ընթացքում ըստ նախնական պայմանավորվածության, բրիտանական զորամասերը սկսեցին զբաղեցնել Լոռու տեղամասը՝ պղնձահանքերով և երկաթգծով հանդերձ, իսկ արդեն վրաց-հայկական խաղաղարար կոնֆերանսի օրերին՝ հունվարի 16–ին իր շտաբով և թիկնազորով Թիֆլիս ժամանեց Կովկասում բրիտանական օկուպացիոն զորքերի նոր գլխավոր հրամանատար, բրիգադային գեներալ Ջ. Ֆորեստյեր-Ուոքերը, որին հաջորդեց դաշնակիցների հիմնական զորուժի ժամանումը՝ թվով 1000 զինվոր:

1919 թ. հունվարի 9-ին Թիֆլիսում բացվեց եռակողմ անգլո-վրաց-հայկական կոնֆերանս՝ նվիրված պատերազմի պաշտոնական ավարտին և հաշտության պայմանների մշակմանը, որի իրավարար վճիռները պետք և պարտադիր լինեին Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների համար: Կոնֆերանսում նախագահեց բրիտանական փոխգնդապետ Ռոբերտ Նեյլ Ստյուարտը, մասնակիցների թվում էին ֆրանսիական հյուպատոս Դյուրուան, ֆրանսիական ծառայության սպա, միսիոներ և քարտեզագիր Անտոն Պուադեբարը, կապիտաններ Դյուբուարը, Ն. Գասֆիլդը և Հ. Դուգլասը, Ջ. Ֆորեստյեր-Ուոքերի շտաբի քաղաքական մասի վարիչ մայոր Քեմփբելը, անգլիացի թարգմանսպա՝ լեյտենանտ Տվիդին: Ռ. Ստյուարտի գլխավորությամբ էլ հունվարի 10-ին սկսվեցին կոնֆերանսի աշխատանքները, որոնք ավարտվեցին հունվարի 17-ին: Վրաստանը ներկայացնում էին՝ Եվգ. Գեգեչկորին, Ն. Ռամիշվիլին, Արտաքին Գործերի մինիստրի օգնական Կ. Սաբախտարաշվիլին և գեներալ Ա. Կ. Գեդևանով-Գեդևանիշվիլին, Գ. Ժուրուլին, Ս. Մդիվանին, Կ. Կանդելակին, գնդապետ Ջափարիձեն: Հայկական հինգ հոգանոց պատվիրակությունը գլխավորում էր Հայաստանի խորհրդարանի անդամ Մարտին Հարությունյանը: Հայկական կողմից խորհրդաժողովին մասնակցում էր Ղարաքիլիսա ուղարկված պատվիրակության ողջ կազմը Մ. Հարությունյանի [դաշնակցական] գլխավորությամբ, ինչպես նաև որպես զինվորական մասնագետ, գեներալ Գաբ-

[962] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 202, ց. 1, գ. 42, մաս I, թ. 11 հակ.:

րիել Ղորղանյանը, Ստ. Մամիկոնյանը [անկուսակցական], Ս. Խաչատրյանը [դաշնակցական], Գ. Տեր-Խաչատրյանը, Ա. Խոնդկարյանը [էսէռ] և Մարտիրոսյանը: Կոնֆերանսը ունեցել է 7 նիստ:

Հայկական պատվիրակությունը ՀՀ կառավարության կողմից ստացավ գործելակերպի և բռնելիք դիրքորոշման ու ռազմավարության որոշակի հրահանգներ, որոնք հանգեցին հետևյալին. «Մեկնարկելով այն համոզմունքից, որ պատերազմը դարձյալ շարունակելը կարող է առաջ բերել դրության վատացում, Նախարարների խորհուրդը միաձայն որոշում է պատվիրակությանը առաջարկել Մ. Հարությունյանի և կապիտան Հ. Դուգլասի նախագահությամբ հանձնաժողովին տալ հետևյալ պատասխանը. Չցանկանալով շարունակել արյունահեղությունը, ընդառաջ գնալով դաշնակից Անտանտի պետությունների ցանկությանը՝ պատերազմի շուտափույթ վախճանի և երկաթուղային հաղորդակցության վերականգնման մասին՝ Հայաստանի կառավարությունը համաձայնություն է հայտնում անգլո-ֆրանսիական միսիայի առաջարկին՝ դադարեցնելու պատերազմական գործողություններն այն պայմաններով, որոնք մշակել է միսիան: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, նկատի ունենալով, որ այդ պայմանները մշակված են առանց նրա լիազորված ներկայացուցիչների մասնակցության, ցանկություն է հայտնում, որպեսզի պայմանները վերաքննվեն Հայաստանի կառավարությունից լիազորություն ունեցող անձանց մասնակցությամբ: Սակայն այս ցանկության կատարումը չպետք է դադարեցնի անգլո-ֆրանսիական միսիայի առաջարկած պայմանների իրագործումը»[963]:

Այդ ընթացքում հայկական պատվիրակությունը նախաձեռնեց մի շարք խորհրդակցություններ՝ քննարկելով կոնֆերանսին վերաբերող հարցեր: Գեներալ Գ. Ղորղանյանի նախաձեռնությամբ դաշնակիցների հետ Թիֆլիսում քննարկվելիք հարցերի հետ կապված խորհրդակցությանը, բացի պատվիրակության անդամներից, մասնակցեցին Փարիզի պատվիրակության անդամներ Ավետիս Ահարոնյանը, Միքայել Պապաջանյանը, պարենավորման նախարար Լևոն Ղուլյանը, Ռոստոմը, սակայն գեներալ Գ. Ղորղանյանը Փարիզ մեկնելու կապակցությամբ, հրա-

[963] Տե՛ս Սուքիասյան Հ., Հայ-վրացական խաղարար կոնֆերանսի հայկական պատվիրակության հաշվետվությունը // «Պատմաբանասիրական հանդես», 2009, N 1, էջ 189:

ժարվեց զինվորական խորհրդականի պաշտոնից, որից հետո պատվիրակությունը սկսեց գործել չորս հոգով: Խորհրդակցության վճռով որոշվեց ներկայացնել մի նախագիծ Լոռվա շրջանի վարչակարգի համար, ապա խնդրել, որ վրացական զորքերը ետ քաշվեն բոլոր հայաբնակ վայրերից, քանի որ վրացական զորամասերը իրենց գործելակերպով հուզում են ժողովրդին և ապստամբության պատճառ դառնում, այնուհետև առաջարկել, որ Սադախլոյի շրջանի թուրքաբնակ վայրերում տեղաբաշխվեն բրիտանական զորքեր: Այս փաստաթուղթը ներկայացվեց հունվարի 3-ին[964]: Հայկական կողմին առաջադրված պայմաններն այնքան անարդար էին, միակողմանի և անընդունելի, որ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը փորձեց մանևրել, և փոփոխություններ մտցնել դրանց մեջ, նախքան ստորագրելը: Ըստ Ա. Դենիկինի, պատերազմի արդյունքները հայերի համար վերջնագրային էին, պարտադրված բրիտանացիների կողմից, և ըստ վերջինիս, չնայած հաջողության տեսանկյունից առավել բարենպաստ ռազմավարական իրավիճակ ունեին հայերը, այդուհանդերձ, երկու կողմերին պարտադրված բրիտանական զինադադարի պայմանները վրացիներին առավել նախընտրելի վիճակի մեջ դրեցին, քան հայերին, և արդյունքում՝ ստեղծեցին թշնամության և դժգոհության օջախներ[965]: Ըստ Գ. Պետրոսյանի, որի կողմից առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրված միանգամայն արժանահիշատակ փաստեր, գնդապետ Մ. Զինկևիչը, ամփոփելով պատերազմի արդյունքները, թեև գտել է, որ այն ավարտվել է Հայաստանի ռազմական հաղթանակով և տարածքային ձեռքբերումներով, բազմաթիվ գերիներով ու ռազմավարով, այդուհանդերձ, այն հանգուցալուծվել է՝ դիվանագիտական պարտությամբ[966], որը բրիտանացիների ջանքերով և Վրաստանին ցուցաբերած ռազմաքաղաքական աջակցությամբ, տեղ-տեղ էլ սպառնալիքներով ընդդեմ Ա. Դենիկինի Կամավորական բանակի և վերջինիս դաշնակից համարվող Հայաստանի Հանրապետության, 1919 թ. հուվարյան հաշտության կոնֆերանսում

[964] Տե՛ս Սուքիասյան Հ., Հայ-վրացական խաղարար կոնֆերանսի հայկական պատվիրակության հաշվետվությունը, էջ 191:

[965] Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918 -1920 թթ.), էջ 153-154:

[966] Տե՛ս նույն տեղում, էջ 155: ՀԱԱ, Ֆ.Պ – 275, ց. 2, գ. 5, թ. 38-39:

հանգեցրել է հայերի համար անբարենպաստ վիճակի ստեղծմանը, որում հայկական պատվիրակությունը զգալի ջանքեր գործադրեց առաջադրված հիմնախնդիրները լուծելու համար:

Հայկական կողմի առջև կանգնած դժվար վիճակից դուրս գալու և սահմանատարածքային բարդութային խնդրի լուծման համար հայկական պատվիրակությունը որոշեց տեսակցել միջազգային հանձնաժողովի եվրոպացի անդամների հետ, հանգամանալից պարզաբանելով ներկայացված որոշումների անընդունելիությունը, ըստ այդմ խնդրելով պայմանները փոփոխել այնպես, որ հավասար դրություն հաստատվի հայերի և վրացիների միջև, և ինչպես Լոռիում, այնպես էլ Ախալքալաքի գավառում կամ հայկական զորքերը չհեռացնել Բորչալուից, կամ էլ վրացական զորամասերը ևս հեռացնել Ախալքալաքից, որին Հ. Դուգլասը առարկեց, պատճառաբանելով, որ համապատասխան լիազորություն չունի նման խնդիր լուծելու, սակայն ամենևին էլ դեմ չէ, որ հայկական կողմը հակաառաջարկներ անի, բայց պայմանագիրը պատերազմը դադարեցնելու մասին պետք է ստորագրել, որպեսզի արյունահեղությունը կանխվի, որպեսզի հայերի շահից բխող երկաթուղային հաղորդակցությունը վերականգնվի, և որ ամեն դեպքում ինքն ամեն ինչի մասին կտեղեկացնի դաշնակիցների հրամանատարությանը[967]:

Առաջին իսկ նիստում՝ հունվարի 9-ին, հայկական պատգամավորական խումբը դաշնակիցներից խնդրեց լուծել մի շարք հարցեր: Հայաստանի պատվիրակության ղեկավար Մ. Հարությունյանը ելույթ ունենալով հունվարի 9-ի նիստում, անհրաժեշտ գտավ, որ մինչև երկու հանրապետությունների ճանաչումը եվրոպական տերությունների կողմից՝ հարկավոր է հաստատել՝ 1) ազատ երկաթուղային երթևեկություն, 2) ազատ փոստային հաղորդակցություն, 3) ամենազանազան ապրանքների ու մթերքների ազատ ներմուծում և արտահանում երկու կողմերից, 4) մաքսերի, անձնագրային ռեժիմի և հպատակության վերացում, 5) Վրաստանից դեպի Հայաստան Հայկական կորպուսին և Ազգային խորհրդին պատկանող ունեցվածքի բացթողում, 6) Հայաստանին պատկանող Անդրկովկասյան բոների վճարում, 7) այն հաստատություններից ազատ օգտվելու իրավունք, որոնք ունեն ողջ Անդրկովկասի համար

[967] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 179-216:.

ընդհանուր նշանակություն և գտնվում են Վրաստանի, Հայաստանի կամ Ադրբեջանի տարածքում, 8) ռազմագերիների փոխանակում և ներկալված անձանց ու ձերբակալվածների անհապաղ ազատագրում, 9) Վրաստանում և Հյուսիսային Կովկասում գտնվող հայ փախստականների ազատ բացթողում Վրաստանից և Վրաստանով մեկ, 10) Վրաստանում մնացած ընդհանուր ռուսական ունեցվածքի բաժանում երեք անդրկովկասյան հանրապետությունների միջև, 11) վերջին ձերբակալությունների ժամանակ եղել են և սպանությունների դեպքեր, այդ սպանվածների ընտանիքների ապահովում, որոնց լուծումը կարող է Վրաստանի և Հայաստանի միջև խաղաղ համակեցության հիմքեր ստեղծել[968]: Սակայն գնդապետ Ստյուարտի կողմից հայկական պատվիրակության այս առաջարկները ուշադրության չարժանացան, որը գտավ, որ կոնֆերանսը լիազորված չէ տնտեսական բնույթի հարցեր քննարկել, այլ միայն վարչակարգի, զորքի քանակի և սահմանագծի հարցեր: Հայկական պատվիրակության կարծիքով, տնտեսական հարցերը օրակարգից հանելը տեղի է ունեցել վրացական կողմի պահանջով[969]: Անգլիացիների այդ վերաբերմունքի մասին է ակնարկում Արտ. Բաբալյանը. «Դժուար էր մեզ տեղի տալ անգլիական պահանջներին, որովհետեւ մենք նոր էինք ճաշակում դրանց վերաբերմունքը եւ մեծ հաւատ ունէինք, որ «Մեծ դաշնակիցները» մեզ չեն լքի: Չէ որ նոյն Վրաստանն էր, որ Անդրկովկաս էր հրաւիրել գերմանացիներին:

Սակայն սխալ դուրս եկան մեր հաշիւները: Հաշտարար կոնֆերանսին, անգլիական ներկայացուցիչը պաշտպանեց վրացական պահանջները եւ ստեղծեց չէզոք գօտին, որ գրաւուած էր մեր զօրքերի կողմից»[970]: Այս առումով հետաքրքիր է նաև Արտ. Բաբալյանի հուշագրության մեջ հիշատակվող այն վկայությունը, համաձայն որի ՀՀ վարչապետ Հովի. Քաջազնունին հաճախ դժգոհել է անգլիացիների այդ ոչ հայամետ և անկայուն, սակայն հստակ բրիտանամետ և հաճախակի դրսևորվող թուրքամետ-ադրբեջանամետ դիրքորոշումից, որ գեներալ Ֆորեստյեր-Ուոքերի հետ հանդիպումներից մեկում վերջինս ցինիկա-

[968] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 104, թ. 42, 46-47:

[969] Տե՛ս նույն տեղում, թ. 47:

[970] Տե՛ս Բաբալեան Արտ., Էջեր Հայաստանի անկախութեան պատմութենէն, «Հայրենիք», Բոստոն, Յունիս, 1923, N 8, էջ 54-55:

բար հայտարարել է հետևյալը. «Ձեզ ով ասաց, որ դուք մեր դաշնակիցներն եք»[971]: Բրիտանացիներն ունեին իրենց շահերից բխող մոտեցումները, որոնք էլ պարտադրվեցին պատերազմող կողմերին:

Անդրադառնալով անգլիացիներին, Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Մ. Թումանյանը ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղված 1919 թ. փետրվարի 9-ի նամակում գրում էր. «Անգլիացիների քաղաքականությունը Կովկասում, որքան պարզվում է թե՛ նրանց խոսակցություններից և թե՛ գործողություններից, գլխավորապես ի նկատի ունի նրանց ազդեցության ամրապնդումը: Ըստ ամենայնի երևում է, որ նրանք աշխատում են այդ ազդեցությանը տևական բնույթ տալու և հաստատվում են Կովկասում երկար ժամանակով: Նրանք առիթ չեն բաց թողնում ընդգծելու իրենց հակակրությունը միացյալ Ռուսաստանի գաղափարին, մինչդեռ ֆրանսիական ներկայացուցիչները, ընդհակառակը, միշտ էլ պնդում են, որ պիտի գործեն ամբողջական Ռուսաստանի վերածնության համար: Մի տասը օր սրանից առաջ գեն. Ուոկերին ներկայացել էր անդրկովկասյան Ռուսաց Ազգային Խորհրդի պատգամավորությունը, խնդրելու որ Վրաստանի երկաթուղիների ծառայությունից արձակված ռուս պաշտոնյաներին նորից պաշտոն տրվի: Ուոկերն աջակցություն է խոստացել պայմանով, որ այդ պաշտոնյաները չհամարձակվեն համառուսական պրոպագանդ մղել ու միացյալ Ռուսաստանի գաղափարը տարածել: Կամավորական զորքի գործակալներին անգլիացիներն այստեղ ոչ միայն աջակցություն չեն ցույց տալիս, այլև արգելում են Կովկասյան կորպուսի համար մարդիկ հավաքել, ինչպես որ նրանց այստեղ գալու առաջին օրերը ծրագրված է եղել: Այդպիսի մի ձեռնարկ նրանք թույլ էին տվել միայն Բաքվում, ուր այդ գործով զբաղվում է գեն. Պրժևալսկին, բայց վերջին օրերս այնտեղ էլ դժվարություններ են հարուցանում: Սոչիի շրջանը, ուր ներկայումս կռիվներ տեղի ունեն կամավորական զորքի ու վրացիների միջև, գեն. Ուոկերը մի սպա է ուղարկել, հատկապես Դենիկինի ու վրացիների փոխհարաբերությունները կարգավորելու համար: Միևնույն ժամանակ, պաշտոնական մի գրությամբ հավաստիացրել է Գեգեչկորիին, որ կապահովի Վրաստանի

[971] Տե՛ս Բաբալեան Ա., Էջեր Հայաստանի անկախութեան պատմութենեն, «Հայրենիք», Բոստոն, 1923, N 9, էջ 106:

անձեռնմխելիությունը Դենիկինի առաջխաղացումից: Առհասարակ, վրաց կառավարության հակառուսական մոտեցումները համակրություն են գտնում անգլիացիների կողմից: Դրանով թերևս պետք է բացատրել, որ Արտ. Գործ. մինիստրի օգնական Սաբախտարիշվիլիի ուղևորությունը Բաքու, ուր նա գնացել էր դեկտեմբեր ամսին Թոմսոնից օգնություն խնդրելու հայերի դեմ, հաջողվել էր ու տվյալներ կան կարծելու, որ որոշ համաձայնության է եկել Թոմսոնի հետ: Անգլիական ներկայացուցչի վերաբերմունքը հայ-վրացական կոնֆերենցիայի ժամանակ բավականաչափ հաստատում է այդ տեղեկությունները: Նույնը կարելի է եզրակացնել սրանից երեք օր առաջ մեր պատվիրակության ստացած թղթից: Պատվիրակությունը, առարկելով, որ Ախալքալաքի գավառը վիճելի է, խնդրել է անգլիական միսիային արգելել վրաց Սահմանադիր ժողովի ընտրությունները կատարել այդ գավառում: Սակայն միսիան պատասխանել է, որ վրաց կառավարությունը իրավունք ունի այդտեղ ընտրություններ կազմակերպելու, քանի որ վարչակարգը մնում է վրացական, բայց դա, իհարկե, չի նախորոշում Փարիզի կոնֆերանսի վճիռը: Որոշ հակավրացական քաղաքականություն նկատվում է միայն Բաթումիում, ուր անգլիացիները գերադասություն են տալիս ռուսներին ու թուրքերին: Այդ պատճառով վրաց կառավարությունը փաստորեն արգելել է ռուսների ճանապարհորդությունը Բաթումիի ուղղությամբ:

Միաժամանակ վրաց կառավարությունը բանակցություններ է վարում Դենիկինի ներկայացուցիչ սենատոր Սօկօլովի հետ Թիֆլիսում և ուղարկել է Եկատերինոդար իբրև իր ներկայացուցիչը Կուբանի կառավարության և կամավորական զորքի մոտ, Ս. Մդիվանիին (որը եղել է Երևանում): Շարունակվում են նաև բանակցություններ բոլշևիկների հետ, որոնք Վրաստանին խոստացել են կատարյալ ինքնավարություն:

Անգլիացիների ենթադրյալ արշավանքը դեպի Վլադիկավկազ չի իրականանում: Ուղարկված է միայն մի փոքր զորախումբ Կազբեկ, այնտեղից կապ ստեղծելու Հյուս. Կովկասում բոլշևիկների դեմ գործող ուժերի հետ: Զինված ուժով, ինչպես երևում է, գոնե առայժմս, հակաբոլշևիկներին չեն օգնելու: Վրացական շրջաններն աշխատում են անգլիացիներին համոզել, որ հայերը ցանկանում են ռուսների վերադարձը Կովկաս և անբավական են անգլիական քաղաքականությունից:

Հաղորդում եմ դրա մասին ի տեղեկություն որպեսզի Ձեր տեսակցության ժամանակ Կարս գնացած գեն. Ուոկերի հետ հերքեք այդ բամբասանքները»[972]:

Եվ այդ իսկ պատճառով խորհրդաժողովը գնաց այն ընթացքով, ինչպես մտահղացել էին բրիտանացիները՝ ելնելով Անդրկովկասում իրենց գերակա շահերի իրագործման ռազմավարությունից, միաժամանակ հայերին մեղադրելով ռուսամետության մեջ, և հստակ ակնարկելով, որ իրենց ձախողումների և պարտության պատճառը հենց այդ ռուսամետ կողմնորոշումն է և գեներալ Ա. Դենիկինի հրամաններին համաձայն գործելը:

Խորհրդաժողովի օրակարգն ուներ հետևյալ հարցերը.

1. Փոխադարձ անկախության ճանաչումը և դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը,

2. Հաղորդակցության և երթևեկության պայմանների կարգավորումը,

3. Տրանզիտի հարցը,

4. Փոստ -հեռագրական համաձայնություն,

5. Հայկական կորպուսի գրավված գույքերը վերադարձնելու հարցը,

6. Հայկական կառավարությանը պատկանող և վրացիների կողմից գրավված 13 միլիոն ռուբլուց ավելի գումարը վերադարձնելու խնդիրը[973]:

Հայաստանի պատվիրակության ղեկավարը եզրահանգեց, որ միայն այդ հարցերի լուծումից է կախված խաղաղ գոյակցությունը Վրաստանի և Հայաստանի միջև[974]: Պատասխանում Ե. Գեգեչկորին շեշտում է, որ Վրաստանի ներկայացուցիչները լիազորված չեն այդ հարցերի լուծման համար (վրացիների այս կեցվածքն, իհարկե, զավեշտալի էր և արտառոց ծիծաղելի, քանզի վրաց ներկայացուցչությունը բաղկացած էր հենց կառավարության անդամներից: Ակնհայտ է պարզապես, որ վրացիները իրենց ոչ ձեռնտու մոտեցումները մերժելու համար դիմում էին ցանկացած միջոցի, չխուսափելով անգամ «ծիծաղելի երևալուց»,

[972] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 181, մաս I, թ. 35-36:
[973] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 249:
[974] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 104, թ. 46-47:

որն ինչ խոսք, վրաց ժողովրդին ծառայելու տեսանկյունից պատվաբեր է - Վ. Վ.), քանի որ տնտեսական հարցերը ենթակա չեն քննարկման, ինչի մասին խորհրդաժողովի սկզբին ասել էր նաև դաշնակիցների ներկայացուցիչ Ստյուարտը: Գեգեչկորին գտնում էր, որ իրենք այդ պատճառով դիմել են հարևաններին, իր ժամանակին առաջադրել են հարցեր և հավաքվել են խորհրդաժողովի հարցերի լուծման համար, սակայն իրենց կոչը մնացել է անպատասխան, միաժամանակ պնդելով այն հանգամանքի վրա, որ ոչ մի հարց արմատապես չի վճռվի, քանի դեռ նշանակվող քննչական հանձնաժողովը չպարզի վրաց-հայկական ռազմական բախման իրական մեղավորներին և նրանց վրա պատասխանատվություն չդնի[975], որին ի պատասխան Մ. Հարությունյանը հայկական կողմից պատրաստակամություն է հայտնում այդ մասին, եթե հնարավոր լինի Վրաստանի հետ միասին նախապես քննարկել մի շարք հարցեր, և գլխավորապես սահմաններին վերաբերող, միաժամանակ գտնելով, որ այդ դեպքում արդեն կարելի է նշանակել քննչական հանձնաժողով՝ բախման մեղավորներին բացահայտելու համար[976]: Առհասարակ պետք է նկատել, որ վրացական կողմը գտնում էր, որ «եթե կռիվը չդադարեր, իրենք կարող էին իրենց կորցրածը հետ վերցնել և պատերազմը վերջացնել կատարյալ հաղթությամբ: Արդեն իսկ թե՛ պառլամենտում, թե՛ հրապարակային ժողովներում, և թե՛ մամուլում նոքա աղաղակում էին հաղթության մասին, որ իբր թե անգլիացոց միջամտությունն ընդհատեց նոցա հաղթական արշավը մինչև Երևան: …Կոնֆերանսում եղած արտահայտություններից երևաց, որ նոքա մեզ մեղավոր են ճանաչում այն բանի համար, որ մենք հոկտեմբերյան [խոսքը վերաբերում է մեր կողմից արդեն արծարծված հարցին, ըստ որի դեռ 1918 թ. հոկտեմբերի 27-ին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնակատար Նոյ Ռամիշվիլու կողմից Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնականների հանրապետությունների կառավարություններին առաջարկվել էր նոյեմբերի 3-ին Թիֆլիսում գումարել խորհրդաժողով] կոնֆերանսից հրաժարվելով, չուզեցինք վեճը խաղաղությամբ վերջացնել, դավաճանորեն հարձակվեցինք նոցա վրա՝ շահագործելով նոցա հավա-

[975] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 104, թ. 48:
[976] Տե՛ս նույն տեղում:

տը և միամտությունը»: Ավելին, մեղադրելով հայերին զինված ընդհարման համար, վրացական կողմը պնդեց կոնֆերանսում, որ «..Հայաստանը նախապես պատրաստվել է և, օգտվելով դաշնակիցների մուտքից դեպի Կովկաս, պայմանավորվել է Կամավորական բանակի հետ միասին հարձակվել Վրաստանի վրա: Այդ նպատակով էլ նա խուսափել է մասնակցել Անդրկովկասի հանրապետությունների կոնֆերանսին», և դեռ ավելին, պնդում էր, որ հենց դրանից էլ ելնելով, իբր թե հայերը դեմ են Վրաստանի Հանրապետության անկախությանը և զբաղված են վրացիների դեմ քարոզչությամբ, Թիֆլիսի թերթերը ողողելով հակավրացական նյութերով: Այդ կապակցությամբ Թիֆլիսում գտնվող հայկական պատվիրակությունը Մ. Հարությունյանի գլխավորությամբ հայտարարում է, որ լիազորված չեն Վրաստանի անկախությունը ճանաչող մի ակտ հրատարակել, և եթե վրացական կառավարությունը դա անհրաժեշտ է համարում, ապա հայկական պատվիրակությունը դրան չի հակադրվում և այդ ուղղությամբ կաշխատի՝ Երևան վերադառնալով՝ այդ մասին զեկուցելով Հայաստանի կառավարությանը, միաժամանակ ներկայացնելով առաջարկ այդ մասին[977]:

Կողմերի միջև հենց սկզբից առաջացան վիճաբանություններ և տարակարծություններ: Վրաստանի պատվիրակությունը պահանջեց, որ իրենց զորքերը մնան այն սահմանագծում, որ նրանք գրավել էին դեկտեմբերի 31-ի ժամը 12-ի վիճակով, իսկ հայկական պատվիրակությունը առաջարկեց Վրաստանի զորքերը ետ քաշել ժամանակավոր զինադադարի ստորագրման պահին զբաղեցրած դիրքերը: Ըստ էության դաշնակիցների կողմից հավանության արժանացավ վրացական տարբերակը:

Երկրորդ հարցի կապակցությամբ հայկական պատվիրակությունը առաջարկեց ստեղծել երեք հոգուց կազմված (մեկական ներկայացուցիչ Վրաստանից և Հայաստանից, մեկն էլ՝ տեղական բնակիչներից) կոմիսարիատ, և որ «Չեզոք գոտին» վերահսկեն դաշնակիցները, որի հետ վրացական պատվիրակությունը գործնականում համաձայնվեց:

Երրորդ հարցի քննարկման ժամանակ հայկական կողմն առաջարկեց վերականգնել երկաթուղագիծը և ղեկավարումը ենթարկել Չե-

[977] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 179-216:

զոք գոտուն, իսկ վրացական կողմը առաջարկեց երկաթուղագիծը ենթարկել Վրաստանի Հաղորդակցության ուղիների մինիստրությանը: Մնացած հարցերում խոր տարակարծություններ չառաջացան[978]:

Ըստ Գեգեչկորու, սակայն կա արմատական բնույթի մի հարց, որը իրենք անհրաժեշտ են համարում լուծել իսկույնևեթ. դա քննչական հանձնաժողովի նշանակումն է՝ բախման մեղավորների բացահայտման և նրանց վրա պատասխանատվություն դնելու նպատակով[979]: Հասկանալի է, թե ուր էր ծռում Վրաստանի պատվիրակության ղեկավարը, ողջ մեղքը փորձելով ջարդել ու բարդել Հայաստանի վրա: Դրան ի պատասխան Մ. Հարությունյանը հայտնում է, որ իրենք համաձայն են խորհրդաժողովի հրավիրմանը, եթե միայն հնարավոր լինի Վրաստանի հետ միասին նախօրոք քննարկել որոշ հարցեր, և գլխավորապես՝ սահմանների մասին հարցը, և իրենց կողմից ևս խնդրում են նշանակել հետաքննչական հանձնաժողով՝ բախման մեղավորներին բացահայտելու համար[980]: Հարկ է ասել, որ այդ խառնաշփոթ վիճակին նպաստում էր նաև անգլիացիների ոչ բավականաչափ հստակ, սակայն հաճախ վրացամետ դիրքորոշումը, որոնք ստեղծված ռազմաքաղաքական աղետալի վիճակից ելքի որոնումներում հաճախ դեմ էին գնում Վրաստանի կողմից պարտադրմամբ պատերազմի մեջ ներքաշված երկրին, այսինքն՝ Հայաստանին, կամ էլ պարզապես ելնելով իրենց սեփական շահերի ապահովման ռազմավարությունից, հարգում էին վրացական կառավարության վերջնագրային պահանջները, իսկ հայկական կողմին թավշյա կոշտությամբ ընդամենը հորդորում էին չհակառակվել և ընդունել դաշնակիցների կողմից ընդունված վճիռները, և դեմ չգնալ դաշնակիցների ռազմաքաղաքական հրամանատարության կողմից արված կարգադրություններին, մանավանդ որ վերջիններս վստահեցնում էին, որ Փարիզի խաղաղության վեհաժողովի կողմից վիճարկելի հարցերին կտրվի վերջնական հանգուցալուծում, անգամ սպառնալով, որ պատասխանատու կդառնան Փարիզի կոնֆերանսի առաջ, իսկ դա էապես կաշկանդում էր հայկական իշխանություններին իրենց գործողություններում,

[978] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html. // «Эртоба», Тифлис, № 11, 16 января 1919 г.:

[979] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 10, թ. 47:

[980] Տե՛ս նույն տեղում, թ. 48:

որոնք առանց այն էլ վեհերոտ էին իրենց քայլերում և ինչ-որ տեղ էլ ոչ բավականաչափ ինքնուրույն, գուցե նաև՝ ստրկամիտ և սեփական ուտոպիաներին, ու Սևրի առաջ բերած երազանքին ու խելացնոր ցնորքին գերի: Ըստ այդմ, հայկական պատվիրակությունը առաջնորդվում էր ՀՀ կառավարության հրահանգներով, գործնականում չցանկանալով իրապես հակադրվել դաշնակիցների կողմից ընդունված որոշումներին:

Խորհրդաժողովը տևեց երեք ամիս, և այդ ընթացքում վրացիները ձգտում էին հնարավորին չափով այն ձգձգել՝ Հայաստանի վրա ճնշում գործադրելու նպատակադրումով՝ հարկադրելով վերջինիս սահմաններ հարցում գնալ էական զիջումների, պահանջելով բավարարություն տալ իրենց կրած վնասներին, և այդ պատճառով էլ խոչընդոտում էին Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի գործունեության վերսկսմանը, չթույլատրելով նույնիսկ բացել միսիայի շենքը և հայկական պատվիրակությանը թույլ տալ այնտեղ աշխատանքային գործունեություն ծավալել և պատրաստվել հայ-վրացական խաղաղության կոնֆերանսին: Հենց այդ պատճառով էլ, վրացիների մեղքով հաշտության կոնֆերանսը սպասվածից ավելի երկարաձգվեց, վրացիները ոչ միայն չէին շտապում վերսկսել դիվանագիտական փոխհարաբերությունները, այլև ձգձգում էին այն, և միայն «մահմեդական Հարավարևմտյան հանրապետության» հռչակումից հետո, երբ մահմեդական խռովարարական ընդվզումները իրենց շրջապտույտի մեջ առան Զաքաթալան, Բորչալուի թուրքերով բնակեցված մասը, ավելացրած դրան Դենիկինի Կամավորական բանակի դիրքորոշումը Վրաստանի նկատմամբ, Միացյալ և անկախ Հայաստանի հռչակման իրողությունը և աշխարհաքաղաքական այլ փոփոխություններ: Ստեղծված վիճակում վրացական կողմը իր իսկ շահերից ելնելով, մասամբ զիջողամիտ դիրքորոշման անցավ, որն ինչ-որ չափով մեղմացրեց հայ-վրացական ռազմաքաղաքական ու դիվանագիտական լարվածությունն ու հակադրվածությունը, և երկու հարևան հանրապետություններին դրդեց և հարկադրեց գնալ որոշակի լուծումների:

1919 թ. հունվարի 14-ին Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների ներկայացուցիչները կնքեցին պայմանագիր ռազմագերիների փոխանակման վերաբերյալ (այդ խնդրի լուծմանը ներգրավվեցին ոչ միայն հենց գնդապետ Ռ. Ստյուարտը, կապիտան Լոչտոնը, այլև ֆրան-

սիական ռազմաքաղաքական ներկայացուցիչ Ա. Պուադեբարը, կապիտան Գասֆիլդը, Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի օգնական Կ. Սաբախտարաշվիլին, գեներալ Գեդևանովը), ինչպես նաև պայմանավորվեցին ազատել ռազմական գործողությունների կապակցությամբ ձերբակալվածներին: Կողմերը, որպես ռազմագերիների փոխանակման վայր ընդունեցին «Ղարաքիլիսա» կայարանը: Վրաստանի և Հայաստանի հանրապետությունները պայմանավորվեցին առաջին հերթին անհապաղ ազատել և երկաթուղով ձրի հասցնել իրենց ձերբակալման վայրերն այն անձանց, ովքեր զորակոչային տարիք ունեին, և անմիջական մասնակցություն չէին ցուցաբերել ռազմական գործողություններին, սակայն հայտարարվել էին ռազմագերիներ: Այնուհետև, ըստ պայմանագրի, պետք է ազատագրվեին երկու հանրապետություններում պետական ծառայության մեջ գտնվող անձինք, ովքեր ռազմական առճակատման սկզբին ձերբակալվել էին հակառակ կողմի տարածքում: Պայմանագիրը ստորագրել էին վրացական կողմից՝ Վրաստանի զորքերի հրամանատար Գեդևանովը և Զինվորական նախարարությանը կից հանձնարարությունների գծով շտաբի սպա Ջախարիաձեն, իսկ հայկական կողմից՝ գեներալ Գ. Ղորղանովը[981]: Այս կապակցությամբ հարկ է փաստել, որ ռազմագերիները փոխանակվեցին 1919 թ. հունվարի 23–ին, Իսկ Վրաստանում ձերբակալված շատ հայ քաղաքացիական անձինք, ներառյալ Վրաստանի պառլամենտի 5 նախկին անդամներ, ազատ արձակվեցին հունվարի 26-ին[982]:

Վերջին նիստի ընթացքում էլ ստորագրվեց կառավարական պայմանագիրը պատերազմի դադարեցման և Լոռիում Չեզոք գոտու ստեղծման մասին: Դաշնակիցների հրամանատարության ներկայացուցիչների մասնակցությամբ բրիտանական ծառայության գնդապետ Ռ. Ն. Ստյուարտի գլխավորությամբ Վրաստանի և Հայաստանի կառավարությունների ներկայացուցիչների 1919 թ. հունվարի 9-17-ը տևած խորհրդաժողովն ընդունեց որոշում Բորչալուի գավառում «Չեզոք գոտու» սահմանների մասին, որով կողմերը պայմանավորվեցին Բորչալուի գավառի հարցի շուրջ և այնտեղ տեղակայվող պահակազորի մասին: Բրիտանական ներկայացուցիչ Ռ. Ստյուարտը մերժեց նաև գեներալ Գ.

[981] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 16, թ. 71; Ֆ.Պ- 275, ց. 5, գ. 104, թ. 87:
[982] Տե՛ս «Հայրենիք» (օրաթերթ), Բոստոն, 15 ապրիլի, 1919 թ., էջ 2:

Ղորղանյանի առաջարկը՝ Չեզոք գոտու սահմանների որոշումը թողնել զինվորական հանձնաժողովին, ինչպես նաև հայկական կողմի մեկ այլ առաջարկ, այն է՝ Չեզոք գոտու սահմանները որոշել համաձայն 1918 թ. դեկտեմբերի 25–ի զինադադարի ստորագրման պահին եղած իրավիճակի: Զինվորական հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվեցին Ա. Գեղնանովը, գեներալ Գ. Ղորղանյանը, գնդապետ Ի. Ջափարիձեն, հունվարի 10-ին հայ-վրացական խորհրդաժողովի քննարկմանը ներկայացրեց Լոռու Չեզոք գոտու հյուսիսային և հարավային սահմանների, հայկական ու վրացական զորքերի կողմից զբաղեցվելիք սահմանագծերի, ուղեկալների և տեղակայվող զորքի թվաքանակի հարցերը[983]: Ի դեպ, հարկ է նշել, որ Ալավերդու պղնձահանքերը հայտնվեցին հենց այդ «Չեզոք զոնայում»՝ վարչական առումով ենթարկվելով դաշնակիցներին, չնայած ինչ-որ տեղ ի հակադրություն այդ ամենի, գեներալ Ղորղանյանը փաստեր բերեց, պնդելով որ վիճելի գոտում ապրում են ավելի քան հազար 69 հազար հայ, 7 հազար ռուս, ոչ ավելի քան 1500 թաթարներ, որոնք ապրում էին Կարաիս, Իլիմազլու և Կիշլել գյուղերում, 4-5 հազար հույներ՝ իսկ վրացիները ընդամենը 500 հոգի էին, որոնք ապրում էին Սիոն և Ցագեր գյուղերում, որոնք այդ պահին մնացել էին վրաց զորամասերի կողմից զբաղեցված գծից հյուսիս[984]: Կողմերը պայմանավորվեցին, որ վրացական կայազորները տեղավորվեն Բորչալուի գավառի հյուսիսային մասում և Ախալքալաքի գավառում, իսկ հայկական կայազորները՝ Բորչալուի գավառի հարավային մասում: Վրաստանը և Հայաստանը պայմանավորվեցին նաև դեմոբիլիզացիայի (զորացրման) ժամկետների, ինչպես նաև ռազմագերիների փոխանակման և ներկալվածների ազատագրման մասին: Վրացական և հայկական կողմերը պայմանավորվեցին նաև «Չեզոք գոտու» խառը վարչակարգի մասին, որը պետք է գործեր դաշնակիցների գլխավորությամբ և հսկողությամբ, իսկ վիճարկելի դեպքերում՝ արբիտրաժը (միջնորդություն, իրավարարություն) հանձնվում էր Դաշնակցային հրամանատարության ներ-

[983] Տե՛ս Սուքիասյան Հ., Հայաստանի և Վրաստանի միջև դիվանագիտական կապերի վերականգնման հարցը 1918 թ. վրաց-հայկական պատերազմին հաջորդող շրջանում// տե՛ս Մերձավոր Արևելք. Պատմություն. Քաղաքականություն. Մշակույթ. IX-X. Հոդվածների ժողովածու, Եր., 2014, էջ 548:

[984] ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 104, թ. 70:

կայացուցիչներին: Ինչպես նշում է Զուրաբ Ավալովը. «Անտանտի ներկայացուցիչները չլուծեցին Հայաստանի և Վրաստանի միջև վիճելի հարցերը, այլ հետաձգեցին դրանց հանգուցալուծումը, որոշելով, որ երկու պետությունների՝ Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչները, մոտ ժամանակում կուղարկվեն Եվրոպա, որտեղ սահմաններին վերաբերող բոլոր հարցերը կլուծվեն մեծ տերությունների կողմից»[985]: Ղեկավարման հետ կապված ծախսերն իր վրա էր կրում Բրիտանական հրամանատարությունը, որոնք հետագայում պետք է դրվեին այն պետության վրա, ում բաժին կհասներ վիճելի տարածքը: Երկու կողմերի միջև տարաձայնություններ առաջացան՝ կապված «Չեզոք գոտում» երկաթուղային հաղորդակցության կարգավորման հետ[986]:

Հայկական պատգամավորության անունից ելույթ ունեցած Ս. Խաչատրյանը այդ կապակցությամբ անում է համապատասխան հայտարարություն: Հայաստանի ներկայացուցիչը ընդգծում է, որ Անդրկովկասյան երկաթուղագծի ունեցվածքը կազմում է համակովկասյան ունեցվածք, սեփականություն և ոչ մի պետություն իրավասու չէ այն վերածել իր բացառիկ սեփականության, և որ Վրաստանի կառավարության պահանջն իրեն հանձնել երկաթգծերի վարչությունը «Չեզոք գոտում», որպես տվյալ զոնայում երկաթուղային ճանապարհահանգույցի ղեկավարման ապարատի գործառույթների ճիշտ ուղղորդման և դրանից օգտվելու թույլտվության միակ պայման, արմատապես հակասում էր դեկտեմբերի 25-ին դաշնակիցների կողմից կայացրած որոշման բուն իմաստին: Ս. Խաչատրյանը ընդգծեց, որ հարցի այդպիսի լուծումը հակասում է հայ ժողովրդի կենսական շահերին և չի պատնեշում պետությունը նմանատիպ ոչ իրավասու և ոչ արդարացի նկրտումներից ապագայում, և այդ իսկ պատճառով հայկական պատվիրակությունը իրեն իրավունք չի վերապահում ընդունել այդպիսի պայմանները, և այդ հարցի լուծումը հանձնում է Դաշնակցային հրամանատարությանը: Ի պատասխան, Դաշնակցային ներկայացուցիչ Ստյուարտը նկատի ունենալով, որ հայկական ներկայացուցչի կողմից «Չեզոք գոտում» երկաթու-

[985] Տե՛ս Авалов З. Д., Независимость Грузии в международной политике. 1918-1921 гг. стр. 167-168:

[986] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 73: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., (քաղաքական պատմություն), էջ 82-84:

ղազծի սպասարկման հարցի լուծումը հանձնվել է Դաշնակցային հրամանատարության քննարկմանը, հայտարարում է, որ ստացված հրահանգների համաձայն ինքը որոշում է, որ «Չեզոք գոտում» երկաթուղագիծը պետք է սպասարկվի Վրաստանի կառավարության կողմից նշանակված ծառայողների կողմից, առաջարկելով հայերին փոխարինել վրացիներով: Ստյուարտը նաև առաջարկում է հայկական պատվիրակությանը տեղեկացնել այդ մասին սեփական կառավարությանը, որից հայկական պատվիրակությունը հրաժարվում է, պատճառաբանելով, որ հարցի այդպիսի լուծման հետ իրենք չեն համաձայնվել, և թող Դաշնակցային հրամանատարությունն ինքն անձամբ տեղեկացնի այդ մասին հայկական կառավարությանը[987]:

Եվ այդպես, ոչ առանց բրիտանական աջակցության որոշվեց՝ «Չեզոք գոտում» երկաթուղագիծը հանձնել Վրաստանին: Մարտի 4-ին սկսվեց կանոնավոր երկաթուղային հաղորդակցություն Երևանի և Թիֆլիսի միջև:

Ի լրումն այս խնդիրների, Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները կարևորեցին և Վրաստանից խնդրեցին ի կարգավորումն Վրաստանի և Հայաստանի միջև առկա ռազմաքաղաքական փոխհարաբերությունների, իրենց վերադարձնել նախկինում Թիֆլիսում տեղակայված Հայկական զինվորական կորպուսին պատկանող ողջ ունեցվածքը, և վերացնել հայկական կառավարության կողմից Թիֆլիսի դրամատանը պահ տված շուրջ 13 միլիոն բոնի սառեցումը: Վրաստանը, իհարկե, որդեգրեց ձգձգումների ուղին, անգամ որպես հակաառաջարկ ներկայացնելով հայերի կողմից գրավված զրահակիր գնացքների հարցը, ձգտելով Հայաստանին պահել լարված և կախյալ վիճակում: Եվ չնայած վերջին պայմանագրով Ե. Գեգեչկորու և Ն. Ռամիշվիլու կառավարությունը համաձայնվեց վերադարձնել հայկական կորպուսի ամբողջ գույքը, իսկ ռազմանյութերի և զինվորական գույքի մասին հատուկ համաձայնություն կայացնել, պատճառաբանելով, որ այդ ռազմանյութերը ծախսել են և անմիջապես վերադարձնել չեն կարող, նմանապես նաև 13,6 միլիոն գումարի մասին, որը ևս ծախսված է, որը Վրաստանը չի կարող այն վերադարձնել ֆինանսական ճգնաժամի հետևանքով,

[987] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 104, թ. 74:

սակայն պատրաստակամություն հայտնեց այդ հարցի վերաբերյալ համաձայնության գալ կամ դիմել դաշնակիցների արբիտրաժին: Հայկական պատվիրակությունը ելնելով դրանից, որոշեց հարցի մասին զեկուցել կառավարությանը և այդ գումարի ստացման ձևի որոշումը թողնել նրան[988]:

Վերջ ի վերջո, ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանի 1919 թ. փետրվարի 10-ի հեռագիրը Ստ. Մամիկոնյանին՝ արագ ավարտել պատվիրակության գործերը և մարտի սկզբին ետ վերադառնալ Երևան, ինչպես նաև Ախալքալաքում և Ախալցխայում բռնկված մահմեդական խռովությունները հարկադրեցին Վրաստանի կառավարությանը շտկումներ մտցնել Հայաստանի նկատմամբ իր ռազմավարությունում, և գնալ Հայաստանի Հանրապետության հետ կապերի ավելի սերտացման:

Վրաց-հայկական խաղաղարար կոնֆերանսի հունվարի 16-ի նիստը նվիրված էր երկու հանրապետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների վերահաստատմանը, որը կարևոր նշանակություն ուներ կողմերի միջև ռազմաքաղաքական լարվածությունը վերացնելու խնդրում, սակայն այն հարթ չընթացավ: Եվգ. Գեգեչկորին ներկայացնելով վրացական կողմի մեկնակետը, շեշտեց, որ դիվանագիտական հարաբերությունները չեն կարող լայն իմաստով վերականգնվել, քանի դեռ պատերազմի պատճառները և հրձիգները չեն բացահայտվել, սակայն նկատի ունենալով, որ կենսական բնույթի որոշ հարցեր անհապաղ լուծում են պահանջում, որ վրաց հասարակական կարծիքը բավարարված չէ և անհասկանալի է նախկին եղանակով հարաբերությունների վերականգնումը և վերսկսումը, որ Վրաստանը շատ զոհեր է տվել, զգալի ծախսեր է կատարել և դեռ տարածք է կորցրել, և անհասկանալի է, թե ինչու՞ պատերազմեցին և ինչո՞ւ առանց որևիցե լուրջ նախապայմանների հաշտվեցին[989]: Այդուհանդերձ, ռազմաքաղաքական լարվածությունը կողմերի մեջ թուլացնելու և երկու պետությունների միջև քաղաքական-դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու համար երկու կողմերն էլ գնացին որոշակի զիջումների, ինչը նաև աշխարհաքաղաքական իրավիճակի պարտադրվածության հե-

[988] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 179-216:
[989] Տե՛ս նույն տեղում, թ. 66 և հակ.:

տևանք էր: Եվգ. Գեգեչկորին համաձայնվեց երկու կողմերի որոշմամբ նշանակել հատուկ «ագենտներ», որոնք լիազորված կլինեն տարբեր հարցերի վերաբերյալ բանակցություններ վարել՝ պարենավորման, ֆինանսների, երկաթուղագծի և այլն: Հայկական կողմը չառարկելով վրացական առաջարկությանը՝ բացահայտել պատերազմի նախաձեռնողներին, այդուհանդերձ գտավ, որ այդ բարդ հարցը ավելի շուտ պետք է թողնել պատմության հայեցողությանը, և կողմ արտահայտվեց դիվանագիտական հարաբերությունների անհապաղ վերականգնմանը, միաժամանակ ըստ Մ. Թումանյանի, իր հայեցակարգային մոտեցումում հակասելով ինքն իրեն, պնդեց, թե որպեսզի երկու ժողովուրդների հոգեբանության մեջ տեղ չտրվի պատերազմի վերսկսման մտքին, պետք է հստակ ամրագրել, որ պատերազմն անհնարին է վերսկսել Կովկասում դաշնակիցների բացակայության պատճառով[990], և որովհետև ներկայիս կոնֆերանսը հրավիրված է հաշտության կնքման համար, այլ ոչ թե զինադադարի: Եվ այսպիսով, հայկական պատվիրակությունը կողմ արտահայտվեց Հայաստանի և Վրաստանի միջև անհապաղ վերականգնելու դիվանագիտական հարաբերությունները, երկու երկրների միջև հաստատել կամեցողության մթնոլորտ, որպեսզի երկու ժողովուրդների գիտակցության մեջ միտք անգամ չթողնվի պատերազմի վերականգնման հնարավորության մասին: Արդյունքում, Վրաստանի և Հայաստանի միջև ռազմաքաղաքական հարաբերությունների նորմալացման համար ժամանակավորապես հաստատվեցին դիվանագիտական գործակալություններ՝ գործարար բնույթի հատուկ հարցերի համար, որոնք գլխավորվում էին մեկ անձի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշանակված «ագենտների» կողմից, և որոնց լիազորությունների ծավալը պետք է որոշվեր երկու կողմերի կառավարությունների փոխադարձ համաձայնությամբ, և որոնք հատկապես այս կամ այն գործնական խնդրի համար պետք է լիազորվեին՝ պարենավորման, ֆինանսների, երկաթուղային հաղորդակցության և այլն. Հայաստանի քաղաքացիների շահերի պաշտպանությամբ ևս պետք է զբաղվեր մեկ անձ, որը սակայն գործնականում չբավարարեց հայկական կողմին, հանդիպելով Ե. Գեգեչկորու կոշտ և անհաշտ դիրքորոշմանը: Գործին

[990] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 130-131:

չօգնեցին նաև բրիտանական ռազմաքաղաքական միսիան գլխավորող գեներալ Ջ. Ֆորեստյեր-Ուոքերին և մայոր Քեմփբըլին ուղղված դիմումագրերը, որով հայկական իշխանությունները փորձում էին ոչ միայն որոշ շահեր պաշտպանել Վրաստանում, այլև հասնել նրան, որ Վրաստանը հակվի հայերի հետ դիվանագիտական կապերի վերականգնմանը, որի արդյունքում վրաց կառավարությունը գնաց զիջումների այդ կարևոր խնդրում և ի վերջո՝ թույլատրեց վերաբացել հայկական դիվանագիտական ներկայացուցչությունը Թիֆլիսում [փետրվարի 28-ի և մարտի 3-ի նիստերում], պահանջելով սակայն, որ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության կազմը ամբողջովին փոխվի, որը կապված էր Վրաստանի կառավարության համար հատկապես անցանկալի համարվող, persona non grata անձ դիտվող Արշակ Ջամալյանի անձի հետ, որի վերանշանակման դեմ վրացական կառավարությունը կտրուկ առարկեց, և որի հետ գործնականում համակարծիք էր նաև Անդրկովկասում գտնվող բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչությունը[991]: Մի հանգամանք էլ կար, և դա այն էր, որ Վրաստանի կառավարության ղեկավար Եվգ. Գեգեչկորին մասնավոր զրույցներից մեկում կարծիք էր հայտնել, որ Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը չլինի կառավարող կուսակցությունից, այսինքն՝ ՀՅ Դաշնակցությունից, և այդ առումով թիֆլիսաբնակ և բավականաչափ կիրթ, շրջահայաց Լևոն Գեորգիի Եվանգուլյանի թեկնածությունը հետագայում ընդունվեց առանց որևիցե առարկության: Դիվանագիտական կապերը վերսկսվեցին մարտի 8-ին՝ իշխան Միխայիլ Գ. Թումանովի [Միքայել Թումանյան] Վրաստանում արտակարգ և լիազոր դեսպան նշանակելով և կարճ ժամանակ անց Լևոն Գ. Եվանգուլովի կողմից [Լևոն Եվանգուլյան]՝ մարտի 16-ին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության գործերի հավատարմատարի տեղը զբաղեցնելով՝ այդ խնդիրն ըստ էության հանգուցալուծվեց[992]. հանձնարարվեց նաև լուծել տրանզիտային պայմանագրի հարցը, համաձայնության գալ ռազմանյութերի և գույքի ստացման վերաբերյալ, լուծել 13,6 միլիոն բոների ստացման խնդիրը, պայմաններ ստեղծել հայ-վրացական երկաթուղային պայմանագրի ստորագրման համար և այլն:

[991] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 126 և հակ.:
[992] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 3 մարտի, 1919 թ.:

Կոնֆերանսի աշխատանքները տևեցին հունվարի 9-ից մինչև 17-ը, ձգձգվելով գրեթե երեք ամիս և հանգեցին հետևյալին[993].

I. 1) Չեզոք գոտու հյուսիսային սահմանը պետք է լինի այն գիծը, որը զբաղեցրել են վրացական զորքերը 1918 թ. դեկտեմբերի 31-ին, ժամը 12 –ին,

2) Բորչալուի գավառի Չեզոք գոտու հարավային գիծը անցկացվում է Դսեղ-Ջալալօղլիով, ուր պետք է կանգնած լինեն հայկական զորքերը,

3) Բորչալուի գավառի Չեզոք գոտու հյուսիսային մասում պետք է կանգնած լինեն վրացական զորքերը: Սահմանապահ զորքերի ընդհանուր թիվը Ախալքալաքի գավառի սահմաններից մինչև Օփրեթ գյուղը չպետք է գերազանցի 200 մարդը.

4) 125 մարդուց բաղկացած հայկական մի վաշտ պետք է կանգնած լինի Քոլագիրանում և Դսեղում: Ջալալօղլու շրջանում, Հերհերում և Նիկոլաևկայում պետք է կանգնած լինի երեք վաշտից բաղկացած հայկական գումարտակը՝ թվով 360 զինվոր՝ 50 հոգանոց հրետանային վաշտի և չորս մարտկոցների հետ միասին: 125 հոգուց բաղկացած մեկ վաշտը պետք է կանգնած լիներ Նովոպոկրովկայում,

5) Բորչալուի գավառի հյուսիսային մասում վրացական զորքերը և հարավային մասում հայկական զորքերը չպետք է գերազանցեն 660 հոգին,

6) Կողմերն իրավունք ունեն հետևակային զորքերը փոխարինել հեծելազորով,

7) Ախալքալաքի գավառում վրացական կայազորը չպետք է գերազանցի երկու վաշտը, կազմված 225 զինվորից և հրետանային ջոկատից,

8) Երկու կողմերը պարտավորվում են վերը բերված կետերում կատարել պայմանագրով նախատեսված պայմանները մինչև 1919 թ. հունվարի 14-ը՝ մինչև 24 ժամ:

II. Կողմերը պարտավորվում են հունվարի 15-ից ձեռնամուխ լինել զորացրման՝ այն ավարտելով 1919 թ. հունվարի 21-ին: Երկուստեք կողմերի բանակների թվակազմը պետք է լինի այնքան, ինչքան եղել է խաղաղ ժամանակ:

---

[993] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 162-165:

III. Կողմերը պարտավորվում են անհապաղ ձեռնամուխ լինել գերիների փոխանակմանը և այն անձանց ազատագրմանը, որոնց կատեգորիան թվարկված է ստորև.

1. Հակառակորդի մոտ պատերազմի ժամանակ գերի ընկածները,

2. Այն անձինք, որոնք պատերազմական գործողություններին որևիցե մասնակցություն չեն ունեցել, սակայն գերիներ են հայտարարվել ազգային սկզբունքի հիման վրա, պետք է անհապաղ ազատագրվեն, այն տեղում, որտեղ նրանք ձերբակալվել են,

3. Այն անձինք, որոնք ծառայել են Վրաստանի պետական հաստատություններում, և պատերազմական գործողությունների ժամանակ գերի են ընկել հակառակորդի տարածքում, պետք է անհապաղ ազատագրվեն,

4. Այն անձինք, որոնք ծառայել են Հայաստանի Հանրապետության զինվորական կազմակերպություններում և ռազմական գործողությունների ժամանակ գերի են ընկել Վրաստանի տարածքում, պետք է անհապաղ ազատագրվեն,

5. Գերիների փոխանակման կետ է սահմանվում Ղարաքիլիսա երկաթուղային կայարանը,

6. 1919 թ. հունվարի 20-ը համարվում է փոխանակման օր: Այդ օրը երկու կողմերը նշանակված տեղը պետք է բերեն բոլոր գերիներին՝ սպաներին, վարպետներին, բժիշկներին և զինվորներին, որտեղ և տեղի կունենա փոխանակումը,

7. Երկու կողմերից ռազմագերիների էշելոններին պետք է ուղեկցեն Զինվորական նախարարության ներկայացուցիչները՝ գերիների ճշգրիտ ցուցակներով,

8. 4, 5, 6 կետերի իրագործումը ի կատար ածելը իրենց վրա են վերցնում Դաշնակցային հրամանատարության ներկայացուցիչները:

IV. 1. Չեզոք գոտին ղեկավարում է խառը հանձնաժողովը՝ Դաշնակցային հրամանատարության ղեկավարությամբ և հսկողությամբ.

2. Չեզոք գոտին անմիջականորեն ղեկավարում է կոլեգիան, որը կազմված է Վրաստանի և Հայաստանի մեկական ներկայացուցիչներից՝ Դաշնակցային հրամանատարության հսկողությամբ,

3. Գյուղերի ղեկավարությունը Չեզոք գոտում պետք է ընտրվի տեղական բնակչության կողմից,

4. Դատական և ֆինանսական աշխատանքի հրահանգները կմշակվեն կոլեգիայի կողմից,

5. Չեզոք գոտու ղեկավարման ծախսերը իր վրա է վերցնում Մեծ Բրիտանիայի կառավարությունը՝ այն պայմանով, որ ապագայում այդ ծախսերը կվճարվեն այն պետության կողմից, որի սահմանների մեջ, վերջին հաշվով, կանցնի վիճելի տարածքը,

V. Եթե Չեզոք գոտում երկաթուղային հաղորդակցության հարցով, կողմերը չեն եկել համաձայնության և Հայաստանի կառավարության ներկայացուցիչների հայտարարությամբ, նրանք այդ հարցի լուծումը դնում են դաշնակիցների հրամանատարության վրա, ապա կոնֆերանսի նախագահը ընդունված հրահանգների հիման վրա որոշում է, որ Չեզոք գոտում միջազգային հաղորդագրությունները պետք է հանձնել Վրաստանի Հաղորդակցության ուղիների մինիստրությանը՝ Դաշնակցային հրամանատարության ներկայացուցիչների հսկողության ներքո,

VI. Ախալքալաքի գավառում վրացական վարչակարգի աշխատանքի վրա հսկում են Դաշնակցային հրամանատարության ներկայացուցիչները, որոնց հետ պետք է գտնվեն տեղական հայկական և մուսուլմանական բնակչության ներկայացուցիչները[994]: Փոխգնդապետ Ալան Ռիչին պաշտոնավորելու էր Ախալքալաքում որպես բրիտանական զինվորական ներկայացուցիչ, որում նա հաստատվեց դաշնակիցների 1919 թ. հունվարի 26-ի որոշմամբ, որտեղ նրան հրահանգվեց մեկնել հենց հաջորդ օրը՝ 122 զինվորների և 4 սպաների ուղեկցությամբ, սակայն վերջինիս դանդաղկոտության դրսևորումից և որոշ հապաղումից հետո, միայն հունվարի վերջին նա զորաջոկատի հետ միասին հասավ այնտեղ, քանի որ այդ ընթացքում Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում տեղի էին ունենում մահմեդական խռովարար բնակչության անկարգություններ, և միայն գարնանը վրացական բանակը կարողացավ այնտեղ հաստատել իր հսկողությունը և հանդարտեցնել այդ երկրամասերը: Միայն դրանից հետո, 81-րդ բրիգադի պարտականությունները կատարող գնդապետ Ռ. Ն. Ստյուարտը հրաման ստացավ 27-րդ դիվիզիայի շտաբից կոորդինացնել բրիտանական ռազմական ներկայացուցիչների գործունեությունը Ախալքալաքում և Լոռու Չեզոք գո-

[994] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 112, թ. 37 հակ.:

տում[995]: Դրա հետ մեկտեղ, հարկ է նաև նշել, որ փոխգնդապետ Ա. Ռիչի և Ա. Ս. Դուգլասի հաղորդագրությունները և զեկուցագրերը շատ քննադատական բնույթ ունեին, հատկապես Լոռու Չեզոք գոտում կառավարող վրաց չինովնիկների, ինչպես նաև Ախալքալաքի վրացական վարչակարգի և կայազորի գործելակերպի հետ կապված[996]:

Այսպիսով, 1919 թ. հունվարի 22-ին կնքվեց ժամանակավոր պայմանագիր, որով իրավական որոշակի ձևակերպում ստացավ 1918 թ. դեկտեմբերյան երկշաբաթյա վրաց-հայկական պատերազմի ավարտը և Չեզոք գոտու ստեղծումը, որն ընդգրկում էր Ալավերդու հարուստ պղնձահանքերը, 43 գյուղ՝ գերազանցապես՝ հայկական, և երկաթգծի մոտ 30 կիլոմետրանոց հատված՝ 6 կայարաններով, Չեզոք գոտին բաժանվեց Ուզունլարի, Վորոնցովկայի և Ալավերդու շրջանների: Չեզոք գոտու սահմաններն էին՝ վրացական կողմից (հյուսիսային) Սադախլոն էր, որտեղ Խրամ գետը թափվում էր Քուռ գետի մեջ, իսկ հայկական կողմից (հարավային) Քոլագիրանն էր և Ջալալօղլի-Դսեղ գիծը: Եվ այսպիսով, Չեզոք գոտին հայ-վրացական ռազմաքաղաքական բախման արդյունքներն ամփոփող համաձայնագրի համաձայն ունեցավ նաև իր որոշակի սահմանագծերը: Դա են հաստատում նաև Բ. Հարությունյանի կողմից ճշգրտված քարտեզագրական տվյալները, ըստ որոնց Բորչալուի գավառի Չեզոք գոտու հարավային սահմանը համարվում է Դսեղ-Ջալալօղլի գիծը, որը որոշվել է 1918 թ. դեկտեմբերի 25-ի համաձայնագրով: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Չեզոք գոտու սահմաններն անցնում էին հետևյալ բնագծով. հարավային սահմանը՝ Կամենկա-Ջորագետն էր, հյուսիսային՝ Վիրահայոց լեռները, արևմուտքում՝ Խոնավ լեռները, իսկ արևելքում՝ Գուգարաց [997]:

Սահմանապահ զորամասերի թիվը յուրաքանչյուր կողմից պետք է կազմեր 600 հոգի, 1919 թ. հունվարի 27-ի իրավարար վճռով կապիտան Ա. Շ. Ջ. Դուգլասը պաշտոնավարելու էր որպես դաշնակիցների ընդհանուր կոմիսար, որին խաղաղարար պարտականությունները կատարելու համար առանձնացրին 27-րդ դիվիզիայի 4-րդ հրաձգային բրիգադի

[995] Տե՛ս Hovannisian R. G., The Republic of Armenia, vol. II, p. 121-122:

[996] ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 104, թ. 46-79:

[997] Տե՛ս Հարությունյան Բ. Հ., Հայաստանի պատմության ատլաս, Գ մաս, «Մանմար» ՀՋ ՓԲԸ, Եր., 2012, էջ 22:

վաշտերից մեկը, ընդ որում Դուգլասի շտաբը տեղաբաշխվեց Ալավերդիում[998]:

ՀՀ առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին այսպես է բնութագրել վրաց-հայկական պատերազմի արդյունքները. «Լոռին յայտարարվեց չեզոք գօտի, վրաց իշխանութիւնը փոխարինուեց հայ-վրացական իշխանութիւնով, անգլիական կոմիսարի հսկողութեան տակ:

Այսպիսով՝ պատերազմի ելքը անբարեյաջող չէր մեզ համար, մեր նպատակին հասել էինք կէս չափով (մանաւանդ որ երկաթուղային հաղորդակցութիւնն էլ, գլխաւորապես շնորհիւ անգլիացիների ներկայութեան, վերացւեց մասամբ): Բայց եւ այնպէս՝ ծանր մտահոգութիւնների դուռ էր բաց անում՝ պատերազմի փաստը ինքն ըստ ինքեան»[999]:

Դաշնակիցների աջակցությամբ գեներալ Գեդևանովին հաջողվեց արձանագրության մեջ ավելացնել, որ Վրաստանի նկատմամբ «որևէ ագրեսիվ գործողություն կգնահատվի որպես թշնամական քայլ դաշնակիցների հանդեպ:

Վրաստանը ուզում էր ապահովեցնել իր գերիշխող դիրքը Անդրկովկասում,…չէր ուզում հրաժարւել ոչ միայն Ախալքալաքից ու Արդահանից, այլ նաեւ Լոռիից - դեռ Փամբակի վրայ էլ աչք ունի»[1000]:

Մնացած բոլոր հարցերը, որոնք չէին քննարկվել համաժողովում, պետք է որոշվեին երկու կողմերի կառավարությունների փոխադարձ համաձայնությամբ, իսկ անհամաձայնության դեպքում՝ Դաշնակցային հրամանատարության արբիտրաժի միջոցով[1001]: Դաշնակիցների Գերագույն խորհուրդը առաջարկեց ԱՄՆ-ին իր ծառայությունները ներկայացնել որպես միջնորդ հաշտարար և իրավարար Վրաստանի ու Հայաստանի միջև սահմանային-տարածքային վեճում, միաժամանակ Լոռու Չեզոք գոտում հաստատել ամերիկյան նահանգապետություն[1002]:

Հարկ է ևս մի կարևոր հանգամանքի մասին ընդգծել: Դատելով փաստաթղթերից և որպես հիմք ընդունելով իրական փաստերը, կարե-

---

[998] Տե՛ս Асоян Т., Территориальные проблемы Республики Армения и британская политика (1918-1920 гг.), стр. 112:

[999] Քաջազնունի Հովհ., Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, էջ 35, 96:

[1000] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 104, թ. 78-79:

[1001] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 16, թ. 73:

[1002] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 68, ց. 1, գ. 200, թ. 1-2:

լի է եզրահանգել, որ Թիֆլիս գործուղված հայկական պատվիրակությունը Մ. Հարությունյանի գլխավորությամբ այնքան էլ հստակ և կարծր դիրքորոշում չի ունեցել սահմանային-տարածքային հարցերում: Հայ-վրացական հանդիպումների ժամանակ վրացական կողմը մեղրածոր արտահայտվելով սահմանային-տարածքային վեճերի լուծման մասին, ցանկություն է հայտնում, ըստ որի իբր թե լավ կլիներ, որ Հայաստանը ելք ունենար դեպի Սև ծով՝ Ռիզիե, որ իրենք ամենևին դեմ չեն Հայաստանի ընդարձակմանը: Առանց խորքային վերլուծության ընդունելով այդ տեսակետները, ինչպես նաև կարևորելով վրացական աշխարհաքաղաքական միջանցքի առկայությունը Հայաստանի համար և ոգևորված լինելով Հայաստանի դաշնակիցների դեռևս հաստատամիտ դիրքորոշմամբ պարտված Թուրքիայի ճակատագրի վճռման խնդրում, հայկական պատվիրակությունը անզիջողական տեսակետ արտահայտելով Լոռու և Ախալքալաքի խնդրում, այդուհանդերձ կարծիք է հայտնում, թե «գուցե Ախալքալաքը դեռ կարելի լինի զիջել, այն դեպքում, երբ վիլայեթները տրվեն Հայաստանին պայմանով, որ Ախալքալաքի գավառի հայ ժողովուրդը տեղափոխվի Հայաստանի մի այլ վայր»: Այստեղից բնական է կարծել, որ նման սայթաքումներից թշնամին դեմ չէր լինի օգտվել, հատկապես պատմագիտական խեղաթյուրման տեսանկյունից, առավել ևս դա բխում է պատմության կեղծարարների պետական մակարդակ բարձրացված ռազմավարության էությունից:

Խեղաթյուրելով կոնֆերանսի նյութերի բուն բովանդակային մասի պատմափաստերը, ծագումով ադրբեջանցի, ամերիկյան պատմաքաղաքագետ Ֆիրուզ Կազեմզադեն պնդում է, թե իբր կոնֆերանսում Հայաստանի կառավարությունը իր համաձայնությունը տվեց Ախալքալաքի գավառի նկատմամբ իր պահանջատիրությունից հրաժարման մասին[1003], սակայն Ռիչարդ Հովհաննիսյանը այդ կապակցությամբ եզրահանգում է, որ ծայրաստիճան դժկամությամբ, այնուհետև, Հայաստանը համաձայնվեց Վրաստանի հետևակ երկու վաշտերի ժամանակավոր տեղակայմանը Ախալքալաքում, բայց միայն այն պայմանով, որ գավառը պետք է գտնվեր դաշնակիցների դիտարկման ներքո և հայերի մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը պետք է երաշխավոր-

[1003] Տե՛ս Kazemzadeh F., The Struggle for Transcaucasia (1917-1921), p. 18:

ված լինի[1004]: Չեզոք գոտու հյուսիսային սահմանը դարձավ այն սահմանագիծը, որում կանգնեցին վրացական զորքերը զինադադարի հասնելու պահին, այսինքն՝ 1918 թ. դեկտեմբերի 31-ին ժամը 24-ին. «…Այն ձգվում էր Լեզլի-Դաղ լեռնաշղթայով [այժմ Աչքասար Ջավախքի լեռներում] ուղիղ գծով լեռնանցքով դեպի Իրգանչայ [Իրղանչայ] գյուղը, ուղիղ գծով մինչև 798 բարձունքը, այնուհետև ուղիղ գծով դեպի Կուլու Դաղ [Կուլութաշ] բարձունքը [855.5], 676 բարձունքը ընկած ջրբաժան գիծը և Վիրահայոց լեռների գագաթագծով մինչև Սայաթլի [Սաաթի] գյուղը և դարձյալ լեռնագագաթներով մինչև Ջանդար (Ջադար) գյուղ և Աղքյորփի՝ 694 բարձունքը, ուղիղ գծով մինչև 492 Օփրեթ գյուղի բարձունքը, Խոժոռնի գյուղի մոտի Բրդաձոր գյուղի եկեղեցու ավերակները, Սադախլո գյուղը, մինչև Թանադաղ լեռ, ապա սահմանը հասել է մինչև Խաչկալա լեռը և Պալութլի-Բաշի գագաթները, Սադախլոյից դեպի հյուսիս 1554 բարձունքը, այնուհետև դեպի 2660 բարձունքը [Տանա Դաղ սարը], այնուհետև՝ աղբյուրի գրառումը, որը գտնվում է Խաունտլի-Բաշի սարի գրառումից դեպի հյուսիս. Իրգանչայ, Ջանդար, Աղքյորփի, Օփրեթ, Բրդաձոր, Սադախլո գյուղերը մնում են նշված գծից դեպի հյուսիս»[1005]: Բորչալուի գավառի Չեզոք գոտու հարավային սահմանագիծը անցկացվել էր այն գծով, որը համընկնում էր վրաց-թուրքական սահմանազատիչ գծին՝ 1918 թ. հուլիսի սկզբի վիճակով:

Այսպիսով, կարելի է ասել, որ Չեզոք գոտու սահմաններն անցնում էին հետևյալ բնագծով. հարավային սահմանագիծը Ձորագետն էր, հյուսիսային սահմանը կազմում էին Վիրահայոց լեռները, արևմուտքում Խոնավ լեռներն էին, իսկ արևելքում՝ Գուգարաց լեռները: Չեզոք գոտու հյուսիսում վրացական զորքերն զբաղեցնում էին Ախալքալաքի գավառից մինչև Օփրեթ գյուղն ընկած հատվածը: Հայկական զորքերը տեղակայվելու էին Քոլագիրան կայարանից մինչև Դսեղ հատվածը, ինչպես նաև Ջալալօղլի-Գյառգյառ հատվածում: Լոռու գոտին իր մեջ էր ներառում Ալավերդու պղնձի հանքերը, 43 գյուղ և մոտ 40 կմ երկաթգիծ վեց

[1004] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, էջ 129:

[1005] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html:

կայարաններով[1006]: Հանձնաժողովի որոշմամբ որոշվեց վրացական և հայկական կայազորների թվաքանակը: Բորչալուի գավառի Չեզոք գոտու հյուսիսային մասում տեղաբաշխվելու էին վրացական զորքերը: Սահմանապահ զորքերի ընդհանուր թվաքանակը չպետք է գերազանցեր 250 հոգուց: Աշաղի-Սերալ կայարանում վրացական զորքերը չպետք է գերազանցեին մեկ գումարտակը՝ ոչ ավելի քան 360 զինվոր, չորս հրետանասարքավորումները: Այդ գումարտակից կարելի էր առանձնացնել 60 զինվորից բաղկացած խումբ Օփրեթ-Սադախլո գյուղերի մոտ սահմանապահ ուղեկալներ (պիկետներ) դնելու համար: Ոչ ավելի քան 50 զինվորից բաղկացած սահմանապահ ջոկատները նույնպես պետք է կանգնեին Խրամ գետը Քուռի հետ միախառնվելու գծում գտնվող Ռոդնիկի գյուղում:

Հայկական զորքերը տեղաբաշխված էին այսպես. 125 զինվորից բաղկացած մեկ գումարտակը պետք է տեղաբաշխվեր Քոլագիրանում և Շնըխում [Շնող], Ջալալօղլիի շրջանում, Հերհերում և Նիկոլաևկայում պետք է գտնվեր երեք վաշտերից բաղկացած մեկ գումարտակ, որի քանակը չպետք է գերազանցեր 360 հոգին, ինչպես նաև 50 մարդուց կազմված հրետանային վաշտը՝ 4 հրետանային սարքավորումներով հանդերձ, իսկ 125 մարդուց բաղկացած մեկ գումարտակը նույնպես պետք է տեղաբաշխվեր Նովոպոկրովկայում: Իսկ ընդհանուր առմամբ, երկուսը միասին, վրացական զորքերը Բորչալուի գավառի հյուսիսային մասում և հայկական զորքերը հարավային մասում չպետք է գերազանցեին 660 հոգին: Կողմերը կարող էին իրենց հայեցողությամբ հետևակ զորամասերը փոխարինել հեծելազորով, իսկ Ախալքալաքի գավառում վրացական կայազորը չպետք է գերազանցեր երկու վաշտը, կազմված 125 զինվորից և մեկ հրետանային ջոկատից: Երկու կողմերն էլ պարտավորվում էին վերը նշված կետերը իրագործել մինչև 1919 թ. հունվարի 14-ը, ժամը 24-ը[1007]:

Վերջ ի վերջո, Լոռու Չեզոք գոտու գաղափարը իրողություն դարձավ, և բրիտանական զորքերը պայմանավորվածության համաձայն

[1006] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, էջ 130:

[1007] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html:

տեղաբաշխվեցին Լոռու տեղամասում՝ իր պղնձահանքերով և երկաթգծի հետ միասին, իսկ իր շտաբով և պահպանության ջոկատով Թիֆլիսից ժամանեց Կովկասում բրիտանական զորքերի նոր հրամանատարը՝ բրիգադային գեներալ Ջ. Տ. Ֆորեստյեր-Ուոքերը, իսկ այնուհետև՝ դաշնակիցների հիմնական ուժերը՝ մոտ 1000 հոգի: Այս կապակցությամբ Լեոն տեղին նկատում է. «Այդ Լոռու չեզոք գոտին էր, որ դառնում էր միջազգային շանտաժի եւ սպեկուլյացիայի մի օջախ՝ ծանր պայմաններ ստեղծելով տեղացի աշխատավոր ժողովրդի համար: Հայերն առաջարկում էին վեճը լուծել ազգագրական սկզբունքով, այսինքն՝ ազգաբնակչության ընդհանուր ձայնատվությամբ, դրեցին նաեւ Ախալքալաքի գավառի հարցը: Բայց դաշնակիցների ներկայացուցիչները մերժեցին այդ առաջարկը եւ պաշտպանեցին վրացական ծրագիրը՝ չեզոք գոտիների եւ խառը վարչությունների մասին»[1008]: Իսկ արդեն 1919 թ. հունվարի 27-ին Լոռու Չեզոք գոտին բրիտանական զինվորական-քաղաքական ղեկավարության կողմից բաժանվեց երեք շրջանի՝ Ուզունլարի, Վորոնցովկայի և Ալավերդու, որոնցից յուրաքանչյուրի գլուխ դրվեց այսպես կոչված ռեզիդենտ-կոմիսար՝ տեղական բնակիչների թվից: Բոլոր կոմիսարները, ըստ բրիտանական հրահանգավորման, պետք է ենթարկվեին Անտանտի, այսպես անվանված Գլխավոր կոմիսարին [այդպես էր անվանվում Չեզոք գոտու բրիտանական նահանգապետը], և այդ պաշտոնում նշանակվեց կապիտան Ա. Ս. Գ. Դուգլասը[1009]: Որպես հետգրություն, պետք է ավելացնել, որ 1919 թ. հունվարի 17-ի հաշտության պայմանագիրը կրում էր նախնական բնույթ: Դրանում վերապահում էր արված, որ Հայաստանի և Վրաստանի միջև բախման վերջնական հանգուցալուծումը պետք է դրվի Փարիզի խաղաղության վեհաժովի քննարկմանը, որում ենթադրվում էր այլ հարցերի հետ մեկտեղ որոշել երկու պետությունների միջև ապագա սահմանագիծը[1010]:

Այդուհանդերձ, հարկ է ավելացնել ասվածին, որ հայ-վրացական ռազմական առճակատման լուծման արդյունքները նաև վկայում են, որ բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչության ջանքերը

[1008] Տե՛ս Լեո, Անցյալից, Եր., «Շեմ» հրատ., 2009, էջ 384:

[1009] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, էջ 130:

[1010] Տե՛ս Кадишев А. Б., Интервенция и гражданская война в Закавказье, стр. 173:

նպատակամղվեցին հօգուտ Վրաստանի բոլոր հարցերի հանգուցալուծման: Ինչպես դիպուկ նկատում է Բ. Բորյանը, «դաշնակիցները հենվում էին հին հռոմեական divide et impera- (բաժանիր, որ տիրես) հին քաղաքական ավանդույթի վրա. «նրանք երկպառակություն էին սերմանում հանրապետությունների միջև և նրանց մեկը մյուսի դեմ էին գրգռում, ստեղծում էին ազգամիջյան գժտություն, հանդես էին գալիս որպես «խաղաղարներ» և հայկական «էթնիկական հողերը չեզոք գոտու անվան տակ նվիրում էին կամ մեկին, կամ մյուսին»[1011]: Այդ կապակցությամբ սկզբունքորեն է արտահայտվել Զ. Ավալովը. «հայերը վերադարձան իրենց ելակետային դիրքին. շատ թեթևամտորեն ստեղծվում էր և շատ դյուրահավատորեն էր ընկայվում այն պատրանքը, որ իբր թե մեծ տերությունները, կամ ինչպես արտահայտվել է Գեգեչկորին՝ «Եվրոպայի դեմոկրատիան» կշտապեն վճռել Բորչալուի և Ախալքալաքի գավառների մասին հարցը: Ընդհանրապես, այդ հարցը 1919 թ. ոչ մի շանս չուներ շահագրգռելու որևիցե մեկին Եվրոպայում, և հրաժարվելով միմյանց միջև ուղղակի բանակցություններից՝ այնքան անհրաժեշտ այդ և նմանատիպ հարցերի լուծման համար, անդրկովկասյան հանրապետությունները անհոգաբար և անշրջահայացաբար նախապապատրաստում էին իրենց համար նոր դժվարություններ և դժբախտություններ»[1012]:

Պատերազմն ավարտվեց և կողմերը քիչ թե շատ արտաքուստ բարեկամական լիցքեր դրսևորեցին: 1919 թ. մարտին Վրաստանի Հանրապետության կառավարությունը վերացրեց ռազմական դրությունը, որը մտցված էր 1918 թ. դեկտեմբերից և թույլատրեց պատերազմական գործողությունների հետևանքով փախած Շուլավերի ու Բոլնիս-Խաչենի հայ բնակիչներին ետ վերադառնալ իրենց տները[1013]: Դա պայմանավորված էր Վրաստանի դիրքորոշումից և հոգեբանական տրամադրվածությունից՝ կապված Թիֆլիսի նահանգի տարբեր մասերում մահմեդական խռովությունները ճնշելու գործում վրացական բանակի հաջողու-

[1011] Տե՛ս Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. II, М.-Л., 1929, стр. 4:

[1012] Տե՛ս Авалов З. Д., Независимость Грузии в международной политике. 1918-1921 гг., стр. 168:

[1013] Տե՛ս «Հայրենիք», օրաթերթ (Բոստոն, 21 մայիսի, 1919 թ., էջ 2, «Борьба», Тифлис, 15 апреля, 1919, стр. 3:

թյուններից: Կարծես թե սառույցը հալվեց, և հարաբերությունները այլևս առաջվա նման լարված չմնացին, սկսեցին կարգավորվել:

Անշուշտ, հայերը միայն ստեղծված իրադրության պայմանների թելադրանքից ելնելով էր, որ ժամանակավորապես համակերպվում են հայ-վրացական պատերազմից հետո ստեղծված իրավիճակի հետ, որն ամենևին էլ բարենպաստ չէր Հայաստանի Հանրապետության համար: Հետաքրքիր է նշել, որ հայերն այդ մտքի հետ այդպես էլ հաշտվել չկարողացան: Այդ կապակցությամբ ուշագրավ է արձանագրել, որ 1919 թ. հոկտեմբերի վիճակով, ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության հատուկ պատվիրակության նախագահ Հովհաննես Քաջազնունու կողմից ԱՄՆ-ի սենատի Արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Լոգին ներկայացված հուշագրում 67 հազար քառակուսի կիլոմետր ընդգրկող Հայաստանի Հանրապետության տարածքի մեջ ներառնված էին համարվում նաև Թիֆլիսի նահանգի հարավային մասը, ներառյալ Ախալքալաքի ողջ գավառը և Բորչալուի գավառի հարավային մասը[1014], չնայած այն հանգամանքին, որ արդեն ավարտվել էր վրաց-հայկական պատերազմը (1918 թ. դեկտեմբերի 31), և առաջացել էր չարաբաստիկ «Չեզոք գոտին» հայկական հողի սրտում (1919 թ. հունվար-փետրվար), և նոր ուղիներ էին որոնվում հարցի վերջնական լուծման և ՀՀ տարածքում այն մեկընդմիշտ ամրագրելու համար: Ռազմական գործողությունները ավարտվել էին, տարածքային հիմնախնդիրները մնացել, որոնք կազմում են նաև մեր օրերի աշխարհաքաղաքական իրավիճակի ռեալությունը: Այդ միտքը ցայտուն է արտահայտել Հայաստանի Առաջին Հանրապետության երկրորդ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը. «Ախալքալաքի վերաբերմամբ, որու բնակչութիւնը մօտ 80.000 զուտ հայկական էր, ինչպէս նաեւ Լոռիի գաւառի վերաբերմամբ, որ իր 60.000 բնակչութեամբ նոյնպես զուտ հայկական էր, մեր դիրքը շատ պարզ էր: Մենք չէինք կրնար հաշտուիլ Ախալքալաքի կորուստին հետ. թէեւ վրացիները դեռ 1918 թ. դեկտեմբերին գրաւած էին զայն եւ մինչև վերջ գրաւած պահերին: Իսկ Լոռին պատերազմի հետեւանքով վերջ ի վերջոյ անցաւ Հայաստանի ձեռքը»[1015]:

[1014] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 450, ց. 2, գ. 8, թ. 7 (անգլ.):

[1015] Տե՛ս Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 169:

Շուտով Կարսի մարզում և Արդահանի տարածքում ստեղծված, այսպես կոչված, «Կովկասի Հարավարևմտյան հանրապետության» կողմից Ախալցխայում և Ախալքալաքում Սերվեր բեկ Աթաբեկովի կողմից բարձրացված ապստամբության հետ կապված վրացիները շուրջ 5 հազար զորք են մտցնում տարածք, որն առաջ է բերում հայկական կողմի մոտ ոչ ադեկվատ ռեակցիա[1016]: Առիթն օգտագործելով, հայկական կողմը բողոքարկ է ներկայացնում Երևանում բրիտանական ներկայացուցիչ գեներալ Կ. Թեմպերլեյին, որ վրացական զորքերը մտել են Ախալքալաք և ուղղվել են դեպի Ալեքսանդրապոլի սահմանները: Հայկական կողմը պատճառաբանում էր, որ ըստ ժամանակավոր պայմանավորվածության, կողմերը պետք է ունենային փոքրաքանակ ջոկատներ նշված վայրերում, և որ սահմանների համար վտանգը այդ շրջանում մեծ քանակությամբ զինված ուժերի ներկայությունից է, որը մտցված է հունվարյան տրակտատի մեջ[1017]: Այնուհետև ավելացվում էր, որ գնդապետ Ռ. Ն. Ստյուարտը տվել է երաշխիքներ, որ դաշնակիցները ամեն մի հարձակում համարելու են ante bellem, որ Ախալքալաքում գտնվելու է բրիտանական զորաջոկատ: Հայկական կողմը հիշեցնում էր, որ պարզվի, թե Փարիզի խաղաղության վեհաժողովի արդյունքների մասին արդյո՞ք տեղեկացված են Արևմտյան Անդրկովկասի մահմեդականները, որի մասին նորից Անդրկովկասում բրիտանական զինված ուժերի հրամանատար Նորին Գերազանցության գեներալ Ջ. Ֆորեստյեր-Ուոքերը տեղեկացրել է ՀՀ վարչապետին 1919 թ. հունվարի 19-ի նամակում. «Վիճելի տարածքին ուժով տիրանալը կունենա լուրջ հետևանքներ հարձակվողի համար: Բոլոր հարցերը պետք է լուծվեն Խաղաղության կոնֆերանսում»[1018]:

Վրացական կողմը իր նման քայլը, այսինքն զորաբանակի քանակի (իրականում վրացական կողմը իրավունք ուներ պահել 225 -ից ոչ ավել զինվոր) ավելացումը բացատրում էր թուրքական վտանգով, որը կարծում ենք, վրացիների կողմից կամ թուրքերի հետ ներքին պայմանա-

[1016] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html: Квинитадзе Г., Мои воспоминания в годы независимости Грузии…, стр. 89:

[1017] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 96, թ. 115-116.

[1018] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html:

վորվածության արդյունք էր, կա՛մ էլ քաղաքական սադրանք, կա՛մ էլ թողտվության արդյունք, ինչը վրացական կողմը արդարացնում էր, պատճառաբանելով, թե քանի որ երրորդ ուժի կողմից վտանգ է առաջացել, որ հայ-վրացական պայմանագիրը չի կարող տարածվել ուրիշների վրա, հետևաբար վրացական կառավարությունը չի խախտել այն, այլ պաշտպանել է հայ-վրացական կոնֆերանսի որոշումները:

Վրաց-հայկական պատերազմից հետո Հայաստանի քաղաքական-ռազմական շրջանները որոշակի հույսեր փայփայելով դաշնակից պետությունների հետ, սկսեցին փորձեր կատարել հենվելու այդ ուժի վրա: 1919 թ. փետրվարի 7-ին ՀՀ կառավարությունը իր մոտ խորհրդակցության է հրավիրում Կովկասում բրիտանական զինված ուժերի հրամանատար Ֆորեստյեր-Ուոքերին: Երևանում հրավիրված այդ խորհրդակցության ժամանակ, որին ներկա էին Զինվորական նախարար, գեներալ Հ. Հախվերդյանը, Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը, Լուսավորության նախարար Մելիք-Կարագյոզյանը և ուրիշներ, Հովհ. Քաջազնունին հայտարարեց, որ «…հայ ժողովուրդը հիասթափված է դաշնակիցների ունեցած վերաբերմունքով իր նկատմամբ, որ նա սպասում էր անհապաղ օգնություն Դաշնակից տերությունների հաղթանակից հետո, այն ժամանակ, երբ Կովկասում անգլիական զորքերի մեկամսյա մնալու ընթացքում, իրականում, նրա համար ոչինչ չի արվել»[1019]:

Հայ քաղաքական-կուսակցական առաջնորդների վրացի ընդդիմախոսները պնդում էին, որ նրանք դժվարությամբ են ընկալել այն գաղափարը, որ բրիտանացիները Կովկաս են եկել ոչ թե իրենց օգնելու, այլ սեփական աշխարհաքաղաքական շահերը ներկայացնելու համար, և հենց այդ տեսանկյունից էլ դիտարկվել են թե՛ Ադրբեջանի, թե՛ Վրաստանի և թե՛ Հայաստանի շահերը[1020]: Այս կապակցությամբ դիպուկ է նկատել Հովհ. Քաջազնունին. «Բնական էր յուսալ, թէ մենք պիտի վայելենք անգլիացիների առանձին բարեացակամութիւնը ու որոշակի տարբերւենք՝ վրացիներից, որ այնքան ֆլիրտ էին արել գերմանների հետ ու մանաւանդ ազրբեյջանցիներից, որոնք պարզապես անցել էին թուրքերի կողմը:

[1019] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 65, ց. 1, գ. 12, թ. 132:

[1020] Տե՛ս Гамбашидзе Г. Л., Агрессивная политика Англии и США в отношении Грузии и Закавказья (1919), Тбилиси, 1964, стр. 81:

Դարձեալ սխալւած էինք: Անգլիացիները չարին այդ տարբերութիւնը: Կարծես չը գիտէին կամ մոռացել էին, թէ մենք իրենց դաշնակիցներն ենք, իսկ վրացիների ու ազրբեյջանցիների հանդէպ ցոյց տւին այնպիսի մեծահոգութիւն, որ միանգամայն անսպասելի, մասամբ իսկ անհասկանալի էր մեզ համար»[1021]:

Հայաստանի և Վրաստանի վերաբերմունքը Փարիզում ընթացող կոնֆերանսի նկատմամբ և հույսերը վիճարկելի հայ-վրացական հարցերի լուծման նկատմամբ տարբեր էին: Այսպես, դեռ 1918 թ. նոյեմբերի 21-ին Վրաստանի կառավարությունում քննարկվեց վրացական պատվիրակության դիրքորոշման մասին հարցը Փարիզի խաղաղության վեհաժողովում, և ինչպես նշում է վրացի հայտնի պատմակեղծարար, հայատյաց Գ. Մարխուլիան, իբր թե դրա գաղտնի մասում նշվել է. «Մոտիկությունը հայերի հետ անհրաժեշտ է: Եթե մենք, երկու քրիստոնեական ժողովուրդներ, չենք կարող պայմանավորվածության գալ, ապա դա կասկածի տակ է դնում Վրաստանի ընդունակությունը ինքնուրույն գոյություն ունենալու և այդ հանգամանքը կստեղծի վատ տրամադրություն Եվրոպայում: Մենք պետք է նպատակ դնենք. Միավորել Հայաստանը՝ թուրքական և ռուսական ու ձգտել, որպեսզի Հայաստանի քաղաքական կենտրոնը փոխադրվի Թուրքահայաստան: Դրանով մենք հայերին կօգնենք ելք գտնել դեպի Սև ծով. Եթե գործն այդպես գնա, ապա Հայաստանը նեղը չի գցի Վրաստանին և դրանով իսկ հեշտությամբ կլուծվի սրված հայ-վրացական հարաբերությունների հարցը»[1022]: Այսպիսով, վերը բերված փաստաթղթից երևում է, որ Փարիզում վրացական պատգամավորությունը կառավարության որոշման համաձայն պետք է աջակցեր Հայաստանի ղեկավարներին իրենց պահանջատիրությունում, որպեսզի նրանք էլ իրենց հերթին հրաժարվեին հայ-վրացական տարածքային վեճերի առարկա տարածքներից: Սակայն այդ-

[1021] Քաջազնունի Հովի., Դաշնակցությունը անելիք չունի այլ ևս, էջ 33:

[1022] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. htmlA. // Ментешашвили А., «Грузинская Демократическая Республика и Парижская мирная конференция». В журн. «Мацне», серия истории. Тб., 1992, № 2, стр. 162: Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах (с сокращениями), Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007, стр. 63: Տե՛ս նաև http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

պես չեղավ, քանի որ սրընթաց փոխվող իրավիճակը և աշխարհաքաղաքական անակնկալ գահավիժումները երկու կողմերին էլ պարտադրեցին այլ լուծումներ և դիրքորոշումներ:

1919 թ. փետրվարի 21-ին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Եվգենի Գեգեչկորին մի դիմումագիր ուղարկեց Հայաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի և Դաղստանի Լեռնականների Համադաշնության հանրապետություններին անդրկովկասյան ընդհանուր համաժողովի հրավիրման առաջարկով՝ քննարկելու համար բեռնափոխադրումների և տրանզիտի, առևտրի և ֆինանսների ու այլ կարևոր հարցեր: Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լևոն Եվանգուլյանի միջոցով հայտնվեց Հայաստանի պատրաստակամությունը մասնակցելու խորհրդաժողովի աշխատանքներին, պայմանով, որ սահմանային հարցերը լուծվեն երկկողմ, այլ ոչ թե քառակողմ հանդիպման ժամանակ, անհանգստանալով նրանց Հայաստանի դեմ համատեղ «ալյանսի» հնարավորությունից, չնայած Վրաստանը Ադրբեջանի հետ ուներ որոշ տարակարծություններ, այդ թվում սահմանային-տարածքային հարցերի բնագավառում, իսկ գլխավորապես Հարավարևմտյան Կովկասյան Հանրապետության ժամանակավոր կառավարության գործելակերպի հետ կապված, որը 1919 թ. ապրիլի կեսերին տապալվեց և Կարսը գրավվեց հայերի կողմից, որի հետևանքով Ադրբեջանն այլևս չհամառեց, որ Կարսի պատվիրակները ներկայացված լինեն համաժողովում:

Ախալքալաքի գավառում ծագած բախումնալից միջադեպը պատճառ հանդիսացավ Թիֆլիսում 1919 թ. փետրվարի 28-ին տեղ գտած բանակցությունների երկրորդ փուլի բացման համար: Կոնֆերանսի գլխավոր թեման սահմանային-տարածքային և Ախալքալաքում ստեղծված ռազմաքաղաքական դրության հարցերն էին, սակայն երկու երկրների լիազոր ներկայացուցիչներին չհաջողվեց սահմանների վերաբերյալ համաձայնության գալ, այդ իսկ պատճառով էլ կոնֆերանսի աշխատանքներն ուղղորդվեցին դեպի տնտեսական հարցերի լուծումը, և այն 1919 թ. մարտի 3-ին ավարտվեց: Արդյունքում, կողմերը որոշեցին.

1. Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչները անհրաժեշտ են համարում պաշտոնապես հաստատել երկու հանրապետությունների անկախության ճանաչումը,

2. Սկզբունքով ընդունվում է երկու հանրապետությունների երկաթուղային ճանապարհներով ապրանքների տրանզիտային փոխադրումը: Համապատասխան պայմանագիրը պետք է մշակվի անհապաղ երկու հանրապետությունների համապատասխան գերատեսչությունների կողմից,

3. Չեղյալ է հայտարարվում անցագրերի տրման համակարգը Վրաստանի և Հայաստանի միջև տրանզիտի («պրօեզդների») համար, բացառություն են կազմում փախստականները, որոնց անցագրի առումով հանրապետությունների կառավարությունների կողմից, կապված պարենային դժվարությունների հետ, հնարավոր է համարվում, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել սահմանափակիչ բնույթի միջոցներ,

4. Վերականգնվում է երկու հանրապետություններում դիվանագիտական միսիաների գործունեությունը,

5. Վրացական հանրապետության հաստատություններից պետք է անխոչընդոտ դրվեն Հայաստանի կառավարության տրամադրության տակ Հայաստանի տարածքին վերաբերող գործերը, փաստաթղթերը և դրան վերաբերող նյութերը: Իսկ վիճելի տարածքներին վերաբերող նյութերը ենթակա են հանձնման՝ Խաղաղության կոնֆերանսում տարածքային վեճերի պարզաբանման համար,

6. Թիֆլիսում գտնվող Հայաստանին պատկանող պահեստները ողջ ունեցվածքով հանդերձ անխոչընդոտ, բացառությամբ հրետանային սպառազինության, պետք է հանձնվեն Հայաստանին, որի մասին պետք է հետևի հատուկ համաձայնություն:

Այսպիսով, կոնֆերանսը վիճարկելի սահմանային-տարածքային հարցերը չլուծեց, դրանք հանձնվեցին Փարիզի խաղաղության վեհաժողովի արբիտրաժին, իսկ տնտեսական բնույթի հարցերը հանձնվեցին Լևոն Եվանգուլյանին, որը լայն լիազորություններ ստացավ այդ թվում սահմանային-տարածքային բնույթի հարցերի վերաբերյալ գործառույթները վարելու:

Վրաստանին դե-յուրե ճանաչեցին 18 երկրներ. Թուրքիան 1918 թ. հունիսի 3-ին, իսկ այնուհետև՝ քեմալական Թուրքիան 1919 թ. հունվարի 17-ին: Վրաստանը ճանաչած երկրների մեջ Հայաստանը չկար, այդ ուղղությամբ առաջին քայլը կատարել է Վրաստանը: Նույն օրը, 1919 թ. մարտի 8-ին Ե. Պ. Գեգեչկորուն ուղարկված իր նոտայում Ս.

Տիգրանյանը հաստատագրեց Վրաստանի անկախ և ինքնուրույն երկիր ճանաչելու փաստը[1023]:

Վրաստանի և Հայաստանի իշխանությունների փոխադարձ համաձայնությամբ, Վրաստանում Հայոց Ազգային խորհրդի անդամ Լևոն Եվանգուլյանը 1919 թ. մարտին զբաղեցրեց Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի պաշտոնը, որը հայտնի էր դիվանագիտական նրբամիտ վերաբերմունքով ու բարեկրթությամբ, և Վրաստանում որոշակի հեղինակություն էր վարում: Դա կապված էր այն բանի հետ, որ ՀՀ ղեկավարությանը ուղղված նոտայում Վրաստանի կառավարությունը հստակ ընդգծեց, որ «Վրաստանի կառավարությունը չպետք է այսուհետ հանդուրժի Ջամալյանի և նրա նմանների պրովոկատորական գործունեությունը և լկտիությունը…Ջամալյանը ոչ միայն չի նպաստում ծագած կոնֆլիկտների խաղաղ լուծմանը, այլև դրանց տալիս է սուր բնույթ, այդ իսկ պատճառով նա հարմար չի Հայաստանի ներկայացուցչի դերում Վրաստանում»[1024]: Հայաստանը, իհարկե, այս հարցում ուներ իր խիստ առարկումները, սակայն առկա ռազմավարությունը պահանջեց այդ խնդրում մանևրել և շտկումներ կատարել իր ռազմաքաղաքական ու դիվանագիտական գործողություններում:

1919 թ. մարտի վերջին - ապրիլի սկզբին Կովկասում անգլիական զորքերի շտաբի քաղաքական բյուրոյի դիրեկտոր, բրիգադային գեներալ Վ. Բիչը առաջարկեց երեք անդրկովկասյան հանրապետություններին ուղարկել իրենց լիազոր ներկայացուցիչներին մասնակցելու անդրկովկասյան հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև տարածքային ժամանակավոր սահմանազատման գծով կոմիտեի աշխատանքներին, որի միջոցով (կոմիտեի կազմում ընդգրկվելու էին երկուական հոգի ամեն մի հանրապետությունից՝ ընդամենը վեց անձից բաղկացած՝ գեներալ Վ. Թոմսոնի գլխավորությամբ), որի մասին նաև տեղեկանում ենք Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության հեռագրից, որը հայտնում էր Կովկասում Բրիտանա-

[1023] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 119, թ. 11:

[1024] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html:

կան գլխավոր նստավայրի համապատասխան բաժնից ստացված կարևոր հաղորդագրության մասին[1025]:

Դրանք ընթանում էին նոր հրամանատար Վ. Թոմսոնի գլխավորությամբ, որը Բաքվից Թիֆլիս էր տեղափոխվել, ընդ որում հանրապետությունների միջև տարաձայնությունների պարագայում, Վ. Թոմսոնի ձայնը վճռական նշանակություն ուներ, և ընդունված վճիռները կամ որոշումները՝ պետք է ուժի մեջ մնային մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովը՝ որպես ընդամենը ժամանակավոր բնույթի համաձայնություններ և չպետք է ազդեին Փարիզի վեհաժողովի կողմից ընդունվելիք որոշումների վրա, և տվյալ պարագայում Վրաստանը համաձայնվել էր արբիտրաժը ընդունել, միաժամանակ, Թիֆլիսը համարելով որպես այդ կոմիտեի նիստերի անցկացման և գործունեության կազմակերպման նստավայր, հարմարեցնելով հանրապետություններից յուրաքանչյուրի հետ: Վրաստանի և Հայաստանի կառավարությունները ցանկանալով առանց արտաքին միջամտության լուծել իրենց մեջ առկա վիճարկելի հարցերը, վերացնել կամ էապես թուլացնել ռազմաքաղաքական լարվածությունը հայ-վրացական հարաբերություններում՝ բանակցում էին միմյանց հետ: Հենց այդ պահին էլ գեներալ Վ. Թոմսոնը, չսպասելով կոմիտեի հրավիրմանը, ապրիլի 11-ին իր մոտ հրավիրեց ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լևոն Եվանգուլյանին և գեներալ-մայոր Գ. Ղորղանյանին, համառությամբ պնդելով առանց հապաղման համաձայնվել Վրաստանի և Հայաստանի միջև սահմանը հաստատել՝ վերացնելով Չեզոք գոտին: Միաժամանակ նշելով քարտեզի վրա քաղաքական նոր սահմանները, նա նպատակահարմար գտավ Վրաստանին տալ բոլոր վիճարկելի տարածքները, իսկ Հայաստանին՝ մի փոքրիկ հողակտոր Բորչալուի գավառի հարավային մասում: Սակայն Վ. Թոմսոնի պլանը չի-րականացավ, այն հակազդեցության հանդիպեց դաշնակիցների մյուս ներկայացուցիչների կողմից, որոնք չիմանալով Վ. Թոմսոնի այդ քայլի մասին, պնդեցին գլխավոր հրամանատարի կողմից դրանց չեղյալ հայտարարման վրա[1026]: Այս հանգամանքը հայ քաղաքական և ռազմական շրջաններում որոշակի հիասթափություն առաջ բերեց ան-

[1025] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 96, թ. 106:

[1026] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 144:

գլիացիների նկատմամբ, և չնայած այդ տհաճ հանգամանքին, հայկական կողմը զսպվածություն դրսևորեց: Այդ նույն օրը՝ 1919 թ. ապրիլի 11-ին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանը հաղորդում է ՀՀ Արտաքին Գործերի նախարարին. «Այսօր գեներալ Թոմսոնը հրավիրեց գեներալ Գ. Ղորղանյանին (Ղորղանովին) և ինձ, խնդրեց, Չեզոք գոտուց զորքերի շտապ դուրսբերման անհրաժեշտության հետ կապված, անհապաղ նշել հայերի ծայրակետային, սահմանային պահանջների մասին Բորչալուի և Ախալքալաքի գավառներում: Իմ դիտողությանը, որ, Խատիսովը առաջարկեր վրացական կառավարությանը հնարավոր համաձայնության երկու տարբերակներ, ինչպես պարզվում է, հայտնի է գեներալ Թոմսոնին. Առաջինը՝ Բորչալուի գավառը մինչև Խրամ՝ Հայաստանին, ողջ Ախալքալաքը՝ Վրաստանին, երկրորդ [տարբերակով]՝ երկու գավառներն էլ բաժանել երկու մասի: Գեներալ Թոմսոնը, երկար մտորումներից հետո, պատասխանեց, որ ինքը խնդրում է Հայաստանի կառավարությանը լիազորություններ տալ իր ներկայացուցչին վերջնականապես լուծել հարցը, քանզի այդպիսի լիազորությունները ինքն ունի գեներալ Ջ. Միլնից»[1027]:

Ալ. Խատիսյանի առաջարկի հետ կապված[1028], Վ. Թոմսոնի կողմից կարծիք արտահայտվեց, որ սահմանը Խրամի վրա անկասելիորեն սպառնում է Վրաստանին և Թիֆլիսին, և ինքը ենթադրում է առաջարկել ողջ Ախալքալաքի գավառը Վրաստանին տալ, իսկ Բորչալուի սահմանը հաստատել Քուռ-Ջալալօղլի-Շամլուղ գծով, ինչի կապակցությամբ Եվգ. Գեգեչկորին ոչ միանշանակ հայտարարեց, որ Խատիսյանի առաջարկն իրենց համար ավելի պակաս ձեռնտու է, քան Թոմսոնինը, պնդելով որ ճշգրտումներ կատարվեն Վ. Թոմսոնի գծին համաձայն: Հետագայում, այդ նախագծի մեջ Թոմսոնի կողմից մտցվեցին այլ փոփոխություններ, որի արդյունքում, Բորչալուի գավառում սահմանը անցկացվում էր Լալվար սարից մինչև Սանահին, Սանահինը թողնելով Հա-

[1027] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 66, ց. 1, գ. 148, թ. 50: ՀԱԱ, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 114, թ. 60: ՀԱԱ, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 101, թ. 23, 47, 59:

[1028] Այդ ժամանակ արդեն որպես ՀՀ Ներքին Գործերի նախարար Ալ. Խատիսյանը 1919 թ. ապրիլի 4-ից 11-ը գործուղվեց Թիֆլիս՝ Կովկասում բրիտանական զորքերի գլխավոր հրամանատար Վ. Թոմսոնի հետ տեսակցելու համար. – Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 199, ց. 1, գ. 12, թ. 153:

յաստանին, իսկ Ալավերդու շրջանն անցնում էր Վրաստանին: Ըստ Անդրկովկասում բրիտանական զորքերի գերագույն հրամանատար Վ. Թոմսոնի՝ 1919 թ. ապրիլի 14-ին Վրաստանի կառավարության նախագահին և Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին, հայտնվում է իր կողմից ժամանակավոր սահմանների որոշման և կողմերի միջև վիճարկելի գոտում վարչակարգի նշանակման մասին.

1) Ախալքալաքի գավառը պետք է լինի Վրաստանի ղեկավարման ներքո,

2) Արդահանի գավառի մի մասը, որը գտնվում է Քուռ գետի ձախ մասում, ներառյալ և Արդահան քաղաքը, նույնպես պետք է լինի Վրաստանի ենթակայության տակ,

3) Բորչալուի գավառի մի մասը, սահմանազատիչ գծից դեպի հյուսիս, ներառյալ Ալավերդի գյուղը և կայարանը, պետք է լինի Վրաստանի ղեկավարման տակ,

4) Բորչալուի գավառի մի մասը, որը գտնվում է սահմանաբաժան գծից հարավ, ներառյալ Սանահին կայարանը, կլինի Հայաստանի ղեկավարման տակ,

5) Կարսի և Կաղզվանի մարզերը պետք է գտնվեն Հայաստանի ղեկավարման ներքո,

6) Նախիջևանի գավառը, սահմանափակված հյուսիսային և հարավային սահմանաբաժան գծերով, մինչև Ջուլֆա կայարանը, պետք է լինի Հայաստանի ղեկավարման ներքո,

7) Օլթիի օկրուգը և Արդահանի մի մասը, որ գտնվում են Քուռ գետ աջ ափին, պետք է ենթարկվեն Բաթումիի Բրիտանական զինվորական նահանգապետին,

8) Սահմանները, նշված են ներկայացվող քարտեզի վրա: Այդ մարզերի ղեկավարման անցման ժամկետ սահմանված է մայիսի 1-ը,

9) Անհրաժեշտ է հիշել, որ որոշումները կրում են ժամանակավոր բնույթ և որ դրանք իրավակարգի հաստատման շահերից են բխում: Կառավարումը պետք է կրի բացառապես քաղաքացիական բնույթ, առանց որևիցե ռազմական ուժերի օգտագործման կամ զորքերի կիրառման[1029]: Արձանագրվում էր, որ այդ մարզերի կառավարումն ուժի մեջ է մտնում

[1029] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 191, թ. 311: ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 183, թ. 36-37:

մայիսի 1-ից, որ ընդունված որոշումը ժամանակավոր բնույթ է կրում, նաև նշելով, որ կառավարումը կրելու է բացառապես քաղաքացիական բնույթ, նշված մարզերի վարչակարգերը պետք է իրավունք ունենան պահել միայն սահմանափակ քանակով զորաջոկատներ՝ անհրաժեշտ կարգ ու կանոնի պահպանության համար: Նշվում էր նաև տեղական խորհուրդների կազմակերպման մասին՝ նահանգապետների գլխավորությամբ՝ երկրամասի բոլոր քաղաքական կուսակցությունների և ազգությունների մասնակցությամբ: Ընդունված ընդհանուր որոշումը կիրառելի էր մինչև Փարիզի վեհաժողովի կողմից վերջնական որոշումի կայացումը[1030]:

Գեներալ Վ. Թոմսոնի կողմից առաջարկված փոփոխության մասին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լևոն Եվանգուլյանը 1919 թ. ապրիլի 12-ին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարարին. «լսելով մեր կառավարության համար այդ նոր առաջարկի անընդունելիության մասին Կորգանովի (գեներալ Գ. Ղորղանյան -Վ. Վ.) և իմ հայտարարությանը, Թոմսոնը երկար համոզեց համաձայնություն արտահայտելու անհրաժեշտության մասին, հայտարարելով, որ դա չի կարող ազդեցություն ունենալ Փարիզի կոնֆերանսի վրա»[1031]: Եվանգուլյանը նաև հայտնում էր, որ նման լուծման համար պատասխանատվություն են կրում Թոմսոնի հետ միասին նաև Շարդինյին և Սմիթը, խնդրի լուծումը շաղկապելով Փարիզի վեհաժողովի որոշումների հետ, միաժամանակ գտնելով, որ մինչև Թուրքահայաստանի խնդրի հանգուցալուծումը անթույլատրելի է զրկվել Ախալքալաքից և Բորչալուի լավագույն մասից[1032]:

Այսպիսով, Հայաստանի կառավարությունը տագնապելով բրիտանական երկվությունից և ամենևին էլ ոչ հստակ հայամետ դիրքորոշումից, նրանց կողմից դրսևորվող հաճախակի կատարվող քաղաքական նահանջներից, այդուհանդերձ չէր ձգտում կորցնել քաղաքական համագործակցության հնարավոր եզրերը Անդրկովկասում բրիտանական

[1030] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 62, թ. 70:

[1031] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 66, ց. 1, գ. 176, թ. 51: ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 99, թ. 52-53:

[1032] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 99, թ. 51-52: ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 114 , թ. 127:

բարձրագույն ռազմաքաղաքական ներկայացուցչության հետ, այդուհանդերձ, չքողարկված երկյուղներ և անհանգստություն էր ցուցաբերում բրիտանական զորքերի Անդրկովկասից, այդ թվում և Չեզոք գոտուց դուրսբերման հանգամանքի հետ, անգլիական ռազմական հրամանատարության հետ մշակում էր Վրաստանի նկատմամբ տարածքային պահանջների «ծայրահեղ սահմանազծային» տարբերակներ: Փորձելով մինչև անգլիացիների հեռանալը որոշ խնդիրներ հանգուցալուծել, դաշնակցականները գնացին «զիջումների»՝ պատրաստակամ լինելով Ախալքալաքը տալ Վրաստանին, եթե Չեզոք գոտին մտներ Հայաստանի Հանրապետության կազմի մեջ, որը գործնական առումով անգլիացիների կողմից ուշադրության չարժանացավ, և դրան ի հակառակ, վերջիններս՝ անգլիացիները առաջարկում էին Չեզոք գոտին բաժանել մասերի, և դրանով իսկ վերացնել տարածքային խնդիրները երկու հանրապետությունների միջև: Հարցին հապաղեց վերջնական պատասխան տալ նաև ՀՀ կառավարությունը, որը մնաց անորոշության մեջ:

Վրաստանն էլ, բնականաբար, իր առարկություններն ունեցավ: Անգլիացիների ներկայությամբ հարցերն անհաջող լուծումներ ստացան, կամ ավելի ճիշտ՝ փակուղի մտան: Ստեղծված վիճակում 1919 թ. ապրիլի 25-ին Թիֆլիսում պաշտոնապես հրավիրվեց համաանդրկովկասյան կոնֆերանս[1033], որտեղ Ադրբեջանը ներկայացնում էին Մ. Ջաֆարովը, Ֆ. Խան-Խոյսկին, Խալիլ բեկ Խաս-Մամեդովը, Հայաստանի Հանրապետությունը՝ Ստ. Մամիկոնյանը, Սիր. Տիգրանյանը, Ս. Հարությունյանը, Վրաստանը՝ Եվգ. Գեգեչկորին, Ն. Ռամիշվիլին, Կ. Կանդելակին, և վերջապես Լեռնականների Հանրապետությունը՝ Ալի խան Կանտեմիրը, Պանգուրաևը, Բուգաևը[1034]:

Վեհաժողովում քննարկվեցին ամենաբազմազան բնույթի հարցեր՝ այդ թվում և՛ տնտեսական, և՛ պետական, և՛ գաղթականների և շատ այլ հարցեր, որոնց քննարկումն ընթացավ լարված մթնոլորտում, անհաշտելի տարաձայնությունների պայմաններում, չնայած ստեղծվեցին

[1033] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html:

[1034] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html// Бендианишвили А., Национальный вопрос в Грузии в XIX-начале XX века, Тбилиси, 1980, стр. 243:

տարբեր բնույթի հարցեր ուսումնասիրող հանձնաժողովներ՝ երկաթուղային, ֆինանսական, գաղթականական և այլն, սակայն էական արդյունքներ ձեռք չբերվեցին: Սահմանային-տարածքային հարցերում թե՛ Ադրբեջանը, թե՛ Վրաստանը կողմ էին արտահայտվում հարցերի քննարկմանը պատգամավորների ողջ կազմով, ինչին Հայաստանը ընդդիմացավ: Ընդ որում, տարածքային հարցերի վերաբերյալ հանձնաժողովային հանդիպումների ժամանակ հայ պատվիրակներ Ս. Տիգրանյանը, Մ. Հարությունյանը, Ստ. Մամիկոնյանը Վրաստանի կառավարությանը հայտնելով իրենց պատրաստակամության մասին զիջման գնալու Ախալքալաքի խնդրում, ի պատասխան Բորչալուի Չեզոք գոտում Վրաստանի ադեկվատ քայլի, Ադրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղում զիջումների գնալու մասին, սակայն առանց էական արդյունքների և քաղաքական իրական զարգացումների: Ի վերջո, խորհրդաժողովը ի մի բերելով իրար հակասող մոտեցումները, հանգեց երեք կետից բաղկացած հայտարարության.

1. Անդրկովկասի ներքին սահմանները պետք է գծվեն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի համաձայն,

2. Միայն սահմանամերձ շրջաններն են լինելու հայցի կազմաբաժանման առարկա,

3. Սահմանամերձ հողերի բաժանումը պետք է լինի շահագրգիռ հանրապետությունների փոխհամաձայնության արդյունք կամ դրա չգոյության պարագայում՝ իրավարարություն[1035]:

Ե. Գեգեչկորին առաջարկ մտցրեց Կովկասյան պետությունների միջև ռազմական ուժերի պարտադիր միավորման մասին: Ի հավելումն դրան, Ն. Ռամիշվիլին կոնֆերանսի մասնակիցների ուշադրությունը հրավիրեց Ա. Դենիկինի Կամավորական բանակի կողմից անկախ հանրապետություններին սպառնացող վտանգի վրա: «Եթե այդ հարցը լիներ մասնավոր բնույթի, - ընդգծում է Ն. Ռամիշվիլին, - ես այն չէի դնի կոնֆերանսի քննարկման, սակայն այն վերաբերում է մեզ բոլորիս, այդ իսկ պատճառով ես առաջարկում եմ ընդհանուր որոշում ընդունել»[1036]:

[1035] Տե՛ս «Борьба», Тифлис, 24 мая, 1919 г.:

[1036] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918 -1920 годах (с сокращениями), стр. 71-72: http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R.html //«Эртоба», № 127, 12 июня 1919 г.:

Վրացական կողմը պնդում էր Դենիկինի Կամավորական բանակի կողմից սպառնացող վտանգի մասին: Այսպիսով, կոնֆերանսը որոշում ընդունեց միավորել Անդրկովկասի ռազմա-դիվանագիտական և քաղաքական ուժերը[1037] ընդդեմ սպառնացող վտանգի և ի պաշտպանություն անկախության և ազատության[1038], որը պաշտպանեցին բոլորը, բացի հայկական պատվիրակությունից: Դրա հետ կապված Գ. Մարխուլիան հենվելով իր կողմից բերված և ընտրված փաստերի աղճատված ներկայացման վրա, դրանք բուն կոնտեքստից կտրելով, մերկապարանոց պնդում է, որ իբր թե դաշնակցականները Դենիկինի հետ կնքել են գաղտնի ռազմաքաղաքական դաշինք[1039], ուղղված ինչպես ընդդեմ Վրաստանի, այնպես էլ Ադրբեջանի: Եվ դա այն ժամանակ, երբ Հայաստանը դրսևորելով բավականաչափ կայունություն, խուսափողական դիրքորոշում բռնեց, ընդգծեց, որ Հայաստանը չի կարող մասնակցել այդպիսի միությանը կամ զգալի օգնություն ցուցաբերել, մինչև որ քննարկվող սահմանավեճերը և տարածքային խնդիրները չվճռվեն ու չհարթվեն: Եվ սակայն հայ պատվիրակները կարծիք հայտնեցին, որ եթե Վրաստանը դուրս գա Ախալքալաքից ու Լոռուց, Ադրբեջանը ձեռք քաշի Լեռնային Ղարաբաղից, ապա իբրև հատուցում հնարավոր էին համարում ինչ-որ զիջումների գնալ, չնայած գործնականում Ս. Տիգրանյանի մանևրումների նպատակն էր խուսափել որևիցե գրավոր պաշտոնական փաստաթղթից՝ ուղղված Հարավային Ռուսաստանի զինված ուժերի դեմ, ինչն այդպես էլ բրիտանացիները չկարողացան ապացուցել, քանզի չկար որևիցե լուրջ փաստ ապացուցելու, որ հայերը գործում են Դենիկինի հրամանների համաձայն, միաժամանակ նաև աշխատելով չմտնել հակադենիկինյան գործարքների մեջ, քանզի դա չուներ իրական բովանդակություն, առավել ևս, որ ռազմաքաղաքական առն-

---

[1037] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R.html: Согласно принятой резолюции, Грузия и Азербайджан 16 июня 1919 г. подписали военно-политический договор (Мархулия Г. Р., Из истории возникновения армянской националистической партии «Дашнакцутюн» и ее политики в отношении Грузии в 1918-1920 гг. Исторические разыскания, т. II, Тбилиси, 1999, стр. 198:

[1038] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-GeorgianWar18R. html //«Эртоба», Тифлис, № 127, 12 июня 1919 г.:

[1039] Տե՛ս Раевский А., Английская интервенция и мусаватское правительство, Баку, Гостип «Красный восток», 1927, стр. 115:

չություններում առանձնահատուկ բացասական երանգներ չկային: Կամավորական բանակի քայլերը ի դեմս Դենիկինի և նրա ներկայացուցիչ Մ. Զինկևիչի, երբեմն էլ, անկախ որոշակի քաղաքական շահերի բևեռային եզրերից, իրենց մեջ կրում էին բարոյաքաղաքական աջակցության լիցքեր: Այդպես, ըստ Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Միքայել Թումանյանի պնդման, 1919 թ. նոյեմբերի 22-ին գեներալ Ա. Դենիկինը հրաման է ստորագրել այն մասին, որի համաձայն ռուսական ծառայության բոլոր սպաները, որոնք ծառայում էին ադրբեջանական զորքերում, պետք է լքեին դրանց շարքերը՝ կապված «ադրբեջանական իշխանությունների թշնամական վերաբերմունքի հետ ռուսական բանակի նկատմամբ և ադրբեջանական զորքերի ուխտադրուժ «մահափորձի»՝ Հայաստանի հողերի նկատմամբ»[1040]: Իր ողջ գոյության ընթացքում, դենիկինյան հրամանատարությունը հայկական կառավարությանը ցուցաբերել է որոշակի աջակցություն՝ նրան տալով եռագիծ փամփուշտներ, որի ձեռքբերման բոլոր մնացած հնարավորությունները գրեթե զրոյական էին, և դրանք գործնականում բացակայում էին: Այդ փամփուշտների տեղափոխությունը Վրաստանի տարածքով վրացական կառավարության կողմից հանդիպում էր հակազդեցության, անգլիական հրամանատարությունը ևս այդ հարցում խաղացել է Հայաստանի կառավարության համար անհասկանալի հակասական դեր: Այդուհանդերձ, չնայած այն հանգամանքին, որ Հայկական բանակում ծառայում էին ոչ փոքր թվով սպաներ, որոնք կապեր ունեին Կամավորական բանակի հետ, և Հայաստանի Հանրապետության նկատմամբ ոչ բարեկամաբար տրամադրված ուժերը դրանից ելնելով՝ հայկական բանակը համարում էին Ա. Դենիկինի դիվիզիաներից մեկը, թեև Ռուսաստանի Հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև իրական և փաստացի պայմանագրային կապեր չկային, սակայն կողմերի միջև փոխհարաբերությունները ընդհանուր առմամբ բարեկամական էին, և վրացական կողմը այդ փաստը իրապես շահարկում էր՝ ընդդեմ հայկական կառավարության:

[1040] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 261:

1919 թ. հունիսի 23-ին ՀՀ Նախարարների խորհուրդն իր հերթական նիստում որոշում ընդունեց, որում հրահանգվում էր Վրաստանի կառավարությանը հաղորդել, որ Կամավորական բանակի և Վրաստանի միջև հնարավոր միջադեպերի ժամանակ Հայաստանի կառավարությունը լինելու է միանգամայն չեզոք և հնարավոր գտնում խաղաղարար կոնֆերանսին աջակցել, որպեսզի Անդրկովկասյան հանրապետությունների քաղաքական-տարածքային շահերը զենքի ուժով չլուծվեն, մինչև որ այդ հարցերի որոշումը կլինի փարիզյան կոնֆերանսում[1041]:

Այդպես էլ չհաջողվեց Հայաստանին տրամադրել ընդդեմ Կամավորական բանակի և Հարավային Ռուսաստանի գնալու պաշտպանական-հարձակողական համակարգի ստեղծման, ինչի համար բրիտանացիները ի դեմս վրացիների գտան հուսալի և հավատարիմ գործակիցների, և ինչպես նկատում է Գ. Պետրոսյանը, բրիտանական գեներալ Ֆորեստյեր-Ուոքերը ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանին անգամ սպառնալից տոնով զգուշացրել էր, որ եթե հայերը Կամավորական բանակի հետ հարձակվեն Վրաստանի վրա, ապա իրենք իրենց զինական ուժով կպաշտպանեն վերջինիս[1042]: Հայկական կողմն անմիջապես հակադարձեց բրիտանական այդ ստահոդ պնդումներին, առանց երկմտանքի ժխտելով իրենց հնարավոր համագործակցության որևիցե փաստ Դենիկինի Կամավորական բանակի հետ, կարևորելով սեփական ազատության և անկախության պաշտպանության կարևորության փաստը, և չափազանց մեծ զգուշավորություն ու զսպվածություն դրսևորելով Դենիկինի Կամավորական բանակի և նրան առընթեր «Հատուկ Խորհրդակցության» հետ հարաբերություններում, ինչի մասին գնդապետ Մ. Զինկևիչը դեռ 1918 թ. Դեկտեմբերին տեղեկացնում է Կամավորական բանակի ռազմածովային բաժնի պետին ուղղված գաղտնի հետախուզական զեկուցագրում, բավարարվելով միայն ՀՀ ներկայացուցիչ ունենալով Եկատերինոդարում ի դեմս Հ. Զավրիևի [Զավրիյան][1043], սակայն առանձնապես շտապողականություն չդրսևորելով այդ

[1041] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 201, ց. 1, գ. 486, մաս II, թ. 267:

[1042] Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918 -1920 թթ.), էջ 156-157:

[1043] Տե՛ս նույն տեղում, էջ 157:

խնդրում, ամեն կերպ խուսափելով դաշնակիցների կասկածամիտ վերաբերմունքից և հնարավոր այլ անախորժություններից, ընդ որում ոչ բոլոր հարցերում էին ՀՀ իշխանությունների մտադրությունները համընկնում Կամավորական բանակի դիրքորոշման հետ, քանզի ակնհայտ էր նաև այն, որ Դենիկինի Կամավորական բանակը և նրան Հայաստանում ներկայացնող «Հատուկ Խորհրդակցությունը» ունեին իրենց հաշվարկները, որոնք ամենևին էլ չէին բխում Հայաստանի Հանրապետության շահերից, սակայն ի վերջո երկու կողմերն էլ չգնացին Հայաստանի Հանրապետություն-Կամավորական բանակ ռազմական-դիվանագիտական հարաբերությունների սրմանը, ինչը չէր բխում նրանց շահերից:

Ստեղծված իրավիճակում, հայկական կողմը փորձեց ձեռք բերել հնարավոր դրական ռազմաքաղաքական առավելություններ, կայունացնել ՀՀ վիճակը և կրկին փորձել դրական արդյունքների հասնել սահմանային-տարածքային վեճում: ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը ընդամենը առաջարկեց Փարիզի Հաշտության վեհաժողովին ուղարկել արտաքին ագրեսիան դատապարտող բանաձև, և չնայած քողարկված ադրբեջանական և վրացական սպառնալից արտահայտություններին, ՀՀ չգնաց ընդդեմ Դենիկինի Կամավորական բանակի: Եվ չնայած Վրաստանի և Ադրբեջանի որոշակի ռազմաքաղաքական շրջանները կեղծ, ստահոդ լուրեր էին տարածել, թե իբր Հայաստանի Հանրապետությունը գաղտնի ռամաքաղաքական դաշինքի մեջ է գտնվում Դենիկինի Կամավորական բանակի հետ, և այդ առումով ՀՀ զգուշավորությունն ուներ իր պատճառները, բայց և այնպես 1919 թ. Հայաստանը անմնացորդ նվիրված չէր Ռուսաստանին և չէր էլ դատապարտում հակահեղափոխական սպիտակ բանակներին, այնուամենայնիվ, հարևան Վրաստանը և Ադրբեջանը այլ կարծիքի էին: Հայաստանի Հանրապետության կառավարությունը առանձնապես ոգևորված չէր Կամավորական բանակով, նրա գործելակերպում որոշակի երկվություն կար, այնպես որ գործնականում փաստեր չկան, որ ապացուցեին ՀՀ և Կամավորական բանակի միջև պաշտպանական դաշինքի իրական լինելու մասին, իսկ դա ձեռնտու էր առաջին հերթին մենշևիկյան Վրաստանին և մուսավաթական Ադրբեջանին, որոնք տագնապում էին Հայաստանի Հանրապետության հնարավոր «բարեկամությունից» և ռազմաքաղաքական ենթադրվող դաշինքից Դենիկինի հետ, որն իբր կարող

էր հայկական կողմին աջակցել՝ թիկունքից հարվածել Վրաստանին և Ադրբեջանին՝ Բորչալուի գավառին և Ղարաբաղին տիրելու համար, ինչը Դենիկինը անգլիացիների կողմից մատուցված լավ հորինված առասպել էր համարում: Առավել ևս, Գ. Պետրոսյանի կողմից հետաքրքիր փաստարկներ են բերվում, որոնք ապացուցում են Կամավորական բանակի շահագրգռվածությունը հայ-վրացական պատերազմի երկարաձգման խնդրում՝ նպատակ հետապնդելով իրագործել իրենց ռազմավարական ծրագրերը մերձսևծովյան հատվածներում, և առհասարակ հարավկովկասյան տարածաշրջանում, որի արդյունքում, վրաց-հայկական դեկտեմբերյան պատերազմի երկարաձգումը հանգեցրեց նրան, որ վրացիները իրենց զորամասերի որոշակի խմբեր նետեցին դեպի սևծովյան գոտին՝ Սոչի, այդ նպատակով որպես միջոց օգտագործելով վրացիների կողմից անմիտ պատերազմի մեջ ներքաշված Հայաստանի Հանրապետությանը, որին բրիտանացիները արագ հակադարձում էին և իրենք էլ իրենց հերթին բացահայտ օգտագործում Վրաստանի հակաբոլշևիկյան տրամադրությունները և հայ-վրացական բախումնալիցքը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը զգալի ջանքեր գործադրեց խուսափելու բրիտանացիների հետ ռազմաքաղաքական հնարավոր առճակատումից և տարակարծությունների արհեստական, անհարկի սրումից, որոնց Անդրկովկաս ժամանմանը Դենիկինը կտրուկ դեմ արտահայտվեց, և այս տեսանկյունից Կամավորական բանակի հակաթիֆլիսյան մտադրությունների մասին անգամ Ռուսաստանի հարավ մեկնած հայկական պատվիրակության ղեկավար Մ. Արզումանովը հարկ էր համարել տեղեկացնել Ն. Ժորդանիային, շեշտելով որ Դենիկինի Վլադիկավկազը գրավելու այդ ծրագրերի մասին տեղյակ չէ անգամ ՀՀ կառավարությունը, որոնք սակայն ընկել էին նաև անգլիացիների ձեռքը[1044]: Ակնհայտ է, որ հայ-վրացական պատերազմում Ա. Դենիկինի Կամավորական բանակն ուներ իր սեփական շահերը, ինչպես և բրիտանացիներն ու դրկից վրացիները, որոնք հանդիսանում էին Անդրկովկասյան Սեյմի իրենց ազգայնամետ-վրացակենտրոն առաջնորդների եսակենտրոն քաղաքականության ժառանգորդները և շահրունակողները: Ըստ այդմ պարզից պարզ էր, որ Կամավորական բանա-

[1044] Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918 -1920 թթ.), էջ 157-166:

կի ծրագրերի մեջ առաջնային պետք է լինեին ո՛չ միայն բոլշևիզմի դեմ պայքարի խնդիրները, այլև դրանց դրական արդյունքում կարևորվում էր նոր քողածածկույթի տակ համառուսական պետության նախկին տիրույթի մեջ գտնվող հողերի հավաքումը և ամենայն հավանականությամբ՝ Ռուսաստանյան կայսրության նորովի վերածնունդը, և այս առումով վերջինս շահագրգիռ չէր Հայաստանի անկախ պետության գոյության փաստով, այլ ձգտում էր բոլոր հնարավոր առիթները, և առաջին հերթին հայ-վրացական պատերազմը օգտագործել որպես միանգամայն հարմար առիթ Կովկասում ամրապնդվելու համար, որի իրագործման ճանապարհին գլխավոր խոչընդոտը հանդիսացան գլխավորապես բրիտանացիները, որոնք երկդիմի դիրքորոշում ունեին, սակայն փաստերը առավելապես վկայում են, որ այդ հարցում Հայաստանի Հանրապետությունը գործնականում օգտակար չեղավ Կամավորական բանակին և ձախողեց նրանց պլանները, իսկ Դենիկինի գեներալներն էլ առանձնապես լուրջ քայլեր այդպես էլ չձեռնարկեցին աջակցելու Հայաստանի Հանրապետությանը Լոռու և Ախալքալաքի հարցում, և դա առանձնապես իրենց մտադրությունների մեջ չէր էլ մտնում, նրանց համար առաջնային էին մնում սևծովյան ափամերձ գոտում ամրապնդվելու հարցերը: Չարդարացվեցին նաև Հայաստանի Հանրապետությանը տնտեսական ապրանքատեսակներով, և՛ ռազմամթերքով, և՛ զենքով աջակցության ցուցաբերման պլանները: Հայաստանի Հանրապետությունը հայ-վրացական պատերազմի ավարտից հետո ելնելով Վրաստանի հետ իր տնտեսաքաղաքական շահերից, շրջափակման և արտաքին աշխարհից կտրվելու վտանգը և հնարավոր վնասակար հետևանքները, գնաց Վրաստանի հետ ռազմաքաղաքական հարաբերությունների կարգավորման ուղիով, առժամանակ վերականգնելով դիվանագիտական հարաբերությունները, և դրա հետ մեկտեղ «սրտատրոփ» սպասելով Փարիզի վեհաժողովի արդարամիտ որոշումներին, իր քաղաքական ռազմավարության մեջ դա համարելով գերակա խնդիր:

Առավել ևս չարդարացվեցին հայկական կառավարության սպասելիքները՝ կապված դաշնակից բրիտանական աջակցության հետ, և շատ դեպքերում, այդ ակնկալիքները պատրանքային էին, քանզի բրիտանական քաղաքականությունը Կովկասում իր խորքային ծալքերում թե՛ մշուշապատ էր, թե՛ եսակենտրոն, թե՛ անկանխատեսելի, և թե՛ հա-

րափոփոխ, և ինչպես ակնհայտ է դառնում Լլոյդ Ջորջի 1919 թ. նոյեմբերի 17-ին համայնքների պալատում ունեցած ելույթի քննական վերլուծությունից[1045], անգլիական քաղաքականության մեջ նոր երանգներ էին հայտնվել, որը հանգում էր նրան, որ Անգլիան վտանգավոր խաղ էր սկսել՝ մի կողմից հակվածություն դրսևորելով իրագործելու Ռուսաստանի անդամահատման ծրագիրը, հավատարիմ մնալով իր հին ռազմավարությանը, մյուս կողմից՝ հեռահար հաշվարկներից ելնելով, եզրեր որոնում Խորհրդային Ռուսաստանի հետ ձևավորելու շահավետ ռազմաքաղաքական և դիվանագիտական հարաբերություններ: Հենց դա էլ պայմանավորում էր Անգլիայի քաղաքականության բարդ ելևէջումները Անդրկովկասում, որտեղ անգլիական քաղաքականության մեջ մի կողմից նկատվում էին քիչ թե շատ կայուն եզրեր՝ ամրապնդել իրենց ազդեցությունը, խորացնելով անդրկովկասյան հանրապետությունների մեկուսացումը Ռուսաստանից, մյուս կողմից՝ առաջին հայացքից աննշմարելի կերպով նկատվում էր Անգլիայի կողմից տրված խոստումների մշտական անտեսում, որը ցայտուն դրսևորվեց Անդրկովկասից բրիտանական զորքերի հեռացման հարցում, որն ըստ էության կապված էր բոլշևիկյան ուժերի առաջխաղացման մեջ դեպի հարավային Կովկասի մատույցները, ինչը ո՛չ հայերն էին ընկալում, ո՛չ էլ վրացիները, որոնք չկարողացան իրատեսական գնահատումներ կատարել նոր աշխարհաքաղաքական իրողությունների մասին:

Հենց դա էր պատճառը, որ անգլիական հրամանատարությունը Անդրկովկասում վարելով ջլատողական քաղաքականություն, ամենայն տեսակի աջակցություն էր ցուցաբերում Դենիկինին նրա ծավալած գործելակերպում Անդրկովկասի սահմաններից դուրս: Անգլիական բարձրաստիճան զինվորականությունը և ռազմաքաղաքական ներկայացուցչությունները խրախուսում էին անդրկովկասյան հանրապետությունների անջատողական գործողությունները և միաժամանակ թշնամաբար էին վերաբերվում հյուսիսկովկասյան լեռնականների ցանկացած փորձի գնալու ազգային ինքնորոշման ուղիով՝ դառնալ ինքնուրույն և անկախ պետական կազմավորումներ, ըստ այդմ դենիկինականներին մատակարարելով ռազմանյութեր, այդ թվում Կարսից դուրս բերելով մեծ

[1045] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 394:

թվով հրանոթներ, ինչի դեմ կտրուկ բողոքեց հայկական կառավարությունը և բարձրաստիճան զինվորականությունը ի դեմս գեներալներ Մ. Սիլիկյանի, Ք. Արարատյանի և այլոց: Այսինքն, կարելի էր հետևության գալ, որ Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում բրիտանացիները վարում էին հակառուսական քաղաքականություն, իսկ Բաթումիի մարզում, Հյուսիսային Կովկասում, ինչպես նաև Ռուսաստանի հարավում՝ «պայմանական ռուսական»: Հենց այս հանգամանքն էլ անդրկովկասյան քաղաքական գործիչների համար անհասկանալի էր դարձնում բրիտանական հրամանատարների առանձին կարգադրությունների իմաստը, որոնք հաճախ երկիմաստ էին և սադրիչ բնույթ ունեին:

Եվ այսպես, անդրկովկասյան վեհաժողովում, չկարողանալով Հայաստանի Հանրապետությանը թեքել իրենց կողմը և միավորվել Դենիկինի դեմ ռազմական միության կամ պաշտպանական ընդհանուր դաշինքի մեջ, Վրաստանը և Ադրբեջանը հետագա հետևանքների համար մեղքը բարդեցին Հայաստանի վրա, որն ինքնամեկուսացվեց, Ս. Տիգրանյանը անարդյունք Թիֆլիսից մեկնեց, իսկ այդ խնդրի հետ կապված ՀՀ պատվիրակությունը հրահանգներ ունենալով կառավարությունից, վերապահումներով մոտեցավ խնդրին և անդրկովկասյան հանրապետությունների միջև ռազմաքաղաքական ընդհանուր դաշինքին մասնակից լինելուց վերջնական մերժումը պատճառաբանեց նրանով, որ Ադրբեջանի և Վրաստանի հանրապետությունների ներկայացուցչություններին հայտնեց, որ այն կարող է լուծում ունենալ միայն սահմանատրածքային վեճը փոխադարձ համաձայնությամբ վճռելուց հետո, միաժամանակ ակնարկելով, որ իրենք կանգնած են նաև տաճկական վտանգի առաջ և այդ պարագայում տեղին կլիներ ռազմաքաղաքական պաշտպանական համատեղ կառույց ձևավորել առհասարակ իրենց սպառնացող բոլոր արտաքին վտանգների դեմ: Հենց այդ հանգամանքի հաշվառումով ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը դիմելով Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակներին, հարցադրում է առաջ քաշում. «Այդ վտանգը միայն հյուսիսի՞ց է սպառնում, թե՞ հարավից էլ, որովհետև մեր ունեցած տեղեկությունների համաձայն, մենք կանգնած ենք Էրզրումում կենտրոնացված տաճկական զորքի արշավանքի վտանգի առաջ: Կուզեմ հարցնել, առհասարակ, բոլո՞ր վտանգների հանդեպ պետք է միջոցներ ձեռք առնել, թե՞ որոշապես Դենիկինի Կա-

մավորական բանակի դեմ»[1046]: Եվ քանի որ դա անիրականալի էր, քանզի Վրաստանն ու Ադրբեջանը ելնելով իրենց ռազմավարական շահերից և զերծ լինելով թուրքական հնարավոր սպառնալիքից, երբեք էլ չէին համաձայնվի միավորվել ընդդեմ Թուրքիայի որևիցե ռազմաքաղաքական պաշտպանական բնույթի համադաշնությունում, ապա Հայաստանի Հանրապետությունը նախընտրեց «չեզոքություն պահպանել, միաժամանակ լիակատար բացառելով հայկական զինված ուժերի միջամտությունը այդ ռազմաքաղաքական գործընթացներին ընդդեմ Դենիկինի, սակայն ամենևին էլ չհրաժարվելով քաղաքական-դիվանագիտական փոխառնչություններից Դենիկինի հետ»[1047], առավել ևս, որ ըստ էության Ա. Դենիկինի Կամավորական բանակից հայկական պետականությանը որևիցե լուրջ վտանգ չէր սպառնում: Այսպիսով, Վրաստանի և Ադրբեջանի կառավարությունների առաջարկը ռազմադիվանագիտական գործակցության մասին անհնարին դարձավ, և Հայաստանի Հանրապետությունը ելնելով իր շահերից, նախընտրեց հստակ չեզոքություն պահպանել, և չմխրճվել կասկածելի, անվստահելի և անհեռանկարային քաղաքական գործարքների մեջ, դրանով իսկ ամեն ջանք գործադրելով հանրապետությունը զերծ պահելու տարբեր տեսակի ոտնձգություններից, այդ թվում և ներսում բուն դրած մահմեդական զանգվածների հակահայկական և հակապետական նկրտումներից: Այդ նույն ձևով մեռելածին դարձան անդրկովկասյան հանրապետությունների կոնֆեդերացիայի մեջ միավորվելու փորձերը, քանզի գլխավոր խոչընդոտը Հայաստանի Հանրապետության սահմանատարածքային տարաձայնություններն էին Վրաստանի և Ադրբեջանի հետ: Փոխարենը Թիֆլիս ժամանեց գեներալ Սամեդ բեկ Մեհմանդարովը՝ Վրաստանի հետ ռազմաքաղաքական դաշինք կնքելու: Արդյունքում, 1919 թ. հունիսի 16-ին կնքվեց վրաց-ադրբեջանական փոխադարձ պաշտպանության համաձայնագիր, որը Վրաստանի հանրապետության անունից ստորագրեցին գեներալներ Ի. Ջ. Օդիշելիձեն և Ա. Կ. Գեղևանովը, Արտաքին Գործերի մինիստր Ե. Պ. Գեգեչկորին և Զինվորական նախարար Ն. Վ. Ռամիշվիլին, իսկ Ադրբեջանի կողմից՝ Արտաքին Գործերի նախարար Մ. Յու. Ջաֆարովը, սպայակույտի պետ Ս. Սուլկևիչը և Զինվորական

[1046] Տե՛ս «Աշխատավոր», Թիֆլիս, 14 հունիսի, 1919 թ.:
[1047] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 114, թ. 127, 131:

նախարար գեներալ Սամեդ բեկ Մեհմանդարովը, որը վավերացվեց հունիսի 22-ին՝ Վրաստանի Սահմանադիր ժողովի և հունիսի 27-ին՝ Ադրբեջանի պառլամենտի կողմից, և այդ ռազմական դաշնակցությունը Վրաստանի և Ադրբեջանի միջև նպատակ էր հետապնդում ուժեղացնել այդ պետությունների դիրքերն Անդրկովկասում, սակայն այն իր սուր ծայրերով ուղղված էր միայն և միայն Հայաստանի դեմ, և ստիպողական առումով միտված էր հարկադրելու Հայաստանի Հանրապետությանը հարելու այդ դաշնակցությանը: Միաժամանակ, այդ համաձայնագրի ստորագրումով Ադրբեջանը և Վրաստանը փոխադարձ շահերից ելնելով գնացին փոխպայմանավորվածության համատեղ քայլերի մասին, քանզի հենց այդ քաղաքական պահին Մեծ Բրիտանիան իր զորքերը դուրս էր բերում Անդրկովկասից, և կովկասյան այդ հանրապետությունները ձգտում էին իրենց ապահովագրել հնարավոր վտանգներից, և առաջին հերթին՝ Դենիկինի Կամավորական բանակի հարձակումներից: Սույն պայմանագրի պաշտոնական հրապարակումից սկսած, Հայաստանին տասնհինգօրյա ժամկետ էր տրվում իր պատրաստակամությունը հայտնելու այդ համաձայնությանը միանալու մասին: Վրացական «Грузия» թերթը անդրադառնալով այդ հարցին, և նշելով որ Հայաստանը մերժեց իրեն բարեկամաբար մեկնած ձեռքը, ի վնաս ընդհանուր շահերի և չհրաժարվեց ինքնամեկուսացման քաղաքականությունից, իրեն օտարեց Կովկասյան ժողովուրդների ընտանիքից, դատապարտում էր Հայաստանին, որ թշնամական է իր հարևանների նկատմամբ[1048]:

Հասկանալի է, որ Հայաստանի այդ ռազմավարությունը սեպ էր խրում հարևանների հետ հարաբերությունների եզրերում, սակայն միաժամանակ այն կատալիզատորի դեր կատարեց ընդգծելու սահմանային-տարածքային վեճերի ողջ բարդույթը հարևանների հետ, որի պայմաններում ՀՀ համար դժվար էր ներդաշնակեցնել շահերը Ադրբեջանի և Վրաստանի հետ՝ ընդհանուր համատեղ պաշտպանական կառույց ստեղծելով ընդդեմ Դենիկինի Կամավորական բանակի: Ռ. Հովհաննիսյանը այսպես էր պատճառաբանում ՀՀ դիրքորոշումը. «Հայաստանը մերժում էր միանալ տարածաշրջանային պաշտպանության

[1048] Տե՛ս «Грузия», Тифлис, 22 июня, 1919 г.: ՀԱԱ, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 93, թ. 213, գ. 112, թ. 24: Ղուլյան Յ., Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից. 1918-1920 թթ., Եր., «Եզեա», 2009, էջ 241-247:

դաշնագրին, ինչպես նաև Լեռնականների Հանրապետության հանդեպ դենիկինականների ճնշումների դեմ բողոքներին, և այս հանգամանքը խորացնում էր վրացիների…կասկածները»[1049]: «Борьба»-ում տպագրված մի շարք նյութեր սառը ջուր լցրեցին այդ ամենի վրա, էլ ավելի լարվածություն հաղորդելով այդ հարաբերություններին, ընդ որում արխիվներից հանվեցին վրացիներին վարկաբեկող նյութեր: Ռ. Հովհաննիսյանը իր կողմից շրջանառված նյութերի միջոցով, որոնց մեջ կարևորվում են նաև հայ հետախույզ Տ. Դեվոյանցի զեկույցները, փաստում է արտասահմանում տարածված լուրերի մասին վրաց-թուրքական խարդավանքների մասին, որոնց ձայնակցում էին ադրբեջանցիները. «Համառ բամբասանքներ էին շրջում այն մասին, որ համաշխարհային պատերազմի շրջանում Վրաստանի կապը Գերմանիայի հետ հիմնված չէր սոսկ ինքնապահպանման հուսահատ հաշվարկների վրա, որ վարչակազմի հզոր անդամ Նոյ Ռամիշվիլին Էնվեր փաշայի հետ գաղտնի համաձայնության էր եկել հայերի դեմ, որ Վրաստանի ներկայացուցիչները Կոստանդնուպոլսի տխրահռչակ երիտթուրք գործակալների հետ դեռևս կապի մեջ էին, և որ վրաց պատվիրակները մասնակցել են թուրքական դիմադրության կազմակերպիչների հրավիրած Էրզրումի համագումարի բացման արարողությանը: Ռամիշվիլին զայրույթով մերժեց այդ պատմությունները, բայց վարչապետ Ալեքսանդր Խատիսյանին հաղորդեց, որ իրականում «Ադրբեջանն է գործակալներ ուղարկել Էրզրում և նշանակալի օգնություն ստացել Թուրքիայի ռազմական ոլորտի պաշտոնյաներից»[1050]: Եվ դեռ ավելին, վրացական մամուլը և կառավարությունը դաշնակցական ռազմագետներին մեղադրեցին նրանում, որ նրանք թույլ են տվել կուսակցական այնպիսի ղեկավարների, ինչպիսիք էին Դրոն, Համազասպը և Անդրանիկը, առողջ «կովկասյան» կողմնորոշման փոխարեն նախընտրել չարաբաստիկ «Փարիզյան կողմնորոշումը» և զբաղվել մահմեդական բնակչության ահաբեկչությամբ[1051]: Ռ. Հովհաննիսյանը վկայակոչելով բրիտանական

[1049] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր II, էջ 165:

[1050] Տե՛ս նույն տեղում, էջ 166-167:

[1051] Տե՛ս Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), Տ. Դեվոյանցի զեկույցները, 16 սեպտեմբերի, N 17, 1919 թ.: 29 սեպտեմբերի, N 26, 1919 թ.: 6 հոկտեմբերի, N 32, 1919 թ.:

հետախուզության տվյալները, փատում էր վրաց և թուրք գործակալների հանդիպումների մասին, այն մասին նաև, որ Ռամիշվիլին ներկայացուցիչներ է ուղարկել Էրզրում՝ նպատակ հետապնդելով կապեր հաստատել Մ. Քեմալի հետ՝ թուրք սպաներ հավաքագրելու, որոնք պետք է մասնակցեին Դենիկինի դեմ կովկասյան լեռնականների ապստամբությանը[1052]: Եվ այսպիսի փաստերը մեծ տագնապ էին հաղորդում հայերին, առավել ևս, նրանց տրամադրում ընդդեմ այն ցանկության, որ Հայաստանի Հանրապետությունը անդամագրվեր Ադրբեջան-Վրաստան ռազմաքաղաքական բնույթի դաշինքին՝ ուղղված գլխավորապես Դենիկինի Կամավորական բանակի դեմ: Հայ հասարակական-քաղաքական միտքը և կուսակցական-քաղաքական ուժերը ևս չափազանց զգուշավոր էին Հայաստանի Հանրապետության ռազմավարության ընտրության խնդրում: Այն տեսակետի հետ, որ Դենիկինի Կամավորական բանակը ոչ միայն նպատակադրում ուներ գրավել Բաքուն, Թիֆլիսը, Երևանն ու Աշեքսանդրապոլ-Կարսը, որի հետևանքով այլևս Հայաստան չի լինի, այդ տեսակետի հետ իրենց որոշակիորեն պատճառաբանված անհամաձայնությունն էին արտահայտում Ստեփան Մամիկոնյանը և Քրիստափոր Վերմիշյանը, որոնք պարզապես առաջարկում էին չկապվել Ադրբեջանի և Վրաստանի հետ որևիցե միասնական քայլով, պատճառաբանելով և պարզաբանելով դա նրանով, որ դաշնակիցների և Դենիկինի վերաբերմունքը դեպի այդ անդրկովկասյան հանրապետությունները կարող է այլ լինել, իսկ դեպի Հայաստանը՝ մի ուրիշ տեսակ: Այդ իսկ պատճառով էլ Ստ. Մամիկոնյանը և Քր. Վերմիշյանը գտնում էին, որ անհրաժեշտություն չկա, որ առանց Փարիզի հայկական պատվիրակության նման որոշումներ ու հրահանգներ տրվեն, որով միգուցե վնաս հասցվի ընդհանուր գործի հաջողությանը, նկատի ունենալով, որ «Ռուսաստանը երբեք չի ների մեզ»[1053]: Անդրադառնալով այս խրթին խնդրին, Զ. Ավալովը նկատել է. «Հայաստանին հյուսիսից անմիջական վտանգ չէր սպառնում և նա նպատակ չուներ համատեղ, հատկապես Ադրբեջանի հետ հանդես գալու Դենիկինի դեմ»[1054]: Վերընշյալին կարելի է նաև ավելացնել, որ հայերը մեծ հույսեր էին կապում դաշնակիցների հետ

[1052] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր II, էջ 168:
[1053] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 2, գ. 52, թ. 6:
[1054] Авалов З., Указ. соч., стр. 65:

իրենց վաղեմի հողային հարցերը լուծելու հարցում[1055]: Ըստ էության պնդելով նման հարցադրման վրա, Զ. Ավալովը, որի հետ համերաշխվում են նաև Ա. Բայկովը և Ա. Ռաևսկին, նրանք հանգում էին այն դիրքորոշմանը, թե հայերի այդ ռազմավարության հիմքում ընկած էր Մեծ Հայաստանի ստեղծման խնդիրը՝ ի հաշիվ Թուրքիայի և Ադրբեջանի[1056]:

Ամեն դեպքում, դա Հայաստանի Հանրապետության ընտրությունն էր և այն ուներ իր խորքային պատճառաբանվածությունը, և Հայաստանը չէր էլ պատրաստվում այդքան հեշտությամբ հրաժարվել տարածքային վեճերից հանուն ինչ-որ տեղ պատրանքային և դեռ հեռանկարի տեսանկյունից ոչ այնքան պարզ պաշտպանական-ռազմական միությանը չմասնակցելու ցանկությունից ընդդեմ Կամավորական Ռուսաստանի, առավել ևս, երբ հետագայում որոշակի տեղեկատվություն սպրդեց դուրս, թե իբր ադրբեջանա-վրացական այդ ռազմական դաշինքի մասին պայմանագիրը ունեցել է գաղտնի հոդվածներ, ըստ որի պայմանավորված կողմերը համաձայնագիր են ունեցել ռուսներին Անդրկովկասից վտարելու մասին, միանալով բոլշևիկների և երիտթուրքերի հետ ընդդեմ Անտանտի երկրների՝ նրան Կովկասից քշելու համար, դիտարկելով Հայաստանն իբրև ընդհանուր թշնամի և Վրաստանի կողմից պատերազմի սանձազերծման դեպքում խնդիր դնելով փակել հաղորդակցության բոլոր ուղիները Հայաստանի՝ այդ ոչ հուսալի հանրապետության և Ադրբեջանի միջև պատերազմի պարագայում[1057]: Գնահատելով վրաց-ադրբեջանական բարեկամության այս քայլի և ռազմաքաղաքական դաշինքի փաստը, ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը 1919 թ. հունիսի 16-ին արձանագրում էր այդ իրողությունը. «Մդիվանին օրեր առաջ ասել էր, թե եթե հայերդ չզիջեք, մենք ստիպված կմիանանք թաթարների հետ: Մեր քաղաքական գործակցության անհրաժեշտությունը մերժել էին, իսկ մեր չեզոքությունը, առանց դաշնագրի և կոմբինացիայի, ապահովելու հաստատ ու բավարար միջոցը

[1055] Տե՛ս նույն տեղում:

[1056] Տե՛ս Байков Б., Воспоминание о революции в Закавказье (1917-1920 гг.). «Архив русской революции», т. 9-10, Берлин, 1923, стр. 97: Раевский А., Мусаватское правительство на Версальской конференции, Берлин, 1930, стр. 29:

[1057] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, էջ 419-421:

գտել էին Հայաստանի ներսը և դուրսը մուսուլմանների հարձակումներով ու սպառնալիքներով մեր ուժերը զբաղեցնելու, ջլատելու և չեզոքացնելու մեջ»[1058]: Խորհրդաժողովը բացահայտեց անդրկովկասյան ընդհանուր տարածքում վրաց-ադրբեջանական ռազմախաղի փաստը և դրա խորքային նպատակադրումները, և ավելի շուտ դա հիշեցնում էր Հայաստանի Հանրապետությանը ռազմաքաղաքական խարդավանքների մեջ ներգրավելուն նպատակաուղղված քայլ, որը մեկուսացված վիճակ էր ստեղծելու հայկական կողմի համար և կաշկանդելու էր նրան իր ձեռնարկումներում, ավելացրած դրան՝ անտեղի տեղը Կամավորական բանակի դեմ վտանգալից առճակատման մեջ հայտնվելը, և դա իր կնիքը թողեց նաև անդրկովկասյան վեհաժողովում նրա մասնակցության արդյունքների վրա: Այս առումով չափազանց նուրբ և դիպուկ իր դիտարկման մեջ Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանը անհավանական էր համարում, որ Ադրբեջանի Հանրապետությունը և Վրաստանը ռազմական գործողություններ սկսեին Դենիկինի Կամավորական բանակի դեմ՝ փաստելով, որ Ադրբեջանի բանակում ծառայության մեջ գտնվող կադրային ռուս սպաները չէին կռվի իրենց նախկին զինակիցների դեմ, իսկ որ ավելի կարևոր է՝ Ադրբեջանն արդեն իսկ Կամավորական բանակին նավթ էր մատակարարում, իր տարածք էին բաց թողնում գնացքների շարժակազմեր նրա հսկողության տակ գտնվող տարածքից՝ միաժամանակ արգելքներ և սահմանափակումներ մտցնելով Հայաստանի Հանրապետության համար[1059]: Վրաստանը հմտորեն և ցինիկաբար շահարկում էր իր աշխարհագրական դիրքով ընձեռված առավելությունը, շոգեքարշերի ու վագոնների մեծ մասի նկատմամբ իր ունեցած վերահսկողությունը, այն որպես միջոց օգտագործելով պարտադրելու համար սովից ընկճվող և տկարացած Հայաստանին միանալ Կամավորական բանակի դեմ պաշտպանության դաշինքին:

Ի վերջո, վեհաժողովը հունիսի երկրորդ կեսին փակվեց, Հայաստանի Հանրապետության համար սահմանային-տարածքային տարակարծությունների հարթման առումով՝ առանց էական արդյունքների, և վերստին մեկուսացված՝ ադրբեջանա-վրացական հանրապետությու-

[1058] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 367:
[1059] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 181, թ. 425:

ների կողմից վարվող անընդունելի ընդհանրության կողմից դրսևորվող բացասական ռազմավարության պայմաններում հուսահատված և առանց բարեկամների Կովկասում, և առհասարակ տարածաշրջանում: Անդրկովկասյան այս խորհրդաժողովն ի զորու չեղավ համահարթել ռազմաքաղաքական լարվածությունը հանրապետությունների միջև, իսկ տարածքային սահմանազատման հարցերը փակուղի մտան, և կողմերը բավարարվեցին սահմանատարածքային հարցերի կարգավորման ընդհանուր սկզբունքների պարզորոշմամբ: 1919 թ. հունիսի 12-ին ՀՀ Արտաքին Գործերի նախարարը կովկասյան կոնֆերանսի գործունեության մասին կառավարությանը տված զեկուցման մեջ նշելով, որ իրենց համար կարևորություն ունեցող հարցերից ոչ մեկը չլուծվեց, այդ թվում տարածքային հարցերում, չնայած հայկական կողմը անգամ պատրաստակամություն հայտնեց սահմանազատման խնդրում որոշակի զիջումների գնալու պատրաստակամության մասին, փորձելով այդ ձևով լուծել տրանզիտի, կենսականորեն կարևոր անխափան երկաթուղային երթևեկության ապահովման և վերջին հաշվով՝ արտաքին աշխարհի հետ տնտեսաքաղաքական կապերի խնդիրը. «…տերիտորիայի խնդրում Ախալքալաքի ողջ գավառը, Բորչալուի հյուսիսային մասը (Չեզոք զոնից հյուսիս) փաստորեն և կարծես թե նաև իրավորեն Վրաստանին է պատկանում, մենք պահանջ էին դնելու և դրինք, որ այդ ռայոնների որոշ շրջանները Հայաստանին հանձնվի»[1060]:

Իրադարձությունների ընթացքը սակայն այլ ուղիով էր ընթանում, ինչը հարցը մտցրեց փակուղի և անհնարին դարձրեց սահմանազատման խնդրում համաձայնության ձեռք բերումը, ինչը ՀՀ կառավարության համար դարձել էր առաջնային կարևորության հարց:

Եվ արդեն 1919 թ. հունիսի 14-ին կայացած տարածքային վեճերի լուծման ընդհանուր սկզբունքների մշակման հանձնաժողովի նիստում Ադրբեջանի ներկայացուցիչ Ֆ. Խան-Խոյսկին պաշտպանեց սահմանային-տարածքային հարցերի վճռման պատմական և տնտեսական սկզբունքները, որին հակադարձելով, ՀՀ պատվիրակությունը պնդեց, որ խորհրդաժողովը պետք է վճռի միայն հանրապետությունների միջև հարակից շրջաններին վերաբերող վեճերը, պնդելով այդ հարցերի լուծ-

[1060] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 85, թ. 63:

ման ազգային ինքնորոշման էթնիկական և այլ լրացուցիչ սկզբունքների վրա: Ըստ այդմ, ՀՀ պատվիրակությունը մերժեց Վրաստանի ու Ադրբեջանի կառավարությունների կողմից Ն. Ռամիշվիլու առաջադրած հարցումը Դենիկինի դեմ համատեղ հանդես գալու Հայաստանի Հանրապետության պատրաստակամության մասին, պատճառաբանելով, թե իրենք դեռ չունեն իրենց կառավարության կարծիքը, ինչն իհարկե, տվյալ իրավիճակում ընդամենը նշանակում էր անմիջական առճակատումից խուսափելու ձգտում, որը ևս հարցի հետ անհամաձայնության արտահայտություն էր: Այդ կապակցությամբ Ս. Տիգրանյանը հայտարարում է, որ համապատասխան ցուցում ստանալու համար ինքը կզեկուցի իր կառավարությանը[1061]: ՀՀ պատվիրակությունը ստեղծված իրավիճակում մերժեց նաև վրաց պատվիրակության կողմից առաջադրված սահմանազատման տնտեսական սկզբունքը, որին ի հակառակ, Վրաստանի Հանրապետության պատվիրակությունը պնդեց սահմանային-տարածքային հարցերի լուծման վարչական-պետական սկզբունքի վրա, անընդունելի և անբավարար համարելով սահմանազատման ազգերի ինքնորոշման սկզբունքը[1062], ինչի շնորհիվ հարցը փակուղի մտավ:

«Աշխատավոր» թերթը քննադատական հոդված տպագրեց Հայաստանի նկատմամբ անգլիացիների քաղաքականության վերաբերյալ, որն առաջ բերեց հակառակ ռեակցիա, իսկ բրիտանացիներն էլ իրենց հերթին գտան, որ փոխանակ հարևանների հետ լեզու գտնելու և սպասելու Փարիզի խաղաղության վեհաժողովի վիճարկելի հարցերի վերաբերյալ իրավարար վճռին և հարցերի կարգավորմանը, շատ հայկական լիդերներ ժողովրդին տրամադրում են ընդդեմ մահմեդականների[1063]:

Տարածքային հարցերը մնում էին ազգամիջյան հարաբերությունների լարվածության գլխավոր խոչընդոտը: Հայ-վրացական վեճը Բորչալուում և Ախալքալաքում մշտապես մնում էր օրակարգում: ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղարկված 1919 թ. մայիսի 8-ի հեռագրում Չեզոք գոտում ՀՀ կոմիսար Նալբանդյանը տեղեկացնում էր վրացական իշխանությունների հերթական չարաշահումների, բռնարարք-

[1061] Տե՛ս «Ժողովուրդ», Երևան, 11 հունիսի, 1919 թ.:

[1062] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ – 299, ց. 1, գ. 291, թ. 440-441:

[1063] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html:

ների և սանձարձակությունների մասին Սադախլո կայարանում, և դա այն դեպքում, երբ ըստ Նալբանդյանի, Չեզոք գոտու հայկական բնակչությունը կազմում էր ընդհանուր թվաքանակի 66 տոկոսը, այսինքն՝ 48 հազար բնակչից 32 հազարը հայեր էին[1064]:

Հարկ է անդրադառնալ նաև Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետի օգնական պրապորշչիկ Հովսեփյանի գրության մասին՝ (1919 թ. հուլիս), որ նկատվում է նաև վրաց-ադրբեջանական համադաշնակցություն, որ Ախալքալաքի գավառի սահմանամերձ Գորլովկա և Տրոիցկ գյուղերն են ժամանել ավելի քան 300 վրացական զինվորներ: Պրապորշչիկ Հովսեփյանը տվյալներ էր բերում թաթարների՝ քրդերի հետ համագործակցության մասին, որ այդ կապակցությամբ զրույց է ունեցել Էրզրումում գտնվող անգլիական շտաբի գնդապետ, հայտնի հետախույզ Ա. Ռաուլինսոնի հետ[1065]:

Շուտով, 1919 թ. օգոստոսի 15-ին սկսվեց բրիտանական զորքերի դուրսբերումը Լոռու Չեզոք գոտուց, որի մասին հայտարարվեց օգոստոսի 30-ին Թիֆլիսում Վրաստանի, Հայաստանի և գեներալ Վ. Հ. Բիչի ներկայացուցիչների դիտորդական մասնակցությամբ հրավիրված խորհրդակցությունում [սակայն մինչև 1920 թ. հունիսի 28-ը Բաթումիում պահեցին 2 վաշտ], որին հայկական կողմից մասնակցում էին Ստ. Մամիկոնյանը, Ս. Խաչատրյանը և Թիֆլիսում ՀՀ զինվորական կցորդ, գեներալ-մայոր Հ. Ա. Քիշմիշյանը[1066], վրացական կողմից՝ Արտաքին Գործերի մինիստրի օգնական Կ. Բ. Սաբախտարաշվիլին, Սահմանադիր ժողովի փոխնախագահ և Հայաստանում նախկին լիազոր-ներկայացու-

---

[1064] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 96, թ. 120:

[1065] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ – 201, ց. 1, գ. 168, թ. 38:

[1066] Քիշմիշյան (Քիշմիշև) Հովսեփ Արտեմի (ծնվել է Թիֆլիսում, 1881 թ. - 1921 թ.): Հովսեփ Արտեմի Քիշմիշյանը գեներալ-լեյտենանտ Ս. Ի. Քիշմիշյանի ազգականն է, ավարտել է Թիֆլիսի կադետական կորպուսը, Ալեքսեևյան ռազմական ուսումնարանը և Ալեքսանդրովյան ռազմա-իրավաբանական ակադեմիան՝ 1-ին կարգով: 1916-1917 թթ. հանդիսացել է Կովկասյան ռազմական օկրուգի դատարանի դատախազի օգնական, իսկ 1919 թ. հուլիսից Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության զինվորական ներկայացուցիչը (ռազմական կցորդը).- տե՛ս Վիրաբյան Վանիկ, Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը, Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 37-42, 50-52, 151-153, 258-267 և այլն: Гогитидзе Мамука, Бежиташвили Георгий, Военная элита Армении (Армяне –генералы, уроженцы Грузии). Биографический справочник, Тбилиси, 2014, стр. 64:

ցիչ Ս. Գ. Մդիվանին և Զինվորական մինիստրի օգնական Ա. Կ. Գեդևանովը: Շուտով ակնհայտ դարձավ Լոռու Չեզոք գոտու խնդրում բրիտանական առաջարկի մասին, ըստ որի այն պետք է մասնատվեր, սակայն այն առանց ամբողջ սահմանային խնդրի կարգավորման՝ անընդունելի եղավ երկու կողմերի համար էլ: Միաժամանակ որոշվեց պահպանել համատեղ կառավարումը բրիտանական սպայի ենթակայության ներքո, որը պետք է բնակվեր Չեզոք գոտու տարածքում՝ Ալավերդիում կամ Թիֆլիսում, իսկ այդ բրիտանական սպայի դերում հայտնվեց գեներալ Բիչի կողմից երաշխավորված կապիտան Դուգլասը: Սեպտեմբերի 1-ին միևնույն ներկայացուցիչները լիազորեցին Քիշմիշյանին և Գեդևանովին կազմակերպել խառը հանձնաժողով՝ հաստատելու համար Չեզոք գոտու սահմանները և հայկական ու վրացական ստորաբաժանումների չափաքանակները, և տեղակայման վայրերը՝ համաձայն 1919 թ. հունվարին Չեզոք գոտու ստեղծման մասին արձանագրություններում հաստատված պայմանների: Այս փաստը ակնթարթորեն գնահատվեց Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից, որի մասին խորհրդարանի 1919 թ. սեպտեմբերի 2-ի նիստում հայտարարությամբ հանդես եկավ ՀՀ նախարարապետը. «Խորհրդակցությունը որոշեց թողնել Չեզոք գոտու նախկին դրությունն անփոփոխ: Երկու կառավարություններն էլ երաշխիքներ տվին պահելու նախկին դրությունը: Մեր աղբյուրներից լուր է ստացված, որ Չեզոք գոտու սահմանի վրա երևացել են վրացական զորքեր և մի բրոնևիկ: Այս հանգամանքից հուզված բնակչությունն իրեն զինվորական դրության մեջ դրեց՝ դուրս բերելով զինվորական պահակախումբը: Վրաց կառավարությունն առանձին հուշագրով դիմեց մեր կառավարությանը՝ խնդրելով հանդարտացնել ազգաբնակչությանը, խոստանալով չխախտել ստատուս-քվոն զինվորական ուժով: Այսպես ուրեմն, այս հարցը ժամանակավորապես լուծված է: Թիֆլիսում ներկայումս տեղի ունեցող բանակցությունները «Չեզոք զոնի» վերաբերյալ կշարունակվեն խաղաղ և հանգիստ մթնոլորտում»[1067]: Կարծես թե երկու կողմերին էլ խնդրի խաղաղ լուծումը բավարարում էր և սահմանատարածքային խնդիրների կարգավորման փորձերը վերջապես հայ-վրացական հարաբերությունները բնականոն

[1067] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 258-259:

ընթացքի մեջ կմտցնեին, տնտեսական կապերը ի օգուտ երկու պետությունների կվերականգնվեին, Հայաստանի Հանրապետությունը դուրս կգար իր համար խիստ անցանկալի և աղետաբեր շրջափակման ճիրաններից, առավել ևս որ այդ քայլը ողջունվեց երկու կողմերի առաջատար քաղաքական կուսակցությունների կողմից:

Լոռու Չեզոք գոտին ևս մի խառը փուլ անցավ, կառավարման վարչակարգում ընդգրկվեցին վրաց կոմիսար Ալեքսանդր Լորդկիպանիձեն և սկզբնական շրջանում հայ կոմիսար, փոխգնդապետ Գ. Վարդապետյանը, իսկ այնուհետև՝ Վալադ Վալադյանը: Լոռու Չեզոք գոտու վարչական կառավարումը այս փուլում ընթացավ բարդություններով, որը կապված էր բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչության ու զորքերի տարածաշրջանից դուրս բերման հետ: Շուտով պարզվեց, որ բրիտանական կապիտան Դուգլասը հանգամանքների բերումով չի կարող կատարել իր պարտականությունները և պետք է լքի Չեզոք գոտին: Կապիտան Ա. Ս. Ջ. Դուգլասի փոքրիկ սպայակազմը Բորչալու-Լոռի Չեզոք գոտում գտնվող Ալավերդուց վերադարձավ Թիֆլիս, իսկ այդ ընթացքում գեներալ Ջ. Ն. Կորին 1919 թ. սեպտեմբերի 6-ին փակեց 27-րդ զորաջոկատի Թիֆլիսում գտնվող Արամյանցի սեփական տանը գտնվող կենտրոնակայանը, որը նախկինում եղել էր Ռուսահայերի Ազգային խորհրդի գրասենյակը, և մեկնեց Բաթումի[1068]: Վրացիները ստեղծված իրավիճակից ելքը որոնեցին հակահայկական քարոզչության և դրան հետևող ռազմաքաղաքական ձեռնարկումների մեջ:

Ռազմաքաղաքական և դիվանագիտական քաղաքական լարվածությունն այդ նույն պահին տագնապի մեջ էր պահում ՀՀ կառավարությանը Արդահանի շրջանում ծավալվող գործընթացների ժամանակ ևս: Այդ մասին է փաստում նաև ՀՀ Արտաքին Գործերի նախարարի Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարին ուղղված 1919 թ. ապրիլի 7-ի (N 1107) նամակը, որում հայտնվում էր Կարսի գեներալ-նահանգապետի բողոքագրի մասին, որում հայտնվում էր Վրաստանի Ջինվորական մինիստրի կողմից Ախալցխայից գեներալ Կվինիտաձեին ուղարկված հեռագրի մասին՝ կապված վրացական զորամասերի կողմից իրականացվող աննախադեպ տեղաշարժերի մասին Արդահանի

[1068] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր II, էջ 152:

շրջանում և ի դեմս անգլիացի սպա Բրետոնի բրիտանական ներկայացուցչությանը բողոք էր հայտնվել վրացիների կողմից ձեռնարկված գործողությունների մասին, որի կապակցությամբ բրիտանական սպան այցելություն էր կատարել գեներալ Արտմելաձեին հայերի կողմից իրեն հանձնված դժգոհության առթիվ, ինչն իր արտացոլումն էր գտել մի շարք թիֆլիսյան թերթերում: Այդ կապակցությամբ խնդիր էր առաջադրվել կազմել մի խառը անգլո-վրացական հանձնախումբ Ախալցխայի և Արդահանի միջև ժամանակավոր սահմանը որոշելու, ինչպես նաև վրաց զորքերի մուտքը Արդահանի գավառ միայն պաշտպանողական նպատակով մուտքի թույլտվության համար, այդ խնդրի իրագործման համար արտոնելով գնդապետ Ռ. Ն. Ստյուարտին ուղեկցելու Արդահանի գավառը մտնող վրացական զորքերին: ՀՀ Արտաքին Գործերի նախարարը դիվանագիտական ներկայացուցչից խնդրում էր պարզել ձեռք բերված համաձայնության կնքման և դրա հետ մեկտեղ գեներալ Ջ. Ֆորեստյեր-Ուոքերի կողմից դրա լուծարման հանգամանքների և տեղի մահմեդականությանը նրա կողմից արված ցուցադրական զիջողական քայլի մասին, որն իբր թե պատճառաբանված էր մուսուլմանների կողմից կատարված սպառնալիքի հետևանքով: Միաժամանակ ՀՀ Արտաքին Գործերի նախարարը հայտարարում էր Արդահանի գավառի նկատմամբ Հայաստանի անբեկանելի իրավունքների մասին, գտնելով, որ այդ իրավունքների տարածման սահմանագիծը դեռ պետք է որոշվի, խնդրելով պարզել Վրաստանի կառավարության ունեցած հայեցակետի և առաջիկա մտադրությունների մասին[1069]:

Արդահանի շրջանում վրացիների կողմից սերմանվող խուճապային տրամադրությունների մասին է վկայում Հետախուզական բաժնի պետի պաշտոնակատար Հ. Խան-Կոտուրսկու 1919 թ. սեպտեմբերի 13-ի (N0 Po 496) զեկուցագիրը: Հենվելով գործակալական տվյալների վրա, Հ. Խան-Կոտուրսկին հայտնում էր Արդահանից անգլիական ներկայացուցչությունների հեռացման և մարզի քրիստոնեական բնակչության շրջանում տարածված խուճապի մասին, նշելով, որ օրեցօր աճող տագնապի պայմաններում վրացիները չեն հեռանում Արդահան քաղաքից և շրջակայքից, սպասելով վրաց գեներալի ժամանմանը՝ կապված Արդա-

[1069] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 92, մաս 1, թ. 191: տե՛ս «Борьба», Тифлис, 22 марта, 1919 г., N 65 (321), 23 марта, 1919 г., N 66, (322): «Кавказское слово», Тифлис, 24.04.1919 г.:

հանի մարզի հյուսիսային մասի զբաղեցման մտադրության հետ, զորքեր կենտրոնացնելով Աջարիայում, Ախալքալաքի գավառում[1070]:

Ստեղծված իրավիճակում գնդապետ Վ. Հասկելի իրավարար առաքելության արդյունքում և նրա առաջարկի համաձայն որոշվեց, որ կապիտան Դուգլասին իր վերահսկիչ դերում կարող է փոխարինել Վ. Հասկելի աշխատակազմի անդամներից մեկը՝ փոխգնդապետ Չարլզ Լիվինգսթոնը, որի համար որպես նստավայր ընտրվեց Ալավերդին, որը պետք է ապահովեր անհրաժեշտ կապի իրականացումը[1071]: Գնդապետ Վ. Հասկելը սակայն աչքի չէր ընկնում քաղաքական մաքրակենցաղությամբ, և երբեմն էլ նրա կողմից արված քայլերը իրական խառնաշփոթ էին մտցնում սահմանատարածքային վեճերի լուծման խնդրում, սրում հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները: Այդպիսի քայլերից էր 1919 թ. հոկտեմբերին ձեռնարկված անհաջող փորձը վերացնելու Չեզոք գոտին, և հետագա գործառույթները ընթացան հայկական և վրացական կողմերի փոխադարձ մեղադրանքների լարված մթնոլորտում, երբ յուրաքանչյուր կողմը Լոռին և մասնավորապես նաև Չեզոք գոտին, ավելացրած Արդահանի շրջանի հետ կապված տարածքավեճը, Արդահանի գավառի մի մասը ևս համարում էին իրենց երկրի անքակտելի մասը, ավելացրած դրան նաև այն հանգամանքը, որ նման իրավիճակում սահմանավեճը իրենց օգտին լուծելու համար չէին խորշում անգամ այդ տարածքում գտնվող մոլոկանների և աղրբեջանական գյուղերին իրենց կողմը գրավելու քայլից, վերջիններիս «առաջարկելով» այդ խնդրագրով դիմել Վրաստանի պառլամենտ՝ ընդգրկվելու Վրաստանի Հանրապետության տարածքային կազմում:

Հայ-վրացական բանակցությունները շարունակվում էին և երկու կողմերն էլ իրենց հերթին փորձում էին հրավիրվելիք կոնֆերանսում շտկումներ մտցնել ռազմաքաղաքական հարաբերություններում: Ստեղծված իրավիճակում, երբ բրիտանական զորքերը պատրաստվում էին լքել Անդրկովկասը, գեներալ Ջ. Կորին երկու հանրապետություններին առաջարկեց իրար մեջ բաժանել Չեզոք գոտին, այդպիսով հրաժարվելով նախկինում իր վրա վերցված պարտականություններից՝ վերահսկել Չեզոք գոտին մինչև Խաղաղության կոնֆերանսը: Գեներալ Ջ.

[1070] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 199, ց. 1, գ. 73 (71), թ. 148:

[1071] Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր II, էջ 187-188:

Ն. Կորին առաջարկեց բրիտանական գեներալ Վ. Բիչի գլխավորությամբ հրավիրել կոնֆերանս, սակայն Կ. Պոլսում գտնվող Բրիտանական գլխավոր հրամանատարությունը մերժեց խնդրի լուծման այդ տարբերակը, մատնանշելով, որ սահմանային-տարածքային վեճերը պետք է կարգավորվեն երկու պետությունների՝ Վրաստանի և Հայաստանի միջև անմիջական բանակցությունների ճանապարհով, և այդ պարագայում՝ այդ ամենը պետք է տեղի ունենար ընդամենը բրիտանական սպայի դիտորդական մասնակցության պայմաններում:

Այս իրադարձությունների քննարկման հետ սերտորեն կապված Թիֆլիսում օգոստոսի վերջին-սեպտեմբերի սկզբին բացվեց երրորդ հայ-վրացական կոնֆերանսը, որին հայկական կողմից մասնակցեցին Ստ. Մամիկոնյանը (պատվիրակության նախագահ), Ս. Խաչատուրյանը, Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանը և Վրաստանում Հայաստանի զինվորական ներկայացուցիչ և ռազմական գործերով խորհրդական գեներալ Հ. Ա. Քիշմիշյանը (Քիշմիշևը), իսկ վրացական կողմից՝ Ներքին Գործերի նախարար Ն. Ռամիշվիլին, Կ. Սաբախտարաշվիլին, Սահմանադիր Ժողովի անդամ Ս. Մդիվանին և Ռազմական նախարարի օգնական, գեներալ Գեդևանով-Գեդեվանաշվիլին, և որպես դիտորդ մասնակցեց Դաշնակցային հրամանատարության ներկայացուցիչ գեներալ Վ. Բիչը: Կոնֆերանսի գլխավոր խնդիրները դարձան անգլիական զորքերի դուրսբերումից հետո Չեզոք գոտու ղեկավարման հարցերը:

Կոնֆերանսում Վ. Բիչը հայտարարեց, որ բրիտանական զորքերը պատրաստ են վերջնականապես տարհանվել, և այդ պարագայում Չեզոք գոտում կմնա միայն մեկ սպա՝ արբիտրաժի համար: Ընդ որում Բիչը վերապահում արեց, որ սպան կմնա, եթե շահագրգռված երկրները ընդունեն իրենց հետևյալ պայմանները.

1) Չեզոք տարածքի ղեկավարումը վստահվում է միայն երկու կոմիսարների՝ մեկական հոգի Վրաստանից և Հայաստանից, որոնք կաշխատեն մայոր Դուգլասի ղեկավարությամբ, և միայն արբիտրաժի անհրաժեշտության դեպքում գործը փոխանցվում է բրիտանական սպայի լուծմանը:

2) Արբիտրաժի նպատակով մնացող բրիտանական սպան պետք է ապրի Թիֆլիսում կամ որևիցե այլ կետում, ըստ իր ընտրության՝ կապ

պահպանելով Բորչալուի գավառի հետ այն ձևով, ինչպես ինքը նպատակահարմար կգտնի: Կոմիսարները նրա մոտ մուտք ունեն, երբ ցանկանան:

3) Բորչալու գավառի բյուջեում դեֆիցիտը հավասարաչափ բաշխվում է Վրաստանի և Հայաստանի միջև:

4) Վրաստանի և Հայաստանի կառավարությունները ընդունում են, որ ինչպես ինքնին հասկանալի է՝ բրիտանական սպայի հեռանալուց հետո, նրանք մտադրություն չեն ունենա նորից իրար հետ պատերազմել Բորչալուի համար, և որ նրանք բոլոր միջոցները կձեռնարկեն նման պատերազմի հնարավորությունից խուսափելու համար:

5) Բրիտանական սպան իրականացնում է արբիտրաժը՝ մինչև այն պահը, քանի դեռ ա) երկու հանրապետությունները ի վիճակի չեն լինի առանց արբիտրաժի բավարարվել, բ) բրիտանական զորքերը Անդրկովկասը չեն թողնի, նայած այն բանին, թե երկու դեպքերից որն ավելի վաղ տեղ կգտնի:

6) Բրիտանական սպայի ընտրությունը կախված է բրիտանական հրամանատարությունից[1072]:

Թվարկված պայմանները ընդունվեցին երկու պատվիրակությունների կողմից:

Կոնֆերանսի աշխատանքներն ընթացան 1919 թ. օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 1-ը, որի արդյունքում որոշվեց հետևյալը.

1. Բորչալուի գավառի Չեզոք գոտու վարչակարգը մնում է խառը,

2. Չեզոք գոտում խառը վարչակարգի ծախսերը երկու հանրապետությունների կառավարությունները պետք է բաժանեն,

3. Անփոփոխ թողնել այն գիծը, որտեղ կանգնած են վրացական և հայկական կայազորները, ինչպես նաև այդ կայազորների թվաքանակը[1073]: Խառը հանձնաժողովի կազմումը և գործուղումը Բորչալուի գավառ հանձնարարվում է Վրաստանի Ռազմական նախարար Գեղևանովին և Վրաստանում Հայաստանի Զինվորական ներկայացուցիչ գեներալ Քիշմիշյանին: Սեպտեմբերի 9-17-ին գնդապետ Ռ. Ն. Ստյուարտի

[1072] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 176-177: ՀԱԱ, Ֆ.Պ – 275, ց. 5, գ. 96, թ. 107:

[1073] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 55, թ. 76:

գլխավորությամբ որոշվեց նաև երկու հանրապետությունների զորքերի տեղաբաշխման վայրը և կարգը[1074]:

Կոնֆերանսի աշխատանքում մի քանի օր ընդմիջում եղավ, այդ ընթացքում պատվիրակությունները տեղեկատվության փոխանակություն կատարեցին իրենց կառավարությունների հետ, և վրացական պատվիրակությունը պահանջարկ ներկայացրեց ողջ Ախալքալաքի գավառի և Բորչալուի գավառում՝ Լեյլի-դաղ-Լոքի-Կրեստովայան անվերապահորեն զիջման մասին[1075]: Կապված օգոստոսին անգլիական զորամասերի հեռացման հետ, վրաց առաջնորդներն անցան ավելի փոխզիջումային քաղաքականության, և արդյունքում՝ առաջարկեցին Հայաստանին թողնել Աքորի գյուղից հարավ ընկած տարածքը, Լոռու դաշտը (Ջալալօղլի-Վորոնցովկա), իսկ Վրաստանին՝ այդ գծից հյուսիս ընկած հողերը և Ախալքալաքի գավառը՝ մինչև Փարիզի վեհաժողովի կողմից վերջնական որոշման կայացումը: Ի պատասխան, հայկական պատվիրակները հայտարարեցին իրենց անպատրաստակամության մասին՝ Վրաստանին զիջելու Խրամ-Ծալկայի շրջանը, Ախալքալաքի գավառի հյուսիսային և կենտրոնական մասերը, և այդպիսով՝ համաձայնություն չկայացավ: Քանզի Հայաստանի Հանրապետությունը զիջողականություն էր դրսևորել Վրաստանին զիջել Ախալքալաքի մեծ մասը և Խրամի շրջանը, Վրաստանը հայտարարեց տարանցիկ առևտրի, հեռագրագծի և մի շարք այլ արտոնությունների տրման պատրաստակամության մասին: Ստեղծված ռազմաքաղաքական և սահմանային-տարածքային արդյունքները բավարարեցին վրացիներին, որոնք բրիտանացիների հեռացումից օգտվելով, էլ ավելի կոնկրետացրին իրենց տիրապետությունը Լոռու Չեզոք գոտում և Ջավախքում: Status qvo-ն նրանց բավարարում էր և դրանից օգտվեցին լիարժեքորեն: Ակնհայտ էր, որ բրիտանացիների հեռացումից առաջ սկսեցին աստիճանաբար մարել այն հույսերը, որոնք նախնական առումով հայ քաղաքական-ռազմական շրջանները շաղկապում էին նրանց հետ, հիասթափությունը սկսում էր տեղ գտնել նրանց մոտեցումներում ու քաղաքական սպասելիքներում, ակնկալվող արդյունքներում, և սթափ, հնա-

[1074] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 96, թ. 127: «Слово», Тифлис, 11 сентября, 1919 г., N 21:

[1075] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 112, թ. 30 (հակ.).

րավորինս հաշվարկված դատողությունները, թեկուզև դժվարությամբ, սակայն աստիճանաբար սողոսկում էին հայ քաղաքական-կուսակցական միջավայր և ստեղծված իրավիճակում որոնվում էին հայ-վրացական ռազմաքաղաքական լարվածության մեղմացման նոր, ավելի արդյունավետ ուղիներ և նոր գերտերեր: Այս առումով ՀՀ պառլամենտի սոցիալիստ-հեղափոխականների խմբակցության ներկայացուցիչ Արշ. Խոնդկարյանը բազմանշանակ նկատել է. «Ո՞վ է այն երրորդը, որ պետք է դիմեն երկու ժողովուրդները՝ անհամաձայնության դեպքում: Գուցե անգլիացիք, եթե նրանք են, ապա մենք շատ բարիքներ չենք սպասում երրորդից: Ընդհակառակը, համոզված ենք, որ նա պիտի խորացնի հայ-վրացական հակամարտությունը: Արբիտրաժը, որպես կիսամիջոց ստիպված ենք ընդունել, սակայն մեր անհամաձայնության [դեպքում] վեճերի լուծման ժամանակ որպես միջնորդ պիտի հանդես գան միջազգային սոցիալիստական կազմակերպությունները և ոչ երբեք ուրիշ որևէ ուժ»[1076]:

Դեռ պարզ չէր, թե ինչ նոր գերտերեր են ժամանելու Անդրկովկաս: 1919 թ. կեսերին բրիտանացիները հեռանում են (բրիտանացիները այդ պահին դեռ մնում էին միայն Բաթումիում, այնտեղ պահելով որոշակի քանակությամբ զորքեր), և անդրկովկասյան ռազմաքաղաքական և դիվանագիտական միջավայրը նոր տագնապների մեջ էր հայտնվել: Տարածքային-սահմանային և այլ կարևոր հարցերի լուծումները անընդհատ ձգձգվում էին: Շուտով անգլիական արբիտրի դեր կատարող կապիտան Գուլսը երկու շահագրգիռ հանրապետությունների ներկայացուցիչներին սեպտեմբերի վերջերին հայտարարեց, որ Լոնդոնից ստացված համապատասխան կարգադրությունների համաձայն, իրենք այլևս իրավունք չունեն խառնվելու Չեզոք գոտու գործերին, որ դրանց լուծումը այդուհետ գտնվելու է Դաշնակցային գերագույն կոմիսար Վ. Հասկելի իրավասության տակ[1077], որը Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչներին հրավիրեց քննարկել և լուծել վիճելի հարցերը:

[1076] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., էջ 336:

[1077] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1919-1920 гг., стр. 199:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէր բաժանում Վ. Հասկելի դիրքորոշումը, որը հակված էր միայն մասնակի լուծումների՝ վճռելով Լոռու Չեզոք գոտու հիմնախնդիրը: Նա այլ կարծիքի էր, և գտնում էր, որ պետք է սահմանային-տարածքային հարցերը դիտարկվեն և լուծվեն ամբողջապես (կարելի է ասել՝ մեկ փաթեթով), և տվյալ վիճակում Վ. Հասկելի միսիան ձախողվեց: Կողմերին բավարարեց միայն Վ. Հասկելի հանձնարարականը՝ Չեզոք գոտու հսկողությունը հանձնել մայոր Լիվինգսթոնին որպես նահանգապետ կամ կոմիսար:

Միաժամանակ նախապատրաստություններ ձեռնարկվեցին հայ-վրացական բանակցությունների նոր փուլի՝ հերթական կոնֆերանսի հրավիրման համար: 1919 թ. սեպտեմբերի 6-ի և 14-ի միջակայքում ՀՀ կառավարության նախագահը Թիֆլիսում գտնված ժամանակ երկարատև հանդիպումներ ունեցավ Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Գեգեչկորու և Ներքին Գործերի մինիստր Ռամիշվիլու հետ՝ քննարկելով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բարդ ռազմաքաղաքական, այդ թվում տնտեսական բնույթի հարցերը, միաժամանակ երկու երկրների կառավարությունները պատրաստակամություն հայտնեցին քննարկել հայ-վրացական ռազմաքաղաքական դաշինքի հարցը[1078]: Ինչպես վկայում է Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Մ. Թումանյանը, այդ դաշինքի կնքման վրա հատկապես պնդում էին Ն. Ռամիշվիլին, որին հարում էին Ծերեթելին, քիչ տատանվող Ժորդանիան և ուրիշներ, որոնք գտնելով, որ Հայաստանի համար բացվել են նոր հեռանկարներ, կապված նրա հետագա ընդարձակման ծրագրերի իրագործման հետ, որոնք ապագա ունեն, արտահայտվեցին ոչ թե ի օգուտ Ադրբեջանի հետ դաշինքի հաստատման, այլ Հայաստանի Հանրապետության հետ, որին առաջարկվում էր զիջել Լոռին, Ախալքալաքը՝ Վրաստանին: Ն. Վ. Ռամիշվիլին ներկայացրեց իր դատողությունները, որոնք հանգում էին հետևյալին.

1. Հայաստանին ձեռնտու չէ մեկուսացված վիճակը,
2. Դաշնակցային պայմանագիրը Ադրբեջանի և Վրաստանի միջև, ձերբազատելով Ադրբեջանի ձեռքերը, վերջինիս հնարավորություն է տալիս հարձակվել Հայաստանի վրա,

[1078] Տե՛ս там же, стр. 199-200:

3. Վրաստանը մի շարք տարաձայնություններ ունի Ադրբեջանի հետ, հատկապես՝ սահմանային-տարածքային հարցերի վերաբերյալ (Զաքաթալայի, Փոյլի, Կ[Ղ]արայազ) և զուտ քաղաքական: Ադրբեջանը աջարներին գրգռում է Վրաստանի դեմ և իրականացնում Վրաստանի նկատմամբ թշնամական թուրքական ծրագիրը,

4. Հայաստանի հետ դաշինքը ձեռնտու է վրացիներին և բոլոր տեսանկյուններից հնարավոր է,

5. Վրաստանը հավանություն չի տալիս և համակրանքով չի նայում Ադրբեջանի ուժեղացմանը[1079]:

Պնդելով Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև դաշինքի կնքման վրա, Ռամիշվիլին դրա հետ մեկտեղ, առաջարկել էր վավերաթղթերով փոխանակվել Երևանում, մեծ հանդիսավորության պայմաններում, ցուցադրելով երկու հարևան ժողովուրդների եղբայրացումը:

Կոնֆերանսը վերաբացվեց սեպտեմբերի 17-ին Ն. Ռամիշվիլու և Ստ. Մամիկոնյանի իրար հերթագայող նախագահությամբ, որի հետ միասին հայկական պատվիրակության կազմի մեջ էր ընդգրկվել նաև ՀՀ պառլամենտի անդամ, գեներալ Հ. Ա. Քիշմիշյանը: Տարածքային հարցի քննարկման ժամանակ վրաց պատգամավորական խումբը հայտարարեց, որ սկզբունքորեն, իրենք ողջ Թիֆլիսի նահանգը համարում են Վրաստանի տարածքի անքակտելի մաս: Ն. Վ. Ռամիշվիլին առանց երկմտանքի հայտարարեց, որ ինքը չի ցանկանում նշել տարաբնույթ այն հանգամանքների մասին, որոնց վրա էլ հենվելով է, որ Վրաստանի կառավարությունը պնդում է իր բացահայտ հավակնության մասին Թիֆլիսի ողջ նահանգի նկատմամբ, այլ ինքը պարզապես նշում է, որ նահանգային սահմանը գոյացել է երկարատև պատմական գործընթացի հետևանքով, այլ ոչ թե ցարական Ռուսաստանի կամայական որոշմամբ[1080]: Սակայն վրաց պատգամախոսները նաև ի դեմս Ռամիշվիլու հայտարարեցին, որ իրենք համաձայն են ժամանակավորապես, մինչև այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք թույլ կտան Հայաստանին կենտրոնացնել հայկական ողջ բնակչությունը իրենց «սեփական տարածքի վրա», այսինքն՝ Թուրքահայաստանի հողերի վրա, որոնք հետա-

[1079] Տե՛ս Туманян М., Указ. соч., стр. 200:

[1080] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր II, էջ 190:

գայում կընդգրկվեն իր սահմանների մեջ՝ հարցի վերանայման պայմանով՝ Բորչալուի գավառի հարավային մասի որոշակի կտոր զիջել Հայաստանին: Եվ այսպես, արդյունքում հայ-վրացական ժամանակավոր սահմանը պետք է ձգվեր Սանահինի և Աքորիի շրջակայքից դեպի արևմուտք՝ Չեզոք գոտու անմիջական կենտրոնից մինչև Ախալքալաքի հարավային գիծը:

Իսկ ինչ վերաբերում է Ախալքալաքին՝ այդ խնդրում այլ վճիռ կայացվեց: Ներկայացնելով Լոռվա դաշտավայրի և Ալավերդու պղնձահանքերի դիմաց Ախալքալաքի մեծ մասից հրաժարվելու Հայաստանի կառավարության որոշումը՝ Ստ. Մամիկոնյանը հենվելով իր կողմից բերված վիճակագրության վրա, ըստ որի Չեզոք գոտում ապրում էր շուրջ 32 հազար հայ և ոչ մի վրացի, պնդեց, որ դրանով հանդերձ ՀՀ կառավարությունը «մեծ զիջումների» կգնա սահմանազատման խնդրում՝ Խրամ գետի ջրբաժանը և հյուսիսային Բորչալուն զիջելով Վրաստանին: Ստ. Մամիկոնյանը ասվածին հավելեց նաև հետևյալը. քանի որ պատմական վերջին ժամանակաշրջանում Ախալքալաքում հայկական գերակշռություն ստեղծվել է 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո թուրքական և ռուսական կայսրությունների կողմից ազգաբնակչությունների փոխանակման հետևանքով (դրանով, կարծում ենք, Ստ. Մամիկոնյանը վրացիների ձեռքը հարմար խաղաթղթեր փոխանցեց, ինչը նրանք շատ հմտորեն օգտագործեցին ընդդեմ Հայաստանի – Վ. Վ.), Հայաստանի կառավարությունը կզիջի այդ տարածքը Վրաստանին՝ բացառությամբ Ալեքսանդրապոլի մերձակայքի լճի հարավային շրջանից, և Միացյալ հայկական պետության հաստատումից հետո, կվերադասավորի բնակչության կատարված տեղաբաշխումը:

Միաժամանակ, վրաց պատվիրակները Ախալքալաքի հարցում արտահայտեցին իրենց մշտական մերժողականությունը, պնդելով, որ այդ խնդրում ոչ մի զիջում չի կարող լինել: Ավելին, վրաց պատվիրակները հայտնեցին, որ իրենք պատրաստակամ են տնտեսական բնույթի զիջումների, եթե իհարկե, Հայաստանը գնա տարածքային զիջումների: Ավելին, Ն. Ռամիշվիլին նույնիսկ ցինիկաբար հայտարարեց, որ անիմաստ է ավելի բարենպաստ պայմաններ ակնկալել, մասնավորապես հայերի կողմից ընդունվող Անտանտի երկրներից, պնդելով այն մասին, թե քանի որ Հայաստանը հավանաբար ընդգրկելու է Թուրքահայաստա-

նի մեծ մասը, անհեթեթ է ճամարտակել Թիֆլիսին սահմանակցող երկու փոքրիկ շրջանի համար, այսինքն՝ ըստ նրա առաջարկի, Վրաստանի կողմից կատարվող տնտեսական զիջումները պետք է հավասարակշռվեին Հայաստանի Հանրապետության կողմից կատարվելիք տարածքային զիջումներով: Ռամիշվիլուն կրկնորդեց քաղաքական բեմահարթակում երկրորդական ջութակի դեր կատարող Սեմյոն Մդիվանին, որը հայկական կողմին հորդորեց նկատի ունենալով արվող տնտեսական զիջումները, համաձայնվել Ռամիշվիլու ուրվագծած սահմանների հետ: Դրան ի պատասխան, առարկելով վրացական պնդումներին, Ստ. Մամիկոնյանը հայտարարեց, որ մեծ նշանակության տարածքային-քաղաքական հարցերը չպետք է շփոթել տնտեսական բնույթի հարցերի հետ, «տարածքը չեն զիջում՝ փոխանակելով վագոնների և շոգեքարշերի հետ», միաժամանակ վրացիներին հասկացնելով, որ Հայաստանը զիջումների ուղին է բռնել ոչ թե թշվառությունից, այլ այն պատճառով, որ հայ և վրացի ժողովուրդները առաջիկա դժվարին ժամանակներում պետք է կողք-կողքի քայլեն[1081]:

Արդյունքում, երկու կողմերը նշեցին ապագա սահմանի նախագիծը: Հայկական պատվիրակությունը զգալի զիջումներ կատարեց Բորչալուի գավառում և պատրաստակամություն հայտնեց Ախալքալաքի գավառի մեծ մասը զիջել Վրաստանին: Ըստ Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Մ. Թումանյանի պնդման, հայկական կողմը նույնպես ակնարկեց Ախալքալաքի խնդրում նոր զիջումների գնալու հնարավորության մասին, այն դեպքում, եթե Վրաստանը համաձայնվեր ընդունել Հայաստանի կողմից առաջարկվող սահմանները Բորչալուի գավառում: Առաջարկելով այդ տարբերակը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ցանկանում էր իր տնօրինության տակ առնել Լալվար-Այրում գիծը, Ալավերդու գործարանները թողնելով Վրաստանին (Ալավերդու գործարանները պետք է հանձնվեին Վրաստանին, իսկ տարածքը մնալու էր Հայաստանի սահմաններում): Հայաստանի Հանրապետությունը պատրաստակամություն դրսևորեց Վրաստանին հնարավորություն տալ անվճար օգտվել երկաթուղագծի Ալավերդի-Այրում հատվածից՝ գործարանների նպատակ-

[1081] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 203:

ների համար, վրացական պլատֆորմի հիման վրա: Վրաստանը ցանկանում էր ստանալ Ալավերդի-Այրում գծի 18[1/2] վերստը, սակայն հայկական կառավարությունը գտնում էր անհրաժեշտ հօգուտ Հայաստանի այդ գիծը պահել՝ Այրումի հետ կապը պահելու համար, որտեղից ընթանում էր Քուլպ-Դիլիջան խճուղին՝ Ղազախի շրջանը սպասարկելու համար: Այն անհրաժեշտ էր նաև Ադրբեջանի հետ հնարավոր պատերազմի դեպքում զորքերի տեղափոխման համար: Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը ի վերջո որոշեց անհրաժեշտության դեպքում նույնիսկ հրաժարվել Ախալքալաքի հարավային մասից՝ ապահովելու համար հօգուտ Հայաստանի Լոռու դաշտավայրն ու Ալավերդու պղնձահանքերը, և տարածքավեճում այդպես էլ որոշակիություն չմտցվեց այն հարցում, թե պատրա՞ստ է արդյոք մենշևիկյան Վրաստանը հանձնել ամբողջ Չեզոք գոտին: Առաջարկված նախագծերից ոչ մեկը չանցավ, բախվելով Ալավերդու պղնձահանքերի կարծրությին, և այդ խնդրում իրենց օգտին Ալավերդին ունենալու կողմերից յուրաքանչյուրի ցուցաբերած վճռականությունը ձախողեց աշխատանքների հետագա արգասավոր ընթացքը և գործնականում կասեցրեց քննարկումների հետագա առաջխաղացումը: Այս փաստի մասին ակնհայտորեն ընդգծվում է նաև ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղված Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարի 1920 թ. դեկտեմբերի կեսերի մի զեկուցագրից, որը փաստում էր Լոռի-Ախալքալաքի և Չեզոք գոտու հարցում փոխզիջումային համաձայնության ձեռք բերման ձախողման, ինչպես նաև վրացիների բացահայտ ձգտման մասին տիրելու ոչ միայն ողջ Ախալքալաքին որպես անբեկանելի տարբերակ՝ այն համարելով Վրաստանի տարածքի անքակտելի մաս, այլև Ալավերդուն և նրա շրջակայքի պղնձահանքերին, կամ էլ ծայրահեղ դեպքում այն թողնել ժամանակավորապես Հայաստանի Հանրապետության տրամադրության տակ՝ մինչև հարցի լուծումը Փարիզի հաշտարար կոնֆերանսում[1082]: Դրան զուգահեռաբար վրացական իշխանությունները մերժեցին Հայաստանի Հանրապետությանը տրամադրել տեխնիկական սարքավորումներ ու գնացքների շարժակազմերի համար պահեստամասեր թիֆլիսյան պահեստներից, ինչպես նաև Ման-

[1082] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 2, գ. 71, թ. 4-6:

թաշովի պահեստներում ամբարված նախկին Հայկական կորպուսի ռազմական սպառազինությունների և նույնիսկ վրաց-հայկական պատերազմից ի վեր Թիֆլիսի դրամատներում սառեցված Հայաստանի Հանրապետության 5 միլիոն ֆունտ ստեռլինգի հատկացումը և այլն:

Այս անգամ էլ համաձայնություն չկայացվեց և Ն. Ռամիշվիլին առաջարկեց դադարեցնել կոնֆերանսի աշխատանքները, որպեսզի պատվիրակություններն իրենց կառավարություններից ստանան անհրաժեշտ հրահանգներ, ինչն էլ ընդունվեց[1083]:

Կոնֆերանսի փակումից երեք շաբաթ անց, Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների Արտաքին Գործերի նախարարների միջև նոտաներ փոխանակվեցին՝ կապված Վրաստանի կառավարության դիրքորոշման հետ, որը Ախալքալաքի գավառում ձեռնարկեց Սահմանադիր ժողովի և տեղական հաստատությունների ընտրություններ, ազգրարային ռեֆորմ և երիտասարդ զորակոչային տարիքի մարդկանց ցուցակների կազմում, որոնք պետք է Վրաստանի դրոշի տակ զորակոչի ենթարկվեին:

Ըստ վրացական աղբյուրների, հայերի կողմից հավակնվող տարածքներում 1919 թ. օգոստոս-սեպտեմբերին Վրաստանի կառավարությունն անցկացրեց ընտրություններ, որի արդյունքում, Ախալցխայի 35 հազար ընտրողներից ընտրություններին մասնակցեց 30 հազար մարդ, նրանցից 24 հազարը իրենց ձայնը տվեցին վրացական սոցիալ-դեմոկրատներին, 2500-ը՝ ազգային-դեմոկրատական կուսակցությանը, և միայն 3000-ը՝ ՀՅԴ-ին, իսկ արդեն Ախալքալաքում քվեարկեցին 21 687 մարդ, որից 13 հազարը իրենց ձայնը տվեցին սոցիալ-դեմոկրատներին, 7 հազարը՝ դաշնակցականներին: Այդ կապակցությամբ ամբարտավան բնույթի հոդված տպագրվեց «Էրթոբա» թերթում. «Երևանյան կառավարությունը վստահեցնում էր երկրին, թե Ջավախեթիան (Ջավախքը - Վ. Վ.) պատկանում է Հայաստանին, որ հայերի մեծամասնությունը չի ցանկանում մնալ Վրաստանի հետ և ձգտում է Հայաստանին: Ընտրություններն ապացուցեցին, որ այդ մարզերի բնակչության 2/3-ը Վրաս-

[1083] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 204:

տանի միսն ու արյունն է»[1084]: Հենց այս ընտրությունների հետ կապված, ՀՀ կառավարությունը վերսկսեց իր բողոքարկները Ախալքալաքի ռազմական գրավման դեմ, միաժամանակ այդ մասին բողոքարկ ներկայացնելով անգլիական ռազմաքաղաքական ներկայացուցչությանը, որը սակայն պատճառաբանեց վրացական կողմի իրավացիությունը ընտրությունների խնդրում, որ վրացական վարչակազմին իրավունք է տրված գավառը կառավարելու, և որ Ախալքալաքի գավառի ճակատագիրը վճռվելու է Փարիզի կոնֆերանսի կողմից, իսկ հայկական կողմի համառ պնդումները ընտրությունները ոչ համամասնորեն և ազնվորեն անցկացվելու վերաբերյալ՝ ուղղակի անտեսվեցին դաշնակիցների կողմից: Նմանատիպ նոտաներ կողմերի միջև փոխանակվել էին դեռ օգոստոսին, որը ռազմաքաղաքական լարվածության նոր ալիք էր առաջ բերել երկու հանրապետությունների միջև: Հայկական կառավարությունը առաջարկեց հետաձգել ագրարային ռեֆորմը և երիտասարդների զորակոչը մինչև սահմանային-տարածքային հարցերի լուծումը, սակայն այն հանդիպեց Վրաստանի կառավարության հակազդեցությանը, որն էլ ավելի սրեց իրավիճակը՝ հայտարարելով Ախալքալաքի գավառի ոչ վիճարկելի լինելու հանգամանքի մասին: Հայաստանի Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը ընտրությունների հետ կապված հայտարարեց քվեների անվավեր լինելու մասին, որովհետև Ախալքալաքի գավառը «անբաժանելիորեն հայկական է»: 1919 թ. սեպտեմբերի 25-ին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրին ուղղված գրությունում ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ալ. Խատիսյանը ի պատասխան հայկական կողմի օգոստոսի 9-ի նոտայի՝ վրացական կողմի օգոստոսի 15-ի պատասխան նոտայի, հայտնում էր, որ Ախալքալաքի գավառում Վրաստանի իշխանությունների կողմից զեմստվո մտցնելու, հողային ռեֆորմ և Սահմանադիր ժողովի ընտրություններ անցկացնելու, ինչպես նաև զորակոչային երիտասարդների ցուցակներ կազմելու կապակցությամբ իր բողոքն էր հայտնում, գտնելով, որ իրենք բազմիցս ի դեմս Հայաստանի լիազոր ներկայացուցիչների հայտարարություններ են արել, որ Ախալքալաքի գավառը Հայաստանի Հանրապետության անքակտելի մասն է կազմում, նաև առարկելով վրացական կառավա-

[1084] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html: «Эртоба» (Тифлис), № 186, 21 августа, 1919 г.

րության այն պնդման դեմ, թե իբր Ախալքալաքի գավառի վիճարկելի լինելու մասին հարցը տեղ չի գտել Հայաստանի և Վրաստանի կառավարությունների լիազոր-պատվիրակների դաշնակցային հրամանատարության մասնակցությամբ 1919 թ. հունվարի 9-ից 17-ը հրավիրված կոնֆերանսի օրակարգում: Այս գրության մեջ Ալ. Խատիսյանը լրացուցիչ պարզաբանման գնալով, վրացական կողմին հայտնում էր, որ հայկական պատվիրակության կողմից այդ հարցը քննարկումից հանվել է՝ ընդամենը միայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն դաշնակցային հրամանատարության կողմից ընդունվել է որպես հատուկ խորհրդակցությունում քննարկման ենթակա վիճարկելի և որպես նշված կոնֆերանսի օրակարգի հետ անմիջական կապ չունեցող հարց: Ալ. Խատիսյանը եզրահանգելով, որ կասկածի ամենևին էլ ենթակա չէ, որ Ախալքալաքի գավառը ՀՀ անքակտելի մասն է, և գտնելով, որ տվյալ պահին երկու հանրապետությունների միջև սահմանավեճերի խաղաղ վճռման հարցը Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրվելիք հատուկ խորհրդակցության առարկա է հանդիսանում, առանձին հակաառաջարկ էր մտցնում մինչև Ախալքալաքի հարցի վերջնական լուծումը ձեռնպահ մնալ՝ 1) հողային ռեֆորմի անցկացումից, 2) նշված գավառի զորակոչային տարիքի երիտասարդների ցուցակների կազմումից, իր փաստարկները հիմնավորելով Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարից ստացված հավաստի տեղեկության հիման վրա[1085]:

Իսկ արդեն 1919 թ. հոկտեմբերի 6-ի գրությունում՝ ի պատասխան Վրաստանի կառավարության կողմից ուղարկված օգոստոսի 15-ի հեռագրի, որն էլ իր հերթին ՀՀ կառավարության օգոստոսի 9-ի հակապատասխանն էր, ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ալ. Խատիսյանը կրկին բողոքարկում էր Վրաստանի կառավարության կողմից Ախալքալաքի գավառում զեմստվո մտցնելու, հողային ռեֆորմ և Սահմանադիր ժողովի ընտրություններ անցկացնելու և զորակոչի ենթակա երիտասարդների զինակոչային ցուցակներ կազմելու մեջ: Միաժամանակ, Ալ. Խատիսյանը պնդում էր բազմիցս հայկական կողմից բռնած դիրքորոշման և ներկայացված այն տեսակետի մասին, ըստ որի Ախալքալա-

[1085] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 99, թ.149: ՀԱԱ, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 62, թ. 84:

քի գավառը անվիճարկելիորեն համարվում էր Հայաստանի անքակտելի մասը, որ չեն կարող համաձայնվել վրացական պնդման հետ, որ այն բոլորովին չի քննարկվել 1919 թ. հունվարին հրավիրված կոնֆերանսում: Ալ. Խատիսյանը նաև պնդում էր այդ նոտայում, որ ինքնին Ախալքալաքում վրացական վարչակարգի նկատմամբ դաշնակցային հրամանատարության հսկողության սահմանումը, վրացական զորամասերի թվաքանակի կրճատումն իսկ փաստում են գավառի վիճարկելի լինելու մասին Վրաստանի ու Հայաստանի հանրապետությունների միջև, և վերջին հաշվով կոչված են եղել երաշխավորել Հայաստանի շահերը՝ մինչև հարցի վերջնական լուծումը: Նոտայի վերջնամասում, Ալ. Խատիսյանը ելնելով վերը բերվածից, և Հայաստանի կառավարության Ախալքալաքի գավառի վերաբերյալ ունեցած իրենց անփոփոխ տեսակետից, որպես Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս, ՀՀ կառավարության անունից առաջարկում էր անցանկալի սրացումներից խուսափելու համար, չմերժել և մինչև Ախալքալաքի գավառի հարցի վերջնական լուծումը ձեռնպահ մնալ հողային ռեֆորմի անցկացումից, և նշված գավառի զորակոչային տարիքի երիտասարդների ցուցակներ կազմելուց[1086]:

Սակայն Վրաստանը ամենևին էլ քայլեր չձեռնարկեց այդ ուղղությամբ և իր դիրքորոշման մեջ մնաց անզիջում, լարվածության նոր և անցանկալի շերտանստվածքներ մտցնելով հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների ներկապնակում: Իր հերթական նոտաներից մեկում, և մասնավորապես 1919 թ. հոկտեմբերի 17-ի նոտայում՝ ի պատասխան ՀՀ կառավարության հոկտեմբերի 6-ի նոտայի, Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորին հայտնում էր իր կառավարության տեսակետը ՀՀ կառավարության կողմից Ախալքալաքում զեմստվո մտցնելու, հողային ռեֆորմ և Սահմանադիր ժողովի ընտրություններ, երիտասարդների զորակոչ անցկացնելու հարցերի վերաբերյալ: Եվգ. Գեգեչկորին կրկին պնդել էր, որ Ախալքալաքի գավառի վիճարկելի լինելու մասին հարցը 1919 թ. հունվարի 9-ից 17-ը տեղի ունեցած կոնֆերանսում չի քննարկվել, որ իրենք չեն կարող համաձայնվել հայկական կողմից ներկայացված տեսակետի հետ, որ Վրաս-

[1086] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 99, մաս I, թ. 13:

տանի Հարապետության կողմից Ախալքալաքի գավառի զբաղեցման հարցը ո՛չ պատմական, ո՛չ քաղաքական, ո՛չ բարոյական առումներով վիճարկելի չի հանդիսանում, որ այդ հանգամանքը ոչ մի կերպ չի կարող ազդել սահմանատարածքային սահմանագծման մասին տարվող բանակցությունների ընթացքի վրա՝ քննարկվող խնդրի վերաբերյալ երկկողմանի համաձայնության հասնելու նպատակով, և որ Վրաստանի կառավարությունը այդ տեսանկյունից իր գործողությունները միանգամայն ճիշտ է համարում՝ հայերի կողմից առարկման և քննարկման ոչ ենթակա, որ դեռ 1918 թ. իրենք միանգամայն որոշակի արտահայտել են իրենց տեսակետը Ախալքալաքի գավառի մասին որպես Վրաստանի տարածքի անվիճելի մաս[1087]:

Իր հերթին, Վրաստանը գոհունակություն արտահայտելով Ախալքալաքում ընտրությունների արդյունքների կապակցությամբ, միաժամանակ դժգոհում էր, որ Չեզոք գոտին և Լոռու տեղամասի հարավային մատույցները դուրս էին մնացել Վրաստանի իրավական վերահսկողության դաշտից: Ավելացրած նաև այն, որ բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչության ճնշմամբ, վրացական կողմը հարկադրված էր իր զորամասերը դուրս բերել հյուսիսային Արդահանից, որին զուգահեռաբար արտոնագրվել էր հայկական զորամասերի և վարչակարգի մուտքը Կարսի մարզ, ներառյալ Արդահանի գավառի հարավային կեսը: Հայկական կողմը համառորեն փորձեց հասնել որոշ զիջումների, սակայն ապարդյուն, միաժամանակ խուսափելով ռազմաքաղաքական հարաբերությունների նոր բարդացումներից, և՛ 1919 թ. փետրվարի 25-ին, և՛ մարտի 3-ին վրացական կողմի հետ հանդիպումներից հետո որոշ պայմանավորվածություններ էին ձեռք բերվել փոխադարձորեն երկու հանրապետությունների անկախության ճանաչման, երկաթուղային ապրանքափոխանակության կարգավորման հարցերի շուրջ և այլն[1088]:

Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները թևակոխեցին հերթական՝ անկանխատեսելի զարգացումներով լի փուլ:

[1087] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 99, թ. 147:

[1088] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 132:

2. Վրաստան-Հայաստան ռազմաքաղաքական հարաբերությունների կարգավորման փորձերը և փոխզիջումների տարբերակները

1918 թ. դեկտեմբերյան վրաց-հայկական պատերազմը և 1919 թ. հունվարյան զինադադարը, որն ավարտվեց հաշտության համապատասխան համաձայնագրի կնքմամբ, չհանգեցրեց Հայաստանի և Վրաստանի միջև սահմանային-տարածքային հակասությունների հանգուցալուծմանը, ռազմաքաղաքական հարաբերությունների էական բարելավմանը և առկա լարվածության վերացմանը: Սահմանազատման շուրջ նոր վիճաբանություններ և տարակարծություններ առաջացան 1919 թ. վերջնամասում -1920 թ. սկզբին՝ կապված Վրաստանի Հանրապետության տարածքային հավակնությունների հետ անվիճելիորեն հայկական մարզերի՝ Կարսի նկատմամբ և Բաթումիի մարզի շուրջ առաջացած լարվածության հետ: Ի դեպ, հարկ է նշել, որ Կարսի մարզում 1920 թ. հուլիսի 27-ի տվյալներով հաշվվել է 394 հազար մարդ, որից 205 հազարը թուրքեր էին, հայեր էին 85 հազարը՝ առանց տաճկահայերի, որոնցից 18-20 հազարը Հյուսիսային Կովկասում էին այդ պահին, 48 հազարը՝ հույներ էին, 31 հազարը՝ ռուս, որոնցից մինչև 12 հազարը՝ Հյուսիսային Կովկասում, և 4-5 հազարը՝ այլազգիներ, այդ թվում վրացի, լեհ, էստոնացի, գերմանացի և այլն[1089]: Բերելով մի շարք էթնիկական-պատմական բնույթի փաստարկումներ, մենշևիկյան Վրաստանը հավակնում էր ոչ միայն Բաթումիի մարզի, այլ նաև Կարսի մարզի Արդահանի և Օլթիի օկրուգների նկատմամբ, այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը ձգտում էր վերահաստատել հայկական պետականության օրինական իրավունքները Օլթիի մարզի և Արդահանի մարզի մի մասի նկատմամբ:

Այս կապակցությամբ տեղին է նաև նշել, որ Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների տարածքային ձգտումները արևմտյան

[1089] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 1022, ց. 2, գ. 156, թ. 4:

ուղղությամբ մինչև 1914 թ. ռուս-թուրքական սահմանագիծը կատեգորիկ ժխտողական հակադրության հանդիպեցին Կարսի մարզում այսպես կոչված «Հարավարևմտյան Կովկասյան Հանրապետության» կողմից, որն իր անկախության հռչակումը հրապարակեց 1919 թ. հունվարի 18-ին Մուսուլմանական Ազգային խորհրդի և թուրքական 9-րդ բանակի նախաձեռնությամբ[1090]: 1919 թ. փետրվարին գեներալ Վ. Թոմսոնը կապված նաև Կարսի մարզի Հարավարևմտյան կովկասյան մուսուլմանական հանրապետության առաջնորդ Ֆահրուդդին Փիրօղլու կողմից բրիտանական ռազմաքաղաքական անձնակազմի նկատմամբ ոչ բարյացակամ, հաճախ թշնամական վերաբերմունքի դրսևորումների հետ, լիազորություններ տվեց ՀՀ կառավարությանը իր զորքերով զբաղեցնելու Կարսի մարզի տարածքը, անհրաժեշտության դեպքում հենվելով բրիտանական 27-րդ դիվիզիայի զորամասերի աջակցության վրա[1091]: Ռազմական գործողությունների հետևանքով, Կարսի Հարավարևմտյան մուսուլմանական հանրապետությունը 1919 թ. ապրիլի 12-ին պարզապես վերացվեց, իսկ նրա առաջնորդները ձերբակալվեցին և արտաքսվեցին մարզի տարածքից դուրս, և այդ մասին գեներալ Վ. Թոմսոնը տեղեկացրեց Կոստանդնուպոլսի գլխավոր սպայակույտին: Այս խնդրում որոշակի դեր խաղաց նաև Վրաստանի կառավարության նախագահ Ն. Ժորդանիայի կոշտ դիրքորոշումը, որը դեռ փետրվարի 15-ին Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Ֆորեստյեր-Ուոքերից պարզապես պահանջեց հրաժարվել Հարավարևմտյան մահմեդական հանրապետության գաղափարից և հնարավոր աջակցությունից, առավել ևս այն Թուրքիային հանձնելու կամ բրիտանական գեներալ-նահանգապետությանը ենթարկելու մտադրությունից, և գործնականում այստեղ հայ-վրացական շահերի բախում տեղի չունեցավ, և ավելին, այն բանից հետո միայն, երբ Ֆորեստյեր-Ուոքերի պահանջով Հայաստանից հեռացվեց Դենիկինի ներկայացուցչությունը և քիչ թե շատ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Կարսի մարզը Հայաստանի Հանրապետությանը միացնելու քաղաքական որոշումը իրողություն դարձնելու համար: Կարսի և Կաղզվանի մարզերի մեծ մասը գրավվեց

[1090] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, էջ 2: Hovannisian R G., The Republic of Armenia, vol. I, p. 205:

[1091] Տե՛ս Hovannisian R. G., The Republic of Armenia, vol. I, pp. 210-213:

հայկական զորքերի կողմից, բացառությամբ այդ տարածքների առանձին մասերի, որոնք մնացին քուրդ-թաթարա-թուրքական հրոսակախմբերի ազդեցության տակ, իսկ ողջ Արդահանի մարզը գրավվեց Վրաստանի զորքերի կողմից, իսկ ինչ վերաբերում է Բաթումիի մարզին, ապա այն և Օլթիի մարզի մի մասը մնացին բրիտանական օկուպացիայի ոլորտում: Բուն Կարսում հայկական վարչակարգին զուգահեռ կար նաև բրիտանական ուժեղ կայազոր: Դեռ 1919 թ. մարտի կեսերին, երբ Կարսի մարզում ռազմաքաղաքական լարված վիճակ էր ստեղծվել և համառ մարտեր էին ընթանում, գեներալ Վ. Թոմսոնը նոր սահմանազատիչ գծեր հաստատեց հայ-վրացական հակամարտության օբյեկտ հանդիսացող մրցակցային բնույթի սահմանազատիչ գոտում, և փորձեց յուրովի հաշտության եզրեր հաստատել հայերի և վրացիների միջև՝ ձգտելով նրանց միջև տարաձայնությունները հարթել, որը դյուրին խնդիր չէր: Ըստ Թոմսոնի, մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի կողմից արդարացի և վերջնական արբիտրաժային վճռի կայացումը, ՀՀ իրավասությանն էին անցնում միայն Կարսի և Կաղզվանի մարզերը, իսկ Վրաստանը իր ենթակայության տակ վերցրեց Արդահանի մարզի հյուսիսային մասը, ներառյալ Ալավերդի գյուղը և հանքերը, ընդ որում սահմանազատիչ գիծն անցնում էր մոտավորապես Քուռ գետի երկայնքով, իսկ Օլթիի մարզը և Արդահանի մարզի մնացյալ մասը հանձնվեցին Բաթումիում տեղակայված բրիտանական վարչակազմի ենթակայությանը՝ Բաթումիի բրիտանական զինվորական նահանգապետի իրավասության ներքո: Միաժամանակ գեներալ Վ. Թոմսոնը կատեգորիկ պնդեց Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև ժամանակավոր սահմանազատիչ գիծ անցկացնելու վրա, ինչպես նաև լիովին և վերջնականապես օրակարգից հանել հայկական պահանջատիրությունը Ախալքալաքի գավառի կամ նրա որևիցե մասի նկատմամբ, որով Վրաստանին էր անցնում Ախալքալաքի գավառը և Բորչալուի գավառի Սանահինից դեպի հյուսիս ընկած մասը, ինչպես նաև առաջարկեց Լոռու Չեզոք գոտին բաժանել Հայաստանի և Վրաստանի միջև, և վերջնական առաջարկվող տարբերակում՝ ըստ այդ պլանի հանրագումարային արդյունքի՝ Վրաստանին էր հանձնվում Ալավերդու պղնձաձուլական գործարանների շրջանը, իսկ Հայաստանի Հանրապետությանը՝ Սանահին գյուղը և կայարանը, ընդ որում առա-

ջարկվում էր այդ վերջին շրջաններում զորաջոկատները հասցնել նվազագույնի[1092], որի հետ Ալ. Խատիսյանը իր կատեգորիկ անհամաձայնությունն արտահայտեց Թիֆլիսում տեղի ունեցած 1919 թ. ապրիլի 11-ին հերթական խորհրդակցության ժամանակ, որում նախագահել էր գեներալ Վ. Բիչը, որը նաև տեղեկացրել էր, որ Վրաստանի և Հայաստանի սահմանների հարցը մնում է առկախ՝ մինչև գեներալ Ջ. Միլնի ժամանումը Թիֆլիս, ապրիլի 15-ին, ինչի մասին գեներալ Վ. Թոմսոնը տեղեկացրել էր Ալ. Խատիսյանին: Ի վերջո, այս ամենի մասին ՀՀ Նախարարների խորհրդում 1919 թ. ապրիլի 11-ին Ալ. Խատիսյանի ունեցած զեկուցումից հետո, Հայաստանի և Վրաստանի միջև սահմանների առնչությամբ ընդունված որոշման հետ կապված, ընդգծվեց, որ որպես նվազագույն պահանջ, պետք է համաձայնվել, որ գիծը անցնի Սադախլո կայարանից հյուսիս, Դամիայի վրայով դեպի Ազրիկահար սարը, ապա դեպի Թափարավան, Թուման գյոլ ու Խանդո լճերի և Սուլգա գյուղից հյուսիսային ուղղությամբ[1093]:

Հայկական կողմը գայթակղված Կարսի և Կաղզվանի վերաբերյալ բրիտանական վճիռներից, գործնական ոչ մի առարկությամբ հանդես չեկավ ընդդեմ Վ. Թոմսոնի իրավարար վճռի հյուսիսային Արդահանում վրացական կառավարման դեմ, միաժամանակ ըստ իր բռնած դիրքորոշման, փորձեց ելք որոնել շրջանցելու Ախալքալաքի և Լոռու շուրջ վեճի վերաբերյալ Վ. Թոմսոնի անընդունելի լուծումը: Շուտով գեներալ Թոմսոնի վճռով, 1919 թ. ապրիլի 2-ին 27-րդ բրիտանական զորաբաժնի հարավային խմբի ընդհանուր հրամանատար գեներալ Քիթ Մեյթլենդ Դեյվիին է հանձնարարվում բրիտանական այդ զինուժի աջակցությամբ իր ղեկավարման տակ վերցնել Երևանը, Բորչալուի գավառի Չեզոք գոտին, Նախիջևանի շրջանը և Կարսի մարզը, ընդ որում ըստ նախնական պլանի վերացվելու էր Բորչալուի զինվորական նահանգապետությունը և այդ տարածքը ըստ գեներալ Դեյվիի՝ հանձնվելու էր կամ Հայաստանի կամ Վրաստանի վարչակազմի տնօրինմանը, կամ էլ բաժանվելու էր երկու պետությունների միջև, այսինքն պարզ էր, որ լուծումներ էին որոնվում, որոնք իրենց հիմքում բրիտանական ռազմավարության շահերից բխող մտահղվածության ծնունդ և արդյունք էին:

[1092] Տե՛ս Hovannisian R. G., The republic of Armenia, vol. I, p. 213:
[1093] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 199, ց. 1, գ. 100, թ. 72:

Հարկ է ասել, որ եթե գեներալ Վ. Թոմսոնի այս վճիռները Թիֆլիսում ընդունեցին զուսպ և հավասարակշռված, առանց ոգևորության, գտնելով, որ դրանք ընդամենը ժամանակավոր որոշումներ են բրիտանական գեներալի կողմից, ապա Երևանում դա առաջ բերեց դժգոհություն: Հայկական կառավարությունը հավանություն տալով Արդահանի մարզում առաջարկված սահմանազատման տարբերակին, միաժամանակ բացեիբաց ցույց տվեց իր անպատրաստակամությունը և չկամությունը՝ լիովին հրաժարվելու իր պատմաքաղաքական իրավունքներից Ախալքալաքի մարզի, և մասնավորապես Լոռու նկատմամբ, այդ հարցում ստանալով Թիֆլիսում ԱՄՆ-ի ռազմաքաղաքական միսիայի ղեկավար Բենջամին Մուռի և Բաթումիի մարզի բրիտանական գեներալ Վ. Ջ. Կուկ-Կոլլիսի աջակցությունը[1094]: Արդյունքում, վրացական զորքերը Արդահանի մարզում ետ քաշվեցին դեպի Վ. Թոմսոնի սահմանած գծից այն կողմ, սակայն հայ-վրացական սահմանագծի բոլոր տեղամասերում և Չեզոք գոտում ստատուս-քվոն պահպանվեց:

1919 թ. ապրիլի 2-ին ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը ի պատասխան Երևանում բրիտանական ռազմական ներկայացուցչության 1919 թ. ապրիլի 1-ի գրության, վրացական կառավարության առաջարկով Ախալքալաքում զորաջոկատի քանակը երկուսից երեքի հասցնելու, և մեկ մարտկոցի մասին, հայտնում էր, որ ՀՀ կառավարությունը չի առարկի վրացական զորաջոկատների ուժեղացման դեմ, եթե անգլիական հրամանատարությունը և վրացական կառավարությունը իրենց հերթին, համաձայն լինեն հայկական զորամասերի կողմից զբաղեցնելու Բորչալուի գավառի մի մասը՝ մինչև Խրամ գետը, քանզի այնտեղով էր անցնում երկաթգծի միակ գիծը, որ կապում էր Հայաստանի Հանրապետությունը արտաքին աշխարհի հետ[1095]: ՀՀ Նախարարների խորհուրդում 1919 թ. ապրիլի 4-ին լսվեց նախարարապետ Հովհ. Քաջազնունու զեկուցումը Թիֆլիս կատարած այցի և գեներալ Վ. Թոմսոնի խորհրդակցությանը քննարկված հարցերի մասին՝ կապված Ախալքալաքի և Բորչալուի գավառներում տիրող վիճակի և հետագա լուծումների մասին: Որոշում ընդունվեց, որ եթե վրացական զորամասերը ուժեղացվելու են Ախալքալաքի գավառում, ապա դա թույլ տալ՝

[1094] Տե՛ս Hovannisian R. G., The republic of Armenia, vol. I, pp. 218-220:

[1095] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 99, թ. 48:

պայմանով, որ կողմերն ուղարկվեն Բորչալուի Չեզոք գոտի, մինչև Խրամ գետը՝ երկու գումարտակ զորք և երկու թնդանոթ[1096]:

Եվ այդուհանդերձ, երկու հանրապետություններն էլ կարիք էին զգում անդրկովկասյան տարածաշրջանում ռազմաքաղաքական հարաբերությունների նոր բովանդակության ձևավորման և վիճարկելի հիմնախնդիրների կարգավորման: 1919 թ. կեսերին կարծես թե Հայաստանի և Վրաստանի կառավարական շրջանների միջև մերձեցման և հարաբերությունների բարելավման երկուստեք ցանկալի միտումներ նկատվեցին: Տեղի ունեցան պատգամավորությունների փոխանակումներ և երկկողմանի բանակցություններ, որոնք ընթացան 1919 թ. ամռան և աշնան ընթացքում, որոնք էլ հանգեցրին այդ նույն տարվա վերջին որոշակի տեսանկյունից մի շարք փոխշահավետ համաձայնությունների կայացմանը՝ մասնավորապես ազգային փոքրամասնություններին, տնտեսությանը և տրանզիտին վերաբերող:

Ողջ 1919 թ., ընթացքում, վրաց-հայկական պատերազմից հետո ընկած ժամանակահատվածում, սահմանային-տարածքային հարցերը ոչ մի կերպ երկու երկրների դիվանագիտական և ռազմաքաղաքական փոխհարաբերությունների օրակարգից դուրս չէին գալիս, ավելացնելով ռազմաքաղաքական լարվածության նոր էջեր և նոր բացասական գուներանգներ ու շերտանստվածքներ նախկինում իրար հետ ոչ հազվագյուտ դաշնակցած հարևան ժողովուրդների միջև:

1919 թ. մայիսի 24-ի ՀՀ Գլխավոր շտաբի օպերատիվ հետախուզական ամփոփագրում փոխգնդապետ Ալ. Շնեուրը հաղորդում է քուրդթաթարական և թուրք-վրացական ոտնձգությունների մասին Կաղզվանում, Մերդենեկում և Արդահանի շրջաններում, ավելացնելով, որ Արդահանի ուղղությամբ ուղարկվել է հայկական զորամաս[1097]:

Կարսի քաղաքացիական նահանգապետ Ստ. Ղորղանյանը ՀՀ նախարարապետին ուղղված 1919 թ. հունիսի 12-ի պաշտոնագրում կոնֆեդենցիալ ձևով բողոքում էր, որ վրացական զորքերը շարունակում են մնալ Արդահանում: Ղորղանյանը հաղորդում էր, որ իր ունեցած տեղեկությունների համաձայն, վրաց սպաները այնտեղ զբաղվում են բացահայտ լրտեսությամբ, վրացական իշխանություններին տեղեկացնելով

[1096] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 199, ց. 1, գ. 100, թ. 60:
[1097] Տե՛ս նույն տեղում, գ. 73 (71), թ. 21:

այն ամենի մասին, ինչ այնտեղ իրականացվում է հայկական կառավարության կողմից և դրա հետ մեկտեղ օգտվում են յուրաքանչյուր պատեհ առիթից՝ հայերի համար անցանկալի տեսանկյունից պղտորելու հասարակական միտքը և ռազմաքաղաքական կրքերը: Ստ. Ղորղանյանը պնդում էր այն մասին, որ Արդահանում վրացական զորքերի գտնվելը իրենց համար տարօրինակ է, և դրանից ելնելով, վերջինս խնդրում էր հայց հարուցել անգլիացիների հրամանատարության առաջ՝ վրաց զորաջոկատները Արդահանից հեռացնելու համար[1098]:

Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանը 1919 թ. օգոստոսի 22-ի (N 1134) զեկույցում՝ ուղղված ՀՀ ՆԳ նախարարին, հաղորդում է Արդահանի շրջանում վրացական զորամասերի լրտեսական-հրահրիչ գործողությունների մասին[1099]: Իրավիճակն արմատական փոփոխության չենթարկվեց նաև 1919 թ. երկրորդ կեսին, վրացիները շարունակեցին իրենց քայքայիչ-քարոզչական աշխատանքները Արդահանի շրջանում, այդ մասին տեղեկանում ենք ՀՀ Արտաքին Գործերի նախարարության գլխավոր քարտուղարի 1919 թ. սեպտեմբերին Թիֆլիս՝ ՀՀ դիվանագիտական հավատարմատարին ուղղված հեռագրից, որում հայտնվում էր, որ հայկական հակահետախուզության ձեռքն է ընկել Արդահանի վրացական ջոկատի պետ Կվիտաշվիլու ձեռքով գրված կոչը, որից ակնհայտ է դառնում, որ Արդահանի շրջանի բնակիչների՝ Վրաստանին միանալու ցանկության մասին աղմուկը ոչ այլ ինչ է, եթե ոչ վրաց պաշտոնական անձանց կողմից նախապատրաստված սադրիչ գործողություն, որի մասին բողոք հայտնվեց Երևանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մախարաձեին[1100], և դա այն դեպքում, երբ Հայաստանը խաղաղասիրաբար էր մոտենում բոլոր վիճելի համարվող հարցերի նկատմամբ:

Գործնականում երկու երկրներն էլ չէին կարողանում դուրս գալ ռազմաքաղաքական տարբեր տարակարծությունների, տրանզիտի, և մասնավորապես սահմանավեճերի շուրջ մղվող առճակատումների շրջապտույտից և հաճախ ցայտնոյին հապճեպ քայլեր էին անում:

[1098] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ – 200, ց. 1, գ. 353, թ. 2:

[1099] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 73 (71), թ. 126:

[1100] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ –200, ց. 1, գ. 363, թ. 80:

Ինչպես ակնհայտ է դառնում Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանի 1920 թ. հուլիսի 3-ի գրությունից՝ ուղղված ՀՀ Արտաքին Գործերի նախարարությանը, հունիսի 29-ին կայացած հայ-վրացական կոնֆերանսի առաջին նիստում, որին մասնակցել են վրացական կողմից Ներքին Գործերի մինիստր Ն. Ռամիշվիլին, Ռազմական մինիստր Գ. Ս. Լորդկիպանիձեն, Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորին, իսկ Հայաստանի Հանրապետությունը ներկայացրել են Ստ. Մամիկոնյանը, Ս. Խաչատրյանը և ուրիշներ, քննության են առնվել մի շարք կարևոր հարցեր, որոնց թվում ռազմական հարցերի հետ կապված տրանզիտային պայմանագրի մեջ կարևոր կետ սահմանելու մասին հարցը, և անշուշտ՝ սահմանավեճային խնդիրները: Տրանզիտի հետ կապված հարցում լիիրավ համաձայնություն է կայանում այն իմաստով, որ երկու կողմերը պարտավորվում են սկզբունքորեն հարգել ներկայացված այն առաջարկը, որ տրանզիտային պայմանագիրը վերաբերի նաև զենքերի և առհասարակ՝ ռազմական նյութերի ու բեռների փոխադրմանը: Միայն թե վրացական կողմից առարկություն եղավ իրականացման ձևի մասին հարցում, և սակայն, որպեսզի այդ մասին համաձայնությունը մտներ պայմանագրի բովանդակության մեջ, անհրաժեշտ համարվեց այն արձանագրել որպես հին պայմանագրին կցված ծանոթություն կամ էլ բավարարվելով նոտաների փոխանակությամբ, մեկ այլ տարբերակով՝ առանձին պայմանագիր կնքել ռազմամթերքի փոխադրման մասին, և ի վերջո, դրա վերջնական ձևի որոշման մասին համաձայնության խնդիրը հետաձգվում է հաջորդ նիստին: Սակայն վրացիները, և մասնավորապես Ն. Ռամիշվիլին, հանդես են գալիս հայտարարությամբ, որում ընդգծում են այն մասին, որ հին պայմանները կատարելուն անդրադառնալով, այդ առիթով հրավիրված խորհրդակցությունը նկատի է ունեցել, որ դրանում ներառված է եղել նաև ռազմական նյութերի խնդիրը[1101]:

Արդյունքում, հարցերը կամ հայտնվում էին փակուղային վիճակում, կամ էլ ընդունվում էին ընդամենը միջանկյալ հանգուցալուծումներ: Ե՛վ վրացիները, և՛ հայերը դեպքից-դեպք փորձում էին հարթել իրար գլխի կուտակված խնդիրները: Այդ հանգամանքից ելնելով, դեռ

[1101] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200,, ց. 1, գ. 221, թ. 92:

1920 թ. հունիսի 23-ին վրաց կառավարության և հայ պատգամավորների ներկայացուցիչների խորհրդակցությունը որոշել էր վերջնականապես լուծել բոլոր վիճելի խնդիրները: Խորհրդակցությունում միաձայն որոշվել էր Վրաստանի և Ադրբեջանի միջև հաշտության պայմանագրի կնքումից հետո հայ-վրացական կոնֆերանս հրավիրել: Թիֆլիսում վրացական կառավարության առաջարկով հունիսի 29-ին բացված կոնֆերանսը, որին ներկա էին բարձրաստիճան ռազմաքաղաքական և դիվանագիտական այրեր երկու կողմերից, Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում էին Ստ. Մամիկոնյանը, Ս. Խաչատրյանը, Տ. Բեկզադյանը, իսկ Վրաստանից՝ Եվգ. Գեգեչկորին, Ն. Ռամիշվիլին, Լորդկիպանիձեն և այլ կարևոր պաշտոնատար անձինք, որոնք կոչված էին այդ կնճռոտ խնդիրները լուծելու: Հայ-վրացական կոնֆերանսի քննարկմանը ենթարկվեցին մի շարք հարցեր. 1) դատական կոնվենցիայի հարցը (հանցագործների և հանցապարտ անձանց փոխադարձ հանձնում), 2) տրանզիտային պայմանագրի տարածումը ռազմական փոխադրումների վրա, 3) հպատակության մասին, 4) սահմանավեճերի մասին: Հպատակության հետ կապված հարցում հաստատվեց, որ հնարավոր է փոխզիջում, որի դեպքում Թիֆլիսի, Ախալքալաքի և Բորչալուի շրջանների հայ բնակչությանը ժամանակավորապես ազատելով զինակոչից, մոտ մեկ տարի ժամանակ տալ՝ որոշելու իրենց հպատակության հարցը, ընդ որում Հայաստանի Հանրապետության հպատակություն ընդունողները լքում էին Վրաստանի տարածքը, իսկ Սղնախի, Թելավիի և Դուշեթի հայ բնակչությունը ոչ մի դեպքում չէր կորցնում վրացական հպատակությունը: Տարածքային հարցի քննարկման ժամանակ Ն. Ռամիշվիլին և Եվգ. Գեգեչկորին հարց բարձրացրին Արդահանի, և իբր թե հպանցիկ՝ Օլթիի մասին: Ի պատասխան հայկական պատվիրակությունը հայտարարեց, որ ինքն իր կառավարությունից հրահանգներ չունի այդ հարցերի վճռման տարբերակների մասին, և այդ իսկ պատճառով էլ չեն կարող հարցը քննարկել: Ընդ որում հայտարարվեց, որ եթե Արդահանի և Օլթիի մասին հարցը օրակարգից չհանվի, ապա հարկադրված կլինեն ավարտել սահմանազատման վերաբերյալ կոնֆերանսի աշխատանքները, քանի որ այդ տարածքները որպես Հայաստանի տարածքի կազմի անվիճելի մասեր, չեն կարող բանակցությունների առարկա հանդիսանալ: Դրան Ն. Ռամիշվիլին վրացական պատվիրակության

անունից հակադարձեց, հայտարարելով, որ Օլթիի մասին հարցը հանվում է, չնայած դեռ հունիսի կեսերին, կոնֆերանսից քիչ առաջ, վրացական զինվորների մի ջոկատ հայտնվել էր Օլթիի մարզում, և Տ. Բեկզադյանի կողմից վրաց կառավարությանը ներկայացված բողոքի նոտայից հետո վրացական այդ զորաջոկատը դուրս էր բերվել Օլթիից: Դա ինչ որ կերպ հասկանալի էր, սակայն այդ հայտարարությանը զուգահեռ վրացական պատվիրակության ղեկավար Ն. Ռամիշվիլին հայտարարեց Արդահանի նկատմամբ վրացական պահանջատիրության մասին, և նրանց կողմից ներկայացվեց սահմանազատման հերթական անգամ վերջնական համարվող տարբերակ: Վրացական պլանի համաձայն, Վրաստանը հրաժարվում էր Լոռու մի մասից, Ալավերդու գործարանը անցնում էր Վրաստանին՝ մխրճվելով հայկական տարածքի մեջ: Բորչալուի գավառի մասին բոլոր բանակցությունների ժամանակ, ինչպես նկատում է Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Մ. Թումանյանը, Ալավերդու հարցը և բոլոր առաջարկվող փոխզիջումային տարբերակները (կոնդոմինիումում, համատեղ շահագործում և այլն) տիրապետող էին: Սակայն դրան զուգահեռաբար Վրաստանի պատվիրակությունը իրեն իրավունք էր վերագրում հայտարարել իր հաստատագրված և անվիճելի իրավունքների մասին Ախալքալաքի ողջ գավառի նկատմամբ՝ լիովին իր տարածքային կազմի մեջ ներառելով Արդահանի օկրուգը, իր կողմից հայտարարագրված դեկլարացիայում նշելով, որ վերջինս իրենց անհրաժեշտ է ռազմավարական առումով՝ Բաթումիի պաշտպանության համար, ինչպես նաև տնտեսական առումով՝ Բաթումիի մարզը մթերքներով մատակարարելու համար: Օլթիի մարզի կապակցությամբ Վրաստանի պատվիրակությունը հայտարարեց, որ Վրաստանը հրաժարվում է նրանից, «չնայած պատմականորեն և ազգագրական տեսանկյունից իրենք այդ օկրուգի նկատմամբ ունեն «անքակտելի իրավունքներ»:

Այդ նույն նիստին, երբ հարցը հասավ սահմանավեճերի խնդրին, Ն. Ռամիշվիլին հարց հարուցեց Արդահանի և անցողակի կերպով Օլթիի մասին: Այս կապակցությամբ Բեկզադյանը հայտնեց, որ ինքը և Լորդկիպանիձեն առաջարկ են ներկայացրել՝ հարցը սկսել հին վեճերից, հետո նոր անցնել արևմտյան սահմանների հարցի քննարկմանը, սակայն Եվգ. Գեգեչկորին և Ն. Ռամիշվիլին պնդեցին, որ բոլոր հարցե-

րը քննության առնվեն միաժամանակ: Դրան ի պատասխան հայկական պատվիրակությունը հայտարարում է, որ Արդահանի և Օլթիի մասին իրենք կառավարությունից համապատասխան հրահանգներ չունեն, ուստի և այդ հարցի քննարկմանը չեն կարող մասնակցել, իսկ Տ. Բեկզադյանը նաև դրան ավելացնում է, որ պետք է վերջ տալ այդ հարցի քննարկման աշխատանքներին, որովհետև այդ շրջանները որպես Հայաստանի անվիճելի հողամասեր չեն կարող վիճարկելի քննության առարկա դառնալ, պահանջելով վրացիներից բացարձակ և կտրուկ կերպով արտահայտել, որ դնում են հարց, արդյո՞ք կոնֆերանսի քննության ենթակա խնդիր է այդ շրջանների մասին հարցը: Դրան ի պատասխան Ն. Ռամիշվիլին հայտնում է, որ Օլթիի մասին խոսք չի լինի, իսկ Արդահանի շրջանի վերաբերյալ Վրաստանը պրետենզիաներ ունի, ուստի և այդ հարցը պետք է քննության առնել: Բեկզադյանը այս ամենից եզրահանգում է, որ վրացիները որոշակի ռազմավարությունից ելնելով, հին վեճերին ավելացնում են ևս մի նոր հարց, որի մասին հայկական պատվիրակությունը պետք է ունենար կառավարության հրահանգը, ինչն այդ պահին չկար: Տեղեկացնելով այս հարցերի մասին, Տ. Բեկզադյանը ՀՀ Արտաքին Գործերի նախարարությունից խնդրում էր վերջնական հրահանգներ տալ սահմանավեճերի վերաբերյալ, որպեսզի դրանք ներկայացվեն առաջիկա նիստերում տեղի ունենալիք քննարկումներին[1102]:

Կոնֆերանսը այդքանով սահմանափակեց իր աշխատանքները, անցնելով մասնավոր խորհրդակցությունների, և վրացական կառավարության առաջարկով օգոստոսի սկզբներին ստեղծվեց խառը հանձնաժողով: Ըստ Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Մ. Թումանյանի տվյալների, 1920 թ. գարնանը նույնիսկ նկատվեց ինչ-որ փոխզիջումային իրավիճակ: Դա դրսևորվեց նրանում, որ Վրաստանի հանրապետության կառավարության կողմից հայկական կառավարությանը «զիջումներ» արվեցին, հրետանային արկերի փոխարեն հայկական կողմին տրվեցին «Լեբելի» հրացաններ, որի կարիքը հայկական բանակը շատ ուներ, ինչպես նաև մի շարք համատեղ քայլեր արվեցին երկուստեք սեփական բանակները ռազմական զին-

[1102] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 221, թ. 92:

հանդերձանքով, զենքով, զինամթերքով ապահովման հարցերի լուծման խնդրում, նաև կազմակերպելու երկու երկրների կողմից սպաների փոխայցելություններ[1103]:

1920 թ. հուլիսի 7-ին Բեկզադյանը ՀՀ նախարարապետին հերթական գրությունն է ուղարկում, որում ներկայացնում է վրացական կողմից առաջադրված նոր ծրագիրը սահմանավեճերի մասին, ասելով, որ վրացիներն ըստ այդ փոփոխված դիրքորոշման, իրենց նորացված ծրագրի համաձայն Վրաստանին էին կցում նույնիսկ Սանահինը, որի մասին, սակայն Ն. Ռամիշվիլին կարծիք էր հայտնել, որ իբրև սրբավայր այն պետք է, որ թողնեն հայերին, բայց պատմական հիմքերի հիման վրա այն պետք է անցնի Վրաստանին: Բեկզադյանը նաև հայտնում էր, որ վերջին բանակցությունների ժամանակ, մինչև վրացիների կողմից նման տարօրինակ ծրագրի ներկայացնելը, վրացական կողմը միայն պահանջում էր Ալավերդու գործարանը, իսկ երկաթուղու մյուս կողմը թողնվում էր հայերին, իսկ վերջին վրացական կայարանը պետք է լիներ Ալավերդու պլատֆորմը: Տ. Բեկզադյանը եզրահանգում էր, որ վրացիների կողմից ներկայացրած ծրագիրը տաղտուկ վրացական առաջարկություն է, որին պետք է կտրուկ առարկել, որպես սահման ընդունելով Խրամ գետը, այսինքն՝ ՀՀ Գլխավոր շտաբի սահմանագծի առաջին տարբերակը[1104]:

1920 թ. հուլիսի 12-ին (N 4194) ՀՀ Արտաքին Գործերի նախարարությունը հայ-վրացական կոնֆերանսի հայկական պատվիրակության նախագահին ուղարկված գրությունում հայտնում էր, որ ստացել են վրացիների ներկայացրած նոր ծրագիրը սահմանավեճերի մասին, որի կապակցությամբ իրենք գտնում են, որ դա վրացիների կողմից ընդամենը սակարկության մի ձև է, և իհարկե, իրենք դրանից պետք է հետևություններ անեն: Ընդունեն մի ծրագիր, ըստ որի որպես հիմք պետք է ընդունեն սահմանների մասին առաջադրվող մեկնակետը՝ մինչև Խրամ գետը, ամբողջ Ախալքալաքը, Արդահանի ամբողջ շրջանը և Բաթումիի մի մասը՝ ներառյալ Ճորոխ գետի հովիտը: Սակայն միաժամանակ, ՀՀ Արտաքին Գործերի նախարարությունը պատվիրում էր, որ այդպիսի

[1103] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 341-344:

[1104] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 221, թ. 95:

ծրագիր առաջարկելուց առաջ ցանկալի է, որ Փոթիից ամբողջ ռազմամթերքը մտնի Հայաստանի Հանրապետություն, ուստի հայտնում էր, որ ՀՀ կառավարությունը որոշել է ձգձգել այդ հարցը 2-3 շաբաթ, Բեկզադյանին խնդրելով մեկնել Երևան՝ զեկուցում տալու և նոր հրահանգներ ստանալու համար, և դա էլ իր հերթին որպես պատրվակ օգտագործելով վրացիների մոտ արդարանալու համար՝ գործի նման հետաձգման համար[1105]:

1919 թ. հուլիսի 15-ին Նախարարների խորհուրդը լսելով ՀՀ Արտաքին Գործերի նախարարի զեկուցումը Վրաստանի և Հայաստանի միջև սահմանների շուրջ տարվող բանակցությունների մասին, վճռեց և գտավ չափազանց անհրաժեշտ, որ մինչև Փարիզի խաղաղության կոնֆերանսի վճիռը Ախալքալաքի և Բորչալուի գավառների վերաբերյալ Հայաստանի և Վրաստանի միջև եղած սահմանավեճը վճռել փոխադարձ համաձայնությամբ, հանձնարարել Արտաքին Գործերի նախարարին համապատասխան բանակցություններ սկսել վրաց կառավարության հետ, որպեսզի բանակցությունների արդյունքում ներկայացվի Հայաստանի խորհրդին ի հաստատություն[1106]: Մի շարք նախարարների՝ Ն. Ռամիշվիլու, Ն. Ժորդանիայի, Ս. Վրացյանի և այլոց հրապարակավ ելույթները ներթափանցված էին զիջողականության ոգով և այդ հանգամանքը ինչ-որ չափով հալեցրեց սառույցը Հայաստան-Վրաստան ռազմաքաղաքական փոխհարաբերություններում: Սակայն այդ ամենը չհանգեցրեց երկու պետությունների փոխընդունելի համաձայնության՝ տարածքային սահմանազատման հիմնախնդրում: Որոշակի առումով պահպանվեցին ռազմաքաղաքական լարվածության նախկինում եղած հիմքերը: Հայաստանի Հանրապետության տարածքային պահանջները Թիֆլիսի նահանգում և Կարսի մարզում, որոնք հստակ ներկայացվեցին ՀՀ պատվիրակության կողմից Փարիզի խաղաղության վեհաժողովին, 1918 թ. վրաց-հայկական պատերազմի սկսման պահին ներկայացված հայկական պահանջների համեմատ որոշակի չափով նորացվել էին: Իսկ Վրաստանն էլ առաջվա նման, անփոփոխ պահելով իր նախնական դիրքորոշումը, շարունակում էր պնդել իր ունեցած սեփականատիրական պահանջատիրությամբ թելադրված իրավունքների

[1105] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 221, թ. 94:
[1106] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 201, ց. 1, գ. 486, մաս II, թ. 249:

մասին ողջ Թիֆլիսի նահանգի և Կարսի մարզի երկու՝ Արդահանի և Օլթիի շրջանների նկատմամբ[1107]:

Այս բոլորի հետ մեկտեղ, ի հակադրություն կառավարական-քաղաքական մակարդակներում երկուստեք հնչեցրած փոխզիջումային դիրքորոշումների, մի շարք փաստեր ևս վկայում են այդ նույն ժամանակամիջոցում վրացական քողարկված ակտիվության մասին Արդահանի շրջանում հենց 1919 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: 1919 թ նոյեմբերի 19-ի մի փաստաթղթից, որի տակ կան Գլխավոր շտաբի Հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար Վ. Մուրադյանի և պետի օգնական Մ. Դոդոխյանի ստորագրությունները, ակնհայտ է դառնում, որ Արդահանում գտնվող կապիտան Կվիտաշվիլու գլխավորությամբ գործող վրացական զորամասերի ճնշման տակ Արդահանի գավառի Գելի և Չըլդրի (Չըլդըր) տեղամասերում իբր թե կամավոր սկզբունքներով, ինքնակամ՝ բնակչությունից ստորագրություններ են հավաքվել՝ միանալ Վրաստանի դեմոկրատական հանրապետությանը: ՀՀ կառավարությանը տեղեկացվում էր այդ մասին՝ ակնկալելով համապատասխան գործողությունների հրահանգ ստանալ՝ հակադրվելու վրացական իշխանությունների գործողություններին Արդահանի շրջանում[1108]:

Պատմաքաղաքական գործընթացները հաջորդում էին մեկը մյուսին, և սակայն անհարթությունները հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում շարունակում էին մնալ: 1919 թ. հուլիսին ՀՀ Զինվորական նախարար Քրիստափոր Արարատյանը[1109] ՀՀ Արտաքին Գործերի նախարարությանը ներկայացրեց Հայաստանի և Վրաստանի միջև սահմանային-տարածքային հարցերի վճռման փոխզիջու-

---

[1107] Տե՛ս Hovannisian R. G., The republic of Armenia, vol. II, pp. 159-167, 193.

[1108] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ – 200, ց. 1, գ. 353, թ. 90, գ. 602, թ.17:

[1109] Արարատյան (Արարատով) Քրիստափոր Գերասիմի [Արարատյան Խաչատուրի – [18.06.1876 թ. - 10.12.1937 թ.] - Ռազմական գործիչ, գեներալ-մայոր, 1918 թ. մայիսին Սարդարապատի ճակատամարտում Հայկական հրետանային կորպուսի հրետանային բրիգադի հրամանատար, ՀՀ երկրորդ Ռազմական նախարար (27 մարտի, 1919 թ. –3 ապրիլի, 1920 թ.): 1920 թ. հոկտեմբերին թուրք-հայկական պատերազմի ժամանակ գերվել է թուրքերի կողմից, և 1921 թ. վերջին Խորհրդային Հայաստանի կառավարության միջնորդությամբ ազատվել է թուրքական գերությունից: 1923-1925 թթ. եղել է հայկական խորհրդային հրաձգային դիվիզիայի հրամանատարը, սակայն 1937 թ. անարդարացիորեն բռնադատվել է և գնդակահարվել:

մային տարբերակ՝ հյուսիսային սահմանը դիտարկելով որպես Հայաստանի Հանրապետության պաշտպանության համար էական բնագիծ: Քանի որ Ալեքսանդրապոլը Երևանի ու Կարսի միջև կենսական կապուղի էր և հաղորդակցություն ու տարանցիկ երթևեկության առանցք, ապա ըստ առաջարկի, սահմանագիծը պետք է առնվազն 60 վերստ (64 կիլոմետր) հեռու լիներ քաղաքից և միաժամանակ, որոշակի հեռավորության վրա Ալեքսանդրապոլ-Վորոնցովկա ճանապարհից[1110]: Ըստ Արարատյանի առաջարկի, Հայաստանի Հանրապետությունը ընդհանուր առմամբ պետք է ստանար Լոռու Չեզոք գոտու առնվազն երկու երրորդը և Ախալքալաքի գավառի կեսից քիչ պակաս մասը:

Ըստ այդմ, «Արարատյանի գիծը» պետք է անցներ Սոմխեթի գագաթով, Չեզոք գոտու հյուսիսային սահմանից քիչ դեպի հարավ, այնուհետև մի քանի մղոն գնալով դեպի Ջավախք-Ջավախեթիայի գագաթով դեպի հյուսիս, որից հետո սահմանագիծը պետք է թեքվեր դեպի արևմուտք՝ Ախալքալաքի գավառի լեռնային մասի սահմանի երկայնքով դեպի արևմուտք, ներառելով Բոգդանովկա գյուղը (Նիկոծմինդա), և այնուհետև՝ Խոնչալո և Խոզափին (Կարծախ) լճերից դեպի հյուսիս, սակայն այնուհետև՝ Թափարավան (Փարվանա) լճից դեպի հարավ մինչև Քուռ գետը՝ կանգնելով Թիֆլիսի նահանգի և Արդահանի մարզի սահմանագծի վրա: Արդահանի մարզում այն համընկնում էր Վրաստանի և Հայաստանի միջև արդեն գոյություն ունեցող սահմանազատիչ գծին՝ մինչև Բաթումիի մարզի սահմանը: Այդ նախագիծը Փարիզում ներկայացվեց վրացական պատգամավորության դիտարկմանը, բայց չընդունվեց որպես հիմք երկու երկրների միջև ապագա սահմանի համար: Կատեգորիկ մերժելով «Արարատյանի փոխզիջումը», վրացական պատգամավորությունը հանդես եկավ իր հակաառաջարկով, որի համաձայն Լոռու Չեզոք գոտին բաժանվում էր «Թոմսոնի գծի» համաձայն, իսկ ողջ Ախալքալաքի գավառն ըստ այդ հակառաջարկի, ամբողջովին մնում էր Վրաստանի տարածքային կազմում: Մենշևիկյան Վրաստանը նույնպես անփոփոխ էր թողնում ողջ Արդահանի գավառի նկատմամբ իր լրիվ սուվերենիտետի պահանջը, միաժամանակ իր համաձայնությունն էր

[1110] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր II, էջ 182:

տալիս հօգուտ Հայաստանի հրաժարվելու Օլթիի շրջանից[1111], որը վերահսկվում էր Ջաֆար բեյի մուսուլմանական միլիցիայի կողմից: Արդյունքում, փոխզիջումային սահմանազատման վրացական տարբերակը, իր հերթին հայկական կողմը չընդունեց, իսկ ութ ամիս անց Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև ծագեց հավելյալ տարածքային սահմանավեճ՝ կապված Բաթումիի մարզի ապագա կարգավիճակի որոշման և Հայաստանի պահանջի հետ՝ իրեն հանձնելու Բաթումիի նավահանգիստը, Ճորոխ գետի ձախ ափը Աջարիայում և Ալեքսանդրապոլ-Բաթումի երկաթուղագծի ճյուղավորումը[1112]: Բնականաբար, սահմանազատման վրացական հակառաջարկը հայկական կողմը մերժեց, այն գործնականում լիովին անընդունելի եղավ, իսկ ութ ամիս անց Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև ծագեց լրացուցիչ տարածքային վեճ՝ կապված Բաթումիի մարզի ապագա ստատուսի որոշման և Հայաստանի պահանջի հետ՝ իրեն հանձնելու Բաթումիի նավահանգիստը, Ճորոխ գետի ձախ ափը [Աջարիա] և Ալեքսանդրապոլ-Բաթումիի երկաթուղագծի նկատմամբ վերահսկողությունը[1113]:

Ի վերջո, 1920 թ. հուլիսի կեսերին, Վրաստանի և Հայաստանի պատվիրակությունները արձանագրություն են կազմում Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև իբր թե վերջնական սահմանազատիչ տարածքագծի մասին, ընդ որում հայտարարագրելով այն մասին, որ ընդունված սահմանագիծը պետք է ընդունելի լինի Վրաստանի կառավարության կողմից միայն երկու հանրապետությունների կողմից բոլոր հարցերի մեկ ամբողջության մեջ լուծման պարտադիր պայմանով: Եվ այսպիսով, ըստ այդ պայմանավորվածության, Վրաստանը հրաժարվում էր Լոռուց հօգուտ Հայաստանի՝ ձեռք բերված պայմանավորված շրջանակներում, չնայած այն բանին, որ Լոռին և՛ տնտեսապես, և՛ պատմականորեն կազմում է Վրաստանի անքակտելի մասը, նույնը՝ Օլթիի օկրուգից, չնայած պատմականորեն Վրաստանը այդ օկ-

[1111] Տե՛ս Hovannisian R. G., The republic of Armenia, vol. II, pp. 154-155.

[1112] Տե՛ս Hovannisian R. G., The Republic of Armenia, vol. III, p. 114: Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Հատոր III, էջ 37-69, 118-130, 249:

[1113] Տե՛ս նույն տեղում:

րուգի նկատմամբ ևս ունի անձեռնմխելի իրավունքներ[1114]: Իսկ ինչ վերաբերում էր Արդահանի մարզին ամբողջությամբ վերցրած, ապա այս հարցում վրացական կողմը կոշտ ու հստակ դիրքորոշում ցուցաբերեց, և վրացական պատվիրակության անունից միանշանակ հայտարարվեց, որ բացի պատմական և ազգագրական իրավունքներից, այդ օկրուգը Վրաստանի համար ռազմավարական և տնտեսական նկատառումներով հանդիսանում է կյանքի կամ մահվան հարց: Եվ այդ ամենից հայկական պատվիրակությունը գալիս է ուղղակի եզրահանգման՝ ավելացնելով վերը ասվածին, որ առաջին հերթին Արդահանի օկրուգը դեռ 1918-1919 թթ. մաքրվել է և ազատագրվել թուրքական և այսպես կոչված «Հարավարևմտյան հանրապետության» ոտնձգություններից բացառապես վրացական զինվորության արյամբ, և երկրորդ՝ դա այնքան հանրահայտ է, քանզի Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Արդահանի և Օլթիի օկրուգների նկատմամբ երբեք չի հայտարարել իր պահանջատիրության մասին, ինչի տակ կան վրաց պատվիրակության անդամների ստորագրությունները ի դեմս Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորու, Ներքին Գործերի մինիստր Ն. Ռամիշվիլու, Ռազմական մինիստր Գ. Լորդկիպանիձեի[1115]:

Արդյունքում, կարելի է գալ այն դիտարկմանը, որ ո՛չ 1918 թ. դեկտեմբերյան պատերազմի փաստը, ո՛չ էլ նոր տարածքավեճերը Հայաստանի և Վրաստանի միջև, որոնք շարունակվեցին մինչև 1920 թ. գարունը, Փարիզում վեհաժողովի ընթացքում՝ ակտիվորեն և շատ նպատակային օգտագործվեցին Անտանտի առաջատար երկրների առաջնորդների կողմից ընդդեմ երկու անդրկովկասյան դրկից և շատ դեպքերում բարեկամական ռազմաքաղաքական, մշակութային-տնտեսական հարաբերման եզրերի ձգտող երկու հանրապետությունների՝ Վրաստանի և Հայաստանի Հանրապետությունների: Անտանտի երկրների քաղաքական–ռազմական բարձրաստիճան շրջանակներում շատ նրբանկատորեն և քողարկված մաննրումների ձևերով ձգձգեցին հարավկովկասյան հանրապետությունների ճանաչումը դե-ֆակտո. Հայաստանը ճանաչվեց միայն 1920 թ. հունվարին, իր անկումից մեկ տարուց քիչ պակաս ժամանակում, իսկ արդեն Սան-Ռեմոյի կոնֆերանսում (1920 թ. ապրիլ)

[1114] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 221, թ. 99:
[1115] Տե՛ս նույն տեղում:

Հայաստանի և Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչներին ուղղակի և ամենևին էլ ոչ դիվանագիտական նրբանկատությամբ մատնանշվեց Անտանտի Գերագույն խորհրդին դիմելու աննպատակահարմարության և անցանկանալիության մասին մինչև այնքան ժամանակ, մինչև որ նրանք կմշակեն «ընդհանուր պլատֆորմ», այսինքն՝ միմյանց հետ փոխպայմանավորվել վիճելի հարցերի շուրջ[1116]:

Ոչ մի կերպ ո՛չ Հայաստանը, ո՛չ էլ Վրաստանը չէին կարողանում փոխպայմանավորվածության գալ սահմանատարաձքային խնդիրների շուրջ, ինչի շուրջ լարվածության մեջ իրենց մեղքի զգալի բաժինն ունեին տարածաշրջանային հզոր աշխարհաքաղաքական ուժերը, և մասնավորապես Թուրքիան, որն օժանդակում էր Վրաստանին և Ադրբեջանին իրենց հակահայկական ծրագրերում, լարվածության օջախները պահպանելով թե՛ Լոռի-Ախալքալաքի, և թե՛ Կարս-Արդահանի շրջանում:

Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանին ուղարկված 1920 թ. փետրվարի 25-ի Արտաքին Գործերի նախարար Ալ. Խատիսյանի գրությունից տեղեկանում ենք Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանից ստացված հեռագրի մասին, որում հայտնվում էր այն մասին, որ վրացիները մեծ թվով զորք են ուղարկում Արդահանի հյուսիսային և հարավային մասերը: Ալ. Խատիսյանը Լ. Եվանգուլյանից խնդրում էր ստուգել փաստերը և բողոք հայտնել այդ առիթով վրացական կողմին Արդահանի հարավային մասի կապակցությամբ, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության անքակտելի տարածք, և հյուսիսայինի նկատմամբ, որտեղ նրանք կարող են պահել ընդամենը 100 մարդ: Միաժամանակ Ալ. Խատիսյանը խնդրում էր, որ պարզվի, թե խոսե՞լ է արդյոք Եվգ. Գեգեչկորին այն մասին, որ իրենք մտադիր են զորք ուղարկել Օլթի, եզրահանգելով, որ ընդհանուր առմամբ այդ շրջաններում նկատվում են ինչ-որ շարժումներ, որոնք կապված են Բաթումիի հարցի հետ: Լ. Եվանգուլյանին ուղղված պաշտոնագրի վերջնամասում Ալ. Խատիսյանը դիվանագիտական հավատարմատարից խնդրում էր ստուգել ուղարկված գործերի իսկությունը և հեռագրել Վրաստանի դիրքորոշման մասին բոլոր այդ հարցերում, որոնք Խատիսյանը

[1116] Տե՛ս Авалов З. Д., Независимость Грузии в международной политике. 1918-1921 гг., стр. 270-276:

խիստ կասկածելի էր համարում[1117], ասել է թե, որ նա դեռ որոշակի հույսեր էր տածում վրացիների հետ հետագա բարեկամական նոր եզրերի ձևավորման և պահպանման մասին, չհավատալով կամ իրապես շատ լուրջ չընդունելով նրանց կողմից ձեռնարկված քաղաքական խարդավանքների հնարավորության հարցը:

Փարիզյան վեհաժողովը, ինչպես նաև Սևրյան պայմանավորվածությունները ևս լիարժեք պարզություն չմտցրեցին հայ-վրացական սահմանավեճի հարցի լուծման մեջ: Ըստ Սևրի պայմանագրի 72-րդ հոդվածի, անդրկովկասյան հանրապետությունների միջև սահմանազատման, սահմանային-տարածքային վեճերի լուծումը պետք է կատարվեր կողմերի համաձայնությամբ կազմված հանձնաժողովի կողմից, իսկ ձախողվելու դեպքում՝ դաշնակից երկրների կողմից կայացրած իրավարար վճռի համաձայն, որի ուղղությամբ բանակցությունները շարունակվեցին նաև 1920 թ. թուրք-հայկական պատերազմի օրերին, և սակայն ամեն անգամ՝ գործնականում անարդյունք: Վրացական կողմն իր հակահայկական դիրքորոշումը Արդահանի հիմնախնդրում շարունակեց պահպանել նաև 1920 թվականին, քողածածկված եզրեր ունենալով ադրբեջանցիների հետ:

Իր կազմավորման օրից ՀՀ կառավարությունը գործնական քայլեր էր ձեռնարկել Թիֆլիսում և հարակից վայրերում հետախուզական գործի կազմակերպման ուղղությամբ, որն անհրաժեշտ գործունեություն էր ծավալել՝ ձեռք բերելով անհրաժեշտ տեղեկատվություն Կարս-Արդահանի, Լոռի-Ախալքալաքի և այլ շրջաններում վրաց-ադրբեջանական նկրտումների և ռազմաքաղաքական ձեռնարկումների, սահմանատարածքային իրադարձությունների մասին: Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար Տ. Դեվոյանցը 1920 թ. մարտի 14-ին (N 1o0150) դիմելով Հ. Քիշմիշյանին, հայտնում է, որ գործակալական տվյալների համաձայն վրացիները օգնում են չըլդիրցիներին զինամթերքով, որ Զուրզունու են ժամանել Բախշի բեկը, 3 վրացի և 3 ադրբեջանցի սպաներ, դոկտոր Հաջիևը, որոնք դիմելով մահմեդականներին, տեղեկացրել են, որ մոտ ապագայում տեղի է ունենալու ընդհանուր հարձակում Օլթիից մինչև Չըլդր (Չալդիր): Տ. Դեվոյանցը սույն

[1117] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 211, թ. 28:

դիմումագրով ի կատարում գլխավոր հրամանատարի հրամանի՝ խնդրում էր կարգադրություն անել այդ տեղեկությունների ստուգման համար՝ ինչի մասին հեռագրով շտապ հաղորդել իրեն վստահված բաժանմունք[1118]:

Գեներալ Քիշմիշյանը ինչ-որ միջոցներ է գտնում որոշ չափով բավարարելու համար վերը նշված հարցապնդումը՝ կապված վրացիների գործողությունների հետ Չըլդրի մերձակայքում: Արդյունքում, 1920 թ. ապրիլի 1-ին (N 92՝ ի պատասխան N P 0150 հեռագրի) Քիշմիշյանը հաղորդում է ՀՀ հետախուզական բաժնի պետին, որ Վրաստանի Զինվորական նախարարի օգնական Ա. Կ. Գեղևանովը [Գեղևանիշվիլի] մասնավոր զրույցում իրեն վստահեցրել է (վրացիներին հատուկ գործելաոճ - Վ. Վ.), որ վրացական սպաները Զուրզունու են ժամանել բացառապես Սերվեր-բեյի (Սերվեր (բեյ) բեկ Աթաբեկով - թուրքական էմիսար - Վ. Վ.) պլաններին հակադրվելու նպատակով, որը Ախալցխայի գավառում տիրում էր մի քանի հազար դեսյատին հողի և որին վրացական կառավարությունը փնտրում էր և մտադիր էր հանձնել դատի: Այս հանգամանքը հայկական հետախուզությունը հրաշալի ըմբռնում էր, և աշխատում էր զուր տեղը զոհ չգնալ և դյուրահավատի նման չընդունել եղբայրության մասին վրացիների մեղրածոր արտահայտությունները[1119]: Այդ նույն օրը, 1920 թ. ապրիլի 1-ին Քիշմիշյանը հեռագրով (N 93)՝ ուղղված Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետին, տեղեկացնում է, որ իրեն արժանահավատ աղբյուրներից հաջողվել է պարզել, որ իբր Վրաստանի և Ադրբեջանի միջև կնքված է լրացուցիչ գաղտնի պայմանագիր այն մասին, որ Ադրբեջանի և Հայաստանի միջև զինված կոնֆլիկտի ծագման պարագայում, բոլոր վրացի սպաները ետ են կանչվելու այդ ճակատից[1120]:

Հ. Քիշմիշյանի 1920 թ. մարտի կեսերին Չըլդրի մասին հաղորդած տեղեկատվության մեջ հավելումներ են մտցվում. 1920 թ. ապրիլի 19-ին Երևանում ՀՀ բանակի հրամանատարը գեներալ-մայոր Հովսեփյանցի և պոդպորուչիկ Դոդոխյանի կողմից գրություն է ստանում (N 00343), որում վերջիններս հայտնում էին, որ Չըլդրի ապստամբության գլխավոր

[1118] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 607, թ. 40:
[1119] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ – 199, ց. 1, գ. 184, թ. 12:
[1120] Տե՛ս նույն տեղում, թ. 13:

կազմակերպիչը՝ դոկտոր Հաջիևը, տվյալ պահին գտնվում է Ախալքալաքի գավառի Սագայլու գյուղում, որ Աջարիայում նախապատրաստվում է ապստամբություն: Հարց էին բարձրացնում, թե հնարավորություն չկա՞ արդյոք վրացական իշխանությունների միջոցով ձերբակալել Հաջիևին և տեղափոխել Հայաստան՝ դատի համար[1121]:

Ակնհայտ էր հայկական կողմի տագնապը վրացական կողմի ռազմաքաղաքական նախապատրաստությունների և իրենց կողմից ձեռնարկվելիք քայլերի ու հնարավոր արդյունավետ մանևրումների մասին: Վրացական կողմին հակազդելու և հակադրվելու խնդրում որոշակի դեր էին խաղում նաև արտերկրից, և մասնավորապես արտասահմանում գտնվող հայկական պատվիրակություններից, այդ թվում և ստացված տեղեկատվությունը Ավ. Ահարոնյանից, որն իր ճեպագրերով՝ ուղղված մեծ տերությունների ղեկավարներին և անձնական տեսակցություններում ձգտում էր նրանց ուշադրությունը բևեռել Կովկասում, և առանձնապես Հայաստանի և Վրաստանի միջև ընթացող ռազմաքաղաքական իրադարձություններին և միջպետական բարդույթներին:

Այսպես, 1920 թ. ապրիլի 9-ին Ավ. Ահարոնյանը լորդ Քըրզընի [Քերզոն] հետ ունեցած տեսակցության ժամանակ փորձում է բրիտանական բարձրաստիճան պետական գործչի ուշադրությունը հրավիրել վրաց-հայկական ռազմաքաղաքական հարաբերություններում առկա բարդույթների, վրացական կողմի հակահայ քայլերի և խարդավանքների վրա, կարծես թե վերջինս անտեղյակ էր այդ ամենից. «...զինադադարից ի վեր սահմանների անորոշության պատճառով մեր երկիրը ենթակա է բազմապիսի աղետների: Վրացիք, օգտվելով իրենց հաղորդակցության գերակշռությունից, ճնշում են մեզ տնտեսապես, որպեսզի ստիպեն մեզ զիջել հօգուտ նրանց մեր մի քանի հայաշատ հողամասերը՝ Լոռի, Բորչալու, Ախալքալակ[ը]»[1122]:

Ավելի ուշ, արդեն 1920 թ. ապրիլի 21-ին Սան-Ռեմոյում վրացիների և թաթարների հետ ունեցած խորհրդակցության ժամանակ Ավ. Ահարոնյանը վերջիններիս հայտնում է իր վրդովմունքի մասին Լոռի-Ախալքալաքի նկատմամբ բռնած դիրքորոշման կապակցությամբ.

[1121] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 184, թ. 21:

[1122] Տե՛ս Ահարոնյան Ավ., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան. Քաղաքական օրագիր. 1919-1927, Եր., ԵՊՀ հրատ., 2001, էջ 79:

«Շատ ուրախ եմ, որ դուք ազգերի ինքնորոշումը և ժողովուրդների իրավունքը մեջ բերիք: Բայց ինչու՞ այդ հիշեցիք այժմ լազերի առթիվ և այնպես մոռացել եք Ախալքալակը պահանջելիս, ուր 80 հազար հայերի դեմ հազիվ 4-5 հազար վրացի կա, և Լոռին ու Բորչալուն պահանջելիս, ուր 60 հազար հայության մոտ 4-5 հազիվ վրացի կա: Պ. Չխեիձե, կա՛մ շարունակ լինինք իսկապես դեմոկրատ, պաշտպան ժողովուրդների իրավունքի, կամ երբեք չլինինք: Հարցրե՞լ եք արդյոք լոռեցիներին, թե նրանք կամենու՞մ են վրացի դառնալ: Հարցրե՞լ եք ախալքալաքցիներին...»[1123]:

Հայաստանում տագնապով էին հետևում Վրաստանում և դրա շուրջ ընթացող իրադարձություններին: Հայկական կողմին խորապես հետաքրքրում էին թե՛ տնտեսական, թե՛ ռազմական բնույթի փոփոխությունները ու տեղաշարժերը Վրաստանում, վրացական զորքերի վիճակը, տեղաբաշխումը, վրաց-ադրբեջանական փոխհարաբերությունների վիճակը, վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ և այլն: Տ. Դեվոյանցը 1920 թ. մայիսի 4-ի հեռագրով (N 166. «Արագած» ծածկագրով)՝ ուղղված Քիշմիշյանին խնդրում էր տեղեկություններ հաղորդել Ադրբեջանի սահմանների մոտ վրացական զորքերի վերախմբավորումների մասին, որի վրա գեներալը մակագրել էր, հանձնարարելով Ումիկյանին նախապատրաստել անհրաժեշտ տեղեկանքը[1124]:

1920 թ. մայիսի 10-ին Քիշմիշյանի կողմից ուղարկվում է հերթական հեռագիրը (N 193/c), որում արժեքավոր տեղեկություններ էին հաղորդվում Ախալքալաքի փախստականների օգնության ամերիկյան կոմիտեի տեղափոխման, Ադրբեջանում բոլշևիկների գործողությունների և նրանց ձեռնարկումների մասին Չեզոք գոտում, վերջիններիս կողմից նախապատրաստվող Բաթումիից Հայաստան տեղափոխվող զինամթերքի առաքման նկատմամբ ենթադրվելիք կանխարգելիչ քայլերի, Վրաստանի Պաշտպանության խորհրդում մտցված Հայաստանի հետ ուղղորդված ռազմական գործողությունների նախագծի, ժողովրդական գվարդիայի շտաբի պետ Վ. Ջուղելու գլխավորած զորքերի Բորչալուի

[1123] Տե՛ս նույն տեղում, էջ 93-94:
[1124] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 184, թ. 28:

գավառ ժամանման մասին, որոնք Հայաստանի համար ռազմավարական արժեք ունեին[1125]:

Այդ մասին է վկայում նաև Քիշմիշյանի 1920 թ. մայիսի 18-ի հեռագիրը (N 207)՝ ուղղված Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետին, արժեքավոր տեղեկատվություն էր հայտնվում այն մասին, որ Վրաստանի հակահետախուզության կողմից Հայաստան են ուղարկվել գործակալներ, ավելացնելով, որ վերջիններիս ազգանունները կհաղորդվեն լրացուցիչ: Տեղեկատվությունը ամփոփվում էր Վրաստանում սկսված 1888 և 1889 թթ. ծնվածների զորահավաքի մասին տեղեկության հաղորդմամբ[1126]:

1920 թ. հունիսի 28-ի հեռագրում (N 302) գեներալ Քիշմիշյանը հայտնում էր Հայկական բանակի շտաբի պետին, որ հնարավոր է 10 հազար ռուբլով ձեռք բերել վրացական զինվորական զորային նոր գաղտնագիրը, և խնդրում էր այդ մասին հաղորդել Խան-Կոտուրսկուն: 1920 թ. հունիսի 29-ի հեռագրում՝ ուղղված ՀՀ զորքերի Գլխավոր շտաբի պետին, Քիշմիշյանը բավարարում էր 1920 թ. հուլիսի 26-ի հարցապնդմանը՝ կապված Մ. Ա. Բախչիևի անվան հետ, հայտնելով, որ հետախուզության նպատակով գործուղված պորուչիկ Միխայիլ Ալեքսանդրի Բախչիևը Թիֆլիսում՝ վրացական հեռագրատանը ընդունվել է աշխատանքի: Նշված հեռագրում առաջին հերթին խնդրվում էր ջանքեր գործադրել ձեռք բերելու առաջարկվող նոր վրացական զորական շիֆրը [գաղտնագիրը, կոդը]՝ ծածկագրված հեռագրերի իսկությունը ստուգելու և բովանդակությունը պարզելու համար: Իսկ 1920 թ. հուլիսի 1-ին (N 587) Երևանից Խան-Կոտուրսկին Քիշմիշյանից խնդրում էր տեղեկություններ հաղորդել վրացական զորքերի տեղաբաշխման մասին Արդահան-Արդվինի շրջանում[1127]:

Ուշագրավ է ևս մի փաստ վրացական կողմի երկդիմի վերաբերմունքի մասին Հայաստանի նկատմամբ, այն մշտական անկայուն քաղաքական կուրսի մասին, որ վարում էր «եղբայրական» Վրաստանը բլոկադայի մեջ գտնվող և թշնամիներով շրջապատված Հայաստանի նկատմամբ՝ քողածածկված եզրեր փնտրելով ադրբեջանական կողմի

[1125] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 184, թ. 33-35:
[1126] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 184, թ. 39:
[1127] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 154, թ. 78-79, 157:

հետ: Այսպես, ՀՀ զորքերի գլխավոր հրամանատարի շտաբի Հետախուզական բաժնի 1920 թ. հունիսի 3-ի ամփոփագիրը (N 18) արժեքավոր տեղեկություններ է հաղորդում այն մասին, որ դեռևս 1918 թ. վրաց-հայկական պատերազմի ժամանակ Բորչալուում վրացական իշխանությունների կողմից կազմակերպվել է ժողովրդական գվարդիա՝ շուրջ 1000-1500 թաթարներից կազմված, որն էլ 1920 թ. կեսերին մտցվել է ադրբեջանական զորամասերի մեջ: Ակնհայտ է վրաց-ադրբեջանական մերձեցումը, փոխհամաձայնեցված գործողությունները ընդհանուր շահերի տեսանկյունից[1128]:

Հետևաբար, վրացիներն օգտվելով Հայաստանի համար ստեղծված աննպաստ քաղաքական կացությունից, ակտիվացնում էին իրենց ռազմաքաղաքական գործունեությունը և հետախուզությունը սահմանակից բոլոր շրջաններում՝ հավակնություններ ներկայացնելով Արդահանի և Կարսի շրջանների տարածքների նկատմամբ՝ համագործակցելով ադրբեջանական իշխանությունների հետ, չնայած Տ. Դեվոյանցը այդ մտքի հետ համաձայն չէ, ասելով, որ «վրացիները այստեղ չէզոք էին, եվ Կարսի նահանգի մէջ չունէին իրենց գործակալները», ինչը սակայն չի համապատասխանում իրականությանը[1129]:

Հայ-ադրբեջանական լարվածությանը զուգահեռ որոշակի լարվածություն, բախումնալից վիճակ է ստեղծվում նաև վրացիների կողմից՝ Օլթիում, որի մասին տեղեկանում ենք ՀՀ զորքերի շտաբի պետ գնդապետ Ի. Վեքիլովի 1920 թ. հուլիսի 30-ի հեռագրից (N 715)՝ ուղղված Հ. Քիշմիշյանին: Դրանում հայտնվում էր օլթեցիների հետ վրացիների բանակցությունների մասին՝ նպատակ հետամտելով խաղաղ ճանապարհով զավթել շրջանը և նախապատրաստել նոր ուժերի ժամանումը՝ Արդահանի և Օլթիի շրջանները գրավելու համար: Վեքիլովը Քիշմիշյանին հայտնելով Զինվորական նախարարի առաջարկի մասին՝ ծանոթանալ վրացիների իսկական նպատակադրումներին Օլթիի և Արդահանի շրջանների վերաբերյալ, խնդրում էր անհապաղ հեռագրել արդյունքների մասին[1130]:

[1128] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 33, թ. 33:

[1129] Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից //«Հայրենիք», Բոստոն, 1946, N 2 (253), Մարտ-Ապրիլ, էջ 106:

[1130] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 154, թ. 91:

Գեներալ Քիշմիշյանը 1920 թ. օգոստոսի 20-ին ՀՀ զորքերի հրամանատարի շտաբի պետին հաղորդում էր (N 352/c), որ համաձայն ստուգված և միանգամայն հավաստի գործակալական տվյալների, Վրաստանի կառավարությունն իրականացնում է ուժեղ քարոզչություն՝ նպատակ հետապնդելով խաղաղ ճանապարհով տիրել Արդահանի, Օլթիի մարզերին և Չըլդրին: Դրա հետ մեկտեղ, Հ. Քիշմիշյանը նշում էր, որ ինչ վերաբերում է Օլթիի շրջանը զինված եղանակով գրավելու մասին տեղեկություններին, որի համար վրացիները զորքեր են հավաքում, ապա իբր դրանք չեն համապատասխանում իրականությանը, քանի որ կայազորները չեն փոխվել, հայտնելով, որ Վրաստանի կառավարությունը կենտրոնացել է երկու գլխավոր կետերում՝ Ախալցխայում և Ախալքալաքում, ուժեղացնելով գեներալ Չիկվաիձեի սահմանապահ զորաջոկատը, հենվելով նաև մի շարք մահմեդական գործիչների՝ ինչպես օրինակ, Ջալալ բեկ Մաչաբելայի վրա, որը գործուղվել էր Օլթի՝ մեծ լիազորություններով և գումարներով, սակայն մնացել էր Ախալցխայում, որտեղ գտնվում էր նաև Օմար Էֆենդիի՝ Ախալցխայի կառավարության նախկին նախագահի շտաբը: Ամփոփագրում Քիշմիշյանը տեղեկացնում էր, որ Օլթիի շրջանում քարոզչական աշխատանքները տարվել են Սերվեր բեկ Աթաբեկովի միջոցով, իսկ Արդահանի շրջանում այն իրականացրել է գավառապետ Կադիմովը, որը մեծ գումարներով կաշառվել էր և աշխատանքներ էր տանում հօգուտ Վրաստանի, որ Ախալքալաքի շրջանից մի շարք մահմեդական սահմանային գյուղերի միջոցով վրացիները կապեր են հաստատել Չըլդրի և Աղբաբայի հետ և օգոստոսի 6-ին Չըլդրից Թիֆլիս են ժամանել մահմեդական բնակչության ներկայացուցիչները՝ Վրաստանի ՆԳ նախարար Ն. Վ. Ռամիշվիլու հետ տեսակցելու: Ամփոփագիրն ավարտվում էր եզրակացությամբ այն մասին, որ վրացական կառավարության մարտավարությունն Արդահանի և Օլթիի մարզերի, Չեզոք գոտու նկատմամբ արտահայտվում է ուժեղ քարոզչությունում՝ առանց զինված ուժերի կուտակման և կառավարության կողմից մի շարք գաղտնի որոշումների ընդունումով՝ բնակչությանը խաղաղ ճանապարհով իրենց ազդեցության տակ գցելու համար, հենվելով բնակչության ազատ կամքի արտահայտման վրա[1131]:

[1131] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 184, թ. 101:

Որոշ բաներ, այնուամենայնիվ, հայկական հատուկ ծառայություններին հաջողվում էր, և դա երևում է նաև նրանց գործունեությունից Արդահանի շրջանում, որտեղ հայերն ստիպված էին միայնակ պայքարել աղրբեջանա-թուրքական-վրացական միացյալ ոտնձգությունների դեմ հայկական տարածքների և ազգաբնակչության նկատմամբ: Գլխավոր շտաբի հակահետախուզության բաժնի պետ պորուչիկ Հ. Խան-Գոտուրսկին և նրա օգնական պոդպորուչիկ Մ. Դոդոխյանը 1920 թ. սեպտեմբերի 20-ին զորքերի հրամանատարին ներկայացված համահավաք տվյալներում արձանագրում էին, որ Արդահանի շրջանի մահմեդական բնակչության շրջանում համառ լուրեր են տարածվում, որ մոտ ապագայում մարզը պետք է անցնի Վրաստանին, տեղեկացնելով Արդահանից Արդվին ընկած տարածքում զենքի տեղափոխման ու Նիկոլաևկայում վրաց զորքերի, հեծյալ մահմեդական դիվիզիոնի տեղաբաշխման մասին[1132]:

Ավելին, 1920 թ. սեպտեմբերի 30-ին վրացական զորամասերը մտան Հայաստանի Հանրապետության հետ սահմանակից շրջանները և գրավեցին Արդահանի մարզի Չըլդրի (Չալդիրի) և Գյոլի շրջանները, իրենց հետ բերելով քաղաքացիական վարչակարգի ներկայացուցիչների, որոնք ձեռնամուխ եղան այդ շրջանների կառավարմանը, անգամ պատրաստվելով գավառապետ ուղարկել: Միաժամանակ, հենվելով Թիֆլիսի ՀՀ դիվանագիտական հավատարմատարից ստացված տեղեկություններից քաղված փաստերի վրա, կարելի է պնդել, որ Չըլդր-Գյոլի շրջանում վրացիների բռնած դիրքը ցույց է տվել, որ նրանք կարող էին կապ ունենալ թուրքերի հետ և կամ ուզեցել են պարզապես օգտվել հայկական կողմի համար ստեղծված ծանր դրությունից, և գործնականում այդպես էլ վարվել են՝ քողարկվելով Հայաստանի Հանրապետությանը օգտակար լինելու մեղրածոր արտահայտություններով: Ջուրզունա գյուղում հոկտեմբերի 13-ին հանդիսավորապես բարձրացվեց վրացական պետական դրոշ, որի կապակցությամբ Տ. Բեկզադյանը բողոքագիր ներկայացրեց Վրաստանի Արտաքին Գործերի նախարարին, ինչն էլ սկիզբ դրեց դիվանագիտական բանավեճին կողմերի միջև[1133]: ՀՀ կա-

[1132] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 607, թ. 40:

[1133] Տե՛ս Hovannisian R. G., The Republic of Armenia (Los Angeles, 1982), vol. IV, pp. 222-226: Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր IV, էջ 259:

ռավարությունը պահանջում էր վրացական զորամասերը ամբողջությամբ դուրս բերել Գյոլեի և Չըլդրի շրջաններից: Ախալքալաքից Արդահան ուղարկվեց 8-րդ վրացական գումարտակի մեկ վաշտ զինվոր: Իսկ արդեն ՀՀ Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժամունքի պետի պաշտոնակատար, Ծովակալության գծով պորուչիկ Հովան Խան-Կոտուրսկու (Ղոթուրի) և նրա օգնական, պոդպորուչիկ Մ. Դոդոխյանի կողմից հաղորդած 1920 թ. սեպտեմբերի 3-ի (N 21) գաղտնի ամփոփագիրը ավելի կոնկրետ տեղեկատվության համաձայն, Արդահանի հյուսիսային մասում տեղաբախշված է եղել վրացական 2-րդ թեթև մարտկոց 4 հրետանիով, իսկ Արդահանից դեպի Արդվին տեղաբաշխված են եղել 9–րդ և 12-րդ գումարտակները, հեծյալ մուսուլմանական դիվիզիոնը և 2 մարտկոց, 12-րդ գումարտակի 2 վաշտերը կանգնած են եղել Նիկոլաևկայում, մեկ վաշտ՝ Գիպզոտամալում, նաև փաստելով, որ Ախալքալաքից Արդահան է ուղարկվել 3–րդ լեռնային մարտկոցը և 2-րդ հետևակային գունդը, իր կազմում ունենալով 400-500 հեծելակներից բաղկացած 2-րդ հետևակային գունդը, ինչպես նաև Ախալքալաքում պատրաստի վիճակում է գտնվում ժողովրդական գվարդիան, 531 զինվոր ունեցող 12-րդ գումարտակը, սպասվում է Ախալցխայից նոր զորուժի ժամանումը՝ բաղկացած 7 սպաներից և 800 զինվորներից, ավելացնելով, որ Ախալքալաքում կա 180-200 արկղ փամփուշտ, իսկ Եկատերինֆելդում տեղաբաշխված են մոտ 200 հոգանոց ժողովրդական գվարդիա և հրետանային պահեստներ[1134]: Դրա հետ մեկտեղ, Թիֆլիսի ՀՀ դիվանագիտական հավատարմատարը խնդրում էր հաղորդել Ֆրանսիական ռազմաքաղաքական ներկայացուցչության ղեկավար Դը-Կորբեյլին, որ իրենց հարկավոր է 10 հազար «Լեբել» հրացան, 20 լեռնային թնդանոթ և 30 հազար շրապնել՝ պայմանով, որ նրանց արժեքը վճարվի գեներալ Գ. Ղորղանյանի կողմից Փարիզում[1135]: Վրացիները օգտվելով Հայաստանի Հանրապետության համար ստեղծված անբարենպաստ ռազմաքաղաքական իրավիճակից, 1920 թ. հոկտեմբերի վերջերին՝ կապված թուրքական սպառնալիքի հետ, էլ ավելի ակտիվացրեցին իրենց գործողությունները՝ Բաթումիից զորքեր տեղա-

[1134] Տե՛ս Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 25/25: ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 607, թ. 40:

[1135] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 79, թ. 147-148: ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 486, թ. 334:

փոխելով Արդահանի և Արդվինի մարզ, ինչի մասին վկայում են 11-րդ Կարմիր բանակի օպերատիվ բաժանմունքի պետը, կոմիսարը և հետախուզական բաժանմունքի պետը Անդրկովկասի վերաբերյալ իրենց բացատրական գրության մեջ[1136]:

Այս հանգամանքը շատ խորաթափանցորեն է նկատել Հովի. Քաջազունին. «Հարկ եղած դեպքում վրացիները հեշտութեամբ կարող էին մի ընդհանուր լեզու գտնել թէ՛ Թիւրքիայի, թէ՛ Ազրբէյջանի հետ, - յամենայն դէպս շատ աւելի հեշտ, քան հայերը...սրանց աղբիւրը պարզապէս տիրակալական հակումներ էին, որ կարող էին զսպւել, չափաւորւել, նոյն իսկ իսպառ վերացւել՝ առանց լրջօրեն վտանգելու Վրաստանի ներկան կան՝ ապագան: Յենւելով թուրքերի ու թաթարների վրայ կամ՝ սպառնալով, թէ այն ուղղութեամբ կը շիտկեն իրենց ճակատը, անելանելի կացութեան մէջ էին դնում մեզ ու հարկադրում՝ իրենց ցանկութիւններին յարմարւելու: Ապա՝ երեսները մեր կողմը դարձնելով, մեզ մերձենալով (կամ մերձենալու մտադրութիւն ցուցադրելով), կաշկանդում էին ու որոշ չափով ահաբեկում նաեւ ազրբեյջանցիներին:

Քաղաքական շանտաժ էր սա, որ մեծ առավելութիւն էր տալիս վրացիներին ու ապահովեցնում նրանց գերիշխանութիւնը»[1137]:

Ի պատասխան, Տ. Բեկզադյանը հոկտեմբերի 1-ին Վրաստանի կառավարությանը բողոքի նոտա ներկայացրեց, որում նշեց, որ «բարեկամ պետության տարածքի բռնազավթման անօրինականությունը նույնքան բացահայտ է, որքան և անվիճելի, և նշեց թշնամական գործողությունների անթույլատրելիության մասին այն ժողովրդի նկատմամբ, որը բացահայտ և անխղճաբար անգութ» վճռական պատերազմ է մղում հենց իր տարածքի անձեռնմխելիության համար, որը իր վերջնական արդյունքում, վրաց հասարակական կարծիքի միաձայն ընդունմամբ, պետք է պաշտպանի և ապահովի նաև հենց Վրաստանի պետական շահերը: Վերջնամասում Բեկզադյանը ավելացրել էր, որ վրացական իշխանությունների գործողությունների բնույթը Արդահանի մարզում «պայքարող հայ ժողովրդի լայն շերտերում խոր հիասթափություն է առաջացրել իր նկատմամբ վրացական կառավարության բարեկամական զգաց-

[1136] Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, Ер., Изд-во АН Армении, 1992, стр. 595-596:

[1137] Քաջազունի Յովի., Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ ևս, էջ 16-17:

մունքներում», և կոչ արեց անհապաղ կարգադրություն անել գրավված տարածքներից վրացական զորամասերի անհապաղ դուրսբերման մասին[1138]:

1920 թ. հոկտեմբերի 18-ին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրը պատասխանում է, որ Արդահանի շրջանը պատկանում է վիճելի տարածքների թվին և այդ իսկ պատճառով, չկանխորոշելով Արդահանի երկրամասի վերջնական ճակատագրի մասին հարցը, իրենք գտնում են, որ այնտեղ վրացական զորամասերի գտնվելը նույնչափ օրինական է, որքան և Հայաստանի Հանրապետության զորքերի և վարչակարգի գտնվելը այդ մարզում: Միևնույն ժամանակ, այդ նոտան ստորագրած Կ. Սաբախտարաշվիլին ընդգծում էր, որ հայկական զորքերը թողել են Չըլդրը և Գյոլը, և եթե Վրաստանը այնտեղ չմտցներ իր զորքերը, ապա թուրքերն այն նույնպես գրավելու էին, ինչպես և Արդահանը ու դրանով իսկ կսպառնային հայկական բանակին թիկունքից: Եվ ըստ այդմ, վրացական կողմը հայտարարում էր, որ ստեղծված իրավիճակում վրացական կառավարությունը գործել է ելնելով թե՛ Վրաստանի, և թե՛ Հայաստանի Հանրապետության շահերից: Հավաստիացնելով, որ վրացական զորքերի և վարչակարգի մտցնելը Արդահանի մարզ իրականացվել է ընդամենը ստրատեգիական անհրաժեշտությունից ելնելով, Կ. Սաբախտարաշվիլին առաջարկում է անմիջական բանակցությունների մեջ մտնել՝ «status quo»-ի պայմանները մշակելու համար[1139]:

1920 թ. վերջնամասը նոր զարգացումների և փոփոխությունների հնարավորություն է ստեղծում սահմանավեճային գոտեմարտում և առհասարակ ռազմաքաղաքական հարաբերությունների բովանդակության մեջ նոր շերտանստվածքներ առաջ բերում: 1920 թ. դեկտեմբերի 6-ի մի կարևոր փաստաթղթից, որ ուղարկվել էր նաև Վրաստանում ՀՀ զինվորական ներկայացուցչին, տեղեկանում ենք Վրաստանի կառավարության պատվիրակության նոր առաջարկի՝ Վրաստանի և Հայաստանի միջև սահմանազատիչ գծի մասին, որն ըստ վրացիների, համարվում էր վերջնական: Վրացական կողմը դա համարում էր ընդունելի միայն այն դեպքում, եթե երկու հանրապետությունների միջև բոլոր հարցերի

[1138] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 359-360:

[1139] Տե՛ս там же, стр. 360:

լուծման պայմանները մի ամբողջության մեջ պարտադիր լինի երկու հանրապետությունների կողմից: Ըստ այդ առաջարկի, երկու հանրապետությունների միջև սահմանազատիչ գիծը պետք է լիներ հետևյալը. Չատին-Դաղ լեռից Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգների նախկին սահմանով՝ մինչև Քոբայր կիսակայարանի հարավային լուսազդանշանը, այդտեղից ուղիղ գծով Ցենգ սարը և այնուհետև՝ Թիֆլիսի նահանգի և Արդահանի օկրուգների հարավային վարչական սահմաններով մինչև Բաթումիի մարզի արևելյան վարչական սահմանը՝ Արդահանի և Օլթիի օկրուգների հետ միասին: Ինչպես ընդգծվում էր այդ առաջարկում, այդպիսով Վրաստանը հրաժարվում էր Լոռուց հօգուտ Հայաստանի՝ վերը նշված սահմանագծի շրջանակներում, չնայած այն բանին, որ Լոռին և՛ տնտեսապես, և՛ պատմականորեն, ըստ վրաց կառավարության առաջարկի՝ կազմում էր Վրաստանի անքակտելի մասը: Նաև ընդգծվում էր, որ Վրաստանը հրաժարվում է Օլթիի օկրուգից, չնայած պատմականորեն և ազգագրական առումով Վրաստանը այդ օկրուգի նկատմամբ ևս ունի անձեռնմխելի և անօտարելի իրավունքներ: Ինչ վերաբերում էր Արդահանի օկրուգի հարցին, դրա լիիրավ իմաստով, ապա վրացական պատվիրակությունը հայտարարագրեց, որ բացի պատմական և էթնիկական իրավունքներից, այդ օկրուգը Վրաստանի համար ռազմավարական և տնտեսական նկատառումներով հանդիսանում է կյանքի և մահվան հարց, քանզի Բաթումիի մարզը մշտապես ապրել է Արդահանի օկրուգից ներկրված սննդամթերքով, և բացի այդ, Բաթումիի մարզի պաշտպանությունը առանց Արդահանի օկրուգի հարավային սահմաններին տիրելու՝ անպատկերացնելի է: Դրան վրացական պատվիրակության կողմից կրկին ավելացվում է նաև, որ 1919 թ. Արդահանի օկրուգը մաքրվել և ազատագրվել է Հարավարևմտյան հանրապետության պահանջատիրությունից միայն վրացական զինվորների և սպաների արյամբ, և երկրորդ, ինչքանով հայտնի է վրացական պատվիրակությանը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը երբեք չի հայտարարել իր պահանջների մասին Արդահանի և Օլթիի օկրուգների նկատմամբ: Սույն փաստաթղթի տակ ստորագրել էին վրացական պատվիրակության անդամներ Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորին,

Ներքին Գործերի մինիստր Ն. Ռամիշվիլին, Զինվորական մինիստր Գր. Լորդկիպանիձեն[1140]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, 1920 թ. դրությամբ, Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների սահմանները հստակեցված չէին: Հայ-վրացական հարաբերություններում վիճելի էին մնում Ախալքալաքի, Լոռու, Արդահան քաղաքի և նույն շրջանի հյուսիսային մասի պատկանելության հարցերը: Գնահատելով իրավիճակը, հայկական կառավարությունը որպես լուծում, առաջարկում էր միջազգային իրավարարչություն կիրառել, որը ևս անարդյունավետ եղավ: 1920 թ. փետրվարի 12-ից ապրիլի 10-ը Լոնդոնում տեղի ունեցավ դաշնակիցների վարչապետների և Արտաքին Գործոց նախարարների կոնֆերանսը, որի փետրվարի 17-ի որոշմամբ ստեղծված Հայաստանի սահմանների որոշման միջազգային հանձնաժողովը փետրվարի 25-ին առաջարկեց ճշգրտել անդրկովկասյան երկրների սահմանները ու անմիջապես ժամանել վիճելի շրջաններ[1141]: Սակայն ձեռնարկված քայլերն ի չիք եղան:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայ-վրացական հարաբերություններում առկա լարվածությունը՝ ներքուստ քողարկված հակասությունների ձևով պահպանվում էր, քանզի վրացական կողմը հակված չէր անգամ փոխզիջումային խելամիտ տարբերակներին, և ինչպես վերջինս հայտարարել էր դեռ 1920 թ. հուլիս-օգոստոսին տեղի ունեցած հայ-վրացական խորհրդաժողովում, իրենց պահանջատիրությունը տարածվում էր ամբողջությամբ Ախալքալաքի գավառի, Լոռու նկատմամբ՝ մինչև Սանահին կայարան, ինչպես նաև Արդահանի և Օլթիի գավառների մեծ մասի վրա, ինչը, բնականաբար մեժվեց հայկական կառավարության կողմից: Սահմանատարածքային հարցերը այս փուլում ևս փակուղի մտան, իսկ հայ-վրացական հարաբերություններում առկա ռազմաքաղաքական լարվածությունը պահպանվեց:

[1140] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 154, թ. 168:

[1141] Լոնդոնի կոնֆերանսը առաջարկել էր ՀՀ-ին հատկացնել Ճորոխի հովիտը և Հայաստանի մաս ճանաչել ոչ միայն Արդահանն, այլև՝ Կարս-Արդահան-Արդվին ամբողջ երթուղին, այդ ժամանակ՝ փետրվարի 22-ին ու 25-ին Ն. Ջխեիձեն և Զ. Ավալովը մեծացրեցին իրենց նկրտումները Կարսի մարզում՝ հասցնելով ընդհուպ մինչև Օլթի: Գնահատելով իրավիճակը, Ս. Մամիկոնյանն և Ալ. Խատիսյանը՝ որպես լուծում, առաջարկում էին միջազգային իրավարարչություն կիրառել: - Տե՛ս Մախմուրյան Գ., ՀՀ արտաքին քաղաքականության հարցերի արծարծումը Ավետիս Ահարոնյանի … նամակներում, էջ 69:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ-ՌԱԶՄԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՀԱՐՑԸ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ

Վրաստանի հետ սահմանային-տարածքային վեճերի հանգուցալուծման ուղիների որոնման հետ մեկտեղ ՀՀ կառավարությունը իր համար ճգնաժամային և տագնապալից 1920 թ. մայիսյան հակապետական բոլշևիկյան խռովությունների և աղետալի թուրք-հայկական պատերազմի ամիսներին մի քաղաքական գործոն էլ փորձարկեց՝ Վրաստանի հետ ռազմաքաղաքական պաշտպանական դաշինք ստեղծել, դրանով իսկ փորձելով ելք որոնել ստեղծված բարդ իրավիճակից ու հնարավորինս զերծ մնալ Լոռու և Ախալքալաքի հիմնահարցին միայն ուժային լուծումներ տալուց: Այդ մասին վկայում է դոկտ. Արտ. Բաբալյանը. «Դեռ եւս մայիսյան հակապետական շարժման ժամանակ եւ նրանից յետոյ, օգոստոս ամսին, մեր կառավարութիւնը ցանկություն էր յայտնել Վրաստանի հետ զինուորական դաշինք կնքելու:

Մեր կրկնակի դիմումները Վրաստանին մնացին սակայն ապարդիւն:

…Մենք գիտէինք, որ բոլշեւիկյան իշխանութիւնը վճռական որոշում ունի գրաւել Հայաստանն ու Վրաստանը: Բացի այդ մենք, վրացիների հետ համաձայնուելով, կարող կը լինէինք Անգօրայի կառավարութիւնը մեկուսացած պահել եւ գիտէինք, որ Սվազի ազգայնական համագումարին վրացի պատվիրակ էլ է եղել:

Մեր գլխաւոր նպատակն էր ապահովել հիւսիսային սահմանները սերտ համագործակցութեամբ Վրաստանին: Չգիտեմ, թե ի՞նչ պատճառներից դրդուած, վրաց կառավարութիւնը ընդառաջ չգնաց մեր առաջարկներին:

Հայ-տաճկական պատերազմի ընթացքին մեզ համար պարզուեց, որ վրացիները, իրենց հինաւուրց սովորութեան համաձայն, քեմալա-

կանների հետ գաղտնի պայման ունէին կնքած եւ մեր զինուորական նախարարը, Թիֆլիս մեկնելով, ստիպուած էր սպառնալ վրացիներին, որ հանգիստ մնան եւ ոչ մի աջակցութիւն ցոյց չտան Տաճկաստանին: Կրկին առաջարկ եղաւ հայ-վրացական դաշինքի մասին, բայց նորէն առանց հետեւանքի»[1142]:

Քեմալականների Հայաստանի Հանրապետության վրա ավազակային հարձակման շրջանում մենշևիկյան Վրաստանը ակտիվ չեզոք դիրք գրավեց և գործնականում մերժեց ՀՀ կառավարության կոչը ընդհանուր վտանգի դեմ ռազմաքաղաքական դաշինք կնքելու մասին առաջարկությունները: Հայտնի է սակայն, որ դեռևս 1920 թ. հունվարին ՀՀ կառավարությունը Վրաստանի կառավարությանը ռազմաքաղաքական դաշինք կնքելու մասին առաջարկ է անում[1143]:

Դեռ 1920 թ. փետրվարի 8-ի (N 741) ՀՀ Արտգործնախարարության գլխավոր քարտուղար Հ. Տեր-Հակոբյանը Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Լ. Գ. Եվանգուլյանին ուղղված նամակում հայտնում էր, որ իրենք ստացել են նրա փետրվարի 5-ի (N 44) զեկույցը, որում հայտնվում էր, որ ՀՀ կառավարությունը չի առարկում այդ զեկույցում արծարծված Վրաստանի հետ դաշինքի խնդրին, միաժամանակ հայտնելով կառավարության կասկածները այդ առթիվ: ՀՀ Արտգործնախարարության քարտուղարը ցանկանում էր իմանալ, թե արդյոք այդ դաշինքը չի հանդիսանում այն բանի նախադրյալը, որ տնտեսական դաշինքի հաշվին և քողածածկույթի տակ լուծվեին սահմանային-տարածքային վեճերը Հայաստանի և Վրաստանի միջև, ընդ որում Վրաստանի կառավարությունը ցանկություն էր հայտնել վերջնականապես ձեռք բերել Ալավերդու գործարանը: ՀՀ Արտգործնախարարության ներկայացուցիչը եզրահանգում էր, որ դա վրացական կառավարության կողմից ընդամենը ինքնաբավ դիվանագիտական մանևրում է՝ Հայաստանին հարկադրելու զիջել Ալավերդին, ըստ այդմ էլ առաջարկվում էր պարզել Վրաստանի կառավարության իսկական և խորքային մտադրությունները[1144]:

[1142] Բաբալեան Արտ., Կարսի անկումը, «Հայրենիք», Բոստոն, 1923, Ա. Տարի, թիւ 12, vol. N 12, էջ 65-66:

[1143] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 221, թ. 21-22:

[1144] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ – 200, ց. 2, գ. 77, թ. 1: ՀԱԱ, Ֆ. Պ –200, ց. 1, գ. 221, թ. 10:

Այդ ընթացքում, 1920 թ. փետրվարի 12-ին (N 904) Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Տ. Բեկզադյանի շտապ ճեպագրից՝ ուղղված ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ալ. Խատիսյանին, տեղեկանում ենք Վրաստանի Արտաքին գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորու, Երևանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մախարաձեի, ռազմական մինիստր Լորդկիպանիձեի հետ ունեցած հանդիպման մասին, որում մասնակիցները նշել են թուրքական վերահաս վտանգի հետ կապված Վրաստանի և Հայաստանի միջև ռազմական դաշինքի կնքման անհրաժեշտությունը, սակայն ընդգծելով, որ նման դաշինքի համար նախադրյալ կարող է լինել լիակատար համաձայնությունը Հայաստանի և Վրաստանի միջև: Գրության մեջ նշվում է, որ ինքնին համաձայնության կնքումը ըստ երևույթին հասկացվում էր որպես Հայաստանի կողմից զիջում Ալավերդու խնդրում: Հենց դա էլ առիթ տվեց, որ այդ հարցը քննարկվի ՀՀ կառավարության նիստերում և պառլամենտում ՀՅԴ խմբակցության նախաձեռնությամբ: Նշվում էր քաղաքական շրջանների համակրանքի մասին վրաց-հայկական պաշտպանական-ռազմական դաշինքի կնքման խնդրում, որի առարկան և հանգամանքները պետք է դառնային հատուկ խորհրդակցության առարկա, և այդ հետաքրքրությունն այնքան մեծ եղավ, որ մեծամասնությամբ որոշիչ եզրահանգում արվեց, որն ընկավ ՀՀ կառավարության կողմից Վրաստանի հետ տարվելիք բանակցային գործընթացի հիմքում: Սակայն միաժամանակ բոլոր հռետորների կողմից տագնապ էր հայտնվում, թե արդյոք Վրաստանի կողմից առաջարկված դաշինքի հիմքում ընկա՞ծ չեն տարածքային զիջումների խնդիրներ և 300 հոգանոց զորք Արդահան մտցնելու պարտադրվածության նախապայման, քանզի ի հակառակ պայմանագրի, Վրաստանը շարունակել է պահել իր զորագումարտակը Արդահանի հայկական մասում, դրանով իսկ թուլացնելով հայկական կառավարության հեղինակությունը և գայթակղիչ առիթ հանդիսացել խռովարար տրամադրությունների համար[1145]: Հենց այդ հանգամանքից ելնելով, ՀՅԴ խմբակցությունը (26 ձայնով մեծամասնություն կազմելով այդ հարցում՝ ընդդեմ 3 ձեռնպահի) պարտավորեցրեց ՀՀ կառավարությանը հասնելու վրացական զորաջոկատի

[1145] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 221, թ. 22:

տեղափոխմանը դեպի Արդահանի հյուսիսային մասը, ելնելով նաև այն բանից, որ նահանգապետ Ստ. Ղորղանյանը և օկրուգի պետ Կադիմովը վրացական զորամասերի գտնվելը Արդահանի հարավային մասում համարել են ծայրահեղորեն վտանգալից հայկական շահերի և հեղինակության համար: Այնուհետև ասվում էր, որ ռազմական դաշինքը Վրաստանի Հանրապետության հետ հնարավոր է ստորև ներկայացվող տարբերակում առաջադրվող սկզբունքների համաձայն.

1) Վրաստանի կողմից Հայաստանի անխափան մատակարարում վագոններով, մազութով և այլ ձևերով, որոնք կարող են նպաստել մեր ուժեղացմանը և հզորացմանը, որը ուղղակիորեն բխում է Վրաստանի շահերից, նկատի ունենալով ընդհանուր թշնամուն՝ Թուրքիային, որը ջարդելով հայերին, այնուհետև կջախջախի և Վրաստանին,

2) ռազմա-տնտեսական փոխադարձ ծառայությունների մատուցում.

3) համատեղ հանդես գալ բոլոր ճակատներում: Ընդգծվում էր, որ հայկական կողմը հակված է դեպի առաջին և երկրորդ ձևերի իրականացման օգտին:

Այնուհետև ներկայացվում էր ՀՀ Նախարարների խորհրդի և պառլամենտի ՀՅԴ խմբակցության համատեղ որոշումը Վրաստանի հետ ռազմական դաշինքի կնքման վերաբերյալ, որը հանգում էր ներքոբերյալ դրույթներին.

1) Վրաստանի և Հայաստանի միջև ռազմական դաշինքի կնքումը օգտակար համարել, որի սահմանները հաստատել Վրաստանի կառավարության հետ բանակցությունների ուղիով և կոնկրետ ձևով վերջինիս տեսակետը պարզելուց հետո, որով վրացական կառավարությունը պատկերացնում է առաջարկվող դաշինքը Հայաստանի հետ: Բանակցությունների արդյունքների մասին հաղորդել Երևան՝ կառավարությանը՝ ՀՀ Նախարարների խորհրդում քննարկելու և պառլամենտի կողմից հաստատելու համար.

2) Ռազմական դաշինք կնքելու բանակցությունների հետ կապված՝ ոչ մի նոր տարածքային զիջում Վրաստանին չկատարել: Վրաստանի կառավարության հետ համաձայնության դեպքում, Հայաստանի հետ ռազմական-պաշտպանական դաշինք կնքելու համար տարվող բանակ-

ցությունների ժամանակ, ընդունել ՀՀ կառավարության անփոփոխելի պայմանները տարածքային սահմանազատման հարցի մասին:

3) Արդահանում վրացական պահակազորի ուժեղացման հարցը դիտարկել բացառապես Վրաստանի հետ ռազմական դաշինքի կնքման հարցի հետ կապված: Վրաստանի հետ ռազմական դաշինքի կնքման մասին ընդհանուր հարցից դուրս, նշված պահակազորերի ուժեղացման վերաբերյալ որևիցե սեպարատ համաձայնություն չկնքել, ի հակառակ դրա, պնդել վրացական զորքերի դուրսբերման վրա Արդահանի հարավային մասից: Վերջնամասում Ալ. Խատիսյանը առաջարկում էր Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարին ստորև բերված փաստաթուղթը Վրաստանի հետ հնարավոր ռազմական դաշինքի կնքման մասին քննարկել Թիֆլիսի հայկական պատվիրակության հետ, բանակցությունների մեջ գտնվելով Վրաստանի կառավարության հետ, և եթե դրա համար կա պատրաստ հող, կամ չկա՝ նախապես հայտնել ունեցած կարծիքը այդ հարցի վերաբերյալ[1146]:

ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ալ. Խատիսյանին ուղարկված 1920 թ. փետրվարի 18-ի (N 67) զեկուցագրից պարզորոշվում են հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերման, սահմանավեճերի և հայ-վրացական ռազմաքաղաքական դաշինքի հնարավորության նկատմամբ դիրքորոշումների որոշ հետաքրքիր նրբերանգներ: Դրանում Լ. Եվանգուլյանը հայտնում էր, որ ՀՀ Արտաքին Գործերի նախարարի 1920 թ. փետրվարի 8-ի (N 741) գաղտնի նամակին ի պատասխան, ինքը հայտնում է, որ իրենց վեճը ոչ մի վճռական վերաբերմունք չի կարող ունենալ Ալավերդու շրջանի նկատմամբ և ամենևին էլ չի կարող դիտարկվել որպես նախադրյալ կամ նախապայման Վրաստանի հետ իրենց տարածքային հարցը վերջնականապես լուծելու համար, այդ իսկ պատճառով վրացական կառավարության առաջարկը ընդհանրապես Կովկասում մուսուլմանության ընդհանուր քաղաքական գծին և Հայաստանի ու Վրաստանի նկատմամբ վերաբերմունքին, և առաջարկին ամրապնդել իրենց ճակատները Զանգեզուրում և Արդահանում, վրացիները սկսել են առաջին պլանի վրա դիտարկել: Լ. Եվանգուլյանը դրանից ենթադրել էր, որ ոչ մի կերպ չի կարող որևիցե կապ լինել Ալա-

[1146] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 221, թ. 22:

վերդու գործարանի և շատ ավելի հեռու գտնվող Զանգեզուրի և Արդահանի միջև, դիտարկելով դա որպես վրացիների կողմից քողածածկված մոտեցում և գործնական իրագործելի պլան ողջ Արդահանի զավթումը իրականացնելու համար, իբր թե դա համարելով Կարսի մարզի նկատմամբ ազդեցություն ձեռք բերելու ցանկություն՝ որպես արդարացում: Միաժամանակ, Լ. Եվանգուլյանը հայտնում էր, որ ինքը դեռ բավականաչափ փաստեր չունի վրացական կողմի իրական խորքային մտադրությունների մասին և ինքն իրեն հակասելով, պնդում էր, որ չնայած իրենց լավատեսությանը, իրենք արդեն Արդահանին տիրելու վրացական ցանկության մասին նախադեպ ունեն, ավելացնելով նաև, որ վրաց կառավարությունը շահարկում է Հայաստանի համար իրապես մեծ սպառնալիք ներկայացնող թուրքական վտանգի իրողության փաստը: Վերջնամասում Լ. Եվանգուլյանը անդրադառնում էր Վրաստանի հետ պաշտպանական դաշինքի և նրա իրականացման ձևերի հնարավորության խնդրին, ասելով, որ ի պատասխան իրենց կողմից արված առաջարկների, Վրաստանի կողմից դեռ իրենք պաշտոնական առաջարկ չունեն, միաժամանակ ՀՀ կառավարությանը խնդրելով լրացուցիչ հրահանգներ ուղարկել հնարավոր նոր զարգացումների պայմաններում վերջնական հստակ դիրքորոշում ունենալու համար հայ-վրացական ռազմաքաղաքական դաշինքի կնքման հարցում[1147]:

Կապված հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների կարգավորման, Վրաստանից տրանզիտային ուղիով Հայաստանի համար անհրաժեշտ զենքի և զինամթերքի առաքման, Թիֆլիսում գտնվող հրետանային գույքի և պաշտպանական խնդիրների համար հայերի էական զինակոչի, ինչպես նաև հնարավոր հայ-վրացական պաշտպանական բնույթի դաշինքի կնքման հարցերի հետ, 1920 թ. մարտի 3-ին (N 104) ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղարկված զեկուցագրում (այդ գրությունը ՀՀ Արտգործնախարարությունում ստացվել է 1920 թ. մարտի 5-ին, N 1260) Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանը հայտնում էր, որ փետրվարի 29-ին ինքը տեսակցել է Վրաստանի Հանրապետության Զինվորական մինիստր Գ. Լորդկիպանիձեի հետ, որի ժամանակ շոշափվել են մի շարք հարցեր,

[1147] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 221, թ. 31:

այդ թվում. 1) հրետանային զույքի մասին, որ մնացել էր Վրաստանում Կովկասյան անկախ հանրապետությունների հռչակումից հետո, 2) Վրաստանում գտնվող հայերին զինակոչի ցուցակագրելու մասին վերաբերմամբ: Լ. Եվանգուլյանը հայտնում էր, որ ինքը վրացական կողմին հիշեցրել է, որ հրետանային զույքի հարցը իրենց համար շատ կարևոր է, և պետք է փութացնել դրա լուծումը, որին Լորդկիպանիձեն հավանություն է տվել և խոստացել մինչև չորեքշաբթի կամ հինգշաբթի ծանոթանալ այդ հարցի հետ և իրենց տեղեկացնել, թե երբ հնարավոր կլինի հայկական կողմին հանձնել իրենց հասանելիք բաժինը, իսկ Ն. Ռամիշվիլին էլ խոստացել է վճռել հայերի զինակոչության հարցը, իսկ Սուխումիի շրջանի հայության վերաբերմամբ հայերին արտոնություն տալ: Իսկ ինչ վերաբերում էր Թիֆլիսի և նրա շրջակայքի հայերին ցուցակագրելու հարցերին, Գ. Լորդկիպանիձեն հայտնել է, որ ճիշտ է, իրենք զբաղվում են դրանով, սակայն իրականում զորակոչ տեղի չի ունենում, այլ միայն հաշվառում են (հրաշալի ռազմավարական մանևրում վրացիների կողմից - Վ. Վ.) բոլորին, որի հիման վրա հերթական զորակոչի համար կկազմվեն նոր ցուցակներ: Լ. Եվանգուլյանը նաև հայտնում էր, որ զինակոչի հարցից հետո միանգամից անցում կատարվեց վրաց զորքերի Արդահան մտնելու խնդրին, առանց նախօրոք հայկական կառավարության համաձայնությունը ստանալու: Լորդկիպանիձեն հայտնում է Լ. Եվանգուլյանին, որ ինքը ընդունում է հայկական կողմի բողոքի ձևական հնարավորությունը, բայց ըստ էության ներկայումս իբր թե Վրաստանի և Հայաստանի շահերը զուգադիպում են, և իհարկե, ոչ մի կասկած չի կարող լինել վրաց զորքերի կողմից որևիցե ագրեսիվ քայլի մասին Հայաստանի Հանրապետության սահմանների վերաբերմամբ, այլ ընդհակառակը, պնդելով, որ շատ հավանական է, որ հեռու չէ այն ժամանակը, երբ հայկական և վրացական կողմերի թնդանոթները միացած կգործեն միևնույն ճակատի վրա ընդհանուր թշնամու դեմ, միաժամանակ ավելացնելով, որ իրենց տեղեկություններին համաձայն, անգլիացիները հովանավորում են երիտասարդ թուրքերի շարժումը, մասնավորապես նշելով Նուրի և Խալիլ փաշաների նրանց կողմից աջակցման մասին, հաստատագրելով, որ դա իրոք այդ-

պես է և ինքը չի հավատում անգլիացիներին, և առհասարակ բոլոր օտարներին[1148]: Այս հանդիպման վերջում Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանը հայտնում էր, որ նույն օրը երեկոյան ինքն իր մոտ է հրավիրել Կորյուն Գազազյանին (իսկ մինչ այդ՝ Ստ. Մամիկոնյանին և Ս. Խաչատրյանին) և հայտնել վրացական կողմի հետ ունեցած իր խոսակցության մասին, որն էլ իր հերթին հաստատում է Լ. Եվանգուլյանի կողմից իրեն հայտնած տեղեկատվության ճշմարտացիությունը, ինչպես նաև Լորդկիպանիձեի կողմից հայտնած այն տեղեկության հավաստիությունը, որ Էրզրումի շրջանում կենտրոնանում են խոշոր թուրքական ուժեր, որոնք մտադրություն ունեն գարնան սկզբներին հարձակվել Հայաստանի վրա, որ ինքն արդեն հրահանգել է Գլխավոր շտաբի պետին ամեն բանի մասին իրազեկ պահել Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարին[1149]:

1920 թ. մայիսի 7-ին ՀՀ Զինվորական նախարարին ուղարկված զեկուցագրում Թիֆլիսում Հայաստանի զինվորական վարչության ղեկավար, ռազմական կցորդ Հ. Ա. Քիշմիշյանը տեղեկացնում էր, որ ինքը մայիսի 5-ին վրացական բանակի գերագույն հրամանատար, գեներալ Գ. Կվինիտաձեի կողմից հրավիրվել է հանդիպման, որում իբր Գլխավոր շտաբի պետ գեներալ Զախարիաձեի և իր ներկայությամբ տեսակետ է արտահայտվել Հայաստանի և Վրաստանի համատեղ գործողությունների ուղղորդման մասին ընդդեմ ընդհանուր թշնամու՝ Ադրբեջանի: Հ. Քիշմիշյանը հայտնում էր, որ ինքը խուսափողական պատասխան է տվել, խնդրելով՝ իրենց օգնությունը հայերին ցուցաբերել իրական ձևով՝ փոխանակելով հրետանային ունեցվածքի հետ և հայտնի մեղմացում կատարել այն առումով, որ Հայաստանի առջև չդրվեն «դրակոնյան» պայմաններ, ինչպես դա երևում է գեներալ Կազբեկի հայտարարությունից, ըստ որի առաջարկվում էր հայկական կողմին զիջել մեկ «Լեբել» հրացան երկու լեռնային շրապնելների դիմաց: Հ. Քիշմիշյանը հայտնում էր, որ այդ առաջարկին գեներալ Գ. Կվինիտաձեն առարկում է, ասելով, որ դա շատ լավ է, բայց ինքը կպահանջեր հինգ այդպիսի շրապնելներ: Վերջում գեներալ Հ. Քիշմիշյանը տեղեկացնում էր, որ վի-

[1148] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 221, թ. 17:
[1149] Տե՛ս նույն տեղում, թ. 18:

ճաբանությունից ինքը խուսափել է և քննարկվող խնդրի վերաբերյալ խորհրդակցել է Տ. Բեկզադյանի, Ստ. Մամիկոնյանի և Ալ. Խատիսյանի հետ, և ՀՀ կառավարության անունից սկզբունքորեն համաձայնվել վրաց գեներալի առաջարկի հետ, չնայած նաև ընդգծում էր, որ ամեն անգամ այն ի վերջո դատարկ հնչյուն է դառնում, ըստ այդմ միաժամանակ առաջարկելով քննարկել ղարաբաղյան, և ղազախյան գործողությունների շրջանների մասին հարցը, ճշգրտելով մանրամասները, ժամկետները, ինչպես նաև գրավոր ձևով այն ձևակերպել[1150]:

Իսկ Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Տ. Բեկզադյանի կողմից Հայաստանի Արտաքին Գործերի նախարարին ուղարկված 1920 թ. մայիսի 13-ի գրությունից (N 276) պարզվում են մի շարք մանրամասներ հայ-վրացական բանակցություններից, որին մասնակցում էին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորին և Ռազմական մինիստր Լորդկիպանիձեն, որոնց ուշադրության կենտրոնում հիմնականում եղել են ռազմաքաղաքական բնույթի հարցեր: Ըստ պայմանավորվածության, Վրաստանը պարտավորվում էր. 1) Վրաստանը Հայաստանին բաց էր թողնում 1600 հատ «Լեբել» հրացան, իսկ դրա դիմաց Հայաստանը պետք է Վրաստանին տար շրապնելների և գիլզաների [պարկուճների] այն քանակի մի մասը, որոնք պետք է փոխադրվեին Վրաստանով, 2) հավաստիացում տալով, որ տրանզիտային բոլոր բեռները բաց կթողնվեն անարգել, 3) արգելք չհարուցել այն հայերին, որոնք կցանկանան զենքի հետ միասին անցնել Փոթիից Հայաստան, միայն պայմանավորվելով, որ զենքերը կուղարկվեն նրանց հետ իբրև առանձին ապրանք, 4) Վրաստանը պարտավորվում էր համաձայնեցնել ռազմական գործողությունները հարավային ռազմաճակատում, սակայն գտնելով, որ այդ նպատակի համար անհրաժեշտ է կազմակերպել հատուկ մարմին: ՀՀ դիվանագիտական հավատարմատարը հաղորդած տեղեկատվության վերջում ավելացնում էր, որ այդ հանդիպմանը քննարկված հարցերի մանրամասների մասին կարելի է տեղեկանալ նաև գեներալ Ք. Արարատյանից, գեներալ Հ. Քիշմիշյանից և պորուչիկ Եղիազարյանից[1151]:

[1150] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 254, թ. 103:
[1151] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 212, թ. 75: Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 221, թ. 79:

Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Տ. Բեկզադյանին ուղղված Հ. Օհանջանյանի 1920 թ. մայիսի 17-ի գրությունից պարզվում է, որ Վրաստանը կրկին, այս անգամ ևս բանավոր ձևով դիմել է Հայաստանին՝ կնքելու ռազմական-պաշտպանական դաշինք, այդ նպատակով Հայաստան ուղարկելով Վրաստանի Զինվորական մինիստրության մեկ մշտական սպայի՝ երկու հանրապետությունների ռազմաքաղաքական գործողությունների ուղղորդման նպատակով: ՀՀ Արտաքին Գործերի նախարարը պատասխան ուղերձում Բեկզադյանին տեղեկացնում էր, որ ամբողջությամբ ընդունելով այդ պաշտպանական միության ստեղծման սկզբունքը, խնդրում էր նախապես ուսումնասիրել վրացական կառավարության այդ առաջարկը գրավոր ձևով[1152]:

ՀՀ Արտաքին Գործերի նախարար Հ. Օհանջանյանի և Գ. Յակուլյանի 1920 թ. մայիսի 19-ի (N 0071) գրության մեջ՝ ուղղված Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարին, կրկին շոշափվում է Վրաստանի հետ հնարավոր ռազմական դաշինքի հաստատման հարցը, ընդգծելով, որ սակայն մինչև այդ պահը հարցը մնացել է չպարզված, որպես բանավոր առաջարկ, ոչնչով չպարտավորեցնող: Հայտնվում էր, որ բանակցությունները շարունակվում են, որ Վրաստանի և Հայաստանի Գլխավոր շտաբներ են գործուղվել մշտական զինվորական անձինք՝ երկու հանրապետությունների ռազմական գործողությունները ուղղորդելու, այդ նպատակի իրագործման համար առաջադրելով գեներալ Քր. Արարատյանին: Հայտնվում էր նաև, որ ՀՀ կառավարությունը գտնում է, որ բանակցությունների իրական շարունակման համար պետք է պնդել, որ վրացիների առաջարկները նախապես արտահայտվեն գրավոր ձևով, դա համարվում էր կատեգորիկ անհրաժեշտ ձև, անհրաժեշտություն, քանզի ՀՀ կառավարությունը վստահություն չուներ վրացական կողմից արված առաջարկության անկեղծության վրա: ՀՀ դիվանագիտական հավատարմատարից խնդրվում էր հայտնել մեր պատվիրակությանը, որպեսզի վերջինս պարզեր վրացական կողմից Թիֆլիսում արված առաջարկության ճշգրիտ բնույթը, և տեղեկանար, թե ներկա պահին բանակցությունների ինչ փուլում է գտնվում այդ հարցը[1153]:

[1152] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 211, թ. 119:

[1153] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 221, թ. 56:

Որոշ ժամանակ անց, ինչպես երևում է գեներալ Հ. Քիշմիշյանի 1920 թ. մայիսի 23-ի զեկուցագրից, վրաց գեներալ Գ. Կվինիտաձեի հրավերքը կրկնվում է, և մայիսի 20-ին հանդիպումը կայանում է, որտեղ խոսվում է զբաղեցվելիք ճակատների մասին՝ կողմերից յուրաքանչյուրի համար: Դրա հետ միասին, վրաց գեներալը հայկական կողմին մեղադրում է դանդաղկոտության մեջ, որին հանդիպմանը մասնակցող Ստ. Մամիկոնյանը հակառակվում է: Հ. Քիշմիշյանը համադրելով փաստերը, գալիս է եզրահանգման, որ իր տպավորության համաձայն գեներալ Գ. Կվինիտաձեն ինքն իրեն էր արտահայտվում, այլ ոչ թե արտահայտում իր կառավարության կարծիքը, կամ էլ այդ ամենը համարում էր խաղ[1154], որը հեռու չէր ճշմարտացիությունից և գործնականում մոտ ապագայում ապացուցվեց վրաց կառավարության կողմից բռնած դիրքորոշմամբ և ընթացող ռազմաքաղաքական զարգացումներում իրենց ունեցած իրական դերակատարմամբ:

Վրաց-հայկական պաշտպանական դաշինքի և առհասարակ հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների հետագա զարգացման բացահայտման առումով կարևորվում են 1920 թ. մայիսի 19-ից 25-ը ընկած ժամանակամիջոցում Թիֆլիսում և Բաթումիում տեղի ունեցած Վրաստանի և Հայաստանի լիազոր ներկայացուցիչների հանդիպման ժամանակ շոշափված հարցերը, որոնց մասնակցել են նաև օտար պետությունների ներկայացուցիչները: ՀՀ պատվիրակությունը գլխավորում էր Ալ. Խատիսյանը, վրացական պատվիրակության կազմում էին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Պ. Գեգեչկորին, Զինվորական մինիստր Լորդկիպանիձեն, Հաղորդակցության մինիստրի օգնական Մաչավարիանին, Երևանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մախարաձեն, Բաքվում Վրաստանի նախկին ներկայացուցիչ Թեզվիան: Ըստ էության քննարկվում էր Հայաստանի և Վրաստանի միջև դաշինքի կամ համաձայնության հարցը, որի հարցում Ալ. Խատիսյանը հստակ դիրքորոշում է ցուցաբերում, պնդելով, որ դա իր տեղին է և ժամանակին: Գեգեչկորին սակայն դրան ի պատասխան կնքվելիք համաձայնության ձևի մասին վճռական և որոշակի պատասխան չի տալիս, բավարարվելով մի քանի ընդհանուր ֆրազներով և

[1154] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 154, թ. 127-129:

դաշինքի անվիճարկելի ցանկալիության մասին և կարծես թե ոչ անտեղի, հեռատես պետական գործչին վայել հատուկ խելամտությամբ ու նրբանկատությամբ հարցը շեղում այլ հունով՝ խոսք բացելով Բաթումիի և այն մասին, որ իբր հայկական կառավարությունը, բանից դուրս է գալիս, ունի ինչ-որ պահանջներ նավահանգստի և Բաթումիի մարզի մի մասի նկատմամբ, ոտնձգություն կատարելով այդ մարզում Վրաստանի սուվերեն իրավունքների դեմ: Ալ. Խատիսյանը Եվգ. Գեգեչկորուն առարկում է, հայտնելով, որ հայկական կառավարության ցանկությունը Բաթումիի միջոցով ելք ձեռք բերել դեպի Սև ծով՝ չպետք է նորություն հանդիսանա Վրաստանի համար, քանի որ Հայաստանում Վրաստանի ներկայացուցիչ Մախարաձեին պաշտոնապես այդ մասին հայտնել են, որն այդ ժամանակ լիովին համակարծիք է եղել հայկական կողմից արտահայտված տեսակետի հետ: Իսկ ինչ վերաբերում է Վրաստանի սուվերեն իրավունքներին Բաթումիի մարզում, ապա Հայաստանի Հանրապետությունը ամենևին էլ չի պատրաստվում և չի ցանկանում ոտնձգություն կատարել դրա դեմ[1155]: Այնուհետև Ն. Ժորդանիայի, Լորդկիպանիձեի և Ալ. Խատիսյանի մասնակցությամբ քննարկման հերթական նյութ է դառնում Վրաստանով տրանզիտային ճանապարհով զենքի և ռազմամթերքի դեպի Հայաստան ազատ փոխադրման հարցը, որի կապակցությամբ Ալ. Խատիսյանը գալիս է ենթադրության, որ Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև գոյություն ունեցող տրանզիտային պայմանագիրը նախատեսում է զենքի անխոչընդոտ փոխադրում: Ի հակառակ դրա, Վրաստանի Ջինվորական մինիստր Լորդկիպանիձեն առարկություն է անում, պնդելով, որ միջազգային իրավունքի նորմերի համաձայն տրանզիտային պայմանագրերը ամեն դեպքում չեն նախատեսում ռազմական բեռների փոխադրություն, որոնց առումով ընդունված է կնքել հատուկ համաձայնություններ: Ալ. Խատիսյանը հակադրության չգնալով վրացիների հետ, պնդում է, որ այդ հարցի շուտափույթ վճռումը Հայաստանի համար շատ անհրաժեշտ է, քանի որ ռազմամթերքի մասին հարցը չափազանց սուր է դրված, որին ի պատասխան Ն. Ժորդանիան սկզբունքային համաձայնություն է հայտնում մոտ ժամանակում կնքելու տրանզիտային պայ-

[1155] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 516, թ. 69:

մանագիր Հայաստանի Հանրապետության հետ, հայտարարելով, որ մինչև այդ պայմանագրի ստորագրումը Հայաստանի կառավարությունը կարող է Վրաստանով անցկացնել ռազմամթերքի ցանկացած քանակություն[1156]:

ՀՀ Զինվորական նախարարին ուղղված 1920 թ. մայիսի 27-ի զեկուցագրում Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության զինվորական վարչության ղեկավար և ռազմական կցորդ, գեներալ Հ. Ա. Քիշմիշյանը կրկին հայտնում է, որ մայիսի 22-ին ինքը հրավիրվել է Վրաստանի զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Գ. Կվինիտաձեի կողմից, որը մի շարք առաջարկներ է արել: Ըստ Հ. Քիշմիշյանի, գեներալ Գ. Կվինիտաձեն կշտամբեց իրենց կողմից ձեռնարկվող գործողությունների դանդաղկոտության մեջ, որ իբր իրենք վաղուց են հարց հարուցել իրենց համատեղ գործողությունների ուղղորդման համար, սակայն իբր հայկական կողմից այն ոչ մի համակրանքի կամ լուրջ աջակցության չի արժանացել, ընդ որում այդ զրույցին ներկա գտնված Ն. Ժորդանիան, Եվգ. Գեգեչկորին, Լորդկիպանիձեն, Կարպիվաձեն և ուրիշներ ոչ մի արտահայտություն իրենց թույլ չեն տվել, բոլորովին չխառնվելով առաջին հայացքից այդ տպավորիչ և կարևոր զրույցին: Այդ ամենի հետ միասին, գեներալ Գ. Կվինիտաձեն ըստ Էության ոչ հիմնավոր ենթադրության է եկել, որ իրենց զորքերը, զարգացնելով հաջողությունը, ետ կշպրտեն իրենց առջև կանգնած ադրբեջանական, ասել է թե՝ արդեն խորհրդային զորքերը, իսկ հայկական զորքերը դուրս գալով Աղստաֆա-Ղազախ-Դիլիջան խճուղու վրա, կկտրեն Դիլիջանը գրաված բոլշևիկյան զորաջոկատի ճանապարհը, և այդ դեպքում վրացական ու հայկական զորքերի համատեղ հաջող գործողություններով կկտրեն ու կտարանջատեն Սովետական Ադրբեջանի աղստաֆյան զորախումբը դիլիջանյան զորաջոկատից: Հ. Քիշմիշյանը հայտնում էր, որ վրացական այդ առաջարկները անհապաղ հայտնվել են Տ. Բեկզադյանին՝ ՀՀ Զինվորական նախարարից խնդրելով շուտափույթ և անհապաղ կարգադրություններ անել[1157]:

Իսկ գեներալ Հ. Քիշմիշյանի 1920 թ. հունիսի 1-ի կամ 2-ի հեռագրից՝ ուղղված ՀՀ Զինվորական նախարարին, ակնհայտ է դառնում ևս

[1156] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 516, թ. 70:
[1157] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 221, թ. 64-65:

մեկ մանրամասն հայ-վրացական հնարավոր ռազմաքաղաքական դաշինք ձևավորելու շուրջ ընթացած քայլերի մասին: Գեներալ Հ. Քիշմիշյանը հայտնում էր, որ շտաբս-կապիտան Յաբլոկովը հրավիրվել է Վրաստանի զինված ուժերի գլխավոր հրամանատար Գ. Կվինիտաձեի մոտ, որին տեղեկատվություն է տվել ՀՀ Դիլիջանի և Քարվանսարայի շրջաններում ընթացող ռազմաքաղաքական իրադարձությունների մասին: Քիշմիշյանը հայտնում էր, որ իրենք Կվինիտաձեին տեղեկացրել են այն մասին, որ հայկական զորքերի հարձակումը և Ադրբեջանի սահմանի անցնելը Ղազախի շրջանում չի ենթադրվում և չի նախատեսվում, որի մասին վրաց գեներալը հետաքրքրություն է դրսևորել: Սակայն վերջում գեներալ Հ. Քիշմիշյանը մի կարևոր հանգամանք է պարզում այդ հանդիպման ժամանակ տեղի ունեցած խոսակցությունից: Պարզվում է, որ գեներալ Գ. Կվինիտաձեն հայ պատվիրակներին հասկացնել է տվել, որ Ղազախի շրջանին հարակից շրջանում սպասվող առաջիկա ռազմական բախման ժամանակ իրենք՝ վրացիները, մինչև Ադրբեջանի հետ խաղաղ բանակցությունների ավարտը կարող են միայն դիտորդի դեր խաղալ[1158]:

Հայ-վրացական ռազմաքաղաքական դաշինքի խնդրում վրաց զինվորական և քաղաքական շրջաններում միակարծիքություն չկար, սակայն որոշ հարցերի վրացիները կարծես թե ընդառաջում էին՝ մասնավորապես զենքի ու զինամթերքի առաքման ու ձեռքբերման խնդրում, որի մասին վկայում են Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Բեկզադյանի և Օհանջանյանի միջև 1920 թ. հունիսի 15-16-ին փոխանակված հեռագրերը, որոնցում Օհանջանյանի կողմից խնդիր էր դրվում վրացիներին զիջել բամբակի և աղի խնդրում, բայց ոչ զենքի ու ռազմամթերքի, աշխատելով սեփական հնարավորություններով իրագործել զենքի ներկրումը, ծայրահեղ դեպքում գնալ զենքի մի մասի զիջմանը վրացիներին՝ որոշակի համաձայնության հիման վրա[1159]: Մի մասը գտնում էր, որ Վրաստանը չպետք է վտանգի իր գլոբալ շահերը, ոմանք էլ ելնելով այլ շեշտադրումներից, մասնավորապես առաջարկելով օգնել դրկից հայերին և Կարս-Բաթումի-Ռիզիե երկաթուղագծի կառուցման ու դրան հարող տարածքները ՀՀ սեփականություն ճանաչելու

[1158] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ –275, ց. 5, գ. 154, թ. 143:
[1159] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ -275, ց. 5, գ. 211, թ. 165, 167:

խնդրում, Բաթումիի նավահանգստից Հայաստանի օգտվելու հարցի շուրջ հայկական առաջարկի վերաբերյալ համաձայնության գալ, ինչպես այդ մասին 1920 թ. օգոստոսի 3-ին հայկական կողմի հետ ունեցած ոչ պաշտոնական հանդիպման ժամանակ հարցադրում է անում Լոնդոնում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Դ. Գամբաշիձեն, որը միաժամանակ ելնելով սլավոն և տաճիկ ազգերի մերձեցումից, անհրաժեշտ էր համարում. «այդ վտանգի առաջն առնելու համար մեր երկու երկրները պետք է զինվորական դաշինք կնքեն և դրանով հող նախապատրաստեն ֆեդերացիա կամ կոնֆեդերացիա ստեղծելու համար»[1160]: Այդ օրերին կարծես թե հայ-վրացական ռազմաքաղաքական համագործակցության օգտին է բազմիցս արտահայտվել Վրաստանի Հանրապետության զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ, գեներալ Ջախարիաձեն, որի հետ կապված տեղեկատվություն է տարածվում, որ այդ նպատակով Հայաստան են գնալու Վրաստանի Ռազմական մինիստր Լորդկիպանիձեն և Ջախարիաձեն, որն իբր թե անկանխատեսելի հանգամանքների պատճառով հետաձգվում է: Այդուհանդերձ, ընդհանուր սպառնացող վտանգի մասին ահագնացող լուրերը դրդում էին և՛ հայկական, և՛ վրացական կողմին անհանգստություն ցուցաբերել ռազմաքաղաքական իրավիճակի բարդացմամբ և ձեռնարկել անհրաժեշտ քայլեր ընդհանուր պաշտպանական միության ստեղծման համար: Սակայն այդ ուղղությամբ գործընթացները շատ հակասություններ էին իրենց մեջ պարունակում և պարբերաբար խճճում կամ ձգձգում էին տարբեր հարցերի լուծումը: Այդպիսի առիթներ վրացական կառավարության կողմից բազմիցս ստեղծվում են՝ պահպանելով լարվածությունը հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում, և դրանով իսկ անիրական դարձնում հայ-վրացական պաշտպանական դաշինքի իրականություն դառնալը: Այսպես, արդեն այն բանից հետո, երբ դեռ ՀՀ Զինվորական նախարարին ուղարկված գեներալ Հ. Քիշմիշյանի 1919 թ. նոյեմբերի 20-ի զեկուցագրի տեղեկությունների համաձայն, Ռուսաստանի Հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատար Ա. Դենիկինի հրամանագրի համաձայն արտոնվում է Կամավորական բանակում ծառայության մեջ գտնվող մի քանի հազար հայ զինվորա-

[1160] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 607, թ. 10:

կաններին լքել զորքի շարքերը և մեկնել ծառայության Հայաստան, որը պետք է իրականացվեր Վրաստան-Հայաստան տրանզիտային ուղիով, վրացական կառավարության կողմից արհեստական խոչընդոտներ են հարուցվում այդ խնդրի լուծման ճանապարհին, որի մասին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանը օպերատիվ կերպով տեղեկացնում է Հայաստանի կառավարությանը: Եվ դեռ ավելին, ՀՀ Արտաքին Գործերի նախարարության գլխավոր քարտուղար Հակոբ Տեր-Հակոբյանի 1920 թ. հունիսի 21-ի գրությունից (N 3766)՝ ուղղված Ռուսաստանի Հարավի զինված ուժերի Գերագույն հրամանատարին առընթեր զինվորական ներկայացուցիչ Մ. Զինկևիչին, հայտնվում էր Երևանում Վրաստանի դիվանագիտական հավատարմատարին Վրաստանի կառավարության կողմից ուղարկված հեռագրի բովանդակության մասին: Դրանից պարզվում է, որ Վրաստանի Պաշտպանության խորհուրդը հունիսի 19-ին որոշում է կայացրել՝ կասեցնել արդեն արված կարգադրության կատարումը, ըստ որի թույլատրվում էր Կամավորական բանակի հայ զինվորականներին տրանզիտով անցնել Վրաստանի տարածքով, ավելացնելով, որ այդ հարցի հանգուցալուծման ժամանակի և հայ զինվորականներին անցագրի թույլտվության կարգի մասին լրացուցիչ կհաղորդվի, կարգադրելով այդ մասին հայտնել ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին, Ղարաքիլիսայի իրենց հյուպատոսին[1161]: Իսկ փախստական հայերի օգնության անգլիական կոմիտեի նախագահ, բրիտանական պառլամենտի անդամ Ա. Վիլյամսին ուղարկված 1920 թ. հուլիսի 23-ի գրությունում ՀՀ Արտաքին Գործերի Ինֆորմացիոն բյուրոյի դիրեկտոր Մ. Արզումանյանը տեղեկացնում էր այն մասին, որ Վրաստանը արգելքներ է հարուցում դեպի Հայաստան զենքի ու զինամթերքի առաքման ճանապարհին, համաձայնագրի պարտադրմամբ ստիպելով տրանզիտային ուղիով Վրաստանից Հայաստան առաքվող այդ ռազմամթերքի ու զենքի առնվազն 27 տոկոսը զիջել Վրաստանին[1162]:

Իսկ Բեկզադյանին ուղղված 1920 թ. օգոստոսի 18-ի հեռագրում ի պատասխան վրացական կողմի հարցադրման Հ. Օհանջանյանը ՀՀ կառավարության սկզբունքային համաձայնությունն էր հայտնել կնքել

[1161] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 412, թ. 25:
[1162] Տե՛ս նույն տեղում, գ. 498, թ. 768:

ընդհանուր համաձայնություն, որի ձևի, տեղի և ժամանակի լիազորվում էր ոչ թե բանակցություններ վարել, այլ իրական լուծում տալ՝ պայմանով՝ կառավարությունից ստանալ վերջնական հավանություն[1163]: Սակայն Վրաստանի կառավարությունը երկար ժամանակ ՀՀ կառավարության առաջարկը հայ-վրացական ընդհանուր դաշինքի կնքման մասին, այդ առումով ուղարկված բոլոր դիմումագրերի նման անպատասխան է թողնում, որից պարզ է դառնում, որ Վրաստանի կառավարությունը որոշակի առումով մանևրում էր իրադրության մեջ, ժամանակ շահում և փաստացի խուսափում պաշտոնական մակարդակով հարցադրումներից՝ բավարարվելով ոչ պաշտոնական հանգուցալուծումներով, որոնք նրան չէին պարտավորեցնում: Դա հիշեցնում էր խնդրի խաղարկում, առավել ևս երբ վրացական կողմին առավելապես հետաքրքրում էր այդ դաշինքի հակաբոլշևիկյան ուղղվածության պահը, թեկուզև իրենց 1920 թ. մայիսի 7–ի ռուս-վրացական համաձայնագիրը բավարարում էր (քանի որ բոլշևիկյան Ռուսաստանն իր խաղի կանոներն ուներ, և ինչքան էլ Թուրքիայի հետ ուներ պայմանավորվածություն, Վրաստանի հետ կնքած այդ պայմանագրով նա ընդամենը փորձում էր լուծել իր տարածաշրջանային ռազմավարական խնդիրները, աշխատելով ամրապնդվել այնտեղ, թեկուզ դա էլ ժամանակավոր լուծում էր և ընդամենը մասնակիորեն, այդ պահի տեսանկյունից էր բխում Վրաստանի շահերից, բայց ոչ գլոբալ աշխարհաքաղաքականության հետամտած նպատակադրումներից) էր վրացիներին, և դժվար թե նրանք իրականում ցուցադրական հակաբոլշևիզմից անցում կատարեին իրական ռազմաքաղաքական գործողությունների, և հենց այդ դիրքերի վրա էր կանգնած Դ. Գամբաշիձեն: Առավել ևս, որ վրացական կողմը պարզություն չէր մտցնում կնքվելիք դաշինքի ուղղվածության հարցերում, և իշխում էր համատարած անորոշություն, որից Տ. Բեկզադյանը գլուխ չէր հանում, ձգտելով կատարել ՀՀ կառավարության հանձնարարականը՝ վրացական կողմից պահանջել գրավոր հավաստիացումներ, սակայն շուտով պարզաբանում է ստացվում, որ Գեորգաձեն հայ-վրացական ռազմաքաղաքական դաշինք կնքելու լիազորություն չի ունեցել, որի մասին հայտնել է Կ. Սաբախտարաշվիլին, որ դեռ պարզ չէ, թե ում

[1163] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 211, թ. 119:

դեմ է առաջարկվում դաշինք՝ տաճիկների, թե՞ ռուսների[1164], ինչն էլ ավելի է խճճում իրադրությունը, հարցը կրկին փակուղային վիճակում է հայտնվում, և շուտով Գեորգաձեն մեկուսացվում է հարցի լուծման ակտիվ մասնակցությունից, չնայած այդ պահին դեռևս հայ-վրացական դաշինքի հարցը վերջնականապես դեռ օրակարգից չի հանվում, այն շարունակում է հոլովվել տարբեր ռազմաքաղաքական մոտեցումների ժամանակ: Երբեմն էլ հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացումների որոշ նրբերանգներ այն տպավորությունն էին թողնում, և դա անհիմն չէր, որ վրացիներն ընդամենը դաշինքի խնդիրը պարզապես շահարկում էին՝ դրանով ճնշում գործադրելով առանց այն էլ բարդ ռազմաքաղաքական կարգավիճակում հայտնված Հայաստանի Հանրապետության վրա: Հենց այդ տպավորությունն է թողնում Վրաստանի կառավարության նախագահի պաշտոնակատար և Ռազմական մինիստր Լորդկիպանիձեի և Տ. Բեկզադյանի հանդիպման ժամանակ հնչած վրաց կառավարության տեսակետն այն մասին, որ «սպառնացող վտանգը կանխելու նպատակով անհրաժեշտ է հայ-վրացական Չեզոք գոտին բաժանել Հայաստանի և Վրաստանի միջև», ինչը սակայն ՀՀ կառավարության կողմից մերժվում է, սակայն հետագա քայլերում հստակություն չի մտնում և ակնկալվող ռազմաքաղաքական արդյունքներն էլ չեն ստացվում:

Այս ամենով հանդերձ, հարկ է նշել, որ Վրաստանում ոչ բոլոր հասարակական-քաղաքական ուժերն էին, որ կողմակից էին հայ-վրացական պաշտպանական դաշինքի կնքմանը: Մասնավորապես վրացական «Նացիոնալիստ» թերթը 1920 թ. հոկտեմբերի կեսերի իր համարներում վրաց ժողովրդի համար անընդունելի էր համարում զինվորական դաշինքի կնքումը Հայաստանի հետ, գտնելով, որ այն կվատթարացնի Բաթումիի շրջանի առանց այն էլ բարդ կացությունը և հնարավորություն կտա Մուստաֆա Քեմալ փաշային իր կողմը գրավել աջարացիներին և դրդել ապստամբել Վրաստանի դեմ: Ավելին, այդ թերթը եզրահանգել էր, որ Հայաստանի հետ Վրաստանի ռազմական-պաշտպանական դաշինքը չի կարող ընդունելի լինել նույնիսկ այն պայմանով, եթե Հայաստանը հովանավոր գտնելու երկար որոնումներից հետո իր ման-

[1164] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 2, գ. 81, թ. 4:

դատը սիրահոժար կերպով ներկայացնի կամ հանձնի Վրաստանին[1165]: Այսինքն, ակնհայտ էր դառնում, որ վրաց կառավարությունը հենց վերը նշված տեսակետի վրա էր կանգնած, մտադրություն չունենալով ռազմական դաշինք կնքել հայերի հետ, վախենալով դրանով իսկ գլխավորապես թուրքերին գրգռել Վրաստանի դեմ, բոլորովին չցանկանալով թշնամական հարաբերությունների մեջ ներքաշվել վերջիններիս հետ, և Արդահանի հետ կապված Վրաստանի ռազմավարությունը դրա ապացույցներից էր: Վրաստանին ամենևին էլ պետք չէր և դա որոշակի առումով հասկանալի է՝ Վրաստանի շահերը վտանգել հանուն Հայաստանի, ինչն էլ դրդեց, որ գնան թուրքերի հետ քաղաքական համագործակցության եզրերի և հնարավորինս ապահովագրվեն տարբեր վտանգներից: Այդ մասին է վկայում Հայաստանի վրա հարձակված թուրքական բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշայի հայտարարագիրը Ալ. Խատիսյանին Ալեքսանդրապոլի բանակցությունների ժամանակ, որը պնդել է, որ պատերազմական գործողություններից առաջ «Անգորայի ներկայացուցիչները ի դեմս Յուսուֆ Քեմալ բեյի և Ալի Ֆուատ փաշայի 1920 թ. ամռանը եղան Թիֆլիս և վրաց կառավարության հետ դաշն կապեցին, որի զորությամբ Վրաստանը հայ-թուրքական պատերազմի պարագային պետք է չեզոքություն պահեր և ատոր փոխարեն պետք է ստանար Բորչալուի և Ախալքալաքի գավառները և Արդահանի շրջանը»[1166]:

Վրաստանը, իհարկե, առանձնապես չէր ձգտում բախվել Հայաստանի հետ, ոչ էլ Հայաստանը: 1920 թ. հոկտեմբերին Ռ. Տեր-Մինասյանին հասցեագրված հեռագրում Տ. Բեկզադյանը պնդում էր, որ վրացիները կողմ չեն դաշինքին, բայց և դեմ չեն իրենց օգնել նյութապես ծածուկ, որպեսզի թուրքերը չիմանան, չնայած միաժամանակ արգելքներ էին հարուցել Հայաստանի համար 500 տոննա կերոսին և 200 տոննա մազութ գնելու խնդրի առաջ[1167], և այն էլ՝ թուրք-հայկական պատերազմի ծայրահեղ պահին, որը Վրաստանի՝ Թուրքիայի առումով ունեցած

[1165] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 377, ց. 1, գ. 40, թ. 1-2: Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 86, թ. 39:

[1166] Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 161:

[1167] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 79, թ. 150: Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 607, թ. 178:

ռազմաքաղաքական առչությունների դիտակետից ուղղակիորեն տանում է և հանգեցնում բացասական քաղաքական հետևությունների:

ՀՅ Դաշնակցությունը կուսակցության ներքին և արտաքին քաղաքականությանը վերաբերող 1920 թ. հոկտեմբերի 15-ի տեղեկագրից պարզ է դառնում Անդրկովկասում բրիտանական բարձրագույն կոմիսար գնդապետ Ք. Ստոքսի ՀՀ նախարարապետի հետ ունեցած հանդիպման ժամանակ ցուցաբերած հետաքրքրվածության մասին Հայաստանի և Վրաստանի հարաբերություններով: ՀՀ նախարարապետը պարզաբանումներ տալով Ք. Ստոքսին, հայտնել էր, որ իրենք միշտ էլ լավ են վերաբերվել Վրաստանի նկատմամբ, սակայն վրացիները տրամադրվածություն չեն ցուցաբերում ավելի սերտ կապեր հաստատել հայերի հետ, վախենալով, որ կապվելով հայերի հետ, դրանով իսկ թշնամություն են ձեռք բերում տաճիկների հետ, իսկ վերջիններիս հետ էլ չեն ցանկանում թշնամանալ, կարծիք հայտնելով, որ կասկած կա, որ վրացիները համաձայնության են եկել տաճիկների հետ, գտնելով, որ այլապես վրացիները հնարավորություն չէին տա քեմալականներին գրավելու Արդահանը: Դրան հակադարձելով, Ք. Ստոքսը, ստեղծված իրադրությունից միակ հնարավոր ելքը համարել էր հայ-վրացա-ադրբեջանական համադաշնային անդրկովկասյան պետության ստեղծումը, որն էլ իբր հնարավորություն կտար վերջնականապես հանգուցալուծել ինչպես հայ-ադրբեջանական, այնպես էլ հայ-վրացական սահմանային-տարածքային վեճերը՝ առանց զենքի ուժի դիմելու, միաժամանակ արտահայտելով իր բացասական վերաբերմունքը բոլշևիկյան Ռուսաստանի նկատմամբ[1168]: Բրիտանական կոմիսար Ք. Ստոքսի խոր հակադրվածությունը այդ ժամանակ ՀՀ կառավարության հետ բանակցող Բ. Լեգրանի[1169] հետ, որն առաջարկում էր թույլատրել Կարմիր բանակի

[1168] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 377, ց. 1, գ. 40, թ. 3:

[1169] Լեգրան Բորիս Վասիլիի [1884 -1936 թթ.] – Առաջին աշխարհամարտի մասնակից, շտաբս-կապիտան: ՌՍԴ(բ)Կ անդամ 1901 թ.: 1917 թ. հոկտեմբերյան բոլշևիկյան հեղաշրջման ակտիվ մասնակից: Խորհրդային կուսակցական-քաղաքական հայտնի գործիչ, 1918 թ. ՌԽՖՍՀ ռազմա-ծովային գործերի ժողկոմի տեղակալ, 1920 թ. ՌԽՖՍՀ լիազոր-ներկայացուցիչը Հայաստանի 1-ին Հանրապետությունում: Ակտիվ մասնակցություն է ունեցել 1920 թ. օգոստոսի 10-ի հայտնի պայմանագրի կնքմանը Հայաստանի Հանրապետության հետ, որի համաձայն Ա. Ջամալյանը և Բ. Լեգրանը համաձայնագիր են ստորագրում վիճելի տարածքների՝ Զանգեզուրի, Ղարաբաղի և Նախիջևանի վերաբերյալ: Այնու-

զորամասերի մուտքը Հայաստան՝ կանխարգելելու քեմալականների առաջխաղացումը, որի նկատմամբ Ք. Ստոքսը կտրական կերպով մերժողական վերաբերմունք որդեգրեց, ակնկալելով, որ Հայաստանի կառավարության կողմից ներկայացվող առաջարկները հաստատապես կմերժվեն Բ. Լեգրանի կողմից, քանզի դրանք անիրագործելի են և իբր թե բոլշևիկները ոչ մի լծակ չունեն ազդելու քեմալականների դեմ, միաժամանակ տագնապելով, որ հնարավոր է՝ բոլշևիկները համաձայնվեն ՀՀ կառավարության կողմից հոկտեմբերին ընթացող բանակցությունների ժամանակ ներկայացվող առաջարկներին, ասելով, թե դրա հետ մեկտեղ Անգլիայի անունից խոստանում են մեկ միլիոն փութ նավթ երկարաժամկետ վարկով, զինամթերք[1170], ինչպես նաև պատրաստակամություն՝ համոզելու Վրաստանին ռազմաքաղաքական զինակցության գնալ Հայաստանի Հանրապետության հետ, ինչն արդյունքում ապակողմնորոշիչ դեր խաղաց ՀՀ կառավարության վարած ռազմավարական քաղաքականությունում, ի չիք դարձրեց հայ-բոլշևիկյան ռազմաքաղաքական համաձայնության հնարավոր բարենպաստ արդյունքները և Հայաստանի Հանրապետությանը մտցրեց աշխարհաքաղաքական փակուղի: Բրիտանական կոմիսար Ք. Ստոքսի գեղեցիկ խոսքերը իրենց մոգական դերը որոշակի իմաստով խաղացին, մյուս կողմից էլ հայ քաղաքական շրջանների խաբուսիկ հույսերը հայ-վրացական պաշտպանական համադաշնության հնարավոր լինելու հանգամանքի մասին, չնայած 1918-1920 թթ. այդպես էլ չհաջողվեց վրացիների հետ որևիցե լուրջ համաձայնության գալու ռազմաքաղաքական դաշինքի կնքման խնդրում, ինչը պարզապես հակասում էր մենշևիկյան Վրաստանի շահերին: Այդուհանդերձ, որոշակի քաղաքական հանգամանքներ իրենց դերը խաղացին և Թիֆլիս գործուղվեց ՀՀ Ջինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը, որը Վրաստանի մայրաքաղաք ժամանեց հոկտեմբե-

---

հետև Բ. Լեգրանը եղել է ՌԽՖՍՀ լիազոր-ներկայացուցիչը Հայկական ԽՍՀ-ում: 1921 թ. նա միաժամանակ եղել է ՌԽՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Վրաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետություններում, 1922 թ. ՌԽՖՍՀ Արտգործժողկոմատի ներկայացուցիչը Թուրքեստանի ԽՍՀ-ում, 1926-1927 թվականներին՝ գլխավոր հյուպատոս Խարբինում, 1930-1934 թթ. հանդիսացել է Պետական Էրմիտաժի դիրեկտորը, իսկ նրա տեղակալը եղել է Հովսեփ Օրբելին, որը 1935 թ. հաջորդել է Բորիս Լեգրանին:

[1170] Տե՛ս Շաթրեան Մ., Դաշնակի նամակը դաշնակին// «Նոր աշխարհ», 1922, թիւ 1, էջ 155-159:

րի 17-ին, և մենշևիկյան Վրաստանի հետ բանակցություններ վարեց մինչև հոկտեմբերի 22-ը:

Փորձելով իրականություն դարձնել հայ-վրացական պաշտպանական դաշինքը, հայկական կողմը փորձում էր վստահել հակառակ կողմին, չնայած կասկածները շատ էին և ամենևին էլ ոչ անտեղի, և այս առումով ևս մեկ անգամ, Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Տ. Բեկզադյանը 1920 թ. հոկտեմբերի 19-ին տեսակցում է Ն. Ռամիշվիլու հետ, որն այդ հանդիպման ժամանակ խոստանում է աջակցություն ցույց տալ զինակոչի և ապրանքների փոխադրության խնդրում, իսկ ավելի սերտ համագործակցության մասին խոստանում պատասխանել հոկտեմբերի 22-ին, որը սակայն խոսքից այն կողմ չի անցնում. Ի դեպ, հետաքրքիր է, որ այդ մասին հենց հոկտեմբերի 22-ին Տ. Բեկզադյանի հետ տեսակցման ժամանակ բացեիբաց հասկացրել էր Հայաստանում բրիտանական ներկայացուցիչ Ք. Ստոքսը, որ վրացիները հայերի հետ կգործակցեն միայն այն դեպքում, եթե իրերի դասավորությամբ ստիպված լինեն[1171]:

Հայ-վրացական պաշտպանական համաձայնագրի շուրջ բանակցությունների մասին է փաստում նաև Ալ. Խատիսյանը, ասելով, որ դեռ 1920 թ. հոկտեմբերի 18-ին Թիֆլիս է ուղարկվել Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը, որպեսզի Վրաստանի կառավարությանը համոզի համատեղ կռվել ընդդեմ ընդհանուր սպառնացող վտանգի՝ թուրքական և բոլշևիկյան վտանգի: Եվ այսպես, հոկտեմբերի 17–ից մինչև 22-ը կայացած հայ-վրացական այդ քաղաքական հանդիպումների ժամանակ կարևոր ռազմաքաղաքական արդյունքներ ձեռք չբերվեցին, դրանք ավարտվեցին ձեռնունայն, դրան ամենևին էլ չօգնեց Ք. Ստոքսի միջամտությունը, դա գործնականում քաղաքական խաբուսիկ հաշվարկ էր, որը մտնում էր բրիտանական մանևրումների տպավորություն թողած դիրքորոշման մեջ: Հոկտեմբերի 29-ին Վրաստանի Հանրապետության ռազմական և քաղաքական առաջնորդները բացեիբաց հայտնեցին, որ հարցը քննարկելու համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության կառավարության գրավոր դիմումագիրը: Վրացական կառավարության հետ Ռ. Տեր-Մինասյանի խորհրդակցությանը մաս-

[1171] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 440, թ. 48: Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր IV, էջ 260-263:

նակցել են վրաց կառավարության անդամներ Ն. Ռամիշվիլին, Կ. Սաբախտարիշվիլին, ինչպես նաև բրիտանական բարձրագույն կոմիսար Ք. Ստոքսը: Սակայն այդ բանակցություններն ավարտվում են անարդյունք, և չնայած ՀՀ կառավարության կողմից առաջարկված զիջումներին, որոնց մասին վկայում է՝ նաև Կ. Սասունին, վրացիք նախընտրեցին չեզոքություն, գործնականում համոզված լինելով, որ իրենց թուրքերի կողմից վտանգ չի սպառնում, որ իրենք թուրքական հարձակում Վրաստանի դեմ չեն սպասում, մանավանդ թուրքերի կողմից շլացնող խոստումներ էին տրվում, իսկ բոլշևիկներին վրացիք համարում էին վստահելի և նրանց հետ կնքած դաշնագիրը անխախտելի[1172], թեկուզ և ներքուստ դրանում համոզված չէին: Վրաստանի կառավարությունը մերժողական դիրքորոշում է ունենում, չցանկանալով Հայաստանի հետ միասին անդունդը գլորվել: Եվ ինչպես փաստում է Կ. Սասունին, այդ ամենի փոխարեն, հայերի սիրտը ինչ-որ տեղ շահելու համար դաշնագիր չկնքելու փոխարեն իբր թե Վրաստանն «այնքան բարեացակամ գտնուեցաւ, որ իր պետութեան սահմաններու մէջ, թույլատրեց հայկական զօրահաւաք մը, տրամադրելով հայկական մարմիններուն գործադրական բոլոր միջոցները. Հաղորդակցութեան դիւրութիւններ ընձեռեց զինուորական առաքումներու համար: Բայց որքան հայկական ուժերը կ՛անզօրանային անմիջական հարուած մը իջեցնելու թուրքերուն, այնքան Վրաստանը զգոյշ ընթացքի մը կը հետեւէր, աւելացնելով իր վերապահումները»[1173]:

Այս առումով հետաքրքիր են նաև Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական, երբեմն էլ դիվանագիտական հավատարմատարներին փոխարինած իշխան Միքայել Թումանյանի դիտարկումները հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացման հնարավոր միտումների, դրանց հեռանկարների և Հայաստանի Հանրապետության կողմից ակնկալվող հայ-վրացական ռազմաքաղաքական դաշինքի կնքման հնարավորության իրողության մասին ընդդեմ առաջին հերթին Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի ագրեսիվ նկրտումների հայ ժողովրդի դեմ: Այդ մասին նա 1920 թ.

[1172] Տե՛ս Խատիսեան Ալ., Նշվ. աշխ., էջ 266:

[1173] Տե՛ս Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը, «Հայրենիք» ամսագիր (Բոստոն), 1926, Ապրիլ, N 6 (42), էջ 89:

հոկտեմբերի 25-ի դրությամբ նշում է հետևյալի մասին. «Հոկտեմբերի 25-ին Տ. Բեկզադյանը ընդունեց Գերասիմ Մախարաձեին որպես Վրաստանի Հանրապետության լիազոր-ներկայացուցիչ Մոսկվա մեկնելու կապակցությամբ: Նրանք մտքեր փոխանակեցին իրենց պետությունների պաշտպանության անհրաժեշտության մասին բոլշևիկյան վտանգից: Խոսվեց նաև իրենց երկրների համար աղետալի հետևանքներ ունեցող Սովետական Ռուսաստանի դավադրությունների մասին, նկատի ունենալով այն էական հանգամանքը, որ այդ հարցում Ռուսաստանը և Մուստաֆա Քեմալը միավորվել են, և որ վերջինս իր արբանյակների՝ էնվերների և խալիլների հետ միասին երազում է փոխհատուցել Թուրքիայի կորուստները Վրաստանի և Հայաստանի անկախության հաշվին»[1174]:

1920 թ. հոկտեմբերի 26-ի զեկուցագրում Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Բեկզադյանը հաղորդում է հոկտեմբերի 25-ին ցերեկը և երեկոյան վրաց պատվիրակության հետ ունեցած երկու նիստ-հանդիպումների մասին, որին վրացական կողմից մասնակցում էին Ն. Ռամիշվիին, Կ. Սաբախտարաշվիլին և հայկական կողմից Ստ. Մամիկոնյանը: Խոսք է գնում սահմանավեճերի, ինչպես նաև վրացիների կողմից սպասվելիք գործնական աջակցության մասին, որից ըստ Բեկզադյանի, վերջիններս շարունակ խուսափում էին: Մասնավորապես, ըստ Բեկզադյանի, պարզվեց Ռամիշվիլու կողմից արտահայտված տեսակետի մի շարք մանրամասներ: Ըստ դրանց, Ռամիշվիլին հայտնել էր իր կարծիքը՝ ընդգծելով ընդհանուր սպառնացող վտանգի մասին, դրա հետ մեկտեղ գտնելով նաև, որ պետք է աջակցություն ցուցաբերվի Հայաստանին, որպեսզի նա կարողանա դիմադրել իր թշնամիներին, ասելով, որ իրենք անում են այն, ինչ-որ կարող են այդ պահին՝ ցույց տալով թե՛ բարոյական, թե՛ նյութական աջակցություն: Սակայն միաժամանակ Ռամիշվիլին ընդգծել էր, որ իրենց բարդությունը իրենց բողոքն է՝ ուղղված Գ. Չիչերինին[1175], և այն միտինգը, որտեղ նույնպես

[1174] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 212, թ. 115-116: Տե՛ս նաև Туманян М., Дипломатическая истиория Республики Армения. 1918-1920 гг., стр. 31:

[1175] Չիչերին Գեորգի Վասիլիի [12.11.1872 թ. - 7.07.1936 թ.] – Հայտնի խորհրդային պետական գործիչ և դիվանագետ, 1918-1930 թթ. ՌԽՖՍՀ, իսկ այնուհետև ԽՍՀՄ Արտաքին Գործերի ժողկոմ, 1918 թ. ստորագրել է Բրեստի պայմանագիրը, խորհրդա-թուրքական և

բուռն համակրանքով են արտահայտվել վրաց հայտնի հասարակական գործիչներ Լոմտատիձեն և Ջուղելին, որոնց ճառերի համար Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրությունը ստիպված է եղել ներողություն խնդրել Սովետական ներկայացուցչությունից: Ռամիշվիլին այնուհետև Բեկզադյանին տեղեկացնում է, որ իրենք հնարավորություն կտան զինակոչի ենթարկել իրենց հպատակ հայերին, պատրաստակամություն արտահայտելով տալ նավթ, արտահանել և ռազմական պիտույքներ՝ դրանով իսկ խախտելով նույնիսկ իրենց չեզոքությունը ի վնաս իրենց շահերի հօգուտ հայերի՝ վտանգելով հարաբերությունները Ռուսաստանի հետ: Ռամիշվիլին այնուհետև ավելի կատեգորիկ է արտահայտվել, ասելով, որ պետք չէ իրենցից ավելին պահանջել, որ Ռուսաստանի դեմ իրենք այդ պահին չեն կարող կռվել, որովհետև պայմանագիր ունեն, որը չեն ուզում խախտել, իսկ Քեմալի հետ իրենք չեն կարող կռիվ սկսել, որովհետև ունեն թուրք ազգաբնակչություն Աջարիայում, Ախալցխայում, որոնց գլգռելու ոչ մի հարկ չունեն գոնե այդ պահին: Տ. Բեկզադյանը այդ հանդիպումից գալիս է այն եզրահանգման, որ վրացիները իրենց հետ միասին չեն կռվելու և իրենց չեն էլ օգնելու, ավելացնելով դրան նաև այն պատճառաբանությունը, որ Ադրբեջանից պիտի նավթ ստանան և պետք է իրենց եգիպտացորենը հավաքեն Արևմտյան Վրաստանում[1176]: Փայլուն վրացական մաններում հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացումներում:

Մի քանի ամսվա դիվանագիտական-բանակցային քաշքշուկներից հետո, 1920 թ. հոկտեմբերի 26-ին Վրաստանի կառավարությունը գործնականում իր համար անընդունելի է համարում և մերժում ՀՀ կառավարության ընդհանուր թշնամու դեմ համատեղ հանդես գալու առաջարկը, չցանկանալով վտանգել իր գոյությունը թուրք-բոլշևիկյան վտանգի դեմ. «Երեկ ցերեկը և երեկոյան երկու նիստ ունեցանք վրաց պատվիրակության հետ, որի մեջ մտնում էին Ռամիշվիլին, Սաբախտարաշվիլին և Մդիվանին: Նիստերը նրանք սկսում էին սահմանավեճերից, իսկ մենք՝ նրանց մեզ անելիք գործնական աջակցությունից: Նրանք ստիպված էին անցնել մեր հարցին և արտահայտվեցին պարզ.

խորհրդա-հայկական բանակցությունների ժամանակ գլխավորել է խորհրդային պատվիրակությունը:

[1176] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 602, թ. 42-43: Ֆ. Պ – 200, ց. 2, գ. 83, թ. 7:

Ռամիշվիլին ասաց, որ «այս վտանգը համարում ենք ընդհանուր և գտնում, որ պետք է աջակցեն Հայաստանին, որ նա կարողանա դիմադրել իր թշնամիներին»[1177]: Ակնհայտ էր այստեղ, որ Վրաստանն իր ռազմաքաղաքական խաղերում Հայաստանի հետ անցել էր այլ ռազմավարության՝ օգտագործելով նոր խաղաքարտեր, որի պայմաններում ընդհանուր վտանգ և ընդհանուր թշնամի այլևս չկար, Վրաստանն իրեն ապահովագրել էր չեզոքությունը՝ Թուրքիայի հետ քաղաքական եզրեր ստեղծելով, քանզի արդեն հոկտեմբերի վերջերին ակնհայտ էր թուրք-հայկական պատերազմի ելքը, և նաև հասկանալի, որ վրացական դիրքորոշումը արմատական փոփոխությունների էր ենթարկվել՝ այն մի բան էր թուրք-հայկական պատերազմին նախորդող վիճակում և մի այլ՝ թուրք-հայկական պատերազմի հոկտեմբեր և դրան հաջորդող ամիսներին: Եվ ստեղծված իրավիճակից ելքի որոնումներում և իր դիրքորոշումը արդարացնելու համար Վրաստանի կառավարությունը ի դեմս Ն. Ռամիշվիլու՝ հայկական կառավարությանը խորհուրդ էր տալիս չդժգոհել, պատճառաբանելով, որ իրենք արդեն Հայաստանին օգնում են՝ թույլատրելով ՀՀ իշխանություններին զինակոչեր անցկացնել վիրահպատակ հայերի շրջանում, նավթ տալով, ներկրելով ռազմական պիտույքներ, զենք ու զինամթերք, նաև բացարձակ հստակ ընդգծելով, որ Հայաստանը իրենցից ավելին չպահանջի, և որ շատ կարևոր է՝ Ն. Ռամիշվիլին արձանագրեց, որ Վրաստանը Ռուսաստանի դեմ կռվել չի կարող, որովհետև պայմանագիր ունեն վերջինիս հետ, իսկ Քեմալի դեմ կռվել չեն կարող, քանզի ունեն թուրք հպատակներ և չեն ցանկանում գրգռել թուրքերին[1178]: Առավել ևս ՀՀ կառավարության կողմից իրատեսորեն գնահատման չարժանացավ Բ. Լեգրանի հետ հոկտեմբերի 28-ին ստորագրած փաստաթուղթը, կարծելով, որ պատերազմն արդեն տանուլ է տրված, և այն որևիցե բան չի կարող փոխել ռազմաքաղաքական իրավիճակում, հրաժարվելով Բ. Լեգրանի առաջարկած Հայաստանի «օկուպացման պլանից», առավել ևս, որ հոկտեմբերի 14-ի հայկական հակահարձակման ձախողումից հետո դեռ Հայաստանը ուշքի չէր եկել:

[1177] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 83, թ. 7-9:
[1178] Տե՛ս նույն տեղում:

Այս ընթացքում հայ-վրացական ռազմաքաղաքական առնչությունները խիստ հակասական էին իրենց զարգացումներով, երբեմն էլ լի անորոշությամբ և կիսատ-պռատ ձեռնարկումներով: Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանն առընթեր զինվորական վարչության ղեկավար Հ. Քիշմիշյանը անդրադառնալով 1920 թ. սեպտեմբերի 15-ից մինչև նոյեմբերը (N 444) տեղի ունեցած ռազմաքաղաքական իրողություններին, ՀՀ Զինվորական նախարարին ուղղված զեկուցագրում հայտնում է նոյեմբերի սկզբին գեներալ Կարալովի հետ տեղի ունեցած իր հանդիպման մասին, որը Երևանից Թիֆլիս էր եկել Վրաստանի կառավարությանը հատուկ զեկույց ներկայացնելու այն մասին, որ առաջարկի իր կառավարությանը Հայաստանին մեծ աջակցություն ցույց տալու՝ թույլատրելով սեփական պահեստներից դուրս բերել զանազան ապրանքներ. գնդացիրներ, հրետանային սարքավորումներ և ռազմաինժեներական և համբարակային ունեցվածք, դրա համար նախկին Զինվորական մինիստր Գեորգաձեին նշանակելով այդ հարցերի գծով կոմիսար: Հ. Քիշմիշյանը հայտնում էր, որ այդ նույն օրը ինքը պորուչիկ Բեկզադովի հետ տեսակցել է Գեորգաձեին, որն իր զրույցում հաստատել է գեներալ Կարալովի հայտարարությունը, ցույց տալով հայկական բանակի կողմից իրենցից ստացվելիք գնդացիրների ցուցակը, նաև հավելելով, որ այն ինքն արդեն հանձնել է Զինվորական մինիստրությանը: Այդ փաստաթղթից պարզ է դառնում, որ դեռ հոկտեմբերի 28-ին Վրաստանի կառավարության կողմից արդեն թույլատրվել է Հայաստանի կարիքների համար բաց թողնել 40 փութ ավիացիոն բենզին, սակայն այն չի տրվել Ռազմաինժեներական բաժնի պետ գեներալ Տակայշվիլու կողմից, չնայած Վրաստանի Զինվորական մինիստրի օգնական գեներալ Գեղևանովի կողմից արված կարգադրությանը, սակայն ի վերջո, այդ խոստումները չեն կատարվել անգամ Բեկզադյանի պնդումներից հետո: Միաժամանակ, գեներալ Հ. Քիշմիշյանը հետաքրքիր տվյալներ էր բերում, որ վրացական իշխանություններին իրենց դիմումագրերը՝ օժանդակելու Վրաստանում ապրող հայ սպաների և զինվորականների Հայաստան ուղարկմանը, առանձնապես արդյունք չեն տվել, անգամ խնդրելով այդ գործին ներգրավել Վրաստանի Ներքին Գործերի մինիստրության «Հատուկ ջոկատին»: Սակայն եզրահանգվում էր, որ Հատուկ ջոկատի ծառայություններին դիմելը ևս արդյունավետ չի եղել,

քանզի տեղ են գտել զանազան զեղծարարություններ, որոնց թողտվությամբ շատ հայ սպաներ, զինվորականներ ձեռք են բերել քողածածկույթ՝ տարբեր ձևերով հայթայթելով վրացական և պարսկական անձնագրեր, և դրանց օգտվելով՝ թաքնվել են Կախեթիայում և Բաթումիում: Ըստ Հ. Քիշմիշյանի, իրենց հարցաղրումների նկատմամբ Վրաստանի Հանրապետության իշխանությունները անտարբերություն են դրսևորել, խոչընդոտելով նրանց մեկնումին Հայաստան, և դրանով իսկ անլրջություն և լարվածություն մտցնելով հայ-վրացական ռազմաքաղաքական և դիվանագիտական հարաբերություններում, առավել ևս ՀՅԴ Դաշնակցության Կենտրոնական կոմիտեի տեղական մարմինը դեմ է արտահայտվել նրանց բռնի արտաքսմանը Վրաստանից Հայաստան, որին վրացական իշխանությունները չեն առարկել[1179]:

Վրաստանի կառավարության հետ երկարատև բանակցությունները բացահայտեցին այն կարևոր փաստը, որ ընդդեմ քեմալականների վրացական կառավարությունը ոչ մի դեպքում դաշինք չի կնքի, իսկ ընդդեմ Ռուսաստանի՝ միայն այն դեպքում, եթե վերջինիս կողմից հարձակում կլինի:

Հարկ է ասել, որ այդ ժամանակաշրջանում հայ քաղաքական-կուսակցական այրերից ոմանք ըստ էության զգում էին վրացական կողմի այդ վայրիվերումների ու մաննրումների իմաստը և ուղղվածությունը, այդ թվում թուրքերի հետ եզրերի պահը: Այս առումով դիտարժան են 1918-1921 թթ. Հյուսիսային Կովկասում Հայաստանի հյուպատոս Հակոբ Սառիկյանի դիտարկումները այդ օրերի իշխող տրամադրությունների և հայ-թուրք-վրացական հարաբերությունների մասին, որն իր դիտարկումը հիմնավորելու համար պնդում է, որ այդ կարծիքին է Ավ. Ահարոնյանը, որը դեռևս 1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին իրեն հասցեագրված նամակներում անդրադարձ է կատարել հայ-վրացական հարաբերություններին, որոնցից մեկում էլ, ըստ Հ. Սառիկյանին ուղղված նամակի՝ ուղղակի շեշտադրվում էր հետևյալ եզրադրույթը. «Վրացիք շարունակում էին լինել պաշտոնապես կոռեկտ մեզ հետ, բայց իրապես շնորհիվ իրենց թուլության, աշխատում են զիջող և բարյացակամ լինել դեպի թուրքերը և այդ բանն աշխատում են ապացուցել նույնիսկ գործով

[1179] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 154, թ. 286:

հաճախ բնավ հաշվի չառնելով [վ]ոչ մեր ինքնասիրությունը ազգային և վոչ մեր և իրենց շահերը միաժամանակ»[1180]:

Ռազմաքաղաքական իրադարձությունների հետագա զարգացումները և Հայաստանի Հանրապետության՝ հարևանների և մասնավորապես Վրաստանի հետ հարմարվելու կարողունակությունը՝ առավել ցայտունորեն բացահայտվեցին 1920 թ. նոյեմբերի կեսերին, երբ հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները առավելագույնս սրվեցին: 1920 թ. նոյեմբերի 5-ին գեներալ Միք. Արեշյանի[1181] կողմից Ղարաքիլիսայից վարչապետ Հ. Օհանջանյանին հասցեագրված հեռագրից պարզվում է, որ վրացական զորամասերը մոտեցել են Չեզոք գոտուն, ինչը Հ. Օհանջանյանը համարում էր խիստ անթույլատրելի և անհասկանալի քայլ, այդ կապակցությամբ հարաբերվելով Երևանում Վրաստանի Հանրապետության զինվորական ներկայացուցիչ Կարալովի հետ, որը հաստատում է գեներալ Մ. Արեշյանի հաղորդածը, սակայն խնդրում, որ Հայաստանի կառավարությունը թույլ տա Վրաստանին իր զորքերը մտցնելու Շահալի կայարան՝ ռազմավարական նկատառումներով՝ իբր թե Լոռու Չեզոք գոտուն սպառնացող վտանգի հետ կապված: Միաժամանակ, Օհանջանյանը գեներալ Կարալովին կրկին հիշեցնում է հայ-վրացական ռազմաքաղաքական դաշինք կնքելու վերաբերյալ արված առաջարկների մասին, որոնք մերժվել էին Վրաստանի կառավարության կողմից, որին ի պատասխան Կարալովը իբր թե եզրահանգում է, թե ինքը չէր սպասում նման հարցադրման[1182]: Եվս մեկ փաստաթուղթ վկայում է, որ այդուհանդերձ, բանակցությունները շարունակվեցին. Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Տ. Բեկզադյանը ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղված 1920 թ. նո-

---

[1180] Սաոիկյան Հ., Հիշողություններ, 1878-1924, էջ 354:

[1181] Արեշյան Միքայել Վասիլիի (05.09.1876 թ., Թիֆլիս – 1920 թ.), 1917 թ. սեպտեմբերի 20-ից՝ գեներալ-մայոր: Կրթություն ստացել է Թիֆլիսի կադետական դպրոցում: Մասնակցել է Առաջին աշխարհամարտին որպես Կովկասյան 3-րդ հրաձգային գնդի գումարտակի հրամանատար, իսկ 1916-1917 թթ. եղել է 3-րդ կովկասյան հրաձգային գնդի հրամանատար, 1917-1918 թթ. գլխավորել է Հայկական կորպուսի 1–ին դիվիզիան, 1918 թ. Մարտին նշանակվել է Սարիղամիշի ջոկատի հրամանատար, 1919 թ. հանդիսացել է Փարիզի հայկական պատվիրակության ռազմական խորհրդական: – Տե՛ս Гогитидзе Мамука, Бежиташвили Георгий, Военная элита Армении (Армяне –генералы, уроженцы Грузии). Биографический справочник, Тбилиси, «Свети», 2014, стр. 27-28:

[1182] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 602, թ. 84-85 և շրջ.:

յեմբերի 26-ի հեռագրում հայտնում է իր հանդիպման մասին վրացական պատվիրակության հետ, որի կազմում եղել են Ն. Ռամիշվիլին, Կ. Սաբախտարաշվիլին, Ս. Գ. Մդիվանին: Տ. Բեկզադյանը հայտնում էր, որ եթե իրենց այդ հանդիպումների ժամանակ հետաքրքրում էր Վրաստանի կողմից ռազմաքաղաքական աջակցության հարցը, ապա վրացական կողմին՝ ընդամենը չարչրկված սահմանավեճերի հարցը, ասելով, որ ինքը վրացիներին հայտնել է, որ իրենց արդեն չի բավարարում «բարյացակամ չեզոքությունը»: Տ. Բեկզադյանը հայտնում է վրացական կողմի դիրքորոշման մասին. վրացիները հայտնում էին, որ իրենք նաև Ռուսաստանի դեմ չեն կարող կռվել, որովհետև «պատմություն» և պայմանագիր ունեն, որը չեն ուզում խախտել, իսկ Մ. Քեմալի հետ կռիվ սկսել չեն կարող, որովհետև ունեն այսպես կոչված թյուրքական նահանգներ՝ Աջարիա, Ախալցխա և այլն: Սակայն ի վերջո, այդ հանդիպման ժամանակ Մդիվանին կտրուկ հայտարարում է, որ իր կարծիքով, հայերի հետ ոչ մի զինվորական գործողության և գործակցության մասին խոսք չի կարող լինել՝ մինչև որ սահմանավեճերը չվճռվեն, որն իբր Ն. Վ. Ռամիշվիլին փորձել է քիչ մեղմել, բայց անարդյունք, քանզի վրացական կողմը ի վերջո իրենց շահերի տեսանկյունից ռուսական վտանգը լուրջ չէր համարում և չէր վախենում կամ տագնապում, գտնելով, որ միևնույն է, իրենք շուտով ընկնելու են նրանց ազդեցության շրջանի մեջ և դառնալու են «սովետական»: Ըստ Բեկզադյանի, վրացիները Քեմալի հետ կապված, պնդել են, թե իբր իրենք իրենց վերջինիս կողմից վտանգված չեն համարում և չեն ուզում մեզ համար նրա դեմ կռվել, որ իրենք պիտի նավթ ստանան Ադրբեջանից և պիտի իրենց եգիպտացորենի բերքը հավաքեն Արևմտյան Վրաստանում: Բեկզադյանը եզրահանգել էր այն մասին, որ վրացիները բացարձակ չեն ասում, սակայն ինքը գտնում է, որ վրացիք իրենց վտանգված չեն համարում և իրենց հետ միասին չեն կռվի և նրանց վրա որևիցե հույս պետք չէ դնել, միաժամանակ մխիթարելով, որ եթե նրանք չխոչընդոտեն հայկական կողմից անցկացվող զորահավաքին և տրանզիտին, իսկապես դժվարություններ չհարուցեն ապրանքների արտահանմանը Փարիզից և Բաթումիից, ապա արդեն իսկ պիտի համարել, որ աջակցում են: Այնուհետև Բեկզադյանը տեղեկացնում է գեներալ Զախարիաձեի կողմից տրամադրված տեղեկատվության մասին, թե իբր իրենց՝ հայերի դեմ կռվում է

18 հազարանոց թուրքական զորք (երեք դիվիզիա), որից 3,5 հազարը՝ Օլթիի, Մերդենեկի և Իգդիրի շրջանում, մնացածը՝ Կարսի շրջանում, որ այդ թիվը իբր ճշգրտվել է Ք. Ստոքսի հետ, որ վերջինս նաև ընդգծել էր հայերի համար ստեղծված շատ ծանր վիճակի մասին, անորոշ պնդելով, թե իբր եթե Անտանտի երկրների կողմից կոլեկտիվ ճնշում լինի վրացիների վրա, որը նրանց կհարկադրի օգնության հասնել հայերին, ապա դրա համար անհրաժեշտ է, որ ինչպես պահանջում են վրացիք, հայերի կողմից լինի իրենց հարցապնդման գրավոր դիմումի ձևակերպում, (հետագա իրողությունները բացահայտեցին դրա սնամեջությունը և խաղարկային բնույթը, միաժամանակ Բեկզադյանի այս զեկուցագրից մի մանրամաս էլ էր պարզվել Ք. Ստոքսի հետ ունեցած մասնավոր զրույցներից մեկից, ըստ որի նրա կառավարությունը իրեն կտրուկ դիրեկտիվներ չի տվել բոլշևիկների նկատմամբ վարվելիք քաղաքականության հարցում, որ բրիտանական կաբինետում ձևավորվել է երկու հոսանք՝ բոլշևիկների հետ համաձայնության գալու կողմնակիցներ և կտրականապես դեմ արտահայտվողներ): Շատ ջանքեր ապարդյուն էին, օր օրի հարաբերությունները ավելի էին սրվում և երկու հարևան հանրապետություններին էլ կանգնեցնում փակուղու առաջ: Տ. Բեկզադյանը այդ հեռագրում հայտնում էր, որ վրացական կողմը այս կամ այն կողմ նետվելով, ի վերջո պնդում է սահմանավեճերի և դրանց արբիտրաժային լուծման տարբերակի վրա: Զեկուցագրի վերջում Բեկզադյանը ՀՀ կառավարության ուշադրությունը բևեռում էր այն կարևոր քաղաքական հանգամանքի վրա, որ Ք. Ստոքսի, և առհասարակ՝ դաշնակիցների վրա հույս դնելը անտեղի է և չպետք է հավատալ ու վստահել նրանց խոստումներին[1183]:

Հենց այդ բոլոր հանգամանքներն էլ պայմանավորեցին հայ-վրացական ռազմաքաղաքական դաշինքի մեռելածին լինելը, դրա ձախողումը և անիրագործելիությունը: Հենց նմանատիպ ռազմաքաղաքական հանգամանքներն իր ժամանակին անիրական և անհնարին դարձրեցին Հայաստանի Հանրապետության մասնակցությունը 1919 թ. հունիսի 16-ին կնքված վրաց-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինքին ընդդեմ Դենիկինի Կամավորական բանակից սպառնացող վտանգի, որն

[1183] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 275, ց. 5, գ. 212, թ. 136-137:

առանց առանձնահատուկ տատանման մերժողական վերաբերմունքի արժանացավ ՀՀ կառավարության կողմից Նախարարների խորհրդի 1919 թ. հունիսի 23-ի նիստում[1184]: Հայկական կառավարությունը անընդունելի համարեց ՀՀ զինվորական-պաշտպանողական մասնակցությունը Վրաստանի և Ադրբեջանի հետ: Այդ իսկ պատճառներն էլ պայմանավորեցին հայ-վրացական պաշտպանական-ռազմական բնույթի դաշինքի ձախողումը: Վրացական կառավարությունը նախընտրեց բանակցությունների մեջ մտնել քեմալականների հետ, որպեսզի թեկուզ հայերին լքելու գնով իրենք իրենց փրկեն և դա նրանց հաշվարկն էր, և հենց այդ պատճառներով էլ նրանք չցանկացան հանուն հայերի զենք բարձրացնել քեմալական Թուրքիայի դեմ, որի կողմից սպառնացող վտանգից այդ եղանակով ապահովագրվեցին: Նմանապես պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելով Խորհրդային Ռուսաստանի հետ, Վրաստանը հայտարարեց, որ ինքը չի ցանկանում խախտել բարյացակամ չեզոքության սահմանները և պատերազմի մեջ ներքաշվել Ռուսաստանի հետ հանուն հայերի, սակայն պատրաստակամություն արտահայտեց վերջիններիս օգնել զորակոչեր անցկացնելու Վրաստանում, չխոչընդոտել զենք ու զինամթերքի առաքմանը Հայաստան, որն առանց բարդությունների և քաշքշուկների չընթացավ: Հենց այս գործոններն էլ մեռելածին դարձրին հայ-վրացական պաշտպանական պայմանագիրը: Վերջին հաշվով, դա Անդրկովկասում և դրա շուրջ ընթացող աշխարհաքաղաքական խորքային և բարդ, ոչ միանշանակ գործընթացների, աշխարհաքաղաքական ուժերի նոր հարաբերակցության և ձևափոխված քաղաքական քարտեզի ձևավորման արդյունք էր, և որոնց գլխավոր դերակատարներն էին մի կողմից՝ Անտանտի կամ Համաձայնության երկրների այդ պահին իրենց դիրքորոշմամբ արդեն նախկինից ավելի անվճռական տերությունները, իսկ մյուս կողմից՝ վերազգեստավորված և Անատոլիայի խորքերից դեպի Անդրկովկաս ցատկող թուրքական գազանը՝ քեմալական Թուրքիան և հապճեպ Կովկաս շտապող բոլշևիկյան կայսրությունը, որոնց շահերը Հայաստանի անդամահատման խնդրում խորապես համընկան: Դա ունեցավ ճակատագրական ռազմաքաղաքական հետևանքներ և արդյունքներ:

[1184] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 199, ց. 1, գ. 100, թ. 108:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՈՌՈՒ ՉԵԶՈՔ ԳՈՏԻՆ 1920 Թ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1921 ԹՎԱԿԱՆԻՆ: ՀՀ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ: ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ

Անկասկած, համաշխարհային քաղաքական զարգացումների տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունեցավ Սովետական Ռուսաստանի վճռորոշ հաղթանակը քաղաքացիական պատերազմում, որը մի կողմից գործնականում կանխորոշեց հակաբոլշևիկյան, սպիտակգվարդիական և «սպիտակ» բանակների պարտությունը, և միաժամանակ պայմանավորեց ազգայնական «Միլլի» շարժման վերելքը Թուրքիայում, մյուս կողմից՝ հանգեցրեց բոլշևիկյան Մոսկվայի և քեմալական Անկարայի դաշինքին, որը շահավետ գործարք էր երկու կողմերի միջև, որոնք դարավոր թշնամանքի մեջ են եղել, որն ըստ էության ձևավորվեց արդեն 1920 թ. գարնանը: Ռուսական բոլշևիկների առաջնորդ Վ. Ի. Լենինը և «Միլլի» շարժման հոգևոր և պրակտիկ առաջնորդ Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքը միավորվեցին Անտանտի դեմ ընդհանուր հակադրվածության և շահերի արմատական տարակարծության հողի վրա, որոնց ռազմավարական գերագույն նպատակը իրենց պետությունների վերականգնումն էր ոչ վաղուց կործանված կայսրությունների տարածքային ընդգրկումների շրջանակներում: Այստեղ, ընդհանուր ռազմավարական շահերի առկայության պայմաններում թե՛ Մոսկվայի և թե՛ Անկարայի կառավարությունների կողմից կարևորվեց իրար մեջ Կովկասի բաժանման հիմնախնդիրը, վերջ դնելով հարավկովկասյան անկախ հանրապետությունների գոյությանը: Անտանտի երկրները որևիցե քայլ չձեռնարկեցին, կարծում ենք, չէին էլ ցանկանում, գուցե և դրան հնարավոր չէր ռազմաքաղաքական լուծում տալ, որպեսզի խոչընդոտեն Հարավային Կովկասի բաժանմանը ազդեցության գոտիների:

Ավելին, ասենք որ, անդրկովկասյան իրենց կրտսեր դաշնակիցներին լքելու Անտանտի վճռի մեջ կարևոր դեր խաղաց նաև Սովետների երկրի հետ տնտեսական-առևտրական հարաբերությունների կարգավորման քաղաքական կուրսը, գաղափարախոսական-քաղաքական հակազդումներից նահանջ կատարելով դեպի տնտեսաքաղաքական շահերը: Ըստ այդմ, արդեն փոփոխված աշխարհաքաղաքական նոր իրավիճակի պայմաններում, 1919 թ. ամռան վերջին բրիտանական զորքերը տարհանվեցին Հարավային Կովկասից, բացառությամբ Բաթումիի մարզի, որտեղ նրանք մնացին մինչև 1920 թ. ամառվա կեսը[1185], ինչը պատճառ եղավ իրադրության վատթարացմանը Անդրկովկասում և Արևմտահայաստանում, քաջալերեց թուրքերին և ճանապարհ բացեց վրաց-ադրբեջանական խարդավանքների համար ընդդեմ Հայաստանի Հանրապետության: Անդրկովկասյան տարածաշրջանի կայունության ապահովման զսպիչ ազդակներից մեկը վերացավ, իսկ ռուս բոլշևիկները ո՛չ բավարար չափով կազմակերպված էին, ո՛չ էլ դեռ ի վիճակի էին ազդեցիկ գործողություններ ձեռնարկելու: Հենց այս իրավիճակում էլ «Չեզոք գոտու» և առհասարակ հայկական Լոռու շուրջ հայ-վրացական ռազմաքաղաքական լարվածությունը սրեց երկու դրացի հանրապետությունների ռազմաքաղաքական փոխհարաբերությունները, իր վրա բևեռելով դաշնակիցների, Թուրքիայի, Ադրբեջանի և այլ աշխարհաքաղաքական ուժերի ուշադրությունը, ունենալով ծանր հետևանքներ: Վրաստանը 1918-1920 թթ. ընթացքում և հետո ամեն մի առիթ օգտագործում էր Լոռու Չեզոք գոտում ամրապնդվելու համար, այն դիտարկելով որպես չափազանց կարևոր ռազմաքաղաքական հենակետ ողջ Լոռուն տիրելու համար: Լոռու Չեզոք գոտու մեջ մտնում էին Բորչալուի գավառի Ալավերդու, Ուզունլար-Օձունի և Վորոնցովկա-Կալինինոյի շրջանները՝ 41 գյուղերով հանդերձ: Հայտնի է, որ Բորչալուի գավառը որպես առանձին վարչական միավոր առանձնացվել էր դեռ 1880 թ. Թիֆլիսի նահանգի տարածքից, որում վրացիները կազմում էին ազգաբնակչության ընդամենը 44,6, հայերը՝ 21,5 տոկոսը[1186]: Նրա կազմի մեջ էին Բորչալուի ցածրավայրը, լեռնային Լոռի նահանգը և Թրիալեթին:

[1185] Տե՛ս Кадишев А. Б., Интервенция и гражданская война в Закавказье, стр. 470:
[1186] Տե՛ս Хармандарян С. В., Лнин и становление Закавказской федерации, стр.12:

Հարկ է ասել, որ Լոռու Չեզոք գոտու շուրջ ծավալված լարվածության նախանշանները սկսեցին երևալ դեռ 1920 թ. մայիս-հունիս ամիսներին: Արդեն 1920 թ. մայիսի 7-ին կնքված ռուս-վրացական համաձայնագրի հետ կապված քաղաքական կրքերը Անդրկովկասում կրկին բորբոքվեցին, քանզի այդ պայմանագրով ՌԽՖՍՀ գործնականում երաշխավորում էր մենշևիկյան Վրաստանի Հանրապետության սահմանային-տարածքային անձեռնմխելիությունը և պարտավորվում վրացական պետության կազմի մեջ ներառած համարել Թիֆլիսի նահանգը, Բաթումիի մարզն իր բոլոր գավառներով հանդերձ, և դա այն պարագայում, երբ 1919 թ. հունվարի 9-17-ին տեղի ունեցած հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի արդյունքում կնքված համաձայնագրի համաձայն Բորչալուի գավառի մի մասը ճանաչվեց Չեզոք գոտի՝ մինչև տարածքային հարցերի վերջնական լուծումը, Ախալքալաքի գավառը ևս վիճարկելի համարվեց՝ մնալով Վրաստանի կազմում: Բաթումիի մարզում Հայաստանի Հանրապետությունը պահանջներ ներկայացրեց Ճորոխի հովտի որոշակի շրջանի վրա, միաժամանակ ՀՀ կառավարության կողմից բողոքի նոտաներ ներկայացվեցին ոչ միայն վրացական կառավարությանը, այնպես էլ դաշնակցային ռազմաքաղաքական ներկայացուցչություններին, իսկ դա զգալի լարվածության եզրեր ստեղծեց ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Վրաստանի դեմոկրատական հանրապետության հետ: Բոլշևիկյան Ռուսաստանի նման ռազմավարությունը կապված էր Փարիզի վեհաժողովի կողմից Հայաստանին և Վրաստանին վերաբերող սահմանային-տարածքային վիճահարույց հարցերի լուծման գործում ցուցաբերած առաքելության հետ, որով Ռուսաստանը բոլոր ջանքերը գործադրում էր եվրոպական պետությունների և ԱՄՆ-ի դիրքերը Հարավային Կովկասում բացառելու և անդրկովկասյան հանրապետություններին իր ազդեցության տիրույթում պահելու համար, զանազան հնարքներ կիրառելով Հայաստանի Հանրապետություն-Վրաստան ռազմաքաղաքական փոխհարաբերությունները խճճելու ուղղությամբ, չնայած ակնհայտ էր, որ մենշևիկյան Վրաստանի նկատմամբ այդ դիրքորոշումը բխում էր քաղաքական պահի նրբերանգների խելամիտ և խորամանկ հաշվառումից, որից վրացիները փորձում էին օգտվել և ինչ-որ տեղ իրենց համար հասկանալի հաշվեկշիռ ձեռք բերել, թեկուզև հավանաբար ներքուստ զգում էին բոլշևիկների այդ խոր-

քային բնույթի մանևրումների իմաստը և վերջնարդյունքը: 1920 թ. Հունիսի 11-ին (N 3555) ՀՀ Արտաքին Գործերի նախարար Հ. Օհանջանյանը վրաց կառավարության դեմ ուղղված բողոքագիր ուղարկեց Թիֆլիս՝ Տիգրան Հ. Բեկզադյանին[1187] կապված ըստ վրացական առաջարկի Սովետական Ռուսաստանի կողմից Թիֆլիսի և Բաթումիի նահանգների իրենց բոլոր գավառներով և մարզերով որպես անպայման վրացական պետության կազմի մեջ մտնող տարածքներ ճանաչելու քաղաքական փաստի հետ: Այդ կապակցությամբ ՀՀ Արտաքին Գործերի նախարարի կողմից մենշևիկյան Վրաստանի կառավարությանը հղված 1920 թ. հունիսի 11-ի բողոքագիր ներկայացնող նոտայում մասնավորապես ընդգծվում էր հետևյալը. «Անցյալ տարվա հունվարի 9-ին և 17-ին Հայաստանի ու Վրաստանի միջև կնքված դաշնագրով Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի մեկ մասը, որ սահմանակից է Վրաստանին և Հայաստանին, երկու հանրապետությունների կողմից ճանաչված է չեզոք, մինչև վերջնականորեն կվճռվեն միմյանց հետ ունեցած սահմանային վեճերը: Նույն դաշնագրով Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառը ճանաչված է վիճելի տարածք:

Բաթումիի շրջանում Ճորոխի որոշ հողաբաժնի նկատմամբ Հայաստանը ներկայացրել է իր պահանջը՝ Կարս-Բաթումի երկաթուղագծի կառուցումով հնարավորություն կունենա ստանալու իր համար այնքան կենսական ու անհրաժեշտ տնտեսական ելքը դեպի ծով:

Հայաստանի և Վրաստանի միջև անցյալ տարվա նոյեմբերի 14-ին կնքված դաշնագրով երկու հանրապետությունները պարտավորվում են բոլոր գոյություն ունեցող կամ ապագայում ծագելիք վեճերը լուծել փոխադարձ համաձայնությամբ, իսկ այդպիսին չկայանալու դեպքում՝ պարտադիր արբիտրաժի միջոցով:

Նկատի ունենալով վերոգրյալը, կառավարության անունից խնդրում եմ ձեզ տեղեկացնեք Վրաստանի կառավարությանը, նույնպես

[1187] Բեկզադյան Տիգրան Հարությունի [1871 թ., Շուշի - 08.08.1942 թ., Փարիզ] - Հայտնի հասարակական-պետական գործիչ, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարը՝ հանձնակատարը սկզբում Բաքվում [1919 թ. մարտի 11-ից], այնուհետև՝ Թիֆլիսում [1920 թ. ապրիլի 30-ից]: Տ. Բեկզադյանը Թիֆլիսում ՀԽՍՀ դիվանագիտական հավատարմատար Ալեքսանդր Բեկզադյանի ավագ եղբայրն է: Տարագրվել է և ապրել Ֆրանսիայում: Տե՛ս Հովակիմյան Բ. Մ., Հայոց ծածկանունների բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2005, էջ 576: - Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 83, թ. 2:

և բոլոր դաշնակից միսիաների ներկայացուցիչներին Թիֆլիսում, որը Ռուսաստանի և Վրաստանի մեջ կնքված վերոհիշյալ դաշնագրի Թիֆլիսի նահանգին և Բաթումիի շրջանին վերաբերող մասը Հայաստանի կառավարությունը համարում է անվավեր»[1188]: Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Տ. Բեկզադյանը ՀՀ կառավարության բողոքագիրը 1920 թ. հունիսի 15-ին ներկայացրեց Վրաստանի մենշևիկյան կառավարությանը:

Սակայն կապված 1920 թ. մայիսի 7-ին Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված պայմանագրի հետ, կրքերը սրվում են, առավել ևս, երբ այդ պահին Հայաստանի Հանրապետության կառավարական-կուսակցական և ռազմական շրջաններն ունեին ընդգծված արևմտյան քաղաքական մտասևեռումը, որն էլ պայմանավորում են նրանց դիրքորոշումների նրբերանգները անմիջական հարևանների հետ ռազմաքաղաքական հարաբերություններում: Այսպես, 1920 թ. հունիսի 12-ին (N 3513) Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Բեկզադյանին ուղարկված գրությունում Արտաքին Գործերի նախարարը հայտնելով իրենց կողմից արդեն հայտնված բողոքի մասին Վրաստանի և Ռուսաստանի միջև կնքված պայմանագրի կապակցությամբ, իր դժգոհությունն էր հայտնում Վրաստանի կողմից շարունակվող գաղտնի հակահայկական քաղաքականության կապակցությամբ: ՀՀ Արտաքին Գործերի նախարարը հայտնում էր, որ չնայած նոյեմբերի 3-ի արբիտրաժի առթիվ հարուցած պայմանագրին, թե՛ Ախալքալաքը, թե՛ Չեզոք գոտին Վրաստանը Հայաստանից ծածուկ իր տարածքն է հայտարարում՝ հենվելով երրորդ ուժի վրա, որպիսին Ռուսաստանն է հանդիսանում (չնայած այս կապակցությամբ հարկ է նշել վրացական հեռատեսության մասին – Վ. Վ.), միաժամանակ արգելքներ հարուցելով դեպի Հայաստան տրանզիտով զենքերի փոխադրման, և մասնավորապես Փոթիից փամփուշտների առաքման ապահովման խնդրում, ինչպես նաև Չեզոք գոտում ծավալելով գաղտնի և բաց քարոզչություն, զորքերի փոխադրումներ Չեզոք գոտում և Արդահանի շրջանում, եզրահանգելով Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված պայմանագրի իրենց համար անցան-

[1188] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 2, գ. 83, թ. 2:

կալի հետևանքների, և ըստ այդմ առումով իրենց բազմաթիվ բողոքների մասին[1189]:

Հայաստանի վիճակն օր օրի բարդանում էր, տագնապը խորանում, թեկուզև արտաքուստ իշխում էր Սևրով ծնված ոգևորությունը: Դա հաստատվում է այդ ժամանակաշրջանի որոշ այլ տեղեկություններով, որոնք ձեռք էր բերում ՀՀ զինվորական հետախուզությունը: Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Կ. Սաբախտարաշվիլին ՀՀ Արտաքին Գործերի նախարարությանը ուղղված 1920 թ. օգոստոսի 9-ի (N 6334) դիվանագիտական գրության մեջ, որը Հայաստանում ստացվեց օգոստոսի 17-ին, հայտնում էր, որ իրենց ստացած տեղեկությունների համաձայն Աղստաֆայի շրջակայքում տեղի է ունենում 11-րդ Կարմիր բանակի զորամասերի կենտրոնացում, որոնք սկսել են գրավել Չեզոք գոտու մի քանի մասերը, միաժամանակ ավելացնելով, որ իրենք դիմել են Ադրբեջանի սովետական կառավարությանը՝ հարցում անելով այդ զորամասերի տեղափոխության պատճառների մասին: Եվ քանի որ դրան պատասխան չի ստացվում, այդուհանդերձ Բաքվի իրենց ներկայացուցչից ստացված տեղեկությունների հիման վրա Կ. Սաբախտարաշվիլին եզրակացություն էր անում, որ այդ ամենը ուղղված է Հայաստանի դեմ, և Վրաստանի կառավարությունը անտարբեր դիտորդի դերում չմնալով, բողոքի նոտաներ է ներկայացրել Թիֆլիսում գտնվող օտար պետությունների ներկայացուցիչներին[1190]:

Գեներալ Հ. Ա. Քիշմիշյանը 1920 թ. օգոստոսի 20-ին ՀՀ զորքերի հրամանատարի շտաբի պետին հաղորդում էր (N 352/c), որ համաձայն ստուգված և միանգամայն հավաստի գործակալական տվյալների, Վրաստանի մենշևիկյան Հանրապետության կառավարությունն իրականացնում է ուժեղ քարոզչություն՝ նպատակ հետապնդելով խաղաղ ճանապարհով տիրել Արդահանի, Օլթիի մարզերին և Չըլդրին: Դրա հետ մեկտեղ, Հ. Քիշմիշյանը նշում էր, որ ինչ վերաբերում է Օլթիի շրջանը զինված եղանակով գրավելու մասին տեղեկություններին, որի համար վրացիները հավաքում են զորքերը, ապա իբր թե դրանք չեն համապատասխանում իրականությանը, քանի որ կայազորները հին են, չեն փոխվել, հայտնելով, որ Վրաստանի կառավարությունը կենտրոնա-

[1189] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 569, թ. 125-126:

[1190] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ – 199, ց. 1, գ. 111, թ. 180-181:

ցել է երկու գլխավոր կետերում՝ Ախալցխայում և Ախալքալաքում, ուժեղացնելով գեներալ Չիկվաիձեի սահմանապահ ջոկատը, հենվելով նաև մի շարք մահմեդական գործիչների՝ ինչպես օրինակ, Ջալալ բեկ Մաչաբելայի վրա, որը գործուղվել էր Օլթի՝ մեծ լիազորություններով և գումարներով, սակայն մնացել էր Ախալցխայում, որտեղ գտնվում էր նաև Օմար Էֆենդիի՝ Ախալցխայի կառավարության նախկին նախագահի շտաբը: Սույն ամփոփագրում Քիշմիշյանը նաև տեղեկացնում էր, որ Օլթիի շրջանում քարոզչական աշխատանքները տարվել են Սերվեր բեկ Աթաբեկովի միջոցով, իսկ Արդահանի շրջանում այն իրականացրել է գավառապետ Կաղիմովը, որը մեծ գումարներով կաշառվել էր և աշխատանքներ էր տանում հօգուտ Վրաստանի, որ Ախալքալաքի շրջանից մի շարք մահմեդական սահմանային գյուղերի միջոցով վրացիները կապեր են հաստատել Չըլդրի (Չալդիրի) և Աղբաբայի հետ և օգոստոսի 6-ին Չըլդրից Թիֆլիս են ժամանել մահմեդական բնակչության ներկայացուցիչները՝ Վրաստանի ՆԳ մինիստր Ն. Վ. Ռամիշվիլու հետ տեսակցելու: Ամփոփագիրն ավարտվում էր եզրակացությամբ այն մասին, որ վրացական կառավարության մարտավարությունն Արդահանի և Օլթիի մարզերի, «Չեզոք գոտու» նկատմամբ, արտահայտվում է ուժեղ քարոզչությունում՝ առանց զինված ուժերի կուտակման և կառավարության կողմից մի շարք գաղտնի որոշումների ընդունումով՝ բնակչությանը խաղաղ ճանապարհով իրենց ազդեցության տակ գցելու համար, հենվելով բնակչության ազատ կամքի արտահայտման վրա[1191]:

Բնականաբար, Հայաստանի Հանրապետության կառավարությունը փորձում էր համալիր մոտեցմամբ իր վերահսկողության տակ պահել որ միայն Լոռին, այլև Արդահանը, ձգտելով իր ռազմաքաղաքական հարաբերություններում Վրաստանի հետ նախաձեռնությունը չհանձնել վերջինիս, որոնք օգտվելով դաշնակիցների հակասական, ոչ սկզբունքային, առավել ևս՝ շահամետ մոտեցումներից, փորձում էին տարածքային հարցերի լուծման գործում ունենալ ուժային առավելություններ: Արդահանում տեղաբաշխված էին հայկական և վրացական զորամասեր, որոնք ակնդետ հետևում էին միմյանց: Այդ մասին հետաքրքիր դիտարկում ունի Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության

[1191] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 184, թ. 101:

խորհրդական իշխան Մ. Թումանյանը, ըստ որի Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորին բանավոր տեղեկացրել էր 350 հոգուց բաղկացած հայկական զորաջոկատի ժամանման մասին, նշելով, իբր նրանց նպատակն է եղել վրացական գումարտակի զինաթափումը, հետաքրքրվելով հայկական զորամասի Արդահան ժամանման հանգամանքներով: Այդ առումով հայկական կողմը հաստատագրում էր այն փաստը, որ դա վճռվել է Հայաստանում դաշնակիցների Գերագույն կոմիսար Վ. Հասկելի իրավարար վճռի համաձայն, որը թույլատրել է Արդահան քաղաքից 25 վերստ հեռավորության վրա կանգնած լինի հայկական զորամասը՝ վարչակարգի պահպանությունը իրագործելու համար, ընդ որում և՛ հայկական կողմը, և՛ վրացականը պետք է ունենային հավասարաչափ քանակով զինվորներ Արդահանի տարբեր մասերում, որի կապակցությամբ Մ. Թումանյանը նաև հարցապնդումով դիմել էր Ալ. Խատիսյանին: Վրացական զորամասերը պետք է գտնվեին Քուռ գետից հարավ ընկած հատվածում[1192], և ոչ մի կերպ չխախտեին պայմանավորվածությունը:

Բեկզադյանին ուղղված 1920 թ. սեպտեմբերի 12-13-ի (N 5249) և սեպտեմբերի 25–ի հեռագրերում (5490) Արտաքին Գործերի նախարարի տեղակալի պարտականություններ կատարող Ռ. Տեր-Մինասյանը տեղեկացնում էր ՀՀ կառավարության որոշման մասին Լոռվա Չեզոք գոտու խնդրում: Դրանում հայտնվում էր, որ կառավարությունը որոշում է ընդունել Չեզոք գոտու հարցը վճռել այլ տարածքային խնդիրների հետ միասին, գտնելով, որ առանձին վճիռները կարող են խոչընդոտել այլ հարցերի բարեհաջող լուծմանը[1193]:

Արդեն այդ մասին մասամբ անդրադարձ ունեցել ենք, որ այդ ընթացքում Վրաստանի մենշևիկյան կառավարությունը փորձեց իր հսկողության տակ առնել Արդահանի շրջանի վիճարկելի մասը, և 1920 թ. հոկտեմբերի 1-ին վրացական զորքերը մտան Չըլդր [Չըլդիր-Չալդիր] լճի շրջանը, ինչպես նաև Քուռի «հայկական կողմի» Օկամ [Գյոլե] գյուղը: Այդ քայլը առաջացրեց հայկական կառավարության դժգոհությունը, նաև այն պատճառով, որ վրացական զորքերի կողմից վիճելի տարածքների զավթումը տեղի էր ունենում Թիֆլիսում ընթացող բանակցու-

[1192] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 357, թ. 333, գ. 396, թ. 69:
[1193] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ -275, ց. 5, գ. 211, թ. 213:

թյունների պայմաններում, որոնց նպատակն էր հայ-վրացական պաշտպանողական բնույթի դաշինքի ստեղծումը՝ ընդդեմ Սովետական Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի: Ինչպես արդեն գիտենք, քանակցություններն ավարտվեցին անարդյունք, մասամբ նաև այն պատճառով, որ թուրքական դիվանագիտական ներկայացուցիչները համառորեն վստահեցրել էին Վրաստանին, որ Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի ազգային կառավարությունը չի առարկում ընդդեմ այն բանի, որ վրացական զորքերի կողմից գրավվեն Հայաստանի հետ վիճարկելի համարվող տարածքները: Առավել ևս, երբ Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնակատար Կոնստանտին Բ. Սաբախտարաշվիլին հայտարարեց, որ Արդահանի մարզի վիճարկելիությունը վրացական վարչակազմի ներկայությունը այնտեղ դարձնում է ոչ պակաս օրինական, քան հայկականը: Վրացիների կողմից սահմանազատիչ գծի անցումից մի քանի օր հետո ՀՀ կառավարությունը ռազմաճակատից դուրս բերեց հայկական 8-րդ գնդի զորաջոկատները ու Սեպուհի (Արշակ Ներսիսյան) արևմտահայերի գումարտակը և նրանց ուղարկեց Օկամ, արդյունքում՝ վրացական զորամասը Օկամից նահանջեց Արդահան: Չըլդրի շրջանը մնաց վրացիների տիրապետության ներքո և ավելին, 1920 թ. հոկտեմբերի 13-ին Զուրզունա ավանում հանդիսավոր պայմաններում բարձրացվեց վրացական դրոշ[1194]: Չնայած դրան, «զորավար Մ. Սիլիկյանի հրամանով «8-րդ գնդի մասերը մտան Զուրզունա, վար բերին վրացական դրօշակը և վրացիներին սահմանից այն կողմը ղրկեցին, ինչը որ մեծ աղմուկի և բողոքի տեղիք տուավ Թիֆլիսում[1195]»՝ խոբացնելով լարվածությունը և վիհը հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում: Այդ նույն օրը իրավիճակը հայ-թուրքական ռազմաճակատում կտրուկ սրվեց, ժամանակավոր անդորրը խախտվեց, և Հայաստանի Հանրապետությունը կորցրեց Չըլդրի շրջանը վերադարձնելու հնարավորությունը, որը, կարճ ժամանակ անց, չորս ամիս հետո ընկավ թուրքերի ձեռքը, քանի որ խորհրդային կարգերի հաստատման

[1194] Տե՛ս Hovannisian R. G., The Republic of Armenia (Los Angeles, 1982), vol. IV, pp. 222 -226: Տե՛ս նաև ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 602, թ. 17:

[1195] Տե՛ս Բաբալեան Արտաշես, Հայաստանի անկախութեան պատմութիւնը եւ այլ յիշատակներ, Գլենդել, «Նավասարդ» հրատ.,1997, էջ 181:

արդյունքում, Վրաստանի մենշևիկյան հանրապետությունը դադարեց գոյություն ունենալուց:

Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին ուղղված 1920 թ. հոկտեմբերի 18-ի նոտայում ի պատասխան հայկական կողմի հոկտեմբերի 1-ի նոտայի՝ Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնակատար Կ. Սաբախտարաշվիլին հայտնում էր, որ ի նկատի ունենալով այն հանգամանքները, որոնց հետևանքով Չըլդրի և Գելի շրջանը զբաղեցվել են Վրաստանի զորքերի և վարչակարգի կողմից, ակնհայտ է դարձել, որ նման օկուպացիան անխուսափելի էր ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի կենսական շահերի ապահովման համար, որ Չըլդրի ու Գելի այդ շրջանների Հայաստանի զորքը և վարչակարգը հարկադրված էին տարհանվել և այդ շրջանները զրկվել էին պաշտպանությունից և քաղաքացիական վարչակարգից: Կ. Սաբախտարաշվիլին այդպիսի արհեստական պատճառաբանություններ բերելով, նաև ընդգծում էր, որ շնորհիվ վրացական զորքերի և վարչակազմի կողմից Չըլդրի և Գելի շրջանների զբաղեցման՝ թուրքերի հարձակումը Արդահանի վրա կանգնեցվել է և դադարեցվել է անկանոն բանդաների ձևավորումը և դրանց ավազակաբարո գործունեությունը, ինչը ռազմավարական անհրաժեշտության հետևանք էր և ոչ մի առումով չի կարող համարվել Արդահանի օկրուգի մասին հարցի վերջնական հանգուցալուծում[1196]:

Որոշ ժամանակ բանակցային ընթացքը շարունակություն ունեցավ: 1920 թ. հոկտեմբերի 25-ին Թիֆլիսում Տ. Բեկզադյանը բանակցեց Վրաստանի կառավարության անդամներ Ն. Ռամիշվիլու, Կ. Սաբախտարաշվիլու, Ս. Մդիվանու հետ, ձգտելով լուծել թուրքերի հետ հնարավոր հայ-վրացական ճակատ կազմելու հարցը, փորձելով Վրաստանին դուրս բերել իր իսկ որդեգրած չեզոք դիրքորոշման վիճակից, որը չնայած դրան, ըստ տարբեր վկայակոչումների, ներքուստ համագործակցում էր քեմալականների հետ: Սակայն մենշևիկյան Վրաստանը չգնաց Հայաստանի հետ համատեղ պաշտպանական դաշինքի ստեղծման ուղիով, և օգտվելով Թուրքիայի հետ համագործակցության պտուղներից, ոչ միայն առանց վարանելու գնաց հարևան Հայաստանի Հանրա-

[1196] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 602, թ. 12:

պետությանը լքելու ճանապարհով, այլև բռնեց պարտադրանքի ուղին և սկսեց վիճելի տարածքներում վերստին ամրապնդվելու իր ռազմավարությունը համառորեն առաջ մղել՝ դրանց վերջնականապես տիրելու նպատակով: Ստեղծված իրավիճակում Վրաստանի ներկայացուցիչ Ս. Մդիվանին նույնիսկ առանց ավելորդ երկմտանքի հայտարարեց, որ հանուն Հայաստանի Վրաստանը բոլորովին էլ չի կարող պատերազմել Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի դեմ, իսկ Ն. Վ. Ռամիշվիլին[1197] հայկական կողմին խորհուրդ տվեց բավարարվել միայն իրենց բարոյական աջակցությամբ և տրված համաձայնությամբ՝ Վրաստանի տարածքում հայերի զորահավաք կատարելու թույլտվություն տալու մասին[1198]:

1920 թ. նոյեմբերի սկզբին Հայաստանում Վրաստանի զինվորական ներկայացուցիչը ՀՀ կառավարությանը հայտնում է, որ «ռազմավարական նկատառումներից» ելնելով որոշել է գրավել Չեզոք գոտին, որին անմիջապես հաջորդեց վրացական զորքերի արագ տեղաշարժը դեպի հայկական բնակավայրերի խորքերը: Դրան ի պատասխան՝ նոյեմբերի 8-ին Հայաստանի կառավարությունը վրացական կողմից պահանջեց չեղյալ հայտարարել ընդունված որոշումը, հայտնելով, որ Վրաստանը շահագործել է Հայաստանի ծանր ռազմաքաղաքական իրավիճակի պահը և առաջարկեց «երկու հանրապետությունների սահմանների համատեղ պաշտպանություն» կազմակերպել: Իսկ նոյեմբերի 11-ին, Տ. Բեկզադյանի հետ տեսակցությունից հետո, Կ. Սաբախտարաշվիլին Հ. Օհանջանյանին հաղորդեց, որ իբ վրացական կառավարության տեղեկությունները հենված են եղել թյուրիմացության վրա, և այդ իսկ պատճառով էլ իրենք ցանկանում են անմիջական բանակցությունների մեջ մտնել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ և կնքել համաձայնություն պաշտպանողական նպատակներով վրացական զորամասերի կողմից ժամանակավորապես Չեզոք գոտին զբաղեցնելու մասին[1199]:

[1197] Ռամիշվիլի Նոյ Վիսարիոնի [5 ապրիլի, 1881 թ. - 7 դեկտեմբերի, 1930 թ.] - վրաց հայտնի պետաքաղաքական և մենշևիկյան կուսակցության գործիչ, Վրաստանի դեմոկրատական հանրապետության կառավարության 1-ին մինիստր-նախագահ [վարչապետ]:

[1198] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., քաղաքական պատմություն. (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), էջ 312-314:

[1199] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 373:

Այսպիսով, թեկուզև երկու կողմերի՝ Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև հուսահատ, ոչ լիարժեքորեն կամային ուժեղ փորձեր արվեցին, և կարծես թե վճռական քայլեր ձեռնարկվեցին միջպետական մակարդակով կարգավորել ռազմաքաղաքական փոխհարաբերությունները Վրաստանի հետ և լուծել վիճելի հարցերը, սակայն ապարդյուն: 1919 թ. նոյեմբերի 11-ի համաձայնությամբ Հայաստանի Հանրապետության պառլամենտի կողմից հաստատվեց մի փաստաթուղթ, և ըստ դրա վճռվեց Վրաստանի և Հայաստանի Հանրապետությունների միջև առկա վիճարկելի խնդիրները համաձայնությամբ կամ պարտադիր իրավակարգի միջոցով լուծելու համար կնքել դաշնագիր երկու կողմերի միջև[1200]:

Սակայն այդպես երկար չշարունակվեց, և նոյեմբերի 16-ին վրացական զորամասերը գրավեցին ոչ միայն կոնդոմինիումը (համատիրությունը), այլև տեղաշարժվեցին ավելի առաջ և դուրս եկան նախկին Թիֆլիսի նահանգի սահմանագծի վրա, որը Վրաստանում անվիճարկելի էր համարվում և դիտվում էր որպես արդարացի սահման երկու հարավկովկասյան հանրապետությունների միջև: Այսպիսով, վրացական կողմը իր հսկողության տակ վերցնելով Բորչալուի գավառի նախկինում ողջ վիճարկելի մասը, որոշեց նաև օրինականացնել իր գործողությունները: Վրաստանի կառավարության կողմից կարճատև ժամկետներում անցկացվեց պլեբիսցիտ՝ հանրաքվե, որի հիման վրա Բորչալուի գավառի Լոռու ողջ տեղամասը [այսինքն և կոնդոմինիումը, և այն գոտին, որը դեռ 1919 թ. հունվարի 17-ի պայմանագրով հանձնվել էր Հայաստանի Հանրապետությանը], բռնազավթման ենթարկվեց Վրաստանի կողմից: Հասկանալի էր, որ ՀՀ կառավարությունը դժվար թե իր համաձայնությունը տար այդ քայլին, և դա այդպես էր: Լոռու ողջ տեղամասի կամ նրա մի մասի գրավումը Վրաստանի կողմից, որը մտնում էր կոնդոմինիումի մեջ [Չեզոք գոտի], դա զավթողական բնույթի գործողություն էր, և դեռ լիովին պարզ չէր, թե ինչքանով պարկեշտ և օրինական է անցկացվել հանրաքվեն: Սակայն այստեղ դժվար է համաձայնվել, և գործնականում անընդունելի է ոչ անհայտ կանադացի պատմակեղծարարներ և իրենց կովկասագետ համարող Է. Անդերսենի

[1200] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 215 (214), ց. 1, գ. 17, թ. 76-78:

և Գ. Էգգեի կողմից ընթերցողի վզին փաթաթվող այն կեղծ, ստահոդ, փաստազուրկ և գիտական հիմքերից զուրկ պնդումը, թե իբր «նկատի ունենալով հայ-թուրքական պատերազմի բուն ընթացքը և հետևանքները, Լոռու տեղամասի քրիստոնեական բնակչության մեծամասնությունը հանրաքվեում արտահայտվեց հօգուտ Վրաստանի»[1201], և դրանով իսկ իբր թե ծայրահեղ դեպքում ապահովվեց տեղական բնակչության՝ հայերի, հույների և ռուսների անձեռնմխելիությունը, կյանքի և գույքի ապահովությունը: Այդպես շարունակվեց շուրջ մեկ տարի:

Այդ ընթացքում, իհարկե, փորձեր արվեցին միջպետական մակարդակով կարգավորել հարաբերությունները Վրաստանի հետ և լուծել վիճելի հարցերը: 1919 թ. նոյեմբերի 3-ին Վրաստանի կառավարության, որը ներկայացված էր մի կողմից ի դեմս Ներքին և Ռազմական գործերի մինիստր Ն. Վ. Ռամիշվիլու, Վրաստանի Սահմանադիր ժողովի նախագահ Ս. Գ. Մդիվանու, մյուս կողմից՝ Հայաստանի կառավարության միջև, որը ներկայացնում էին Ստ. Գ. Մամիկոնյանը, և ՀՀ պառլամենտի անդամ Ս. Ա. Խաչատրյանը, կնքվեց մի պայմանագիր, որի դրույթները հանգում էին հետևյալին. 1) պայմանավորվող պետությունները՝ Վրաստանի և Հայաստանի հանրապետությունները, պարտավորվում են բոլոր գոյություն ունեցող, այլև իրար միջև ծագող վեճերը լուծել համաձայնության միջոցով, իսկ եթե դրան հնարավոր չլինի հասնել, ապա՝ պարտադիր արբիտրաժի միջոցով, 2) պայմանագրի վավերացումը պետք է հետևի երկու շաբաթվա ընթացքում, Թիֆլիս քաղաքում[1202]:

1919 թ. նոյեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության պառլամենտի կողմից հաստատվեց մի փաստաթուղթ, և ըստ դրա որոշվեց Վրաստանի և Հայաստանի Հանրապետությունների միջև առկա վիճարկելի խնդիրները համաձայնությամբ կամ պարտադիր իրավակարգի միջոցով լուծելու համար երկու կողմերի միջև կնքել դաշնագիր[1203]:

[1201] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) //Տե՛ս http://www. conflicts. rem33. com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html:

[1202] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ – 204, ց. 1, գ. 133, թ. 43-44: «Աշխատավոր», Թիֆլիս, 16 հունիսի, 1920 թ., N 57:

[1203] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 215 (214), ց. 1, գ. 17, թ. 76-78:

Սակայն ամեն ինչ հարթ չէր ընթանում, առավել ևս երբ անգլիացիները Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչների խառը խորհրդակցությունում՝ կապված Անդրկովկասից առաջիկայում սպասվող բրիտանական զորքերի տարհանման հետ, դեռ 1919 թ. նոյեմբերի 4-ին գեներալ Բիչի գլխավորությամբ վճռեցին պահպանել խառը վարչակարգ անգլիական սպայի ղեկավարությամբ: Սակայն լարվածությունը դրանից չմեղմացավ, 1919 թ. նոյեմբերի 14-ին ՀՀ Ներքին Գործերի նախարարը Արտաքին Գործերի նախարարությանը ուղղված զեկույցում հենվելով Չեզոք գոտու գյուղական հասարակությունների վճռի վրա, ուղղակի խնդրում էր կարգադրություն անել՝ այդ պահից այն Հանրապետությանը միացնելու մասին[1204]: Հետագա օրերին լարվածությունը չի մեղմանում, և ՀՀ Ներքին Գործերի նախարարը Արտաքին Գործերի նախարարին ուղղված հեռագրում հայտնում էր դեկտեմբերի 12-ին տեղի ունեցած միջադեպի մասին, դրանում մեղադրելով վրաց ներկայացուցիչ Լորդկիպանիձեին, որն ի հակառակ պայմանագրի, սեպարատ գործողություններ է կատարում, երկու կողմերի համաձայնությամբ արձակված միլիցիոներներին նորից պաշտոն է տալիս՝ առանց հայկական ներկայացուցչի հետ համաձայնեցնելու, հովանավորում այս կան այն ազգության ներկայացուցչին քաղաքական մղումներով, քայլեր չի ձեռնարկում զոնայում անարխիան վերացնելու, որպեսզի առիթ ունենա զորք մտցնելու, և այդ հարցերի կապակցությամբ խնդրում էր միջամտել կանխելու այդ ամենը, զեմստվո մտցնելու վրաց և հայկական ներկայացուցիչների գերագույն հսկողության ներքո՝ մինչև հարցի վերջնական լուծումը[1205]:

Անտեսելով լարվածությունը հայ-վրացական միջպետական մակարդակի ռազմաքաղաքական հարաբերություններում, Վրաստանը չհապաղեց օգտվել 1920 թ. թուրք-հայկական պատերազմով ՀՀ համար ստեղծված ծանր աշխարհաքաղաքական կացությունից՝ իր հավակնություններն իրականացնել Չեզոք գոտու նկատմամբ: Վրացական կողմը դա պատճառաբանեց թուրք-հայկական պատերազմով Լոռուն, և դրանով իսկ պայմանավորված Վրաստանին սպառնացող թուրքական վտանգով, չնայած բազմաթիվ փաստեր անուղղակիորեն ցույց են

[1204] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ – 201, ց. 1, գ. 548, թ. 35, 37:
[1205] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ – 201, ց. 1, գ. 548, թ. 49:

տվել այն գործնական փոխշահավետ հարաբերությունների հաստատման ձգտումը, որը շատ հաճախ դեպի իրար է ուղղորդել Վրաստանին և Թուրքիային, ինչը բացահայտորեն դրսևորվեց Անդրկովկասյան Սեյմի գործունեության ժամանակաշրջանում: Վրացական քաղաքական ռազմավարության մտասևեռումը դեպի Թուրքիա միշտ էլ ակնհայտ է եղել, և այս տեսանկյունից բարեկամության մասին կարգախոսները մնացել են որպես դեկլարատիվ բնույթի, արտաքուստ գեղեցիկ և անպաճույճ կարգախոսներ:

Չեզոք գոտու համար պայքարը իր հերթական փուլը թևակոխեց 1920 թ. նոյեմբերի սկզբներին, երբ Հայաստանի Հանրապետության համար թուրք-հայկական պատերազմի հետ կապված ճգնաժամային ռազմաքաղաքական իրավիճակ ստեղծվեց: Վրաստանի կառավարությունը չեզոք դիրք գրավեց թուրք-հայկական առճակատման ընթացքում: Այսպես, 1920 թ. նոյեմբերի 5-ին ուղիղ հեռագրագծով խոսակցություն է տեղի ունենում գեներալ Մ. Արեշյանի, ՀՀ նախարարապետ Հ. Օհանջանյանի և Երևանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչությանն առընթեր զինվորական ներկայացուցիչ, գեներալ Կարալովի միջև, որում լարված քննարկման է ենթարկվում Չեզոք գոտի վրացական զորքերի մտնելու, իսկ ավելի ճիշտ, ըստ հայկական կողմի ուղղակի հարցապնդման՝ ներխուժման հարցը: Գեներալ Կարալովը հայտնում է, որ ստեղծված պայմանների հետևանքով իրենք որոշել են վրացական զորքերը մոտեցնել Հայաստանի սահմաններին և հույս ունեն, որ հայկական կառավարության կողմից ոչ մի խոչընդոտ չի հարուցվի, միաժամանակ նշելով, որ վիճարկելի տարածքների անձեռնմխելիության պատճառով իր կառավարությունը Հայաստանի կառավարությանը լիիրավ երաշխիքներ է տալիս: ՀՀ նախարարապետը ի պատասխան ընդգծում է, որ այդպիսի հանգամանքներում, երբ թուրքերի հարձակումը շարունակվում է, ո՛չ քաղաքական և ո՛չ էլ ռազմավարական նկատառումները չեն կարող արդարացնել վրացական զորքերի ներթափանցումը Չեզոք գոտի՝ Հայաստանի տարածքի անվիճելի մասը, առանց Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև պաշտպանական դաշինքի կնքման, որը պաշտոնապես առաջարկվել է հայկական կառավարության կողմից: ՀՀ նախարարապետը այս իսկ պատճառով վրացական կողմին առաջարկում էր հետաձգել նախատեսված հարձա-

կումը՝ համաձայնագիր կնքելու համար: Դրա հետ մեկտեղ, ՀՀ նախարարապետը գեներալ Մ. Արեշյանից պահանջում է, որ բանը չհասցվի նրան, որ առաջինը իրենք կրակեն, դա թողնելով վրացիներին, միաժամանակ վստահություն հայտնելով, որ վրացիները չեն համարձակվի կատարել այդ քայլը, գտնելով, որ ամեն դեպքում, վրացական ռազմուժի գերա-կշռության պայմաններում պետք է հնարավորինս զիջողամիտ լինել՝ կարգադրելով վրացական ճնշման ներքո նահանջել, սակայն, այդու-հանդերձ՝ ոչ կամավոր[1206]:

Միաժամանակ, վրացական զորքերը հապճեպ առաջխաղացում կատարեցին դեպի Չեզոք գոտի, ընդհուպ մոտենալով Շահալի կայարանին, չնայած այն համարվում էր ՀՀ վարչատարածքային մաս, և այդ կապակցությամբ 1920 թ. նոյեմբերի 8-ին ՀՀ կառավարությունը բողոքի նոտա ներկայացրեց Վրաստանի իշխանություններին, Վրաստանի նման գործողությունը համարելով հիմնազուրկ ռազմաքաղաքական քայլ, առավել ևս, երբ այդ պահին Թուրքիայի հետ հաստատվել էր զինադադարի վիճակ[1207]: Իր պատասխանում Վրացական կառավարությունը Լոռու Չեզոք գոտու նկատմամբ իր այդ նոր ռազմավարությունը և վրացական զորամասերի ուժեղացումը այնտեղ պատճառաբանեց իբր անվտանգության նկատառումներով և հարկ համարեց բանակցությունների մեջ մտնել Հայաստանի կառավարության հետ՝ առաջարկելով Չեզոք գոտին հանձնել իր տնօրինությանը, պնդելով, որ այն իբր ժամանակավոր բնույթ է կրում և թելադրված է Վրաստանի ռազմաքաղաքական շահերից ու բնավ էլ չի կանխորոշում Չեզոք գոտու հետագա պատկանելիության հարցը[1208]: Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի Ջինվորական ներկայացուցիչ «զորավար» (գեներալ - Վ. Վ.) Կարալովը 1920 թ. նոյեմբերի 11-ին Հայաստանում գործող թուրքական ռազմական ուժերի Արևելյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին ուղղված հեռագրում ընդգծում էր. «Ծանոթանալով ս.թ. նոյեմբերի 8-ին Ձեր կողմից Հայաստանի Հանրապետության զորքերի հրամանատարին ուղարկված նոտային, զինադադարի պայմանների հետ, որոնցում Դուք հարկ եք համարում անդրադառնալ Թիֆ-

[1206] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 200, ց. 1, գ. 602, թ. 84:
[1207] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 232, թ. 59-60:
[1208] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 114, ց. 2, գ. 12, թ. 17:

լիսի նահագի Բորչալուի գավառի տարածքին, որտեղ այդ պայմանների համաձայն զինադադարի ժամկետի ավարտմամբ կարող են վերսկսվել ռազմական գործողությունները, ինչպես և Ալեքսանդրապոլում, ես որպես Հայաստանում Վրացական Հանրապետության ներկայացուցիչ, իմ բողոքն եմ հայտնում և իմ պարտքն եմ համարում պարզաբանել, որ Բորչալուի գավառի Չեզոք գոտին Թիֆլիսի նահանգի նախկին սահմաններում Վրաստանի Ռամկավար Հանրապետութեան կառավարութիւնը համարում է իր հողամասը, որի մասին նա վէճ է ունեցել Հայաստանի կառավարութեան հետ: Եւ խորհրդային Ռուսաստանի հետ կնքուած դաշնագրով այդ հողամասը ճանաչուած է իբրեւ անվիճելի վրացական»[1209]: Դա ակնհայտորեն այդպես չէր, քանզի Վրաստանը ընդամենը մանևրում էր, ձգտելով հետագայում ժամանակավորը մշտական դարձնելու իր մտադրությունը իրողություն դարձնելու մասին, ինչպես դա փորձեց իրողություն դարձնել Ադրբեջանը Արցախում, տեղի Ազգային խորհրդին պարտադրելով ստորագրել 1919 թ. օգոստոսի 22-ի «ժամանակավոր» համաձայնագիրը: Վրաստանը գնալով այդ քայլերին, ամենայն հավանականությամբ քողարկված համաձայնության գալով Թուրքիայի հետ, որպեսզի թուրք-հայկական պատերազմի պարագայում վրացիները չեզոք դիրք գրավեն, դրա դիմաց ստանալով Բորչալուի և Ախալքալաքի գավառները (չնայած, ինչպես նշում է Ալ. Խատիսյանը, Վրաստանի Ներքին Գործերի մինիստր Նոյ Վ. Ռամիշվիլին հերքել է դրանց իսկությունը)[1210], հրաժարվելով Հայաստանի Հանրապետության հետ ռազմաքաղաքական և դիվանագիտական գործակցությունից ընդդեմ արտաքին թշնամիների, վիճելի գոտին հայտարարում էր անվիճելիորեն Վրաստանի տարածք՝ հիմնավորելով այդ իրավունքը Խորհրդային Ռուսաստանի կողմից ճանաչման հիման վրա:

Հայ-թուրքական պատերազմի երկրորդ փուլի վերջում, Ալեքսանդրապոլի անկումից մեկ շաբաթ անց, Հայաստանի կառավարությունը Վրաստանի զորքերին թույլատրեց «ժամանակավորապես» գրավել Չեզոք գոտին, որը բրիտանացիների հեռացումից հետո վերածվեց վրաց-

[1209] Տե՛ս Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 296 -297, 307:

[1210] Տե՛ս նույն տեղում, էջ 307:

հայկական կոնդոմինիումի [համատիրության], որպեսզի իբր թե կանխվի վերջինիս գրավումը թուրքերի կողմից:

1920 թ. նոյեմբերի 10-ին գեներալ Արեշյանը ՀՀ Արտաքին Գործերի նախարար Հ. Օհանջանյանին ուղղված գրության մեջ հայտնում էր, որ ինքը Բեկզադյանից ստացել է հեռագիր նախարարին հանձնելու համար, որում հայտնվում էր այն մասին, որ վրացիները նորից պնդել են համաձայնության գալ, որ իրենց զորքերը գրավեն միայն Չեզոք գոտին: Այնուհետև Արեշյանը ավելացնում էր, որ ինչպես իրեն պատմել է Թոփչյանը, եթե իրենց ողջ ունեցվածքը վտանգի է ենթարկվում, ուրեմն կարելի է ընդունել վրացիների այդ առաջարկությունը և թույլ տալ գրավելու միայն Չեզոք գոտին, բայց նախապես համաձայնության գալ, որ այդ օկուպացիան հետագայում նրանց ոչ մի առավելություն չի տալիս[1211]:

Դաշնակցականներին դրդելով քեմալականների հետ բախման, անգլիացիները չէին խորշում նաև քեմալականներին հանել դաշնակցականների դեմ: 1920 թ. թուրք-հայկական պատերազմում Հայաստանի համար ստեղծված իրավիճակի պայմաններում, Վրաստանն իբր թե իրեն ապահովագրելու նպատակով դիմեց Հայաստանի կառավարությանը առաջարկով՝ վրացական զորքեր մտցնել «Չեզոք գոտի», որպեսզի դրանով իսկ ապահովի Վրաստանի անվտանգությունը:

1920 թ. նոյեմբերի 12-ին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնակատար Սաբախտարաշվիլին ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղված շտապ հեռագրում ի պատասխան նոյեմբերի 8-ի հեռագրի, հայտնում էր այն մասին, որ Վրաստանի Հանրապետության կառավարությունը հաշվի առնելով Քեմալ փաշայի զորքերի տեղաշարժերի հետ կապված վերջին ժամանակները փաստացի ստեղծված դրությունը և հանրապետության պաշտպանությամբ մտահոգված և վտանգով, որ կարող է սպառնալ իրենց ռազմական գործողությունների թատերաբեմի տեղափոխմամբ Հայաստանի և Քեմալի զորքերի միջև Չեզոք գոտուն սահմանակցող Հայաստանի մարզերի անմիջական հարևանությամբ, որոշել են ուժեղացնել զորամասերը Չեզոք գոտու հյուսիսային սահմանում և բանակցությունների մեջ մտնել Հայաստանի կառավարության հետ Բորչալուի գավառի ողջ Չեզոք գոտու զբաղեցման հետ

[1211] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 2, գ. 100, թ. 11:

վրացական զորքերի կողմից, ընդ որում այդպիսի զբաղեցումը բացառապես ռազմական բնույթի նպատակ է հետապնդում և ամենևին էլ չի կանխորոշում Չեզոք գոտու պատկանելիության հարցը այս կամ այն հանրապետությանը: Կ. Սաբախտարաշվիլին հայտնում էր, որ Վրաստանի կառավարությունը առաջարկում է անհապաղ սկսել բանակցություններ՝ համաձայնագիր մշակելու նպատակով Բորչալուի գավառի Չեզոք գոտու զբաղեցման հարցի վերջնական կարգավորման նպատակով[1212]:

Դեռ 1920 թ. պատերազմի սկզբում, երբ թուրքական զորքերը արագ տեղաշարժվելով Կարսի մարզի խորքերում, մեկը մյուսի ետևից գրավեցին Կաղզվանը, Սարիղամիշը, ինչն առաջ բերեց ՀՀ Ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանի ցուցադրական հակազդեցությունը, և վերջինս հայտարարեց, որ «մի 5-6 օրվա մեջ թշնամին կվռնդվի Հայաստանի սահմաններից դուրս»[1213], այդ ընթացքում մենշևիկյան Վրաստանի առաջնորդները հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ճարպկորեն մանևրելով հայերի և թուրքերի միջև, այս անգամ էլ երերուն խոստումներ տվեցին հայկական կողմին, իբր իրենք հայերի կողմն են, պատճառաբանելով այն առումով, թե կռվել քեմալականների դեմ, նշանակում է կռվել բոլշևիզմի դեմ, որովհետև պարզ է, որ այդ երկուսը ընդհանուր շահերով միացած են: Այդ պահը շատ դիպուկ է նկատում Լեոն, որը պարզապես ցույց է տալիս ՀՀ կառավարության անճարակությունը տվյալ ճակատագրական իրավիճակում: Լեոն ուղղակի արձանագրում է պատմաքաղաքական իրավիճակը իր որոշ ուշագրավ մանրամասներով. «Եվ ահա Հայաստանից եկավ Ռուբեն փաշան՝ առաջարկելու, որ Հայաստանն ու Վրաստանը միացնեն իրենց ուժերը թուրքերի դեմ: «Եթե մեզ չօգնեք, - ասել էր նա, - մենք, մենակ մնալով, ստիպված կլինենք դիմել բոլշեւիկներին, նրանց բերել մեզ մոտ (ինչը պարզապես տեղի չունեցավ, քանզի ՀՀ կառավարության ավելորդ և անհեռանկարային դիմադրության հետևանքով ձգձգվեցին Հայաստանի անխուսափելի խորհրդայնացման գործընթացները և բոլշևիկներին դիմելու կարիք չեղավ, ոչ էլ բնավ նման խնդրով դաշնակցական ղեկավար լիդերները դիմեցին նրանց - Վ. Վ.), եւ այդ ժամանակ դուք կմնաք մենակ»: Համաձայնվել

[1212] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 207, թ. 174:

[1213] Լեո, Անցյալից, Եր., «Շեմ» հրատ., 2009, էջ 409:

էին բանակցություններ սկսելու: Վրաստանի պատերազմական մինիստրը գնաց Երեւան, բայց այդ ժամանակ, եթե չեմ սխալվում, Տրապիզոն մեկնեց մի այլ ջոջ մենշեւիկ, որն ավելի ձեռնտու պայմաններ ընդունելով Մուստաֆա Քեմալից՝ նրա հետ դաշնագիր կապեց ընդդեմ հայերի, …նեղը լծված դաշնակցականները հանում են իրենց զորքերը Լոռուց եւ երեք ամիս ժամանակով պայման են կնքում, որ վրացական զորքերը ժամանակավորապես գրավեն այդ տեղերը: Բայց մենշեւիկները գրավելու պես միացնում են այդ բոլոր տեղերը Վրաստանին…»[1214]:

Հայաստանի կառավարությունը 1920 թ. նոյեմբերի 13-ին կապված ժամանակավորապես «Չեզոք գոտի» վրացական զորքեր մտցնելու խնդրի հետ, Թիֆլիսում Հայաստանի և Վրաստանի միջև կնքեց պայմանագիր. «Հայկական հանրապետության վրա Անգորայի կառավարության թուրքական զորքերի հարձակման և Չեզոք գոտուն ու հենց Վրաստանին սպառնացող վտանգի հետ կապված, վերջինիս կառավարության առաջարկով հիշյալ պետությունների լիազոր անձինք՝ Վրաստանի կողմից Գ. Լորդկիպանիձեն և Արտաքին Գործերի մինիստրի օգնական Կ. Սաբախտարաշվիլու, և Հայաստանի կողմից՝ հանրապետության պատվիրակությունը ի դեմս ՀՀ պատվիրակության նախագահ Ստ. Մամիկոնյանի, Տ. Բեկզադյանի և Ս. Խաչատուրյանի կնքեցին հետևյալ համաձայնությունը.

1. Վրաստանի կառավարության առաջարկով Հայաստանի կառավարությունը տալիս է համաձայնություն Չեզոք գոտի վրացական զորքեր մտցնելու վերաբերյալ,

2. Չեզոք գոտում վրացական զորքերի գտնվելը չի առաջացնում ոչ մի նոր իրավունք այդ տարածքի նկատմամբ,

3. Վարչակարգը մնում է նախկին հիմունքներով,

4. Իր մատակարարման համար ամեն մի բան զորքերը գնում են ազատ գներով, չդիմելով բռնագրավումների,

5. Անհրաժեշտության դեպքում թույլատրվում է Հայաստանի Հանրապետությունից փախստականների մուտքը Չեզոք գոտի՝ ընդհանուր առմամբ մինչև 10000 հոգի,

[1214] Լեո, Անցյալից, էջ 409:

6. Հայկական կառավարության և դրա հաստատությունների պետական ունեցվածքը անխոչընդոտ պետք է բաց թողնվի Չեզոք գոտի, ընդ որում այդ ունեցվածքը լիովին մնում է Հայկական հանրապետության սեփականություն և վերջինիս պահանջով պետք է նրան վերադարձվի,

7. Այդ համաձայնության ճշգրիտ իրագործմանը վերահսկելու համար Չեզոք գոտում վրացական հրամանատարությանն առընթեր պետք է գտնվի Հայկական կառավարության հատուկ լիազորված անձ.

8. Տվյալ համաձայնությունը կնքվում է երեք ամիս ժամանակով, որից հետո այն կարող է երկարաձգվել փոխադարձ համաձայնությամբ: Եթե նոր համաձայնությունը չկայանա, ապա տվյալ համաձայնությունը կորցնում է իր ուժը, զորքերը դուրս են բերվում և վերականգնվում է հին դրությունը,

9. Համաձայնությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից[1215]: Համաձայնագիրը կնքվում է ընդամենը երեք ամսով, որը լրանալուց հետո կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող էին այն երկարաձգել, հակառակ պարագայում, այն կորցնում էր իր իրավական ուժը, վրացական զորքերը դուրս էին բերվում, և Չեզոք գոտում իրավակարգը վերականգնվում էր[1216]:

Վրաստանի կառավարությունը շատ օպերատիվ էր գործում, ամեն մի առիթ և ցանկացած հնարավորություն տեղին օգտագործելով, ծառայեցնելով Վրաստանի շահերին, ինչը նրա կողմից արդարացված էր: Այս հանգամանքը տեղին է բնորոշել հանրահայտ պատմաբան Լեոն. «…հայ-թուրքական պատերազմի ժամանակ նեղն ընկած դաշնակցականները Լոռու հայկական մասը, սկսած Քոլագիրան կայարանից, երեք ամիս ժամանակով տվել էին մենշեւիկներին, իսկ սրանք վերցրել եւ միացրել էին Վրաստանին: Այս բանը որպես թե հենց հայ ժողովրդի ցանկությամբ էր կատարվել: Վրաց կառավարության անդամները շրջում էին գյուղերում, հայերի համախոսական էին ստանում Սահմանադիր ժողովի անունով, թե իրենք ուզում են եւ խնդրում են լինել Վրաստանի հպատակ: Եվ երբ Խորհրդային Հայաստանի կառավարու-

[1215] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ- 275, ց. 5, գ. 207, թ. 180-181: iberiana.wordpress.com/armenia-georgia / marxulia-interviu/:

[1216] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 340 -341:

թյունը մենշեւիկներից պահանջեց կատարել դաշնակցականների հետ կնքած պայմանագիրը, մենշեւիկները պատասխանեցին մերժումով: Հիմա Լոռին ցույց էր տալիս, թե ինքն այնքան էլ հեշտ կլլվելի [կուլ տալու- Վ.Վ.] կտոր չէ: Նա ապստամբել էր եւ դուրս վռնդել մենշեւիկյան զորքերը»[1217]:

Եվ արդեն 1920 թ. նոյեմբերի 13-ին վրացական զորքերը կառավարությունից ստացած հրահանգի համաձայն սկսեցին ժամանել Չեզոք գոտի, և վրացական իշխանությունների կողմից տեղամասային կոմիսարներին տրվեցին գրավոր հրահանգներ: Նրանց կողմից շեշտվեց, թե իբր վրացական զորքերը Լոռու Չեզոք գոտի են մտնում բնակչությանը թուրքական զորքերի ոտնձգություններից պաշտպանելու համար, միաժամանակ ռազմական դրություն հայտարարելով՝ ողջ իշխանությունը ենթարկել գեներալ-նահանգապետին[1218]:

Ինչպես տեսնում ենք, թուրք-հայկական պատերազմի երկրորդ փուլում, Ալեքսանդրապոլի անկմանը անմիջապես հաջորդող ժամանակահատվածում, մեկ շաբաթ անց ՀՀ կառավարությունը այն բանից հետո, երբ Վրաստանի զորքերին թույլատրեց ժամանակավորապես զբաղեցնել Լոռու Չեզոք գոտին, որը բրիտանացիների հեռացումից հետո վերածվեց հայ-վրացական համատիրության՝ իբր թե այդ տարածքը թուրքերի ոտնձգություններից պաշտպանելու նպատակով, վրացական կողմին չբավարարեց: Արդեն նոյեմբերի 16-ին վրացական զորամասերը ոչ միայն գրավեցին համատիրության տարածքը, այլև վրաց-հայկական ռազմաքաղաքական լարվածության նոր սադրիչ վիճակ ստեղծեցին՝ առաջ շարժվելով՝ դուրս եկան նախկին Թիֆլիսի նահանգի հին սահմանագծի վրա, որը Վրաստանում երկու հարավկովկասյան պետությունների միջև համարվում էր վիճարկելի և արդարամիտ սահմանագիծ: Այսպիսով, իրենց վերահսկողության տակ վերցնելով Բորչալուի գավառի նախկինում վիճարկելի մասը, վրացական իշխանությունները կարճ ժամկետում անցկացրին հանրաքվե, որի հիման վրա Բորչալուի գավառի Լոռու տեղամասը, այսինքն կոնդոմինիումը, և այն գոտին, որը Հայաստանին էր տրվել 1919 թ. հունվարի 17-ի պայմանագրով, անեքսիայի ենթարկվեց Վրաստանի մենշևիկյան հանրապետության

[1217] Լեո, Անցյալից, Եր., «Շեմ» հրատ., 2009, էջ 417:
[1218] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 114, ց. 2 , գ. 12, թ. 4:

կողմից: Հանրաքվեն, անշուշտ, ոչ քաղաքավարի քայլ էր Հայաստանի Հանրապետության նկատմամբ, սակայն փաստ էր, որ հերթական անգամ վրաց-հայկական սահմանագիծը վրացական կողմի կամայական գործողությունների արդյունքում փոխվեց հօգուտ Վրաստանի և այդ «սահմանագծումը» այդպես մնաց գրեթե մեկ տարի[1219]:

Այսպիսով, Վրաստանն իր այս խարդախ քաղաքական գործելակերպով Հայաստանի Հանրապետությանը կանգնեցնում է իրողության առաջ, իսկ վերջինս էլ ելնելով հայկական հանրապետության համար ստեղծված ծանրագույն ռազմաքաղաքական կացությունից, հարկադրված գնում է բանակցությունների մենշևիկյան Վրաստանի հետ, և նոյեմբերի 13-ի համաձայնությամբ թույլատրվում է վրացական զորքերի մուտքը Չեզոք գոտի, սակայն առանց կաշկանդիչ նախապայմանների, կառավարությունը շարունակելու էր համատեղ լինել, իսկ ամենակարևորը, այն կնքվել էր ընդամենը երեք ամիս ժամանակով: Չեզոք գոտում մշտապես լինելու էր ՀՀ լիազոր-ներկայացուցիչ. 1920 թ. նոյեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հայտնի քաղաքական գործիչ, իրավաբան Գևորգ Խատիսյանը [1879-1935 թթ.] նշանակվեց Բորչալուի գավառի Չեզոք գոտու բարձրագույն վրացական հրամանատարությանը առընթեր հատուկ լիազորված անձ, նստավայր ունենալով Սանահինը: ՀՀ ներկայացուցիչը պետք է հետևեր Վրաստանի և Հայաստանի Հանրապետության մեջ կնքված 1920 թ. նոյեմբերի 13-ի համաձայնության ճիշտ իրագործմանը և խախտումների պարագայում այդ մասին տեղեկացներ ՀՀ կառավարությանը: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Գ. Խատիսյանը որոշ ժամանակ շարունակեց իր արգասաբեր գործունեությունը, ներկայացնելով Հայաստանի խորհրդային կառավարությանը Չեզոք գոտում: Խորհրդային Հայաստանի իշխանությունները գնահատեցին նրա հարուստ փորձը և 1921 թ. հունվարի սկզբին Թիֆլիսում նրան ընդգրկեցին Խորհրդային Հայաստանի դիվանագիտական հավատարմատարին առընթեր հանձնաժողովի կազմում, որը պետք է զբաղվեր Լոռու

[1219] Кадишев А. Б., Интервенция и гражданская война в Закавказье, стр. 368:

Չեզոք գոտու և նրա բնակչության մասին տեղեկատվության հավաքմամբ[1220]:

1920 թ. վերջին թուրք-հայկական պատերազմի հետևանքով առաջացած ծանր ռազմաքաղաքական և տնտեսական իրավիճակում վրացական կողմը օգտվելով ՀՀ ռազմական անհաջողություններից՝ սկսեց պարբերաբար խախտել 1920 թ. նոյեմբերի 13-ի դրույթները: Վրաստանի կառավարության անմիջական հրահանգներով ավելացվեց վրացական զորամասերի քանակը: Գործնականում վրացական կողմը հավատարիմ չմնաց համաձայնագրի տառին ու ոգուն, և շուտով օգտվելով ՀՀ համար ստեղծված ցայտնոտային ռազմաքաղաքական իրավիճակով պայմանավորված բարդույթներից, գործնականում խախտեց համաձայնագիրը, պահանջները մեծացան, ավելի վստահ զգաց իրեն, և վրացական զորքերին հրահանգվեց գրավել նաև Լոռու Չեզոք գոտու տարածքից դուրս գտնվող մի շարք բնակավայրեր, և արդյունքում՝ վրացական զորամասերը մտան Ջալալօղլի, Լորուտ, Քոլագի[ե]րան, Շահալի կայարան և մի շարք այլ հայկական բնակավայրեր, հայկական կողմը մեկուսացվեց ղեկավարումից, հայկական բնակչության նկատմամբ սկսվեց բռնագրավումների կոշտ և ոչնչով չհիմնավորված քաղաքականություն: Վրացական կողմը անգամ դիմեց խաբեության, պնդելով, թե իբր Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարը անձնապես տվել է իր համաձայնությունը, սակայն Վրաստանի զորքերի Գլխավոր շտաբի պետ, գեներալ Զախարիաձեի կողմից հրամցված այս ամբաստանությունը կտրականապես ժխտվեց Տ. Բեկզադյանի կողմից: Դեռ ավելին. Վրաստանի իշխանություններն իրենց այնքան վստահ էին զգում, որ արդյունքում, նրանց կողմից կոպտորեն ոտնահարվում է հենց 1920 թ. նոյեմբերի 13-ի համաձայնագրի տառն ու ոգին, Չեզոք գոտու կառավարումից հեռացվում է ՀՀ լիազոր ներկայացուցիչը, Լոռիում հաստատվում է վրաց գեներալ-նահանգապետություն[1221], որի գլուխ նշանակվում է ոմն Դոլիձե[1222]: Սովորական երևույթ են դառնում պարենային բռնագրավումները Լոռիում, բռնաճնշումները հայ գյուղացիության նկատ-

[1220] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 114, ց. 2, գ. 12, թ. 22:

[1221] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 373: Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 602, թ. 422: գ. 607, թ. 214-215:

[1222] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 223, թ. 132-133:

մամբ: Ավելին, ինչպես վկայում է Ալ. Խատիսյանը, 1920 թ. նոյեմբերի 14-ին «խորհրդակցութիւն ունեցանք Վրաց կառավարութեան հետ, որ կը պահանջէր զիջիլ Վրաստանին՝ Ախալքալաքի և եւ Բորչալուի գաւառները այն պատրուակով, թէ մենք պիտի ստանանք Թրքահայաստանի վեց վիլայէթներն եւս, հետեւաբար հողի կարիք պիտի չունենանք: Մենք վերապահ դիրք բռնեցինք»[1223]:

Ի պատասխան, ՀՀ կառավարությունը ի դեմս Տ. Բեկզադյանի մի շարք բողոք-նոտաներ ներկայացրեց Վրաստանի մենշևիկյան կառավարությանը, իսկ 1920 թ. նոյեմբերի 17-ին պահանջեց վրացական զորքերն անհապաղ դուրս բերել հայկական տարածքներից, եզրակացնելով, որ «բարեկամ» Վրաստանի Հանրապետությունը չի օգտվի Հայաստանի Հանրապետության համար ստեղծված ծանր ռազմաքաղաքական կացությունից[1224] :

Սակայն ռազմաքաղաքական իրավիճակի հետագա աննպաստ զարգացումը հարկադրեց Հայաստանի Հանրապետությանը գործնականում հաշտվել ստեղծված իրավիճակի հետ, միաժամանակ փորձելով արդյունավետ հակաքայլեր ձեռնարկել, որոնք իրենց մեջ լարվածություն և տագնապ ունեին: Հայ-վրացական ռազմաքաղաքական փոխհարաբերությունները գործնականում փակուղային էին, քանզի Վրաստանն ամեն ջանք գործադրում էր սեփական հարցերը լուծել, անհրաժեշտության դեպքում հանգիստ լքելու, իր այսպես կոչված, հայ բարեկամներին, չխորշելով անգամ քողածածկված եզրեր որոնել թուրքերի հետ: Հայաստանի Հանրապետությունը գործնականում մեկուսացված վիճակում էր գտնվում, և հայ-վրացական ռազմաքաղաքական համագործակցության ուղղությամբ ամեն մի քայլ պարզապես դատապարտված էր մնալ թղթի վրա: 1920 թ. նոյեմբերի 19-ին Տ. Բեկզադյանն իր բողոքն հայտնեց Չեզոք գոտում վրացական գեներալ-նահանգապետություն մտցնելու դեմ, սակայն նոյեմբերի 23-ին ստահոդ նոտա ստացավ այն մասին, թե վրացական իշխանությունների կողմից ոչ մի գեներալ-նահանգապետություն Չեզոք գոտում չի հաստատվել, չնայած այդ մասին ՀՀ կառավարությունն իր տրամադրության տակ ուներ նաև նոյեմ-

[1223] Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 114:

[1224] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 114, ց. 2, գ. 11, թ. 1: Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 602, թ. 371, 380, 391-392:

բերի 13-ի վրաց կառավարության N 586 հրահանգը[1225]: 1920 թ. նոյեմբերի 23-ին վրացական զորամասերը կրկին հատում են Հայաստանի սահմանը, առաջ բերելով հայկական զորքերի հրամանատարի՝ Հայաստանի Հանրապետության հատուկ լիազորված անձի և Տ. Հ. Բեկզադյանի վրդովմունքը, չնայած դեռ նոյեմբերի 22-ին Կ. Սաբախտարաշվիլին հավաստիացրել էր Տ. Բեկզադյանին, որ վրացական զորքերին հրաման է տրված դուրս չգալ Չեզոք գոտու շրջանակներից, և սահմանն անցած հետախույզներին կարգադրվել է ետ վերադառնալ[1226]:

Սակայն Չեզոք գոտում այդ նույն ժամանակ վրացիների կողմից անօրինականություններ էին կատարվում և վրացիք չարաշահում էին 1920 թ. նոյեմբերի 13–ի պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Այսպես, ինչպես պարզվում է Լոռու Չեզոք գոտում հայկական կողմի ներկայացուցիչ Վարդապետյանի 1920 թ. նոյեմբերի 25-ի հեռագրից՝ ուղղված ՀՀ Ներքին Գործերի նախարարին, փաստեր էին ներկայացվում Չեզոք գոտում վրացական կողմի ներկայացուցիչների կողմից անարխիայի ստեղծման մեջ, դրա համար անմիջական պատասխանատու համարելով հատկապես վրացական կոմիսար Լորդկիպանիձեին, որը գիշերը կամ վաղ առավոտյան բաց էր թողնում ձերբակալված գող-ավազակներին, ծառայության մեջ ընդունելով գողության համար ծառայությունից ազատված նախկին միլիցիոներներին, դրանով իսկ բնակչության մեջ անվստահություն սերմանելով: Այս դիտարժան գրությամբ Վարդապետյանը խնդրում էր Չեզոք գոտի ուղարկել խառը վրաց-հայկական քննչական հանձնաժողով, գտնելով, որ տեղամասում ամերիկյան գեներալ-նահանգապետի ավելի քան երկուշաբաթյա ներկայությունը վրացական ծառայության թարգմանիչ սպայի հետ ոչ մի բարելավում չի մտցրել: Վարդապետյանը ՀՀ Ներքին Գործերի նախարարից խնդրում էր շուտափույթ ուղարկել հանձնաժողով, հակառակ դեպքում խնդրելով ընդունել իր հրաժարականը[1227]:

[1225] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 374:

[1226] Տե՛ս там же, стр. 14, 374-375:

[1227] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), էջ 141-142:

Այդ ընթացքում կողմերի միջև մի շարք նոտաներ են փոխանցվում, որոնք ընդգծում են պահի լարվածությունը: Այսպես, արդեն 1920 թ. նոյեմբերի 23-ին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Կ. Սաբախտարաշվիլին Տ. Բեկզադյանից պահանջում էր իրեն ներկայացնել նոյեմբերի 18-ին Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետությանը պարտադրված զինադադարի մասին փաստաթուղթը, որի պատասխանին չսպասելով, նոյեմբերի 25-ին Սաբախտարաշվիլին կրկնում է իր հարցապնդումը. «Նոյեմբերի 23-ի նոտայով ես պատիվ ունեցա Ձեզ խնդրելու ինձ հայտնել թուրքական տեքստը, որը ընդունվել է Հայաստանի կառավարության կողմից որպես թուրքերի հետ զինադադարի հիմք: Ձեզանից պատասխան չստանալով, բայց հավաստի աղբյուրներից իմացել ենք, որ թուրքական վերջնագիրը պարունակում է հետևյալ դրույթները. 1) թուրքական ուժերի կողմից Բորչալուի գավառի հարավարևմտյան մասի գրավումը (Վորոնցովկա գյուղից մինչև Նալբանդ,) 2) Հայաստանի կողմից Բորչալուի գավառի հարավային մասից դուրս գալը, 3) թույլատրել չեզոք գոտի [հայ-վրացական Չեզոք գոտի] թուրքական վերահսկող հանձնաժողով: Հայաստանի կառավարությունը ընդունելով և արդեն կատարելով այդ պայմանները, ոտնահարել է Վրաստանի կառավարության իրավունքները: Իմ կառավարության հանձնարարությամբ հայտարարում եմ բողոքս Հայաստանի կառավարության այդ քայլի դեմ: Այն ստիպում է իմ կառավարությանը անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու իր սահմանների պաշտպանության ուղղությամբ Բորչալուի գավառում»[1228]:

Այդուհանդերձ, ՀՀ կառավարությունը համառորեն փորձում էր ինչ-որ ելքեր որոնել՝ կարգավորելու հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները: Բայց չէր ստացվում: Ինչպես վկայում է Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարի պաշտոնակատարի պաշտոնում բեղմնավոր գործունեություն ծավալած Միքայել Թումանյանը (1920 թ. հունիսի 13 - դեկտեմբերի 22, իսկ գործնականում տարբեր պաշտոններում նա աշխատել է և՛ Արշակ Ջամալյանի, և՛ Լևոն Եվանգուլյանի, և՛ Տիգրան Բեկզադյանի օրոք) փաստում է 1920 թ. նոյեմբերի 25-ին (N 10253) Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի կող-

[1228] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 215, թ. 3:

մից ՀՀ կառավարությանը ներկայացրած բողոքագրի մասին, որում դժգոհություն էր հայտնվում, որ ՀՀ կառավարությունը առանց Վրաստանի կառավարությանը իրազեկելու և համաձայնության, ընդունել է թուրքական հրամանատարության կողմից ուղղակիորեն պարտադրված նոյեմբերի 8-ի զինադադարի պայմանները՝ թույլ տալով թուրքական զորամասերի կողմից դատարկել Բորչալուի գավառի հարավարևմտյան և հարավային մասը՝ Վորոնցովկա գյուղից մինչև հայկական Նալբանդ գյուղը և թույլատրել թուրքական հսկիչ հանձնաժողովի մուտքը Սանահին կայարան, որով էապես ոտնահարվել են Վրաստանի շահերը, ստեղծելով լուրջ վտանգ Վրաստանի կենսական շահերի ապահովման տեսանկյունից: Ուստի ելնելով դրանից, Վրաստանի կառավարությունը հարկադրված էր համարում ազդարարել, որ ստեղծված իրավիճակում իրենց շահերը պահանջում են ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որոնք ըստ վրացական կողմի հավաստիացման՝ ուղղված չէին Հայաստանի Հանրապետության դեմ[1229]: 1920 թ. նոյեմբերի 26-ին Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Բեկզադյանը կրկին բողոքի նոտա է ներկայացնում Վրաստանի Հանրապետության Արտաքին Գործերի մինիստրին վրացական զորքերի՝ Չեզոք գոտու հարավային սահմանից ներխուժելու և նոյեմբերի 23-ին վրացական զորքերի Շահալի ու Փամբակ մտնելու կապակցությամբ, որոնք գտնվում էին Հայաստանի Հանրապետության անվիճելի տարածքում. «Միանգամայն անբացատրելի համարելով Ձեր պաշտոնական հավաստիացումների այդպիսի անհամապատասխանությունը Ձեր զորքերի գործողությունների հետ, որոնք, անկասկած, առաջ են շարժվում ոչ առանց բարձրագույն իշխանությունների կարգադրությունների, ես ինձ պարտավոր եմ համարում ամենավճռական բողոք հայտնել ձեր զորքերի կողմից Ձեր և իմ կառավարության միջև կնքված սույն՝ նոյեմբերի 13-ի համաձայնագրի այդպիսի խախտման դեմ, ինչպես նաև իմ ներկայացրած Ռեսպուբլիկայի սուվերեն իրավունքների խախտման դեմ, և պնդում եմ վրացական զորքերը այդ կետերից անհապաղ ետ կանչելու վրա, որպեսզի չհարուցվի իմ կառավարության անխուսափելի ենթադրություններն այն մասին, որ Ձեր զորքերի այդ անցումը Հայաստանի տերիտորիա ոչ այլ

[1229] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 376: Տե՛ս նաև ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 215, թ. 2:

ինչ է, քան բացահայտորեն անբարյացակամ մի ակտ, որը նպատակ ունի օգտագործել հարևան ռեսպուբլիկայի ժամանակավոր ծանր դրությունը»[1230]: Եվ այդպես շարունակ վրացական իշխանություններն անընդմեջ մանևրում էին՝ իրագործելու իրենց ծրագրերը հայկական Լոռիում:

Ի պատասխան ՀՀ կառավարության 1920 թ. նոյեմբերի 26-ի (N 4976) նոտայի և ի հաստատումն իրենց կողմից Հայաստանի իշխանություններին հասցեագրված նոյեմբերի 25-ի (N 10253) նոտայում արտահայտված նկատառումների, Վրաստանի Հանրապետության Արտաքին Գործերի մինիստր Կ. Սաբախտարաշվիլին ընդգծում էր, որ ինքն իրեն թույլ է տալիս կրկին հայտարարել այն մասին, որ Հայաստանի կառավարության կողմից թուրքական ուլտիմատումի պայմանների կատարումը էապես խախտում է Վրաստանի Հանրապետության իրավունքները և շահերը Բորչալուի գավառում, առաջ բերելով նոր հանգամանքներ, որոնք արմատապես փոխել են այնտեղ գոյություն ունեցող դրությունը: Այնուհետև Կ. Սաբախտարաշվիլին սույն նոտայում հաստատագրում էր, որ այդ հանգամանքները հարկադրել են իր կառավարությանը ձեռնարկել մի շարք բացառապես ռազմավարական բնույթի միջոցներ, որոնք նպատակ ունեն պաշտպանել Վրաստանի սահմանները և նրա բնակչությանը, ինչպես նաև իրենց շահերը Բորչալուի գավառում, և դրանք ամենևին չեն կարող դիտարկվել որպես իրենց բարեկամ Հայաստանի դեմ ուղղված գործողություններ: Վերջում Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրը անհրաժեշտ էր համարում հաստատագրել, որ իր կառավարությունը խիստ կերպով կանգնած է իրենց կողմից ընդունված բոլոր վիճելի հարցերի համաձայնության միջոցով լուծման կամ արբիտրաժի դիրքորոշման վրա և բոլորովին էլ չդիտարկել իրենց միջոցառումները Բորչալուի գավառում որպես գործողություններ, որոնք Վրաստանի համար ստեղծում են նոր իրավունքներ այդ գավառում: Վերը նշվածից ելնելով, Կ. Սաբախտարաշվիլին նույնիսկ առանց երկմտանքի և ինքնագոհ հայտարարում էր, որ ինքն իր պարտքն է համարում վճռականորեն հերքել ՀՀ կառավարության N 4976 նոտայում

[1230] Տե՛ս Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 1960, էջ 398:

արտահայտված առաջարկությունները, որոնք իր՝ Վրաստանի կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումները համարում էր քայլեր, որոնք հաշվարկված էին ի օգուտ իրենց բարեկամ Հայաստանի Հանրապետության համար[1231], որը ժամանակավորապես հայտնվել էր ստեղծված ծանր դրության մեջ:

1920 թ. դեկտեմբերի 1-ին ի պատասխան հայկական կողմից ներկայացված մեղադրանքների և նոյեմբերի 26-ի նոտայի, Կ. Սաբախտարաշվիլին հերքում է ներկայացված մեղադրանքները և փորձում իրերը այնպես ներկայացնել, թե իբր Բորչալուի գավառում ձեռնարկված քայլերը բխել են միայն և միայն Վրաստանի ինքնապաշտպանության հրատապ շահերից, և ակնհայտ էր, որ Վրաստանի կառավարությանը արդեն չէր բավարարում 1920 թ. նոյեմբերի 13-ի համաձայնագիրը, որով թույլատրվել էր երեք ամսով վրացիներին մտնել Լոռու Չեզոք գոտի, յուրովի կրկնելով 1918 թ. Վրաստանի կողմից ներկայացված հողային պահանջները, որի մասին տեղեկանում ենք հայ-թուրքական չեզոք գոտու կոմիսար Մելիքովի՝ Վրաստանի զինված ուժերի հրամանատարին հասցեագրված հեռագրից, որում նշվում էր, որ նոյեմբերի 23-ին վրացական զորամասերը խախտել են նոյեմբերի 13-ի հայ-վրացական համաձայնագիրը և մտել են Հայաստանի տարածք[1232]: Կապված վրացական անօրինականությունների և Լոռու Չեզոք գոտին ռազմական բռնաճնշումների մեթոդներով հայաթափ անելու վրացական իշխանությունների քաղաքականության հետ, հիմք ընդունելով ՀՀ նախարարապետի զեկուցումը, Նախարարարների խորհրդի 1920 թ. նոյեմբերի 27-ի նիստում որոշվեց միջոցներ ձեռնարկել Լոռու Չեզոք գոտուց և Ջալալօղլուց ժողովրդի գաղթն արգելելու[1233]:

Եվ վերջապես, նոյեմբերի 30-ին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Տ. Բեկզադյանին ուղարկված հեռագրում հայտնվում էր վրացական իշխանությունների կողմից Լոռվա Չեզոք գոտու հարցում հայ-վրացական նոյեմբերի 13-ի համաձայնագրի բազմաթիվ խախտումների մասին. «Ջալալօղլու հեռագրատունը գրավված է վրացիների կողմից, հայ ծառայողներն արձակված են, նրանց տեղը նշանակված են

[1231] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 275, ց. 5, գ. 215, թ. 3:
[1232] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 114, ց. 2, գ. 12, թ. 4-9:
[1233] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 146ա, թ. 268-269:

վրացիները: Կատարվում են բռնագրավումներ: Ուժով խուժում են տները, ապրում այնտեղ և սնվում են առանց վճարելու: Անձամբ տեսնվեցեք կառավարության նախագահի հետ, բողոքեցեք և պարզեք նրանց մտադրությունը»[1234]: Տ. Բեկզադյանը կատարում է հարցապնդումը, սակայն անարդյունք, և հետագա իրադարձություններն իրենց ամենակուլ երախի մեջ են առնում Հայաստանը և փաստում մոտալուտ անկման մասին:

Սակայն մենշևիկյան Վրաստանի կառավարությունը համառորեն շարունակեց իր նկրտումները Լոռու Չեզոք գոտում և արդեն նոյեմբերի վերջին ընդարձակեց իր անօրինական ռազմաքաղաքական ձեռնարկումները հայկական Լոռում, վրացական զորքերը գրավեցին Ալավերդու շրջանի գյուղերը, Ջալալօղլին [Ստեփանավանը] և շարժվեցին դեպի Ղարաքիլիսա, բացահայտորեն խախտելով հայ-վրացական 1920 թ. նոյեմբերի 13-ի համաձայնագրի բոլոր կետերը: Դրա հետ մեկտեղ տենդագին քարոզչության և մշտական սպառնալիքների ներքո, բնակչության նկատմամբ բռնարարքների, պարենային բռնագրավումների միջոցով ահաբեկելով, Վրաստանի իշխանությունները տեղի հայ բնակչությանը պարտադրել էին վրացական քաղաքացիություն ընդունել:

Ի պատասխան, Լոռվա բոլոր գյուղերում բոլշևիկների նախաձեռնությամբ հրավիրվեցին հասարակական ժողովներ, որոնց մասնակիցները միահամուռ ցանկություն հայտնեցին վերամիավորվել մայր հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի հետ:

Ինչպես պարզ երևում է, հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում վառոդալիցք էր կուտակվել, հակասությունները չէին հաղթահարվում, ընդհանուր մտահոգությունը օրեցօր բարդացող դրության հետ՝ չէր վերանում:

1920 թ. նոյեմբերի 27-ին ՀՀ կառավարության նիստում կրկին քննարկվեց հայ-վրացական հարաբերությունների մասին հիմնախնդիրը: ՀՀ Վարչապետի զեկուցման մեջ կար ընդհանուր մտահոգություն ստեղծված իրավիճակի վերաբերյալ: Ըստ այդմ, ելնելով իրավիճակի խոր և բազմակողմանի հաշվառումից, որոշում ընդունվեց արգելել հայ բնակչության արտահոսքը Չեզոք գոտուց և Ջալալօղլուց[1235]:

[1234] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 200, ց. 2, գ. 100, թ. 54:
[1235] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 206, ց. 1, գ. 112, թ. 239:

Հայաստանի Հանրապետության խաղաղ խորհրդայնացումից հետո մենշևիկյան Վրաստանը շարունակեց Չեզոք գոտու օկուպացման իր քաղաքականությունը, չմոռանալով Լոռու խնդրում իր հավակնոտ մտադրությունների իրականացման մասին, սակայն այս անգամ հանդիպեց Խորհրդային Հայաստանի կոշտ կեցվածքին:

Հայաստանի «դաշնակցական» հանրապետության խորհրդայնացումից հետո Վրաստանի մենշևիկյան կառավարությունը չփոխեց իր վարքագիծը Լոռու Չեզոք գոտու նկատմամբ, պատրաստակամություն չդրսևորեց հոժարակամ իր զորամասերը դուրս բերել Չեզոք գոտուց, այլ ընդհակառակը, ձգտում էր օրինականացնել Չեզոք գոտու բռնազավթումը. «Հայաստանի հեղկոմի տեղեկություններով, Վրաստանի կառավարության անդամ Չխեիձեն Վրաստանի Սահմանադիր ժողովի հինգ անդամների հետ Չեզոք գոտում ֆիզիկական ուժի ճնշման ներքո կազմակերպվող հանդիպումներում բնակչությանը պարտադրում է բանաձևեր ընդունել Վրաստանին միավորվելու օգտին: Չեզոք գոտու խորհրդային վարչությունն ապօրինաբար ձերբակալվում և ուղարկվում է Քութայիսի բանտ», - վկայում է Բաքվի «Կոմունիստը»[1236]: Ռազմաքաղաքական լարվածությունը Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև խորանում է՝ կապված վրացական իշխանությունների կողմից հայ բնակչության շրջանում անցկացվող անհիմն և ոչ իրավական բնույթի զորակոչերով: 1920 թ. դեկտեմբերի 1-ին Վրաստանի կառավարությունը Բեկզադյանին հասցեագրված նոտայում պնդում էր, որ իրենք հարկադրված են իրենց երկրի պաշտպանության շահերից ելնելով Բորչալուի գավառում միջոցառումներ ձեռնարկել, սակայն նաև հավաստելով (իսկ դա իրավիճակից էր բխում՝ կապված տարածաշրջանում բոլշևիկյան ռազմաքաղաքական գործոնի ուժեղացման հետ), միաժամանակ շարունակելով ամուր կանգնած մնալ իրենց կողմից ընդունված բոլոր վիճելի հարցերի խաղաղ լուծման դիրքորոշման սկզբունքի վրա՝ համաձայնության կամ արբիտրաժի միջոցով և ամենևին էլ Բորչալուի գավառում ձեռնարկված միջոցառումները չեն համարում որպես

[1236] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 1022, ց . 4, գ. 82, թ. 5:

գործողություններ, որոնք Վրաստանի համար ստեղծում են նոր իրավունքներ այդ գավառում և այլ հայկական տարածքներում[1237]:

1920 թ. դեկտեմբերի 2–ի Երևանի համաձայնագիրն իր շերտանստվածքներն է ավելացնում հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններին, նոր բովանդակությամբ, նոր սպասելիքներով հագեցնում սահմանատարածքային վեճի գործընթացը: Այդ համաձայնագրով, Խորհրդային Հայաստանի տարածքի անվիճելի մասը պետք է լինեին ըստ օգոստոսի 10-ի համաձայնության, նաև Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի Հանրապետության տիրապետության տակ էին գտնվում մինչև 1920 թ. սեպտեմբերի 28-ը[1238], որի տակ պետք է հասկանալ՝ նախկին Բորչալուի գավառի այն մասը, որը տարածվում էր Ձորագետից անմիջապես հարավ՝ մինչև նախկին Երևանի նահանգի հյուսիսային սահմանը, ուր կային ավելի քան 26 հայկական բնակավայրեր: Այսինքն, համաձայնագրով ՀԽՍՀ տարածքային կազմում ընդգրկվելու էին ներկայիս ՀՀ Լոռու մարզի Ալավերդու և Ստեփանավանի տարածքների հարավային, Վանաձորի հյուսիսային և Տաշիրի հարավարևմտյան հատվածները՝ ընդհանուր առմամբ շուրջ 1060 քառ. կմ տարածությամբ[1239]:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը իշխանության գալու առաջին իսկ պահից, խորապես հաշվառելով ստեղծված բարենպաստ իրավիճակի առանձնահատկությունները, սկսեց պայքարել մենշևիկյան Վրաստանի կողմից ապօրինի գրաված տարածքները Հայաստանին վերադարձնելու գործընթացը, միաժամանակ բողոքելով վրացական իշխանությունների անօրինականություններից և բռնագրավումների քաղաքականությունից Լոռու հայկական գյուղերում, որտեղ կողոպուտը և սանձարձակությունները դարձել էին ամենօրյա սովորական

[1237] Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., стр. 378:

[1238] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 533, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), էջ 383:

[1239] Տե՛ս Խաչատրյան Կ., Բադալյան Գ., ՀԽՍՀ տարածքի և սահմանների ձևավորումը (1920 թվականի դեկտեմբեր –1922 թվականի սկիզբ), Հայոց պատմության հարցեր. Գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2013, էջ 177, 182-183:

երևույթ, միաժամանակ ընդգծելով այդ գյուղերի բնակչության ցանկությունը՝ վերամիավորվել մայր հայրենիքին[1240]:

1920 թ. դեկտեմբերին Լոռու Պրիվոլնոյե, Գյառգյառ (Պուշկինո), Վորոնցովկա (Տաշիր), Նովոպոկրովկա, Նովոմիխայլովկա և մի շարք այլ գյուղերում տեղի են ունենում մարդաշատ ժողովներ, որոնցում հայ գյուղացիները խստորեն դատապարտում են Վրաստանի իշխանությունների ու զորքերի կամայականությունները և բռնարարքները, համատարած ալան-թալանը հայկական գյուղերում, և դրանից ելնելով, բազմաթիվ դիմումագրեր են հղվում Խորհրդային Հայաստանի և բոլշևիկյան Ռուսաստանի իշխանություններին՝ օգնության խնդրանքով Կարմիր բանակի աջակցությամբ Լոռուց դուրս շպրտել վրացական զորամասերը և Լոռին վերամիավորել Հայաստանի հետ[1241]: Կարելի է ասել, որ այդ գործընթացների ողջ ընթացքում Լոռու հայկական բնակչությունը նախապատրաստվեց այդ խնդրի իրագործման համար, օգնություն ստանալով Ղարաքիլիսայի գավառային, Հայաստանի իշխանությունների և կուսկազմակերպությունների կողմից: Հայկական գյուղերում կազմակերպվեցին զինված խմբեր, որոնց ընդհանուր թիվը հասավ շուրջ 2500 մարդու: Դրանք կատարվեցին ճիշտ ժամանակին, քանզի հավաստի տեղեկություններ էին ստացվել վրացական զորամասերի տեղաշարժերի մասին Սանահինից դեպի Շահալի և այնտեղից դեպի Փամբակ ուղղությամբ, որոնց թիվը, ինչպես հայտնի է դառնում Ղարաքիլիսայի գավառային Հեղկոմի անդամի 1920 թ. դեկտեմբերի 17-ի զեկուցագրից ՀՍՍՌ Արտաքին Գործերի ժողկոմիսարին, հասնում էր շուրջ 3 հազարի, որոնց շարքերում կային այսպես կոչված «ժողովրդական գվարդիականներ», որոնց դեմ հայ գյուղացիությունը ապստամբել է և կազմակերպել ինքնապաշտպանական խմբեր, հրաժարվել վրացական զորամասերին օժանդակել պարենով և ֆուրաժով, և որոնց դեմ վրացական իշխանությունները նույնիսկ զրահագնացք են ուղարկել, փորձելով լիովին իրենց վերահսկողության տակ պահել Վորոնցովկայից մինչև Շահալի գյուղը ընկած տարածքը: Այդ մասին հայկական իշ-

[1240] Տե՛ս «Կոմունիստ», Երևան, 11 փետրվարի, 1921 թ.:

[1241] Տե՛ս Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 427-428, 433-434, 443-445 և այլն:

խանությունները տեղեկացվել են իրենց ձեռքն ընկած գաղտնի հեռագրերից և հետախուզական-տեղեկատվական բնույթի մի շարք ամփոփագրերից[1242]: Այդուհանդերձ, Հայաստանի խորհրդային իշխանությունները զգալի ջանքեր գործադրեցին, որ հայ-վրացական ռազմաքաղաքական և առհասարակ միջպետական փոխհարաբերությունները ուղղակի փակուղի չմտնեն և վիճելի հարցերը լուծվեն խաղաղ, դիվանագիտական ճանապարհով, ինչը սակայն անհրաժեշտ ընկալում չգտավ Վրաստանի մենշևիկյան կառավարության մոտ: Վրաստանի մենշևիկյան հանրապետության համար բոլոր սահմանատարածքային վեճերը մշտապես ունեին իրենց հստակ որոշելի սահմանները, և պտտվում էին Լոռու, Ախալքալաքի, Արդահանի և Օլթիի գավառների շուրջ: Սահմանազատման շուրջ թեժ պայքարը իր հերթական թեժ կետին հասավ խորհրդային կարգերի հաստատման պահին, որի պայմաններում ՀԽՍՀ կառավարությունը արդեն որոշակի աշխարհաքաղաքական իրողությունների պայմաններում դիվանագիտական-քաղաքական լուրջ հակամարտության մեջ մտավ Վրաստանի հետ՝ փորձելով վճռել Լոռի-Ախալքալաքի շուրջ ստեղծված կնճիռը, չնայած վրացական կառավարության անդամերը՝ Եվգ. Գեգեչկորին, Ն. Ռամիշվիլին, Գ. Ս. Լորդկիպանիձեն ու մյուսները և՛ պատմական, և՛ տնտեսական առումով Լոռին համարում էին Վրաստանի անքակտելի մասը: Հարկ է իհարկե, ասել, որ չնայած այդ ամենին, «վրացիներին հատկապես գրգռում էր Հայաստանի ուշացած հավակնությունը Ճորոխ գետի հովտի նկատմամբ՝ որպես Բաթումի և Սև ծով տանող ճանապարհի, իսկ հայերը նշավակում էին Օլթիի և Արդահանի նկատմամբ վրացիների պահանջները»[1243] որոնք առանձնապես սրված վիճակում էին Առաջին Հանրապետության մայրամուտի պահին՝ 1920 թ. երկրորդ կեսին՝ հատկապես դեկտեմբերին: Մի հանգամանք էլ կար, որ եթե 1920 թ. ընթացքում երբեմն ՀՀ կառավարությունը պատրաստակամություն էր հայտնում գնալ զիջումների, և Լոռու դիմաց Վրաստանին զիջել Ախալքալաքի գավառը, ապա խորհրդային կարգերի հաստատման պահին հստակ այդպիսի խնդիր չդրվեց, ուղղակի այն, ինչ-որ հետո եղավ՝ դա մոսկովյան պարտադրանքի արդյունք հանդիսացավ:

[1242] Տե՛ս նույն տեղում, էջ 432:

[1243] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր III, էջ 140:

Խորհրդային Հայաստանի Արտաքին Գործերի ժողկոմ նշանակված Ալ. Հ. Բեկզադյանը[1244] 1920 թ. դեկտեմբերի 7-ին և 10-ին նոտաներ է ուղարկում Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրությանը: Դրանցում Ալ. Բեկզադյանը պահանջում էր վրացական զորքերն անհապաղ դուրս բերել Լոռու շրջանից և վերացնել Հայաստանի Հանրապետության շրջափակումը, որին վրացական կառավարությունը պատասխանեց մերժումով: 1920 թ. դեկտեմբերի 7-ին ՀԽՍՀ հեղկոմի նախագահ Ս. Կասյանը[1245] խորհրդային հանրապետության բարձրագույն իշխանության անունից պահանջագիր ներկայացրեց Վրաստանի մենշևիկյան կառավարությանը, միաժամանակ այն հասցեագրելով ՌԽՖՍՀ Արտաքին Գործերի ժողկոմ Գ. Չիչերինին, որում փաստելով Վրաստանի կողմից Չեզոք գոտին անօրինական գրավելու քաղաքական հանգամանքը և վրացիների կողմից Հայաստան մտնող անդրկովկասյան երկաթգծի

[1244] Բեկզադյան Ալեքսանդր [Արտեմի] Հարությունի [15 (27).09.1879 թ., Շուշի – 10.08.1939 թ., մականունը՝ «Յուրի», գնդակահարված] - Հայտնի հեղափոխական, կուսակցական, պետական գործիչ, իրավա[բան]ական գիտությունների դոկտոր (1913 թ.): Ալ. Բեկզադյանը 1903 թ. ՌՍԴԲԿ անդամ է: Ալ. Բեկզադյանը սովորել է Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտում (1900 - 1902 թթ.), ապա ավարտել է Յուրիևի համալսարանի հասարակական-քաղաքական ֆակուլտետը (1911 թ.): Նա Թիֆլիսում Առաջին Հանրապետության դիվանագիտական հավատարմատար Տիգրան Բեկզադյանի եղբայրն է: Ալ. Բեկզադյանը հանդիսացել է Հայաստանը խորհրդային հռչակող Հեղկոմի անդամ 1920 թ., ՀԽՍՀ պետաքաղաքական ականավոր գործիչ, Պարենավորման և ՀԽՍՀ առաջին կառավարության Արտաքին Գործերի ժողովրդական կոմիսար: 1920 թ. դեկտեմբերի ընթացքում և 1921 թ. հունվարին Թուրքիայի կառավարությանը մի շարք նոտաներ է հղել՝ պահանջելով անհապաղ դադարեցնել գրավված տարածքներում հայ բնակչության նկատմամբ գազանությունները, միաժամանակ առաջարկելով բանակցություններ սկսել Կարսի մարզը և Ալեքսանդրապոլի գավառը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու համար: Սակայն հակադարձելով այս նոտաներին, թուրքական պատվիրակությունը դեմ արտահայտվեց Ալ. Բեկզադյանի մասնակցությանը 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին Մոսկվայում հրավիրված խորհրդա-թուրքական բանակցություններին, պատճառաբանելով այդ նույն ժամանակ Հայաստանում սկսված հակախորհրդային զինված ապստամբությունը, որը գլխավորում էր ՀՅԴ կուսակցությունը: 1930-1937 թթ. եղել է ԽՍՀՄ լիազոր-ներկայացուցիչը Նորվեգիայում և Հունգարիայում:- Տե՛ս Հովակիմյան Բ. Մ., Հայոց ծածկանունների բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2005, էջ 576: Տե՛ս նաև Ազատյան Հ. Գ., Հայերը միջազգային դիվանագիտական խաչմերուկներում, Եր., «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ, 2009, էջ 42-56: Ով ով է. Կենսագրական հանրագիտարան, Հատոր Առաջին [1], Եր., Հայկ. Սով. Հանրագիտարան, 2005, էջ 224:

[1245] Կասյան [Տեր-Գասպարյան] Սարգիս Հովհաննեսի (16 [28]. 1. 1876 թ., Շուշի - 1937 թ.) – խորհրդային պետաքաղաքական, կուսակցական գործիչ, 1920 թ. նոյեմբերից Հայհեղկոմի նախագահ:

շրջափակման մասին, դատապարտող գնահատական էր տալիս այդ իրողությանը և վճռականորեն պահանջում ոչ միայն վրացական զորքերն անհապաղ դուրս բերել Լոռու Չեզոք գոտուց, այլև անհապաղ գործարկել երկաթուղագիծը՝ Հայաստան բերվող բեռների անարգել մուտքն ապահովելու համար[1246], ինչին հետևեց Վրաստանի կառավարության 1920 թ. դեկտեմբերի 10-ի չոր մերժողական պատասխանը, որպես պատճառաբանություն բերելով 1920 թ. նոյեմբերի 13-ի համաձայնագիրը, որն իրեն արդեն սպառել էր ժամկետի մարման հետևանքով[1247]:

Այստեղ հարկ է նաև ավելացնել, որ ի զարմանս վրացական կողմի, Խորհրդային Հայաստանի առաջնորդները Լոռվա դեպքերի հետ կապված դիմել էին կոշտ քայլերի, և Ս. Կասյանի կարգադրությամբ տնային կալանքի էին ենթարկվել Վրաստանի պաշտոնական ներկայացուցիչները՝ Հայաստանում Վրաստանի դեմոկրատական հանրապետության ներկայացուցիչ, գեներալ Կարալովը և քարտուղար, գնդապետ Միգաբերիձեն, որի կապակցությամբ Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պարտականությունները կատարող Կ. Սաբախտարաշվիլին համարում էր թշնական քայլ Վրաստանի դեմ, պահանջելով ձերբակալությունը չեղյալ համարել և Կարալովին վերականգնել իր դիվանագիտական իրավունքներում և ըստ այդմ անհապաղ պահանջագրից բխող հարցապնդման պատասխանը ուղարկել[1248]:

Այս իրավիճակը Վրաստանի հետ հարաբերություններն զգալի չափով բարդացրեց, և դրա հիմնական պատճառը գտնվում էր բոլշևիկյան կենտրոնի ռազմավարության խորքային մութ և անհայտ ծալքերում, և այստեղ անժխտելի էր այն կարևոր հանգամանքը, որ տարածքային սահմանավեճի հետ անխզելիորեն շաղկապված հայ-վրացական բախումնային ռազմաքաղաքական իրավիճակը Մոսկվայի կողմից տեղին և հմտորեն օգտագործվում էր Վրաստանի խորհրդայնացման և Այսրկովկասում առկա բազմաբնույթ աշխարհաքաղաքական խնդիրները լուծելու համար: Այստեղից անվարան կարելի է եզրակացնել, որ մեն-

[1246] Տե՛ս «Կոմունիստ», Երևան, 9 դեկտեմբերի, 1920 թ.:

[1247] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 1022, ց. 3, գ. 290, թ. 2-4, 20:

[1248] Տե՛ս նույն տեղում, գ. 23, թ. 1, Ֆ. Պ - 114, ց. 29, գ, 24, թ. 5: Ֆ. Պ - 275, ց. 5, գ, 207, թ. 222:

շևիկյան Վրաստանի հետ ռազմաքաղաքական բախումն ուղղակիորեն օգտագործվեց ոչ միայն Լոռու խնդիրը լուծելու համար, այլև չափազանց մեծ կարևորություն ներկայացնող ռազմավարական հիմնախնդրի լուծման, այն է՝ կովկասյան տարածաշրջանում բոլշևիկյան նոր «իմպերիայի»՝ Ռուսաստանի ամրապնդվելու հեռահար ռազմավարության տեսանկյունից էական՝ Վրաստանի բոլշևիկացման և նրան բոլշևիկյան կայսրության կողմից ձևագծվող աշխարհաքաղաքական նոր քարտեզի շրջանակներում տեղավորելու, այն ընդգրկելու համար գծագրվող և աստիճանաբար ձևավորվող խորհրդային պետաքաղաքական կազմավորումների միության մեջ: Բոլշևիկյան զգեստավորումը դառնում էր բոլշևիկյան Մոսկվայի քաղաքականության անկյունաքարը:

1920 թ. դեկտեմբերի 10-ին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Կ. Սաբախտարաշվիլին Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին ուղարկված հեռագրում ի պատասխան դեկտեմբերի 7-ի հայկական կառավարության հեռագրի, հայտնում էր, որ իբր Ադրբեջանից Հայաստան ուղարկված ապրանքների տրանզիտային բեռնափոխադրումների խափանումների հետ կապված փաստերը միանգամայն չեն համապատասխանում իրականությանը, իսկ եթե վերջին օրերին եղել է ընդամենը որոշ դանդաղկոտություն և թափթփվածություն այդ ապրանքների փոխադրումներում, ապա դա բացատրվում է ընդամենը Բորչալուի գավառի երկաթգծի վրա տեղ գտած խոշոր փլուզումով, որի մաքրման համար շտապ միջոցներ են ձեռնարկվել: Այնուհետև Կ. Սաբախտարաշվիլին փորձում էր պատառաբանել, որ Վրաստանի կառավարությունը իր զորքերը մտցրել է Բորչալուի գավառի Չեզոք գոտի՝ համաձայն Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև նույն թվականի նոյեմբերի 13-ին կնքված գրավոր համաձայնագրի: Եվ վերջապես, Կ. Սաբախտարաշվիլին նպատակահարմար էր գտնում ՀՀ կառավարությանը իրազեկել այն մասին, որ Վրաստանի կառավարությունը Սահմանադիր ժողովում դեկտեմբերի 7-ին ընդունած պաշտոնական դեկլարացիայում հայտարարել է, որ իրենք անշեղորեն կանգնած են բոլոր պայմանագրերի և համաձայնագրերի ճշգրիտ իրագործման դիրքորոշման վրա: Վերջնամասում Սաբախտարաշվիլին հայտնելով, որ

այդ մասին տեղյակ է պահում, խնդրում էր հաղորդել Հայկական կողմի տեսակետը այդ առարկայի նկատմամբ[1249]:

1920 թ. դեկտեմբերի 10-ին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Կ. Սաբախտարաշվիլին Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին ուղարկած հեռագրում հայտնում էր, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը հանդիպելով Վրաստանի կառավարության համառ ժխտողական դիմակայությանը Չեզոք գոտու խնդրում, ի վերջո այլ բանակցային լուծման տարբերակ չգտնելով, հանգեց այն եզրահանգման, որ հարկադրված եղավ հայտարարել համաձայնագիրը անվավեր ճանաչելու մասին, որ կնքվել էր նախորդ՝ Առաջին Հանրապետության դաշնակցական կառավարության կողմից, այդ հարցում ընդունելով ժառանգորդությունը: Հարկ է ասել, որ Խորհրդային Հայաստանը այս խնդրում բավականաչափ հաստատակամություն դրսևորեց, և այն ուներ իր ներքին ռազմավարական-քաղաքական պատճառաբանվածությունը:

1920 թ. դեկտեմբերի 18-ին Խորհրդային Հայաստանի Արտաքին Գործերի ժողովրդական կոմիսար Ալ. Բեկզադյանը բավականին խստաբարո մի նոտա է ուղարկում մենշևիկյան Վրաստանի կառավարությանը, որում կատեգորիկ պահանջ է դնում վրացական իշխանությունների առաջ՝ վրացական զորքերը դուրս բերել Չեզոք գոտուց, քանզի ՀԽՍՀ կառավարությունը միանշանակ, առանց վարանելու չեղյալ էր հայտարարել 1920 թ. նոյեմբերի 13-ի համաձայնագիրը Չեզոք գոտու վերաբերյալ: Վրաստանը այդ պահին չէր էլ ձգտում պարզորոշ մաքուր դուրս գալ այդ բախումնային իրավիճակից և չէր էլ շտապում վրացական զորամասերը դուրս բերել վիճարկելի տարածքից: 1921 թ. դեկտեմբերի 21-ին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Կ. Սաբախտարաշվիլին ի պատասխան Ալ. Բեկզադյանի նոտայի, հայտնում է, որ «իր կառավարությունը համաձայն չէ 1920 թ. նոյեմբերի 13-ի համաձայնությունը միակողմանի «լիկվիդացիայի» ենթարկելու հարցադրմանը»[1250]: Դրա հետ մեկտեղ, Կ. Սաբախտարաշվիլին, ձգտելով սողանցքներ գտնել վրացական լպրծուն քաղաքականության լաբիրինթոսներում, տեղ էր թողնում վիճելի հարցի բանակցությունների ճանապարհով իբր թե լուծման, սակայն իրականում՝ նոր քաշքշուկների համար:

[1249] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 275, ց. 5, գ. 207, թ. 211:
[1250] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 114, ց. 2, գ. 24, թ. 53:

Սակայն հարցի հանգուցալուծումը գնում էր մեծ բարդությունների ուղիով, Վրաստանը ոչ մի կերպ չէր ցանկանում զիջումների գնալ և ստեղծված իրավիճակում Հայհեղկոմը 1920 թ. դեկտեմբերի 24-ին բառացիորեն կրկնում է իր նախկին հարցադրումները և Վրաստանի զորքերի դուրսբերումը համարում «որպես պայման Հայաստանի և Վրաստանի միջև բանակցություններ սկսելու համար»[1251]:

1920 թ. դեկտեմբերի 27-ին Ալ. Բեկզադյանը հակադարձելով Սաբախտարաշվիլու դեկտեմբերի 21-ի անհամաձայնողական դիրքորոշմանը, ոչ միայն հակափաստարկներով մեղադրանք էր ներկայացնում վրացական կողմին Շընըխ հայկական գյուղի հայ գյուղացիների նկատմամբ պատժիչ զորաջոկատ ուղարկելու և գնդակոծման համար, միաժամանակ անհամաձայնություն արտահայտելով կապված 1920 թ. նոյեմբերի 13-ի համաձայնագրի մեկնության հետ, գտնելով, որ այդ համաձայնագրի փաստացի պայմաններով պայմանավորված չեն վրաց կառավարության պատճառաբանությունները և հիմնավորումը Լոռվա Չեզոք գոտում մնալու խնդիրը, որ այն շաղկապելով Հայաստանի Հանրապետության վրա անատոլիական կառավարության զորքերի հարձակման հետ՝ իբր թե Վրաստանի սպառնացող վտանգի առումով կորցրել է ուժը, գտնելով, որ Չեզոք գոտում վրացական զորքերի հետագա մնալը կորցրել է իր ամեն մի նշանակությունը[1252]:

Այսպես, 1920 թ. դեկտեմբերի 29-ին Վրաստանի Արտգործնախարարին ուղղված դիմումագրում, որը հասցեագրված էր նաև մենշևիկյան Վրաստանում ՌԽՖՍՀ ներկայացուցիչ Ա. Շեյնմանին, ինչպես նաև բոլշևիկյան Ռուսաստանի Արտաքին Գործերի ժողկոմ Գ. Չիչերինին և Ադրբեջանի Արտաքին Գործերի ժողկոմ Մ. Հուսեյնովին, ՀԽՍՀ Արտաքին Գործերի ժողկոմ Ալ. Բեկզադյանը հայտնում էր Հայաստանի իշխանությունների պատրաստակամության մասին հայ-վրացական խաղաղ բանակցաընթացքով կարգավորել միջպետական հարաբերությունները՝ կարևորելով դրանում ՌԽՖՍՀ լիազոր-ներկայացուցչի մասնակցությունը: Միաժամանակ նոտայում շեշտվում էր Լոռու Չեզոք գոտու վերաբերյալ համաձայնագրի անվավեր ճանաչելու հանգամանքը, որ նաև բացասվում է այդ համաձայնագրի ամեն մի վկայակոչում որ-

[1251] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 114, ց. 2, գ. 17, թ. 18:
[1252] Տե՛ս նույն տեղում, գ. 26, թ. 6:

պես այդ տարածքին տիրելու իրավական հիմք, հաստատագրելով, որ թուրքական սպառնալիքով արդարանալու քաղաքական հանգամանքը վերացել է և վրացական զորքերի հետագա ներկայությունը Չեզոք գոտում այլևս անհրաժեշտություն չէ, անտեղի է, այն չի ընդունվում ՀԽՍՀ իշխանությունների կողմից, և որպես նոր քայլ, առաջարկվում էր ՌԽՖՍՀ միջնորդական առաքելությանը դիմելու հարցը[1253]: Միաժամանակ հենվելով անհերքելի փաստարկումների հենքի վրա, Ալ. Բեկզադյանը նաև ուղղակի ընդգծում է այն մասին, որ ՀԽՍՀ կառավարությունը չի կարող ընդունել վրացական «կառավարության ձևական պնդումն այն մասին, թե նա ճշգրիտ կերպով կատարում է նոյեմբերի 13-ի համաձայնության պայմանները՝ չի կարող ընդունվել ՀՍԽ իշխանության կողմից հանրահայտ և փաստաթղթերով հաստատված փաստերի հիման վրա՝ Չեր զորքերի Չեզոք գոտու սահմաններից համաձայնության հենց առաջին օրերում անցնելը, նրանց կողմից Քոլագիրան, Շահալի, Ջալալօղլի և Հայաստանի անվիճելի կետերի գրավումը, վերջիններիս մեջ վրացական պարետների նշանակումը, հայկական պաշտոնյաների արձակումը և նրանց փոխարինումը վրացականով, նոյեմբերի 19-ի Քոլագիրան կայարանում ապարատային սենյակի բռնագրավումը, առանց պատճառները բացատրելու և օրդեր ներկայացնելու՝ կայարանի հեռագրական ծառայողների ձերբակալումը և ապա Ներքին Սերալ տանելը: Եվ վերջապես, հայկական Շնող գյուղի դեմ պատժիչ արշավախումբ ուղարկելն ու հիշյալ գյուղի ռմբակոծումը»[1254]:

Բնականաբար, ինչպես տեսնում ենք, Հայաստանի խորհրդայնացումը նոր ռազմաքաղաքական իրավիճակ ստեղծեց Լոռվա հիմնախնդրի լուծման անակնկալ և հիրավի թարմ տարբերակների առաջադրման գործում, և ինչ-որ տեղ Վրաստանի իշխանությունները հասկանում էին, թե ինչ է կատարվում իրենց շուրջը և ինչ որակական փոփոխություններ է կրել աշխարհաքաղաքական իրավիճակը Անդրկովկասում, հստակ տեղեկություններ ունենալով, որ Հայաստանում և Ադրբեջանում տեղաբաշխված խորհրդային զորքերը նախապատրաստվում

[1253] Տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (1920 թ. նոյեմբեր - 1922 թ. հունվար), Եր., «Հայաստան» հրատ., 1974, էջ 80-86: Տե՛ս նաև «Կոմունիստ», Երևան, 1 հունվարի, 1920 թ.:

[1254] Տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում…, էջ 81:

են իբր թե առանց Մոսկվայի թույլտվության և հրահանգների իրականացնել զինված միջամտություն Վրաստանի գործերին: Դա իհարկե, այնքան էլ այդպես չէր, սակայն այդ կարևոր տեղաշարժերի մասին մենշևիկյան Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Կ. Սաբախտարաշվիլին 1920 թ. դեկտեմբերի 10-ին տեղեկացնում է ՌԽՖՍՀ-ում Վրաստանի լիազոր ներկայացուցիչ Գ. Մախարաձեին[1255]:

Վրաստանի խորհրդայնացման, հետևաբար և Լոռու հիմնախնդրի հանգուցալուծման տեսանկյունից կարևոր է նշել, որ այդ գործընթացներին ակտիվ մասնակցություն ցուցաբերեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն՝ ականավոր բոլշևիկ Գ. Կ. Օրջոնիկիձեի մասնակցությամբ, որը Վ. Ի. Լենինին ուղարկված 1920 թ. դեկտեմբերի 15-ի ճեպագրում հենց այդ մասին է հայտնում, ընդգծելով, որ Կովկասյան բյուրոյի խորհրդակցությունը «գաղտնի և միաձայն որոշել է անցնել Վրաստանի սահմանը», սակայն այդ պահին գործողությունների անմիջական հրահանգ չի տրվում: Ըստ երևույթին, թե՛ Վ. Լենինը, թե՛ Լ. Տրոցկին այդ պահին դեռ վաղաժամ էին համարում Վրաստանի խորհրդայնացման պրակտիկ իրագործումը[1256]: Բայց և այնպես, այդ ուղղությամբ բոլշևիկյան կենտրոնի կողմից տարվում էին խորքային նախապատրաստություններ և ընթացող գործընթացների ուղղորդման տեսանկյունից ՌԽՖՍՀ իշխանությունները հմտորեն օգտագործեցին նաև մենշևիկյան Վրաստանի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակման և տրանզիտային առևտրի ուղիների ապահովման հետ կապված բարդությունների հարցը, որը օգտագործվեց Վրաստանի վրա ճնշումը ուժեղացնելու համար՝ նպատակադրում ունենալով խորհրդայնացումը:

Այս ընթացքում, 1920 թ. դեկտեմբերի 28-ին Խորհրդային Հայաստանում ՌԽՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Բ. Վ. Լեգրանը խորհրդային կառավարությանը ներկայացնում է զեկուցագիր, որում հանգամանալից անդրադառնում է Լոռու Չեզոք գոտուց Վրաստանի զորքերը հանելու խնդրում Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից ձեռնարկած քայլերի, վրացական իշխանություններին արված խաղաղարարար առաջարկների և ընդհակառակը՝ վրաց զորքերի տեղաշարժի

[1255] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 4033, ց. 2, գ. 1158, թ. 3:

[1256] Տե՛ս Հայոց պատմություն. Հատոր IV. Գիրք առաջին, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2010, էջ 315:

մասին դեպի Ղարաքիլիսա. «Գտնում եմ միանգամայն անհրաժեշտ և անհետաձգելի ձեր միջամտությունը, պետք է վրացիներին առաջարկել Չեզոք գոտուց ետ քաշեն իրենց զորքերը, ճանաչեն մեր միջնորդությունը այդ տերիտորիալ վեճի լուծման գործում: Անհրաժեշտության պարագայում, հանուն խաղաղության և հանգստության պահպանման, մեր զորքերը մտցնել Չեզոք գոտի: Բորչալվի գավառի բնակչությունը զայրացած է և դժվարությամբ է տանում օկուպանտների ճնշումը, հակառակ դեպքում հնարավոր է ապստամբության պոռթկում, որի կանխումը, չնայած բոլոր ջանքերին, չափազանց կդժվարանա»[1257]: Ըստ այդմ, այդ պահից սկսած Խորհրդային Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, ՌԿ (բ)Կ Կովկասյան բյուրոն 1920 թ. դեկտեմբերի երկրորդ կեսից գործնականում Լոռու Չեզոք գոտում զինված ապստամբության կազմակերպման քաղաքական կուրս են ընդունում: 1920 թ. դեկտեմբերի 28-ին ՀԿԿ Կենտկոմը, քննարկելով Լոռվա Չեզոք գոտում զինված ապստամբության կազմակերպման և դրա նախապատրաստական ընթացքին վերաբերող հարցերը, որոշում է Հ. Լազյանին ազատել Դիլիջանի հեղկոմի անդամի պարտականությունից և նշանակել Լոռվա ապստամբության ղեկավար, որից հետո վերջինս ՀԿԿ Կենտկոմի և Խորհրդային Հայաստանի ռազմհեղկոմի մանդատով իր զինակիցների հետ ժամանում է Չեզոք գոտի, որտեղ և կազմակերպվում է Լոռվա ապստամբության շտաբ[1258]:

1920 թ. դեկտեմբերի վերջին Ղարաքիլիսայի գավառային կոմիտեի և գավառային հեղկոմի նախաձեռնությամբ և ՀԿԿ Կենտկոմի ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ հրավիրվում է գյուղացիական համագումար, որին մասնակցում են նաև Լոռու Չեզոք գոտու գյուղացիական խորհուրդների ներկայացուցիչները, որում ընդունված բանաձևում անդրդվելի կամք է արտահայտվում զինված ապստամբության միջոցով իրականացնել ժողովրդի կամքը՝ Չեզոք գոտին վերամիավորել Խորհրդային Հայաստանի հետ: Լոռվա ապստամբության շտաբը սկզբնապես գտնվում էր Ղարաքիլիսայում, իսկ այնուհետև, իրադարձությունների ընթացքի վրա ավելի անմիջական վերահսկողություն

[1257] Տե՛ս Ալիխանյան Տ. Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921 թթ.), էջ 279:

[1258] Տե՛ս նույն տեղում, էջ 279-280:

իրականացնելու նպատակահարմարությունից ելնելով, այն տեղափոխվում է Սանահին:

1920 թ. դեկտեմբերի 30-ին Խորհրդային Հայաստանի կառավարությունը Վրաստանի կառավարությանը նոր նոտա ներկայացրեց. «Թուրքիայի հետ պատերազմի ժամանակ վրացական զորքերը օկուպացրել են Չեզոք գոտին: Դեկտեմբերի 10-ի և 21-ի ձեր պատասխաններում դուք հրաժարվում եք մեր պահանջները կատարելուց և ասում եք, որ Չեզոք գոտին գրավվել է դաշնակների հետ նոյեմբերի 13-ի համաձայնության հիման վրա: Հայկական կառավարությունը հարկադրված է հայտարարել, որ նա չի ընդունում նոյեմբերի 13-ի համաձայնությունը, քանի որ այն կնքվել է Անտանտի պահանջով… Մեր պահանջն է վերջ դնել այդպիսի վիճակին Չեզոք գոտում, այդ անվիճարկելի հայկական տարածքում»[1259]:

Իրավիճակը կտրուկ փոխվեց այն բանից հետո, երբ Կարմիր բանակը Կովկասյան լեռներից սրընթաց գահավիժեց Հարավային Կովկաս և տեղական հանրապետություններին կանգնեցրեց անխուսափելի և նոր իրողության՝ խորհրդայնացման պարտադրվող փաստի առաջ: Սակայն այդ մտահղացումից ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի առաջնորդները չեն հրաժարվում, այլ ընդամենը փոփոխություններ և շտկումներ են մտցնում իրենց կողմից մշակվող ռազմավարության երանգներում, և արդեն 1921 թ. հունվարի 2-ին Կովկասյան բյուրոյում աչքի ընկնող դիրք ունեցող Գ. Կ. Օրջոնիկիձեն և Ս. Կիրովը նախօրոք Վրաստանի դեմոկրատական հանրապետության խորհրդայնացման խորքային դրդապատճառների և հրատապության մասին իրենց ունեցած մտադրությունների մասին տեղեկացնելով ՌԿ(բ)Կ Կենտկոմի անդամներին, միաժամանակ եզրահանգելով, որ իրենց դանդաղկոտության հետևանքով «Խորհրդային Հայաստանն առանց Խորհրդային Վրաստանի փաստորեն մնում է ավելի շատ Թուրքիայի, քան մեր ազդեցության տակ», գտնում էին, որ քանզի իրենք չեն կարող թույլ տալ բացահայտորեն միջամտել Վրաստանի գործերին կամ իրականացնել զինված հարձակում, ապա հարկավոր է շարժումներ առաջ բերել Աբխազիայում, Աջարիայում, Բորչալուի գավառում, որտեղ դրա համար հող կա, ընդ որում

[1259] Տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում…, էջ 81: Տե՛ս նաև http:// iberiana. wordpress. com/ armenia-georgia /1918 -1920/:

ակնկալելով, որ այդ խնդրի իրագործման մեջ իրենց կարող են օգտակար լինել անգամ Թուրքիան և Հայաստանը, և այդ դեպքում հնարավոր կլինի նույնիսկ ներկայանալ Վրաստանի փրկարարի դերում[1260]: Այսինքն, այստեղ պարզ է դառնում, թե ինչ դեր կարող էր խաղալ Վրաստանի խորհրդայնացման խորքային դրդապատճառներում Լոռվա Չեզոք գոտու խնդիրը և դրանով պայմանավորված հայ-վրացական նոր ռազմաքաղաքական առճակատումը:

Վրացական մենշևիկյան կառավարությունը, անշուշտ, ձգտում էր իր համար անցանկալի ռազմաքաղաքական զարգացումներից խուսափել, և այդ ուղղությամբ Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Կ. Սաբախտարաշվիլին մի շարք քայլեր ձեռնարկեց այդ խնդիրների լուծման համար որպես ակտիվ կողմ ընտրելով Խորհրդային Հայաստանի Արտաքին Գործերի ժողովրդական կոմիսար Ալ. Բեկզադյանին, նրա հետ մի քանի ճեպագրեր փոխանակելով, որոնցում շոշափվում էր Լոռու Չեզոք գոտու խնդրի կարգավորման հարցը, սակայն որպես նախապայման առաջ քաշելով կանխադրույթ, որ վրացական զորամասերը դուրս չբերվեն Չեզոք գոտուց, ինչը լարվածություն հաղորդեց հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններին, չնայած ՀԽՍՀ Արտաքին Գործերի ժողկոմ Ալ. Բեկզադյանին հղված 1921 թ. հունվարի 5-ի հեռագրում Կ. Սաբախտարաշվիլին հայտնում էր Վրաստանի կառավարության ձգտումը՝ վիճելի հարցերը բանակցությունների միջոցով լուծելու պատրաստակամության մասին, հայտնելով, որ իբր թե «տեղական հայ բնակչությունը որևէ դժգոհություն չունի վրացական զորքերից, իսկ ձեռնարկված միջոցառումները եղել են անխուսափելի անհրաժեշտություն»[1261]:

Գ. Կ. Օրջոնիկիձեի և Ս. Կիրովի զեկուցագրերը համապատասխան առաջարկներով հանդերձ դառնում են ՌԿ(բ)Կ Կենտկոմի 1921 թ. հունվարի 12-ի պլենումի քննարկման առարկա, որին մասնակցում է նաև Վ. Ի. Լենինը, և այս անգամ ևս մերժվում է Վրաստանի խորհրդայնացման ներկայացված տարբերակը և առաջարկվում է առժամանակ օրակարգից հանել այն՝ շարունակելով մնալ հին քաղաքական դիրքորոշման հենքի վրա: Սակայն իրադրությունը շուտով արագ փոխվում է,

[1260] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 4033, միկրոժապավենների հավաքածու, գ. 2, թ. 1-2:
[1261] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 114, ց. 2, գ. 12, թ. 13:

նոր բարդություններ են առաջ գալիս, և արդեն հունվարի կեսերին ՌԿ(բ)Կ Կենտկոմում հասունանում են նոր նախագծեր, որոնք պարտադրում են չափն անցած մենշևիկյան Վրաստանին զսպել և նկատի ունենալով անվտանգության հիմնախնդիրները, օրակարգային դարձնել Վրաստանի խորհրդայնացման խնդիրը[1262]: Վրացական խնդրում և մասնավորապես Լոռվա Չեզոք գոտու հետ կապված առավել հավասարակշռված քաղաքականության համոզված կողմնակից Ալ. Բեկզադյանը դեռ 1921 թ. հունվարին, երբ Լոռվա Չեզոք գոտում լարվածություն ստեղծելու սցենարը նոր էր խմորվում և անընդմեջ մշակվում, այս անգամ Խորհրդային Ռուսաստանի անմիջական մասնակցությամբ, ՀԽՍՀ առավել չափավոր քաղաքականության կողմնակիցներ Ասք. Մռավյանին և Ս. Կասյանին խորհուրդ էր տալիս ելնելով ստեղծված բարդ և խճճված ռազմաքաղաքական իրավիճակից, հայ-վրացական հարաբերությունների սրման չգնալ և սահմանային-տարածքային վեճը լուծել բանակցությունների միջոցով, և հայ-վրացական ռազմաքաղաքական բախման հանգուցալուծման խնդրում մենշևիկյան Վրաստանին համոզել՝ չհրաժարվել ՌԽՖՍՀ մասնակցությունից և միջամտությունից[1263]:

Լոռու տեղամասի մասին հիմնահարցը կրկին առաջնային պլան մղվեց, և 1921 թ. հունվարի 3-ին Խորհրդային Հայաստանի կառավարությունն օգտվելով նպաստավոր իրադրությունից և Խորհրդային 11-րդ Կարմիր բանակի և քաղաքական իշխանության շահախնդիր աջակցությունից, Վրաստանի մենշևիկյան կառավարության հետ բանակցություններ սկսեց Լոռին Հայկական ԽՍՀ-ին հանձնելու հարցի շուրջ[1264]: Ի պատասխան ՀԽՍՀ Արտաքին Գործերի ժողկոմ Ալ. Բեկզադյանի նախորդ հեռագրերում արտահայտված այն մոտեցմանը, որ հայ-վրացական ռազմաքաղաքական առնչություններին և դիվանագիտական բանակցություններին իր մասնակցությունն ունենա նաև ՌԽՖՍՀ ներկայացուցիչը, Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Կ. Սաբախտաբաշվիլին սկզբունքորեն չառարկելով դրան, գտնում էր, որ դա պետք է

[1262] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 4033, միկրոժապավենների հավաքածու, գ. 2, թ. 3, գ. 7, թ. 29:

[1263] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 114, ց. 2, գ. 35, թ. 28:

[1264] Տե՛ս Кадишев А. Б., Интервенция и гражданская война в Закавказье, стр. 368: Suny Ronald Grigor, The Making of the Georgian Nation, Indianopolis, 1994, p. 207:

որոշվի հայկական և վրացական կառավարությունների փոխադարձ համաձայնությամբ, խնդրելով պատվիրակ ուղարկել Թիֆլիս, դրա հետ մեկտեղ առարկելով Չեզոք գոտուց վրացական զորքերի դուրս բերման դեմ, ինչը բարդացնում էր ընդհանուր իրավիճակը և լարվածության օջախ ստեղծում ողջ վրաց-հայկական սահմանի երկայնքով: Այդ խնդրի լուծման համար Բեկզադյանի հետ Թիֆլիս է ուղևորվում նաև բազմահմուտ խորհրդային դիվանագետ Բորիս Լեգրանը, սակայն իրավիճակի մեջ չի հաջողվում լուրջ դրական փոփոխություններ մտցնել:

1921 թ. հունվարի 25-ին Գ. Կ. Օրջոնիկիձեն Ս. Կասյանին և Ա. Նուրիջանյանին ուղարկած հեռագրում պարզապես հրահանգում էր ակտիվություն դրսևորել Լոռու Չեզոք գոտու խնդրում. «Չեզոք գոտին պետք է վերցնել վրացիներից: Անմիջապես սկսեք ջոկատների կազմակերպումը: Գնդացրային ջոկատը պետք է ուղարկել Վելիկանովին: Բոբրիշչևին ուղարկում եմ Վելիկանովի մոտ: Արեք, ինչ-որ կարող եք, որքան արագ, այնքան լավ: Մենք կօգնենք երկու գնդով: Լեգրանն ասում է, որ կարելի է հազար հոգուց բաղկացած ջոկատ կազմակերպել: Պատասխանեցեք անհապաղ, որքա՞ն և ե՞րբ կարող եք, այնտեղ գործը չափազանց լուրջ է»[1265]: Ակնհայտ էր ինչպես խորհրդային ռազմուժի բացահայտ օգտագործումը վրացական կնճիռը հանգուցալուծելու գործում, այնպես էլ Մոսկվայի ձգտումը դրանում ներգրավվել նաև Խորհրդային Հայաստանի զինված ուժերը, ինչի համար Ս. Կասյանին անհրաժեշտ հրահանգներ ուղարկվեցին:

Հասկանալի է, որ նման բարդ ռազմաքաղաքական իրավիճակում Խորհրդային Հայաստանի առաջնորդները, եթե անգամ ցանկանային էլ, չէին կարող անտեսել Մոսկվայից գործադրվող ճնշումը, թեկուզև դեռևս դեկտեմբերի 27-ին Ալ. Բեկզադյանը Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Կ. Սաբախտարաշվիլուն հայտնում էր Խորհրդային Հայաստանի պատրաստակամության մասին բանակցել վրացական կառավարության հետ[1266], սակայն կարևորելով նաև Վրաստանի զորքերի դուրսբերումը Հայաստանի անվիճելի տարածքներից, որի դեմ Վրաստանը հակադրվեց և ռազմական բախումը իրողություն դարձավ: Եթե դրան ավելացնենք նաև այն կարևորագույն հանգամանքը, որ Լոռվա Չեզոք

[1265] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 114, ց. 2. գ. 36, թ. 32:
[1266] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 114, ց. 2. գ. 24, թ. 53:

գոտու իրողությունները համընկան Խորհրդային Հայաստանի իշխանությունների դեմ փետրվարի 18-ին բռնկած քաղաքացիական կռիվների կամ «համաժողովրդական ապստամբության» հետ, որի ժամանակ Խորհրդային Հայաստանում գտնվող ռազմուժի զգալի մասը տեղափոխվեց Լոռու շրջան, ապա պարզ կդառնա, որ դրանք ամենևին էլ պատահական իրադարձություններ չէին, որ դրանցում կարևոր տեղ էր հատկացվում մենշևիկյան Վրաստանի խորհրդայնացմանը, որում մեծ դերակատարում ուներ Մոսկվան: Չէր բացառվում նաև խորհրդա-քեմալական համաձայնվածության և փոխշահագրգռվածության պահը այս ռազմաքաղաքական իրողություններում, որում բավականաչափ քաղաքական հեռատեսությունը և հաշվենկատ քայլերը «Հայրենիքի Փրկության կոմիտեի» քաղաքական առաջնորդների՝ Ս. Վրացյանի և այլոց զինանոցում տեղ չգտավ, և հարց էր՝ թե ու՞մ էր ձեռնտու այդ փետրվարյան ապստամբությունը՝ հայերին, թուրքերին, թե՞ վրացիներին[1267], չնայած Վրաստանը Խորհրդային Հայաստանին մեղադրանքներ էր ներկայացնում իր երկրի դեմ ռազմական գործողություններ սկսելու դեմ: Հայաստանի պարագայում փետրվարյան օրերին գործնականում պետությունը քայքայված և կազմալուծված էր, և ի վիճակի չէր ճեղքել Վրաստանի կողմից պարտադրված տնտեսաքաղաքական շրջափակումը: Ինչ վերաբերում է մենշևիկյան Վրաստանին, նա էլ կանգնած էր խորհրդայնացման անխուսափելի իրողության առաջ, որին բարեկամ Թուրքիան թեկուզ ներքուստ համակիր չէր, բայց և իրապես չհակադրվեց: Անհավանական չէ նաև այն պատմաքաղաքական իրողությունը, որ քեմալական Թուրքիային ներքուստ ձեռնտու էր հրահրել փետրվարյան իրադարձությունները Հայաստանում, ոգևորել դրանց գլուխ կանգնած անհեռատես քաղաքական գործիչներին, որը նրանց ձեռքերին ազա-

[1267] Ի դեպ չափազանց հետաքրքիր է նշել, որ դեռ 1921 թ. փետրվարի 21-ին, այսինքն Հայաստանում քաղաքացիական կռիվների եռուն պահին, Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Կ. Սաբախտարաշվիլին «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ Ս. Վրացյանին ուղղված իր վերջին նոտաներից մեկում առաջարկներ էր ներկայացնում համատեղ անհապաղ պայքարի պայմանների մասին ընդդեմ բոլշևիկների՝ հարվածելով նրանց թիկունքից, պնդելով, թե իբր դա բխում է երկու ժողովուրդների կենսական շահերից, միաժամանակ փարիսեցիաբար «հանդարտեցնելով« բոլշևիկների կողմից մոլորության մեջ գցված հայկական Լոռվա գյուղերը: - Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ –1022, ց. 3, գ. 341, թ. 1-2:

տություն էր տալիս մխրճվելու բարդ և խճճված տարածաշրջանային գործընթացների մեջ, որտեղ դրության իրական տերերն էին քեմալական Թուրքիան և բոլշևիկյան Ռուսաստանը: Հետևաբար, չի բացառվում նաև այն կարևոր հանգամանքը, որ թուրքական հատուկ ծառայությունների քայքայիչ աշխատանքը Հայաստանում դեռևս որոշ ժամանակ ակնհայտորեն շարունակվել է, չնայած իբր թե նրանք տվել էին իրենց փաստացի համաձայնությունը՝ հեռանալ Ալեքսանդրապոլի պայմանագրով աղճատված Հայաստանի Հանրապետության տարածքից՝ շարունակելով ազդել հայաստանյան պատմաքաղաքական զարգացումների վրա, այդ թվում և իրենց քաղաքական շահերի տեսանկյունից ձեռնտու այսպես կոչված «փետրվարյան ապստամբության» վրա, որի արդյունքը եղբայրասպան և գործնականում անհեռանկարային քաղաքացիական կռիվներն էին:

Միաժամանակ, Խորհրդային Հայաստանի կառավարությունը այլևս հատուկ պահանջներ չներկայացրեց վրացական հողերի նկատմամբ, քանի որ Մոսկվայում արդեն պատրաստ կար Վրաստանի օկուպացիայի խնդիրը, իսկ հայ բոլշևիկները չէին կասկածում, որ դրանից հետո իրենց կտան Չեզոք գոտին[1268]:

Վրաստանի օկուպացիան և սովետիզացիան դառնում էր անխուսափելի[1269]:

Ակնհայտ է, որ բոլշևիկների կողմից Վրաստան ներխուժելու առիթ հանդիսացավ Լոռու Չեզոք գոտում ստեղծված իրավիճակը, որը սերտորեն շաղկապվեց 1920 թ. վերջին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման փաստի հետ: Ըստ այդմ, նոր կազմավորված խորհրդային կառավարությունը, օգտվելով այդ պահի տեսանկյունից ստեղծված յուրահատուկ իրավիճակից, նախկին վրաց-հայկական համաձայնագրից հրաժարման խնդիր առաջադրեց և պահանջեց վրացական զորքերը դուրս բերել Չեզոք գոտուց: Հաշվի չառնելով նոր իրողությունների լրջությունը և գործնականում անշրջելիությունը, մենշևիկյան

[1268] Տե՛ս Стуруа Н. Н., Вопросы новой и новейшей истории Грузии, т. II, Тб., 1987, стр. 19.

[1269] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18 R. html // Տե՛ս մանրամասն Дарсания Н. Е., Была ли неизбежной насильственная советизация Грузии, - «Исторические разыскания», т. I, Тб., 1998, стр. 129:

Վրաստանի կառավարությունը առաջարկեց խաղաղ բանակցություններ վիճարկելի տարածքի հարցի կարգավորման համար: Ակնհայտ էր, որ այս ամենը կատարվում էր ՌԿ(բ)Կ ԿԿ Կովբյուրոյի համաձայնությամբ և հրահանգների հիման վրա, որին ինչ-որ տեղ հեռահար նպատակների ռազմավարության իրագործման մեկնակետից բավարարում էր Վրաստանի հետ սահմանային գոտում ռազմաքաղաքական իրավիճակի հետ կապված ցանկացած բնույթի անորոշության պահպանումը: Կովկաս ներխուժած բոլշևիկների համար ցանկացած առիթ կարող էր պիտանի լինել Վրաստանի բոլշևիկացման խնդիրը արմատապես վճռելու համար, այդ թվում կազմակերպելով զանազան «աշխատավորական բնույթի ապստամբություններ», այդ թվում Լոռիում, որը բխում էր թեկուզև արդեն խորհրդային դարձած, սակայն իրական Հայաստանի շահերից: Այստեղից պարզ է դառնում, թե ինչպես է կերտվում մեծ քաղաքականությամբ պայմանավորված այս կամ այն սցենարը, թե ինչպես կարելի է գտնել հարմար առիթ ագրեսիվ գործողություն իրականացնելու որևիցե երկրի նկատմամբ, ինչպես դա տեղի ունեցավ Լոռու, և այնուհետև՝ Արցախ-Ղարաբաղի և այլ տարածքների պարագայում: Լոռու հայ աշխատավորների ըմբոստությունը մենշևիկյան Վրաստանի դեմ հենց այդ բարենպաստ իրավիճակն էր, որը պայմանավորեց բոլշևիկյան միջամտությունը, իսկ այնուհետև նաև՝ Վրաստանի օրակարգային դարձած «սովետիզացիան»: Այսպիսով, մի քաղաքական հանգամանք պարզից պարզ էր, որ քանզի Չեզոք գոտին ինքնին վիճարկելի տարածք է, և այնտեղ երեք ամիս անընդմեջ տեր ու տնօրինություն են արել վրացական զորամասերը, այնտեղ հաստատուն կանգնած է եղել վրացական կայազորը, ՌԿ(բ)Կ ԿԿ Կովբյուրոն հենց այդ թույլ կետն ընտրեց տարածաշրջանային իր հանգուցալուծումների հերթական օղակի վերաձևման և սրբագործման համար: Մեկ կարևոր հանգամանք ևս կար: Քանզի խորհրդային Մոսկվայի կարևորագույն նպատակներից մեկը Կովկասում Վրաստանի հնարավորինս շուտափույթ տեղափոխումն էր բոլշևիկյան ազդեցության ոլորտ, և 1921 թ. փետրվարի 13-ին լրանում էր այն ժամկետը, համաձայն որի վրացական զորքերը պետք է դուրս բերվեին Չեզոք գոտուց, և ըստ այդմ Լոռու «աշխատավորության ապստամբության» համար հարմար առիթը դադարում էր որոշակի գործոն լինելուց, հետևաբար չօգտագործել հարմար քաղաքական պա-

հը և չմոտեցնել Վրաստանի սովետիզացիայի հնարավորությունները իրականին, նշանակում էր ձախողվել իրենց վարած հարավկովկասյան տարածաշրջանային քաղաքականությունում, ինչը բոլշևիկյան Մոսկվան պարզապես չէր կարող թույլ տալ: Այսինքն, Խորհրդային Ռուսաստանի և մենշևիկյան Վրաստանի բախումը սերտորեն շաղկապվեց հայ-վրացական տարածքային սահմանավեճի հետ և ճարպկորեն օգտագործվեց Մոսկվայի կողմից:

Հայ-վրացական Լոռվա միջադեպի հետ շաղկապված Վրաստանի խորհրդայնացման խնդրին իր որոշակի անդրադարձն ունեցավ Ի. Վ. Ստալինը, որը 1921 թ. հունվարի 24-ին պարզապես Կենտկոմի անդամներին ուղղորդեց դեպի նոր բնագիծ Վրաստանի խորհրդայնացման խնդրում. «Առաջարկում եմ հավանություն տալ ընկ. Գ. Չիչերինի գծին Վրաստանի հարցում և հրահանգել հանրապետության Ռազմահեղափոխական խորհրդին Կովկասում անմիջապես նախապատրաստական աշխատանքներ սկսելու անհրաժեշտության մասին՝ հարցը ռազմական միջամտության կարգով լուծելու համար: Միաժամանակ հրահանգ տալ ընկ. Օրջոնիկիձեին՝ Վրաստանի հայտնի շրջաններում ապստամբական ելույթներ կազմակերպելու անհրաժեշտության մասին»[1270]: Շուտով գործերի ընթացքին կրկին ակտիվ միջամտում է Վ. Լենինը, որը ծանոթանալով Գ. Չիչերինի և Ի. Ստալինի կողմից առաջադրված դրույթներին, ինչպես նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի անդամներ Լ. Տրոցկու, Լ. Կամենևի, Ն. Կրեստինսկու դիրքորոշմանը մի քանի օրով հետաձգել խնդրո առարկայի քննարկման հանգուցալուծումը[1271], 1921 թ. հունվարի 26-ին ուղղակի եզրահանգում է՝ հրահանգել «Հանրապետության ռազմահեղխորհրդին և Կովկասյան ռազմաճակատի ղեկավարությանը անհրաժեշտության դեպքում նախապատրաստվել Վրաստանի հետ պատերազմի»[1272]: Այդ ռազմավարությունը ունենում է իր շարունակությունը, և Գ. Օրջոնիկիձեն մի շարք նոր տեղեկություններ ստանալով, այդ թվում Ա. Շեյնմանից տեղեկացվելով Կովկասում հասունացող հակախորհրդային իրադարձությունների մասին, 1921 թ. փետրվարի 6-ին Վ. Լենինին հեռագրում է սպասվող իրադարձությունների և Կովկասում

[1270] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 4033, միկրոժապավենների հավաքածու, գ. 2, թ. 3, գ. 7, թ. 29:
[1271] Տե՛ս նույն տեղում, գ. 3, թ. 16:
[1272] Տե՛ս նույն տեղում, թ. 17-18:

կատարված քաղաքական փոփոխությունների մասին. «Կրկին ու կրկին տեղեկացնում եմ Չեզ, որ գարնան մոտենալու հետ դրությունը Կովկասում ավելի ու ավելի սպառնալից է դառնում», ըստ այդմ Լենինին համոզում է հավանություն տալ Վրաստանում զինված ապստամբության կազմակերպմանը[1273], այսինքն սովետականացման իրականացմանը:

Այս կապակցությամբ Է. Անդերսենը և Գ. Էգգեն կարծում են, որ իբր Վրաստանը Սովետական Հայաստանի տարածք չի ներխուժել և չի էլ մտադրվել դա անել, որը կարծում ենք, վերջիններիս կողմից ընդամենը բառախաղ է և ոչ ավելին, քանզի հենց նույն Է. Անդերսենը և Գ. Էգգեն գրում են, որ վրացիները «զբաղեցրել են Լոռին, ավելի ճիշտ «Չեզոք գոտուց» հարավ գտնվող տարածքը արդեն առանց հայերի հետ համաձայնության»[1274]: Իհարկե, հասկանալի է, որ Վրաստանի կառավարության առաջարկով և Հայաստանի կառավարության համաձայնությամբ էր, որ վրացական զորքերը մտան «Չեզոք գոտի», որտեղից երեք ամիս անց պետք է դուրս գային, չնայած պարզից էլ պարզ էր, որ ինքնին վրացական զորքերի գտնվելը Չեզոք գոտում առաջ չէր բերում ոչ մի նոր իրավունք այդ տարածքի նկատմամբ, եթե, իհարկե հայտնի պայմանագիրը երկկողմանի համաձայնությամբ չերկարաձգվեր:

Հարցն, անշուշտ, այդպես հեշտությամբ չգնաց իր կարծես թե ինքնին հասկանալի հանգուցալուծմանը: Վրաստանը տպավորություն էր թողնում, որ չի փորձում խուսափել ռազմաքաղաքական հարաբերություններում լարվածության նոր շերտերի ստեղծումից: Դրան ի պատասխան Խորհրդային Հայաստանն օգտագործեց իր բոլոր հնարավորությունները՝ խորապես հաշվառելով աշխարհաքաղաքական նոր իրողությունները Հայաստանի շուրջ: Այսպես, 1921 թ. հունվարի 15-ի դիմումագրում, ուղղված մենշևիկյան Վրաստանի կառավարությանը, ՀԽՍՀ Արտաքին Գործերի ժողովրդական կոմիսարը վկայակոչելով վրացական կողմից 1919 թ. հունվարյան վեհաժողովի հիման վրա ձեռք բերված պայմանավորվածության խախտման բազմաթիվ փաստերի

[1273] Տե՛ս Եսայան Ա., Հայաստանի միջազգային դրությունը 1920 -1922 թթ., էջ 179:

[1274] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R.html:

մասին, պահանջում էր չխախտել պայմանագիրը և իրապես ձեռնպահ մնալ Չեզոք գոտում Հայաստանի և Վրաստանի համահավասար իրավունքները ոտնահարող քայլերից[1275]: Սակայն այս անկայուն հավասարակշռությունը հայ-վրացական ռազմաքաղաքական փոխհարաբերություններում երկար չտևեց: Այն շուտով խախտվեց Լոռու Չեզոք գոտու և առհասարակ Լոռու մյուս հայկական բնակավայրերի գյուղացիության ապստամբությամբ ընդդեմ Վրաստանի մենշևիկյան կառավարության տիրապետության, որի պատճառահետևանքային հիմքերը պետք է որոնել Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանի շուրջ ստեղծված նոր ռազմաքաղաքական կացությամբ, որում մենշևիկներին պարզապես տեղ չկար: Լոռվա ապստամբության անմիջական հովանավորն ու ղեկավարը Հայկոմկուսն էր, որը դեռ դեկտեմբերի 23-ին քննարկման առարկա էր դարձրել Չեզոք գոտու և դրանում կուսակցական-քաղաքական աշխատանքի հարցը, այդ նպատակի համար այնտեղ ուղարկելով բոլշևիկ, քաղաքացիական կռիվների ակտիվ մասնակից, ՀԽՍՀ Ռազմական Գործերի ժողկոմի տեղակալ և կարմիր բանակի քաղվարչության պետ Հովսեփ Գերասիմի Լազյանին «որպես քաղաքական և կուսակցական պատասխանատու աշխատող»[1276], որի կապակցությամբ արտահայտվել էր նաև Բորիս Լեգրանը, որը պնդել էր այդ նշանակման օգտին: Ապստամբության կազմակերպմանը ակտիվորեն ներգրավվեց 11-րդ Կարմիր բանակի ռազմհեղկոմիտը: Հովսեփ Լազյանը ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի և ՀԿ(բ)Կ կենտկոմի համաձայնեցված որոշմամբ նշանակվում է Լոռու աշխատավորների զինված ապստամբության շտաբի պետ[1277]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, նոր իշխանությունները իրենց ռազմաքաղաքական նախագծումների իրականացման համար առաջնահերթ նշանակություն էին տալիս փորձված զինվորական գործիչների ճիշտ տեղաբաշխմանը, և սովետական իշխանության լեգիտիմությունը ապահովելու համար խնամքով նախապատրաստում Լոռվա ապստամբ գյուղացիության ընդվզման վարկածն ընդդեմ մենշևիկյան

[1275] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 114, ց. 2, գ. 11, թ. 54-56:

[1276] Տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 80:

[1277] Տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում…, էջ 372:

Վրաստանի, որը ձեռնտու էր հայաստանյան բոլշևիկներին, և դրանում իր անթերի դերակատարումն ունեցավ հայտնի բոլշևիկյան կուսակցական և ռազմական գործիչ Հովսեփ Լազյանը:

Հ. Լազյանը անդրադառնալով այդ կարևոր ռազմաքաղաքական իրողություններին և մասնավորապես Լոռվա դեպքերին, ընդգծում է, որ Հայաստանի խորհրդայնացման իսկ պահից սկսած Լոռվա ողջ շրջանը պատվեց բոլշևիկյան կազմակերպությունների լայն ընդհատակյա ցանցով, և պարզապես «ընկ. ընկ. Օրջոնիկիձեի և Լեգրանի նախաձեռնությամբ որոշվել էր գոտում ապստամբության գործը կատարել ՀԿԿ Կենտկոմի անունից»[1278]: Փետրվարի սկզբին Ղարաքիլիսա են ժամանում 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Ա. Ի. Հեկկերը և ռազմահեղափոխական խորհրդի անդամ Վեսնիկը:

Ապստամբության նախապատրաստական քայլերի մեջ կարևոր տեղ հատկացվեց Չեզոք գոտում ինչպես կուսակցական աշխատանքի ուժեղացմանը և կուսակցական բջիջների ստեղծմանը, այնպես էլ զինված խմբերի, Չեզոք գոտու հարևանությամբ Ղարաքիլիսայում պարտիզանական գնդի ստեղծմանը (այն բաղկացած էր 800 հոգուց, որի հրամանատարն էր Հովսեփ Լազյանը, իսկ ապստամբության ղեկավարը՝ գեներալ Հ. Հովսեփյանը), միաժամանակ ակնկալելով մշտապես պատրաստ վիճակում գտնվող Կարմիր բանակի զորամասերի միջամտությունը ռազմաքաղաքական սպասվող գործընթացներին և դրանց աջակցությունը Լոռվա հայ գյուղացիության ապստամբական ելույթին ընդդեմ Վրաստանի մենշևիկյան օկուպացիոն իշխանության, որի կարևորագույն նպատակադրումներից մեկը դարձավ Վրաստանի մոտալուտ խորհրդայնացման իրագործումը: Այս բոլորը տեղի էին ունենում խիստ գաղտնի իրավիճակում, և միայն ապստամբության սկսման պահին շտաբը Ղարաքիլիսայից տեղափոխվեց Սանահին: Տեղերում օպերատիվ աշխատանքի լծվեցին ինչպես խորհրդային և կուսակցական մարմինները, այնպես էլ տեղամասային ռազմական ջոկատները:

Ապստամբության ղեկավարների կողմից կարևորվեց ապստամբությանը աջակցման տեսանկյունից 11-րդ Կարմիր բանակի զորամասերի ակտիվ մասնակցության հարցը, որի շուրջ Հովսեփ Լազյանը դե-

[1278] Տե՛ս նույն տեղում, էջ 90-91:

ռևս 1921 թ. փետրվարին պայմանավորվածություն ձեռք բերեց Ա. Հեկկերի հետ, որի արդյունքում ապստամբների տրամադրության տակ դրվեց 300 ռուսական զինվորներից կազմված գումարտակը հրամանատար Բոչկարյովի և զինվորական կոմիսար Խառլամովի գլխավորությամբ, որին կամավոր միացան նաև Լոռու գավառի 300 ռուս գյուղացիներ: Ինչպես բազմանշանակ վկայում է Հ. Լազյանը, «այդ ժամանակ մեզ հայտարարեցին, որ ապստամբների շտաբը ենթարկվելու է 11-րդ բանակին: Դրանով արդեն ապահովվեց Կարմիր բանակի օգնությունը ապստամբներին»[1279]: Հենց այդ հիմնախնդրի իրագործման համար դեռ 1921 թ. փետրվարի 7-ին կազմակերպվել էր Լոռու Ռազմահեղափոխական կոմիտեն բոլշևիկ Հովսեփ Լազյանի գլխավորությամբ[1280]: Քաղվարչության Ռազմահեղափոխական կոմիտեի կազմում ընդգրկվեցին Ս. Էվոյանը, Ս. Սարգսյանը, որոնք ծավալեցին ակտիվ գործունեություն ապստամբության նախապատրաստման նպատակով: Ամբողջ Չեզոք գոտին կուսակցական-սովետական գծով բաժանվեց 5 տեղամասի՝ Վորոնցովկայի, Դսեղի, Ուզունլարի, Ջալալօղլու և Շնողի, իսկ ռազմական տեսանկյունից՝ երեք խմբի՝ Լոռվա, Շնողի և Շահալիի (Ջամանլուի-Վահագնի) կամրջի փրկության: 1921 թ. սկզբին Հայաստանի Հեղկոմը Ս. Կասյանի ստորագրությամբ վերջնագիր ներկայացրեց Վրաստանի մենշևիկյան կառավարությանը, պատճենը ուղարկելով Մոսկվա՝ Արտաքին Գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինին: Դրանում, մասնավորապես Ս. Կասյանի կողմից ընդգծվում էր. «Վրաստանի դեմոկրատիկ հանրապետության կառավարությունը, օգտվելով Հայաստանի պատերազմական ճնշված դրությունից, մտցրել է իր զորքերը Չեզոք գոտի՝ չունենալով այդ անելու ոչ մի իրավական հիմք: Հայաստանի Հեղկոմը պահանջում է վրացական զորքերի շուտափույթ հեռացում Չեզոք

[1279] Տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում…, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 96:

[1280] Լազյան Հովսեփ Գերասիմի (Կարապետի) [10.06.1888 թ. - 9.05.1938 թ.] - Հովսեփ Լազյանը Խորհրդային Հայաստանում գտնվող Կարմիր բանակի և Հայկական դիվիզիայի պետն էր և Կարմիր Դրոշի առաջին շքանշանակիրը: 1930 թ. Հ. Լազյանը եղել է Մոսկվայի «Рабочая Москва» և «Вечерняя Москва» թերթերի խմբագիր, 1930-1934 թթ. Հանդիսացել է Լոնդոնում ՌԽՖՍՀ դեսպանատան ներկայացուցիչ, 1934-1935 թթ.՝ դեսպանատան առևտրական ներկայացուցիչ, 1935-1937 թթ.՝ Լոնդոնում ՏԱՍՍ-ի ղեկավար: Նա դարձավ ստալինյան բռնությունների զոհ:

գոտուց և տրանզիտային ապրանքների ազատ մուտք Հայաստան»[1281]: Իրադարձությունները զարգանում էին գլխապտույտ արագությամբ: Եվ շուտով Կարմիր բանակի համար հարմար առիթ ներկայացավ միջամտելու Վրաստանի ներքին գործերին: Դա անմիջականորեն շաղկապվեց Բորչալուի շրջանում տեղի ունեցող իրադարձությունների հետ, որոնք սկսվել էին դեռ 1921 թ. փետրվարի 11-ին: Այդ ժամանակաշրջանում Լոռին դարձել էր բոլշևիկյան Հայաստանի հետաքրքրության ամենակարևոր օբյեկտը:

Հայտնի է, որ 1920 թ. նոյեմբերի 13-ին Լոռին Վրաստանի և Հայաստանի միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, կապված թուրքական սպառնալիքի հետ, երեք ամսով հանձնվել էր Վրաստանի տնօրինությանը: Հայտնի է, որ փետրվարի 13-ին լրանում էր Վրաստանի հետ դաշնակցական Հայաստանի կառավարության կողմից կնքված ժամանակավոր պայմանագրի ժամկետը, որով Վրաստանին էր հանձնվել Չեզոք գոտու հարավային մասի տնօրինությունը, սակայն վերջինս պարզապես «մոռացել էր» այդ մասին, մանավանդ որ, պայմանագիրը ստորագրող պետության կառավարությունը այլևս չկար և վրաց մենշևիկները, օգտվելով ստեղծված իրավիճակից, որոշել էին ինքնակամ տնօրինել այդ տարածքի հետագա ճակատագիրը, անտեսելով այն հանգամանքը, որ նոր տերեր են հայտնվել: Շատ հարմար առիթ էր Լոռիում տեղական հայերի «ապստամբության կազմակերպման» համար, որի համար անհրաժեշտ քաղաքական նախադրյալներ կային, ավելացրած դրան՝ Վրաստանի օրակարգային և խնամքով ծրագրված խորհրդայնացման և վերջինիս նոր՝ բոլշևիկյան «իմպերիայի» մեջ ընդգրկելու ռազմավարության իրողության մասին, որ ըստ Հովսեփ Լազյանի «Երևանից ստացված հաղորդման համաձայն [Չեզոք] գոտու ազատագրման հարցն արդեն կապվում էր Վրաստանի խորհրդայնացման հետ և մենք ընդհանուր հետախուզություն սկսեցինք ամբողջ Վրաստանում»[1282], ավելացրած դրան ներքին կապերը Վրաստանի կոմունիստա-

[1281] Տե՛ս Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 471-472:

[1282] Տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 94, 98- 99:

կան կազմակերպությունների հետ, որտեղից ստացվում էր անհրաժեշտ տեղեկույթի մի մասը, անշուշտ՝ Մոսկվայի հրահանգավորմամբ:

1921 թ. փետրվարի կեսերին Ա. Շեյնմանի միջոցով Վրաստանի կառավարությանն էր փոխանցվում մի հեռագիր, որում ընդգծվում էր, որ դեռ նախորդ տարվա նոյեմբերից սկսած վրացական կառավարությունը իր զորքերով գրավել է ոչ միայն Վրաստանի և Հայաստանի միջև գտնվող ողջ մնացած չբզբաղեցված մասը, այլև և անվիճելիորեն Հայաստանին պատկանող տարածքի հյուսիսային մասը, չնայած Հայաստանի խորհրդային կառավարության կողմից դեռ 1920 թ. նոյեմբերի 26-ին հայտնած բողոքին: Հեռագրում նաև հայտնվում էր, որ վրացական զորքերը շարունակում են զբաղեցնել այդ վայրերը՝ բնակչությանը ենթարկելով ամեն տեսակի բռնությունների, քարոզչություն ծավալելով բնակչության մեջ՝ Վրաստանին միանալու կոչով և նույնիսկ բռնությամբ ստորագրություններ կորզելով, որ իրենք կամավոր կանցնեն Վրաստանի իշխանության ներքո[1283]:

Ապստամբության կազմակերպական խնդիրների մեջ կարևոր տեղ հատկացվեց ռազմաքաղաքական առումով կարևոր և վրացական զինվորների անմիջական հսկողության տակ գտնվող Շահալիի կամրջի ականազերծման խնդիրը, որը Հայաստանը արտաքին աշխարհի հետ կապող կարևոր օղակներից էր, երկաթգծի ապահով աշխատանքի ապահովման հանգուցային օղակներից, որով Խորհրդային Հայաստան էին ներմուծվում անհրաժեշտ ապրանքներ, վառելիք և այլն: Հենց այս տեսանկյունից վրացական հնարավոր վնասարար գործունեությունից ապահովագրվելու և կամրջի անվտանգությունը ապահովելու համար (կամրջի տակ տեղադրված էր 10 կիլոգրամանոց 24 ռումբ) ստեղծվեց հատուկ խումբ, որի կողմից իրականացվող պատասխանատու գործողությունների ղեկավարությունը դրվեց Արտաշես Ստեփանյանի վրա: Ինչպես վկայում է Հովսեփ Լազյանը, խմբին հաջողվեց ներթափանցել Շահալիի կամուրջը պահպանող թշնամու դիրքերի մեջ և փայլուն իրականացնել իր վրա դրված առաջադրանքը՝ կտրել ականների լարերը, ձերբակալել թշնամու սակրավորներին և զինաթափել Շահալիի հայտ-

[1283] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Կ - 4033, ց. 2, գ. 1218, թ. 1-2:

նի կամրջի շրջանի 400 հոգուց բաղկացած կայազորը[1284], ինչից էլ կախված էր Թիֆլիս-Կարս-Երևան-Ջուլֆա երկաթուղային ռազմավարական նշանակության ճանապարհագծով անխափան կապի ապահովումը և ապրանքափոխադրումների անխափան իրականացումը:

Ոչ բոլոր վրաց քաղաքական-կուսակցական գործիչները և քաղաքագետները այդ փաստը ցնծությամբ ընդունեցին, սակայն օգտագործեցին հարմար պահը, ակնկալելով, որ ժամանակն ու ինքը՝ կյանքը, իրենց անառարկելի ուղղումները և անհրաժեշտ ու օգտաշատ սրբագրումները կմտցնեն ռազմաքաղաքական գործընթացներում և հնարավոր կլինի Լոռու հարցը հօգուտ Վրաստանի լուծել: Այս տեսանկյունից թեկուզև Ն. Ն. Ժորդանիան[1285] և ուրիշները ձեռնածություն էին անում, թե օտար բնակչությամբ տարածքների միացումը իրենց հանրապետության քաղաքական սխալ էր և վրիպում, բայց միաժամանակ ավելացնում էին, թե այդպես վարվեցին, որովհետև իրենց սահմանների պաշտպանությունը հարկադրեց գնալ այդ քայլին, չնայած երբեք էլ վրացական կողմը չի հրաժարվել հայկական Լոռու նկատմամբ հավակնություններից: Այսինքն, «դեմագոգիան» այդ պահին անհրաժեշտություն էր սեփական ռազմավարական ծրագրերի իրագործման և «վեհապետական-ռամիշվիլիական» Վրաստանի շահերից բխող սահմանային-տարածքային վիճարկելի համարվող հիմնախնդիրների լուծման համար հօգուտ մենշևիկյան հանրապետության, և որոնց արժանի իրավաժառանգորդները 1921 թ. փոթորկալից իրադարձություններից և Վրաստանի բռնի խորհրդայնացումից հետո հանդիսացան վրաց բոլշևիկները, և որոնք էլ շարունակեցին իրենց նախորդների քաղաքականությունը հայկական Լոռու և այլ հարցերում, որոնք նույնքան անզիջում և համառ գտնվեցին, որքան և՛ Ն. Վ. Ռամիշվիլին, և՛ Ն. Ն. Ժորդանիան, և՛ նրանց անմիջական համախոհները: Սահմանատարածքային վեճը երկու հանրապետությունների մշտական ուղեկիցն էր և ռազմաքաղաքական լարվածության կարևոր գործոններից, վերջնականապես անլուծելի մնալով առ այսօր:

[1284] Տե՛ս նույն տեղում, էջ 93:

[1285] Ժորդանիա Նոյ Նիկոլայի [9 (21) մարտի, 1869 թ. – 11 հունվարի, 1953 թ.] - վրաց պետաքաղաքական անվանի գործիչ, Վրաստանի դեմոկրատական հանրապետության կառավարության 2-րդ նախագահ [24 հուլիսի, 1918 թ. -25 փետրվարի, 1921 թ.]:

Այդ ընթացքում Վրաստանի մենշևիկյան կառավարությունը ձեռնարկեց մի շարք կանխարգելիչ միջոցառումներ, որպեսզի կանխի Լոռվա գյուղացիության նախապատրաստվող ապստամբությունը: Վրացական իշխանությունների կողմից բռնություններ կիրառվեցին Լոռվա գյուղացիության, հայկական գյուղերի նկատմամբ: «Մենք ունեինք տեղեկություններ,- գրում է Ն. Ժորդանիան,- որ հարձակումը սկսվելու է Բորչալուի կողմից և Մոսկվան կներկայացնի այն Եվրոպային որպես ապստամբություն Վրաստանի ներսում: Միջոցներ ձեռնարկեցինք Բորչալուի շրջանը ամրացնելու համար: Միաժամանակ այնտեղ ուղարկեցինք հայկական սոցիալ-դեմոկրատներին, վրաց քաղաքացիների՝ քարոզչության համար: Նրանց կողմից հաղորդված տեղեկությունները սփոփիչ չէին: Միտինգների ժամանակ հայկական ընդդիմադիր ազգայնականները ելույթ չունեցան, ոչ մի պահանջ չներկայացրին, կարծես թե այդ ամեն ինչից գոհ էին: Այդ արտաքուստ հանգստությունը մեզ կասկածելի թվաց: Պարզ էր, որ ինչ-որ բան ծածուկ նախապատրաստվել է: Անշուշտ, մեր հանրապետությանը օտարածին բնակչությամբ շրջանների միացումը մեր սխալն էր, սակայն դա էին պահանջում մեր ստրատեգները սահմանների պաշտպանության նպատակով»[1286]:

Արդյունքում, նոր իրողությունները Անդրկովկասում մենշևիկյան Վրաստանին կանգնեցրին աշխարհաքաղաքական նոր բարդույթների առաջ, քանզի բոլշևիկների առաջխաղացման համար այլևս լուրջ խոչընդոտներ Անդրկովկասում չկային, Թուրքիայի հետ էլ կար որոշակի պայմանավորվածություն, ուրեմն Վրաստանը և ոչ մի քաղաքական ուժ չէր կարող արգելք լիներ բոլշևիկների կողմից մշակված նախագծերի իրագործման ճանապարհին: Բնականաբար խնամքով նախապատրաստված, այսպես կոչված, «Լոռու գյուղացիության ապստամբությունը» փետրվարի 11-12-ին սրընթաց հաղթանակեց և գրեթե ողջ Բորչալուի գավառն ազատագրվեց վրացական զորքերից: Այս կապակցութ-

[1286] Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html: // См.: Жордания Н., Мое прошлое. Воспоминания, Париж, 1953, стр. 112, 121. (На груз. яз.): Տե՛ս նաև Жордания Н. Н., Моя жизнь / перевод с грузинского Инны Жордания, Станфорд, 1968: См.: в книге Ментешашвили А. М., Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии. 1917-1921, Тбилиси, Изд-во «Ганатлеба», 1987, стр. 184:

յամբ Գ. Կ. Օրջոնիկիձեն 1921 թ. մարտի 9-ին Թիֆլիսում ունեցած ելույթում ուղղակի փաստում է հետևյալը. «Լոռվա գյուղացիներն ապստամբություն բարձրացրին մենշևիկյան օկուպացիոն զորքերի դեմ: Ավելի քան 3 հազար վրացի զինվորներ համարյա առանց որևէ դիմադրության զենքը գցեցին և հանձնվեցին ապստամբներին: Երեք-չորս օրվա ընթացքում ոչ միայն Չեզոք գոտին, այլև համարյա ամբողջ Բորչալուի գավառն ազատվեց 7 հազարանոց մենշևիկյան զորքերից:… Պարզ է, իհարկե, որ մոտ կանգնած Կարմիր Բանակը չէր կարող սառնարյուն կերպով նայել, թե ինչպես են մենշևիկները գնդակահարում սովետական իշխանության համար ապստամբություն բարձրացրած գյուղացիներին»[1287]: Լոռվա ապստամբությունը խնամքով կազմակերպված էր և այն ունեցավ հաղթական ավարտ, «ապստամբները գերի վերցրին մոտ 3000 հոգու և շատ սպաների: Գրավվեցին 40 գնդացիր և երկու սարքին լեռնային հրանոթ: Որպես ռազմավար գրավվեցին նաև 3 շոգեքարշ, մի քանի ցիստեռն մազութ ու նավթ, ինչպես նաև շարժական կազմ»[1288]: Ընդ որում հարկ է նշել, որ ապստամբների կողմից ձերբակալվեց Չեզոք գոտու կոմիսարը՝ գեներալ-նահանգապետ Գլոնտին[1289]::

Պատմաքաղաքական այս կարևոր իրադարձությունները տարբեր բևեռներում գտնվող պատմաբանների կողմից իրարամերժ գնահատումների և արժևորումների են արժանացել: Վրաց պատմաբանների մի մասը շարունակում է մնալ այն կարծիքին, որ 1921 թ. փետրվարի 12-ին Լոռիում ոչ մի ներքին ապստամբություն էլ տեղի չի ունեցել, այլ ընդամենը եղել է «10 հազար վերազգեստավորված ռուս զինվոր-կարմիրբանակայինների» ներխուժում Վրաստանի Հանրապետության տարածք[1290], չնայած հարկ է ավելացնել, որ մի շարք խորհրդային պատմաբաններ հենց իրենք չեն ժխտում այն դիտարժան հանգամանքը, որ «զինված ապստամբությունը Լոռիում և Վրաստանում կազմել են մեկ

[1287] Տե՛ս Օրջոնիկիձե Գ. Կ., Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 44-45:

[1288] Տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու էջ 100:

[1289] Տե՛ս Կարապետյան Ս. Խ., Զինված ապստամբությունը Լոռում 1921 թվականին, էջ 95:

[1290] Տե՛ս http://fr.wikipedia.dela Géorgie. Տե՛ս http://olegpanfilov2.om/1709380.html: Տե՛ս նաև iberiana.wordpress.com/armenia-georgia/marxulia-interviu/ Տե՛ս նաև http://news.day.az/politics/263452. html:

ամբողջություն»: Կարևոր չէ, թե ինչ մեթոդներով և եղանակներով է իրականացվում քաղաքականությունը, այդ թվում զինված միջամտությունը այլ երկրների գործերին, կարևոր են արդյունքները:

Ակնհայտ էր, որ ապստամբությունը խնամքով նախապատրաստված էր, և այն սկսվեց փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը և արագորեն ընդգրկեց Լոռու ողջ շրջանը: Ապստամբները արագորեն գրավեցին Լոռու հայտնի գյուղերը՝ Չիբուխլուն, Ուզունլարը (Օձունը), Դսեղը և այլն, զինաթափելով այնտեղ գտնվող վրացական զորամասերը, որին հաջորդեց ռազմավարական առումով շատ կարևոր, արտաքին աշխարհի հետ սերտորեն կապող Շահալի-Ջամանլուի կամրջի հաջող գրավումը, որի պայթեցումը կանխելու գործում մեծ էր Արտաշես Ստեփանյանի դերակատարումը, որը հայթայթեց անհրաժեշտ հետախուզական տեղեկատվություն, ինչն էլ ապահովեց խնդրի իրագործումը, ինչպես նաև Շահալի կայարանի և համանուն գյուղի 400 հոգուց բաղկացած վրացական կայազորի զինաթափումը: Արագ իրագործվեց նաև Չիբուխլուի վրացական կայազորի զինաթափումը: Ընդհանուր առմամբ Լոռվա Չեզոք գոտում ռազմական գործողությունները հաջող ընթացան, առաջադրված ռազմավարական խնդիրները լուծվեցին, բացառությամբ Վորոնցովկայի և Պրիվոլնոյի շրջաններում վրացական զորքերի մասնակի հաջողություններից և տեղական բնակչության նկատմամբ կիրառված բռնություններից, որոնք սակայն արագ վերացվեցին 11-րդ Կարմիր բանակի զորամասերի կողմից, և առանձնապես լուրջ խոչընդոտներ չհարուցեցին Լոռվա Չեզոք գոտին մենշևիկյան Վրաստանի զորքերի անհարկի ներկայությունից ազատագրելու գործում: Հ. Լազյանի 1921 թ. դեկտեմբերի 3-ի զեկուցագրում՝ ուղղված ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյին, անդրադառնալով Լոռու Չեզոք գոտում ապստամբության կազմակերպման տարեգրությանը, նշում է, որ իրենց «գործակալներից մի քանիսը ծառայության էին մտել երկաթուղում և հետախուզության նպատակով շրջագայում էին ամբողջ Վրաստանում»[1291]:

Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնակատար Կ. Սաբախտարաշվիլին 1921 թ. փետրվարի 12-ին արձանագրում է իր տեսանկյունից «դիտարժան հետևյալ «փաստը». «Հայաստանը Խորհրդա-

[1291] Տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 94:

յին իշխանության հռչակումից անմիջապես հետո պահանջեց մեր զորքերի դուրսբերումը Բորչալուի գավառից: Մենք ուղղակի չմերժեցինք և առաջարկեցինք բանակցություններ սկսել այդ հարցի կապակցությամբ: Հայկական կառավարությունը համաձայնվեց և մենք սպասում էինք նրա ներկայացուցիչներին ակնկալվող վրաց-հայկական կոնֆերանսին: Մենք ակնկալում էինք խաղաղ ճանապարհով վճռել Բորչալուի գավառի մասին հարցը: Կարելի է ենթադրել, որ հայերը ցանկանում էին կազմակերպել լայն ապստամբություն գավառում, որպեսզի ստիպեն մեզ այն թողնել և դրանով իսկ մեզ կանգնեցնել փաստի առաջ: Առավել ևս, որ հին հայկական կառավարության հետ պայմանագրի համաձայն Բորչալուի գավառում մեր զորքերի մնալու ժամկետը սպառվում է վաղը, փետրվարի 13-ին»[1292]: Նա նաև մեղադրում էր հարձակման մեջ հայկական կամ խորհրդային զորքերին, որոնք խախտել էին Վրաստանի մենշևիկյան հանրապետության և բոլշևիկյան Ռուսաստանի միջև կնքված 1920 թ. մայիսի 7-ի պայմանագրի տառն ու ոգին. «Փետրվարի 11-ին, գիշերը, Հայաստանում գտնվող զորամասերը Բորչալուի գավառում Շահալի գյուղի մոտ հանկարծակի հարձակվեցին մեր սահմանապահ զորամասերի վրա: Դրա հետ մեկտեղ մեր դեմ ապստամբություն տեղի ունեցավ նշված գավառի հայկական և ռուսական գյուղերում»: Կ. Սաբախտարաշվիլին 1921 թ. փետրվարի 12-ին Վրաստանում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանին[1293] ուղղված գրության մեջ Խորհրդային Հայաստանին կոպտորեն մեղադրում էր Վրաստանի դեմ նախապատրաստվող պատերազմում, որը վերջինս փետրվարի 14-ի պատասխան գրությունում ժխտում է, որոնք շուտով

[1292] Տե՛ս http://fr.wikipedia....de la Géorgie. http://olegpanfilov2...om/1709380.html:

[1293] 1920 թ. դեկտեմբերի 27-ից սկսում է գործել Վրաստանի մենշևիկյան հանրապետության կառավարությանը կից Խորհրդային Հայաստանի լիազոր-ներկայացուցչությունը: Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից լիազոր-ներկայացուցիչ է նշանակվում Դանուշ Շահվերդյանը: Երբ Վրաստանում սկսվում են խորհրդային կարգերի հաստատման գործընթացները, մենշևիկյան կառավարությունը ձերբակալում է Խորհրդային Հայաստանի լիազոր-ներկայացուցիչ Դ. Շահվերդյանին: Արդյունքում, ՀԽՍՀ ներկայացուցչությունը Վրաստանում փակվում է: Դրան ի պատասխան Հայաստանի Հեղկոմի կարգադրությամբ ռետորսիայի [հակազդամիջոցի] կարգով տնային կալանքի ենթարկվեց Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչը Խորհրդային Հայաստանում. – տե՛ս Եսայան Ա., Հայաստանի միջազգային-իրավական դրությունը. 1920-1922, էջ 379-380:

փոխարինվում են Վրաստանի կառավարության բազմաբնույթ բողոքագրերով ընդդեմ Խորհրդային Հայաստանի, քանզի վրացական կողմի համար ակնհայտ է դառնում, թե տարածաշրջանային ռազմաքաղաքական իրողություններում ով է գլխավոր դերակատարը:

Սակայն ակնհայտ էր նաև, որ խորհրդային իշխանությունները ևս դիտորդի դերում չէին այս իրադարձությունների ծավալման պահին: Խորհրդային Ռուսաստանի Արտաքին Գործերի ժողկոմ Գ. Չիչերինը 1921 թ. փետրվարի 14-ին Վրաստանի հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Մախարաձեին ուղղված ճեպագրում հայտնում էր այն մասին, որ իրենց ձեռքի տակ առկա տեղեկությունների համաձայն, վրացական զորքերի կողմից գրավված հայկական հանրապետության տարածքի մի մասում՝ Չեզոք գոտում բռնկվել է ապստամբություն ընդդեմ վրացական օկուպացիայի: Չիչերինը ընդգծում էր, որ ինքն իր կողմից մատնացույց է արել իրադրության ոչ նորմալ լինելու մասին՝ կապված վրացական հարձակման հետ, որի համար պատասխանատվությունը ոչ մի կերպ չի կարող դրվել իրենց վրա, այլ միայն բացառապես այդ աննորմալ վիճակը ստեղծողների վրա[1294]:

Այս առումով էլ պատահական չէ, որ արդեն 1921 թ. փետրվարի 18-19-ին, երբ խորհրդային իշխանությունը ժամանակավորապես զիջել էր իր դիրքերը դաշնակցական կառավարությանը, Նոյ Ն. Ժորդանիան Խորհրդային Ռուսաստանի Արտաքին Գործերի ժողկոմ Գ. Չիչերինին ուղղված հեռագրում ուղղակի պահանջում էր ռուսական զորքերը դուրս բերել Վրաստանի Հանրապետության տարածքից և վիճելի հարցերը լուծել բանակցությունների միջոցով[1295], պարզապես ակնարկելով նաև հենց 1920 թ. մայիսի 7-ի ռուս-վրացական համաձայնագրի խախտման մասին, որով երաշխավորվել էր Վրաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, որի մեջ էլ իբր մտնում էր նաև Լոռի-Ախալքալաքը[1296]:

Ակնհայտ էր, որ մենշևիկյան Վրաստանը անտեսում էր աշխարհաքաղաքական իրողությունները, համառորեն ձգտելով իր տիրապե-

[1294] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 1022, ց. 3, գ. 325, թ. 3:

[1295] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 37, ց. 1, գ. 28, թ. 1:

[1296] Տե՛ս Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы (1917 - 1921), Тбилиси, Гос. Изд-во «Сабчота Сакартвело», 1958, стр. 563-568, 659, 640-644, 661-662:

տության տակ պահել վիճելի տարածքները, չցանկանալով իրապես ըմբռնել, որ ռուսական զորքերը, և մասնավորապես Մ. Դ. Վելիկանովի բոլշևիկյան զորամասերը Լոռվա շրջան են տեղափոխվել ոչ թե Հայաստանի Հեղկոմի կարգադրությամբ, այլ բոլշևիկյան կենտրոնի ուղղակի հանձնարարականով, որում գլխավոր դերակատարները Գ. Օրջոնիկիձեն և Ի. Ստալինն էին, որոնք ուղղակի հրահանգ էին ստացել իրագործել այն, ինչ բխում էր բոլշևիկյան Ռուսաստանի ռազմաքաղաքական շահերից:

Բայց փոխարեն կատարելու համաձայնագրից բխող պայմանները, պայմանագրային պարտավորությունները և շրջանը Հայաստանին հանձնելու, վրացական կառավարությունը ապստամբությունը ճնշելու համար վիճարկելի համարվող շրջան նետեց զորքեր, որի տարածքը պատմականորեն պատկանում էր Հայաստանին: Դա նման էր այն բանին, որ 1918-1919 թթ. Վրաստանի և Հայաստանի միջև առաջացավ բախումնալից իրավիճակ և լրացուցիչ զորքեր մտցվեցին Լոռվա շրջանում պատժիչ գործողություններ իրականացնելու և դրանով իսկ, մենշևիկյան Վրաստանը տվեց անհրաժեշտ առիթը առճակատման և ռազմական գործողությունների սկսման համար: Սակայն դրանով չբավարարվելով, մենշևիկյան Վրաստանը այդ նույն ժամանակ հապշտապ զորամասեր մտցրեց Կարսի մարզի հյուսիսային շրջան՝ Արդահանի գավառ, որի գրավման մասին հայ-վրացական 1920 թ. նոյեմբերի 13-ի համաձայնագրում ոչ մի պայմանավորվածություն չկար:

Գ. Կ. Օրջոնիկիձեն փետրվարի 14-ին «Грузкавроста»-ի թղթակցի հետ այդ կապակցությամբ նշել է. «Նոյ Ժորդանիայի կառավարությունը, չնայած ընկ. Չիչերինի առաջարկին Հայաստանի հետ Չեզոք գոտու մասին սահմանավեճը լուծել Խորհրդային Ռուսաստանի կողմից միջնորդությամբ, որոշեց ապստամբների հետ վերջացնել հրով և սրով»[1297]: ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոն արդեն 1921 թ. փետրվարի 14-15–ին XI Կարմիր բանակի Ռազմհեղկոմին հրահանգում է անցնել անմիջական գործողությունների վրաստանյան իրադարձություններին գործնական մասնակցություն ցուցաբերելու և ապստամբներին աջակցելու

[1297] Տե՛ս http://fr.wikipedia....de la Géorgie. Տե՛ս http://olegpanfilov2...om/1709380.html:

ուղղությամբ[1298]: Վ. Ի. Լենինը 1921 թ. փետրվարի 15-ին XI Կարմիր բանակի Ռազմահեղկոմիտեին ուղղված հեռագրում նշեց, որ «Կենտկոմը XI Կարմիր բանակի Ռազմահեղկոմիտեի գործողությունները դիտարկում է որպես Չեզոք գոտու տեղական ապստամբների պաշտպանություն նրանց սպիտակգվարդիականների կողմից սպառնացող բնաջնջումից: Հաշվի նստեք ձեր գործողության այդ քաղաքական բնույթի հետ բոլոր հրապարակային ելույթներում: Բնականաբար, մենք XI Կարմիր բանակի Ռազմահեղկոմիտեից սպասում ենք վճռական և արագ գործողություններ, կանգ չառնելով Թիֆլիսի գրավման առաջ, եթե դա ռազմական նկատառումներով անհրաժեշտ է Չեզոք գոտու իրական պաշտպանության համար նոր հարձակումից»[1299]: Մեկ այլ տեղ, Գ. Կ. Օրջոնիկիձեն 1921 թ. փետրվարի 16-ին հայտնում է. «Վրաց մենշևիկները, կենտրոնացնելով մեծ ուժեր, շարժվեցին ապստամբների դեմ: XI բանակը ստիպված էր ապստամբների փրկության համար անցնել հարձակման»: Այսինքն, ստացվում է, որ սկզբնապես Կարմիր բանակը հարված հասցրեց անօրինական ձևով հայկական տարածք կամ Չեզոք գոտի ներխուժած վրացական զորքերին: Եվ միայն դրանից հետո, Գ. Մախարաձեն Ռազմհեղկոմի հետ միասին ուշացած դիմեցին ո՛չ պետքական և ո՛չ տեղին կոչով: Փետրվարի 16-ին Շուլավերում ստեղծվեց Վրաստանի հեղկոմը հետևյալ կազմով՝ Ֆ. Մախարաձե, Մ. Օրախելաշվիլի, Ա. Գեգեչկորի, Շ. Էլիավա, Ա. Նազարեթյան և ուրիշներ: Բնականաբար, այս ամենին հաջորդեցին Լոռու Չեզոք գոտու իրադարձությունները և խնամքով պլանավորված Վրաստանի խորհրդայնացման սցենարի իրագործումը: Իրենց որոշակի դերակատարումը վրաստանյան իրադարձություններում, ապստամբության կազմակերպման և խորհրդային կարգերի հաստատման մեջ ունեցան ոչ միայն գլխավոր դերակատարի դերում հանդես եկող կրեմլյան բոլշևիկյան լիդերները, այլև նրանց տեղական կամակատարները[1300], չնայած Հայաստանի շահերի տեսանկյունից մենք այստեղ կարևորում ենք հայ բոլշևիկների մի

[1298] Տե՛ս Таирян И., XI Красная Армия в борьбе за установление и упрочение Советской власти в Армении, Ереван, 1971, стр. 186 -187:

[1299] Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 52, էջ 81:

[1300] Տե՛ս Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы (1917 - 1921), стр. 659, 661-666:

մասի գործելակերպը Լոռվա խնդրի հանգուցալուծման ռազմավարության տեսանկյունից:

Լոռու գավառի Չեզոք գոտում հայ գյուղացիության ապստամբությունը սրընթաց էր, այն տևեց երեք օր, և ավարտվեց փետրվարի 15-ին: Աշխարհաքաղաքական բարենպաստ զարգացումների հետևանքով և արդյունքում, Լոռին ազատագրվեց մենշևիկյան Վրաստանի տիրապետությունից և վերամիավորվեց Խորհրդային Հայաստանի հետ: Վրացական շուրջ 7 հազարանոց զորքի դատապարտվածությունն ակնհայտ էր, քանզի խորհրդային իշխանության հաստատման գործընթացն Անդրկովկասում կանխորոշված էր և այն փոխարինելու եկավ գերմանական, անգլո-ամերիկյան գաղութային ազդեցության անդրկովկասյան ոլորտներ որոնողներին: Այս կապակցությամբ Հ. Լազյանը գալիս է տրամաբանական կարևոր եզրահանգման. «եթե ոչ բուն ապստամբությունը, ապա այդ շարժման ազդեցությունը, անտարակույս, դուրս եկավ գոտու սահմաններից, մի բան, որ հեշտացրեց Վրաստանի խորհրդայնացման և Անդրկովկասում խորհրդային իշխանության հետագա ամրապնդման գործը»[1301]:

Լոռու Չեզոք գոտում ծավալված իրադարձությունները մշտապես գտնվել են ՌԽՖՍՀ ղեկավար մարմինների ուշադրության կենտրոնում, քանզի այն հարմար առիթ և գործնական քաղաքական լավ հնարավորություն դարձավ Մոսկվայի համար՝ իր համար ռազմավարական տեսանկյունից կարևոր Վրաստանի խորհրդայնացման խնդիրը լուծելու, և ամրապնդվելու անդրկովկասյան տարածաշրջանում: 11-րդ Կարմիր բանակի Ռազմահեղափոխական խորհրդին ուղարկված 1921 թ. փետրվարի 14-ի հեռագրում Վ. Ի. Լենինը ընդգծել էր Լոռու Չեզոք գոտու ապստամբներին պաշտպանելու անհրաժեշտությունը, և բացատրել բոլոր գործողությունների քաղաքական բնույթը, եզրահանգելով, որ Ռազմահեղափոխական կոմիտեն պետք է դիմի եռանդուն և արագ գործողությունների, և եթե անհրաժեշտ լինի՝ գրավել Թիֆլիսը, եթե դա ռազմական տեսանկյունից պետք լինի Չեզոք գոտին հարձակումներից պաշտպանելու համար: Վ. Ի. Լենինը պահանջում էր լրջությամբ ունկնդրել իրենց զգուշացումներին. «Կենտկոմը հակված է թույլ տալու 11-րդ

[1301] Հեղափոխական կոմիտեները Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 103:

բանակին ակտիվորեն աջակցելու Վրաստանում տեղի ունեցող ապստամբությանը և Թիֆլիսի գրավմանը միջազգային նորմաները պահպանելու դեպքում և այն պայմաններում 11-րդ ռազմհեղխորհրդի բոլոր անդամները լրջորեն քննարկելուց հետո երաշխավորում են հաջողության համար»[1302]: Վ. Ի. Լենինը ակնդետ հետևում էր անդրկովկասյան իրադարձություններին, և XI Կարմիր բանակի Ռազմահեղափոխական կոմիտեին ուղղված 1921 թ. փետրվարի 15-ին հեռագրում ընդգծում էր. «Կենտկոմը 11-րդի ռազմհեղխորհրդի օպերացիաները դիտարկում է որպես Չեզոք գոտու ապստամբների տեղական պաշտպանություն սպիտակգվարդիականների կողմից նրանց սպառնացող բնաջնջումից: Հաշվի առեք ձեր օպերացիայի այդ քաղաքական բնույթի հետ ձեր բոլոր հրապարակային ելույթներում: Իհարկե, 11-րդի ռազմհեղխորհրդից մենք սպասում ենք եռանդուն ու արագ գործողություններ, որոնք կանգ չեն առնում Թիֆլիսը գրավելու առաջ, եթե դա ռազմական նկատառումներով անհրաժեշտ է Չեզոք գոտին նոր հարձակումից իսկապես պաշտպանելու համար»[1303]: Այդ կապակցությամբ անդրադառնալով ստեղծված իրավիճակին, Ի. Ստալինը Գ. Կ. Օրջոնիկիձեին ուղղված 1921 թ. փետրվարի 16-ի հեռագրում, ընդգծում է. «Ցանկալի է, որպեսզի ռուս հրամանատարները, դիվիզիայի պետերը, բրիգադների հրամանատարները թույլ չտային մեկնաբանություններ արշավանքի մասին Վրաստանի դեմ և Ռուսաստանյան Սովետական Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության կողմից ռազմական գործողությունների բացման մասին, ճշգրիտ և պարզ ասեին տեղական զորամասերի կողմից ապստամբների պաշտպանության մասին»:

Դեռ փետրվարի 13-ին Գ. Չիչերինը Վարշավայում Վրաստանի Հանրապետության բանագնացի՝ իշխան Էրիստովի միջոցով (ինչպես բացատրում է Գ. Չիչերինը իր նոտայում) պարզաբանումներ տալով ռազմաքաղաքական զարգացումների մասին, նշում էր, որ իրենք հարկադրված էին այդպես գործել Մոսկվայի և Թիֆլիսի միջև հեռագրագծի ընդհատումների և Թիֆլիսի ռադիոկայանի կանչին պատասխանելուց մերժման պատճառով, և ստեղծված իրավիճակում նոտայով դիմում են Վրաստանի Հանրապետության կառավարությանը: Ընդ որում Գ. Չիչե-

[1302] Տե՛ս Լենին Վ. Ի., Երկերի լիակատար ժողովածու, հ. 52, էջ 80:
[1303] Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 52, էջ 81:

րինը ի դեմս խորհրդային իշխանությունների վերջինիս մեղադրում էր դեռ 1920 թ. նոյեմբերին վրացական զորքերի կողմից գրավված Չեզոք գոտու բնակչության նկատմամբ բռնությունների կիրառման մեջ, որը և առաջ բերեց ապստամբություն վրացական օկուպացիոն զորքերի դեմ: Բացի այդ, Գ. Չիչերինը հնարավոր էր համարում կոնֆլիկտի խաղաղ կարգավորումը շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Այդ նպատակով ՌԽՖՍՀ կառավարությունը պատրաստակամություն էր հայտնում Թիֆլիս ուղարկել Ա. Ենուկիձեին, օժտելով արտակարգ լիազորություններով բանակցությունների միջոցով կոնֆլիկտը կարգավորելու համար:

Միևնույն ժամանակ Չեզոք գոտու «ապստամբներին պաշտպանելու» թեզը օգտագործվեց և Եվրոպային «լուսավորելու», մասնավորապես Վիեննայում հրավիրված Միջազգային սոցիալիստական կոնգրեսի մասնակիցներին տեղեկացնելու համար: Հայկական վարկածի մասին անդրադառնում է նաև Կ. Կաուցկին[1304] Վրաստանի մասին «Վրաստան. Սոցիալ-դեմոկրատական գյուղացիական հանրապետություն: Տպավորություններ և դիտարկումներ» [1921 թ.] գրքում: Վրաստանը սակայն մերժեց ՌԽՖՍՀ միջնորդական առաքելությունը, հույսը դնելով արտերկրից հնարավոր համարվող միջամտությունների վրա, բայց ապարդյուն, քանզի տարածաշրջանային ուժերի ընդհանուր հաշվեկշիռն արդեն որոշվել և հաստատվել էր, որում Վրաստանին իր դերն էր հատկացվել, և այս առումով Կ. Կաուցկին ևս իր Թիֆլիս կատարած իր այցելության վերջում եզրահանգել էր, որ Վրաստանն անխուսափելիորեն գլորվում է դեպի բոլշևիզմ, այսինքն՝ խորհրդային կարգերի հաստատում, և ստեղծված իրավիճակում ո՛չ Կ. Կաուցկին, ո՛չ էլ նրա հետ ժամանած II Ինտերնացիոնալի մյուս առաջնորդները՝ Է. Վանդերվելդեն, Ռ. Մակդոնալդը, Պ. Ռենոդելը և մյուսները այլևս ոչ մի կերպ չէին կարող փրկել Վրաստանի մենշևիկյան հանրապետությանն անխուսափելի դարձած խորհրդայնացումից, ինչն ընդամենը ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակի և նոր կարգերի արտացոլանքն էր հանդիսանում, չնայած Ն. Ժորդանիան էլ իր հերթին փաստում էր, որ իրենք ունեին տեղեկություններ, որ բոլշևիկյան հարձակումը սկսվելու

[1304] Կաուցկի Կարլ [16.10.1854 թ., Պրագա -16.10. 1938 թ., Ամստերդամ] – Գերմանական և II Ինտերնացիոնալի առաջնորդ և տեսաբան, ցենտրիզմի գաղափարախոս, սկզբում՝ մարքսիստ, այնուհետև՝ ռենեգատ:

է Բորչալուից և Մոսկվան այն Եվրոպային ներկայացնելու է որպես բուն Վրաստանի ներսում բռնկված «ապստամբություն», միաժամանակ շատ կարևոր խոստովանանքի հանգելով, որ իրենց հանրապետությանը օտարածին բնակչությամբ շրջանների միացումը եղել է իրենց սխալը, ասելով, թե այդ են պահանջել իրենց «ստրատեգները»՝ սահմանների պաշտպանության համար[1305]: Բայց բավական էր Թիֆլիսը գրավվեր խորհրդային զորքերի կողմից, որ քաղաքական միջավայրի նկարագիրն այլ բովանդակությամբ լցվեր: Ըստ Կ. Կաուցկու[1306], այլևս ռուսաստանյան բոլշևիկյան կառավարության նոտաներում և հեռագրերում քիչ էին հիշատակվում և օգտագործվում հայ գյուղացիների ապստամբական տրամադրությունների ու միջնորդական առաքելությունների մասին: Քաղաքական թատրոնի հերթական ներկայացումը վարպետորեն կատարվել էր և արդյունքում՝ վրաց կոմունիստները վստահաբար մտնում են Թիֆլիս և տապալում մենշևիկներին: Վրացական միջադեպի անդրադարձները շարունակվում են: Վ. Ի. Լենինը 1921 թ. փետրվարի 28-ին ելույթ ունենալով Մոսխորհրդի նիստում, մասնավորապես նշել էր. «Հայաստանի և Վրաստանի ընդհարումը չէր կարող չհուզել մեզ, և այդ դեպքերն այն բանին հասցրին, որ հայ-վրացական պատերազմը փոխվեց ապստամբության, որին մասնակցում էր ռուս զորքերի մի որոշ մասը: Եվ վերջացավ նրանով, որ հայ բուրժուազիայի մտադրությունը մեր դեմ, գոնե մինչև այժմ, նրանց դեմ դարձավ և այնպես դարձավ, որ Թիֆլիսում, ըստ վերջին տեղեկությունների,…Սովետական իշխանություն հաստատվեց: Մենք գիտենք, որ ապստամբությունը Հայաստանում սկսվեց հենց այն Չեզոք գոտում, որն ընկած է Վրաստանի և Հայաստանի միջև, և որը Վրաստանը գրավվել էր Անտանտի իմպերիալիստների թույլտվությամբ: Մենշևիկները, իսկ մասնավորապես վրացական մենշևիկները, երբ նրանք դատում են արևմտյան երկրներից մեկուսացած լինելու վնասի մասին, սովորել են այդ հասկանալ վստահության իմաստով դեպի Անտանտի իմպերիալիստները, որովհետև նրանք բոլորից

[1305] Տե՛ս Ментешашвили А. М., Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии. 1917-1921, стр. 181-182, Жордания Н., Моя жизнь, стр. 110-112: «Эртоба», N 230, 10 октября, 1920 г.:

[1306] Տե՛ս https://ru.wikipedia.org/wiki/Каутский,_Карл:

ուժեղ են: Վրացական մենշևիկների ձեռքին էր գտնվում հայ գյուղացիությանը միակ երկաթուղով պարենավորելու բանալին:

Ոչ ոք համբերություն չի ունենա կարդալ այն հեռագրերը, հայտարարություններն ու բողոքները, որոնք մենք այդ առթիվ փոխանակել ենք Վրաստանի հետ: Եթե մենք հաշտության պայմանագիր ունենայինք Վրաստանի հետ, պետք էր, ինչքան հնարավոր է, երկարացնեինք այն: Բայց երևակայեցեք, որ հայ գյուղացիությունը պայմանագրի վրա այդպես չէր նայում, և բանը վերջացավ նրանով, որ փետրվարի սկզբին սարսափելի ապստամբություն պոռթկաց, որը զարմանալի արագությամբ տարածվեց և ընդգրկեց ո՛չ միայն հայ բնակչությանը, այլև՝ վրացական բնակչությանը»[1307]:

Վրացական զորքերը Լոռվա համար պատերազմում պարտություն են կրում, և Խրամ գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում կրած պարտությունից հետո, խուճապահար թողնելով հրետանին, հապճեպ փախչում են Թիֆլիս, տալով շուրջ երեք հազար հոգի գերի, այսպես կոչված «Արևելյան ճակատի» 15 գումարտակները հալվեցին և դրանցից ոչինչ չմնաց: Պարտությունը ակնհայտ էր, ինչի մասին Է. Անդերսենը, Գ. Էգգեն չեն ցանկանում հիշատակել իրենց սովետա-վրացական պատերազմի մասին ունեցած անդրադարձում՝ որոշակի շահերից ելնելով[1308]: Լոռու դեպքերի հետ կապված կան Հ. Լազյանի հուշերը: Այդ առիթով նա փաստում է. «Ապստամբության շրջանում գտնվում էր ավելի քան 7000 մարդ կանոնավոր մենշևիկյան բանակ, զինված տարբեր տեսակի զենքով: Իսկ ապստամբների ուժերը չէին գերազանցում բավականին պրիմիտիվ զինված 10000 գյուղացիներից ավելին: Փետրվարի 11-ի գիշերը սկսվեց ապստամբությունը: Այդ նույն օրը գրավվեց կամուրջը, մենշևիկյան բանակը զինաթափվեց մինչև վերջին զինվորը: 2-3 օրվա ընթացքում ապստամբները գրավեցին զոնայի ողջ շրջակայքը և

[1307] Տե՛ս Լենին Վ. Ի., Ճառ Մոսկվայի Սովետի պլենումում, Երկեր, հ. 32, էջ 175-176// «Правда», N 46, 2 марта, 1921 г.:

[1308] Տե՛ս Андерсен Эндрью, Эгге Георг. Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/: Տե՛ս նաև http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War 18 R.html:

հասան մինչև Շուլավեր: Ապստամբական ալիքը, անկասելի գրոհով Լոռուց անցել է Վրաստանի խորքը, շարժվում է դեպի Թիֆլիս»[1309]:

Հ. Լազյանի կողմից արտահայտված տեսակետի հետ տրամագծորեն հակառակ դիրքում են Է. Անդերսենը և Գ. Էգգեն: Ըստ Էության ակնհայտ է, որ Է. Անդերսենը և Գ. Էգգեն գործնականում համակարծիք չեն այդօրինակ գաղափարների հետ, և ավելին՝ նրանց մոտ նկատվում են պրովրացական և ընդհակառակը՝ հակառուսական և դրանից ենթադրվող ոչ հայամետ դիրքորոշման շերտանստվածքներ: Է. Անդերսենը, Գ. Էգգեն այս կապակցությամբ ուղղակի պնդում են հետևյալը. «Սովետական Հայաստանի և Սովետական Ադրբեջանի դաշնակցությամբ [ձևականորեն անկախ, սակայն փաստացի հանդիսանալով ռուսաստանյան պրոտեկտորատներ] Սովետական Ռուսաստանի կողմից Վրաստանի դեմ սանձազերծված պատերազմը սկսվեց Կարմիր Բանակի զորքերի ներխուժումով Բորչալուի գավառի Լոռու տեղամաս՝ «ժողովրդական ապստամբության» աջակցման պատրվակով, որը հրահրվեց բոլշևիկյան գործակալների կողմից այդ տեղամասի մի շարք հայկական գյուղերում»[1310]: Ժամանակակից վրաց պատմաբաններ Թոիձեն և Պապասկիրին ընդհանուր առմամբ գրում են, որ փետրվարի 12-ին Լոռիում ապստամբությունը սկսել են ոչ թե 10000 գյուղացիներ, ըստ Հ. Լազյանի, այլ 10000 հազար գաղտնի կերպով Վրաստանի տարածքը ներխուժած «վերազգեստավորված ռուս զինվոր-կարմիրբանակայիններ», իսկ տաջիկ «պրոֆեսոր» Պանֆիլովը հայտարարում է, որ փետրվարի 12-ին Վրաստանի վրա հարձակվել է սովետական XI բանակը[1311]:

Լոռու դեպքերի կապակցությամբ իր որոշակի տեսակետն է արտահայտել նաև Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնակատար Կ. Սաբախտարաշվիլին, որն այդ ընթացքում խնդրո առարկայի վերաբերյալ հարաբերվել էր Ալ. Բեկզադյանի և այդ ընթացքում վերջինիս Մոսկվա մեկնելուց հետո նրան հաջորդած Արտաքին Գործերի

[1309] Տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 88 -90:

[1310] Տե՛ս http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/: Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R.html:

[1311] Տե՛ս http://olegpanfilov2...om/2753573.html":

ժողկոմի պարտականությունները կատարող Ասք. Մռավյանի[1312] հետ, փոխանակել մի շարք նոտաներ, 1921 թ. փետրվարի 12-ին նկատել է. «Մեր համար ոչ լիովին է պարզ այդ հարձակման նպատակը: Կարելի է ենթադրել, որ հայերը ցանկացել են ապստամբություն կազմակերպել զավառում, որպեսզի ստիպեն մեզ թողնել այն և դրանով իսկ մեզ կանգնեցնել փաստի առաջ: Առավել ևս, որ հին հայկական կառավարության հետ պայմանագրի համաձայն մեր զորքերի մնալու ժամկետը Բորչալուի գավառում սպառվում է վաղը՝ փետրվարի 13-ին»[1313]: Այստեղ մենք տեսնում ենք, որ հենց վրաց կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը՝ Կ. Սաբախտարաշվիլին ինքն էլ է ընդունում Լոռու հարցում իրենց անիրավացիությունը, ինչն էլ լավագույն պատասխաններից մեկն է վրաց պատմանենգողներին:

Լոռվա իրադարձությունների ողջ ընթացքում, վրաց իշխանությունները հապշտապ, ձգտելով Լոռին ձեռքներից բաց չթողնել, մի կողմից բանակցություններ էին վարում ՀԽՍՀ կառավարության հետ, ձգտելով ժամանակ շահել և ռազմաքաղաքական շփոթ ստեղծել, իսկ մյուս կողմից՝ ձեռնարկում էին պատժիչ գործողություններ հայ գյուղացիների նկատմամբ, և դա այն պարագայում, երբ Վրաստանի և Հայաստանի կառավարությունների միջև պայմանավորվածություն էր ձեռք բերվել փետրվարի 15-ին Թիֆլիսում անցկացնել հայ-վրացական կոնֆերանս: Վրաց դիվանագիտական բեմահարթակում բավականին թրծված պրեմիեր-մինիստր Ն. Ժորդանիան իր հուշերում հստակ նշել է այդ մասին: Եվ նա ձգտելով իրավիճակի վրա իշխել, գլխավոր հրամանատար Ի. Ջ. Օղիշելիձեին փոխարինում է գեներալ Գ. Ի. Կվինիտաձեն, միաժամանակ փետրվարի 16-ին բողոք-հեռագիր է ուղարկում Մոսկվա, դժգոհելով Կարմիր բանակի հարձակումից և միայն փետրվարի 17-ին հանդես է գալիս Ռուսաստանի դեմ պատերազմի հայտարարութ-

[1312] Մռավյան Ասքանազ Հարությունի [20.12.1886 թ.- 23.10.1929 թ.] – Խորհրդահայ հայտնի պետաքաղաքական գործիչ, Արմենկոմի և Հայհեղկոմի անդամ, 1921-1923 թթ. եղել է ՀԽՍՀ Արտաքին Գործերի, 1923-1929 թթ.՝ Լուսավորության ժողկոմ, ԺԿՀ նախագահի տեղակալ:

[1313] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 114, ց. 1, գ. 11, թ. 15, ց. 2, գ. 53, թ. 48: Ֆ. Պ- 37, ց. 1, գ. 28, թ. 1: Ֆ.Պ- 1022, ց. 1, գ. 335, թ. 1-2:

յամբ[1314]: Է. Անդերսենը և Գ. Էգգեն այս կապակցությամբ դարձյալ ընդգծում են, որ հայ կոմունիստ-պարտիզանները, և նրանց հետ Կարմիր բանակի կանոնավոր զորամասերը, որոնք էապես գերազանցում էին այնտեղ գտնվող վրացական զորքերին, ներխուժեցին Վրաստան և այն խորհրդայնացրեցին[1315]: Իսկ գեներալ Գ. Կվինիտաձեն անտեսելով իրական աշխարհաքաղաքական իրավիճակը, և նշելով, որ վրաց զորքերի թիվն անցնում էր 40 հազարից, այդուհանդերձ առանց համակողմանիորեն հաշվառելու փաստերը, պնդում է, որ իբր իրենք այլ տեղերից վերադասավորումներ կատարելով՝ կարող էին հակահարված տալ հակառակորդին: Նրան ձայնակցում են նաև մի շարք ֆրանսիական և այլ երկրների հեղինակներ, որոնք այն կարծիքին են, որ իբր պատերազմի սկզբին մոտ 50 հազար սովետական զորքերին դեմառդեմ կանգնած են եղել ընդամենը 30 հազար վրաց զինվորներ, որ բավարար կազմակերպվածության դեպքում վրաց կառավարությունը կարող էր զորակոչի ենթարկել 60 հազարից ավելի մարդ, և որ այդ դեպքում իրադարձությունների ընթացքն այլ կլիներ, ինչը, մեղմ ասած, ամենևին եզրեր չունի իրական ռազմաքաղաքական իրավիճակի հետ, ըստ որի կարելի է եզրահանգել վրացական մենշևիկյան պետության դատապարտվածության մասին[1316]: Փետրվարի 16-ի վերջում Թիֆլիսը ամրացված չէր և պրակտիկապես ոչ մեկի կողմից չէր պաշտպանվում, թեկուզև վրաց գեներալ Գ. Կվինիտաձեն և այլոք երբեմն հակասական են ներկայացնում, որոշ դեպքերում էլ հեղինակների մի մասը հակառակն են պնդում: Կարմիրները բոլոր հնարավորություններն ունեին արդեն փետրվարի 17-ի առավոտյան այն գրավելու: Գիտակցելով տեղի ունեցող իրադարձությունների մասին, Վրաստանի պառլամենտը գլխավոր հրամանատար է նշանակում գեներալ Գեորգի Կվինիտաձեին, որին արդեն «մի անգամ հաջողվել էր փրկել» Թիֆլիսը Հայաստանի դեմ մղվող պատե-

---

[1314] Տե՛ս www.legionerebi.org/files/kvm.pdf: Տե՛ս նաև http://olegpanfilov2...om/2753573.html". Տե՛ս նաև http://fr.wikipedia....de laGéorgie. http://olegpanfilov2...om/1709380.html:

[1315] Տե՛ս http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/: Տե՛ս http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R.html:

[1316] Տե՛ս www.legionerebi.org/files/kvm.pdf: Տե՛ս http://fr.wikipedia....de laGéorgie. http: // olegpanfilov2...om/1709380.html.: Տե՛ս Квинитадзе Г. И., Мои воспоминания в годы независимости Грузии.1917-1921, YMCA-PRESS 11, rue de la Montagne-Ste-Geneviève, 75005, Paris, 1985 (на рус. языке), стр. 353-355, 362:

րազմում: Կվինիտաձեն միանգամից զգուշացնում է կառավարությանը, որ Վրաստանին փրկել կարող է միայն հրաշքը, սակայն սկսում է տեղադագին պաշտպանական գծեր և ամրապատնեշներ անցկացնել Թիֆլիսի շուրջ՝ բարձունքների վրա: Կվինիտաձեի առջև կանգնած է եղել չափազանց դժվարին խնդիր: Հակառակորդն ուներ մոտ 35700 հետևակ, որին հակադրված կարելի էր տեսնել վրաց կառավարությանը ենթարկվող և հավատարիմ կանգնած 5000 պրոֆեսիոնալ զինվորների, ավելի քան 10 000 կադետի և որոշ քանակի աշխարհազորի, ընդ որում որոշ զորամասեր (1-ին սուխումյան սահմանապահ զորամասը) այդ պահին դեռ շարունակում էին կանգնած մնալ Աբխազիայում:

Երբ ռազմաքաղաքական իրադարձությունները Չեզոք գոտում և Վրաստանում իրենց հանգուցալուծումն էին ստացել, բոլշևիկների առաջնորդը՝ Վ. Լենինը 1921 թ. փետրվարի 28-ին Մոսկվայի խորհրդի նիստում ունեցած ելույթում ընդգծել էր, որ «Միջազգային երրորդ հարցը Կովկասի դեպքերն են»՝ [1317] նկատի ունենալով նախկին Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառում՝ հայկական Լոռիում հայ բնակչության շրջանում կազմակերպված զինված ելույթները, որոնք բռնկված համընդհանուր ապստամբության հետևանքով ավարտվել էին հաղթանակով՝ նախադրյալներ ստեղծելով մայր հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի հետ Լոռու վերամիավորման համար: Միաժամանակ, պատմաքաղաքական զարգացումների արդյունքում, հայ-վրացական պայթունավտանգ ռազմաքաղաքական փոխհարաբերությունները ամպրոպազերծվեցին Լոռու Չեզոք գոտու ապստամբության մեջ, իսկ վերջնարդյունքում նաև՝ մենշևիկյան Վրաստանի խորհրդայնացման անկասելի գործընթացներում, որոնք աշխարհաքաղաքական նոր զարգացումների արդյունք էին:

Այդ նույն Է. Անդերսենը, Գ. Էգգեն պնդում են, որ չնայած 1920 թ. մայիսի 7-ին ՌԽՖՍՀ-ի և Վրաստանի միջև կնքված մոսկովյան պայմանագիրը ճանաչում էր «վրացական պետության անկախությունը և ինքնուրույնությունը», սակայն այն բանից հետո, երբ իրադրությունը փոխվեց, Ռուսաստանը միջամտեց տարածքային բախմանը, որովհետև ի հակառակ նախկինում ձեռք բերված պայմանավորվածության, Վրաս-

[1317] Տե՛ս Լենին Վ. Ի., Երկեր, հ. 32, էջ 175:

տանը հրաժարվել էր դուրս գալ Չեզոք գոտուց, և ավելին՝ ապստամբների նկատմամբ իրականացնում էր պատժիչ գործողություններ: Այդուհանդերձ, այն իբր թե ընդհանուր առմամբ խախտվեց բոլշևիկների կողմից, չնայած Է. Անդերսենը, Գ. Էգգեն, այդուհանդերձ, ըստ էության ընդունում են, որ ձևի տեսանկյունից բոլշևիկյան Ռուսաստանը չխախտեց այդ պայմանագիրը: Իսկ հայտնի վրաց պատմաենգիչ Գ. Մարխուլիան նույնիսկ անթաքույց և մերկապարանոց պնդում է, որ Վրաստանի անմիջական աջակցությամբ, դաշնակցականները փետրվարի 16-ին բարձրացրել են հակասովետական խռովություն Հայաստանի կենտրոնում: Այդ ժամանակաշրջանում բավարար քանակով Կարմիր բանակի զորամասերի բացակայության հետևանքով նրանց հաջողվեց գրավել մայրաքաղաքը՝ Երևանը, և այն պահել 45 օրվա ընթացքում, այսինքն՝ մինչև 1921 թ. ապրիլի 2-ը[1318]: Այդ պահին ընթացող հայ-վրացական բանակցությունները ընդմիջումներով շարունակվեցին շուրջ երկու ամիս և վերջնականապես ընդհատվեցին 1921 թ. փետրվարի 11-ին սկսված Խորհրդա-վրացական պատերազմի հետևանքով, ընդամենը 16 օր անց այն բանից հետո, երբ Վրաստանը հունվարի 26-ին դե-յուրե ճանաչվեց Փարիզի կոնֆերանսի կողմից[1319]: Դրանք արդեն ուշացած և անուժ քայլեր էին, որոնք Վրաստանին չփրկեցին անխուսափելի խորհրդայնացումից: Եվ այսպիսով, 1921 թ. փետրվարի 11-ի գիշերը, 12-ին Կարմիր բանակը անցավ մենշևիկյան Վրաստանի սահմանները: Վրաստանում ըստ մոսկովյան ռադիոյի, ապստամբություն նախապատրաստվեց, որ Խորհրդային Հայաստանը հարձակվել է Վրաստանի վրա և պահանջում է Բորչալուի գավառը[1320]: Այս ընթացքում, փետրվարի 18-ին խորհրդային իշխանությունը Հայաստանում տապալվում է, և ՀԽՍՀ Հեղկոմի թույլ տված կոպիտ սխալների, ոչ ճկուն և անհեռատես ռազմավարության հետևանքով իշխանության գլուխ է գալիս Ս. Վրացյանի գլխավորած «Հայրենիքի Փրկության կոմիտեն», որը հեռագրով դիմում է Վրաստանի կառավարության նախագահ Ն. Ժորդանիային, իրազեկելով տեղի ունեցած հեղաշրջման մասին՝ խնդրելով Տ. Բեկզադյանին վերահաս-

[1318] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах, Тб., Тб. гос.ун-т, 2007: // Տե՛ս http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[1319] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 37, ց. 1, գ. 27, թ. 116:

[1320] Տե՛ս http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

տատել Հայաստանի դեսպանի իրավունքների մեջ: Եվ չնայած խնդրագիրը հարգվում է, և Թիֆլիսում ներկայացուցչությունը վերականգնվում է[1321], սակայն ռազմաքաղաքական իրադարձությունների սրընթաց զարգացումները ի չիք են դարձնում այս ամենը և անդրկովկասյան երկու հանրապետություններին՝ Հայաստանին և Վրաստանին կանգնեցնում նոր իրողությունների առաջ: Արդյունքում, Վրաստանում Կարմիր բանակի անկասելի հարվածների հետևանքով 1921 թ. փետրվարի 25-ին հաստատվեցին խորհրդային կարգեր: Այս կապակցությամբ իր ժամանակին միանգամայն ճիշտ և դիպուկ է նկատել խորհրդահայ պետաքաղաքական ականավոր գործիչ, Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհրդի նախագահ Ալ. Ֆ. Մյասնիկյանը[1322]. «Վրաստանը խորհրդայնացնելու պատմությունը որոշ չափով կատարված է հայ կարմիր զորքերի միջոցով»[1323]: Այդ իրողությունից էլ ելնելով, Գ. Կ. Օրջոնիկիձեն 1921 թ. մարտի 9-ին արձանագրում է այդ պահը. «Բայց Նոյ Ժորդանիայի կառավարությունը, չնայած որ առաջարկ էր արված Չեզոք գոտու վերաբերյալ Հայաստանի հետ ունեցած վեճը լուծել Սովետական Ռուսաստանի միջնորդությամբ, որոշում է հրով ու սրով վերջ տալ ապստամբներին»[1324]:

Սցենարի տեսանկյունից ամեն ինչ գերազանց էր մշակված, և Լոռու հայ գյուղացիության «ժողովրդական ապստամբության» աջակցության նպատակով Կարմիր բանակի զորամասերը մտան և Խորհրդային Հայաստանի աջակցությամբ հաստատեցին խորհրդային կարգեր: Արդյունքում, Լոռին, աշխարհաքաղաքական հանգամանքների բարենպաստ դասավորման արդյունքում դարձավ Խորհրդային Հայաստանի բաղկացուցիչ և անքակտելի մասը, վերամիավորվեց մայր հայրենիքի հետ: Իսկ մենշևիկյան Վրաստանի հարցը ևս արմատական լուծում ստացավ, և 1921 թ. փետրվարի 25-26-ին Հարավային Կովկասի վերջին անկախ պետությունը կազմաքանդվեց, իսկ դրա փոխարեն ստեղծվեց

[1321] Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 563-564:

[1322] Մյասնիկյան Ալեքսանդր Ֆյոդորի [9.02.1886 թ. -22.03.1925 թ.] –Խորհրդահայ ականավոր պետաքաղաքական գործիչ, ՀԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ:

[1323] Տե՛ս Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, Եր., 1957, էջ 372:

[1324] Տե՛ս Օրջոնիկիձե Գ. Կ., Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 44-45: http:// iberiana. wordpress.com/armenia-georgia/1918-1920: // Տե՛ս մանրամասն Жордания Н. Н., Моё прошлое, Воспоминания, Париж, 1953, стр. 122, 135:

Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, 1921 թ. փետրվարի վերջին Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները կոպտորեն խախտելով 1920 թ. մայիսի 7-ի ռուս-վրացական պայմանագիրը, որով ճանաչվել էր Վրաստանի անկախությունը և տարածքային անձեռնմխելիությունը, ռազմական միջամտությամբ իրականացրեցին Վրաստանի խորհրդայնացումը, որին իր մասնակցությունն է ունեցել նաև Լոռու հատուկ հրաձգային գունդը: Լոռու Չեզոք գոտու հետ կապված իրադարձությունները և Վրաստանի խորհրդայնացման գործընթացները խորապես իրար հետ փոխկապակցված երևույթներ էին: Դրանց արդյունքում, հայկական Լոռին վերամիավորվեց մայր հողի՝ Խորհրդային Հայաստանի հետ, միաժամանակ կանխվեց մի շարք այլ բնակավայրերի նկատմամբ վրացական ոտնձգությունների իրագործումը: Խորհրդային պարտադրանքը հնարավոր դարձրեց ապահովել Հայաստան-Վրաստան երկաթուղագծի անխափան աշխատանքը, շրջափակումը վերացվեց, թեկուզև արհեստականորեն, սակայն հայ-վրացական դիվանագիտական և ռազմաքաղաքական հարաբերությունները դադարեցին լարված մնալուց: Ամեն դեպքում, Լոռվա հիմնախնդրի լուծումը կարևոր պատմաքաղաքական հետևանքներ ունեցավ ՀՀ սահմանային-տարածքային խնդիրների լուծման տեսանկյունից: Անդրադառնալով Լոռում 1921 թ. փետրվարին տեղի ունեցած ապստամբության հետևանքով Թիֆլիսում առաջացած իրավիճակին, հայտնի պատմագետ Լեոն արձանագրեց այն կարևոր իրողությունը, որ Վրաստանի խորհրդայնացումով վերջ տրվեց հայկական կոտորածին[1325]: Վրաստանի խորհրդայնացումը պարտադրեց վերջինիս հաշտվել հայկական տարածքների մի մասի զիջման հետ Հայկական Խորհրդային Սոցիալիստական երկրորդ հանրապետությանը, ինչպես նաև գործնականում վերացնել Հայաստանի Հանրապետության տնտեսական և ռազմաքաղաքական շրջափակումը: Այդ մասին դիպուկ եզրահանգման է գալիս պատմաբան Կլ. Հարությունյանը. «Այսպիսով, այն, ինչ չէր հաջողվել անել Հայաստանի Հանրապետությանը 1918-1920 թթ. ընթացքում, 1921 թ. փետրվարին իրականացրեց Խորհրդային Հայաստանը՝ Խորհրդային Ռուսաստանի զորքերի

[1325] Տե՛ս Լեո, Անցյալից, Թիֆլիս, «Խորհրդային Կովկաս», 1925, էջ 461:

օգնությամբ»[1326]: Դա ակնհայտորեն տարածաշրջանում աշխարհաքաղաքական ուժերի նոր դասավորվածության և խորհրդային ձևով ռազմաքաղաքական վճիռների ու լուծումների արդյունք էր: Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից քիչ հետո, ՌԿ(բ)Կ Կովբյուրոն դարձյալ բախվեց երեք անդրկովկասյան հանրապետությունների տարածքային հարցերի հետ: 1921 թ. մայիսի 2-ին ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի կողմից որոշում ընդունվեց Անդրկովկասյան հանրապետությունների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով ստեղծելու մասին, որը պետք է գլխավորեր Ս. Կիրովը: Նա կոչված էր Անդրկովկասի հանրապետությունների միջև սահմանները որոշելու և արդյունքները ներկայացնելու Կովբյուրոյի պլենումի հաստատմանը[1327]:

Այդ հանձնաժողովին Խորհրդային Հայաստանի դիրքորոշումը և առաջարկները ներկայացնելու համար մայիսի 9-ին հրավիրվեց խորհրդակցություն, որը հրավիրվեց ՀԽՍՀ Ռազմհեղկոմի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի ղեկավարությամբ:

Այդ հանձնաժողովի աշխատանքներին իրենց մասնակցությունը ունեցան Ասք. Մռավյանը, Պ. Մակինցյանը, Ս. Լուկաշինը (Սրապիոնյան), Գ. Խոջամիրյանը, որոնց տրամադրության տակ դրվեցին բավարար քանակությամբ փաստական նյութեր, որոնք անհրաժեշտ էին սահմանային-տարածքային ճշգրտումների համար: Լսելով «Ադրբեջանի և Վրաստանի հետ ներքին սահմանների հաստատման հարցի մասին» ՀԽՍՀ Արտգործժողկոմ Ասք. Մռավյանի զեկուցումը՝ որոշվեց հենց վերջինիս նախագահությամբ ստեղծել համապատասխան հանձնաժողով, որի կազմում ընդգրկվեցին Ս. Համբարձումյանը, Հ. Լազյանը, Ա. Ղարագյոզյանը և մի շարք բնագավառների մասնագետներ[1328]: Այդ հանձնաժողովին հանձնարարվեց համապատասխան զեկուցագրեր ներկայացնել անդրկովկասյան երեք հանրապետությունների միջև վիճարկելի համարվող հայտնի տարածքների, այդ թվում Լոռու, Ախալքալաքի և Խրամի (Ծալկա) վերաբերյալ: Ընդ որում Ախալքալաքի վերաբերյալ զեկու-

[1326] Հարությունյան Կլ. Ա., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Եր., «Զանգակ-97» հրատ., 2002, էջ 98:

[1327] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 85, ց. 1, գ. 58, թ. 2-3:

[1328] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 113, ց. 3, գ. 15, թ. 15-17:

ցագիր կազմելու խնդիրը տրվեց հայտնի պետական գործիչ Ալ. Մյասնիկյանի բարեկամ Պողոս Աբելյանին[1329]:

1921 թ. հունիսի 25-27-ին Թիֆլիսում բացված ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի սահմանազատման հարցերով հրավիրված հանձնաժողովի առաջին նիստում Խորհրդային Հայաստանի Արտգործնախարար Ալ. Բեկզադյանը (եթե Կավբյուրոյի նիստին Վրաստանը ներկայացնում էին հանձնաժողովի 2, Ադրբեջանը՝ 3, ապա Հայաստանի Հանրապետությունը ընդամենը մեկ անդամ՝ Ալեքսանդր Բեկզադյանը) դատապարտելով ցարական կառավարության օրոք իրականացված վարչաքաղաքական բաժանումները, և ընդգծելով Եղեռնի հետևանքով աշխարհի տարբեր անկյունները սփռված հայության խնդիրների և Խորհրդային Հայաստանի համար ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական վիճակի մասին, սահմանազատիչ հանձնաժողովից խնդրեց գերազանցապես հայկական բնակչություն ունեցող Ախալքալաքի գավառը զիջել Հայաստանին, որը դեռ 1921 թ. փետրվարի վերջին-մարտի սկզբին թուրք-վրացական գաղտնի համաձայնությամբ և թուրք-բոլշևիկյան գործակցությամբ զիջվել էր քեմալականներին, և որտեղից նրանք դուրս եկան միայն 11–րդ Կարմիր բանակի հրամանատար Ա. Հեկկերի պարտադրանքով, և խորհրդային զորամասերը մարտի երկրորդ կեսին-ապրիլի սկզբին մտան Ախալքալաք: Սակայն Ա. Բեկզադյանի առաջարկը մերժվեց հանձնաժողովի ադրբեջանցի և վրացի անդամների կողմից, որոնց զորակցեց Ս. Կիրովը, որից հետո Ալ. Բեկզադյանի առաջարկով վիճարկվող հարցի վերջնական հանգուցալուծումը տեղափոխվեց ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրո:

Հանձնաժողովի նիստերը, որի կազմում ընդգրկված էին որպես նախագահ Ս. Կիրովը, Վրաստանից՝ Ա. Ս. Սվանիձեն, Թոդրիան, Ադրբեջանից՝ Միրզա Դավուդ Բաղիր օղլի Հուսեյնովը, Մահմեդ Հասան Ջաֆարօղլի Հաջինսկին և Էմին Ռասուլ-զադեն, Խորհրդային Հայաստանից՝ Ալ. Բեկզադյանը և Վ. Մուրադյանը, իր աշխատանքները ծավալեց Թիֆլիսում 1921 թ. հունիսի 25-ից մինչև 27-ը: Առաջին իսկ նիստում Ալ. Բեկզադյանը հանձնաժողովի անդամներին առաջարկեց հաշվի առնել Խորհրդային Հայաստանի բացառիկ ծանր վիճակը և «հանուն ընդհա-

[1329] Տե՛ս Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., «Զանգակ-97» հրատ., 2003, էջ 333-335:

նուր համերաշխության, մեկընդմիշտ ամենաանկեղծ, բարեկամական փոխհարաբերությունների՝ հաստատման դնել հայտնի տարածքային զիջումները, ընդ որում դա անել այն շրջաններում, որոնք համահավաք բնակեցված են հայկական բնակչությամբ», սակայն սահմանային-տարածքային փոփոխությունների մասին Ալ. Բեկզադյանի առաջարկը մերժվեց, և որոշվեց հարցի վերջնական հանգուցալուծումը տեղափոխել ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կավբյուրո[1330]:

Հետաքրքիր է նշել, որ Գուրամ Մարխուլիան ցեխ շպրտելով Ալ. Բեկզադյանի հասցեին, գրում է, որ հարցերի լուծման նման կեղծիքի չեն դիմել անգամ դաշնակցականները, որ հայ բոլշևիկները բոցավառ լոզունգների տեսանկունից առաջ անցան իրենց նախորդներից, ավելացնելով, որ Ալ. Բեկզադյանը իր «բարեկամական խնդրանքի վերջնամասում անգամ իրեն թույլ է տվել ավելացնելու, որ «Մոսկվայում իր հետ զրույցում Ի. Ստալինը լիովին բաժանել է այդ տեսակետը»[1331]:

«Դեմոկրատական» Վրաստանը, բնականաբար, փշերով է ընդունում Խորհրդային Հայաստանի դիրքորոշումը սահմանային-տարածքային վերաձևումների հարցում, և որում իրեն ձայնակցում է Ադրբեջանը, և այդ խնդրում նրանց աջակցում է Ս. Կիրովը: Հարցերի վերջնական կարգավորման համար, հունիսի 26-ին Կովբյուրոյի նիստին մասնակցեցին Գ. Կ. Օրջոնիկիձեն, Օրախելաշվիլին և Շ. Էլիավան: Այդուհանդերձ, Անդրկովկասյան սովետական հանրապետությունների տարածքային սահմանազատման մասին հարցը «լուծվեց» և Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ալ. Բեկզադյանը հիմնախնդիրը տեղափոխեց ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի քննարկմանը[1332]:

Այդ ընթացքում Պողոս Աբելյանը կատարելով Ասք. Մռավյանի հանձնարարականը, 1921 թ. հուլիսին ներկայացրեց իր կողմից խնամքով պատրաստված փաստաթուղթը Ախալքալաքի գավառի մասին, որտեղ հարուստ ժողովրդագրական և վիճակագրական բնույթի փաս-

---

[1330] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 128, ց. 1, գ. 1420, թ. 15-16:

[1331] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах// http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/: Տե՛ս նաև http://iberiana.wordpress.Com/armenia-georgia/markhulia-8:

[1332] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 128, ց. 1, գ. 1420, թ. 15-17 (Անդրկովկասի հանրապետությունների միջև ներքին սահմանների որոշման հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճեն):

տեր կային, որոնք հիմնավորում էին Ախալքալաքի Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորման տնտեսաքաղաքական անհրաժեշտության հանգամանքը, միաժամանակ անընդունելի համարելով Վրաստանի հանրապետության շրջանակներում Ախալքալաքին ինքնավարություն շնորհելու ցանկացած տարբերակ[1333]:

Հետաքրքիր է նաև նշել, որ այդ ընթացքում հայ կոմունիստների առավել հեռատես մասը գործնական նախապատրաստություններ տեսավ Լոռվա-Ախալքալաքի հարցը հօգուտ Հայաստանի լուծելու համար: 1921 թ. հուլիսի վերջերի ՀԿ(բ)Կ և ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի անդրկովկասյան հանրապետությունների միջև սահմանների ճշգրտման հետ կապված մի շարք գրագրությունների վերլուծություն ցույց է տալիս, թե որ ուղղությամբ էր այդ պահին գնում հարցի հանգուցալուծումը. Այսպես, այդ գրություններում հիմնավորվում էր, որ նախկին Չեզոք գոտին և Լոռու մի մասը, որը գտնվել է հայկական կառավարության իշխանության ներքո, իրենից ներկայացնում է մեկ տնտեսական միավոր, որի բնակչությունը գերակշռող մեծամասնությամբ հայությունն է: Դրանում ասվում էր, որ մենշևիկյան կառավարության եռամյա պայքարը այդ ազգային տեսանկյունից հայկական հողի համար և Լոռում գյուղացիների երկու ապստամբությունները ընդդեմ մենշևիկների հայ ազգայնականների աչքում Լոռին դարձրեց հավակնվող հող: Իսկ արդեն Կովբյուրոյի և Վրաստանի Կոմկուսի ԿԿ-ի եզրակացությունից պարզվում է, որ բացի քաղաքական-հոգեբանական հիմնավորումներից, կան տնտեսական բնույթի պատճառաբանություններ, որոնք Կովբյուրոյի և Վրաստանի Կոմկուսի ԿԿ-ի առջև խնդիր են առաջադրում անհապաղ դեկլարացիա հրապարակել Լոռին Հայաստանին վերամիավորելու համար, ինչից ակնհայտորեն երևում է մոսկովյան Կրեմլի դիկտատի պահը: Միաժամանակ, խնդրին բացառիկ նշանակություն էր վերագրվում Լոռում գտնվող Ալավերդու գործարանի առումով, եզրահանգելով, որ այն տնտեսաքաղաքական բնույթի պատճառներով ծայրահեղորեն անհրաժեշտ է Հայաստանին, ինչպես և Ղարաքիլիսա-Սադախլո երկաթգծին, որը Լոռու շրջանակներում պետք է գտնվի Հայաստանի հեղկոմի ձեռ-

[1333] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 114, ց. 2, գ. 3, թ. 122-134, Ֆ. Պ - 113, ց. 3, գ. 42, թ. 41-53:

քում[1334]: Եվ հենց այդ ուղով էլ ընթացավ հարցի զարգացումը՝ հանգուցալուծվելով Կովբյուրոյի 1921 թ. հուլիսի 7-ի նիստում:

1921 թ. հուլիսի 7-ին Կովբյուրոյի պլենումի նիստում Ի. Ստալինի, ինչպես նաև Վրաստանի և Հայաստանի Արտաքին Գործերի ժողկոմներ Ա. Սվանիձեի, Ասք. Մռավյանի մասնակցությամբ, որոշվեց Խորհրդային Հայաստանին միացնել Լոռու նախկին Չեզոք գոտին [6 «կողմ», 1 ձեռնպահ][1335]: Խորհրդային Հայաստանին Ախալքալաքի շրջանի միացման հարցը որոշվեց փոխանցել Վրաստանի ԿԿ Կենտրոնական կոմիտեի դիտարկմանը, որի եզրակացությունները այնուհետև պետք էր դրվեին Կովբյուրոյի պլենումի քննարկմանը[1336]: Այս կապակցությամբ վրաց մամուլում հրատարակված մի շարք նյութեր իրադարձությունների քիչ այլ պատկեր են ներկայացնում, հարցի քննարկումը և քաղաքական արդյունքները դիտարկում այլ համադրությամբ, սակայն միանշանակ փաստում այս խնդրի հանգուցալուծման գործում խորհրդային Մոսկվայի դիկտատի մասին, որի հարվածի տակ ընկան թե՛ մենշևիկյան Վրաստանը, և թե՛ Խորհրդային Հայաստանը, թեկուզև վերջինս այդ աշխարհաքաղաքական խաղարկման մեջ որոշ շահումներ ունեցավ: Հենվելով որոշակի դիտարկման արդյունքների վրա, որոնց մեջ ռացիոնալ հատիկներ կան, այդ ժամանակվա իրադարձությունների ժամանակակիցը՝ Ալեքսանդր Մուջիրին ուղղակի պնդում է հետևյալը. «Վրաստանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո ամբողջ Լոռին հանձնվեց Հայաստանին: Հայաստանը վերցրեց ոչ միայն Լոռվա հարավային մասը՝ Սանահինով և Հաղպատով, այլ նաև հյուսիսային մասը՝ Ախթալայով և պղնձի հանքերով:

Այս ամենը կատարվեց Ս. Օրջոնիկիձեի նախաձեռնությամբ, նրա գործունեության վարչահրամայական մերկ մեթոդով: Հիշյալ հարցը նա ՌԿ(բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյին ընդունել տվեց միանձնյա, այսինքն՝ փաստորեն անօրինական որոշումով»: Ընդ որում հետաքրքիր է նշել, որ Ալեքսանդր Մուջիրին անգամ պնդում է, որ ՌԿ(բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյի պլենումը Չեզոք գոտին Հայաստանին կամ Վրաստանին միաց-

[1334] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 1, ց. 1, գ. 105, թ. 1: գ. 27ա, գ. 39:

[1335] Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 1, ց. 1, գ. 47, թ. 8: ՀԱԱ, Ֆ. Պ - 4033, ց. 2, գ. 1185, թ. 35:

[1336] Տե՛ս http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920// Тоидзе Л., После 25 февраля, Тб., 1990, стр. 23-24:

նելու մասին որոշումը 1921 թ. հուլիսի 7–ին ընդունել է «1 կողմ, 1 դեմ» համամասնությամբ, մնացած անդամները քվեարկությանը չեն մասնակցել, և հենց այստեղ վճռորոշ դեր է խաղացել Օրջոնիկիձեն, ինչի համար, ըստ Ալեքսանդր Մուջիրիի, ոչ մի քվորում էլ անհրաժեշտ չէր, անգամ պնդելով, որ «նույն այդ կովկասյան բյուրոյի հայ անդամները, առհասարակ, քվեարկությանը չեն մասնակցել»[1337]: Քիչ այլ գուներանգներով է Լոռվա Չեզոք գոտու հարցի հանգուցալուծումը ներկայացնում իրադարձությունների ժամանակակից Գերոնտի Քիքոձեն. «Վրաստանի խորհրդայնացումից հետո ամբողջ Լոռին հանձնվեց Հայաստանին. Նա յուրացրեց ոչ միայն հարավային մասը, այլ նաև հյուսիսային մասը՝ Ախթալայով և Ալավերդու պղնձահանքերով:

Պարզ է, որ այս պատերազմը հայերը շատ լավ էին պատրաստել, ուստի և հասան իրենց նպատակին, բայց պետք է ասել, որ սա ամենացավալի միջադեպերից մեկն է Վրաստանի և Հայաստանի պատմության մեջ»[1338]:

Հուլիսի 16-ին Վրաստանի Կոմկուսի ԿԿ նախագահությունը միանգամայն անընդունելի համարեց Խորհրդային Հայաստանի պատվիրակության առաջարկը և հաստատեց Կովբյուրոյի որոշումը Լոռու «Չեզոք գոտին» Խորհրդային Հայաստանին հանձնելու մասին [Ֆ. Մախարաձեն, Մ. Օրախելաշվիլին, Բ. Մդիվանին[1339] նշել են, որ հարցը կանխորոշված է, բայց ավելի լավ կլիներ հանրահավաք անցկացնել]: Իսկ Ախալքալաքի շրջանի զիջման մասին Վրաստանի Կոմկուսի Կենտկոմի նախագահությունը, ելնելով տնտեսաքաղաքական նկատառումնե-

---

[1337] Տե՛ս «Մնաթոքի», Թիֆլիս, 1989 թ., թիվ 7, էջ 106-107 (թարգմ. վրաց.):

[1338] Տե՛ս նույն տեղում, թիվ 1, էջ 14-15 (թարգմ. վրաց.):

[1339] Մդիվանի Բուդու (Պոլիկարպ Գուրգենի, 1877-1937 թթ.) - Խորհրդային վրաց կուսակցական և պետական գործիչ: 1918 թ. վերջերից մինչև 1920 թ. մարտը եղել է XI Կարմիր բանակի Ռազմահեղափոխական խորհրդի անդամ և X բանակի քաղբաժնի պետ, 1920-1921 թթ. հանդիսացել է Ռկ(բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյի անդամ, 1921 թ. ՌԽՖՍՀ դիվանագիտական ներկայացուցիչ Թուրքիայում, 1922 թ. Վրաստանի Կոմկուսի ԿԿ Նախագահության անդամ, 1921 թ.- Վրաստանի Հեղկոմի նախագահ: Անդրֆեդերացիայի կազմակերպման և ԽՍՀՄ կազմավորման հարցերում ձգտել է հասնել այն բանին, որ Վրաստանը ԽՍՀՄ կազմի մեջ ընդգրկվի որպես առանձին պետական կազմավորում: Իր այդ դիրքորոշման համար Բ. Մդիվանին արժանանում է Վրաստանի Կոմկուսի դատապարտմանը: Մդիվանու և նրա կողմնակիցների դիրքորոշումը որակվում է որպես նացիոնալիստական շեղում, որի համար նա 1936 թ. վտարվում է Վրաստանի կոմկուսի շարքերից:

րից, և հավասարապես Թիֆլիսի հետ Ախալքալաքի և Խրամի [Ծալկայի] շրջանների ունեցած տնտեսական կապից, այդ կապակցությամբ խնդիրը դրվեց միանգամայն այլ քաղաքական հարթության վրա և որոշվեց մերժել Ախալքալաքի շրջանը Խորհրդային Հայաստանին միացնելու այդ առաջարկը[1340]: Իսկ արդեն 1921 թ. նոյեմբերի 6-ին Թիֆլիսում ստորագրված հայ-վրացական սահմանագծի մասին վերջնական համաձայնագրով Լոռու Չեզոք գոտին, բացառությամբ մի քանի հայաբնակ սահմանամերձ գյուղերի, վերամիավորվեց Խորհրդային Հայաստանի հետ[1341]: Խորհրդային Հայաստանի կողմից այն ստորագրեց Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը, Վրաստանի կողմից այն վավերացրեց հեղկոմի նախագահ Բ. Մդիվանին: Սակայն վրացական կողմի պնդմամբ, սահմանագծումը միանգամայն այլ բովանդակություն ձեռք բերեց և մի շարք հայկական գյուղեր՝ Ջանդարը, Օփրեթը, Խոժոռնին, Բրդաձորը, Սադախլոն և այլն՝ մնացին Վրացական ԽՍՀ սահմաններում[1342]: Այդ սահմանագծման հիմքում Ալեքսանդրապոլի և Ախալքալաքի սահմանների մասում ընկած էր նախկին ցարական կառավարության վարչատարածքային բաժանումը, միաժամանակ աղավաղման էին ենթարկվել անգամ Լոռու սահմանագծի որոշ հատվածներ: Եվ այնուամենայնիվ, որոշակի վերապահումներով հանդերձ, կարելի է եզրահանգել, որ արդյունքում Լոռու Չեզոք գոտին՝ մոտ 1700 քառակուսի կմ, բացառությամբ Չեզոք գոտու հյուսիսային մասում գտնվող մի շարք սահմանամերձ գյուղերի (Իրգանչայ, Սաաթլու, Ջանդար, Աղքյորփի, Օփրեթ, Բրդաձոր, Սադախլո և այլն), շուրջ 200 քառ. կմ տարածքով, դարձավ Խորհրդային Հայաստանի տարածքի անբաժանելի մասը[1343]:

Գ. Մարխուլիան պնդում է, որ դեռ 1922 թ. հայկական քաղաքական-կուսակցական շրջանները նոր նախագիծ են առաջարկել, համաձայն որի Ջավախեթիայի (Ջավախք) մեծ մասը կամ էլ Ախալքալաքի շրջանը պետք է միանար Բորչալուի գավառին մեկ միասնական հայկական վարչական միավոր ստեղծելու նպատակով: Իսկ Ի. Ջավախիշ-

[1340] Տե՛ս Хармандарян С. В., Ленин и становление Закавказской Федерации. 1921-1923, Ереван, 1969, стр. 110:

[1341] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 113, ց. 3, գ. 116, թ. 29, գ. 55, թ. 3, 10:

[1342] Տե՛ս նույն տեղում:

[1343] Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 113, ց. 1, գ. 3, թ. 66-67: ց. 3, գ. 116, թ. 29:

վիլու կարծիքով, «պարզ է, որ այդ պլանը հանդիսանում էր Վրացական ԽՍՀ-ի կազմից այդ երկու գավառների տարանջատման և Հայաստանին դրանց միացման վարպետորեն մտածված նախագծի առաջին աստիճանը, որին անպայման կհետևեր և երկրորդը: Բավական է հայացք գցել դաշնակների կողմից կազմված քարտեզների վրա, և պարզ կդառնա, որ և այս անգամ պայքարը գնաց նախկին նպատակների իրագործման համար, սակայն այլ ճանապարհներով»[1344]: Եվ վերջում, Գ. Մարխուլիան եզրակացնում է, որ 1923 թ. հայկական այդ փորձը ձախողվեց[1345]:

Գ. Մարխուլիան պնդում է, որ դրանից հետո էլ հայկական կողմը էլի տարբերակներ առաջադրեց, և այդ կապակցությամբ վկայակոչում է Ի. Ջավախիշվիլուն. «Մի քանի խոսք Ջավախեթիային ինքնավարություն տալու և նրա առանձնացման անհրաժեշտության իբր թե նոր նախագծի մասին: Վերը նշվածից հետո, ակնհայտ է, որտեղից է բխում և ինչու համար է այս նախագիծը: Եթե նախկին ռուսաստանյան տիրապետության ռեժիմի օրոք Վրաստանում ոտնահարվում էին վրաց ժողովրդի շահերը և՛ ռուս, և՛ հայ չինովնիկների քաղաքականության շնորհիվ ազատ վրացական հողերը ստացան միայն հայերն ու ռուսները, մի թե՞ և այժմ հնարավոր է, որպեսզի վրաց ժողովրդի կենսական շահերը զոհաբերվեն այդ նախագծին: Դա այնքան անհավանական է, որ համոզված եմ, Վրացական ԽՍՀ կառավարությունը կհրաժարվի այդ նախագծի իրականացումից, այնպես, ինչպես մերժվել են այլ նախկին նախագծերը»[1346]: Այդ հիմքի վրա էլ 1921 թ. նոյեմբերի 6-ին Խորհրդային Վրաստանի և Խորհրդային Հայաստանի միջև կնքվեց պայմանագիր, որը պարզորոշեց երկու հանրապետությունների միջև սահմանաբաժան գիծը, որը պրակտիկապես ճշգրիտ համապատասխանության մեջ է գտնվում ներկայիս սահմանագծի հետ: Այդ պայմանագրի համաձայն Խորհրդային Հայաստանի կազմի մեջ կրկին ընդգրկվեց ողջ Հայկական

[1344] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах: Տե՛ս http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/. Доклад И. Джавахишвили правительству Грузии, 1926:

[1345] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах: Տե՛ս http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/:

[1346] Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах: Տե՛ս http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/. Доклад И. Джавахишвили правительству Грузии, 1926, Տե՛ս նաև ՀԱԱ, Ֆ.Պ - 476, ց. 1, գ. 6, թ. 82-111:

Լոռու տարածքը, ներառյալ նախկին Չեզոք գոտին [կոնդոմինիումը], ինչպես նաև կոնդոմինիումից դեպի հարավ գտնվող Լոռու տեղամասի տարածքը: Իրականում եղավ այնպես, որ ինչպես նկատել էր Հովհ. Քաջազնունին 1923 թ. հունիսի 17–ին Ս. Վրացյանին ուղղված նամակում, ռազմաքաղաքական լարվածությունը հայ-վրացական հարաբերություններում 1921թ. սկզբին այլ բովանդակություն ձեռք բերեց, իսկ սահմանազատումը այդ պահին խորհրդային իշխանությունների պարտադրմամբ որոշակի լուծում ստացավ, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը հարկադրված էր «հրաժարվել» Ախալքալաքից հօգուտ Վրաստանի, իսկ Լոռին պահել իրեն. «Ցավալի ու ամոթալի էր խոստովանել, բայց փաստն այն էր, որ մենք դեռ եւս չենք յաւսունացած մեր վէճերը հարթելու համար, դեռ եւս հարկավոր է մի արտաքին ոյժ, արտաքին հեղինակութիւն՝ Անդրկովկասում միջազգային խաղաղութիւն ապահովելու համար: Այսօր այդ արտաքին ոյժը, այդ հեղինակութիւնը՝ Խորհրդային Մոսկուան է»[1347]:

1921 թ. նոյեմբերյան համաձայնությունից հետո վրաց-հայկական սահմանագծի ուրվագծերը գործնականում անփոփոխ մնացին շուրջ 90 տարի: Իսկ 1922 թ. դեկտեմբերի 30-ին ձևավորվեց ԽՍՀՄ-ը, որի կազմի մեջ ընդգրկվեց Անդրֆեդերացիան ի դեմս Խորհրդային Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի, և այդ նոր միության շրջանակներում յուրահատուկ հանգուցալուծում տրվեց սահմանային-տարածքային հարցերին Հարավային Կովկասում: Միաժամանակ, ինչպես ակնհայտորեն երևում է աշխարհաքաղաքական հայտնի գործընթացների պատմաքննական վերլուծությունից և աշխարհաքաղաքական արդյունքների արժևորման համադրումից, այսօրինակ բոլշևիկյան-խորհրդային սահմանազատումների խորքային հիմքում Լոռի-Ախալքալաքի, այդ թվում նաև Ղարաբաղ-Արցախի սահմանների մասում ընդամենը ընկած էր նախկին ռուսաստանյան կայսրության, ցարական մեծապետական վարչատարածքային բաժանումը, որի ժառանգորդը բոլշևիկյան կայսրությունն էր: Արդյունքում՝ Լոռու և Ախալքալաքի աղավաղված սահմանագծեր, որոնց պատմաքաղաքական իրավահաջորդը դարձավ Երրորդ Հանրապետությունը:

[1347] Քաջազնունի Յովհ., Յետ մահու…, էջ 225, 227-228:

ՎԱՆԻԿ ՀՐԱՆՏԻ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918-1921 ԹԹ.

Ամփոփում
(Վերջաբանի փոխարեն)

1918 թ. դեկտեմբերի 13-ին բռնկված վրաց հայկական պատերազմը աղետալի ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի Առաջին Հանրապետության համար: Թիֆլիսյան քաղաքագետների կողմից մինչև անկախության հռչակումը իրենց հայ գործընկերներին տրված խոստումները հօդս ցնդեցին, երբ անդրկովկասյան Սեյմը փլուզվեց և ժողովուրդները կանգնեցին անկախության ճանապարհին, սկսելով ինքնուրույնաբար տնօրինել իրենց սեփական ճակատագիրը, հետևաբար արմատապես փոխելով իրենց նախկին պայմանավորվածությունները և ռազմավարությունը տարածքային սահմանազատումների մասին, ձգտելով դառնալ Կովկասյան տան ամենամեծ փայատերը Ադրբեջանի հետ միասին, ինչն էլ կարճատև դիվանագիտական փոխհրաձգությունից հետո հանգեցրեց 1918 թվականի դեկտեմբերյան երկշաբաթյա պատերազմին՝ Հայկական Լոռու և Ախալքալաքի համար: Եվ չնայած Դրոյի (Դրաստամատ Կանայան) գլխավորությամբ գործող հայկական փոքրաթիվ, մոտ 6-8 հազարանոց զորքի փայլուն հաղթանակներին վրացական լավ զինված, կուշտ ու կուռ, ավելի քան 12 հազարանոց բանակի դեմ, որին ուղեկցում էին 4 զրահագնացքներ, որոնք հետագայում գրավվեցին հայերի կողմից, Հայաստանում չկարողացան օգտվել այդ հաղթանակի ցանկալի արդյունքներից, և չէին էլ կարող, քանզի ընթացող աշխարհաքաղաքական բարդ և ոչ միանշանակ գործընթացները խոչընդոտեցին դրան, ավելացրած՝ Հայաստանի Հանրապետության անտանելի դաշնակիցների, և մասնավորապես Մեծ Բրիտանիայի կրավորական կեցվածքը, տարածաշրջանի նկատմամբ նրա վերահսկողու-

թյուն հաստատելու հակասական քաղաքականությունը, որը լիովին տեղավորվեց բոլշևիկյան Ռուսաստանին հակադրվելու նրա ծրագրերի մեջ և Հայաստան-Վրաստան ռազմաքաղաքական հարաբերություններում մշտապես բարդույթներ ստեղծելու նրա ռազմավարությունը և խարդավանքները, որոնք էլ թույլ չտվեցին Հայաստանին ունենալ իրական արդյունքներ սահմանային-տարածքային հարցերի լուծման հիմնախնդրում:

Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի Անտանտյան դաշնակիցների շահամետ միջամտությամբ՝ Մեծ Բրիտանիայի միջնորդությամբ, մասամբ էլ Ֆրանսիայի ջանքերով, որոնք տնտեսա-քաղաքական լուրջ շահեր ունեին Անդրկովկասյան տարածաշրջանում, Կովկասյան տան քաղաքական քարտեզում կատարվեցին լուրջ վերաձևումներ, և Հայաստանից խլված մի հողակտորի վրա ստեղծվեց այսպես կոչված «Լոռու Չեզոք գոտին»: Անտեսվեցին հայկական կողմից առաջադրված թե՛ ազգերի ինքնորոշման, թե՛ առհասարակ ազգային հարցի լուծման էթնոգրաֆիկ-ազգագրական սկզբունքները, ավելի շուտ տուրք տալով Վրաստանի կողմից ներկայացված, նրանց համար ընդունելի պատմական սկզբունքին: Այն ըստ էության պարզապես չէր արտահայտում հայ ժողովրդի իրական շահերը, սակայն համապատասխանում էր տվյալ ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակի խորքային բովանդակային էությունից բխող տարածքային հարցի նպատակահարմար շահամետ հանգուցալուծման տարբերակին: Վերջին հաշվով, հետագայում հայ ժողովրդի համար քաղաքական դեպքերի ու իրադարձությունների ամենևին էլ ոչ նպաստավոր փոխակերպման, և 1920 թվականի աշնանը թուրք-հայկական աղետաբեր պատերազմում Հայաստանի Հանրապետության պարտության հետևանքով, որի ժամանակ Հայաստանը և հայ ժողովուրդը լքվեց անտանտյան պետությունների և Ազգերի Լիգայի դաշնակից պետությունների կողմից, իսկ ԱՄՆ էլ մերժեց Հայաստանի նկատմամբ մանդատը, հայաբնակ որոշ շրջաններ, և առաջին հերթին, Լոռին ու Ախալքալաքը (Ջավախք) հայտնվեցին Վրաստանի ազդեցության տակ, որն էլ բոլորովին չհապաղեց օգտվել Հայաստանի համար պատմաքաղաքական առումով ժամանակավոր թուլությունից: Միաժամանակ, Վրաստանի Հանրապետությունն այդ օրերին, օգտվելով Հայաստանի համար 1920 թվականի սեպտեմբերից

դեկտեմբեր ամիսներին ստեղծված ծանրագույն իրավիճակից, ինչը հաստատվում է նաև Հայաստանի Հանրապետության Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի Հետախուզական բաժանմունքի և այլ հատուկ ծառայությունների կողմից հայթայթված տեղեկատվությամբ, սկսեց հավակնություններ ներկայացնել նաև Կարսի ու Արդահանի մարզերի նկատմամբ, ապօրինի կերպով զորամասեր մտցնելով այդ շրջանները և պղտորելով տեղական ազգաբնակչության տրամադրությունները, խարխլելով այդ գավառների քրդական, թաթարական և այլ ազգությունների բնակչության լոյալ վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության իշխանությունների նկատմամբ: Այդ ապօրինի, հայ ժողովրդի նկատմամբ թշնամական ռազմաքաղաքական գործողությունների և այլևայլ ձեռնարկումների ընթացքում վրացական զորամասերի պետերը համագործակցության մեջ մտան Կարսի և Արդահանի, ինչպես նաև հարակից որոշ շրջանների թաթարա-քրդական բնակչության, ինչպես նաև տարաբնույթ ավազակախմբերի և դրանց քաղաքական լիդերների հետ, խարխլելով ՀՀ ազգային անվտանգության հիմքերը:

Իսկ արդեն 1921 թվականի փետրվարից հետո Կրեմլյան որոշ քաղաքագետների ջանքերով և ճարպիկ մեքենայություններով հապճեպորեն «բոլշևիկյան» զգեստավորման անցած «եղբայրական» Վրաստանը բռնազավթեց հայկական Ախալքալաքն ու Ախալցխան և հարակից որոշ այլ տարածքներ, չկամությամբ «զիջելով» միայն Հայկական Լոռու ոչ ամբողջական մի կտորը:

Պատերազմը նաև բացահայտեց Հայաստանի Հանրապետության դժվարությունները, որոնք զգալի չափով պայմանավորված էին նրա ունեցած կախվածությամբ Վրաստանի կոմունիկացիաներից, որոնք իրենց բլոկադային գործողությունները ձեռնարկեցին նաև մեր օրերում՝ Արցախյան իրադարձությունների փոթորկալից օրերին, 1980-ական թվականների վերջերին-90-ական թվականներին, կաշկանդելով Հայաստանի Երրորդ Հանրապետության բնականոն զարգացումը: Միաժամանակ պարզորոշվեց Հայաստանի Հանրապետության պրոեվրոպական և պրոամերիկյան կողմնորոշման «ողջ արժեքը», դրանց իրական միտումները և հետևանքները, ակնկալվող հնարավոր քաղաքական սպասելիքները և արդյունքները, ինչպես նաև հիասթափությունները:

Այդուհանդերձ, փաստը փաստ էր, հայ-վրացական ռազմաքաղաքական առճակատումն ավարտվել էր, և անհրաժեշտ էր զբաղվել պատերազմի արդյունքների ամփոփմամբ, երկու երկրների ռազմաքաղաքական հարաբերությունների կարգավորմամբ, տնտեսական, դիվանագիտական և մշակութային առնչությունների վերականգնման և այլ կարևոր հիմնահարցերով:

1919 թ. հունվարի կեսերին բացված հայ-վրացական խորհրդաժողովը Թիֆլիսում զբաղվեց պատերազմի արդյունքների ամփոփմամբ, և ապագայի որոշ խնդիրների կարգավորմամբ: Սակայն այստեղ հարկ է ընդմիջարկել, նշելով, որ դեռ 1919 թ. հունվարի 1-ին, երբ ըստ էության Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև ռազմական գործողությունները դադարեցվեցին, և բրիտանացիների ու ֆրանսիացիների հովանու ներքո Ղարաքիլիսայում սկսվեցին հաշտության բանակցությունները, որին մասնակցեցին նաև երկու երկրների զորքերի հրամանատարները: Այնուհետև ոչ լիովին հասկանալի պատճառներով, բանակցությունները տեղափոխվեցին Թիֆլիս:

Այսպիսով, 1919 թ. հունվարի 22-ին կնքվեց ժամանակավոր պայմանագիր, որով իրավական որոշակի ձևակերպում ստացավ 1918 թ. դեկտեմբերյան երկշաբաթյա վրաց-հայկական պատերազմի ավարտը և Չեզոք գոտու ստեղծումը, որն ընդգրկում էր Ալավերդու հարուստ պղնձահանքերը, 43 գյուղ՝ գերազանցապես՝ հայկական, և երկաթուղային գծի մոտ 30 կիլոմետրանոց հատված՝ 6 կայարաններով, Չեզոք գոտին բաժանվեց Ուզունլարի, Վորոնցովկայի և Ալավերդու շրջանների: Չեզոք գոտու սահմաններն էին՝ վրացական կողմից (հյուսիսային) Սադախլոն, որտեղ Խրամ գետը թափվում էր Քուռ գետի մեջ, իսկ հայկական կողմից (հարավային) Քոլագիրանն էր և Ջալալօղլի-Դսեղ գիծը: Սահմանապահ զորամասերի թիվը յուրաքանչյուր կողմից պետք է կազմեր 600 հոգի: Եվ ի վերջո, դաշնակիցների 1919 թ. հունվարի 27-ի իրավարար վճռով կապիտան Ա. Շ. Ջ. Դուգլասը պաշտոնավարելու էր որպես դաշնակիցների ընդհանուր կոմիսար, որին խաղաղարար պարտականությունները կատարելու համար առանձնացրին 27-րդ դիվիզիայի 4-րդ հրաձգային բրիգադի վաշտերից մեկը, ընդ որում Դուգլասի շտաբը տեղաբաշխվեց Ալավերդիում:

1919 թ. հաշտության համաձայնագիրը 1918 թ. վրաց-հայկական պատերազմի արտացոլանքն էր հանդիսանում: Այն մի յուրահատուկ միջոց էր պարպելու հայ-վրացական չափազանց լարված ռազմաքաղաքական հարաբերություններում կուտակված վառոդալիցքը: Չնայած այն հանգամանքին, որ որոշակի առումով հայկական զորքերը նույնիսկ ի վիճակի էին գրավելու Թիֆլիսը, այդուհանդերձ դժվար էր կանխագուշակել ռազմաքաղաքական իրադարձությունների զարգացման հետագա միտումները, առավել ևս աշխարհաքաղաքական իրադարձությունների ընթացքին ուղղակիորեն իրենց միջամտությունն ունեցան Անտանտի երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունները, ի վերջո Հայաստանի Հանրապետության համար նախընտրելի եղավ հաշտվել Վրաստանի հանրապետության հետ հաշտության համաձայնագրի կնքման հարցի շուրջ: Դա անհրաժեշտություն էր, քանզի այդ պահին Հայաստանը կանգնած էր սոցիալ-տնտեսական աղետի առաջ, կտրված էր արտաքին աշխարհից և գտնվում էր շրջափակման մեջ, թիֆլիսյան հայությունը բռնաճնշումների օղակի մեջ էր հայտնվել, և արդյունքում, չնայած արտաքին հայացքից բարենպաստ ռազմաքաղաքական հնարավորություններին և զբաղեցրած ռազմաճակատային գծին, Հայաստանի Հանրապետությունը ստեղծված քաոսային և անկանխատեսելի ռազմաքաղաքական իրավիճակից դուրս գալու համար հարկադրված էր համաձայնության գնալ մենշևիկյան Վրաստանի հետ:

Հարկ է նշել, որ Վրաստանի պաշտոնական քաղաքական առաջնորդները ևս առանձնապես ոգևորված չէին վրաց-հայկական պատերազմի արդյունքներից: Իր ելույթում վրաց դիվանագիտության պատրիարք, փորձառու քաղաքական գործիչ Ն. Ն. Ժորդանիան այդ կապակցությամբ նկատել է, որ երբ պատերազմը չի վճռում սահմանային-տարածքային հարցերը երկու դրկից ժողովուրդների միջև, և երբ առաջադրվում էին հիմնահարցի լուծման քաղաքական հեռանկարների տարբերակներ, այդպիսի պայմաններում պատերազմի շարունակումը նշանակում էր ոչ թե պատերազմ, այլ վրիժառություն:

Հայկական կողմին առաջադրված պայմաններն այնքան անարդար էին, միակողմանի և անընդունելի, որ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը փորձեց մանևրել, և փոփոխություններ մտցնել դրանց մեջ, նախքան ստորագրելը: Ըստ Ա. Դենիկինի, պատերազմի

արդյունքները հայերի համար վերջնագրային էին, պարտադրված բրիտանացիների կողմից, և ըստ վերջինիս, չնայած հաջողության տեսանկյունից առավել բարենպաստ ռազմավարական իրավիճակ ունեին հայերը, այդուհանդերձ, երկու կողմերին պարտադրված բրիտանական զինադադարի պայմանները վրացական կողմի համար առավել նախընտրելի վիճակ էր, քան հայերի, և ասես դիտմամբ ստեղծեցին թշնամության և դժգոհության օջախներ: Ըստ գիտական շրջանառության մեջ դրված միանգամայն արժանահիշատակ փաստերի, գնդապետ Մ. Զինկևիչը, ամփոփելով պատերազմի արդյունքները, թեև գտել է, որ այն ավարտվել է Հայաստանի Հանրապետության ռազմական հաղթանակով և տարածքային ձեռքբերումներով, բազմաթիվ գերիներով և ռազմավարով, այդուհանդերձ, եզրահանգել է, որ այն հանգուցալուծվել է՝ դիվանագիտական պարտությամբ, որը բիտանացիների ջանքերով և Վրաստանին ցուցաբերած ռազմաքաղաքական աջակցությամբ և տեղ-տեղ սպառնալիքներով ընդդեմ Դենիկինի Կամավորական բանակի և վերջինիս դաշնակից համարվող Հայաստանի Հանրապետության, հանգեցրել է հայերի համար անբարենպաստ վիճակի ստեղծմանը 1919 թ. հունվարյան հաշտության կոնֆերանսում, որում հայկական պատվիրակությունը զգալի ջանքեր գործադրեց առաջադրված հիմնախնդիրները լուծելու համար:

Հայաստանի շրջափակված վիճակը պարտադրում էր ՀՀ իշխանություններին իրավիճակից պատվով ելք որոնել, հրաշալի ըմբռնելով, որ Հայաստանը նման պայմաններում երկարատև պատերազմի իրական հնարավորություն պարզապես չունի, իսկ սպառնացող սովը և թիֆլիսահայության հալածական վիճակը ցույց էին տալիս, որ պատերազմի հետագա շարունակումը հղի է անկանխատեսելի հետևանքներով, և որ անհրաժեշտ է շուտափույթ ավարտել այդ հաղթական, բայց նաև կործանարար պատերազմը:

Քանզի հայկական կողմը խիստ դժգոհ է մնում Հաշտության վեհաժողովի կողմից վրաց-հայկական պատերազմի արդյունքներից, վիճահարույց հարցերի հանգուցալուծումը տեղափոխվում է միջազգային ատյաններ՝ Բեռն և Երկրորդ Ինտերնացիոնալ, Փարիզի Խաղաղության վեհաժողով:

1919 թ. հաշտության համաձայնագրից հետո, հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները և սահմանատարածքային սահմանազատման շուրջ ընթացած անմիջական բանակցությունները ընդհուպ մինչև 1920 թ. կեսերը և ավելին՝ խոր աշուն ընթացան դիվանագիտական քաշքշուկների, անպտուղ հանդիպումների պայմաններում, արդյունքում՝ հատկապես սահմանատարածքային վիճարկելի հարցերում համաձայնություն ձեռք չբերվեց, թեկուզև Հայաստանի Հանրապետությունը դուրս եկավ տնտեսաքաղաքական և ռազմական շրջափակումից ու մեկուսացումից, ճանապարհները բացվեցին, երկաթգիծը վերականգնեց Հայաստանի համար խիստ կենսական կապը, վերականգնվեցին դիվանագիտական և միջպետական հարաբերությունները Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև, Վրաստանում անցակալի համարվող Արշակ Ջամալյանին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարի պաշտոնում փոխարինեց շնորհաշատ Լևոն Եվանգուլյանը: Հայաստանը հարկադրված էր տեղի տալ բրիտանական միջամտությանը և Լոռի-Ախալքալաքի ու Հայկական Բորչալուի հետագա ճակատագրի ու տարածքային սահմանազատման հայամետ հույսերն ու ցանկությունները շաղկապել Փարիզի վեհաժողովի կողմից կայացնելիք «արդարամիտ վճիռների հետ» հօգուտ իր՝ տառապյալ Անտանտի փոքր դաշնակցի, որը դարձել էր Առաջին աշխարհամարտի զոհը: Հետևաբար, հարկ է հստակ արձանագրել, որ թեև 1919 թվականին -1920 թ. առաջին կեսին ռազմաքաղաքական լարվածությունը մեղմացավ, ավելին՝ մի շարք դեպքերում երկուստեք քայլեր արվեցին՝ հենվելով 1919 թ. հունվարյան հաշտության համաձայնագրի դրույթների վրա, որն ամփոփեց 1918 թ. դեկտեմբերյան երկշաբաթյա չարաբաստիկ պատերազմի ռազմաքաղաքական արդյունքները, Վրաստանի և Հայաստանի Հանրապետությունների միջև վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները և հայկական պետությունը դուրս եկավ տնտեսաքաղաքական շրջափակումից, այդուհանդերձ, հետագա ժամանակահատվածում պահպանվեց լարվածություն և տագնապը ազգամիջյան հարաբերություններում, և հատկապես սահմանատարածքային սահմանազատման հիմնախնդիրներում:

Մենագրությունում վերհանվել են հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններին սերտորեն առնչվող մի շարք կարևոր

հարցեր, և մասնավորապես պատմաքննական վերլուծության են ենթարկվել ինչպես Հայաստանի Առաջին, այնպես էլ Երկրորդ՝ Խորհրդային հանրապետությունների կողմից գործադրած համառ ջանքերը մայր հայրենիքի հետ Լոռվա Չեզոք գոտու վերամիավորման համար: Վրաստանի մենշևիկյան հանրապետության հետ Լոռու Չեզոք գոտու համար հակամարտության առանցքային հիմնախնդիրները այսօր խիստ արդիական են և լիովին համահունչ ներկայումս ընթացող պետաքաղաքական գործընթացներին:

1917 թ. հոկտեմբերյան բոլշևիկյան հեղաբեկումից հետո, արդեն էապես փոփոխված աշխարհաքաղաքական նոր իրավիճակի պայմաններում, երբ ժամանակավորապես Կովկասում ակտիվ գործոն դարձան Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիան և Գերմանիան, որոնց այնուհետև հաջորդեց Մեծ Բրիտանիան, որոնք ակտիվորեն միջամտում էին անդրկովկասյան գործերին, այդ թվում էապես ազդելով 1918 թ. դեկտեմբերին տեղի ունեցած երկշաբաթյա վրաց-հայկական պատերազմի ընթացքի ու արդյունքների վրա, և հետագա պատմաքաղաքական զարգացումների հետևանքով 1919 թ. ամռան վերջին բրիտանական զորքերը տարհանվեցին Հարավային Կովկասից, բացառությամբ Բաթումիի մարզի, որտեղ նրանք մնացին ընդհուպ մինչև 1920 թ. ամառվա կեսը, նրանցից հետո առաջացած աշխարհաքաղաքական միջավայրի տերը դարձավ բոլշևիկյան Ռուսաստանը: Թե՛ Հայաստանի Հանրապետությունը և թե՛ մենշևիկյան Վրաստանը Լոռու համար բախման վերջնագծում, 1920 թ. վերջնամասում - 1921 թ. սկզբին հայտնվեցին ռազմաքաղաքական փակուղում, որին հաջորդեց խորհրդայնացումը, որը երկու կողմերի համար էլ նոր հեռանկարներ բացեց:

Հենց այս իրավիճակում էլ «Չեզոք գոտու» և առհասարակ հայկական Լոռու շուրջ հայ-վրացական ռազմաքաղաքական լարվածությունը սրեց երկու հանրապետությունների ռազմաքաղաքական փոխհարաբերությունները, իր վրա բևեռելով դաշնակիցների՝ Թուրքիայի, Ադրբեջանի և աշխարհաքաղաքական այլ ուժերի ուշադրությունը, ունենալով ծանր հետևանքներ: Վրաստանը 1918-1920 թթ. ընթացքում և դրանից հետո ամեն մի առիթ օգտագործում էր Լոռու Չեզոք գոտում ամրապնդվելու համար, այն դիտարկելով որպես չափազանց կարևոր ռազմաքաղաքական հենակետ ողջ Լոռուն տիրելու համար: Լոռու Չեզոք գոտու

մեջ մտնում էին Բորչալուի գավառի Ալավերդու, Ուզունլար-Օձունի և Վորոնցովկա-Կալինինոյի շրջանները՝ 41 գյուղերով:

Հարկ է ասել, որ Լոռու Չեզոք գոտու շուրջ ռազմաքաղաքական լարվածության նախանշանները սկսեցին երևալ դեռ 1920 թ. մայիս-հունիս ամիսներին: 1920 թ. մայիսի 7-ին կնքված ռուս-վրացական համաձայնագրի հետ կապված ռազմաքաղաքական կրքերը և ազգամիջյան հարաբերությունները Անդրկովկասում կրկին կտրուկ բորբոքվեցին, քանզի այդ պայմանագրով ՌԽՖՍՀ-ն գործնականում երաշխավորում էր մենշևիկյան Վրաստանի հանրապետության սահմանային-տարածքային անձեռնմխելիությունը, այսինքն՝ իրավական-քաղաքական հավակնությունները հայկական Լոռու և Ախալքալաքի գավառների նկատմամբ, իսկ դա լարվածության իրական և վտանգալից եզրեր ստեղծեց ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Վրաստանի դեմոկրատական հանրապետությունների հետ, ինչի մասին արդեն վերև ասել ենք:

Սակայն այստեղ դժվար է համաձայնվել, և գործնականում անընդունելի է կանադացի կովկասագետներ, իսկ գործնականում հայտնի պատմակեղծարարներ Է. Անդերսենի և Գ. Էգգեի կողմից ընթերցողի վզին փաթաթվող այն կեղծ, ստահոդ, փաստազուրկ և գիտական հիմքերից զուրկ պնդումը, թե իբր նկատի ունենալով հայ-թուրքական պատերազմի բուն ընթացքը և հետևանքները, Լոռու տեղամասի քրիստոնեական բնակչության մեծամասնությունը հանրաքվեում արտահայտվեց հօգուտ Վրաստանի, որ դրանով իսկ իբր թե ծայրահեղ դեպքում «ապահովվեց» տեղական բնակչության՝ հայերի, հույների և ռուսների անձեռնմխելիությունը, կյանքի և գույքի ապահովությունը, ինչը շարունակվեց շուրջ մեկ տարի:

Հայ-թուրքական պատերազմի երկրորդ փուլի վերջում, Ալեքսանդրապոլի անկումից մեկ շաբաթ անց, 1920 թ. նոյեմբերի 13-ին Հայաստանի կառավարությունը Վրաստանի զորքերին թույլատրեց «ժամանակավորապես» գրավել Չեզոք գոտին, որը բրիտանացիների հեռացումից հետո վերածվեց վրաց-հայկական կոնդոմինիումի [համատիրության], որպեսզի իբր թե կանխվի վերջինիս գրավումը թուրքերի կողմից:

Հայաստանի Հանրապետության խաղաղ խորհրդայնացումից հետո մենշևիկյան Վրաստանը շարունակեց Չեզոք գոտու օկուպացման իր տխրահռչակ քաղաքականությունը, չմոռանալով Լոռու խնդրում իր

հավակնոտ մտադրությունների իրականացման մասին, սակայն այս անգամ հանդիպեց Խորհրդային Հայաստանի կոշտ կեցվածքին այս խնդրում, որի խորքային արմատները բնականաբար պետք է որոնել բոլշևիկյան Ռուսաստանի կողմից իրականացվող անդրկովկասյան ռազմավարության խորքային ծալքերում:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը իշխանության գալու առաջին իսկ պահից սկսած, խորապես հաշվառելով ստեղծված բարենպաստ իրավիճակի առանձնահատկությունները, սկսեց պայքարել մենշևիկյան Վրաստանի կողմից ապօրինի գրավյալ տարածքները Հայաստանին վերադարձնելու գործընթացը, միաժամանակ բողոքելով վրացական իշխանությունների անօրինականություններից և բռնագրավումների քաղաքականությունից Լոռու հայկական գյուղերում, որտեղ կողոպուտը և սանձարձակությունները դարձել էին ամենօրյա սովորական երևույթ, միաժամանակ ընդգծելով այդ գյուղերի բնակչության ցանկության մասին՝ վերամիավորվել մայր հայրենիքի հետ:

Այս իրավիճակը Վրաստանի հետ հարաբերություններն զգալի չափով բարդացրեց, և դրա հիմնական պատճառը գտնվում էր բոլշևիկյան կենտրոնի ռազմավարության խորքային մութ և անհայտ ծալքերում, և այստեղ անժտելի էր այն հանգամանքը, որ տարածքային սահմանավեճի հետ անխզելիորեն շաղկապված հայ-վրացական բախումնային իրավիճակը Մոսկվայի կողմից օգտագործվում էր մենշևիկյան Վրաստանի խորհրդայնացման հետ կապված աշխարհաքաղաքական խնդիրները լուծելու համար: Այստեղից անվարան կարելի է եզրակացնել, որ Վրաստանի հետ ռազմական բախումն ուղղակիորեն օգտագործվեց ոչ միայն Լոռու խնդիրը լուծելու համար, այլև նաև ոչ պակաս կարևոր, իսկ ըստ էության չափազանց էական տարածաշրջանում բոլշևիկյան նոր իմպերիայի՝ Խորհրդային Ռուսաստանի ամրապնդվելու հեռահար ռազմավարության տեսանկյունից շատ կարևոր հիմնախնդրի՝ Վրաստանի բոլշևիկացման և նրան նոր բոլշևիկյան կայսրության շրջանակներում ընդգրկելու համար: Բոլշևիկյան զգեստավորումը դառնում էր բոլշևիկյան Մոսկվայի քաղաքականության անկյունաքարը:

ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի և ՀԿ(բ)Կ կենտկոմի համաձայնեցված որոշմամբ Հովսեփ Լազյանը նշանակվել էր Լոռու աշխատավորների զինված ապստամբության շտաբի պետ: Ապստամբության

ղեկավարների կողմից կարևորվեց ապստամբությանը աջակցման տեսանկյունից 11-րդ Կարմիր բանակի զորամասերի մասնակցության հարցը, որի շուրջ Հովսեփ Լազյանը դեռևս 1921 թ. փետրվարին պայմանավորվածություն ձեռք բերեց Ա. Ի. Հեկկերի հետ:

Եվ այսպես, ակնհայտ էր, որ ապստամբությունը խնամքով նախապատրաստված էր, և այն փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը սկսվեց և արագորեն ընդգրկեց ողջ շրջանը: Ապստամբները արագորեն գրավեցին Լոռու հայտնի գյուղերը՝ Չիբուխլուն, Ուզունլարը (Օձունը), Դսեղը և այլն, զինաթափելով այնտեղ գտնվող վրացական զորամասերը, որին հաջորդեց Շահալի-Ջամանլուի կամրջի գրավումը:

Աշխարհաքաղաքական բարենպաստ զարգացումների հետևանքով և արդյունքում, Լոռին ազատագրվեց մենշևիկյան Վրաստանի տիրապետությունից և վերամիավորվեց Խորհրդային Հայաստանի հետ: Ապստամբությունը, ապա Լոռվա բնակչության ապստամբական շարժման ազդեցությունը, անտարակույս, դուրս եկավ գոտու սահմաններից, մի բան, որը հեշտացրեց Վրաստանի խորհրդայնացման և Անդրկովկասում խորհրդային իշխանության հետագա ամրապնդման գործը:

ВАНИК ГРАНТОВИЧ ВИРАБЯН

АРМЯНО-ГРУЗИНСКИЕ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ В 1918-1921 гг.

Заключение

Вспыхнувшая 13 декабря 1918 года грузино-армянская война имела пагубные последствия для Первой Республики Армения. Все обещания, данные грузинскими социал-демократами своим армянским коллегам перед провозглашением независимости, взлетели в воздух, когда Закавказский Сейм разрушился и народы встали на путь независимости, начиная самостоятельно распоряжаться своей собственной судьбой и, следовательно, коренным образом изменяя свои прежние договоренности и тактику относительно территориальных разграничений, стремясь стать самым большим пайщиком Закавказского дома, что после короткой дипломатической перестрелки привело к двухнедельной декабрьской войне 1918 года за армянские территории Лори и Ахалкалаки (Джавахк). Несмотря на блестящую победу армянских войск, имевших в своем составе приблизительно 6-8 тысяч человек во главе с Дро (Драстамат Канаян), над хорошо вооруженной, сытной грузинской 12-тысячной армией, которую сопровождали 4 бронепоезда, захваченные позже армянами, в Армении не смогли воспользоваться желанными результатами этих побед, да и не могло быть иначе, т.к. происходящие геополитические сложные и неоднозначные процессы препятствовали этому.

Небескорыстным участием антантовских союзников Республики Армения и армянского народа при посредничестве Велико-

британии и частично Франции, которые имели серьёзные экономико-политические интересы в Закавказском регионе, на политической карте Закавказского дома были внесены серьёзные изменения и переделки, в результате которых на отобранном у Армении одном куске земли была создана так называемая «Нейтральная зона Лори». Всерьёз не были учтены предложения армянской стороны в соблюдении принципа самоопределения нации, так и этнографического принципа разрешения национального вопроса, более всего склоняясь в сторону Грузии относительно предложенного ей и приемлемого для неё исторического принципа. В сущности, это не выражало истинных интересов армянского народа, однако, тем не менее, такое решение проблемы соответствовало варианту корыстного разрешения территориального вопроса, вытекающего из глубинной содержательной сущности геополитической ситуации того времени. В конце концов, по логике невыгодной трансформации политических происшествий и событий для армянского народа и впоследствии в результате поражения Республики Армения в пагубной турецко-армянской войне осенью 1920 года, во время которой Армения и армянский народ были «выкинуты» антантовскими государствами и союзниками из Лигии Наций, а США отклонила мандат на Армению, некоторые армянонаселенные области, и в первую очередь Лори и Ахалкалаки (Джавахк), оказались в сфере влияния Грузии, которая незамедлительно воспользовалась временной слабостью Армении с историко-политической точки зрения. Одновременно, Республика Грузия, воспользовавшись создавшейся с сентября по декабрь 1920 года тяжелейшей ситуацией для Армении, что подтверждается информацией, добытой Разведывательным отделением Генерального штаба Военного Министерства Республики Армении и другими спецслужбами, начала предъявлять претензии также на Карсскую и Ардаганскую армянские области, противозаконно

вводя свои воинские части в эти районы и внося смуту в настроения местного населения, тем самым расшатывая лояльное отношение курдского, татарского и других национальностей этих уездов в отношении властей Республики Армения.

Во время этих противозаконных враждебных военно-политических и иных действий начальники грузинских воинских формирований стали тесно сотрудничать с татаро-курдским населением Карса и Ардагана и некоторых сопредельных районов, а также вошли в контакт с лидерами разнообразных преступных групп, тем самым рассчитывая ослабить основы государственной безопасности Республики Армения.

Уже после февраля 1921 года стараниями определённых кремлёвских политиков и ловкими манипуляциями спешно перешедшими в «большевистскую одежду», «братская» Грузия насильственно захватила армянские территории Ахалкалаки и Ахалцых и некоторые другие сопредельные территории, с неохотой «уступая» только нецельный кусок Армянского Лори.

Война также выявила трудности Республики Армения, обусловленные в значительной степени зависимостью от коммуникации Грузии, которая вновь предприняла свои блокадные мероприятия в наши дни – в период бури Арцахских событий – в конце 1980-в начале 90-х годов, тормозя естественное развитие Третьей Республики Армения. Одновременно стали ясны вся ценность проевропейской и проамериканской ориентации Республики Армения, её истинные тенденции и последствия, возможные политические ожидания и результаты, а также разочарования.

Тем не менее, факт оставался фактом, армяно-грузинское военно-политическое противостояние завершилось, и стало необходимо заниматься последствиями войны, урегулированием военно-политических отношений двух стран, а также экономическими, дипломатическими, культурными и другими важными вопросами.

Армяно-грузинский конгресс, открытый в середине января 1919 года в Тифлисе занялся обобщением результатов войны и урегулированием некоторых задач. Здесь стоит отметить, что еще 1-го января 1919 года, когда прекратились военные действия между Республиками Армения и Грузия, под эгидой британцев и французов в Каракилисе начались мирные переговоры, в которых принимали участие командующие войск двух стран. Затем, по не совсем понятным причинам переговоры были переведы в Тифлис.

Таким образом, 22 января 1919 года был подписан временный договор, по которому юридическую формулировку получило завершение двухнедельной армяно-грузинской войны декабря 1918 года и создание Нейтральной зоны, которая включала в себя богатые медные рудники Алаверди, 43 преимущественно армянские деревни и 30-километровый участок железной дороги с 6 станциями. Нейтральная зона была разделена на районы Узунлара, Воронцовки и Алаверди. Границами нейтральной зоны стали с грузинской стороны (северная) Садахло, где река Храм впадает в реку Кура, а с армянской стороны (южная) – Колагеран и линия Джалалоглы-Дсег. Число пограничных войск с каждой стороны должно было составить 600 человек. И наконец, во юридическому вердикту союзников от 27 января 1919 года, капитан А. Ш. Дж. Дуглас должен был вступить в должность Общего комиссара союзников, которому для исполнения миротворческих обязанностей, была выделена одна из рот 4-й артиллерийской бригады 27-й дивизии, кроме того, штаб Дугласа разместился в Алаверди.

Мирный договор 1919 года стал отражением армяно-грузинской войны 1918 года. Он стал важным средством для снижения напряжения, накопленного в армяно-грузинских отношениях. Республике Армения, несмотря на то обстоятельство, что в некоторой степени армянские войска были в состоянии захватить Тифлис, все же было сложно предугадать дальнейшие развития воен-

но-политических событий, тем более, что в ход геополитических развитий вмешались военно-политические представители стран Антанты и в конечном итоге стало предпочтительней примириться с Республикой Грузия в вопросе заключения мирного договора. Это было необходимо, т.к. Армения в этом момент стояла на пороге социально-экономической катастрофы, была отрезана от внешнего мира и находилась в блокаде, армяне Тифлиса оказались в кругу давления, несмотря на внешние благоприятные возможности и занятую фронтовую линию, для выхода Армении из сложившегося хаоса и непредсказуемого военно-политического положения, было необходимо пойти на соглашение с меньшевистской Грузией. Следует отметить, что официальные политические лидеры Грузии также не были воодушевлены результатами армяно-грузинской войны. В своем выступлении патриарх грузинской дипломатии, опытный политический деятель Н.Н. Жордания по этому случаю заметил: «Если война не решила территориальные вопросы и существуют перспективы решения вопроса политическим путем, война в таком случае – это не война, а месть».

Условия, предъявленные армянской стороне были настолько несправедливые, односторонние и неприемлемые, что делегация Республики Армения попыталась маневрировать и внести изменения в них перед подписанием. Согласно А. Деникину, результаты войны для армян были окончательными, навязанными со стороны британцев, и согласно последним, несмотря на то, что армяне имели более благоприятное стратегическое положение, тем не менее, неизбежные и неоспоримые условия британского перемирия, навязанного двум сторонам, поставили грузинскую сторону в более предпочтительное положение, нежели армянскую сторону, и как будто нарочно создали очаги враждебности, недовольства и военно-политического напряжения.

Согласно необоснованному утверждению ряда исследователей, установившим новые факты с историко-критической точки зрения, полковник М. Зинкевич, обобщив результаты войны, считал, что несмотря на то, что она окончилась военной победой Армении и территориальными достижениями, многочисленными пленными и трофеями, все же разрешилась дипломатическим поражением, которая усилиями британцев и военно-политической поддержкой, оказанной Грузии, а также местами против Добровольческой армии Деникина и Республики Армения, считающейся союзником последнего, привело к созданию неблагоприятного положения для армян. В мирной конференции января 1919 года армянская делегация приложила значительные усилия для решения выдвинутых условий.

Блокадное состояние Армении вынуждало власти РА искать достойный выход из ситуации, хорошо понимая, что Армения в подобных условиях просто не имеет возможности вести длительную войну, а угрожающий голод и угнетающее состояние армян Тифлиса давали понять, что дальнейшее продолжение войны может стать непредсказуемым и необходимо быстро закончить эту победную, но и разрушительную войну. Так как армянская сторона осталась недовольной результатами армяно-грузинской войны в конгрессе примерения, разрешение спорных вопросов перемещается в международные инстанции: Берн и Второй Интернационал, Парижская мирная конференция.

После мирного соглашения 1919 года, армяно-грузинские военно-политические отношения и непосредственные переговоры вокруг территориального деления вплоть до середины 1920 года и далее – дипломатическая волокита до глубокой осени, в условиях непродуктивных встреч, вследствие которых не было достигнуто договоренности в спорных территориальных вопросах. Несмотря на то, что Республика Армения вышла из политической, экономи-

ческой и военной блокады и изоляции, дороги были открыты, железная дорога восстановила жизненную связь, были восстановлены дипломатические и межгосударственные отношения между Арменией и Грузией. Нежелательного в Грузии Аршака Джамаляна на должности дипломатического представителя РА в Тифлисе заменил талантливый Левон Евангулян. Армения была вынуждена уступить британскому вмешательству и связать проармянские надежды и желания в отношении разделения Лори-Ахалкалаки и Армянского Борчалы со «справедливыми решениями» Парижской конференции в угоду малого настрадавшего союзника Антанты, ставшего жертвой Первой мировой войны. Таким образом, следует отметить, что несмотря на то, что военно-политическое напряжение 1919 года-первой половины 1920 года смягчилось, более того, с двух сторон были предприняты шаги на основе положений январского мирного соглашения 1919 года, который заключил военно-политические результаты злополучной декабрьской войны 1918 года. Между Республиками Армения и Грузия были восстановлены дипломатические отношения и армянское государство вышло из экономической и политической блокады, однако, в межнациональных отношениях сохранилось напряжение, в особенности в погранично-территориальных вопросах.

В монографии затрагивается ряд важных вопросов, тесно связанных с армяно-грузинскими военно-политическими взаимоотношениями, в частности историко-критическому анализу подвергаются усилия как Первой Республики Армения, так и Советской Армении для воссоединения Нейтральной зоны Лори с большой родиной. Основные вопросы борьбы за Нейтральную зону Лори с меньшевистской Грузинской Республикой сегодня стали крайне актуальны и полностью совпадают с нынешними государственно-политическими процессами.

После Октябрьской революции 1917 года, в уже существенно измененных геополитических условиях, когда временно на Кавказе активную роль стали играть потерпевшие поражение в Первой мировой войне Турция и Германия, за которыми последовала и Великобритания, которые активно вмешивались в закавказские дела, тем самым существенно влияя в том числе и на ход и результаты двухнедельной грузино-армянской войны в декабре 1918 года, и вследствие дальнейших военно-политических развитий конца лета 1919 года британские войска были эвакуированы из Южного Кавказа, кроме округа Батуми, где они остались вплоть до середины лета 1920 года, хозяином освободившейся после них геополитической среды стала большевистская Россия. Как Республика Армения, так и меньшевистская Грузия в конце противостояния за Лори, в конце 1920-начале 1921 годов, оказались в военно-политическом тупике, за которым последовала советизация, которая для обеих сторон открыла новые перспективы.

Именно в этой ситуации армяно-грузинское военно-политическое напряжение вокруг армянского Лори обострило военно-политические взаимоотношения между двумя республиками, привлекая к себе внимание союзников Турции, Азербайджана и других геополитических сил, имея при этом тяжелые последствия. Грузия в течение 1918-1920 годов и после этого использовала каждый шанс для укрепления позиций в Нейтральной зоне Лори, рассматривая ее как чрезвычайно важную военно-политическую опору для владения всем Лори. В нейтральную зону Лори входили районы Узунлар-Одзун и Воронцовка-Калинино области Алаверди провинции Борчалу, в которую входило 41 село.

Следует отметить, что признаки военно-политического напряжения вокруг Нейтральной зоны стали появляться еще в мае-июне 1920 года. 7 мая 1920 года в Закавказье снова накалились политические страсти в связи с заключением русско-грузинского до-

говора, т.к. по нему РСФСР практически гарантировала территориальную неприкосновенность меньшевистской Грузинской республики, а это создало напряженность как с Азербайджаном, так и с Грузинской меньшевистской республикой.

Однако здесь сложно согласиться с практически неприемлемым, лишенным научного обоснования, вымышленным утверждением канадских кавказоведов, известных исторических фальсификаторов Э. Андерсена и Г. Эггея, о том, что якобы учитывая ход армяно-турецкой войны и ее последствия, большая часть христианского населения Лори в референдуме проголосовала в пользу Грузии, тем самым в крайнем случае обеспечив неприкосновенность местного населения - армян, греков и русских, безопасность их жизни и имущества. Так продолжалось около года. В конце второго этапа армяно-турецкой войны, через неделю после падения Александраполя, 13 ноября 1920 года правительство Армении разрешило войскам Грузии «временно» захватить Нейтральную зону, которая после ухода англичан превратилась в грузино-армянский кондоминиум (совместное владение), для якобы предотвращения завоевания последнего со стороны турок.

После мирной советизации Республики Армения меньшевистская Грузия продолжила свою пресловутую политику по оккупации Нейтральной зоны, не забывая об осуществлении своих амбициозных помыслов, однако на этот раз встретила на своем пути жесткую позицию Советской Армении по этому вопросу, корни которой естественно нужно искать в закавказской стратегии, осуществляемой большевистской Россией.

Сразу после прихода к власти правительства Советской Армении, глубоко просчитав особенности созданной благополучной ситуации, она начала бороться за возвращение Армении территорий, захваченных меньшевистской Грузией, одновременно протестуя против беззакония грузинских властей и политики конфиска-

ции в армянских селах, где грабеж и распущенность стали повседневным явлением, в то же время подчеркивая желание населения армянский сел воссоединиться с родиной.

Эта ситуация в значительной степени усложнила взаимоотношения с Грузией, и основная причина этого находилась в темной и неизвестной стратегии большевистского центра, и здесь неоспоримым является тот факт, что неразрывно связанное с территориальным спором армяно-грузинское противостояние использовалось со стороны Москвы для разрешения геополитических задач, связанных с советизацией Грузии.

Можно не колеблясь сделать вывод, что военное столкновение с Грузией непосредственно было использовано не только для разрешения вопроса Лори, но и для не менее важного вопроса с точки зрения укрепления новой большевистской империи России в регионе – большевизации Грузии и включения ее в состав большевистской империи. Большевизация стала краеугольным камнем политики Москвы.

Овсеп Лазян по согласованному решению центрального комитета Кавказского бюро РК(б)П и АК(б)П был назначен начальником штаба вооруженного восстания рабочих Лори. Со стороны руководителей восстания была отмечена важность вопроса участия войск 11-й Красной армии в поддержке мятежа, о чем О. Лазян еще в феврале 1921 года достиг договоренности с А. Геккером.

Итак, было очевидно, что восстание было тщательно спланировано и 11-го в ночь на 12-е февраля оно началось и охватило весь регион. Повстанцы быстро захватили знаменитые села Лори Чибухлу, Узунлар (Одзун), Дсег и др., обезоружив находящиеся там грузинские войска, чему последовал захват моста Шагали-Заманлу. Вследствие благоприятных геополитических развитий Лори был освобожден от господства меньшевистской Грузии и воссоединился с Советской Арменией. Влияние повстанческого движе-

ния населения Лори, несомненно, вышло за пределы Зоны, что и облегчило советизацию Грузии и дальнейшее укрепление советской власти в Закавказье.

VANIK HRANT VIRABYAN

THE ARMENIAN-GEORGIAN MILITARY-POLITICAL RELATIONS (1920-1921)

Summary
(Instead of Epilogue)

The Armenian-Georgian war that took place on the 13th of December had extremely severe results for the First Republic of Armenia. Armenian politicians were shocked of the promise made by their Tbilisi colleagues before the declaration of independence. At that time Transcaucasian Seed had been destroyed and peoples took a course toward the independence by means of self-determination, fundamentally reforming their previous agreements and strategies about the territorial sharing, trying to become the greatest shareholder of the Transcaucasia jointly with Azerbaijan. This, after short diplomatic skirmish, resulted to two-week war, held in December (1918) for Armenian Lori-Akhalkalak. Despite the splendid victory of the small, approximately 6-8 thousand Armenian army led by Dro (Drastamat Kanayan) over the 12 thousand well-armed Georgian army accompanied by 4 war-trains and occupied by the Armenians, the desirable results of the victory weren't taken advantage in Armenia, as functioning world political compound and none homogeneous actions prevented it. In addition to the Entente allies of the Republic of Armenia, particularly the passive stance of the Great Britain that established its anti-Armenian policy in the region which placed in Bolshevik Russia to oppose its plans and to complicate the Armeno-

Georgian military-political relations, by creating a strategy that Armenia won't have any real results in solving of the border problems.

By means of profitable interference of the Republic of Armenia and the Armenians Entente federal leaders, with the help of intermediacy Great Britain, and particularly, with the help of France, that had rather serious intentions in the region of Transcaucasia, serious reformations took place on the political map of the Transcaucasian home and on the piece of occupied Armenian land was created the so called «Lori Neutral Zone». Such items as nation self-definition or ethnographic principles of the solution of national issue suggested by Armenian side were neglected in favor of Georgian side and applicable for their «Georgian» historical principles. As a matter of fact, it didn't express real interests of the Armenians, although it corresponded to the optimal option made in accordance with the world political situation of that period. After all, none profitable for the Armenian people the transformation of political cases, events and because of the loss of the Republic of Armenia in the Turkish-Armenian disastrous war held in autumn (1920), when Armenia and Armenian people were left alone by the Entente states and the federal states of the League of Nations and refused in the mandatory by the USA, some Armenian-inhabited regions, and first of all Lori and Akhalkalak turned out to be powered by Georgia, which didn't lose a chance to take advantage of the historical political temporal weakness of Armenia. In 1920 the period from September to December Armenia was in difficult conditions, taking this fact into account, at the same time Georgian Republic began to claim Kars and Ardahan regions bringing the troops in these regions illicitly, upsetting the mood of local inhabitants and disturbing the loyal attitude of the Kurds, Tatars and representatives of other nations in these provinces towards the authorities of the Republic of Armenia. During the political hostilities against the Armenian nation the commanders of Georgian army began

to cooperate with the Tartar-Kurdish inhabitants as well as political leaders of various criminal bands of Kars, Ardahan and other closest regions. After February (1921), due to some efforts and maneuvers of Kremlin politicians Bolshevik-dressed people of «friendly» Georgia occupied Armenian Akhalkalak, Akhaltskha and some neighboring territories, ceding only a part of Armenian Lori. The war also cleared out the difficulties of the Republic of Armenia, the difficulties which were mostly the reason of the Armenian dependence on Georgian communications. These blockade operations were applied nowadays during the terrible days of Artsakh events, the end of 1980s-90s, preventing the natural development of the Third Republic of Armenia. At the same time it cleared out the value of pro-European and pro-American orientation of the Republic of Armenia, as well as their real intentions, consequences, possible political expectations, results and disappointments.

Although it was obvious that the Armenian-Georgian military-political confrontation was over, it was necessary to deal with the results of the war, through regulating the military-political correlations between the two countries, and through rehabiliting the economical, diplomatic and cultural relations, in addition to other important issues.

The Armenian-Georgian Conference that was opened in January (1919) in Tbilisi, has dealt with the results of the war, and with the regulations of some problems of the future. However, it is necessary here to interpolate, by noting, that until January (10, 1919) the military operations between Armenia and Georgia were apparently ended, and the negotiations of reconciliations were started in Charakilisa; which were under the patronage of Great Britain and France. The panel also included the troop commanders of the two countries. Afterwards, for unclear reasons, the negotiations were moved to Tbilisi.

Thus, in January (22, 1919) was signed a temporary treaty, by which the Armenian-Georgian two-week war of December (1918) got a legal formulation, also the Neutral Zone was created, which included the rich cooper minds of Alaverdi, 43 villages, mainly Armenian, and approximately a thirty-kilometer segment of the railway with 6 train stations. The Neutral Zone was divided into Uzunlari, Vorontsovka and Alaverdi districts. The borders of the Neutral Zone were: Sadakhlo from the Georgian side (in the north), where Khram River flows into Kur River, while from the Armenian side (in the south) there were Kolageran and Jalaloghli-Dsegh line. The frontier military units should have constituted 600 hundred men from each side. And finally, with the arbiter verdict of the allies of January (27, 1919) captain A. Sh. J. Douglas was appointed as a general commissary for the allies, and provided one of the four rifle bridge companies of division 27; to fulfill his peacekeeping duties, besides that Douglas' headquarters were allocated into Alaverdi.

The Reconciliation Treaty of (1919) was represented as the reflection of the (1918) Armenian-Georgian war. It was a unique tool to void the intensiveness of Armenian-Georgian military-political relations. Despite the fact that the Armenian army was somehow capable to occupy Tbilisi, yet it was difficult for the Republic of Armenia to predict the further intentions of military-political developments. Furthermore, during the geopolitical developments, the military-political representatives of Entente countries had their direct interventions; finally, it was preferable to make peace with the issue of signing the Reconciliation Treaty with Georgia. It was a necessity, because to that date Armenia was confronting a social-economic disaster, it was blockaded and separated from the outer world. The Armenians of Tiflis were trapped into a reprisal ring, and as a result, despite of the seemingly favorable military-political capabilities and their position on the front line, the Republic of Armenia was forced to

make an agreement with Menshevik Georgia, in order to come out of the military-political chaotic and unpredictable situation.

It is notable, that Georgia's official political leaders were not particularly enthusiastic about the results of the Armenian-Georgian war. The experienced politician, Patriarch of the Georgian diplomacy N. N. Zhordania commented about this in his speech: «When the war didn't solved the territorial issues, and when the prospects of resolving the conflict by political means were being suggested, in this case, the progress of the war wasn't meant a war, but vengeance».

The terms that proposed to the Armenian side were unjust, unilateral and unacceptable, to the extent that the delegation of the Republic of Armenia tried to make changes before signing it. According to A. Denikin, the results of the war were ultimatum for the Armenians, and imposed by the British side. According to the latter, although the success of the strategic situations and favorable terms of the Armenians, the two sides were forced by Great Britain to sign a ceasefire, which was more preferable for the Georgians rather than the Armenians, and as if military-political animosity and complain centers were created on purpose. According to unreasonable claims of some researches that consisted quite notable and new critical historic facts, Colonel M. Zinkievich has summarized the results of the war. Although he has found that the war was over for the benefit of Armenia by its military victory, territorial gains, captives and booty, it was defeated diplomatically, which was implanted by the British efforts and Georgian military-political supports. In addition to the threats against Denikin's volunteer army which was considered allies with the Republic of Armenia. Eventually, it led to the creation of unfavorable conditions for the Armenians, in the Conference of Reconciliation of January (1919); the Armenian delegation has done considerable efforts in order to settle the confronting issues.

The blockaded situation of the Republic of Armenia was forcing its authorities to search a way-out of the situation with honor, with an excellent understanding that in such situation Armenia simply doesn't have the possibilities of a prolonged war, while the threat of famine and the persecution of the Armenians of Tbilisi were referring that the further progress of the war is fraught with unpredictable consequences, and that the rapid-victorious ending of the war is a necessity, also it would be a devastating war.

Because the Armenian side was dissatisfied with the results of the war that was constituted by the Armenian-Georgian Reconciliation Assembly, the settling of the controversial issues were moved to the international tribunes: as in Berne and in the second international Peace Conference of Paris.

After the Reconciliation Treaty of (1919), the Armenian-Georgian military-political relations and the negotiations of border demarcation until mid-1920's and further; took unfavorable motion in diplomatic procrastination, through unproductive meeting, in which the results of border disputes were precisely failed. Though the Republic of Armenia got out of the economic and military blockade and isolation, the roads were opened, the railway restored Armenia's stringently-vital connections, and also the interstate relations between Georgia and Armenia were restored. The Armenian diplomatic solicitor of Tbilisi Arshag Jamalyan, who was undesirable in Georgia, was replaced with the gifted Levon Yevangulyan. Armenia was forced to give up to the British intervention, and to give up the future demarcation desires of Lori-Akhalkalak and Borchalu, and link it with the decision of Paris Conference «the righteous judgments». As a benefit of Entente's little ally's suffering, which has become the victim of the First World War, it was a necessity to record clearly that, in (1919) and the first half of (1920), the military-political tension was mitigated, in addition to the acts conducted by bilateral efforts based on the Reconciliation Treaty

of January (1991), which was summarized the results of the disastrous two-week war of December (1918). The political relations between Georgia and the Republic of Armenia were recovered, and Armenia has come out of the economic-political blockade. However, during the further period the tension and anxiety in the interstate relations between them were retained, and especially in the border demarcation issues.

The monography identifies numerous important issues closely connected to the Armenian-Georgian military-political relations. In particular, the persistent efforts by the First Republic, as well as the Second Soviet Republic of Armenia for the reunification of the Lori Neutral Zone to the motherland are analyzed from historical-critical point of view. The key issues on the Lori Neutral Zone with the Georgian Menshevik Republic are very urgent nowadays and fully correspond to the current political processes.

After the October Bolshevik Revolution (1917), in significantly changed new geopolitical situation; Turkey and Germany who lost the First World War, temporarily became active in the Caucasus and later Great Britain were interfering in the affairs of the South Caucasus, having a significant impact on the two-week Armenian-Georgian war in December (1918) and its results. Due to the subsequent military-political developments at the end of the summer of (1919), British troops were evacuated from the South Caucasus, with the exception of Batumi, where they remained up to the midsummer of (1920). Later Bolshevik Russia became dominant in this geopolitical situation. At the end of (1920) and at the beginning of (1921) both Republic of Armenia and Menshevik Georgia reached to a military-political deadlock in the conflict for Lori, which was followed by the sovietization that opened new perspectives for both countries.

In this situation Armenian-Georgian military-political tensed relations for the «neutral zone» and generally Armenian Lori

intensified and appeared in the focus of allies' (Turkey, Azerbaijan and other geopolitical forces) attention resulting serious consequences. During (1918-1920) and after that, Georgia used every chance to strengthen its positions in Lori Neutral Zone, considering it to be an important military stronghold for possession of the whole Lori. The regions of Alaverdi, Uzunlar-Odzun and Vorontsovka-Kalinino with 41 villages of Borchalu province were the part of Lori Neutral Zone.

It should be noted, that the signs of military-political tension for Lori Neutral Zone appeared since May-June (1920). The signed Russian-Georgian agreement on 7th May (1920) intensified the political situation in Transcaucasia again, as RSFSR practically guaranteed border-territorial inviolability of Menshevik Georgia, by this agreement that resulted tensioned relations with both Azerbaijan and Georgian Democratic Republic.

However, it is difficult to agree with the false, non-scientific allegations of the Canadian experts on the Caucasus E. Andersen and G. G. Eggey, which are unacceptable claims. As referring to the process of the Armenian-Turkish war and its consequences, Lori's Christian majority voted for Georgia at the referendum, and thereby, allegedly provided the inviolability and life and property safety of local population, i.e. Armenians, Greeks, and Russians in extreme cases. This continued for about a year.

At the end of the second phase of the Armenian-Turkish war, one week after the decay of Alexandrapol, on 13 November (1920) the Government of Armenia let the Georgian troops "temporarily" occupy the Neutral Zone, which, after the withdrawal of the British troops became Georgian-Armenian Condominium, as if to prevent its occupation by the Turks.

After the peaceful sovietization of the Republic of Armenia, Menshevik Georgia continued its notorious policy of the occupation of neutral zone, without forgetting its intentions about Lori.

Nevertheless, it met the resistance of Soviet Armenia in this issue. The roots of this issue naturally should be found in the Transacaucasian strategy of Bolshevik Russia.

Since coming to power, the government of Soviet Armenia took into consideration the favorable situation, and began to fight for the return of illegally occupied territories by Menshevik Georgia. At the same time, Soviet Armenia complained about the illegal and expropriation policy held by Georgian authorities in the Armenian villages of Lori, where robbery and insolence became everyday common phenomenon, and emphasized the desire of the population of the village to reunite with homeland.

This situation made the relations with Georgia rather complicated, and the main reason of it was the vague strategy of Bolshevik Center. It is undeniable, that Armenian-Georgian conflict connected with territorial dispute for borders was used by Moscow for the settlement of geopolitical issues. We can conclude that the military clash with Georgia was used not only for the settlement of the issue of Lori, but also for the bolshevization of Georgia, and for the inclusion of the latter in the frames of Bolshevik Empire, from the point of long term strategy of Russia (the new Bolshevik Empire of the region) to strengthen. Bolshevization became the main issue of Bolshevik Moscow policy.

Hovsep Lazyan, by decision of the Caucasian Bureau of Russian Central Committee and Central Committee of the Communist Party of Armenia, was appointed as head of the headquarters of the armed rebellion of Lori workers. The heads of the rebellion gave importance to the question of participation of the 11th unit of the Red Army. H. Lazyan came to an agreement on it with A. Hekker in February (1921).

So, it was obvious that the rebellion was well planned; it started on February 12 and included the whole region. The rebels occupied

the well-known villages of Lori: Chibukhlu, Uzunlar (Odzun), Dsegh, etc, disarming Georgian units, which was followed by the cupture the bridge of Shahali-Zamanlu.

As a result of the geopolitical developments, Lori was liberated from the domination of Menshevik Georgia and reunited with Soviet Armenia. The rebellion, as well as the influence of the rebellion movement of Lori population, went out of the borders of the neutral zone, which facilitated the sovietization of Georgia and the further process of strengthening of Soviet powers in Transcaucasia.



Հովհաննես Քաջազնունի

Ալեքսանդր Խատիսյան

Համո Օհանջանյան

Սիմոն Վրացյան

Արամ Մանուկյան

Ավետիս Ահարոնյան

Սիրական Տիգրանյան

Արշակ Չամալյան

Ռուբեն Տեր-Մինասյան

Վահան Փափազյան

Արտաշես Բաբայյան

Տիգրան Բեկզադյան

Գեներալ Հովհաննես
Հախվերդյան

Դրո
(Դրաստամատ Կանայան)

Գեներալ Մովսես Սիլիկյան

Գեներալ Քրիստափոր
Առաուտյան

Գաբրիել Ղոռղանյան

Թովմաս Նազարբեկյան

Տիգրան Դեվոյանց

Ալեքսանդր Բեկզադյան

Ալեխանդր Մյասնիկյան

Ասխանազ Մռավյան

Հովսեփ Լազյան

Սարգիս Կասյան

Սարգիս Լուկաշին

Սերգո Օրջոնիկիձե

Միխայիլ Վելիկանով

Բորիս Լեգրան

Գեորգի Չիչերին

Գեներալ Իլյա Օղիբելիձե

Իրակլի Ծերեթելի

Եվգենի Գեգեչկորի

Նոյ Ժորդանիա

Նոյ Ռամիշվիլի

Գեներալ Գեորգի
Կվինիտաձե

Գեներալ Գեորգի
Մազնիաշվիլի (Մազնին)

Գեներալ Գեորգի
Ծուլուկիձե

Գեներալ Իլյա
Մակաևվիլի (Մական)

Վալիկո Ջուղելի

Գեներալ Անտոն
Դենիկին

Գեներալ Նիկոլայ
Յուդենիչ

Գնդապետ Միխայիլ
Ձինկևիչ

Գեներալ Քրեսս Ֆոն
Քրեսսենստեյն

Գեներալ Վիլյամ
Թոմսոն

Գեներալ Օssո Ֆոն Լոսսով



Գեներալ Ֆրիդրիխ Վեռներ Ֆոն Շուլենբուրգ

Գեներալ Ջեյմս Հարբորդ

Ջորջ Օլիվեր Ուորդրոդ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Ա
Աբդուլ Քերիմ փաշա – 158, 163, 176-177, 197
Աբելյան Պողոս – 735-736
Աբովյան – 293, 347
Աբրահամյան Վ. – 15
Ադամիա Վ. Ի. – 17, 389-391, 415
Ա-Դո [Հովհաննես Տեր-Մարտիրոսյան] – 11, 34, 311
Ազատյան Հայկ, ՀՀ խորհրդարանի անդամ – 44, 104, 337, 474-476, 496, 498
Ազատյան Հենրիկ - 15, 692
Ազիզյան, պորուչիկ - 378
Աթաբեկով Սերվեր բեկ –157, 547, 613, 618, 663
Ալեքսանյան Վ. Խ. - 7
Ալեքսանդրով, փոխգլխապետ – 378
Ալիխանյան Ս. Տ. - 8, 699
Ալի Ֆուատ փաշա - 643
Ահարոնյան Ավ. – 41-42, 71, 92-93, 97, 99-100, 103, 126, 139, 141, 188, 257, 290, 292, 297, 348, 393, 396, 449, 497, 509, 518, 614, 652
Ահարոնյան Գ. – 72
Ահմեդելաշվիլի [Ահմեդելով], գեներալ – 249, 251
Աղաբաբեկով Ասադ բեկ - 472
Աղբալյան Ն. – 37, 41, 486, 494, 496
Այվազյան Վ. - 121
Անդրանիկ [Անդրանիկ Օզանյան] – 333, 569
Անդրանիկյան Ա. - 428, 431, 437
Անդերսեն Է. – 18, 75-79, 111, 161, 213, 259, 340, 368, 382, 385, 398, 417, 420, 426, 439, 467-468, 668, 708, 726-727, 729-731, 751
Անտոնով – 129
Ասլանյան, փոխգլխապետ – 377
Ասոյան Տիգրան – 415
Ասպատուրյան Վերնոն Վ. – 89
Աստվածատրյան Արշ. [Աստուածատրեան] – 38, 180, 364, 451
Ավալով Դ. [Ավալաշվիլի]
Ջուրաբ – 19, 63, 134, 168, 220, 319, 531, 545, 570-571
Ավդալբեգյան Թ. - 471
Ավետիսյան Հր. - 9, 15, 82-83
Ավետիսյան Տ. – 442
Արամյանց – 22, 129, 448, 577
Արարատյան Քրիստափոր [Խաչատուր] Գ., Գեներալ - 566, 607-608, 633-634

Արեշյան Միքայել Վ., գեներալ – 653, 672, 674
Արզումանով Մ. [Արզումանյան] – 177, 189, 194, 203-204, 297, 563, 640
Արմեն Գարո [Գարեգին Փաստրմաջյան] – 52
Արսենիձե Մ., վրաց սոցիալ-դեմոկրատ - 208
Արվելաձե Բոնդո - 459
Արտմելաձե - 578

Բ
Բաբայանց Վարոս - 481
Բաբալյան [Բաբալեան] Արտաշես - 10, 41, 44, 104, 379, 437-438, 499, 521, 625
Բաբալյան, պրապորշչիկ - 378
Բաղալյան Գեղամ –15, 689
Բախչին Մ. Ա. – 616
Բաղդասարով – 453
Բայկով Ա. - 571
Բայրամյան Հր. - 18, 321
Բասրի բեյ - 158
Բարաթաշվիլի - 65, 136
Բեկզադյան Ալեքսանդր Հարությունի – 660, 692, 695-697, 701-703, 727, 731, 735-736
Բեկզադյան Տիգրան Հարությունի – 49, 143, 453, 601-606, 619, 621, 627, 633-634, 637-638, 640-643, 646, 648-649, 651, 653-654, 660-661, 664, 666-667, 674, 676, 680-684, 686-688
Բեհհովեր - 415
Բենջամին Մուռ - 598
Բիչ Վիլյամ Հ., բրիգադային գեներալ – 56, 552, 575-576, 580, 597, 670
Բոբրիշչև - 703
Բոչկարյով - 711
Բրաֆ – 49
Բրետոն - 578
Բուգաև - 557
Բուդաղյան Հովհ. – 474, 476
Բունիաթյան Մ. - 57, 59-60

Գ
Գաբաև, գեներալ-լեյտենանտ - 72, 134
Գազազյան Կորյուն, ՀՅԴ անդամ – 177, 632
Գալոյան Գ. – 9, 16, 27, 189
Գամբաշիձե Դավիթ – 639, 641
Գամսախուրդիա Զ. –134
Գամսախուրդիա Կ. -134
Գեգեչկորի Եվգ. - 25, 226, 228, 231, 236, 238, 248, 250-251, 258, 270, 276, 280, 287-288, 293, 305-306, 308, 319, 325, 334-336, 343-345, 347-348, 360, 370, 372, 393-396, 454, 514, 517, 522, 524-525, 533-535, 545, 550, 554, 557-558, 567, 592, 601-603, 613, 623, 633, 635, 637, 664, 691, 721

Գասֆիլդ Նիկոլաս, կապիտան – 405, 414, 429, 516-517, 529
Գեորգաձե Գեորգի Տ., Վրաստանի կառավարության նախագահի տեղակալ, Վրաստանի Զինվորական նախարար, հատուկ լիազորված անձ Հայաստանում – 42, 73, 90-91, 113, 134, 136, 139, 173, 181, 184, 186, 191, 196, 200, 248, 307-308, 362, 369, 379, 383, 473, 641-642, 651
Գելեհշվիլի - 261
Գյուլնազարյան Կոնստանտին - 489
Գեղևանով-Գեղևանաշվիլի Ա. Կ. - 180, 301, 517, 529-530, 540, 567, 576, 580-581, 613, 651
Գլոնտի - 716
Գոբեչիա - 209
Գոգվաձե [Գոգուաձե] - 173-174, 179, 181, 200, 207, 299, 337
Գոմարթելի, Վրաստանի պառլամենտի անդամ - 209
Գվարժալաձե – 175-177, 197
Գրիգորյան Սիրաք - 465
Գրին Է., կապիտան – 49, 347, 349-354, 356, 398, 493, 495-496, 498
Գրոսս, կապիտան –174
Գևորգյան Համլետ –13, 330, 436-437
Գուլս - 583

Դ
Դավիթխանյան Դ. – 442
Դեյվիդ Քիթ Մեյթլենդ, գեներալ - 597
Դենիկին Ա., գեներալ – 13, 34, 158, 326, 432-435, 458, 515, 519, 522-524, 528, 558-570, 572, 574, 595, 639, 747-748
Դեվդարիանի Գավիոզ - 392
Դեվոյանց Տիգրան [Դէոյեանց], կապիտան – 569, 612, 615, 617
Դը Կորբեյլ - 620
Դիդեբուլիձե –200
Դոլիձե – 680
Դոլուխանով - 249-250, 268, 347
Դյուրուա - 355, 356, 371, 387, 517
Դրո (Կանայան Դրաստամատ) –13, 128, 291, 268, 295, 363, 425, 436, 440, 743
Դուգլաս Ա. Ս. Ջ, կապիտան – 517-518, 520, 539-540, 544, 576-577, 579-580, 746
Դուգլաս Վիձերս Հերբերտ Հենրի, կապիտան – 405, 414, 423-424, 429, 450, 516

Ե
Եղիազարյան, պորուչիկ - 633

Եսայան Ա. - 8, 708, 718
Եվանգուլյան Լևոն Գ. [Եվանգուլով] – 49, 53-55, 61, 87, 143, 535, 550-554, 556, 572, 580, 611, 626, 629-632, 640, 683, 749
Երզնկյան Արամայիս – 44, 293, 301, 347

Զ
Զախարիաձե Ա. Կ.– 126, 181, 191, 200, 203-204, 632, 639, 654, 680
Զավրիև Հակոբ [Զավրիյան] – 561
Զարաֆյան - 337
Զինկևիչ Մ., գնդապետ –158, 268, 298, 426, 434-435, 519, 560-561, 640, 748
Զոհրաբյան Արշակ [Զուրաբով] - 448

Է
Էգգե Գևորգ – 18, 76-79, 111, 161, 213, 259, 340, 368, 382, 385, 398, 417, 426, 439, 467-468, 669, 708, 726-727, 729-731, 751
Էլիավա, քաղաքագլուխ - 336
Էլիավա Շ. Զ., 1921 թ. Վրաստանի Ծովային և ռազմական գործերի ժողկոմ - 721, 736
Էմին Ռասուլ-զադե – 735
Էնվեր փաշա – 35, 40, 154, 158, 222, 569, 648
Էնֆիաջյան Արտաշես – 421, 447
Էրիստով - 723

Թ
Թադյան – 278
Թալեաթ - 463
Թարխանյան Կուռո – 374-375
Թարվերդյան (Թարվերդով), գլխապետ – 337, 363
Թեգվիա - 635
Թեյմարով – 499
Թեմպերլեյ Կ., գեներալ - 547
Թոդրիա – 735
Թոիձե – 727
Թոխաձե - 121
Թոմսոն Վիլյամ Մ. [Թոմպսոն, Տոմպսոն, Տոմսոն], գեներալ – 56, 160, 259, 348, 354-356, 390, 397, 434-435, 488, 493, 523, 552-556, 595-598, 608
Թորոսյան Շիրակ - 15
Թորոսյան Զ. - 15
Թորոսյան Սահակ – 471, 478
Թոփուրիձե Դ. – 391
Թոփչյան – 674
Թումանյան Լևոն - 293
Թումանյան [Թումանով] Միքայել [Միխայիլ] Գ., դիվանագիտական ներկայացուցիչ – 11, 41, 57, 88,

142-143, 344, 355, 357, 370, 401, 522, 534-535, 560, 584, 587, 603-604, 647, 664, 683
Թումանյան Հովհաննես - 87-89, 333, 401, 441-442, 444
Թունյան Վ. Գ. – 85-86

Ժ
Ժորդանիա Նոյ Վիսարիոնի, Վրաստանի Հանրապետության նախագահ - 32, 36, 63, 65-67, 69, 97, 99, 102-103, 113, 129-130, 135, 139, 141-145, 154, 156, 176, 178-180, 188, 214, 228, 231, 267, 300-301, 318, 344, 346-347, 361, 388, 391, 393, 398, 404-405, 407-408, 414, 433, 448, 457, 473, 498, 513-514, 563, 584, 595, 606, 636-637, 714-715, 719-720, 724, 728, 731-732, 746
Ժուրուլի Գ. Դ. – 73, 136, 517

Ի
Իմնաձե Վ., գեներալ - 383
Ինգորոկվա Պ. - 100, 116
Իշխանյան, գնդապետ – 418

Լ
Լազյան Հովսեփ – 699, 709-713, 717, 722, 726-727, 734, 752-753
Լասխիշվիլի Գեորգի - 73
Լեբեդև Օ. – 447
Լեգրան Բորիս Վ. – 644-645, 650, 698, 703, 709-710
Լենին Վ. Ի. – 8, 27, 79, 143, 657, 698, 701, 708, 720-723, 725-726, 729-730
Լեո [Առաքել Բաբախանյան] – 11, 26, 34-36, 39-40, 75, 84, 107, 262, 314-315, 461-462, 544, 675-678, 733
Լիսիցյան Լևոն - 100
Լիվինգսթոն Չարլզ, փոխգնդապետ – 579, 584
Լորդկիպանիձե - 220
Լորդկիպանիձե, վրաց սոցիալիստ-ֆեդերալիստ - 63
Լորդկիպանիձե Ալեքսանդր, Լոռու Չեզոք գոտում Վրաստանի ներկայացուցիչ - 577, 670, 682
Լորդկիպանիձե Գրիգորի Ս., Վրաստանի Ջինվորական մինիստր – 601-603, 610, 623-624, 627, 630-633, 635-637, 639, 642, 670, 691
Լորդկիպանիձե Իվանե, Վրաստանի Հաղորդակցության ուղիների մինիստր – 74, 136
Լոգ – 546
Լոմտատիձե – 649
Լոնգե Ժան – 506
Լոչտոն - 528
Լոսսով Օ. [Օտտո ֆոն Լոսսով]. – 72, 107, 133

Լուկաշին Ս. Լ.
[Սրապիոնյան] – 734

Խ
Խալիլ [Հալիլ փաշա] – 150-154, 157-158, 164, 182, 254-256, 631, 648
Խան-Խոյսկի Ֆաթալի – 63, 124, 557, 573
Խան-Կոտուրսկի Հ. - 578, 616, 619
Խառատյան Ա. – 15
Խառատյան Վ. - 15
Խառլամով Վ. - 62, 711
Խաս-Մամեդով Խալիլ բեկ – 557
Խաչապուրիձե Գ. Վ. – 17, 441
Խաչատրյան Արտեմ - 347
Խաչատրյան Կ. – 15, 689
Խաչատրյան Սմբատ - 349, 477, 507, 518, 531, 575, 601-602, 632, 669
Խատիսյան [Խատիսեան, Խատիսով] Ալ. – 10, 11, 36-37, 41, 44-45, 49, 52, 61, 63, 67, 69, 80, 91, 93, 97, 139, 141, 188, 232, 257, 266-267, 279, 294, 304, 309-310, 333-334, 460-461, 463, 509, 546-547, 554, 569, 590-592, 597, 611, 624, 627, 629, 633, 635-636, 643, 646-647, 664, 673, 681
Խատիսյան Գիգա [Գևորգ] – 52, 99, 115-116, 232, 679
Խատիսյան Լևոն - 444
Խոմերիկի Նոյ - 73
Խոնդկարյան Արշ., [Էսէռ] – 140, 157, 349, 472, 476-477, 479, 485, 495, 518, 583
Խոջամիրյան Գ. - 734
Խորենացի Մովսես – 89
Խունդաձե - 282
Խունունց Յ. [Հ] - 433-434

Ծ
Ծերեթելի Իրակլի – 27, 75, 97-99, 102, 108, 115, 127, 266, 489, 504-505, 584
Ծուլուկիձե Գ. – 190, 196, 200, 262, 280-283, 289-292, 295, 297, 299, 338, 340-341, 345, 364, 369-370, 372-373, 378-379, 381, 383, 428

Կ
Կաղիմով Իբրահիմ, զնդապետ – 618, 628, 663
Կազբեկ, գեներալ - 632
Կազեմզադե Ֆ. – 165, 170, 246, 259, 280, 408, 467, 541
Կայզեր, լեյտենանտ – 134
Կամենև Լ.- 707
Կանդելակի Կ. – 517, 557
Կանտեմիր Ալի խան - 557
Կարալով – 651, 653, 671-672, 693
Կարախանով Գ. - 115

Կարաբեքիր Քյազիմ փաշա, գեներալ – 643, 672
Կարապետյան Միեր - 8
Կարապետյան Մուրադ – 13, 330-331, 502
Կարապետյան Ս. Խ. – 8, 716
Կարաքեշիշյան – 278
Կարճիկյան Խ. - 44-45, 97, 99, 104, 108, 115, 117, 258, 443
Կարպիվաձե - 637
Կասյան Ս. - 692- 693
Կաուցկի Կարլ –724
Կեդիա Ս. - 512
Կիրով Ս. - 700-701, 734-736
Կլեմանսո Ժորժ – 50
Կորի Ջորջ Նորթոն, գեներալ – 577, 579-580
Կորոլկով – 202, 204, 331, 337-338, 340-341, 369, 373, 380, 385, 418
Կոցև Փշեմախո - 231
Կվինիտաձե Գ. Ի., գեներալ – 12, 19, 260, 273, 325-326, 365-366, 368, 381, 454, 513, 577, 632, 635, 637-638, 728-730
Կվիտաշվիլի – 600, 607
Կրեստինսկի – 707

Հ

Հախվերդյան Հովհ. – 44-45, 159, 165, 202-204, 278, 291, 315, 328-329, 331, 375, 377, 429, 548
Համազասպ - 569
Հաջինսկի Ահմեդ Հասան Ջաֆար-օղլի Մ. – 735
Հաջինսկի Մ. Հ. -122, 124
Հաջիև - 612, 614
Հասկել Վ. Ն., գնդապետ – 53, 61, 452-454, 579, 583-584, 664
Հարբորդ Ջեյմս, գեներալ – 57, 60
Հարությունյան Բ. – 459, 539
Հարությունյան Մ. – 349, 398, 412, 414, 420-422, 452, 460, 477, 499-500, 517-518, 520, 525-527, 541, 557-558
Հարությունյան Երվ. - 474
Հարությունյան Կլ. – 15, 734
Հարությունյան Ս.- 104, 557
Հարությունյան Վլ. – 17
Հեկկեր Ա. Ի., 11-րդ Կարմիր բանակի հրամանատար – 711, 735, 753
Հենդերսոն Արթուր – 505
Հերոդոտ – 77
Հովք – 489
Հովհաննիսյան Էդգ. - 11
Հովհաննիսյան Ռ. Գ. –19, 37, 73-75, 79, 108-109, 118, 184, 213, 218, 221, 224, 243, 246-247, 281, 304, 310, 334, 340, 354, 369, 383, 404, 408, 440, 461, 466-468, 515, 541-544, 568-571, 577, 579, 585, 595, 608, 619, 646, 691
Հովսեփյան, գեներալ – 613, 710
Հովսեփյան, պրապորշչիկ – 575

Հյուսիմանս Կ. – 506
Հուսեյնով Միրզա Դավուդ Բաղիր օղլի - 735
Հուսեյնով Մ. – 696

Ղ
Ղազախեցյան Վլ. – 15-16
Ղազարյան - 499
Ղազարյան Ա.- 16
Ղազարյան Գ. - 180, 365
Ղազարյան-Մայիլյան Ե. - 57, 59
Ղամբարով - 444
Ղարագյոզյան Ա. – 734
Ղարաջյան Թ. - 472
Ղորղանյան Գ. Գ., գեներալ - 76, 82, 99, 117, 353, 408, 477, 516, 518, 530, 553-554, 556, 620
Ղորղանյան Ստ. – 599-600, 611, 628
Ղուլյան Լևոն – 518
Ղուլյան Յուրիկ – 568

Ճ
Ճավճավաձե Ի. – 6-7
Ճխետիանի - 384

Մ
Մալխասյան Ա. – 228, 478, 486-488
Մալխասյանց Ստ. - 44, 89, 304
Մախարաձե Գերասիմ, Վրաստանի դիվանագիտական հավատարմատարը Հայաստանում 1919-1920 թթ. – 293, 301, 648, 698, 721
Մախարաձե Սեմյոն, Վրաստանի դիվանագիտական հավատարմատարը Հայաստանում 1918 թ. – 600, 627, 635-636, 719, 721
Մախարաձե Ֆ. – 721, 739
Մազնիև Գեորգի-Մազնիաշվիլի, գեներալ-մայոր – 365, 368, 379-381, 383, 417-418, 425-428, 430-431, 437, 443, 448
Մական Իլյա-Մաղաշվիլի, գեներալ – 157, 278, 339
Մակաշվիլի Կ., գեներալ-մայոր - 275
Մակդոնալդ, մայոր - 355-356, 358, 393
Մակդոնալդ Ռամզեյ – 506, 724
Մակինցյան Պողոս –734
Մակլակելիձե – 445
Մահմեդ Հասան Ջաֆար օղլի Հաջինսկի – 122, 735
Մամիկոնյան Ստ. Գ. - 44, 104, 140, 349, 408, 443, 474, 476-477, 479, 481, 490, 497, 507, 518, 533, 557-558, 570, 575, 580, 585-587, 601-602, 624, 632-633, 635, 648, 669, 676
Մայիլյան Բ. Վ. - 20

Մայսուրաձե Գեորգի – 346, 348, 430
Մանթաշով-Մանթաշյան Ա., Մանթաշև – 140, 249-251, 589
Մանուկյան Արամ [Արամ] – 38, 45, 152, 158, 421
Մաչաբելա Ջալալ բեկ – 618, 663
Մաչավարիանի – 635
Մասխարաշվիլի Սայմոն –243
Մասուրեան Ս. – 319
Մարխուլիա Գուրամ –18, 65-66, 74, 101, 113, 163, 192, 196-198, 211, 214, 229-235, 237-239, 261, 273-274, 284-285, 289, 366, 429-431, 549, 559, 731, 736, 741
Մարքս Կ. – 457
Մդիվանի Ալ. - 113, 115
Մդիվանի Բուդու - 739-740
Մդիվանի Սեմյոն Գ., Մդիվանի Սոսիկո – 163, 225, 227, 230-238, 240-242, 264, 267, 270-272, 276, 290-295, 301-305, 316, 326, 343, 517, 523, 571, 576, 580, 587, 649, 654, 667
Մեդվեդև, կապիտան – 154-155, 297
Մելիքյան Ա. - 472, 476
Մելիքյան Վ. - 15-16, 25
Մելիք-Կարագյոզյան [Կարակոզյան] – 421, 548
Մելիք-Հայկազով - 129
Մելքոնյան Ա. Ա. – 13, 15, 17, 330, 406, 735
Մեհմանդարով Սամեդ բեկ, գեներալ - 567-568
Մեհմեդ Ալի փաշա -153-154, 159, 163-165, 177
Մեսխիշվիլի Շալվա – 74
Մեսրոպ Մաշտոց - 15-16
Միգաբերիձե - 693
Միլն Ջորջ Ֆրենսիս, գեներալ – 498, 554, 597
Մինախորյան Վահան – 489, 499
Միրաքով – 138
Միրզա Դավուդ Բաղիր օղլի Հուսեյնով - 735
Միրիմանյան, զնդապետ – 331
Մխիթարյան Արշ. - 44
Մյասնիկյան Ալ. Ֆ. - 732, 734-735, 740
Մռավյան Ասք. - 30-31, 702, 728, 734, 736, 738
Մովսես Խորենացի – 89
Մուջիրի Ալեքսանդր –18, 320, 462, 738-739
Մուռ Բենջամին - 598
Մուրադյան Վ. – 607, 735
Մուստաֆա բեկ Վեքիլով - 231
Մուստաֆա Քեմալ Աթաթյուրք - 642, 648, 657, 665, 676

Յ

Յաբլոկով - 638
Յաղջյան – 293, 347

Յուսուֆ Քեմալ բեյ - 643

Ն
Նալբանդյան – 574-575
Նալբանդյան Մ. - 15
Նազարբեկյան Թ. [Նազարբեկով], գեներալ - 72
Նազարեթյան Ա. - 721
Նասիպեան Ագապի – 14, 388, 452
Նեստերովսկի, փոխգնդապետ – 331
Ներսիսյան – 444
Ներսիսյան Արշակ [Սեպուհ] - 665
Ներսիսյան Ա. – 15
Նիկողոսով, գնապետ – 337
Նուրի փաշա – 151, 631
Նուրիջանյան Ավ. - 703

Շ
Շաթրեան Մ. - 645
Շահխաթունյան Ավ. – 11, 63-64, 66, 81
Շահմազյան Արսեն, փոխգնդապետ - 194
Շահվերդյան Դանուշ, Վրաստանում ՀԽՍՀ լիազոր ներկայացուցիչ – 718
Շարաֆյան - 410
Շարդինյի Պիեռ Օգյուստ, գեներալ – 355, 393-394, 397-399, 404-405, 408, 498, 516, 556
Շեյնման Արոն Լ. – 696, 712
Շենե – 173, 191
Շեվքեթ փաշա - 155
Շնեուր Ալեքսանդր Կ., գնդապետ, – 172, 181, 201-202, 205-206, 451, 599
Շուբլաձե – 263, 282
Շուլենբերգ [Ֆրիդրիխ Վեռներ ֆոն դեր Շուլենբուրգ] - 134-135

Չ
Չաչխիանի Արչիլ - 212
Չիկվաիձե – 618, 663
Չիչերին Գեորգի – 648, 692, 696, 707, 711, 719-720, 723-724
Չխեիձե Նիկոլայ – 135, 307, 504, 615, 688
Չխենկելի Ակակի – 25-26, 35, 71, 73, 133, 135, 248, 503, 507
Չոխելի Ա. – 388-389
Չոլոկաշվիլի Կաուցա – 430

Պ
Պանգուրան - 557
Պանֆիլով - 727
Պապաջանով Մ., Պապաջանյան Միքայել – 41, 297, 518
Պապասկիրի - 727
Պետրոսյան Գ. – 13, 17, 433-435, 519, 561, 563, 569
Պետրոսյան, գլխապետ – 375

Պետրոսյանց Տ. - 180, 365
Պուադեբար Անտուան – 302, 304, 353, 410, 499, 517, 529

Ջ
Ջալալ բեկ Մաչաբելա - 618, 663
Ջամալյան Արշակ [Ջամալեան] – 10-11, 24, 85, 97, 132-133, 137-138, 141-143, 146-149, 151-154, 158, 163, 166-167, 175-178, 180-182, 184-189, 192-195, 197-200, 204, 215-218, 220, 223, 226, 241, 248-249, 252-255, 364, 393, 400, 404-407, 413, 416, 420, 441, 443, 445, 448-450, 472-473, 477, 498, 503-505, 506, 508-509, 535, 552, 644, 683, 749
Ջավախիշվիլի Իվանե – 17, 21, 348, 432, 740-741
Ջափարիձե, գնդապետ – 405, 414, 429, 517, 530
Ջաֆար բեյ - 609
Ջաֆարով Մահմեդ Յուսուֆ – 71, 231, 235, 557, 567
Ջիբլաձե Ս. - 65
Ջոնս Ստեֆան – 47-48, 50, 128, 211, 390, 439, 458
Ջորդան Ռիչարդ Փ., գնդապետ – 355-356, 393-394, 396-398, 408, 516
Ջուղելի Վալիկո – 346, 362, 367-368, 430, 649

Ռ
Ռաղմաջյան - 499
Ռամազով, գնդապետ – 263, 282
Ռամիշվիլի Նոյ Վիսարիոնի – 36, 65, 73, 97, 99, 113, 123, 133-135, 139, 141-142, 167, 169, 177-178, 188, 192-193, 197, 199, 207-208, 215-216, 218, 220, 222, 228, 231, 235, 248, 267, 347, 445, 474, 477, 516-517, 525, 532, 557-558, 567, 569-570, 574, 580, 584-587, 589, 601-606, 610, 618, 623-624, 631, 646-650, 654, 663, 666-667, 669, 673, 691, 714
Ռայկրոֆտ Վիլյամ Հ., գեներալ – 397, 404-405, 407-409, 423-424, 430, 449
Ռասուլ-զադե Էմին - 735
Ռաուլինսոն Ալֆրեդ, բրիտանական սպա, հետախույզ - 462, 575
Ռաևսկի Ա. - 571
Ռենոդել Պիեռ – 506, 724
Ռիչ Ալան, փոխգնդապետ - 539
Ռոստոմ – 518
Ռուբեն [Ռուբէ[է]ն] Տեր-Մինասյան, Ռուբեն փաշա – 11, 30, 48-49, 70-71, 84, 675

Ս
Սաբախտարաշվիլի Կ. Բ. – 517, 529, 575, 580, 622, 641, 648, 654, 662, 665-667, 674-676, 682-683,

685-686, 693-695, 696, 698, 701-703, 717-718, 727-728
Սաղոյան – 277
Սահակյան Ավետիք – 44, 152, 301, 304-305
Սառիկյան Հ. – 11, 67-68, 652
Սարգսյան Գ. – 89
Սարգսյան Ս. - 711
Սարդարյան Կ. - 14-15, 315-316, 328
Սեպուհ [Արշակ Ներսիսյան] - 665
Սերվեր բեկ Աթաբեկով – 157, 547, 613, 618, 663
Սիլիկյան Մովսես, գեներալ – 154, 172, 174, 181, 201-204, 212, 268, 292, 302, 351, 377, 405, 429, 452, 516, 566, 665
Սմիթ - 556
Սվանիձե Ա. Ս. – 735, 738
Ստալին Ի. Վ. – 143, 707, 711, 720, 723, 736, 738
Ստեփանյան Արտաշես – 713, 716
Ստեփանյան Ս.- 495
Ստյուարտ Ռ. Ն., բրիտանական գնդապետ – 517, 521, 525, 528-529, 531-532, 538, 547, 578, 581
Ստոքս Քլոդ Բրայս, փոխգնդապետ – 126, 644-647, 655
Ստրաբոն – 77
Սուլկևիչ Ս. - 567
Սումբատաշվիլի Գ., գեներալ - 180, 365, 383
Սուքիասյան Համո –15, 17, 44, 92, 100-101, 518-519
Սօկօլով – 523

Վ
Վալադյան Վալադ – 577
Վախթանգ Գորգասալ - 6
Վանդերվելդե Էմիլ – 724
Վաչնաձե – 338, 366, 450
Վարանդյան Միքայել- 504
Վարդապետյան Ա. – 8
Վարդապետյան Գ. - 577, 682
Վասսան Ղիրայ Ջաբաղի - 231
Վեբստեր – 390-391
Վելիկանով Մ. Դ. – 703, 720
Վեհիբ Մեհմեդ փաշա – 23, 25-26, 37, 40, 83
Վեշապելի Գ. Գ., վրաց ազգային-դեմոկրատ – 209, 336, 362
Վերմիշյան Քրիստափոր [Վերմիշև] - 570
Վեսնիկ – 710
Վեքիլով Ի. - 617
Վեքիլով Մուստաֆա բեկ - 231
Վրացյան Ս. [Վրացեան] – 10-11, 29-30, 37-39, 41-42, 45, 49-54, 59, 68-69, 83, 96, 99, 119, 128-129, 127, 137, 146, 159, 166, 175, 182, 189-190, 200, 208, 220, 229, 269,

278, 280, 283, 293, 298, 312, 314, 316, 328, 331-333, 337-338, 340-341, 354, 364, 372-373, 375, 377-378, 381, 415-416, 418, 425, 428, 436-437, 444, 450-453, 459, 471, 478-479, 499-500, 524, 572, 606, 689, 704, 732, 742
Վիրաբյան Ա. - 10-11, 470
Վիրաբյան Վ. –17, 19-20, 353, 471, 575

Տ
Տակայշվիլի -113
Տեր-Գևորգով – 499
Տեր-Թորոսյան - 499
Տեր-Խաչատրյան Գ., ՀԺԿ – 349, 477, 518
Տեր-Հովհաննիսյան Մուկուչ - 338
Տեր-Հակոբյան Հ. - 55, 499, 626, 640
Տեր-Մարտիրոսյան – 373
Տեր-Մարտիրոսով - 499
Տեր-Մինասյան Ռուբեն [Ռուբէն, Ռուբեն փաշա] –11, 44, 48-49, 57, 70-71, 84, 643, 645-646, 664, 674-675
Տեր-Նիկողոսով [Տեր-Նիկողոսյան], գնդապետ - 287, 289, 339-340, 364, 368
Տեր-Օհանյան Գ. - 293, 347
Տիգրանյան Սիրական Ֆադեյի - 44, 149, 229, 231-233, 235-236, 238-242, 256, 265, 269-270, 273-274, 276, 280, 286, 292-293, 295-296, 302-304, 316, 341-342, 353, 356-357, 421, 432, 434, 449, 482, 533, 548, 552, 557-559, 561-562, 571, 574, 590, 598
Տիմչենկո, գնդապետ – 418
Տվիդի, լեյտենանտ - 517
Տրոցկի Լ. – տե՛ս Լ. Դ. Բրոնշտեյն - 698
Տոլուշիձե Կ., մայոր - 212

Ց
Ցիցիանով, զորավար - 173, 180, 299, 338

Ու
Ումիկյան, պոդպորուչիկ - 615
Ուրատաձե Գրիգորի Իլ. - 322

Փ
Փառնազ թագավոր - 316
Փափազյան Վահան [Կոմս] – 10-11, 108, 179, 329, 458
Փիրումով-Փիրումյան Դանիել-բեկ, գեներալ –174, 202, 337, 363
Փիրցխալավա - 65
Փշեմախո Կոցև - 231

Ք
Քալանթարով - 444

Քաջազնունի Հովհ. –11, 30-32, 34, 41, 44-45, 48, 68, 96-97, 152, 178, 182-184, 188, 192, 194-195, 215, 222, 236, 312-314, 324, 331, 351, 401-402, 411-414, 419-422, 428, 437, 452, 471, 473-474, 484-485, 521, 540, 548-549, 621, 742
Քառյան Ս. Մ. – 15
Քեմալ Մուստաֆա [Աթաթյուրք] – 332, 570, 625-626, 642, 648-650, 654, 657, 665-666, 674-676
Քեմփըրըլ [Քեմփըրբել], մայոր - 517, 535
Քեյթ Միդլենդ Դեյվի, գեներալ – 597
Քըրզըն, լորդ- տե՛ս Քերզոն Ջորջ Նաթանիել - 614
Քիշմիշև-Քիշմիշյան Հ. Ա., գեներալ – 453-454, 575-576, 581, 582, 585, 612-613, 615-618, 632-633, 635, 637-640, 651-652, 662-663
Քիքոձե Գերոնտի – 18, 316, 320, 323, 457, 462, 739
Քլեմանսո - տե՛ս Կլեմանսո Ժորժ - 50
Քյազիմ Կարաբեքիր փաշա – 643, 672
Քոչարյան Արտեմ – 293, 347
Քսենոֆոն - 77
Քուչերյանց - 129

Օ
Օդիշելիձե Իլյա Զ., գեներալ – 22, 25, 72, 100, 115, 567, 728
Օհանջանյան Հ. – 164, 507, 634, 638, 641, 653, 660, 667, 671, 674
Օմար էֆենդի – 618, 663
Օնիաշվիլի Դ. Ե. – 113, 115
Օրախելաշվիլի Մ. - 721, 736, 739
Օրջոնիկիձե Գ. Կ. [Օրջոնիկիձե Ս. - «Սերգո»] – 8, 317-318, 322, 698, 700-701, 703, 707, 710, 716, 720-721, 723, 732, 736, 738-739
Օտտո Ֆոն Լոսսով, գեներալ - 72, 107, 133

Ֆ
Ֆաթալի Խան-Խոյսկի – 63, 124, 557, 573
Ֆահրուդդին Փիրօղլի - 595
Ֆեյերկովսկի - 373
Ֆորեստյեր-Ուոքեր Զ. [Ուոկեր], գեներալ – 107, 156, 321, 354, 388, 393, 432-435, 516-517, 521-522, 535, 544, 547-548, 561, 578, 595
Ֆոն Քրեսս (Քրեսսենշտեյն) Ֆրիդրիխ – 107, 124, 132-133, 135-136, 150-151, 182, 184-189, 200
Ֆրանկենշտայն Գևորգ - 83, 150, 152

ИМЕННОЙ УКАЗАТЕЛЬ

А
Авалов З. – 19, 114, 134, 220, 320, 531, 545, 570, 611
Адамия В. И. – 17, 56, 137, 150, 389, 391, 415
Андерсен Э. – 18, 75, 77, 80, 112, 162, 213, 260, 340, 367-369, 382, 384-385, 396, 398, 418, 427, 439, 466, 468, 669, 708, 726, 762
Асоян Т. – 16, 415, 540

Б
Байков А. - 571
Бежиташвили Г. - 18, 575, 653

В
Вадачкория Ш. И. - 312
Вачнадзе М. - 312

Г
Гамбашидзе Гиви – 548
Геккер А. - 763
Гогитидзе М. - 17, 23, 180, 191, 260, 365, 576, 653
Гурули В. - 312

Д
Джавахишвили И. - 18, 192, 196-197, 215, 230, 234, 236-239, 261, 274-275, 285, 288, 368-369, 549, 741
Девдариани Г. – 17, 392
Джамалян А. - 759
Деникин А., генерал – 433, 435, 441, 758-759
Дивный Иван –17, 180, 191, 260, 365
Дро [Драстамат Канаян] –754
Дуглас А. Ш. Дж. - 757

Е
Евангулян Л. [Евангулов] - 760
Ерицов А. Ф. – 70

Ж
Жордания Н. Н. – 32, 65, 66-67, 129, 319, 346, 415, 433, 715, 724, 732, 758

З
Зинкевич М. - 759

К
Кадишев А. Б. – 16, 137, 341, 443, 544, 658, 679, 702

Л
Лазян О. – 763

М
Манджгаладзе Г. –18, 91, 323, 457, 514

Мархулия Г. Р. – 18, 64-65, 74, 101, 113, 192, 196-197, 211, 215, 229-230, 232, 234-239, 261, 273-274, 284-285, 288-291, 312, 343, 366, 368-369, 425, 429-433, 463, 549, 558-559, 731, 736, 741
Ментешашвили А. М. –17, 442, 549, 715, 725

О
Ованнисян Р. Г. – 16

Р
Раевский А. - 559, 571

С
Сеф С. Е. – 17, 63, 157, 319
Стуруа Н. Н. – 17, 705

Т
Таирян И. – 705, 721
Тетвадзе О. – 18, 129-130, 396
Тетвадзе Ш. – 18, 129-130, 396
Туманян М. –11, 57, 87, 106, 143, 163, 255, 325, 356, 394-396, 399-400, 409, 534, 553, 560, 565, 581, 583, 585, 587, 589, 593, 605, 622, 648, 667, 680-682, 684, 689
Тунян В. – 16, 86

У
Уратадзе Г. И. – 18, 322

Х
Хармандарян С. – 8, 658, 740
Хачапуридзе Г. В. – 17, 136-137, 441

Ч
Чальхушян Гр. -11, 311, 467
Чохели А. И. - 17, 387-389

Ш
Шарадзе Г. - 65
Шахатунян Ав. – 11, 64,117

Э
Эгге Г.[1348] - 18, 75, 77, 80, 112, 162, 213, 260, 340, 367-369, 382, 384-385, 396, 398, 418, 427, 439, 466, 468, 669, 708, 726, 762

***

A
Andersen E. - 772
Aspaturian Vernon V. – 14, 90

D
Denikin A. – 769

[1348] Ըստ մի վարկածի, թեկուզև ոչ վերջնական հավաստիության հավակնող, Գևորգ Էգգեն ոչ այլ ոք է, քան այդ անվան տակ թաքնված Գեորգի Պարցխալաձեն. – Տե՛ս http://pandukht.Livejournal.com/229921.html.

Dro [Drastamat Kanayan]- 765
Douglas A. Sh. – 768

E
Egge G. - 772

H
Hekker A. - 773
Hovannisian Richard G. - 20, 37,
66, 79, 117, 158, 354, 415, 539,
595, 597-598, 607, 609, 619, 665

J
Gamalyan A. - 770
Jones F. Stephen -14, 48, 50, 128,
212, 390, 439, 458

K
Kazemzadeh F. –14, 170-171, 246,
259, 426, 435, 541

L
Lazyan H. - 773

M
Mamatsashvili Gocha – 18

Y
Yevangulyan L. – 770

Z
Zhordania N. N. - 769
Zinkievich M. - 769

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ա
Աբխազիա – 260, 700, 730
Ագարակ - 339
Ագվի – 287
Ագրիկալ լեռ - 92
Ալավերդի [Ալլահվերդի] – 289, 295, 297-301, 316, 322, 338, 341, 540, 555, 576, 579, 587-588, 596, 626, 745
Ալեքսանդրապոլ – 35-36, 64, 70, 78, 83, 94, 96, 99, 103, 105-107, 114-115, 118, 127, 155, 157, 159, 162, 176, 239, 257, 264, 267, 270, 277, 290-292, 295, 298, 304, 316, 328, 330, 347, 376, 393, 397, 420, 437, 450, 510, 547, 586, 608-609, 643, 673, 678, 692, 705, 740, 751
Ալեքսանդրովկա - 95, 106, 118, 274, 338
Ախալքալաք [Ախալքալակ] – 5, 7-11, 14-16, 31-32, 35, 46, 50, 59, 64-66, 68-69, 76-83, 85, 90, 93-94, 98-100, 107-108, 110-113, 115, 117-118, 120-121, 125, 128, 131-132, 146-148, 153-157, 159, 161, 163-164, 166-168, 178, 189-191, 203, 232-236, 238-241, 247-248, 253-255, 257-258, 262, 264-279, 284, 287, 291-292, 294, 297-298, 300, 308-309, 312, 322, 329-331, 338-340, 348-352, 355, 357-358, 361, 376, 379-380, 386, 392-393, 397-401, 405-408, 413, 420, 425, 429, 437, 452, 461-462, 465, 469, 473, 479-483, 490, 493, 495, 498-501, 503-511, 520, 523, 530, 533, 536, 538-547, 550, 554-559, 564, 573-575, 579, 582, 584, 586-593, 596-598, 602-603, 605-606, 608, 611, 612, 614-615, 618, 620, 624-625, 643, 659-661, 663, 673, 681, 691, 719, 734-740, 742-744, 748-749, 751
Ախալցխա – 35, 65-66, 85, 113, 156-157, 163-164, 235, 241, 253, 269-270, 278, 319, 321, 361, 481, 483, 533, 538, 547, 577-578, 589, 613, 618, 620, 649, 654, 663, 745
Ախթալա – 79, 337, 340-341, 364, 452, 739
Ախտա - 376
Ախմադլու – 418
Ակոռի – 79, 283, 287, 347
Աղբաբա – 618, 663
Աղնաձոր - 205
Աղովա – 341
Աղքյորփի – 542, 740
Ամստերդամ – 504, 506, 724
Ամուչ, գյուղ – 283, 287
Այդեբել - 118
Այդեբեկ -106

Այրում - 190-191, 200, 207, 282, 285, 289, 333, 337-338, 340-341, 364, 369, 373-374, 425, 427, 452, 455, 512, 587-588
Անգլիա – 49, 54-55, 88, 129-130, 245, 258, 317-319, 321, 326, 402, 450, 457, 462, 467, 496, 565, 645
Անդրկովկաս – 5-7, 15, 21, 23-36, 40-41, 46, 53, 55-56, 62-74, 80-82, 84-86, 91, 93-94, 98, 100, 102-104, 109-110, 114, 117, 124-126, 132-133, 143, 149-150, 152-153, 156, 160,162-163, 167-169, 219-222, 224, 228, 230, 232, 245, 254-256, 261-262, 311-312, 315, 317-318, 323, 327-328, 343, 348, 387-389, 392, 408, 415, 438, 446-447, 451-452, 461, 464, 472, 484, 494, 520-521, 524, 526, 535, 540, 545, 547, 552, 555-559, 561, 563, 565-568, 570-573, 579-581, 583, 683, 595, 610, 621, 644, 656, 658-659, 670, 697, 709, 715, 722, 734-736, 742-743, 751, 753
Աշաղի-Սերալ – 381, 543
Աջարիա - 579, 609, 614, 649, 654, 700
Արախլու, գյուղ – 374
Արարատյան դաշտ – 83, 132
Արդահան - 7-10, 14-15, 27, 35, 68, 70, 113, 235, 312, 319, 321, 351, 509-510, 540, 547, 555, 577-579, 593-594, 596-598, 600, 602-605, 607-608, 610-612, 617-624, 627-630, 643-644, 661-666, 691, 720, 745
Արդվին – 66, 113, 321, 616, 619, 621
Արդվին, գյուղ - 347
Արմավիր - 148
Արջիկ – 205
Արցախ - 80-81, 673, 706, 742
Արևելահայաստան – 5, 34, 70, 462
Աքորի - 582, 586

Բ

Բաթումի – 15, 21-22, 26-27, 35, 37-39, 41-42, 49-51, 67, 75, 85, 93, 95, 99, 107, 113, 158-162, 166, 238, 259, 270, 310, 319, 321, 324, 326, 388-391, 396, 456, 497, 515, 523, 555, 566, 575, 577, 583, 594, 596, 598, 603, 605, 608-609, 611, 615, 620, 623, 635-636, 638-639, 652, 654, 658-661, 691, 750
Բալկաններ - 56
Բակուրիանի – 43, 146-147, 254, 501
Բաշ-Ապարան – 28, 32
Բաշկիթեչի - 274
Բրդաձոր – 373, 542, 740
Բասարգեչար - 39
Բաքու – 33, 101, 160, 213, 258-259, 348, 354, 358, 397, 523, 570

Բէյրութ, Պէյրութ [Բեյրութ] – 11, 14, 37, 39, 49, 68, 72, 108, 179, 312, 329, 340, 388
Բելի-Կյուչ [Բելի Կլիուչ] - 379, 448
Բեռլին - 73
Բոլնիս-Խաչեն – 274, 338, 341, 346, 364, 367-369, 373, 375, 425, 431, 448, 545
Բոգդանովկա [Նինոծմինդա] - 277, 287, 298, 300, 340, 608
Բորժոմի – 389
Բորչալու [Պորչալու] – 8, 10, 12, 16, 64, 66, 68-70, 76-83, 85, 92-100, 101-102, 106, 110-111, 113, 115-118, 122-125, 127, 130, 138-139, 141, 146, 148, 160-161, 165, 167-168, 170, 173, 180-181, 186-187, 189-190, 196, 214, 217, 232-236, 238-239, 241, 245-247, 251, 253, 255, 257, 262-267, 269, 271-272, 274, 280, 284, 290, 300-305, 308, 311, 317, 322, 324, 333-335, 342, 345, 351-352, 354-355, 357-358, 378-380, 386-387, 389, 392, 395, 398-406, 408, 411, 414, 432, 438-441, 445, 450, 452, 469, 480, 493, 498-501, 503-504, 509-513, 516, 520, 528-530, 536, 539, 542-543, 545-546, 553-556, 558, 563, 573-574, 577, 581-582, 586-587, 596-599, 602-603, 606, 614-615, 617, 643, 658-660, 668, 673-675, 678-679, 681, 683-686, 688-689, 694, 698, 700, 712, 715-718, 724-725, 727, 730-731, 740, 749, 751
Բրեստ-Լիտովսկ - 23, 27, 30-32, 71-72, 151, 159, 649
Բրիտանիա –14, 116, 131, 160, 170-171, 243-246, 259, 317, 327-328, 388, 398, 405, 415, 433-435, 452, 457, 538, 568, 743-744, 750

Գ
Գայլի Դարբաս [Գայլի Դրունք-Շարուրի նախադուռ] - 376
Գահիրէ –Կահիրե – 11, 379, 458
Գերմանիա –24, 46, 73, 80, 83, 106-107, 124, 131-134, 136-137, 150, 170, 182, 185, 213, 218, 220, 243-244, 246, 261-262, 468, 497, 569, 750
Գլենդել – 11
Գյուլ բեգ – 373
Գոմաձոր - 369
Գորելովկա – 277, 298, 300, 340
Գորի – 232, 321, 448
Գյառգյառ - տե՛ս Պուշկինո – 106, 542, 690
Գյոկչա -տե՛ս Սևանա լիճ – 116
Գուդաուտ – 66
Գուգարք – 511
Գումիստան – 66

Դ
Դամիա, գյուղ – 373, 425, 448, 597
Դաղեթ-Խաչեն- 274, 430, 448
Դաղստան – 222, 550
Դարալագյազ – 35, 376, 466
Դարաքենդ [Դար-Քենդ] – 94, 118, 174
Դեբեդ-չայ – 299, 369
Դիլիջան – 75, 93-94, 118, 172, 181, 188, 202, 205, 268, 307, 330, 336, 373, 376, 416, 436, 450-451, 588, 637-638, 699
Դսեղ – 405-406, 429, 439, 536, 539, 542, 711, 717, 746, 753
Դուշեթ – 85, 359, 389, 602

Ե
Ելիզավետպոլ – 81, 161, 221, 239, 264, 623
Եկատերինոդար – 523, 561
Եկատերինֆելդ –186, 274, 327, 338-339, 341, 347, 367, 369, 378, 383, 397, 430, 512, 620
Երևան – 34-35, 43-44, 51-52, 68, 72, 86, 91, 93, 96, 107, 119, 144, 150, 152, 154, 156-158, 162-163, 168, 182, 185, 194, 198, 200, 204, 212, 218, 221-225, 227, 230, 239, 241-242, 247, 251-252, 255, 257, 264, 270, 276-277, 279-280, 294, 305, 309, 318, 320-321, 334, 346, 351, 361, 364, 366, 376, 395, 404, 407, 430-431, 440, 452-453, 465-466, 479, 499-500, 510, 515, 523, 525-526, 532-533, 547-548, 570, 585, 589, 597-598, 600, 606, 608, 613, 616, 627-628, 635, 640, 651, 653, 671, 689, 712, 714, 731
Եֆրեմովկա – 277-278, 340

Զ
Զամանլու – Շահալի, Վահազնի-Շահալիի կամուրջ – 174, 711, 717, 753
Զամանլու, գետ – 173-174
Զանգեզուր – 80-81, 83, 93, 629-630, 644
Զաքաթալա – 66, 70, 98, 113-114, 116, 124, 144, 335, 528, 585
Զուրզունա – 619, 665

Է
Էջմիածին – 35, 93, 158, 376
Էրզրում – 80, 260, 566, 569-570, 575, 632
Էլզաս-Լոթարինգիա [Էլզաս-Լոթար] - 294, 313, 468

Թ
Թաթարստան – 46
Թանադաղ, լեռ - 542
Թափարավան [Թափարվա-տե՛ս նաև Փարվանա] լիճ - 159, 597, 608
Թելավի – 85, 448, 602

Թիֆլիս – 7, 11-12, 18, 22, 30, 33, 35-36, 39, 41-44, 47-51, 53, 55, 57, 64, 66, 69-71, 75-76, 78-79, 81, 85, 87, 90-98, 102-106, 109-111, 113-114, 116-118, 121-124, 126-127, 129-132, 134-137, 139-142, 150, 154, 158-161, 163-164, 166, 173, 175-177, 180-181, 184-185, 187-189, 191-194, 196, 198-199, 205, 207-208, 210, 214, 217, 219, 221-223, 225-227, 229-234, 236, 238-242, 245, 249-255, 257, 262, 264-268, 274, 276-277, 279, 281, 286-287, 290-292, 294, 296-299, 301-303, 305, 308-311, 313, 316-318, 320-321, 323, 325, 327, 329, 335-336, 338, 341, 343-348, 354-361, 364, 367, 370-371, 374, 378-383, 387-389, 391-393, 396-399, 402-404, 408-410, 412-413, 416, 420-424, 428-430, 437-439, 441-449, 452-453, 457, 460-462, 466, 471-472, 475, 479-480, 498-499, 501, 503, 507, 510-511, 515-518, 522-523, 525-526, 528, 532, 535, 541, 544-546, 550-551, 553-554, 556-557, 560, 563, 566-567, 570, 572, 575-578, 580-581, 584-585, 587-589, 591, 597-598, 600-604, 606-608, 611-612, 616, 618-620, 622, 626-627, 629-635, 638, 640, 643, 645-648, 651, 653, 659-666, 668-669, 671-673, 676, 678-680, 683, 686, 689, 692, 703, 714, 716, 721-730, 732- 733, 735, 739-740, 743, 746-748
Թռեղք [Թրիալեթի] - տե՛ս
Ծալկա – 43, 78, 82,146-147, 254, 501, 511, 582, 658, 734, 740
Թուման գյոլ - 597
Թուրքեստան – 153, 645
Թուրքիա - 21, 23-26, 27-28, 30-32, 35, 39-40, 71, 74, 79-80, 83, 91-94, 106, 108, 112, 115-117, 150, 157-159, 162-163, 170-171, 177, 186, 197-198, 222, 235, 237, 240, 245-247, 258-259, 310, 321, 326, 513, 541, 551, 567, 569, 571, 595, 611, 615, 628, 641, 643-644, 647-648, 650, 656-658, 665-667, 671-673, 683, 700-701, 704-705, 715, 750

Ի
Իգդիր – 376, 655
Իլիմազլու – 82, 530
Իսրայել – 464
Իվխարի-Սարալ - 425
Իտալիա - 55
Իրան – 79, 464
Իրաք - 464
Իրգանչայ –տե՛ս նաև
Իրղանչայ - 542, 740

Լ
Լամբալո – 425, 427

Լամբալո, լեռնագահաթ - 427
Լեգլի-Դաղ [Աչքասար - սար Ջավախքի լեռներում] - 542
Լյուցեռն – 507-508
Լոռի – 8-10, 14, 46, 59, 64, 68-69, 75, 78, 80, 84, 88, 91, 93, 95-96, 99, 101, 107-108, 115, 117, 131, 143, 145, 148, 150, 152, 154, 157-158, 175-176, 179, 182, 184-190, 203, 218, 233, 236-237, 264, 278, 286, 292, 294, 297-298, 301-302, 309, 312, 314, 317, 333, 351, 364, 373, 376, 404, 409, 411, 413, 416, 428, 433-434, 436-438, 440, 451, 457, 465-466, 469, 477, 479-480, 484, 486-487, 490-491, 494-495, 497, 500, 507-510, 514, 520, 529, 546, 579, 584, 588, 609, 611-612, 614-615, 623, 658, 663, 678, 680, 685, 690-691, 702, 706, 708, 712, 716, 719, 722, 727-728, 730, 732-733, 737-739, 742, 744, 749, 753
Լորուտ [տե՛ս նաև Լոռուտ] - 94, 106, 118, 138, 680
Լոք - 582

Խ
Խաշուրի - 389
Խաչկալա, լեռ - 542
Խաունտլի Բաշի, սար - 542
Խանդո լիճ – 597
Խոզափին – տե՛ս նաև Կարցախ [Կարծախ], լիճ - 608
Խոժոռնի – 369, 425, 542, 740
Խոնավ լեռներ – 539, 542
Խոնչալո - 608
Խրամ, գետ - 82, 303, 334, 343, 349, 351, 356, 358-359, 367, 370-371, 374, 378-381, 386-387, 419, 438, 440, 470, 510-512, 539, 543, 554, 582, 586, 598-599, 605, 726, 734, 740, 746

Ծ
Ծաթեր – Ցաթեր – 95, 106, 118, 184, 191-193, 201-204, 205-207, 212, 214, 222, 274, 279, 285, 298, 307
Ծալկա – 43, 78, 82, 146-147, 254, 501, 511, 582, 734, 740

Կ
Կազբեկ – 389, 523
Կալագան - 419
Կալինինո – 658, 751
Կախեթիա [Կախեթ]– 380, 382, 513, 652
Կաղզվան – 64, 348, 555, 595-597, 599, 675
Կամենկա –Ջորագետ – 94-95, 106, 118, 134, 158, 160, 173, 193, 202, 204, 338, 370-371, 404, 539, 542
Կաչի-Կալա - 427
Կասսուլո – 418
Կարախս – 82, 530

Կարս –Ղարս – 7, 15, 21-23, 25-27, 35, 64, 67-68, 70, 72, 80, 113, 222, 235, 319, 321, 324, 348, 410, 459, 505, 510, 524, 547, 550, 555, 565, 570, 577, 593-597, 599-600, 602, 606, 608, 611-612, 617, 624, 626, 630, 638, 655, 660, 675, 692, 714, 720, 745
Կիլիկիա – 55, 89
Կիշլագ – 82
Կիշլել - 530
Կիպզոտամալ – 620
Կոտուր-Բուլաղ - 338
Կրեստովայա – 582
Կուբան – 523
Կուլու Դաղ [Կուլութաշ], լեռնագագաթ Լոռվա բարձրավանդակում՝ Խոնավ և Վիրահայոց լեռնաշղթաների միջև - 542
Կուրթան – 106

Հ
Համամլու – տե՛ս Սպիտակ - 155-156
Հայդարբեկ – 95
Հարավային Կովկաս – 62, 74, 78, 131, 243-245, 259, 328, 397, 468, 565, 657-659, 700, 732, 742, 750
Հերհեր – 94, 118, 172, 201, 536, 543
Հյուսիսային Կովկաս – 67, 219, 225, 259, 294, 328, 521, 550, 566, 594, 652
Հովնաքար – 339

Ջ
Ջեգամ – Ջեգամ, Ջնգամ, բնակավայր Ղազախի գավառում - 116

Ղ
Ղազախ – 78, 82-83, 87, 93-94, 99, 105-106, 115, 118, 120, 161, 233-235, 239, 264, 266, 272, 376, 379, 386, 436, 512, 588, 633, 637-638
Ղարաբաղ – տե՛ս նաև Արցախ –11, 56, 60, 80, 83, 85, 88, 90, 93, 233, 247, 558-559, 563, 633, 644-645, 706, 742
Ղարաքիլիսա- տե՛ս Կիրովական –Վանաձոր - 28, 93-95, 103, 105, 114, 116, 118, 126, 134, 153-156, 172, 176, 201, 212-213, 255, 286, 290, 292, 294-295, 298, 301-303, 305, 307-308, 310, 313, 316, 328, 330, 334, 336, 347, 349, 351, 353, 359, 367, 376, 378, 405, 408-409, 411, 414, 416-417, 423, 429-430, 450, 452, 482, 497, 500, 516-517, 529, 537, 640, 653, 657, 687, 690, 698-699, 710, 737, 745

Ղարայազ [Ղարեազ] - 124, 144
Ղուլլի –Բաղ - 427

Ճ
Ճոճկան - 369, 375

Մ
Մամայ, գյուղ - 374
Մանգլիս – 147, 168, 263
Մաշավեր, գետ - 339
Մարց - 94, 106, 118, 173
Մեծ Բրիտանիա [Անգլիա] -14, 116, 131, 160, 170-171, 243, 245, 246, 259, 317, 327-328, 388, 398, 405, 415, 433-435, 452, 457, 538, 568, 743-744, 750
Մեծ Դումանիս – 374
Մետեխ - 441
Մերդենեկ – 599, 655
Մերձավոր Արևելք – 16, 56, 509, 530
Միխայլովկա - 341
Միջագետք – 150, 255,
Միջին Արևելք – 464
Մցխեթ – 321, 389
Մղարթ - 95, 274
Մոսկվա –134-135, 648, 657, 693-694, 698, 703-707, 711, 713, 715, 722-727, 730, 736, 738, 752
Մուդրոս [Մուդրոսի զինադադար] - 95, 163, 259

Ն
Նախիջևան – 35, 80, 372, 466, 555, 597, 645
Ներքին Սերալ - 697
Նիկոլաևկա – 94, 106, 118, 536, 543, 619-620
Նինոծմինդա – տե՛ս Բոգդանովկա - 277, 608
Նովոմիխայլովկա – 337, 690
Նովոպոկրովկա –94, 106, 118, 174, 201-202, 536, 543, 690
Նոր Բայազետ - 376
Նուխի - 359

Շ
Շամլուղ - 554
Շահալի – 94, 103, 105, 114, 172-173, 179-182, 188-189, 192, 200-201, 203, 213, 252, 331, 471-472, 512, 653, 672, 680, 684, 690, 697, 711, 713, 717, 718, 753
Շամշադին – 88, 105-106, 120
Շամշուդլա, գյուղ – 445
Շարուր – 35, 372, 376, 466
Շընիխ – տե՛ս Շնող -190, 200-201, 205, 543, 697, 711
Շիրակ - 83
Շորապան - 136
Շուլավեր – 92, 117, 121, 169, 201, 253, 274, 323, 346, 366, 369, 373-374, 378-386, 397, 401, 417-419, 425, 430, 445, 448, 455-456, 545, 721, 727

Չ
Չատին Դաղ - 623
Չըլդր [տե՛ս նաև Չալդիր-Չըլդըր] - 607, 612-613, 618-620, 622, 662-666
Չիաթուրի -136
Չիբուխլու –717, 753

Պ
Պալութլի Բաշի, լեռնագագաթ – 542
Պարթևստան - 78
Պարսկաստան – 46, 160, 259, 372
Պրիվոլնոյե – 333, 337-338, 340-341, 690

Ջ
Ջալալօղլի – տե՛ս Ստեփանավան – 94, 106, 118, 130, 173-174, 201-202, 307, 338, 405-406, 429, 439, 536, 539, 542-543, 554, 582, 680, 687, 697, 746
Ջալլու գետ - 174
Ջանդար [Ջադար] - 542, 740
Ջավախեթիա – տե՛ս Ջավախք -345, 361, 589, 608, 740
Ջավախք – 5, 8, 13, 15, 75, 330, 406, 451, 505-506, 510-511, 542, 582, 589, 608, 735, 740, 744

Ռ
Ռուսաստան - 5, 8, 13, 23-24, 27-28, 30-35, 41, 46, 55, 62-63, 66, 68, 71, 74, 76, 78-81, 86, 98, 103, 105, 111, 114, 120, 130, 149, 160, 219, 232-233, 259, 272, 326, 328, 387, 434-435, 438-439, 451, 490-491, 497, 515, 513, 519, 522, 559-566, 570-571, 585, 639-641, 644, 647-650, 652, 654, 656-657, 659-661, 665, 667, 673, 690, 694, 696, 698-699, 702, 705, 707, 718-720, 723, 727-728, 730-733, 744, 750, 752

U
Սաաթի [Սաաթլու, Սայաթլի] –542
Սագայլու – 614
Սադախլո – 289, 338, 340, 364, 367, 369-370, 372-375, 377-378, 383-386, 397, 401, 410, 419, 425-427, 430, 437, 440, 519, 539, 542-543, 575, 597, 737, 740, 746
Սալոնիկ – 388, 397
Սամտրեդ[իա] – 389, 445
Սանահին – 79, 117, 173-175, 179-181, 185, 190, 195, 200, 204, 214, 252, 277, 281-283, 287-289, 291-293, 295, 297-300, 304-308, 316, 322, 333, 335, 337-338, 341, 343-344, 349-352, 366, 411, 452,

496, 554-555, 586, 596, 605, 624, 679, 684, 690, 700, 710, 738
Սարաչլո, գյուղ - 383
Սարդարապատ - 28, 32, 37-40, 174, 332, 497, 607, 614
Սղնախ [Սիգնախ] – 85, 113, 123, 117, 122, 144, 448, 602
Սիլարաթ, լեռ –116
Սիպտախ – 172
Սիրիա – 464
Սիոն, գյուղ – 82, 530
Սոմխեթի գագաթ - 608
Սվազ - 625
Սուլգա, գյուղ - 597
Սուխումի – 66, 85, 389, 433, 631
Սուրամ- Սուրամի լեռնաշղթա – 116, 168
Սուրմալու – 35, 376
Սևանա լիճ – 40, 116, 132
Սևր- [Սևրի պայմանագիր] – 6-7, 9, 19, 41, 89, 168-169, 462, 510, 528, 612, 614, 662

Վ
Վայխուն, գյուղ - 445
Վարդաբլուր – 106
Վարդանլուր - 94, 118, 174
Վաշինգտոն – 52, 170, 246
Վեթվենդ – 202
Վիեննա – 11, 724
Վիրահայոց լեռներ –293, 301, 442, 512, 539, 542
Վլադիկավկազ – 523, 563
Վորոնցովկա – տե՛ս նաև Տաշիր - 95, 106, 118, 174-175, 180, 184, 195, 217, 263, 274, 299-300, 308, 331, 333, 337-341, 344, 347, 367-368, 473, 539, 544, 582, 608, 658, 683-684, 690, 711, 717, 746, 751

S
Տամալա - 481
Տանադաղ – Տանա Դաղ, Թանադաղ, սար - 542
Տաճկաստան – 29, 55, 120, 151, 626
Տաշիր – 78, 511, 689-690
Տրապիզոն – 23, 30, 33, 452, 463
Տրոիցկ, Տրոիցկոյե – 277-278, 340, 575
Տուապսե - 433

Ց
Ցագեր – 82
Ցխրա-Ցկարո - 112, 232

Ու
Ուզունթալա - 378
Ուզունլար [տե՛ս նաև Օձուն] - 129, 262-263, 274, 278-283, 285-287, 289-291, 297-298, 307, 328, 330, 346-347, 484-485, 491, 539, 544, 658, 711, 717, 746, 751, 753

Փ
Փամբակ – 31, 70, 75, 79-80, 82-83, 96, 99-100, 107, 115, 138, 148, 150-154, 157-158, 175, 178, 182, 185, 233-234, 266, 272, 312-313, 333, 469, 508, 540, 684, 690
Փարիզ – 6, 9, 11, 41, 52, 55, 67, 89, 107, 157-158, 170, 191, 226, 237, 246, 292, 354, 393-395, 404, 449, 467, 503, 506, 509, 518, 523, 527, 544, 547, 549, 551, 553, 556, 561-562, 564, 569-570, 574, 582, 588, 590, 596, 606, 608, 610, 612, 620, 624, 653-654, 659, 731, 747, 749
Փոթի – 133, 134, 136, 389, 589, 515-516, 606, 633, 661
Փոյլի, կայարան – 103, 114, 122, 585

Ք
Քարթլի – 321, 513
Քասումլու - 425
Քորինջ-տե՛ս նաև Քարինջ - 95, 106, 118, 172, 180-181, 184, 190-193, 201-204, 206-207, 214, 217, 222, 274, 307
Քոբեր [տե՛ս նաև Քոբայր] – 94-95, 106, 118, 160, 172-175, 179, 181-182, 194, 202, 211, 215-217, 274, 279, 285, 292, 295, 337, 473, 623
Քոբուլեթի - 389
Քոլազիրան - Քոլազերան, գյուղ Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառում, այժմ՝ Անտառամուտ՝ ՀՀ Լոռու մարզում, նախկին Գուգարքի շրջանում – 94, 106, 118, 201, 307, 536, 539, 542-543, 677, 697, 746
Քութաիսի – 66, 85, 130, 442, 447
Քութաիսի նահանգ – 66, 386, 389, 445
Քուլպ - 202, 205, 289, 588
Քուռ [Կուր], գետ – 87,103, 114, 539, 543, 554-555, 596, 608, 664, 746
Քուրտան, գյուղ – 94, 118

O
Օլթի – 80, 509, 555, 594, 596, 602-604, 607, 609-612, 617-618, 623-624, 655, 662-663, 691
Օկամ-Գյոլե – 664-665
Օձուն – 79, 262, 278, 282, 658, 717, 751, 753
Օփրեթ – 340, 427, 536, 542-543, 740

ГЕОГРАФИЧЕСКИЙ УКАЗАТЕЛЬ

А
Азербайджан - 101, 559, 761-762
Алаверди – 757, 761
Александраполь - 762
Ардаган – 755-756
Армения – [Республика Армения] - 8, 11, 16, 57, 87, 106, 143, 163, 255, 319, 325, 356, 371, 394-396, 399-400, 409, 415, 506, 534, 540, 545, 553, 560, 565, 581, 583, 587, 589, 593, 605, 622, 648, 667, 680, 682, 684, 689, 754-762
Арцах -756
Ахалкалаки – 754-756, 760

Б
Батуми - 761
Борчалы – 70, 760-761

В
Великобритания - 754-755, 761
Воронцовка – 761

Г
Германия - 761
Грузия – 568, 754--764

Д
Джавахк – 754-755
Джалалоглы – 756-757
Дсег – 757, 763

Е
Ереван – 8, 11, 16, 721, 740

З
Закавказье – 8, 11-12, 14, 16-17, 36, 63-66, 81, 117, 122, 125, 137, 165, 175, 215, 220, 223-224, 226-227, 231, 236, 279-280, 283, 293, 302-305, 307, 341, 343-345, 349, 360, 362, 380, 395-396, 405, 408, 443, 454, 514, 544, 548, 571, 658, 679, 702, 740, 754-755, 761-762, 764
Заманлу - 763

К
Кавказ –14, 98, 118, 171, 218, 381, 433, 516, 761
Калинино - 761
Каракилиса –757
Карс - 755-756
Колагеран - 757
Кур, река – 757

Л
Лори – 16, 754-756, 760-764

М
Москва –17, 137, 711

О
Одзун – 761, 763

Р
Республика Армения -11, 16, 57, 87, 106, 143, 163, 255, 319, 325, 356, 371, 394-396, 399-400, 409, 415, 506, 534, 540, 553, 560, 565, 581, 583, 587, 589, 593, 605, 622, 648, 667, 682, 684, 689, 759-761
Россия – 761
РСФСР - 762

С
Садахло - 757
Советская Армения – 760, 762-763
США – 548, 755

Т
Тбилиси – 17-18, 135, 192, 196-197, 213, 215, 230, 232, 234, 236, 239, 261, 273-275, 283, 285, 288-289, 312, 368-369, 548-549, 557, 559, 575, 653, 715, 719
Тифлис - 12, 17, 70, 85, 114, 135, 157, 215, 275, 345, 347, 508, 516, 527, 545, 558-559, 568, 578, 582, 590, 757-760
Турция – 761

У
Узунлар-Одзун – 757, 761, 763

Ф
Франция – 17, 387-389, 754-755

Х
Храм, река – 757

Ч
Чибухли[у] – 763

Ш
Шагали – 763

Ю
Южный Кавказ - 761

#

A
Akhalkalak – 765, 767, 770
Akhaltskha – 767
Alaverdi - 768, 772
Alexandrapol - 772
Ardahan – 766-767
Artsakh - 767
Azerbaijan – 765, 772

B
Batumi – 771
Berkeley - 37, 117
Borchalu - 770, 772

C
Caucasus – 771-772
Charakilisa - 767
Chibukhlu - 774

D
Dsegh – 768, 774

F
France - 766-767

G
Germany - 771
Great Britain –765-767, 771

K
Kars - 766-767
Kalinino –772
Khram river -768
Kolageran - 768
Kur, river - 768

L
London - 14, 70, 117
Lori - 765-767, 770-774
Los Angeles - 37, 79, 117, 138, 619, 665

M
Moscow - 773

R
Russia - 32, 765, 771-773
RSFSR - 772

S
Shahali - 774
Sadakhlo - 768
Soviet Armenia – 773-774

T
Tbilisi –244, 765, 767-768, 770
Tiflis – 768
Transcaucasia - 14, 170-171, 246, 259, 426, 435, 467, 541, 765, 772, 774
Turkey – 771-772

U
USA - 766
Uzunlari-Odzun - 768, 772, 774

V
Vorontsovka - 768, 772

Z
Zamanlu - 774

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ

ՀԱԱ, Ֆ. Պ – 37, 66, 68, 85, 113- ց. 1, 2, 3, 114- ց. 1-2, 118, 121, 128, 191, 198, 199, 200, 201, 202, 204, 206, 214-215, 222- 223, 245, 275, ց. 5 –[276, ց. 1], 289, 290, 299, 377, 441, 450, 476, 1457:
ՀԱԱ, Ֆ. Կ - 1, 404, 1022, 4033, 4047:

բ. Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 25/25:

2. ԹԵՐԹԵՐ

1. «Աշխատավոր», Թիֆլիս, 1920.
2. «Զանգ», Երևան, 1918.
3. «Ժողովուրդ», Երևան, 1918.
4. «Ժողովրդի ձայն», Երևան, 1918.
5. «Խոսք, Երևան, 1919.
6. «Կայծ», Երևան, 1919.
7. «Կոմունիստ», Երևան, 1920-1921.
8. «Մշակ», Թիֆլիս, 1917-1918.
9. «Մնաթոբի», Թիֆլիս, 1989 (Վրաց.,).
10. «Յառաջ», Երևան, 1918-1920.
11. «Հայրենիք», Բոստոն, 1919.
12. «Հորիզոն», Թիֆլիս, 1917-1918.
13. «Борьба», Тифлис, 1918-1920.
14. «Грузия», Тифлис, 1919.
15. «Знамя труда», Тифлис, 1918.
16. «Кавказское слово», 1917-1918.
17. «Правда», Москва, 1920.
18. «Сакартвело Республики», Тифлис, 1918.
19. «Слово», Тифлис, 1919.

20. «Тифлисский листок», Тифлис, 1918.
21. «Georgian news», Tbilisi, 2010.

3. ԱՄՍԱԳՐԵՐ

1. «Բանբեր Հայաստանի Արխիվների», Երևան, 1990-1993.
2. «Բանբեր Երևանի Համալսարանի», Երևան, 2000-2014.
3. «Լրաբեր Հասարակական գիտությունների», Երևան, 1995-2014.
4. «Կառավարության լրաբեր», Երևան, 1918.
5. «Հայրենիք», Բոստոն, 1923, 1926, 1928-1929.
6. «Վէմ», Փարիզ, 1924, 1937-1938.

4. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: (Քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, (Կազմող-ներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան (ղեկ.), Վ. Մելիքյան և ուրիշներ), Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000:
2. Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու/ կազմող, առաջաբանի և ծանոթագր. հեղինակ՝ Հ. Կ. Սուքիասյան, երկրորդ լրացված և բարեփոխ. հրատ., Եր., Հայ. Ազգ. արխիվ, 2009:
3. Հայկական Սովետական Հանրագիտարան (ՀՍՀ). «Սովետական Հայաստան». Եր., Հայկ. Սով. հանրագ. հրատ.,1987:
4. Հայ-վրացական սահմանավեճը փաստաթղթերի լեզվով // կազմեց Համո Կ. Սուքիասյանը, «ՎԷՄ», համահայկական հանդես, Դ (Ժ) տարի, 2012, թիվ 4 (40), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 194-216:
5. Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի հայկական պատվիրակության հաշվետվությունը (1918 թ. դեկտեմբեր-1919 թ. մարտ). կազմող՝ Հ. Սուքիասյան // տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 2009, N 1, էջ 185-206:
6. Հարությունյան Վլ., Հայ-վրացական պատերազմը (1918 թ.). Նյութեր և փաստաթղթեր / Վ. Հարությունյան, Եր.: «Անտարես» հրատ., 2014:

7. Հեղափոխական կոմիտեները Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (1920 թ. նոյեմբեր - 1922 թ. հունվար), Եր., «Հայաստան» հրատ., 1974:
8. Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960:
9. Մախմուրյան Գ., ՀՀ արտաքին քաղաքականության հարցերի արծարծումը Ավետիս Ահարոնյանի Փարիզից ու Սան-Ռեմոյից ուղարկված նամակներում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2010, N 1 (115), էջ 56-72:
10. Ով ով է. Կենսագրական հանրագիտարան, Հատոր Առաջին [1], Եր., Հայկ. Սով. Հանրագիտարան, 2005:
11. Армяне в первой мировой войне (1914-1918 гг.): Нац. Архив Армении, Ин-т социальных и политических исследований Черноморско-Каспийского региона, Москва: Редакционно-издательский дом «Российский писатель», 2014:
12. Армяно-грузинский вооруженный конфликть. На оснований фактическихь данныхь и подлиннихь документов. Баку, Изд-во Бакинского Национального совьета, Типогр. «Урардия», 1919:
13. Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы (1917-1921 гг.). Сост. С. Д. Беридзе, Тбилиси, Гос. изд-во «Сабчота Сакартвело», 1958:
14. Германские оккупанты в Грузии в 1918 году. Сборник документов и материлов. Составил и подготовил к печати М. М. Габричидзе, Тбилиси, Госиздат Груз. ССР, 1942:
15. Дикументы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлись, Типография Прав. Груз. Республ., 1919:
16. Документы об армяно-грузинском пограничном споре в Лори (декабрь 1920 г. - январь 1921 г.), կազմող՝ Հ. Սուքիասյան // Տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 2010, N 1, էջ 253-262:
17. Изь истории армяно-грузинскихь отношений. 1918 годь. (пограничные конфликты: переговоры: война: соглашение). Тифлись, Государственная типография, 1919:

18. Из истории иностранной интервенции в Армении в 1918 г. Документы, Ер., 1970:
19. Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, Ер., Изд-во АН Армении, 1992:

5. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աբեղեան Արտ., Մենք եւ մեր հարեւանները (Ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1928, N 3, էջ 126-133:
2. Աբեղեան Արտ., Մենք եւ մեր հարեւանները (Ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1928, N 4, էջ 96-108:
3. Աբեղեան Արտ., Վրաստանի անկախութիւնը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, N 11 (83), սեպտեմբեր, 1926, էջ 72-83:
4. Աբեղեան Արտ., Վրաստանի անկախութիւնը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, N 12 (85), հոկտեմբեր, 1926, էջ 85-100:
5. Աբեղեան Արտ., Հայաստան եւ արտաքին հարեւաններ (Ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, N 3, 1929, յունուար, էջ 126-133:
6. Աբեղեան Արտ., Հայաստան եւ արտաքին հարեւաններ (Ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, N 2, 1929, դեկտեմբեր, էջ 111-126:
7. Աբեղեան Արտ., Հայ-վրացական յարաբերութիւնները, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, N 10, 1929, օգոստոս, էջ 135-145:
8. Ա-Դո (Հ. Տեր-Մարտիրոսյան), Հայութեան երկունքը /Ա-Դո.- Եր., Հայաստանի պատմ. թանգարան, 2014:
9. Ա-Դո, Իմ հիշողությունները, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմ. ին-տ, 2015:
10. Ահարոնյան Ավ., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան. Քաղաքական օրագիր. 1919-1927, Եր., ԵՊՀ հրատ., 2001:
11. Աստուածատրեան Արշ., Հայ-վրացական պատերազմը (Դրոյի յիշատակին), «Հայրենիք», Բոստոն, 1957, N 2 (95), էջ 1-14:

12. Աստուածատրեան Արշ., Արամ, «Հայրենիք», Բոստոն, 1964, N 8 (vol. 42), օգոստոս, էջ 35-42:
13. Աստուածատրեան Արշ., Հայ-վրացական յարաբերութիւնները Ռուսաստանի տիրապետութեան շրջանում եւ անկախութեան օրերին// Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի: հոդվածների ժողովածու, Եր., «Միտք» վերլ. Կենտրոն, 2011, էջ 381-393, 701-759: // Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1959, N 2, փետրվար, էջ 26-36, մարտ, N 3, էջ 47-61, N 4, ապրիլ, էջ 76-86, N 5, մայիս, էջ 65-81, N 6, յունիս, էջ 54-64:
14. Բաբալեան Արտաշես, Հայաստանի անկախութեան պատմութիւնը եւ այլ յիշատակներ, Գլենդել, «Նավասարդ» հրատ., 1997:
15. Բաբալեան Արտ., Կարսի անկումը, «Հայրենիք», Բոստոն, 1923, Ա. Տարի, թիւ 12, vol. N 12, էջ 65-66:
16. Բաբալեան Արտ., Էջեր Հայաստանի անկախութեան պատմութենէն, «Հայրենիք», Բոստոն, 1923, N 9, էջ 103-115:
17. Բաբալեան Արտ., Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրե, 1950:
18. Գիւլխանդանեան Աբր., Անդրկովկասի հանրապետութիւնները// «Հայրենիք», Բոստոն, 1967, N 3, էջ 9-17, N 4, էջ 70-83:
19. Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից // «Հայրենիք», Բոստոն, 1946, Սեպտեմբեր, N 2 (253), էջ 103-110:
20. Դէոյեանց Տիգրան, Դրաստամատ Կանայեան (Դրո) // «Հայրենիք», Բոստոն, 1957, Մարտ-Ապրիլ, N 9 (379), էջ 11-19:
21. Եղիշե Ա քահանա Գեղամյանց, Տաճիկները Կովկասում և Բաքվի անկումը, Բաքու, 1919:
22. Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 52, Եր., «Հայաստան» հրատ., 1983, էջ 80-81, 124-125, 424-425:
23. Լենին Վ. Ի., Երկեր, հ. 32, Եր., «Հայպետհրատ», 1952, էջ 174-175:
24. Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը. Բ տպագրութիւն, Բէյրութ, տպ. «Համազգայինի», 1968:
25. Մասուրեան Ս., Վրացի մենշեւիկները եւ անգլիական զօրավարները, «Հայրենիք», Բոստոն, 1928, N 3, էջ 145-155, N 4, էջ 145-151:
26. Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, Եր., 1957:
27. Մռավյան Ասք., Հոդվածներ և ճառեր, Եր., Հայպետհրատ, 1961:

28. Ջամալեան Արշակ, Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք», (ամսագիր), Բոստոն, 1928, N 6, էջ 75-101, 1928, N 7, էջ 145-152, 1928, N 8, էջ 122-128, 1928, N 9, էջ 113-119, 1928, N 10, էջ 100-107, 1928, N 11, էջ 118-124, 1928, N 12, էջ 123-135: N 4, 1929, էջ 86-97, 1929, N 5, էջ 115-125, 1929, N 6, էջ 135- 157:
29. Ջամալեան Արշակ, Հայ-վրացական կնճիռը, Եր., «Միտք» վերլ. Կենտրոն, 2011:
30. Ռոստոմ, Հայ¬վրացական փոխյարաբերությունները, «ՎԷՄ», 1936, հունվար-փետրվար, թիվ 1, էջ 1-11:
31. Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները. Է. Հատոր. Գ. Արտասահման, Սասուն եւ Հայաստանի Հանրապետութիւն, Հրատարակութիւն, Թեհրան,1982:
32. Ռուբէն, Ախալքալակի պայքարը, «Դրօշակ», (Փարիզ), 1926, Յունուար, N 1 (249), էջ 5-11:
33. Ռուբէն, Տաշիրի գաւառին բռնագրաւումը, «Դրօշակ», (Փարիզ), 1926, մարտ, N 3 (251), էջ 67-71:
34. Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը, «Հայրենիք» (Բոստոն), 1926, Ապրիլ, N 6 (42), Ապրիլ, էջ 82-98:
35. Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը, Պէյրութ, տպ. Համազգայինի, 1969:
36. Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, տպ. «Մշակ», 1958:
37. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան» հրատ., 1993:
38. Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար. Պէյրութ, տպ. «Մշակ», 1962:
39. Վրացեան Ս., Կեանքի ուղիներով. Դէպքեր. Դէմքեր. Ապրումներ, Ա. Հատոր, Պէյրութ, տպ. Համազգային, 1967:
40. Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, Դէպքեր. Դէմքեր. Ապրումներ. Դ Հատոր, Պէյրութ, տպ. «Մշակ», 1965:
41. Վրացեան Ս., Կեանքի ուղիներով. Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ. Հատոր Ե, Պէյրութ, տպարան «Համազգային», 1966,
42. Փափազեան Վ., Իմ յուշերը, Հատոր Երկրորդ [2], Պէյրութ, տպ. Համազգային ընկերութեան, 1952:

43. Փափազեան Վ., Իմ յուշերը, Հատոր երրորդ [3], Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1957:
44. Քաջազնունի Յովհ., Հայաստանի Հանրապետութիւն, Երեւան, «Մ. Վարանդեան» հրատարակչութիւն, 1993:
45. Քաջազնունի Հովհ., Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ ևս. Վիեննա, Մխիթարեան տպարան, 1923:
46. Քաջազնունի Յովհաննես, Յետ մահու: Պատմուածքներ, Յուշեր, յօդուածներ. Հրատար. համար պատր. Ս. Վրացեանը, Պէյրութ, հրատ. «Համազգային» ընկեր., տպ. «Մշակ», 1965:
47. Օրջոնիկիձե Գ. Կ., Ընտիր հոդվածներ և ճառեր. 1918-1937, Եր., Հայպետհրատ, 1950, էջ 40-49, 58-61:
48. Авалов З. Д., Независимость Грузии в международной политике. 1918-1921 гг. Воспоминания. Очерки, Париж, 1924:
49. Деникин А. И., Очерки русской смуты, т. IV, Париж-Берлин, 1924:
50. Деникин А. И., Очерки русской смуты: В 3-х книгах, кн. 3, т. 4, 5, М., Айрис-Пресс, 2003:
51. Квинитадзе Г. И., Мои воспоминания в годы независимости Грузии. 1917-1921, YMCA-PRESS 11, rue de la Montagne-Ste-Geneviève 75005 Paris 1985 (на рус. языке):
52. Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., Ереван, Нац. Архив Армении, 2012:

6. ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ազատյան Հ., Հայերը միջազգային դիվանագիտական խաչմերուկներում, Եր., «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ, 2009:
2. Ալիխանյան Ս. Տ., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921 թթ.), Եր., «Հայաստան» հրատ., 1966, էջ 274-295:
3. Ահարոնյան Գերսամ, Մեծ երազուն ճամփուն վրա, Բէյրութ, 1964:
4. Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը: (պատմության և արդիական խնդիրներ). Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր.: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2015:

5. Ավետիսյան Հ., Հայկական Հարցը 1918 թվականին, Եր.: Բարձրագույն դպրոց, 1997:
6. Գալոյան Գ. Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:
7. Գևորգյան Հ., Դրո, Եր.: Զանգակ-97, 1999:
8. Գևորգյան Հ., Դրո, Եր., Հեղ. հրատ., 2007:
9. Գևորգյան Հ., Դրո, Եր., Հեղ. հրատ., 2014:
10. Դավթյան Ա. Խ., Ջավախք (պատմական ակնարկ), Եր., 1994:
11. Դրո. Կենսագրական: Հուշեր: Վկայություններ. Եր.: «Ազատ խոսք», 1991:
12. Եսայան Ա., Հայաստանի միջազգային-իրավական դրությունը.1920-1922 թթ., Եր., «Միտք» հրատ., 1967:
13. Եսայան Ա., Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Եր., 2014:
14. Զոհրաբյան Է. Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 1997:
15. Թորոսյան Շ. Ա., Ծովային ելքի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունում 1919-1920 թթ.: ԻԳ. 00.04 «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Հայաստանի Հանրապետության Պաշտպանության Նախարարության Դրաստամատ Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ: Սեղմագիր Երևան, 2015:
16. Թումանյան Հովհաննես, Երկերի լիակատար ժողովածու. Տաս հատորով, հ. 10, Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:
17. Իրազեկ Յ., Մօտիկ անցյալից. Պատմական դէպքեր. Ապրումներ, 1917-1922, Պէյրութ, տպ. Համազգայինի, 1956:
18. Լէո, Անցյալից: Հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, «Խորհրդային Կովկաս», 1925:
19. Լէո, Անցյալից: Հուշագրություն, Եր., «Շեմ» հրատ., 2009:
20. Լէո, Սահմանավեճեր. Լօռի. Ախալքալաք. Ղարաբաղ. Հրատարակութիւն Հայ Հայրենակցական Միութիւնների Կենտրոնական խորհրդի, Թիֆլիս, տպ. «Աշխատաւոր», 1919:

21. Լեո, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատոր Ա, Բ, Փարիզ, տպ. Պահրի եղբարց, 1934-1935:
22. Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007:
23. Խաչատրյան Կ. Հ., Սուքիասյան Հ. Կ., Բադալյան Գ. Մ., Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930–ական թվականներին, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստ., 2015:
24. Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920 թվականներին: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Եր., «Զանգակ-97», 2003:
25. Կարապետյան Մ., Գևորգյան Է., Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Եր., «Զանգակ-97», 2007:
26. Կարապետյան Մ., Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920թթ), Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996:
27. Կարապետյան Ս., Ջավախք, Եր., 2006:
28. Կարապետյան Ս., 1920 թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Եր., «Հայաստան» հրատ., 1965:
29. Կարապետյան Ս. Խ., Զինված ապստամբությունը Լոռում 1921 թվականին, Եր., Հայպետհրատ, 1955:
30. Հակոբյան Ար., Հայաստանի Հանրապետություն (1918-1920 թթ.), Եր., «Հայաստան» հրատ., 1992:
31. Հակոբյան Ար., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1921 թթ.,), Եր., ՀՅԴ հրատ., 2005:
32. Հայազն (Պետրոսյանց Տ. Մ.) Տ., Ղազարյան Գ., 1000 հայազգի գեներալներ, ծովակալներ, Եր. Հեղ. Հրատ., 2009:
33. Հայ ժողովրդի պատմություն, հ. VII, (1917-1941), Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967:
34. Հայկական Հարց. Հանրագիտարան, Եր., Հայկ. Հանրագիտ. Գլխ. Խմբագր., 1996:
35. Հայոց պատմություն. Հատոր IV, Գիրք առաջին (նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ.), Եր., ԳԱԱ Պատմ. ինստ-տ, 2012, էջ 313-324:
36. Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի: Հոդվածների ժողովածու, մաս 5, Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2009:

37. Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի: Հոդվածների ժողովածու, մաս 6, Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2011:
38. Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի: Նյութերի ժողովածու, մաս 7, Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2012:
39. Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի: Նյութերի ժողովածու, մաս 8, Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2012:
40. Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի: Նյութերի ժողովածու, մաս 9, Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2013:
41. Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1990), Նյութերի ժողովածու. Պրակ առաջին, կազմեց, առաջաբանը գրեց և վրացերենից թարգմանեց Հրաչյա Բայրամյանը, Եր., «Զանգակ – 97», 2001:
42. Հարությունյան Բ. Հ., Հայաստանի պատմության ատլաս, Գ մաս, «Մանմար» ՀՁ ՓԲԸ, Երևան, 2012:
43. Հարությունյան Կլ. Ա., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Եր., «Զանգակ – 97» հրատ., 2002:
44. Հովակիմյան Բ. Մ., Հայոց ծածկանունների բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2005:
45. Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր I. Առաջին Տարին, 1918-1919, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2005:
46. Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր II. Վերսալից-Լոնդոն, 1919-1920, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2014:
47. Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր III. Լոնդոնից Սևր, փետրվար-օգոստոս, 1920, ՀՀ ԳԱԱ, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2015:
48. Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր IV. Սալի և մանգաղի միջև. Մասնատում և խորհրդայնացում, ՀՀ ԳԱԱ, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2016:
49. Ղազախեցյան Վլ. Հայաստանը 1920-1940 թթ., Եր., ԳԱԱ պատմ. ինտ., 2006:
50. Ղուլյան Յ., Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից. 1918-1920 թթ., Եր., «Եգեա» հրատ., 2009:

51. Մայիլյան Բ. Վ., Ազգային հարցը և հայերի կացությունը Վրաստանի Հանրապետությունում 1918-1920 թթ., Եր., «Գիտություն» հրատ., 2016 թ.:
52. Մելիքյան Վ., Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում: Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր -1918 թ. փետրվար), Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ին-տ, 2010:
53. Մելքոնյան Ա. Ա., Ջավախք: Պատմության ուրվագծեր, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:
54. Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարումն XX դարի առաջին քառորդին, Եր., «Զանգակ-97» հրատ., 2003:
55. Մկրտչյան Վ., 1918-1920. Հայաստանի Հանրապետության զինված ուժերը, Եր., Ա. հ., 2008:
56. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհ. թարգմ. և ծանոթությունները Ստ. Մալխասյանի. խմբ. Գ. Սարգսյան, Եր.: «Հայաստան» հրատ., 1990:
57. Նասիպեան Ագապի, Բրիտանիա եւ Հայկական հարցը. 1915-1923, Բէյրութ, Հրատ. Հ. Բ. Ը. Միութեան Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադրամի,1994:
58. Ներսիսյան Ա., Ռուբէն, Եր., «Զեյթուն» հրատ., 2003:
59. Պապյան Ա., Հայրենատիրություն: Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր: Հոդվածների ժողովածու, Modus Vivendi, Եր., 2012:
60. Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի Հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ., հունիս-նոյեմբեր), Եր., ԵՊՀ հրատ., 2004:
61. Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Եր., ԵՊՀ հրատ., 2011:
62. Սարգսյան Վ., Ջավախքը 1988-2008 թթ. (հոդվածների ժողովածու), Եր., «Միտք» վերլ. Կենտրոն, 2009:
63. Սառիկյան Հակոբ, Հիշողություններ: 1878-1924, պատր. են հրատ.՝ Ա. Վիրաբյանը, Էդգ. Հովհաննիսյանը, Եր., Հայ. Ազգային արխիվ, 2015:
64. Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Եր.: «Նաիրի» հրատ., 2002:

65. Սարդարյան Կ., Հայաստանի Հանրապետության պատմություն, Եր., Ա.տ., Ա.խ., 1992:
66. Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան (Կյանքը և գործը), Եր., ՎՄՎ-Պրինտ, 2008:
67. Վարդապետյան Ա. Վ., Հայաստանի Կարմիր բանակը քաղաքացիական կռիվներում, 1920-1921 թվականներ, Եր., 1960:
68. Վիրաբյան Վ. Հ., 1918 թ. վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կատավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Եր., «Ասողիկ» հրատ., 2013:
69. Վիրաբյան Վ. Հ., Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920 թթ. Երևան, ՀՊՃՀ հրատ., 1999:
70. Վիրաբյան Վ .Հ,, Հայաստանի Հանրապետությունը 1918-20 թթ.: Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Եր., ՀՊՃՀ, 1999:
71. Վիրաբյան Վ. Հ., Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը, Եր., ԵՊՀ հրատ., 2015:
72. Վիրաբյան Վ. Հ., Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները և Լոռու Չեզոք գոտին 1920-1921 թթ., (Տարածքային սահմանազատումը), Եր., ԵՊՀ հրատ., 2015:
73. Քառյան Ս., Հայաստանի միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1923 թվականներին. Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005, էջ 69-82:
74. Քառյան Ս., Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության պատմագրություն, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003:
75. Адамия В. И., Из истории английской интервенции в Грузии (1918-1921 гг.). Сухуми, Абгосиздат, 1961:
76. Андерсен Эндрью, Эгге Георг, Армяно-Грузинская война 1918 г. и Армяно-Грузинский территориальный вопрос в XX в.: //Armeno-Georgian War of 1918 and Armeno-Georgian Territorial Issue in the 20th Century (на англ. и рус. яз.) //http://www.conflicts.rem33. com/images/ Georgia/Armeno-Georgian-War18-R.html:iberiana.wordpress.com/ Armenia -georgia/ armeno-georgian-war-1918-20/:

77. Асадов Ю., 1000 офицерских имен в армянской истории: Историко-биографические очерки, Пятигорск, Изд-во фонда «АПАКиДРиФ», 2004:
78. Асоян Т. М. Территориальные проблемы Республики Армения и британская политика (1918-1920 гг.), М.: РИЦ «Альфа» МГОПУ им. М. А. Шолохова, 2005:
79. Байков Б., Воспоминание о революции в Закавказье (1917-1920 гг.). «Архив русской революции», т. 9-10, Берлин, 1923, стр. 91-194:
80. Бендианишвили А., Национальный вопрос в Грузии в XIX - начале XX века, Тб., 1980:
81. Борьян Б. , Армения, международная дипломатия и СССР, ч. II, М.-Л., Гос. изд-во, 1929:
82. Вадачкория Ш. И., Вопросы грузино-армянских взаимоотношений в политической мысли Грузии (1918-1920), Тбилиси, 1999:
83. Вачнадзе М., Гурули В., История Грузии (XIX-XX века), Тбилиси, 2004:
84. Великая Октябрьская Социалистическая революция. Издание Третье, дополненное. Энцилопедия, Москва, Изд-во «Советская Энциклопедия», 1987:
85. Гамбашидзе Г. Л., Агрессивная политика Англии и США в отношении Грузии и Закавказья (1919). Тб., 1964:
86. Ганин А. В., Корпус офицеров Генерального штаба в годы гражданкой войны 1917-1921 гг.: Справочные материалы, Москва, «Русский путь», 2009:
87. Гогитидзе М., Грузинский генералитет (1699-1921 гг.). Биографический справочник НАН Украины. Инс-т археографии и источниковедения им. М. Грушевского, Укр. Центр биографической некрополистики. Сост. М. Гогитидзе, отв. ред. Иван Дивный, Киев, 2001:
88. Гогитидзе Мамука, Бежиташвили Георгий, Военная элита Армении (Армяне–генералы, уроженцы Грузии). Биографический справочник, Тбилиси, Изд-во «Свети», 2014:
89. Девдариани Гаиоз, Дни господства меньшевиков в Грузии (документы и материалы). Тифлис, Госиздат Грузии, 1931:

90. Енукидзе Д., Крах империалистической интервенции в Закавказье, Тбилиси, 1954:
91. Ерицов А. Ф., Экономический быт государственных крестьян Борчалинского уезда Тифлисской губернии, Тифлис, 1889:
92. Жордания Н., Моя жизнь, Станфорд, 1968 (на рус. яз.,):
93. Жордания Н. Н., Национальный вопрос в Закавказье. Тифлис, 1917:
94. Жордания Н., Большевизм, Берлин, Изд-во ЦК СДРП Грузии, 1919:
95. Жордания Н. Н., Мое прошлое (Воспоминания). Тбилиси, 1990:
96. Каземзаде Фируз, Борьба за Закавказье (1917–1921), Институт стратегических исследований Кавказа, Серия «История Кавказа», Стокгольм, CA&CC Press®, 2010:
97. Кадишев А. Б., Интервенция и гражданская война в Закавказье. Москва, Военное изд-во МО СССР, 1960:
98. Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах (с сокращениями), Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007:
99. Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах, Тбилиси, Тб. Гос. Ун-т им. И. Джавахишвили, 2007: // http:/ iberiana, wordpress. com/ armenia-georgia /1918-1920/:
100. Мархулия Г. Р., Из истории возникновения армянской националистической партии «Дашнакцутюн» и ее политики в отношении Грузии в 1918-1920 гг. Исторические разыскания, т. II. Тбилиси, 1999:
101. Мархулия Г. Р., Территориальные претензии дашнаковцев и т. н. вопрос «раздела Армении» в политических кругах Турции, Грузии и Азербайджана // В кн. «Исторические разыскания». Абхазская организация. Т. VI, Тб., 2003:
102. Махарадзе Ф., Диктатура меньшевистской партия в Грузии, М., 1921:
103. Махмурян Г. Г., Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг.: Бремя белиго человека, Ер., Изд-во «Лусакн», 2002:
104. Ментешашвили А. М., Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии. 1917-1921, Тбилиси, Изд-во «Ганатлеба», 1987:

105. Ованнисян Ричард Г., Международные отношения Республики Армения, 1918-1920 гг./ Институт истории НАН Армении, Ер., Изд-во «Тигран Мец», 2007:
106. Раевский А., Английская интервенция и мусаватское правительство: Из истории интервенции и контрреволюции в Закавказье, Баку, Гостипография «Красный восток», 1927:
107. Раевский А., Мусаватское правительство на Версальской конференции, Берлин, 1930:
108. Сеф С. Е., «Демократическое правительство» Грузии и английское командование, Тифлис, «Заккнига», 1928:
109. Сеф С. Е., Революция 1917 года в Закавказье. Документы и материалы. Тифлис, Заккнига, 1927:
110. Стуруа Н. Н., Вопросы новой и новейшей истории Грузии, т. II, Тб., 1987:
111. Таирян И., XI Красная Армия в борьбе за установление и упрочение Советской власти в Армении, Ереван, 1971:
112. Тетвадзе Ш., Тетвадзе О., Армяне в Грузии (с древниих времен до сегодняшнего дня), Тбилиси, «Универсал», 2008:
113. Тунян В. Г., Карабахский конфликт. Ереван, 1999:
114. Уратадзе Г. А., Образование и консолидация Грузинской Демократической республики, Мюнхен, Исследования и материалы (Серия 1-я, выпуск 29). Институт по изучению СССР, 1956:
115. Хармандарян С. В., Ленин и становление Закавказской федерации. 1921-1923, Ереван, 1969:
116. Хачапуридзе Г. В., Борьба за пролетарскую революцию в Грузии. Очерки. 1917-1921, Тбилиси, Изд-во ЦК КП(б) Грузии «Заря востока», 1937:
117. Хачапуридзе Г. В., Борьба грузинского народа за установление Советской власти, Москва, Гос. Изд-во Полит. Литературы,1956:
118. Шахдин И., Дашнакцутюн на службе русской белогвардейщины и английского командования на Кавказе, Тифлис, 1931:
119. Шахатунян Ав., Административный переделъ Закавказского края. Тифлисъ, типография «Ашхатаворъ», 1918:

120. Чачхиани А., Борьба за территориальную целостность Грузии в 1918-1919 годах (Армяно-Грузинская война). Диссертация на соискание научной степени канд. исторических наук, Тбилиси, 2006:
121. Чальхушян Г., Красная книга, Ростов-на-Дону, 1919 (Воспроиз. изд. 1919 г.), Ер., 2015:
122. Чохели А. И., Политика Франции в отношении Грузии в 1917-1921 годах, Тбилиси, «Мецниереба», 1980:
123. Armenian-Georgian Relations: Challenges and Opportunities for the Bilateral Cooperation, Yerevan: Political Science Association of Armenia, 2014, pp. 7-11:
124. CEMoGUZ C., The relations between the Ottoman empire and bolshevik Russia (1917-1918): A thesis submitted to the department of international relations in partial fulfillment of the requirements for the degree of master of international relations Bilkent university institute of economics, administrative and social sciences, Ankara, august, 1998:
125. Hovannisian Richard G., The Republic of Armenia, vol. 1.-Barkeley, Los Angelos, London: Univers. of California Press 1971, vol. 2, 1982, vol. 3, 1996, vol. 4:
126. Kazemzadeh Firuz, The Struggle for Transcaucasia (1917-1921), New York: Oxford University Press, 1951:
127. Suny Ronald Grigor, The Making of the Georgian Nation, Indianopolis, 1994:
128. The making of modern Georgia. 1918-2010: The First Georgian republic and its successors, Edited by Stephen F. Jones, Routledge, London-New York, 2014:

7. ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Աբրահամյան Վ. Մ., 1918-1921 թթ. հայ-վրացական վիճելի տարածքների հարցի շուրջ: «Գիտական տեղեկագիր», 2013, № 2. Պրակ Բ. Հումանիտար ու հասարակական գիտություններ, Դասավանդման մեթոդիկաներ, Գյումրի, Մ. Նալբանդյանի անվան պետ. մանկ. ինստ-տ, 2013, էջ 62-73:

2. Ասրյան Ա., Հայ-վրացական հարաբերությունների պատմությունից (1918 թ.) // «Բանբեր Հայաստանի արխիվների», 2009, N 2, էջ 66-71:
3. Բայրամյան Հր., Վրացագիտությունը ԵՊՀ-ում. Երեկ, այսօր, վաղը, «Հայագիտության հարցեր», Երևանի պետական համալսարան, 2014, N 3, էջ 241-246:
4. Թորոսյան Շ. Ա., Արդահանի խնդիրը հայ-վրացական հարաբերություններում (1920 թ. հունվար-օգոստոս), «Բանբեր Երևանի համալսարանի», 2014. Միջազգային հարաբերություններ. Քաղաքագիտություն, N 2, էջ 3-15:
5. Խաչատրյան Կ., Բադալյան Գ., ՀԽՍՀ տարածքի և սահմանների ձևավորումը (1920 թ. դեկտեմբեր – 1922 թ. սկիզբ) //Հայոց պատմության հարցեր: Հ. 14. Գիտական հոդվածների ժողովածու, /խմբ. Խորհուրդ՝ Ա. Մելքոնյան, Ա. Խառատյան և ուրիշներ, Եր.,: Պատմ. ինստ., 2013, էջ 172-195:
6. Խառատյան Վ., Լոռու և Ախալքալաքի հարցը 1919 թ. հայ-վրացական խորհրդաժողովում, Հայոց պատմության հարցեր. Գիտական հոդվածների ժողովածու, հ. 2, Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001, էջ 98-104:
7. Ղազարյան Ա., Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը հայ-վրացական պատերազմի նախօրյակին (1918 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին) //«Պատմություն և մշակույթ». Հայագիտական հանդես): Գիտական հոդվածների ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 199-209:
8. Ղազարյան Ա., Ախալքալաքի գաղթականության դրությունը 1918 թ. վերջերին և Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը // Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու: Գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Եր., «Լիմուշ» հրատ., 2015, էջ 115-125:
9. Մայիլյան Բ., Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի գործունեության պատմությունից (1918 թ. օգոստոս –1921 թ. փետրվար), «Պատմա-բանասիրական հանդես», 2011, N 1, էջ 61-83:
10. Մայիլյան Պ., Հայ-վրացական 1918 թ. դեկտեմբերյան զինված բախումը. Գիտական հոդվածների ժողովածու, Գավառի Պետ. Համալսարան, 2000, N 4, էջ 42-49:

11. Մախմուրյան Գ., Հայաստանի Հանրապետության անկախությունը Հայոց Ազգային խորհրդի արձանագրություններում// «Պատմաբանասիրական հանդես», 2014, 1 (195), էջ 214-235:
12. Մելիքյան Վ., Անդրկովկասյան Սեյմի քաղաքական կողմնորոշման փոփոխման հիմնահարցը և երկրամասի անկախության հռչակումը, «Հայագիտության հարցեր», Երևանի պետական համալսարան, 2014, N 3, էջ 105-126:
13. Մուշիրի Ալեքսանդր, Հարյուր տասնյոթ տարի անց [վրաց պետականության վերականգնումը] //«Մնաթոբի», Թիֆլիս, 1989, թիւ 1, էջ 14-15 (վրաց. թարգմ. Հր. Բայրամյանը):
14. Ներսիսյան Ա., Թորոսյան Ջ., Բաթումի կոնֆերանսը: Հայաստանի Հանրապետության սահմանների հարցը Բաթումի պայմանագրում// «Ակունք». Գիտական հոդվածների ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 3-18:
15. Շաթրեան Մ., Դաշնակի նամակը դաշնակին// «Նոր աշխարհ», 1922, թիւ 1, էջ 155-159:
16. Պետրոսյան Գ., 1918 թ. հայ-վրացական պատերազմը և Ռուսաստանի Հարավի Կամավորական բանակը, «Կանթեղ» (Գիտական հոդվածների ժողովածու), N 1 (22), Եր., «Ասողիկ» հրատ., 2005, էջ 120-128:
17. Սիմոնյան Ա., Ներսիսյան Ա., Հայաստանի առաջին Հանրապետության պատմագրության գնահատման հայեցակարգային հիմքերը, «Հայագիտության հարցեր», Երևանի պետական համալսարան, 2014, N 3, էջ 11-21:
18. Սուքիասյան Հ., Հայաստանի և Վրաստանի միջև դիվանագիտական կապերի վերականգնման հարցը 1918 թ. վրաց-հայկական պատերազմին հաջորդող շրջանում// Մերձավոր Արևելք. Պատմություն. Քաղաքականություն. Մշակույթ. Հոդվածների ժողովածու, հ. IX-X, Եր., ՀՀ ԳԱԱ արևելագիտ. ին-տ, 2014, էջ 543-555:
19. Սուքիասյան Հ., Լոռու Չեզոք գոտու պատկանելիության վերաբերյալ հայ-վրացական տարածքային վեճը և ՀԽՍՀ Արտաքին Գործերի ժողկոմատը (1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. փետրվար), Գիտական հոդվածների ժողովածու. ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, 2014, էջ 250-254:

20. Տե՛ս Սուքիասյան Հ., Կոստանդնուպոլսում Հայաստանի Հանրապետության պատվիրակության գործունեության լուսաբանումը պատվիրակների օրագրություններում (1918 թ. հունիս-նոյեմբեր) //Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմության և արդիական խնդիրներ). Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր.: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2015, էջ 193-204:
21. Քիքոձե Գերոնտի, Ժամանակակցի գրառումներ//«Մնաթոբի», Թիֆլիս, 1989, թիւ 7, էջ 106-107 (վրաց. թարգմ. Հր. Բայրամյանը):
22. Дарсания Н. Е., Была ли неизбежной насильственная советизация Грузии, «Исторические разыскания», т. I, Тб., 1998, стр. 129:
23. Маилян Б. В., Краткий очерк изгнания армян из Джавахка в 1918 году, Седьмая годичная научная конференция (3-7 декабря, 2012 г.), часть 2. Сборник научных статей. Социально-гуманитарные науки, Ер., Изд-во РАУ, 2013, стр. 72-84:
24. Манджгаладзе Гурам, Военный конфликт между Грузией и Арменией в 1918 году // Dirçəliş XXI əsr», 2008, № 120-121, стр. 85-90. elibrary.az/docs/jurnal-08/148j.htm:
25. Ментешашвили А. М., «Грузинская Демократическая Республика и Парижская мирная конференция». В журн. «Мацне», серия «История». Тб., 1992, № 2:
26. Михайлов В. В., Отношения Республики Армении и руководства вооруженных сил Юга России в 1918 – начале 1919 года. Вестник Северного (Арктического) федерального университета им. М. В. Ломоносова. Серия «Гуманитарные и социальные науки», N 4, 2015, стр. 27-35:
27. Aspaturian Vernon V., Armenia in the World Arena, 1914-1921.- «Armenian Review». spring-winter, 1993, volume 46, number 1-4 (181-184), pp. 119-142:
28. Jones Stephen F., Georgian-Armenian Relations in 1918-20 and 1991-94: A Comparison, «Armenian review». vol. 46. no 1-4 (181-184), pp. 57-77:
29. Mamatsashvili Gocha, Georgian-Armenian relations in 1918-1920 and Georgia's Constituent Assembly /bulletin of the Georgian National academy of sciences, vol. 6, N 1, 2012, pp. 158-162:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՀ անկախության հռչակումը: Հայկական պետության առաջին քայլերը: Սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական իրավիճակը: Հասարակական-քաղաքական խմբերի կողմնորոշումը: Արդյունաբերության և բանկերի ներկայացուցիչների դիրքորոշումը: Ժամանակաշրջանի ընդհանուր բնութագիրը 21

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Հայաստանի և Վրաստանի հանրապետությունները 1918 թ. դեկտեմբերյան պատերազմի նախօրեին: Դիվանագիտական և ռազմաքաղաքական հակամարտությունը հայ-վրացական հարաբերություններում: Ռազմական առճակատման շարժառիթները և նախադրյալները 62

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Պատերազմի սկիզբը և հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում լարվածության խորացումը: Ռազմական գործողությունները և տնտեսական, ռազմաքաղաքական արդյունքները:

1918 թ. վրաց-հայկական պատերազմի
ռազմաքաղաքական հետևանքները 313

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1918 թ. դեկտեմբերյան վրաց-հայկական
պատերազմը, ռազմաքաղաքական
հարաբերությունների սրումը
և կուսակցությունների դիրքորոշումը 469

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1919 թ. հունվարյան հաշտության
համաձայնագիրը և հայ-վրացական
ռազմաքաղաքական հարաբերությունները
1919 թ. -1920 թ. առաջին կեսին
1. 1919 թ. հունվարյան հաշտության
համաձայնագիրը:
ժամանակավոր սահմանազատումը 511
2. Վրաստան-Հայաստան ռազմաքաղաքական
հարաբերությունների կարգավորման
փորձերը և փոխզիջումների տարբերակները 594

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Հայաստան-Վրաստան ռազմաքաղաքական
հարաբերությունները և
վրաց-հայկական պաշտպանական-ռազմական
դաշինքի հարցը 1920 թվականին 625

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Հայ-վրացական ռազմաքաղաքական
հարաբերությունները և Լոռու Չեզոք
գոտին 1920 թ. երկրորդ կեսին - 1921 թվականին:
ՀՀ խորհրդայնացումը:
Տարածքային սահմանազատումը 657

ԱՄՓՈՓՈՒՄ (ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ) 743
ЗАКЛЮЧЕНИЕ 754
SUMMARY (INSTEAD OF EPILOGUE) 765

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ 775
ИМЕННОЙ УКАЗАТЕЛЬ 789
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ 792
ГЕОГРАФИЧЕСКИЙ УКАЗАТЕЛЬ 803
ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 806

ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վանիկ Հրանտի Վիրաբյանը ծնվել է Հայոց Ուտիք աշխարհի Գարդմանք գավառի Չարդախլու գյուղում: 1988 թ. պաշտպանել է թեկնածուական, 2008 թ.՝ դոկտորական թեզը: Գիտական նախասիրությունների ոլորտում են գտնվում Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության, և առհասարակ՝ Պետական անվտանգության համակարգի ձևավորման ու գործունեության, 1918 թ. վրաց-հայկական պատերազմի և 1918-1921 թթ. հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների պատմությունը:

Վանիկ Վիրաբյանի մենագրություններից են.

1. Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920 թթ., Եր., «ՀՊՃՀ» հրատ., 1999:
2. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Եր., «ՀՊՃՀ» հրատ., 1999:
3. Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), Եր., «Ասողիկ» հրատ., 2003:
4. 1918 թ. վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Եր., «Ասողիկ» հրատ., 2003:
5. Հայաստանի Առաջին Հանրապետության միլիցիան և Ներքին Գործերի նախարարությունը (1918-1920 թթ.), Եր., «Ասողիկ» հրատ., 2003:
6. Հայաստանը Անդրկովկասյան հանրապետությունների 1920 թ. ապրիլյան վեհաժողովում, Եր., «Ասողիկ» հրատ., 2004:
7. Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918 -1920 թթ., Եր., «Լուսակն» հրատ., 2006:
8. Հայոց պատմության հիմնահարցերի շուրջ, Եր., «Լուսակն» հրատ., 2007:
9. Հայաստանի Առաջին Հանրապետությունը (1918-1920 թթ), Եր., «Ճարտարագետ» հրատ., 2008:
10. Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ., Եր., «Լուսակն» հրատ., 2009:
11. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Եր., ԵՊՀ հրատ., 2011:

12. Հայոց Պատմություն. Ուսումնական ձեռնարկ, Եր., «Ճարտարագետ» հրատ., 2013:
13. Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը, Եր., ԵՊՀ հրատ., 2015:
14. Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները և Լոռու Չեզոք գոտին 1920-1921թթ., Եր., ԵՊՀ հրատ., 2015:

ՎԱՆԻԿ ՀՐԱՆՏԻ ՎԻՐԱԲՅԱՆ
ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1918-1921 ԹԹ.

ВАНИК ГРАНТОВИЧ ВИРАБЯН
АРМЯНО-ГРУЗИНСКИЕ
ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ
В 1918-1921 ГГ.

VANIK HRANT VIRABYAN
THE ARMENIAN-GEORGIAN
MILITARY-POLITICAL RELATIONS (1918-1921)

Սրբագրիչ՝ Վ. Դերձյան
Համակարգչային ձևավորումը և
նկարների դիզայնը՝ Կ. Չալաբյանի
Համակարգչային շարվածքը՝ Վ. Հ. Վիրաբյանի

Տպագրված է «Արման Ասմանգուլյան» ԱՁ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրության՝ 17.10.2016:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 51.875 + 12 էջ ներդիր:
Տպաքանակը՝ 150 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2016
publishing.ysu.am